ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1939·1973

ԵՐԵՎԱՆ

9Н(Հ)
Ն-93

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1939—1973 ԹԹ.

2381

Թույլատրված է ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես դասագիրք պետական համալսարանների պատմության ֆակուլտետների ուսանողների համար

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1987

ՀՍՍՀ ԳԻ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ԳՄԴ 63.3(0)6
Ն 930

Դասագիրքը պատրաստել է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նոր և նորագույն պատմության ամբիոնի կոլեկտիվը

Խմբագրական կոլեգիա Ի. Ս. ԳԱԼԿԻՆ (գլխավոր խմբագիր), Ն. Ֆ. ՄՈՉՈՒԼՍԿԻ, Մ. Ի. ՕՌԼՈՎԱ, Վ. Պ. ՍՄԻՐՆՈՎ, Օ. Ս. ՍՈՐՈԿՈ-ՑՅՈՒՊԱ, Ե. Ֆ. ՑԱՉԿՈՎ
Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիրի պետական համալսարանի նոր և նորագույն պատմության ամբիոն, պրոֆեսոր Գ. Ն. ՍԵՎՈՍՏՅԱՆՈՎ

Թարգմանիչներ՝ Մ. Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Օ. Պ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ն 390 Նորագույն պատմություն, 1939—1973 թթ.։ Դասագիրք պետ. համալս. պատմ. ֆակ. ուսանողների համար/Երևանի պետ. համալս./Խմբ. կոլեգիա՝ Ի. Ս. Գալկին (գլխ. խմբ.) և ուրիշ.; [Թարգմ.՝ Մ. Լ. Հովհաննիսյան, Օ. Պ. Համբարձումյան].—Եր.։ Երևանի համալս. հրատ., 1987—592 էջ։

0504040000—16 / Ն 704(02)—87 12—86

ԳՄԴ 63.3(0)6+66.2(0)+65.5

НОВЕЙШАЯ ИСТОРИЯ
1939—1973 гг.
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1987

© Издательство «Высшая школа», 1975
© Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987

ԱՌԱՋԱԲԱՆ

Դասագիրքը պատրաստել է ՄՊՀ պատմության ֆակուլտետի նոր և նորագույն պատմության ամբիոնի կոլեկտիվը, մի շարք ուսումնական ու գիտական հիմնարկությունների մասնագետների մասնակցությամբ։ Ժամանակագրական առումով այն շարունակում է դասագրքի՝ 1974 թ. լույս տեսած առաջին մասը և գրված է նորագույն պատմության գործող ծրագրին համապատասխան, պետական համալսարանների պատմության ֆակուլտետների համար։ Դասագրքի կառուցվածքը մշակելիս հաշվի է առնված պատմության ֆակուլտետներում հարավային ու արևմտյան սլավոնների և Ասիայի ու Աֆրիկայի երկրների պատմության առանձին դասընթացների առկայությունը, որոնցում շարադրվում է սոցիալիստական երկրների՝ ԼԺՀ-ի, ԲԺՀ-ի, ՉՍՍՀ-ի, ՀՍՖՀ-ի, ՎԴՀ-ի, ՉԺՀ-ի, ԿԺԴՀ-ի առաջացման ու զարգացման պատմությունը, և համապատասխան դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները։

Դասագրքի վրա աշխատելիս հեղինակային կոլեկտիվը և խմբագրական կոլեգիան ձգտել են հաշվի առնել այն նոր տեսական դրույթները, որոնք արտացոլված են ՍՄԿԿ-ի, արտասահմանյան երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, նրանց միջազգային խորհրդակցությունների փաստաթղթերում, օգտագործել նորագույն պատմության պրոբլեմների վերաբերյալ սովետական ու արտասահմանյան առաջադեմ պատմաբանների նորագույն ուսումնասիրությունների եզրակացությունները և, վերջապես, մտցնել պատմագրության ու պատմական պրոցեսի նորագույն բուրժուական կոնցեպցիաների քննադատության տարրեր։ Նյութի շարադրանքը հասցված է մինչև 1973 թվականը։

Դասագրքից բացի հանձնարարում ենք օգտվել պատմական քարտեզների վերջին հրատարակությունից՝ «Արտասահմանյան երկրների նորագույն պատ-

մության առլասից» (ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր վարչության հրատ., Մ., 1975)։

Դասագրքի նյութերի և մակետի քննարկմանը մասնակցել են ՄՊՀ պատմության ֆակուլտետի դասախոսները և այլ ուսումնական ու գիտական հիմնարկությունների շատ մասնագետներ։ Խմբագրական կոլեգիան նրանց բոլորին խորին շնորհակալություն է հայտնում։

ԳԼՈՒԽ 1

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1939—1945 ԹԹ.

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ծագումն ու բնույթը

Երկրորդ համաշխարհային պատերազմը կապիտալիստական երկրների տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափության օրենքի գործողության հետևանքն էր։ 30-ական թվականներին Գերմանիայի և Ճապոնիայի էկոնոմիկան զարգանում էր զգալիորեն ավելի արագ, քան Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի էկոնոմիկան, որոնց ձեռքում էին իրացման շուկաները, հումքի աղբյուրները, կապիտալի ներդրման ոլորտները և գաղութները։ Իր տնտեսական զարգացման ճանապարհին առաջ անցնելով Անգլիայից ու Ֆրանսիայից, Գերմանիան վերստին առաջադրեց աշխարհի վերաբաժանման հարցը։ Գերմանական իմպերիալիստները պահանջում էին վերանայել Վերսալյան սիստեմը, Գերմանիային վերադարձնել նրա նախկին գաղութները։ Ֆաշիզմի հաստատումը Գերմանիայում այդ պահանջներին տալիս էր բացահայտ ագրեսիվ բնույթ։ Գերմանիային միացան Իտալիայի ու Ճապոնիայի իմպերիալիստները. ձևավորվեց ագրեսիվ իտալա-գերմանա-ճապոնական բլոկը, որը ձգտում էր վերաբաժանել աշխարհը և հաստատել իր համաշխարհային տիրապետությունը։ Աշխարհը վերաբաժանելու Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի փորձերը լուրջ սպառնալիք էին Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների համար։ Իրենց դիրքերը պահպանելու վերջիններիս ձգտումը հասցրեց անգլո-ֆրանսիական, ապա և՝ անգլո-ամերիկյան բլոկների ձևավորմանը։ Իրացման շուկաների, հումքի աղբյուրների, կապիտալի ներդրման ոլորտների համար այդ բլոկների մղած պայքարը վերածվեց երկրորդ համաշխարհային պատերազմի։

«Երկու համաշխարհային պատերազմներ ծնած հիմնական պատճառները նույնն էին։ Ուստի և երկրորդ համաշխարհային պատերազմն իր ծագմամբ նույնպես անարդարացի, իմպերիալիստական էր բոլոր գլխավոր կապիտալիստական պետությունների կողմից»[1]։ Այդուհանդերձ, այն իրադրությունը, որի պայմաններում հասունանում էր երկրորդ համաշխարհային պատերազմը, արմատապես տարբերվում էր առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակի միջազգային իրադրությունից։ Գլխավոր տարբերությունն այն էր, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հետևանքով ավարտվեց կապիտալի անսահմանափակ իշխանության դարաշրջանը, և սկսվեց նոր, մարդկության՝ կապիտալիզմից սոցիալիզմին ու կոմունիզմին անցնելու պատմական դարաշրջանը։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի և կապիտալիզմի

[1] «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմություն», հ. 5, գիրք 1, Մ. 1970, էջ 75 (ռուս.)։

ընդհանուր ճգնաժամի հետագա խորացման հետևանքով նշանակալիորեն աճեց ժողովրդական զանգվածների դերը, ձևավորվեցին ու ամրապնդվեցին կոմունիստական կուսակցությունները։ Փոխվեց նաև միմյանց հետ թշնամություն ունեցող իմպերիալիստական կոալիցիաների օբյեկտիվ դրությունը։ Ի տարբերություն առաջին համաշխարհային պատերազմի, երկրորդ համաշխարհային պատերազմը տեղի ունեցավ ոչ միայն աշխարհի վերաբաժանման համար։ Ֆաշիստական խմբավորումը, որին գլխավորում էր հիտլերյան Գերմանիան, իր առջև նպատակ էր դրել համաշխարհային տիրապետության նվաճումը, ամբողջական ժողովուրդների ստրկացումը և նույնիսկ ոչնչացումը։

Նոր իրադրությունը, որն առաջացավ երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելու պահին, չէր կարող խոր ազդեցություն չունենալ նրա բնույթի վրա։ Սովետական Միության գոյությունը, զորեղ կոմունիստական կուսակցությունների առկայությունը, դեմոկրատական ուժերի լայն ներգրավումը պատմական պրոցեսի մեջ, համաշխարհային ամբողջ քաղաքակրթության համար մահացու վտանգ ներկայացնող ֆաշիզմի դեմ պայքարելու անհրաժեշտությունը օբյեկտիվ հնարավորություններ էին ստեղծել երկրորդ համաշխարհային պատերազմը արդարացի, հակաֆաշիստական, ազատագրական պատերազմի վերածելու համար։ Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի ազատագրական միտումները միանգամից գերակշռության չհասան։ Այսպես կոչված «տարօրինակ պատերազմի» ժամանակ, երբ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները, ըստ էության, ռազմական գործողություններ չէին մղում Գերմանիայի դեմ և իրենց սեփական երկրներում էլ հալածում էին հակաֆաշիստներին, գերակշռում էին իմպերիալիստական միտումները։ Ազատագրական միտումն այդ ժամանակ ներկայացնում էր Լեհաստանի, Չինաստանի, Չեխոսլովակիայի և այլ երկրների ժողովրդական զանգվածների դիմադրությունը ֆաշիստական զավթիչներին։ Հանդիպելով ազգային սուվերենությունը կորցնելու սպառնալիքին, Գերմանիայի դեմ վճռական պայքարի ուղին ելան Անգլիայի ժողովրդական զանգվածները և կառավարությունը։ Երկրորդ համաշխարհային պատերազմն ազատագրականի ու հակաֆաշիստականի վերածվելու գործում վճռական ու գլխավոր գործոն եղավ Սովետական Միության մասնակցությունն այդ պատերազմին։ «ՍՍՀՄ-ի մտնելը պատերազմի մեջ արմատապես փոխեց իրադրությունն ու հեռանկարները, ավարտեց պատերազմն արդարացի, ազատագրականի վերածելու բարդ պրոցեսը»[2]։ Հիտլերյան ագրեսիայի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարը միաձուլվեց հակաֆաշիստական ազատագրական բոլոր ուժերի պայքարին։ Հայրենական մեծ պատերազմը դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր բաղկացուցիչ մասը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ. 1939 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1—1941 Թ. ՀՈՒՆԻՍԻ 22

Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը Լեհաստանի վրա

Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվեց Լեհաստանի վրա հիտլերյան Գերմանիայի հարձակմամբ։ Լեհաստանի դեմ ուղղված գործողությունների պլանը մշակվել էր դեռևս 1939 թ. գարնանը։ Օգոստոսի վերջերին հիտլերականները կազմակերպեցին լեհական զինվորական համազգեստ հագած էսէսականների մի խմբի հարձակում այն ժամանակ Գերմանիային պատկանող սահմանամերձ Գլայվից քաղաքի ռադիոկայանի վրա և այդ պրովոկացիան ներկայացրին որպես Գերմանիայի դեմ ուղղված լեհական բանակի գործողություն։ 1939 թ. սեպտեմբերի 1-ին ժամը 4-ն անց 45 րոպեին 2500 տանկերի և 2000 ինքնաթիռների պաշտպանությամբ Լեհաստան ներխուժեց գերմանա-ֆաշիստական 57 դիվիզիա։

Լեհական կառավարությունը հանկարծակիի եկավ։ Հույսը դնելով իր դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հանգստացուցիչ հավաստիացումների վրա, նա ընդհուպ մինչև օգոստոսի 31-ը մոբիլիզացիա չէր անցկացրել և կարողացավ ագրեսորի դեմ հանել միայն 33 թույլ զինված դիվիզիա։ Լեհաստանի զինվորական հրամանատարությունը և կառավարությունը, որոնք կտրված էին իրենց ժողովրդից, չկարողացան հակահարված կազմակերպել Գերմանիայի գերակշռող ուժերին։ Երկրի միայն մի քանի շրջաններում լեհական բանակի զորամասերը ժողովրդական զանգվածների աջակցությամբ հերոսական դիմադրություն էին ցույց տալիս ագրեսորին։ Այդպիսին էր վիճակը Վարշավայում, որի ուղղությամբ գերմանական զորքերը ճեղքում կատարեցին դեռ սեպտեմբերի 8-ին։ Քաղաքի բնակչությունը և կայազորը ֆաշիստական զավթիչների դեմ անհավասար պայքար էին մղում մինչև սեպտեմբերի 28-ը։ Մայրաքաղաքի պաշտպանության համար հանդես եկած գլխավոր ուժը Վարշավայի պաշտպանության բանվորական բրիգադն էր, որը ստեղծել ու ղեկավարում էին կոմունիստները և ձախ սոցիալիստները։ Սեպտեմբերի վերջին լեհական զորքերի դիմադրությունը կոտրվեց։ Լեհաստանի հիմնական մասը հայտարարվեց գերմանական «գեներալ-նահանգապետություն», իսկ նրա արևմտյան շրջանները մտցվեցին Գերմանիայի սահմանների մեջ։ Սկսվեց լեհ ժողովրդի ազգային ունեցվածքի կողոպուտը, բնակչության զանգվածային ոչնչացումը և առավել աշխատունակ մարդկանց բռնի արտաքսումը Գերմանիա՝ տաժանակիր աշխատանքի։ Երկրորդ համաշխարհային պատերազմի և ֆաշիստական օկուպացիայի հետևանքով զոհվեց ավելի քան 6 մլն. լեհ։

Կարմիր բանակի ազատագրական արշավը

1939 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին գերմանական զորքերը հասան Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի տարածքները, որոնք Լեհաստանը 1921 թ. զավթել էր սովետական պետությունից։ Այդ պահին լեհական կառավարությունը և զինվորական հրամանատարությունը լքել էին Լեհաստանի սահմանները։ Լեհական պետությունը դադարել էր գոյություն ունենալուց։ Ստեղծված իրադրությունը ՍՍՀՄ-ից պահանջում էր ակտիվ գործողություններ, որպեսզի դադարեցվեր գերմանական զորքերի առաջխաղացումը։ Սովետական ժողովուրդը չէր կարող բախտի քմահաճույքին թողնել իր եղբայրներին՝ արևմտյան ուկրաինացիներին և բելոռուսներին, և 1939 թ. սեպտեմբերի 17-ին սովետական զորքերը ձեռնամուխ եղան Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը։

1939 թ. սեպտեմբերի վերջին կարմիր բանակի ազատագրական արշավը հաջողությամբ ավարտվեց։ Ազատագրված տարածքներում ընտրվեցին ժողովրդական ժողովներ, որոնք դիմեցին ՍՍՀՄ Գերագույն սովետին՝ խնդրելով վերամիավորել Արևմտյան Ուկրաինան Ուկրաինական ՍՍՀ-ի և Արևմտյան Բելոռուսիան՝ Բելոռուսական ՍՍՀ-ի հետ։ Իրականացվեց միասնական ազգային պետություններում ուկրաինական և բելոռուսական ժողովուրդների միավորման պատմական խնդիրը։

Լեհաստանի ջախջախման և Գերմանիայի դիրքերի ուժեղացման կապակցությամբ Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի բուրժուական կառավարությունները փոխեցին իրենց բացասական վերաբերմունքը փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրեր կնքելու Սովետական Միության մինչ այդ արած

[2] Նույն տեղը, էջ 77։

առաջարկության նկատմամբ։ Նման երկկողմանի պայմանագրերը ՍՍՀՄ-ը ստորագրեց 1939 թ. սեպտեմբերի 28-ին Էստոնիայի, հոկտեմբերի 5-ին՝ Լատվիայի և հոկտեմբերի 10-ին՝ Լիտվայի հետ։

«Տարօրինակ պատերազմը» (1939 թ. սեպտեմբեր—1940 թ. մայիս)

Գերմանիայի հարձակումը Լեհաստանի վրա տագնապ առաջացրեց Անգլիայում և Ֆրանսիայում, որոնք Լեհաստանի հետ կապված էին դաշնակցային պարտավորություններով։ 1939 թ. սեպտեմբերի 3-ին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները Գերմանիային պատերազմ հայտարարեցին, բայց փաստորեն այն չէին վարում։ Մինչ ֆաշիստական բանակի հիմնական ուժերը օկուպացնում էին Լեհաստանը, Արևմտյան ռազմաճակատում տեղի էր ունենում «տարօրինակ պատերազմ». 110 ֆրանսիական և 5 անգլիական դիվիզիաներ ոչ մի լուրջ մարտական գործողություն չէին ձեռնարկում գերմանական 23 դիվիզիաների դեմ։ «Տարօրինակ պատերազմը» մյունխենյան քաղաքականության շարունակությունն էր։ Նրա նպատակն էր Գերմանիային համոզել իրենց համաշխարհային դիրքերը պաշտպանելու Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների վճռականությունը և միաժամանակ չփակել ուղիները Սովետական Միության դեմ իմպերիալիստական տերությունների նոր գործարքի համար։

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները, որոնց գլխավորում էին մյունխենյան գործարքի մասնակիցներ Չեմբեռլենն ու Դալադիեն, չնայած պատերազմ հայտարարելուն, շարունակում էին իրենց գլխավոր թշնամի համարել ոչ այնքան հիտլերյան Գերմանիային, որքան կոմունիզմն ու Սովետական Միությունը։ Գերմանիային շրմակայելով, նրանք Սովետական Միության վրա հարձակում էին նախապատրաստում հարավից՝ Թուրքիայի և հյուսիսից՝ Ֆինլանդիայի վրայով։ Դավաճաններն ու պարտվողականներն այդ երկրներում հալածանքների չէին ենթարկվում, բայց դրա փոխարեն հարձակում ծավալվեց բանվոր դասակարգի և կոմունիստների դեմ, որոնք մերկացնում էին «տարօրինակ պատերազմի» իմպերիալիստական բնույթը։ Որպես պատրվակ օգտագործելով շհարձակման սովետա-գերմանական պայմանագրի կնքումը, որը արժանացավ կոմունիստական կուսակցությունների հավանությանը, բուրժուական պրոպագանդան զրպարտչորեն փորձում էր կոմունիստներին ներկայացնել որպես Գերմանիայի դաշնակիցների։

Անգլիայի և Ֆրանսիայի սոցիալ-ռեֆորմիստական կուսակցություններն ու արհմիությունները պաշտպանեցին բուրժուազիայի գործողությունները և ակտիվ պայքարի մեջ մտան կոմունիստների դեմ։ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության, իսկ ավելի ուշ նաև Անգլիայի լեյբորիստական կուսակցության պարագլուխները մտան իրենց կառավարությունների կազմի մեջ։ Տրեդյունիոնների բրիտանական կոնգրեսի և ֆրանսիական աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի ղեկավարության ռեֆորմիստական մեծամասնությունը հակակցին ձեռնարկատերերի և կառավարության հետ «համագործակցության» քաղաքականություն։ Բանվորական և դեմոկրատական շարժման մեջ խոր պառակտում առաջացավ, որը թուլացրեց հակաֆաշիստական ուժերը։

Սովետա-ֆիննական պատերազմը

Հաշվի առնելով ավելի ու ավելի բարդացող միջազգային իրադրությունը, սովետական կառավարությունը 1939 թ. մայիսից բանակցություններ էր վարում Ֆինլանդիայի հետ փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու վերաբերյալ։ Ֆինլանդիայի կառավարությունը հրաժարվեց նման պայմանագիր կնքել։ Նա մերժեց սովետական առաջարկությունը նաև այն մասին, որպեսզի Կարելական պարանոցում սովետա-ֆիննական սահմանը, որն անցնում էր Լենինգրադից 30 կմ հեռավորությամբ, տեղափոխվի ավելի հյուսիս. որպես փոխհատուցում Ֆինլանդիային առաջարկվում էր կրկնակի անգամ մեծ տարածք Կարելիայում։ 1939 թ. նոյեմբերի 30-ին սկսվեց սովետա-ֆիննական պատերազմը։ Այդ պատերազմի ժամանակ Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը Ֆինլանդիային ցույց էին տալիս քաղաքական, տնտեսական և դիվանագիտական օգնություն, մատակարարում էին սպառազինություն, ռազմամթերք, ռազմական հանդերձանք։ 1940 թ. փետրվարի սկզբին դաշնակիցների բարձրագույն ռազմական խորհուրդը որոշում ընդունեց Նարվիկում (Նորվեգիա) զորքեր ափ հանելու և անգլո-ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուս Ֆինլանդիա ուղարկելու մասին։ Միաժամանակ Սովետական Միության հարավային շրջանների դեմ հարված էր նախապատրաստվում՝ Բաքուն և Բաթումը ռմբակոծելու, ինչպես նաև Սև ծով անգլո-ֆրանսիական ռազմանավեր մտցնելու միջոցով։

ՍՍՀՄ-ի դեմ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ռազմական գործողությունները նախատեսված էին 1940 թ. գարնանը, սակայն սովետա-ֆիննական պատերազմն ավարտվեց կարճիր բանակի հաղթանակով և 1940 թ. մարտի 12-ին ՍՍՀՄ-ի և Ֆինլանդիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրմամբ։ Սահմանը երկու պետությունների միջև մի շարք վայրերում հեռացվեց Լենինգրադից, Մուրմանսկից և Մուրմանսկի երկաթուղուց։ Կողմերը պարտավորվեցին վարել բարիդրացիական քաղաքականություն, ձեռնպահ մնալ միմյանց դեմ հարձակվելուց և չկնքել պայմանավորվող կողմերից մեկի դեմ ուղղված որևէ դաշինք կամ կոալիցիա։

Ֆրանսիայի պարտությունը

«Տարօրինակ պատերազմն» ավարտվեց Արևմտյան ռազմաճակատում գերմանա-ֆաշիստական զորքերի հարձակմամբ։ 1940 թ. ապրիլի 9-ի առավոտյան նրանք ներխուժեցին Դանիա և Նորվեգիա։ Դանիան դիմադրություն ցույց չտվեց, Նորվեգիայում սկսվեցին ռազմական գործողություններ։ Նորվեգական կառավարության խնդրանքով երկրի հյուսիսային մասեր ուղարկվեցին անգլիական և ֆրանսիական զորամասեր։ 1940 թ. մայիսի 10-ին գերմանա-ֆաշիստական զորքերն առանց պատերազմ հայտարարելու անցան Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի սահմանները և հարձակվեցին Ֆրանսիայի վրա։

Կողմերի ուժերը մոտավորապես հավասար էին, սակայն գերմանական հրամանատարությունը գործում էր ավելի հմտորեն։ Նա տանկերի հիմնական զանգվածը կենտրոնացրեց հարվածային խմբում, որը Սեդանի շրջանում ճեղքեց դաշնակիցների ռազմաճակատը։ Բանակը դուրս եկավ Լա Մանշի ծովեզերքը, Դյունկերկ քաղաքի մոտ շրջապատելով անգլո-ֆրանսիական զորքերի ըզգալի ուժեր։ Անգլիական էքսպեդիցիոն կորպուսի և շրջապատված ֆրանսիական զորքերի միայն մի մասը կարողացավ էվակուացվել Բրիտանական կղզիներ, դեն նետելով զենքն ու ռազմական հանդերձանքը։

1940 թ. հունիսի 22-ին ֆրանս-գերմանական զինադադարի ստորագրմամբ Ֆրանսիան պաշտոնապես դուրս եկավ պատերազմից։

Անգլիան ներխուժման սպառնալիքի առջև

Ֆրանսիայի կապիտուլացումը Անգլիային դրեց գերմանական ներխուժման ռեալ սպառնալիքի առջև։ Ժողովրդական զանգվածները լի էին իրենց երկրի անկախությունը պաշտպանելու վճռականությամբ։ Փոխվեց նաև Անգլիայի կառավարող շրջանների քաղաքականությունը։ 1940 թ. մայիսին իշխանության գլուխ անցավ Չերչիլի կառավարությունը, որում գերակշռում էին Գերմանիայի դեմ վճռական պայքարի կողմնակիցները։

Այդ ժամանակ գերմանական հրամանատարությունը պատրաստել էր Անգլիա ներխուժելու և այն օկուպացնելու պլան («Ծովառյուծ»), որը նախատեսում էր բնակչության ստրկացում, անհնազանդների ֆիզիկական ոչնչացում, երկրի կողոպուտ։ Հիտլերականները դեռ հույսերը չէին կորցնում, որ իրենց կհաջող-

վի հասնել Անգլիայի կապիտուլացմանն առանց լայն ռազմական գործողությունների։ 1940 թ. հուլիսի 19-ին Հիտլերը հրապարակայնորեն Անգլիային առաջարկեց ընտրություն կատարել՝ կա՛մ շարունակել պատերազմը, կա՛մ հաշտություն կնքել Գերմանիայի համար ձեռնտու պայմաններով։ Այդ առաջարկությունը Չերչիլի կառավարությունը մերժեց։ Այդ ժամանակ հիտլերականներն սկսեցին զանգվածային օդային հարձակումներ կատարել բրիտանական քաղաքների վրա և ուժեղացրին ծովի կողմից Անգլիայի բլոկադան։ Այդ միջոցառումները լուրջ վնաս պատճառեցին Անգլիային, բայց չկարողացան կոտրել նրա պաշտպանների համառությունը։

Գերմանական կառավարությունը որոշեց Անգլիա ներխուժելը հետաձգել մինչև Սովետական Միության դեմ արդեն պլանավորված պատերազմն ավարտվելը։ Նա գտնում էր, որ Գերմանիան, հաղթելով Սովետական Միությանը, Անգլիային կստիպի կապիտուլացվել։

Պատերազմն Աֆրիկայում

Մտնելով համաշխարհային պատերազմի մեջ, Իտալիան ամենից առաջ փորձեց գրավել Աֆրիկայի անգլիական գաղութները։ 1940 թ. հուլիսի սկզբին իտալական զորքերը գավթեցին Բրիտանական Սոմալին, Քենիայի և Սուդանի մի մասը։ Լիբիայի տարածքից նրանք ներխուժեցին Եգիպտոս և հարձակում սկսեցին Սուեզի ջրանցքի ուղղությամբ։ Սակայն 1940 թ. դեկտեմբերի 9-ին հետևեց անգլիացիների հակահարվածը, որի հետևանքով իտալական զորքերը դուրս շրջարկվեցին Եգիպտոսի սահմաններից։ Մինչև 1941 թ. գարունը իտալական զորքերը վտարվեցին Բրիտանական Սոմալիից, Քենիայից և Սուդանից, Իտալական Սոմալիից և Էրիտրեայից։ Անգլիական զինված ուժերը մտան Իտալիայի կողմից օկուպացված Եթովպիա։ 1941 թ. մայիսի 18-ին Եթովպիայում գտնվող իտալական բանակի մնացորդները կապիտուլացվեցին։

Ագրեսորների Եռյակ պակտը

Համախմբելով իրենց ուժերը համաշխարհային տիրապետության համար մղվող պայքարում, Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան 1940 թ. սեպտեմբերի 27-ին Բեռլինում ստորագրեցին Եռյակ պակտ։ Դա ֆաշիստական տերությունների ռազմաքաղաքական դաշինքն էր, որը սահմանազծում էր նրանց ազդեցության ոլորտները։ Ճապոնիան ճանաչում էր Գերմանիայի և Իտալիայի «ղեկավար դերը» Եվրոպայում, Իտալիան և Գերմանիան՝ Ճապոնիայի «ղեկավար դերը» Արևելյան Ասիայում։ Պակտի մասնակիցները պարտավորվում էին միմյանց օգնել բոլոր միջոցներով, ներառյալ ռազմական, այդ թվում նաև այն դեպքում, եթե նրանցից մեկը պատերազմի վիճակի մեջ գտնվի դեռևս չկռվող որևէ տերության, այսինքն՝ Սովետական Միության կամ ԱՄՆ-ի հետ։

Դաշնակցային հարաբերությունների զարգացումը ԱՄՆ-ի և Անգլիայի միջև

ԱՄՆ-ի կառավարությունը, որը ծայրահեղորեն մտահոգված էր Եվրոպայում ուժերի հարաբերակցության փոփոխությունից հօգուտ Գերմանիայի, աստիճանաբար հաղթահարում էր «մեկուսացման կողմնակիցների» դիմադրությունը։ 1939 թ. նոյեմբերին կոնգրեսը որոշում ընդունեց զենքի արտահանման վրա եղած էմբարգոն վերացնելու մասին, և ԱՄՆ-ի կառավարությունն սկսեց կանխիկ վճարման պայմանով զենք մատակարարել Անգլիային և Ֆրանսիային։ 1940 թ. սեպտեմբերի 2-ին ստորագրվեց անգլո-ամերիկյան համաձայնագիր, ըստ որի ԱՄՆ-ը բրիտանական նավատորմին էր հանձնում 50 հնացած էսկադրային ականակիր։ Դրա փոխարեն Անգլիան վարձակալությամբ 99 տարի ժամկետով ԱՄՆ-ին էր հանձնում իր մի շարք տարածքներ՝ ռազմական բազաներ ստեղծելու համար (Նյուֆաունդլենդ, Բահամյան, Տրինիդադ, Յամայկա և այլ կղզիներում)։ 1941 թ. մարտի 11-ին, Անգլիայի վալյուտային և ոսկու պաշարների խիստ նվազման կապակցությամբ ԱՄՆ-ում ընդունվեց «լենդ-լիզի» վերաբերյալ օրենքը, որը թույլ էր տալիս փոխարինաբար կամ վարձակալությամբ սպառազինություն տրամադրել Գերմանիայի հակառակորդներին։

Իտալա-գերմանական ագրեսիան Հարավարևելյան Եվրոպայում

Իտալիան և Գերմանիան ոչ միայն դաշնակիցներ էին, այլև մրցակիցներ. մասնավորապես, նրանք երկուսն էլ հավակնություններ ունեին Հարավարևելյան Եվրոպայի երկրների նկատմամբ։ 1940 թ. հոկտեմբերի 28-ին Իտալիան, չնախազգուշացնելով Գերմանիային, հարձակվեց Հունաստանի վրա։ Հունական զորքերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին և ագրեսորներին վռնդեցին Ալբանիայի տարածքը, որը դեռևս 1939 թ. ապրիլին օկուպացրել էր Իտալիան։

Գերմանիան ևս կոնֆլիկտ հրահրեց Հունգարիայի և Ռումինիայի միջև, իսկ հետո հանդես գալով որպես միջնորդ, այն լուծեց հօգուտ Հունգարիայի. Վիեննայի արբիտրաժի համաձայն Ռումինիան Հունգարիային էր հանձնում Հյուսիսային Տրանսիլվանիան։ Հունգարա-ռումինական կոնֆլիկտի հետևանքով նրա երկու մասնակիցները դարձան Գերմանիայի արբանյակներ։ Հունգարիայում դիկտատոր Խորտիի և Ռումինիայում գեներալ Անտոնեսկուի ֆաշիստական ռեժիմները 1940 թ. աշնանը միացան Եռյակ պակտին։ Հունգարիա և Ռումինիա մտցվեցին գերմանական զորքեր։ 1941 թ. մարտի 1-ին Եռյակ պակտին միացավ Բուլղարիան։ Սովետական Միությունը բուլղարական կառավարությանը նախազգուշացրեց, որ նրա գործողությունները տանում են «ոչ թե դեպի խաղաղության ամրապնդում», այլ պատերազմի ոլորտի ընդլայնում և նրա մեջ Բուլղարիայի ներգրավում», սակայն բուլղարական կառավարող շրջանները հաշվի չնստեցին այդ նախազգուշացման հետ։ Բուլղարիայի տարածք մտան գերմանական զորամասեր։ Քաղաքական սուր պայքար ծավալվեց Հարավսլավիայում։ Բեռլինի ճշնման տակ Հարավսլավիայի կառավարությունն ստորագրեց Եռյակ պակտին միանալու արձանագրությունը։ Դա ժողովրդական ցասման պայթյուն առաջացրեց երկրում, և կառավարությունը տապալվեց։ Նոր կառավարությունը չվավերացրեց արձանագրությունը, թեև այն չեղյալ էլ չհայտարարեց։ 1941 թ. ապրիլի 5-ին նա ստորագրեց բարեկամության և չհարձակման սովետա-հարավսլավյան պայմանագիրը։ Հաջորդ օրը Հունգարիայում և Բուլղարիայում տեղակայված գերմանա-ֆաշիստական զորքերն անցան Հարավսլավիայի սահմանները և միաժամանակ գրոհեցին Հունաստանի վրա, որը շարունակում էր պատերազմն Իտալիայի դեմ։

Չնայած ագրեսորների վիթխարի գերակշռությանը, Հարավսլավիայի և Հունաստանի ժողովուրդները հերոսաբար դիմադրում էին։ Սակայն այդ երկրների բուրժուազիան ու կալվածատերերը, վախենալով ագրեսորների դեմ ժողովրդական պայքարի ծավալումից, երկու շաբաթ հետո կապիտուլացվեցին։

Այսպիսով, մինչև 1941 թ. ամառը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի գրեթե բոլոր երկրներն օկուպացված էին ֆաշիստական տերությունների կողմից կամ կախման մեջ էին գտնվում նրանցից։

Գերմանա-իտալական ֆաշիստների կողմից մի ամբողջ շարք վաղուց ձևավորված ազգային պետությունների ստրկացումը կյանքի կոչեց դիմադրության լայն հայրենասիրական շարժում։ Այն առաջացավ Գերմանիայի կողմից օկուպացված Լեհաստանում և Չեխոսլովակիայում, ապա և Ֆրանսիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Դանիայում, Լյուքսեմբուրգում, Նորվեգիայում, վերջապես, ընդգրկեց Բալկանյան թերակղզու երկրները։ Դիմադրության շարժման գլխավոր կազմակերպիչներն ու ոգեշնչողները կոմունիստներն էին։ Այդ շարժմանը մասնակցեցին մանր ու միջին բուրժուազիայի, մտավորականության, սպայության հայրենասիրաբար տրամադրված ներկայացուցիչները։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ. 1941 Թ. ՀՈՒՆԻՍ—1942 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ։ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

«Բարբարոսա» պլանը

Համաշխարհային տիրապետության նվաճման գերմանական իմպերիալիստների պլաններում կենտրոնական տեղ էր հատկացվում Սովետական Միության՝ ժողովուրդների խաղաղության, ազատության և ազգային անկախության այդ պատվարի խորտակմանը։ Պատրաստվելով Սովետական Միության դեմ պատերազմի, ֆաշիստական Գերմանիան հենվում էր տասներկու օկուպացված եվրոպական երկրների տնտեսական պոտենցիալի վրա։ 1941 թ. հիտլերականներն իրենց տրամադրության տակ ունեին մոտ 32 մլն տ պողպատի, 400 մլն տ քարածխի արտադրության հզորություն։ Գերմանական արդյունաբերության մեջ աշխատում էին եվրոպական երկրներից բռնի տարված ավելի քան 3 մլն բանվորներ և ռազմագերիներ։ ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու պահին հիտլերյան Գերմանիան զենքի տակ ուներ 7,4 մլն մարդ։ 1940 թ. դեկտեմբերի 18-ին Հիտլերը հաստատվեց ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու «Բարբարոսա» պլանը։ Դրա հիմքում դրված էր «կայծակնային» պատերազմի գաղափարը։ Ֆաշիստական ստրատեգները մտադիր էին մի քանի ամսվա ընթացքում ոչնչացնել սովետական բանակի հիմնական ուժերը, գրավել Մոսկվան ու Լենինգրադը, օկուպացնել ՍՍՀՄ-ի տարածքը Արխանգելսկ—Վոլգա գծով, ստրկացնել սովետական ժողովրդին, իսկ նրա առավել ակտիվ մասը ոչնչացնել։ Խաղաղ բնակիչներին բնաջնջելու համար վաղօրոք ստեղծվում էին մարդասպանների ջոկատներ և համապատասխան «տեխնիկա»։

ՍՍՀՄ-ի դեմ մղվող պատերազմի մեջ Գերմանիան ներգրավեց իր դաշնակիցներին՝ Իտալիային, Հունգարիային, Ռումինիային, Ֆինլանդիային, Խորվաթիային (մարիոնետային պետություն, որը ստեղծվեց օկուպացված Հարավսլավիայի մի մասից) և Սլովակիային։ Հիտլերականներին աջակցում էին Բուլգարիան, Իսպանիան, Վիշիի կառավարությունը։ Նույակ պակտի համաձայն, Գերմանիան կարող էր հուսալ Ճապոնիայի օգնությունը։ Պատրաստվելով ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի, գերմանական ֆաշիստները չէին բացառում Անգլիայի և ԱՄՆ-ի իմպերիալիստների հետ գործարքի մեջ մտնելու հնարավորությունը։ ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակվելուց մեկ ու կես ամիս առաջ Անգլիա թռավ Հիտլերի տեղակալ Հեսսը, որն անգլիական մյունխենականների հետ հանդիպումներ էր ունենում Անգլիայի և Գերմանիայի միջև կոմպրոմիսի հնարավորությունները քննարկելու համար։ Անգլիայի կառավարությունը ձերբակալեց Հեսսին, բայց գաղտնի էր պահում նրա բերած առաջարկությունները։

1941 թ. ամռան սկզբներին Սովետական Միությունն ուներ հզոր ռազմարդյունաբերական բազա, որն ստեղծվել էր նախապատերազմյան հնգամյակների տարիներին։ Ռազմական արտադրությունն ընդարձակվում էր ՍՍՀՄ-ի թիկունքային շրջաններում՝ Ուրալում և Սիբիրում։ Խիստ խնայողության գնով կուտակվեցին զգալի պետական ռեզերվներ և մոբիլիզացիոն պաշարներ։ Սովետական տաղանդավոր կոնստրուկտորներն ստեղծեցին նոր տանկերի, ինքնաթիռների, հրետանային և ավտոմատ զենքի կատարելագործված նմուշներ։ 1939 թ. աշնանից ծավալվում էին զորքերի բոլոր տեսակները, միայն հրաձգային դիվիզիաների բանակը մինչև 1941 թ. ամառն ավելացավ ավելի քան կրկնակի։

Ուկրաինայի և Բելոռուսիայի արևմտյան մարզերի վերամիավորումը ՍՍՀՄ-ին նպաստեց երկրի պաշտպանության ամրապնդմանը։ 1940 թ. ամռանը կարմիր բանակի զորամասերը, մերձբալթյան երկրների կառավարություններ-

ի հետ կայացած պայմանավորվածության համաձայն, մտան նրանց տարածքները։ Մերձբալթիկայի ժողովուրդները տապալեցին բուրժուազիայի ու կալվածատերերի իշխանությունը և իրենց հանրապետություններում վերականգնեցին սովետական իշխանությունը։ Էստոնիան, Լիտվան և Լատվիան իրենց խնդրանքով ընդունվեցին Սովետական Միության կազմի մեջ։ Սովետական կառավարությունը միաժամանակ Ռումինիայի կառավարության առջև հարց բարձրացրեց նրա կողմից 1918 թ. զավթված Բեսարաբիան անհապաղ վերադարձնելու և Հյուսիսային Բուկովինան Սովետական Միությանը հանձնելու մասին։ Օտարերկրյա տիրապետությունից ազատագրված Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան մտան ՍՍՀՄ-ի կազմի մեջ։

1941 թ. ապրիլին սովետական կառավարությունը Ճապոնիայի հետ ստորագրեց չեզոքության վերաբերյալ պայմանագիր և Թուրքիայի հետ փոխանակեց նոտաներ, որոնք պարտավորություններ էին պարունակում պատերազմի դեպքում չեզոքություն պահպանելու մասին։

Սակայն նախապատրաստական միջոցառումները չհաջողվեց լիակատար ծավալով իրականացնել։ Նոր տեխնիկայով բանակի վերազինումը չավարտվեց։ ՍՍՀՄ-ի զինված ուժերը նախապես չմոբիլիզացվեցին։ «Ի. Վ. Ստալինը, որը գլխավորում էր կուսակցության և երկրի ղեկավարությունը, ջանալով հետաձգել ռազմական ընդհարումը հիտլերյան Գերմանիայի հետ, որպեսզի ժամանակն օգտագործեր բանակն ու երկիրը պատերազմին նախապատրաստելու համար, համաձայնություն չէր տալիս սահմանամերձ օկրուգների զորքերը մարտական լիակատար պատրաստության բերելու, գտնելով, որ այդ քայլը կարող է ֆաշիստական կառավարողների կողմից օգտագործվել որպես պատերազմի պատրվակ»[3]։

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի սկիզբը

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու հանկարծակի հարձակվեց Սովետական Միության վրա։ ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու համար մոբիլիզացվել էին վիթխարի ուժեր. Գերմանիայի և նրա դաշնակիցների 190 դիվիզիա (5,5 մլն զինվոր ու սպա, 4940 ինքնաթիռ ու 3410 տանկ)։ Սովետական զորքերը մտան անհավասար մարտի մեջ, և այդ իսկ պահից պատերազմը դարձավ սովետական ժողովրդի արդարացի, հակաֆաշիստական, Հայրենական պատերազմ։

Ուխտադրժորեն հարձակված թշնամու դեմ պայքարի ծրագիր նշեց Համկ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվը, որը շարադրված էր 1941 թ. հուլիսի 3-ին Ի. Վ. Ստալինի՝ ռադիոյով ունեցած ելույթում։ Կուսակցությունը և կառավարությունը պահանջում էին ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, թշնամուց պաշտպանել սոցիալիստական հայրենիքի պատիվն ու անկախությունը, ջախջախել ֆաշիստական զավթիչներին։ Հայրենական մեծ պատերազմի նպատակներից մեկն էր ֆաշիստների կողմից ստրկացված Եվրոպայի ժողովուրդների, այդ թվում նաև գերմանական ժողովրդի ազատագրումը։

Պատերազմի առաջին ամիսներին ֆաշիստական զորքերը, որոնք լրիվին մոբիլիզացված էին և ունեին մարտական մեծ փորձ, արագ առաջ էին շարժվում։ Կարմիր բանակն ստիպված էր նահանջել, կրելով մարդկանց և մարտական տեխնիկայի զգալի կորուստ։ Բայց նրա համառ դիմադրությունը մեծ վնաս էր հասցնում ֆաշիստական բանակին և ձախողում «Բարբարոսա» պլանի իրագործման ժամկետները։

[3] «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմություն», հ. 5, գիրք 1, էջ 153։

Առասպելական սխրագործություն կատարեցին Բրեստ ամրոցի հերոսները, որոնք մեկ ամսից ավելի անհավասար մարտ էին մղում, կաշկանդելով վերմախտի խոշոր ուժեր։ Սմոլենսկի ճակատամարտի բոցերում ծնունդ առավ սովետական գվարդիան՝ բանակի ծաղիկը, սովետական ժողովրդի հպարտությունը։ Ավելի քան երկու ամիս տևեց Կիևի պաշտպանությունը։ Երկար ժամանակ պաշտպանվում էին Օդեսան ու Սևաստոպոլը, համառորեն կռվում էին Տուլայի պաշտպանները։ Պաշարված Լենինգրադում, որը զրկվել էր ջրմուղից, էլեկտրականությունից և ջեռուցումից, դաժանորեն տառապում սովից, գործում էին ձեռնարկությունները ու հիմնարկները, ստեղծագործում գիտնականներն ու կոնստրուկտորները, բանաստեղծներն ու գրողները, կոմպոզիտորներն ու նկարիչները։

ՍՍՀՄ-ի՝ ժամանակավորապես օկուպացված տարածքում ստեղծվում էին պարտիզանական ջոկատներ, որոնք ծանր հարվածներ էին հասցնում հակառակորդի կոմունիկացիաներին։ Վրա հասնող ձմեռը շտապեցնում էր հիտլերականներին, որոնք մտադրվել էին Սովետական Միությանը ջախջախել մինչև ցրտերն ընկնելը։ Գերմանական հրամանատարությունը որոշեց իր հիմնական ուժերը նետել Մոսկվայի վրա։

Մոսկվայի վրա գերմանա-ֆաշիստական բանակի կատարած առաջին «գլխավոր հարձակումը», որն սկսվեց 1941 թ. սեպտեմբերի 30-ին, անհաջողության մատնվեց։ Նոյեմբերի 15—16-ին գերմանական ռազմական հրամանատարությունը ձեռնարկեց երկրորդ «գլխավոր հարձակումը»։ Մոսկվային էին մոտենում գերմանական բանակի միլիոնից ավելի զինվորներ ու սպաներ, որոնք ունեին 1700 տանկ և ինքնագնաց հրանոթ, 14 հազ. հրանոթ ու ականանետ, 950 մարտական ինքնաթիռ։ Մոսկվայի պաշտպանների զորքերում հաշվվում էր 720 հազ. մարդ, որոնք սպառազինված էին 5900 հրանոթով և ականանետով, 670 տանկով։ Չնայած թվական գերակշռությանը, ֆաշիստներին չհաջողվեց ճեղքել-անցնել դեպի Մոսկվա։ 1941 թ. դեկտեմբերի 5—6-ին սովետական զորքերը հակահարձակման անցան և ջախջախեցին հակառակորդին։

Մոսկվայի մոտ գերմանացիների ջախջախումը վիթխարի ստրատեգիական, ռազմաքաղաքական և բարոյական նշանակություն ուներ։ Ջախջախվեց «կայծակնային պատերազմի» գերմանա-ֆաշիստական ստրատեգիան, պսակազերծ արվեց հիտլերականների անպարտելիության առասպելը և թաղվեց «Բարբարոսա» պլանը։ Հերոս քաղաք Մոսկվան տվեց պաշտպանությունում տոկունության և հարձակման մեջ վճռականության փայլուն օրինակ։ Զգալիորեն ամրապնդվեցին ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքական դիրքերը։

Հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումը

Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը Սովետական Միության վրա առաջ բերեց կռվող և ֆաշիստների օկուպացրած երկրների ժողովրդական զանգվածների ջերմ համակրանքը սովետների երկրի նկատմամբ։ Ի դեմս Սովետական Միության նրանք տեսնում էին այն ուժը, որն ընդունակ էր ջախջախել ֆաշիստական ագրեսորներին և պաշտպանել Եվրոպայի ժողովուրդների ազգային անկախությունը։ Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանները նույնպես շահագրգռված էին համատեղ գործողություններում։

1941 թ. հուլիսի 12-ին ստորագրվեց սովետա-անգլիական համաձայնագիր։ Կողմերը պարտավորվում էին միմյանց օգնություն և աջակցություն ցույց տալ ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պայքարում և պատերազմի ամբողջ ընթացքում նրա հետ բանակցություններ չվարել, զինադադար կամ հաշտության պայմանագիր կնքել միայն փոխադարձ համաձայնությամբ։ Մեծ նշանակություն ունեցավ «լենդ-լիզի» մասին օրենքի տարածումը Սովետական Միության վրա, որը ԱՄՆ-ի կառավարությունն ընդունեց 1941 թ. նոյեմբերի

30-ին։ Սակայն այդ միջոցառումները չէին փոխարինում ֆաշիստական բանակների գլխավոր հարվածն իր վրա ընդունած Սովետական Միությանը ցույց տրվող անմիջական ռազմական օգնությանը։ Հաշվի առնելով, որ Գերմանիայի դեմ պայքարելու առավել արդյունավետ մեթոդ կարող էր լինել Եվրոպայում երկրորդ ռազմաճակատի բացումը, սովետական կառավարությունը 1941 թ. հուլիսի 18-ին այդ հարցը դրեց Մեծ Բրիտանիայի կառավարության առջև։ Բրիտանական կղզիներում այդ ժամանակ կար լիովին մոբիլիզացված 33 դիվիզիա, բայց Չերչիլը սովետական կառավարությանը պատասխանեց, թե Անգլիան հնարավորություն չունի երկրորդ ռազմաճակատ բացել։ 1941 թ. օգոստոսին Նյուֆաունդլենդ կղզում տեղի ունեցավ Ռուզվելտի և Չերչիլի հանդիպումը, որտեղ քննարկվեց պատերազմի նպատակների վերաբերյալ հարցը։ ԱՄՆ-ի և Անգլիայի համատեղ դեկլարացիայում, որը կոչվեց «Ատլանտյան խարտիա», ասվում էր, որ երկու պետությունները տարածքային նվաճումների չեն ձգտում և չեն համաձայնի ոչ մի տարածքային փոփոխության, որը հաստատված չլինի ժողովուրդների համաձայնությամբ. նրանք հարգում են ժողովուրդների իրավունքն իրենց կամքով ընտրելու կառավարման ձևը և ձգտում են հասնել այն բանին, որպեսզի բռնի միջոցներով սուվերեն իրավունքներից ու ինքնավարությունից զրկված ժողովուրդները վերստին ձեռք բերեն այդ իրավունքները։ Անգլիան և ԱՄՆ-ը, ընդգծվում էր դեկլարացիայում, պաշտպանում են բոլոր երկրների հավասարությունն առևտրի և համաշխարհային հումքային աղբյուրներից օգտվելու ասպարեզում, ծովերում նավարկելու ազատությունը և անհրաժեշտ են համարում ագրեսիայով սպառնալու ընդունակ պետությունների զինաթափումը։ Դեմոկրատական սկզբունքների հռչակումը, որպես պատերազմում Անգլիայի և ԱՄՆ-ի նպատակներ, ուներ դրական նշանակություն, սակայն այդ սկզբունքները ձևակերպված էին չափազանց ընդհանուր և կցկտուր ձևով։ «Ատլանտյան խարտիայում» ոչինչ չէր ասվում ֆաշիստական տերությունների ռազմական ջախջախման անհրաժեշտության մասին։ Ժողովուրդների իրավունքների վերականգնումը սահմանափակվում էր այնպիսի շրջանակներով, որոնք բացառում էին գաղութային երկրները, իսկ Եվրոպայի ժողովուրդների վերաբերյալ կարող էին նշանակել նախապատերազմյան ռեժիմների վերականգնում։ Չէին թվարկված այն միջոցառումները, որոնք հարկավոր էր ձեռնարկել հաղթանակից հետո հիտլերյան Գերմանիայի և նրա դաշնակիցների նկատմամբ այն բանի համար, որպեսզի բացառվեր նրանց կողմից նոր ագրեսիայի դիմելու հնարավորությունը։ Առևտրի և ծովերում նավարկելու ազատության, համաշխարհային տնտեսական ռեսուրսների օգտագործման հավասարության մասին հոդվածները վկայում էին իր անգլիական դաշնակցի դիրքերի վրա ամերիկյան իմպերիալիզմի հարձակման մասին։ Այդուհանդերձ «Ատլանտյան խարտիայի» հռչակած ընդհանուր սկզբունքները համապատասխանում էին այն ժողովուրդների շահերին, որոնք պայքարում էին ֆաշիստական ագրեսիայի դեմ և նպաստում հակաֆաշիստական կոալիցիայի ամրապնդմանը։ 1941 թ. սեպտեմբերի 24-ին սովետական կառավարությունը պաշտոնապես միացավ «Ատլանտյան խարտիային», վերապահումով, որ նրա պարունակած սկզբունքների գործնական կիրառումը «անխուսափելիորեն պետք է համապատասխանեցվի այս կամ այն կողմին առնչվող հանգամանքների, կարիքների և պատմական առանձնահատկությունների հետ»։ 1941 թ. սեպտեմբերին—հոկտեմբերի սկզբին Մոսկվայում կայացավ ռազմական մատակարարումների հարցերին նվիրված անգլո-ամերիկա-սովետական կոնֆերանս։ Այնտեղ համաձայնեցվեց փոխադարձ մատակարարումների ծրագիրը։ Սակայն այդ ծրագրի կատարումն անբավարար էր ընթանում։ ՍՍՀՄ կատար-

վող մատակարարումները բազմիցս շաբաթներով և ամիսներով ընդհատվում էին։

Հակաֆաշիստական կոալիցիայի կազմավորումն ավարտվեց Մոսկվայի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումից հետո։ 1942 թ. հունվարի 1-ին Վաշինգտոնում ստորագրվեց 26 պետությունների դաշնակցային դեկլարացիան. այդ պետություններն սկսեցին կոչվել «միավորված ազգեր»։ Նրանք իրենց առջև նպատակ էին դրել պայքարել ֆաշիստական ագրեսորների բլոկի դեմ։ 1942 թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ 20 տարի ժամկետով սովետա-անգլիական դաշնակցային պայմանագրի, իսկ հունիսի 11-ին՝ ագրեսիայի դեմ պատերազմ մղելու գործում «փոխադարձաբար օգնություն ցույց տալու համար» կիրառվելիք սկզբունքների վերաբերյալ սովետա-ամերիկյան համաձայնագրի ստորագրումը։ Սովետա-անգլիական և սովետա-ամերիկյան բանակցությունների արդյունքների վերաբերյալ պաշտոնական կոմյունիկեում ասվում էր, որ «ձեռք է բերվել լիակատար պայմանավորվածություն 1942 թ. Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու անհետաձգելի խնդիրների մասին»։

Հակաֆաշիստական կոալիցիայի ստեղծումը վիթխարի նշանակություն ուներ։ Դա տարբեր սոցիալական սիստեմ ունեցող պետությունների համատեղ գործողությունների առաջին փորձն էր համաշխարհային պատմության մեջ։ Կոալիցիայի գոյությունն ու գործունեությունը ֆաշիստական զավթիչների դեմ աղատասեր ժողովուրդների հաղթանակի կարևորագույն պայմանն էր։ Խորտակվեց Գերմանիայի գլխավոր ստրատեգիական պլանը. Գերմանիան հույս ուներ իր հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելով առանձին-առանձին, կանխել նրանց միավորվելը, յուրաքանչյուրին դնել միջազգային քաղաքական մեկուսացված վիճակի մեջ։

Պատերազմի ընկիզը խաղաղ օվկիանոսում

Եվրոպայում պատերազմի ծագման պահից ի վեր Ճապոնիան ակտիվորեն պատրաստվում էր ռազմական կոնֆլիկտին մասնակցելու համար։ Ճապոնական կառավարող շրջաններում պայքարում էին երկու խմբավորումներ. նրանցից մեկը առաջարկում էր գլխավոր հարվածը հասցնել հյուսիսային ուղղությամբ, Սովետական Միության դեմ, մյուսը՝ հարավային ուղղությամբ, նպատակ ունենալով զավթել ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի և կապիտալիստական մյուս տերությունների տիրույթները խաղաղ օվկիանոսյան ավազանում։ Գերմանիայի դեմ մղվող պատերազմում արևմտյան տերությունների կրած պարտությունը, նրանց դիրքերի թուլացումը խաղաղ օվկիանոսում, իսկ մյուս կողմից, Խասանի ու Խալխին գոլի մոտ ճապոնական դիվերսիոնության պրովոկացիաներին կարմիր բանակի հասցրած կործանիչ հակահարվածը գլխավոր փաստարկը հանդիսացավ հօգուտ հարավային տարբերակի։ 1940—1941 թթ. Ճապոնիան, դիմադրության չհանդիպելով Վիշիի կառավարության կողմից, զորքեր մտցրեց ֆրանսիական Հնդկաչինի տարածքը։ Երբ ձախողվեց գերմանացիների հարձակումը Մոսկվայի վրա, Ճապոնիայի կառավարությունը վերջնականորեն որոշեց հարված հասցնել հարավային ուղղությամբ։ 1941 թ. դեկտեմբերի 7-ի վաղ առավոտյան ճապոնական ռազմածովային նավատորմը գրոհեց խաղաղ օվկիանոսում ամերիկյան խոշորագույն ռազմածովային բազա Պիրլ-Հարբորի վրա (Հավայան կղզիներ)։ Ավիակիրներից թռած ճապոնական ինքնաթիռները ջրասույզ արեցին ամերիկյան ութ զրահանավերից հինգը, մնացած երեք զրահանավերը լուրջ վնասվածքներ ստացան։ Մի քանի օր հետո Մալայայի ափերին ճապոնական ավիացիան և ստորջրյա նավատորմը ջախջախեցին Անգլիայի ռազմածովային էսկադրան։

Պիրլ-Հարբորի իրադարձությունները թաղեցին «իզոլյացիոնիզմը» որպես ազդեցիկ քաղաքական հոսանք Ամերիկայում։ Դեկտեմբերի 7-ին ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային։ Դեկտեմբերի 11-ին Գերմանիան և Իտալիան պատերազմ հայտարարեցին Միացյալ Նահանգներին։ Այժմ պատերազմին մասնակցում էին բոլոր մեծ տերությունները։

Ռազմական գործողությունները խաղաղ օվկիանոսում սկզբնապես նշանավորվեցին Ճապոնիայի խոշոր հաղթանակներով։ Ծովում գերակշռության հասնելով, ճապոնական միլիտարիստները հինգ-վեց ամսում զավթեցին Մալայան, Բիրման, Ինդոնեզիան, Ֆիլիպինները, դուրս եկան Հնդկաստանի և Ավստրալիայի մատույցները։ Անգլիայի և Հոլանդիայի գաղութային բանակները, որոնք չէին օգտվում տեղական բնակչության աջակցությունից, ի վիճակի չգտնվեցին կանգնեցնելու ճապոնացիների հարձակումը։ Սակայն ճապոնական զորքերի կողմից Հարավարևելյան Ասիայի և խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների օկուպացումն առաջ բերեց այդ երկրների ժողովուրդների դիմադրությունը, որոնք սկսեցին ստեղծել պարտիզանական ջոկատներ. ծավալվեց դիմադրության շարժումը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ. 1942 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ—1943 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ։ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԵԿՈՒՄԸ

Ստալինգրադի ճակատամարտը

Երկրորդ ռազմաճակատի բացակայությունը Եվրոպայում Գերմանիային հնարավորություն էր տալիս մանևրել՝ ուժերը արևմուտքից արևելք նետելով։ Մոսկվայի մոտ կրած պարտությունից հետո գերմանական հրամանատարությունը որոշեց իր գլխավոր ռեզերվներն օգտագործել Սովետական Միության դեմ նոր խոշոր հարձակման համար։ Բոլոր ուղղություններով հարձակվել, ինչպես 1941 թ., Գերմանիան այլևս չէր կարող, և նա որոշեց հարվածը հասցնել ռազմաճակատի հարավային թևին։ 1942 թ. հունիսի 29-ին գերմանական զորքերը հարավում հարձակման անցան. օգոստոսի 23-ին նրանք Ստալինգրադից հյուսիս-արևմուտք դուրս եկան Վոլգայի մոտ և հասան Կովկասի նախալեռներին։

Ավելի քան երկու ամիս կատաղի մարտեր էին տեղի ունենում Ստալինգրադի շրջանում։ Քաղաքը ավերակույտերի վերածվեց, բայց այն գրավելու հիտլերականների փորձերը կործանվեցին՝ հանդիպելով նրա պաշտպանների անսասան համառությանը։ Այդ ժամանակ սովետական հրամանատարությունը, խոշոր ռեզերվներ կենտրոնացնելով, հակահարձակում էր նախապատրաստում։ 1942 թ. նոյեմբերի 19-ի առավոտյան սկսվեց սովետական զորքերի հակահարձակումը, որը հասցրեց Ստալինգրադի մոտ ֆաշիստական 22 դիվիզիաների շրջապատմանը։ Ետ մղելով շրջապատման օղակը դրսից ճեղքելու փորձերը, սովետական զորքերը ոչնչացրին շրջապատված խմբավորումը։ Հիտլերյան Գերմանիան սգո զգեստ հագավ։

Ստալինգրադի ճակատամարտի հետևանքով ստրատեգիական նախաձեռնությունն անցավ սովետական հրամանատարության ձեռքը։ Ստալինգրադի մոտ տեղի ունեցած հակահարձակումը վերաճեց Լենինգրադից մինչև Ազովի ծով ընկած վիթխարի ռազմաճակատում սովետական զորքերի ընդհանուր հարձակման։ Սովետական զորքերը պարտության մատնեցին Կովկասյան նախալեռներում գտնվող թշնամու խմբավորմանը, ազատագրեցին Ուկրաինայի մի մասը, ճեղքեցին Լենինգրադի բլոկադան։ 1942 թ. կեսերից մինչև 1943 թ. մարտի վերջերը կարմիր բանակը ջախջախեց թշնամու ավելի քան 100 դիվիզիա։

Ստալինգրադյան հաղթանակը համաշխարհային նշանակություն ձեռք բերեց։ Այն դրեց պատերազմի ընթացքի արմատական բեկման սկիզբը։

2381

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2—512

Հարձակումն Աֆրիկայում: Մարտերը Խաղաղ օվկիանոսում

Ստալինգրադի մոտ տեղի ունեցած մարտերի ամենալարված օրերին Չերչիլը ժամանեց Մոսկվա և հաղորդեց, որ երկրորդ ռազմաճակատի բացումը տեղափոխվում է հաջորդ, 1943 թ.: ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների այդ որոշումը, որը խախտում էր նրանց ստանձնած պարտավորությունը, բացատրվում էր պատերազմի վերջում իրենց ուժերը խնայելու և նրա ծանրությունը Սովետական Միության վրա դնելու մտադրությամբ:

Այսպիսով, հետաձգելով երկրորդ ռազմաճակատի բացումը Եվրոպայում, Անգլիան ու ԱՄՆ-ը որոշեցին գործողություններն ակտիվացնել Հյուսիսային Աֆրիկայում: 1942 թ. հոկտեմբերի 23-ին, երբ ֆաշիստական Գերմանիայի հիմնական ուժերը գամված էին Արևելյան ռազմաճակատին, անգլիական 8-րդ բանակի զորքերը Եգիպտոսում էլ Ալամեյն քաղաքի մոտ հարձակման անցան: 1942 թ. նոյեմբերի 8-ին Հյուսիսային Աֆրիկայի ծովեզերքում, Մարոկկոյում և Ալժիրում, որոնք գտնվում էին Վիշիի կառավարության իշխանության տակ, ափ դուրս եկան ամերիկյան գեներալ Դ. Էյզենհաուերի ընդհանուր հրամանատարությամբ գործող անգլո-ամերիկյան զորքերի խոշոր ուժեր: Կարճատև դիմադրությունից հետո Վիշիի կառավարության զորքերն անցան Անգլիայի և ԱՄՆ-ի կողմը: Իմանալով Աֆրիկայում դաշնակիցների ափ դուրս գալու մասին, Գերմանիան և Իտալիան նոյեմբերի 11-ին օկուպացրին Ֆրանսիայի հարավային մասը: Վիշիի կառավարության աջակցությամբ նրանք իրենց զորքերի մի մասը փոխադրեցին Թունիս: Ֆրանսիական «զինադադարի բանակը» զինաթափվեց, բայց Տուլոն նավահանգստում ֆրանսիական նավատորմի նավերը զավթելու հիտլերականների փորձերը հաջողությամբ չպսակվեցին. ֆրանսիական ծովայինները գերադասեցին ջրասույզ անել իրենց նավերը, բայց զավթիչներին չտալ:

1943 թ. գարնան մոտերքը իտալա-գերմանական զորքերի դրությունը Հյուսիսային Աֆրիկայում դարձավ անհուսալի. արևելքից նրանց վրա էր հարձակվում անգլիական 8-րդ բանակը, արևմուտքից՝ գեներալ Էյզենհաուերի զորքերը: 1943 թ. մայիսի սկզբին իտալա-գերմանական զորքերը շրջապատվեցին Բոն թերակղզում (Թունիսի հյուսիս-արևելյան վերջավորությունը), որտեղ և կապիտուլացվեցին: Անգլիական և ամերիկյան ուժերի այդ հաղթանակը չէր կարող փոխարինել երկրորդ ռազմաճակատին Եվրոպայում. Հյուսիսային Աֆրիկայում կռվում էին ընդամենը 12—14 իտալական և գերմանական դիվիզիաներ, այն դեպքում, երբ սովետա-գերմանական ռազմաճակատում գործում էր Գերմանիայի և նրա դաշնակիցների ավելի քան 260 դիվիզիա:

1942 թ. ամռանը ռազմական գործողությունների ընթացքի բերում նկատվեց Խաղաղ օվկիանոսում: Կորալյան ծովում (1942 թ. մայիս) և Միդուեյ կղզու մոտ (1942 թ. հունիս) տեղի ունեցած ծովային ճակատամարտերում ճապոնական նավատորմը ծանր կորուստներ կրեց և կորցրեց իր ունեցած առավելությունը ծովում: Ճապոնիայի ցամաքային ուժերի շարժումը կանգնեցվեց: Անգլո-ամերիկյան հրամանատարությունը սկսեց նախապատրաստել Ճապոնիայի դեմ ուղղված հարձակողական գործողություններ: Բոլոր ռազմաճակատներում նախաձեռնությունը խլվեց ագրեսորների բլոկի ձեռքից:

Պատերազմի արմատական բեկման ավարտը: Կուրսկի ճակատամարտը

1943 թ. գարնանը գերմանական հրամանատարությունը փորձեց վերադարձնել նախաձեռնությունը և մշակեց Արևելյան ռազմաճակատում «Միջնաբերդ» օպերացիայի պլանը: Այդ պլանի համաձայն, Օրյոլի և Բելգորոդի շրջաններից գերմանական զորքերի միաժամանակյա հարձակումը պետք է ավարտվեր Կուրսկի շրջանում սովետական զորքերի շրջապատմամբ և ոչնչացմամբ: Օրյոլի և Բելգորոդի շրջանում, պլանի համապատասխան, կենտրոնացվեցին Գերմանիայի ցամաքային բանակի գլխավոր ուժերը՝ 50 դիվիզիա, որոնց թևերի կողմից հարում էր ևս 20 դիվիզիա: Հարձակման համար նախապատրաստված գերմանական զորքերի գրեթե քառորդ մասը կազմում էին տանկային և մոտորացված միավորումները: Պատերազմի ամբողջ ընթացքում ռազմաճակատի համեմատաբար ոչ մեծ հատվածներում դեռ չէր եղել տանկերի ու ավիացիայի այդպիսի համակենտրոնացում:

Սովետական հետախուզությունը պարզեց հարձակման ուղղությունն ու այն սկսելու ժամկետը, իսկ սովետական հրամանատարությունը ստեղծեց ամուր պաշտպանություն և նախապատրաստեց խոշոր ռեզերվներ: Գերմանական հարձակումը սկսվեց 1943 թ. հուլիսի 5-ի առավոտյան, բայց ֆաշիստական դիվիզիաները չկարողացան ճեղքել սովետական պաշտպանությունը: Պրոխորովկա ոչ մեծ ավանի (Կուրսկից դեպի հարավ) շրջանում ծավալվեց իր չափերով դեռևս չտեսնված տանկային հանդիպական ճակատամարտ, որն ավարտվեց թշնամու պարտությամբ: Հուլիսի 12-ին սովետական զորքերը հակահարձակման անցան: Օգոստոսի 5-ին կարմիր բանակը ազատագրեց Օրյոլն ու Բելգորոդը: Ապա ծավալվեց սովետական զորքերի ընդհանուր ստրատեգիական հարձակումը Վելիկիե Լուկիից մինչև Սև ծով ընկած ռազմաճակատի ամբողջ գծով մեկ: 1943 թ. ամռան և աշնան ընթացքում կարմիր բանակը ազատագրեց Սմոլենսկը, Դոնեցը, Կիևը և ամբողջ ձախափնյա Ուկրաինան: Նրան վիթխարի օգնություն ցույց տվեցին սովետական պարտիզանները, որոնք զորեղ հարվածներ էին հասցնում թշնամուն:

Կուրսկի մոտ տարած հաղթանակն ավարտեց արմատական բեկումը երկրորդ համաշխարհային պատերազմում: Այդ ժամանակից ի վեր և մինչև պատերազմի վերջը ստրատեգիական նախաձեռնությունը պատկանում էր կարմիր բանակին և նրա դաշնակիցներին:

Իտալիայի կապիտուլացումը

Կուրսկի մոտ ֆաշիստական բանակների ջախջախումը բարենպաստ պայմաններ ստեղծեց Եվրոպայում երկրորդ ռազմաճակատ բացելու համար: Սակայն Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունները, պարտավորվելով երկրորդ ռազմաճակատը բացել 1943 թ., վերստին չկատարեցին իրենց պարտավորությունները: Ափհանումը Արևմտյան Եվրոպայում իրականացնելու փոխարեն նրանք գերադասեցին հարված հասցնել հարավում, նկատի ունենալով Իտալիան և Բալկանները:

1943 թ. հուլիսի 10-ին Կուրսկի մոտ տեղի ունեցող ճակատամարտի թեժ պահին անգլո-ամերիկյան զորքերը ափ դուրս եկան Սիցիլիա կղզում: Այդ ժամանակ ֆաշիստական ռեժիմն Իտալիայում խոր ճգնաժամ էր ապրում:

Սովետա-գերմանական ռազմաճակատում գերմանականի հետ ջախջախվեցին նաև իտալական զորքերը: Իտալիան կորցրեց իր բոլոր գաղութները: Երկրում ծավալվում էր հակաֆաշիստական լայն շարժում: Իտալական բուրժուազիան, համոզվելով դաշնակիցների անխուսափելի հաղթանակի մեջ և վախենալով հեղափոխական շարժման վերելքից, որոշեց Մուսոլինիին զոհաբերել հանուն իր սեփական փրկության: Ֆաշիստական կուսակցության ղեկավարների և բանակային վերնախավի մի մասը թագավորական արքունիքի օժանդակությամբ իրականացրեց պետական հեղաշրջում: Հուլիսի 25-ին Մուսոլինին հեռացվեց իշխանությունից և ձերբակալվեց: Իտալական նոր կառավարությունը գլխավոր շտաբի նախկին պետ մարշալ Բադոլյոյի գլխավորությամբ պաշտոնական հայտարարություն արեց Գերմանիայի կողմում պատերազմը շարունակելու մասին, բայց զինադադար կնքելու մասին գաղտնի բա-

նակցություններ սկսեց անգլո-ամերիկյան հրամանատարության հետ։ Այդ բանակցությունների ժամանակ որոշվեց զինադադարի մասին հայտարարել միայն անգլո-ամերիկյան զորքերն Իտալիայում ափ հանելուց հետո։ Զինադադարի մասին համաձայնագիրն ստորագրվեց սեպտեմբերի 3-ին և հրապարակվեց սեպտեմբերի 8-ին։ Այնտեղ ասվում էր միայն ռազմական գործողությունների դադարեցման մասին։ Քաղաքական կարևորագույն պրոբլեմները, ներառյալ Իտալիայի դեմոկրատական զարգացման և ֆաշիստական ամբողջ ժառանգության լիկվիդացման անհրաժեշտությունը, շրջանցված էին։

Սեպտեմբերի 8-ին սկսվեց ԱՄՆ-ի և Անգլիայի զորքերի ափհանումը Հարավային Իտալիայում։ Ի պատասխան հիտլերյան բանակները ներխուժեցին Իտալիա, զինաթափեցին իտալական բանակը և զավթեցին Իտալիայի տարածքի զգալի մասը։ Իտալիա խուժած զորքերի երկու հոսանքները՝ անգլո-ամերիկյանը հարավից և գերմանա-ֆաշիստականը հյուսիսից, բախվեցին Նեապոլից հարավ։ Առաջացավ երկրորդ համաշխարհային պատերազմի իտալական ռազմաճակատը։ Այն իր վրա գրավեց միայն գերմանական 10 դիվիզիա, և այդ պատճառով այն չի կարելի համարել երկրորդ ռազմաճակատ։ Ռազմական գործողությունները իտալական ռազմաճակատում դանդաղ էին ծավալվում. միայն 1944 թ. ամռան մոտերքը անգլո-ամերիկյան զորքերը հասան Հռոմ։

Գերմանիայի օկուպացրած իտալական հողերում կազմվեց իտալական մարիոնետային կառավարություն, որն ամբողջապես ծառայում էր հիտլերականների շահերին։ Այն գլխավորեց Մուսոլինին, որին գերմանական պարաշյուտիստներն ազատել էին բանտարկությունից։ Իտալիայի՝ գերմանա-ֆաշիստական զորքերի կողմից օկուպացված շրջաններում սկսեց արագորեն աճել Դիմադրության շարժումը, որի առաջին շարքերում ընթանում էին կոմունիստները։ Իտալիայի հարավային մասում, որը գրավել էին անգլո-ամերիկյան զորքերը, ստեղծվեց ռազմական օկուպացիոն ադմինիստրացիայի (ԱՄԳՈՏ) ռեժիմ։ Այնտեղ էլ գտնվում էր Բադոլյոյի կառավարությունը, որին աջակցում էին Անգլիան և ԱՄՆ-ը։

Իտալիայի կապիտուլյացումը միջազգային մեծ նշանակություն ուներ։ Հիտլերյան Գերմանիայի գլխավոր դաշնակիցը դուրս եկավ պատերազմից։ Ֆաշիստական բլոկը սկսեց քայքայվել։

Ֆաշիստական բլոկի եզեռաժամը

Գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումը Ստալինգրադի և Կուրսկի մոտ խորապես ցնցեց հիտլերյան Գերմանիային և նրա դաշնակիցներին։ Հիտլերյան իշխանություններն սկսեցին հուսահատ ճիգեր գործադրել նյութական և մարդկային ռեզերվների առավելագույն մոբիլիզացման համար։ 1943 թ. հունվարին առաջին անգամ հայտարարվեց «տոտալ մոբիլիզացում»։ Բանակ ուղարկվեց նոր կոնտինգենտ։ Սահմանվեց համընդհանուր աշխատանքային պարհակ։ Աշխատանքային օրն ավելացվեց, հասնելով 12 ժամի։ Ուժեղացվեցին ռազմապետական ղեկավարման մարմինները։ Ռազմական էկոնոմիկայի խորհուրդը, որը գլխավորում էին խոշորագույն մոնոպոլիաների ներկայացուցիչները, լիովին իր վերահսկողության տակ վերցրեց հումքի բաշխումը և արտադրության կարգավորումը։ Էկոնոմիկայի «համակենտրոնացման» մասին հրամանագիրը նախապատրաստում էր մոնոպոլիաների դերի հետագա ուժեղացում ռազմական էկոնոմիկայի ղեկավարման գործում և նրանց կապերի ընդլայնում վերմախտի հրամանատարության հետ։ Ռազմական արտադրության հետ կապ չունեցող արհեստագործական և առևտրական մանր հաստատությունները փակվեցին։ 1943 թ. աշնանը հիտլերականներն աշխատանքային պարհակ մտցրին 15 տարին լրացած սովորողների համար։

«Տոտալ մոբիլիզացման» բաղկացուցիչ մասն էր հիտլերականների զավթած երկրների կողոպուտի ուժեղացումը, Սովետական Միությունից, Ֆրանսիայից, Բելգիայից, Նիդեռլանդներից և այլ երկրներից բռնությամբ տարված միլիոնավոր մարդկանց ստրկական աշխատանքի համակարգ մտցնելը։ 1943 թ. ամռանը Գերմանիայում օգտագործվում էր ավելի քան 6 մլն օտարերկրյա բանվորների և ռազմագերիների ստրկական աշխատանք։ «Տոտալ մոբիլիզացումները» դանդաղեցնում էին վերմախտի ուժերի թվաքանակի անկումը և հասցրին ռազմական արտադրության աճին, որը 1944 թ. կեսերին հասավ ամենաբարձր մակարդակի։ Բայց ֆաշիստական Գերմանիայի այդ բոլոր ճիգերն այլևս չէին կարող փոխել պատերազմի ընթացքը։ Ռազմական պարտությունները, «տոտալ մոբիլիզացման» ծանրությունը, հարկերի աճը, մանր արտադրության քայքայումը առաջացրին հակաֆաշիստական տրամադրությունների աճ, աշխուժացավ գերմանական ժողովրդի առաջադեմ ուժերի պայքարը ֆաշիզմի դեմ։ Գեներալիտետի և չինովնիկության մի մասի մեջ ծագեց դավադրություն, որը նպատակ ուներ հեռացնել Հիտլերին և սեպարատ հաշտություն կնքել ԱՄՆ-ի և Անգլիայի հետ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կատարված բեկումը սրեց հակասությունները նաև ֆաշիստական բլոկի ներսում։ Ստալինգրադի մոտ ջախջախումից հետո Ֆինլանդիայի կառավարող վերնախավն սկսեց պատերազմից դուրս գալու ելք փնտրել։ Ռումինիայում Անտոնեսկուի կառավարությունն սկսեց շոշափել արևմտյան տերությունների հետ սեպարատ հաշտություն կնքելու հնարավորությունները։ 1943 թ. փետրվարին խորտիական կլիկը Հունգարիայում գաղտնի բանակցությունների մեջ մտավ Անգլիայի և ԱՄՆ-ի հետ անվերապահ կապիտուլյացման վերաբերյալ այն դեպքում, եթե Հունգարիա մտնեն անգլո-ամերիկյան զորքերը։ Իսպանիայի ֆրանկոյական կառավարությունն սկսեց վերակողմնորոշվել դեպի արևմտյան տերությունները՝ 1943 թ. մի շարք հայտարարություններով հանդես գալով իր «չեզոքության» մասին։ Ֆաշիստական բլոկը խոր ճգնաժամ էր ապրում։

Դիմադրության շարժման զարգացումը Եվրոպայի երկրներում

Երկրորդ համաշխարհային պատերազմում տեղի ունեցած արմատական բեկումն ուժեղ ազդեցություն ունեցավ Դիմադրության շարժման զարգացման վրա։ 1943—1944 թթ. այն վերածվեց զանգվածային ռազմա-քաղաքական շարժման, որին աջակցում էին բնակչության ամենալայն խավերը։ 1944 թ. ամռանը Ֆրանսիայում հաշվվում էր 400—500 հազ. զինված մարտիկ, Իտալիայում՝ 500 հազ., Հարավսլավիայում՝ 300 հազ., Հունաստանում՝ 75 հազ., Ալբանիայում՝ 70 հազ.։ Դիմադրության մարտական ջոկատները ծանր հարվածներ էին հասցնում զավթիչներին։ Օկուպացված շատ երկրներում աստիճանաբար առաջացան քաղաքական ու զինվորական անլեգալ ղեկավար մարմիններ, որոնք միավորում էին Դիմադրության բոլոր խմբավորումները՝ սկսած կոմունիստներից մինչև կաթոլիկներն ու նացիոնալիստները։

Ֆրանսիայի օկուպացված տարածքում առաջացավ Դիմադրության ազգային խորհուրդը, որը միավորում էր Դիմադրության 16 կազմակերպություններ, այդ թվում նաև կոմունիստական կուսակցությանը։ Տեղերում գործում էին ազատագրության կոմիտեները, որոնք միավորում էին տարբեր քաղաքական հայացքների տեր հայրենասերների և նախապատրաստում ազգային ապստամբություն։

Իտալական Դիմադրության շարժման մեջ առաջացավ վեց հակաֆաշիստական կուսակցությունների՝ կոմունիստական, սոցիալիստական, քրիստո-

նեա-դեմոկրատական, լիբերալ կուսակցությունների, գործողության կուսակցության, «Աշխատանքի դեմոկրատիա» կուսակցության բլոկ։ Այդ կուսակցությունների ներկայացուցիչները մտնում էին ազգային-ազատագրության կոմիտեների մեջ, որոնց մեջ աչքի էին ընկնում երկուսը՝ Հռոմում և Միլանում։ Հարավսլավիայում ժողովրդաազատագրական բանակը զավթիչներից մաքրեց մի շարք շրջաններ, որտեղ հաստատվեց ժողովրդական իշխանություն ու ստեղծվեց կենտրոնական ղեկավար մարմին՝ Հարավսլավիայի ժողովրդական ազատագրության հակաֆաշիստական վեչեն։

Որպես կանոն, Դիմադրության մասնակիցները աշխատում էին ոչ միայն ազատագրել իրենց երկրները զավթիչների լծից, այլև այնտեղ հաստատել ավելի արդարացի սոցիալական կարգեր։ Դիմադրության ծրագրային փաստաթղթերում հաճախ նախատեսվում էր ոչ միայն ֆաշիզմի ոչնչացում և դեմոկրատական ազատությունների վերականգնում, այլև աշխատավորների իրավունքների ընդլայնում, բանկերի և արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացում և այլն։

Դիմադրության շարժման մեջ համագործակցում էին տարբեր դասակարգեր, և նրանց դերը միանման չէր։ Դիմադրության գլխավոր ուժը բանվոր դասակարգն էր՝ կոմունիստների գլխավորությամբ։ Կոմունիստական կուսակցությունները և դեմոկրատական մյուս կազմակերպությունները ձգտում էին Դիմադրության շարժման մեջ ներգրավել ժողովրդի ամենալայն զանգվածներին, ուժեղացնել զինված պայքարը, բոլոր ուժերով հասնել իրենց երկրների շուտափույթ ազատագրմանը։ Պայքարելով զավթիչների դեմ, Դիմադրության բուրժուական գործիչները միաժամանակ ձգտում էին շարժումից դուրս մղել կոմունիստներին, որպեսզի ապահովեին իշխանության պահպանումը բուրժուազիայի ձեռքում։ Նրանք խոչընդոտում էին զինված պայքարի ընդլայնմանը, որն, իբր, հասցնում է սոսկ ավելորդ զոհերի, և պատրաստվում էին զավթել իշխանությունը անգլո-ամերիկյան զորքերի հայտնվելու պահին։ Այդ քաղաքականությունը աջակցություն էր գտնում Անգլիայի և ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք վախենալով զավթված երկրների ժողովուրդների զանգվածային ազատագրական ապստամբություններից, չէին ցանկանում բավարար քանակությամբ զենք մատակարարել Դիմադրության շարժմանը։

Արտաքին գործերի մինիստրների Մոսկովյան կոնֆերանսը

Պատերազմի ընթացքում տեղի ունեցած բեկումը հատկապես հրատապ դարձրեց դաշնակիցների ռազմական քաղաքականության համաձայնեցման և հետպատերազմյան կառուցվածքի պրոբլեմների քննարկման խնդիրը։ 1943 թ. հոկտեմբերի 19—30-ը Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրների կոնֆերանսը։ Սովետական պատվիրակությունը դրեց երկրորդ ռազմաճակատի հարցը։ Անգլիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իրենց կառավարությունները որոշում են ընդունել Ֆրանսիա ներխուժելն իրականացնել 1944 թ., եթե եղանակի պայմանները նպաստավոր լինեն և եթե Գերմանիայի ուժերը Հյուսիսարևմտյան Եվրոպայում չկերակշռեն որոշակի մակարդակից։

Գերմանիայի ապագա կառուցվածքի վերաբերյալ կոնֆերանսում քննարկված հարցը վերջնականորեն չլուծվեց։ Անգլիան և ԱՄՆ-ը առաջարկություն մտցրին Գերմանիան մի քանի առանձին պետությունների անդամահատելու մասին, բայց անգլո-ամերիկյան մոնոպոլիաների շահերից թելադրված այդ առաջարկությունը հանդիպեց ՍՍՀՄ-ի առարկությանը։ Սովետական պատվիրակությունն ընդգծեց գերմանական ազգի օրինական իրավունքներն ու շահերը հաշվի առնելու, այնպիսի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որոնք ապահովեին ֆաշիզմի լիակատար ոչնչացումը և երաշխավորեին, որ այն այլևս երբեք չի վերածնվի։ ՍՍՀՄ-ի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ կոնֆերանսն ընդունեց մի շարք կարևոր քաղաքական փաստաթղթեր։ «Իտալիայի մասին դեկլարացիայում» ընդգծվում էր, որ դաշնակիցների քաղաքականությունը Իտալիայի հանդեպ պետք է հիմնվի հետևյալ հիմնական սկզբունքի վրա. «Ֆաշիզմը և նրա բոլոր կործանարար ազդեցություններն ու հետևանքները լիովին ոչնչացվում են, իտալական ժողովրդին լիակատար հնարավորություն է տրամադրվում ստեղծելու դեմոկրատիայի սկզբունքների վրա հիմնված կառավարական և այլ հիմնարկություններ»։

«Ավստրիայի մասին դեկլարացիայում» նշվում էր, որ Ավստրիան հիտլերյան ագրեսիայի զոհն է և պետք է ազատագրվի։ ՍՍՀՄ-ը, Անգլիան և ԱՄՆ-ը ցանկանում են Ավստրիան տեսնել ազատ, վերականգնված և անկախ, բայց դրա հետ մեկտեղ նրանք գտնում են, որ Ավստրիան պատասխանատվություն է կրում պատերազմում Գերմանիայի կողմում իր մասնակցության համար։

Սովետական Միության նախաձեռնությամբ ընդունվեց իրենց կատարած գազանությունների համար հիտլերականների պատասխանատվության մասին դեկլարացիան։ Նա սահմանում էր ռազմական հանցագործներին այն ժողովուրդների դատով խիստ պատժելու անհրաժեշտությունը, որոնց նկատմամբ նրանք կատարել էին բռնություններ։ Գլխավոր ռազմական հանցագործներին որոշվեց պատժել դաշնակից կառավարությունների համատեղ որոշումների համաձայն։

Կոնֆերանսն ընդունեց ընդհանուր անվտանգության վերաբերյալ դեկլարացիա, որին միացավ Չինաստանը։ Այնտեղ ասվում էր, որ չորս պետությունները անհրաժեշտ են գտնում ստեղծել միջազգային խաղաղության ու անվտանգության պաշտպանության համար մի ընդհանուր միջազգային կազմակերպություն, որը պետք է հիմնված լինի բոլոր խաղաղասեր պետությունների սուվերեն հավասարության սկզբունքի վրա։

ՍՍՀՄ-ի առաջարկությամբ որոշում ընդունվեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի Եվրոպական կոնսուլտատիվ հանձնաժողովի ստեղծման մասին, որը պետք է կոչված լինի նախապես մշակելու երեք տերությունների համատեղ որոշումներ բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք կծագեն պատերազմի մոտալուտ ավարտի կապակցությամբ, ներառյալ թշնամի պետությունների հետ զինադադարի կամ նրանց կապիտուլյացման պայմանների մշակումը։

Երեք տերությունների ղեկավարների Թեհրանի կոնֆերանսը

Մոսկովյան կոնֆերանսը նախապատրաստեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների առաջին հանդիպումը, որը տեղի ունեցավ 1943 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Թեհրանում։ Նրան մասնակցեցին Ի. Վ. Ստալինը, Ֆ. Ռուզվելտը և Ու. Չերչիլը։

Թեհրանում քննարկված գլխավոր հարցը երկրորդ ռազմաճակատի բացումն էր։ Չերչիլը պնդում էր, որպեսզի ԱՄՆ-ի և Անգլիայի զորքերը ներխուժեն Բալկաններ։ Հաշվի առնելով տեղանքի բնույթը, կարելի էր կանխապես ասել, որ այդ ռազմաճակատը մեծ նշանակություն չէր ստանալու։ Բացի այդ, Չերչիլի պլանը միանգամայն ակնհայտորեն հետապնդում էր այնպիսի քաղաքական նպատակներ, որոնք հանգում էին անգլիական տիրապետության հաստատմանը Հարավարևելյան Եվրոպայում և ՍՍՀՄ-ի սահմաններից դուրս կարմիր բանակի համար ուղիների փակմանը։

Սովետական պատվիրակությունը հարց դրեց երկրորդ ռազմաճակատը ստեղծել Հյուսիսային կամ Հյուսիսարևմտյան Ֆրանսիայում՝ անգլո-ամերիկյան զորքերի հետագա առաջխաղացմամբ հանդերձ դեպի արևելք, հիտլերյան

Գերմանիան երկու ռազմաճակատների աքցանի մեջ առնելու նպատակով։ Պրեզիդենտ Ռուզվելտը համաձայն էր այն բանին, որ հարկավոր է արագացնել պատերազմի ավարտը և պաշտպանում էր դաշնակից զորքերը Ֆրանսիայում ափ հանելու գաղափարը։ Հարցի քննարկումն ավարտվեց այն որոշմամբ, որ երկրորդ ռազմաճակատը պետք է բացվի Արևմտյան Եվրոպայում 1944 թ. մայիսին։

Կոնֆերանսը քննարկեց այն առաջարկությունը, որ Լեհաստանի ապագա սահմանը պետք է անցնի արևելքում «Քերզոնի գծով», իսկ արևմուտքում՝ Օդեր և Արևմտյան Նեյսե գետերով։ Սովետական պատվիրակությունն ընդգծեց, որ ՍՍՀՄ-ը պետք է ստանա Արևելյան Պրուսիայի տարածքի մի մասը, ներառյալ Քյոնիգսբերգն ու Ռևելը (Կլայպեդան)։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՁՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ. 1944 Թ. ՀՈՒՆՎԱՐ—1945 Թ. ՄԱՅԻՍ։ ԵՎՐՈՊԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՊԻՏՈՒԼԱՑՈՒՄԸ

Երկրորդ ռազմաճակատը

Մինչև 1944 թ. ամառը նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Արևմտյան Եվրոպայում երկրորդ ռազմաճակատը բացելու համար. հիտլերյան Գերմանիայի գլխավոր ուժերը գտնվում էին Արևելյան ռազմաճակատում. Անգլիան և ԱՄՆ-ը ունեին մարդկանց ու տեխնիկայի վիթխարի գերակշռություն. Ֆրանսիայում արագորեն աճում էր Դիմադրության շարժումը, հասունանում էր ընդհանուր զինված ապստամբություն։

Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանները, կազմակերպելով իրենց զորքերի ափհանումը Ֆրանսիայում, ղեկավարվում էին ոչ միայն թշնամու դեմ տարած հաղթանակում ավանդ մուծելու և Եվրոպայում պատերազմի ավարտն արագացնելու ձգտմամբ, այլև կարմիր բանակին կանխելու և այդպիսով ազատագրված երկրներում արմատական սոցիալական վերափոխումների հնարավորությունը բացառելու մտադրությամբ։

Դաշնակից զորքերի ներխուժումը Ֆրանսիա սկսվեց 1944 թ. հունիսի 6-ին։ Անգլո-ամերիկյան հրամանատարությունը մարտի նետեց 37 ընտիր դիվիզիա։ Դեսանտի ափհանումն ապահովում էին 6 հազ. նավեր։ Օդից նրանց պաշտպանում էին 11 հազ. ինքնաթիռներ։ Այդ ժամանակ Արևմտյան Եվրոպայում գտնվում էին մոտ 60 ոչ լիովին կոմպլեկտավորված գերմանական դիվիզիաներ և 500 մարտական ինքնաթիռներ։ Ափ ելնելով Ֆրանսիայի հյուսիսային ծովեզերքում, Նորմանդիայում, անգլո-ամերիկյան զորքերը պլացդարմ ստեղծեցին Շերբուր և Կանն քաղաքների միջև, բայց երկար ժամանակ առաջ չշարժվեցին։ Միայն 1944 թ. հուլիսի վերջին ճեղքեցին գերմանական պաշտպանությունը, Ֆալեզի շրջանում շրջապատեցին գերմանական զորքերի մի մասը և դուրս եկան Փարիզի մատույցները։ Դաշնակիցներին վիթխարի օգնություն ցույց տվեցին Դիմադրության շարժման մասնակիցները, որոնք օկուպանտների վրա գրոհում էին թիկունքից։ Դեներալ Էյզենհաուերը ֆրանսիական Դիմադրության ուժերը հավասարեցնում էր 15 կանոնավոր դիվիզիաների, ընդ որում նրանց օգնությունը վրա հասավ դաշնակից հրամանատարության համար ամենածանր պահին։

Մեծ հաջողությամբ պսակվեց զինված ապստամբությունը Բելգիայում։ Բելգիական հայրենասերներն ազատագրեցին մի շարք պրովինցիաներ և քաղաքներ, ներառյալ Անտվերպեն խոշորագույն նավահանգիստը։ Ֆրանսիայում դաշնակիցների ափ դուրս գալուց հետո Գերմանիան ստիպված էր Արևմտյան

ռազմաճակատում պահել 70—80 դիվիզիա, թեև նրա գլխավոր ուժերը (մինչև 200 դիվիզիա) մնում էին սովետա-գերմանական ռազմաճակատում։

Հաղթանակը Բելոռուսիայում

Երկրորդ ռազմաճակատի բացումն արևմուտքում զուգակցվեց կարմիր բանակի հզոր հարձակմամբ Բելոռուսիայում։ 1944 թ. հունիսի 23-ին սկսվեց «Բագրատիոն» օպերացիան, որը նպատակ ուներ ազատագրել Բելոռուսիան։ Հարձակման առաջին վեց օրում սովետական զորքերը ջախջախեցին թշնամու 26 դիվիզիա, իսկ տասներորդ օրը Մինսկից արևելք շրջապատեցին 100 հազ. զինվորից ու սպայից բաղկացած մի խմբավորում։ Հուլիսի 3-ին ազատագրվեց Մինսկը։ Միաժամանակ կարմիր բանակը հարձակում ծավալեց Ուկրաինայում և Մերձբալթիկայում։ Մինչև 1944 թ. օգոստոսը ՍՍՀՄ-ի՝ ժամանակավորապես օկուպացված գրեթե ամբողջ տարածքն ազատագրվեց գերմանա-ֆաշիստական զավթիչներից։ Սովետական զորքերը հասան Գերմանիայի սահմաններին, մըտան Ռումինիա, Չեխոսլովակիա, Լեհաստան և Հունգարիա՝ Եվրոպայի ժողովուրդներին ազատագրելով ֆաշիստական լծից։ Բելոռուսական օպերացիան կարևոր դեր խաղաց Լեհաստանի ազատագրման գործում։ Սովետական զինվորական հրամանատարության ընդհանուր ղեկավարությամբ կռվում էր Լեհական 1-ին բանակը, որը կազմավորվել էր ՍՍՀՄ-ում։ Նրան ակտիվորեն օգնում էին Արմիա Լյուդովայի ջոկատները և Լեհաստանի տարածքում վերաբազավորված ավելի քան 80 սովետական պարտիզանական միավորումներ։

1944 թ. հուլիսի 21-ին ազատագրված լեհական Խելմ քաղաքում կազմավորվեց Ազգային ազատագրության լեհական կոմիտեն՝ ժողովրդադեմոկրատական նոր Լեհաստանի բարձրագույն ղեկավար մարմինը։

Հիտլերյան բլոկի փլուզումը

1944 թ. ամառը Գերմանիայի դրությունը դարձավ աղետալի։ Բանակը վիթխարի կորուստներ էր կրել։ Ռազմական արտադրությունը շեշտակիորեն ընկել էր։ Դրժգոհությունը ֆյուրերի քաղաքականությունից ավելի ու ավելի էր մեծանում։

1944 թ. օգոստոսի 20-ին սովետական զորքերն սկսեցին Յասսի-Քիշնևյան օպերացիան և ջախջախեցին գերմանա-ֆաշիստական խոշորագույն խմբավորումներից մեկը, որը պաշտպանում էր Բալկանների մատույցները։ Կարմիր բանակի հզոր հարվածը և նրա սրընթաց առաջխաղացումը դեպի Ռումինիայի խորքերը արագացրին ռումինական ժողովրդի զինված ապստամբությունը, որը նախապատրաստել էր կոմունիստական կուսակցությունը։ Օգոստոսի 23-ին ռումինական ժողովուրդը տապալեց Անտոնեսկուի կառավարությունը։ Ռումինիան դուրս եկավ հիտլերյան բլոկից, զինադադար կնքեց հակահիտլերյան կոալիցիայի պետությունների հետ և միացավ նրանց, մասնակցելով Գերմանիայի ու Հունգարիայի դեմ մղվող պատերազմին։ Ռումինական 16 դիվիզիա սկսեցին կռվել կարմիր բանակի դիվիզիաների հետ ընդդեմ ընդհանուր թշնամու։ 1944 թ. օգոստոսի 23-ի ապստամբությունը պատմական շրջադարձ եղավ ռումինական ժողովրդի կյանքում, դարձավ ժողովրդական հեղափոխության սկիզբը։

Կարևոր իրադարձություններ տեղի ունեցան Բուլղարիայում։ Գերմանական զավթիչների դեմ, ազգային անկախության և ազատության համար, Սովետական Միության հետ պատերազմելու դեմ բուլղար ժողովրդի մղած պայքարը Բուլղարիայի ցարական կառավարությանը խանգարեց զորքեր ուղարկել սովետա-գերմանական ռազմաճակատ։ Բայց, այնուամենայնիվ, Բուլղարիայի կառավարողները դաշինքի մեջ էին մնում Գերմանիայի հետ և նրան ամեն տեսակի օգնություն ցույց տալիս նրա մղած զավթողական պատերազմում։ Հաշվի առնելով այդ, սովետական կառավարությունը 1944 թ. սեպտեմբերի 5-ին պատերազմի վիճակ հայտարարեց Բուլղարիայի դեմ։ Սեպտեմբերի 6-ին կարմիր

բանակի զորամասերը մտան Բուլղարիա՝ նրա ժողովրդի ողջույնների ներքո։ Սովետական զորքերի հարձակումը միաձուլվեց ժողովրդի զինված ապստամբության հետ, որը ղեկավարում էին կոմունիստները։ Սեպտեմբերի 9-ին ցարական կառավարությունը տապալվեց։ Բուլղարիան միացավ հակահիտլերյան կոալիցիային և մասնակցելով Գերմանիայի ու Հունգարիայի դեմ մղվող պատերազմին, իր ավանդը մուծեց ֆաշիզմի դեմ տարած ընդհանուր հաղթանակի գործում։ Սեպտեմբերի 9-ի ապստամբությունը դրեց հաղթական ժողովրդադեմոկրատական հեղափոխության սկիզբը։

Կարմիր բանակի տարած հաղթանակների ազդեցության տակ Ֆինլանդիայի կառավարող շրջաններում աճեց պատերազմից դուրս գալու ձգտումը։ 1944 թ. սեպտեմբերի 4-ին ֆինլանդական կառավարությունը հայտարարեց, որ համաձայն է զինադադար կնքելուն, խզում է հարաբերությունները Գերմանիայի հետ և դադարեցնում պատերազմը Սովետական Միության դեմ։

Պատերազմից Ֆինլանդիայի դուրս գալուց հետո Գերմանիան ուներ միայն մեկ դաշնակից՝ Հունգարիան։ Կարմիր բանակի ազատագրած հունգարական տարածքում 1944 թ. դեկտեմբերի 21-ին ստեղծվեց ժամանակավոր ազգային ժողով, որը Գերմանիային պատերազմ հայտարարեց։ Բայց Հունգարիայի տարածքի զգալի մասը մնում էր թշնամու ձեռքում։ Մարտերը ծայրահեղ կատաղի բնույթ էին կրում, քանի որ հիտլերյան հրամանատարությունը, հաշվի առնելով Հունգարիայի ստրատեգիական նշանակությունը, գործադրում էր բոլոր ջանքերը նրա ազատագրմանը խանգարելու համար։ Այն կարմիր բանակի կողմից ավարտվեց միայն 1945 թ. ապրիլի սկզբին։

Եվրոպայի ազատագրումը

Կարմիր բանակի հարձակումն ազատություն բերեց գերմանա-ֆաշիստական զավթիչների օկուպացրած Եվրոպական շատ երկրների ժողովուրդներին։ 1944 թ. օգոստոսի 29-ին Սլովակիայում սկսվեց ժողովրդական ապստամբություն, որը բարձրակետ դարձավ ֆաշիստական զավթիչների դեմ սլովակների մղած հերոսական պայքարում։ Ապստամբությունը գլխավորեցին կոմունիստները։ Սլովակյան ապստամբներին օգնություն ցույց տալու նպատակով սովետական գլխավոր հրամանատարությունն Արևելյան Կարպատներում կազմակերպեց Դուկլինյան օպերացիան, որին մասնակցեց ՍՍՀՄ-ում կազմավորված Չեխոսլովակյան 1-ին բանակային կորպուսը։ Դուկլայում մղված մարտերում ծնունդ առավ չեխոսլովակյան ժողովրդի՝ «Հավիտյան Սովետական Միության հետ» լոզունգը։

1945 թ. սկզբին լայն ճակատով ծավալվեցին Չեխոսլովակիայի ազատագրման համար մղվող մարտերը։ Դրանք շարունակվեցին մինչև մայիսի 9-ը։ Ավելի քան 140 հազ. սովետական ռազմիկներ թաղված են չեխոսլովակյան հողում։

Հարավսլավիայում օկուպանտների դեմ մղված ժողովրդական պատերազմի ընթացքում կազմավորվեց ժողովրդաազատագրական բանակը, որը մինչև 1944 թ. աշունը ազատագրեց իր երկրի զգալի մասը։ Սովետական և հարավսլավական հրամանատարությունների միջև պայմանավորվածություն կայացավ կարմիր բանակի և Հարավսլավիայի ժողովրդաազատագրական բանակի համատեղ գործողությունների մասին՝ բուլղարական զորքերի մասնակցությամբ հանդերձ։ Հոկտեմբերի 20-ին ՍՍՀՄ-ի, Հարավսլավիայի և Բուլղարիայի միացյալ ուժերն ազատագրեցին Բելգրադը և շուտով ավարտեցին ամբողջ երկրի ազատագրումը։

Հիտլերականների ջախջախումը Հարավսլավիայում և կարմիր բանակի առաջխաղացումը դեպի Ադրիատիկ ծով սպառնալիքի տակ դրեցին Հունաստանում և Ալբանիայում գտնվող գերմանական զորքերին։ Գերմանական հրամանատարությունն սկսեց դրանք դուրս բերել։ Դրանից օգտվեցին Հունաստանի և Ալբանիայի հայրենասերները, որոնք ուժեղացրին պայքարն ընդդեմ նահանջող օկուպանտների, հանուն իրենց երկրների ազատագրման։ Երբ գերմանական զորքերը հեռացան Հունաստանից, անգլիական զորքերը ներխուժեցին այդ երկիրը և ռազմական գործողություններ ձեռնարկեցին պարտիզանական ջոկատների դեմ։ Դա կոպիտ բռնության ակտ էր։

Հարավարևելյան Եվրոպայում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում կարմիր բանակն ազատագրեց Ավստրիայի մեծ մասը։ Սովետական կառավարությունը հանդես եկավ հօգուտ Ավստրիայի վերաբերյալ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների դեկլարացիայի իրականացման, հօգուտ երկրի ազգային սուվերենության վերականգնման։

1944 թ. հոկտեմբերին հետապնդելով նահանջող հիտլերականներին, սովետական զորքերը մտան Նորվեգիա, դնելով գերմանա-ֆաշիստական լծից նրա ազատագրման սկիզբը։

Արդենյան օպերացիան

1944 թ. դեկտեմբերին գերմանական հրամանատարությունը որոշեց հակահարված հասցնել Գերմանիայի սահմաններին մոտեցած անգլո-ամերիկյան զորքերին։ Գերմանական հակահարձակումը, որը սկսվեց 1944 թ. դեկտեմբերի 16-ին Արդեններում, կատարյալ անակնկալ եղավ անգլո-ամերիկյան զորքերի համար, որոնք ընկան դժվարին դրության մեջ։ Դա Անգլիայի կառավարությանն ստիպեց դիմել Սովետական Միությանը՝ խնդրելով շտապ օգնություն ցույց տալ։ Նման օգնություն ցույց տրվեց ամբողջ ռազմաճակատով մեկ սովետական հզոր հարձակմամբ, որն սկսվեց 1945 թ. հունվարի 12-ին։ Այդ հարձակումը նպաստեց գերմանական հրամանատարության Արդենյան օպերացիայի ձախողմանը և բարենպաստ նախադրյալներ ստեղծեց դաշնակիցների հարձակումը զարգացնելու համար։

ՄԱԿ-ի ստեղծման մասին համաձայնագիրը։ Ղրիմի կոնֆերանսը

Կատարելով արտաքին գործերի մինիստրների Մոսկովյան կոնֆերանսի որոշումը, դաշնակից կառավարություններն աշխատանք կատարեցին խաղաղության և անվտանգության պաշտպանության համար միջազգային կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ։ 1944 թ. օգոստոս-հոկտեմբերին Դումբարտոն-Օքսում (ԱՄՆ) տեղի ունեցած ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Չինաստանի ներկայացուցիչների կոնֆերանսը մշակեց ապագա Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրությունը։ Սակայն կոնֆերանսի մասնակիցներն այն ժամանակ չկարողացան պայմանավորվել այդ կազմակերպության կարևորագույն մարմնում՝ Անվտանգության խորհրդում քվեարկության կարգի վերաբերյալ։

1945 թ. փետրվարի սկզբին Ղրիմում տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների երկրորդ կոնֆերանսը։ Կոնֆերանսում համաձայնեցվեցին պատերազմի եզրափակիչ փուլում հիտլերյան Գերմանիայի դեմ իրականացվող ռազմական օպերացիաների պլանները։ Կոնֆերանսը որոշում ընդունեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի զորքերով պարտված Գերմանիայի համատեղ օկուպացման մասին՝ համապատասխան օկուպացիոն գոտիների առանձնացմամբ հանդերձ։ Հետագայում Ֆրանսիան հրավիրվեց մասնակցելու Գերմանիայի օկուպացմանը։ Գերմանիայում դաշնակիցների քաղաքականության համաձայնեցման համար հիմնվեց դաշնակից տերությունների հրամանատարությունների ներկայացուցիչներից բաղկացած Վերահսկիչ խորհուրդ։ Երեք տերությունների ղեկավարները հայտարարություն արեցին իրենց հաստատուն վճռականության մասին՝ ցրելու գերմանական զինված ուժերը, ոչնչացնելու գերմանական գլխավոր շտաբը, խստորեն պատժելու ռազ-

մական հանցագործներին, երկրի երեսից ջնջելու ֆաշիստական կուսակցությունը, ֆաշիստական օրենքները, կազմակերպությունները և հիմնարկությունները։

Պայմանավորվեցին, որ Գերմանիան պետք է ռեպարացիաներ վճարի ագրեսիայի զոհերին, բայց ռեպարացիաների չափերի և գանձման կարգի վերաբերյալ ընդհանուր համաձայնության հասնել չհաջողվեց Անգլիայի դիմադրության պատճառով։ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև համաձայնեցվեց այդպիսի ռեպարացիաների ընդհանուր գումարը 20 մլրդ դոլարի չափով, այդ գումարի 50%-ը նախատեսվում էր Սովետական Միության համար, որը տվել էր առավել մեծ զոհեր։

ՄԱԿ-ում քվեարկության կարգի հարցի քննարկման ժամանակ երեք տերությունների ղեկավարներն ընդունեցին Ռուզվելտի առաջարկությունը, որի համաձայն խաղաղության և անվտանգության հարցերի գծով Անվտանգության խորհրդի բոլոր որոշումները հիմնվում էին մեծ տերությունների միաձայնության սկզբունքի վրա։ Որոշվեց 1945 թ. ապրիլի 25-ին Սան-Ֆրանցիսկոյում գումարել միավորված ազգերի հիմնադիր կոնֆերանս։

Ղրիմի կոնֆերանսի որոշումներում կարևոր տեղ գրավեց «Եվրոպայի ազատագրման վերաբերյալ դեկլարացիան»։ Այնտեղ ասվում էր, որ կոնֆերանսի մասնակիցներն ազատագրված Եվրոպայի երկրների նկատմամբ իրենց քաղաքականության ընդհանուր սկզբունքն են համարում այնպիսի կարգի սահմանումը, որը ժողովուրդներին թույլ տար «ոչնչացնելու նացիզմի և ֆաշիզմի վերջին հետքերը և իրենց սեփական ընտրությամբ ստեղծելու դեմոկրատական հիմնարկություններ»։

Ղրիմի կոնֆերանսի վերջին օրը ստորագրվեց Ճապոնիայի դեմ մղվող պատերազմի մեջ հետագայում Սովետական Միության մտնելու վերաբերյալ համաձայնագիրը։ Այն նախատեսում էր, որ Սովետական Միությունը մտնելու է Ճապոնիայի դեմ մղվող պատերազմի մեջ Գերմանիայի կապիտուլացումից և Եվրոպայում պատերազմն ավարտվելուց երկու-երեք ամիս հետո, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության գոյություն ունեցող դրության պահպանման, Սախալին կղզու հարավային մասը (որը զավթել էր Ճապոնիան 1904—1905 թթ. Ռուսաստանի դեմ մղված պատերազմի հետևանքով) Սովետական Միությանը վերադարձնելու, Պորտ Արտուրի վարձակալությունը և Մանջուրիայում Ռուսաստանի կառուցած երկաթուղիների՝ Չինաստանի հետ համատեղ շահագործումը Սովետական Միության համար վերականգնելու, Ճապոնիայի կողմից խլված Կուրիլյան կղզիները Սովետական Միությանը վերադարձնելու պայմանով։

Ղրիմի կոնֆերանսը դարձավ տարբեր սոցիալական սիստեմներ ունեցող պետությունների միջազգային համագործակցության արդյունավետության վառ օրինակ։ Կոնֆերանսի որոշումները համապատասխանում էին հետպատերազմյան խաղաղության դեմոկրատական կարգավորման խնդրին։ Կոնֆերանսը նշանակալից ուղենիշ դարձավ գերմանական ֆաշիզմի լիակատար ջախջախման և պատերազմի արդարացի ազատագրական նպատակների իրականացման ճանապարհին։

Գերմանիայի կապիտուլացումը

1945 թ. ապրիլի կեսերին սովետական զորքերը հասան Բեռլինի արվարձանները։ Անգլո-ամերիկյան զորքերն անցան Հռենոսը, գրավեցին Ռուրի ածխային ավազանը, հասան Էլբայի ստորին հոսանքին։ Հիտլերյան Գերմանիային վերջնականապես ջախջախելու համար հարկավոր էր գրավել նրա մայրաքաղաքը՝ Բեռլինը։ 1945 թ. ապրիլի 16-ին կարմիր բանակն սկսեց Բեռլինյան օպերացիան։ Ճեղքելով Օդեր և Նեյսե գետերի արևմտյան ափերին եղած գերմանական զորքերի ուժեղ պաշտպանությունը, սովետական զորքերը շրջապատեցին հակառակորդի բեռլինյան խմբավորումը։ Ապրիլի 25-ին Էլբա գետի մոտ, Բեռլինից արևմուտք 1-ին Ուկրաինական ռազմաճակատի զինվորները հանդիպեցին ամերիկյան զորքերին։ Գերմանա-ֆաշիստական բանակը ճեղքվեց երկու մասի։ Ապրիլի 30-ին սովետական քաջարի զինվորները գրոհով գրավեցին ռայխստագը և նրա վրա բարձրացրին հաղթանակի կարմիր դրոշը։ Հիտլերը կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ։ Մայիսի 1-ի երեկոյան ֆաշիստական զորքերի մնացորդները գերի հանձնվեցին։

Պատերազմի վերջը նշանավորվեց օկուպացված երկրներում տեղի ունեցած ժողովրդական խոշորագույն ապստամբություններով։

1945 թ. ապրիլի 25-ին սկսվեց իտալական ժողովրդի ընդհանուր զինված ապստամբությունը։ Նրա թափն ու ուժն այնպիսին էին, որ գերմանական զորքերը շուտով կապիտուլացվեցին։ Լիգուրիայում գերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Մայնհոլդը Ճենովայում կապիտուլացման ակտը ստորագրեց իտալական բանվոր Ռեմո Սկապինիի առջև, որը Ճենովայի ազգային ազատագրության կոմիտեի ներկայացուցիչն էր։ Տրիեստի ապըստամբած բանվորներն իրենց քաղաքը լիովին ազատագրեցին զավթիչներից։ Մի քանի ապստամբություններ տեղի ունեցան համակենտրոնացման ճամբարներում։ Ապրիլի 11-ին սկսվեց Բուխենվալդի կալանավորների հերոսական ապստամբությունը, որն ավարտվեց նրանց ազատագրմամբ։

1945 թ. մայիսի 5-ին սկսվեց Պրագայի ապստամբությունը։ Հիտլերականներն ունեին ուժերի վիթխարի գերակշռություն։ Պրագայի հայերնասերները ռադիոյով դիմեցին՝ խնդրելով շտապ օգնության հասնել։ Այդ օգնությունն անհապաղ ցույց տվեցին սովետական զորքերը։ Ջախջախելով թշնամու խոշոր խմբավորումը, նրանք Պրագան փրկեցին ավերումից, իսկ ապստամբներին՝ կործանվելուց։

Պատերազմը Եվրոպայում մոտեցավ ավարտին։ 1945 թ. մայիսի 8-ին Բեռլինի Կարլհորստ արվարձանում ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի հաղթական բանակների ներկայացուցիչների առջև ֆելդմարշալ Քեյտելը Հիտլերյան վերմախտի և ֆաշիստական հրամանատարության անունից ստորագրեց Գերմանիայի անվերապահ կապիտուլացման ակտը։ Մայիսի 9-ի օրը դարձավ Հաղթանակի օր, սովետական ժողովրդի, ամբողջ առաջադեմ մարդկության մեծ տոնը։

Պոտսդամի կոնֆերանսը

1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը Բեռլինին մերձակա Պոտսդամում տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների երրորդ կոնֆերանսը։ Նրան մասնակցում էին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ի. Վ. Ստալինը, ԱՄՆ-ի պրեզիդենտ Հ. Տրումենը (որը փոխարինել էր 1945 թ. ապրիլին վախճանված Ֆ. Ռուզվելտին), Անգլիայի պրեմիեր մինիստրներ Ու. Չերչիլը և Չերչիլին փոխարինած Կ. Էթլին։

Կոնֆերանսի մասնակիցները համաձայնության հասան «դաշնակից վերահսկողության ժամանակաշրջանում պարտված Գերմանիայի նկատմամբ կոորդինացված քաղաքականության քաղաքական և տնտեսական սկզբունքների մասին»։ ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Անգլիան որոշեցին լիովին զինաթափել և ապառազմականացնել Գերմանիան, ձեռնարկել բոլոր միջոցները, «որոնք անհրաժեշտ են այն բանի համար, որպեսզի Գերմանիան այլևս երբեք չսպառնա իր հարևաններին կամ խաղաղության պահպանմանն ամբողջ աշխարհում»։ Դաշնակից տերությունները անհրաժեշտ գտան ոչնչացնել հիտլերյան կուսակցությունը և ֆաշիստական բոլոր հիմնարկությունները, ստեղծել այն բանի երաշխիքը, որ ֆաշիզմը որևէ այլ ձևով չվերածնվի, վերականգնել դեմոկրատական ազատությունները։ Հաշվի առնելով ֆաշիստական Գերմանիայի արդ-

յունաբերական և ֆինանսական մոնոպոլիաների դերը ագրեսիվ պատերազմների սանձազերծման գործում, կոնֆերանսը որոշեց ոչնչացնել տնտեսական ուժի չափից դուրս համակենտրոնացումը, ուժ, որը «ներկայացված էր... կարտելների, սինդիկատների, տրեստների և մոնոպոլիստական այլ համաձայնությունների ձևով»։ Կոնֆերանսը որոշեց ֆաշիստներին հեռացնել բոլոր հասարակական պաշտոններից, լիովին վերացնել նացիստական և միլիտարիստական դոկտրինաները, ձերբակալել և դատի տալ բոլոր ռազմական հանցագործներին։

Հաստատվեց պայմանավորվածությունն այն մասին, որ գերմանական ժողովուրդը պետք է հնարավորություն ստանա կառուցելու նոր Գերմանիա, որպես դեմոկրատական և խաղաղասեր պետություն, որ Գերմանիան մնալու է որպես միասնական պետություն, որը ժամանակին պետք է իրեն վայել տեղ գրավի խաղաղասեր երկրների մեջ։

Կոնֆերանսը որոշեց Քյոնիգսբերգ քաղաքը և նրան հարող շրջանը հանձնել Սովետական Միությանը։ Որոշվեց նաև Լեհաստանի արևմտյան սահմանը Օդեր և Նեյսե գետերով։ Համաձայնվեց Գերմանիայից ռեպարացիաներ գանձելու կարգի հարցը։ Երեք մեծ տերությունների ղեկավարները որոշեցին հիմնել ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Չինաստանի արտաքին գործերի մինիստրների խորհուրդ, որպես մշտական գործող մարմին, որը պարբերաբար հրավիրվելու է հետպատերազմյան կառուցվածքի հրատապ հարցերը համաձայնեցնելու և քննարկելու համար, ներառյալ նախկին թշնամի պետությունների հետ հաշտության պայմանագրերի մշակումը։

Գերմանիայի նկատմամբ կիրառվելիք քաղաքականության կարևորագույն հարցերի համաձայնեցումը Պոտսդամի կոնֆերանսում և 1945 թ. հունիսի 26-ին Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսի հաջող ավարտը, որը հաստատեց Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, հանդիսացան դեմոկրատական հակաֆաշիստական ուժերի խոշոր հաղթանակը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ. 1945 Թ. ՄԱՅԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ։ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՍՍՀՄ-ի մտելը Ճապոնիայի դեմ մղվող պատերազմի մեջ

Ճապոնիան ոչ միայն կռվում էր Անգլիայի և ԱՄՆ-ի դեմ, այլև օգնում էր Գերմանիային՝ կռվելու Սովետական Միության դեմ։ 1941 թ. վերջերից մինչև 1943 թ. սկիզբը ճապոնական ռազմանավերը ՍՍՀՄ-ի սահմաններում, հենց միայն Պրիմորիեում կատարել են ավելի քան 500 պրովոկացիա՝ զենքի կիրառմամբ։ 1941 թ. ամռանից մինչև 1944 թ. վերջը ճապոնական զինված ուժերը բռնել են 178 սովետական առևտրանավ։

Ճապոնական կառավարության այդ և շատ այլ գործողություններ չեզոքության մասին 1941 թ. ապրիլի 13-ի սովետա-ճապոնական պայմանագրի խախտում էին։ Պայմանագիրը կողմերից յուրաքանչյուրին իրավունք էր տալիս այն չեղյալ հայտարարել պայմանագրի գործողության հնգամյա ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ։ 1945 թ. ապրիլի 5-ին սովետական կառավարությունն օգտվելով այդ իրավունքից, պայմանագիրը չեղյալ հայտարարեց, նշելով, որ Ճապոնիան օգնում էր Գերմանիային Սովետական Միության դեմ մղվող պատերազմում և կռվում այն պետությունների դեմ, որոնք ՍՍՀՄ-ի դաշնակիցներն էին։

1945 թ. օգոստոսի 8-ին Սովետական Միությունը ճապոնական կառավարությանը հայտարարեց, որ սկսած օգոստոսի 9-ից նա իրեն պատերազմի վիճակի մեջ է համարելու Ճապոնիայի դեմ։ Այդ հայտարարությանը միացավ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությունը։

Ճապոնիայի դեմ մղվող պատերազմում Սովետական Միության խնդիրներից էին՝ համաշխարհային պատերազմի երկրորդ օջախի վերացումը, պատերազմի շուտափույթ ավարտումը, ՍՍՀՄ-ի վրա ճապոնական իմպերիալիստների հարձակման մշտական սպառնալիքի վերացումը, ճապոնական զավթիչների վտարումը նրա օկուպացրած երկրներից, Ճապոնիայի խլած Հարավային Սախալինի և Կուրիլյան կղզիների վերադարձնելը Սովետական Միությանը, Ասիայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը օգնություն ցույց տալը։ Սովետական Միության պատերազմը իմպերիալիստական Ճապոնիայի դեմ դարձավ Հայրենական մեծ պատերազմի շարունակությունը և ավարտը։

Պատերազմի խաղաղօվկիանոսյան թատերաբեմը 1945 թ. ամռան մոտերին

Ճապոնիայի դեմ մղվող պատերազմի մեջ Սովետական Միությունը մտնելու պահին ճապոնական բանակը դեռ պահպանում էր իր հիմնական ուժերը. այն հաշվվում էր 5 մլն. զինվոր ու սպա, 1,5 մլն. զինծառայող ռազմածովային ուժերում։ Մոբիլիզացման համար նախապատրաստված ռեզերվը կազմում էր ավելի քան 2 մլն. մարդ։ Ճապոնական զորքերը շարունակում էին Չինաստանի, Կորեայի, Ֆիլիպինների, Հնդկաչինի, Բիրմայի, Մալայայի, Ինդոնեզիայի օկուպացումը։ Ճապոնական զորքի մի խոշոր խմբավորում, որը հայտնի էր Կվանտունյան բանակ անունով, գտնվում էր իր զավթած Հյուսիսարևելյան Չինաստանի և Կորեայի տարածքում։ ԱՄՆ-ի և Անգլիայի ռազմական մասնագետները գտնում էին, որ Ճապոնիայի դեմ հաղթանակ տանելու համար իրենց հարկավոր կլինի ոչ պակաս, քան 7 մլն. զինվոր և մեկուկես-երկու տարի ժամանակ։

Ամերիկյան կառավարությունը զգում էր ՍՍՀՄ-ի օգնության կարիքն ընդդեմ Ճապոնիայի։ Միևնույն ժամանակ նա պատրաստվում էր Ճապոնիայի դեմ օգտագործել ատոմային զենք։ 1945 թ. օգոստոսի 6-ին և 9-ին ամերիկյան ավիացիան ատոմային ռումբեր նետեց Ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա, թեև այդ գործողությունները թելադրված չէին ռազմական անհրաժեշտությամբ։ Պատմության մեջ առաջին անգամ կիրառվեց զանգվածային ոչնչացման զենք, որից զոհվեցին կամ հաշմանդամ դարձան 447 հազ. խաղաղ բնակիչներ։ Ճապոնիայի վրա ատոմային ռումբեր նետելով, ամերիկյան իմպերիալիստներն, այդ ժամանակ ունենալով ատոմային զենքի մենաշնորհ, ցանկանում էին այն օգտագործել որպես ուրիշ երկրների, ամենից առաջ Սովետական Միության վրա ճնշում գործադրելու միջոց։

Կվանտունյան բանակի ջախջախումը։ Ճապոնիայի կապիտուլացումը

Սովետական բանակը ռազմական գործողություններն սկսեց Կվանտունյան բանակի դեմ հարձակումով։ Հաղթահարելով երկարաժամկետ հզոր ամրությունները, ջրազուրկ տափաստանները, Մեծ Խինգանի վայրի լեռնա-տայգային լեռնաշղթաները, նա մի քանի օրում ջախջախեց Կվանտունյան բանակը և մտավ Հյուսիսարևելյան Չինաստանի կենտրոնական շրջանները։

Միաժամանակ սկսվեց Կորեայի, Կուրիլյան կղզիների, Հարավային Սախալինի ազատագրումը։

Մանջուրիայի, Կորեայի, Կուրիլյան կղզիների և Հարավային Սախալինի կորուստը, կենդանի ուժի և տեխնիկայի վիթխարի, անվերականգնելի վնասը Ճապոնիային հարկադրեցին դիմելու կապիտուլացման։ 1945 թ. սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Ճապոնիայի անվերապահ կապիտուլացման ակտի ստորագրումը։ Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց։

Սովետական Միության կողմից ճապոնական ագրեսորի ջախջախումը մեծ

ազդեցություն ունեցավ Հարավարևելյան Ասիայում և Խաղաղօվկիանոսյան ավազանում հեղափոխական պրոցեսների զարգացման վրա։ Ճապոնական ռազմամոլների պարտությունը հեշտացրեց ժողովրդական հեղափոխությունների հաղթանակը Չինաստանում, Վիետնամում և Հյուսիսային Կորեայում, ազգային անկախության նվաճումը Ինդոնեզիայի, Բիրմայի, Հնդկաստանի, ինչպես նաև երկրագնդի այդ մասի շատ այլ երկրների կողմից։ Ասիայի ժողովուրդները ցնծությամբ պոնում էին ճապոնական ագրեսորների դեմ տարած հաղթանակը, ագրեսորներ, որոնք հանդես էին գալիս իմպերիալիստական ժանդարմի դերում։

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՄՆ-Ը ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Ինտերնացիոնալիստներ» և «մեկուսացման» կողմնակիցներ 1939—1941 թթ.

1939 թ. սեպտեմբերին Եվրոպայում պատերազմ սկսվելը շեշտակիորեն սրեց «մեկուսացման» կողմնակիցների և «ինտերնացիոնալիստների» միջև եղած հին վեճերը։ Քաղաքական ամենասուր պայքարի պրոցեսում 1939 թ. սեպտեմբերին—1941 թ. դեկտեմբերին «մեկուսացումը» որպես հոսանք կորցրեց իր ուժը։ Դրան նըպաստեցին մի շարք գործոններ։ Կառավարությունն ստեղծեց ռազմական արտադրության այնպիսի պայմաններ, որոնք մոնոպոլիաներին խոստանում էին չտեսնված շահույթներ։ Գործարար աշխարհն սկսեց բարեհաճ վերաբերմունք ցույց տալ «ինտերնացիոնալիզմին» նաև այն պատճառով, որ օգտվելով ռազմական իրադրությունից հույս ուներ ազատվել «նոր կուրսի» ծանր սոցիալական օրենսդրությունից։ Մոնոպոլիստական բուրժուազիայի պարագլուխները հասկանում էին, որ առաջադրելով «ամերիկյան դարի» իմպերիալիստական գաղափարը, չի կարելի պասսիվորեն նստել օվկիանոսի մյուս կողմում, համաշխարհային իրադարձությունների կենտրոններից հեռու։

«Ինտերնացիոնալիզմի» հաջողությանը ոչ փոքր չափով նպաստեցին նաև հակաֆաշիստական տրամադրությունները։

Արհմիութենական, ֆերմերական, համադեմոկրատական կազմակերպությունները քաղաքական պայքարի ընթացքում, 30-ական թվականներին ֆաշիզմը դատապարտեցին որպես սպառնալիք առաջադիմական նվաճումների և ավանդույթների համար, որպես ռեակցիայի, ագրեսիայի և պատերազմի աղբյուր։ 1939 թ. սեպտեմբերից, երբ պատերազմն ու ֆաշիզմը դառնում էին ավելի ու ավելի նույնանման հասկացություններ, քան մինչ այդ էր, հակապատերազմական տրամադրությունները միահյուսվում էին հակաֆաշիստականի հետ, որը ժողովրդական լայն զանգվածներին մոտեցնում էր ագրեսորին ավելի ակտիվորեն դիմադրելու անհրաժեշտության գիտակցությանը։

Այդ ամենն էլ պայմանավորեց «չեղոքության» մասին օրենսդրությունից աստիճանաբար հրաժարվելու և ԱՄՆ-ը հակաֆաշիստական պետությունների չկռվող դաշնակցի վերածելու ռուզվելտյան կուրսի հաղթանակը։ 1940 թ. ընտրություններում տարած հաղթանակից հետո Ֆ. Ռուզվելտն արագացրեց մերձեցումը հակաֆաշիստական պետությունների հետ։ 1941 թ. մարտի 11-ին լենդ-լիզի մասին օրենքի ընդունումը, որով տնտեսապես և քաղաքականապես շահագրգռված էին մոնոպոլիաների մեծ խմբեր, առանձնապես նկատելի քայլ եղավ այդ ուղղությամբ։ Այդ ծրագրի համաձայն պրեզիդենտը կարող էր վարձակալությամբ կամ փոխարինաբար հանձնելու կարգով ռազմական հանդերձանք ուղարկել այն երկրները, որոնց պաշտպանությունն ագրեսիայից, նրա կարծիքով, ծառայում էր ազգային անվտանգության շահերին։ Արդեն երկու շաբաթանց կոնգրեսը Ֆ. Ռուզվելտի պահանջով այդ նպատակի համար բաց թողեց առաջին 7 մլրդ. դոլարը։ 1941 թ. դեկտեմբերի 7-ից, երբ ճապոնացիները հարձակվեցին Պիրլ-Հարբորի վրա, հիտլերյան կոալիցիայի դեմ մղվող պայքարին ԱՄՆ-ի ակտիվ մասնակցության հարցն այլևս ոչ մեկի մեջ կասկած չէր առաջացնում, բացառությամբ պրոֆաշիստական և աղանդավորադոգմատիկ աննշան խմբերի։

ԱՄՆ-ի նպատակներն ու մասնակցությունը պատերազմին

Պատերազմի նպատակներն ու աշխարհի հետպատերազմյան կարգավորման պլաններն ԱՄՆ-ում լայնորեն քննարկվում էին Պիրլ-Հարբորից դեռ շատ առաջ։ 1941 թ. հունվարի 6-ին Ֆ. Ռուզվելտը որպես պատերազմի նպատակներ, որտեղ ԱՄՆ-ն արդեն աջակցություն էր ցույց տալիս «առանցքի» հակառակորդներին, հռչակեց «չորս ազատություն»՝ խոսքի և կրոնի ազատություն և կարիքից ու սարսափից փրկվելու ազատություն։ Խնդիրների այդպիսի վերացական-լիբերալ ձևակերպումը չէր բավարարում ամերիկյան մոնոպոլիաներին։ Նրանց ավելի շատ դուր էին գալիս մամուլի մագնատ Հ. Լյուսի՝ 1941 թ. փետրվարին հրապարակված «Ամերիկյան դար» հոդվածի բացահայտ իմպերիալիստական թեզիսները, որտեղ նա կանխատեսում էր, որ XX դարը պետք է դառնա «ամերիկյան»։

Խոսելով պատերազմում ԱՄՆ-ի նպատակների մասին, հարկավոր է ի նըկատի ունենալ, որ դրանց հակաֆաշիստական կողմն ամեն կերպ ռեկլամվում և չափազանցվում էր, իսկ իմպերիալիստականը՝ քողարկվում և նվազեցվում։ ԱՄՆ-ի կառավարող շրջանները մոնոպոլիաների լայն աջակցությամբ հույս ունեին ջախջախել գերմանա-ճապոնա-իտալական բլոկը, թուլացնել անգլո-ֆրանսիական դաշնակիցներին, ուժեղացնել ազդեցությունը մյուս պետություններում և այդպիսով լիակատար հեգեմոնիա հաստատել կապիտալիստական աշխարհում։

Աշխարհի հետպատերազմյան կարգավորման պլաններում հատուկ տեղ էր հատկացվում Սովետական Միության հետ հարաբերություններին, թեև ո՛չ պաշտոնական շրջաններում, ո՛չ էլ բուրժուական լրագրում միասնական հայացք չկար ամերիկա-սովետական հարաբերությունների հեռանկարների նկատմամբ։ Ֆ. Ռուզվելտը ելնում էր ամերիկա-սովետական համագործակցության անհրաժեշտությունից։ Դրա դեմ հանդես էին գալիս մոլի իմպերիալիստները, որոնց պարագլուխը դարձավ հանրապետական Ա. Վանդենբերգը։ Քանի դեռ Գերմանիայի ջախջախումը հեռու էր, վճռական հակասովետական կուրսի կողմնակիցները ստվերի տակ էին գտնվում։ Բայց Յալթայի կոնֆերանսից հետո նրանք բացահայտորեն ակտիվացան, իսկ Ֆ. Ռուզվելտի մահվամբ վերջնականապես գլուխ բարձրացրին, որոշելով «ճշմարիտ ուղու» վրա դնել նոր պրեզիդենտ Հ. Տրումենին, որն ինքն էր շարժվում նույն այդ ուղղությամբ։

Պատերազմին ԱՄՆ-ի մասնակցությունն արտահայտվեց դաշնակիցներին սպառազինությամբ ու այլ նյութերով օգնելով և անմիջականորեն ռազմական գործողություններ վարելով։ ԱՄՆ-ի մատակարարումները դաշնակիցներին կազմեցին 50 մլրդ. դոլար. դա երկրորդ համաշխարհային պատերազմի վրա կատարված ամերիկյան բոլոր ծախսերի (425 մլրդ. դոլար) 1/8-ն է։ Լենդ-լիզի գծով բոլոր մատակարարումների մոտ 70%-ն ուղարկվում էր Անգլիա, իսկ ՍՍՀՄ՝ 22%-ը։

ԱՄՆ-ի զինված ուժերում ռազմական գործողությունների թեժ պահին ծառայում էր 15 մլն. մարդ, որոնցից 2,4 միլիոնն ավիացիայում, 3,4-ը՝ նավա-

տորմում։ Պատերազմի ընթացքում ամերիկացիները կորցրին 405 հազ. մարդ (սպանված և վերքերից մահացած)։

ԱՄՆ-ն այս կամ այն ձևով մասնակցեց ֆաշիստական բլոկի բոլոր պետությունների դեմ մղված ռազմական գործողություններին, բացառությամբ Ֆինլանդիայի, որի հետ հարաբերությունները խզվեցին, բայց բանը չհասավ պատերազմ հայտարարելուն։

Ռազմական էկոնոմիկան

Պատերազմն աշխուժացրեց ամերիկյան էկոնոմիկան։ Այն, ինչ չկարողացան 10 տարում անել ո՛չ հանրապետականները, ո՛չ էլ դեմոկրատները, կարճ ժամկետում կատարվեց ռազմական կոնյունկտուրայի շնորհիվ. բիզնեսը վերստին ոտքի կանգնեց։ Արդյունաբերական արտադրության ամենամյա աճի տեմպը 1939—1943 թթ. «նոր կուրսի» ժամանակաշրջանի աճի տեմպը գերազանցեց գրեթե 6 անգամ։

Մոնոպոլիաների և պետության սերտաճումը, որպես պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական հատկություններից մեկը, ռազմական պայմաններում չտեսնված թափ ընդունեց։ Կարճ ժամանակամիջոցում ԱՄՆ-ում ստեղծվեց ռազմակարգավորիչ մարմինների համակարգ, որոնք վերածվեցին բիզնեսի իսկական կառավարության։ Ռեկլամելով իրենց հայրենասիրությունը, մոնոպոլիստները վճռական պոստեր գրավեցին պետական ապարատում։ Նրանք ամենից առաջ իրենց ձեռքը վերցրին պետական պատվերների բաշխման գործը, պատվերներ, որոնք կարևորագույն դեր էին խաղում երկրի էկոնոմիկայում։

Մոնոպոլիաները պետության մոբիլիզացրած ռեսուրսների օգտագործումից վիթխարի արտոնություններ էին ստանում, այն դեպքում, երբ հարկերի գըլխավոր բեռն ընկած էր աշխատավոր զանգվածների ուսերին։

Կիրառելով «տնտեսական կայունացման» քաղաքականություն, կառավարությունը դժվար հաղթահարելի խոչընդոտներ դրեց աշխատավարձի բազային դրույքների աճման առջև։ 1941—1945 թթ. դրանք ավելացան 20%-ով, իսկ ապրուստի արժեքն աճեց 45%-ով։ Դա էլ հենց եղավ մոնոպոլիաների շահույթների աստղաբաշխական աճի գլխավոր աղբյուրներից մեկը. կորպորացիաների մաքուր շահույթը (հարկերը վճարելուց հետո) պատերազմի 6 տարվա ընթացքում կազմեց 55 մլրդ. դոլար։

Պատերազմի տարիներին պետությունն ակտիվորեն մոբիլիզացրեց 30-ական թվականներին խարխլված բիզնեսի դիրքերի ամրապնդման սոցիալ-տընտեսական, գաղափարական և քաղաքական լծակները։

Մոնոպոլիաները պատերազմից դուրս էին գալիս ամրապնդված ոչ միայն տնտեսապես, այլև սոցիալապես, քաղաքականապես և նույնիսկ բարոյապես։ Հենց նրանց, այլ ոչ թե բանվորների ու ֆերմերների աշխատանքին էր վերագրում պաշտոնական պրոպագանդան ռազմական արտադրության հաջողությունները, որոնք, իրոք, տպավորիչ էին։ Պատերազմի տարիներին ամերիկացիները պատրաստեցին 300 հազ. ինքնաթիռ, 86 հազ. տանկ, 65 հազ. դեսանտային, 6,5 հազ. մարտական, 5,4 հազ. տրանսպորտային նավեր, թողարկեցին 2,7 մլն. թնդանոթ ու գնդացիր։

Դասակարգային և քաղաքական պայքարը

Ճապոնիայի հարձակումը Պիրլ-Հարբորի վրա ԱՄՆ-ում ստեղծեց ազգային հարաբերական միասնության իրադրություն։ 1941 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ձեռնարկատերերի և արհմիությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որը հռչակեց պատերազմի ժամանակ լոկաուտներից ու գործադուլներից հրաժարում և վեճերի հանձնում Աշխատանքի ազգային ռազմական վարչության վերջնական լուծմանը։ Այստեղ ներկայացված էին և՛ ձեռնարկատերերը, և՛ արհմիությունները, և՛ «հասարակայնությունը»։ Կապիտալիզմի ռեակցիոներները ժամանակավորապես լռեցին։ Բայց «ազգային միասնությունը» քայքայում էին հակաֆաշիստական պատերազմ վարելու և բարենպաստ կոնյունկտուրայից անհապաղ ու լիակատար օգտվելու ձգտումով տարված մասնավոր մոնոպոլիաների հարստացման շահերի միջև եղած հակասությունները։ Պետական քաղաքականության դասակարգային, մոնոպոլիստական բընույթը առավել ակնհայտ էր դրսևորվում աշխատուժի օգտագործման և աշխատավարձի հարցերում։ ԱՄՆ-ի ռազմական ջանքներին մեծ վնաս էր հասցնում շարունակվող ռասայական խտրականությունը։

1942 թ. սկզբին կոնգրեսի ռեակցիոներներն արդեն վերսկսեցին և ուժեղացրին հարձակումներն արհմիությունների իրավունքների վրա։ Նրանց ձեռնտու չէր «նոր կուրսի» օրենսդրությունը։ 1943 թ., հակառակ Ֆ. Ռուզվելտի վետոյի, ընդունվեց Կոնելի-Սմիթի հակաբանվորական օրենքը, որը խիստ սահմանափակում էր գործադուլի և բանվորական կազմակերպությունների քաղաքական գործունեության իրավունքը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան իրականությունից չանհետացան դասակարգային, ռասայական և քաղաքական բախումները։ Բանվոր դասակարգը հնարավոր ամեն բան արեց գործադուլներից հրաժարվելու մասին համաձայնագիրը պահպանելու համար։ Սակայն «տնտեսական կայունացման» կուրսը, որը գործնականում վերածվեց աշխատավարձի սառեցման՝ գների և շահույթների միաժամանակյա սրընթաց աճմամբ հանդերձ, հասցրեց այն բանին, որ շատ բանվորներ ստիպված էին գործադուլ անել։ Պատերազմի ընթացքում ԱՄՆ-ում տեղի է ունեցել մոտ 15 հազ. գործադուլ 6,7 մլն. բանվորների մասնակցությամբ, որի հետևանքով եղել է 36 մլն. մարդ-օրվա աշխատանքային ժամանակի կորուստ։ Դա խոսում էր մոնոպոլիաների տիրապետության դեպքում ազգային միասնության հասնելու անհնարինության մասին նույնիսկ հակաֆաշիստական պատերազմի պայմաններում։

Կոմունիստական կուսակցությունը 1941 թ. վեցրեց երկրի ռազմական ջանքերին աջակցություն ցույց տալու իրավացի կուրս։ Սակայն 1944 թ. այդ կուրսը վերածվեց ազգային միասնությանն անվերապահորեն աջակցելու օպորտունիստական գծի։ Կուսակցության մեջ ժամանակավորապես հաղթեցին ռեվիզիոնիստները՝ Է. Բրաուդերի գլխավորությամբ։ Կեղծ լույսի տակ ընկալելով և մեկնաբանելով ՍՍՀՄ-ի, Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունների ղեկավարների Թեհրանի կոնֆերանսի որոշումները, Է. Բրաուդերը և նրա կողմնակիցները հակաֆաշիստական պետությունների կոալիցիոն համագործակցության սկզբունքներն անօրինաչափորեն փոխադրեցին դասակարգային փոխհարաբերությունների ոլորտը։

Ռևիզիոնիստները դարձան ամերիկյան կապիտալիզմի «բացառիկության» տեսությունների գերիներ, տեսություններ, որոնք պատերազմի տարիներին նորոգվեցին «առաջադիմական» և «ժողովրդական» կապիտալիզմի վերաբերյալ վերսիաներով։ Նրանք հռչակեցին գործադուլներից և դասակարգային պայքարից հրաժարում ինչպես պատերազմի, այնպես էլ հետպատերազմյան ժամանակներում։ Ռևիզիոնիստներն անվերապահորեն հավատում էին ԱՄՆ-ի երկկուսակցական սիստեմի անխախտությանը և ցրեցին կոմունիստական կուսակցությունը, 1944 թ. մայիսին նրա փոխարեն ստեղծելով զուտ լուսավորչական նպատակներով «կոմունիստական քաղաքական ասոցիացիա»։

Պատերազմի ավարտական ամիսներին կոմունիստների միջավայրում եղած առողջ ուժերը Ու. Ֆոստերի գլխավորությամբ վերականգնեցին կուսակ-

ցությունը, բայց նրան ռևիզիոնիստների հասցրած վնասն իրեն զգացնել էր տալիս նաև հետպատերազմյան տարիներին։

ԱՆԳԼԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անգլիան երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում (1939 թ. սեպտեմբերի 3—1941 թ. հունիսի 22)

1939 թ. սեպտեմբերի 3-ին պատերազմ հայտարարելով Գերմանիային, Անգլիայի կառավարող շրջաններն ակտիվ մարտական գործողություններ չսկսեցին, դեռևս հույսեր կապելով ռեակցիայի միջազգային ուժերի հետ հակասովետական գործարքի իրականացման հնարավորության հետ։ Ռազմական կաբինետը, որի մեջ մտնում էին Չերչիլը (ծովակալության առաջին լորդ) և Իդենը (դոմինիոնների գծով մինիստր) առաջվա պես գլխավորում էր մյունխենական Նևիլ Չեմբեռլենը։

Գերմանիայի դեմ վարելով «տարօրինակ պատերազմ», Անգլիայի կառավարող շրջանները փորձում էին սովետա-ֆիննական պատերազմն օգտագործել այն բանի համար, որպեսզի իմպերիալիստական միացյալ ուժերի հարվածն ուղղեն ՍՍՀՄ-ի դեմ։

«Տարօրինակ պատերազմին» վերջ տվեցին հիտլերականները, որոնք 1940 թ. ապրիլին ներխուժեցին Դանիա և Նորվեգիա։ Հունիսին նրանք Ֆրանսիային ստիպեցին կապիտուլացվել։ Ստեղծված պայմաններում Գերմանիայի հետ հակասովետական գործարքի համար բոլորի կողմից ընդունելի հիմք գտնելու հնարավորության հույսերը չքացան։ Անգլիայի գլխին լուրջ սպառնալիք կախվեց։ Այդ իրադարձությունները հասցրին 1940 թ. մայիսին պահպանողական, լեյբորիստական և լիբերալ կուսակցությունների ներկայացուցիչներից կոալիցիոն նոր կառավարության կազմմանը՝ Չերչիլի գլխավորությամբ։ Չերչիլի կառավարությունն ստացավ արտակարգ լիազորություններ։

Անգլիայի դաշինքը ՍՍՀՄ-ի հետ Գերմանիայի դեմ մղվող պատերազմում

ՍՍՀՄ-ի վրա հիտլերյան Գերմանիայի հարձակման օրը, 1941 թ. հունիսի 22-ին, հետևեց անգլիական կառավարության հայտարարությունը Սովետական Միությանը հնարավոր ամեն օգնություն ցույց տալու Անգլիայի պատրաստակամության մասին (միաժամանակ Չերչիլը հնարավոր համարեց ընդգծել իր վաղեմի և անփոփոխ թշնամությունը կոմունիզմի հանդեպ)։ Շուտով Անգլիայի և Սովետական Միության միջև բանակցություններ սկսվեցին ռազմական հարցերի վերաբերյալ, իսկ 1941 թ. հուլիսի 12-ին կնքվեց անգլո-սովետական համաձայնագիր ֆաշիստական Գերմանիայի դեմ համատեղ գործողությունների մասին։ Հակաֆաշիստական պատերազմում Անգլիայի և Սովետական Միության միջև դաշինքը ձևավորվեց 1942 թ. մայիսի 26-ին անգլո-սովետական պայմանագրի կնքմամբ։ Սակայն դա չփոխեց պատերազմի այն իմպերիալիստական նպատակները, որոնք հետապնդում էին ռեակցիայի ուժերն Անգլիայում։ 1941 թ. ամռանը դրանք բացահայտորեն արտահայտեց Չերչիլի կառավարության մեջ ավիացիայի մինիստրի պոստը զբաղեցնող Մուր-Բրաբազոնը՝ հայտարարելով, թե լավագույն ելքը կլիներ Գերմանիայի և ՍՍՀՄ-ի փոխադարձաբար միմյանց թուլացնելը։ Բայց Անգլիայի հայրենասիրական վերելքով համակված աշխատավորությունը բոլոր ջանքերը գործադրում էր ազատագրական պատերազմում հաղթելու համար։ Նրանց անձնազոհ աշխատանքն այն գլխավոր գործոնն էր, որն ապահովեց երկրի ռազմական արտադրանքի ծավալի աճը 300%-ով 1941 թ. դեկտեմբերին և

մինչև 500%-ով 1943 թ. ամռանը (ամենաբարձր վերելքը)՝ համեմատած 1939 թ. մակարդակի հետ։ Աշխատավոր զանգվածները հանդես էին գալիս ՍՍՀՄ-ին ցույց տրվող ռազմական օգնությունն ուժեղացնելու, շուտափույթ երկրորդ ռազմաճակատ բացելու օգտին։

Ռազմական ժամանակվա պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն Անգլիայում

Ներքին քաղաքականության ասպարեզում Չերչիլի կառավարությունը շարունակում էր ընթանալ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ուժեղացման ուղիով։ Պետական սեփականության մասշտաբներն ընդլայնվում էին զգալի թվով ռազմական ձեռնարկություններ կառուցելու կապակցությամբ։ Արտադրական ռեսուրսները, արդյունաբերությունը, ռազմաստրատեգիական հումքի բաշխումը դրվեց պետական մարմինների խիստ հսկողության տակ։ Կառավարությունն իրավունք ուներ կարգավորելու բանվորական ուժի բաշխումն ըստ ճյուղերի։ 1942 թ. մարտի 5-ին օրենք հրապարակվեց մինչև 45 տարեկան տղամարդկանց բանակ զորակոչելու մասին։ Իսկ 18-ից մինչև 31 տարեկան կանայք ենթակա էին մոբիլիզացիայի արդյունաբերության մեջ աշխատելու համար։ Պատերազմի ժամանակաշրջանում գների աճի, ցածր աշխատավարձի, աշխատանքի պայմանների վատացման, բնակարանային վատ պայմանների, չափից դուրս ավելացած աշխատանքային օրվա (մինչև 12 և ավելի ժամ, գլխավորապես արտաժամյա աշխատանքների հաշվին) կապակցությամբ բանվոր դասակարգի դրությունը շափազանց ծանր էր։ Այդ նույն ժամանակ մոնոպոլիաներն ստանում էին վիթխարի շահույթներ։ Ամբողջությամբ վերացրած, պաշտոնական տվյալներով, մոնոպոլիստական միավորումները 1938 թ. համեմատությամբ 1944 թ. իրենց շահույթներն ավելացրին 86%-ով։

«Անգլիայի համար մղվող ճակատամարտի» ժամանակ «զոհաբերությունների հավասարության» մասին առասպելը լիովին մերկացվում էր աշխատավոր զանգվածների վրա հարկեր սահմանելու ասպարեզում կառավարության վարած բացահայտ դասակարգային քաղաքականությամբ։ Այդ քաղաքականությունը առաջ էր բերում բանվորների դիմադրությունը և նրանց ստիպում էին դիմելու փորձված զենքին՝ գործադուլներին, թեև բանվորները գիտակցում էին ռազմական արտադրությունն ամեն կերպ արագացնելու հրատապ անհրաժեշտությունը շուտափույթ հաղթանակն ապահովելու համար։ Գործադուլների թիվը համեմատաբար մեծ չէր պատերազմի առաջին տարիներին, բայց այն էապես աճեց 1943 և 1944 թթ.։ Կառավարությունը և ձեռնարկատերերը պայքարում էին գործադուլավորների դեմ, չցանկանալով հաշվի առնել նրանց պահանջները։

Պատերազմի ժամանակվա բարդ պայմաններում կոմունիստական կուսակցությունը վճռականորեն հանդես էր գալիս բանվորների շահերի պաշտպանությամբ, ընդդեմ մոնոպոլիաների և կառավարության հարձակման, այդ գործողությունները զուգակցելով ագրեսորների շուտափույթ ջախջախման համար մղած պայքարի հետ։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի այդ գիծը հասցրեց նրա ազդեցության որոշ աճի։ 1942 թ. կոմկուսի անդամների թիվն ավելացավ և հասավ մինչև 46319 մարդու։ Բանվորների մեջ կոմունիստների հեղինակության բարձրացումը ՏԲԿ գլխավոր խորհրդին ստիպեց 1943 թ. պաշտոնապես վերացնել «սև ցիրկուլյարները», որոնք մտցվել էին 1934 թ. և պարունակում էին հակադեմոկրատական արգելքներ տրեդ-յունիոնների ղեկավար մարմիններում Մեծ Բրիտանիայի կոմկուսի անդամներին ընտրելու ասպարեզում։ Բայց բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններում ղեկավարությունն առաջվա պես գտնվում էր աջ լեյբորիստական և տրեդ-յունիոնիստական պարագլուխների ձեռքում, որոնք բոլոր միջոցները գործադրում էին աշխատավորների լայն խավերից կոմկուսին մեկուսացնելու համար։

Մեծ Բրիտանիայի կոմկուսի նախաձեռնությամբ 1944 թ. ապրիլին «Հանուն գործողությունների միասնության» լոզունգով անց կացվեց մի կոնֆերանս։ Կոնֆերանսի պատգամավորները դատապարտեցին աջ լեյբորիստների հրաժարվելը կոմկուսի հետ համագործակցելուց։ Հատուկ բանաձևում նրանք պահանջում էին բանվորական շարժման ընդհանուր քաղաքականության հստակ ընորոշում։ Այդ դիրքորոշումները արտահայտվեցին Մեծ Բրիտանիայի կոմկուսի 1944 թ. հոկտեմբերի 28-ին բացված XVII համագումարի որոշումներում։ Համագումարն ընդունեց «Հաղթանակ, խաղաղություն, անվտանգություն» բանաձևը, որը պարունակում էր կոչ ընդհանուր ընտրությունների ժամանակ պահպանողականներին պարտության մատնելու համար բոլոր առաջադիմական ուժերի բլոկ ստեղծելու մասին։

Պահպանողական կուսակցության ղեկավարությունը ևս դեռ պատերազմի ընթացքում զբաղվեց հետպատերազմյան վերակառուցման պլանների մշակմամբ (այդ մասին Չերչիլը հայտարարություն արեց 1943 թ. հոկտեմբերին)։ Նույնիսկ ստեղծվեց հատուկ «վերակառուցման մինիստրություն», որը գլխավորեց լորդ Վուլտոնը։ Խոսքը վերաբերում էր «մեծ բիզնեսի», «մասնավոր նախաձեռնության» պաշտպանության բացահայտ պլաններին, իսկ «վերահսկողության» մասին ամեն մի խոսակցություն համարվում էր «չափազանց վտանգավոր»։ Ճիշտ է, պահպանողականներն էլ էին հանդես գալիս «ռեֆորմների» խոստումներով, բայց ամբողջությամբ վերցրած հետպատերազմյան «վերակառուցման» նրանց չափազանց սահմանափակ ծրագիրը չէր կարող լայն ժողովրդականություն վայելել։

Անգլիայի կառավարող շրջաններում տարածում գտան Ու. Բևերիջի «ազատ հասարակության մեջ լիակատար զբաղվածության» նեոլիբերալ պլանները. Բևերիջի կարծիքով, չի կարելի հասնել լիակատար զբաղվածության և պահպանել այն «առանց պետության պատասխանատվության և իշխանության վիթխարի ընդլայնման»։

Արդեն պատերազմի վերջին զանգվածների քաղաքական տրամադրությունները վկայում էին այն մասին, որ հետպատերազմյան առաջիկա ընտրական ճակատամարտում կշեռքի նժարն ամենայն հավանականությամբ թեքվելու էր լեյբորիստների կողմը։

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Տարօրինակ պատերազմը» և Ֆրանսիայի պարտությունը

Պատերազմ հայտարարելով Գերմանիային և խոսքով հանդես գալով ֆաշիզմի դեմ, ֆրանսիական կառավարող շրջանները ընթացան իրենց սեփական երկրում հիմնական դեմոկրատական ազատությունների լիկվիդացման ուղիով։ 1939 թ. սեպտեմբերի 1-ին պաշարողական դրություն մտցնելով, կառավարությունը փաստորեն վերացրեց խոսքի, մամուլի, ժողովների և ցույցերի ազատությունը։ 1939 թ. սեպտեմբերի 26-ին կառավարությունն արգելեց ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը և նրան հարող կազմակերպությունները։

Երբ գերմանա-ֆաշիստական զորքերը հարձակման անցան Արևմտյան ճակատում և ճեղքեցին ֆրանսիական բանակի պաշտպանությունը, կոմունիստական կուսակցությունը պահանջեց շուտափույթ ամենաեռանդուն միջոցներ ձեռնարկել մայրաքաղաքի պաշտպանության համար։ 1940 թ. հունիսի 6-ին նա հայտարարեց, որ «Փարիզի հանձնումը ֆաշիստական զավթիչներին կդիտի որպես դավաճանություն»։ Կոմկուսն առաջարկեց փոխել պատերազմի բնույթը,

որը վարում էին ֆրանսիական կառավարող շրջանները, վերածելով այն ժողովրդական պատերազմի՝ հանուն հայրենիքի ազատության և անկախության։

Ժողովրդի հանդեպ սարսափով համակված կառավարությունը նույնիսկ չպատասխանեց կոմունիստների առաջարկությանը։ Փարիզը «բաց», այսինքն չպաշտպանված քաղաք հայտարարելով, նա փախավ մայրաքաղաքից։ Կառավարող շրջաններում աճում էր պարտվողականների ազդեցությունը։ Կառավարությունը գլխավորեց մարշալ Պետենը, Գերմանիայի հետ համաձայնության գալու այդ կողմնակիցը, որը սերտորեն կապված էր ֆրանսիական ֆաշիստների կազմակերպությունների հետ։ Պետենը անմիջապես դիմեց Գերմանիային՝ խնդրելով հաշտություն կնքել։ 1940 թ. հունիսի 22-ին Կոմպիենյան անտառում մարշալ Ֆոշի հին վագոնում, որտեղ 1918 թ. Անտանտի ներկայացուցիչները Գերմանիային թելադրել էին զինադադարի պայմանները, ստորագրվեց ֆրանսա-գերմանական զինադադար, որը նշանակում էր Ֆրանսիայի լիակատար կապիտուլացում։ 1940 թ. հունիսի 25-ին Պետենի կառավարությունը զինադադար ստորագրեց Իտալիայի հետ։ Ռազմական գործողությունները դադարեցին։

Գերմանա-ֆաշիստական օկուպացիան։ Վիշիի կառավարությունը

Զինադադարի պայմանների համաձայն Ֆրանսիայի երկու երրորդը, այդ թվում նրա հիմնական ինդուստրիալ կենտրոնները, ներառյալ նաև Փարիզը, օկուպացվեցին Գերմանիայի կողմից։ Երկրի տարածքի մեկ երրորդը (հիմնականում հարավի գյուղատնտեսական շրջանները) չենթարկվեց օկուպացման։ Ֆրանսիական բանակը և նավատորմը զինաթափվում էին, բացառությամբ այն զորքերի, որոնք թողնվել էին գաղութներում, և ոչ մեծ թվով «զինադադարի բանակի», որը նախատեսված էր «կարգը պահպանելու» համար։ Ֆրանսիական ռազմագերիները, ընդհանուր թվով մոտ 2 մլն. մարդ, մնում էին Գերմանիայում։ Ֆրանսիան պարտավորվում էր վճարել վիթխարի օկուպացիոն ծախսեր՝ սկզբում 400, իսկ հետո 500 մլն. ֆրանկ օրական։

Վախենալով, որ ամբողջ երկրի օկուպացիան կհասցնի ֆրանսիական հզոր նավատորմի և վիթխարի գաղութային կայսրության անցմանը Անգլիայի կողմը, հիտլերականները որոշեցին պահպանել իրենցից կախում ունեցող Պետենի կառավարությունը, որի նստավայր դարձավ բանվորական շարժման կենտրոններից հեռու ընկած Վիշի առողջարանային ոչ մեծ քաղաքը։

Ֆրանսիայի պարտությունը և օկուպացումը հասցրին Երրորդ հանրապետության անկմանը։ Բոլոր քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները քայքայվեցին։ 1940 թ. հուլիսի 10-ին խուճապի և շփոթմունքի իրադրության մեջ Վիշիում հավաքված ֆրանսիական պառլամենտն ամբողջ իշխանությունը հանձնեց մարշալ Պետենին։ Այսպես իրագործվեց պետական հեղաշրջումը, որը հանրապետական կարգերը փոխարինեց Պետենի անձնական իշխանության ռեժիմով։

Վիշիի արտաքին քաղաքականության հիմք դարձավ Գերմանիայի հետ համագործակցությունը, որը Պետենը պաշտոնապես հռչակեց 1940 թ. հոկտեմբերին Մոնտուար քաղաքում Հիտլերի հետ տեսակցելուց հետո։ Վիշիի կառավարության համաձայնությամբ ֆրանսիական արդյունաբերությունը օկուպացված և չօկուպացված գոտիներում սկսեց աշխատել գերմանական ռազմական մեքենայի համար։ Գերմանիայի հետ կնքված գաղտնի համաձայնագրերով Վիշիի կառավարությունը հիտլերականներին խոստացավ ռազմական բազաներ տրամադրել իր գաղութներում՝ Սիրիայում, Հյուսիսային Աֆրիկայում և Արևմտյան Աֆրիկայում։ Նա Աֆրիկայում գործող իտալա-գերմանական զորքերին վառելանյութ և ավտոտրանսպորտ էր մատակարարում, նպաստում էր «հա-

կարոլշևիկյան լեգիոնի» կազմավորմանը, որը կռվեց սովետա-գերմանական ռազմաճակատում։

Դիմադրության շարժումը

Օկուպացիայի տարիներին Ֆրանսիայում ձևավորվեց Դիմադրության ազգային-ազատագրական լայն շարժում։ Դիմադրության շարժման գլխավոր կազմակերպիչն ու ոգեշնչողը կոմունիստական կուսակցությունն էր։ 1940 թ. հուլիսի 10-ին Վիշիում իրականացված ֆաշիստական հեղաշրջման օրը նա հայրենասերներին կոչ արեց համախմբվել բանվոր դասակարգի շուրջը միասնական «Ֆրանսիայի ազատագրության, անկախության և վերածնման ճակատում»։ Դա Դիմադրության առաջին կոչն էր, որը հնչեց ֆրանսիական հողում։

Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ ստեղծվեց Ազգային ճակատ, որը միավորում էր քաղաքական բոլոր ուղղություններին պատկանող հայրենասերներին։ Կոմկուսը կազմակերպեց ֆրանտիրերների և պարտիզանների մարտական ջոկատներ, որոնք զինված պայքար ծավալեցին զավթիչների դեմ։ Կոմունիստները տարածում էին անլեգալ մամուլ, կազմակերպում գործադուլներ ու ցույցեր, սաբոտաժ, նախապատրաստում զինված ապստամբություն։

Բացի կոմունիստական կուսակցությունից, Ֆրանսիայում գործում էին բազմաթիվ հայրենասիրական տարբեր խմբեր, որոնց ղեկավարում էին բնակչության բուրժուական խավերի ներկայացուցիչները՝ մտավորականներ, սպաներ, ծառայողներ, մանր և միջին ձեռնարկատերեր։ Նրանք հրատարակում էին անլեգալ թերթեր և թռուցիկներ, հավաքում հետախուզական տվյալներ, բայց երկար ժամանակ չէին մասնակցում զինված պայքարին։

Ֆրանսիայի սահմաններից դուրս, Լոնդոնում առաջացավ «Ազատ Ֆրանսիա» (ավելի ուշ «Մարտնչող Ֆրանսիա») բուրժուա-հայրենասիրական շարժումը։ Այդ շարժումն արտահայտում էր ֆրանսիական բուրժուազիայի այն մասի շահերը, որը սերտորեն կապված էր Անգլիայի և ԱՄՆ-ի հետ, գաղութների շահագործման և ծովային փոխադրումների հետ։ Չցանկանալով հաշտվել Ֆրանսիայի պարտության և ստրկացման հետ, նա մտադիր էր շարունակել պատերազմը Գերմանիայի դեմ։ «Ազատ Ֆրանսիայի» հիմնադիրն ու ղեկավարը գեներալ Շառլ դը Գոլն էր։ Լինելով պրոֆեսիոնալ զինվորական, որ հետևվում էր քաղաքական աջ հայացքների, նա Ֆրանսիայի պարտությունից հետո վտարանդվեց Անգլիա։ 1940 թ. հունիսի 18-ին դը Գոլը Լոնդոնի ռադիոյով հանդես եկավ մի ճառով, որով ֆրանսիացիներին կոչ արեց զենքը վայր չդնել և Անգլիայի ու ԱՄՆ-ի հետ շարունակել պայքարը։

1940 թ. ամռանը «Ազատ Ֆրանսիա» շարժումը ձեռք բերեց սեփական տարածքային բազա։ Նրան միացավ Հասարակածային Աֆրիկայի և Խաղաղ օվկիանոսի ֆրանսիական գաղութների մի մասը։ Օկուպանտների և վիշիականների դեմ ռադիոյով մշտապես ելույթներ ունենալու շնորհիվ գեներալ դը Գոլը լայն ժողովրդականություն ձեռք բերեց ֆրանսիական հայրենասերների և Դիմադրության մասնակիցների մեջ։ Ֆրանսիայում գործող Դիմադրության կազմակերպություններն ամուր կապ հաստատեցին դը Գոլի հետ և ճանաչեցին նրա ղեկավարությունը։

Ստալինգրադի մոտ ֆաշիստական բանակների ջախջախումից և Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական տիրույթներում անգլո-ամերիկյան զորքերի ափ դուրս գալուց հետո գրությունը Ֆրանսիայում շեշտակիորեն փոխվեց։ Վիշիական բանակը և Հյուսիսային Աֆրիկայի վարչակազմն անցան դաշնակիցների կողմը։

Ի պատասխան, Գերմանիան 1942 թ. նոյեմբերի 11-ին օկուպացրեց հարավային գոտին, որտեղ գտնվում էր Վիշիի կառավարությունը, և զինաթափեց

վիշիական «զինադադարի բանակը»։ Հիտլերականների փորձը՝ զավթել Տուլոնի նավահանգստում հավաքված ֆրանսիական ռազմական նավատորմը, հաջողություն չունեցավ, քանի որ ֆրանսիական ծովայինները ջրասույզ արեցին իրենց նավերը։ Պետենի կառավարությունը զրկվեց սեփական տարածքից, կորցրեց բոլոր գաղութները, բանակի և նավատորմի մնացորդները։ Կորցնելով ինքնուրույնության ամեն մի նշան, այն վերածվեց օկուպանտների հասարակ գործիքի։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած բեկումը նպաստեց Դիմադրության շարժման արագ վերելքին։ 1944 թ. ամռան սկզբին Դիմադրության զինված խմբերում ընդգրկվածների թիվը հասավ 500 հազ. մարդու։ Նրանց մեծ օգնություն էին ցույց տալիս ռուս հայրենասերները և սովետական քաղաքացիները, որոնք կազմակերպեցին 35 ինքնուրույն պարտիզանական ջոկատներ, ինչպես նաև կռվում էին ֆրանսիական պարտիզանների ջոկատներում։ 1943—1944 թթ. ընթացքում Դիմադրության տարբեր խմբավորումները միավորվեցին։

Ալժիրի ազատագրված տարածքում 1943 թ. ամռանը դը Գոլի գլխավորությամբ հիմնվեց Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտե (ԱԱՖԿ), որը փաստորեն կատարում էր ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ։ 1944 թ. ապրիլից ԱԱՖԿ-ի աշխատանքին մասնակցում էին կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները։

Ֆրանսիայի տարածքում գործող Դիմադրության բոլոր հիմնական կազմակերպությունները միավորվեցին Դիմադրության ազգային խորհրդի (ԴԱԽ) մեջ։ 1944 թ. մարտին ընդունված ԴԱԽ-ի ծրագրում իրենց արտահայտությունը գտան Դիմադրության մասնակիցների գլխավոր պահանջները, որոնք համապատասխանում էին երկրի ազգային շահերին։

Ֆրանսիայի ազատագրումը

Սովետական բանակի հաղթանակները և Ֆրանսիայի տարածքում 1944 թ. հունիսի 6-ին անգլո-ամերիկյան զորքերի ափհանումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին նրա ազատագրման համար։ Կոմունիստական կուսակցությունը, ԴԱԽ-ի ծրագրին համապատասխան, ֆրանսիական ժողովրդին զինված ապստամբության կոչ արեց։ Սակայն բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք վճռական ազդեցություն ունեին ԱԱՖԿ-ում, վախենում էին, որ զինված ապստամբությունը հանկարծ չհասցնի իշխանության անցմանը բանվոր դասակարգի ձեռքը։ Նրանք չէին ցանկանում հայրենասերներին զենք մատակարարել և հրաման տվեցին կրճատել պարտիզանական գործողությունները։ Այդ հրամանները կարող էին լուրջ վնաս հասցնել ազատագրական շարժմանը, բայց Դիմադրության մասնակիցների հիմնական զանգվածն այդ պահին հետևեց կոմունիստներին։ Ֆրանսիացի հայրենասերները ծավալեցին պարտիզանական պատերազմ, հարձակվում էին գերմանական կայազորների վրա, կազմալուծում տրանսպորտն ու կապը։ Ֆրանսիայի 90 դեպարտամենտներից քառասունը ներգրավվել էր ապըստամբության մեջ։

1944 թ. օգոստոսի 10-ին կոմունիստական կուսակցության և Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի կոչով Փարիզի երկաթուղայիններն սկսեցին ընդհանուր գործադուլ, որը շուտով վերաճեց զինված ապստամբության։ Օգոստոսի 25-ին ապստամբությունը հաջողությամբ պսակվեց. Փարիզի հիմնական մասն անցավ ապստամբների ձեռքը։

Անգլո-ամերիկյան զորքերի և ֆրանսիական պարտիզանների հարվածների տակ հիտլերականներն արագ նահանջում էին դեպի Գերմանիայի սահմանները։ Նրանց հետ փախան ֆրանսիական ժողովրդի կողմից վռնդված Վիշիի կառավարողները։ 1944 թ. սեպտեմբերի մոտերքին Ֆրանսիայի գրեթե ամբողջ տա-

բածքը մաքրվեց զավթիչներից։ Իշխանությունը երկրում անցավ Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեի ձեռքը, որն ընդունեց ժամանակավոր կառավարություն անունը։

Ազատագրված Ֆրանսիան իր տեղը գրավեց հակահիտլերյան կոալիցիայի տերությունների մեջ։ 1944 թ. դեկտեմբերի 10-ին նա դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիր կնքեց Սովետական Միության հետ։ Նոր ստեղծված ֆրանսիական բանակը մասնակցեց ֆաշիստական բլոկի երկրների դեմ մղված ռազմական գործողություններին։ 1945 թ. մայիսի 9-ին Սովետական Միության, Անգլիայի և ԱՄՆ-ի հետ Ֆրանսիան ստորագրեց Գերմանիայի կապիտուլացման, իսկ սեպտեմբերի 2-ին՝ Ճապոնիայի կապիտուլացման ակտը։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ներքին իրադրությունը Գերմանիայում պատերազմի առաջին շրջանում (1939—1941)

Պատերազմն սկսվելուն պես ֆաշիզմի ռազմաքաղաքական և պետական համակարգը գերմանական ժողովրդի վրա նետեց սոցիալական ու նացիոնալիստական դեմագոգիայի բոլոր միջոցները։ Դրա հիմքում ընկած էին ռասիզմի, միլիտարիզմի և ուժի պաշտամունքի, հակակոմունիզմի, համաշխարհային տիրապետության նվաճման գաղափարները։ Կոչ անելով «ամրապնդել ներքին ճակատը», «ժողովրդական միասնությունը», ֆաշիստական պրոպագանդան պնդում էր, որ Գերմանիայում չկան դասակարգային տարբերություններ ու դասակարգային պայքար։ Տարածելով «միասնական գերմանական ազգի» գաղափարը, ֆաշիստական պրոպագանդայի մարմինները և ամբողջ պետական ապարատը փորձում էին նման ձևով «համախմբել» ամբողջ ազգը։

Այդ դեմագոգիայի քողի տակ հիտլերյան կառավարությունն իրականացնում էր ամբողջ երկրի լիակատար ռազմական մոբիլիզացում։ Դրան նպաստեց «Ռազմական էկոնոմիկայի կազմակերպման մասին» 1939 թ. սեպտեմբերի 4-ի հրամանագիրը։ Ռազմական ժամանակվա օրենքները վերացնում էին արձակուրդները, գիշերային և արտաժամյա աշխատանքի համար լրացուցիչ վճարումները, արգելում աշխատավարձի բարձրացումը, աշխատանքային օրն ավելացնում փաստորեն մինչև 12 և ավելի ժամվա։ Երկրում մտցվել էր ընդհանուր պարտադիր աշխատանքային պարհակ։ Բոլոր օկրուգներում նշանակվեցին «ազգային պաշտպանության» գծով լիազորներ, որոնք տեղերում կոորդինացնում էին բոլոր քաղաքացիական և ռազմական հիմնարկությունների գործունեությունը։ 1940 թ. մարտի 17-ին սկսեցին իրականացվել էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման ուժեղացման նոր միջոցառումներ։ Մոնոպոլիաների դրածո Տոդտի գլխավորությամբ կազմվեց սպառազինության և ռազմամթերքի մինիստրություն, ինչպես նաև պետական-մոնոպոլիստական այլ հիմնարկություններ։ Ուժեղանում էր մոնոպոլիստների և ֆաշիստական պետական ապարատի ու նացիստական կուսակցության գլուխ կանգնած հիտլերականների միջև անձնական ունիսն։ Աճեց պետական կոնցեռնների, հատկապես «Հերման Գյորինգ» կոնցեռնի դերը, որը զավթեց և վերահսկում էր պողպատի ու չուգունի արտադրությունն Ավստրիայում, Չեխոսլովակիայում, Էլզաս-Լոթարինգիայում, Լյուքսեմբուրգում։ Բանվորական ուժի պակասը հիտլերականները փորձում էին լրացնել զավթված երկրներից բռնությամբ բերվող բանվորներով և ռազմագերիներով։ Արդեն 1941 թ. ստրկական աշխատանքի այդ համակարգում զբաղված էր ավելի քան 3 մլն. մարդ։

Պատրաստվելով Սովետական Միության դեմ պատերազմի և նորանոր ագրեսիվ գործողություններ կատարելով Եվրոպայում, հիտլերականներն ամրապնդում էին իրենց տեռորիստական ապարատը երկրի ներսում, օկուպացված երկրներում արմատավորում ֆաշիստական «նոր կարգը», ամենուրեք արյունալի տեռորի միջոցով ճնշելով ամեն մի դիմադրություն և հակաֆաշիստական տրամադրություն։ 1939 թ. սեպտեմբերին Հայդրիխի գլխավորությամբ ստեղծվեց անվտանգության կայսերական վարչություն, որի միջոցը դարձավ գեստապոն։ 1940—1941 թթ. Գերմանիայի տարբեր մասերում առաջացան նոր համակենտրոնացման ճամբարներ և «էվտանազիայի հիմնարկներ» (հեշտ մեռնելու), ուր գազախցիկներում ոչնչացվում էին ռազմական մեքենայի համար «անօգուտ» մարդիկ։

Ռազմա-պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի համակարգը, որը ստեղծեցին հիտլերականները, 1941 թ. ամռան մոտ ավարտեց թվով մոտ 7,5 մլն. մարդուց բաղկացած վիթխարի բանակի կազմավորումը։ 1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական բանակն իր արբանյակների բանակների հետ միասին հարձակում գործեց Սովետական Միության վրա։

Գերմանիայի ռազմաստրատեգիական պլանների ձախողումը և ֆաշիստական ռեժիմի եզնաժամի խորացումը

Կատաղի ճակատամարտերի ընթացքում սովետական զորքերը ձախողեցին «կայծակնային պատերազմի» հիտլերյան խելացնոր պլանները։ Մոսկվայի ճակատամարտում վերմախտն առաջին խոշորագույն պարտությունը կրեց երկրորդ համաշխարհային պատերազմում։ Հօդս ցնդեց գերմանա-ֆաշիստական բանակների անպարտելիության առասպելը։

Ստալինգրադի ճակատամարտից հետո ռազմաքաղաքական ճգնաժամը համակեց ամբողջ ֆաշիստական համակարգը՝ ռազմական, տնտեսական, քաղաքական, ուժեղ ազդեցություն ունեցավ գերմանական ժողովրդի բարոյա-քաղաքական վիճակի վրա։ Գերմանական բանակը միլիոնավոր մարդիկ կորցրեց սովետա-գերմանական ռազմաճակատում։ Երկրում մտցվեց «տոտալ աշխատանքային պարհակ»։ 1943 թ. հունվարի 18-ին հրապարակվեց «Կայսրության պաշտպանության ասպարեզում տղամարդկանց և կանանց ընդհանուր օգտագործման մասին» հրամանագիրը։ 16-ից մինչև 65 տարեկան բոլոր տղամարդիկ և 17-ից մինչև 50 տարեկան կանայք ուղարկվում էին ռազմական ձեռնարկություններ։

Սպառազինության և ռազմական տեխնիկայի վիթխարի կորուստների կապակցությամբ 1943 թ. հրապարակվեց էկոնոմիկայի համախմբման մասին հրամանագիրը, որը նախատեսում էր ռազմական էկոնոմիկայի ղեկավարման մեջ մոնոպոլիստների դերի հետագա ուժեղացում՝ առաջացած ճգնաժամը հաղթահարելու նպատակով։ Էլ ավելի սերտ կապ էր հաստատվում սպառազինության մինիստրության և վերմախտի հրամանատարության միջև։ Գերմանական արդյունաբերությունն անցավ պաշտպանական զենքի արտադրությանը։

«Տոտալ» մոբիլիզացման մասին Հիտլերի 1943 թ. սեպտեմբերի 27-ի նոր դիրեկտիվը չէր կարող կանխել ռազմաքաղաքական ծանր ճգնաժամը։ Սակայն աշխատուժի և տնտեսական ռեսուրսների «տոտալ» մոբիլիզացումների գնով հիտլերականներին հաջողվեց զգալիորեն բարձրացնել իրենց ռազմական արտադրությունը և հաղթահարել մի շարք դժվարություններ ռազմական էկոնոմիկայի բնագավառում։ 1942 թ. սկզբից մինչև 1944 թ. կեսերը ռազմական արտադրությունը Գերմանիայում աճեց երեք անգամ և 1944 թ. կեսերին հասավ ամենաբարձր մակարդակի։ 1944—1945 թթ. հիտլերյան ռազմական մեքենային սովետական բանակի հասցրած նոր հարվածների հետևանքով ռազմական էկոնոմիկան կազմալուծվեց։

1944 թ. հուլիսի վերջին սովետական բանակն անցավ Նեմանը և ընդհուպ մոտեցավ Գերմանիայի սահմաններին։ Հիտլերյան Գերմանիայի գլխին կախ-

վեց արագ և լիակատար ջախջախման իրական վտանգը։ 1944 թ. հունիսի 6-ին Անգլիայի և ԱՄՆ-ի զորքերի ափ դուրս գալը Արևմտյան Եվրոպայում հասցրեց այն բանին, որ արևմուտքից և արևելքից Գերմանիան աքցանի մեջ առնվեց դաշնակից զորքերի կողմից։ Սկսվեց ֆաշիստական ռազմական բլոկի քայքայումը։ Գերմանիան հայտնվեց ազետի շեմին։

Նման պայմաններում մոնոպոլիաների և չինովնիկների ներկայացուցիչների մի խումբ (Կ. Գերդելեր, Լ. Բեկ և ուրիշներ) նախապատրաստեց վերնախավային դավադրություն, որի մասնակիցները, որ կապված էին ամերիկյան և անգլիական հետախուզությունների հետ, որոշեցին զոհաբերել Հիտլերին գերմանական իմպերիալիզմը փրկելու նպատակով։ Դավադիրների արտաքին քաղաքական ծրագիրը հիմնվում էր արևմտյան տերությունների հետ սեպարատ հաշտություն կնքելու վրա՝ պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ շարունակելու համար։

Սակայն դավադրության մասնակիցների մեջ կար նաև ձախ թև, որին գլխավորում էր գնդապետ Շտաուֆենբերգը։ Նրան հարում էին նաև առաջադեմ մտավորականության մի քանի ներկայացուցիչներ, ռայխստագի նախկին դեպուտատներ, ձախ սոցիալ-դեմոկրատներ (Ա. Ռայխվեյն, Յու. Լեբեր) և ուրիշներ։

Խումբը հանդես էր գալիս պրոլետարիատի հակաֆաշիստական շարժման հետ համագործակցելու օգտին։ Նրանք ռազմական գործողությունները բոլոր ռազմաճակատներում, այդ թվում նաև արևելքում դադարեցնելու կողմնակիցներ էին, հանդես էին գալիս գերմանա-ֆաշիստական զորքերի կողմից զավթված տարածքների ազատագրության օգտին։

1944 թ. հուլիսի 20-ին գնդապետ Շտաուֆենբերգը Հիտլերի դեմ անհաջող մահափորձ կատարեց։ Դավադրության մասնակիցների հետ արյունալի հաշվեհարդար կատարվեց։

Գերմանական հակաֆաշիստների պայքարը

Չնայած ֆաշիստական դաժան տեռորին և հիտլերականների բռնություններին, ձերբակալություններին, բանտարկություններին և համակենտրոնացման ճամբարներին, գնդակահարություններին ու կախաղաններին, գոյություն ուներ երկրորդ Գերմանիան՝ հակաֆաշիստների Գերմանիան։

Ֆաշիզմի դեմ առավել հետևողական մարտիկները կոմունիստներն էին։ Պատերազմի սկզբից ևեթ ղեկավարվելով Բրյուսելի և Բեռնի կոնֆերանսների որոշումներով, ԳԿԿ-ն մշակեց բոլոր հակաֆաշիստների միավորման համար պայքարի ծրագիր՝ պատերազմը դադարեցնելու և հիտլերյան ռեժիմը տապալելու նպատակով։ ԳԿԿ-ն մերկացնում էր ֆաշիստական դեմագոգիայի սոցիալական էությունը, գերմանական իմպերիալիստների վարած պատերազմի ավազակային բնույթը, ժողովրդին կողմնորոշում դեպի պատերազմի ընթացքում առաջացած իրադրության օգտագործումը հիտլերյան դիկտատուրայի տապալման համար։

Հակաֆաշիստական ճակատի կազմակերպման համար կոմունիստների մըղած պայքարը դժվարանում էր նրանով, որ երկրում չկար կենտրոնական կուսակցական ղեկավարություն, ինչպես նաև այն բանով, որ վտարանդիության մեջ գտնվող սոցիալ-դեմոկրատական կուսակցության վարչությունը (Կուրտ Հայլեր, Ռուդոլֆ Հիլֆերդինգ, Ֆրիդրիխ Շտամֆեր), իր ամբողջ հույսը դնելով պատերազմում արևմտյան իմպերիալիստական տերությունների հաղթանակի և նրանց օգնությամբ բուրժուական կարգերը պահպանելու վրա, շարունակում էր հակակոմունիզմի քաղաքականությունը, հրաժարվում ԳԿԿ-ի հետ համագործակցելուց և միասնական պրոլետարական ու հակաֆաշիստական ճակատ ստեղծելուց։

ԳԿԿ Կենտկոմը ակտիվ միջոցներ էր ձեռնարկում Գերմանիայի ներսում անլեգալ կուսակցական կենտրոնը վերստեղծելու համար։ Սակայն գեստապոյին հաջողվեց բացահայտել հակաֆաշիստական խմբերից մի քանիսին և դատաստան տեսնել դրանց մասնակիցների հետ։ Պատերազմի սկզբից ի վեր գեստապոն ձերբակալել է անլեգալ ԳԿԿ-ի 2 հազ. աշխատողներին։ ՍՍՀՄ-ի վրա հարձակվելուց հետո բռնությունները հակաֆաշիստների դեմ ուժեղացան։ Պատերազմի վերջին ԳԿԿ-ի 300 հազ. անդամներից (1933 թ.) 150 հազարը բռնությունների ենթարկվեցին ֆաշիստական իշխանությունների կողմից։

Ընդհատակում գործող կոմունիստների հերոսությունը հասցրեց Գերմանիայում հակաֆաշիստական մի քանի խմբերի ստեղծմանը, որոնք պատերազմի տարիներին կարևոր դեր խաղացին հիտլերականների հանցագործ քաղաքականության մերկացման գործում և իրենց ավանդը մուծեցին Գերմանիայի ռազմական ջանքերի թուլացման ասպարեզում։ Ակտիվ գործունեություն ծավալեց Շուլցի-Բոյզենի խոշորագույն անլեգալ խմբերից մեկը (այսպես կոչված «Կարմիր երգչախումբը»), որը կազմված էր կոմունիստներից, սոցիալ-դեմոկրատներից և անկուսակցականներից։ Նա աշխատանք էր տանում Գերմանիայի բնակչության տարբեր խավերի շրջանում։ Բացի պրոպագանդիստական գործունեությունից, խմբի մասնակիցները սաբոտաժի ակտեր էին կազմակերպում ռազմական ձեռնարկություններում, զենք հավաքում և պատրաստվում հիտլերիզմի դեմ զինված պայքար մղելու։ 1942 թ. օգոստոսին գեստապոն հայտնաբերեց խումբը, որի շատ մասնակիցներ, հերոս հայրենասերներ մահապատժի ենթարկվեցին։

Ակտիվ անլեգալ գործունեություն էին ծավալում Ռոբերտ Ուրիխի («Ռոբի»), Գեորգ Շումանի (ԳԿԿ-ի հիմնադրման մասնակից և ռայխստագի նախկին դեպուտատ), Թեոդոր Նայբաուերի (Դոտ) խմբերը։ Դիմադրության առավել խոշոր ու մասսայական կազմակերպությունն Անտոն Չեֆկովի, Ֆրանց Յակոբի և Բեռնհարդ Բեստլայնի 1943 թ. ստեղծած հակաֆաշիստական խումբն էր։

Դիմադրության խմբեր գոյություն ունեին նաև համակենտրոնացման ճամբարներում (Բուխենվալդում և այլուր)։ Ֆաշիստական Գերմանիայի մի շարք համակենտրոնացման ճամբարներում, ռազմական ձեռնարկություններում գոյություն ունեին սովետական հայրենասերների անլեգալ հակաֆաշիստական խմբեր։ Սովետական հայրենասերները, ֆաշիզմի բանտարկյալները հակաֆաշիստական պայքարի մեջ մտցնում էին պրոլետարական համերաշխության ոգի, հաղթանակի անկոտրուն կամք։ 1944 թ. օգոստոսի 18-ին Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարում էսէսականներն սպանեցին գերմանական բանվոր դասակարգի առաջնորդ, ԳԿԿ նախագահ Էռնստ Թելմանին, որը տասնմեկ և կես տարի անց էր կացրել ֆաշիստական բանտում։

Ստալինգրադի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերի կրած պարտությունից և Գերմանիայի ներսում քաղաքական ճգնաժամի սրումից հետո քայլեր ձեռնարկվեցին պայքարի հակաֆաշիստական կենտրոն ստեղծելու ուղղությամբ։ Այդ նպատակով դեռ 1943 թ. հուլիսի 12—13-ին Մոսկվայում գերմանական կոմունիստները, արհմիութենական գործիչներն ու հակաֆաշիստական մտավորականության ներկայացուցիչները գերմանական ռազմագերիների, զինվորների ու սպաների ներկայացուցիչների հետ համատեղ ստեղծեցին «Ազատ Գերմանիա» ազգային կոմիտեն։ Կոմիտեի նախագահ ընտրվեց հայտնի գրող-հակաֆաշիստ Էրիխ Վայներտը։

Ազգային կոմիտեի մանիֆեստը, ռադիոհաղորդումները, նրա «Ազատ Գերմանիա» թերթը և բազմաթիվ թռուցիկները, որոնք տարածվում էին ռազմաճակատի գերմանական զինվորների և Գերմանիայի բնակչության շրջանում, նոր աստիճանի բարձրացրին հակաֆաշիստական պայքարը երկրում։ Գերմանիայի

կոմունիստական կուսակցությունը 1944—1945 թթ. մշակեց հակաֆաշիստական պայքարի գիծ, որը կողմնորոշվեց դեպի պատերազմում ՍՍՀՄ-ի և հակաֆաշիստական մյուս ուժերի հաղթանակը։ Նա մշակեց նաև նոր, դեմոկրատական Գերմանիայի կառուցման մանրամասն կոնցեպցիա։

Չնայած կոմունիստական կուսակցությանը չհաջողվեց խոշոր հակաֆաշիստական գործողություններ կազմակերպել Գերմանիայի ներսում, գերմանական հակաֆաշիստների պայքարը դարձավ գերմանա-ֆաշիստական իմպերիալիզմի դեմ հակաֆաշիստական կոալիցիայի ժողովուրդների մղած պայքարի բաղկացուցիչ մասը։

ԻՏԱԼԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Իտալիայի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին և ֆաշիստական ռեժիմի կրախը

Երբ հիտլերյան Գերմանիան, հարձակվելով Լեհաստանի վրա, սանձազերծեց երկրորդ համաշխարհային պատերազմը, Իտալիան, հակառակ «պողպատե պակտի» պայմանների, հայտարարեց, որ ինքը հետևելու է «չկռվող կողմի» դիրքին։ Դա բացատրվում էր ամենից առաջ նրանով, որ չնայած ֆաշիստական ռեժիմի բազմամյա ջանքերին, իտալական զինված ուժերը վատ էին նախապատրաստված «մեծ պատերազմի» մասնակցելու համար։ Բացի այդ, իտալական իմպերիալիզմի հարաբերական թուլությունը իտալական կառավարող շրջանների մեջ ծնեց կոնֆլիկտի մեջ չմտնելու համար խուսանավելու և ավելի բարենպաստ պայմանների սպասելու տակտիկայի ձգտում։

1940 թ. գարնանն Իտալիան ռազմական տեսակետից ավելի ուժեղ չէր, քան 1939 թ. աշնանը, բայց նրա ղեկավարները համոզված էին, որ հիտլերյան Գերմանիայի հաղթանակը մոտ է։ Այդ պատճառով 1940 թ. հունիսի 10-ին, երբ հիտլերյան դիվիզիաները շարժվում էին դեպի Փարիզ, ֆաշիստական Իտալիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային։ Միաժամանակ Իտալիան պատերազմ հայտարարեց Անգլիային։ Իտալիայի՝ պատերազմի մեջ մտնելու ժամանակ Մուսոլինին հանդիսավորությամբ հայտարարեց, որ «նա պետք է իր սեփական պատերազմը մղի՝ Եվրոպան թողնելով Հիտլերին, հարձակումը զարգացնի գլխավորապես Միջերկրական ծովում «օվկիանոսներ տանող ելք» ձեռք բերելու նպատակով»։ Սակայն Լիբիայում տեղակայված իտալական զորքերը սեպտեմբերին հարձակում սկսելով դեպի Եգիպտոս, շուտով կանգնեցվեցին անգլիացիների կողմից, իսկ տարվա վերջին դուրս մղվեցին Կիրենաիկայից։ Չնայած Հյուսիսային Աֆրիկայում եղած դժվարություններին, 1940 թ. հոկտեմբերի 28-ին Մուսոլինին պատերազմ հայտարարեց Հունաստանին։ Թեև իտալական բանակը բացահայտ գերակշռություն ուներ, բայց չկարողացավ հաղթահարել հույների կատաղի դիմադրությունը և շուտով անցավ պաշտպանության։ 1940 թ. նոյեմբերին հունական բանակը հարձակում ձեռնարկեց և իտալական բանակին ստիպեց նահանջել դեպի Ալբանիա։ Միայն հիտլերյան զրահատանկային դիվիզիաների հարվածը Հունաստանի և Հարավսլավիայի դեմ 1941 թ. ապրիլին փոխեց ռազմական իրադրությունը Բալկաններում։ Իտալական բանակն առաջ շարժվեց նահանջող հունական դիվիզիաների հետևից և գերմանա-ֆաշիստական զորքերի հետ մասնակցեց Հունաստանի, ապա և Հարավսլավիայի զավթմանն ու օկուպացիային։

Հյուսիսային Աֆրիկայում Մուսոլինին նույնպես կախման մեջ ընկավ իր դաշնակցի ռազմական օգնությունից։ 1941 թ. փետրվարին Տրիպոլիտանիայում Ռոմմելի հրամանատարությամբ ափ դուրս եկավ գերմանական մի զրահատանկային կորպուս։ Նրա օգնությամբ իտալական բանակը վերստին դրավեց Կիրենաիկան և ապրիլին դուրս եկավ Եգիպտոսի սահմանները։ Այդ նույն ժամանակ Եթովպիայում, որտեղ գերմանական զորքեր չկային, անգլիացիները գրեթե դիմադրության չհանդիպելով, 1941 թ. մայիսի 5-ին գրավեցին Ադիս Աբեբան։ Դրանից քիչ առաջ անգլիական զորքերն իտալացիներին դուրս էին մղել Էրիտրեայից և Սոմալիից։ Դրանով իսկ իր գոյությունն ավարտեց ֆաշիստական կայսրությունը, որի ստեղծումն այնքան փքաշուք տոնվեց Իտալիայում 1936 թ.։

Հիտլերյան Գերմանիայի հարձակումը Սովետական Միության վրա անմիջապես պաշտպանեց ֆաշիստական Իտալիան։ 1941 թ. աշնանը սովետա-գերմանական ռազմաճակատ եկավ իտալական էքսպեդիցիոն կորպուսը, իսկ 1942 թ. գարնանն այստեղ էր գտնվում արդեն 10 դիվիզիայից բաղկացած մի ամբողջ բանակ։ Այս բանակը գլխովին ջախջախվեց Դոնում 1942—1943 թթ. ձմռանը, հիտլերյան զորքերի ստալինգրադյան խմբավորման լիկվիդացման ժամանակաշրջանում։ Այնքանով, որքանով որ իտալական բանակները պարտություններ էին կրում, իսկ երկրում ավելի ու ավելի ուժեղ էին զգացվում զրկանքները, տիրող կարգերի դեմ ուղղված օպոզիցիան սկսեց ուժեր հավաքել։

Առաջինը ֆաշիզմի դեմ սկսեցին բացահայտորեն հանդես գալ բանվոր դասակարգի առաջավոր ջոկատները։ 1942 թ. երկրում ծայր առան գործադուլները, որոնց ընթացքում տնտեսական պահանջները հաճախ լրացվում էին քաղաքական բնույթի լոզունգներով։ Կոմունիստական կուսակցությունը կարողացավ երկրում ստեղծել ղեկավար կենտրոն, որը վերսկսեց «Ունիտա» թերթի թողարկումը և միավորեց տարբեր քաղաքներում գոյություն ունեցող կազմակերպությունները։ 1943 թ. գարնան մոտերքին Իտալիայի ռազմական դրությունը դարձավ ճգնաժամային։ Երկիրը կտրվեց հումքի արտաքին աղբյուրներից և ամբողջապես կախված էր Գերմանիայի մատակարարումներից։ Անգլիական բանակը 1942 թ. հոկտեմբերին հերթական հակահարձակում սկսելով Եգիպտոսի տարածքում էլ-Ալամեյնի մոտ, թուլացած և օժանդակություն չընտացող իտալա-գերմանական ուժերին ստիպեց նահանջել դեպի Թունիս։ 1943 թ. մայիսին այդ զորքերի մնացորդները կապիտուլացվեցին, իսկ հունիսի 10-ին անգլո-ամերիկյան զորքերն սկսեցին ափ դուրս գալ Սիցիլիայում։ Լուրջ դիմադրության չհանդիպելով, նրանք մի քանի շաբաթվա ընթացքում ամբողջ կղզին գրավեցին։

Ռազմական աղետի մոտենալը և ժողովրդական զանգվածների հակաֆաշիստական ելույթներն իտալական կառավարող խմբերին ստիպեցին շտապել դուրս գալու պատերազմից։ 1943 թ. հուլիսի 24-ին ֆաշիստական մեծ խորհրդի նիստի ժամանակ նրա անդամների կանխապես պայմանավորված մի խումբ, Դ. Դրանդիի գլխավորությամբ, բանաձևի նախագիծ մտցրեց, առաջարկելով զինված ուժերի հրամանատարությունը հանձնել թագավորին և դրանով իսկ սահմանափակել Մուսոլինիի իշխանությունը։ Հուլիսի 25-ի լուսադեմին այդ բանաձևը հավանության արժանացավ։ Այդ նույն օրը Մուսոլինին, որ ղեկուցման համար ներկայացել էր թագավորին, վերջինիս հրամանով ձերբակալվեց և կառավարության ղեկավար դարձավ գլխավոր շտաբի նախկին պետ մարշալ Պ. Բադոլյոն։

Բադոլյոյի կառավարության առջև կանգնած էր երկու խնդիր՝ Իտալիան դուրս բերել պատերազմից և թույլ չտալ ժողովրդական ուժերին քաղաքական թատերաբեմ դուրս գալու։

Սկսվեցին բանակցությունները անգլո-ամերիկացիների հետ, որոնք, սակայն, ձգձգվեցին, որը Հիտլերին հնարավորություն տվեց շտապ Իտալիա փոխադրել իր զորքերը։ Այն բանից հետո, երբ սեպտեմբերի 9-ին հայտարարություն արվեց Իտալիայի կապիտուլացման մասին, գերմանական դիվիզիանե-

ը մի քանի օրում գրավեցին գրեթե ամբողջ Ապենինյան թերակղզին։ Թագավորն ու կառավարությունն ստիպված էին Հռոմից փախչել հարավ, որտեղ բնակվել էին ափ դուրս գալ անգլո-ամերիկյան զորքերը։

Իտալիայի հիտլերյան օկուպացումը և իտալական ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմը

Գերմանական հրամանատարությունը օկուպացված Իտալիայի ամբողջ կյանքը դրեց իր վերահսկողության տակ։ Երկրի կառավարումը հեշտացնելու համար Հիտլերը համաձայնեց ձերբակալությունից գերմանացիների օգնությամբ ազատված Մուսոլինիի ղեկավարությամբ Հյուսիսային Իտալիայում ստեղծել մարիոնետային «հանրապետություն»։

Գերմանական օկուպացիայի առաջին իսկ շաբաթներին Իտալիայում առաջացած Դիմադրության շարժումն ընդունեց ազգային-ազատագրական պատերազմի բնույթ։ Հիտլերյան զավթիչների և իտալական ֆաշիստների դեմ ուղղված զինված պայքարի նախաձեռնողներ եղան իտալական կոմունիստները։ Նրանք Դիմադրության շարժման ղեկավարման քաղաքական մարմինների՝ ազգային ազատագրության կոմիտեների (ԱԱԿ) առաջատար ուժն էին։ Կոմունիստների հետ միասին կոմիտեների մեջ էին մտնում սոցիալիստները, գործողության մանրուրժուական կուսակցության (որը ստեղծվեց «Արդարություն և ազատություն» շարժման անդամներից) ներկայացուցիչները, քրիստոնեական դեմոկրատները և լիբերալները։ Ազգային ազատագրության՝ Հռոմում գտնվող կենտրոնական կոմիտեի մեջ մտնում էին նաև «Աշխատանքի դեմոկրատիա» բուրժուական ոչ մեծ կուսակցության ներկայացուցիչները։ Սակայն պայքարում գլխավոր դերը խաղում էր Ազգային ազատագրության Միլանի կոմիտեն, որն ընդունեց Հյուսիսային Իտալիայի ԱԱԿ անունը։ Այն գտնվում էր արդյունաբերական շրջանների կենտրոնում, որտեղ պայքարն առավել մեծ թափ ընդունեց։

1943 թ. հոկտեմբերին կոմկուսն սկսեց լեռներում կազմակերպել պարտիզանական ջոկատներ, դրանց տալով Իտալիայի ազգային հերոս Գարիբալդիի անունը. այդ ջոկատների գլխավոր հրամանատար դարձավ Լ. Լոնգոն։ Կոմունիստների օրինակին հետևեցին գործողության կուսակցությունը և սոցիալիստները։ Քրիստոնեական դեմոկրատները և լիբերալներն զգալիորեն ավելի ուշ անցան այդ ուղուն։

1944 թ. ամռանը պարտիզանական շարժումը մեծ թափ ստացավ։ Պարտիզանական բանակի շարքերում հաշվվում էր ավելի քան 70 հազ. մարդ։ Կոմունիստների առաջարկությամբ պարտիզանական բոլոր ջոկատները միավորվեցին ազատության կամավորների կորպուսի մեջ։

Ազատագրական պատերազմի ընդլայնմանը նպաստեց Բադոլյոյի կառավարության վերակազմումն ազգային միասնության կառավարության, որը կազմվեց 1944 թ. ապրիլին ԱԱԿ-ի մեջ մտնող բոլոր քաղաքական կուսակցությունների, այդ թվում կոմունիստների, կոալիցիայի հիման վրա։ Հռոմի ազատագրումից հետո այդ նույն թվականի հունիսին կառավարության գլուխ կանգնեց մինչֆաշիստական Իտալիայի քաղաքական գործիչ Ի. Բոնոմին, որը ներկայացնում էր Դիմադրության լիբերալ խմբավորումներից մեկին։

1944 թ. աշնանն իտալական հայրենասերները պատրաստվում էին ֆաշիզմի դեմ վճռական ելույթի։ Սակայն ամբողջ կենտրոնական Իտալիան գրաված անգլո-ամերիկյան զորքերն անսպասելիորեն դադարեցրին իրենց առաջխաղացումը, կանգ առնելով Պո գետի հովտի առջև։ Դա հիտլերականներին հընարավորություն տվեց զգալի ուժեր նետել պարտիզանների դեմ։

1945 թ. գարնանը պարտիզանական բանակը, որն արդեն հաշվվում էր ավելի քան 200 հազ. մարդ, վճռական հարձակման անցավ։ Միաժամանակ

քաղաքներում սկսվեց աշխատավորների ընդհանուր գործադուլ, որը Հյուսիսային Իտալիայի ազգային ազատագրության կոմիտեն կոչ արեց վերածել համաժողովրդական ապստամբության։ 1945 թ. ապրիլի 25-ին երկրի հյուսիսի խոշոր-ագույն քաղաքներում ապստամբությունը հաղթանակեց։ Հյուսիսային Իտալիայում գերմանական զորքերի կապիտուլյացման պահին (մայիսի 2) նրա տարածքի մեծ մասն արդեն ազատագրվել էր հայրենասերների ուժերով։ Ֆաշիստական ղեկավարները՝ Մուսոլինիի գլխավորությամբ, բռնվեցին և ԱԱԿ-ի դատավճռով մահապատժի ենթարկվեցին։

Ազգային-ազատագրական պատերազմը քաղաքական կյանքի առաջին պլան մղեց կոմունիստական կուսակցությանը, որն առավել մեծ ավանդ էր մուծել պայքարում։ Մարտնչող 256 հազ. պարտիզաններից 153 հազարը գարիբալդիականներ էին. մարտի դաշտում ընկած 70 հազ. հայրենասերներից ավելի քան 42 հազարը կոմունիստներ էին։ Պ. Տոլյատտիի բնութագրմամբ, ազգային-ազատագրական պատերազմը դարձավ դեմոկրատական մեծ հեղափոխություն։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները

Երկրորդ համաշխարհային պատերազմն ինչպես նրան մասնակցած պետությունների թվով, մարդկային զոհերով և նյութական վնասով, այնպես էլ տնտեսական հետևանքներով չի ունեցել իրեն հավասարը։ Այն իր ոլորտի մեջ առավ 1700 մլն. բնակչությամբ 61 պետություն, այդ պատերազմում զոհվեց ավելի քան 50 մլն. մարդ։ Կռվող երկրների բանակներում զորակոչվել էր 110 մլն. մարդ՝ 40 միլիոնով ավելի, քան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։

Թշնամու դեմ վճռական հաղթանակները ձեռք բերվեցին սովետա-գերմանական ռազմաճակատում։

Սովետական ժողովուրդը եղավ այն գլխավոր ուժը, որը կործանեց հիտլերյան Գերմանիային և ազատություն բերեց այն ժողովուրդներին, որոնք գտնվում էին նրա տիրապետության կամ ֆաշիստական ստրկացման սպառնալիքի տակ։ Սովետական մարդկանց բարոյական ոգու և եռանդի մեծագույն վերելքը, ռազմաճակատներում ու թիկունքում նրանց հանդես բերած չտեսնված հերոսությունը, Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող դերը պայմանավորեցին սովետական ժողովրդի հաղթանակը։

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային հեղափոխական պրոցեսի արագացման վրա, նպաստեց ժողովրդական զանգվածների դերի աճին։ Ինչպես երբեք նախկինում, ֆաշիզմի դեմ մղված պատմական ճակատամարտերին գիտակցաբար մասնակցեցին տասնյակ միլիոնավոր մարդիկ, որոնք ոգեշնչված էին հակաֆաշիզմի վեհ գաղափարներով, ամբողջ աշխարհում դրսևորվեց բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների դերը որպես ամենաառաջավոր հասարակական ուժի։ Ամենուրեք աճեց կոմունիստների հեղինակությունը։ Բացահայտ ռեակցիոն ուժերը քաղաքական սնանկացման ենթարկվեցին։ Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներում տեղի ունեցան ժողովրդադեմոկրատական հեղափոխություններ։ Կազմավորվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։

Պատերազմի հետևանքով խիստ սրվեց գաղութային սիստեմի ճգնաժամը։ Ֆաշիստական ագրեսորների ջախջախումը նոր հեռանկարներ ստեղծեց ամբողջ աշխարհում ազգային-ազատագրական շարժման հաղթական զարգացման համար։ Այդ հեղափոխական պրոցեսները հանդիսացան կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի՝ դեռ պատերազմի տարիներին սկսված երկրորդ փուլի գլխավոր գծերը։

Պատերազմի գլխավոր հանցագործների դատավարությունները

Պատերազմի գերմանական և ճապոնական հանցագործների հրեշավոր շարագործություններն անպատիժ չմնացին։ Կատարած հանցագործությունների համար հիտլերականների պատասխանատվության մասին դեկլարացիայի համաձայն դաշնակից իշխանությունների կողմից ձերբակալված պատերազմի հանցագործները դատվելու համար հանձնվում էին այն երկրների կառավարություններին, որտեղ նրանք կատարել էին իրենց հանցագործությունները։

Ֆաշիստական Գերմանիայի ղեկավարները, որոնց հանցագործությունները կապված չէին աշխարհագրական որոշակի վայրի հետ, ենթակա էին Միջազգային զինվորական տրիբունալի դատին, որը հիմնվել էր ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից։ Միջազգային զինվորական տրիբունալի նիստերն սկսվեցին 1945 թ. նոյեմբերին, Գերմանիայի Նյուրընբերգ քաղաքում, որտեղ անցյալում անց էին կացվում ֆաշիստների համագումարները։ Դատի տրվեցին պատերազմի գերմանական 24 գլխավոր հանցագործներ, այդ թվում Գյորինգը, Ռիբենտրոպը, Կեյտելը և ուրիշներ։ Նրանք մեղադրվում էին խաղաղության դեմ հանցագործություններ, ռազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարելու համար դավադրություն կազմակերպելու և իրականացնելու մեջ։ Նյուրընբերգի դատավարությունն ավարտվեց 1946 թ. հոկտեմբերի 1-ին։ Միջազգային զինվորական տրիբունալը 12 գլխավոր հանցագործների դատապարտեց կախաղանի միջոցով մահապատժի, երեք մեղադրյալ արդարացվեցին, մնացածները դատապարտվեցին տարբեր ժամկետների բանտարկության։

Պատերազմի ճապոնական գլխավոր հանցագործներին դատելու համար 1946 թ. հունվարին հիմնվեց Միջազգային զինվորական տրիբունալ Հեռավոր Արևելքի համար։ Դատի տրվեցին Ճապոնիայի 28 նախկին պետական և ռազմական գործիչներ։ Դատավարությունը տեղի ունեցավ Տոկիոյում 1946 թ. մայիսի 3-ից մինչև 1948 թ. նոյեմբերի 12-ը։ Դատարանը պատժի տարբեր չափերի դատապարտեց 25 մեղադրյալի, նրանցից 7-ին՝ կախաղանի միջոցով մահապատժի։

Խաղաղ կարգավորումը Եվրոպայում ֆաշիստական Գերմանիայի նախկին դաշնակիցների հետ

Պատերազմից հետո հակաֆաշիստական կոալիցիայի երկրների առջև ծառացավ նախկին թշնամի պետությունների հետ խաղաղ կարգավորում իրականացնելու և կայուն ու երկարատև խաղաղություն ստեղծելու խնդիրը։ Այդ հարցերի վերաբերյալ որոշումները ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններն ընդունեցին Թեհրանում, Դումբարտոն-Օքսում, Յալթայում, Պոտսդամում և միջազգային մյուս խորհրդակցություններում։ Սակայն հետպատերազմյան կարգավորման ընթացքում շեշտակիորեն ի հայտ եկան երկու քաղաքական ուղղություններ՝ Սովետական Միության և ժողովրդադեմոկրատական երկրների գիծը, որն ուղղված էր արդարացի, դեմոկրատական խաղաղության ապահովմանը, և իմպերիալիստական նպատակներ հետապնդող ԱՄՆ-ի և Անգլիայի գիծը։

Խաղաղ կարգավորման նախապատրաստական աշխատանքներն անցկացնելու համար ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարները

Պոտսդամի կոնֆերանսի որոշմամբ ստեղծվեց Արտաքին գործերի մինիստրների խորհուրդ (ԱԳՄԽ)։ Խորհուրդը պետք է առաջին հերթին զբաղվեր Իտալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Ֆինլանդիայի համար հաշտության պայմանագրեր կազմելով։

Այդ երկրների համար հաշտության պայմանագրերի նախապատրաստումը և քննարկումը, ինչպես նաև խաղաղ կարգավորման հետ կապված մյուս հարցերի քննարկումը կատարվեցին ԱԳՄԽ-ի նստաշրջաններում և ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի ու Անգլիայի արտաքին գործերի մինիստրների 1945—1946 թթ. տեղի ունեցած խորհրդակցություններում։ 1946 թ. հուլիսին հրավիրվեց Փարիզի հաշտության կոնֆերանսը, որին մասնակցում էին 21 պետության ներկայացուցիչներ։ Եվս 12 պետություն հրավիրվեցին կոնֆերանսում քննարկվող հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու համար։ ԱԳՄԽ-ի նստաշրջաններում և Փարիզի հաշտության կոնֆերանսում սուր պայքար ծավալվեց. Սովետական Միությունը հանդես եկավ այն բանի օգտին, որպեսզի հաշտության պայմանագրերը նպաստեն խաղաղության և անվտանգության կայունացմանը, ապահովեն ժողովուրդների ազգային ու սոցիալական նվաճումների պաշտպանությունը, դեմոկրատիայի զարգացումը, ֆաշիզմի մնացորդների ոչնչացումը, տարածքային, ռեպարացիոն և տնտեսական հարցերի արդարացի լուծումը։ ԱՄՆ-ը և Անգլիան իրենց առջև նպատակ էին դրել ոչնչացնել ժողովրդադեմոկրատական կարգերը Բուլղարիայում, Հունգարիայում և Ռումինիայում, պայմաններ ստեղծել պարտված երկրներում ամերիկյան ու անգլիական կապիտալի տնտեսական էքսպանսիայի համար, նրանց տարածքներում վերականգնել հակասովետական պլացդարմները։

ԱԳՄԽ-ի լոնդոնյան նստաշրջանում (1945 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) ԱՄՆ-ը և Անգլիան սպառնում էին, որ չեն ստորագրի Ռումինիայի ու Բուլղարիայի հետ հաշտության պայմանագրերը, եթե այդ երկրների կառավարությունները չվերակազմվեն՝ իրենց կազմի մեջ ժողովրդադեմոկրատական կարգերի հանդեպ թշնամաբար տրամադրված բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներ մտցնելու միջոցով։

ՍՍՀՄ-ի պատվիրակության կողմից վճռական հակահարված ստանալով, ԱՄՆ-ի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրները ձախողեցին ԱԳՄԽ-ի այդ նստաշրջանը։ Միայն ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրների Մոսկովյան խորհրդակցությունում (1945 թ. դեկտեմբեր) անգլո-ամերիկյան բլոկի ներկայացուցիչներն ստիպված էին համաձայնել բանակցությունները Պոտսդամի համաձայնագրի հիման վրա վերսկսելուն։

Հատկապես մեծ տարաձայնություններ առաջացան հաշտության պայմանագրերի այն հոդվածների առիթով, որոնք վերաբերում էին տարածքային, ռեպարացիոն և տնտեսական հարցերին։ ԱՄՆ-ը և Անգլիան հանդես եկան Սովետական Միության պաշտպանած Հարավսլավիայի պահանջի դեմ՝ վերամիավորելու հարավսլավական հողերը՝ Հուլիական կրայնան, որն ընդգրկում էր առաջին համաշխարհային պատերազմից հետո Իտալիայի զավթած Սլովենյան պրիմորիեն և Իստրիան։ Նրանք պնդում էին, որպեսզի Իտալիայի կազմում մնան Իստրիայի մերձծովյա շրջանները՝ Տրիեստ և Պուլա քաղաքների հետ։ Սովետական Միության վճռական առարկություններն արևմտյան տերություններին ստիպեցին համաձայնել ընդունելու ֆրանսիական կոմպրոմիսային առաջարկությունը՝ Տրիեստից և հարակից մարզից կազմել Տրիեստի ազատ տարածք՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կառավարման և պաշտպանության ներքո։

Շահագրգռված լինելով Աֆրիկայում գտնվող իտալական նախկին գաղութները ռազմական նպատակներով օգտագործելու հարցում, ԱՄՆ-ը և Անգլիան

ընդդիմացան սովետական առաջարկության ընդունմանը՝ 10 տարի ժամկետով ՄԱԿ-ի խնամակալություն սահմանելու Տրիպոլիտանիայի, Կիրենաիկայի, Էրիտրեայի և Սոմալիի նկատմամբ, նրանց անկախության համար նախապատրաստելու նպատակով, նրանցից յուրաքանչյուրում չորս տերություններից՝ ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Անգլիայից և Ֆրանսիայից մեկի վարչական կառավարմամբ հանդերձ։ ԱՄՆ-ը և Անգլիան մերժեցին նաև Ֆրանսիայի առաջարկությունը՝ նշված տարածքները ՄԱԿ-ի անունից գործող Իտալիայի խնամակալությանը հանձնելու մասին։

ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները փորձում էին նվազեցնել այն ռեպարացիաների գումարը, որը Իտալիան պետք է վճարեր Սովետական Միությանը։ Միայն տևական և համառ պայքարից հետո համաձայնեցին ՍՍՀՄ-ի օգտին Իտալիայի ռեպարացիաները սահմանել 100 մլն. դոլար գումարով։

ԱՄՆ-ը և Անգլիան ձգտում էին հասնել այն բանին, որպեսզի պարտված երկրները ռեպարացիաները վճարեին ոչ թե ապրանքային մատակարարումներով, որը պնդում էր Սովետական Միությունը, այլ անգլո-ամերիկյան վալյուտայով, մի բան, որը վալյուտայի պաշարներ չունեցող պարտված երկրներին անտեսական կախման մեջ կդներ ԱՄՆ-ից ու Անգլիայից։ Նրանք պահանջում էին, որ պարտված երկրները դաշնակից երկրների քաղաքացիներին արդյունաբերական, առևտրական և տնտեսական այլ գործունեության ասպարեզում տրամադրեին իրենց քաղաքացիների նման միևնույն իրավունքներ, օտարերկրյա սեփականատերերին վերադարձնեին նրանց ունեցվածքը կամ նրանց վճարեին լիակատար փոխհատուցում։ Վերջապես, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները առաջարկեցին Դանուբում և նրա վտակներում նավարկության «ինտերնացիոնալացման» նախագիծ։

Իմպերիալիստական մեծ տերությունների աջակցությամբ իմպերիալիստական փոքր գիշատիչները ևս աշխատում էին պատառներ պոկել պարտված երկրների տարածքներից։ Այսպես, միապետական-ֆաշիստական Հունաստանը պահանջում էր իրեն միացնել Բուլղարիայի, ինչպես նաև Հարավային Ալբանիայի (Հյուսիսային Էպիրոս) տարածքի մեկ տասներորդ մասը։

Այդ բոլոր պահանջների ընդունումը կարող էր հասցնել իմպերիալիստական տերությունների տնտեսական ու քաղաքական տիրապետության հաստատմանը պարտված երկրներում։ Եվ եթե դա տեղի չունեցավ, ապա միայն Սովետական Միության և ժողովրդադեմոկրատական պետությունների շնորհիվ, որոնք հետևողականորեն պաշտպանում էին դեմոկրատական և արդարացի հաշտության սկզբունքները։

Փարիզի հաշտության կոնֆերանսում հիմնականում ավարտվեց աշխատանքը Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Ֆինլանդիայի հետ հաշտության պայմանագրերի նախագծերի վրա։ ԱԳՄԽ-ի Նյույորքյան նստաշրջանում (1946 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) դրանք վերջնականապես համաձայնեցվեցին։ 1947 թ. փետրվարի 10-ին տեղի ունեցավ հաշտության պայմանագրերի ստորագրումը, իսկ նույն թվականի սեպտեմբերի 15-ին դրանք ուժի մեջ մտան։ Հաշտության պայմանագրերի նախաբաններում հիշեցվում էր համապատասխան պետության՝ պատերազմում ֆաշիստական տերությունների կողմից մասնակցելու փաստը, հայտարարվում էր պատերազմի վիճակի դադարեցման մասին և ասվում, որ դաշնակից տերությունները կպաշտպանեն տվյալ պետության խնդրանքը՝ ՄԱԿ-ի մեջ ընդունվելու մասին։

Հաշտության պայմանագրերի տարածքային որոշումները վերացնում էին ֆաշիստական զավթիչների կողմից իրականացված Եվրոպայի քարտեզի վերաձևումը։ Իտալիայի սահմաններն Ալպերում աննշան փոփոխության ենթարկվեցին՝ հօգուտ Ֆրանսիայի. Հուլիական կրայնան, բացառությամբ Տրիեստի,

վերամիավորվեց Հարավսլավիային. Դոդեկանեզյան կղզիներն անցնում էին Հունաստանին։ Տրիեստը, հարակից մարզով, հռչակվում էր ազատ տարածք, բայց նրա ստատուտը գործողության մեջ չդրվեց արևմտյան տերությունների սաբոտաժի պատճառով։ 1954 թ. Իտալիայի և Հարավսլավիայի միջև կնքվեց մի համաձայնագիր, ըստ որի Տրիեստ ազատ տարածքի արևմտյան մասը՝ Տրիեստ քաղաքի հետ անցավ Իտալիայի, իսկ արևելյան մասը՝ Հարավսլավիայի կառավարմանը։

Իտալիան զրկվեց իր բոլոր գաղութներից, նրանց ճակատագիրը պետք է որոշեր ԱԳՄԽ-ն՝ հաշտության պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում։ 1948 թ. չորս տերությունների կառավարությունները համաձայնության չգալով այդ հարցի շուրջ, այն հանձնեցին ՄԱԿ-ի քննարկմանը։ 1949—1950 թթ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշեց Լիբիային, որը բաղկացած էր Տրիպոլիտանիայից, Կիրենաիկայից և Ֆեսսանից, անկախություն տրամադրել 1952 թ. հունվարի 1-ից ոչ ուշ (նա անկախություն ստացավ 1951 թ. դեկտեմբերի 24-ին). Էրիտրեան միացվեց Եթիոպիային. Սոմալիի տարածքը 10 տարի ժամկետով հանձնվեց Իտալիայի խնամակալությանը։

Ռումինիայի սահմանները փոխվում էին՝ Բեսարաբիան Սովետական Միությանը վերադարձնելու, իսկ Հյուսիսային Բուկովինան իրեն հանձնելու կապակցությամբ։ Ռումինիայի կազմի մեջ մտավ Տրանսիլվանիայի մի մասը, որը 1940 թ. Վիեննայի արբիտրաժի համաձայն հանձնվել էր Հունգարիային։ Բուլղարիայի սահմանների մեջ մտցվեց Հարավային Դոբրուջան։

Ֆինլանդիայի հետ կնքված հաշտության պայմանագիրը հաստատում էր Սովետական Միության հետ ունեցած այն սահմանները, որոնք որոշվել էին 1940 թ. մարտի 12-ի պայմանագրով։ Պետսամոյի (Պեչենգա) մարզը վերադարձվում էր Սովետական Միությանը։ Հաշտության պայմանագրերի քաղաքական որոշումները Բուլղարիային, Հունգարիային, Իտալիային, Ռումինիային և Ֆինլանդիային պարտավորեցնում էին բոլոր քաղաքացիներին ապահովել հիմնական դեմոկրատական իրավունքներով և ազատություններով, արգելում էին ֆաշիստական կազմակերպությունների վերածնումն ու գործունեությունը, նախատեսում դատի հանձնել ռազմական հանցագործներին։

Հաշտության պայմանագրերը պարտված երկրներին իրավունք էին ընձեռում պաշտպանության նպատակով ունենալ սահմանափակ թվով ցամաքային, ռազմածովային, ռազմաօդային ուժեր և սպառազինություն. նրանց արգելվում էր ատոմային և զանգվածային ոչնչացման այլ զենք արտադրել։

Հաշտության պայմանագրերի ռեպարացիոն որոշումները պարտված երկրներին պարտավորեցնում էին մասնակիորեն հատուցել դաշնակից պետություններին պատճառած վնասը։ Ռեպարացիաների վճարումը կատարվում էր ապրանքային մատակարարումներով։ Իտալիան պարտավոր էր Սովետական Միությանը, Ալբանիային, Հունաստանին և Հարավսլավիային վճարել 360 մլն. դոլար ռեպարացիա, Բուլղարիան՝ Հունաստանին և Հարավսլավիային՝ 70 մլն. դոլար, Հունգարիան՝ Սովետական Միությանը, Չեխոսլովակիային և Հարավսլավիային՝ 300 մլն. դոլար, Ռումինիան և Ֆինլանդիան՝ Սովետական Միությանը՝ 300-ական մլն. դոլար։ ՍՍՀՄ-ը Հունգարիայից, Ռումինիայից և Ֆինլանդիայից իրեն հասանելիք ռեպարացիաները ստացավ միայն մասնակիորեն. 1948 թ. նա ռեպարացիաների մնացած գումարը պակասեցրեց 50%-ով։

Հաշտության պայմանագրերի տնտեսական որոշումները պարտված երկրներին պարտավորեցնում էին դաշնակից պետությունների քաղաքացիներին վերադարձնել նրանց սեփականությունը կամ դրա համար վճարել փոխհատու-

ցում, բայց ոչ թե լիովին, ինչպես պահանջում էին արևմտյան երկրները, այլ նրա արժեքի երկու երրորդի չափով։ Դաշնակից պետությունների քաղաքացիները պարտված երկրների քաղաքացիների հետ նրանց տարածքներում 18 ամիս ժամկետով հավասար իրավունքներ էին ստանում տնտեսական գործունեության բնագավառում։ Այդ «իրավունքների» այդքան սահմանափակ ժամկետը բացառում էր իմպերիալիստական տերությունների մոնոպոլիաների կողմից դրանց պրակտիկ օգտագործումը պարտված երկրների էկոնոմիկայի մեջ թափանցելու համար։

Խաղաղ կարգավորումը Հարավարևելյան Եվրոպայում շարունակվեց Դանուբյան կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1948 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Բելգրադում։ Այն գումարվեց ԱԳՄԽ-ի Նյույորքյան նստաշրջանի որոշմամբ Դանուբում նավարկության մասին կոնվենցիա մշակելու համար։ Կոնֆերանսին մասնակցում էին մերձդանուբյան երկրները՝ ՍՍՀՄ-ը, Ուկրաինական ՍՍՀ-ն, Ռումինիան, Բուլղարիան, Չեխոսլովակիան, Հունգարիան, Հարավսլավիան, ինչպես նաև ԱՄՆ-ը, Անգլիան ու Ֆրանսիան՝ որպես ԱԳՄԽ-ի անդամներ։ Ավստրիան կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էր խորհրդակցական ձայնի իրավունքով, քանի որ դեռ չէր վերականգնվել որպես անկախ սուվերեն պետություն։

Վկայակոչելով նախկինում «ձեռք բերված իրավունքները», Անգլիան ու Ֆրանսիան պահանջում էին ուժի մեջ թողնել 1921 թ. կոնվենցիան, որի համաձայն Դանուբում և նրա վտակներում կատարվող նավարկության հսկողությունը փաստորեն գտնվում էր Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի ձեռքում։ Կոնֆերանսի մասնակից մերձափնյա երկրները, որոնց պաշտպանում էր Սովետական Միությունը, մերժեցին այդ պահանջները։ Բելգրադի կոնֆերանսն ընդունեց Դանուբի նավարկության ռեժիմի վերաբերյալ նոր կոնվենցիա, որն առաջարկել էր Սովետական Միությունը։ Ըստ այդ կոնվենցիայի, ստեղծվեց միայն մերձափնյա պետությունների ներկայացուցիչներից բաղկացած միասնական Դանուբյան հանձնաժողով։ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հրաժարվեցին ստորագրել այդ կոնվենցիան։

Գերմանիայի հետ խաղաղ կարգավորման հարցը

Բուն Գերմանիայի հետ խաղաղ կարգավորման հարցը քննարկվել էր նրա նախկին եվրոպական դաշնակիցների հետ հաշտության պայմանագրերի կնքման պրոցեսում։ Սովետական Միությունը ձգտում էր ստեղծել միասնական խաղաղասեր դեմոկրատական գերմանական պետություն, որն ի վիճակի չլիներ խախտելու խաղաղությունն ապագայում։ Սովետական քաղաքականության այդ կուրսն իր արտահայտությունը գտավ Գերմանիայի վերաբերյալ Յալթայի և Պոտսդամի համաձայնագրերում։ Սակայն, երբ պատերազմն ավարտվեց, Անգլիան, ԱՄՆ-ը, իսկ հետո նաև Ֆրանսիան դեն նետեցին Պոտսդամի համաձայնագրերը և դիմեցին Գերմանիայի պառակտմանը։

Սովետական կառավարությունը Դաշնակից վերահսկիչ խորհրդում և ԱԳՄԽ-ի նստաշրջաններում իր ներկայացուցիչների միջոցով պահանջեց դադարեցնել Գերմանիայի պառակտումը, ձգտում էր հասնել Յալթայի և Պոտսդամի համաձայնագրերի իրականացմանը, պնդում էր անհապաղ հաշտության պայմանագիր կնքել Գերմանիայի հետ։

ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան մերժեցին սովետական կառավարության առաջարկությունները։ Միավորելով օկուպացման իրենց գոտիները, նրանք ստեղծեցին արևմտագերմանական պետությունը՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը։ Այսպիսով, Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի հարցը չլուծվեց։

Ճապոնիայի հետ հաշտության պայմանագրի հարցը

Ճապոնիայի դեմ մղված պատերազմի ավարտը ենթադրում էր հաշտության պայմանագրի կնքում նրա հետ։ Սակայն ԱՄՆ-ը, խախտելով իր նախկին պարտավորությունները, հրաժարվեց Ճապոնիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստումը հանձնել ԱԳՄԽ-ին, ձգտում էր խաղաղ-օվկիանոսյան ավազանի խաղաղ կարգավորման հարցի լուծումը։ Միայն 1951 թ. մարտին ԱՄՆ-ի կառավարությունը հրապարակեց Ճապոնիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը։ Այդ նախագիծը նախատեսում էր Ճապոնիայից վերցնել Ռյուքյու, Բոնին և այլ կղզիներ ու դրանք հանձնել ԱՄՆ-ի «խնամակալությանը»։ Ենթադրվում էր վերանայել ԱՄՆ-ի մասնակցությամբ կնքված համաձայնագրերը՝ Տայվանը և Պենխուլեդաո կղզիները Չինաստանին, իսկ Հարավային Սախալինն ու Կուրիլյան կղզիները Սովետական Միությանը վերադարձնելու մասին։ Ամերիկյան զորքերը մնում էին Ճապոնիայի տարածքում փոխադարձ անվտանգության ապահովման պատրվակի տակ։ Գործելով սեպարատ կերպով, ԱՄՆ-ը 1951 թ. սեպտեմբերին Սան Ֆրանցիսկոյում կոնֆերանս հրավիրեց Ճապոնիայի հետ հաշտության պայմանագիր ստորագրելու համար։ Կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էին 52 պետություն, այդ թվում նաև սոցիալիստական երկրները՝ ՍՍՀՄ-ը, Լեհաստանը, Չեխոսլովակիան։ Կոնֆերանս չէին հրավիրվել Ճապոնական ագրեսիայից առավել չափով տուժած երկրները՝ Չինական Ժողովրդական Հանրապետությունը, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետությունը, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը, ինչպես նաև Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությունը։ Հրաժարվեցին կոնֆերանսին մասնակցել Հնդկաստանն ու Բիրման։ Բացելով կոնֆերանսը, ամերիկյան ներկայացուցիչը հայտարարեց, որ նրա խնդիրն է ոչ թե հաշտության պայմանագրի մշակումը, այլ սոսկ Միացյալ Նահանգների ներկայացրած հաշտության պայմանագրի նախագծի հաստատումը։

Սովետական պատվիրակությունը մտցրեց ճշգրտումներ, որոնք նախատեսում էին Տայվանի և Պենխուլեդաոյի նկատմամբ ՉԺՀ-ի սուվերեն իրավունքների և Հարավային Սախալինի ու Կուրիլյան կղզիների նկատմամբ ՍՍՀՄ-ի սուվերեն իրավունքների ճանաչում Ճապոնիայի կողմից, Միացյալ Նահանգների վերցրած բոլոր կղզիների նկատմամբ Ճապոնիայի սուվերենության ճանաչում, 90 օրվա ընթացքում Ճապոնիայից օկուպացիոն զորքերի դուրս բերում, արգելում Ճապոնիային մտնելու ռազմական կոալիցիաների մեջ, ատոմային զենքի կամ զանգվածային ոչնչացման այլ միջոցների արտադրության արգելում, ռազմական գործողությունների հետևանքով դաշնակից պետություններին պատճառված վնասի հատուցում, խաղաղ էկոնոմիկայի անսահմանափակ զարգացման իրավունքի տրամադրում Ճապոնիային։

Ունենալով կոնֆերանսի մասնակիցների ձայների մեծամասնությունը, ԱՄՆ-ը թույլ չտվեց քննարկել սովետական ճշգրտումները։ 1951 թ. սեպտեմբերի 8-ին 49 պետություններ ստորագրեցին Սան Ֆրանցիսկոյի հաշտության պայմանագիրը Ճապոնիայի հետ, որը հիմնականում համապատասխանում էր ամերիկյան նախագծին։ Միաժամանակ ստորագրվեց Ճապոնա-ամերիկյան «անվտանգության պայմանագիր», որի համաձայն ամերիկյան օկուպացիոն զորքերը մնում էին Ճապոնական հողում։

Սովետական Միությունը, Լեհաստանը և Չեխոսլովակիան չստորագրեցին Սան Ֆրանցիսկոյի պայմանագիրը։ Այն չստորագրեցին նաև Հնդկաստանն ու Բիրման (ավելի ուշ նրանք Ճապոնիայի հետ կնքեցին առանձին հաշտության պայմանագրեր)։

ԳԼՈՒԽ 2

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Միջիմպերիալիստական հակասությունների ծայրահեղ սրումը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ժամանակավորապես երկրորդ պլան մղեց նորագույն ժամանակաշրջանի գլխավոր անտագոնիզմը՝ հակասությունը սոցիալիզմի և կապիտալիզմի միջև։ Պատերազմի ոլորտի մեջ ներգրավվեցին երկրագնդի գրեթե բոլոր պետությունները և իմպերիալիստական տերությունների գաղութները։ Այդ պատճառով էլ աշխարհի բոլոր երկրների հետպատերազմյան քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումն այս կամ այն չափով կապված է երկրորդ համաշխարհային պատերազմի ու նրա արդյունքների հետ։

Ֆաշիստական պետությունների բլոկի դեմ մղված պատերազմում Սովետական Միության մասնակցությունը վճռական չափով ապահովեց նրա հաղթական ավարտը և կանխորոշեց երկու փոխկապակցված գլխավոր պրոցեսներ՝ համաշխարհային իմպերիալիստական ուժերի թուլացումն ու անկումը և դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար պայքարող համաշխարհային հեղափոխական ուժերի աճն ու ամրապնդումը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով միջազգային իմպերիալիստական ռեակցիայի հարվածային ուժը՝ հիտլերյան Գերմանիան, ֆաշիստական Իտալիան, իմպերիալիստական Ճապոնիան և նրանց դաշնակիցները պարտվեցին. Ֆրանսիան, Անգլիան և եվրոպական իմպերիալիստական մյուս տերությունները թուլացան։ Միայն Ամերիկայի Միացյալ Նահանգները պատերազմից դուրս եկան ամրապնդված, և հենց ԱՄՆ-ը իր վրա վերցրեց համաշխարհային կապիտալիզմը փրկելու, նրա ուժերը միավորելու խնդիրը, որպեսզի դիմակայի հեղափոխական պրոցեսի հետպատերազմյան զարգացմանը և հաստատի ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի ագրեսիվ նկրտումները համաշխարհային տիրապետության նկատմամբ։

Հակառակ պատերազմում Սովետական Միության քայքայման մասին իմպերիալիստական շրջանների հաշվարկների, սոցիալիզմի առաջին երկիրն ամրապնդեց իր ռազմատնտեսական և քաղաքական հզորությունը, անչափ աճեց ՍՍՀՄ-ի միջազգային հեղինակությունն ու ազդեցությունը համաշխարհային իրադարձությունների ընթացքի վրա։ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց հեղափոխական պրոցեսի հետագա զարգացման և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման համար։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը տեղի է ունենում սոցիալական տարբեր ուժերի ու շարժումների ազդեցության տակ։ Առանձին երկրների քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունները պայմանավորում են իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում նրանց ներդրած ավանդի յուրահատկությունը։ Հեղափոխական հոսանքի այդ միասնությունը ամփոփված է մեր ժամանակի հեղափոխական երեք ուժերի՝ համաշխարհային սոցիալիստական սիստեմի, միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման և ազգային-ազատագրական շարժման դաշինքի մեջ։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում, որն սկսվեց պատերազմի ժամանակ և ընդգրկում է մոտավորապես հետպատերազմյան առաջին տասնամյակը, աշխարհում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Այդ ժամանակաշրջանի գլխավոր արդյունքը եղան համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումն ու զարգացումը, իմպերիալիզմի գաղութային թիկունքների անկումն Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում, կապիտալիզմի ներքին հակասությունների սրումն ավելի բարձր մակարդակով։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը որպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սրման գլխավոր գործոն

Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում տեղի ունեցած ժողովրդադեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակի հետևանքով իմպերիալիզմին հասցվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ամենահզոր հարվածը՝ շատ օղակներում տեղի ունեցավ իմպերիալիզմի շղթայի ճեղքում։ ՍՍՀՄ-ից և 1940 թ. սոցիալիստական շինարարության փուլին անցած ՄԺՀ-ից հետո սոցիալիզմի ուղին ոտք դրեցին Ալբանիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Չինաստանի, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի ժողովուրդները։ Եթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը սոցիալիզմի երկրներին բաժին էր ընկնում երկրագնդի տարածքի 17%-ը, նրա բնակչության մոտ 9%-ը և համաշխարհային արդյունաբերական արտադրության մոտ 10%-ը, ապա 1950 թ. սոցիալիզմի սիստեմն ընդգրկում էր երկրագնդի տարածքի 26%-ը, բնակչության 35%-ը և թողարկում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մոտ 20%-ը։ 1955 թ. սոցիալիստական երկրներն արդեն արտադրում էին համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 27%-ը։ Հետևաբար, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում ինչպես տարածքով ու բնակչությամբ, այնպես էլ նյութական արտադրության ասպարեզում նոր սոցիալ-տնտեսական ֆորմացիայի ոլորտը խիստ ընդլայնվեց, իսկ կապիտալիզմի ոլորտը նվազեց։ Աշխարհում առաջացավ որակապես նոր դրություն՝ այսուհետև կապիտալիստական սիստեմին դիմակայում է սոցիալիստական պետությունների սիստեմը։ Զևավորված սոցիալիստական սիստեմն իրենից ներկայացնում է սոցիալիզմ ու կոմունիզմ կառուցող և ընդհանուր նպատակներով ու շահերով, միջազգային սոցիալիստական համերաշխության սերտ կապերով միավորված ազատ, սուվերեն ժողովուրդների սոցիալական, տնտեսական և քաղաքական ընկերակցություն։

Առաջանալով կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարգացման հետևանքով, համաշխարհային սոցիալիստական սիստեմը միաժամանակ դառնում է նրա հետագա խորացման գործոնը։ Առանց սոցիալիզմի ազդեցության և համաշխարհային երկու սիստեմների հակամարտության հաշվառման չեն կարող հասկանալի դառնալ ժամանակակից կապիտալիստական պետությունների կյանքի քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառներում կատարվող բոլոր գլխավոր փոփոխությունները։ Ինչպես նշեց 1969 թ. կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը. «ժամանակակից իմպերիալիզմի բազմաթիվ կարևոր առանձնահատկություններ բացատրվում են նրանով, որ նա ստիպված է հարմարվել նոր պայմաններին, երկու սիստեմների միջև մղվող պայքարի պայմաններին»։ Երկու սիստեմների հակամարտությունն ամենաանմիջական ձևով ազդում է

կապիտալիստական սիստեմի գլխավոր հակասության՝ աշխատանքի և կապիտալի միջև գոյություն ունեցող հակասության զարգացման վրա։ Սոցիալիզմն ազդում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման վրա իր օրինակի ուժով, խաղաղության պաշտպանության քաղաքականությամբ, կապիտալիստական լագերի ներսում գործող բոլոր այն ուժերին աջակցելով, որոնք պայքարում են խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալական առաջադիմության համար։

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքով և սոցիալիզմի ուղին բռնած մի մեծ խումբ երկրների՝ կապիտալիստական սիստեմից անջատվելու հետևանքով տեղի ունեցած իմպերիալիզմի թուլացումը մեծ ազդեցություն գործեց ազգային-ազատագրական հեղափոխությունների զարգացման վրա, բարենպաստ արտաքին պայմաններ ստեղծելով իմպերիալիզմի գաղութային թիկունքների արագ անկման համար։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի առաջացումը և սոցիալիստական համագործակցության մեջ մարմնավորված միջազգային հարաբերությունների նոր տիպի հանդես գալը դարձան կապիտալիստական միջազգային հարաբերությունների սիստեմի ճգնաժամի հզոր գործոնը։ Դա արտահայտվեց նաև միջազգային տնտեսական կապերի ամբողջ սիստեմի վրա։ Ուժերի հարաբերակցության փոփոխությունը հօգուտ սոցիալիզմի հնարավորություն ստեղծեց նոր ձևով լուծել պատերազմի և խաղաղության միջազգային արմատական պրոբլեմը։ Կապիտալիզմի հետ Սովետական Միության ռազմատնտեսական մրցության հաջողությունները թաղեցին ԱՄՆ-ի անխոցելիության առասպելը։ Ամերիկյան իմպերիալիզմի արկածախնդրական ստրատեգիան, որը նպատակ ուներ հետպատերազմյան առաջին տասնամյակում համաշխարհային պատերազմի սպառնալիքով և ատոմային շանտաժով փոխել ուժերի հարաբերակցությունը հօգուտ իրեն, ձախողման ենթարկվեց։

Իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզման սկիզբը

Իմպերիալիզմի գաղութային սիստեմի առաջացումը խոշորագույն իմպերիալիստական տերությունների միջև աշխարհի տարածքային-քաղաքական բաժանման և մոնոպոլիաների միջև աշխարհի տնտեսական բաժանման հետևանքն էր։ Առ 1919 թ. գաղութներն ու կիսագաղութներն զբաղեցնում էին երկրագնդի ցամաքային տարածքի մոտ 70%-ը, ուր ապրում էր աշխարհի ամբողջ բնակչության գրեթե երկու երրորդը։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը նշանավորեց գաղութային սիստեմի ճգնաժամի սկիզբը, սակայն մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն իմպերիալիզմը դեռևս ի վիճակի էր ամբողջությամբ վերցրած պահպանելու իր ստեղծած գաղութային տիրապետության սիստեմի քաղաքական կառուցվածքը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, իսկ մի քանի շրջաններում դեռ մինչև նրա ավարտվելն ազգային-ազատագրական հեղափոխությունների ճնշման տակ իմպերիալիզմի գաղութային սիստեմն սկսեց փլուզվել։ Գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի դեմ Սովետական Միության ու նրա դաշնակիցների զինված ուժերի տարած հաղթանակը, համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին արդեն հետպատերազմյան առաջին տասնամյակում Ասիայի և Աֆրիկայի մի մեծ խումբ երկրներում ազգային-ազատագրական հեղափոխությունների հաղթանակի համար։ 1944 թ. մինչև 1954 թ. ասպարեզ ելան 15 նոր անկախ պետություններ։ 50-ական թվականների կեսերին իմպերիալիզմի գաղութային տիրույթների տարածքը 1938 թ. համեմատությամբ կրճատվեց գրեթե կրկնակի չափով։ Գաղութարարները վտարվեցին կա՛մ զինված միջոցներով, կա՛մ էլ ստիպված էին հեռանալ «աքացի ստանալուց հինգ րոպե առաջ»։

Ազգային-ազատագրական պայքարի ընթացքի վրա մեծ ազդեցություն ունեցավ ժողովրդական հեղափոխության հաղթանակը Չինաստանում, ժողովրդադեմոկրատական պետությունների կազմավորումը Հյուսիսային Կորեայում և Հյուսիսային Վիետնամում, որոնց ժողովուրդները կանգնեցին սոցիալիստական վերափոխությունների ուղին։

Գաղութատիրության քաղաքական վերնաշենքը տապալեցին Ինդոնեզիայի, Հնդկաստանի, Բիրմայի, Ցեյլոնի ժողովուրդները։ Մերձավոր Արևելքում խոշոր հաղթանակներ ձեռք բերեց արաբական ազգային-ազատագրական շարժումը։ Քաղաքական անկախության հասան Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Լիբիան, Սուդանը, Մարոկկոն, Թունիսը։ 1954 թ. աշնանը Ալժիրում ապստամբություն սկսվեց ֆրանսիական գաղութարարների դեմ։ Եգիպտոսի ազգային-ազատագրական հեղափոխությունը (1952) այդ երկիրը դարձրեց արաբական ազգային-ազատագրական շարժման ավանգարդ։

Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում գաղութային սիստեմի խորտակման հետևանքով գաղութների ու կիսագաղութների տեղում առաջացավ ազգային պետությունների սիստեմ, որը զգալիորեն թուլացրեց իմպերիալիզմի ուժերը։ Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում ծավալված ազգային-ազատագրական հեղափոխությունների հաջողությունը փոխկապակցված էր սոցիալիզմի պատմական հաղթանակների հետ։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում այդ փոխկապակցությունն արտահայտվեց գաղութատիրության դեմ մղվող պայքարում ազատագրված երկրների ժողովուրդների և սոցիալիստական պետությունների ժողովուրդների ընդհանուր ճակատի առաջացման մեջ։

Գաղութային կայսրությունների փլուզումը իմպերիալիստական երկրներին ստիպեց փոխել իրենց գաղութային քաղաքականությունը։ Գաղութատիրությունը փոխարինվեց նեոգաղութատիրությամբ, որի նպատակն էր պահպանել ոչ թե ուղղակի, ինչպես անցյալում էր, այլ անուղղակի վերահսկողությունն ազատագրված երկրների նկատմամբ։ Դա գաղութատիրություն է առանց կայսրությունների։ Նրա գլխավոր ներկայացուցիչն է Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Հետպատերազմյան առաջին տասնամյակում իմպերիալիզմը ձգտում էր իմաստից զրկել Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի նոր երկրների անկախությունը և նրանց վերածել իր հլու դաշնակիցների։ Այդ նպատակներին էր ծառայում ռազմաքաղաքական բլոկների համակարգը՝ ՍԵԱՏՕ-ն, բաղդատի պակտը (ավելի ուշ ՍԵՆՏՕ-ն), Ամերիկյան պետությունների կազմակերպությունը և այլն։ Իմպերիալիստական մամուլը և քաղաքական գործիչները ձաղկում էին շեղոք երկրներին, ձգտելով վարկաբեկել նոր պետությունների անկախ արտաքին քաղաքական կուրսի անգամ գաղափարը։ Օգտագործելով նախկին գաղութներում պահպանած տնտեսական դիրքերը և նրանց անիրավահավասար վիճակն աշխատանքի միջազգային կապիտալիստական բաժանման ասպարեզում, իմպերիալիզմը տնտեսական լծակների օգնությամբ փորձում էր խոչընդոտել ազգային-ազատագրական հեղափոխությունների խորացմանը, հաջորդ փուլի՝ իմպերիալիզմից տնտեսապես ազատագրվելու և ժողովրդական լայն զանգվածների շահերի օգտին սոցիալ-տնտեսական խոր վերափոխություններ կատարելու խնդիրների լուծմանն անցնելուն։ Իմպերիալիզմը հույսը դնում էր բուրժուազիայի և կալվածատերերի առավել ռեակցիոն խմբերի վրա։ Սակայն 1950-ական թվականների երկրորդ կեսին սկսված աշխարհի նոր իրադրությունը նրան ստիպեց որոշակիորեն վերանայել իր նեոգաղութատիրական ստրատեգիան։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում իմպերիալիստական լագերում կատարված փոփոխությունները

Երկրորդ համաշխարհային պատերազմը թուլացրեց իմպերիալիզմն ամբողջությամբ վերցրած։ Փոխվեց նաև ուժերի հարաբերակցությունն իմպերիալիստական երկրների միջև։ Եվրոպական կապիտալիզմի գլխավոր կենտրոնների և Ճապոնիայի տնտեսական դիրքերը լրջորեն թուլացան հօգուտ Ամերիկայի Միացյալ Նահանգների։ Եթե 1937 թ. ԱՄՆ-ը տալիս էր համաշխարհային արդյունաբերական արտադրության 42%-ը, Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և Ճապոնիան՝ 31%-ը, մնացած կապիտալիստական երկրները՝ 27%-ը, ապա 1948 թ. ԱՄՆ-ի բաժինն աճեց մինչև 54%-ի, իսկ Արևմտյան Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի բաժինը նվազեց մինչև 20%-ի՝ մնացած կապիտալիստական աշխարհի գրեթե անփոփոխ տեսակարար կշռով հանդերձ (26%)։ Պատերազմից անմիջապես հետո մոնոպոլիստական կապիտալը բախվեց զանգվածների բանվորական և դեմոկրատական հզոր շարժման հետ, որոնք ոտքի կանգնեցին աշխատավորների հաշվին իր դրությունն ամրապնդելու բուրժուազիայի փորձերի դեմ պայքարելու համար։

Բանվորական ու դեմոկրատական շարժման վերելքի և գաղութային սիստեմի սկիզբ առած փլուզման առջև ձևավորվում էր արևմտաեվրոպական ու ամերիկյան բուրժուազիայի դասակարգային դիրքը, մի բան, որն, իհարկե, չէր բացառում միջիմպերիալիստական հակասությունները։ Արևմտաեվրոպական կապիտալիստական երկրներին ֆինանսատնտեսական օգնություն ցույց տալով, ԱՄՆ-ը նպատակ էր հետապնդում ամրապնդել իր պարագլխային դերը կապիտալիստական լագերում և միաժամանակ պահպանել կապիտալիզմի հիմքերն Արևմտյան Եվրոպայում, կանգնեցնել քաղաքական ուժերի տեղաբաշխման ասպարեզում պատերազմից հետո դեպի ձախ կատարվող տեղաշարժը, կանխել կամ շրջափակել գաղութային սիստեմի սկիզբ առած փլուզումը։ ՆԱՏՕ-ի իմպերիալիստական ագրեսիվ բլոկի ձևավորմամբ ամրապնդված իմպերիալիստական համերաշխությունը կառավարող շրջաններին օգնեց պահպանելու արևմտաեվրոպական կապիտալիզմի հիմքերը։ Սակայն իմպերիալիզմն անուժ գտնվեց խոչընդոտելու սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում։ Իմպերիալիստական սիստեմն անուղղելի կորուստ կրեց։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պետական-մոնոպոլիստական տենդենցները մշտական գործոն դարձան կապիտալիզմի զարգացման ասպարեզում։ Հետպատերազմյան կապիտալիզմն ամենից առաջ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն է, որը հարմարվում է համաշխարհային երկու սիստեմների պայքարի պայմաններին։ Կապիտալիստական հասարակության համար դեռևս 1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակներից ի վեր կենսականորեն կարևոր դարձավ ցույց տալ կապիտալիզմի ընդունակությունը պետական ապարատի օգնությամբ կարգավորելու տնտեսական զարգացման պրոցեսը։ Մոնոպոլիստական կապիտալին դա հարկադրում էր բանվոր դասակարգի պայքարը, որը պահանջում էր և հետպատերազմյան առաջին տարիներին մի ամբողջ շարք երկրներում հասավ այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք պետությանը պարտավորեցնում էին ապահովել տնտեսական կայուն աճ և կանխել գործազրկությունը։ Մյուս կողմից, արտադրության համայնացման աճած մակարդակը կապիտալիզմի համար անխուսափելի էր դարձնում պետական միջամտությունը կապիտալիստական վերարտադրության պրոցեսին, առանց որի կապիտալիզմի էկոնոմիկան արդեն չի կարող գործել

«նորմալ ձևով», սպառնալիքի տակ չդնելով շահույթի ստացումը մոնոպոլիաների կողմից։

Հետպատերազմյան տարիներին, այսպիսով, մոնոպոլիաների և պետության ուժերը միավորվում են միասնական պետական-մոնոպոլիստական մեխանիզմի մեջ։ Այդ միավորումը տեղի է ունենում իր իսկ պետության՝ խոշորագույն պետական մոնոպոլիստական սեփականատիրոջ, արտադրողի, սպառողի և կապիտալիստական էկոնոմիկայի կարգավորողի վերածվելու հիման վրա։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրա ավարտից հետո դա արտահայտվում էր պետական ռազմական արդյունաբերության ստեղծման, մի քանի այնպիսի ճյուղերի զարգացման մեջ, որոնցով պահանջվում էին առանձնապես մեծ կապիտալ ներդրումներ, մոնոպոլիաների ոչ շահութաբեր կամ սնանկացման շեմին կանգնած ձեռնարկությունների, հատկապես «հին» և տեխնիկական տեսակետից ետ մնացած ճյուղերի ձեռնարկությունների (ածխային, երկաթուղային տրանսպորտ և այլն) ազգայնացման միջոցով պետության կողմից փրկելու և, վերջապես, պետության կողմից ճանապարհների, նավահանգիստների, կամուրջների, ջրամատակարարման համակարգերի շինարարության մեջ, այսինքն կապիտալիստական էկոնոմիկայի ֆունկցիաների կատարման համար ընդհանուր պայմաններ ստեղծելու մեջ։ Պետությունն, այդպիսով, իր վրա է վերցնում արտադրության նվազ շահութաբեր ճյուղերի հոգսը, մոնոպոլիաներին տրամադրելով կապիտալներն ավելի շահութաբեր ձևով ներդնելու հնարավորություն։

Պատերազմից հետո մի քանի երկրներում, հատկապես ԱՄՆ-ում տեղի ունեցավ ռեպրիվատացում, այսինքն պետության կողմից այն ձեռնարկությունների հանձնում մոնոպոլիաներին, որոնք կառուցվել էին պատերազմի ժամանակ։ Որոշ երկրներում էլ (Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում) կառավարող շրջաններն ստիպված էին հաշվի նստել ազգայնացման պահանջների հետ։

Զարգացած կապիտալիզմի երկրներում պետական սեփականությունը հիմնականում ընդգրկում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, հանույթային արդյունաբերությունը, էներգետիկան, սպասարկման ոլորտը, հողային ֆոնդը։ Նրա մասշտաբները տարբեր են։ Առավել մեծ չափով պետականացում նկատվում է արևմտաեվրոպական երկրներում։ ԱՄՆ-ում ազգայնացված սեկտոր չկա, սակայն պետության բաժինն ազգային հարստության մեջ կազմում է մոտ 15%, իսկ ռազմական ակտիվները հաշվի առնելու դեպքում՝ 23%։

Էկոնոմիկայի պետականացման պրոցեսը զարգացած կապիտալիզմի երկրներում հակասական բնույթ է կրում։ Մի կողմից, պետական սեփականության զարգացումը մոնոպոլիաների տիրապետության պայմաններում տանում է դեպի նրանց տնտեսական ու քաղաքական դիրքերի ուժեղացում, համաշխարհային շուկաներում մրցադիմակցունության բարձրացում, աշխատավորների շահագործման ուժեղացում։ Մյուս կողմից, մոնոպոլիստական սեփականության ազգայնացումն օբյեկտիվորեն արտացոլում է համայնացման անհրաժեշտությունը և պատմական անխուսափելիությունը, իսկ դա քայքայում է ժամանակակից կապիտալիզմի հենց հիմքերը, ցույց տալիս, որ կապիտալիստների դասակարգն ամենևին էլ հարկավոր չէ։ Էկոնոմիկայի պետականացման միջոցով ժամանակակից բուրժուական պետությունը փորձում է թուլացնել աճած հակասությունն արտադրության հասարակական բնույթի և յուրացման ու փոխանակման մասնավոր մոնոպոլիստական եղանակի միջև։

Ժամանակակից կապիտալիստական պետությունն իր արամադրության

տակ ունի հօգուտ մոնոպոլիաների շահերի կապիտալիստական վերարտադրության պրոցեսների կարգավորման ընդարձակ մեխանիզմ։

Հետպատերազմյան առաջին տասնամյակում էկոնոմիկայի կապիտալիստական կարգավորումը կրում էր հիմնականում «հակացիկլային» բնույթ, այսինքն տնտեսական վերելքի փուլում ձեռնարկվում էին արգելակման միջոցառումներ, որպեսզի թույլ չտրվեր էկոնոմիկայի «գերայրում» («կանգնիր-գնա» սկզբունք)։ Այդ «հակացիկլային» քաղաքականությունը բուրժուական պետությունն իրագործում էր ինչպես ուղղակի միջամտության միջոցով (պետական-մոնոպոլիստական և մասնավոր-մոնոպոլիստական խառն ընկերությունների արտադրության պլանավորման միջոցով), այնպես էլ անուղղակի կարգավորման միջոցով (հարկային սիստեմ և բյուջե, կապիտալ ներդրումների խթանման կամ կրճատման քաղաքականություն, շուկայի կարգավորում)։

Կապիտալիստական պետությունն ավելի ու ավելի լայնորեն է ներխուժում սոցիալական ու աշխատանքային հարաբերությունների բնագավառը։

Հետպատերազմյան տարիներին բուրժուական քաղաքագետները շրջաժարվելով բռնությունների դիմելուց, սկսեցին ավելի ու ավելի հաճախակի դիմել զիջումների ու ռեֆորմների։ Անցկացնելով մասնակի ռեֆորմների ու աշխատավորության օգտին առանձին զիջումների քաղաքականություն (աշխատավարձի բարձրացում, սոցիալական ապահովության ու առողջապահության բարելավում), կապիտալիստական քաղաքագետներն ու կառավարությունները հույս ունեին չեզոքացնել սոցիալական ասպարեզում սոցիալիստական երկրների հաջողությունների ազդեցությունն աշխարհի ժողովուրդների վրա, բթացնել դասակարգային պայքարը «կապիտալիզմի փոխակերպման» վերաբերյալ պատրանքների արմատականացման միջոցով։ Տնտեսական բնույթի զիջումները բուրժուազիան ու պետական-մոնոպոլիստական ապարատը ղեկավարում էին քաղաքական լծի ուժեղացմամբ, ծավալելով «սառը պատերազմը» և հակակոմունիզմի լայն պրոպագանդան։

Այդ նույն ժամանակ կապիտալիզմի գաղափարախոսները փորձեր էին հրնշեցնում «համընդհանուր բարեկեցության պետության» դարաշրջանի սկզբնավորման, կապիտալիզմի՝ նոր «անճգնաժամ» հասարակության փոխակերպվելու մասին։ Այդ տեսությունն ինքնըստինքյան նոր չէ։ Դեռ կես դար առաջ Վ. Ի. Լենինը զգուշացնում էր, որ «...ամենատարածված սխալն այն բուրժուական-ռեֆորմիստական պնդումն է, թե իբր մոնոպոլիստական կամ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն այլևս կապիտալիզմ չէ, արդեն կարող է «պետական սոցիալիզմ» կոչվել և այլն»[4]։

Իրականում պետական-մոնոպոլիստական կարգավորումը կապիտալիստական էկոնոմիկան չփրկեց ճգնաժամային խոշոր ցնցումներից։ Այն սոսկ որոշակի դեֆորմացիա մտցրեց տնտեսական ցիկլի մեջ. կապիտալիստական զարգացման ցիկլային բնույթը, որը բնորոշվում է տիրապետող մասնավոր կապիտալիստական արտադրական հարաբերություններով, պահպանվեց։

1948 թ. աշնանն ԱՄՆ-ում սկսվեց տնտեսական ճգնաժամ, դրա հետևանքով արտադրությունը մեկ տարվա ընթացքում կրճատվեց 10%-ով. խիստ աճեց գործազրկությունը։ Դերարտադրության ճգնաժամ ապրեց նաև գյուղատնտեսությունը։ Արևմտյան Եվրոպայում ճգնաժամն արտահայտվեց ԱՄՆ-ի հետ առևտրի կրճատման մեջ, իսկ 1949 թ. աշնանը ծավալվեց միջազգային վալյուտային ճգնաժամը, որը հասցրեց վալյուտայի դեվալվացմանը Եվրոպայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի մի ամբողջ շարք երկրներում։ Եվրոպական այն երկրներում, ուր դեռևս չէր ավարտվել արտադրության վերականգնման

[4] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 33, էջ 86։

պրոցեսը, ճգնաժամային երևույթները հանդես եկան 1951—1952 թթ. որպես ԱՄՆ-ում 1948—1949 թթ. տեղի ունեցած ճգնաժամի փաստացի շարունակություն։

Հետապատերազմյան երկրորդ տնտեսական ճգնաժամը տեղի ունեցավ 1957—1958 թթ.։ Վերստին առավել մեծ ուժով այն տարածվեց ԱՄՆ-ում, ուր արտադրության ամսական ինդեքսն ընկավ 14%-ով։ Արտադրության կրճատում կամ աճման տեմպերի դանդաղում նկատվեց Անգլիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Իտալիայում, ԳՖՀ-ում։ Ճգնաժամի հետևանքները մի շարք երկրների էկոնոմիկայում զգացվում էին հետագա տարիների ընթացքում։

Հետպատերազմյան տնտեսական ճգնաժամերը նոր ուժով բացահայտեցին կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրողական ուժերի և դրանք կաշկանդող մասնավոր կապիտալիստական արտադրական հարաբերությունների միջև գոյություն ունեցող հակասությունը։ «Կապիտալիզմի տեխնիկան,— նկատում էր Լենինը,— օրեցօր ավելի ու ավելի է գերաճում այն հասարակական պայմաններից, որոնք աշխատավորներին դատապարտում են վարձու ստրկության»[5]։ Էկոնոմիկայի անճգնաժամ զարգացումն ապահովելու ժամանակակից կապիտալիզմի անընդունակության մեջ դրսևորվում են հասարակական այդ սիստեմի նեխածությունն ու պարազիտիզմը, ավելի ու ավելի սուր կերպով է զգացվում արտադրության հասարակական բնույթի հետ բաշխման ու փոխանակման հարաբերությունները համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը վերացնելու անհրաժեշտությունը։

Կապիտալիստական էկոնոմիկայի հակասությունները սրվում են նաև նրա ռազմականացման կապակցությամբ, որը դարձել է պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի օրգանական ուղեկիցը։ Ռազմական ծախսերի կորագիծը կապիտալիստական աշխարհում հետպատերազմյան տարիներին անընդհատ վեր է բարձրանում։ Պետական պատվերներ կատարող ռազմական արտադրությունը դիտվում էր որպես «հակացիկլային» միջոցներից մեկը։ Սակայն էկոնոմիկայի ռազմականացման հիմնական պատճառը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապված էր իմպերիալիզմի ագրեսիվ պլանների հետ, այսինքն հեղափոխական բանվորական շարժման, ազգային-ազատագրական հեղափոխությունների դեմ և նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստման համար իմպերիալիզմի մղած պայքարի հետ։

Քաղաքական ռեակցիայի միտումը։ «Սառը պատերազմը»

Մոնոպոլիաների սերտաճումը պետության հետ և նրա վերածումը կապիտալիստական վերարտադրության անքակտելի մասի կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում ուղեկցվում էր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բուրժուական պետության միջամտության աճմամբ։ Մի շարք երկրներում քայլեր են արվել սահմանափակելու պառլամենտական մարմինների իրավունքները և ընդլայնելու գործադիր իշխանության արտոնությունները։ Քաղաքական ռեակցիայի ընդհանուր միտումը իմպերիալիզմի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ իր արտահայտությունը գտավ «սառը պատերազմի» մեջ, որը սանձազերծեց ամերիկյան և եվրոպական իմպերիալիստական բուրժուազիան։ Գաղափարախոսության ասպարեզում դրան համապատասխանում էր հակակոմունիզմի մոլեգնումը, որը դարձավ իմպերիալիզմի գլխավոր գաղափարական զենքը։ Հակակոմունիստական պրոպագանդան ու քաղաքականությունը երկու գլխավոր ուղղություն ունեին՝ արտաքին և ներքին։

[5] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 23, էջ 113։

Սովետական Միության հետ այն համագործակցության խզելն արդարացնելու նպատակով, որն առաջացել էր հակահիտլերյան պատերազմի տարիներին, ԱՄՆ-ի, Անգլիայի և արևմտաեվրոպական այլ տերությունների կառավարող շրջաններն անցան սովետական «ռազմական սպառնալիքի» մասին, ռազմական միջոցներով կապիտալիստական երկրներում «հեղափոխություն արտահանելու» Սովետական Միության ձգտման մասին զրպարտչական պրոպագանդայի ուղին։ «Սովետական ռազմական սպառնալիքի» վերաբերյալ առասպելը կոչված էր աճող ռազմականացումն ու ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները սրելու, «պատերազմի եզրին հավասարակշռելու» քաղաքականությունն արդարացնելու և բացատրելու համար։ Պետական քաղաքականության մակարդակի բարձրացված հակասովետիզմի դրոշի ներքո ԱՄՆ-ը մյուս երկրների իմպերիալիստական և ռեակցիոն շրջանների համագործակցությամբ ռազմաքաղաքական բլոկներ էր ստեղծում Եվրոպայում, Ասիայում, Լատինական Ամերիկայում (ՆԱՏՕ, ՍԵԱՏՕ, ՍԵՆՏՕ, ԱՊԿ և այլն)։

«Սովետական սպառնալիքի» մասին առասպելի հետ անմիջականորեն կապված էր կապիտալիստական երկրներում կոմունիստների հալածանքի կամպանիան, կոմունիստներ, որոնց ներկայացնում էին որպես «Մոսկվայի գործակալներ», որպես «արևմտյան դեմոկրատիայի համակարգում «օտարածին մարմիններ»։ «Կոմունիստական քայքայիչ գործունեության» դեմ պայքարի պատրվակի տակ բուրժուական կառավարությունները և կառավարող շրջանները հարձակում էին ծավալում արհմիությունների իրավունքների դեմ, հալածում ոչ կոմունիստական ձախ կազմակերպություններին, արմատավորում կոնֆորմիզմի գաղափարախոսություն, սերմանում միլիտարիստական մոլեգնություն։ Այդ ուղղությամբ իրագործվում էր նաև գործնական քաղաքականություն՝ 1947 թ. Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների կառավարություններից կոմունիստների հեռացում, Անգլիայում, ԱՄՆ-ում կոմունիստների աղատում բանակից և պետական ծառայությունից, 1950-ական թվականներին կոմկուսի արգելում ԳՖՀ-ում, 50-ական թվականների առաջին կեսին կոմկուսի պարագլուխների դատական հալածանքների մի ամբողջ շարք և «մակարտիզմի» մոլեգնում, սարսափի և հակակոմունիստական նախապաշարմունքների արմատավորում ԱՄՆ-ում։ Թեև «սառը պատերազմի» տարիներին մոնոպոլիստական կապիտալիզմի երկրներում դեմոկրատական ուժերը էական կորուստներ կրեցին, սակայն նրանք վճռականապես ընդդիմանում էին ռեակցիայի հարձակմանը։ Սոցիալիզմի և կապիտալիզմի միջև ուժերի նոր հարաբերակցությունը բանվոր դասակարգին ու դեմոկրատական ուժերին թույլ տվեց ետ մղել ռեակցիայի հարձակումը։

Համաշխարհային զարգացման ընդհանուր հանրագումարը 50-ական թվականների երկրորդ կեսին բնութագրվում էր ամենից առաջ սոցիալիստական պետությունների համաշխարհային սիստեմի կազմավորմամբ։ Սոցիալիստական նոր հասարակարգը հաստատվեց երկրագնդի մեկ երրորդ մասում։ Սովետական Միության հաջողությունները կապիտալիզմի հետ մղվող ռազմատնտեսական մրցակցության մեջ հնարավոր դարձրին պատերազմի սանձազերծման և կապիտալիստական կարգերի վերականգնման ուղղությամբ իմպերիալիզմի պլանների ձախողումը։ Վճռական հաղթանակներ տարան նաև ազգային-ազատագրական շարժումներն Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում. գաղութային կայսրությունների տեղում առաջացավ քաղաքականապես անկախ ազգային պետությունների սիստեմ։ Իմպերիալիզմը կրեց ծանր կորուստներ, որը որակապես փոխեց ուժերի հարաբերակցությունն աշխարհում։ Դա պայմանավորեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի վերաճումը նոր փուլի։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլը ծավալվեց 50-ական թվականների երկրորդ կեսից։ Ի տարբերություն նախորդ փուլերի, որոնք առաջացան համաշխարհային պատերազմների առնչությամբ, երբ պայմաններ էին ստեղծվում իմպերիալիզմի շղթայի հեղափոխական ճեղքման համար, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլն սկսվեց խաղաղ պայմաններում։ Այն պայմանավորված է նրանով, որ ուժերի հարաբերակցության փոփոխությունն աշխարհում բանվոր դասակարգին և հեղափոխական-դեմոկրատական ուժերին թույլ է տալիս նոր հարվածներ հասցնել իմպերիալիզմին համաշխարհային պատերազմի բացակայության պայմաններում։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակակից փուլը բնութագրվում է մի շարք որակապես նոր գծերով։ Դրանք են՝ նախ, սոցիալիզմի վերածումը համաշխարհային զարգացման վճռական գործոնի, երկրորդ, հիմնականում իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանման ավարտումը, ազգային-ազատագրական պայքարի վերաճումը, ինչպես ֆեոդալական, այնպես էլ կապիտալիստական շահագործողական հարաբերությունների դեմ մղվող պայքարի, երրորդ, սոցիալիզմի ոչ միայն նյութատեխնիկական, այլև սոցիալ-քաղաքական նախադրյալների հասունացումը մոնոպոլիստական կապիտալի երկրներում։

Երկու սիստեմների մրցակցությունը ժամանակակից համաշխարհային զարգացման օրինաչափությունն է

Կոմունիստական և բանվորական կուսակցությունները 1960 թ. Մոսկովյան խորհրդակցության Դիմումի մեջ տվեցին մեր դարաշրջանի նոր բնութագիրը. «Մեր դարաշրջանը, որի հիմնական բովանդակությունը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության սկզբնավորած կապիտալիզմից անցումն է սոցիալիզմին, երկու հակադիր հասարակական սիստեմների պայքարի դարաշրջանն է, իմպերիալիզմի կործանման, գաղութային սիստեմի վերացման դարաշրջանը, նորանոր ժողովուրդների սոցիալիզմի ուղուն անցնելու, համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի դարաշրջանը»[6]։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի ձևավորումը և սոցիալիզմի երկրներում նոր հասարակարգի հիմքերի ստեղծումը երկու սիստեմների միջև մղվող պայքարի ծանրության կենտրոնը փոխադրեցին էկոնոմիկայի ասպարեզը, բայց այդ պայքարն ընդգրկում է նաև քաղաքականության և գաղափարախոսության բնագավառները։ Սոցիալիզմի և կապիտալիզմի միջև ընթացող մրցությունը հանդիսանում է նոր հասարակարգի առավելությունների դրսևորման պրոցես։ Ներկայումս սոցիալիզմն ունի հզոր նյութական բազա։ Եթե 50 տարի առաջ Սովետական Միության արդյունաբերությունը կազմում էր համաշխարհային արդյունաբերական արտադրության 3%-ից էլ պակաս, ապա 1973 թ. սոցիալիստական երկրներն արդեն արտադրում էին համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 39%-ը։ Սոցիալիզմի երկրները կապիտալիստական պետություններին զգալիորեն գերազանցում են արտադրանքի աճի տեմպերով։ 1951—1973 թթ. սոցիալիստական երկրների արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճը կազմեց 10,1%, իսկ կապիտալիստական երկրներում՝ 5,4%։ Սոցիալիզմն ավելի ու ավելի է հանդես գալիս որպես համաշխարհային զարգացման վճռական ուժ։

---

[6] «Программные документы борьбы за мир, демократию и социализм», М., 1961, стр. 33.

Երկու սիստեմների միջև մղվող պայքարը ներգործում է համաշխարհային տնտեսական ու քաղաքական հարաբերությունների բոլոր ոլորտների վրա, այն ազդում է նաև կապիտալիզմի հակասությունների զարգացման վրա, կապիտալիզմին ստիպելով հարմարվել նոր պայմաններին. Էկոնոմիկայի ասպարեզում կապիտալիզմը ձգտում է թուլացնել իրեն հատուկ հակասություններն ու արատները, սոցիալ-քաղաքական ասպարեզում ջանում է դեմագոգիկ պրոպագանդայով և զիջումներով թողարկել ժողովրդական զանգվածների հարաճուն շահագործումը մոնոպոլիաների կողմից, գաղափարախոսության ասպարեզում ձեռնարկում է բոլոր միջոցները՝ պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը քայքայելու, զանգվածների կողմից սոցիալիստական գաղափարների ընկալումը թույլ չտալու համար։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը նպաստում է կապիտալի դեմ աշխատանքի մղած պայքարին, դրանով իսկ սրելով կապիտալիստական հասարակության հիմնական հակասությունը։ Նա ստեղծում է այնպիսի արտաքին պայմաններ, որոնք ամրապնդում են բանվոր դասակարգի դիրքերը կապիտալիստական աշխարհում, դեմոկրատական ուժերի դիրքերը սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարում, և թույլ է տալիս նրանց ձեռք բերելու կարևոր սոցիալական նվաճումներ և նյութական գրության բարելավումներ։ Այդ նվաճումները ծառայում են որպես պլացդարմ մոնոպոլիստական կապիտալիզմի դեմ հետագա հարձակումների համար։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը ներգործում է նաև իմպերիալիզմի ու ազգային-ազատագրական շարժման միջև անտագոնիզմի վրա։ Գաղութատիրությունից ազատագրված մի շարք երկրներ, լուծելով ազգային ազատագրության խնդիրները, ընտրեցին իրենց զարգացման սոցիալիստական կողմնորոշում։ Այսպիսով, համաշխարհային սոցիալիստական սիստեմի գոյությունը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում բացում է հասարակական առաջադիմության նոր ուղիներ, որոնք չէին կարող լինել, եթե կապիտալիզմը մնար որպես համաշխարհային զարգացման տիրապետող ուժ։ Պայմաններ են ստեղծվում կապիտալիստական սիստեմի նոր օղակների ճեղքման համար՝ երկու սիստեմների խաղաղ գոյակցության պայմաններում։ Նման ճեղքման օրինակ է հակաիմպերիալիստական հեղափոխության հաղթանակը Կուբայում 1959 թ.։ Այն դարձավ առաջին սոցիալիստական հեղափոխությունը Ամերիկյան մայր ցամաքում և վերջ տվեց իմպերիալիզմի անբաժան տիրապետությանը Լատինական Ամերիկայում։

Գաղութային սիստեմի կործանումը։ Ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում գաղութային սիստեմի անկումն արագացավ, ընդունեց հեղեղակերպ բնույթ և սկսեց վերաճել նրա կործանման. անհաջողությամբ ավարտվեցին իմպերիալիստական տերությունների բոլոր փորձերը 50-ական թվականների վերջին 60-ական թվականների սկզբին այդ պրոցեսը կանխելու ինչպես զինված պայքարի, այնպես էլ իր դրածոներին «իշխանությունը խաղաղ ձևով հանձնելու» մեթոդներով։ Աշխարհի քաղաքական քարտեզից անհետացան անգլիական, ֆրանսիական, բելգիական գաղութային կայսրությունները։

Այդ կայսրությունների փլատակների վրա ստեղծված է մոտ 80 նոր ազգային անկախ պետություն, մի բան, որը խոր փոփոխությունների հասցրեց միջազգային քաղաքական և տնտեսական հարաբերությունների բնագավառում։

Նախկին գաղութների ու կիսագաղութների կողմից ազգային անկախության նվաճումը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ մարդկությունն ամբողջությամբ վերցրած ապրում է կապիտալիզմը նոր հասարակարգով՝ սոցիալիզմով փոխարինվելու դարաշրջան։ Դա յուրահատուկ կնիք է դնում նաև գաղութային ազատագրության խնդիրների յուրօրինակ միահյուսում պատմական մեծ հեռանկարի ընտրության հետ՝ զարգացման կապիտալիստական ուղի կամ սոցիալիստական կողմնորոշմամբ հանդերձ զարգացման ոչ կապիտալիստական ուղի։ Ազատագրված երկրների համար պատմական ուղու ընտրությունը պրոբլեմը կապված է ժամանակակից դարաշրջանի բնույթի և ազգային-ազատագրական հեղափոխությունների զարգացման կոնկրետ փուլի հետ։

Ազգային-ազատագրական պայքարի հետպատերազմյան զարգացումը ցույց է տալիս, որ ազգային-ազատագրական հեղափոխությունն անցնում է երկու ինքնուրույն՝ ազգային ազատագրության և տնտեսական ազատագրության համար պայքարի փուլեր։ Քաղաքական անկախության նվաճման պրոցեսն Ասիայի և Աֆրիկայի պետությունների մեծ մասում արդեն անցել է։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլի համար բնորոշ է գործնականում ամենուրեք ազգային-ազատագրական հեղափոխությունների անցումը զարգացման երկրորդ փուլին։ Դա պայմանավորված է նրանով, որ քաղաքական անկախություն ձեռք բերելը չէր նշանակում իմպերիալիզմից ու օտարերկրյա կապիտալի մենաշնորհային դիրքերից ունեցած տնտեսական կախման ավտոմատիկ վերացում։ Ազատագրված երկրների մեծ մասը շարունակում է անիրավահավասար վիճակում գտնվել աշխատանքի միջազգային կապիտալիստական բաժանման ասպարեզում, պահպանվում է նրանց գիտատեխնիկական և կուլտուրական հետամնացությունը։ Վիթխարի են մոնոպոլիստական կապիտալի կողմից «երրորդ աշխարհի» երկրների շահագործման մասշտաբները։

Քաղաքական անկախության նվաճումն ազատագրված երկրների ժողովուրդներին դրեց օտարերկրյա մոնոպոլիաների տիրապետության վերացման և սոցիալական, քաղաքական ու տնտեսական խոր վերափոխություններ անցկացնելու անհրաժեշտության առջև։ Իրականանում է Վ. Ի. Լենինի կանխատեսությունն այն մասին, որ համաշխարհային հեղափոխության վճռական ճակատամարտերում երկրագնդի բնակչության մեծամասնության շարժումը, որը սկզբում ուղղված էր ազգային ազատագրմանը, ուղղվելու է կապիտալիզմի ու իմպերիալիզմի դեմ[7]։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում ազգային-ազատագրական հեղափոխությունների զարգացման այդ միտումը հրատակ արտահայտություն է գտնում։ 1969 թ. կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդակցությունը նշեց, որ պատմական նոր պայմաններում առաջացել են առաջադիմական հասարակական զարգացման յուրահատուկ ձևեր, աճել է հեղափոխական-դեմոկրատական ուժերի դերը։ Մի շարք պետությունների անցումը զարգացման ոչ կապիտալիստական ուղուն հնարավորություններ է ի հայտ բերում հետամնացության վերացման և սոցիալիստական զարգացմանն անցնելու պայմաններ ստեղծելու համար։ Ազատագրված երկրների կողմից պատմական ուղի ընտրելու վրա ազդեցություն է գործում երկու սիստեմների պայքարը։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում գաղութարարների ստրատեգիայի մեջ դեռևս մեծ դեր էին խաղում ինտերվենցիայի և ազգային-ազատագրական պայքարը զենքով ճնշելու մեթոդները, որոնք նպատակ ունեին պահպանել ուղղակի գաղութային տիրապետությունը (Ինդոնեզիա, Մալայա, Հնդկաչին, Ալժիր)։ Այժմ, երբ կայսրությունները փլուզվել են, իմպերիալիզմի նոր ստրատեգիան որոշվում է «անուղղակի» տիրապետությունն ամրապնդելու ձգտումով, զարգացող երկրները որպես շահագործման օբյեկտ կապիտալիզմի

[7] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 45։

ոլորտում պահպանելով հանդերձ։ Այդ ստրատեգիայում վերջին տեղը չեն գրավում այն միջոցառումները, որոնք ուղղված են կապիտալիստական տարրերի և կապիտալիստական զարգացմանն աջակցություն ցույց տալուն, այն հաշվով, որպեսզի թույլ չտրվի կապիտալիստական ֆորմացիայի ոլորտի կրճատում։ Միաժամանակ իմպերիալիզմը շարունակում է ազգային-ազատագրական ուժերի և առաջադիմական կառավարությունների դեմ կիրառել մարիոնետային ռեժիմների արմատավորման, զինված պրովոկացիաների, դավադրությունների քաղաքականություն։

Սոցիալիստական լագերը պայքարում է հակահեղափոխության դեմ, ոչընչացնում իմպերիալիստական տերությունների անիրավահավասար հարաբերությունների սկզբունքները զարգացող երկրների հետ, օգնում վերջիններիս սահմանափակելու մոնոպոլիաների բռնադատումը, նպաստում առաջադիմական ուժերի ամրապնդմանը և արմատական սոցիալ-տնտեսական վերափոխությունների ուղու վրա կանգնելուն։ Քաղաքական անկախության համար պայքարի տարիներին ձևավորված սոցիալիստական և զարգացող երկրների ընդհանուր ճակատը այժմ ամրապնդվում է հակաիմպերիալիստական պայքարի հողի վրա, պայքար, որն ուղղված է տնտեսական անկախության նվաճմանը և հետամնացության վերացմանը։

«Երրորդ աշխարհի» երկրները մեր օրերին մի չափազանց խայտաբղետ պատկեր են ներկայացնում։ Սոցիալ-տնտեսական վերափոխությունների ձևերը, մեթոդները և տեմպերը, որոնց անհրաժեշտության առջև կանգնած են ազատագրված երկրները, շատ բանով պայմանավորված են սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի տարբերությամբ, դասակարգային ուժերի հարաբերակցությամբ, իմպերիալիստների ճնշման աստիճանով և այլն։ Հեղափոխական-դեմոկրատական ուժերի և ազատագրված երկրների ժողովուրդների համար ավելի ու ավելի հասկանալի է դառնում, որ չի կարելի հասնել սոցիալական առաջադիմության և վերացնել հետամնացությունը, հետևողական պայքար չմղելով իմպերիալիզմի դեմ։

Իմպերիալիզմի ներքին հակասությունների սրումը երկու սիստեմների պայքարի և գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում

Երկու սիստեմների մրցակցությունն ու պայքարը, գաղութային տիրապետության խորտակումը, այդ հեղափոխական պրոցեսների հետ միաժամանակ ծավալված գիտատեխնիկական առաջադիմությունը սրեցին կապիտալիստական աշխարհի հին և կյանքի կոչեցին նոր հակասություններ։

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը (ԳՏՀ) արտադրողական ուժերի զարգացման բնապատմական պրոցես է, որը կապված է միջուկային էներգիայի տիրապետման, տիեզերքի յուրացման, քիմիայի զարգացման, արտադրության ավտոմատացման, գիտության և տեխնիկայի այլ կարևորագույն նվաճումների հետ։ Իր թափով այն ինտերնացիոնալ բնույթ ունի։ Սակայն ԳՏՀ-ի սոցիալական հետևանքները կապիտալիստական երկրներում, ուր այն սահմանափակված է կապիտալիստական արտադրական հարաբերությունների շրջանակներով և ենթարկված է մասնավոր կապիտալիստական շահերին, և սոցիալիստական երկրներում, ուր նրա զարգացումը ծառայում է բոլոր աշխատավորների, ամբողջությամբ վերցրած սոցիալիստական հասարակության բարօրությանը, տարբեր են։

Մարդկության ապրած գիտատեխնիկական առաջադիմության նոր փուլը որակապես տարբերվում է XVIII—XIX դդ. արդյունաբերական հեղափոխություններից և տեխնիկական մյուս հեղաշրջումներից։ Ժամանակակից ԳՏՀ-ն բնորոշվում է որպես տեխնիկական առաջադիմության մի այնպիսի տարատեսակություն, երբ գիտության ու տեխնիկայի որակական խոր վերափոխու-

թյունները համընկնում են հասարակության զարգացման գործում գիտության առաջատար դերի հետ. գիտությունը դառնում է անմիջական արտադրողական ուժ, որը թույլ է տալիս խիստ կրճատել գիտական հայտնագործությունից մինչև նրա արդյունաբերական յուրացումն ընկած ուղին։ Թեև մարդկությունը գտնվում է ԳՏՀ-ի սկզբնավորման ժամանակաշրջանում, բայց արդեն մեր օրերում ի հայտ են եկել արտադրության գլխավոր տարրերի որակական վերափոխման հիմնական միտումները. աշխատանքի գործիքներինը՝ մեքենայացումը փոխարինվում է ավտոմատ համակարգերով և մեքենաների համալիրներով. աշխատանքի առարկաներինը՝ պատրաստվում են նոր, բնության մեջ չտեսնված նյութեր, որը նախադրյալներ է ստեղծում արտադրությունը բնության կողմից դրված սահմանափակումներից ազատելու համար. էներգիայի աղբյուրներինը՝ ատոմային ռեակցիային տիրապետելը տալիս է էներգիայի գործնականորեն անսպառ աղբյուր։ Ի տարբերություն անցյալի տեխնիկական հեղաշրջումների, որոնք վերաբերում էին գլխավորապես արդյունաբերությանը, տրանսպորտին ու կապին, ժամանակակից ԳՏՀ-ն ինդուստրիալ բազայի վրա է փոխադրում նաև ավանդաբար հետ մնացող ճյուղերը, օրինակ՝ գյուղատնտեսությունը և շինարարությունը։ ԳՏՀ-ն վերաբերում է նաև անարտադրողական ոլորտին՝ առևտրին, վարկա-ֆինանսական համակարգին, կառավարման ապարատին։

ԳՏՀ-ն խոշոր կառուցվածքային տեղաշարժեր է առաջացնում կապիտալիզմի էկոնոմիկայում։ Խիստ աճում են գիտության և հետազոտությունների վրա կատարվող ծախսերը։ Մեծանում է աշխատանքի ինտենսիվացումը, ավելանում նրա բարդությունը և նյարդահոգեկան ծանրաբեռնվածությունը։ Տեղի է ունենում էկոնոմիկայի ճյուղերի և ներճյուղային կառուցվածքների՝ վերջին հարյուրամյակում առաջացած հարաբերակցության ոչնչացում։ Առաջին տեղեր են գրավում նոր արտադրությունները՝ էլեկտրատեխնիկան, էլեկտրոնիկան, սինթետիկ նյութերի քիմիան, անկում են ապրում հին ճյուղերը (տեքստիլ, ածխի հանույթ)։ Տեղի է ունենում ձեռնարկությունների միջև գոյություն ունեցող կապերի վերակառուցում, այսինքն ազգային և միջազգային մասշտաբներով ինտենսիվորեն է ընթանում արտադրության մոնոպոլիստական համակենտրոնացման, մասնագիտացման և կոոպերացման պրոցեսը։ Գյուղատնտեսության ինտենսիվացումը և ինդուստրացումը ծնում են ագրոարդյունաբերական համալիրներ, ուր իշխում են խոշոր մոնոպոլիաները։

Նոր տեխնիկայի կիրառման և բանվորական տեղի կապիտալատարողունակության բարձրացման հաշվին զգալիորեն բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը՝ զբաղված բանվորների թվի աննշան աճի կամ նույնիսկ մի քանի ճյուղերում կրճատման պայմաններում։ ԳՏՀ-ն արագացնում է արտադրության ու կապիտալի համակենտրոնացման պրոցեսը։ ԱՄՆ-ում այժմ 500 խոշորագույն ֆինանսա-արդյունաբերական մոնոպոլիաներ վերահսկում են երկրի արտադրության կեսը և շահագործում ամբողջ վարձու աշխատուժի կեսը։ ԳՖՀ-ում միայն Գերմանական բանկի ֆինանսական խումբը վերահսկում է ընդհանուր թվով ավելի քան 1 մլն. զբաղված բանվորներ ունեցող ձեռնարկություններ։

Գիտատեխնիկական առաջադիմությունը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում ծառայում է մոնոպոլիաների, հատկապես խոշոր մոնոպոլիաների շահերին, լուրջ տեղաշարժեր են կատարվում սեփականատիրական հարաբերություններում և, հետևապես, կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում։ Ուժեղանում է դասակարգային ուժերի բևեռացումը։ Զարգացած կապիտալիզմի երկրներում երկու տասնյակ տարիների ընթացքում վարձու աշխատանքով զբաղված անձանց բաժինը միջին հաշվով 68,7%-ից բարձրացել է մինչև 79,5%-ի։ Առանձին երկրներում

այն գերազանցել է աշխատունակ բնակչության 80%-ից (ԱՄՆ, ԳՖՀ) և նույնիսկ 90%-ից (Անգլիա)։ Վարձու աշխատանքի այդ վիթխարի բանակը դիմակայում է մոնոպոլիստական բուրժուազիայի մի նեղ խավի, որը զարգացած կապիտալիստական երկրներում հաշվվում է 3%-ից պակաս։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմանները ցրում են մանր սեփականատերերի երբեմնի պատրանքները. նրանք ավելի ու ավելի են ենթարկվում խոշոր կապիտալին, դառնալով մոնոպոլիաների կառուցվածքի մի մասը։

Վարձու աշխատանքի տեսակարար կշռի ավելացումը թուլացնում է բուրժուազիայի սոցիալական դիրքերը և, ընդհակառակը, ուժեղացնում բանվոր դասակարգի սոցիալական դիրքերը, դասակարգ, որը հանդես է գալիս որպես կապիտալի գլխավոր և առավել հզոր հակառակորդ, որպես բոլոր հակամոնոպոլիստական ուժերի ձգողական կենտրոն։ Բանվոր դասակարգը գլխավոր կապիտալիստական երկրներում հաշվվում է աշխատունակ բնակչության 70-ից մինչև 80%-ը։

Գիտատեխնիկական հեղափոխությունը և արտադրողական ուժերի զարգացումը փոփոխություններ են առաջացնում հենց վարձու աշխատանքի կառուցվածքում։ Աճում է մտավոր աշխատանքով զբաղված աշխատողների, ինչպես նաև սպասարկման ոլորտի աշխատողների թիվը։ 1950-ից մինչև 1968 թվականն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ում «սպիտակ օձիքավորների» թիվը 16 մլն.-ից աճել է մինչև 26,6 մլն. մարդու, այսինքն ավելացել է գրեթե 80%-ով։ Բանվոր դասակարգի ներսում էական տեղաշարժեր են կատարվում դեպի որակյալ և կիսաորակյալ բանվորների տեսակարար կշռի աճը, բանվորներ, որոնք կազմում են ժամանակակից բանվոր դասակարգի կորիզը, բարձրանում է նրանց ընդհանուր կրթական մակարդակը։ Գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու կապակցությամբ բարդանում է միագումար բանվորի կազմը. նրան են այժմ վերաբերում ինժեներատեխնիկական և գիտական աշխատողները, որոնք մասնակցում են գիտական մշակումներին և արտադրության պրոցեսին։

Թեկուզև միջին խավերի տեսակարար կշիռը հիմնականում պահպանվում է, բայց նրանց կառուցվածքում նույնպես փոփոխություններ են տեղի ունենում։ Մեծանում է ծառայողների ու մտավորականության բաժինը, որոշ չափով աճում է քաղաքային մանր բուրժուազիան, բայց խիստ կրճատվում է գյուղական մանր բուրժուազիայի և հատկապես մանր ֆերմերների խավը։

Նոր բովանդակություն է ստանում բուրժուազիայի՝ իշխող դասակարգ հասկացությունը։ Բացի «ուղղակի» կապիտալիստ-սեփականատերից, հանդես է գալիս «անուղղակի կապիտալիստը», ի դեմս կապիտալիստ-կառավարիչների վերնախավի։ Դա ժամանակակից մոնոպոլիստական բուրժուազիայի բաղկացուցիչ մասն է, որը կազմավորվել է կապիտալ-սեփականությունից կապիտալ-ֆունկցիայի բաժանման հետևանքով։ Կառավարիչների վերնախավը սեփականատերերի հետ օգտվում է ուրիշի աշխատանքի շահագործման պտուղներից։ Կապիտալի տերեր չլինելով, նրանք հավելյալ արժեքի իրենց բաժինն ստանում են ոչ թե ձեռնարկատիրական եկամտի ձևով, այլ բարձր աշխատավարձի առանձնահատուկ ձևով։ Այսպիսով, ժամանակակից տիրող դասակարգի կորիզը կազմում են մոնոպոլիստական օլիգարխիան և նրա հետ անմիջականորեն կապված պետական-մոնոպոլիստական հասարակության տնտեսական, ռազմական, կառավարչական և քաղաքական կազմակերպիչները։

Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, տեխնիկայի առաջադիմությունը կապիտալիզմի ժամանակ «ուղեկցվում է, ինչպես և կապիտալիզմի մյուս բոլոր առաջադիմությունները, նաև «հակասությունների առաջադիմությամբ», այսինքն նրանց սրմամբ և ընդլայնմամբ»։ Տեխնիկական առաջադիմությունը մարդկանց

բարօրության համար օգտագործելու պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի անընդունակության ամենաշշմեցուցիչ օրինակը գործազրկությունն է, որն ընդունել է տեխնոլոգիական բնույթ, այսինքն արտադրությունից դուրս նետված բանվորական ուժն այլևս չի կարող կիրառում գտնել որակավորման կորստի, պրոֆեսիայի անհետացման և այլ պատճառներով։ Այն պահպանվում է նաև վերելքի ու տնտեսական անկման ժամանակաշրջաններում։ Զարգացած կապիտալիզմի երկրներում 50-ական թվականներին գործազուրկ էին 6,8 միլիոնից մինչև 9,6 միլիոն մարդ, 60-ական թվականներին այն տատանվում էր 5,9 միլիոնից մինչև 8,4 միլիոնի միջև։ Գործազրկությունը խրոնիկական բնույթ ընդունեց Միացյալ Նահանգներում (բանվորական ուժի 5—6%-ը). ավելին, այդ երկրում առաջացել է մինչև 30 միլիոն մարդու հասնող կայուն «սոցիալական հատակ», որի կենսամակարդակը զգալիորեն ցածր է ապրուստի համար անհրաժեշտ պայմանների պաշտոնական մինիմումից։ «Աղքատության դեմ պայքարի», «մեծ հասարակության» և կառավարական այլ ծրագրերի ձախողումը ցույց է տալիս, որ կապիտալիստական Ամերիկայի պայմաններում այդ պրոբլեմն անլուծելի է։ Արտադրական կարողությունների խրոնիկական թերբեռնվածությունը ԱՄՆ-ում 60-ական թվականներին կազմել է 14-ից մինչև 22%։

Ժամանակակից կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական բնույթի ուժեղացումը

Տեխնիկական առաջադիմությունն օգտագործելով միլիտարիստական նպատակով, կապիտալիզմը մարդկային հանճարի նվաճումներն ուղղում է հենց մարդկության դեմ։ Առաջանում են կենսական միջավայրի պաշտպանության, ջրերի, հողի, օդի, կենսոլորտի աղտոտման կանխման նոր պրոբլեմներ, քաղաքների ճգնաժամ, առողջապահության ճգնաժամ և այլն։

1957—1958 թթ. ցիկլային տնտեսական ճգնաժամը և ԳՏՀ-ի պայմաններում արտադրողական ուժերի հետագա զարգացումը խթանեցին ժամանակակից կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական բնույթի ուժեղացմանը։ Վիթխարի մոնոպոլիաների աճի հետ մեկտեղ առաջացան նոր վիթխարի կորպորացիաներ՝ կոնգլոմերատներ, որոնք միավորում են արտադրական պրոցեսների միասնությամբ չկապված և միանգամայն տարբեր արտադրանք թողարկող ձեռնարկությունների մեծ խմբեր։ Մոնոպոլիստական կապիտալիզմի բոլոր երկրներում 50-ական թվականների երկրորդ կեսից և հատկապես 60-ական թվականներին ուժեղանում է մոնոպոլիաների միահյուսման պրոցեսը, որը հանգեցնում է ազգային հարստությունների կենտրոնացմանը վիթխարի կորպորացիաների նեղ խմբերի ձեռքում։ ԱՄՆ-ում 1950—1954 թթ. տեղի է ունեցել ձեռնարկությունների 1424 միահյուսում, 1960—1964 թթ. 4366, իսկ 1965—1969 թթ. գրանցվել է 14453 միահյուսում։ Ֆրանսիայում 1967 թ. նշված է մասնավոր ձեռնարկությունների երկու անգամ ավելի միահյուսում, քան 1956 թ.։ Միահյուսման հետևանքով առաջացած ֆինանսա-արդյունաբերական խմբերը մոնոպոլացնում են արտադրանքի առանձին տեսակների և նույնիսկ արդյունաբերության ամբողջ ճյուղերի արտադրությունը։

Վիթխարի մասշտաբների են հասել դրամական ռեսուրսների համակենտրոնացումն ու կենտրոնացումը խոշորագույն բանկերի ու ապահովագրական ընկերությունների ձեռքում։ Կապիտալիստական աշխարհի 25 խոշորագույն բանկերի ակտիվների գումարը գերազանցում է 260 մլրդ. դոլարից։ ԱՄՆ-ում միայն այն բանկերը, որոնք ունեն 1 մլրդ. դոլարից ավելի գումարի հասնող ակտիվներ, իրենց ձեռքում պահում են երկրի բոլոր բանկային ակտիվների մոտ 42%-ը։ Վերջին տասնամյակներին ֆինանսական կապիտալն ընդլայնել է մանր ավանդների, թոշակային ֆոնդերի հաշվին մոնոպոլիաների վարկավորման հը-

նարավորությունները, դրանով իսկ աշխատավորների եկամուտների մի մասը կապիտալի վերածելով։ Բանկային ու արդյունաբերական կապիտալի սերտաճումը հասցնում է այն բանին, որ գլխավոր կապիտալիստական երկրներում էկոնոմիկայի զգալի մասը գտնվում է ծայրահեղ նեղ խմբերի վերահսկողության տակ. 1968 թ. ԱՄՆ-ում հաշվվում էր մոտ 20 այդպիսի ֆինանսական խումբ, Անգլիայում՝ 10—20, Ֆրանսիայում՝ 10, ԳՖՀ-ում առավել հզոր խմբավորումները կապված են երեք առաջատար բանկերի հետ։

Ժամանակակից պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը մոնոպոլիաների վիթխարի ուժի միավորումն է պետության հետ, որն ինքն է հանդես գալիս որպես խոշորագույն սեփականատեր։ Պետական կապիտալ ներդրումներն իմպերիալիստական երկրներում միջին հաշվով հասնում են բոլոր կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 30%-ին։ 1960-ական թվականներին խիստ ավելացավ պետական գնումների գումարը։ Ազգային եկամտի մեջ պետական ծախսերի տեսակարար կշիռը, ներառյալ գնումները, ծառայություններն ու կապիտալ ներդրումները, 1950 թ. համեմատությամբ 1969 թ. աճեց ԱՄՆ-ում 21,3-ից մինչև 31,5%-ի, Անգլիայում՝ 39,3-ից մինչև 49,2%-ի, Ֆրանսիայում՝ 30,5-ից մինչև 39,5%-ի, Իտալիայում՝ 28,5-ից մինչև 36,7%-ի։ Մոնոպոլիաների էկոնոմիկայի օգտին էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման կարևորագույն նյութական բազան պետական բյուջեն է, որի միջոցով վերաբաշխվում է ազգային եկամտի 40—50%-ը։ Նրանցից խոշոր գումարներ են հատկացվում ռազմականացմանը։ Միայն 1960—1968 թթ. ՆԱՏՕ-ի երկրներն ուղղակի ռազմական կարիքների համար ծախսել են ավելի քան 800 մլրդ. դոլար։

Մոնոպոլիաների նեղ շրջանի ձեռքում արտադրության ու կապիտալի հանրայնացման պրոցեսը չի վերացնում մրցակցությունը ազգային և միջազգային մասշտաբներով։ Այն չի վերացնում նաև էկոնոմիկայի մասնակի պետականացումը։ Դրա պատճառը բաշխման ու փոխանակության մասնավոր կապիտալիստական և պետական-մոնոպոլիստական սկզբունքի պահպանումն է։ Արտադրության հանրայնացման աճող մակարդակի և այդ արտադրության արդյունքների պահպանվող մասնավոր-սեփականատիրական յուրացման միջև եղած այդ հակասությունը դրսևորվում է պարբերական ճգնաժամերում, առանձին երկրների, առանձին ճյուղերի անհավասարաչափ զարգացման, արտադրության աճի ցածր տեմպերի մեջ։ Սոցիալական ասպարեզում այդ հակասությունն արտահայտվում է կապիտալի դեմ աշխատանքի մղած պայքարի սրման մեջ։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը փորձում է կապիտալիզմի այդ հիմնական հակասության նոր մակարդակին հարմարվել արտադրության ու կապիտալի հետագա համակենտրոնացման պետական խրախուսման միջոցով, իսկ այնտեղ, ուր անհրաժեշտ է, նաև սեփականության պետականացման, արտադրության կարգավորման, տնտեսական աճի հանձնարարական ծրագրեր կազմելու և, վերջապես, սոցիալական ու աշխատանքային հարաբերությունները այն հաշվով կարգավորելու միջոցով, որպեսզի ճնշի կամ թուլացնի աշխատավորության պայքարն ընդդեմ կապիտալիստական շահագործման։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլին բնորոշ է պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի կողմից գիտատեխնիկական առաջադիմության հնարավորության օգտագործումը տնտեսական աճի տեմպերի բարձրացման, շահույթների ավելացման, աշխատավորների շահագործման ավելի նուրբ մեթոդներ ստեղծելու համար։ Միևնույն ժամանակ 50-ական թվականների վերջերից ակնհայտ դարձավ, որ կապիտալիստական էկոնոմիկայի «հակաճգնաժամային» կարգավորման պատահական, կարճժամկետ և միակողմանի միջոցառումներն անբավարար են կապիտալիզմի հակասությունների

զարգացմանն ընդդիմանալու համար։ Երկու համաշխարհային սիստեմների մրցության ու պայքարի պայմաններում իմպերիալիզմը ելք է որոնում տնտեսական զարգացման երկարատև ծրագրավորում ու պրոգնոզավորում մտցնելու մեջ։ Խոսքն այն մասին է, որ պետությունը ֆինանսական օլիգարխիայի օգտին իր վրա է վերցնում երկարատև ժամանակաշրջանի համար նախատեսված տնտեսական քաղաքականության մշակումը, որը մոնոպոլիաներին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու տնտեսական կոնյունկտուրայում և ժամանակին միջոցներ ձեռնարկելու արտադրությունը, կապիտալ ներդրումները կրճատելու կամ ընդլայնելու, իր պլանները պետական վարկային ու բյուջետային քաղաքականության հետ կապակցելու համար։ Պետական ծրագրավորումը կրում է ինդիկատիվ բնույթ, որը պարտադիր չէ կատարման համար։ Բնական է, որ մոնոպոլիաները զարգացման պետական ծրագրերի հանձնարարականները ընդունում են, եթե դրանք չեն հակասում մենաշնորհային շահույթներ ստանալու շահերին։ Ամբողջությամբ վերցրած մոնոպոլիաների, մոնոպոլիստների ամբողջ դասակարգի օգտին իրականացվող պետական-մոնոպոլիստական կարգավորումը որոշակի չափով կարող է շոշափել առանձին մոնոպոլիաների շահերը։ Սակայն, թեկուզև այն մեղմացնում է տնտեսական կոնյունկտուրայի տատանումները և ձևափոխում տնտեսական ցիկլը, պետական-մոնոպոլիստական կարգավորումը չի կարող հաղթահարել կապիտալիստական զարգացման ցիկլային բնույթը։ Ավելին, ի տարբերություն ճգնաժամերի զարգացման «դասական» պատկերի, երբ արտադրության անկման հետ մեկտեղ տեղի էր ունենում նաև շուկայական գների նվազում, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի օրոք ճգնաժամերի ժամանակաշրջաններում շարունակում է զարգանալ ինֆլյացիան։ Պատահական չէ, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում ավելի ու ավելի հաճախակի են առաջանում վալյուտա-ֆինանսական համակարգի ճգնաժամեր։

Կապիտալիստական զարգացման ցիկլային բնույթն իրեն վերստին դրսևորեց 60-ական թվականներին։ 1969 թ. օգոստոսից և ամբողջ 1970 թ. ընթացքում ԱՄՆ-ում գրեթե անընդհատ նվազում էր արտադրության ծավալը։ 1967 թ. ճգնաժամը հարվածեց ԳՖՀ-ի էկոնոմիկային։ 60-ական թվականների վերջի—70-ական թվականների սկզբի ճգնաժամերը ցույց տվեցին, որ իմպերիալիզմի հարմարվելը երկու սիստեմների պայքարի պայմաններին, գիտատեխնիկական հեղափոխությանը, գաղութային սիստեմի փլուզմանը ուղեկցվում է կապիտալիստական էկոնոմիկայի գլխավոր հակասության՝ ժամանակակից արտադրության հասարակական բնույթի և պետական-մոնոպոլիստական կարգավորման միջև գոյություն ունեցող հակասության սրմամբ։ Ճգնաժամերն արտահայտում են ամբողջ ժողովրդի օգտին հասարակական սեփականություն և արտադրության հասարակական կարգավորում մտցնելու հասունացած անհրաժեշտությունը։

Համաշխարհային կապիտալիստական տնտեսության ճգնաժամը և իմպերիալիստական ինտեգրացիան Արևմտյան Եվրոպայում

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի օրգանական մասը համաշխարհային կապիտալիստական տնտեսության ճգնաժամն է։ Այդ ճգնաժամը արտահայտվում է երեք գլխավոր հատկանիշներով՝ մի մեծ խումբ երկրներում կապիտալիստական հասարակարգի լիկվիդացման և համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորման ու զարգացման կապակցությամբ համաշխարհային կապիտալիստական տնտեսության ոլորտի կրճատմամբ, գաղութային սիստեմի փլուզման և տնտեսության համաշխարհային սոցիալիստական սիստեմի հետ զարգացող երկրների տնտեսական կապերի զարգացման հետևանքով համաշխարհային կապիտալիզմի կողմից

նախկին գաղութային ծայրամասերի շահագործման հնարավորությունների կրճատմամբ, գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում իմպերիալիստական երկրների տնտեսական զարգացման անհավասարաչափության ուժեղացմամբ և, հետևապես, ավելի նեղ դարձած կապիտալիստական աշխարհի տնտեսական վերաբաժանման հարցերի գծով իմպերիալիստական երկրների միջև հակասությունների ուժեղացմամբ։

Փոփոխված իրադրությունը մի շարք նոր երևույթներ ծնեց տնտեսական շուկաների վերաբաժանման, կապիտալի արտահանման ձևերում, տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման մեթոդներում։ Կարևոր նոր երևույթներից մեկը պետք է համարել տնտեսական ինտեգրացիան։ Ժամանակակից արտադրողական ուժերի զարգացման տեսակետից տնտեսական ինտեգրացիան հանդես է գալիս որպես տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման գործում առաջադիմական միտումի արտահայտություն, որը տեղի է ունենում ինչպես սոցիալիստական, այնպես էլ կապիտալիստական սիստեմներում։ Սոցիալիստական ինտեգրացիայի և կապիտալիստական ինտեգրացիայի միջև գոյություն ունեցող սկզբունքային տարբերությունը պայմանավորված է սոցիալ-տնտեսական կարգերի բնույթով և նրա սոցիալական նպատակներով։ Կապիտալիզմի պայմաններում այդ միտումն օգտագործվում է առավել հզոր մոնոպոլիաների նեղ խմբերի շահերի օգտին և նրանց տնտեսական էքսպանսիայի ձևն է, ինչի կապակցությամբ էլ այն ձեռք է բերում ռեակցիոն գծեր։

Ինտեգրացիան ոչ պատահականորեն է առաջացել Արևմտյան Եվրոպայում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Արևելյան ու Հարավարևելյան Եվրոպայի երկրների հեռանալը կապիտալիզմից և արևմտաեվրոպական իմպերիալիզմի թուլանալն ինտեգրացիոն քաղաքականության բուրժուական գաղափարախոսներին ու պրակտիկներին ստիպեցին տնտեսական ինտեգրացիան դիտել որպես Արևմտյան Եվրոպայում կապիտալիզմի ամրապնդման միջոցի, հակադրել այն սոցիալիստական երկրներին։ Մոնոպոլիստական ինտեգրացիան առնչվում էր հեղափոխական բանվորական շարժման դեմ մղվող պայքարում իմպերիալիստական փոխօգնության համակարգի ստեղծման և զարգացող երկրներում կոլեկտիվ գաղութատիրության իրականացման պլանների հետ՝ այդ երկրները որպես գաղութային շահագործման օբյեկտ պահպանելու նպատակով։ Վերջապես, Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստական ինտեգրացիայի շարժառիթներից մեկը հակասությունների ու մրցակցային պայքարի աճն էր 50-ական թվականներին ամրապնդված արևմտաեվրոպական մոնոպոլիաների և ԱՄՆ-ի մոնոպոլիստական կապիտալի միջև։ Եվրոպայի ինտեգրացիան, իրենից ներկայացնելով միջազգային պետական-մոնոպոլիստական միության մի առանձնահատուկ ձև, եվրոպական մոնոպոլիաների կողմից օգտագործվում էր կապիտալիստական հանրայնացման մասշտաբների գծով ԱՄՆ-ից ետ մնալը հաղթահարելու համար։ Միաժամանակ այդ ինտեգրացիայում արտահայտվեցին Արևմտյան Եվրոպայի առաջատար իմպերիալիստական երկրների միջև գոյություն ունեցող հակասությունները, որոնք հասցրեցին 2 մրցակցող ինտեգրացիոն խմբավորումների՝ Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի (ԱԱԵԱ) առաջացմանը։ Արևմտաեվրոպական առավել խոշոր ինտեգրացիոն պետական-մոնոպոլիստական կազմակերպությունը ԵՏՀ-ն է, կամ «Ընդհանուր շուկան»։ Երկար բանակցություններից հետո ԳԴՀ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Նիդեռլանդները, Բելգիան և Լյուքսեմբուրգը 1957 թ. Հռոմում ստորագրեցին մի հատուկ պայմանագիր, որը նախատեսում էր 12 տարվա ընթացքում բոլոր մաքսավճարների փուլերով վերացում՝ առևտրական հոսանքների համապատասխան սահմանափակմամբ հանդերձ, «անձանց, կապիտալների ու ծառայություն-

ների» ազատ տեղաշարժ, ընդհանուր քաղաքականության անցկացում գյուղատնտեսական արտադրության, տրանսպորտի և այլ ասպարեզներում։ 1962 թ. ԵՏՀ-ին միացավ Հունաստանը, մեկ տարի անց՝ Թուրքիան։ 1963 թ. ձևակերպվեց 18 աֆրիկյան երկրների (հիմնականում նախկին ֆրանսիական գաղութների) «ասոցիացիան» ԵՏՀ-ի հետ։ Վերջերս ԵՏՀ-ին միացան Անգլիան, Դանիան և Իռլանդիան։

Ինտեգրացիայի այլանդակ բնույթն արտահայտվում է նրանում, որ այն ենթարկված է իմպերիալիզմի քաղաքական նպատակներին, ուղղված է սոցիալիստական երկրների, բանվորական շարժման դեմ, հանդիսանում է ՆԱՏՕ-ի ագրեսիվ բլոկի տնտեսական բազան։ Չվերացնելով միջիմպերիալիստական հակասությունները, արևմտաեվրոպական ինտեգրացիան խորացնում է համաշխարհային կապիտալիստական տնտեսության ճգնաժամը։ Այդ ճգնաժամն ուժեղանում է նաև այն կապակցությամբ, որ առաջատար իմպերիալիստական տերությունների և զարգացող երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած ճեղքվածքն ընդլայնվում է։ Իմպերիալիզմն ի վիճակի չէ ներկայումս գոյություն ունեցող համաշխարհային կապիտալիստական տնտեսության շրջանակներում լուծել հավասարաչափ զարգացման ապահովման պրոբլեմը։

Միջիմպերիալիստական հակասությունների սրումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում սրվում է մրցակցային պայքարը, վերածնվում են իմպերիալիստական մրցակցության հին և առաջանում նոր հանգույցներ։ Համաշխարհային շուկաների համար մղվող պայքարը նոր գծեր է ստանում մոնոպոլիստական կապիտալիզմի երկրների զարգացման մակարդակի ընդհանուր համահարթման կապակցությամբ։ Նախկին առանձնահատուկ գծերը՝ անգլիական իմպերիալիզմի գաղութային բնույթը, ֆրանսիականի վաշխառուական, ճապոնականի ռազմաֆեոդալական բնույթը կորցրել են իրենց երբեմնի նշանակությունը։ Մրցակցային պայքարն ուժեղացնում է նաև կապիտալիստական երկրների տնտեսական կառուցվածքի հարմարվելը ԳՏՀ-ի կապակցությամբ առաջացած միջազգային մասնագիտացման և կոոպերացման նոր պայմաններին։ Ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում գիտության զարգացման մակարդակը, որն այդ բնագավառը ևս վերածում է կատաղի մրցադաշտի։ 50-ական թվականների կեսերից միջիմպերիալիստական հակասությունների զարգացման վրա ներգործում էր, արդյունաբերության զարգացման համեմատությամբ, միջազգային ապրանքափոխանակության գերազանցող զարգացումը։ Բացի այդ, իմպերիալիստական երկրների միջև կատարվող առևտուրն ավելի արագ էր աճում, քան վերջիններիս և զարգացող երկրների միջև կատարվող առևտուրը։ Պատկերը նույնն է կապիտալի արտահանման բնագավառում. կապիտալի արտահանման ծանրության կենտրոնը, որը նախկինում բնութագրվում էր զարգացած երկրներից դեպի թույլ զարգացածները կատարվող շարժմամբ, տեղափոխվել է մեկ իմպերիալիստական երկրից դեպի մյուսը (հատկապես ԱՄՆ-ից դեպի Եվրոպա) կապիտալ արտահանելու բնագավառը։

50-ական թվականների կեսերից կապիտալիստական աշխարհի էկոնոմիկայում ԱՄՆ-ի ունեցած հեգեմոնիան թուլացավ։ Եթե 1948 թ. ԱՄՆ-ի տեսակարար կշիռը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության մեջ կազմում էր 54%, ապա 1978 թ. 39,8%։ Այդուհանդերձ ունենալով ֆինանսական մեծ հզորություն, ԱՄՆ-ը ներխուժում է նույնիսկ ամենազարգացած կապիտալիստական երկրների էկոնոմիկան։ Ամերիկյան մոնոպոլիաները վերահսկում են Արևմտյան Եվրոպայի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ար-

տադրության 80%-ը, ավտոմոբիլային արտադրության մեկ երրորդը և այլն։

Վերջին երկու տասնամյակների ընթացքում առաջ են անցել Ճապոնիան և ԳՖՀ-ն, իրենց ետևում թողնելով Ֆրանսիային ու Անգլիային։ Իմպերիալիստական տարբեր հակասությունների ամբողջ բազմազանությամբ ու միահյուսմամբ հանդերձ դրանք տեղի են ունենում ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա և առանկյունու մեջ։

Դասակարգային պայքարի աճը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում բանվոր դասակարգի պայքարն ավելի ու ավելի որոշակիորեն է ընդունում բանվոր դասակարգի ու բուրժուական պետության և մոնոպոլիաների միացյալ ուժի միջև անտագոնիզմի ձև։ Արհմիությունները, որոնք ավանդաբար պայքար էին մղում կապիտալիստների դեմ աշխատավարձի բարձրացման, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության համար, ընդդեմ գործազրկության, սոցիալական ապահովման բարելավման համար, արհմիութենական իրավունքների ու ազատությունների համար և այլն, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում բոլոր այդ հարցերի ասպարեզում անմիջականորեն ընդհարվում են նաև կապիտալիստական պետության հետ, նրա տնտեսական քաղաքականության հետ, անխուսափելիորեն մոտենում են նոր պահանջների և ամենից առաջ՝ մոնոպոլիաների անսահման իշխանության սահմանափակման պահանջներին։

Աճել են գործադուլային շարժման մասշտաբները։ Սովորական են դարձել գործադուլները, որոնք միաժամանակյա պայքարի մեջ են ներգրավում տասնյակ և հարյուր հազարավոր բանվորների. կապիտալիստական երկրները պարբերաբար ցնցվում են համազգային հզոր գործադուլներից։ Եթե 50-ական թվականների կեսերին ինդուստրիալ զարգացած երկրներում ամեն տարի գործադուլ էր անում 13—15 միլիոն մարդ, ապա 60-ական թվականներին գործադուլավորների թիվն ամեն տարի գերազանցում էր 40 միլիոն մարդուց։ 1965—1969 թթ. գործադուլավորների ընդհանուր թիվը կազմում էր 165 մլն., իսկ 1970-ից մինչև 1974 թ. ընկած ժամանակաշրջանում այն հասավ 200 մլն. մարդու։

Բանվոր դասակարգի և դեմոկրատական ուժերի մի շարք խոշոր ելույթներ 60-ական թվականներին կապված էին նեոֆաշիստական միտումների դեմ ուղղված վճռական դիմադրության հետ (Իտալիա, Ֆրանսիա)։ 1960—1961 թթ. քաղաքական հզոր գործադուլներ տեղի ունեցան Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում։ 1968 թ. մայիսին Ֆրանսիայում տեղի ունեցավ ամբողջ հետպատերազմյան պատմության մեջ ամենախոշոր սոցիալ-քաղաքական պայթյունը, որը լուրջ հետևանքներ ունեցավ քաղաքական պայքարի զարգացման համար։ 1969 թ. փետրվարին, այսինքն Ֆրանսիայում տեղի ունեցած այդ իրադարձությունից մի քանի ամիս անց, աշխատավորների զանգվածային ելույթներով համակվեց եվրոպական մի այլ երկիր՝ Իտալիան։ Այստեղ տեղի ունեցավ 18 մլն. աշխատավորների, այսինքն վարձու աշխատանքով զբաղված գրեթե բոլոր աշխատողների ընդհանուր գործադուլ։

Բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական պայքարն ավելի ու ավելի սերտորեն է միահյուսվում բնակչության տարբեր խավերի ընդհանուր դեմոկրատական շարժման հետ։ Նույնիսկ 60-ական թվականների կեսերի համեմատաբար բարձր տնտեսական կոնյունկտուրայի իրադրության մեջ կապիտալիստական հասարակությունը զգում էր սոցիալական բողոքի զանգվածային շարժումների հարաճուն ճնշումը։ Դա վկայում էր այն մասին, որ զանգվածային պայքարի պատճառը ոչ թե ժամանակավոր հանգամանքներն էին, այլ կապիտալիզմի հակասությունների զարգացման խորքային պրոցեսները։ Զանգվածային բնույթ է ստանում հակապատերազմական շարժումը։ ԱՄՆ-ում չտեսնված սրության է հասել պայքարն ընդդեմ ռասայական, ազգային ու սոցիալական անիրավահավասարության։ «Նոր ձախ» շարժման ծավալումը, որն ընդգրկում է ուսանողական լայն զանգվածներ և մտավորականությանը, վկայում է բուրժուական հասարակության մեջ օպոզիցիոն տարրերի ակտիվացման մասին։ Դեմոկրատական պայքարի ոլորտի ընդլայնման մասին է խոսում նաև նրա ընթացքում ազգային հարցի առաջադրումը զարգացած կապիտալիզմի մի շարք երկրներում (Անգլիա, Բելգիա, Կանադա և այլն)։

Կապիտալի աշխարհում բանվորական շարժման, սոցիալական բողոքի զանգվածային շարժումների աճն արտացոլում է ժամանակակից պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ամենավերջին տարիներս ծավալված սոցիալ-քաղաքական ճգնաժամը։ Այդ նոր երևույթն արտահայտվում է ոչ միայն սոցիալական անտագոնիզմների աճի, բանվոր դասակարգի նկատմամբ կիրառվող բուրժուական քաղաքականության ճգնաժամի մեջ, այլև ամենուրեք գների բարձրացման, դոլարի ճգնաժամի կապակցությամբ միջազգային վալյուտային հարաբերությունների և միջազգային կապիտալիստական վալյուտա-ֆինանսական համակարգի կազմալուծման մեջ, հետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում համաշխարհային շուկաներում չտեսնված առևտրական մրցակցային պայքարի սրման մեջ, զարգացած կապիտալիզմի երկրների մեծ մասում գործազրկության պրոբլեմի սրման և տնտեսական աճի տեմպերի պարբերական անկումների, էներգետիկ, հումքային և տնտեսական ճգնաժամերի սրման մեջ։

Ժամանակակից պայմաններում, երբ կապիտալիստական երկրներում ավելի ու ավելի սերտորեն են միահյուսվում դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարը, բարենպաստ նախադրյալներ են ստեղծվում սոցիալական տարբեր ուժերի հակամոնոպոլիստական դաշինքների զարգացման համար. սոցիալական այդ ուժերն իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, բանվոր դասակարգի գլխավորությամբ, ընդունակ են սահմանափակելու մոնոպոլիաների իշխանությունը, իրականացնելու արմատական վերափոխություններ, որոնք ճանապարհ կբացեն հանուն սոցիալիզմի հետագա պայքարի համար։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ 3

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորման նախադրյալները

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը ելակետ դարձավ սոցիալ-տնտեսական նոր ֆորմացիայի կազմավորման և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորման համար։

Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը ազդարարեց համաշխարհային պրոլետարական հեղափոխության դարաշրջանի սկիզբը։ Սակայն միջազգային իմպերիալիզմը Ռուսաստանում նրա շղթայի ճեղքումից հետո դեռևս բավականաչափ ուժեղ էր մյուս երկրներում հեղափոխական շարժման հարձակմանն ընդդիմանալու համար։ Հեղափոխական ալիքի տեղատվությունից հետո շարունակվում էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության առաջին փուլից, երբ հաղթանակած սոցիալիզմը սահմանափակված էր մեկ երկրի շրջանակներով, երկրորդ փուլին, երբ սոցիալիզմի հաղթանակի հետևանքով մի շարք երկրներում առաջացավ համաշխարհային սիստեմ, անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների հասունացումը։

Կապիտալիզմի փտումն ու պարազիտիզմը ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանում իրենց առանձնապես այլանդակ արտահայտությունը գտան բուրժուազիայի տիրապետության ամենառեակցիոն ու ագրեսիվ ֆաշիստական ձևերի հաստատման և իմպերիալիզմի կողմից երկրորդ համաշխարհային պատերազմ սանձազերծելու մեջ։ Իրական սպառնալիք առաջացավ ազատության, անկախության և շատ երկրների ժողովուրդների նույնիսկ ֆիզիկական գոյության համար։

Աշխարհում գոյություն ուներ միայն մեկ ուժ, որն ընդունակ էր ջախջախելու ֆաշիզմը՝ դա Սովետական Միությունն էր, որը դարձավ բոլոր առաջադիմական ուժերի հենարանը և բոլոր երկրների ժողովուրդներին ոգեշնչեց ֆաշիստական ագրեսիայի դեմ պայքարելու համար։ Կոմունիստական կուսակցությունների գլխավորած միջազգային պրոլետարիատը դարձավ յուրաքանչյուր երկրում և ինտերնացիոնալ մասշտաբով ֆաշիզմին ու ռեակցիային դիմադրելու կորիզը։ Ֆաշիզմի դեմ մղված պայքարի ընթացքում դրսևորվեց բանվոր դասակարգի պատմական մեծ դերը, դասակարգ, որը վերածվեց ժամանակակից դարաշրջանի հասարակական առաջադիմության առաջատար ուժի։

Պրոլետարիատի և նրա ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների ազդեցության վիթխարի աճի պայմաններում ֆաշիզմի դեմ մղված պայքարը չէր կարող սահմանափակվել բուրժուական դեմոկրատիայի շրջանակներով ու ձևերով։ Մի շարք երկրներում այդ պայքարն ընդունեց ոչ միայն հակաֆաշիստական, այլև հակաիմպերիալիստական բնույթ և ավարտվեց ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունների հաղթանակով։

Ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունները սոցիալիզմի համաշխարհային սիստեմի վերածվելու առաջին փուլն են

Ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունները, լինելով համաշխարհային սոցիալիստական հեղափոխության զարգացման օղակներ, պայմանավորված էին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սրմամբ։ Արևելյան ու Հարավարևելյան Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում հեղափոխության զարգացումն ունեցավ իր առանձնահատկությունները, որոնք կախված էին յուրաքանչյուր առանձին երկրի ազգային ու պատմական առանձնահատկություններից։ Որոշ երկրներում, օրինակ՝ Բուլղարիայում, խիստ տարբերություն հեղափոխության դեմոկրատական և սոցիալիստական փուլերի միջև չնկատվեց։ Մյուս երկրներում, օրինակ՝ Հունգարիայում և Ռումինիայում, որոշակիորեն նկատվում էին հեղափոխության դեմոկրատական ու սոցիալիստական փուլերը։ Սակայն ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունների զարգացման ամբողջ բազմազանությամբ հանդերձ նրանց միավորում էր մեկ ընդհանուր բնորոշ գիծ՝ բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների ղեկավար դերը հեղափոխության մեջ։

Հեղափոխության ծնունդ ժողովրդա-դեմոկրատական պետություններն ըստ էության շրջանում դեռ պրոլետարիատի դիկտատուրայի պետություններ չէին, այնտեղ իրականացվում էր պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան։ Այդ իշխանությունը հենվում էր ժողովրդական զանգվածների լայն ճակատի վրա, որոնք բանվոր դասակարգի ղեկավարությամբ պայքարել էին օտարերկրյա ֆաշիստական զավթիչների և երկրի ներսում եղած նրանց գործակիցների դեմ։ Դեմոկրատական ռեֆորմների անցկացման ընթացքում առաջանում ու աճում էր մոնոպոլիստական խոշոր կապիտալի ու կալվածատերերի մեկուսացումը, ընդլայնվում էր ժողովրդական դեմոկրատիայի սոցիալ-տնտեսական բազան։

Ժողովրդա-դեմոկրատական երկրներում ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունների՝ համեմատաբար արագորեն սոցիալիստականի վերաճելու պրոցեսին նպաստեցին արտաքին պատմական այն պայմանները, որոնք առաջացել էին երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում և ֆաշիզմի ջախջախման գործում Սովետական Միության խաղացած վճռական դերը արմատապես փոխեցին միջազգային իրադրությունը։ Ֆաշիզմի կողմից ստրկացված երկրների ազատագրումը սովետական բանակի միջոցով վիթխարի օգնություն էր ազգային ուժերի համար՝ ռեակցիայի ու ֆաշիզմի դեմ նրանց մղած պայքարում։ Այդ երկրներում սովետական զորքերի գտնվելը կաշկանդում էր ռեակցիոն ուժերի գործողությունները և խոչընդոտ դառնում քաղաքացիական պատերազմ սանձազերծելու և օտարերկրյա ինտերվենցիա կազմակերպելու համար։ Ազատագրված երկրներին վիթխարի տնտեսական օգնություն ցույց տալով պատերազմից ավերված տնտեսության վերականգնման գործում, Սովետական Միությունը նպաստեց ժողովրդա-դեմոկրատական պետությունների քաղաքական անկախության ամրապնդմանը։

Նախորդ զարգացման ամբողջ ընթացքը և ամենից առաջ ֆաշիզմի դեմ մղված պայքարը Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի երկրների ժողովրդական զանգվածներին նախապատրաստեցին բանվոր դասակարգի ղեկավարությամբ, կոմունիստական կուսակցությունների գլխավորությամբ 1945—1948 թթ. ժամանակաշրջանում սոցիալական խոր վերափոխություններ և սոցիալիստական հեղափոխություններ կատարելու։ Չնայած այն բանին, որ դրեթե այդ բոլոր երկրներում կապիտալիզմի զարգացումը հասել էր միջին մակար-

դակի, սոցիալիստական հեղափոխությունների հասունացման պրոցեսներն այնտեղ տարբեր ձևով էին անցնում[8]։

Բարդ պայմաններում էր տեղի ունենում ազգային-ազատագրական հեղափոխությունների՝ սոցիալիստականի վերաճելու պրոցեսը Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրներում։ Երկրագնդի նաև այդ շրջանում Սովետական Միությունը վճռական դեր խաղաց դասակարգային ուժերի հարաբերակցության փոփոխման գործում։ Սովետական բանակի կողմից Հյուսիսային Չինաստանում ճապոնական զորքերի ջախջախումից հետո զգալիորեն հեշտացան չինական ժողովրդական հեղափոխության հաղթանակի պայմանները։ 1949 թ. հոկտեմբերի 1-ին հռչակվեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը և պայմաններ ստեղծվեցին հեղափոխության ժողովրդա-դեմոկրատական փուլից խաղաղ ձևով սոցիալիստական հեղափոխությանն անցնելու համար։

Ճապոնական ռազմամոլների ջախջախումը բարերար ազդեցություն ունեցավ նաև Կորեայի ու Վիետնամի ժողովուրդների կողմից անկախություն նվաճելու ընթացքի վրա։ Այդ երկրներում ճանապարհ բացվեց ժողովրդա-դեմոկրատական բնույթի սոցիալական վերափոխումների համար՝ դրանց սոցիալիստական հեղափոխության վերաճելու հեռանկարով հանդերձ, սակայն կորեական և վիետնամական ժողովուրդների խաղաղ ստեղծարար աշխատանքը դժվարանում էր ԱՄՆ-ի իմպերիալիստական քաղաքականության պատճառով, որն արտահայտվեց այդ երկրների պառակտման և այնտեղ ուղղակի ռազմական ինտերվենցիա կատարելու մեջ։

Այսպիսով, ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունների հետևանքով Եվրոպայում և Ասիայում առաջացան մի ամբողջ խումբ երկրներ, որոնք դուրս պրծան կապիտալիզմի ոլորտից։ Կապիտալիզմի սիստեմից դուրս եկած և սոցիալիստական զարգացման ուղին բռնած Ալբանիան, Բուլգարիան, Հունգարիան, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը, Լեհաստանը, Ռումինիան, Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Չինական Ժողովրդական Հանրապետությունը, Կորեական Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետությունը, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը և 1959 թ. Կուբայում ժողովրդական հեղափոխության հաղթանակից հետո Կուբայի Հանրապետությունը Սովետական Միության և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության հետ միասին կազմեցին սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։

Լինելով միջազգային բանվոր դասակարգի գլխավոր նվաճումը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմը շարունակում է աշխարհի հեղափոխական վերափոխման գործը, որն սկսել է Հոկտեմբերը[9]։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի զարգացման առաջին փուլը (1945 թ. մինչև 1950 թ. սկիզբը) բնութագրվում է գլխավորապես երկկողմանի հիմքի վրա առևտրի ընդլայնման միջոցով երկրների քաղաքական ու տնտեսական սերտ համագործակցության սկզբունքների ու ձևերի մշակմամբ։ Առաջին փուլում ժողովրդա-դեմոկրատական պետությունների ամրապնդման համար հատուկ նշանակություն ուներ Սովետական Միության տնտեսական օգնությունը։

Ժողովրդական դեմոկրատիայի երկրներում պետական ու քաղաքական կարգերի ձևավորման հետպատերազմյան բարդ ժամանակաշրջանում Սովետական Միությունը իր միջազգային դիվանագիտական գործունեությամբ նրանց իսկապես անգնահատելի աջակցություն ցույց տվեց։ 1948 թ. հանելով

[8] Այդ մասին տե՛ս սոցիալիստական երկրների հետպատերազմյան պատմության վերաբերյալ գլուխներում։

[9] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին», ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, Երևան. 1967, էջ 51։

արդյունաբերական արտադրության նախապատերազմյան մակարդակին և 1949 թ. վերացնելով ատոմային զենքի նկատմամբ ԱՄՆ-ի մենաշնորհը, ՍՍՀՄ-ը իր տնտեսական, քաղաքական և ռազմական ամբողջ հզորությամբ ձախողեց միջազգային իմպերիալիզմի փորձերը՝ կապիտալիստական կարգերը վերականգնելու ժողովրդա-դեմոկրատական երկրներում։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմավորումը հնարավորություն տվեց ստեղծելու սոցիալիստական ընկերակցությունը «ազատ, սուվերեն ժողովուրդների, որոնք գնում են սոցիալիզմի ու կոմունիզմի ուղիով, միավորված են շահերի ու նպատակների ընդհանրությամբ, միջազգային սոցիալիստական համերաշխության սերտ կապերով»[10]։

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների ընդհանրության հիման վրա յուրաքանչյուր սոցիալիստական երկրի ներսում սկսեց ձևավորվել միջազգային տնտեսական ու քաղաքական հարաբերությունների նոր տիպ։ Այդ պրոցեսի արտահայտությունը եղավ 1949 թ. սոցիալիստական երկրների միջազգային ռեգիոնալ տնտեսական կազմակերպության՝ Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) ստեղծումը, որի մեջ մտան յոթ երկրներ՝ Բուլգարիան, Հունգարիան, ԳԴՀ-ն, Լեհաստանը, Ռումինիան, ՍՍՀՄ-ը, Չեխոսլովակիան։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի զարգացման երկրորդ փուլը, նրա կոնսոլիդացիան

50-ական թվականների սկզբին սոցիալիստական ընկերակցության երկրները ձեռնամուխ եղան սոցիալիզմի հիմքերի կառուցմանը։ Այդ ուղու վրա ձեռք բերվելիք հաջողությունները շատ բանով կախված էին այս կամ այն երկրի առանձնահատկությունների հաշվառմամբ հանդերձ էկոնոմիկայի սոցիալիստական հանրայնացման ընդհանուր սկզբունքների ու ծրագրի վճռական կենսագործումից։

Արտադրության հիմնական միջոցների նկատմամբ կապիտալիստական սեփականության լիկվիդացումից և սոցիալիստական սեփականության հաստատումից հետո առաջացավ սոցիալիզմի և կոմունիզմի պլանաչափ կառուցման համար նյութատեխնիկական բազա ստեղծելու անհետաձգելի խնդիրը։ Այդ խնդիրը, ինչպես ցույց տվեց Սովետական Միության համաշխարհային պատմական փորձը, կարող էր լուծվել միայն ժողովրդական տնտեսության ինդուստրացման միջոցով։

Այն ընդհանուր, գլխավոր օրինաչափությունները, որոնք գործում էին Սովետական Միությունում մանրապրանքային գյուղատնտեսական արտադրության վերակառուցման ժամանակ, ընդհանուր տարածում գտան։ Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի հիման վրա պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը և գյուղացիական տնտեսությունների արտադրական կոոպերացման միջոցով այդ գյուղացիության ներգրավումը սոցիալիստական շինարարության մեջ օրինք դարձան բոլոր այն երկրների համար, որոնք կանգնեցին սոցիալիզմի դրոշի ներքո։ Գյուղացիական տնտեսությունների արտադրական կոոպերացումը իրականացվում էր հետևյալ կարևորագույն սկզբունքների խստիվ պահպանման պայմաններում՝ 1) կամավորություն և կոոպերացման նյութական շահավետություն գյուղացիության համար, 2) պետական օգնություն կոոպերատիվներին, 3) պետության և գյուղացիների շահերի զուգակցում կոոպերատիվ տնտեսություն վարելու դեպքում, 4) կոոպերատիվ արտադրության պլանաչափ զարգացում՝ առնչված ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության զարգացման հետ։

Լենինյան կանխատեսությունն այն մասին, որ բոլոր ազգերը կգան դեպի

[10] «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիր», Երևան, 1967, էջ 20։

սոցիալիզմ, բայց յուրօրինակություն կմտցնեն սոցիալիստական վերափոխությունների տեմպերի ու բնույթի մեջ, հաստատվում է երկրների մի մեծ խմբի սոցիալիստական շինարարության փորձով։ Մի քանի երկրներում ի հայտ է եկել կոոպերացման առանձնահատկություն։ Կոոպերատիվների կազմավորման ժամանակ պահպանվել է գյուղացիների սեփականությունը հողի նկատմամբ, իսկ մի շարք այլ երկրներում՝ կոոպերատիվների անդամների ռենտային եկամուտները՝ կոոպերացված հողի չափերի համապատասխան։ Հաշվի առնելով ազգային տնտեսությունների կառուցվածքը, բնակչության դասակարգային կազմը, մշակույթը, պատմականորեն ձևավորված ավանդույթներն ու սովորությունները, անհրաժեշտ էր տարբեր ձևով մոտենալ վերափոխման մեթոդների, եղանակների և ձևերի ընտրությանը, օրինակ, արաթային անասնապահական տնտեսությունների վերափոխմանը Մոնղոլիայում և լեհական կամ բուլղարական գյուղատնտեսության փոխադրմանը սոցիալիզմի ուղու վրա։

Սոցիալիզմին անցնելու ազգային ձևերի ու մեթոդների բազմազանությունն ամբողջությամբ վերցրած ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում հանդես է գալիս որպես սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունների արտահայտություն։ Սոցիալիստական վերափոխությունների իրականացման ձևերի ու մեթոդների այդ բազմազանությունը համապատասխանում է մարքսիզմ-լենինիզմի ոգուն։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրներում հասարակական-քաղաքական կարգերի բազան արտադրության հիմնական միջոցների նկատմամբ համաժողովրդական սեփականությունն է։ Սոցիալիզմի այդ հիմնական սկզբունքի հետևանքով սոցիալիստական պետությունների հասարակական-քաղաքական կառուցվածքում տեղի ունեցան փոփոխություններ, այնտեղ չկան շահագործող դասակարգեր՝ կալվածատերեր և կապիտալիստներ։ Այսպիսով, դասակարգային անտագոնիզմ ծնող սոցիալ-տնտեսական հիմքերը վերացված են սոցիալիստական երկրների հասարակական կյանքից։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների հասարակական-քաղաքական կարգերը հիմնվում են սոցիալիստական արտադրության բանվորների ու ծառայողների և կոոպերացված գյուղացիության վրա, որոնք այժմ կազմում են այդ երկրների բնակչության մեծամասնությունը։ Սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքին համապատասխան կազմվում են սոցիալիստական երկրների նաև քաղաքական կազմակերպությունները, զարգանում է սոցիալիստական դեմոկրատիան։ Այն կոչված է ապահովելու աշխատավորության ավելի ու ավելի լայն խավերի գիտակից մասնակցությունը սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցմանը։ Դա ձեռք է բերվում միայն հետևյալ պայմանով՝

1) երբ բանվոր դասակարգի մարքսիստական-լենինյան կուսակցությունը մնում է հասարակության ղեկավար ուժը, ներկայացնելով բոլոր աշխատավորների արմատական շահերը.

2) երբ սոցիալիստական պետությունը որպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմին սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման հիմնական գործիքն է.

3) երբ ապահովվում է արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականությունը և դրա հիման վրա՝ ամբողջ ժողովրդական տնտեսության պլանային զարգացումը տեխնիկական բարձր մակարդակով և ժողովրդի բարեկեցության օգտին.

4) երբ իրականացվում է «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը.

5) երբ մարքսիստական-լենինյան կուսակցությունների ղեկավարած արհմիութենական, երիտասարդական, կոոպերատիվ և աշխատավորների զանգվածային հասարակական այլ կազմակերպություններ իրենց գործունեությունն ուղղում են ամբողջ ժողովրդի դաստիարակությանը գիտական կոմունիզմի գաղափարախոսության ոգով, սոցիալիզմի եղբայրական երկրների և ամբողջ աշխարհի աշխատավորության հետ բարեկամության ոգով.

6) երբ անց է կացվում այնպիսի արտաքին քաղաքականություն, որը հիմնված է պրոլետարական սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա։

Սոցիալիստական շինարարության այդ հիմնական օրինաչափություններն ու գծերը հատուկ են ցանկացած երկրի սոցիալիստական հասարակությանը, անկախ ազգային և այլ առանձնահատկություններից։ Պատմական փորձը հաստատեց Վ. Ի. Լենինի միտքն այն մասին, որ սոցիալիզմի զարգացման գործում ազգային առանձնահատկությունները «կարող են վերաբերել ոչ ամենագլխավորին», այսինքն սոցիալիզմի շինարարության ոչ հիմնական օրինաչափություններին։

Կատարելով սոցիալիստական ֆունկցիաներ, սոցիալիստական երկրների քաղաքական կազմակերպությունները ոչ միայն չեն անտեսում, այլև ամեն կերպ զարգացնում են անցյալից ժառանգած առաջադիմական այն ավանդույթները, որոնք ձևավորվել են շահագործողների դեմ ժողովրդական զանգվածների մղած պատմական պայքարում։ Միայն սոցիալիզմի ժամանակ են պայմաններ ստեղծվում իսկական դեմոկրատիայի, ազատության, հավասարության և եղբայրության իրականացման համար, ժողովրդական սուվերենության սկզբունքների, օրինականության, ընտրական իրավունքի կենսագործման համար, անձի իրական իրավունքների ու ազատության ապահովման համար։ Սոցիալիստական հասարակության մեջ առաջացել են նաև նոր սկզբունքներ ու ինստիտուտներ, որոնք ձևով և բովանդակությամբ նախադեպը չունեն անցյալում։

Ձևավորված քաղաքական սիստեմը սոցիալիզմի երկրներում գործում է այնքան արդյունավետ, որքան լիովին են իրականացվում սոցիալիզմի ընդհանուր օրինաչափությունները, և ամենից առաջ մարքսիստական-լենինյան կուսակցությունների ղեկավար դերը հասարակության զարգացման գործում։ Սակայն որպես բանվոր դասակարգի ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության ղեկավար դերը չի բացառում բազմակուսակցության առկայությունը սոցիալիստական հասարակության քաղաքական կազմակերպության մեջ։

Սոցիալիստական հեղափոխության համար մղված պայքարի պայմաններում համաշխարհային սոցիալիստական սիստեմի մի քանի երկրներում ձևավորվել է բազմակուսակցություն որպես բնակչության առանձին ոչ պրոլետարական աշխատավորական խավերի հետ բանվոր դասակարգի դաշնակցային հարաբերությունների քաղաքական ձև։ Ներկայումս սոցիալիզմի եվրոպական երկրներում գործում են դեմոկրատական տարբեր կուսակցություններ. Բուլղարիայում՝ բուլղարական հողագործական ժողովրդական միությունը, ԳԴՀ-ում՝ քրիստոնեական-դեմոկրատական միությունը, լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, գյուղացիական դեմոկրատական կուսակցությունը, ազգային-դեմոկրատական կուսակցությունը, Լեհաստանում՝ միացյալ գյուղացիական կուսակցությունը և դեմոկրատական կուսակցությունը։ Այդ դեմոկրատական կուսակցությունների շատ ներկայացուցիչներ կարևոր պաշտոններ են գրավում կառավարական և ներկայացուցչական հիմնարկություններում։

Սոցիալիստական երկրների հասարակության քաղաքական կազմակերպության մեջ զգալի դեր է խաղում ֆաշիզմի դեմ մղված ազգային-ազատագրական պայքարի պրոցեսում առաջացած ազգային ճակատը։ Որպես հասարակական-քաղաքական կազմակերպություն կամ շարժում ազգային ճակատը քաղաքական

տարբեր կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների համագործակցության ձևերից մեկն է, կազմակերպություններ, որոնք ճանաչել և ընդունել են կոմունիստական կուսակցության ղեկավար դերը։ Ազգային ճակատի կազմակերպությունները տարբեր երկրներում կառուցված են տարբեր կերպ՝ հայրենական ճակատը Բուլղարիայում և աշխատավոր ժողովրդի սոցիալիստական միությունը Հարավսլավիայում գոյություն ունեն որպես անհատական անդամությամբ զանգվածային կազմակերպություններ։ Ազգային ճակատը Չեխոսլովակիայում, ժողովրդի միասնության ճակատը Լեհաստանում և սոցիալիստական միասնության ճակատը Ռումինիայում հիմնված են կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների կոլեկտիվ անդամության վրա։ Վերջապես, ԳԴՀ-ի ազգային ճակատը և Հունգարիայի հայրենական ժողովրդական ճակատը ոչ թե կազմակերպություններ են, այլ զանգվածային շարժում, որը չունի ոչ կոլեկտիվ, ոչ էլ անհատական անդամություն։ Ազգային ճակատի կազմակերպություններն ու շարժումը սոցիալիզմի երկրներում մասսաների սոցիալիստական դաստիարակության գործուն դպրոցներ են, որոնք իրենց հերթին ազգային ճակատի կազմակերպությունների միջոցով ակտիվորեն ներգործում են սոցիալիստական պետության քաղաքականության ձևավորման վրա։

Սոցիալիզմի հիմքերի կառուցման ժամանակաշրջանն ուղեկցվում էր յուրաքանչյուր երկրի պետական կարգերի ամրապնդմամբ։ Առանձին վերցրած յուրաքանչյուր երկրում ծագում էին այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը հրնարավոր էր միայն սոցիալիզմի երկրների փոխադարձ համագործակցության պայմանով։

Միջազգային իմպերիալիզմի ագրեսիվության աճի և Արևմտյան Գերմանիայում միլիտարիզմի վերածնման հետ եվրոպական սոցիալիստական երկրներն ստիպված էին 1955 թ. ստեղծել Վարշավայի պայմանագրի պաշտպանական կազմակերպությունը։ Իր բնույթով Վարշավայի պայմանագիրը ծառայում է բացառապես պաշտպանական նպատակների և կանգնած է Եվրոպայի ու ամբողջ աշխարհի ժողովուրդների անվտանգության պաշտպանության դիրքերում։

Սկսած 1949 թ., երբ ստեղծվեց ՏՓԽ-ն, մինչև 1956 թ. սոցիալիստական երկրների համագործակցությունն ընդգրկում էր գլխավորապես առևտրական ոլորտը, գիտատեխնիկական նվաճումների և տեխնիկական փորձի փոխանակումը։ ՏՓԽ-ի VII նստաշրջանը, որը կայացավ 1956 թ. մայիսին, բացեց այդ կազմակերպության գործունեության և սոցիալիստական երկրների համագործակցության զարգացման հաջորդ փուլը։ Ստեղծվեցին ՏՓԽ-ի մշտական հանձնաժողովներ, որը նպաստեց ժողովրդատնտեսական պլանների ուղղակի համաձայնեցմանը, սոցիալիստական երկրների տնտեսության կոնկրետ ճյուղերում մասնագիտացմանն ու կոոպերացմանն անցնելուն։ Այդ փուլի զարգացման փորձը և ՏՓԽ-ի հեռանկարներն ընդհանրացվեցին 1961 թ. դեկտեմբերին «Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման հիմնական սկզբունքները» փաստաթղթում։

Սոցիալիստական երկրների ընկերակցությունը ժամանակակից փուլում

50-ական թվականների վերջերին—60-ական թվականների սկզբին սոցիալիստական երկրներն ավարտեցին սոցիալիզմի հիմքերի ստեղծումը և ձեռնամուխ եղան զարգացած սոցիալիստական հասարակության կառուցմանը։ Այդ փուլում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի համար բնորոշ է այն, որ տնտեսական համագործակցության կենտրոնը տեղափոխվեց արտադրության ոլորտը։ Սակայն դա ամենևին չի նշանակում արտաքին առևտրի դերի նսեմացում։ ՏՓԽ-ի երկրներն ավելի ու ավելի լայնորեն ու ակտիվորեն են օգտագործում արտաքին առևտուրն իրենց ժողովրդատնտեսական պլանների իրականացման ժամանակ։

Սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության բարդ մեխանիզմում, որը մշտապես կատարելագործվում է, կարևորագույն դեր է խաղում աշխատանքի միջազգային բաժանման պրոցեսի կարգավորումը։ Սոցիալիզմին սկզբունքորեն խորթ է տնտեսական զարգացման ավտարկիստական ուղղությունը, ընդլայնված վերարտադրության պրոցեսը առանձին ազգային տնտեսությունների շրջանակներով արհեստականորեն սահմանափակելու, «եզրափակելու» ձգտումը։ Լենինը նշում էր, որ «սոցիալիզմի ժամանակ աշխատավոր մասսաներն իրենք ոչ մի տեղ չեն համաձայնի մեկուսացման՝ զուտ տնտեսական... դրդապատճառներով...»[11]։ Հիանալիորեն հասկանալով, թե ժամանակակից փուլում ինչպիսի հզոր ուժ է աշխատանքի միջազգային բաժանումը, սոցիալիստական երկրներն իրենց էկոնոմիկայի զարգացումը հիմնում են իրենց միջև աշխատանքի սոցիալիստական բաժանման և կամավոր կոոպերացման վրա, որը բացառում է ազգային շահերի որևէ նսեմացում, ապահովում է առանձին վերցրած յուրաքանչյուր երկրի վերելքը և ամբողջությամբ վերցրած համաշխարհային սոցիալիստական սիստեմի հզորության ամրապնդումը։ ՏՓԽ-ի մեջ մտնող սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում առաջին պլան է մղվում սոցիալիստական տնտեսական ինտեգրացիան։ Այն սոցիալիստական պետությունների ազգային տնտեսությունների աստիճանական մերձեցման, ապա և խոշոր տնտեսական կոմպլեքսների մեջ միավորման երկկողմանի և բազմակողմանի հիմքի վրա կարգավորվող պրոցես է։ Սոցիալիստական ինտեգրացիան պետք է նպաստի սոցիալիստական շինարարության հետագա պլանաչափությանը։ Պլանաչափության գաղափարը, որը եղավ հիմնադիր գաղափարներից մեկը ՏՓԽ-ի ստեղծման ժամանակ, իր մարմնացումը գտավ ժողովրդատնտեսական պլանների կանոնավոր կերպով անցկացվող կոորդինացման մեջ։

Այդ պլանաչափ իրականացվող պրոցեսի հիմքում ընկած է արտաքին տնտեսական կապերի բազմապիսի ձևերի զարգացումը և միջազգային տարբեր կազմակերպությունների (արտադրական, տրանսպորտային, գիտահետազոտական և այլն) ստեղծումը։

60-ական թվականների վերջերին, ՏՓԽ-ի երկրների տնտեսական զարգացման մակարդակների նոր հարաբերակցության, գիտատեխնիկական հեղափոխության ծավալման պայմաններում կարճատև պլանավորումը այլևս չէր կարող բավարարել սոցիալիստական ընկերակցության զարգացման ժամանակակից պահանջները։ ՏՓԽ-ի 20-ամյակի առթիվ, 1969 թ., այդ կազմակերպության XXIII հատուկ նստաշրջանում, որը տեղի ունեցավ ՏՓԽ-ի անդամ երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների ու կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ, հանրագումարի բերվեց համագործակցությունը և ընդունվեց ստրատեգիական որոշում սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի հետագա զարգացման հիմնական ուղղությունների մասին։ Այդ ուղղությունները կոնկրետացվեցին ՏՓԽ-ի անդամ երկրների համագործակցության հետագա խորացման ու կատարելագործման և սոցիալիստական տնտեսական ինտեգրացիայի զարգացման՝ ՏՓԽ-ի XXV նստաշրջանի (1971 թ. հուլիս) կողմից հավանության արժանացած կոմպլեքսային ծրագրում։

Այդ փաստաթուղթն իր մեջ է առել անցյալի փորձի ամբողջ արժեքավորը, ամրապնդել այն բոլորը, ինչը պատմական հեռանկար ունի։ Դրա հետ մեկտեղ այն շատ նոր բան է պարունակում։ Կոմպլեքսային ծրագիրը կազմելու վրա աշխատել են հարյուրավոր լավագույն մասնագետներ, այնտեղ հստակ ձևակերպ-

[11] Վ. Ի. Լենին, երկ, հ. 30, էջ 45—46։

ված են այդ համագործակցության հիմնական նպատակները 20-ամյակում, թվարկված են իրականացման համար նախատեսված ավելի քան 200 խոշոր միջոցառումներ։ Այդ նպատակներն ու միջոցառումներն ուղղված են ՏՓԽ-ի անդամ երկրների ժողովուրդների նյութական ու մշակութային կենսամակարդակի բարձրացմանը, արտադրողական ուժերի քանակական ու որակական ավելի արագ զարգացմանը։ Կոմպլեքսային ծրագիրը ինտեգրացիան բնութագրում է որպես աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման գիտակցորեն ու պլանաչափորեն կարգավորվող պրոցես։

Համաշխարհային սոցիալիստական տնտեսությունը կառուցվում է ամենից առաջ ազգային մասշտաբներով արտադրության սոցիալիստական եղանակի զարգացման հիման վրա։ Դրա հետ միասին միջազգային սոցիալիստական տնտեսական հարաբերություններն սկզբունքորեն չեն տարբերվում տնտեսական այն հարաբերություններից, որոնք գոյություն ունեն առանձին սոցիալիստական երկրների ներսում։ Այդ պատճառով էլ սոցիալիստական երկրների ջանքերի միավորումը հանդես է գալիս որպես օբյեկտիվ անխուսափելիություն (օրինաչափություն)։ Կապիտալիզմի ժամանակ գործում է այլ օրինաչափություն՝ տնտեսության ինտերնացիոնալացման ուղղությամբ կատարված յուրաքանչյուր նոր քայլն իր հերթին ծնում էր և ծնում է տնտեսական պառակտման ուժեր։ Բուրժուական հասարակության արմատական անտագոնիզմն առաջ է բերում ինտեգրացիայի և դեզինտեգրացիայի պրոցեսների միահյուսում։ Վ. Ի. Լենինը, մատնացույց անելով իմպերիալիզմին հատուկ հակադրությունների՝ մոնոպոլիաների և մրցակցության առանձնահատուկ միասնությունը, գրում էր, որ միմյանց հակադիր «հիմունքների» հենց այդ միացումն է էական իմպերիալիզմի համար, հենց դա է նախապատրաստում նրա կրախը։

Սոցիալիստական տնտեսական ինտեգրացիան աշխատանքի միջազգային բաժանման զարգացման, սոցիալիստական երկրների ազգային տնտեսությունների մերձեցման և կոոպերացման պրոցես է ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տնտեսական խնդիրները համատեղ ջանքերով լուծելու և ինտերնացիոնալ տնտեսական կոմպլեքս ստեղծելու համար։

Կոմպլեքսային ծրագիրը նախատեսում է տարբեր ձևեր, ներառյալ տընտեսական քաղաքականության գծով կոնսուլտացիաները, պլանային գործունեության ասպարեզում համագործակցության խորացումը, միջազգային մասնագիտացման ու կոոպերացման, ձեռնարկությունների ու ճյուղերի անմիջական կապերի ընդլայնումը և այլն։ Ընդ որում որպես հիմնական գործիք առաջվա պես մնում է համագործակցությունը պլանային գործունեության բնագավառում, ներառյալ ժողովրդատնտեսական պլանների պրոգնոզավորումն ու կոորդինացումը։ Սոցիալիստական ինտեգրացումը ենթադրում է մի այնպիսի տնտեսական մեխանիզմի ստեղծում, որն էկոնոմիկայի պլանաչափ ղեկավարման հետագա ուժեղացումը զուգակցում է համաշխարհային սոցիալիստական շուկայում ապրանքադրամական հարաբերությունների հաշվառման հետ։

Սկզբունքային քննադատության ենթարկելով «շուկայական սոցիալիզմի» կոնցեպցիաները, սոցիալիստական երկրներն ամենևին էլ չեն մերժում ապրանքային հարաբերությունների նշանակությունը սոցիալիստական էկոնոմիկայի պայմաններում։ Ապրանքադրամական հարաբերությունները հաշվի են առնվել սոցիալիստական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրի մշակման ժամանակ։

Պետական պլանը մնում է որպես սոցիալիստական ինտեգրացման գլխավոր գործիք։

Այսպիսով, ժամանակակից փուլում սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության գլխավոր ձևեր են դառնում երկաբատև ժողովրդատնտեսական պլանների համատեղ ընդունումն ու կոորդինացումը, արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը, գիտատեխնիկական համագործակցությունը, ներառյալ գիտական ու տեխնիկական հետազոտությունների կոորդինացումը; համագործակցությունը տնտեսական օբյեկտների շինարարության բնագավառում, արտաքին առևտրում, վալյուտաֆինանսական ոլորտում, ըստանդարտացման և ունիֆիկացման հարցերում և այլն։ Համագործակցության այդ ձևերի արդյունավետությանը նպաստում են ՏՓԽ-ի շրջանակներում հաջողությամբ գործող միջազգային կազմակերպությունները՝ ՏՓԽ-ի անդամ երկրների էներգասիստեմների Պրագայում գտնվող կենտրոնական դիսպետչերական վարչությունը, առանցքակալային արդյունաբերության համագործակցության Վարշավայում գտնվող կազմակերպությունը, ինտերմետալը՝ Բուդապեշտում, երկաթուղիների համագործակցության Վարշավայում գտնվող կազմակերպությունը, ապրանքատար վագոնների Պրագայում գտնվող ընդհանուր հավաքակայանը և այլն։

Կոմպլեքսային ծրագրին համապատասխան 1971—1975 թթ. պետք է սկսվեր ՏՓԽ-ի անդամ շահագրգռված երկրների ռեսուրսների միավորումը մի այնպիսի կարևոր պրոբլեմի լուծման համար, ինչպիսին է էներգետիկ բազայի զարգացման պրոբլեմը, ինչպես նաև նավթի, գազի, ցեյյուղի, սև մետալուրգիայի արտադրանքի, ազբեստի, ֆոսֆորային պարարտանյութերի արտադրության, մեծ բեռնատարողության բեռնատար ավտոմոբիլներով, կոնտեյներներով ապրանքների փոխադրումն ապահովող միջոցների, գյուղատնտեսության մեքենայացման միջոցների արտադրության մեջ լրացուցիչ կարողություններ ստեղծելու պրոբլեմը։

Գիտական ջանքերի կոորդինացման և հետազոտական աշխատանքների կոոպերացման ասպարեզում 1956 թվականից գործում է Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը։ 1963 թ. ստեղծվել է ՏՓԽ-ի ստանդարտացման ինստիտուտը, 1969 թ. Գիտական և տեխնիկական ինֆորմացիայի միջազգային կենտրոնը։ Առաջարկությունների և գիտական հանձնարարականների պատրաստումը այն առաջնակարգ խնդիրներից մեկն է, որը լուծում է համաշխարհային սոցիալիստական սիստեմի տնտեսական պրոբլեմների միջազգային ինստիտուտը։

Կենտրոնացված պլանավորման շնորհիվ հիմնականում հուսալիորեն ապահովվում է սոցիալիստական երկրների ժողովրդական տնտեսության վերելքի համամասնական և հավասարակշռված բնույթը, երաշխավորվում տնտեսական աճի բարձր և համեմատաբար հավասարաչափ տեմպերը։

ՏՓԽ-ի անդամ երկրներում 1973 թ. ազգային եկամտի արտադրությունը 1950 թ. մակարդակը գերազանցեց 5,7 անգամ։ 1951 թ. մինչև 1953 թ. ընկած ժամանակաշրջանում այդ երկրների բաժինը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ աճեց 18-ից մինչև 33%-ի։ Հնգամյակի (1971—1975) առաջին երեք տարիների ընթացքում ՏՓԽ-ի անդամ երկրների արդյունաբերության համախառն արտադրանքն աճել է 1/4-ով, այդ թվում Բուլղարիայում՝ 32%-ով, Հունգարիայում՝ 21%-ով, ԳԴՀ-ում՝ 20%-ով, Մոնղոլիայում և Լեհաստանում՝ ավելի քան 1/3-ով, Ռումինիայում՝ ավելի քան 43%-ով, ՍՍՀՄ-ում՝ 24%-ով և Չեխոսլովակիայում՝ 21%-ով։ Ժողովրդատնտեսական պլանների իրականացման հիման վրա աճում է ժողովրդական բարեկեցությունը. բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները 1973 թ. աճել են Բուլղարիայում՝ 7,9%-ով, Հունգարիայում՝ 5%-ով, ԳԴՀ-ում՝ 5,6%-ով, Լեհաստանում (ռեալ աշխատավարձը)՝ 10%-ով, ՍՍՀՄ-ում՝ 5%-ով և Չեխոսլովակիայում (դրամական եկամուտները)՝ 6,2%-ով[12]։

[12] «Мир социализма в цифрах и фактах», 1973, Справочник, М., 1974.

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը համաշխարհային հեղափոխական պրոցեսի առաջատար ուժն է

Ինչպես Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, այնպես էլ հետագա սոցիալիստական հեղափոխություններից յուրաքանչյուրն իրենց հիմքում ինտերնացիոնալ բնույթ ունեին, քանի որ դիմակայում էին և դիմակայում են համաշխարհային կապիտալիզմին։ Բայց սոցիալիստական հեղափոխություններն իրենց բնույթով լինելով ինտերնացիոնալ, միևնույն ժամանակ լուծում են նաև ազգային խնդիրներ։ Հենց սոցիալիստական հեղափոխություններ կատարելուց հետո երկրները կարող էին ձեռք բերել իսկական ազգային անկախություն և ազգային սուվերենություն, տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման լիակատար ազատություն, անցկացնել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հետևողական քաղաքականություն։

Այսպես հենց սոցիալիստական երկրների բնույթին համապատասխան, նրանց ծննդյան, զարգացման և ամրապնդման պրոցեսում տեղի է ունենում ազգային և ինտերնացիոնալ խնդիրների լուծման փոխներգործության պրոցես։ Առանձին երկրների ազգային շահերի և նրանց ինտերնացիոնալ ընդհանուր շահերի հետևողական զուգակցումը համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման և ամրապնդման կարևորագույն միջոցն է։ Ազատագրված, սուվերեն ժողովուրդների «համաշխարհային կոոպերատիվ», այլ ոչ թե «գերկենտրոնացված» տնտեսություն՝ այդպիսին է սոցիալիստական ընկերակցության ներկան և ապագան։

Սոցիալիստական պետությունների ազգային և ինտերնացիոնալ խնդիրների ներդաշնակ զուգակցման իսկական և բարձրագույն արտահայտությունը սոցիալիզմի երկրների տնտեսական մերձեցումն է, նրանց ավելի ու ավելի մեծ քաղաքական կոնսոլիդացումը համագործակցության և ներքին գործերին չմիջամտելու հիման վրա։ Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը սոցիալիզմի երկրների միասնության և համախմբվածության այն անսասան հիմքն է, որն ընդունակ է դիմակայելու և հաջող պայքար մղելու միջազգային իմպերիալիզմի դեմ։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը հակաիմպերիալիստական շարժման առաջատար հեղափոխական ուժն է և հենարանը։

Սոցիալիստական սիստեմի ազդեցությունը համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման վրա աճում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ամրապնդմանը համապատասխան։

Առաջնակարգ նշանակություն ունի սոցիալիստական և կապիտալիստական աշխարհի երկրների փոխհարաբերությունների բնույթը։ Պատմական զարգացման օբյեկտիվ պրոցեսը հասցրեց երկու համաշխարհային սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի զուգահեռ գոյակցությանը։ Տարբեր հասարակարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության մասին Լենինի առաջադրած դրույթը դարձել է սոցիալիզմի երկրների միջազգային քաղաքականության կարևորագույն սկզբունքներից մեկը։ Խաղաղ գոյակցության սկզբունքն իմպերիալիստական պետությունների հետ համաձայնողական քաղաքականություն չէ, այլ իմպերիալիստների ագրեսիվ ձգտումների և ժողովուրդների ներքին գործերին խառնվելու նրանց ամեն տեսակ փորձերի դեմ ակտիվորեն պայքարելու ձև։

Միջազգային հարաբերությունների նոր տիպը, որով իրենց քաղաքականության մեջ ղեկավարվում են սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրները, ուղղված է համաշխարհային սոցիալիզմի դիրքերի մշտական ամրապնդմանը, սոցիալիստական պետությունների սերտ համագործակցությանն ու մարտական համախմբվածությանը, այն պետությունների ու ժողովուրդների հակաիմպերիալիստական քաղաքականության պաշտպանությանը, որոնք պայքարում են

ազատության համար ընդդեմ իմպերիալիստական ագրեսիայի, բուրժուական երկրների ռեալիստորեն մտածող այն շրջանների հետ փոխշահավետ համագործակցությանը, որոնք ճանաչում են խաղաղ գոյակցության սկզբունքները, խաղաղության, ժողովուրդների համար սնանկացուցիչ սպառազինությունների մրցավազքի դադարեցման, զինաթափման, պետությունների միջև վիճելի հարցերը բանակցությունների միջոցով լուծելու համար մղվող պայքարը։

Սոցիալիզմի ու խաղաղության պաշտպանության հուսալի միջոցը Վարշավայի պայմանագրի կազմակերպության գործունեությունն է։ Այդ կազմակերպության քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի նստաշրջաններում կոլեկտիվ կերպով քննարկվում են միջազգային կյանքի հանգուցային պրոբլեմները, որոնք անմիջականորեն կապված են խաղաղության ամրապնդման և ժողովուրդների միջև խաղաղ համագործակցության, իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության դեմ մղվող պայքարի հետ։ Հաշվի առնելով իմպերիալիզմի ագրեսիվությունը, սոցիալիստական ընկերակցության երկրները հոգ են տանում սոցիալիստական պետությունների պաշտպանական հզորության անշեղ աճի, պաշտպանության ասպարեզում նրանց սերտ համագործակցության մասին։

Սոցիալիստական պետությունների բազմակողմանի համագործակցության զարգացման, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի՝ որպես այդ համագործակցության հիմքի, սկզբունքների հաստատման հենարան են ծառայում կառավարող կոմունիստական կուսակցությունների միջև գոյություն ունեցող ակտիվ կապերը։ Այդ կապերն ընդունել են կանոնավոր, ընկերական և գործնական բնույթ։

ԳԼՈՒԽ 4

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռումինիայի ազատագրումը։ 1944 թ. օգոստոսի 23-ի ապստամբությունը

1944 թ. օգոստոսին Ռումինիան դուրս եկավ պատերազմից, որը նա մղում էր Հիտլերյան Գերմանիայի կողմում։ Սովետական բանակի հարձակումը, որը ջախջախում էր ֆաշիստական զորքերին, վճռական դեր խաղաց երկրում ժողովրդական հեղափոխության հաղթանակի պայմաններ ստեղծելու գործում։ Նա հզոր խթան եղավ ներքին հակաֆաշիստական ուժերի պայքարի և ռազմաքաղաքական նախադրյալներ ստեղծեց Անտոնեսկուի ֆաշիստական դիկտատուրայի տապալման համար։ Սովետական բանակի՝ իր մասշտաբներով խոշորագույն Յասսի-Քիշնևյան օպերացիան, որը դրեց Ռումինիայի լիակատար ազատագրման սկիզբը, սկսվեց 1944 թ. օգոստոսի 20-ին։ Դրա արդյունքը եղավ Ռումինիայում գտնվող Հիտլերյան բանակների հիմնական ուժերի շրջապատումն ու ջախջախումը։ Գերմանական և ռումինական զինվորական հրամանատարությունն ապարդյուն փորձում էր պաշտպանություն կազմակերպել։ Ֆաշիստական պետական ապարատը քայքայվում էր։

Այդ բարենպաստ պայմաններում ռումինական ժողովուրդը կոմունիստա-

կան կուսակցության ղեկավարությամբ եւավ զինված ապստամբություն։ Օգոստոսի 23-ին թագավորական պալատում ձերբակալվեցին ռազմաֆաշիստական դիկտատոր Անտոնեսկուն ու նրա կառավարության անդամները։ Օգոստոսի 24-ի գիշերը ռումինական բանակի զորամասերը և ապստամբների հայրենասիրական ջոկատները վաղօրոք նշված պլանի համաձայն գրավեցին Բուխարեստի հիմնական ստրատեգիական կետերը՝ մինիստրների խորհրդի, ներքին գործերի մինիստրության շենքերը, կենտրոնական հեռախոսակայանը, ռադիոկայանը և այլն։ Օգոստոսի 24-ի առավոտյան լույս տեսավ «Ազատ Ռումինիա» թերթի առաջին լեգալ համարը, որտեղ հրապարակված էր կոմկուսի դիմումը ժողովրդին։

Հավաքելով թվով մոտ 6 հազ. մարդուց կազմված զորախումբ, հիտլերականները հյուսիսից շարժվեցին դեպի Բուխարեստ։ Միաժամանակ գերմանական ավիացիան քաղաքը ռմբակոծեց։ Առանձնապես ծանր մարտեր տեղի ունեցան Բենյասա օդանավակայանի շրջանում։ Մարտեր էին տեղի ունենում նաև մյուս քաղաքներում, առանձնապես կատաղի մարտեր՝ Պլոեշտիի նավթաարդյունաբերական շրջանում, ուր ապստամբներին օգնության հասան սովետական տանկային զորամասերը։

Բուրժուազիան և կալվածատերերը փորձեցին ապստամբության հաջողությունն օգտագործել իրենց նպատակների համար։ Օգոստոսի 23-ի լույս 24-ի գիշերը, երբ ժողովուրդը մարտնչում էր փողոցներում, նրանք կազմեցին կառավարություն թագավորական համհարզ Կ. Սանատեսկուի գլխավորությամբ։ Գեներալների և շինովնիկների հետ կառավարության մեջ մտան նաև ազգային-դեմոկրատական բլոկի կուսակցությունների ներկայացուցիչները. բլոկի մեջ մտնում էին ազգային-լիբերալ, նացիոնալ-ցարանիստական, սոցիալ-դեմոկրատական և կոմունիստական կուսակցությունները։ Կառավարությունը պարտավորվեց անհապաղ որոշել Ռումինիայի՝ հակահիտլերյան կոալիցիայի կողմն անցնելու հարցը, կնքել զինադադար, երկրի տարածքը մաքրել հիտլերյան զորքերից, դեմոկրատացնել քաղաքական կարգերը։ Բայց Սանատեսկուի կառավարության գործողությունները խիստ տարբերվում էին նրա ծրագրային հայտարարություններից։ Հայրենասիրական ուժերը կռվում էին գերմանական զորքերի դեմ, իսկ ռեակցիոներները փորձում էին հնարավորություն ստեղծել Ռումինիայից նրանց անարգել հեռանալու համար։ «Պատմական» բուրժուական կուսակցությունների պարագլուխները փորձում էին հասնելու այն բանին, որ երկիր մտնի անգլո-ամերիկյան դեսանտ։ Ռումինական ժողովրդի հակաֆաշիստական զինված ապստամբության վերջնական հաղթանակը հնարավոր դարձավ սովետական բանակի սրընթաց հարձակման հետևանքով, որը հիտլերականներին ստիպեց ամբողջ ուշադրությունը դարձնել պաշտպանության կազմակերպմանը և խանդարեց լրացուցիչ ռեզերվներ շարժել ապստամբների դեմ։ Օգոստոսի 31-ին Բուխարեստ մտան Ուկրաինական 2-րդ ռազմաճակատի զորքերը, որոնց ջերմորեն ընդունեցին մայրաքաղաքի բնակիչները։ Սովետական բանակի Բուխարեստ մտնելը կազմալուծեց ռեակցիայի պլանները և ամրապնդեց օգոստոսյան հակաֆաշիստական ապստամբության հաջողությունները։

Ժողովրդական հեղափոխության սկզբնական փուլը (1944 թ. օգոստոսի 23—1945 թ. մարտի 6)

1944 թ. օգոստոսի 23-ի զինված ապստամբությունը նշանավորեց ժողովրդական հեղափոխության սկիզբը երկրում։ Ոչնչացնելով ռազմաֆաշիստական դիկտատուրան, այն առաջին հարվածը հասցրեց բուրժուազիայի և կալվածատերերի դիրքերին։ Անտոնեսկուի դիկտատուրայի տապալումից հետո Ռումինիայի հեղափոխական և դեմոկրատական ուժերի առջև ծառացան մի շարք կարևորագույն քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնց լուծումից էր

կախված երկրի ապագան։ Ժողովրդական հեղափոխության զարգացման համար գործնական մեծ նշանակություն ունեցավ հակահիտլերյան կոալիցիայի երկրների և Ռումինիայի միջև սեպտեմբերի 12-ին Մոսկվայում զինադադարի վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը։ Համաձայնագիրը նախատեսում էր պետական ապարատի արմատական դեմոկրատացում և ֆաշիզմի մնացորդների լիկվիդացում։ Մոսկովյան համաձայնագիրը երաշխավորում էր Ռումինիայի սուվերենությունն ու տարածքային ամբողջականությունը։ 1940 թ. իմպերիալիստական «Վիեննայի արբիտրաժը» ճանաչվեց անվավեր։ Բարենպաստ պայմաններ առաջացան քաղաքական ու հասարակական ամբողջ կյանքի դեմոկրատացման համար։ Ներքին ռեակցիայի դեմ ժողովրդական զանգվածների պայքարը գլխավորեց կոմունիստական կուսակցությունը։ Այդ օրերին երկրի իրադրությունը բարդ էր։ Կառավարության և պետական ապարատի մեջ դեռևս դերակշռում էին բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչները։ Դեմոկրատական ուժերը դեռ պետք է համառ պայքար մղեին իշխանության, երկրի դեմոկրատացման և ֆաշիզմի մնացորդների վերացման համար։ Ժողովրդի կարևորագույն պահանջն էր ագրարային ռեֆորմի իրականացումը և հողի հանձնումը նրանց, ովքեր այն մշակում են։

Այդ բոլոր խնդիրները մտան 1944 թ. աշնանը կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ ստեղծված սոցիալ-դեմոկրատական կուսակցության և դեմոկրատական կազմակերպությունների՝ Պետրու Գրոզայի ղեկավարությամբ «Հողագործների ճակատի», հունգարական աշխատավորների միության (ՄԱԴՈՍ) և այլ կազմակերպությունների կողմից ևս պաշտպանություն գտած ազգային-դեմոկրատական ճակատի (ԱԴՃ) ծրագրի մեջ։ ԱԴՃ-ի սեպտեմբերի 21-ին հրապարակված պլատֆորմում ընդգծվում էր, որ այդ բոլոր խնդիրները կիրագործի «միայն այն կառավարությունը, որը կներկայացնի երկրի բոլոր ազգային ու դեմոկրատական ուժերին և կօգտվի ռումինական ժողովրդի լայն խավերի աջակցությունից»։

Ժողովրդական հեղափոխության առաջին փուլում, մինչև 1945 թ. մարտ 6-ը, իշխանության գլուխ էին կանգնած ռեակցիոն մեծամասնություն ունեցող կառավարությունները։ Այդ պայմաններում պրոլետարիատը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծում էր հասարակական ուժերի լայն կոալիցիաներ, որոնք ընդունակ էին գործելու ընդհանուր պլատֆորմի հիման վրա, հեղափոխության զարգացման ընդհանուր շահերին համապատասխան։ Դա առանձնապես կարևոր էր դասակարգային բարդ կառուցվածք ունեցող մի այնպիսի երկրում, որտեղ ճնշող մեծամասնություն էին կազմում գյուղացիությունը, քաղաքային մանր բուրժուազիան։ Այդ փուլում հեղափոխական ուժերին հարեց նաև բուրժուազիայի մի մասը, որը մասնակցում էր երկրի առջև կանգնած համազգային և հակաֆաշիստական խնդիրների իրականացմանը։

Հեղափոխության կարևորագույն նվաճումներից մեկը այդ փուլում հիտլերյան բանակի հետ փախած կալվածատերերի և ռազմական հանցագործների հողերի բաժանման գործնական իրականացումն էր։ Հեղափոխական վերափոխումների անցկացումը ռումինական գյուղերում ղեկավարում էին ՌԿԿ-ի նախաձեռնությամբ ստեղծված գյուղացիական կոմիտեները։ 1944 թ. աշնանն ու ձմռանը ռումինական գյուղում բորբոքվեց դասակարգային կատաղի պայքար հանուն հողի։

Այդ օրերի մյուս կարևորագույն հեղափոխական պահանջը պետական ապարատի դեմոկրատացման պահանջն էր։ Կառավարության մեջ եղած բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներն ամեն կերպ արգելակում էին այդ պրոցեսը։ Սակայն Կ. Սանատեսկուի նախագահությամբ 1944 թ. նոյեմբերի 4-ին ստեղծված արդեն երկրորդ կառավարության մեջ դեմոկրատա-

կան ուժերն ավելի լայն էին ներկայացված, քան առաջին կառավարության մեջ։ Պրեմիեր մինիստրի տեղակալի պաստը գրավեց Ռումինիայի ականավոր առաջադեմ քաղաքական գործիչ Պետրու Գրոզան, հաղորդակցության ուղիների մինիստր դարձավ ՌԿԿ-ի ներկայացուցիչ Գ. Գեորգիու-Դեժը։ 1944 թ. դեկտեմբերի 6-ին կազմվեց կառավարություն՝ գեներալ Ն. Ռադեսկուի գլխավորությամբ։ Նրա մեջ ԱԴՇ-ի կուսակցությունները պահպանեցին իրենց դիրքերը։ Սակայն ինքը՝ Ռադեսկուն, ռեակցիայի դրածոն էր։

Երկրի դեմոկրատականացման համար մղվող պայքարում այդ ժամանակաշրջանում մեծ դեր խաղացին աշխատավորների զանգվածային միտինգները։ Ռեակցիայի ուժերի դեմ մղված պայքարում ստեղծվում էին հեղափոխական իշխանության մարմիններ՝ ֆաբրիկա-գործարանային և գյուղացիական կոմիտեներ։ Կոմունիստական կուսակցության կոչով 1944 թ. աշնանը և ձմռանը ժողովուրդն ամենուրեք պայքար ծավալեց տեղերում ռեակցիոն իշխանությունները նոր, դեմոկրատական իշխանություններով փոխարինելու համար։ Դա երկրում ժողովրդական հեղափոխության զարգացման կարևորագույն առանձնահատկություններից մեկն էր։ Դեմոկրատական ուժերի հետագա պայքարի համար այդ ժամանակաշրջանում հատուկ նշանակություն ունեցավ նաև սովետա-ռումինական հարաբերությունների զարգացումը։ 1944 թ. նոյեմբերին ՌԿԿ-ն ամենաակտիվ մասնակցություն ցուցաբերեց ՍՍՀՄ-ի հետ բարեկամական կապերի ընկերության (ԱՌԼՈՒՍ) ստեղծման գործում։

Երկրում մղվող դասակարգային և քաղաքական պայքարն առավել մեծ սրության հասավ 1945 թ. հունվար-փետրվարին։ Հունվարի 28-ին ՌԿԿ-ի նախաձեռնությամբ հրապարակվեց ԱԴՇ-ի կառավարական ծրագիրը, որը ժողովրդին կոչ էր անում պայքարել հեղափոխական-դեմոկրատական կառավարության իշխանության համար։ Պրեմիեր մինիստր Ռադեսկուն բացահայտ հանդես եկավ ժողովրդի արդարացի պահանջների դեմ, սպառնալով քաղաքացիական պատերազմով։ Փետրվարի 24-ին կառավարությունը ոստիկանությանը հրաման տվեց կրակ բացել Բուխարեստի աշխատավորական 600-հազարանոց ցույցի վրա։ Սակայն ռեակցիոներների կոպիտ պրովոկացիան հանդիպեց իր նվաճումները պաշտպանելու ժողովրդի հաստատուն վճռականությանը։ Երկրում սովետական բանակի զորամասերի գտնվելը թույլ չտվեց քաղաքացիական պատերազմ սանձազերծել և հեղափոխությունը արյան մեջ խեղդել։ Ժողովրդական բողոքի ալիքը Ռադեսկուի կառավարությանը ստիպեց հրաժարական տալ։ 1945 թ. մարտի 6-ին երկար տատանումներից հետո թագավորը համաձայնեց իշխանությունը հանձնել դեմոկրատական կառավարությանը, «հողագործների ճակատի» պարագլուխ Պետրու Գրոզայի նախագահությամբ։

Անցյալում խոշոր կապիտալիստ և կալվածատեր Պ. Գրոզան 20-ական թվականներին ընտրվել է պառլամենտում և երկու անգամ եղել է բուրժուական կառավարությունների մինիստր։ Սակայն համոզվելով, որ բուրժուա-կալվածատիրական ռեժիմը թշնամի է ռումինական ժողովրդի շահերին, նա հայտարարեց տնտեսական ու քաղաքական բոլոր արտոնություններից իր հրաժարվելու մասին, որով խիստ հարձակումների ենթարկվեց բուրժուական քաղաքական գործիչների կողմից։ 1933 թ. Պետրու Գրոզան գլխավորեց գյուղացիական դեմոկրատական «հողագործների ճակատ» կազմակերպությունը և հետագայում կանգնեց կոմունիստական կուսակցության հետ համագործակցության ուղու վրա։

Պ. Գրոզայի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությունը

1945 թ. մարտի 6-ին իշխանության գլուխ անցած կառավարական կոալիցիայում իր արտահայտությունը գտավ քաղաքական և դասակարգային ուժերի այն հարաբերակցությունը, որը բնութագրվում էր աշխատավորության և բուրժուազիայի մի մասի հետ պրոլետարիատի դաշինքով։ Այդ հարաբերակցությունը 1945—1947 թթ. ընթացքում փոխվում էր հօգուտ աշխատավորության՝ ժողովրդական հեղափոխության խնդիրների իրականացմանը համապատասխան։ Ռեակցիայի ուժերի դեմ բուրժուազիայի մի մասի հետ ժամանակավոր համագործակցությունն ամբողջությամբ վերցրած չէր փոխում ժողովրդական իշխանության բնույթը, որը հաստատվել էր 1945 թ. մարտի 6-ին բանվորների և գյուղացիների դաշինքի հիման վրա։

Դեմոկրատական կառավարության իշխանության գլուխ անցնելուց հետո պետական իշխանությունը դարձավ հեղափոխության հետագա զարգացման գլխավոր գործիքներից մեկը։ Պետրու Գրոզայի կառավարությունն անմիջապես ձեռնամուխ եղավ դեմոկրատական ռեֆորմների իրականացմանը։ 1945 թ. մարտի 22-ին դեկրետ հրապարակվեց ագրարային ռեֆորմի անցկացման մասին։ Բռնագրավվում էին հողային տիրույթների այն ավելցուկները, որոնք գերազանցում էին 50 հեկտարից, ինչպես նաև ռազմական հանցագործների և արտասահման փախած անձանց հողերը։ Բռնագրավված հողերը հանձնվում էին այն գյուղացիներին, որոնք ունեին 5 հեկտարից պակաս հող, կամ լիակատար հողազուրկներին։ Կալվածատերերից բռնագրավված հողի մի մասը հանձնվեց պետական ֆոնդին։ Ռեֆորմի գլխավոր արդյունքը խոշոր կալվածատիրական հողատիրության վերացումն էր և հողազուրկ ու սակավահող գյուղացիների ապահովումը հողով։ Ժողովրդական հեղափոխության զարգացման համար ագրարային ռեֆորմի իրականացումը վիթխարի նշանակություն ունեցավ։ Ռումինիայի բանվոր դասակարգն ի դեմս գյուղացիության այդ ժամանակներից ի վեր ձեռք բերեց իր կայուն դաշնակցին։ Ռեակցիայի տնտեսական դիրքերը զգալիորեն թուլացան։

1945 թ. մարտ-ապրիլին կառավարությունն ընդունեց մի շարք որոշումներ, որոնք ուղղված էին պետական ապարատի ու բանակի դեմոկրատացմանը և դրանց մաքրմանը ռեակցիոներներից, նախկին ֆաշիստներից ու ռազմական հանցագործներից։ Բանակի դեմոկրատացումը հակահիտլերյան պատերազմի շարունակման պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունեցավ։ Պ. Գրոզայի կառավարությունը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի երկիրը պատերազմի ավարտական փուլում առավելագույն ավանդ մուծի հիտլերյան Գերմանիայի ջախջախման գործում։ Ռումինական զինված ուժերը դեռ 1944 թ. սեպտեմբերին մտան Ուկրաինական 2-րդ ռազմաճակատի օպերատիվ ենթակայության տակ և մասնակցեցին Ռումինիայի ազատագրմանը և Հունգարիայի ու Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված հետագա ռազմական օպերացիաներին։ ՌԿԿ-ի ղեկավարությամբ ամբողջ երկրում ընդլայնվեց ռազմաճակատին օգնություն ցույց տալու շարժումը։ Բանվոր դասակարգն իր բոլոր ուժերը միավորեց էկոնոմիկայի վերականգնման համար։ Նավթի հանույթը 1944 թ. սեպտեմբերից մինչև 1945 թ. մայիսն ավելացավ 3 անգամ։

Ժողովրդա-դեմոկրատական իշխանության ձեռք բերած հաջողությունների կարևորագույն պայմանը Սովետական Միության ցույց տված օգնությունն էր Ռումինիային։ 1945 թ. գարնանը Սովետական Միությունը ռումինական կառավարությանը հանձնեց 500 տրակտոր, ինչպես նաև գյուղատնտեսական այլ մեքենաներ։ Սովետական բանակի զինվորներն օգնում էին ռումինական գյուղացիներին դաշտային աշխատանքներում։ 1945 թ. մայիսի 8-ին ՍՍՀՄ-ի և Ռու-

միջի միջև ստորագրվեց համաձայնագիր առևտրի և տնտեսական համագործակցության մասին։ Ռումինիայի պատմության մեջ դա առաջին պայմանագրային ակտերն էին, որոնք կնքվեցին օտարերկրյա պետության հետ լիակատար փոխադարձ հարգանքի, սուվերենության ու իրավահավասարության պահպանման հիման վրա։

Հաշվի առնելով Սովետական Միության հետ համագործակցության հետագա ամրապնդման ռումինական ժողովրդի ձգտումը, սովետական կառավարությունը որոշեց վերականգնել դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև, որոնք խզված էին պատերազմի տարիներին։ Դեսպանությունների պաշտոնական փոխանակությունը տեղի ունեցավ 1945 թ. օգոստոսի 23-ին։

ՌԿԿ համառումինական կոնֆերանսը (1945 թ. հոկտեմբեր)

1945 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ կոմունիստական կուսակցության՝ երկրի ազատագրումից հետո առաջին համառումինական կոնֆերանսը։ ՌԿԿ Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ հանրագումարի բերվեցին բուրժուակալվածատիրական ռեժիմի տարիներին նրա գործունեության արդյունքները և նշվեցին ժողովրդական հեղափոխության առաջին տարում տնտեսական ու քաղաքական զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումները։ Արդեն հեղափոխության առաջին փուլում կոմունիստական կուսակցությունն առաջադրեց ինդուստրացման, երկրում ծանր արդյունաբերության՝ որպես էկոնոմիկայի հիմքի, ստեղծման լոզունգ։ Առաջ քաշվեց երկրի էլեկտրիֆիկացման հարցը։ Հատուկ խոսվեց անգրագիտության վերացման և կրթության ամբողջ համակարգը դեմոկրատական հիմունքներով վերակառուցելու մասին։ Այդ խնդիրները լուծելու համար կոմունիստական կուսակցությունը անհրաժեշտ էր համարում միասնական բանվորական ճակատի և ազգային-դեմոկրատական ճակատի ամրապնդումը, դեմոկրատական բոլոր ուժերի մոբիլիզացումը պառլամենտի առաջիկա ընտրություններում հաղթանակ տանելու համար, բարեկամության ամրապնդումը սովետական ժողովրդի և մյուս ազատասեր ժողովուրդների հետ։

Այդ ծրագրի կենսագործումը հանդիպում էր ներքին ռեակցիայի կատաղի դիմադրությանը, որին ակտիվորեն պաշտպանում էին իմպերիալիստները։ Համոզվելով, որ Պ. Դրոզայի կառավարությունը մտադիր է հետևողականորեն անցկացնել դեմոկրատական վերափոխություններ, 1945 թ. ամռանը թագավորը կառավարությունից պահանջեց հրաժարական տալ և հրաժարվեց ստորագրել իր իսկ ընդունած որոշումներն այն հաշվով, որպեսզի դրանց տա «ոչ սահմանադրական» բնույթ։ Այդ այսպես կոչված «թագավորական գործադուլը» տևեց հինգ ամիս։

Ռեակցիայի բացահայտ հարձակում էին 1945 թ. նոյեմբերի 8-ի իրադարձությունները, երբ Միհայ թագավորի ծննդյան օրվա տոնակատարության պատրվակով ցույց կազմակերպվեց։ Թագավորական պալատի առջևի հրապարակում նորից արյուն թափվեց, ֆաշիստականացած բանդիտների զոհեր դարձան 9 բանվորներ։ Այդ օրը թագավորին պաշտպանող ռեակցիոներների ցույցեր տեղի ունեցան նաև Պլոեշտիում, Բրաշովում, Տիմիշոարայում և այլ քաղաքներում։ Դաշնակից վերահսկիչ խորհրդում արևմտյան իմպերիալիստական տերությունների ներկայացուցիչները փորձում էին ռումինական ռեակցիայի հարձակումներն օգտագործել որպես պատրվակ Ռումինիայի ներքին գործերին միջամտելու համար։ Նրանք պաշտոնապես բողոքեցին Պ. Դրոզայի կառավարության դեմոկրատական միջոցառումների դեմ, պնդելով, թե նա իբր «ներկայացուցչական չէ»։ Նրանք էլ կազմակերպեցին նաև «թագավորական գործադուլը»։ Սակայն, հենվելով Սովետական Միության ամուր դիրքի վրա, որը վերականգնելով դիվանագիտական հարաբերությունները Ռումինիայի հետ, պաշտոնապես ճանաչեց Պ. Դրոզայի կառավարությունը, դեմոկրատական ուժերը վճռականորեն մերժեցին երկրի ներքին գործերին միջամտելու կոպիտ փորձերը։ Բազմաթիվ միտինգներում ժողովրդական զանգվածներն իրենց հաստատ վճռականությունը հայտնեցին պաշտպանելու հեղափոխական իշխանությունը։ Խոշոր գործարանների բանվորներն ակտիվորեն մասնակցեցին դավադիրների բանդաների լիկվիդացմանը, սաբոտաժնիկների մերկացմանը։

Երկրի դեմոկրատական հասարակայնության հետևողական պաշտպանությանն ու հավանությանը հանդիպեց Անտոնեսկուի գլխավորությամբ պատերազմի գլխավոր հանցագործների դատապարտումը դատարանի կողմից, որը տեղի ունեցավ 1946 թ. մայիսի 6-ից մինչև 17-ը Բուխարեստում։

Դեմոկրատական կուսակցությունների բլոկի հաղթանակը 1946 թ. ընտրություններում

1946 թ. նոյեմբերին տեղի ունեցան ռումինական պառլամենտի ընտրությունները, որոնք առաջին անգամ անց էին կացվում ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի։ Նախընտրական կամպանիայի ընթացքում պայքարը «պատմական» կուսակցությունների շուրջ համախմբված ռեակցիայի և կոմունիստական կուսակցության գլխավորած դեմոկրատական ուժերի միջև բորբոքվեց նոր ուժով։ Երկրի դեմոկրատականացման դեմ մղված պայքարում առաջին պլան մղվեց նացիոնալ-ցարանիստական կուսակցությունն այն հաշվով, որ այն պաշտպանություն կգտնի գյուղացիության կողմից։ Սակայն այդ հաշիվները չարդարացան։

Կոմունիստական կուսակցությունը 1946 թ. ամռանը մեծ աշխատանք կատարեց ընտրությունների նախապատրաստության ուղղությամբ։ ՌԿԿ-ի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ստեղծվեց դեմոկրատական կուսակցությունների բլոկը (ԴԿԲ), որի մեջ մտան կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, «հողագործների ճակատը» և «պատմական» կուսակցություններից պառակտված առանձին (ձախ) խմբավորումներ։ ԴԿԲ-ի ծրագիրը պաշտպանություն գտավ հունգարական աշխատավորների միության կողմից։ 1946 թ. նոյեմբերի 19-ին ընտրություններն ապահովեցին ԴԿԲ-ի վճռական հաղթանակը. ԴԿԲ-ն ստացավ տրված բոլոր ձայների մոտ 80%-ը։ Դեմոկրատական կուսակցությունների բլոկի կառավարությունը վերստին գլխավորեց «հողագործների ճակատի» պարագլուխ Պ. Դրոզան։

Ռումինիայի ներքին ու միջազգային դրության ամրապնդումը (1946—1947)

1946—1947 թթ. Ռումինիայի տնտեսական դրությունը դեռևս շարունակում էր մնալ ծանր։ Պատերազմի տարիներին առավել մեծ վնասներ կրեցին տրանսպորտը և նավթի արդյունաբերությունը՝ ռումինական էկոնոմիկայի գլխավոր ճյուղերը։ Գյուղատնտեսության մեջ դրությունը բարդացավ 1945—1946 թթ. երաշտների պատճառով, որոնք վնասեցին հացահատիկային շրջանները։ Երկրում աճում էր ինֆլյացիան, արժեզրկվում էր դրամը։ Ռումինիայի էկոնոմիկայում դեռևս իր դիրքերը պահպանած կապիտալիզմը դրանք օգտագործում էր ժողովրդական հեղափոխության հետագա զարգացման դեմ մղած պայքարում։ 1947 թ. սկզբին գոյություն ուներ մոտ 48 հազ. մասնավոր ձեռնարկություն՝ ավելի քան 40 մլրդ. լեյ կապիտալով։ Ձեռնարկատերերը սաբոտաժի էին ենթարկում երկրի տնտեսական վերականգնումը այն հույսով, որ անվստահություն կսերմանեն կոմունիստական կուսակցության քաղաքականության հանդեպ։ Կապիտալիստների սաբոտաժի հետևանքով 1947 թ. չէր գործում արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների մեկ հինգերորդը։

Այդ պայմաններում Պ. Դրոզայի կառավարությունը ՌԿԿ-ի նախաձեռնու-

թյամբ անցկացրեց մի շարք միջոցառումներ, որոնք քայքայեցին ռեակցիայի տնտեսական դիրքերը։ 1946 թ. դեկտեմբերի 20-ին հրապարակվեց պետական բանկի ազգայնացման մասին օրենքը, որի համաձայն այդ բանկն սկսեց ֆինանսական վերահսկողություն իրականացնել մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների գործունեության նկատմամբ։ 1947 թ. անցկացվեց դրամական ռեֆորմ, որը հարված հասցրեց կապիտալիստական և սպեկուլյատիվ աշխարհի դիրքերին։ Այդ նույն թվականին վերակազմվեց արդյունաբերության և առևտրի մինիստրությունը, արդյունաբերության հիմնական ճյուղերում ստեղծվեցին պետական արդյունաբերական վարչություններ, վերացվեցին մոնոպոլիստական միավորումները՝ կարտելներն ու տրեստները։ Այսպիսով, արդեն այդ ժամանակաշրջանում անցկացվեցին այնպիսի ռեֆորմներ, որոնք ուղեկցվեցին հակակապիտալիստական ուղղվածություն։ Մի շարք օրենքներ սահմանափակում էին կապիտալիստական հարաբերությունների ոլորտը նաև գյուղում։ Կոմունիստական կուսակցությունը և ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը վճռական հարձակում էին կազմակերպում նախկին իշխող դասակարգերի տնտեսական դիրքերի վրա։

Ներքին ռեսուրսների մոբիլիզացման հետ տնտեսական դժվարությունների հաղթահարմանը նպաստեց այդ տարիներին Սովետական Միության ցույց տված տնտեսական ու քաղաքական օգնությունը։ Սովետական կառավարությունն անվարձահատույց Ռումինիային տվեց նավեր, շոգեքարշեր ու վագոններ։ Հումքի արժեքավոր տեսակների (քրոմ, երկաթահանք, կոքս, բամբակ և այլն)՝ ՍՍՀՄ-ից կատարվող մատակարարումները թույլ տվեցին բեռնավորել ռումինական արդյունաբերության մի շարք ճյուղեր։ Երաշտի տարիներին սովետական կառավարությունը Ռումինիային աղատեց զինադադարի պայմաններով նախատեսված պարենային մատակարարումներից։

Ռումինիայի հետ հաշտության պայմանագրի մշակման ժամանակ 1946—1947 թթ. Սովետական Միության ներկայացուցիչները, ի հակադրություն արևմտյան դիվանագետների, հետևողականորեն պաշտպանում էին ռումինական ժողովրդի հանդեպ արդարացի տեսակետը, ցույց տալով, որ ժողովրդին չի կարելի նույնացնել Անտոնեսկուի նախկին կառավարող կլիկի հետ, որն արդեն արժանի պատիժ էր կրել։ Հենվելով Սովետական Միության օժանդակության վրա, դեմոկրատական Ռումինիայի պատվիրակությունը Փարիզի հաշտության կոնֆերանսում պաշտպանում էր իր երկրի շահերը և հասավ հաշտության պայմանագրի կնքմանը դեմոկրատական հիմքերով։

Ռումինիայի հոչակումը ժողովրդական հանրապետություն

1947 թ. սկզբին ռեակցիայի դիրքերը արդեն զգալի չափով քայքայվել էին։ Փորձելով փոխել դրությունը, նացիոնալ-ցարանիստական կուսակցության պարագլուխներն երկրում ստեղծեցին ընդհատակյա կիսառազմական միավորումներ։ Նրանք կապվեցին ռումինական ռեակցիոն վտարանդիության և նրա արևմտյան հովանավորների հետ և 1947 թ. ամռանը փորձեցին փախչել արտասահման, որպեսզի այնտեղ ստեղծեն վտարանդիական «կառավարություն», որը պետք է գլխավորեր բացահայտ պայքարը ժողովրդական կարգերի դեմ։ Բայց դավադիրների խումբը նացիոնալ-ցարանիստական կուսակցության փոխ-նախագահ Ի. Միխալակեի գլխավորությամբ բռնվեց և դատի տրվեց։ Բուրժուական կուսակցությունները դավադրության բացահայտումից հետո պաշտոնապես ցրվեցին, որը վերջնական հարված հասցրեց կապիտալիստների և կալվածատերերի առավել ռեակցիոն խավերին։ 1947 թ. նոյեմբերին հրաժարական տվեցին բուրժուազիայի վերջին ներկայացուցիչները կառավարության մեջ։

Ռումինիայում 1945—1947 թթ. համադեմոկրատական վերափոխությունների ավարտը եղավ միապետության վերացումը։ 1947 թ. դեկտեմբերի 30-ին պառլամենտի արտակարգ նիստն ընդունեց ռումինական վերջին թագավորի գահազրկման ակտը և Ռումինիան հռչակեց ժողովրդական հանրապետություն։ Իշխանությունը երկրում լիովին անցավ բանվորների ու գյուղացիների ձեռքը։ Դա նշանավորեց համադեմոկրատական հեղափոխության փուլի ավարտը և անցումը սոցիալիստական հեղափոխության խնդիրների իրականացմանը։

Սոցիալիզմի հիմքերի կառուցմանն անցնելը

Սոցիալիստական նոր հասարակության կառուցման համար ռումինական ժողովրդի մղած պայքարը գլխավորեց նրա մարտական ավանգարդը՝ բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Երիտասարդ Ռումինական հանրապետության առաջին պետական ակտերից մեկը 1948 թ. փետրվարի 4-ին ՍՍՀՄ-ի հետ բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումն էր։ Այդ պայմանագիրն ամրապնդեց դեռ 1945—1947 թթ. առաջացած բարեկամական հարաբերությունները Սովետական Միության և Ռումինիայի միջև։ Ռումինիայի՝ սոցիալիստական շինարարությանն անցնելով երկու երկրների կապերն էլ ավելի ամրացան գաղափարախոսության միասնության, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղած պայքարում նպատակների ընդհանրության շնորհիվ։ Սովետական Միության տնտեսական և քաղաքական սերտ համագործակցությունը, որն ամրապնդվեց սոցիալիստական հեղափոխության փուլում, Ռումինիային հնարավորություն տվեց ավելի լիակատարությամբ հաշվի առնել ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության փորձը։ 1948—1949 թթ. Ռումինիան բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրեր կնքեց սոցիալիզմի ուղին կանգնած նաև մյուս արևելաեվրոպական երկրների՝ Հունգարիայի, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի և Լեհաստանի հետ։ Այդ բոլոր պայմանագրերի ստորագրումն ամրապնդեց ՌԺՀ-ի միջազգային դրությունը։

Սոցիալիզմի հաջող կառուցման գլխավոր ներքին պայմանը դեմոկրատական ուժերի կայուն միասնության հաստատումն էր և նրանց համախմբումը հեղափոխության հեգեմոնի՝ բանվոր դասակարգի շուրջը։ Այդ կապակցությամբ լուծում էր պահանջում երկրում գոյություն ունեցող բանվորական երկու՝ կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կազմակերպական միավորման պրոբլեմը։ 1947—48 թթ. ձմռանը երկու կուսակցությունների ստորին կազմակերպություններն անցկացրին համատեղ ժողովներ, որոնցում քննարկվեցին բանվորական շարժման տեսության, ստրատեգիայի և տակտիկայի հարցերը։ Բանվորական կուսակցությունների միավորման ճանապարհին կարևոր քայլ եղավ միասնական բանվորական կուսակցության պլատֆորմը, որը միահամուռ ընդունվեց 1947 թ. նոյեմբերին ՌԿԿ Կենտկոմի և ՍՌԿ Կենտկոմի պլենումների համատեղ նիստում։ Նրանց համատեղ հայտարարության մեջ նշվում էր, որ մարքսիզմ-լենինիզմն այն միակ գաղափարախոսությունն է, որով ղեկավարվելու է միավորված կուսակցությունը։

1948 թ. փետրվարի 21—23-ին Բուխարեստում տեղի ունեցավ կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միավորիչ համագումարը, որը հռչակեց Ռումինական բանվորական կուսակցության (ՌԲԿ) ստեղծումը[13]։ Համագումարին ներկայացված զեկուցման մեջ հանրագումարի էին բերվում ժողովրդական հեղափոխության տարիներին Ռումինիայի ներքին զարգացման և միջազգային թատերաբեմում նրա դրության փոփոխման արդյունք-

[13] 1965 թ. Ռումինական բանվորական կուսակցություն՝ Ռումինական կոմունիստական կուսակցության վերանվանվելուց հետո համագումարներն սկսեցին համարակալվել ՌԿԿ I համագումարից (1921)։ Դրան համապատասխան միավորիչ համարվում է ՌԿԿ VI համագումարը։

ները։ Ձեկուցման մեջ հատուկ ուշադրություն դարձվեց սոցիալիստական հեղափոխության փուլի խնդիրներին։ Երկրի առջև դրվեցին սոցիալիստական հիմունքներով էկոնոմիկայի վերականգնման ու վերակառուցման պրոբլեմներ։ Այդ գլխավոր նպատակը կարելի էր իրականացնել միայն մասնավոր կապիտալիստական սեկտորի վրա վճռական հարձակում կատարելով։ Գյուղատնտեսության բնագավառում ենթադրվում էր անցկացնել մանր արտադրողի՝ գյուղացու կապիտալիստական շահագործման սահմանափակման և պաշտպանության քաղաքականություն։ Հատուկ ուշադրություն էր դարձվում կոոպերացիայի զարգացմանը, մեքենատրակտորային կայանների կազմակերպմանը, պետական տնտեսությունների և օրինակելի ֆերմաների ամրապնդմանը։ Ձեկուցման մեջ բարձրացվեցին նաև կարևորագույն քաղաքական հարցեր։ Համագումարը որոշում ընդունեց ժողովրդական դեմոկրատիայի ճակատի ստեղծման մասին, որի մեջ բացի ՌԲԿ-ից մտան նաև «հողագործների ճակատը» և ՄԱԴՈՍ-ը, իսկ փոքր-ինչ ավելի ուշ՝ նաև մյուս դեմոկրատական կազմակերպությունները։ Որոշվեց նաև ընդունել նոր սահմանադրություն՝ ժողովրդի պատմական նվաճումներն օրենսդրականորեն ամրապնդելու նպատակով։

Համագումարի որոշումներում ընդգծվում էր մյուս սոցիալիստական պետությունների հետ Ռումինական Ժողովրդական Հանրապետության կնքած պայմանագրերի նշանակությունը։ Համագումարը հաստատեց միասնական բանվորական կուսակցության կանոնադրությունը։ ՌԲԿ Գլխավոր քարտուղար ընտրվեց Գ. Գեորգիու-Դեժը։ Նրա ղեկավարության մեջ մտան կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները։

1948 թ. ապրիլին ընդունվեց Ռումինական Ժողովրդական Հանրապետության սահմանադրությունը, որն ամրապնդում էր դեմոկրատական կարգերի տարիներին ժողովրդի ձեռք բերած պատմական նվաճումները։ Սահմանադրությունը հանրագումարի բերեց քաղաքական իշխանության համար բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների մղած պայքարի արդյունքները, օրենսդրականորեն հաստատելով պրոլետարիատի դիկտատուրան։ Օրենսդիր իշխանության բարձրագույն մարմին դարձավ Ազգային մեծ ժողովը։ 1948 թ. սահմանադրությունը հռչակում էր աշխատանքի իրավունքը և բոլոր աշխատավորներին կապիտալիստական շահագործումից պաշտպանելու անհրաժեշտությունը։

Սոցիալիստական հեղափոխության կարևորագույն ակտն արտադրության հիմնական միջոցների ազգայնացումն էր։ Խոշոր ձեռնարկությունների ազգայնացումը կուսակցության կողմից նախապատրաստվում էր շատ ամիսների ընթացքում, ինչպես և բանվորներից ելած այն ղեկավարների կադրերը, որոնք ընդունակ լինեին իրականացնելու էկոնոմիկայի ղեկավարումը։

1948 թ. հունիսի 11-ին Ազգային մեծ ժողովն օրենք ընդունեց հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների, բանկերի, հանքերի, երկաթուղիների և ապահովագրական ընկերությունների ազգայնացման մասին. ժողովրդական պետությունը փաստորեն լիկվիդացրեց խոշոր բուրժուազիային, որպես դասակարգի։ Ազգայնացված ձեռնարկությունների հիման վրա ստեղծվեց պետական սոցիալիստական սեկտոր։ Ազգայնացված արդյունաբերությունը ղեկավարելու համար 1948 թ. հուլիսին երկրում ստեղծվեց պետական պլանային հանձնաժողով։

1949—1950 թվականներին էկոնոմիկայի պլանավորումն իրականացվում էր տարեկան շրջանակներում։ Պլանների հաջող կատարման պատճառով սոցիալիստական արտադրությունը արդյունաբերության մեջ 1948 թ. համեմատությամբ աճեց 2,4 անգամ։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման սկիզբը։ Առաջին հնգամյա պլանը (1951—1955)

Արտադրության հիմնական միջոցների ազգայնացումից և խոշոր արդյունաբերության մեջ կապիտալիստական շահագործման լիկվիդացումից հետո հանրապետության առջև ծառացավ մի այլ կարևորագույն խնդիր՝ անցումը սոցիալիստական արտադրական հարաբերությունների աստիճանական ստեղծմանը նաև գյուղատնտեսության մեջ։ Այդ հարցը քննարկվեց ՌԲԿ Կենտկոմի 1949 թ. մարտի 3—5-ին կայացած պլենումում։ Պլենումը նշեց, որ մինչև 1949 թ. երկրում պայմաններ են առաջացել ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում սոցիալիզմի հաջող կառուցման համար։ Այդ փուլում որպես ագրարային հարաբերությունների վերափոխման հիմնական խնդիր պլենումն առաջադրեց, մի կողմից, կապիտալիստական տարրերի աճի սահմանափակում, իսկ մյուս կողմից, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նախապատրաստում։ Ռումինիայի գյուղատնտեսության դրությունը բարդ էր։ Ագրարային ռեֆորմի ավարտից հետո մանր և միջին հողատիրությունը դարձավ երկրում գերակշռող։ Հողատարածությունները բաժանվեցին ոչ մեծ հողակտորների և գտնվում էին վիթխարի թվով հողատերերի ձեռքում։ Այդ պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել հողագործության մեջ ժամանակակից գործիքների և հողի մշակման առաջադիմական եղանակների կիրառման մասին։ Մանր տնտեսատերերի կենսամակարդակը շարունակում էր մնալ ցածր, նրանց սպառնում էր սնանկացումը կուլակների կողմից։

Ելքը ստեղծված դրությունից և միաժամանակ գյուղատնտեսական արտադրության վերելքի միակ ուղին գյուղատնտեսության աստիճանական փոխադրումն էր սոցիալիստական ռելսերի վրա։ 1949 թ. արդեն առաջին քայլերը կատարվեցին այդ ուղղությամբ՝ ստեղծվեցին օրինակելի պետական ֆերմաներ, 1948 թ. հոկտեմբերին հիմնվեցին 76 պետական մեքենատրակտորային կայաններ, որոնք հենակետեր դարձան գյուղի սոցիալիստական վերափոխման համար։ 1949 թ. ամռանը ստեղծվեցին 56 կոլեկտիվ տնտեսություններ, որոնք կամավոր հիմունքներով միավորեցին մոտ 4 հազ. գյուղացիների՝ չքավորների ու միջակների։

Իրականացված միջոցառումները ժողովրդական կառավարությանը հնարավորություն տվեցին 1950 թ. անցնելու ժողովրդական տնտեսության երկարաժամկետ տնտեսական պլանավորմանը։ 1950 թ. դեկտեմբերի 15-ին ՌԺՀ ժողովրդական մեծ ժողովը հաստատեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման 1951—1955 թթ. առաջին հնգամյա պլանը։

Առաջին հնգամյա պլանի կենսագործումն զգալի փոփոխություններ առաջացրեց Ռումինիայի տնտեսական կառուցվածքում։ Հնգամյակի տարիներին արդյունաբերական կապիտալ ներդրումներն ավելացան կրկնակի, դրանց երկու երրորդն ուղղվում էր դեպի առաջատար ճյուղերը՝ նավթային և քիմիական արդյունաբերություն, սև մետալուրգիա, մեքենաշինություն, էլեկտրաէներգետիկա։ Հնգամյակի տարիներին կառուցվեց մոտ 100 խոշոր ձեռնարկություն, ավելի քան 200 ձեռնարկություն ընդլայնվեց և վերակառուցվեց։ Հատուկ ուշադրություն էր դարձվում երկրի էլեկտրիֆիկացմանը։

Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ու վերակառուցման գործում Ռումինական Ժողովրդական Հանրապետությանը մեծ աջակցություն ցույց տվեցին Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական երկրները, որոնց հետ Ռումինիան համագործակցում էր Տնտեսական փոխօգնության խորհրդի շրջանակներում։ Լինելով ՏՓԽ-ի իրավահավասար անդամ, Ռումինիան հետագա տարիներին օգտագործում էր աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման, արտադրության մասնագիտացման և կոոպերացման ա-

ռավելությունները, և դրանով էին զգալի չափով բացատրվում նրա տնտեսական հաջողությունները։ 1951 թ. օգոստոսին Սովետական Միության և Ռումինական Ժողովրդական Հանրապետության միջև կնքվեց երկարժամկետ համաձայնագիր Ռումինիային արդյունաբերական սարքավորումներ մատակարարելու և նրան տեխնիկական օգնություն ցույց տալու մասին։

Հնգամյակի առաջին տարիներին աճի տեմպերը գյուղատնտեսության ասպարեզում փոքր ինչ դանդաղեցին։ Սակայն արդեն 1953 թ. օգոստոսին ՌԲԿ Կենտկոմի պլենումն ընդունեց որոշում, որը նախատեսում էր վերացնել գյուղատնտեսության մեջ առաջացած անհամամասնությունը և լիկվիդացնել նրա հետ մնալը։ Գյուղատնտեսությունը ժամանակակից տեխնիկայով ապահովելու համար երկրում կազմակերպվեց գյուղատնտեսական մեքենաների հիմնական տեսակների արտադրություն։ Գյուղատնտեսական շատ տեխնիկա ներմուծվեց ՍՍՀՄ-ից։ Աշխատանքներ էին կատարվում շորային շրջանների (Բուխարեստի, Կոնստանցայի, Դալացի) ոռոգման ուղղությամբ։

Ռումինական Ժողովրդական Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը կատարվեց հիմնական ցուցանիշների գծով։ 1955 թ. արդյունաբերական արտադրության ծավալը 2,9 անգամ գերազանցեց հետպատերազմյան տնտեսական ամենաբարձր կոնյունկտուրայի՝ 1938 թ. մակարդակը։ 1938 թ. ցուցանիշները գերազանցվեցին նաև գյուղատնտեսական արտադրության բնագավառում։ Տնտեսական զարգացման բնագավառում եղած նվաճումները բարերար ձևով էին անդրադառնում ռումինական աշխատավորների դրության վրա։ 1952 թ. հունվարին անցկացվեց դրամական ռեֆորմ և իջեցվեցին լայն սպառման ապրանքների գները։ 1954 թ. դեկտեմբերին ռումինական կառավարությունը որոշում ընդունեց բնակչությանը մթերքներ մատակարարելու՝ հետպատերազմյան տարիներին պահպանված քարտային համակարգի վերացման մասին։

Տնտեսական շինարարության հաջողությունները նշանակալի փոփոխությունների հասցրին հասարակության տնտեսական ու սոցիալական կառուցվածքում։ 1955 թ. արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտորը տալիս էր ամբողջ համախառն արտադրանքի 97%-ը, տրանսպորտում այն կազմում էր ավելի քան 90%, ներքին առևտրում՝ ավելի քան 80%։ Առաջին հնգամյակի տարիներին հասարակության հիմնական դասակարգեր դարձան բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը։

1952 թ. սեպտեմբերին ընդունվեց նոր սահմանադրություն, որը համապատասխանում էր երկրում կատարված տնտեսական ու սոցիալական խոր փոփոխություններին։ Սահմանադրությունը օրենսդրականորեն ամրապնդեց սոցիալիստական սեկտորի առկայությունը, հռչակեց բազմամյա պայքարում ռումինական ժողովրդի ձեռք բերած իրավունքներն ու ազատությունները։ Ռումինիայի պատմության մեջ առաջին անգամ սահմանադրությունն ընդգծում էր բանվորական կուսակցության, որպես երկրի քաղաքական կյանքի ղեկավար ուժի դերը։

Սոցիալիզմի հիմքերի կառուցումը Ռումինական Ժողովրդական Հանրապետությունում շրջանցավ առանց դժվարությունների։ Առանց դիմադրության իրենց դիրքերը չէին զիջում իշխող դասակարգերի մնացորդները՝ շազգայնացված մանր ձեռնարկությունների տերերը, մասնավոր առևտրականները և գլխավորապես գյուղական բուրժուազիան։ Դրությունը գյուղում բարդանում էր այն սխալների պատճառով, որոնք թույլ էին տրվել տեղերում կոլեկտիվացում անցկացնելու ժամանակ։ Չնայած զգալի դժվարություններին, Ռումինիայի աշխատավորները 1951—1955 թթ. վճռական հաջողությունների հասան սոցիալիստական վերափոխությունների իրականացման ասպարեզում։

Ռումինական Ժողովրդական Հանրապետության կյանքում տեղի ունեցած մեծ փոփոխությունները հասցրին նրա դրության փոփոխմանը միջազգային թատերաբեմում։ 1951 թ. ՌԺՀ Ազգային մեծ ժողովը միաձայն ընդունեց խաղաղության պաշտպանության մասին օրենքը, որի համաձայն պատերազմի պրոպագանդան դիտվում է որպես ամենածանր հանցագործություն։ Էլ ավելի ամրացան քաղաքական կապերը Ռումինական Ժողովրդական Հանրապետության, Սովետական Միության և եվրոպական մյուս սոցիալիստական երկրների միջև։ 1955 թ. մայիսին Ռումինիան ստորագրեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության Վարշավայի պայմանագիրը։ 1955 թ. դեկտեմբերին սովետական դիվանագիտության ակտիվ աջակցությամբ Ռումինական Ժողովրդական Հանրապետությունը դարձավ ՄԱԿ-ի անդամ։

Սոցիալիզմի տրեխական հիմքերի ստեղծումը ՌԺՀ-ում

Երկրի տնտեսական ու քաղաքական զարգացման արդյունքները հանրագումարի բերեց ՌԲԿ II համագումարը (ՌԿԿ VII համագումարը), որը տեղի ունեցավ 1955 թ. դեկտեմբերին։ Համագումարը առաջադրեց նոր խնդիր՝ միասնական սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծումը։ Դրա համար սոցիալիստական արդյունաբերության հետագա զարգացման բաղդի վրա հարկավոր էր ապահովել գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ավարտը։ Նախատեսվում էր ծանր արդյունաբերության, հատկապես նրա այն ճյուղերի գերակշռող զարգացում, որոնց համար Ռումինիան ունի հումքային բազա՝ նավթային, քիմիական, էներգետիկ, սև և գունավոր մետալուրգիայի, ածխային արդյունաբերության։ Երկրորդ հնգամյակի տարիներին (1956—1960) դեպի այդ ճյուղերն ուղղվեց բոլոր կապիտալ ներդրումների մոտ 3/4-ը. 1960 թ. նավթի հանույթը հասավ ավելի քան 11,5 մլն. տ., զգալիորեն գերազանցելով նախապատերազմյան Ռումինիայի նավթի հանույթի մակարդակը։ Այդ հիման վրա երկրում սկսեց զարգանալ նաև արտակարգ հեռանկարային ճյուղը՝ նավթաքիմիան։ Վերակառուցվեցին սև և գունավոր մետալուրգիան, ծանր մեքենաշինությունը։ Էլեկտրիֆիկացման տասնամյա պլանի (1951—1960) կենսագործման հետևանքով ավելացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը։

Համագումարի որոշումները մեծ նշանակություն ունեցան նաև կոոպերատիվ ուղիով ռումինական գյուղի առաջընթացի համար։ Համագումարը հաստատեց գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի զարգացմանն ուղղված կուսակցության քաղաքական գծի ճշտությունը։ 1955 թ. հասարակական սեկտորի (պետական ֆերմաներ, կոլեկտիվ գյուղական տնտեսություններ և այլն) տրամադրության տակ էր գտնվում երկրի բոլոր վարելահողերի ավելի քան մեկ քառորդը։ Կոլեկտիվ գյուղական տնտեսությունները և հողի համատեղ մշակման ընկերությունները միավորում էին մոտ 400 հազ. գյուղական ծխեր։ Կուսակցության առջև համագումարի դրած հիմնական խնդիրները պահանջում էին ուժեղացնել գյուղում կատարվող քաղաքական ու կազմակերպչական աշխատանքը։ Դրա հետ մեկտեղ կուսակցությունն անհրաժեշտ էր գտնում կամավորության սկզբունքի պարտադիր պահպանումը գյուղատնտեսական կոոպերատիվներ և հողի համատեղ մշակման ընկերություններ ընդունվելու ժամանակ։ Որպես առաջնահերթ խնդիր համագումարը մեկ անգամ ևս նշեց աշխատավոր գյուղացիությանը կոոպերացիայի պարզագույն, ստորին ձևերից դեպի բարձրագույնն անցնելու ուղին աստիճանաբար դնելը։

1959 թ. մարտին Ազգային մեծ ժողովի նախագահությունը հրապարակեց մի հրամանագիր, որը արգելում էր մարդու կողմից մարդու շահագործման ամեն մի ձև։ Արգելվեց նաև հողերի հանձնումը վարձակալության։ Դրանով իսպառ վերջ տրվեց կուլակային շահագործմանը գյուղում և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ավարտման

համար։ 1959 թ. ավելի շատ գյուղացիական ընտանիքներ մտան կոլեկտիվ գյուղական տնտեսությունները, քան նախորդ 10 տարվա ընթացքում։ Դա նշանակում էր, որ ռումինական գյուղացին հասկացել էր կուսակցության քաղաքականության ճշտությունը և սկսեց կոոպերատիվ ուղուն վերաբերվել մեծ վստահությամբ։ Գյուղացու գիտակցության մեջ մասնավոր սեփականատիրական մնացուկների հաղթահարմանը շատ բանով օգնեցին դեպի գյուղատնտեսական կոլեկտիվի բարձրագույն ձևը տանող միջանկյալ, նախապատրաստական աստիճանները, ինչպիսիք էին հողի համատեղ մշակման ընկերությունները։

1960 թ. հունիսին կայացած ՌԲԿ III (ՌԲԿ VIII) համագումարը հանրագումարի բերեց կոլեկտիվացման արդյունքները, նշելով, որ սոցիալիստական սեկտորն այդ ժամանակ միավորել է բոլոր գյուղացիական տնտեսությունների 81%-ը։ 1962 թ. կոլեկտիվացումն ավարտվեց։

Շահագործող դասակարգերի տիրապետության վերացումը և սոցիալիզմի ուղիով երկրի զարգացումը հասցրին ռումինական հասարակության հիմնական խավերի՝ բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության, մտավորականության դրության բարելավմանը, նրանց նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի աճին։

Ռումինական Սոցիալիստական Հանրապետության հռչակումը

Ռումինիայի տնտեսական ու սոցիալական կառուցվածքում տեղի ունեցած խոր փոփոխությունները վերափոխություններ առաջացրին նաև հասարակական հարաբերությունների ասպարեզում, նպաստեցին սոցիալիզմի զարգացմանն ու ամրապնդմանը երկրի կյանքի բոլոր ոլորտներում։ 1956 թ. մարտին տեղի ունեցավ ՌԲԿ Կենտկոմի պլենումը, որի որոշումները նպաստեցին Ռումինիայի քաղաքական ու հասարակական կյանքի հետագա դեմոկրատացմանը։ 1956 թ. վերացվեցին անցյալում շահագործողական աշխարհին պատկանելու պատճառով ընտրական իրավունքների սահմանափակումները։ Ընդարձակվում էին հասարակական գործերի ղեկավարմանը և պետական որոշումների մշակմանը տարբեր խավերին ներգրավելու ձևերը։ Որոշում ընդունվեց ընտրական հիմունքներով քաղաքացիական կոմիտեներ ստեղծելու մասին, որոնք պետք է աշխատեին ժողովրդական խորհուրդների գործկոմների ղեկավարությամբ, ինչպես նաև առանձին կարևոր պրոբլեմների գծով աշխատավորների համառումինական խորհրդակցություններ հրավիրելու մասին։

50-ական թվականների երկրորդ կեսին էլ ավելի ամրացան Ռումինական Ժողովրդական Հանրապետության կապերը Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ։ ՌԺՀ կառավարությանը հանձնվեցին առաջին համաշխարհային պատերազմից ի վեր ՍՍՀՄ-ում պահպանված պատմական և գեղարվեստական արժեքները։ 1958 թ. մայիսին Վարշավայի պայմանագրի երկրների ՔԿԿ Մոսկովյան խորհրդակցությունում սովետական կառավարությունը մտցրեց ռումինական կողմի հետ համաձայնեցված առաջարկություն՝ ՌԺՀ տարածքից սովետական զորքերի դուրս բերման մասին։ Այդ առաջարկությունն ընդունվեց միաձայն, և 1958 թ. աշնանը սովետական զինվորական ըստորաբաժանումները հեռացան Ռումինիայից։ Սովետական ազատարար զինվորներին ռումինական բնակչության հրաժեշտ տալը Սովետական Միությանը Ռումինիայի աշխատավորության բարեկամության ու երախտագիտության զգացմունքների իսկական ցույց եղավ։

Ռումինիայի միջազգային դրության ամրապնդմանը նպաստեց փոխշահավետ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ։ ՌԲԿ III (ՌԿԿ VIII) համագումարը հավանություն տվեց ՌԲԿ Կենտկոմի ներքին քաղաքական գծին և միջազգային

կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանն ուղղված նրա գործունեությանը։ Համագումարում հաստատվեցին ՌԺՀ զարգացման 1960—1965 թթ. հեռանկարային պլանի դիրեկտիվները, և հռչակվեց սոցիալիզմի շինարարության ավարտման կուրսը։

Հետագա տարիներին ՌԲԿ-ն հատուկ ուշադրություն էր դարձնում կուսակցական շարքերի միասնության ամրապնդմանը և հասարակության կյանքում իր ղեկավար դերի մեծացմանը։ Կուսակցության ղեկավար դերի հետագա մեծացման մասին համոզիչ վկայեցին Ազգային մեծ ժողովի 1965 թ. մարտին կայացած ընտրությունները, որտեղ գրեթե բոլոր ընտրողներն իրենց ձայնը տրվեցին կուսակցության ղեկավարած ժողովրդական դեմոկրատիայի ճակատի թեկնածուներին։

Գ. Գեորգիու-Դեժի մահից հետո (1965 թ. մարտ) Կենտկոմի առաջին քարտուղարի պոստում ընտրվեց Նիկոլաե Չաուշեսկուն (1965 թ. հուլիսից՝ ՌԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար)։

1965 թ. Ն. Չաուշեսկուն ընտրվեց նաև ՌՍՀ Պետական խորհրդի նախագահի պոստում, 1974 թ. ՌՍՀ պրեզիդենտն է։

1965 թ. տեղի ունեցավ ՌԲԿ IV (ՌԿԿ IX) համագումարը, որը որոշում ընդունեց կուսակցությունը Ռումինական կոմունիստական կուսակցություն վերանվանելու մասին։ ՌԿԿ-ն քննարկեց և հավանություն տվեց 1966—1970 թթ. նոր հնգամյակում էկոնոմիկայի զարգացման պլանին, ինչպես նաև 1966—1975 թթ. էներգետիկ ռեսուրսների օգտագործման ու երկրի էլեկտրիֆիկացման նախագծին։

1965 թ. օգոստոսին Ռումինիան հռչակվեց սոցիալիստական հանրապետություն։ Սահմանադրության համաձայն ամբողջ իշխանությունը երկրում պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է Ազգային մեծ ժողովի և իշխանության տեղական մարմինների՝ ժողովրդական խորհուրդների միջոցով։ Ազգային մեծ ժողովն ընտրվում է 4 տարով և վերահսկողություն է իրականացնում պետական իշխանության մշտապես գործող մարմնի՝ Պետական խորհրդի, Մինիստրների խորհրդի, Գերագույն դատարանի և դատախազության նկատմամբ։

1968 թ. Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետությունում ստեղծվեց սոցիալիստական միասնության ճակատ, որի մեջ Ռումինական կոմունիստական կուսակցության հետ մեկտեղ մտնում են նաև աշխատավորների զանգվածային հասարակական և արհմիութենական կազմակերպություններ։

Զարգացած սոցիալիստական հասարակության կառուցումը

Սոցիալիզմի շինարարության ժամանակակից փուլում Ռումինիայի արդյունաբերությունը դարձել է երկրի էկոնոմիկայի առաջին օղակը։ 1973 թ. արդյունաբերական արտադրանքի արտադրությունը 25 անգամ գերազանցեց 1938 թ. մակարդակը։ Ժամանակակից Ռումինիայի արդյունաբերության հիմնական ճյուղերն են քիմիական, նավթավերամշակման, մետալուրգիական և մետաղամշակման արդյունաբերությունը, մեքենաշինությունը։ Զգալի ուշադրություն է դարձվում էլեկտրաէներգիայի արտադրության աճին, որը վճռական նշանակություն ունի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ տեխնիկական առաջադիմության արագացման համար։ Այդ բնագավառում ամենախոշոր նորակառույցներից մեկն այն հիդրոէներգետիկ համակարգն է, որը Ռումինիան ու Հարավսլավիան համատեղ կառուցել են Ժելեզնի վորոտայի մոտ, Դանուբի վրա։

Տնտեսական այն քաղաքականության իրագործումը, որի կարևորագույն ուղղությունը ժողովրդական իշխանության բոլոր տարիների ընթացքում եղել է սոցիալիստական ինդուստրացումը և առաջին հերթին մեքենաշինության

զարգացումը, նպաստեց ոչ միայն մեքենաների ու սարքավորումների նկատմամբ երկրի ներքին պահանջմունքների բավարարմանը, այլև նրա արտահանման հնարավորությունների մեծացմանը։

Ներկայումս Ռումինիան արտահանում է բարձր արտադրողական հորատող սարքավորումներ և նավթային սարքավորումների այլ տեսակներ, գյուղատնտեսական մեքենաներ. տրակտորներ, դիզել-էլեկտրաքարշեր, գետային և ծովային նավեր, ինչպես նաև ամբողջ ձեռնարկությունների համար կոմպլեքսային սարքավորումներ։

Ռումինիայի արդյունաբերության հիմնական ճյուղերի հետագա զարգացման նպատակով, 1969 թ. երկրում միևնույն ճյուղին կամ հարակից ճյուղերին պատկանող ձեռնարկությունների խմբավորման միջոցով ստեղծվեցին արդյունաբերական միավորումներ։ Դրանք ստեղծվում էին գլխավորապես տարածքային սկզբունքով, և դրանց վրա դրվեցին մինիստրությունների մի շարք ֆունկցիաներ՝ տեղերում արտադրության մասնագիտացում ու տարբեր ձեռնարկությունների միջև կոոպերացում ապահովելու համար։

Զգալի հաջողություններ են ձեռք բերված գյուղատնտեսության զարգացման ասպարեզում։ Գյուղատնտեսության արտադրանքի համախառն արտադրանքը 1971 թ. մոտ 1,9 անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։ Երկրի դաշտերում ներկայումս աշխատում է ավելի քան 100 հազ. տրակտոր (1938 թ. դրանց թիվը հասնում էր մոտ 4 հազ.)։

Գյուղատնտեսության կոոպերացված սեկտորի հետագա զարգացման ու կատարելագործման նպատակով ստեղծվեց գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների ազգային միություն, ինչպես նաև կազմվեցին միջկոոպերատիվ միավորումներ ու ձեռնարկություններ, որոնց վրա խնդիր էր դրվում ապահովել կոոպերատիվների համագործակցությունը ինչպես արտադրության, այնպես էլ արտադրանքի իրացման ոլորտում։

Ռումինական կոմունիստական կուսակցությունը և սոցիալիստական Ռումինիայի կառավարությունը հատուկ ուշադրություն են դարձնում երկրի էկոնոմիկայի ղեկավարման ձևերի ու մեթոդների կատարելագործմանը։ ՌԿԿ Կենտկոմի 1967 թ. հոկտեմբերյան պլենումը և ՌԿԿ ազգային կոնֆերանսը (1967 թ. դեկտեմբեր) քննարկեցին և հավանություն տվեցին Ռումինիայի սոցիալիստական զարգացման նոր փուլի խնդիրներին համապատասխան ժողովրդական տնտեսության ղեկավարման և պլանավորման կատարելագործման վերաբերյալ միջոցառումների կոմպլեքսին, ինչպես նաև Ռումինիայի վարչատարածքային կառուցվածքի բարելավման հիմնական սկզբունքներին (վարչատարածքային նոր բաժանումը ուժի մեջ մտցվեց 1968 թ.)։ Էկոնոմիկայի ղեկավարման և պլանավորման կատարելագործման հիմքում դրվեց արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման ընդհանուր պլանի շրջանակներում իրենց գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու ասպարեզում ձեռնարկություններին ավելի լայն իրավունքներ տրամադրելու սկզբունքը։ Մեծացվեց նաև ձեռնարկությունների և նրանց կոմպլեքսների՝ արդյունաբերական վարչությունների դերը, ընդարձակվեցին նրանց իրավունքները պլանային նախագծումների մշակման ու հիմնավորման, տնտհաշվարկի արդյունավետ իրականացման բնագավառում։

ՌԿԿ X համագումարում, որը կայացավ 1969 թ. օգոստոսին, հավանություն տրվեց Ռումինական կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությանը և որպես հիմնական նպատակ նշվեց երկրի նյութատեխնիկական բազայի հետագա ընդլայնումն ու կատարելագործումը, բազմակողմանիորեն զարգացած սոցիալիստական հասարակության ստեղծումը։

Ռումինիայի հեռանկարային հասարակական-տնտեսական զարգացման

խնդիրներն ու ուղղությունները ձևակերպվեցին ռումինական կոմունիստական կուսակցության ազգային համառումինական կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1972 թ. հուլիսին, և ՌԿԿ XI համագումարում (1974 թ. նոյեմբեր)։ Աշխատավորության կենսապայմանների բարելավման ասպարեզում սոցիալիստական Ռումինիան էական հաջողությունների հասավ։ Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող ազգային եկամուտը 1973 թ. 1947 թ. համեմատությամբ աճեց 12 անգամ։ Աշխատավարձի նվազագույն չափերի ավելացման և 1969 թ. աշխատանքի վարձատրման նոր համակարգ մտցնելու հաշվին ավելացան բանվորների ու ծառայողների եկամուտները։ ՌԿԿ XI համագումարն ընդունեց «Ռումինիայում բազմակողմանիորեն զարգացած սոցիալիստական հասարակություն կառուցելու և դեպի կոմունիզմ ընթանալու վերաբերյալ ՌԿԿ ծրագիրը»։

ՌԿԿ X և XI համագումարների բանաձևերում հատուկ նշվում էր ՏՓԽ-ի անդամ պետությունների հետ տնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության ընդլայնման նշանակությունը Ռումինիայի համար։ Ներկայումս սոցիալիստական երկրներին բաժին է ընկնում Ռումինիայի արտաքին առևտրի ամբողջ ծավալի մոտ կեսը, ընդ որում դրանց մեծ մասի հետ ապրանքափոխանակությունը կատարվում է երկարժամկետ համաձայնագրերի հիման վրա։ Սոցիալիստական երկրների հետ Ռումինիայի ունեցած տնտեսական հարաբերություններում զգալի ուշադրություն է դարձվում երկկողմանի համագործակցության տարբեր ձևերին և կոոպերացմանը։

Այն երկրների թվում, որոնց հետ Ռումինիան այժմ առևտրական հարաբերություններ է պահպանում, առաջին տեղը գրավում է Սովետական Միությունը, որը Ռումինիային մատակարարում է մեքենաներ, սարքավորումներ, հումք, ինչպես նաև տեխնիկական փաստաթղթեր՝ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար։ Ռումինիան իր հերթին Սովետական Միություն է արտահանում մեքենաշինական, քիմիական, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանք։

1970 թ.. սեպտեմբերին Սովետական Միության և Ռումինիայի միջև ստորագրվեց արձանագրություն ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թթ. պլանների կոորդինացման վերաբերյալ, որը նախատեսում էր արտադրանքի տարբեր տեսակների արտադրության և փոխանակման կոոպերացում, մասնագիտացում։ Սովետա-ռումինական արձանագրությունը ստորագրումը սովետա-ռումինական տնտեսական համագործակցության ընդլայնման ու խորացման նոր վկայություն հանդիսացավ։ 1971 թ. հուլիսին ՏՓԽ-ի XXV նստաշրջանում մյուս սոցիալիստական երկրների թվում Ռումինիան ևս հավանություն տվեց սոցիալիստական տնտեսական ինտեգրացման կոմպլեքսային ծրագրին։

Սոցիալիստական Ռումինիան էկոնոմիկայի ասպարեզում համագործակցություն է զարգացնում նաև այլ երկրների հետ, անկախ նրանց հասարակական կարգերից՝ ինչպես ինդուստրիալ կապիտալիստական, այնպես էլ զարգացող երկրների հետ։

ՌՍՀ-ի արտաքին քաղաքականությունը

Սոցիալիստական Ռումինիան իր արտաքին քաղաքականությունը կառուցում է սոցիալիստական երկրների հետ բարեկամության ու համագործակցության, ինչպես նաև բոլոր երկրների հետ հարաբերությունների զարգացման հիման վրա։ Միջազգային կյանքում սոցիալիստական Ռումինիայի մասնակցության համար հատկապես բարենպաստ պայմաններ առաջացան 1955 թ. հետո, երբ Ռումինիան Սովետական Միության ակտիվ աջակցությամբ դարձավ ՄԱԿ-ի անդամ։

Ռումինական կառավարությունը լիովին պաշտպանեց 1959 թ. սեպտեմ-

բերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում սովետական պատվիրակության առաջ քաշած ընդհանուր և լիակատար զինաթափման նախագիծը։ Զարգացնելով սովետական առաջարկությունները Հարավարևելյան Եվրոպայում տիրող միջազգային կոնկրետ իրադրությանը համապատասխան, ռումինական կառավարությունն առաջարկեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի XV նստաշրջանի նիստերի օրակարգի մեջ մտցնել «Տարբեր սոցիալ-քաղաքական սիստեմներ ունեցող եվրոպական պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունները բարելավելու նպատակով ռեգիոնալ պլանով միջոցառումների» մասին հարցը։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի XV նստաշրջանը քննարկեց Ռումինիայի պատվիրակության մտցրած մեկ այլ առաջարկություն ևս՝ «Երիտասարդությանը խաղաղության, ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ոգով դաստիարակելու միջոցառումների մասին» հարցը։ Ռումինական նախագիծը պաշտպանություն գտավ պատվիրակությունների մեծամասնության կողմից և 1961 թ. դեկտեմբերին միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի պլենար նիստում։ Այդ նույն նստաշրջանում Ռումինիան Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների աջակցությամբ ընտրվեց Անվտանգության խորհրդի անդամ և զինաթափման գծով 18 պետությունների կոմիտեի անդամ։

ՌՍՀ կառավարությունը միջազգային թատերաբեմում հանդես էր գալիս այնպիսի հարցերի արագ լուծման օգտին, ինչպես գաղութատիրության վերջնական վերացումը, գերմանական հարցի խաղաղ կարգավորումը, Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության ապահովումը։ Ռումինիան ստորագրեց միջուկային փորձարկումների արգելման մասին Մոսկովյան պայմանագիրը (1963 թ. օգոստոս) և ողջունեց սովետական կառավարության ուղերձը տարածքային վեճերի լուծման համար ուժի կիրառումից հրաժարվելու հարցի մասին։

Ինչպես բազմիցս նշվել է ՌԿԿ և ՌՍՀ կուսակցական ու կառավարական փաստաթղթերում, սոցիալիստական Ռումինիայի միջազգային դրության համար առավել էական են նրա բարեկամական սերտ հարաբերությունները եվրոպական սոցիալիստական երկրների, առաջին հերթին Սովետական Միության հետ։

1970 թ. հուլիսին Սովետական Միության և Ռումինիայի միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր, որը զարգացնում է եղբայրական հարաբերությունները երկու երկրների միջև, հարաբերություններ, որոնք հիմնվել են 1948 թ. փետրվարի 4-ի սովետա-ռումինական պայմանագրով։ Պայմանագրի համաձայն, Սովետական Միությունը և սոցիալիստական Ռումինիան այսուհետև ևս պետք է զարգացնեն համագործակցությունը քաղաքական, տնտեսական, գիտական, տեխնիկական և այլ ասպարեզներում սուվերենության ու ազգային անկախության, իրավահավասարության հարգման ու միմյանց ներքին գործերին չմիջամտելու հիման վրա։ Նոր պայմանագրում ընդգծվում է սոցիալիստական երկրների միասնության ու համախմբվածության նշանակությունը, դրանց դերը իմպերիալիզմի ագրեսիվ ուժերի ոտնձգություններից միջազգային խաղաղությունը պաշտպանելու գործում։ Եվրոպական անվտանգության ապահովման գլխավոր նախադրյալը, ինչպես այդ հատուկ նշված է պայմանագրում, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում առաջացած պետական սահմանների անխախտությունն է։ Սովետական Միությունը և Ռումինիան իրենց վրա պարտավորություն են վերցրել միմյանց օգնություն ցույց տալ, այդ թվում նաև ռազմական, կողմերից մեկի դեմ որևէ պետության կամ պետությունների խմբի հարձակման դեպքում, ինչպես նաև միմյանց հետ կոնսուլտացիաներ անցկացնել միջազգային կարևոր հարցերում դիրքերը համաձայնեցնելու նպատակով։

Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության սովետա-ռումինական պայմանագիրն արժեքավոր ավանդ է երկու երկրների միջև բարեկամության, սոցիալիստական համագործակցության համախմբվածության հետագա ամրապնդման, Եվրոպայում և ամբողջ աշխարհում խաղաղության ու անվտանգության ապահովման գործում։

ԳԼՈՒԽ 5

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԺՈՂՈՎՐԴԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Հունգարիայի ազատագրումը ֆաշիզմից։ Ժողովրդա-դեմոկրատական կարգերի համար մղված պայքարը

1944 թ. սեպտեմբերին սովետական բանակը մտավ Հունգարիա։ Սովետական ռազմական հրամանատարությունը կոչով դիմեց հունգարական ժողովրդին, որտեղ ընդգծվում էր, որ «կարմիր բանակը մտնում է հունգարական տարածք ոչ թե նրա համար, որ գրավի նրա մի մասը կամ փոխի Հունգարիայում գոյություն ունեցող կարգերը, ...այլ որպես գերմանաֆաշիստական լծից հունգարական ժողովրդի ազատարար»։ Երկիրը վերածվել էր կատաղի մարտերի թատերաբեմի, որոնց մասնակցում էին տասնյակ դիվիզիաներ։ 1944 թ. հոկտեմբերի վերջին սովետական բանակի ստորաբաժանումները մարտերով մոտեցան Բուդապեշտին, որը գերմանա-ֆաշիստական զորքերի կողմից վերածվել էր դիմադրության հզոր հանգույցի։ Երեքուկես ամիս տևած արյունահեղ մարտերից հետո 1945 թ. փետրվարի 13-ին Բուդապեշտն ազատագրվեց։

Ոտքի ելնող ժողովրդի ուժից սարսափած, ֆաշիստների հետ միասին փախավ բուրժուա-կալվածատիրական տարրերի զգալի մասը, որը համագործակցել էր գերմանացիների հետ։ Իսկ երկրում մնացած իշխող դասակարգերի ներկայացուցիչներն այնքան էին բարոյալքվել նախկին կարգերի կրախից, որ սկզբնական ժամանակաշրջանում չհանդգնեցին որևէ ակտիվ գործողությունների դիմել։ Հունգարիան ազատագրելով ֆաշիզմից, սովետական բանակը հունգար ժողովրդի համար բացեց ազատ զարգացման ուղին։

Ֆաշիստական ռեժիմի ոչնչացումը կատարվում էր 1944 թ. աշնանից, երկրում ծավալված համադեմոկրատական հեղափոխության պայմաններում։ Այդ հեղափոխության հիմնական խնդիրները բնութագրվեցին 1944 թ. սեպտեմբերի սկզբին վերստեղծված Հունգարական կոմունիստական կուսակցության՝ հունգար ժողովրդին ուղղված դիմումի մեջ. ֆաշիզմի ոչնչացում և ազգային անկախության նվաճում, ժողովրդական իշխանության ստեղծում, հակաֆաշիստական ագրարային ռեֆորմի իրականացում։ Կոմկուսի նախաձեռնությամբ

1944 թ. դեկտեմբերի 2-ին Սենգեդ քաղաքում ստեղծվեց անկախության հունգարական ազգային ճակատ (ԱՀԱՃ), որը միավորեց երկրի հակաֆաշիստական ուժերը։ Կոմկուսի հետ նրա մեջ մտան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ՍԴԿ), ազգային գյուղացիական կուսակցությունը (ԱԳԿ), գյուղական մանր տնտեսատերերի կուսակցությունը (ԳՄՏԿ), բուրժուա-դեմոկրատական կուսակցությունը (ԲԴԿ) և արհմիությունները։ Երկրի դեմոկրատական զարգացման կոմկուսի առաջարկած պլատֆորմն ընդունվեց ԱՀԱՃ-ի մեջ մտած կուսակցությունների կողմից։

ԱՀԱՃ-ի նախաձեռնող խմբերն ազատագրված շրջաններում անցկացրին ժամանակավոր ազգային ժողովի (պառլամենտի) ընտրություններ։ 1944 թ. դեկտեմբերի 22-ին անկախության ճակատի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծվեց Ժամանակավոր ազգային կառավարություն։ Նրա կազմում, ինչպես և Ժամանակավոր ազգային ժողովում մեծամասնությունն աշխատավոր ժողովրդի (բանվորների, գյուղացիների, արհեստավորների, մտավորականության դեմոկրատական տարրերի) ներկայացուցիչներն էին։ Նոր կառավարության մեջ մտան նաև որոշ նախկին բարձրաստիճան խորտիական չինովնիկներ ու սպաներ, որոնք պատերազմի վերջին շրջանում հանդես էին եկել հիտլերականների և նրանց գործակիցների՝ սալաշիականների դեմ։ 1944 թ. դեկտեմբերին Ժամանակավոր ազգային կառավարությունը պատերազմ հայտարարեց հիտլերյան Գերմանիային։

1944 թ. վերջերից Հունգարիայի ազատագրված ամբողջ տարածքում սկսեցին ստեղծվել ազգային կոմիտեներ՝ ԱՀԱՃ-ի տեղական մարմիններ, որոնք մի քանի ամիս շարունակ, մինչև պետական-վարչական ապարատի վերաստեղծումը տեղերում կատարում էին իշխանության մարմինների ֆունկցիաներ։ Նոր կարգերի ձևավորման սկզբնական ժամանակաշրջանում, քանի դեռ պրոլետարիատը, գյուղացիությունը և բուրժուազիայի մի մասն ունեին ընդհանուր նպատակներ՝ ֆաշիզմի վերացումը, ֆեոդալիզմի մնացորդների լիկվիդացումը, ազգային անկախության նվաճումը, սոցիալ-դեմոկրատական կուսակցության, ինչպես նաև մանր և միջին բուրժուազիային, գյուղացիությանը ներկայացնող կուսակցությունների (ԳՄՏԿ, ԱԳԿ, ԲԴԿ) աջ տարրերը չէին հանդգնում բացահայտ հանդես գալ ծնունդ առնող դեմոկրատական պետության դեմ. պառլամենտում և կառավարության մեջ, համենայն դեպս արտաքուստ, նրանք պաշտպանում էին ԱՀԱՃ-ի հռչակած ծրագիրը։

Զինադադարի կնքումը։ Հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխությունները

1945 թ. հունվարի 20-ին Մոսկվայում Հունգարական Ժամանակավոր ազգային կառավարության ներկայացուցիչները հակահիտլերյան կոալիցիայի երկրների հետ ստորագրեցին զինադադարի համաձայնագիր։ Այն պարունակում էր մի շարք դրույթներ, որոնք նախատեսում էին խորտիական Հունգարիայի զավթողական քաղաքականության հետևանքների վերացում, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում Հունգարիայի մասնակցությունը հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պատերազմին և բարենպաստ նախադրյալների ստեղծում երկրի դեմոկրատական զարգացման համար։

Զինադադար կնքելով, Ժամանակավոր կառավարությունը ձեռնամուխ եղավ երկրի քաղաքական և տնտեսական կյանքի վերակառուցմանը։ Գործնականորեն վերացվեց խնամակալությունը, թեև պաշտոնապես Հունգարիան դեռ չէր հռչակվել հանրապետություն։ Կոմունիստների պնդմամբ 1945 թ. փետրվարի 26-ին կառավարությունը որոշում ընդունեց ֆաշիստական բնույթի քաղաքական ու զինվորական կազմակերպությունների ցրման, ֆաշիստներին պատկանող ձեռնարկությունների և ունեցվածքի բռնագրավման մասին։ Կառավարությունը ցրեց թագավորական ժանդարմերիան և ոստիկանությունը։ Միաժամանակ ստեղծվում էր նոր դեմոկրատական ոստիկանություն։

Ամենահրատապ հարցերից մեկը էկոնոմիկայի վերականգնումն էր։ Պատերազմի պատճառով Հունգարիային հասցված նյութական վնասի ընդհանուր գումարը 5 անգամ գերազանցում էր երկրի 1938 թ. ազգային եկամուտը։ Պետության տնտեսական զարկերակը մոտենում էր լիակատար մարման։ Կոմկուսի կոչով Հունգարիայի աշխատավորներն ավերակույտերից սկսեցին բարձրացնել գործարանային արտադրամասերը, վերականգնել կամուրջները, երկաթուղագծերը, հոնի մեջ դնել տրանսպորտի, հասարակական սննդի ձեռնարկությունները։ Նրանց մեծ օգնություն էր ցույց տալիս Սովետական Միությունը։ Սովետական կառավարությունը միայն 1945 թ. ձմռանը-գարնանը Հունգարիա ուղարկեց 15 հազ. տ. հացահատիկ, 3 հազ. տ. միս, 2 հազ. տ. շաքար։ Սովետական ինժեներա-սակրային զորամասերն ավերակներից բարձրացնում էին Դանուբի կամուրջները, վերականգնում երկաթուղային ցանցը։

Ժողովրդական իշխանության մարմինների ամրապնդման և էկոնոմիկայի հաջող վերականգնման կարևոր պայմանը բանվոր դասակարգի կոնսոլիդացումն էր, նրա շարքերի միասնությանը հասնելը։ Արդեն 1944 թ. հոկտեմբերին Հունգարիայի կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջև կնքվեց համաձայնագիր ֆաշիզմի դեմ մղվող պայքարում համատեղ գործողությունների վերաբերյալ։ Երկրի ազատագրման ընթացքում սկսվեց գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում արգելված արհմիությունների վերականգնումը։ Նրանց դերը երկրի հասարակական կյանքում աճում էր։ 20-ից ավելի բանվոր ունեցող բոլոր ձեռնարկություններում ստեղծվում էին ֆաբրիկագործարանային կոմիտեներ։ Այդ ստորին մարմինները, որոնք ընտրվում էին կոլեկտիվի ժողովում, ղեկավարում էին էկոնոմիկայի վերականգնումը, ակտիվորեն պաշտպանում բանվորների շահերը, սահմանափակում կապիտալիստական շահագործումը։

Կարևորագույն հեղափոխական-դեմոկրատական վերափոխում էր ագրարային ռեֆորմը, որն անցկացվեց 1945 թ. գարնանը։ Այն վերացրեց հունգարական հասարակության ամենապահպանողական դասակարգի՝ կալվածատերերի գոյության հիմքը։ Որպես ռեֆորմի նախաձեռնողներ ու անցկացնողներ հանդես եկան ձախ ուժերը կոմունիստական կուսակցության գլխավորությամբ։ Խոշոր հողատիրության համակարգի վերացման և աշխատավոր գյուղացիությանը հող տրամադրելու մասին 1945 թ. մարտի 17-ի կառավարական դեկրետի իրականացումը խոր փոփոխություններ առաջացրեց հունգարական գյուղում։ Գյուղացիությունն ստացավ 3258 հազ. հոլդ հող (հոլդը=0,57 հա.), որը օտարվեց ու բռնագրավվեց խոշոր կալվածատերերից ու եկեղեցուց։ Ռեֆորմի հետևանքով նախկինում անհող գյուղացիների մեծ մասը դարձավ մանր հողատեր, իսկ նախկին չքավորների զգալի մասը՝ միջակ գյուղացի։ Միջակ գյուղացիությունը դարձավ հունգարական գյուղի հիմնական խավը։

Հողային ռեֆորմի իրականացումը համընկավ երկրի ազատագրման ավարտի հետ։ 1945 թ. մարտին, հույս ունենալով կանգնեցնել սովետական զորքերի հարձակումը, հիտլերականներն Արևմտյան ռազմաճակատից փոխադրեցին 6-րդ տանկային բանակը և ավելի քան 25 տանկային ու հետևակային դիվիզիաներ կենտրոնացրին Բալատոն լճի շրջանում։ Տասն օր ու գիշեր ճակատամարտ էր տեղի ունենում Բալատոնի մոտ։ Բզկտելով հակառակորդին, 2-րդ և 3-րդ Ուկրաինական ռազմաճակատների զորքերը 1945 թ. մարտի 16-ին անցան հակահարձակման և ապրիլի 4-ին լիովին ազատագրեցին Հունգարիան։ Կառավարության հատուկ որոշմամբ ապրիլի 4-ի օրը հայտարարվեց Հունգարական ժողովրդի ազգային տոն։

Այսպիսով, 1944 թ. սեպտեմբերից մինչև 1945 թ. ապրիլն ընկած ժամանակաշրջանը Հունգարիայի պատմության մեջ դարձավ շրջադարձային։ Այդ ամիսներին տեղի ունեցավ ժողովրդա-դեմոկրատական Հունգարիայի ծնունդը։ Սովետական բանակի կողմից հիտլերյան օկուպանտների և նրանց հունգարական վարձկանների ջախջախման հետևանքով Հունգարիայի ժողովուրդը վերջապես ձեռք բերեց իսկական ազատություն և ազգային անկախություն։ Միաժամանակ տեղի էր ունենում հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխումների պրոցես, որն իր բնույթով համադեմոկրատական, հակաֆաշիստական, հակաֆեոդալական հեղափոխություն էր։ Իշխանությունը երկրում անցավ պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի ձեռքը։ Արդեն այդ փուլում հեղափոխությունը դուրս եկավ սովորական բուրժուադեմոկրատական հեղաշրջումների շրջանակներից, քանի որ ձեռնամուխ եղավ մի շարք սոցիալիստական վերափոխումների անցկացմանը (բանվորական վերահսկողության հաստատում ձեռնարկություններում, կապիտալիստական շահագործման սահմանափակում)։

Համադեմոկրատական հեղափոխության վերաճումը սոցիալիստականի

1945 թ. ամռան սկզբին համադեմոկրատական հեղափոխության խնդիրները Հունգարիայում կատարվել էին։ Այդ պահից սրվեց իշխանության համար պայքարը մի կողմից բուրժուազիայի, որին պաշտպանում էին կալվածատերերը, եկեղեցին, բոլոր ռեակցիոն տարրերը, և, մյուս կողմից, բանվոր դասակարգի միջև, որը հանդես էր գալիս աշխատավոր գյուղացիության և քաղաքի դեմոկրատորեն տրամադրված մանր բուրժուազիայի մի մասի հետ դաշինք կնքած։ Բանվոր դասակարգը և նրա դաշնակիցները պայքարում էին հեղափոխության զարգացման, շահագործող դասակարգերի հետագա սահմանափակման և դուրս մղման ու աշխատավոր ժողովրդի իշխանության ամրապնդման համար։ Գործողությունների այդ ծրագիրը եռանդուն պաշտպանում էր ՀԿԿ-ն։ Խոշոր և միջին բուրժուազիան ձգտում էր հեղափոխությունը սահմանափակել բուրժուական, հակաֆեոդալական վերափոխությունների շրջանակներով և թույլ չտալ նրա վերաճմանը սոցիալիստականի։ 1945 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ կաթոլիկ եկեղեցու կողմից աջակցություն գտած այդ ուժերը կարողացան իրենց ետևից տանել գյուղացիության զգալի մասին։ Գյուղական մանր տնտեսատերերի կուսակցությունն ընտրությունների ժամանակ ստացավ ընտրողների ձայների 57%-ը, Հունգարական կոմունիստական կուսակցությունը և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը՝ 17-ական տոկոս յուրաքանչյուրը, ԱԳԿ-ն՝ 7%-ը։ Ընտրությունների արդյունքների վրա ազդեց այն, որ գյուղացիության մեջ դեռևս պահպանվում էին ԳՄՏԿ-ի նկատմամբ եղած պատրանքները։ Շատ գյուղացիներ ի դեմս նրա դեռևս տեսնում էին իրենց շահերի արտահայտիչներին։ Ծավալված քաղաքական պայքարը ցիրուցան արեց այդ պատրանքները։ ԳՄՏԿ-ի հաջողությունից թևավորված նախկին կալվածատերերը հանդես եկան նախկինում իրենց պատկանած հողերի վերադարձման օգտին, ռեակցիոն տրամադրությունների տեր շինովնիկները սարոտաժի էին ենթարկում փլուզված էկոնոմիկայի վերականգնումը և պետական ապարատի ղեկումը, աշխուժացան ֆաշիստական տարրերը։ Կոմունիստներն ու ձախ սոցիալ-դեմոկրատները նման պայմաններում մեծ աշխատանք կատարեցին դեմոկրատական ուժերի համախմբման ուղղությամբ և կարողացան զանգվածների լայն պայքար ծավալել ընդդեմ գլուխ բարձրացրած ռեակցիայի։

Սովետական զորքերի գտնվելը երկրում կաշկանդում էր հակահեղափոխության գործողությունները, խոչընդոտում նրա բացահայտ ելույթները։ «Խաղաղ ձևով» պայքար էր տեղի ունենում պառլամենտում, կառավարության մեջ, մինիստրություններում, վարչական, տնտեսական մարմիններում և անմիջականորեն ձեռնարկություններում։ Կոմունիստներն ու ձախ սոցիալ-դեմոկրատները կարողացան մինչև վերջ օգտագործել պայքարի պառլամենտական և արտապառլամենտական ձևերը պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության ճնշող մեծամասնությանն իրենց կողմը գրավելու համար։

Հունգարիան հանրապետություն հռչակելը (1. II. 1946 թ.) պարտության մատնեց եկեղեցու լեգիտիմիստորեն տրամադրված շրջաններին, նախկին կալվածատերերին և խոշոր բուրժուաներին, որոնք հանդես էին գալիս կառավարման միապետական ձևի վերականգնման օգտին։ Միաժամանակ գյուղացիությունն էլ սկսեց հիասթափվել ԳՄՏԿ-ի քաղաքականությունից, քանի որ կուսակցության ղեկավարությունը, որի ձեռքում էին գտնվում պրեմիեր մինիստրի պոստը և մինիստրական պորտֆելների գրեթե կեսը, թողտվություն էր անում կալվածատերերի փորձերին՝ վերադարձնելու 1945 թ. նրանցից վերցված հողը։

Այդ իրադրության պայմաններում, 1946 թ. մարտին անկախության ճակատի շրջանակներում ստեղծվեց ձախ բլոկը, որի մեջ մտան ՀԿԿ-ն, ՍԴԿ-ն, ԱԳԿ-ն և արհմիությունները։ Ձախ բլոկը պայքար ծավալեց ընդդեմ ռեակցիայի փորձերի՝ լիկվիդացնելու դեմոկրատական ուժերի նվաճումները, ամենից առաջ հողային ռեֆորմի արդյունքները, պահանջեց զտել պետական ապարատը ռեակցիոն տրամադրությունների տեր ծառայողներից, անցկացնել ծանր արդյունաբերության ձեռնարկությունների, էներգետիկ ռեսուրսների ազգայնացում։ Ձախ բլոկի կոչով 1946 թ. մարտի 7-ին Բուդապեշտում տեղի ունեցավ աշխատավորության 300-հազարանոց ցույց ի պաշտպանություն նրա պահանջների։ Ժողովրդի հզոր հարձակումից ահաբեկված, գյուղական մանր տնտեսատերերի կուսակցության աջ պարագլուխները նահանջեցին, հայտարարելով ձախ բլոկի պահանջների բավարարման մասին։ ԳՄՏԿ-ի պարագլուխ Ֆերենց Նագը, որը գրավում էր պրեմիեր մինիստրի պոստը, ստիպված էր պաշտոնապես հայտարարելու հողային ռեֆորմի արդյունքների վերանայման անթույլատրելիության մասին։ ԳՄՏԿ-ից հեռացվեց կուսակցական գործիչների մի խումբ, որը մերկացվեց որպես ծայրահեղ հետադիմական։

1946 թ. աշնանը տեղի ունեցավ ՀԿԿ III համագումարը։ Այն կուսակցությանն ու դեմոկրատական ուժերին կողմնորոշեց դեպի Հունգարիայում կապիտալիզմի հետագա սահմանափակման համար մղվող պայքարը։ Կոմունիստների մշակած տնտեսական ու սոցիալական զարգացման եռամյա պլանը (1947—1950) երկար պայքարից հետո ընդունվեց որպես պետական օրենք։ Պլանում որպես գլխավոր խնդիր նշված էր էկոնոմիկայի վերականգնումը նոր, դեմոկրատական հիման վրա և ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը։

Կայունանում էր երկրի արտաքին քաղաքական դրությունը։ 1947 թ. փետրվարի 10-ին Փարիզում ստորագրվեց հակահիտլերյան կոալիցիայի երկրների հաշտության պայմանագիրը Հունգարիայի հետ, որի պարունակած մի շարք դրույթներ հնարավորություն էին տալիս ամրապնդել դեմոկրատական վերափոխությունները երկրում։ Պայմանագիրը վերականգնում էր 1938 թ. հունվարի 1-ի դրությամբ գոյություն ունեցած Հունգարիայի պետական սահմանները՝ Չեխոսլովակիայի հետ եղած սահմանի մի ոչ մեծ հատվածում կատարված փոփոխություններով հանդերձ։

Ժողովրդա-դեմոկրատական կարգերի ամրապնդումը Հունգարիայում ուղեկցվում էր դասակարգային պայքարի սրմամբ, քաղաքական ուժերի վերախմբավորմամբ։ Օգտագործելով պայքարի լեգալ ու անլեգալ ձևերը, հակահեղափոխությունն ի վերջո կանգնեց դավադրություն կազմակերպելու ուղու վրա՝ նպատակ ունենալով տապալել դեմոկրատական պետական կարգերը և վերականգնել կալվածատիրական-կապիտալիստական կարգերը։ Դավադրության

ղեկավարներն էին ԳՄՏԿ ռեակցիոն պարագլուխներ Ֆերենց Նագը, Բելա Վարգան և ուրիշներ։ Դավադիրների սոցիալական բազան խոշոր և միջին բուրժուազիան էր, կուլակությունը, նախկին կալվածատերերը, ֆաշիստները։ Նրանք հույս ունեին պաշտպանություն գտնել Արևմուտքի իմպերիալիստական ուժերից։ Կոմունիստների հսկողության տակ գտնվող պետական անվտանգության մարմինները ժամանակին վնասազերծեցին դավադրությունը։ ԳՄՏԿ պարագլուխների մերկացման և այդ կուսակցության ազդեցության աղետալի անկման կապակցությամբ կոմկուսը պահանջեց անցկացնել ազգային ժողովի արտահերթ ընտրություններ։ Պառլամենտական ընտրությունները տեղի ունեցան 1947 թ. օգոստոսի 31-ին։ ՀԿԿ-ի օգտին տրվեց ձայների 22%-ը, այսինքն ավելի, քան մի որևէ ուրիշ կուսակցության օգտին։ Ընտրություններն արտահայտեցին ԳՄՏԿ-ի ազդեցության շեշտակի անկումը, այն ստացավ միայն 68 մանդատ (1945 թ. 245-ի դիմաց)։ ԳՄՏԿ-ն ապրում էր խոր ճգնաժամ։ Նրա ղեկավարությունն անցավ ձախ թևին՝ Իշտվան Դոբրի գլխավորությամբ։ Կառավարությունից ու պառլամենտից հեռացվեցին բուրժուազիայի ու կուլակության զգալի թվով ներկայացուցիչներ։ Ընտրությունները ցույց տվեցին, որ կոմկուսի ետևից գնում է պրոլետարիատի մեծամասնությունը և կոմունիստների շուրջը համախմբվում է աշխատավոր գյուղացիությունը։

Կենտրոնական պետական իշխանության մարմիններում և տեղերում բանվորների ու գյուղացիների դիրքերի ընդլայնումը ձախ ուժերին թույլ տվեց շարունակել դեմոկրատական բնույթի վերափոխություններ։ 1947 թ. նոյեմբերին Պետական ժողովը (այսպես սկսեց անվանվել հունգարական պառլամենտը 1947 թ. ընտրություններից հետո) հավանություն տվեց խոշոր բանկերի ազգայնացման վերաբերյալ օրենքին, որի ընդունումը կոմունիստները պահանջում էին ամիսներ շարունակ։ Պետությունն իր ձեռքը վերցրեց ֆինանսավարկային համակարգի հիմնական ուղիները։

1948 թ. ապրիլին ընդունվեց հարյուրից ավելի բանվոր ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման մասին օրենքը։ Այդ միջոցառումների հետևանքով հանրայնացված սեկտորը գերիշխող դարձավ ինչպես ծանր, այնպես էլ թեթև արդյունաբերության մեջ։ Հունգարական արդյունաբերության գլխավոր ճյուղերում հրամանատարական բարձունքներն անցան աշխատավոր ժողովրդի ձեռքը, որը թույլ տվեց զգալիորեն ընդլայնել պետության դերը տնտեսության զարգացման գործում։ Փոխվեց նաև բանվոր դասակարգի վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ։ 1948 թ. գարնանը ծնունդ առավ արտադրական մրցությունը, որը հանդիսացավ հունգարական աշխատավորների ստեղծագործական նոր ուժերի աճի նախագուշակը։ Միաժամանակ ամրապնդվում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը՝ ժողովրդա-դեմոկրատական պետության քաղաքական հիմքը։

Միասնական բանվորական կուսակցության կազմավորումը։ Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը Հունգարիայում

Կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների համագործակցությունը պայմաններ նախապատրաստեց հունգարական բանվորական շարժման պառակտումը հաղթահարելու և միասնական պրոլետարական կուսակցություն ստեղծելու համար։ ՍԴԿ արտակարգ համագումարը, որը կայացավ 1948 թ. մարտի 6—8-ին, որոշում ընդունեց աջ տարրերին կուսակցությունից հեռացնելու և դրանից հետո ՍԴԿ-ն կոմկուսի հետ միավորելու մասին։ ՍԴԿ համագումարն ընդգծեց, որ կուսակցությունը մերժում է ռեֆորմիստական դաղափարախոսությունը և իր աշխարհայացքն է համարում մարքսիզմ-լենինիզմը։ Կուսակցությունից աջ տարրերի՝ 1948 թ. գարնանն անցկացված զտման հետևանքով նրա թվակազմը կրճատվեց 25 հազարով։

1948 թ. հունիսի 12—14-ին տեղի ունեցավ կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միավորիչ համագումարը, որտեղ ստեղծվեց միասնական բանվորական կուսակցություն՝ հունգարական աշխատավորների կուսակցությունը (ՀԱԿ)։ Համագումարի ընդունած ծրագրային հայտարարությունը և կանոնադրությունը հռչակում էին, որ ՀԱԿ-ը հիմնվում է մարքսիզմ-լենինիզմի գաղափարական ու կազմակերպական սկզբունքների վրա։ Կուսակցությունն իր գլխավոր խնդիրն էր համարում սոցիալիզմի կառուցումը Հունգարիայում։ ՀԱԿ-ը դեռ պետք է ավարտեր նոր, լենինյան տիպի կուսակցության վերածվելու ուղին. չնայած ՍԴԿ-ի զտմանը, նոր ստեղծված կուսակցության մեջ հայտնվեցին ոչ քիչ մանրբուրժուական, հարմարվողական և անկայուն տարրեր. կուսակցության թվակազմը գերազանցում էր 1 մլն. անդամից (երկրի 9,3 մլն. բնակչության դեպքում), որը բացասաբար ազդեց նրա ուժի ու մարտունակության վրա։ Իսկ ամբողջությամբ վերցրած բանվոր դասակարգի միասնական կուսակցության ստեղծումը հանդիսացավ Հունգարիայում սոցիալիստական հասարակության կառուցման կարևորագույն նախադրյալը։ ՀԱԿ-ը դարձավ պետության ղեկավար և ուղղություն տվող ուժը։

1948 թ. ամռան սկզբին Հունգարիայի բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացիության հետ դաշինք կնքած հաստատեց իր լիակատար քաղաքական տիրապետությունը երկրում, հրամանատարական բարձունքներ նվաճեց արդյունաբերության առաջատար ճյուղերում։ Երկրում հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա։ Սակայն հեղափոխության համեմատաբար խաղաղ զարգացման հետևանքով բուրժուազիան դեռևս մասնակիորեն պահպանում էր իր տնտեսական ու քաղաքական ուժերը։

1948 թ. ՀԱԿ-ը վերցրեց սոցիալիզմի հիմքերի կառուցման կուրս։ Այդ ծրագրի հաջող իրականացման բարենպաստ արտաքին քաղաքական նախադրյալ եղավ 1948 թ. փետրվարի 18-ին բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագրի կնքումը Հունգարական հանրապետության և ՍՍՀՄ-ի միջև, ինչպես նաև համանման պայմանագրերի կնքումը Ռումինիայի, Լեհաստանի և Բուլղարիայի հետ։

1949 թ. մայիսին կայացած պառլամենտական ընտրություններով հունգարական աշխատավորների կուսակցությունը ստացավ դեպուտատական մանդատների ավելի քան 70%-ը։ Այդ հաղթանակը արձանագրեց քաղաքական ու դասակարգային ուժերի նոր հարաբերակցությունը երկրում և արտահայտում էր հունգար աշխատավորների՝ կուսակցության հռչակած սոցիալիզմի կառուցման կուրսի համազգային հավանությունը։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հունգարական Ժողովրդական Հանրապետության սահմանադրության ընդունումը

Հետպատերազմյան առաջին տարիների սոցիալ-տնտեսական վերափոխությունների արդյունքները և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը Հունգարիայում իրավականորեն ամրապնդվեցին սահմանադրության մեջ, որն ընդունվեց 1949 թ. օգոստոսի 20-ին։ Հունգարիան հռչակվում էր ժողովրդական հանրապետություն։ Սահմանադրությունը հռչակում էր, որ պետության մեջ իշխանությունը պատկանում է աշխատավորներին՝ ի դեմս տեղական խորհուրդների և Պետական ժողովի, իսկ արտադրության հիմնական միջոցները կազմում են համաժողովրդական պետական և կոոպերատիվ սեփականություն։ Սահմանադրությունը սահմանափակ չափերով թ[illegible] էր նաև մասնավոր սեփականու-

թյունը։ Սահմանադրության համաձայն աշխատավորներին տրվում և երաշխավորվում էին սոցիալական լայն իրավունքներ ու ազատություններ՝ պետական մարմիններում ընտրելու և ընտրվելու իրավունք, աշխատանքի, հանգստի, կրթության իրավունք։

1950 թ. հունիսին Հունգարիայում ստեղծվեցին խորհուրդներ, որոնք փոխարինեցին ինքնավարության նախկին տեղական մարմիններին։ Տեղական խորհուրդներում ընտրվեցին ավելի քան 220 դեպուտատներ։ Նրանց 85%-ը կազմում էին բանվորները և աշխատավոր գյուղացիները։ Դեպուտատների մեկ երրորդը հունգարական աշխատավորների կուսակցության անդամներ էին։

ՀԺՀ-ի տնտեսական զարգացումը 50-ական թվականների առաջին կեսին

Հաստատելով պրոլետարիատի դիկտատուրա և ամրապնդելով պետական ապարատը, հունգար ժողովուրդը ձեռնամուխ եղավ սոցիալիզմի հիմքերի կառուցմանը։ Ժողովրդատնտեսական եռամյա պլանի հաջող կատարման հետևանքով Հունգարիայում 1949 թ. վերջին (ժամկետից 7 ամիս առաջ) ձեռք բերվեց և գերազանցվեց նախապատերազմյան տարիների արտադրության մակարդակը, բարձրացավ աշխատավորների կենսամակարդակը, վերացվեց գործազրկությունը։ 1949 թ. վերջին տասից ավելի բանվոր ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման կապակցությամբ գործնականորեն ամբողջ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունն սկսեց պատկանել սոցիալիստական սեկտորին։ Դա թույլ տվեց անցնել ժողովրդական տնտեսության զարգացման երկարժամկետ պլանավորմանը։ 1949 թ. դեկտեմբերին Պետական ժողովն ընդունեց Հունգարիայի զարգացման հնգամյա պլանի մասին օրենքը (1950—1954)։

Առաջին եռամյա պլանի կատարման ավարտը Հունգարիայում տեղի էր ունենում նոր տիպի միջազգային քաղաքական ու տնտեսական հարաբերությունների, սոցիալիստական երկրների սերտ համագործակցության և փոխադարձ աջակցության հարաբերությունների առաջացման և զարգացման պայմաններում։ 1949 թ. եվրոպական սոցիալիստական վեց պետությունների թվում Հունգարիան մասնակցեց Տնտեսական փոխօգնության խորհրդի՝ ՏՓԽ-ի, ստեղծմանը։

ՀԺՀ-ի արդյունաբերական զարգացումը 50-ական թվականներին ընթանում էր երկրի պատմության մեջ չտեսնված տեմպերով։ Առաջին հնգամյակի տարիներին բանվորների և գյուղացիների անձնազոհ աշխատանքի հետևանքով կառուցվեց ավելի քան 75 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, շարք մտցվեցին տասնյակ նոր հանքեր։ Առաջացան արդյունաբերության նոր ճյուղեր՝ սարքաշինություն, ավտոմոբիլաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն։ Երևան եկան նոր ճանապարհներ, ջրանցքներ, ինդուստրիալ քաղաքներ ու շրջաններ՝ Դունայվարոշը, Բեկեվարոշը, Կոմլոն, Բորշոդը և այլն։ Վերակառուցման ենթարկվեց երկրում խոշորագույն Դիոշդիերի Վ. Ի. Լենինի անվան մետալուրգիական կոմբինատը։

Հունգար բանվորների կյանքում ավելի մեծ չափով էր ներթափանցում կոլեկտիվիզմի ոգին։ Վերանում էր բաղմամյա փորձով կամ պրոֆեսիոնալ կրթության ավելի բարձր մակարդակի, անձնական հմտության ու վարպետության հետևանքով ձեռք բերված արտադրության «գաղտնիքները» «իրեն» պահելու ձգտումը։

Նորարարների 1949 թ. ծնունդ առած շարժումը ներգրավեց տասնյակ հազար բանվորների։ Լայն թափ ստացավ աշխատավորների սոցիալիստական մրցությունը։ Առաջին հնգամյակի կատարման ընթացքում զգալիորեն բարձրացավ ժողովրդի բարեկեցությունը։ 1954 թ. սպառումը երկրում 30%-ով գերազանցում էր 1949 թ. մակարդակը։ Բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձն այդ նույն տարիներին միջին հաշվով բարձրացավ 20%-ով։ Ամբողջությամբ վերցրած ՀԺՀ-ն առաջընթաց մեծ քայլ կատարեց սոցիալիզմի կառուցման ուղղությամբ։ Ոչ միայն արդյունաբերության ու տրանսպորտի, այլև առևտրի ասպարեզում սոցիալիստական սեկտորը դարձավ գերիշխող։ Ազգային եկամուտն աճեց ավելի քան 50%-ով։ Էական փոփոխություններ տեղի ունեցան էկոնոմիկայի կառուցվածքում՝ ագրարային-արդյունաբերական երկրից Հունգարիան վերածվեց ինդուստրիալ-ագրարային երկրի։ Ազգային եկամտի ստեղծման մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը հինգ տարում աճեց 50-ից մինչև 64%-ի։

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան գյուղում։ 1945 թ. ագրարային ռեֆորմից և արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտորի գերիշխանության հաստատումից հետո Հունգարիայում, ինչպես և ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրներում, ավելի ու ավելի էր բացահայտվում մենատնտեսային մանր ապրանքային գյուղացիական արտադրության և հանրայնացված սոցիալիստական արդյունաբերության միջև եղած հակասությունը։ Հունգարական գյուղում գերիշխող մանր գյուղացիական տնտեսությունն ի վիճակի չէր հումքով բավարարելու արդյունաբերության և պարենամթերքով բնակչության աճող պահանջմունքները, որը արգելակում էր ժողովրդական տնտեսության զարգացումն ամբողջությամբ վերցրած։ Այդ հակասությունը հնարավոր էր վերացնել միայն գյուղում սոցիալիստական արտադրական հարաբերություններ ստեղծելու միջոցով։ Ելնելով դրանից, ՀԱԿ-ը 1948 թ. վերցրեց գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման կուրս, որը ենթադրվում էր իրականացնել աստիճանաբար, գյուղատնտեսությունը սոցիալիստական ռելսերի վրա փոխադրելու ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների փուլերի միջոցով։ Գյուղում սոցիալիստական վերափոխումների իրականացմանը նպաստեցին հողի նկատմամբ մասնավոր սեփականության սահմանափակման մի քանի միջոցառումներ, որոնք իրականացվեցին նախորդ տարիներին՝ հողային տիրույթների չափերի սահմանափակում որոշակի մաքսիմումով, ռեֆորմով ստացած հողի վաճառքի արգելում, պետական վերահսկողության սահմանում այլ հողերի առք-վաճառքի և վարձակալական հարաբերությունների նկատմամբ։ Արդեն համադեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերաճելու տարիներին Հունգարիայում ստեղծվում էին պետական մեքենատրակտորային կայաններ և մեքենավարձակալման կետեր, որոնք օգնում էին աշխատավոր գյուղացիությանը մեքենաներով, գյուղատնտեսական գործիքների վերանորոգմամբ և այլն։ Հենց այդ ժամանակ էլ ստեղծվեցին պետական տնտեսություններ, որոնց մի մասը դարձավ օրինակելի՝ մերձակա գյուղերին ցույց տալով ագրոտեխնիկայի վերջին նվաճումների բազայի վրա խոշոր գյուղատնտեսական արտադրություն վարելու օրինակ։ Հետագա տարիներին ՄՏԿ-ների և պետական տնտեսությունների դերը, որպես քաղաքի և գյուղի միջև շաղկապման ձևերի, աճեց։

Աստիճանաբար խոշոր, կոլեկտիվ տնտեսություններին անցնելու համար Հունգարիայում օգտագործվում էին արտադրական կոոպերացիայի մի քանի տիպեր՝ ստորինից մինչև բարձրագույնը։ 1952 թ. վերջին Հունգարիայում գոյություն ուներ 5 հազ. կոոպերատիվ, որոնք մշակում էին երկրում եղած վարելահողերի ավելի քան 22%-ը։

Սոցիալիզմի հիմքերի կառուցումը ՀԺՀ-ում տեղի էր ունենում ժողովրդական կարգերին տապալված դասակարգերի ցույց տված չդադարող դիմադրության պայմաններում։ 1949 թ. սկզբին բացահայտվեց հունգար կղերականների հակահանրապետական դավադրություն՝ կարդինալ Մինդսենտիի գլխավորու-

թյամբ։ Դավադրության մերկացումը հասցրեց դեմոկրատական ժողովրդական կուսակցության սնանկացմանը, կուսակցություն, որը սերտորեն կապված էր Հունգարիայի լեգիտիմիստական-կաթոլիկական շրջանների հետ։ Լիովին զբաղվելով աշխատավոր զանգվածների որևէ պաշտպանությունից, այդ կուսակցությունը 1949 թ. փետրվարին հայտարարեց իր ցրման մասին։ Այդ նույն պատճառով 1949թ. մարտին իր գոյությունը դադարեցրեց հետպատերազմյան Հունգարիայի ամենահետադեմ կազմակերպություններից մեկը՝ կանանց քրիստոնեական լագերը։

Աջ և ձախ թեքումները ՀԱԿ-ի քաղաքականության մեջ

Հունգարական էկոնոմիկայի բազմակազմությունը, հասարակության սոցիալական կազմի խայտաբղետությունը, բուրժուական և մանրբուրժուական գաղափարախոսության ճնշումը արտացոլվեցին ՀԱԿ-ի քաղաքականության և աջ ու ձախ թեքումների երևան գալու մեջ։

Ձախ թեքումը ծնունդ առավ ՀԱԿ-ի ղեկավարության մի մասի ձգտումից՝ անհապաղ ճակատային հարձակում կատարելու գյուղական շահագործողների դեմ։ Ընդ որում հաճախ ոտնահարվում էին նաև միջակ գյուղացիության շահերը, որի հետ սերտ դաշինքը պաշտոնապես հռչակել էր կուսակցությունը։ Վարչարարությունը կոոպերատիվների ստեղծման ժամանակ, բացատրական աշխատանքի նշանակության անտեսումն աղդեց կոոպերացման պրոցեսի ընդհանուր ընթացքի վրա։ Կամավորության սկզբունքի խախտումը և 1951—1952 թթ. կառավարության կողմից գյուղատնտեսական մթերքների պետական պարտադիր մատակարարումների բարձրացված նորմաներ մտցնելը դժգոհություն առաջացրին գյուղացիության մի մասի մեջ։ Ինդուստրիալ քաղաքականության բնագավառում ձախ թեքումն արտահայտվեց ծանր արդյունաբերության զարգացման արագացման մեջ, առանց հնարավորությունները խստիվ հաշվի առնելու, որը հասցրեց անհամամասնությունների՝ տնտեսության զարգացման մեջ և ամբողջությամբ վերցրած՝ տնտեսական դժվարությունների։

Կուսակցության և պետության մեջ գրավելով ղեկավար պոստեր, Մ. Ռակոշիի խումբը միջոցներ չէր ձեռնարկում այդ շեղումներն ուղղելու համար, ավելի ու ավելի էր գլորվում աղանդավորության, բյուրոկրատիզմի, վարչարարության դիրքերը։ Ի խախտումն սոցիալիստական օրինականության, չհիմնավորված բռնությունների ենթարկվեցին մի շարք ազնիվ կոմունիստներ և բանվոր դասակարգի գործի համար պայքարած վաստակավոր մարտիկներ։

1953 թ. հունիսին ՀԱԿ-ի Կենտկոմը բացահայտեց կուսակցության և պետական աշխատանքում դրսևորված սխալները և նշեց դրանց ուղղման միջոցները։ Սակայն սխալներն ուղղելու համար ձեռք առնված միջոցառումները անբավարար կամ ոչ ճիշտ դուրս եկան։ Մի կողմից թերությունների վերացման գործում նշանակալի դեր հատկացվեց Իմրե Նադին, որը մինչ այդ հանդես էր բերել ռևիզիոնիստական միտումներ և նպատակ էր դրել հետագայում ևս թուլացնել ժողովրդական իշխանությունն ու կուսակցության հեղինակությունը, մյուս կողմից, Մ. Ռակոշին և նրա շրջապատը դանդաղում էին իրենց սխալները բացեիբաց ընդունել և ուղղել։ Դրա հետևանքով 1953 թ. հունիսի և 1956 թ. հուլիսի միջև ընկած ժամանակամիջոցում հունգարական աշխատավորական կուսակցության ղեկավարության քաղաքական գիծը շեշտակի տատանումներ ու շեղումներ ունեցավ, որը բարոյալքող ազդեցություն գործեց Հունգարիայի լայն զանգվածների վրա և օգտագործվում էր Հունգարիայի ներսում ու արտասահմանում եղած հակահեղափոխական ուժերի կողմից՝ ժողովրդա-դեմոկրատական իշխանության հեղինակությունը գցելու համար։

Դրան ամեն կերպ նպաստում էր Իմրե Նադը, որը դեռ 1947—1948 թթ. լինելով կոմկուսի, ապա և հունգարական աշխատավորական կուսակցության քաղբյուրոյի անդամ, հանդես էր գալիս սոցիալիստական շինարարությանն անցնելու դեմ։ Իմրե Նադը և կուսակցության ու կառավարության մեջ եղած նրա համախոհները կողմնորոշվում էին դեպի կուլակությունը և քաղաքի մանրբուրժուական խավերը։ Քաղաքական ասպարեզում այդ գիծը տանում էր դեպի բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի և խորհուրդների՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական հիմքի, քայքայմանը։ Կուսակցության շինարարության ասպարեզում ռևիզիոնիստները կոմնորոշվում էին դեպի հայրենական ժողովրդական ճակատը բանվոր դասակարգի կուսակցությունից վեր կանգնած ինքնուրույն քաղաքական կազմակերպության վերածելը։ Լիկվիդատորական գիծը նպատակամղված էր նաև դեպի ՀԱԿ-ում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքից հրաժարվելը։ Գործնական քաղաքականության մեջ աջերի հայացքները առանձնապես ակնհայտորեն դրսևորվեցին 1953—1955 թթ. ՀԺՀ Մինիստրների խորհրդի նախագահի պոստում Իմրե Նադի գտնվելու ժամանակ։ Սոցիալիզմի «հունգարական ուղին» որոնելու պատրվակի տակ Ի. Նադի խումբը աջակցում էր նացիոնալիստական և խրախուսում հակասովետական հայացքները։

Նման իրադրության մեջ գլուխ բարձրացրին նախկին ֆաշիստները, ժանդարմները, խորտիական չինովնիկները և նախկին իշխող դասակարգերի այլ ներկայացուցիչներ։ Արտասահմանից ցույց տրվող շռայլ օգնությամբ սկսեցին ստեղծվել հակահեղափոխական ընդհատակի մեծ ու փոքր խմբեր, որոնք ուղղակի դիվերսիաներ սկսեցին ժողովրդական իշխանության դեմ։

1956 թ. հուլիսին տեղի ունեցած ՀԱԿ-ի Կենտկոմի պլենումը վերլուծեց երկրում տիրող իրադրությունը և ընդունեց մի շարք կարևոր որոշումներ։ Մ. Ռակոշին հեռացվեց ՀԱԿ-ի Կենտկոմի առաջին քարտուղարի պոստից և ՀԱԿ-ի Կենտկոմի քաղբյուրոյի կազմից, թարմացվեց կուսակցության ղեկավարությունը. Կենտկոմի կազմի մեջ մտան Յա. Կադարը, Դ. Կալլաին և այլ ընկերներ, որոնք ուժեղացրին Կենտկոմի լենինյան կորիզը։

Երկյուղելով, որ կուսակցությունն ու Հունգարիայի աշխատավոր զանգվածները սեփական ուժերով կուղղեն սխալները և կբազմապատկեն երկրի նվաճումները, արտասահմանյան և ներքին հակահեղափոխությունը 1956 թ. ամռանն ու աշնանը կատաղի գործունեություն ծավալեց Հունգարիայի ժողովրդա-դեմոկրատական կարգերի դեմ։

1956 թ. հոկտեմբերի 23—նոյեմբերի 4-ի հակահեղափոխական խռովությունը

1956 թ. հոկտեմբերի վերջին—նոյեմբերի սկզբին հունգարական ներքին հակահեղափոխության ուժերն արևմտյան տերությունների իմպերիալիստական ագրեսիվ շրջանների անմիջական հրահրմամբ և աջակցությամբ փորձեցին զինված հակահեղափոխական հեղաշրջում կատարել ՀԺՀ-ում, վերացնել աշխատավորների սոցիալիստական նվաճումները, Հունգարիան պոկել սոցիալիստական երկրների ընկերակցությունից և այն վերածել Սովետական Միության ու մյուս սոցիալիստական պետությունների դեմ նախապատրաստվող պատերազմի պլացդարմի։ Հակահեղափոխության ալիքի վրա իշխանության գլուխ անցավ խռովության գաղափարական գլխավոր ոգեշնչողներից մեկը՝ ռևիզիոնիստ Իմրե Նադը, որը վերստին դարձավ պրեմիեր մինիստր։ Հաշվի առնելով, որ սոցիալիզմը խորությամբ ներթափանցել է աշխատավորության գիտակցության մեջ, հակահեղափոխականներն ըստ կրզբում իրենց վերջնական նպատակը՝ բուրժուական կարգերի վերականգնումը քողարկում էին «սոցիալիզմի», «ազգային կոմունիզմի», «ազգային անկախության», «դեմոկրատացման» և այլ կեղծ լոզունգներով։ Ամբողջ երկրով մեկ սկսվեց սանձարձակ տեռորը կոմունիստների, ժողովրդա-դեմոկրատական

կարգերի կողմնակիցների դեմ։ Հակահեղափոխության սոցիալական բազա էին ծառայում նախկին տիրող դասակարգերի մնացորդները, քաղաքի մանր բուրժուազիան, մտավորականության և ուսանողության անկայուն մասը, ինչպես նաև ապադասակարգայնացված տարրերը։ Հակահեղափոխականները բանտերից արձակեցին և զինեցին մոտ 9,5 հազ. մարդասպանների, թալանչիների, գողերի, ինչպես նաև մոտ 8,5 հազ. ռազմական հանցագործների, որոնք անհապաղ հարեցին պուտչիստների զինված ուժերին։

Գլխավոր հարվածներից մեկը հակահեղափոխությունն ուղղեց կուսակցության դեմ. ռևիզիոնիստների քայքայիչ գործունեության հետևանքով հոկտեմբերի վերջերին ՀԱԿ-ը, ըստ էության, քայքայվեց, որը կազմալուծեց ու ապակողմնորոշեց բանվոր դասակարգին և ամբողջ աշխատավոր բնակչությանը։ Այդ նույն ժամանակ լույս աշխարհ եկան զանազան ռևակցիոն կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնք չէին թաքցնում իրենց ատելությունը ժողովրդա-դեմոկրատական կարգերի հանդեպ։ Հակահեղափոխության ուժերը ցրում էին իշխանության օրինական մարմինները և դրանց փոխարեն ստեղծում «հեղափոխական խորհուրդներ», «ազգային կոմիտեներ» և այլն, որոնց մեծամասնությունը վերահսկվում և նպատակամղվում էր հետադիմորեն տրամադրված տարրերի կողմից։ Միաժամանակ Ի. Նագի կառավարության կազմը ևս անընդհատ փոխվում էր, ավելի ու ավելի աջ ընթանալով։

Խռովարարներին բացահայտորեն հրահրում և աջակցություն էին ցույց տալիս արևմտյան տերությունների իմպերիալիստական շրջանները։ Սպիտակ տեռորի սանձարձակության օրերին Հունգարիայում ակտիվորեն գործում էին Արևմտյան Գերմանիայում, Ավստրիայում և Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում գտնվող հունգարական վտարանդիական կազմակերպությունները։ Նրանք միջոցների հանգանակություն էին կատարում Հունգարիայում սոցիալիստական կարգերի դեմ պայքարելու համար, կազմակերպում Խորտիի ռեժիմի կողմնակիցների թվին պատկանող «տեղափոխված անձանց» փոխադրումը Հունգարիա։ Խռովությունն սկսվելուց անմիջապես հետո ստեղծվեց Վիեննա-Բուդապեշտ «օդային կամուրջը» միջազգային Կարմիր խաչի անունից «նվիրատվությունները» Հունգարիայի բնակչությանը հասցնելու համար։ Իրականում այդ «կամուրջը» լայնորեն օգտագործվեց զենք, զինամթերք, հարյուրավոր նախկին խորտիական զինվորներ ու սպաներ փոխադրելու համար։

Նոյեմբերի սկզբին Հունգարիայի դրությունը բացառիկ ծանրացավ։ Աշխատանքը դադարեցրին արդյունաբերական ձեռնարկությունները, հասարակական տրանսպորտը, պետական հիմնարկությունները։ Կյանքը Բուդապեշտում և մյուս քաղաքներում կազմալուծվեց։ Հակահեղափոխությունը ուղղակիորեն գնում էր դեպի աշխատավորության սոցիալիստական նվաճումների լիկվիդացում։ Իմրե Նագի դավաճանական գործունեության գագաթնակետը հանդիսացավ Վարշավայի պայմանագրի հետ Հունգարիայի խզման մասին հայտարարությունը և օգնության համար անմիջականորեն արևմտյան իմպերիալիստական պետությունների կառավարություններին դիմելը։

Բայց ներքին ու միջազգային հակահեղափոխության հաշիվները ձախողվեցին։ Նրան չպաշտպանեց հունգար գյուղացիների ճնշող մեծամասնությունը, որոնք հիշում էին, որ հենց ժողովրդական իշխանությանն էին պարտական երկրում ագրարային հարցի արդարացի լուծման համար։ Հակահեղափոխության հետևից չընթացավ նաև բանվորների հիմնական զանգվածը։ Նույնիսկ աշխատավորության այն մասը, որը սկզբում տեղի տալով թշնամական պրոպագանդային, հայտնվել էր խռովարարների կողմում, հասկանալով ստեղծված դրության ամբողջ վտանգավորությունը, լքեց նրանց։ Հունգար ժողովուրդն իր մեջ ուժ գտավ սոցիալիստական նվաճումները պաշտպանելու համար։ 1956 թ. նոյեմ-

բերի 4-ին կազմված Հեղափոխական բանվորա-գյուղացիական կառավարությունը վճռականորեն հանդես եկավ հակահեղափոխության գործողությունների դեմ։ Կառավարության գլուխ կանգնեցին Հունգարիայի կոմունիստական կուսակցության ականավոր գործիչներ Յանոշ Կադարը, Ֆերենց Մյունիխը և ուրիշներ։ Վերստեղծվեց միասնական բանվորական կուսակցությունը, Հունգարական սոցիալիստական բանվորական կուսակցությունը (ՀՍԲԿ)։ Իր հայտարարություններում նա հաստատեց Հունգարիայի կոմունիստների և բանվոր դասակարգի հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին, սոցիալիստական երկրների ժողովուրդների սերտ համագործակցությամբ սոցիալիզմի կառուցման խնդիրներին։ Հեղափոխական կառավարությունը հանդես եկավ կուսակցության և երկրի նախկին ղեկավարության թույլ տված սխալները վճռականորեն ուղղելու, ժողովրդադեմոկրատական կարգերը և սոցիալիստական նվաճումները պաշտպանելու, սոցիալիստական շինարարության ուղիով Հունգարիայի հետագա ընթանալու, աշխատավորների կենսամակարդակը արագորեն ու վճռականորեն բարձրացնելու ծրագրով։ Միաժամանակ Հեղափոխական կառավարությունը դիմեց Սովետական Միության կառավարությանը՝ խնդրելով օգնել ժողովրդին հակահեղափոխության դեմ մղվող պայքարում։

Կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը Հունգարիայի աշխատավորության առջև, բոլոր սոցիալիստական երկրների աշխատավորների առջև, սովետական կառավարությունը համաձայնեց այդպիսի օգնություն ցույց տալ։ Հունգարական հեղափոխական ուժերի և սովետական բանակի համատեղ գործողությունների հետևանքով 1956 թ. նոյեմբերին հակահեղափոխական խռովությունը լիկվիդացվեց։

1956 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ՀՍԲԿ Կենտկոմի պլենումը տվեց հոկտեմբեր-նոյեմբերին տեղի ունեցած իրադարձությունների խոր վերլուծությունը։ Այն նշեց, որ հակահեղափոխական խռովությունը Հունգարիայում առաջացավ միաժամանակ գործող չորս գործոնների հետևանքով. 1) կուսակցության ղեկավարության թույլ տված լուրջ սխալների հետևանքով։ Այդ սխալները ծանր հետևանքներ ունեցան ամբողջ երկրի համար, որովհետև խանգարում էին պետության տնտեսական և քաղաքական նորմալ զարգացմանը, նպաստում այնպիսի իրադրության ստեղծմանը, որը բարենպաստ էր ներքին ու արտաքին հակահեղափոխության ակտիվացման համար. 2) Իմրե Նագի ռևիզիոնիստական կլիկի դավաճանական գործունեության հետևանքով, որն սկսեց մարքսիստական-լենինյան տեսության ռևիզիայի փորձերից, իսկ վերջացրեց բանվոր դասակարգին բացահայտորեն դավաճանելով և բուրժուազիայի լագերն անցնելով. 3) ինչպես Հունգարիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հունգարական ֆաշիստական և բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխության ակտիվ գործողությունների հետևանքով. 4) միջազգային իմպերիալիզմի քաղաքականության հետևանքով, որը ձգտում էր Հունգարիայում և մյուս սոցիալիստական երկրներում ժողովրդադեմոկրատական կարգերը տապալելու միջոցով թուլացնել սոցիալիզմի լագերը և պատերազմի օջախ ստեղծել Եվրոպայում։

Հակահեղափոխական պուտչի ջախջախումը հունգար ժողովրդի համար բացեց երկրում սոցիալիզմի հետագա շինարարության ուղին։

ՀԺՀ-ի տնտեսական և քաղաքական դրության կայունացումը

Հակահեղափոխությունը մեծ վնաս հասցրեց ժողովրդական տնտեսությանը։ Արդյունաբերությունը կազմալուծվեց, պարենամթերքի մատակարարումը կատարվում էր ընդհատումներով։ Սակայն հունգար ժողովրդի մեծ մասը պաշտպանեց խռովության հետևանքների վերացման ուղղությամբ հեղափոխական կառավարության եռանդուն միջոցառումները։ Աստիճանաբար

կարգի էր բերվում արտադրությունը, նորմալացվում տրանսպորտի աշխատանքը, վերականգնվում կարգը քաղաքներում ու գյուղերում, ամրապնդվում էին իշխանության օրինական մարմինները։ Այս բոլորը տեղի էր ունենում իրենց քայքայիչ գործունեությունը չդադարեցրած հակահեղափոխական ուժերի մնացորդների դեմ մղվող համառ պայքարում։

Հեղափոխական կառավարության առջև ծառացած ամենադժվարին պրոբլեմը քաղաքների պարենային մատակարարումն էր։ Այն լուծվեց սոցիալիստական երկրների, առաջին հերթին Սովետական Միության եղբայրական օգնության շնորհիվ։ Միայն մինչև 1957 թ. փետրվարի 1-ը բարեկամ երկրները Հունգարիային ցույց տվեցին 700 մլն. ֆորինտ դոլարի նյութական օգնություն։ Սոցիալիստական երկրների ժողովուրդների օգնությամբ ժողովրդական Հունգարիային հաջողվեց կանխել ինֆլյացիան, ապահովել վալյուտայի կայունությունը և խուսափել սովից ու գործազրկությունից։ Կառավարությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ աշխատավորների կենսական պայմանների բարելավման ուղղությամբ։ Բարձրացվեց բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների, դասատուների, ծառայողների շատ կատեգորիաների աշխատավարձը, որի հետևանքով 1957 թ. աշխատավարձի ֆոնդն աճեց 4 մլրդ. 300 մլն. ֆորինտով։

Կուսակցությունն ու կառավարությունը գործնական միջոցներ ձեռնարկեցին բանվորների ու գյուղացիների դաշինքն ամրապնդելու համար. վերացվեցին պարտադիր մատակարարումներն ու պարտադիր ապահովագրումը, մենատնտես գյուղացիներին (չքավորներին և միջակներին) տրվեցին պետական վարկեր։ Հեղափոխական կառավարությունը նաև միջոցներ ձեռնարկեց զինված ուժերի վերակառուցման, պրոլետարական դիկտատուրայի պաշտպանության մարմինների ամրապնդման ուղղությամբ։ Կանոնավոր զորամասերի, ոստիկանության, պետական անվտանգության մարմինների վերականգնման հետ մեկտեղ բանվորների նախաձեռնությամբ ստեղծվեց «բանվորական պահպանություն», որի ջոկատները մշտական հերթապահություն սահմանեցին շատ ձեռնարկություններում։ Ժողովրդական պետության պաշտպանության մեջ ներգրավելով առավել գիտակից բանվորների, հանքափորների, գյուղացիների, հեղափոխական կառավարությունը միաժամանակ սկսեց զինված ուժերը զտել թշնամական և անկայուն տարրերից։ Այդ նույն ժամանակ կառավարությունը միջոցներ ձեռնարկեց իրավակարգն ամրապնդելու, սոցիալիստական օրինականությունը խստիվ պահպանելու համար։ 1957 թ. վերջին խռովության հիմնական դժվարությունները հաղթահարվեցին։ Հունգարիայի ժողովրդական տնտեսությունը վերականգնվեց և հասավ 1955 թ. մակարդակին։

1958-ից մինչև 1960 թվականը Հունգարիայում իրականացվում էր երկրորդ եռամյա պլանը, որի իրագործումը նշանավորվեց սոցիալիստական շինարարության մեջ ձեռք բերված նոր հաջողություններով։ 1957—1960 թթ. Հունգարիայի ազգային եկամուտն աճեց 20%-ով (պլանով նախատեսված էր 15%), աճեց աշխատանքի արտադրողականությունը, կրճատվեցին արտադրության ծախսերը, նվազեց արտադրանքի ինքնարժեքը։ 50-ական թվականների երկրորդ կեսից Հունգարիայի էկոնոմիկայում ավելի մեծ դեր սկսեց խաղալ տնտեսական համագործակցությունը մյուս սոցիալիստական երկրների հետ, ինչպես նաև արդյունաբերության այն ճյուղերի զարգացումը, որոնք տնտեսապես ավելի շահավետ էին Հունգարիայի պայմաններում՝ հաստոցաշինություն, սարքաշինություն, կապի միջոցների, դիզելների, լոկոմոտիվների, ուժեղ և թույլ հոսանքի էլեկտրատեխնիկայի, դեղագործական ապրանքների առանձին տեսակներ։

Գյուղատնտեսության սոցիալիստական կոոպերացման ավարտումը։ Սոցիալիզմի հիմքերի կառուցումը

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսում շրջադարձային եղան 1959—1960 թվականները։ ՀՍԲԿ-ն վիթխարի քաղաքական և կազմակերպչական աշխատանք կատարեց գյուղացիության արտադրական կոոպերացման ուղղությամբ։ Գյուղերում տեղական կուսակցական կազմակերպությունների շուրջն ստեղծվեց կոոպերացիայի անդամ առավել հեղինակավոր գյուղացիներից, ինչպես նաև սոցիալիզմի գործին նվիրված մանկավարժներից, գյուղատնտեսներից և այլ անձանցից կազմված լայն ակտիվ։ Գյուղական կուսակցական կազմակերպությունները, որոնք գործում էին տեղական ակտիվիստների հետ ունեցած սերտ կապի պայմաններում, հանդես էին գալիս որպես գյուղում կուսակցության քաղաքականության գլխավոր իրականացնողներ։ ՀՍԲԿ-ն նախազգուշացնում էր ընդդեմ շտապողականության և վարչարարության արտադրական կոոպերատիվների կազմակերպման գործում, կոչ էր անում պահպանել կամավորության սկզբունքը։ Պետությունը զգալի միջոցներ տրամադրեց գոյություն ունեցող և նոր ստեղծվող գյուղատնտեսական կոոպերատիվներին տեխնիկա, սերմեր, պարարտանյութեր մատակարարելու նպատակով։ Մենեքատրակտորային կայանների միջոցով գյուղին մատակարարվում էր տարբեր տեսակի մեքենաներ և գյուղատնտեսական գործիքներ. միայն 1958—1960 թթ. կրկնապատկվեց գյուղատնտեսական աշխատանքների հիմնական տեսակների մեքենայացումը։ Մենատնտես գյուղացիների վրա համոզիչ կերպով ներգործում էին նաև ավելի վաղ ստեղծված կոոպերատիվների հաջողությունները։ Կոոպերացման զարգացման գործում որոշակի դեր խաղաց նաև թոշակների սահմանումը արտադրական կոոպերատիվների անդամների համար, ինչպես նաև մի շարք կոոպերատիվներում կիրառված այն գյուղացիներին հողային renտա վճարելու կարգը, որոնք կոոպերատիվ էին մտել իրենց հողով։ Այդ բոլոր միջոցառումները ապահովեցին սոցիալիստական վերափոխությունների հաջող իրականացումը գյուղատնտեսության մեջ։ 1961 թ. ամռանը կոոպերատիվները մշակում էին երկրի վարելահողերի արդեն 95 տոկոսից ավելին։ Սոցիալիստական արտադրական հարաբերությունները գյուղատնտեսության բնագավառում հաղթանակեցին։ Կարևոր է նշել, որ ագրարային հարաբերությունների արմատական վերակառուցման ընթացքում գրեթե տեղի չունեցավ գյուղատնտեսական արտադրության մակարդակի նվազում։ ՀՍԲԿ-ը կարողացավ գյուղացիական հիմնական զանգվածներին գրավել կոոպերացման դաղափարով, ճիշտ կազմակերպել նոր կյանքի հետ գյուղացիների հաղորդակցման պրոցեսը, որով և մեկուսացրեց թշնամական տարրերին։ Մեծ նշանակություն ունեցավ նաև պետության ճկուն քաղաքականությունը նախկին կուլակների հանդեպ, որը անց էր կացվում 1956 թ. հետո. նրանց հնարավորություն էր ընձեռվում հաղորդակցվել սոցիալիստական շինարարությանը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման իրականացումը ՀՍԲԿ VIII համագումարին թույլ տվեց 1962 թ. նոյեմբերին արձանագրելու Հունգարիայի սոցիալիստական զարգացման կարևոր փուլի, սոցիալիստական արտադրական հարաբերությունների անբաժան տիրապետության հաստատման ավարտումը։ ՀՍԲԿ VIII համագումարը նշեց, որ Հունգարիայում կառուցված են սոցիալիզմի հիմքերը և հունգարական ժողովրդի առջև ծառացել է զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման խնդիրը։ Էկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցումը հասցրեց հասարակության դասակարգային կառուցվածքի փոփոխությանը, հասարակություն, որի հիմքն են այսուհետև կազմում երկու բարեկամ դասակարգերը՝ բանվոր դասակարգը և կոոպերացված գյուղացիությունը։ Նրանց հետ անխզելի կա-

պերով կապված են ժողովրդական մտավորականությունը և ծառայողները։ Ընդմիշտ վերացված է մարդու կողմից մարդու շահագործումը։ Ժողովրդական իշխանության տարիներին երկրում իրականացված կուլտուրական հեղափոխությունը վերջ տվեց անգրագիտությանը, Հունգարիայում բուռն զարգացում ապրեցին գիտությունը, գրականությունը, արվեստը։ Ստեղծված է ուսումնական և կուլտուր-լուսավորական հիմնարկների, ակումբների, գրադարանների, կուլտուրայի տների զարգացած ցանց։

ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հունգարական ժողովրդական Հանրապետության տնտեսական զարգացումը 60-ական թվականներին

Սոցիալիզմի հիմքերի կառուցման ավարտը Հունգարիայում տեղի էր ունենում ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի (1961—1965) կատարման ժամանակաշրջանում։ Այդ տարիներին ավելացավ ազգային համախառն արտադրանքը, բարենպաստ փոփոխություններ կատարվեցին արդյունաբերության կառուցվածքում և արտադրողական ուժերի տեղաբաշխման բնագավառում։ Դրան նպաստեց կապիտալ ներդրումների մոտ երեք քառորդի հատկացումը նախկինում արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած շրջաններին։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը նպաստեց հընգամյակի ընթացքում արտադրանքի արտադրության և հումքի աճին. այն կազմեց 27%։

Պահանջվում էր փոփոխություններ մտցնել սոցիալիստական Հունգարիայի տնտեսական քաղաքականության մեջ՝ նրա տնտեսական զարգացման նոր մակարդակին համապատասխան։ Անհետաձգելի անհրաժեշտություն առաջացավ ավելի եռանդուն օգտագործելու գիտատեխնիկական հեղափոխության հնարավորությունները, անցնելու էկոնոմիկայի ինտենսիֆիկացմանը, բարելավելու տնտեսական ղեկավարումը, օգտագործելու աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման առավելություններն այն հաշվով, որպեսզի բարձրացվեն տնտեսական զարգացման տեմպերը և արդյունավետ օգտագործվեն երկրի բնական ու աշխատանքային ռեսուրսները։ Արդեն 1964 թ. վերջին ՀՍԲԿ Կենտկոմը շտապ միջոցներ ձեռնարկեց տնտեսական ղեկավարման բարելավման և աշխատանքային կարգապահության բարձրացման ուղղությամբ։ 1966 թ. մայիսին ՀՍԲԿ Կենտկոմը որոշում ընդունեց տնտեսական ռեֆորմի մասին, որի իրականացումը սկսվեց 1968 թ. հունվարից։ Ռեֆորմի ընթացքում տնտեսական ֆունկցիաների զգալի մասը կառավարության և մինիստրությունների իրավասությունից հանվեց և հանձնվեց ձեռնարկություններին ու խորհուրդներին։ Կենտրոնական պետական մարմինների խնդրի մեջ այսուհետև մտնում էր ժողովրդատնտեսական հիմնական համամասնությունները գիտականորեն որոշելը, երկարժամկետ պլանների մշակումը։ Որպես էկոնոմիկայի ղեկավարման հիմնադիր սկզբունք պահպանելով կենտրոնացված պլանավորումը, ռեֆորմը նախատեսում էր ապրանքադրամական հարաբերությունների ավելի լայն օգտագործում։ Ուժեղանում էր արտադրության արդյունավետության բարձրացման այնպիսի տնտեսական լծակների դերը, ինչպիսիք են վարկային քաղաքականությունը, տնտեսական հաշվարկը, շահույթը և այլն։

Տնտեսական ռեֆորմը բարենպաստ ազդեցություն ունեցավ 1966—1970 թթ. ժողովրդատնտեսական երրորդ հնգամյա պլանի ծրագրի ավարտման վրա։ Նրա հաջող կատարման հետևանքով երկրի ազգային եկամուտը գրեթե 40%-ով գերազանցեց պլանային առաջադրանքը։ Արդյունաբերական արտադրանքն ավելացավ 33—35%-ով, իսկ գյուղատնտեսականը՝ 16—17%-ով։ Բանվորների և գյուղացիների՝ բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները 1950 թ. մակարդակի համեմատությամբ ավելացան 2,3 անգամ։ Երրորդ հնգամյակի կատարումը ՀԺՀ-ին զգալիորեն առաջ մղեց զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման խնդրի իրագործման ճանապարհին։

Հունգարիայում, ինչպես և մյուս սոցիալիստական երկրներում, բանվորներն ու ծառայողները, բացի դրամական աշխատավարձից, սպառման հասարակական ֆոնդերից ստանում են սոցիալական ապահովության գծով վճարումներ, թոշակներ, զանազան նպաստներ, սովորողների կրթաթոշակներ, օգտվում են անվճար ուսուցումից և բուժսպասարկումից։ Հասարակական ֆոնդերից վճարվում է մանկապարտեզների, մանկամսուրների և այլնի համար։ Սոցիալական ապահովությունը Հունգարիայում տարածվում է բնակչության գերակշռող մասի վրա։

ՀՍԲԿ ղեկավար դերի ամրապնդումը։ Սոցիալիստական դեմոկրատիայի զարգացումը

Սոցիալիստական Հունգարիայի հաջողություններն ու նվաճումներն անխզելիորեն կապված են հասարակության նյութական և հոգևոր կյանքի բոլոր ոլորտներում Հունգարական սոցիալիստական բանվորական կուսակցության ղեկավար դերի բարձրացման հետ։ Անխոնջ կերպով ամրապնդելով իր շարքերը, ընդլայնելով կապերը ժողովրդի հետ, ՀՍԲԿ-ն վճռական պայքար է մղում սոցիալիստական շինարարության խնդիրների իրականացման համար։ Այդ խնդիրները լուծելիս հունգար կոմունիստների համար անսասան հիմք են ծառայել նոր հասարակության կառուցման՝ մարքսիզմ-լենինիզմի բացահայտած ընդհանուր օրինաչափությունները, Սովետական Միության, միջազգային հեղափոխական շարժման պատմական փորձի հաշվառումը։ Միաժամանակ ՀՍԲԿ-ն հաշվի է առնում նաև ազգային առանձնահատկությունները, իր երկրի առանձնահատուկ պայմաններն ու հնարավորությունները։ Կուսակցությունը մշտապես կատարելագործում է կազմակերպական կառուցվածքը, զարգացնում ներկուսակցական դեմոկրատիան, ապահովում իր գործունեությունը դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հիման վրա, զարգացնում կուսակցական կյանքի լենինյան նորմերը։ Իր միջազգային գործունեության ասպարեզում ՀՍԲԿ-ն ղեկավարվում է հունգար ժողովրդի շահերով և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, պաշտպանելով հեղափոխական ուժերի միասնությունը իմպերիալիզմի, գաղութատիրության դեմ, խաղաղության և սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման ծրագրի իրականացման գործում եղած ամենակարևոր խնդիրներից մեկը ՀՍԲԿ-ն համարում է սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացումը և կատարելագործումը։ Կուսակցությունը հատուկ ուշադրություն է դարձնում ՀԺՀ-ի պետական համակարգի բոլոր ընտրովի մարմինների ակտիվության խթանմանը։ Աճել է Պետական ժողովի դերը կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ասպարեզում։ Պետական ժողովի մշտական հանձնաժողովները մանրամասն քննարկում են բոլոր օրենագծերը, լսում մինիստրների և նրանց տեղակալների հաշվետվությունները։ Վերջին տարիներս Պետական ժողովում ավելացել է տեղերից եկած դեպուտատների թիվը. պառլամենտական կոմիտեներին առընթեր կազմված են դեպուտատական խմբեր, որոնք կապված են ընտրողների հետ տեղերում, ուսումնասիրում են բնակչության կարիքներն ու պահանջները, օժանդակում դրանց արագ լուծմանը։

Սոցիալիստական դեմոկրատիայի հետագա կատարելագործմանն են ուղղված նաև ընտրական համակարգի այն փոփոխությունները, որոնք կատարվե-

ցին 1966—1967 թթ. և 1970 թ.։ Ընտրական նոր օրենքով ընտրողներն իրավունք ունեն տեղական խորհուրդների և Պետական ժողովի ընտրությունների ժամանակ առաջադրել ոչ թե մեկական, այլ երկու և ավելի թեկնածուներ, որոնք հանդես են գալիս Հայրենական ժողովրդական ճակատի ընդհանուր քաղաքական պլատֆորմով։ Ընդլայնվել են տեղական խորհուրդների իրավունքները, ամրապնդվել նրանց նյութական բազան և բարձրացել ինքնուրույնությունը բնակարանային շինարարության հարցերում, կուլտուրայի, առողջապահության, կրթության և առևտրի հիմնարկների կառավարման գործում։

Աշխատանքի վերաբերյալ նոր օրենսգիրքը (1967) ընդլայնել է արհմիությունների իրավասությունը և դերը ձեռնարկությունների տնտեսական գործունեության ասպարեզում։ Արհմիությունները կոնսուլտացիաների են ներգրավվում տնտեսական ղեկավարներին աշխատանքի նշանակելիս կամ ազատելիս։ Դա նպաստում է աշխատավորների ավելի լայն ընդգրկմանը ձեռնարկությունների անմիջական կառավարմանը, ամրապնդում պետական և արհմիութենական մարմինների փոխգործողությունը տնտեսական քաղաքականության իրականացման ասպարեզում։

1970 թ. նոյեմբերին տեղի ունեցավ ՀՍԲԿ X համագումարը, որը մեծ իրադարձություն եղավ կուսակցության և ամբողջ երկրի կյանքում։ Իր X համագումարի պահին ՀՍԲԿ-ն 662 հազ. անդամ ունեցող համախմբված առաջավոր ջոկատ էր։ Համագումարը հանրագումարի բերեց անցած ուղին, բազմակողմանիորեն վերլուծեց ՀԺՀ ներքին և արտաքին քաղաքական դրությունը, նշեց կուսակցության խնդիրները ապագայում։ Ինչպես նշված է համագումարի որոշման մեջ, անցած տարիներին երկրում շարունակել են զարգանալ սոցիալիստական արտադրահարաբերությունները, ամրապնդվել է բանվորական իշխանությունը, ավելի բարձր գաղափարական և քաղաքական մակարդակի վրա է բարձրացել բանվորագյուղացիական դաշինքը։ Համագումարը հաստատեց չորրորդ հնգամյա պլանի (1971—1975) հիմնական նախագծերը և կուսակցության անդամներին, բոլոր աշխատավորներին կոչ արեց բազմապատկել ջանքերը Հունգարական Ժողովրդական Հանրապետությունում սոցիալիզմի լիակատար շինարարության համար։

ՀԺՀ-ի արտաքին քաղաքականությունը և միջազգային դրությունը

ՀԺՀ արտաքին քաղաքականությունը որոշվում է նրա սոցիալ-տնտեսական կարգերի էությամբ։ Այդ քաղաքականությունն ուղղված է ժողովրդի սոցիալիստական նվաճումների պահպանմանն ու ամրապնդմանը, զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման համար արտաքին քաղաքական պայմանների ապահովմանը։ Դրան համապատասխան, երկրի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝ հունգարա-սովետական բարեկամությունը, հավատարմությունը սոցիալիստական ընկերակցությանը, իմպերիալիզմին ընդդիմանալու քաղաքականությունը, տարբեր սոցիալական կարգեր ունեցող պետությունների և ժողովուրդների հետ խաղաղ գոյակցությունը։ Սոցիալիստական Հունգարիան դիվանագիտական հարաբերություններ է պահպանում 104 երկրների հետ և 600 միջազգային կազմակերպությունների, այդ թվում Միավորված ազգերի կազմակերպության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի։

Սոցիալիստական երկրների հետ ժողովրդական Հունգարիայի բարեկամության ամրությունը հիմնվում է ժողովուրդներին գլխավորող մարքսիստական կուսակցությունների գաղափարական միասնության, պետական-քաղաքական կարգերի և նպատակների ընդհանրության վրա։ Այն հիմնվում է պատերազմի դեմ, խաղաղ գոյակցության համար մղվող համատեղ պայքարի վրա։ ՀԺՀ-ն մասնակցում է Վարշավայի պայմանագրի երկրների պաշտպանական կազմակերպությանը։

Հունգարա-սովետական բարեկամությունը Հունգարիայում սոցիալիզմի հաջող կառուցման կարևոր գործոնն է։ Ժամանակի փորձությունը պատվով բռնեց ՀԺՀ-ի և ՍՍՀՄ-ի միջև 1948 թ. փետրվարին կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը։ 1967 թ. սեպտեմբերին Բուդապեշտում ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության սովետա-հունգարական նոր պայմանագիր։ Ամրապնդելով նախորդ տարիների սովետա-հունգարական կապերի զարգացման ընթացքում եղած բոլոր կարևորագույն նվաճումները, այն նաև նոր 20-ամյակի ծրագիր է։ Ավելի ու ավելի են ընդարձակվում Հունգարիայի կապերն ու միջպետական հարաբերությունները Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրների հետ։ Հունգարիան միասնական ճակատով հանդես է գալիս այն ժողովուրդների հետ, որոնք պայքարում են գաղութատիրության դեմ՝ նրա բոլոր դրսևորումներով հանդերձ։

Իրականացնելով խաղաղ գոյակցության քաղաքականություն, ՀԺՀ-ն ձգտում է կապիտալիստական երկրների հետ հարաբերությունների նորմալացմանը։

Ընդլայնվում են ժողովրդական Հունգարիայի արտաքին տնտեսական կապերը։ ՀԺՀ-ն ակտիվ առևտուր է անում ավելի քան 140 երկրների հետ։ Հունգարիայում ժողովրդադեմոկրատական կարգեր հաստատվելուց հետո փոխվեց արտաքին առևտրի բնույթը և աշխարհագրական ուղղությունը։ Ներկայումս հունգարական ապրանքաշրջանառության ավելի քան 2/3-ն ընկնում է Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ կատարվող առևտրին։ Հունգարիայի տնտեսական հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ զարգանում են ոչ միայն արտաքին առևտրի գծով։ Տարեցտարի կատարելագործվում են ֆինանսավարկային կապերը, սիստեմատիկորեն համաձայնեցվում ՀԺՀ-ի, մյուս երկրների էկոնոմիկայի զարգացման պլանները, իրականացվում գիտական և տեխնիկական փաստաթղթերի փոխադարձ փոխանակություն, համագործակցություն արդյունաբերական ձեռնարկությունների և այլ օբյեկտների նախագծման, կառուցման և շահագործման հանձնելու ասպարեզում, ինժեներատեխնիկական կադրերի և մասնագետների պատրաստման, մշակույթի և գիտության բնագավառներում։ ՀԺՀ-ն ՏՓԽ-ի շրջանակներում ակտիվորեն համագործակցում է աշխատանքի սոցիալիստական բաժանմանը։

1975 թ. մարտի 17—22-ին տեղի ունեցավ ՀՍԲԿ XI համագումարը, որը քննարկեց և հավանություն տվեց հինգերորդ հնգամյա պլանի (1976—1980) հիմնական խնդիրներին։ ՀՍԲԿ-ն իր առջև խնդիր է դնում նպաստել Հունգարիայում զարգացած սոցիալիստական հասարակության ստեղծմանը, նրա մոտեցմանը պատմական նպատակին՝ կոմունիզմին։

ԳԼՈՒԽ 6

ԱԼԲԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հակաֆաշիստական ազգային-ազատագրական պայքարը և ժամանակավոր դեմոկրատական կառավարության կազմավորումը (1944 թ. մայիսի 24)

1939 թ. ապրիլին ֆաշիստական Իտալիան զավթեց Ալբանիան, իսկ 1943 թ. սեպտեմբերին այնտեղ մտան նացիստական Գերմանիայի զորքերը։ Երկրում հաստատվեց օկուպացիոն ռեժիմ։ Ալբանական ժողովուրդը պատերազմի առաջին իսկ օրերից ոտքի կանգնեց հակաֆաշիստական ազգային-ազատագրական պայքարի։ Սակայն 1939—1941 թթ. դիմադրությունը կրում էր տարերային բնույթ։ Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի սկսվելը, պարտիզանական շարժման վերելքը Հունաստանում և Հարավսլավիայում բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին Ալբանիայում ազգային-ազատագրական պայքարի ակտիվացման համար։ 1941 թ. նոյեմբերի սկզբին Տիրանայում կայացած կոմունիստների ընդհատակյա ժողովում կազմավորվեց Ալբանիայի կոմունիստական կուսակցությունը (ԱԿԿ)։ Կուսակցության մեջ այդ ժամանակ կար ընդամենը 200 մարդ՝ հիմնականում մտավորականության և սովորող երիտասարդության ներկայացուցիչներ։

Կուսակցության ղեկավար կորիզը և կազմակերպական կառուցվածքը ձևավորվում էին ազգային-ազատագրական պայքարի զարգացման պրոցեսում։ Միայն 1943 թ. մարտին հնարավոր դարձավ մշտական կենտկոմի ստեղծումը։ Պատերազմի ամբողջ ընթացքում ԱԿԿ-ն միակ քաղաքական կուսակցությունն էր երկրում։ Նա ղեկավարում էր ծավալվող ազատագրական պայքարը լայնորեն օգտագործելով միջազգային կոմունիստական և բանվորական շարժման փորձն ու ուղղակի օգնությունը։ 1942 թ. փետրվարին ԱԿԿ-ի նախաձեռնությամբ սկսեցին ստեղծվել ազգային-ազատագրական խորհուրդներ՝ ժողովրդական իշխանության մարմինները տեղերում։ Այդ նույն թվականի սեպտեմբերին ստեղծվեց ազգային-ազատագրական ճակատը (ԱԱՃ), որի գլխավոր խորհուրդն իր ձեռքը վերցրեց խորհուրդների և ազատագրական շարժման ղեկավարությունն ամբողջ երկրի մասշտաբով։ Ռեակցիայի ուժերը փորձեցին ԱԱՃ-ին հակադրել «Բալլի կոմբետար» («Ազգային ճակատ») իրենց կազմակերպությունը և կանգ չէին առնում քաղաքացիական պատերազմ սանձազերծելու առջև։

Սովետական բանակի հաղթանակները, աճող պարտիզանական պայքարի թափը Բալկաններում ոգեշնչում էին ալբանական հայրենասերներին։ Սովետական կառավարությունը 1942 թ. դեկտեմբերին «Ալբանիայի անկախության մասին» դեկլարացիայում հայտարարեց հետպատերազմյան պետական կառուցվածքի հարցերը ինքնուրույն որոշելու ալբան ժողովրդի անքակտելի իրավունքը պաշտպանելու մասին։

1944 թ. մայիսի 24-ին ազատագրված Պերմետ քաղաքում հակաֆաշիստական ազգային-ազատագրական I կոնգրեսում ստեղծվեց օրենսդիր մարմին՝ հակաֆաշիստական ազգային-ազատագրական խորհուրդ (ՀԱԱԽ), որը կազմեց ժամանակավոր կառավարության իրավունքներով օժտված հակաֆաշիստական ազգային-ազատագրական կոմիտե։ Այդ կոմիտեն 1944 թ. հոկտեմբերին Բերատում կայացած ժողովում 1945 թ. վերանվանվեց դեմոկրատական կառավարություն։ Այդ ժամանակ էլ կատարվեց խորհուրդների ֆունկցիաների

ճշգրտումը և փոփոխությունը։ Լինելով պետական իշխանության մարմիններ, նրանք դուրս եկան ԱԱՃ-ի ենթակայությունից։ Դեմոկրատական ճակատ վերանվանված ԱԱՃ-ն իր գործունեությունը սահմանափակեց զանգվածների մեջ կատարվող քաղաքական աշխատանքով։ Այն միավորում էր ԱԿԿ-ին, կոմունիստական և հակաֆաշիստական երիտասարդության միություններին, կանանց միությանը, բանվորական արհմիություններին։

Օկուպանտներից Ալբանիայի տարածքի ազատագրմանը զուգընթաց դեմոկրատական կառավարության իշխանությունը տարածվում էր ամբողջ երկրում։ Շկոդրա քաղաքի ազատագրմամբ 1944 թ. նոյեմբերի 29-ին այդ պրոցեսն ավարտվեց։

Ժողովրդական իշխանության մարմինների գործունեությունը

Հակաֆաշիստական ազգային-ազատագրական պայքարում ալբան ժողովրդի տարած հաղթանակի և այդ ընթացքում ծավալված ժողովրդա դեմոկրատական հեղափոխության հետևանքով երկրում հաստատվեց բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի իշխանություն։ Ղեկավար դերն այդ դաշինքում պատկանում էր Ալբանիայի կոմունիստական կուսակցությանը։ Այդ հաղթանակը պայմաններ ստեղծեց ժողովրդա-դեմոկրատական հեղափոխության հետագա զարգացման և նրա՝ սոցիալիստական վերաճելու համար։

Երիտասարդ պետության առջև կանգնած էին մեծ դժվարություններ։ Իտալա-գերմանական օկուպացիան մեծ վնաս էր հասցրել երկրի էկոնոմիկային։ Բացի այդ, բնակչության 80%-ը անգրագետ էր։ Զգացվում էր տնտեսական գործունեության համար տեսականորեն ու գործնականորեն պատրաստված կադրերի սուր պակաս։

Պրոլետարիատը թույլ էր և սակավաթիվ, իսկ կուսակցությունը, որը կրում էր կոմունիստական անունը, ըստ էության, դեռ միայն նոր էր մտել աշխատավորների հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունից բանվոր դասակարգի մարքսիստական-լենինյան կուսակցության վերափոխվելու շրջանը։ Ժողովրդական իշխանությունը պետք է վերափոխություններ սկսեր մի այնպիսի հետամնաց ագրարային երկրում, որը չէր անցել զարգացած կապիտալիզմի փուլը։ Երիտասարդ կոմկուսը, որը հարստացել էր ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ձեռք բերված մարտական փորձով, դեռ պետք է յուրացներ տնտեսական, քաղաքական և կուլտուրական շինարարության փորձը, գործնականում ապացուցեր Վ. Ի. Լենինի կանխատեսությունն այն մասին, որ ժողովրդական տնտեսության զարգացման կապիտալիստական փուլն անխուսափելի չէ այն երկրների համար, որտեղ գերիշխել են մինչկապիտալիստական հարաբերությունները։

Ժամանակավոր դեմոկրատական կառավարությունը մի շարք միջոցառումներ անցկացրեց էկոնոմիկայի վերականգնման ուղղությամբ, որոնք միաժամանակ դարձան ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի ստեղծման առաջին քայլերը։ 1944 թ. դեկտեմբերին պետական վերահսկողություն սահմանվեց ալբանական բուրժուազիային պատկանող արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների և բաժնետիրական ընկերությունների նկատմամբ. որոշում ընդունվեց քաղաքական բոլոր վտարանդիների սեփականության բռնագրավման մասին։ 1945 թ. հունվարին բռնագրավվեց Ալբանիայում գտնվող Իտալիայի և Գերմանիայի պետական սեփականությունը, իսկ նրանց հպատակների սեփականությունը վերահսկողության տակ վերցվեց, վերացվեցին բոլոր օտարերկրյա բանկերը, ստեղծվեց ալբանական պետական բանկ։ Այդ ժամանակ էլ ընդունվեց մասնավոր սեփականության բռնագրավման ընդհանուր հիմունքների մասին օրենքը, որի հիման վրա սե-

փականաղրկվում էին ալբանական բուրժուաներն ու առևտրականները։ Այդ բոլոր միջոցառումների հետևանքով 1947 թ. առաջին կեսին արդյունաբերության մեջ եղած մասնավոր սեկտորը գրեթե լիովին վերացվեց։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ արդյունաբերական ձեռնարկությունները (արհեստագործականի հետ միասին) տալիս էին նախապատերազմյան Ալբանիայի համախառն արտադրանքի հազիվ 18%-ը։ Էկոնոմիկայի հիմքը հետամնաց գյուղատնտեսությունն էր, որի վերափոխումից էր շատ բանով կախված ժողովրդական տնտեսության հաջողությունն ամբողջությամբ վերցրած։ Ագրարային ռեֆորմը անցկացվեց 1945 թ. օգոստոսից մինչև 1946 թ. նոյեմբերը։ 1945 թ. օգոստոսի 29-ին հրապարակված օրենքի հիմքում դրվեց «Հողը պատկանում է նրանց, ովքեր այն մշակում են» սկզբունքը։ Կալվածատերերից ու կուլակներից (աղաներից) բռնագրավված հողը անվարձահատույց հանձնվում էր գյուղացիներին։ Ի զարգացումն հիմնական օրենքի, 1946 թ. սկզբին հրապարակվեցին լրացումներ, որոնց համաձայն արգելվում էին վարձու աշխատանքի կիրառումը, հողի, խաղողի այգիների, ձիթենու պուրակների վարձակալությունը, առք-վաճառքը։ Ազգայնացվեցին խոշոր անասնատիրական տնտեսությունները։ Ագրարային ռեֆորմը քայքայեց կալվածատերերի դասակարգի տնտեսական բազան և զգալիորեն սահմանափակեց կուլակության գործունեության ոլորտը։

Պատերազմի տարիներին և խաղաղության առաջին ամիսներին ալբան ժողովրդի ձեռք բերած քաղաքական ու տնտեսական նվաճումներն ամրապնդվեցին օրենսդրական կարգով։ Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ, որոնք տեղի ունեցան 1945 թ. դեկտեմբերի 2-ին, դեմոկրատական ճակատի դեպուտատության թեկնածուներն ստացան ընտրողների բոլոր ձայների 93%-ը և մանդատների գերակշռող մեծամասնությունը։ 1946 թ. հունվարի 11-ին Ժողովրդական ժողովի առաջին նստաշրջանն Ալբանիան հռչակեց ժողովրդական հանրապետություն։ Այդ նույն թվականի մարտի 14-ին ընդունվեց նոր պետության սահմանադրությունը։

Անցում դեպի սոցիալիզմի հիմքերի կառուցումը

Ընդհանուր գծերով համադեմոկրատական վերափոխությունների հաջող ավարտումը ԱԿԿ-ին հնարավորություն տվեց առաջին պլան մղելու սոցիալիստական բնույթի խնդիրներ։ Կողմնորոշումը դեպի սոցիալիզմի շինարարություն առաջին անգամ արձանագրվեց 1946 թ. փետրվար-մարտին տեղի ունեցած ԱԿԿ Կենտկոմի V պլենումի որոշումներում։ Ալբանիայի կոմունիստական կուսակցության I համագումարը 1948 թ. նոյեմբերին նշեց սոցիալիզմի հիմքերի կառուցման ծրագիրը։ Այդ համագումարում ԱԿԿ-ն վերանվանվեց Ալբանիայի աշխատանքի կուսակցություն։

Ալբան ժողովուրդը Սովետական Միության և ժողովրդա դեմոկրատական երկրների օգնությամբ մեծ հաջողությունների հասավ երկրի վերականգնման և էկոնոմիկայի զարգացման գործում։ Կարճժամկետ պլանների կատարման ընթացքում կուտակվեց բավականաչափ փորձ, որը թույլ տվեց անցնելու հնգամյակներով պլանավորման։ Որպես հիմնական խնդիր առաջ քաշվեց սոցիալիզմի տնտեսական հիմքերի կառուցումը։ Այդ խնդիրը լուծվելու էր երկու հնգամյակների (1951—1955, 1956—1960) ընթացքում։

Անցյալից ժառանգած տեխնիկատնտեսական հետամնացությունը հաղթահարվում էր ինդուստրացման ծրագրի իրականացմամբ։ Ալբանիան 1949 թ. մտավ ՏՓԽ-ի մեջ։ Որպես այդ կազմակերպության անդամ նա օգտվում էր եղբայրական երկրների ինտերնացիոնալ օգնությունից։ Սովետական Միությունը ԱԺՀ-ին արդյունավետ օգնություն էր ցույց տալիս վարկերով, սարքավորումներով, մասնագետ կադրերով։ Սովետական Միության օգնությամբ առաջին հնգամյակների տարիներին ստեղծվեց ալբանական արդյունաբերության կորիզը՝ էլեկտրակայաններ, նավթամշակման և շաքարի կոմբինատներ, քրոմիտի, պղնձի, երկաթի-նիկելի, քրոմի հանքահորեր և այլն։ Լեռնահանքային և նավթի արդյունաբերության բոլոր սարքավորումների 92%-ը, բեռնատար ավտոմոբիլների մոտ 90%-ը, տրակտորների ավելի քան 80%-ը, գյուղատնտեսական մյուս մեքենաների 65%-ից ավելին մատակարարվում էր Սովետական Միությունից։

Ամբողջությամբ վերցրած արդյունաբերության զարգացման հաջողությունները այնպիսին էին, որ 1956 թ. սկզբին Ալբանիան հետամնաց ագրարային երկրից վերածվեց ագրարային-ինդուստրիալ երկրի, իսկ 1960 թ. արդյունաբերությունն համախառն արտադրանքը 25 անգամ գերազանցեց 1938 թ. ցուցանիշները։

Պայքարելով սոցիալիզմի տնտեսական հիմքերի կառուցման համար, ալբան ժողովուրդն զգալի հաջողությունների հասավ նաև գյուղատնտեսության ասպարեզում։ Սակայն գյուղատնտեսության զարգացման տեմպերը հետ էին մնում արդյունաբերության զարգացման տեմպերից։ Դա պայմանավորված էր օբյեկտիվ բնույթի պատճառներով, մասնավորապես նրանով, որ Ալբանիայի նոր ստեղծվող արդյունաբերությունը օգտագործում էր ՏՓԽ-ի անդամ երկրների փորձն ու հիմնականում արդյունաբերական տեսակետից զարգացած այդ երկրների անհատույց օգնությունը, իսկ սակավարդյունավետ գյուղատնտեսությունը, որը կառչել էր հին ավանդույթներին, դանդաղորեն էր ենթարկվում վերափոխություններին։

Կոոպերատիվ շինարարությունը սկսվեց արդեն 1946 թ. երկրորդ կեսին, երբ պետական 11 գյուղատնտեսական ֆերմաների հետ միասին կազմավորվեց 7 գյուղատնտեսական կոոպերատիվ։ Առավել ընդունելի որոշումների որոնումները հասցրին Սովետական Միության գյուղատնտեսական արտելի կառուցվածքի կազմակերպական սկզբունքների ընդունմանը (1949)։ Ընդհուպ մինչև 1955 թ. կոլեկտիվացումը դանդաղ էր ընթանում։ 1955 թ. վերջին երկրում կար 318 կոոպերատիվ, որոնց ընկնում էր հանրապետության բոլոր ցանքատարածությունների 13%-ը։ Ալբանիայի աշխատանքի կուսակցության դեկտեմբերյան պլենումում, 1955 թ., որոշում ընդունվեց կոլեկտիվացման տեմպերի արագացման մասին։ 1960 թ. սկզբին երկրում արդեն կար մոտ 1500 կոոպերատիվ, որոնք ընդգրկում էին հանրապետության հողատարածությունների 84%-ը։ Կոոպերացումը նպաստավոր հող ստեղծեց գյուղատնտեսական արտադրության հետագա վերելքի համար, բարձրացնելով պլանային սկզբունքի տարրը։ Սակայն գյուղի աշխատավորության (բացառությամբ պետական ֆերմաների) հաջողությունները համեստ էին ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ցուցանիշների համեմատությամբ։

Աճի դժվարություններն անխուսափելի էին նոր հասարակության կառուցման ժամանակ, բայց ամբողջությամբ վերցրած ԱԺՀ-ի հաջողությունները նոր կյանքի ստեղծման գործում, միջազգային դիրքերի ամրապնդումը (1955 թ. Ալբանիայի ընդունվելը Վարշավայի պայմանագրի անդամ երկրների շարքը և ՄԱԿ-ի անդամ) վկայում էին ալբան ժողովրդի ընտրած ուղու ճշտությունը։ Այդ նվաճումներն անմիջականորեն կապված էին սոցիալիստական ընկերակցության բոլոր երկրների հաջողությունների հետ։ Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման համակարգում արտադրության մասնագիտացման և կոոպերացման սկզբունքների հիման վրա այդ երկրների ցույց տրված օգնությունը վճռական չափով նպաստեց այն բանին, որ Ալբանիան իր համար առավել շահավետությամբ կարողացավ ստեղծել ժամանակակից արդյու-

նաբերություն, վերացնել անգրագիտությունը, հասնել ժողովրդի բարեկեցության զգալի բարձրացմանը։

60-ական թվականների սկզբից Ալբանիայի քաղաքականությունը փոխվեց։ Խզվեցին կապերը Սովետական Միության հետ, սահմանափակվեց համագործակցությունը ՏՓԽ-ի և Վարշավայի պայմանագրի մյուս երկրների հետ։ ԱԺՀ-ն փաստորեն դադարել է համագործակցել այդ կազմակերպությունների հետ, թեև պահպանել է երկկողմանի տնտեսական կապերը եվրոպական սոցիալիստական երկրների մեծամասնության հետ։

ԳԼՈՒԽ 7

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ–ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Դրությունը Արևելյան Գերմանիայում ֆաշիստական ռայխի ջախջախումից հետո

Հիտլերյան Գերմանիայի ջախջախումը և անվերապահ կապիտուլյացումը գերմանական ժողովրդին ազատեցին ֆաշիստական բռնակալությունից։ Ռազմաքաղաքական սնանկության հասած իմպերիալիստական ուժերը խոր ճգնաժամ էին ապրում։ Ֆաշիստական Գերմանիայի կառավարությունը լիկվիդացվեց, ֆաշիստական կուսակցությունը ցրվեց, փլուզվեց նաև նրա վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունների ամբողջ համակարգը. մամուլը, ռադիոն և մասսայական ներգործության մյուս միջոցները չէին գործում։ Տնտեսական փլուզումը առաջ բերեց գործազրկություն, տնանկություն ու սով։ Քաղաքների մեծ մասում շենքերի 50%-ն ավերված էր, չէր գործում ջրմուղը, չէին աշխատում գազի ձեռնարկություններն ու էլեկտրակայանները, չէր բավականացնում պարենամթերքը։ Պատերազմի հետևանքով Գերմանիայի ժողովրդական հարստությունն ամբողջությամբ վերցրած կրճատվեց 1/3-ով (1936 թ. մակարդակի համեմատությամբ), աշխատուժի թվաքանակը՝ 15—20%-ով։

Բնակչության լայն զանգվածները գտնվում էին դեպրեսիայի և քարացածության վիճակում, ոչմոնոպոլիստական բուրժուազիան և միջին խավերը բարոյալքվել էին։ Նացիստները կարողացել էին նրանց համոզել, որ ֆաշիստական կուսակցության նպատակները Գերմանիայի ազգային նպատակներն էին, այդ պատճառով ֆաշիստական ռայխի կրախը նրանք ընկալեցին որպես «ազգային գաղափարի» կործանում, իսկ գերմանական պետականությանը՝ որպես «Գերմանիայի վերջ»։ Պատերազմի վերջին բանվոր դասակարգը թուլացել էր բազմաթիվ բռնություններից՝ ԳԿԿ-ի 300 հազ. անդամների (1932 թ. վերջին) ավելի քան կեսը ֆաշիստական տեռորի զոհ դարձավ, շատ ակտիվ գործիչներ սպանվել էին կամ գտնվում էին վտարանդիության մեջ։ Միլիտարիզմի և ռասիզմի ոգին, որ թափանցել էր բանվոր դասակարգի միջավայրը, ինչպես նաև պատերազմի տարիներին նրա կազմում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները (պրոլետարական միջուկի կրճատումը) դժվարացնում էին Գերմանիայի վերափոխման ուղիների ըմբռնումը նրանց կողմից։ Գերմանական դեմոկրատական ուժերը գաղափարաքաղաքական տարընթացություն էին ապրում։

Հակաֆաշիստական շարժման հարաբերական թուլության հետևանքով Գերմանիայում չստեղծվեց դեմոկրատական կառավարություն, որը լիազորված լիներ հանդես գալու ժողովրդի անունից և ընդունակ լիներ ստանձնելու հաղթող տերությունների պահանջների կատարման պատասխանատվությունը։ Կապիտուլյացման ակտի և Գերմանիայի պարտության դեկլարացիայի համաձայն գերմանական պետական սուվերենությունն անցավ օկուպացնող տերություններին։ ՍՍՀՄ-ի օկուպացման գոտու մեջ մտան Արևելյան Գերմանիայի շրջանները՝ Սաքսոնիա, Թյուրինգիա, Մեկլենբուրգ երկրամասերը, Սաքսոնիա և Բրանդենբուրգ պրովինցիաները (1947 թ. վերջիններս վերանվանվեցին Սաքսոնիա-Անհալտ և Բրանդենբուրգ), որը զբաղեցնում էր 108,3 հազ. քառ. կմ. տարածք (Գերմանիայի 1/3-ը) և ուներ 17,3 մլն. բնակչություն։ ՍՍՀՄ-ի վճռական դերը հիտլերյան Գերմանիայի ջախջախման գործում, սովետական զինված ուժերի գտնվելը Գերմանիայի տարածքում, ինչպես և արտաքին քաղաքական ընդհանուր բարենպաստ իրադրությունը գերմանական ժողովրդի համար ստեղծում էին դեմոկրատական ու խաղաղ զարգացման հեռանկար։ Գերմանիայում նացիզմն ու միլիտարիզմը արմատախիլ անելու միջազգային-իրավական հիմքը կազմում էին Յալթայի ու Պոտսդամի կոնֆերանսների որոշումները, որոնցով նախատեսվում էին Գերմանիայի ապառազմականացման, ապանացիֆիկացման և մոնոպոլիաների տիրապետության վերացման (ապակարտելացում) վերաբերյալ միջոցառումներ։

Սովետական օկուպացիոն մարմինները, ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական հումանիզմի սկզբունքներով, իրենց գլխավոր խնդիրը համարում էին խաղաղասեր և դեմոկրատական գերմանական պետություն ստեղծելը, գերմանական ժողովրդին օգնություն ցույց տալը։ Նրանց առաջին կարգադրությունները նախատեսում էին տնտեսական և մշակութային կյանքի նորմալացում։ Արդեն 1945 թ. ապրիլի 23-ի հրամանում Բեռլինի զինվորական պարետ գեներալ-գնդապետ Բերզարինը կարգադրեց վերսկսել կոմունալ ձեռնարկությունների, քաղաքային տրանսպորտի, պարենային խանութների և բնակչությանը սպասարկող մյուս օբյեկտների, ինչպես նաև մշակույթի հիմնարկությունների աշխատանքը։ 1945 թ. ամռանը Բեռլինում արդեն աշխատում էր 110 կինոթատրոն, Վայմարում նորից բացվեց Գյոթեի թանգարանը։ Սովետական զինվորական պարետները ջանում էին օգնել բնակչությանը արագորեն հաղթահարելու պատերազմի ու ֆաշիզմի հետևանքները, ամեն կերպ խրախուսում էին դեմոկրատական ուժերի նախաձեռնությունը։ Գերմանիայում սովետական զինվորական ադմինիստրացիայի (ԳՍԶԱ) առաջին կարգադրություններից մեկով հակաֆաշիստական կուսակցություններին և կազմակերպություններին գործունեության ազատություն էր տրվում սովետական գոտու սահմաններում։

Գերմանիայի դեմոկրատական վերափոխման ծրագիրը։ Հակաֆաշիստական-դեմոկրատական բլոկի ստեղծումը

Գերմանացի հակաֆաշիստները և ամենից առաջ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը լի էին վճռականությամբ իմպերիալիստական ուժերին թույլ չտալ վերադառնալու իշխանությանը։ 1945 թ. ապրիլի 30-ին Բեռլին ժամանեց ԳԿԿ Կենտկոմի լիազորների մի խումբ՝ Վ. Ուլբրիխտի գլխավորությամբ։ Կապեր հաստատելով ԳԿԿ անդամների, Դիմադրության տարբեր խմբերի, ինչպես նաև Հիտլերի հակառակորդների, այդ թվում վայմարյան ժամ-

մանակաշրջանի բուրժուական գործիչների հետ, կոմունիստները նրանց ներգրավեցին ինքնավարության դեմոկրատական մարմիններ կազմելու գործում։ 1945 թ. հունիսի 11-ին ԳԿԿ Կենտկոմը հրապարակեց դիմում, որը գերմանական ժողովրդին կոչ էր անում իր ջանքերն ուղղել 1848 թ. հեղափոխությունից սկիզբ առած բուրժուա-դեմոկրատական վերափոխություններն ավարտելու, հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխություններ կատարելու և Գերմանիայում դեմոկրատական պառլամենտական հանրապետություն ստեղծելու գործին։ Կոմկուսն արտահայտվում էր բանվոր դասակարգի գործողությունների միասնության և հակաֆաշիստական-դեմոկրատական կուսակցությունների ու կազմակերպությունների քաղաքական բլոկի՝ որպես Գերմանիայի դեմոկրատական վերափոխման շարժիչ ուժի և նախադրյալի ստեղծման օգտին։ ԳԿԿ քաղաքականությունը, հետևապես, հիմնվում էր Բրյուսելի և Բեռնի կոնֆերանսների որոշումների վրա, ուշադրություն էր առնում դեպի անմիջականորեն սոցիալիստական նպատակներ կողմնորոշվելու անհնարինությունը (հետպատերազմյան փլուզման, տարբեր հասարակարգեր ունեցող պետությունների կողմից երկրի օկուպացման և պրոլետարիատի ինքնագիտակցության թուլության պայմաններում)։ ԳԿԿ-ի գործողությունների ծրագիրը նախատեսում էր հակաիմպերիալիստական արմատական վերափոխություններ և Գերմանիայում հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի հաստատում, որպես անցման անհրաժեշտ փուլ դեպի սոցիալիստական հեղափոխությունը։

ԳԿԿ-ի դիմումը համապատասխանում էր ամբողջ գերմանական ժողովրդի շահերին և երկրում ընդունվեց հավանությամբ։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԳՍԴԿ) Կենտրոնական կոմիտեն Օ. Գրոտեոլի գլխավորությամբ հունիսի 15-ին հղած իր դիմումում հայտնում էր ԳԿԿ Կենտկոմի կոչը պաշտպանելու և գերմանական բանվոր դասակարգի կազմակերպական միասնության հիման վրա Գերմանիայի վերափոխման համար պայքարելու պատրաստակամության մասին։ 1945 թ. հունիսի 19-ին Բեռլինում կազմվեց համատեղ աշխատանքային կոմիտե՝ ԳԿԿ-ի հունիսի 11-ի հայտարարության պլատֆորմի վրա ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի գործողությունների միասնության մարմին։ Համանման կոմիտեներ առաջացան նաև համայնքներում, քաղաքներում, շրջաններում և երկրամասերում։ Դա գերմանական բանվոր դասակարգի պառակտումը հաղթահարելու առաջին քայլն էր։ ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի համագործակցության հաստատումը, ինչպես նաև 1945 թ. հունիսին Գերմանական ազատ արհմիությունների միավորման (ԳԱԱՄ) կազմակերպումը, որի մեջ 1945 թ. վերջին կար 3 մլն. անդամ, ամրապնդեցին բանվոր դասակարգի դիրքերը, նրա համար ապահովեցին ղեկավար դեր Արևելյան Գերմանիայի դեմոկրատացման գործում։

1945 թ. հունիսի վերջին հուլիսի սկզբին Բեռլինում առաջացան երկու բուրժուադեմոկրատական հակաֆաշիստական կուսակցություններ՝ Քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՔԴՄ) և Գերմանիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը (ԼԴԿ), որոնք արտահայտում էին մանր ու միջին բուրժուազիայի տարբեր խավերի շահերն ու հայացքները։ Իրենց հայտարարություններում այդ երկու կուսակցությունները արտահայտվում էին Վայմարյան հանրապետության վերականգնման օգտին, կողմնակից էին խաղաղության, էկոնոմիկայի գլխավոր ճյուղերը պետության ձեռքը հանձնելուն և հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխություններ անցկացնելուն։ Երկու կուսակցությունների ղեկավար մարմիններում ռեալիստորեն և հակաֆաշիստորեն մտածող գործիչների (Օ. Նուշկե, Վ. Կյուլց) հետ գտնվում էին նաև ռեակցիոն բուրժուազիայի ներկայացուցիչներ (Յա. Կայզեր, Վ. Կոխ և ուրիշներ), որոնք չէին կորցրել Գերմանիայի զարգացումը կապիտալիստական ուղու վրա շրջելու հնարավորության հույսը։ Ամբողջությամբ վերցրած, սակայն, դեմոկրատական ուժերի ազդեցությունն այդ կուսակցություններում ավելի զորեղ էր, իսկ մոնոպոլիաների շահերի արտահայտիչները գործում էին զգուշորեն, «իրենց ժամին» սպասելով։

Զգալով միավորել բոլոր հակաֆաշիստական ուժերը, ԳԿԿ-ն դիմեց բուրժուական կուսակցություններին՝ առաջարկելով համագործակցել։ 1945 թ. հուլիսի 14-ին Բեռլինում ստեղծվեց հակաֆաշիստական-դեմոկրատական կուսակցությունների՝ ԳԿԿ-ի, ԳՍԴԿ-ի, ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի բլոկ։ Գործողությունների միասնությունը կոորդինացնելու և միասնական քաղաքականություն իրականացնելու համար կազմվեց համատեղ կոմիտե, որը որոշումներ էր ընդունում միաձայնության սկզբունքի հիման վրա։ Հակաֆաշիստական-դեմոկրատական կուսակցությունների բլոկը, որը աշխատավորության միջին խավերի և միջին բուրժուազիայի դեմոկրատական տարրերի հետ բանվոր դասակարգի դաշինքի քաղաքական-կազմակերպական արտահայտությունն էր, դարձավ Գերմանիայի դեմոկրատական վերափոխման հասարակական ուժի հիմքը։

Հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխություններն Արևելյան Գերմանիայում (1945 թ. աշուն—1946 թ. գարուն)

ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի համագործակցության և Արևելյան Գերմանիայում հակաֆաշիստական բլոկի ստեղծման հետևանքով աստիճանաբար բարձրացավ բնակչության հասարակական ակտիվությունը։ Շատ գերմանացիներ ազատագրվում էին հետպատերազմյան առաջին շաբաթների լեթարգիայից, ներգրավվում ավերակույտերի մաքրմանը, մասնակցում ավերված ձեռնարկությունների և տրանսպորտի վերականգնմանը, կարգի գցում արտադրությունն ու մշակութային կյանքը։ Հակաֆաշիստական բլոկի կուսակցությունների և անկուսակցականների ներկայացուցիչներից ամենուրեք կազմավորվում էին ինքնավարության դեմոկրատական մարմիններ։ Ստեղծվեց նոր ոստիկանություն, գլխավորապես բանվոր հակաֆաշիստներից։ 1945 թ. հուլիսին ԳՍԶԱ-ն հաստատեց երկրամասային և պրովինցիալ վարչությունների կազմը, հոկտեմբերին նրանց ընձեռվեց կարգադրություններ հրապարակելու (որոնք չէին հակասում ԳՍԶԱ-ի հրամաններին) իրավունք։ Իրենց բնույթով դրանք բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի մարմիններ էին։ 1945—1948 թթ. դեմոկրատական ինքնավարության ստեղծման և ապանացիֆիկացման ընթացքում պրոլետարիատի ղեկավարությամբ տեղի ունեցավ հին պետական ապարատի վերջնական փշրումը։ Տարբեր պոստերից հանվեցին մոտ 520 հազ. նացիստներ։

Դրա հետ մեկտեղ հետպատերազմյան առաջին ամիսներին բանվոր դասակարգը և կառավարման դեմոկրատական մարմինները դեռ ընդունակ չէին, ինքնուրույն գործելով, զրկել իմպերիալիստական ուժերին էկոնոմիկայում ունեցած նրանց դիրքերից։ Այդ խնդիրը Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսների որոշումներին համապատասխան կատարում էր օկուպացիոն իշխանությունը։ 1945 թ. հուլիսին փակվեցին խոշոր բանկերը, որի հետևանքով, մասնավորապես, հաջողվեց կանխել ինֆլյացիան։ Նոր բանկերն ու վարկային հիմնարկությունները, որոնք սկսեցին ստեղծվել 1945 թ. ամռանը, հենարան էին ծառայում հակաիմպերիալիստական վերափոխումների և հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի համար։ 1945 թ. հոկտեմբերին ԳՍԶԱ-ն հրամաններ (№ 124 և 126) հրապարակեց ֆաշիստական պետության, նացիստական կուսակցության ու ակտիվ նացիստների ունեցվածքի արգելակալանքի ու ժամանակավոր տնօրինության ընդունելու մասին։ 1945 թ. հոկտեմբերին Սաքսոնիա երկրամասի վարչության նախագահությունը որոշում ընդունեց ռազմական

հանցագործ Ֆլիկի ունեցվածքը բռնագրավելու և ժողովրդի սեփականությանը հանձնելու մասին։

Բանվոր դասակարգի դիրքերի ամրապնդման ուղղությամբ կարևոր քայլ էր բանվորական վերահսկողության սահմանումը, մի իրավունք, որը բանվորներին դարձնում էր ձեռնարկությունների կառավարման համամասնակիցներ։ Արտադրական խորհուրդներն ստեղծվում էին բանվորների նախաձեռնությամբ, ձեռնարկություններում կատարվող ապանացիֆիկացման ընթացքում, հաճախ տարերայնորեն, դեռ մինչև Վերահսկիչ խորհրդի համապատասխան օրենքի հրապարակումը (1946)։ Բանվորական վերահսկողությունն արագացնում էր մոնոպոլիստական կապիտալի իշխանության վերացման անհրաժեշտության՝ զանգվածների կողմից ըմբռնելու պրոցեսը։ Բանվորական վերահսկողության սահմանումը, ապանացիֆիկացումը, ֆաշիստական պետության, նացիստական կուսակցության և ռազմական հանցագործների ունեցվածքի բռնագրավումը Արևելյան Գերմանիայում հասարակական հարաբերությունների դեմոկրատացման միասնական պրոցեսի օղակները եղան։ Այդ միջոցառումները հիմնավորապես քայքայում էին իմպերիալիստական ուժերի տնտեսական ու քաղաքական դիրքերը։

Հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխումների ամենակարևոր բաղկացուցիչ մասերից մեկը ագրարային ռեֆորմն էր։ Արևելյան Գերմանիայում 100 հեկտարից ավելի կալվածքների (բոլոր տնտեսությունների 1,4%-ը) տնօրինության տակ էր գտնվում հողի գրեթե 42%-ը, իսկ գյուղատնտեսական բնակչության հիմնական զանգվածը տառապում էր հողազրկությունից ու սակավահողությունից։ Ագրարային ռեֆորմը պետք է յունկերությանը՝ Գերմանիայում միլիտարիզմի և ռեակցիայի բազմադարյան կրողին զրկեր նրա տնտեսական ու քաղաքական դիրքերից և դներ բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի հիմքերը։ Հողային ռեֆորմի անհրաժեշտությունը ընդունում էին բոլորը։ Նույնիսկ բուրժուական կուսակցությունների ղեկավարները չէին հանդգնում բացահայտորեն պաշտպանել յունկերական հողատիրությունը։ Վեճերը ծավալվեցին գլխավորապես ռեֆորմի անցկացման բնույթի և մեթոդների շուրջը։ ԳԿԿ-ն առաջարկեց հողի հիմնական մասը բաժանել գյուղատնտեսական բանվորներին և սակավահող գյուղացիներին։ Ռեֆորմի մյուս անկեղծ կողմնակիցներն առաջարկում էին վերցնել գյուղատնտեսական կոոպերատիվներ ստեղծելու կուրս, չնայած դրա համար չկային ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական նախադրյալներ։ Մյուս կողմից, բուրժուական կուսակցությունների պահպանողականորեն տրամադրված ներկայացուցիչները հանդես էին գալիս ինչպես անհատույց բռնագրավման դեմ, այնպես էլ խոշոր կալվածքների պահպանման օգտին, հիմնավորելով այդ մանր տնտեսության անշահութաբերությամբ։

ԳԿԿ-ին բացատրական աշխատանքի միջոցով հաջողվեց հաղթահարել սխալ հայացքները և կազմալուծել ռեակցիոն ուժերի գործողությունները, մասնավորապես ապացուցել, որ հետպատերազմյան առաջին տարիների փլուզման և արտադրողական ուժերի ցածր մակարդակի պայմաններում մանր գյուղացիական տնտեսությունները կարող են ավելի արագորեն լուծել պարենային պրոբլեմը։

1945 թ. սեպտեմբերին երկրամասերում և պրովինցիաներում հրապարակվեցին հողային ռեֆորմի մասին որոշումները, որոնցով նախատեսվում էր ավելի քան 100 հա. ունեցող կալվածատերերի ամբողջ հողի, ինչպես նաև ռազմական հանցագործների, նացիզմի ակտիվ կողմնակիցների սեփականության անհատույց բռնագրավում՝ անկախ նրանց տիրույթների չափերից։ Հողային ռեֆորմի անցկացմանն ակտիվորեն մասնակցեցին գյուղացիները և

գյուղատնտեսական բանվորները։ Նրանք մտնում էին գյուղերում ստեղծված հանձնաժողովների կազմի մեջ, որոնք գործնականորեն զբաղվում էին ռեալ հանձնաժողովների կազմի մեջ, որոնք գործնականորեն զբաղվում էին ռեֆորմի բոլոր հարցերով։ Հողաբաժինը, որպես կանոն, չէր գերազանցում 5 հեկտարից (վատ հողի դեպքում՝ մինչև 10 հա.) և ձեռք էր բերվում ոչ բարձր գնով՝ 10—20 տարվա տարաժամկետմամբ հանդերձ։ Տրակտորները և որոշ այլ գործիքներ հանձնվում էին այդ ժամանակ ստեղծված գյուղացիական փոխօգնության միավորումներին (ԳՓՄ)։ Դրանց վրա դրվում էր հող ստացած գյուղացիների տեխնիկական սպասարկման, գյուղում ընկերական փոխօգնության զարգացման խնդիրը։ 1945 թ. վերջին հողային ռեֆորմը հիմնականում ավարտվեց։ Բռնագրավվեց 3,3 մլն. հա. հող։ Հաջորդ երկու տարիների ընթացքում տեղի է ունենում նրա իրավական ամրապնդման պրոցեսը. 1947 թ. սկզբին սեփականության իրավունքի վկայականներ տրվեցին հող ստացած գյուղացիների 98%-ին։ Մինչև 1950 թ. հունվարը 300 հազարից ավելի բատրակներ և չքավոր գյուղացիներ ստացան ավելի քան 2 մլն. հա. հող։ Մեկ միլիոն հեկտարից ավելի հողային ֆոնդ հանձնվեց հանրային սեփականությանը։ Հողային ռեֆորմն արմատապես փոխեց գյուղի սոցիալ-տնտեսական կառուցվածքը. կալվածատիրական հողատիրությունն Արևելյան Գերմանիայում վերացվեց։ Միջակ գյուղացին դարձավ գյուղի գլխավոր դեմքը։ Դեմոկրատական վերափոխությունները գյուղում տեղի էին ունենում դասակարգային սուր պայքարի պայմաններում, որը արագացնում էր քաղաքական շերտավորման պրոցեսը ՔԴՄ-ում և ԼԴԿ-ում։ Իմպերիալիստական ուժերի դրածոները (Ա. Հերմես, Վ. Շրայբեր և տրիշներ) վտարվեցին կուսակցության ղեկավարությունից։

Ագրարային ռեֆորմի անցկացման հետ միաժամանակ Արևելյան Գերմանիայում ծավալվեց գերմանական ժողովրդի քաղաքական դաստիարակությունը դեմոկրատական ոգով։ Հատուկ նշանակություն ունեցավ լուսավորության դեմոկրատացումը։ Արդեն 1945 թ. ամռանը Լայպցիգի տպարաններն սկսեցին նոր դասագրքերի տպագրությունը, տասնյակ հազարավոր հակաֆաշիստներ ներգրավվեցին դպրոցների աշխատանքում։ 1945 թ. հոկտեմբերին բացվեց Ֆ. Շիլլերի անվան համալսարանը Ենայում, իսկ 1946 թ. սկզբին՝ նաև մյուս համալսարանները։ Մեծ տպաքանակներով տպագրվում էին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի երկերը, գերմանական հակաֆաշիստների աշխատությունները։ Սկսված «մտքերի հեղափոխության» կարևոր օղակ հանդիսացավ կուլտուրբունդի ստեղծումը (1945)։ Նրա առաջին պրեզիդենտը դարձավ հայտնի գրող-հակաֆաշիստ Ի. Բեխերը։

Ֆաշիզմի հետևանքների հաղթահարման համար մղված պայքարում, ագրարային ռեֆորմի, ապանացիֆիկացման, կառավարման դեմոկրատական մարմինների ստեղծման ընթացքում ամրապնդվում էր փոխըմբռնումը կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև։ ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի համագործակցությունը հանդիսացավ ԴԱԱՄ-ի գործունեության, միասնական դեմոկրատական երիտասարդական կազմակերպության՝ Գերմանական ազատ երիտասարդության միության (1946 թ. մարտ), դեմոկրատական կանանց և այլ կազմակերպությունների ստեղծման կարևորագույն նախադրյալը։ Միլիոնավոր գերմանացիներ ներգրավվեցին Արևելյան Գերմանիայի քաղաքական կյանքի ու դեմոկրատական վերափոխման մեջ։

Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության կազմավորումը

ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի գործողությունների միասնությունն անհրաժեշտ նախադրյալ և աստիճան եղավ գերմանական պրոլետարիատի պառակտման վերջնական հաղթահարման և Գերմանիայում միասնական մարքսիստական-լենինյան բանվորական կուսակցության ստեղծման ճանապարհին։ Բանվորական շարժման պառակտումը հաղթահարելու ան-

հետաձգելի անհրաժեշտությունը դեռևս հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխությունների խնդիրների լուծման ընթացքում թելադրվում էր հետպատերազմյան Գերմանիայի դրության առանձնահատկությամբ։ Նախ, գերմանական մոնոպոլիստական կապիտալի՝ օտարերկրյա իմպերիալիզմի օգնությանն ապավինած այդ բազմափորձ և զորեղ հակառակորդի տնտեսական ու քաղաքական հզորության վերջնական լիկվիդացումը հնարավոր էր միայն բոլոր դեմոկրատական ուժերի և ամենից առաջ պրոլետարիատի միացյալ ջանքերով. երկրորդ, Գերմանիայի հեղափոխական-դեմոկրատական շարժման հարաբերական թուլությունը (ի տարբերություն ժողովրդա դեմոկրատական զարգացման ուղին բռնած մյուս երկրների) կարող էր փոխհատուցվել միայն բանվոր դասակարգի համախմբված գործողություններով։ Որոշելով միասնական կուսակցության ստեղծման հարցը, ԳԿԿ-ն և ԳՍԴԿ-ն գործում էին որպես համագերմանական (այլ ոչ թե ըստ գոտիների) քաղաքական ուժեր։ Սակայն Արևմտյան Գերմանիայի օկուպացիոն իշխանությունները և ԳՍԴԿ աջ ռեֆորմիստական պարագլուխները խանգարեցին ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի միավորմանը համագերմանական մասշտաբով։ Այդ պայմաններում ԳԿԿ-ն և ԳՍԴԿ-ի հեղափոխական ուժերը, որոնց գլխավորում էր Օ. Գրոտեոլը, կարող էին երկու կուսակցությունների կազմակերպական միաձուլումն անցկացնել միայն օկուպացման սովետական գոտում։

ԳԿԿ և ԳՍԴԿ ղեկավար մակարդակներում դեռ 1945 թ. վերջերից քննարկվում էին երկու կուսակցությունների միավորման գործնական հարցերը։ 1945 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի ներկայացուցիչների կոնֆերանսը («60-ի կոնֆերանսը»), որը քննարկեց միավորման պլատֆորմը և նոր կուսակցության ծրագիրը։ 1946 թ. սկզբին միասնական կուսակցական կազմակերպություններ կազմավորվեցին Արևելյան Գերմանիայի շատ ձեռնարկություններում, իսկ ապրիլին միավորումն ավարտվեց պրովինցիալ և զոնալ մասշտաբներով։ 1946 թ. ապրիլի 19—20-ին տեղի ունեցան ԳԿԿ 15-րդ համագումարը և ԳՍԴԿ 40-րդ համագումարը, որոնք որոշում ընդունեցին երկու կուսակցությունների կազմակերպական միաձուլման մասին։ Ապրիլի 21—22-ին Բեռլինում տեղի ունեցած միավորիչ համագումարը որոշում ընդունեց Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության (ԳՍՄԿ) ստեղծման մասին։ Նոր կուսակցության ծրագրային փաստաթուղթը («ԳՍՄԿ-ի սկզբունքներն ու նպատակները»), նրա ընդհանուր ստրատեգիայի համաձայն, բաղկացած էր երկու մասից՝ մինիմում-ծրագրից և մաքսիմում-ծրագրից։ Մինիմում-ծրագիրը նախատեսում էր հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխությունների ավարտումը ամբողջ Գերմանիայում։ Մաքսիմում-ծրագրում դրվում էր սոցիալիստական հասարակության կառուցման խնդիրը։ «ԳՍՄԿ-ի սկզբունքներում և նպատակներում» հիմնավորվում էր հակաֆաշիստական-դեմոկրատական հեղափոխությունը խաղաղ ձևով սոցիալիստականի վերաճելու հնարավորությունը։ «Գերմանիայի առանձնահատուկ դրությունը, որը ներկա պահին առաջացել է բռնության ռեակցիոն պետական ապարատի փշրման հետևանքով, և նոր տնտեսական հիմքի վրա դեմոկրատական պետության կառուցումը,— հայտարարեց ԳՍՄԿ-ն,— հնարավորություն է տալիս խոշընդոտելու ռեակցիայի ուժերի ձգտումը բռնություններ կիրառելու և քաղաքացիական պատերազմի միջոցով խանգարելու բանվոր դասակարգի վերջնական ազատագրմանը»։

ԳՍՄԿ-ն ստեղծվեց մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների համաձայն, իսկ կազմակերպական կառուցվածքով հենվում էր տեղական բջիջների վրա, կուսակցական բոլոր պոստերը հավասարապես զբաղեցնում էին ԳԿԿ և ԳՍԴԿ նախկին անդամները և այլն։ Միավորիչ համագումարն ընտրեց կուսակցության երկու իրավահավասար նախագահներ՝ Վ. Պիկին և Օ. Գրոտեոլին։ Կուսակցական վարչության կազմի մեջ մտան նաև արևմտյան օկուպացիոն գոտիների ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի ներկայացուցիչները (ԳՍՄԿ-ն սկզբնական ժամանակաշրջանում գործում էր որպես համագերմանական կուսակցություն)։

Ժողովրդական ձեռնարկությունների սեկտորի ստեղծումն ու ամրապնդումը

1946 թ. գարնանից Արևելյան Գերմանիայում սկսվեց մոնոպոլիաների, ֆաշիստական կուսակցության, նրա ակտիվ կողմնակիցների՝ Պոտսդամի որոշումների համաձայն բռնագրավված ունեցվածքի պատկանելության օրենսդրական ձևակերպման ժամանակաշրջանը։ ԳՍՀԱ-ի հրամանով այդ սեփականությունը, բացառությամբ օկուպացիոն իշխանությունների վերահսկողության տակ մնացած (գլխավորապես բաժնետիրական ընկերությունների ձևով) և անմիջականորեն ռազմատնտեսական նշանակություն ունեցող օբյեկտների, անցնում էր կառավարման երկրամասային և պրովինցիալ մարմինների տնօրինությանը։ Դրա հետագա ճակատագիրը որոշում էր Գերմանական ժողովուրդը։ Այդ հարցի լուծման նախաձեռնություն հանդես բերեց Սաքսոնիան՝ Արևելյան Գերմանիայի տնտեսապես առավել զարգացած մարզը։ Հակաֆաշիստական բլոկը մշակեց ռազմական հանցագործների, ֆաշիստական կուսակցության և նրա ակտիվ կողմնակիցների սեփականության անհատույց բռնագրավման օրենքի նախագիծ, այն դրեց հանրաքվեի։ Հանրաքվեի նախապատրաստման ընթացքում սուր քաղաքական պայքար ծավալվեց։ Բուրժուական կուսակցությունների մի քանի պարագլուխներ փորձեցին բռնագրավմանը խանգարել այն պատրվակով, որ իբր այն հարցերը, որոնք հանրաքվեի էին դրվել Սաքսոնիայում, պետք է լուծվեն համագերմանական մասշտաբով։ ԳՍՄԿ-ի և ԳԱԱՄ-ի ներկայացուցիչները բացատրում էին հանրաքվեի էությունը որպես հակաիմպերիալիստական մի ակցիայի, որը կոչված էր ստեղծելու Գերմանիայի հետագա դեմոկրատական զարգացման կարևորագույն նախադրյալները։

Հանրաքվեի ընթացքում (1946 թ. հունիսի 30) քվեարկությանը մասնակցածների 77,6%-ը հավանություն տվեց օրենքի նախագծին։ Հետագայում համանման բնույթի օրենքներ հրապարակվեցին մյուս երկրամասերում և պրովինցիաներում։ Այդ միջոցառումների իրականացման ընթացքում Արևելյան Գերմանիայում փշրվեց մոնոպոլիստական կապիտալի տիրապետությունը և ստեղծվեց արդյունաբերության մեջ ժողովրդական սեկտորի հիմքը՝ հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի սոցիալ-տնտեսական բազիսը։ Կառավարման հակաֆաշիստական մարմինների ստեղծումը, հասարակական կյանքում և սոցիալական հարաբերություններում կատարված դեմոկրատական վերափոխությունները պայմաններ նախապատրաստեցին դեմոկրատական ընտրություններ անցկացնելու համար։ Սեպտեմբեր-հոկտեմբերին Արևելյան Գերմանիայում տեղի ունեցան շրջանների (կրայստագ) և երկրամասերի (լանդտագ) համայնքների ներկայացուցչական մարմինների՝ պատերազմի ավարտից հետո առաջին ընտրությունները։ Դրանք ուժերի փորձարկում եղան հեղափոխական դեմոկրատիայի և ռեակցիոն բուրժուազիայի միջև մղված պայքարում, բուրժուազիա, որը փորձում էր իշխանությունը խլել բանվոր դասակարգի և գյուղացիության ձեռքից և Արևելյան Գերմանիայի զարգացումը շրջել դեպի կապիտալիզմի վերականգնման ուղին։ Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ բնակչության գերակշռող զանգվածը հավանություն է տալիս հակիմպերիալիստական վերափոխություններին։ Կառավարման համայնքային մարմինների և կրայստագների ընտրություններում ԳՍՄԿ-ը ստացավ ձայների ավելի քան 50%-ը, իսկ լանդտագների ընտրություններում՝ 47,5%-ը։

Դեմոկրատական ինքնավարության ամրապնդումը պայմաններ ստեղծեց էկոնոմիկայում ժողովրդական սեկտորի ընդլայնմանն ու ամրապնդմանն ուղղ-

ված նոր միջոցառումների անցկացման համար։ 1947 թ. գարանն ու ամռանը երկրամասային պառլամենտներն օրենքներ ընդունեցին որոշակի հատուցմամբ հանքահորերն ու օգտակար հանածոներն ազգայնացնելու մասին։ 1948 թ. կեսերին ժողովրդի սեփականությանը հանձնվեց ձեռնարկությունների 8%-ը։ Ժողովրդական սեկտորի արտադրանքն այդ ժամանակ կազմեց համախառն արտադրության 40%-ը (իսկ սովետական բաժնետիրական ընկերությունների հետ միասին՝ 61%-ը)։ Կապիտալիստական սեկտորի (մանր և միջին ձեռնարկությունների) արտադրական կարողությունը կրճատվեց մինչև ընդհանուր ծավալի 1/3-ը։ Արևելյան Գերմանիայի էկոնոմիկայից վերջնականապես դուրս մղվեց խոշոր կապիտալիստական սեփականությունը։

Ժողովրդական ընդարձակ սեկտորի առաջացմամբ երևան եկավ տնտեսական զարգացման պլանավորման հնարավորությունը և գոտու լայն լիազորություններով օժտված կոորդինացնող հիմնարկության ստեղծման անհրաժեշտությունը։ 1947 թ. որպես խորհրդակցական մարմին ստեղծված Գերմանական տնտեսական հանձնաժողովը (ԳՏՀ) 1948 թ. լրացվեց հակաֆաշիստական-դեմոկրատական կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներով և ստացավ կարգադրություններ հրապարակելու իրավունք, որոնք պարտադիր էին սովետական ամբողջ գոտու համար։ 1948 թ. ապրիլին ստեղծվեցին (արտադրական սկզբունքով) ժողովրդական ձեռնարկությունների միավորումներ (ԺՁՄ) և ԳՏՀ-ին առընթեր համապատասխան գլխավոր վարչություններ։ Արևելյան Գերմանիայի զարգացման երկամյա պլանի (1949—1950) ընդունումը դրեց տնտեսական պլանավորման սկիզբը։

Ժողովրդական սեկտորի ստեղծմամբ առաջին պլան մղվեցին նրա տնտեսական արդյունավետության խիստ բարձրացման խնդիրները, որպես բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ամրապնդման կարևորագույն պայմանի։ Անհրաժեշտ էր ամենից առաջ փոխել վերաբերմունքը աշխատանքի հանդեպ, սովորել կառավարել և ավելի լավ վարել տնտեսությունը։ Ժողովրդական ձեռնարկությունների շահութաբերության վճռական պայմանը աշխատանքի արտադրողականության շեշտակի բարձրացումն էր, արտադրողականություն, որը 1947 թ. կազմում էր 1936 թ. մակարդակի 56%-ը։ Պրոբլեմի լուծումը բախվում էր տեխնիկական բազայի թուլությանը և կադրերի անբավարար պատրաստվածությանը (ժողովրդական ձեռնարկությունների մեծ մասի ղեկավարները՝ Սաքսոնիայում ավելի քան 8%-ը, ունեին տարրական կրթություն)։ Արմատախիլ չէր արված կապիտալիստական արտադրական հարաբերություններին յուրահատուկ անհատապաշտական հոգեբանությունը։ ԳՍՄԿ II համագումարը (1947 թ. սեպտեմբեր) մշակեց էկոնոմիկայի վերելքի ծրագիր։ ԳՍՄԿ-ի նախաձեռնությամբ ձեռնարկություններում «Նախ ավելի շատ աշխատել, հետո ավելի շատ ուտել» լոզունգի ներքո ծավալվեց աշխատանքի ակտիվիստների շարժումը։ 1948 թ. հոկտեմբերի 13-ին Ցվիկաու ածխային ավազանի հորատող Ադոլֆ Հեննեկեն առաջին անգամ իր նորման կատարեց 380%-ով, դնելով հնացած նորմաները փոխելու համար պայքարելու սկիզբը։ Մեկ տարի անց Արևելյան Գերմանիայում կային արդեն արտադրության 25 հազ. ակտիվիստներ, իսկ աշխատանքի արտադրողականությունը 1936 թ. համեմատությամբ բարձրացել էր 85%-ով։ Արդյունաբերական արտադրանքի մեջ ժողովրդական սեկտորի բաժինը 1949 թ. վերջին աճեց մինչև 65%-ի։ Այսպիսով, հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխությունների պրոցեսում էկոնոմիկայի ոլորտում վերացվեց մոնոպոլիաների և խոշոր հողատերերի իշխանությունը։

Գերմանական ժողովրդական կոնգրեսի շարժումը

Գերմանիայի պառակտման քաղաքականությունը, որ անց էին կացնում ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի օկուպացիոն իշխանությունները, առաջ բերեց բոլոր դեմոկրատական ուժերի միավորման անհրաժեշտություն՝ միասնական դեմոկրատական Գերմանիայի ստեղծման համար պայքարելու նպատակով։ Այդ պրոբլեմը գտնվում էր ԳՍՄԿ II համագումարի բանավեճերի ու որոշումների կենտրոնում։ Արևելյան Գերմանիայում հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի բազմակողմանի ամրապնդումը դիտվում էր որպես գերմանական պրոբլեմի դեմոկրատական լուծման նախադրյալ։ Հետպատերազմյան Եվրոպայի ընդհանուր իրադրությունը և հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի բնույթը համարելով սոցիալիստական վերափոխումների անցման փուլ, ԳՍՄԿ I կոնֆերանսը (1949 թ. հունվար) որոշում ընդունեց ԳՍՄԿ-ն նոր, լենինյան տիպի կուսակցության վերածելու մասին, որը դարձավ ժողովրդա դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու կարևորագույն պայմանը։ Դրա հետ մեկտեղ ԳՍՄԿ-ն եռանդուն քայլեր ձեռնարկեց Գերմանիայի պառակտման քաղաքականությանը խոչընդոտելու համար։ ԳՍՄԿ II համագումարի որոշումներում ընդգծվում էր, որ Գերմանիայի միասնության համար մղվող պայքարը «գերմանական ժողովրդի առաջնահերթ խնդիրն է»։

1947 թ. աշնանն արդեն սկսված «սառը պատերազմի» և արևմտյան տերությունների կողմից Պոտսդամի որոշումների սաբոտաժի իրադրության մեջ ԳՍՄԿ-ի նախաձեռնությամբ առաջացավ Գերմանիայի միասնության և հաշտության պայմանագրի կնքման համար մղվող շարժում։ 1947 թ. դեկտեմբերի 6—7-ին Բեռլինում տեղի ունեցավ Գերմանիայի միասնության և արդարացի հաշտության համար պայքարի I գերմանական ժողովրդական կոնգրեսը։ Օկուպացիոն բոլոր գոտիներից մասնակցում էին 2215 պատվիրակ։ 1948 թ. սկզբին Գերմանիայի պառակտման քաղաքականության և գերմանական իմպերիալիզմի վերածնման դեմ ազգային բողոքի շարժումը վերաճեց լայն համազգային դեմոկրատական շարժման։ 1948 թ. մարտին, 1848 թ. հեղափոխության հարյուրամյակի օրերին, տեղի ունեցավ II գերմանական ժողովրդական կոնգրեսը։ Որպես շարժման գործադիր մարմին ընտրվեց Գերմանական ժողովրդական խորհուրդը (400 անդամ, այդ թվում 100-ը Արևմտյան Գերմանիայից), որը հենվում էր Արևելյան Գերմանիայում ամենուրեք ստեղծված տեղական կոմիտեների, քաղաքական կուսակցությունների և դեմոկրատական լայն ուժերի գործունեությունների միասնության կազմակերպական կենտրոնների վրա։ 1949 թ. մայիսին III գերմանական ժողովրդական կոնգրեսը հավանություն տվեց սահմանադրության տեքստին, որն արտահայտում էր հետպատերազմյան Գերմանիայի պետական կառուցվածքի հանդեպ գերմանական դեմոկրատական ուժերի հայացքները։

Արևելյան Գերմանիայում հակաֆաշիստական-դեմոկրատական կարգերի ամրապնդումը և գերմանական ժողովրդական կոնգրեսի շարժման ընդլայնումն ամբողջ հասակով դրեցին Գերմանիայի հետագա զարգացման ուղիների հարցը։ Խորացավ քաղաքական ուժերի սահմանազատումն Արևելյան Գերմանիայում, ուժեղացան բնակչության մանրբուրժուական խավերի տատանումները։ ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի ղեկավարության մեջ եղած պրոիմպերիալիստական տարրերը փորձում էին նրանց գրավել իրենց կողմը, մեկուսացնել բանվոր դասակարգից։ Նրանք սաբոտաժի էին ենթարկում հակաֆաշիստական բլոկի գործունեությունը, ուժգին կերպով ուղիներ որոնելով Արևելյան Գերմանիայում կապիտալիզմի վերականգնման համար։ Երկամյա պլանի մշակման ժամանակ նրանք հանդես եկան ընդդեմ ծանր ինդուստրիայի զարգացման (որը կենտրոնացված էր առավելա-

պես ժողովրդական սեկտորում), հանուն թեթև արդյունաբերության (որտեղ դեռևս իշխում էր մասնավոր կապիտալը) առավել զարգացման, ընդդեմ Օդերով և Նեյսեով անցնող սահմանի։ ՔԴՄ-ի ղեկավարությունն ի դեմս Կայզերի և Լեմմերի հրաժարվեց պաշտպանել ԴՍՄԿ-ի նախաձեռնությունը գերմանական ժողովրդական կոնդրես հրավիրելու մասին։ Այդ քաղաքականության հետևանքը եղավ ճգնաժամի առաջացումը ՔԴՄ-ի ներսում։ ՔԴՄ-ի դեմոկրատական պարագլուխներին (Օ. Նուշկե, Հ. Գետինգ և ուրիշներ) հաջողվեց, իրենց շուրջը համախմբելով առաջադեմ ուժերին, մեկուսացնել պրոիմպերիալիստական ուժերին և 1948 թ. ստեղծել ՔԴՄ-ի նոր ղեկավարություն։

Դասակարգային պայքարի սրման և աշխատավորների աճած ակտիվության իրադրության պայմաններում ուժեղացան ինքնուրույն քաղաքական կազմակերպությունների ստեղծման միտումները։ Երեք կուսակցությունների համակարգը արդեն անբավարար էր մանրբուրժուական զանգվածների տարբերակված շահերը ներկայացնելու համար։ 1945 թ. առաջացած կուսակցական-քաղաքական կառուցվածքը չէր համապատասխանում դեմոկրատական շարժման մեջ հեգեմոնիայի համար բանվոր դասակարգի մղած պայքարի նոր պայմաններին։ 1948 թ. ամռանը Արևելյան Գերմանիայում առաջացան ևս երկու կուսակցություններ՝ Գերմանիայի դեմոկրատական գյուղացիական կուսակցությունը (ԳԴԳԿ) և Գերմանիայի ազգային-դեմոկրատական կուսակցությունը (ԳԱԴԿ), որի բազան կազմում էին մանր բուրժուազիայի, մտավորականության հայրենասիրաբար տրամադրված ներկայացուցիչները։ Ի տարբերություն ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի, այդ կուսակցությունների ղեկավարությունը սկզբից ևեթ աջակցություն ցույց տվեց բանվոր դասակարգին Գերմանիայի դեմոկրատական վերափոխման համար նրա մղած պայքարում և կարևոր դեր խաղաց գյուղացիության ու քաղաքային միջին խավերի հետ բանվոր դասակարգի համագործակցության ամրապնդման գործում, լրջորեն քայքայելով ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի ռեակցիոն տարրերի ազդեցությունը։ Դրեթե կես տարվա ընդմիջումից հետո (որ եղել էր ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի ռեակցիոն պարագլուխների սաբոտաժի հետևանքով) 1948 թ. օգոստոսին աշխատանքը վերսկսեց հակաֆաշիստական բլոկի կենտրոնական կոմիտեն, որի կազմն ընդլայնվեց նոր ստեղծված կուսակցությունների, արհմիությունների, ապա և մյուս մասսայական դեմոկրատական կազմակերպությունների հաշվին։

ԳԴՀ-ի կազմավորումը

Գերմանիայի պառակտումը փաստ դառնալուց և 1949 թ. սեպտեմբերին օկուպացիայի արևմտյան երեք գոտիների բազայի վրա Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծումից հետո Գերմանական ժողովրդական խորհրդի նախագահությունը և դեմոկրատական բլոկը որոշում ընդունեցին Գերմանական ժողովրդական խորհուրդը ժամանակավոր Ժողովրդական պալատի (պառլամենտ) վերակազմելու և դեմոկրատական գերմանական պետության կառավարություն կազմելու մասին։ 1949 թ. հոկտեմբերի 7-ին ժամանակավոր ժողովրդական պալատը հռչակեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ) ստեղծումը։ Վ. Պիկը ընտրվեց նրա պրեզիդենտը։ Պրեմիեր մինիստր դարձավ Օ. Գրոտեվոլը, որը դեմոկրատական բլոկի մեջ մտնող բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից կազմեց կառավարություն։ Սովետական Միությունը ԳԴՀ-ի կառավարությանը հանձնեց նախկինում ԳՍԶԱ-ին պատկանող կառավարման ֆունկցիաները։ Գերմանական հարցի վերաբերյալ Յալթայի և Պոտսդամի համաձայնագրերից բխող որոշումների կատարման վերահսկողությունը հանձնվեց սովետական վերահսկիչ հանձնաժողովին (ՍՎՀ)։ 1949 թ. հոկտեմբերին ժամանակավոր ժողովրդական պալատն ընդունեց սահմանադրություն, որը 1949 թ. մայիսին հավանություն էր գտել III գերմանական ժողովրդական կոնգրեսի կողմից։ Այն

արձանագրեց հակաֆաշիստական-դեմոկրատական վերափոխությունների արդյունքները, հռչակեց ժողովրդի սուվերենությունը, նրա իրավունքն ու պարտականությունը՝ մասնակցելու պետության կառավարման բոլոր մակարդակներում։ Ժողովրդական սուվերենության սկզբունքը ոչ միայն հռչակվեց, այլև օրենքով երաշխավորվեց արտադրության վճռական միջոցները ժողովրդական սեփականության վերածելու հետևանքով։ Ժողովրդական պալատը հռչակվում էր հանրապետության իշխանության բարձրագույն մարմին։ Սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին օժտում էր օրենքի առջև հավասար իրավունքներով, աշխատանքի, հանգստի, կրթության իրավունքով, տղամարդկանց ու կանանց իրավահավասարությամբ։ Աշխատավորները (արհմիությունների միջոցով) ստացան արտադրության կառավարմանը, աշխատանքի և աշխատավարձի պայմանների կարգավորմանը համամասնակցելու իրավունք։ ԴՍՄԿ-ն որպես պալատի ուժեղագույն ֆրակցիա, թեկնածություն առաջարկեց պրեմիեր մինիստրի պոստի համար, որը կառավարություն կազմեց պալատում ներկայացված ֆրակցիաների թվաքանակի համաձայն։

ԳԴՀ-ի կազմավորումով սկսվեց պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի՝ պետական իշխանության վերաճման պրոցեսը, իշխանություն, որը կատարում է պրոլետարիատի դիկտատուրայի ֆունկցիաներ։ Հինգ քաղաքական կուսակցությունների գոյությունն իր կնիքը դրեց ԳԴՀ-ում պրոլետարիատի դիկտատուրայի գործողության մեխանիզմի վրա։ Բազմակուսակցական համակարգը դարձավ բնակչության ոչ պրոլետարական խավերի հետ բանվոր դասակարգի դաշինքի, այդ խավերին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու քաղաքական ձև։ Հետևաբար, ԳԴՀ-ի կազմավորումը հանդիսացավ, մի կողմից, համագերմանական իրադարձությունների զարգացման հետևանք, Գերմանիայի պառակտման և ԳՖՀ-ի ստեղծման պատասխանը, մյուս կողմից, 1945 թ. սկիզբ առած հակաֆաշիստական-դեմոկրատական հեղափոխության ներքին օրինաչափությունների տրամաբանական հետևանքը։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԳԴՀ-ՈՒՄ

Բանվորագյուղացիական իշխանության ամրապնդումը

ԳԴՀ-ի ստեղծմամբ Արևելյան Գերմանիայում սկսվեց հակաֆաշիստական-դեմոկրատական հեղափոխության վերաճումը սոցիալիստականի։ Ամբողջ Արևելյան Գերմանիայի մասշտաբով գործող իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը ուղի էր բացում սոցիալիստական շինարարության խնդիրների լուծման համար։ Բայց նախքան այդ կուրսը վերցնելը, հարկավոր էր ավարտել սոցիալիստական հեղափոխության քաղաքական բանակի կազմավորումը՝ ԴՍՄԿ-ն վերածել նոր, լենինյան տիպի կուսակցության, ամրապնդել դեմոկրատական բլոկը, բնակչության մանրբուրժուական խավերին համոզել սոցիալիստական վերափոխությունների անհրաժեշտության և անխուսափելիության մեջ։ Սոցիալիզմի տնտեսական բազայի կառուցումը պահանջում էր ամրապնդել սոցիալիստական սեկտորը, ստեղծել ծանր ինդուստրիա, վերացնել Գերմանիայի պառակտման հետևանքով առաջացած անհամամասնությունը տնտեսության մեջ։ Մշակելով քաղաքական ստրատեգիա և տակտիկա, ԴՍՄԿ-ն և ԳԴՀ-ի կառավարությունը պետք է լրջորեն հաշվի առնեին նաև այլ առանձնահատուկ հանգամանքներ՝ իմպերիալիստական տերությունների օկուպացիոն զորքերի առկայությունը Արևմտյան Գերմանիայում, բաց սահմանները ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև, գերմանական պրոբլեմի լուծման գործում նա-

խաձեռնությունը դեմոկրատական ուժերի ձեռքում պահպանելու անհրաժեշտությունը։

1949—1950 թթ. անցան ԳԴՀ-ում բանվորագյուղացիական իշխանության ամրապնդման նշանաբանով։ Ժամանակավոր Ժողովրդական պալատն ընդունեց մի շարք օրենքներ, որոնք իրավական հիմք ստեղծեցին հանրապետության քաղաքական և սոցիալական ինստիտուտների գործունեության համար՝ աշխատանքի մասին և արտադրության կառավարմանը բանվորների մասնակցելու մասին օրենքները, գյուղատնտեսական բանվորների աշխատանքի պահպանության մասին օրենքը, քաղաքային միջին խավերի (արհեստավորների, մանրավաճառների) գրության և գործունեության բարելավման, գերմանական դեմոկրատական մշակույթի զարգացման և այլ հարցերի մասին օրենսդրական ակտերը։ Հրապարակվեց օրենք նացիստական կուսակցության այն նախկին գործիչներին ներում շնորհելու և քաղաքացիական իրավունքներ տրամադրելու մասին, որոնք ռազմական հանցագործություններ չէին կատարել։ Պետական ապարատի բոլոր օղակները ձևավորվում և ամրապնդվում էին դասակարգային պայքարի դպրոցն անցած բանվորների, սոցիալիզմին և դեմոկրատիային նվիրված մտավորականության և գյուղացիության ներկայացուցիչներին ներգրավելու միջոցով։

Արևելյան Գերմանիայի մտնելը զարգացման նոր փուլ կատաղի դիմադրության հանդիպեց ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի հետադեմ ուժերի կողմից։ Օգտագործելով մի քանի երկրամասերի կառավարություններում ունեցած դիրքերը, նրանք հանդես եկան ԳԴՀ-ի կազմավորման դեմ, հրաժարվում էին ճանաչել նոր եվրոպական սահմանները, պահանջում վերանայել դեմոկրատական վերափոխությունները, օժանդակում էին ժողովրդական սեփականության հափշտակմանը, սաբոտաժի ենթարկում ԳԴՀ-ի կառավարության կարգադրությունները։ Առաջադրելով անհապաղ Ժողովրդական պալատի ընտրություններ անցկացնելու դեմագոգիկ պահանջներ, ռեակցիոն տարրերը վերցրել էին դեմոկրատական բլոկի պառակտման և ԳԴՀ-ում կապիտալիզմի վերականգնման կուրս։

Սակայն հակահեղափոխական ուժերի պլանները ձախողվեցին։ 1949—1950 թթ. ծավալված քաղաքական պայքարի ընթացքում ՔԴՄ-ի և ԼԴԿ-ի պրոիմպերիալիստական տարրերը վերջնականապես մեկուսացվեցին, քաղաքականապես ջախջախվեցին և հանվեցին կուսակցություններում և պետական ապարատում իրենց զբաղեցրած պոստերից, իսկ տատանվող մանրբուրժուական տարրերը ներգրավվեցին ավելի սերտ համագործակցության մեջ բանվոր դասակարգի հետ։ 1949 թ. վերջին—1950 թ. սկզբին գերմանական ժողովրդական կոնգրեսի բազայի վրա ստեղծվեց դեմոկրատական Գերմանիայի ազգային ճակատը (ԴԳԱՃ)։ ԳԴՀ-ն հանդիսացավ ԴԳԱՃ-ի հենարանը, իսկ դեմոկրատական բլոկը՝ նրա ղեկավար ուժը։ Դիմանալով ռեակցիոն տարրերի դեմ մղված պայքարի փորձություններին, դեմոկրատական բլոկը մոբիլիզացրեց լայն զանգվածներին՝ երկամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։ Ժողովրդական պալատի առաջիկա ընտրությունների (1950 թ. հոկտեմբերի 15) կապակցությամբ որոշում ընդունվեց միասնական նախընտրական ծրագրի մշակման և ԴԳԱՃ-ի թեկնածուների միասնական ցուցակի առաջադրման մասին։ Ընտրությունների ժամանակ ԴԳԱՃ-ը հաղթանակ տարավ՝ ընտրությունների մասնակիցների 99,7%-ն իրենց ձայնը տվեցին միասնական ցուցակների օգտին։

Այսպիսով, հեղափոխության երկրորդ փուլին անցնելու ժամանակ ԳԴՀ-ում ուժերի սկզբունքային վերախմբավորում տեղի չունեցավ։ Դեմոկրատական բլոկը պահպանվեց։ Գերմանական հեղափոխության դեմոկրատական և սոցիալիստական խնդիրների յուրօրինակ զուգակցության, նրա խաղաղ բնույթի, ինչպես նաև մանրբուրժուական կուսակցությունների գոյության սոցիալ-տնտեսական

հիմքերի հետագա փոփոխության կապակցությամբ պահպանվեց նաև բազմակուսակցական համակարգը։

Առաջին հնգամյա պլանը (1951—1955)

Սոցիալիզմի հիմքերի ստեղծման գործում կարևորագույն նշանակություն ուներ առաջին հնգամյա պլանը։ Արդեն երկամյա պլանի (1949—1950) կատարման հետևանքով արդյունաբերական արտադրության ծավալը գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, ժողովրդական սեկտորին բաժին էր ընկնում արդյունաբերական արտադրանքի ընդհանուր արտադրության 68%-ը և մանրածախ առևտրի գրեթե կեսը։ Բայց բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրությունը դեռ չէր հասել 1936 թ. մակարդակին։ Զգացվում էր էներգետիկ բազայի թուլությունը, ինչպես նաև էկոնոմիկայում եղած անհամամասնությունները. ԳԴՀ-ում (1936 թ.) արտադրվում էր Գերմանիայի ամբողջ արդյունաբերական արտադրանքի 26%-ը, էլեկտրատեխնիկայի 25%-ը, մեքենաշինական արդյունաբերության ապրանքների ավելի քան 30%-ը, բայց արդյունահանվում էր երկաթահանքի միայն 5%-ը, քարածխի 2%-ից քիչ ավելին։ Այդտեղ էր գտնվում սև մետալուրգիայի արտադրական կարողությունների ընդամենը միայն 7%-ը։ Այդ պատճառով առաջին հնգամյա պլանի առանցքը հանդիսացավ ԳԴՀ-ի սոցիալիստական ինդուստրացումը. այն նախատեսում էր նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի կրկնակի ավելացում, սեփական մետալուրգիական բազայի և ծանր մեքենաշինության ստեղծում ժողովրդական տնտեսության մեջ եղած անհամամասնությունը հաղթահարելու նպատակով։ Առաջին հնգամյա պլանի իրագործման ասպարեզում վիթխարի նշանակություն ուներ 1950 թ. ԳԴՀ-ի ընդունվելը Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ։

ԳՍՄԿ III համագումարը (1950 թ. հուլիս) հավանություն տալով առաջին հնգամյա պլանի դիրեկտիվներին, մշակեց նաև ԳԴՀ-ի քաղաքականության հիմնական սկզբունքները երկու գերմանական պետությունների գոյության պայմաններում, քննարկեց ԳՍՄԿ-ի զարգացման հարցերը, ընդունեց կուսակցության նոր կանոնադրություն։ Կուսակցական ուսուցում մտցնելը, ինչպես նաև կուսակցական տոմսերի փոխանակությունը կարևոր միջոցառումներ եղան ԳՍՄԿ-ի գաղափարական, քաղաքական և կազմակերպական հետագա ամրապնդման գործում։ Նրա գործողությունների ծրագրի ծանրության կենտրոնն ընկած էր սոցիալիստական բնույթի վերափոխությունների համար տնտեսական ու քաղաքական նախադրյալների ստեղծման վրա։ Գերմանական պրոբլեմի լուծման բնագավառում կուսակցության ստրատեգիական գիծը մնում էր նախկինը՝ Գերմանիայի միասնության վերականգնումը դեմոկրատական հիմքի վրա և հաշտության պայմանագրի կնքումը Պոտսդամի որոշումների համաձայն։

Առաջին հնգամյակի պլանը իրականացվում էր դեմոկրատական բլոկի բոլոր կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից հավանության արժանանալու պայմաններում։ ԳԴՀ-ի կառավարությունն ընդունեց մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին տնտեսության ղեկավարման բարելավմանը։ 1952 թվականից բոլոր ժողովրդական ձեռնարկություններում սկսեցին տընտեսաշվարկ մտցնել։ Հնգամյա պլանի կատարման ընթացքում մրցություն ծավալվեց տեխնիկայի լավագույն օգտագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ 1952 թ. Ցվիկաուի Կարլ Մարքսի անվան հանքահորի բրիգադիր Ֆ. Ֆրանիկի նախաձեռնությամբ սկսվեց ակտիվիստ-հարվածայինների շարժումը։

Առաջին հնգամյակի առաջին երեք տարիներին (1951—1953) վերականգնվեց 79 և նոր կառուցվեց 100 ժողովրդական ձեռնարկություն։ Առաջին հնգամյակի կարևորագույն կառույցներից էին մետալուրգիական երկու գիգանտ-

ները՝ լեհական սահմանի մոտ գտնվող «Օստ» կոմբինատը, որն աշխատում էր սովետական երկաթի հանքաքարով և լեհական քարածխով, և Կալբեի մոտ գտնվող «Վեստ» կոմբինատը, որտեղ կիրառվեց երկաթի աղքատ հանքաքարից մետաղ արտադրելու նոր տեխնոլոգիական պրոցեսը։ Մետալուրգիական արդյունաբերության զարգացման համար մեծ նշանակություն ուներ գորշ ածխից մետալուրգիական բարձրորակ կոքս արտադրելու 1952 թ. Լաուխհամերում (Սաքսոնիա-Անհալտ) կառուցված խոշոր գործարանը։ Հյուսիսային ծովի ափին՝ Ռոստոկում, Շտրալզունդեում, Վարնեմյունդեում և Վիսմարում սկսվեց նոր խոշոր նավահանգիստների կառուցումը։ Ավելացավ գյուղատնտեսության մթերատվությունը։

ԳՖՄ-ն և գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը (1950 թ. նրանք միավորվեցին) դարձան դեմոկրատիայի կարևորագույն հենակետերը և դպրոցը գյուղում։ Մեքենավարձակալական կայանները (1949 թվականից դրանք դարձան պետական-կոոպերատիվ) սահմանափակում էին գյուղատնտեսության մեջ կապիտալիստական տարրերի գործունեության ոլորտը, օժանդակում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդմանը։ 1953 թ. սկզբին ՄՎԿ-ները վերակազմվեցին մեքենատրակտորային կայանների (ՄՏԿ), որոնք դարձան գյուղում կատարվող սոցիալիստական վերափոխումների կարևորագույն լծակը։ Արդեն հնգամյակի առաջին տարիներին նկատելիորեն բարելավվեց ժողովրդի նյութական բարեկեցությունը։ Գների, աշխատավարձի և կենսաթոշակների կառուցվածքի բարելավման մասին օրենսդիր միջոցառումները, գների իջեցումը բնակչության գնողունակությունը բարձրացրին 2,3 մլրդ. մարկով։

Սոցիալիզմի կառուցման կուրսը։ Դասակարգային պայքարի սրումը

1952 թ. ԳՖՀ-ի կողմից Ընդհանուր պայմանագրի ապա և Եվրոպական պաշտպանական համագործակցության (ԵՊՀ) մասին պայմանագրի ստորագրման կապակցությամբ համագերմանական իրադրության փոփոխությունը, մյուս կողմից, ԳԴՀ-ի քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացման հաջողությունները, բանվոր դասակարգի վերածվելը հասարակության ղեկավար ուժի, իսկ ԳՍՄԿ-ն՝ նոր տիպի կուսակցության, անհրաժեշտ դարձրին նոր միջոցառումների ընդունումը դեմոկրատական գերմանական պետության ամրապնդման համար։ ԳՍՄԿ II կոնֆերանսը (1952 թ. հուլիս) դիրեկտիվներ մշակեց ԳԴՀ-ում սոցիալիզմի հիմքերի ստեղծման մասին։ Նորը կոնֆերանսի որոշումներում ԳԴՀ-ում ժողովրդադեմոկրատական պետական իշխանության բնույթի և խնդիրների բնութագրումն էր, հնգամյա պլանի իրագործման ասպարեզում կիրառվող տնտեսական քաղաքականության ձևերի ու մեթոդների ճշգրտումը, ինչպես նաև կողմնորոշումը դեպի գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների զարգացումը։ Պետական իշխանությունը, որպես սոցիալիզմի հիմքերի կառուցման գլխավոր գործիք, պետք է կոտրեր տապալված և սեփականազրկված խոշոր կապիտալիստների և հողատերերի դիմադրությունը, բոլոր աշխատավորներին համախմբեր բանվոր դասակարգի շուրջը սոցիալիզմի կառուցման համար։ ԳՍՄԿ II կոնֆերանսի որոշումը պաշտպանեցին դեմոկրատական բլոկի մյուս կուսակցությունների և զանգվածային կազմակերպությունների ղեկավար մարմինները, որոնք իրենց պատրաստակամությունը հայտնեցին մասնակցելու ԳԴՀ-ում սոցիալիստական հասարակության կառուցմանը։

1952 թ. II կոնֆերանսի առաջադրած խնդիրների, նրա հանձնարարականների համաձայն երկրի կյանքի ղեկավարման գործում բանվոր դասակարգի և բնակչության մյուս խավերի ավելի ակտիվ մասնակցությունն ապահովելու,

դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներն ամրապնդելու նպատակով փոխվեց իշխանության տեղական մարմինների կառուցվածքը։ 1952 թ. հուլիսին Ժողովրդական պալատի ընդունած օրենքի համաձայն հինգ երկրամասի փոխարեն ստեղծվեցին 14 (ավելի ուշ՝ 15) օկրուգներ։ 1952 թ. գյուղում սկսեց ծավալվել կոոպերատիվ շարժումը։ Սոցիալիստական արդյունաբերության մեջ ալյան տարածում գտավ մրցության նոր ձև՝ ակտիվիստների կոլեկտիվ աշխատանքը, որտեղ հաշվի էր առնվում ոչ միայն արտադրության ծավալը, այլև որակը, նյութերի խնայողությունը, ինքնարժեքի իջեցումը, նոր տեխնիկայի օգտագործումը և այլն։ Մինչև 1952 թ. բանվորները կատարեցին 291 հազար ռացիոնալիզատորական առաջարկություն։

Քաղաքում և գյուղում կատարված սոցիալիստական վերափոխությունների ընթացքում սրվեց դասակարգային պայքարը։ Սոցիալիզմի հիմքերի կառուցմանն անցնելուն բանվորագյուղացիական իշխանության թշնամիները ԳՖՀ-ում պատասխանեցին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության դեմ «սառը պատերազմ» ծավալելով։ Արդեն 1952 թ. սկսվեց թշնամական գործողությունների նախապատրաստումը ԳԴՀ-ի աշխատավորության նվաճումները լիկվիդացնելու նպատակով։ Դրանք մշակում էր Բոննում ստեղծված Գերմանիայի «վերամիավորման» հատուկ «հետազոտական խորհուրդը»։ «Մենք ամեն ինչ կանենք..., որպեսզի ետ վերադարձնենք օկուպացման սովետական գոտին»,— հայտարարեց ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր Ֆոն Բրենտանոն։

Այդ իրադրության մեջ ԳԴՀ-ում սկսեցին գլուխ բարձրացնել հակասոցիալիստական ուժերը։ Կուլակությունը և քաղաքներում գտնվող նրա համախոհները բոլոր միջոցներով ջանում էին գյուղացիներին ետ պահել արտադրական կոոպերատիվներ ընդունվելուց։ Մասնավոր ձեռնարկատերերի, մեծածախ առևտրականների և այլոց միջավայրին պատկանող ռեակցիոն տարրերը, որոնք հույսեր էին փայփայում կապիտալիզմի վերականգնման մասին, վնաս էին հասցնում սոցիալիստական շինարարությանը, քայքայում բնակչության մատակարարումը, խուսափում հարկեր վճարելուց, զբաղվում սպեկուլյացիայով։ Մանրբուրժուական խավերի մի մասը և որոշ թվով բանվորներ սկսեցին տատանումներ հանդես բերել բանվորագյուղացիական իշխանության հանդեպ իրենց ունեցած վերաբերմունքում։ Դրան նպաստեց նաև բանվոր դասակարգի կազմի փոփոխությունը՝ արտադրողական աշխատանքի մեջ էին ներգրավվել մանր և միջին բուրժուազիայից, նախկին նացիստներից, չինովնիկներից ելած միլիոնավոր մարդիկ, որոնք բանվոր դասակարգի մեջ էին բերում բուրժուական հայացքներ ու տրամադրություններ, ջանում պետությունից վերցնել որքան հնարավոր է ավելի շատ՝ չբարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը։ Այդ հանգամանքները, ինչպես նաև էկոնոմիկայում դեռևս չհաղթահարված անհամամասնությունները, մասնավորապես հումքի մատակարարման ասպարեզում, հասցրին արտադրության պրոցեսի ընդհատումների։ Ջուգունի պակասը արգելակում էր ծանր մեքենաշինությանը, որը էներգետիկ սարքավորումներ էր պատրաստում էլեկտրակայանների և էներգամատակարարման համակարգերի համար. էներգիայի պակասը հասցրեց արտադրության սահմանափակմանը և նույնիսկ ձեռնարկությունների աշխատանքի դադարեցմանը։ 1953 թ. առաջին եռամյակի ժողովրդատնտեսական պլանը չկատարվեց։

Պետական մարմինները փորձեր էին անում անհամամասնությունները շուտ լիկվիդացնել ծանր արդյունաբերության զարգացումն արագացնելու միջոցով։ Հնգամյակի վերջին տարիների համար նախատեսված որոշ առաջադրանքներ մասամբ մտցվեցին 1953 թ. պլանի մեջ, որը հասցրեց թեթև արդյունաբերության և սպառման առարկաների արտադրության զարգացման տեմպերի դանդաղմանը։ Կուտակումների նոր աղբյուրներ որոնելու ձգտումը հասցրեց

սոցիալական նպատակների համար հատկացումների կրճատմանը։ Կապիտալիստական տարրերի դուրս մղման ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցառումները (ձեռնարկատերերի վրա դրվում էին լրացուցիչ հարկեր, նրանք երբեմն զրկվում էին պարենային քարտերից, հումքից և այլն) ուժեղացնում էին բուրժուական կուսակցությունների դժգոհությունը։ Շահագործումը մասնավոր կապիտալիստական սեկտորում սահմանափակելու ուղղությամբ պետական մարմինների ձեռք առած միջոցառումներին ձեռնարկատերերը շատ դեպքերում պատասխանում էին արտադրության կրճատմամբ և նույնիսկ ձեռնարկությունների փակմամբ։ Դատական մարմինները երբեմն անտեսում էին սոցիալիստական արդարադատության դաստիարակչական ֆունկցիաները և տարբերություն չէին դնում հանրապետության թշնամիների ու աշխատավոր բնակչության սխալ գործողությունների միջև։ Դրա հետևանքով առաջացավ ժողովրդական զանգվածների հետ բանվոր դասակարգի և նրա կուսակցության կապերի թուլացման վտանգ։ ԳԴՀ-ում գտնվող իմպերիալիստական գործակալությունը ձգտում էր իրադրությունն օգտագործել պուտչ կազմակերպելու և կապիտալիստական կարգերը վերականգնելու համար։

ԳՍՄԿ Կենտկոմը և ԳԴՀ-ի կառավարությունը 1958 թ. հունիսի սկզբին մի շարք միջոցներ ձեռնարկեցին առաջացած դժվարությունները հաղթահարելու համար։ Ժողովրդատնտեսական պլանի մեջ մտցվեցին ուղղումներ, որոնք նախատեսում էին թեթև և սննդի արդյունաբերության արագ զարգացում, ավելի շատ ուշադրություն սկսեց դարձվել մանատնտես գյուղացիների, առևտրականների, արհեստավորների, մատակարարության շահերին, միջոցառումներ նշվեցին մասնավոր նախաձեռնության զարգացման համար։ Մասնավոր սեկտորին տրամադրվեց ավելի քան 49 մլն. մարկի վարկ։ Դրա հետ մեկտեղ ԳԴՀ-ի կառավարությունը հայտարարեց, որ ինքը թույլ չի տա կապիտալի համակենտրոնացում և շրջանակներ կսահմանի կապիտալիստական ապրանքային արտադրության զարգացման համար։ Մի շարք միջոցառումներ ընդունվեցին սոցիալիստական օրինականության ամրապնդման համար։

ԳՍՄԿ և կառավարության նոր կուրսը ողջունեց ԳԴՀ-ի բնակչության մեծ մասը։ Իմպերիալիստական ուժերն իրենց հաշիվ էին տալիս, որ այդ միջոցառումներն իրենց պտուղները տալու են մոտակա ժամանակում և շտապեցին սանձազերծել հակահեղափոխական պուտչ։ 1953 թ. հունիսի 16—17-ին ԳՖՀ-ից Արևմտյան Բեռլին փոխադրվեցին ֆաշիստական տարրեր։ Թափանցելով Բեռլինի դեմոկրատական սեկտոր և ուրիշ քաղաքներ, նրանք կարողացան բնակչության մի մասին թյուրիմացության մեջ գցել։ Մի քանի վայրերում տեղի ունեցան ցույցեր, դադարեցվեց աշխատանքը։ Մի քանի մեծ քաղաքներում պրովոկատորներն ավերում ու հրկիզում էին խանութները։ Պրեմիեր մինիստրի տեղակալ Օ. Նուշկեին առևանգեցին և տարան Արևմտյան Բեռլին։ Սակայն այդ անկարգությունների մեջ ներգրավված էր ընդհանուր առմամբ բանվորների մոտ 5%-ը։ 10 հազ. համայնքներից միայն 272-ում, որտեղ իմպերիալիստական հետախուզությունն իր հենակետերն ուներ, հաջողվեց անկարգություններ հրահրել։ Բնակչության մեծ մասը շատ շուտով հասկացավ հակահեղափոխության մտադրությունները, որը ձգտում էր տապալել բանվորագյուղացիական իշխանությունը ԳԴՀ-ում։ ԳԴՀ-ի կառավարությունը վճռական միջոցառումներ ձեռնարկեց և Սովետական Միության օգնությամբ ձախողեց պուտչիստների պլանները։

Առաջին հնգամյակի կատարման արդյունքները

1953 թ. առաջին կեսի դժվարությունների հաղթահարման ընթացքում ԳՍՄԿ-ն, բանվոր դասակարգը, ԳԴՀ-ի բնակչության աշխատավորական խավերը ձեռք բերեցին կարևոր քաղաքական փորձ։ 1953 թ. հունիսի 24-ին

ԳՍՄԿ Կենտկոմի պլենումը մշակեց նոր միջոցառումներ, որոնք ուղղված էին աշխատավորների աշխատանքի և կյանքի պայմանների բարելավմանը։ 1953 թ. վերջին կենսամակարդակի բարձրացման ասպարեզում ձեռք բերվեցին այնպիսի արդյունքներ, որոնք պլանավորված էին հնգամյակի վերջի համար։ ԳՍՄԿ-ն աշխատավորներին մոբիլիզացրեց հնգամյա պլանի տնտեսական խնդիրները լուծելու համար։ 1954 թ. դարձավ «մեծ նախաձեռնության» տարի։ Սոցիալիստական մրցությունը և արտադրության առաջավորների շարժումն սկսեցին զանգվածային բնույթ ստանալ, զգալիորեն աճեցին նորարարների և ռացիոնալիզատորների շարքերը։ ԳՍՄԿ IV համագումարը (1954) դիրեկտիվներ մշակեց ամենից առաջ վառելիքի, էներգետիկ և քիմիական արդյունաբերության արագ զարգացման վերաբերյալ՝ որպես էկոնոմիկայի բոլոր ճյուղերի և աշխատավորության բարեկեցության հետագա վերելքի կարևորագույն նախադրյալի։

ԳԴՀ առաջին հնգամյա պլանը հիմնականում կատարվեց, թեև ծանր արդյունաբերությունը չհասավ նախապես սահմանված առաջադրանքներին։ Արդյունաբերական արտադրության ծավալը 1936 թ. համեմատությամբ գրեթե կրկնապատկվեց։ Զգալի հաջողություններ հասավ սոցիալիստական սեկտորը. ամբողջ հասարակական արտադրանքի մոտ 2/3-ը արտադրվում էր ժողովրդական ձեռնարկություններում, գյուղատնտեսական օգտակար տարածության մոտ 20%-ը պատկանում էր արտադրական կոոպերատիվներին, պետությունը գրեթե լիովին վերահսկում էր մեծածախ առևտուրը։ ԳԴՀ-ի բանվորագյուղացիական իշխանությունը ստեղծեց սոցիալ-տնտեսական մի այնպիսի բազա, որը հիմնականում կրում էր սոցիալիստական բնույթ, բանվոր դասակարգը դարձավ հասարակության ճանաչված ղեկավարը, սովորեց պետություն և էկոնոմիկա ղեկավարել։ Փոխվեց նաև ԴՄԱՃ-ի գործունեության բովանդակությունը՝ համագերմանական խնդիրներ լուծելուց, բնակչությանը հակաֆաշիստական ոգով դաստիարակելուց այն անցավ լայն զանգվածներին մոբիլիզացնելուն՝ սոցիալիստական շինարարությանը գիտակցաբար մասնակցելու համար։ Առաջին հնգամյակի տարիները դարձան ԳԴՀ-ում կուլտուրական հեղափոխության ծավալման ժամանակաշրջան։ Գրականության և արվեստի մեջ ամրացան սոցիալիստական ռեալիզմի դիրքերը, որն իր արտահայտությունը գտավ գրողներ Վ. Բրեդելի, Ե. Շտրիտմատերի, Ֆ. Վոլֆի, Ա. Ցվեյգի, կոմպոզիտորներ Ռ. Դեսաուի, Խ. Եյսլերի և ուրիշների ստեղծագործություններում։

1955 թ. մայիսին ԳԴՀ-ն մտավ Վարշավայի պայմանագրի մեջ, ապահովելով հեղափոխական նվաճումների հուսալի պաշտպանությունը։ 1955 թ. սեպտեմբերի 20-ին ՍՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև կնքված պայմանագիրը սահմանեց ԳԴՀ-ի լիակատար սուվերենությունը նրա ներքին ու արտաքին քաղաքականության լուծման բնագավառում, ներառյալ նաև երկու գերմանական պետությունների վերամիավորման հարցը։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԳԴՀ-ՈՒՄ (1956—1962)

ԳԴՀ-ում սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակի կուրսը

1955—1956 թթ. ԳԴՀ-ն մուտք գործեց ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում սոցիալիստական արտադրահարաբերությունների հաստատման փուլը։ Նոր փուլին անցնելը թելադրվում էր միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններով և ԳԴՀ-ի զարգացման ներքին պրոցեսներով։ Արևմտագերմանական իմպերիալիզմի կոնսոլիդացումը, ԳՖՀ-ի մտնելը ՆԱՏՕ և Արևմտյան Գերմանիայի ռազմականացումը պայմանավորեցին մոտ

ապագայում գերմանական երկու պետությունների խաղաղ միավորման անհնարինությունը և նրանց երկարատև գոյակցության անխուսափելիությունը։ Մյուս կողմից, հասունացան ներքին նախադրյալները սոցիալիստական վերափոխություններն ավարտելու համար։ Արդեն առաջին հնգամյակի վերջին ակնհայտ դարձավ, որ մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների մեծամասնությունը հասել է արտադրության և աշխատանքի արտադրողականության բարձրացման սահմանագծին։ Պարզվեց նրանց զգալի ետ մնալը սոցիալիստական սեկտորից։ Այսպես, եթե 1950—1955 թթ. արտադրության աճը յուրաքանչյուր ձեռնարկությունում միջին հաշվով հավասար էր 16%-ի, ապա մասնավոր արդյունաբերության մեջ՝ միայն 8,6%-ի։ Արհեստագործական արտադրության մեջ յուրաքանչյուր աշխատողին ընկնող արտադրանքը 1953 թ. համեմատությամբ 1954 թ. ավելացավ 14%-ով, իսկ 1955 թ. համեմատությամբ 1956 թ.՝ միայն 4,5%-ով։ 50-ական թվականների վերջերին այդ նույն միտումները նկատվեցին նաև գյուղատնտեսության մեջ։ Արտադրության հետագա աճը հնարավոր էր նոր տեխնիկայի կիրառման, արտադրության համակենտրոնացման և կոոպերացման դեպքում, որը ի վիճակի էր անել միայն ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում սոցիալիստական արտադրահարաբերությունների բազայի վրա հիմնված ժամանակակից խոշոր արտադրությունը։

Այդ արտաքին քաղաքական և ներքին պայմանները որոշեցին երկրորդ հնգամյա պլանի (1956—1960) բովանդակությունը։ Նրա կենտրոնում էր պայքարը հանուն գիտատեխնիկական առաջադիմության։ Նպատակ էր դրվում մինչև 1960 թ. վերջը հասնել համախառն արտադրանքի ծավալի ավելացմանը 55%-ով (1955 թ. մակարդակի համեմատ), զգալիորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Կապիտալ շինարարության կարևորագույն օբյեկտներ համարվեցին աշխարհում խոշորագույն «Շվարցե պումպե» գորշածխային կոմբինատը (Կոտբուսի օկրուգ) և Դրեզդենի մոտ գտնվող Ռոսենդորֆի ատոմային ռեակտորը (կառուցվում էր ՍՍՀՄ-ի օգնությամբ, շահագործման հանձնվեց 1957 թ.)։

ԳՍՄԿ III կոնֆերանսը (1956 թ. մարտ) և ԳՍՄԿ 30-րդ պլենումը (1957 թ. հունվար) դեմոկրատական բլոկի մյուս կուսակցությունների համագործակցությամբ մշակեցին սոցիալիստական շինարարության մեջ բնակչության լայն զանգվածներին ներգրավելու ծրագիր։ Մանր կապիտալիստական արտադրության աստիճանաբար և խաղաղ ձևով սոցիալիստականի վերափոխվելու ուղիների որոնումները կրում էին ստեղծագործական բնույթ, հաշվի էին առնվում ԳԴՀ-ի ավանդույթներն ու դրության առանձնահատկությունը։ Գյուղատնտեսության համար հաստատվեցին գյուղական սեփականատերերի՝ սոցիալիզմին անցնելու 50-ական թվականներին մշակված և մասնակիորեն գործնականում փորձարկված ձևերն ու մեթոդները, հաշվի առնելով հողի նկատմամբ մասնավոր սեփականության պահպանումը։ 1954 թվականից խոշոր սեփականատեր գյուղացիները հնարավորություն ստացան դառնալու ԳԱԿ-երի անդամ։ Հանձնարարվում էր ստեղծել երեք տիպի գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվ (ԳԱԿ). 1) ընդհանուր օգտագործման մեջ է գտնվում միայն հողը, իսկ մեքենաները, բանող և այլ անասունները մնում են անհատական սեփականություն. եկամուտների միայն 60%-ն է բաշխվում ըստ աշխատանքի, մնացածը՝ ըստ կոոպերատիվում ներդրած ունեցվածքի և հողի չափերի. 2) համատեղ օգտագործվում են գյուղատնտեսական մեքենաները և բանող անասունների մի մասը. եկամուտների 70%-ը բաշխվում է ըստ աշխատանքի. 3) ԳԱԿ-երի անդամները համատեղ օգտագործում են ոչ միայն վարելահողը և գյուղատնտեսական մեքենաները, այլև մարգագետինները, արոտավայրերը, անտառներն ու անա-

սունները. կոոպերատիվի եկամուտների 80%-ը բաշխվում է ըստ աշխատանքի։ Հետևաբար, ԳԱԿ-երն ստեղծվում էին որպես գյուղում սոցիալիստական արտադրահարաբերությունների ձևավորմանն անցնելու փուլ։

Առաջարկվում էր արհեստավորների արտադրական կոոպերացիայի (ԱԱԿ) երկու տիպ։ Առաջին տիպի կոոպերատիվներում միավորվում էր միայն աշխատանքը, իսկ արտադրության միջոցները մնում էին որպես իրենց տիրոջ սեփականություն։ Կոոպերատիվի եկամուտների կեսը հատկացվում էր մեքենաներ ու հումք գնելուն, մնացածը բաշխվում էր ըստ աշխատանքի։ Երկրորդ տիպի միավորումներում եկամուտը ենթակա էր բաշխման ըստ աշխատանքի, իսկ արտադրության միջոցները հանձնվում էին կոոպերատիվին։ Առաջին երկու տարիների ընթացքում պետությունը ԱԱԿ-ներին տրամադրում էր արտոնություններ. դրանք ազատվում էին շրջանառության հարկից և կորպորացիոն հարկից, արտոնություններ էին ստանում վարկի ասպարեզում և այլն։ Առևտրականների համար նախատեսվում էր պետական մեծածախ հիմնարկների հետ կոմիսիոն պայմանագրեր կնքելու հնարավորություն։ Ըստ որում առևտրականը (կոմիսիոները) ազատվում էր շրջանառության հարկից և արդյունագործական հարկից, շենքերի վարձակալման ծախսերից և այլն։ Իր աշխատանքի համար նա ստանում էր շրջանառության 6—8%-ը։ Մանր և միջին ձեռնարկատերերին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու համար հանձնարարվում էր ստեղծել պետական-մասնավոր խառն ձեռնարկություններ։

ԳՍՄԿ-ի և ԳԴԱՃ-ի մշակած մասնավոր կապիտալիստական սեկտորի սոցիալիստական վերափոխումների ձևերը համապատասխանում էին ժողովրդի շահերին և ընդունելի էին քաղաքի ու գյուղի միջին խավերի ներկայացուցիչների համար։ Բազմակուսակցական համակարգը սկսեց վերածվել սոցիալիստական վերափոխումների արդյունավետ մեխանիզմի։ ՔԴՄ-ի համար գաղափարական կողմնորոշման հիմքը սոցիալիզմի սկզբունքների համընկնումն էր սոցիալական արդարության հանդեպ հավատացյալների ձգտումներին։ ԼԴԿ-ն ելնում էր Գերմանիայի պատմության առաջադիմական ավանդույթներից, մասնավորապես այն գաղափարից, որ միայն սոցիալիզմն է ընդունակ ապահովել անձի բազմակողմանի զարգացումը։ ԴԱԴԿ-ի համար սոցիալիզմը նույնացվում էր ամենից առաջ խաղաղության պահպանության հետ։ ԴԴԿ-ն իր անդամների ուշադրությունը դարձնում էր գյուղացիության զանգվածների համար սոցիալիստական վերափոխությունների առավելությունների վրա։

Սոցիալիստական վերափոխությունների դժվարությունները։ Ռևիզիոնիստական տարրերի ակտիվացումը

1956 թ. սոցիալիստական շինարարությունը ԳԴՀ-ում բախվեց լուրջ դժվարությունների։ Դրանք պայմանավորված էին ինչպես միջազգային դրության սրման՝ ԳԴՀ-ի համար անբարենպաստ հետևանքներով, այնպես էլ ներտնտեսական պատճառներով։ Եգիպտոսի դեմ ձեռնարկված անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիան հասցրեց միջազգային կոմունիկացիաների խախտմանը և գների աճին համաշխարհային շուկաներում, որը ազդեց արդյունաբերությանը հումքի որոշ տեսակներ, իսկ բնակչությանը ապրանքներ մատակարարելու խնդրի վրա։ Հունգարիայում տեղի ունեցած հակահեղափոխական պուտշը, քաղաքական իրադրության սրումը Լեհաստանում ժամանակավորապես խախտեցին այդ երկրների հետ ունեցած տնտեսական կապերը (մասնավորապես, ԳԴՀ-ին լեհական ածուխ մատակարարելը), դժվարացրին գերմանական մի շարք ձեռնարկությունների նորմալ գործունեությունը։ Իր ազդեցությունն ունեցավ նաև 1955—56 թթ. դաժան ձմեռը, լիովին չհաղթահարված անհամամասնությունները էկոնոմիկայում (հատկապես էներգետիկ բազայի նեղ լինելը), աշխատանքի

արտադրողականության համեմատաբար դանդաղ աճը։ 1956 թ., ժողովրդական բանակի ստեղծմամբ ավելացան պաշտպանական ծախսերը։

Թեև դասակարգային պայքարի ներքին պատճառները ԴԴՀ-ի ամրապնդմանը համեմատ աստիճանաբար անցյալի գիրկն էին նահանջում և հակասոցիալիստական դիվերսիաների հիմնական վտանգն այժմ ելնում էր Արևմտյան Գերմանիայից, այնուամենայնիվ, տնտեսական դժվարությունները և միջազգային իրադրության սրումը տատանումներ առաջացրին միջին խավերի ու դեմոկրատական բլոկի կուսակցությունների մի մասի մեջ։ Անհատի պաշտամունքի քննադատությունը ՍՄԿԿ XX համագումարում իմպերիալիստական պրոպագանդայի կողմից օգտագործվում էր սոցիալիզմի գաղափարները վարկաբեկելու համար։ ԴՍՄԿ-ում ակտիվացան ռևիզիոնիստական տարրերը։ Նրանք հատկապես ուժեղ էին գաղափարական ճակատի աշխատողների, մտավորականության մեջ։ ԴՍՄԿ ղեկավարության մեջ III կոնֆերանսի որոշումները գրոհի էին ենթարկվում Շիրդևան-Վոլվերեր-Ցիլլերի ռևիզիոնիստական խմբի կողմից։ «Անհատի պաշտամունքի և դոգմատիզմի դեմ պայքարի» քողի տակ ըստեղծվում էին ԴՍՄԿ ղեկավարության և կուսակցության քաղաքականության փոփոխության ծրագրեր։

Ռևիզիոնիստները գլխավոր հարվածն ուղղեցին սոցիալիստական պետության, պրոլետարիատի դիկտատուրայի, հասարակության զարգացման ասպարեզում բանվոր դասակարգի կուսակցության ղեկավար դերի դեմ։ Երկու գերմանական պետությունների միջև «անդունդը չխորացնելու» անհրաժեշտության վկայակոչումներով զարգացվում էր սոցիալիստական վերափոխությունների տարերայնության, դրանց դանդաղ տեմպերի տեսությունը։ Առաջարկվում էր հրաժարվել թույլ ԳԱԿ-երին օգնություն ցույց տալուց, ցրել դրանք և շեշտը դնել «ընտանեկան» (այսինքն՝ կուլակային) տնտեսությունների զարգացման վրա, որպես առավել շահութաբեր տնտեսություններ։ Փիլիսոփա Բլոխը հայտարարեց մարքսիստական փիլիսոփայության վերանայման և դիալեկտիկական մատերիալիզմի «նոր հիմնավորման» անհրաժեշտության մասին։ Ռևիզիոնիստները հանդես եկան գիտության, գրականության, արվեստի մեջ կուսակցականության սկզբունքի դեմ, խրախուսում էին ազգայնական և մասամբ հակասովետական միտումները։ Փորձեր էին արվում կազմակերպելու ուսանողական հակակառավարական ցույցեր՝ հակահեղափոխական խռովություն հրահրելու հեռանկարով։

1956—1958 թթ. ընթացքում ԴՍՄԿ-ն և ԴԴԱՃ-ի մյուս կուսակցություններն ու կազմակերպությունները հանրապետության բնակչության մեծ մասի աջակցությամբ վիթխարի աշխատանք կատարեցին երկրի գրությունը նորմալացնելու ուղղությամբ։ Տեղի ունեցան գաղափարական սուր բանավեճեր, բացատրական մեծ աշխատանք կատարվեց։

ԴՍՄԿ 30-րդ պլենումը (1956) մշակեց տնտեսական ու քաղաքական միջոցառումների լայն ծրագիր, որն ուղղված էր էկոնոմիկայի կայունացմանը և սոցիալիստական շինարարության ապահովմանը ԴԴՀ-ում։ Տնտեսական դժվարությունների հաղթահարման գործում զգալի դեր խաղաց ՍՍՀՄ-ի և ԴԴՀ-ի միջև կնքված համաձայնագիրն ապրանքափոխանակության մասին (1957), որը նախատեսում էր 1956 թ. մակարդակի համեմատությամբ 30%-ով ավելացնել ապրանքների մատակարարումը ԴԴՀ։ Բացի այդ, ԴԴՀ-ն ստացավ ազատ վալյուտայով 340 մլն. ռուբլու վարկ։ 1958 թ. կեսերին դժվարությունները հիմնականում վերացվեցին։

Էկոնոմիկայի դեկավարումը կատարելագործելու և քաղաքական դեմոկրատիան ընդլայնելու միջոցառումները

Սոցիալիստական շինարարության մեջ բնակչության բոլոր խավերին ներգրավելու կուրսը բարձրացրեց ԴԴԱՃ-ի դերը։ Զանգվածների ստեղծագործական ակտիվության վերելքի համար վիթխարի նշանակություն ունեցան 1957թ. ընդունված երկու օրենք՝ «Տեղական ժողովրդական ներկայացուցչությունների հանդեպ ժողովրդական պալատի ունեցած իրավունքների և պարտականությունների մասին» և «Իշխանության տեղական մարմինների մասին», որոնք ընդլայնեցին նրանց իրավասությունն ու ԴԴԱՃ-ին իրավունք ընձեռեցին օրինագծեր մշակելու և դրանք ժողովրդի քննարկմանը հանձնելու։ Բացի այդ, աղգային ճակատի տեղական կոմիտեները մեծ հնարավորություն էին ստանում մասնակցելու տնտեսական, քաղաքական և կուլտուրական հարցերի լուծմանը։ Այդ նպատակով ստեղծվեցին մշտական հանձնաժողովներ, որոնցում միասին աշխատում էին ԴԴԱՃ-ի կոմիտեների աշխատանքային խմբերը և ժողովրդական ներկայացուցչությունների դեպուտատները, ինչպես նաև բնակչության ակտիվը։ Արդեն 1956 թ. ԴԴԱՃ-ը կազմակերպեց այդ օրենքների լայն քննարկում, որին մասնակցեց մոտ 8,5 մլն. մարդ։ Պետական իշխանության մարմինների և ԴԴԱՃ-ի համագործակցության խորացումը նպաստեց վերջինիս վերածմանը լայն սոցիալիստական ժողովրդական շարժման։ Այդ պրոցեսների խթանման գործում մեծ նշանակություն ունեցավ «ԴԴՀ-ի պետական ապարատի աշխատանքի կատարելագործման և պարզեցման մասին օրենքը» (1958), կատարելագործվեցին տնտեսության կառուցվածքն ու կառավարման ոճը։ Ճյուղային մինիստրությունների մեծ մասը վերացվեց, ժողովրդական ձեռնարկությունների միավորման (ԺՁՄ) նոր հիմունքներով վերաստեղծումը թույլ տվեց ավելի կոնկրետորեն լուծել խոշոր սոցիալիստական ձեռնարկությունների ղեկավարման առանձնահատուկ խնդիրները։

ԴԴԱՃ-ը գործունեություն ծավալեց բնակչության միջին խավերին գաղափարապես նախապատրաստելու՝ ակտիվորեն և զանգվածաբար ոտք դնել սոցիալիզմի կառուցման ուղին։ Ազգային ճակատի 20 հազ. կոմիտեներ (մոտ 300 հազ. անդամ) քրտնաջան անհատական աշխատանք էին կատարում։ Մանրբուրժուական կուսակցությունների անդամների մտահորիզոնը և քաղաքական լուսավորումն ընդլայնելու համար ստեղծվեց տարբեր դպրոցների, խմբակների ու դասընթացների ցանց, որն ընդգրկեց բնակչության զգալի մասը։ 1957 թ. ստեղծված ԴԴՀ-ի հետազոտական խորհուրդը սոցիալիստական շինարարությանն անմիջականորեն մասնակցելու ներգրավեց մտավորականության մի լայն շրջանի։

Քաղաքական դեմոկրատիայի ծավալումը սոցիալիզմի կառուցման ընթացքում զգալիորեն բարձրացրեց ԴԴՀ-ի բնակչության աշխատանքային ակտիվությունը։ Աշխատանքը ձեռք բերեց նոր բովանդակություն, դարձավ հասարակության անդամների ընդհանուր գործը։ ԴԴՀ-ի քաղաքացիները յուրացնում էին սոցիալիստական բարոյականության և էթիկայի նոր նորմերը։ Նոր մարդու դաստիարակության այդ պրոցեսի խթանման գործում մեծ նշանակություն ունեցավ ԴՍՄԿ-ի V համագումարում (1958) մշակված սոցիալիզմի բարոյական կոդեքսը։ Մարդու գնահատման գործում գլխավոր չափանիշ էր դառնում աշխատանքային բարոյականությունը։

ԳՍՄԿ V համագումարի որոշումները: Գյուղատնտեսության կոոպերացման ավարտումը

ԳՍՄԿ V համագումարի աշխատանքում կենտրոնական տեղ գրավեցին ԳԴՀ-ի տնտեսական և քաղաքական զարգացման պրոբլեմները: Մշակվեց էկոնոմիկայի գիտական պլանավորման ծրագիր՝ հաշվի առնելով երկրում եղած հումքային և աշխատանքային ռեսուրսները, աշխատանքի բաժանումը սոցիալիստական սիստեմի շրջանակներում և գիտատեխնիկական հեղափոխության պահանջները: Էկոնոմիկայի զարգացման գործում ծանրության կենտրոնն արտադրության քանակական ընդլայնումից փոխադրվում էր դեպի որակական փոփոխությունները՝ արտադրության համակենտրոնացումը, կոոպերացումը, մասնագիտացումը և ստանդարտացումը: Համագումարը նշեց արտադրության ըստ ամենայնի ինտենսիվ զարգացման կուրսը՝ ձեռնարկությունների սոցիալիստական վերակառուցումը ժամանակակից տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի բազայի վրա: Համագումարը 1959—1960 թթ. համար հանձնարարեց արտադրության ծավալն ավելացնել ավելի քան 6 մլրդ. մարկով և առաջադրեց գլխավոր տնտեսական խնդիր՝ 1961 թ. անցնել ԳՖՀ-ից բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող պարենային և սպառողական ապրանքների կարևորագույն տեսակների սպառմամբ:

ԳՍՄԿ V համագումարի դիրեկտիվների հիման վրա մշակվեց ԳԴՀ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը (1959—1965), որը ներառում էր 1959—1963 թթ. երկրորդ հնգամյա պլանի մեծացված առաջադրանքները: Այն նախատեսում էր էներգետիկայի, քիմիական արդյունաբերության, էլեկտրատեխնիկայի գերակշռող զարգացումը: Յոթնամյակի կարևորագույն կառույցներն էին Լյուբենաուի և Թեչաուի (գորշ ածխի հիման վրա) խոշոր էլեկտրակայանները, Օդերի մոտ գտնվող մետալուրգիական կոմբինատի, «Լոյնա-2» քիմիական գործարանի վերակառուցումը: «Բարեկամություն» նավթամուղի վերջին կետում՝ Օդերի Շվեդտ քաղաքում կառուցվեց հզոր նավթավերամշակման գործարան: Յոթնամյա պլանը կողմնորոշեց դեպի սոցիալիստական արտադրահարաբերությունների լիակատար հաղթանակը:

60-ական թվականների սկզբին մասնավոր կապիտալիստական սեկտորը դեռևս ուժեղ դիրքեր էր պահպանում գյուղում: Գյուղացիական տնտեսությունների միայն մոտ կեսն էր գտնվում ԳԱԿ-երում: Սակայն մենատնտեսություններում արտադրության ավելացման ռեզերվները հիմնականում արդեն սպառվել էին, ավելի ու ավելի ակնհայտորեն էր բացահայտվում խոշոր կոոպերատիվ տնտեսությունների առավելությունը: Նրանք ավելի բարձր բերք էին հավաքում, գյուղացիներին ապահովում կյանքի լավագույն պայմաններով: Պետությունը մեծ օգնություն էր ցույց տալիս ԳԱԿ-երին. դոտացիաներ էր առանձնացնում ըստ աշխօրերի կատարվող վճարումները երաշխավորելու նպատակով, իջեցնում հարկերը: Տարեցտարի ավելանում էին գյուղատնտեսական մեքենաների մատակարարումները: Եթե 1950 թ. աշխատում էր մոտ 11 հազ. տրակտոր, ապա 1961 թ.՝ 89 900: Տասնյակ հազարավոր բանվորներ ուղարկվեցին գյուղ երիտասարդ ԳԱԿ-երին օգնություն ցույց տալու համար (1957 թ. գյուղում մշտապես աշխատում էին մոտ 26 հազ. արդյունաբերական բանվորներ): Կոոպերատիվ տնտեսության առավելություններն ավելի ու ավելի էին գիտակցում միջակ գյուղացիները, որոնք կազմում էին մենատնտեսների հիմնական մասը:

50-ական թվականների վերջերին ԳԴՀ-ում առաջացավ տնտեսական ու քաղաքական այնպիսի իրադրություն, որը ԳՍՄԿ-ին թույլ տվեց դնելու գյուղատնտեսության կոոպերացումն ավարտելու հարցը: Այդ խնդրի գործնական իրականացման ասպարեզում ակտիվ դեր խաղաց ԴԴԱՃ-ը: 1960 թ. հունվարին

ԴԴԱՃ-ի Ազգային խորհուրդն ընդունեց «Հասնել գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի ավելացմանը» փաստաթուղթը, որը դարձավ տեղական կոմիտեների գործողությունների ծրագիրը: Լայն թափ ստացավ «Հանուն օրինակելի գյուղի» մրցությունը: Գյուղեր էին ուղարկվում ազգային ճակատի բրիգադները՝ ԳԱԿ-եր ստեղծելու, մասսայական-քաղաքական աշխատանք կազմակերպելու գործում օգնություն ցույց տալու նպատակով և այլն: Կոլեկտիվացումը ձախողելու ուղղությամբ բուրժուական թշնամական տարրերի և արևմտագերմանական գործակալության գործադրած ջանքերը ձախողվեցին: 1960 թ. առաջին երեք ամիսների ընթացքում ԳԱԿ-եր մտան ավելի քան կես միլիոն գյուղացիներ, այդ թվում հազարավոր կուլակային տնտեսություններ (1954 թ. մինչև 1960. 23 հազ.): 1960 թ. գյուղատնտեսական ամբողջ ցանքատարածության 84,2%-ը արդեն մշակվում էր կոոպերատիվների կողմից: Ոչ անմիջապես հաջողվեց յուրացնել խոշոր տնտեսություն ղեկավարելու մեթոդները, իրեն զգացնել էր տալիս գյուղացիների մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, հաճախ նաև կուլակային սաբոտաժը. որոշ տեղերում ժամանակավորապես նվազում էր գյուղատնտեսության մթերատվությունը: Սակայն այդ դժվարությունները հաջողությամբ հաղթահարվում էին բանվոր դասակարգի և սոցիալիստական պետության օգնությամբ: Արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտոր կազմավորվելուց հետո «սոցիալիստական գարունը գյուղում» եղավ ԳՍՄԿ-ի մեծ հաջողությունը ԳԴՀ-ում սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակի համար մղված պայքարում:

Սոցիալիստական արտադրահարաբերություններն ամրապնդվում էին տնտեսության նաև մյուս ճյուղերում: 1958—1960 թթ. ընթացքում եռապատկվեց պետական մասնակցությամբ ձեռնարկությունների թիվը, ավելի քան 10 անգամ ավելացավ ԱԱԿ-ների թիվը (վերջիններիս բաժինը արհեստագործական ձեռնարկությունների ընդհանուր արտադրանքի մեջ 1,7-ից ավելացավ մինչև 31%-ի): 1960 թ. վերջին արդյունաբերական արտադրության ծավալը ԳԴՀ-ում 1958 թ. մակարդակի համեմատությամբ ավելացավ 121%-ով:

Էկոնոմիկայի կայունացումը: Սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակը ԳԴՀ-ում

Դրա հետ մեկտեղ ԳԴՀ-ի տնտեսական զարգացումը ետ էր մնում յոթնամյա պլանի ստուգիչ թվերից: 1960 թ. աշնանից սկսեցին նվազել ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերը՝ 1960 թ. արտադրության աճը կազմեց 7,79, իսկ 1961 թ. 6,5%, 1959 թ. 12,4%-ի դիմաց: Աշխատավարձն ավելանում էր ավելի արագ, քան նախատեսված էր պլանով, առաջ անցնելով աշխատանքի արտադրողականության աճից: Այդ «մկրատների» հետևանքը եղավ ժողովրդական եկամտի բաշխման սկզբունքի խախտումը, դրանք թույլ չէին տալիս իրականացնել կապիտալ ներդրումների ծրագիրը պլանավորված ծավալով: 1958—1961 թթ. կապիտալ ներդրումները կրճատվեցին գրեթե կրկնակի չափով: Նվազում էին ծանր արդյունաբերության աճի տեմպերը, մեծանում էր պահանջարկի և առաջարկի միջև եղած անհամամասնությունը: Դրա հետևանքով ԳՍՄԿ V համագումարի առաջադրած գլխավոր տնտեսական խնդիրը չէր կարող կատարվել նշված ժամկետներում (մինչև 1961 թ.): Անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ մտցնել հեռանկարային պլանի մեջ, վերանայել 1961 թ. էկոնոմիկայի զարգացման ստուգիչ թվերը: Ակնհայտ էր դառնում նաև, որ բաց սահմանների պայմաններում, ԳԴՀ-ի դեմ արևմտագերմանական իմպերիալիստական ուժերի ուժեղացած ոտնձգությունների իրադրության մեջ էկոնոմիկայի լիակատար կայունացում հնարավոր չէ:

Բաց սահմանների հետևանքով Գերմանական Դեմոկրատական Հանրապետությանը հասցված տնտեսական վնասը կազմեց 1951—1965 թթ. էկոնոմի-

կայի մեջ ներդրված բոլոր կապիտալների 3/4-ը (մոտ 120 միլրդ. մարկ)։ ԳԴՀ-ի դեմ պրովոկացիաների նախապատրաստման պլաններում գլխավոր դիրքերը հատկացվում էին Արևմտյան Բեռլինին։ Այդ բոլորը ԳԴՀ-ի կառավարությանը դրդեց վճռական գործողությունների դիմել իր սուվերենությունը պաշտպանելու համար. 1961 թ. օգոստոսի 13-ին ազգային բանակի և ժողովրդական ոստիկանության զորամասերը բանվորական մարտական դրուժինաների հետ վերահսկողություն սահմանեցին Արևմտյան Բեռլինի հետ եղած մինչ այժմ բաց ամբողջ սահմանի վրա։

Ձեռք առնված միջոցառումների հետևանքով արդեն 1961—1962 թթ. հաջողվեց զգալի չափով կայունացնել երկրի էկոնոմիկան։ Անհամամասնությունները վերացվեցին հատկապես աշխատավարձի աճի և աշխատանքի արտադրողականության միջև։ Բեռլինի «Էլեկտրաածուխ» գործարանի բանվորների նախաձեռնությամբ մրցություն ծավալվեց «Արտադրել ավելին նույն ժամանակում, նույն դրամով» լոզունգի տակ։ Բոլոր տարիների ընթացքում 1962 թ. առաջին անգամ աշխատանքի արտադրողականության աճը հասավ գրեթե 9%-ի։ Ամբողջ երկրում մրցություն ծավալվեց ԳՍՄԿ VI համագումարի պատվին (1963 թ. հունվար), որին մասնակցեց սոցիալիստական ձեռնարկությունների բանվորների և ծառայողների ավելի քան 72%-ը։ Ամբողջությամբ վերցրած 1950—1963 թթ. ժամանակամիջոցում արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ավելացավ 3,5 անգամ։

Այսպիսով, 1956—1962 թթ. ԳԴՀ-ի տնտեսական ու քաղաքական զարգացման բնագավառում տեղի ունեցան արմատական փոփոխություններ. հաղթանակ տարավ արտադրության սոցիալիստական եղանակը։ Սոցիալիստական սեփականության տեսակարար կշիռը կազմեց (1963 թ.) 85%, կիսապետականը՝ 7%, մասնավորինը՝ 8%։ Սոցիալիստական սիստեմն իր մեջ ներգրավեց գրեթե ամբողջ էկոնոմիկան և վճռորոշ ազդեցություն էր գործում մասնավոր սեկտորի զարգացման վրա։ Սոցիալիստական արտադրահարաբերությունների հաղթանակն իր արտահայտությունը գտավ հասարակության դասակարգային կառուցվածքի փոփոխության մեջ։ Բանվորներն ու ծառայողներն արտադրական կոոպերատիվների անդամների հետ կազմեցին (1962 թ.) բոլոր աշխատողների 95%-ը (1952 թ.՝ 75%-ը)։ Քաղաքացիների ճնշող մասը՝ 85%-ը, աշխատում էր սոցիալիստական ձեռնարկություններում և միայն 9%-ը՝ մասնավոր սեկտորում։ Գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորին ընկնում էր ամբողջ գյուղատնտեսական տարածության մոտ 94%-ը (86%-ը՝ ԳԱԿ-երին, 6,7%-ը՝ ժողովրդական կալվածքներին)։ Վճռական փոփոխություններ տեղի ունեցան նաև հասարակության առանձին դասակարգերի ու խավերի փոխհարաբերություններում. ընթանում էր ԳԴՀ-ի ժողովրդի բարոյա-քաղաքական միասնության ձևավորման պրոցես։

ՁԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ժողովրդական տնտեսության պլանավորման և ղեկավարման նոր տնտեսական համակարգը

1963 թ. ԳԴՀ-ում հիմնականում կատարվեցին կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի խնդիրները. հաղթանակեց արտադրության սոցիալիստական եղանակը և նախադրյալներ առաջացան զարգացման հաջորդ փուլի՝ զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման համար։ Այդ պատմական փուլերի շրջադարձային սահմանում՝ ԳՍՄԿ 1963 թ. հունվարին կայացած VI համագումարում ընդունվեց կուսակցության նոր ծրագիրը, որը որոշեց ԳԴՀ-ում զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման հիմնական սկզբունքները։ Հաշվի առնելով, որ դրա կորիզը էկոնոմիկան է և որ անցման ժամանակաշրջանում առաջացած տնտեսության պլանավորման ու կառավարման պրակտիկան չի համապատասխանում ԳԴՀ-ի զարգացման նոր փուլին և գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին, համագումարը հանձնարարեց մշակել ու գործողության մեջ դնել տնտեսական քաղաքականության նոր սկզբունքներ։ Էկոնոմիկայի ասպարեզում ԳՍՄԿ հիմնական խնդիրը ձևակերպվեց հետևյալ ձևով. օգտագործելով սոցիալիզմի տնտեսական օրենքները, իրականացնել տնտեսության զարգացման քանակական ցուցանիշներից անցումը որակական ցուցանիշներին, արտադրության և աշխատանքի արտադրողականության ամենաբարձր մակարդակին հասնելու էքստենսիվ մեթոդներից ինտենսիվ մեթոդներին. հաշվի առնելով ԳԴՀ-ի պայմանները (բնական հանածոների սահմանափակությունը), ուշադրությունը կենտրոնացնել ոչ մետաղատար, մեծ ծախսեր չպահանջող բարձրորակ արտադրանքի արտադրությանը, էկոնոմիկայի կառուցվածքը վերափոխել արդյունաբերության այն ճյուղերի զարգացումն ապահովելու հաշվով, որոնք որոշում են գիտատեխնիկական առաջադիմությունը։

Ժողովրդական տնտեսության պլանավորման և կառավարման նոր տնտեսական համակարգի (ՆՏՀ) սկզբունքները մշակվեցին 1962—1963 թթ. (կուսակցության ծրագրի նախապատրաստման ընթացքում) և քննարկվեցին 1963 թ. հունիսին տեղի ունեցած տնտեսական կոնֆերանսում։ Կոնֆերանսի հավանությանն արժանացած դիրեկտիվները նախատեսում էին օրգանապես միասնական ամբողջությամբ կապված միջոցառումների կոմպլեքսի իրականացում, գիտականորեն հիմնավորված պլանավորում, նյութական խթանման լծակների կիրառում, տնտհաշվարկի ամրապնդում և ձեռնարկության տնտեսական ինքնուրույնության մեծացում։

Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հետևողական կիրառումը տնտեսության կառավարման ասպարեզում, ապրանքադրամական հարաբերությունների ավելի լայն օգտագործումը պահանջում էին կենտրոնացված պլանավորում միայն գլխավոր դիրքերում, այն առանձին համակարգերի (ԺՁՄ-ի, ձեռնարկությունների) նախաձեռնության ծավալում, որոնք մշակում էին զարգացման սեփական պլաններ (այդ թվում նաև հեռանկարային)։ Պլանավորման կենտրոնում դրվում էին ոչ թե քանակական ցուցանիշները («համախառն արտադրանք»), այլ արտադրության որակի և գիտատեխնիկական առաջադիմության ապահովման, ազգային եկամտի ավելացման միջոցառումները։ ՆՏՀ-ն ասպարեզ էր բացում սոցիալիզմի տնտեսական օրենքների, մասնավորապես տնտեսական լծակների, ամբողջ կոմպլեքսի գործողության համար։ Ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատականի ընդհանրացնող ցուցանիշը շահույթն էր։ Տնտեսական լծակների արդյունավետության ապահովման նպատակով նախատեսվում էր արդյունաբերական գների ռեֆորմ և արտադրության հիմնական միջոցների վերագնահատում. գները պետք է արտացոլեին աշխատանքի հասարակայնորեն անհրաժեշտ ծախսումները, խթանեին տեխնիկական առաջադիմությունը։ ՆՏՀ-ի ձևավորման կարևորագույն միջոցը ԺՁՄ-ների վերածումն էր վարչական մարմնից, որը միջանկյալ օղակ էր կառավարության և ժողովրդական ձեռնարկությունների միջև, տնտեսական-ճյուղային ղեկավար մարմին. ԺՁՄ-ները դառնում էին գիտատեխնիկական առաջադիմության և տնտեսական ղեկավարման (1965 թ. վերաստեղծված ճյուղային մինիստրությունների ձեռքում պահպանվեց սկզբունքային հարցերի լուծումը) ղեկավար կենտրոն։

Պլանավորման և ղեկավարման նոր տնտեսական համակարգը գործողության մեջ մտցվեց երկու փուլով։ Արդեն առաջին փուլում (1963—1965) ԳԴՀ-ի

էկոնոմիկան հասել էր զգալի հաջողությունների։ 1964 թ. շատ տարիների ընթացքում առաջին անգամ կատարվեց շահույթների կուտակման պլանը, 1965 թ. Լայպցիգի տոնավաճառում ոսկե մեդալների արժանացած 222 ապրանքներից 116-ը ստացան ԳԴՀ-ի ապրանքները։ Այդ ժամանակ ԺՁՄ-ների մոտ 80%-ը հիմնականում ավարտում էր վերակառուցումը, աճել էր հասարակական արտադրության տնտեսական արդյունավետությունը։ Ազգային եկամուտը՝ տնտեսության զարգացման և ժողովրդի նյութական բարեկեցության վերելքի այդ ընդհանրացնող ցուցանիշը, 1963—1966 թթ. աճեց 18%-ով, նրա բացարձակ աճը 1966 թ. երեքկրկես անգամ ավելի էր, քան 1962 թ.։ 1966 թ. կապիտալ ներդրումների ծավալը գրեթե հավասար էր 1953—1955 թթ. կապիտալ ներդրումների ընդհանուր գումարին՝ միասին վերցրած։ Ռեֆորմի երկրորդ փուլի ընթացքում, որն սկսվեց 1966 թ., ՆՏՀ-ն տարածվեց արտադրության և գործունեության նոր ոլորտների վրա (շինարարություն, արտաքին առևտուր և այլն)։ Այդ ժամանակ կատարելագործվում և պրակտիկայում ստուգվում էր տնտեսական լծակների համակարգը, միջոցներ էին ձեռնարկվում գիտատեխնիկական առաջադիմության ապահովման համար։

ԳԴՀ-ի աշխատավոր զանգվածների ստեղծագործական ակտիվության աճը

Անցումը զարգացած սոցիալիստական հասարակության կառուցմանը ԳԴՀ-ում, տնտեսության պլանավորման և կառավարման նոր տնտեսական համակարգ մտցնելն ուղեկցվում էին սոցիալիստական դեմոկրատիայի զարգացմամբ, պետության ղեկավարման և կառավարման գործում աշխատավորների ավելի լայն ներգրավմամբ, ժողովրդական զանգվածների հասարակական-քաղաքական ակտիվության աճմամբ։ Այդ ուղղությամբ կարևոր միջոցառում էր Բանվորագյուղացիական տեսչության ստեղծումը (1963) կուսակցության և կառավարության օրենքների ու որոշումների կատարումը վերահսկելու նպատակով։ 1965 թ. ընդլայնվեցին իշխանության տեղական մարմինների լիազորությունները։ Աշխատանքի վերաբերյալ նոր կոդեքսը, որն ընդունվեց 1966 թ., արձանագրում էր արտադրության կառավարման գործում բանվորների և ծառայողների զգալիորեն ավելի լայն իրավունքներ։ Մշտական արտադրական խորհուրդների հետ մեկտեղ, որոնք առաջացան դեռ անցման ժամանակաշրջանում ևս մնում էին որպես արտադրության կառավարման գործում աշխատավորների անմիջական մասնակցության գլխավոր ձև, մեծ ձեռնարկություններում ստեղծվեցին արտադրական կոմիտեներ և ԺՁՄ-ներին առընթեր հասարակական խորհուրդներ։ Ի տարբերություն արտադրության ոլորտում բանվորների ունեցած կազմակերպությունների, հասարակական խորհուրդներն իրենց գործունեությամբ դուրս են գալիս արտադրական հարցերի շրջանակներից, նրանց աշխատանքին մասնակցում են գիտնականներ, պետական և կուսակցական աշխատողներ և այլն։

Բարոյական և նյութական խթանների զուգակցման սկզբունքը («Այն ամենը, ինչ կատարվում է հօգուտ հասարակության, պետք է օգուտ տա նաև ձեռնարկությանը և առանձին աշխատավորի»), նպաստելով աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, պայմանավորեց բանվորների ու ծառայողների նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության աճը, նրանց շահագրգռվածությունը ձեռնարկության ղեկավարման բարելավման և արտադրության արդյունավետության բարձրացման մեջ։ 1968 թ. արվեց մոտ 100 հազ. ռացիոնալիզատորական առաջարկություն, 1961 թ.՝ 400 հազ., իսկ դրանց արդյունավետությունը դրամական արտահայտությամբ ավելացավ կրկնակի չափով։ ԳԴՀ-ի 20-ամյակի պատվին ծավալված սոցիալիստական մրցությանը մասնակցեց 2,2 մլն. մարդ (125 հազ. կոլեկտիվ)։

ԳԴՀ-ի զարգացման տնտեսական և քաղաքական արդյունքները

Ժողովրդական տնտեսության պլանավորման և կառավարման նոր տնտեսական համակարգը մշտապես զարգացող սոցիալիստական դեմոկրատիայի զուգակցությամբ ԳԴՀ-ի համար ապահովում էր կայուն և դինամիկ զարգացում։ 1966—1970 թթ. հնգամյա պլանի հաջող կատարման հետևանքով արդյունաբերական արտադրության ծավալն ավելացավ 37%-ով (միջին հաշվով տարեկան 7%-ով), բանվորների և ծառայողների եկամուտները՝ 25%-ով։ Հանրապետությունում արտադրվում էր հինգ անգամ ավելի շատ արտադրանք, քան 1949 թ.։ ԳԴՀ-ի ազգային եկամուտը 20 տարում ավելացավ 4 անգամ։ Առանձնապես բարձր տեմպերով էին զարգանում այն ճյուղերը, որոնք որոշիչ դեր էին կատարում ժողովրդական տնտեսության կառուցվածքում, կարևոր նշանակություն ունեին գիտատեխնիկական առաջադիմության համար (1969 թ. այդ արտադրանքի արտադրությունը 1968 թ. համեմատությամբ ավելացավ 28%-ով)։ 1970 թ. այն նոր ապրանքներին, որոնց արտադրությունն սկսվեց 1965 թ. հետո, բաժին էր ընկնում մոտ 42%-ը։ Արդյունաբերության մեջ ծավալվում էր կոմպլեքսային ավտոմատացումը։ ԳԴՀ-ի 20-ամյա հոբելյանի նախօրյակին սկսվեց ավտոմատացման 87 նոր օբյեկտների կառուցումը ժողովրդական ձեռնարկություններում և կոմբինատներում։ Հանրապետությունում ստեղծված է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների սեփական արդյունաբերություն. ԳԴՀ-ի 20-ամյա հոբելյանի օրերին փորձարկման հանձնվեց «Ռոբոտրոն-300» տիպի հարյուրերորդ սարքը։ Արտադրության և արտաքին առևտրի ծավալով ԳԴՀ-ն մտնում է աշխարհի արդյունաբերական տեսակետից զարգացած երկրների առաջին տասնյակի մեջ՝ գրավում է Եվրոպայում հինգերորդ տեղը և երկրորդ տեղը սոցիալիստական լագերում։ ԳՍՄԿ VIII համագումարը (1971) նշեց ԳԴՀ-ում զարգացած սոցիալիստական հասարակության հետագա կառուցման նպատակներն ու ուղիները։ Համագումարը հավանություն տվեց նոր հնգամյա պլանի (1971—1975) դիրեկտիվներին։ Նրա հիմնական խնդիրն էր ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացումը սոցիալիստական արտադրության զարգացման բարձր տեմպերի և գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա։ Արդեն 1972 թ. ԳԴՀ-ի արդյունաբերության մեջ կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ սոցիալիստական սեկտորին ընկնող բաժնի ավելացման ուղղությամբ։ Պետական մասնակցությամբ արդյունաբերական ձեռնարկությունները հանձնվեցին ժողովրդական սեփականությանը՝ մասնավոր համատիրոջը, նրան վճարելով պատկանած բաժինը։ Ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող բոլոր մասնավոր արդյունաբերական և շինարարական ձեռնարկությունները, ինչպես և արդյունաբերական ձեռնարկությունների վերածված արհեստագործական կոոպերատիվները փրկագնվեցին իրենց տերերից։ Դրա հետևանքով համախառն արդյունաբերական ապրանքային արտադրության մեջ ժողովրդական ձեռնարկությունների բաժինը 83,3%-ից աճեց մինչև 99%-ի։

ԳԴՀ-ի գրեթե քսանամյա զարգացման արդյունքներն ամրապնդվեցին նոր սահմանադրությամբ, որն ընդունվեց 1968 թ. ապրիլի 6-ին ժողովրդի կամքի ազատ արտահայտության շնորհիվ (ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների ավելի քան 94%-ը հավանություն տվեց դրան)։ Սահմանադրությունը հաստատում է ժողովրդի սուվերենությունը, որը երաշխավորված է արտադրության սոցիալիստական եղանակի հաղթանակով։ Ժողովրդի իշխանությունն ապահովվում է հասարակական և պետական բոլոր գործերի ղեկավարմանն աշխատավորների ակտիվ մասնակցությամբ։ ԳԴՀ-ում զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման ղեկավար ուժը Գերմանիայի սոցիալիստական

միասնական կուսակցությունն է[14]։ Արհմիությունները դիտվում են որպես աշխատավորների համընդգրկուն կազմակերպություն. նրանք լայն մասնակցություն են ունենում պետական, տնտեսական և հասարակական պրոբլեմների լուծմանը, ունեն օրենսդրական նախաձեռնության իրավունք։ Աշխատավորների սուվերենության սկզբունքի հետևողական իրականացումը կատարվում է պետական ղեկավարության կառուցվածքում։ Պետական կառուցվածքի ամբողջ համակարգի կենտրոնում գտնվում են ժողովրդական ներկայացուցչական մարմինները։ Պետական իշխանության բարձրագույն մարմինը ժողովրդական պալատն է։ Նրա մշտական գործող մարմինը՝ ԳԴՀ-ի Պետական խորհուրդը, որը վերահսկողություն է իրականացնում գերագույն դատարանի ու գերագույն դատախազի սահմանադրական գործունեության նկատմամբ և որոշումներ է ընդունում պաշտպանության վերաբերյալ։ Պետական խորհրդի նախագահը հանրապետությունը ներկայացնում է օտարերկրյա պետությունների հետ իրականացվող փոխհարաբերություններում։ ԳԴՀ-ի Մինիստրների խորհուրդը[15], ինչպես և Պետական խորհուրդը, կազմված է ժողովրդի բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներից, ժողովրդական պալատի գործադիր մարմինն է, հաշվետու է նրան։ Սահմանադրության մեջ արձանագրված են հանրապետության արտաքին քաղաքականության սկզբունքները՝ խաղաղ գոյակցություն, գոյություն ունեցող սահմանների ճանաչում, ընդհանուր զինաթափում. այնտեղ գրված է, որ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը «երբեք չի սանձազերծի զավթողական պատերազմ և իր զինված ուժերը չի օգտագործի ուրիշ ժողովրդի ազատության դեմ»։

ԳԴՀ-ի արտաքին քաղաքականությունը և միջազգային դրությունը

Գերմանական իմպերիալիզմի սանձազերծած երկու համաշխարհային պատերազմների դասերը հաշվի առնելը, երկրում արմատական սոցիալ-տնտեսական վերափոխությունների անցկացումը պայմանավորեցին ԳԴՀ-ի արտաքին քաղաքականության բնույթն ու հիմնական ուղղությունները՝ խաղաղության ու բարեկամության ձգտումը, ամենից առաջ հարևան պետությունների հետ։ Այդ սկզբունքները դրվեցին նաև գերմանական պրոբլեմի լուծման հիմքում։

ԳԴՀ-ի առաջին արտաքին քաղաքական գործողություններն ուղղված էին միջազգային մեկուսացումից դուրս գալուն, որը ֆաշիզմի սանձազերծած պատերազմի հետևանքն էր։ Սովետական Միությունն առաջին պետությունն էր, որ ճանաչեց ԳԴՀ-ն։ 1950 թ. նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Եվրոպայի և Ասիայի մյուս սոցիալիստական երկրների հետ։ Ընդ սմին կարևոր նշանակություն ունեցավ սահմանների ճանաչումը Օդերով և Նեյսեով, որն արմատական շրջադարձի սկիզբ եղավ գերմանա-լեհական հարաբերություններում, ինչպես և ԳԴՀ-ի ու Չեխոսլովակիայի միջև ստորագրված համատեղ դեկլարացիան՝ միմյանց միջև վիճելի և չլուծված հարցերի բացակայության մասին։ ԳԴՀ-ն որպես իրավահավասար անդամ ընդունվեց ՏՓԽ-ի մեջ։

Ի պատասխան Արևմտյան Գերմանիայի ռազմականացման 1950 թ. ծավալված նախապատրաստության, ԳԴՀ-ի կառավարությունը մշակեց գերմանական հարցի լուծման ալտերնատիվ ծրագիր։ Այն նախատեսում էր թույլ չտալ Գերմանիայի վերառազմականացում և ագրեսիվ բլոկների մեջ նրա ներգրավում, հանել բոլոր սահմանափակումները խաղաղ էկոնոմիկայի զարգացման ուղուց, անհապաղ կնքել հաշտության պայմանագիր, պարիտետային հիմունքներով ստեղծել Համագերմանական սահմանադիր խորհուրդ՝ ժամանակավոր համագերմանական կառավարության կազմումը նախապատրաստելու նպատակով։ 1951 թ. ԳԴՀ-ն հանդես եկավ Համագերմանական ազգային ժողովի ազատ ընտրություններ անցկացնելու առաջարկությամբ։ Սակայն Բոննի կառավարող շրջանները մերժում էին ԳԴՀ-ի բոլոր առաջարկությունները։

1952—1954 թթ., երբ գործնական քայլեր էին ձեռնարկվում ԳՖՀ-ն արևմտյան տերությունների ագրեսիվ բլոկների մեջ ներգրավելու նպատակով, ԳԴՀ-ի կառավարությունը դիմեց չորս օկուպացիոն տերություններին՝ պահանջելով արագացնել Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստումը և մինչև դրա ստորագրումը թույլ չտալ Արևմտյան Գերմանիայի վերառազմականացում։ Նա պաշտպանեց հաշտության պայմանագրի սովետական կառավարության նախագիծը (1952 թ. մարտի 4), արտաքին գործերի մինիստրների՝ Բեռլինում (1954 թ. հունվար), ապա և Ժնևում (1955) կայացած խորհրդակցության ընթացքում հանդես եկավ առանց դրսի միջամտության ազատ ընտրություններ անցկացնելու միջոցով Գերմանիայի միավորման վերաբերյալ առաջարկությամբ։ ԳԴՀ-ն պաշտպանեց սոցիալիստական պետությունների նախաձեռնությունը Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու մասին։

Փարիզի համաձայնագրերի վավերացման և ՆԱՏՕ-ի մեջ ԳՖՀ-ի մտնելու հետևանքով առաջացած ներգերմանական իրադրության փոփոխությունը ԳԴՀ-ի կառավարությունից պահանջում էր գերմանական հարցի լուծման նոր ուղիներ որոնել՝ հաշվի առնելով երկու գերմանական պետությունների երկարատև գոյության իրական փաստը։ Նկատի ունենալով, որ ընդհանուր ընտրություններն արդեն չեն կարող Գերմանիայի վերամիավորման գործիք ծառայել, հիմնավորվեց միջազգային պայմանագրի բազայի վրա կոնֆեդերացիայի ստեղծման միջոցով երկու գերմանական պետությունների աստիճանական մերձեցման ուղին։ ԳՖՀ-ի վերառազմականացման հետևանքով ԳԴՀ-ի արտաքին քաղաքականության կենտրոնական խնդիրն էր դառնում մասնակցությունը եվրոպական անվտանգության ապահովման մեջ, խաղաղ համագործակցության հաստատումը երկու գերմանական պետությունների միջև։ Այդ գաղափարներն ընկան ժողովրդական պալատի կողմից 1961 թ. ընդունված խաղաղության գերմանական պլանի հիմքում։ Հաջորդ տարիներին ԳԴՀ-ի կառավարությունը վիթխարի ջանքեր էր գործադրում հարաբերությունները ԳՖՀ-ի հետ նորմալացնելու նպատակով, բազմաթիվ կոնստրուկտիվ գաղափարներ ու առաջարկություններ էր առաջադրում խաղաղության ապահովման և ամրապնդման վերաբերյալ։ ԳՖՀ-ում Վ. Բրանդտի կառավարության կազմվելուց հետո ավելի բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին Եվրոպայում ստատուս-քվոյի ճանաչման բազայի վրա ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի փոխհարաբերությունները կարգավորելու համար։ Դրա հիման վրա 1970 թ. ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի, ԼՀՀ-ի և ԳՖՀ-ի միջև տեղի ունեցած բանակցությունների ընթացքում, որոնք ավարտվեցին Մոսկվայի և Վարշավայի պայմանագրերի ստորագրմամբ, հանդիպումներ ու բանակցություններ տեղի ունեցան ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի ներկայացուցիչների միջև։ 1972 թ., Արևմտյան Բեռլինի վերաբերյալ համաձայնագիրը չորս տերությունների (ՍՍՀՄ, ԱՄՆ, Անգլիա և Ֆրանսիա) կողմից ստորագրվելուց հետո, ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև համաձայնություն ձեռք բերվեց ԳՖՀ-ի և Արևմտյան Բեռլինի միջև տարանցիկ հաղորդակցության մասին, ստորագրվեց տրանսպորտային համաձայնագիր, ինչպես նաև պայմանագիր երկու գերմանական պետությունների միջև հարաբերությունների հիմունքների մասին։ Միաժամանակ ԳԴՀ-ի կառավարության և Արևմտյան

[14] 1971 թ. գարնանից ԳՍՄԿ առաջին քարտուղարն է Է. Հոնեկերը։

[15] Օ. Գրոտեոլի վախճանվելուց հետո, 1964 թ. ժողովրդական պալատը ԳԴՀ-ի Մինիստրների խորհրդի նախագահ նշանակեց Վ. Շտոֆին։ 1973 թվականից ԳԴՀ-ի Մինիստրների խորհրդի նախագահն է Հ. Զինդերմանը։

Բեռլինի սենատի միջև ստորագրվեց համաձայնագիր, որը կարգավորում էր Արևմտյան Բեռլինի քաղաքացիների այցելությունը ԳԴՀ։

ԳԴՀ-ի արտաքին քաղաքականության կարևորագույն ասպեկտները նրա փոխհարաբերություններն էին սոցիալիստական լագերի երկրների հետ, համագործակցության և բարեկամական հարաբերությունների ամրապնդումը գաղութային լծի դեմ պայքարող ժողովուրդների և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի նոր զարգացող պետությունների հետ, պայքարը ԳԴՀ-ին «չընճանաչելու» իմպերիալիստական քաղաքականության դեմ։ ԳԴՀ-ի միջազգային դիրքերի ամրապնդման և հանրապետության արտադրողական ուժերի զարգացման համար առաջնակարգ նշանակություն ունի նրա տնտեսական և քաղաքական համագործակցությունը սոցիալիստական պետությունների, հատկապես ՍՍՀՄ-ի հետ։ ԳԴՀ-ի ստեղծման առաջին իսկ օրից Սովետական Միությունը նրան միշտ ցույց է տվել բազմակողմանի աջակցություն և օգնություն։ Արդեն 1950 թվականին սովետական կառավարությունը 50%-ով կրճատեց ԳԴՀ-ից ստացվող ռեպարացիոն մատակարարումները, իսկ 1953 թ. դրանք ընդհանրապես վերացվեցին։ Միաժամանակ ԳԴՀ-ին անհատույց հանձնվեց հանրապետության տարածքում գտնվող ՍՍՀՄ-ի սեփականությունը (ռեպարացիաների հաշվին բռնագրավված նացիստական և ռազմական հանցագործների ձեռնարկությունները) 2,7 մլրդ. մարկ ընդհանուր արժեքով։ 1955 թ. սեպտեմբերին ստորագրվեց ՍՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև հարաբերությունների վերաբերյալ պայմանագիրը, որը հաստատում էր Գերմանական Դեմոկրատական Հանրապետության անսահմանափակ սուվերենությունը։ Սովետական զորքերը մնում էին ԳԴՀ-ում, որպես դաշնակից պետության զորքեր, Վարշավայի պայմանագրի համաձայն։ ԳԴՀ-ի և ՍՍՀՄ-ի միջև բարեկամության, փոխադարձ օգնության և համագործակցության պայմանագիրը (1964) Գերմանական Դեմոկրատական Հանրապետությանն ապահովեց անկախության և խաղաղ սոցիալիստական շինարարության լիակատար երաշխիքով։

Հաջողությամբ զարգանում է տնտեսական համագործակցությունը ԳԴՀ-ի և ՍՍՀՄ-ի ու մյուս սոցիալիստական երկրների միջև։ Սովետական Միության բաժինը ԳԴՀ-ի արտաքին առևտրում գերազանցում է 40%-ից (60-ական թվականների վերջին), իսկ առևտրական շրջանառությունը սոցիալիստական երկրների հետ կազմում է գրեթե 23 մլրդ. վալյուտային մարկ, կապիտալիստական երկրների հետ՝ 5,9 և զարգացող երկրների հետ՝ 1,2 մլրդ.։ Սովետական նավթի բազայի վրա ԳԴՀ-ում ստեղծված է համաշխարհային ճանաչում նվաճած քիմիական արդյունաբերություն։ Գլխավորապես ներմուծելով հումք, ԳԴՀ-ն, որպես ՏՓԽ-ի առավել զարգացած պետություններից մեկը, պատրաստի արդյունաբերական արտադրանքի խոշոր արտահանող է (նրա արտահանության 60%-ը կազմում է մեքենաշինական արդյունաբերության արտադրանքը)։ ԳԴՀ-ի և ՏՓԽ-ի երկրների միջև երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերի հիման վրա առաջացել է տնտեսական կապերի լայն համակարգ։ ԳԴՀ-ի էկոնոմիկայի համար մեծ նշանակություն ունի նրա էներգասիստեմի միացումը միասնական «խաղաղություն» էներգետիկ ցանցին և «Բարեկամություն» նավթամուղին։ Վերջին տարիներին ԳԴՀ-ի համագործակցությունը սոցիալիստական երկրների հետ ավելի ու ավելի է դուրս գալիս առանձին արտադրական ու հետազոտական խնդիրների շրջանակներից և ընդգրկում սոցիալիզմի տնտեսական սիստեմի ձևավորման կոմպլեքսային պրոցեսները։

Հաջողությամբ են զարգանում ԳԴՀ-ի տնտեսական և կուլտուր-քաղաքական կապերը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երիտասարդ, զարգացող պետությունների հետ։ ԳԴՀ-ի պայքարը ցանկացած ձևի գաղութատիրության դեմ և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի ժողովուրդ-

ների ազգային-ազատագրական ու հակաիմպերիալիստական շարժումների պաշտպանությունը նրա համար ապահովեցին այդ երկրների ժողովուրդների համակրանքը։ Սկսած 50-ական թվականներից ԳԴՀ-ն տարեցտարի ամրապնդում է հարաբերությունները գաղութային լուծը թոթափած և հակաիմպերիալիստական դիրքեր գրավող երկրների հետ, նրանց ցույց է տալիս տնտեսական և գիտատեխնիկական օգնություն։

Ակտիվորեն պայքարելով բոլոր գերմանացիներին միանձնաբար ներկայացնելու Բոնների հավակնությունների դեմ, ԳԴՀ-ի պարբերաբար ամրապնդել է իր կապերը նաև զարգացած կապիտալիստական երկրների հետ։ 70-ական թվականների սկզբին ԳԴՀ-ին ճանաչեց պետությունների ճնշող մասը, նա ընդունվեց ՄԱԿ-ի անդամ։

ԳԼՈՒԽ 8

ԿՈՒԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Իմպերիալիզմի և ներին ռեակցիայի հարձակումը (1946—1952)

Հետպատերազմյան տարիներին շաքարի և ծխախոտի նկատմամբ եղած մեծ պահանջարկի և համաշխարհային շուկաներում դրանց գների աճի կապակցությամբ Կուբայի էկոնոմիկայի համար բարենպաստ պայմաններ առաջացան։ Եթե 1941—1946 թթ. շաքարի տարեկան միջին արտադրությունը կազմում էր 4 մլն. տ., ապա 1947—1958 թթ. այն գերազանցեց 5 մլն. տոննայից, իսկ 1952 թ. ձեռք բերվեց ռեկորդային արտադրություն՝ 7,2 մլն. տ.։

Պատերազմի ժամանակաշրջանում պայմաններ ստեղծվեցին ազգային բուրժուազիայի վերնախավի հարստացման և Կուբայի տնտեսական ու քաղաքական զարգացման, նրա ազդեցության ընդլայնման համար։ Աճեց գյուղատնտեսական ձեռնարկությունների՝ ձիթհանքերի, պանրագործարանների, ալրաղացների թիվը։ Նկատելիորեն ընդլայնվում էր տեխնիկայի կիրառումը։ 1946 թ. վիճակագրական տվյալներով Կուբայում կար 1888 տրակտոր։ Սակայն արդյունաբերության և գյուղատնտեսության աճին երկրում խոչընդոտում էր ԱՄՆ-ի իմպերիալիզմը։ Ամերիկյան մոնոպոլիաները վերահսկում էին լեռնահանքային և էներգետիկ արդյունաբերությունը, ինչպես նաև կապի միջոցները։ Կուբան մշտապես ԱՄՆ-ին պարտք էր բավական մեծ գումարներ։ Միայն 1949 թ. փոխառությունների դիմաց եղած պարտքը կազմում էր 400 մլն. դոլար։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսի կտրուկ շրջադարձը դեպի «սառը պատերազմի» և ռեակցիայի քաղաքականությունն անմիջական ազդեցություն ունեցավ Կուբայի վրա։ Խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչներն աշխատավորների իրավունքների վրա հարձակում ծավալեցին «կոմունիստական սպառնալիքի» դեմ պայքարի պատրվակի տակ։ Կառավարության մեջ նրանց խոսափողն էր աշխատանքի մինիստր, միլիոնատեր և ճարպիկ դեմագոգ Կառլոս Պրիո Սոկարասը։

Պրեզիդենտ Գրաուն, «աուտենտիկների»[1] բուրժուական «հեղափոխական»

[1] «Աուտենտիկներ»—«իսկականներ», այսինքն՝ Խոսե Մարտիի հիմնած հեղափոխական կուսակցության սկզբունքներին հետևողներ։

կուբայական կուսակցության պարագլուխը, խրախուսում էր ռեակցիային։ Կուսակցության ներսում պայքար էր գնում առաջադիմական և ռեակցիոն տարրերի միջև։ 1946 թ. հուլիսին աուտենտիկներից պառակտվեց մի զգալի խմբավորում, ուսանողության և մանր բուրժուազիայի պարագլուխ, սենատոր Էդուարդո Չիբասի գլխավորությամբ։ Չիբասը ստեղծեց նոր կուսակցություն, «օրթոդոքսների», այսինքն՝ նախկին սկզբունքներին հավատարիմ մնացածների կուբայական ժողովրդի կուսակցությունը։ Օրթոդոքսները հանդես եկան բրոնությունների և ԱՄՆ-ի իմպերիալիզմի առջև կապիտուլացվելու քաղաքականության դեմ։

Պրիո Սոկարասի իշխանության գլուխ անցնելով (1948—1952) պրոլետարիատի վրա նոր հարվածներ տեղացին։ Բայց նույնիսկ այդ իրադրության մեջ կուբայական ժողովուրդը ձախողեց կառավարության պլանները և թույլ չտվեց զորքեր ուղարկել Կորեա։ Կուբայական զինվորներին Կորեա ուղարկելու դեմ ակտիվորեն հանդես եկավ ոչ միայն կոմունիստների կուսակցությունը (Ժողովրդա-սոցիալիստական կուսակցությունը), այլև օրթոդոքսների կուսակցությունը։ Նրա պարագլուխ Չիբասը կոչ էր անում պաշտպանել Կուբայի սուվերենությունը և վերադառնալ դեմոկրատական ավանդույթներին։

Պրիոյի ռեժիմը շարդարացրեց Կուբայի աջ ուժերի և ամերիկյան իմպերիալիզմի հույսերը։

Բատիստայի դիկտատուրան

1952 թ. մարտի 10-ին գեներալ Բատիստան ռեակցիոն սպայության աջակցությամբ պետական հեղաշրջում կատարեց։ Պրիո Սոկարասը պուտչիստներին ոչ մի դիմադրություն ցույց չտալով՝ փախավ ԱՄՆ։ Բատիստայի դիկտատուրան, որը մարմնավորում էր խոշոր կապիտալիստների դաշինքը լատիֆունդիստների, արտահանողների և ԱՄՆ-ի մոնոպոլիստների հետ, նշանակում էր Կուբայի ուղղակի ենթակայություն ԱՄՆ-ի իմպերիալիզմին, հրաժարումն ազգային սուվերենությունից, բուրժուական դեմոկրատիզմի մնացորդների վերացում։

Էկոնոմիկայի ասպարեզում Բատիստան հլու կատարում էր ԱՄՆ-ի մոնոպոլիաների կամքը, Կուբան պահելով որպես շաքար արտադրող և մատակարարող։ Կուբայի միակողմանի զարգացումն ԱՄՆ-ին հնարավորություն էր տալիս կզրում իրացնել այն ամենը, ինչ Նահանգներում դուրս էր եկել օգտագործումից՝ կաթի փոշի, չվաճառված պահածոներ, հնացած տրակտորներ ու բեռնատար ավտոմեքենաներ։ ԱՄՆ-ի հետ Կուբայի առևտրական հաշվեկշռի դեֆիցիտը 1950—1959 թթ. հասավ 1 մլրդ. դոլարի։ Բատիստան պայմանագրեր կնքելով ԱՄՆ-ի տրեստների հետ, ծավալեց պերճաշուք հյուրանոցների, ուլտրամոդայիկ խաղատների, տուրիստական ճանապարհների և քեմպինգների շինարարություն։ Այդ բոլորի վրա վիթխարի միջոցներ էին ծախսվում։ Ծաղկում էին պետական գանձագողությունն ու կաշառակերությունը։ Էկոնոմիկան տենդի մեջ էր, ավելանում էին աշխատավորների թշվառությունն ու գործազրկությունը։ 1957 թ. Կուբայում կար ավելի քան 600 հազ. լիովին և մասնակի գործազուրկ։

Բատիստան Կուբայում մտցրեց հալածանքների ու տեռորի ռեժիմ։ Միայն «կոմունիզմի» դեմ պայքարելու համար նա ստեղծեց ոստիկանական 8 ռեպրեսիվ կազմակերպություններ, որոնք աշխատում էին ԿՀՎ-ի հետ կապի մեջ գրանցվելով։ Բատիստան վերացրեց 1940 թ. սահմանադրությունը և 1952 թ. ապրիլի 4-ին հրապարակեց «Հանրապետության սահմանադրական ստատուտը», ըստ որի բոլոր կազմակերպությունների և հիմնարկների վրա սահմանվում էր ռազմաոստիկանական վերահսկողություն։ Կուբայում մտցվեց մահապատիժ։ Բատիստայի կլիկը գնդակահարեց և տանջամահ արեց 20 հազ. հայրենասերների։ Այս ռազմաոստիկանական ռեժիմն ավելի քան ձեռնտու էր ԱՄՆ-ին, որն

անց էր կացնում լատինաամերիկյան երկրների ռազմականացման կուրս։ ԱՄՆ-ն սկսեց մոդեռնացնել Գուանտանամո ռազմածովային բազան, այն վերածելով ռազմական ավիացիայի բազայի։

Արտաքին քաղաքականության ասպարեզում Բատիստան ստրկամտորեն հետևում էր պետական դեպարտամենտի գծին։ 1952 թ. ապրիլի 3-ին նրա կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ։ 1954 թ. մարտին Կարակասում կայացած ամերիկյան պետությունների կազմակերպության X կոնֆերանսում, որը կանխորոշեց ԱՄՆ-ի վարձկանների զինված ինտերվենցիան Գվատեմալայում, նա հանդես եկավ որպես ԱՄՆ-ի ձայնակիցը։

Բատիստայի դիկտատուրան սրեց երկրի ճգնաժամը։ Ժողովրդական զանգվածների դժգոհության պոթկումն անխուսափելի էր։

Բատիստայի հեղաշրջումից մինչև Մոնկադա

Գաղութատիրության և բռնապետության քաղաքականությունը ծնեց օպոզիցիայի արտակարգ լայն, թեև խայտաբղետ ճակատ։ Գրաուն և Պրիո Սոկարասը՝ աուտենտիկների կուսակցության այդ պարագլուխները, տարբեր դիրք էին գրավում Բատիստայի ռեժիմի հանդեպ. Գրաուն բռնեց Բատիստայի հետ գործարքի ուղին. Պրիոն ձգտում էր կազմակերպել անհապաղ հակահեղաշրջում և իրեն վերադարձնել իշխանությունը։ Զանգվածների աճող մարտունակության առջև բուրժուազիան տատանվում էր, դառնում ավելի անվճռական։ Բուրժուական կուսակցությունները և նրանց ղեկավարները վախենում էին բանվորական ու գյուղացիական լայն շարժումից։ Համաձայնողականությունը գերակշռում էր «հեղափոխականությանը»։ Չի կարելի, սակայն, բանն այնպես ներկայացնել, թե բուրժուական կուսակցությունները ոչ մի դիմադրություն ցույց չէին տալիս դիկտատուրային։ Հենց Բատիստայի ռեժիմի չճանաչելն այդ կուսակցությունների կողմից որոշակիորեն քայքայում էր նրա հիմքերը։ Կուսակցություններում գտնվեցին համարձակ, խիզախ մարդիկ։ Օրթոդոքսների և աուտենտիկների լավագույն ներկայացուցիչները, օրինակ, Կուերվո Պելայոն, Մ. Ֆորտունին, Ռ. Ագոստինին և ուրիշներ, կյանքով հատուցեցին դիկտատուրայի դեմ մղած պայքարի համար։ Սակայն բուրժուական օպոզիցիայի դիմադրությունը հիմնականում կրում էր պասիվ, դիկտատուրայի համար անվտանգ բնույթ։

Բատիստայի դեմ պայքարի ամուր գիծ էր գրավում ԺՍԿ-ն։ Նա ժողովրդական լայն զանգվածներին կոչ էր անում պայքարել և ստեղծել միասնական դեմոկրատական, հակաիմպերիալիստական ճակատ։ Չնայած ժողովների արգելմանը, դաժան բռնություններին, հեղափոխական բանվորների սպանություններին, կոմունիստներն ստեղծում էին միասնության ստորին կոմիտեներ։ Հավանայում արդեն 1953 թ. հոկտեմբերին գոյություն ունեին միասնության ավելի քան 100 ընդհատակյա կոմիտեներ, որոնցում միավորվել էին բանվորներ, ծառայողներ, առևտրականներ, մտավորականության ներկայացուցիչներ և ռեժիմի՝ բնակչության այլ խավերից ելած հակառակորդներ։ Զանգվածներին մոբիլիզացնելով դիկտատուրայի դեմ պայքարելու, կոմունիստները մերկացնում էին բուրժուական օպոզիցիայի համաձայնողական գիծը։ Հեղափոխական դեմոկրատիայի բազմաթիվ խավեր վճռական դիմադրություն էին ցույց տալիս դիկտատուրային։ Ի հակադրություն բուրժուազիայի, նրանք չէին տատանվում և չէին մաներում, չէին վախենում ժողովրդից, այլ հենվում էին նրա վրա։

Բատիստայի դիկտատուրայի դեմ հանդես եկան ուսանողությունն ու երիտասարդությունը, բայց ինչպես երիտասարդական կազմակերպությունների ներսում, այնպես էլ դրանցից դուրս տեղի էր ունենում տարբեր միտումների սուր պայքար։ Կազմակերպությունների հիմնական կորիզն էին կազմում ռեակ-

ցիայի դեմ պայքարի մեջ մտնելուց չվախեցող պատանիներն ու աղջիկները։ Նրանց գլխավորում էին արդեն բավականաչափ հայտնի մարդիկ՝ Ֆիդել Կաստրոն, Խոսե Էշեվարիան, Արել Սանտամարիան և ուրիշներ։ Շուտով Ֆ. Կաստրոն, ժողովրդականություն վայելող 26-ամյա այդ փաստաբանը, փայլուն հռետորը, մի մարդ, որն օժտված էր հեղափոխական մարտիկի արտասովոր եռանդով և անվեհերությամբ, դարձավ երիտասարդության ճանաչված ղեկավարը։ Ֆ. Կաստրոյի գլխավորած հայրենասիրական երիտասարդության վճռական քայլը դիկտատուրայի դեմ մղված պայքարում դարձավ Սանտյագո դը Կուբայի մոտ գտնվող Մոնկադայի զորանոցների վրա կատարված գրոհը։ Հայրենասերները հույս ունեին, որ այդ ռազմական գործողությունը երկրում առաջ կբերի հեղափոխական ալիք։

Մոնկադայի գրոհը սկսվեց 1953 թ. հուլիսի 26-ին, մինչև 200 մարդուց բաղկացած հեղափոխականների մի ջոկատով։ Մոնկադա ամրոցը 3 հազ. զինվոր ունեցող կայազորով լավ ամրացված զինվորական ավան էր։ Գրոհը նախապատրաստվեց խստագույն կոնսպիրացիայի պահպանմամբ։ Հեղափոխականները հույսը դրել էին հարձակման հանկարծակիության և զորանոցներն անարյուն զավթելու վրա։ Սակայն հանկարծակիությունը չստացվեց։ Հայրենասերները հանդիպեցին պարեկին։ Ամրոցում մի բուռ հերոսների մարտը, որոնցից յուրաքանչյուրին ընկնում էր 15—20-ական զինվոր, չէր կարող հաջող ելքի հասցնել։ Մոնկադայի գրոհը գրավեց Կուբայի և ամբողջ Լատինական Ամերիկայի հասարակայնության լայն խավերի ուշադրությունը։ Կուբայական ժողովրդի համակրանքը հայրենասերների կողմն էր։ Նոր ուժով հնչեց հայրենասերների, Կուբայի անկախության մարտիկների նշանաբանը՝ «Հայրենի՛ք կամ մա՛հ»։ Մոնկադա ամրոցի գրոհը հանդիսացավ «Հուլիսի 26-ի շարժման» ծննդյան սկիզբը, շարժում, որը դարձավ ժողովրդական հեղափոխության քաղաքական ավանգարդը։

Մոնկադայից մինչև «Գրանմա»

Մոնկադայի անհաջող գրոհին հետևեց սպիտակ տեռորը։ Դիկտատորի հրամանով գնդակահարվեց ավելի քան 80 գերի պատանի։ Բատիստայի կառավարությունը 90 օրով պաշարողական դրություն մտցրեց, որը փաստորեն տևեց մեկ տարուց ավելի։ 1953 թ. օգոստոսի 6-ին ընդունվեց № 997 օրենքը «Հասարակական կարգի մասին», որի համաձայն Կուբայում վերացվում էր խոսքի, ժողովների ազատությունը, արգելվում էին գործադուլներն ու միտինգները։

1953 թ. սեպտեմբերի 21-ին սանձարձակ տեռորի պայմաններում սկսվեց զինվորական տրիբունալի դատը Մոնկադայի գրոհի մասնակիցների նկատմամբ։ Դատական գործի մեջ ներգրավվեց 122 մարդ, որոնց մի մասը ոչ մի առնչություն չուներ գրոհի հետ։ Մեղադրյալները տրիբունալը վերածեցին մարտադաշտի, ցույց տալով ապստամբների ազնիվ նպատակները և մերկացնելով Բատիստայի արյունոտ բռնակալությունը։ Եզրափակիչ խոսքով Ֆ. Կաստրոն հանդես եկավ որպես ռեժիմի ահեղ մեղադրող։ Նրա ճառը, որն ավարտվեց «Պատմությունն ինձ կարդարացնի» խոսքերով, դարձավ հեղափոխության կարևորագույն փաստաթուղթը։ Ֆ. Կաստրոն հեղափոխականների առջև խնդիր դրեց տապալել դիկտատուրան, վերացնել իմպերիալիզմի և լատիֆունդիզմի տիրապետությունը, կազմել իսկապես ժողովրդական կառավարություն, որն ընդունակ լինի իրականացնելու դեմոկրատական սոցիալ-տնտեսական ռեֆորմներ, Կուբայի արտաքին քաղաքականության համար ապահովել ինքնուրույն կուրս։ Այդ բոլորը հետագայում դրվեց «Հուլիսի 26-ի շարժման» ծրագրի հիմքում։

Դատարանը Ֆ. Կաստրոյին դատապարտեց 15 տարվա բանտարկության։ Նրա զինակիցներից շատերը նույնպես երկարատև ժամկետներով դատապարտվեցին։ Բատիստան գտնում էր, որ Մոնկադայի գրոհի մասնակիցների հաշվեհարդարով նա ընդմիշտ վերջ տվեց հեղափոխական երիտասարդության ընդհատակյա գործունեությանը։ Նա բռնություններ թափեց ԺՍԿ-ի գլխին, որն ակտիվորեն պայքարում էր բռնակալության դեմ։ 1953 թ. նոյեմբերի 10-ին Բատիստան հրապարակեց դեկրետ «Կոմունիստական գործունեության արգելման մասին», ըստ որի հասարակական գործունեության համար ձերբակալվում էին ոչ միայն կոմունիստները, այլև խաղաղության կողմնակիցները, կուբայական կանանց ֆեդերացիայի և մյուս դեմոկրատական կազմակերպությունների ու արհմիությունների անդամները։

Բատիստան աշխատում էր «օրինականացնել» իր իշխանությունը։ Նա սկսեց նախապատրաստել պրեզիդենտական ընտրություններ։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը գոհունակությամբ ընդունեց ուղղաթիռատոր Բատիստայի «օրինական» պրեզիդենտ վերածվելու դաղափարը։ Ընտրությունները տեղի ունեցան 1954 թ. նոյեմբերին։

1955 թ. մայիսին Բատիստան ստիպված էր զիջել կուբայական և համաշխարհային լայն հասարակայնության պահանջին։ Նա սանկցիա տվեց կոնգրեսի դեկրետին՝ քաղաքական մասնավոր ներման մասին։ Մոնկադա ամրոցի գրոհի ողջ մնացած մի բուռ մասնակիցներ և քաղաքական այլ բանտարկյալներ ազատ արձակվեցին։ Ֆ. Կաստրոն և նրա ընկերները քսաներկուամսյա բանտարկությունից հետո ազատություն ստացան։ Իր «օրինական» իշխանությունը համարելով անսասան, դիկտատորը փորձում էր իրեն ներկայացնել որպես դեմոկրատ, աշխատավորության բարեկամ։ Բայց Բատիստային չհաջողվեց ժողովրդին խաբել և ապահովել ռեժիմի կայունությունը։ Հեղափոխական ճգնաժամը երկրում աճում էր։ Պայքարում ակտիվ դեր էին խաղում շաքարի և ծխախոտի արդյունաբերության բանվորները, ինչպես նաև երկաթուղայինները, քարտաշները, հեռագրողները և ուրիշներ։ Վիթխարի նշանակություն ունեցավ շաքարի արդյունաբերության բանվորների գործադուլը 1955 թ. դեկտեմբերին։ Կուբայական պրոլետարիատի այդ հիմնական զանգվածը բողոք էր հայտնում կառավարության հետ արհմիութենական բյուրոկրատների գործարքի դեմ, որի համաձայն նոր կոլեկտիվ պայմանագրերում կրճատվում էին բանվորների իրավունքները և պակասեցվում նրանց աշխատավարձը։

1956 թ. ապրիլի 29-ին մի խումբ երիտասարդ հեղափոխականներ Ռեյնալդո Գարսիայի գլխավորությամբ հարձակում գործեցին Մատանսաս քաղաքի մոտ գտնվող Գոյկուրիա զորանոցի վրա։ Հերոսներն անհաջողության մատնվեցին։ Մարտում սպանվեց 17 պատանի, մյուսները ձերբակալվեցին և տանջանքների ենթարկվեցին։

Հեղափոխական ալիքի աճին համեմատ ցրված հեղափոխական ուժերի միջև հաստատվում էին կոնտակտներ, նշմարվում էին դիկտատուրայի և իմպերիալիզմի դեմ, Կուբայի ազատության և անկախության համար մղվող պայքարում գործողությունների միասնության ուրվագծերը։ Հեղափոխական հոսանքի երեք գլխավոր ուժերի՝ Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ 1956 թ. կեսերին առաջացած «Հուլիսի 26-ի շարժման», Խոսե Էշեվարիայի գլխավորած «Հեղափոխական ուսանողական դիրեկտորատի» և ԺՍԿ-ի պայքարի միջոցներն ու մեթոդները էապես տարբերվում էին, բայց նրանց նպատակը միասնական էր. նրանք պայքարում էին առաջադեմ, անկախ, ազատ Կուբա ստեղծելու համար։

«Հեղափոխական դիրեկտորատի» տակտիկայում գերակշռում էին պուտչերը, խռովությունները, քաղաքական տեռորը, հատկապես Հավանայում և մյուս քաղաքներում։ «Հուլիսի 26-ի շարժումը» պատրաստվում էր զինված

պարտիզանական պայքարի և ապստամբական բանակի ստեղծմանը։ ԺՍԿ-ն բանվոր դասակարգին կողմնորոշում էր դեպի իր ղեկավարությամբ ժողովրդական միասնության լայն ճակատի կազմավորումը, ընդհանուր քաղաքական գործադուլը։ ԺՍԿ-ի ղեկավարությունը թերագնահատում էր պայքարի զինված մեթոդները այն դեպքում, երբ երկու հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները բավարար ուշադրություն չէին դարձնում գանգվածների մեջ կատարվող քաղաքական ագիտացիային։ «Հուլիսի 26-ի շարժման» մեջ և «Հեղափոխական դիկտորատում» արմատախիլ չէին արված հակակոմունիստական նախապաշարումները։

1956 թ. հուլիս-օգոստոսին «Հուլիսի 26-ի շարժման» ընդհատակյա կազմակերպությունները և «Հեղափոխական դիրեկտորատը» պակտ կնքեցին համատեղ գործողությունների և ընդհանուր գործադուլի նախապատրաստման մասին։

Ապստամբական բանակի ստեղծումը

1955 թ. հուլիսին Ֆ. Կաստրոն վտարանդվեց Մեքսիկա և Մոնկադայի գրոհին մասնակցած իր ընկերների ու այլ հեղափոխականների հետ սկսեց նախապատրաստել զինված էքսպեդիցիա դեպի Կուբա։ Այդ նպատակով գնվեց «Գրանմա» առագաստանավը։ Ֆիդելի շուրջը կազմավորվեց մոտ 200 մարդուց բաղկացած մի խումբ, այդ թվում Ռ. Կաստրոն, Կ. Սյենֆուեգոսը, Խ. Ալմեյդան և արգենտինացի բժիշկ Էռնեստո Գեվարան (Չե)։ Նրանց ռազմական գործ էր սովորեցնում իսպանական հանրապետական բանակի գեներալ Ալբերտո Բայոն։ Հեղափոխականների զինվորական պատրաստությունը զուգակցվում էր քաղաքական հետ։ 1956 թ. երկրորդ կեսին մշակվեց «Հուլիսի 26-ի շարժման» ծրագիրը, որը նախատեսում էր ոչ միայն Բատիստայի դիկտատուրայի տապալում, այլև ժողովրդական իշխանության ռեժիմի հաստատում Խոսե Մարտիի հեղափոխական-դեմոկրատական սկզբունքների, հակաիմպերիալիստական դեմոկրատական հեղափոխության սկզբունքների հիմքի վրա։

Հեղափոխականների մշակած ռազմական պլանը նախատեսում էր միաժամանակ (նոյեմբերի 30) «Գրանմայի» դեսանտի ափհանում և «Հուլիսի 26-ի շարժման» Օրիենտե պրովինցիայի ընդհատակյա կազմակերպության ղեկավար Ֆրանկ Պաիսի գլխավորությամբ ապստամբություն Սանտյագո քաղաքում։ Բայց այդ պլանը չհաջողվեց։ Դերբեռնված դանդաղընթաց «Գրանման» էքսպեդիցիայի 82 մասնակիցների հետ ալեկոծության պատճառով շեղվեց կուրսից և Կուբայի ափերին հասավ երեք օր ուշացումով, դեկտեմբերի 2-ի առավոտյան, և չնշանակված տեղում։ Այդ պահին Սանտյագո քաղաքում տեղի ունեցած ապստամբությունն արյան մեջ խեղդվել էր։

«Գրանմայի» հեղափոխականներն, ալեկոծության ճոճումներից տանջահար եղած, անհավասար մարտի մեջ մտան Բատիստայի գումարտակների հետ։ Նրանց մեծ մասը զոհվեց կամ բռնվեց։ Էքսպեդիցիայի ողջ մնացած մասնակիցները 3—5 մարդուց բաղկացած խմբերով հեռացան Սյերա-Մաեստրա լեռները։ Նրանց մեջ էին Ֆ. Կաստրոն, Ռ. Կաստրոն, Չե Գեվարան, Կ. Սյենֆուեգոսը, Խ. Ալմեյդան և ուրիշներ։

«Գրանմայի» և Սանտյագոյում տեղի ունեցած ապստամբության էպոպեան ցնցեց ամբողջ երկիրը։ ԺՍԿ-ն ժողովրդին ուղղված հատուկ դիմումով աշխատավորությանը միասնության կոչ արեց դիկտատուրայի դեմ մղվող պայքարում, կոչ արեց պաշտպանել Ֆ. Կաստրոյին և նրա ընկերներին։ «Հուլիսի 26-ի շարժումը» Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ մարտական ջոկատների օգնությամբ գանգվածներին պատրաստում էր զինված պայքարի։ Ժողովրդի հեղափոխական փորձը մերձեցնում էր նրանց ձգտումներն արտահայտող երկու հիմնական ուժերին՝ «Հուլիսի 26-ի շարժմանը» և ԺՍԿ-ին։ Նրանք ընթանում էին

կարծես զուգահեռ կածաններով, որոնք նրանց դուրս բերեցին դեպի միասնական նպատակը։

Երկրում հասունանում էր հեղափոխական ճգնաժամը։ 1957 թ. հունվարի 4-ին «Դադարեցե՛ք սպանել մեր որդիներին» լոզունգի ներքո Սանտյագո քաղաքում տեղի ունեցավ կանանց խոշոր ցույց։ Այդ ցույցի կազմակերպման գործում «Հուլիսի 26-ի շարժման» հետ մեկտեղ ակտիվ մասնակցություն ունեցավ ԺՍԿ-ն։ Կանանց ցույցից երկու շաբաթ անց ապստամբները, որոնց կործանման մասին աղմկում էին պաշտոնական մամուլը և ռադիոն, հարձակվեցին Լա Պլատա գետի մոտ գտնվող բատիստական բանակի ոչ մեծ ուղեկալի վրա և զավթեցին այն։ Դա հայրենասերների առաջին շահած մարտն էր։ Դրան հետևեցին մյուսները։ Ապստամբների ջոկատն աճում էր, և նրա գործողությունների մասին տեղեկությունները հասնում էին աշխատավորներին։

1957 թ. մարտի 13-ին «Հեղափոխական դիրեկտորատ» ընդհատակյա կազմակերպությունը փորձեց զավթել պրեզիդենտական պալատը և միաժամանակ «Ռադիո Ռելոխ» ռադիոկայանը, ապա շարժվել դեպի համալսարան, այն վերածելով իր շտաբի, ժողովրդին ապստամբության հանել։ Սակայն այդ փորձը պարտության մատնվեց։

1957 թ. սեպտեմբերի 5-ին ծագեց Սյենֆուեգոս քաղաքի ծովայինների ապստամբությունը՝ կապիտան Սան Ռոմանի ղեկավարությամբ։ Ծովայիններին աջակցություն ցույց տվեց քաղաքի բնակչությունը։ Քաղաքում գոյություն ուներ քաղաքացիական դիմադրության ընդհատակյա կազմակերպություն, որում աչքի ընկնող դեր էր խաղում Օսվալդո Դորտիկոս Տորադոն։ Քաղաքն ու նավահանգիստը հայտնվեցին ապստամբների ձեռքում։ Սյենֆուեգոսի կայազորը նույնպես գրեթե ամբողջովին միացավ ապստամբներին։ Դիկտատորը շտապ կարգով տանկեր ու ավիացիա ուղարկեց Սյենֆուեգոս։ Սկսվեց քաղաքի բարբարոսական ռմբակոծությունը։ Սպանվեց մոտ 800 մարդ։ Բայց Սյենֆուեգոսում կատարված հաշվեհարդարն անհետևանք չանցավ։ Նավատորմի ու բանակի զտումը, որն անցկացրեց Բատիստան, ռեժիմի օպոզիցիա ծնեց բանակի ներսում։ Դիկտատուրայի ճգնաժամը սրվում էր։

Ապստամբական շարժումը ուժ էր հավաքում Սյերա-Մաեստրայի լեռներում։ 1957 թ. գարնանը Ֆ. Կաստրոյի ջոկատն աճեց մինչև 80 մարդու։ Ապստամբական շարժման շրջաններում ստեղծվում էր նոր կյանք՝ նոր և դեռևս չգրված հեղափոխական օրենքներով։ Ապստամբները կազմակերպում էին նրոնակներ ու արկեր արտադրող արհեստանոցներ, գյուղացիների երեխաների համար ստեղծում դպրոցներ, հիվանդանոցներ, գյուղացիների միջև բաժանում բատիստայական խոշոր չինովնիկներից ու ռեակցիոն կալվածատերերից խլված հողն ու անասունները։ Կազմակերպվեց ապստամբների սիստեմատիկ ուսուցում, դրվեց ռադիոհաղորդիչ։

1957 թ. հուլիսի 12-ին Սյերա-Մաեստրայի մանիֆեստում ասվում էր, որ «Սյերա-Մաեստրան այսուհետև դարձել է ազատության անխորտակելի ամրոց»։ Դա կյանքի և հեղափոխության ճշմարտությունն էր։ Հենց 1957 թ. երկրորդ կեսից Սյերա-Մաեստրան դարձավ հեղափոխական կարևոր օջախ, այստեղից էր ելնում հեղափոխական շարժման ուղղություն տվող ուժը։ Իհարկե, չի կարելի մոռանալ այն, որ երկրում եղած խայտաբղետ լայն ընդհատակն ամեն տեսակի օգնություն էր ցույց տալիս ապստամբներին։

Այն ժամանակ, երբ Սյերա-Մաեստրայում ստեղծվում էր ապստամբական բանակ, իսկ Բատիստան ձեռնարկում Սյերա-Մաեստրայի գանգվածային որմբակոծություն, բուրժուական օպոզիցիան, վախենալով հեղափոխության ծավալումից, կոմպրոմիսային ելք էր որոնում։ Կուբայի բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները 1957 թ. հոկտեմբերի 25-ին հավաքվելով Մա-

յամիում (ԱՄՆ), ժողովրդի թիկունքում կնքեցին «Մայամիի պակտը», ջանալով իրենց համար ապահովել տեղի ունեցող իրադարձություններում արբիտրի դերը։ Ֆ. Կաստրոն «Հուլիսի 26-ի շարժման» անունից կտրուկ մերժեց Մայամիի գործարքը։ Նա վճռականորեն դատապարտեց նրա պրոամերիկյան և հակակոմունիստական բնույթը։ Հակակոմունիզմի քաղաքականությունը խորթ է հեղափոխականներին, հայտարարեց Ֆ. Կաստրոն։ «Մայամիի պակտի» դեմ, բնականաբար, ակտիվորեն հանդես եկան նաև ԺՍԿ-ն։ Բուրժուական օպոզիցիայի պլանները ձախողվեցին։

Հեղափոխության հաղթանակը

1958 թ. մարտի 12-ին Ֆ. Կաստրոն դիմեց ժողովրդին մի մանիֆեստով, որը կոչ էր անում «բռնակալության ռեժիմի դեմ ընդհանուր պատերազմ» ծավալել։ Հայտնվեց նաև բանվոր դասակարգի ընդհանուր գործադուլի նախապատրաստության մասին։ Գործադուլի ժամկետը (1958 թ. ապրիլի 9) գաղտնի էր պահվում, բայց դավաճանները նրա մասին տեղեկացրին իշխանություններին։ Գործադուլի թույլ կազմակերպումը և պառակտիչների ակտիվ գործողությունները իրենց դերը խաղացին։ Գործադուլը չհաջողվեց։ Միայն մի քանի տեղերում, ինչպես, օրինակ, Սագուա Գրանդեում պրոլետարիատը հանդես եկավ մարտականորեն, բայց իշխանությունները դաժանորեն ճնշեցին այդ ելույթները, գործադուլավորների դեմ ուղարկելով ինքնաթիռներ ու հրետանի։

Ապրիլի 9-ի ընդհանուր գործադուլի անհաջողությունը որոշ շփոթություն առաջացրեց հայրենասերների շարքերում և նպաստեց պայքարի ժամանակավոր անկմանը։ Դիկտատորը որոշեց դրանից օգտվել ապստամբների դեմ վճռական հարձակման անցնելու համար։ Սյերա-Մաեստրա նետվեց 12 հազ. զինվոր՝ ավիացիայի, տանկերի ու հրետանու հետ միասին։ Պատժիչների գլուխ էր կանգնած գլխավոր հրամանատար գեներալ է. Կանտիլյոն։ Մայիսի 28-ից ապստամբների շրջանները 76 օր ենթարկվում էին դաժան ռմբակոծության։ Ապստամբները հմտորեն ետ էին մղում թշնամու գրոհները ու հակագրոհները։ Ճակատամարտերի մեծ մասը նրանք շահեցին, շոշափելի հարվածներ հասցնելով թշնամուն։ Նրանց հաջողությունների համեմատ քայքայվում էին բատիստայական զորքերը. դասալքվում էին ոչ միայն զինվորները, այլև սպաները։ Ճակատամարտերում կոփվում էր ապստամբական բանակը։ Նրա ստեղծման ճանապարհին նոր քայլ հանդիսացավ Օրիենտե պրովինցիայի արևելյան մասում Սյերա-Կրիստալի լեռներում 1958 թ. մարտին Ռաուլ Կաստրոյի գլխավորությամբ Ֆրանկ Պաիսի անվան ճակատի բացումը։

1958 թ. հուլիսից ապստամբական շարժումը տարածվում է ոչ միայն Օրիենտեում, այլև մյուս պրովինցիաներում։ Հեղափոխության ամենաանվեհեր հերոսներից մեկի՝ Կամիլո Սյենֆուեգոսի զորասյունը պարտիզանական զորամիավորումներից առաջինը թողեց լեռները և հարթավայր դուրս եկավ. նրա ետևից շարժվեց Չե Գեվարայի զորասյունը։ Լաս Վիլլաս պրովինցիայում գործում էին կոմունիստների, ինչպես նաև «Հեղափոխական դիրեկտորատի» գլխավորած ջոկատները։ Այդ պրովինցիայի երկաթուղային բանվորները կտրեցին Հավանայի հաղորդակցությունը Սանտյագո դը Կուբայի հետ։

1958 թ. հուլիսին դիկտատուրայի բազմաթիվ օպոզիցիայի ներկայացուցիչները հավաքվեցին Կարակասում (Վենեսուելա)։ Այստեղ «Հուլիսի 26-ի շարժման» մասնակցությամբ ստեղծվեց «Քաղաքացիական հեղափոխական ճակատը», որպես ապագա ռեժիմի քաղաքական հիմք։ «Ճակատը» հանրապետության պրեզիդենտ նշանակեց շտաբավոր բուրժուա, իրավաբան Մ. Ուրուտիային։ Ժողովրդա-սոցիալիստական կուսակցությունը հայտնեց «ճակատին» պաշտպանելու և նրան միանալու մասին։

Ապստամբական բանակը, որը 1958 թ. հուլիսին հարձակման անցավ, ամենուրեք հանդիպում էր բանվորների և գյուղացիների աջակցությանը։ Սյերա-Մաեստրայում 1958 թ. հոկտեմբերի 10-ին Ֆ. Կաստրոյի ստորագրած № 3 օրենքը «Հողի նկատմամբ գյուղացիների իրավունքի մասին» նախատեսում էր գյուղացիներին ապահովել հողով և կատարել 1940 թ. սահմանադրության 90 հոդվածը լատիֆունդիաների վերացման մասին։ Այդ օրենքը գյուղացիներին վերջնականապես թեքեց ապստամբական բանակի կողմը։ Հաղթահարելով ռեֆորիզմի դիմադրությունը, բանվոր դասակարգը կազմակերպում էր միասնական գործադուլային կոմիտեներ, պատրաստվելով վճռական ընդհանուր քաղաքական գործադուլի։ Այսպես ժողովրդական դեմոկրատական հեղափոխության ընթացքում ապստամբական շարժման ղեկավարությամբ ձևավորվում էր բանվորագյուղացիական դաշինքը։ 1958 թ. հոկտեմբերին ԺՍԿ-ն և «Հուլիսի 26-ի շարժումը» կազմեցին «Միասնական ազգային բանվորական ճակատ»՝ զանգվածների մեջ ապստամբական բանակի գլխավոր հենարանը։

Բատիստայի բանակը քայքայվում էր ապստամբական զորասյունների հարվածների տակ։ 1958 թ. նոյեմբեր-դեկտեմբերին վճռական մարտեր էին տեղի ունենում ինչպես Օրիենտե, այնպես էլ Լաս Վիլլաս պրովինցիաներում։ Դեկտեմբերի վերջին Ֆ. Կաստրոյի զորքերը Սանտյագոյի մատույցներում ջախջախեցին բատիստական բանակի խոշոր զորամասեր։ Ապստամբները կատաղի մարտեր էին մղում Սանտա-Կլարա և Սյենֆուեգոս քաղաքներում։ Միացյալ ապստամբական զորքերը Կ. Սյենֆուեգոսի և Չե Գեվարայի հրամանատարությամբ գլխովին ջախջախելով բատիստականներին, գրոհով գրավեցին Սանտա-Կլարա քաղաքը։ Ճանապարհը դեպի Հավանա բաց էր։

Երկրի համար դրամատիկական այդ պահին կուբայական ռեակցիան ԱՄՆ-ի գործակալության անմիջական աջակցությամբ փորձեց կանխել ապստամբների հաղթանակը։ Գեներալ է. Կանտիլյոն բանակցություններ մեջ մտավ Ֆ. Կաստրոյի հետ, ընդունեց կապիտուլյացման և դիկտատորին ձերբակալելու պայմանները։ Բայց ապստամբների ռազմական ճամբարից Հավանա վերադառնալով, Կանտիլյոն Բատիստային հնարավորություն տվեց փախչել երկրից և կատարեց զինվորական հեղաշրջում՝ կազմելով ժամանակավոր խունտա։

Իմանալով Կանտիլյոյի դավաճանության մասին, Ֆ. Կաստրոն հրաման տվեց ապստամբական բանակի անհապաղ ընդհանուր հարձակման մասին։ Այդ նույն ժամանակ «Միասնական ազգային բանվորական ճակատը» բանվոր դասակարգին կոչ արեց ընդհանուր գործադուլ սկսել ի պաշտպանություն ապստամբական բանակի։ 1959 թ. հունվարի 1-ին Հավանայում և մյուս քաղաքներում հնչեց աշխատավորների ընդհանուր քաղաքական գործադուլի կոչը, որը ձախողեց ռեակցիայի պլանները։ Կ. Սյենֆուեգոսի և Չե Գեվարայի զորքերը հունվարի 2-ին մտան մայրաքաղաք։ Վեց օր անց Հավանան ցնծությամբ դիմավորեց Ֆիդել Կաստրոյին, որը Սանտյագո դը Կուբայից ժամանեց զորքերի հետ միասին։

Հեղափոխությունը հաղթանակեց։

Կուբայի հեղափոխությունը ցույց տվեց դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների խնդիրների մերձեցումը և նույնիսկ միահյուսումը, դրանով իսկ արտահայտելով պատմական պահի յուրատեսակությունը։ Հեղափոխության հիմնական շարժիչ ուժերն էին պրոլետարիատը, գյուղացիությունը և քաղաքային մանր բուրժուազիան, որոնք պայքարի ընթացքում համախմբվել էին հայրենասիրական, դեմոկրատական ճակատի մեջ։ Ոչ բոլոր դասակարգերն ու խավերն էին հեղափոխությանը մասնակցում միևնույն եռանդով, և նրանց մի մասը շահագրգռված չէր նրա զարգացման պրոցեսի խորացման մեջ։ Բուրժուազիան ձգտում էր Բատիստայի դիկտատուրայի տապալմանը հանուն իր դասակարգային և քաղաքական շահերի, իսկ բանվոր դասակարգը,

գյուղացիությունը և քաղաքային մանր բուրժուազիան կենսականորեն շահագրգռված էին սոցիալ-տնտեսական խոր վերափոխությունների իրականացման մեջ։ Այդ իմաստով բանվոր դասակարգն ուներ պատկառելի փորձ, բայց չի կարելի մոռանալ այն, որ Կուբայի պրոլետարիատը գաղափարական տեսակետից պառակտված էր, նրա մի մասը վարակված էր ռեֆորմիստական պատրանքներով։ Մարքսիստական-լենինյան կուսակցությունը (ԺՍԿ) գտնվում էր ընդհատակում և դաժան հալածանքների էր ենթարկվում։ Այդ պայմաններում ավանգարդային դերը հեղափոխական շարժման մեջ ստիպված անցնում էր հակաիմպերիալիստական արմատական հեղափոխական-դեմոկրատական մտավորականության և ուսանողության ձեռքը, որոնք մոտենում էին մարքսիզմ-լենինիզմի դիրքերին։ ԺՍԿ-ին, սակայն, պատկանում էր ոչ միայն հեղափոխական երիտասարդության դաստիարակի պատմական դերը։ Նա ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում ժողովրդի հեղափոխական մոբիլիզացմանը դիկտատուրայի դեմ, հեղափոխական վերափոխումների համար պայքարելու նպատակով։

Օբյեկտիվ պայմանները բացառիկ կերպով նպաստում էին Կուբայի հեղափոխության հաղթանակին։ Գվատեմալական և բոլիվիական ազգային-ազատագրական հեղափոխությունները, կոլումբիական ժողովրդի զանգվածային ելույթները, որոնք հացրին Ռոխաս Պինիլյայի դիկտատուրայի տապալմանը 1957 թ. մայիսին, ընդհանուր գործադուլը և Պերես Խիմենեսի դիկտատուրայի տապալումը Վենեսուելայում 1958 թ. հունվարին, այս և լատինաամերիկյան մյուս երկրների հեղափոխական գործողություններն անմիջական արձագանք էին գտնում Կուբայում և նպաստում հեղափոխական վերելքին։ Կուբայական հեղափոխությունը 50-ական թվականների Լատինական Ամերիկայի ժողովուրդների մղած հակաիմպերիալիստական հեղափոխական պայքարի բարձրակետն էր։ Սոցիալիզմի հզոր սիստեմի առկայությունը վճռական ներգործություն ունեցավ կուբայական հեղափոխության հաղթանակի ամրապնդման, նրա հետագա զարգացման և սոցիալիզմի ուղիով երկրի առաջընթացի համար։

Կուբայական հեղափոխության մեջ շատ նոր բան կար։ Հեղափոխության ղեկավարությունը լիակատար իմաստով մարքսիստական-լենինյան ավանգարդ չէր, թեև բաղկացած էր այնպիսի մարդկանցից, որոնք ծանոթ էին գիտական կոմունիզմի տեսությանը։ Բանվոր դասակարգը, առանձնապես արդյունաբերական պրոլետարիատը չապահովեց իր հեգեմոնիան հեղափոխության դեմոկրատական փուլում։ Ապստամբական բանակը մարմնավորում էր պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը։

Հեղափոխական վերափոխությունները

Անմիջականորեն հեղափոխության հաղթանակից հետո հաստատված կարգերի առանձնահատկությունն այն էր, որ ձևականորեն պետության և կառավարության գլուխ էին կանգնած հակակոմունիզմով տոգորված բուրժուական տարրեր։ Կուբայի հանրապետության պրեզիդենտ Մ. Ուրտիան պրեմիեր մինիստր նշանակեց փաստաբան Միրո Կորդոնին, իսկ արտաքին գործերի մինիստր՝ ԱՄՆ-ի քաղաքական շրջաններին մոտ գտնվող Ռ. Ագրամոնտեին, ֆինանսների մինիստր դարձավ Ֆ. Պասոսը, որը բանկիր էր, հակակոմունիստ, որոշ ժամանակ քարշ էր գալիս Սյերա-Մաեստրայում։ Ֆ. Կաստրոն նշանակվեց բանակի գլխավոր հրամանատար։

Երկրում առաջացավ յուրօրինակ երկիշխանություն. մի կողմից Ուրտիա-Կորդոնի բուրժուական կառավարությունը, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական բանակը Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ։ Այդ ուժերի միջև սկզբից ևեթ գոյություն ուներ ամենախոր անտագոնիստական հակասություն։ Բուրժուական

կաբինետն ամեն ինչ անում էր, որպեսզի արգելակեր հեղափոխության զարգացումը, թույլ չտար իրականացնելու հեղափոխական վերափոխություններ, զբաղեցներ զանգվածների ակտիվությունը։ Հեղափոխական բանակի ղեկավարությունը, որը կազմված էր առավելապես հետևողական հակաիմպերիալիստներից և դեմոկրատներից, վճռականորեն կանգնեց հայրենիքի ազատագրման և դեմոկրատական խոր վերափոխությունների ուղու վրա։

Հաղթանակած դեմոկրատական ազատագրական հեղափոխությունը չէր կարող բուրժուազիային անմիջապես հեռացնել իշխանությունից։ Չի կարելի մոռանալ, որ «Հուլիսի 26-ի շարժումը» և «Հեղափոխական դիրեկտորատը» դեռևս ոչ բավարար ձևավորված և սոցիալական կազմով ծայրահեղ խայտաբղետ կազմակերպություններ էին։ Այդ կազմակերպությունների բավական աշքի ընկնող շատ անդամներ, ինչպես պարզվեց հետագայում, վարակված էին հակակոմունիստական նախապաշարումներով և վախենում էին զանգվածների հեղափոխական գործողություններից։ Հարկավոր էր նաև որոշ ժամանակ, որպեսզի բուրժուական կաբինետի անդամներն իրենց մերկացնեին ժողովրդի առջև որպես աշխատավորության հեղափոխական ձգտումների հակառակորդներ։

1959 թ. փետրվարի 19-ին, Մ. Կորդոնայի հրաժարական տալուց հետո, պրեմիեր մինիստրի պոստը գրավեց Ֆիդել Կաստրոն։ Կառավարության կազմնորոշումը խիստ փոխվեց։ Հուլիսին Ուրուտիայի փոխարեն պրեզիդենտ դարձավ Օսվալդո Դորտիկոս Տորադոն։ Երկիշխանությունը վերջացավ։ Երկրում հաստատվում էր ժողովրդաիշխանություն՝ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դիկտատուրա։

Հեղափոխական կառավարությունը ձեռնամուխ եղավ արմատական վերափոխությունների իրականացմանը երկրում։ 1959 թ. մայիսի 17-ին ընդունվեց ագրարային ռեֆորմի օրենքը։ Հեղափոխական կառավարության այդ կարևորագույն ակտը նախատեսում էր կալվածատիրական լատիֆունդիաների վերացում, օտարերկրյա մոնոպոլիաների հողային սեփականության բռնագրավում և հյուսիսամերիկյան կապիտալի դուրս մղում գյուղատնտեսական արտադրության ոլորտից։ Կապիտալիստական տիպի խոշոր շահութաբեր տնտեսությունները վերածվեցին պետական կալվածքների, կալվածատերերից և օտարերկրյա մոնոպոլիաներից բռնագրավված հողի մի մասը անհատույց հանձնվում էր հողազուրկ և սակավահող գյուղացիներին։ Օրենքը հողային սեփականության առավելագույնը սահմանում էր 30 կաբալերիան (1 կաբալերիան-13,4 հա.) և 5 մարդուց բաղկացած մեկ ընտանիքի նվազագույն հողատարածությունը՝ 2 կաբալերիա։

1960 թ. վերջերին օրենքի իրականացման հետևանքով Կուբայում լատիֆունդիզմը վերացվեց, իսկ ԱՄՆ-ի իմպերիալիզմի դիրքերը քայքայվեցին։ Վերջ տրվեց կալվածատերերի դասակարգին՝ իմպերիալիզմի տիրապետության այդ հիմնական հենարանին։ Պետությունը գյուղացիներին տրամադրեց վարկ, ոչնչացրեց մասնավոր միջնորդությունը, վարձակալության, ենթավարձակալության, բնավարձակալության տարբեր ձևերը և կիսաֆեոդալական մյուս մնացուկները։

Հեղափոխական կառավարությունը վարում էր արդյունաբերությունից և բանկային գործից հյուսիսամերիկյան մոնոպոլիաներին դուրս մղելու քաղաքականություն։ Նա արտաքին առևտրի նկատմամբ սահմանեց պետության մոնոպոլիա։ 1960 թ. օգոստոսի 6-ի որոշմամբ Կուբայի կառավարությունն ազգայնացրեց հեռախոսային և էլեկտրական ընկերությունները, նավթաթորման գործարանները, ինչպես նաև ամերիկյան կապիտալին պատկանող շաքարի 36 խոշոր գործարան։ Օգոստոսի վերջին ազգայնացվեց ԱՄՆ-ի ևս 26 ընկերու-

թյուն։ Կուբան առաջարկում էր կատարել ազգայնացված սեփականության հատուցում արժեթղթերով, որոնք պետք է մարվեին 30 տարվա ընթացքում և վճարվեին ԱՄՆ-ում կուբայական շաքարի վաճառքից եղած մուտքի 25%-ի հաշվին։ ԱՄՆ-ը մերժեց Կուբայի այդ առաջարկությունները և հրաժարվեց նրան նավթ մատակարարել և գնել կուբայական շաքար։ Ի պատասխան, Կուբայի կառավարությունը 1960 թ. սեպտեմբերին ազգայնացրեց հյուսիսամերիկյան բանկերի բոլոր մասնաճյուղերը, որոնց միջոցով ԱՄՆ-ի ֆինանսական օligարխիան իրականացնում էր իր տիրապետությունը։ 1960 թ. հոկտեմբերի 19-ին ԱՄՆ-ի կառավարությունը որոշում ընդունեց Կուբա կատարվող արտահանությունը լիովին դադարեցնելու մասին։ Դա տնտեսական բլոկադա էր։ Այդ ժամանակ Կուբայի կառավարությունն ազգայնացրեց երկրում գտնվող ԱՄՆ-ի մընացած բոլոր արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունները։ Դրա հետևանքով Կուբայի պետության սեփականություն դարձավ ԱՄՆ-ի մոնոպոլիաների՝ 1 մլրդ. դոլար ընդհանուր արժողությամբ ունեցվածքը։

Լատիֆունդիզմի և ԱՄՆ-ի իմպերիալիզմի տիրապետության տնտեսական հիմքերի լիկվիդացումը շոշափեց խոշոր արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի շահերը։ Խոշոր կապիտալիստները, որպես կանոն, նաև խոշոր հողատերեր էին։ Նրանք Կուբայի աշխատավորության շահագործման ասպարեզում նաև ԱՄՆ-ի մոնոպոլիաների պարտնյորներն էին։ Խոշոր բուրժուազիան կառավարության դեկրետների սարոտաժից աստիճանաբար անցնում էր բացահայտ հակահեղափոխական գործողությունների։ Դա հեղափոխական կառավարությանն ստիպեց 1960 թ. հոկտեմբերին օրենք ընդունել ազգային խոշոր կապիտալին պատկանող 382 ձեռնարկությունների ազգայնացման մասին. դրանց թվում ազգայնացվեցին շաքարի 105 գործարան, երկաթուղիներ, էլեկտրակայաններ, մասնավոր բանկեր, խոշոր խանութներ։

Այդ բոլոր ակտերը նշանակում էին ոչ միայն դեմոկրատական վերափոխությունների ավարտում երկրում, այլև այդ վերափոխություններին տվեցին սոցիալիստական երանգավորում։ Հեղափոխությունը բարձրացրեց աշխատավոր զանգվածների ակտիվությունը։ Բանվոր դասակարգն արագորեն բարձրանում էր մինչև հասարակության ղեկավար դասակարգի աստիճանը, անչափ բարձրացավ նրա քաղաքական և կուլտուրական մակարդակը։ Դեռ 1959 թ. սեպտեմբերի 15-ին հեղափոխական կառավարությունն ընդունել էր մեկ տարում 10 հազ. դասարանային շենքերի կառուցման մասին օրենքը։ Նախկին զորանոցները վերածվեցին դպրոցական շենքերի։ 1961 թ. հուլիսին անցկացվեց մասնավոր դպրոցների ազգայնացում։ Կարճ ժամկետում Կուբան, որը 1959 թ. ուներ 1 մլն. անգրագետ, դարձավ Լատինական Ամերիկայում անգրագիտությունից ազատված առաջին երկիրը։ Պաշտոնական փաստաթղթերում կուբացիները հպարտությամբ սկսեցին իրենց երկիրն անվանել Ամերիկայի ազատ տարածք։

ԱՄՆ-ի իմպերիալիզմը, բնականաբար, չէր ուզում հաշտվել Կուբայում գերիշխող տնտեսական ու քաղաքական դիրքերի կորստյան հետ։ Հեղափոխության առաջին ամիսներին Ֆ. Կաստրոյի կառավարության հետ կեղծավոր շողոքորթություն անելուց պետական դեպարտամենտն արագորեն անցավ ահաբեկման ու շանտաժին, Կուբայի դեմ քայքայիչ գործողությունների կազմակերպմանը։

1961 թ. հունվարի 3-ին պրեզիդենտ Դ. Էյզենհաուերը խզեց դիվանագիտական հարաբերությունները Կուբայի հետ։ ԱՄՆ-ի իմպերիալիստները ձեռնամուխ եղան կուբայական հակահեղափոխականների ստորաբաժանումների ինտենսիվ պատրաստությանը՝ Կուբայում դրանք ափ հանելու նպատակով։ Մարտին ԱՄՆ-ում ստեղծվեց մարիոնետային կառավարություն՝ Մ. Կորդոնայի

գլխավորությամբ։ ԿՀՎ-ն մշակեց Գվատեմալայի և Նիկարագուայի տարածքներից վարձկանների Կուբա ներխուժելու պլան։

1961 թ. ապրիլի 15-ին ամերիկյան Բ-26 ռմբակոծիչները ռմբակոծեցին Հավանան և Կուբայի մյուս քաղաքները, իսկ ապրիլի 17-ին վարձկանների զորքերը ԱՄՆ-ի էսկադրային ականակիրների և ինքնաթիռների պաշտպանությամբ սկսեցին ափ դուրս գալ Պլայա Լարգա և Պլայա Խիրոն ծովախորշերում։ Սակայն իմպերիալիստները սխալվեցին։ Հեղափոխական բանակը 72 ժամում գլխովին ջախջախեց ներխուժած վարձկանների բանդաները։ Պլայա Խիրոնի հաղթանակը նշանակում էր երկրի պատմության մեջ մի այնպիսի շրջադարձ, որը նախապատրաստվել էր հեղափոխական վերափոխությունների ամբողջ ընթացքով։ Այն ցույց տվեց, որ չի կարելի հակաիմպերիալիստական լուրջ պայքար տանել, չլիկվիդացնելով շահագործող դասակարգերի մնացորդները և չկանգնելով սոցիալիստական շինարարության ուղին։ Հեղափոխության իրականացրած վերափոխությունները բերեցին այդ եզրակացությանը, որն արեց Ֆ. Կաստրոն 1961 թ. ապրիլի 16-ին Հավանայում ունեցած իր ելույթում՝ ԱՄՆ-ի ագրեսիայի և հեղափոխության զարգացման առթիվ։

Սոցիալիստական ուղու վրա

ԱՄՆ-ի իմպերիալիզմը Պլայա Խիրոնում վարձկանների ջախջախումից հետո էլ չհրաժարվեց կուբայական հեղափոխությունը խեղդելու պլանից։ Այժմ նա հիմնական շեշտը դնում էր Ամերիկյան պետությունների կազմակերպությամբ (ԱՊԿ) լատինաամերիկյան երկրների հակակուբայական բլոկի ստեղծման վրա։ 1962 թ. հունվարին ԱՄՆ-ի կառավարությունը օգտագործելով ճնշման ու շանտաժի կոպիտ մեթոդներ, հասավ Կուբայի հեռացմանը ԱՊԿ-ից և Կուբայի դեմ ծավալեց զրպարտանքի ու սպառնալիքների կատաղի կամպանիա։ Նա սկսեց նախապատրաստվել Կուբայի դեմ ուղղակի զինված հարձակման։ 1962 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի կառավարությունն ի խախտումն միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների, հայտարարեց Կուբայի ռազմածովային բլոկադա։ ԱՄՆ-ի և Կուբայի միջև ծագած կոնֆլիկտը դուրս եկավ երկկողմանի, ամերիկյան շրջանակներից։ ԱՄՆ-ի պրովոկացիոն քաղաքականության հետևանքով աշխարհի վրա կախվեց ջերմամիջուկային պատերազմի վտանգը։ ՍՍՀՄ-ի հաստատուն դիրքը և Կուբայի ժողովրդի հերոսական համառությունը մարդկությանը փրկեցին պատերազմից։ Իմպերիալիզմը նահանջեց։

Այն պահից ի վեր երբ 1959 թ. հունվարի 10-ին Սովետական Միությունը ճանաչեց Կուբայի հեղափոխական կառավարությունը, նա անփոխարինելի օգնություն էր ցույց տալիս Կուբայի ժողովրդին։ 1960 թ. փետրվարին Հավանայում ստորագրվեց սովետա-կուբայական առևտրական համաձայնագիր, որով ՍՍՀՄ-ը պարտավորվեց 5 տարվա ընթացքում Կուբայից գնել տարեկան 1 մլն. տ. շաքար, գնումների 20%-ը վճարելով դոլարով։ 1960 թ. մայիսին Կուբան դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Սովետական Միության հետ։ 1960 թ. դեկտեմբերին, երբ ԱՄՆ-ը հրաժարվեց Կուբայից շաքար գնել, Սովետական Միությունը պատրաստակամություն հայտնեց համաշխարհային գներից բարձր գներով 2, 7մլն. տ. շաքար գնել։ Կուբայական շաքարի գնումներն ավելացրին նաև մյուս սոցիալիստական երկրները։ 1961 թ. Կուբան Սովետական Միության հետ համաձայնագիր կնքեց 1962—1965 թթ. տարեկան 4,8 մլն. տ. շաքար արտահանելու մասին։ ՍՍՀՄ-ը Կուբային տրամադրեց 250 մլն. դոլար գումարի վարկ։

1964 թ. հունվարին Ֆ. Կաստրոյի ՍՍՀՄ կատարած երկրորդ այցելության (առաջին այցելությունը եղել էր 1963 թ.) ժամանակ ստորագրվեց սովետա-կուբայական համատեղ կոմյունիկե և Կուբայի համար մի շարք կարևոր տն-

տեսական փաստաթղթեր, այդ թվում 1965—1970 թթ. կուբայական շաքարի գնման մասին երկարժամկետ առևտրական համաձայնագիր։ Կուբան սիստեմատիկորեն Սովետական Միությունից ստանում էր զգալի քանակությամբ նավթ և նավթամթերք, սղոցանյութեր, սև մետաղի գլանվածք, հացահատիկ, ալյուր, ձեթ, դեղորայք և ավտոմոբիլներ։

Սովետական մասնագետները Կուբային օգնություն էին ցույց տալիս երկրաբանական հետախուզական աշխատանքներում, հիդրոտեխնիկական համակարգերի կառուցման, ձկնորսության զարգացման և շաքարի գործարանների վերակառուցման, կադրերի պատրաստման, երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում։ Զարգանում էին Կուբայի գիտական և մշակութային կապերը Սովետական Միության հետ։ Ֆ. Կաստրոն բազմիցս նշել է Սովետական Միության ցույց տված օգնության վճռական նշանակությունը սոցիալիստական Կուբայի ամրապնդման և կառուցման գործում։

1962—1963 թթ. Կուբայի սոցիալիստական ուղիով ընթանալու, ինչպես նաև հեղափոխական վերափոխությունների պաշտպանության նպատակով Կուբայի կառավարությունը նոր միջոցառումներ անցկացրեց ներքին առևտրի, կենցաղային սպասարկման և գյուղատնտեսության ոլորտից մասնավոր կապիտալիստական սեկտորի սահմանափակման, ապա և դուրս մղման ուղղությամբ։ № 1076 օրենքով (1962 թ. դեկտեմբեր) ազգայնացվեց հագուստի, կոշիկի, երկաթեղեն իրերի և անձնական օգտագործման ապրանքների վաճառքի ավելի քան 5 հազ. մանրածախ ձեռնարկություն։ Ազգայնացման չէին ենթարկվում միայն այն ձեռնարկությունները, որտեղ չէր օգտագործվում վարձու աշխատանք։

Կուլակային-կապիտալիստական տնտեսությունների ազգայնացման մասին օրենքը (ընդունվեց 1963 թ. հոկտեմբերի 3-ին) վերաբերում էր այն տընտեսություններին, որոնց հողային սեփականությունը գերազանցում էր 5 կաբալյերայից (67 հա.)։ Այդ տնտեսությունների ձեռքում էին գտնվում խոշոր եղջերավոր անասունների հիմնական զանգվածը և ավելի քան 2 մլն. հա. հող։ Սեփականազրկված տնտեսությունները վերածվում էին ժողովրդական կալվածքների։ Հոկտեմբերի 3-ի օրենքը կուբացիներն անվանեցին երկրորդ ագրարային ռեֆորմ։ 1963 թ. վերջին գործողության մեջ դրվեց ընդհանուր զինվորական ծառայության մասին օրենքը։

Նոր օրենքների ընդունմամբ լիկվիդացվում էր գյուղական և քաղաքային բուրժուազիայի դասակարգը։ Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն ամրապնդվում էր։ Հեղափոխությունը և կյանքը արագ տեմպերով ծնում էին նաև նոր բանվորագյուղացիական մտավորականություն։

Սոցիալիզմի ուղիով Կուբայի առաջընթացի առանձնահատկությունը համեմատաբար արագ հանրայնացման պրոցեսն է։ Սոցիալիստական սեկտորը տիրապետող դարձավ արդյունաբերական արտադրության և փոխանակության բոլոր ոլորտներում։ Մեծ է նրա տեսակարար կշիռը նաև գյուղատնտեսության մեջ։ Նրան է պատկանում համախառն արտադրանքի մոտ 65%-ը։ 1968 թ. սկզբին Կուբայում ազգայնացվեց մանր մանրածախ առևտուրը և տնայնագործական արդյունաբերությունը։ Սոցիալիզմի տնտեսական հիմքերի կառուցումը Կուբայում ընթանում էր ոչ առանց դժվարությունների։ Հեղափոխական զարգացման բարդությունն ու արագ տեմպը, փորձի բացակայությունը և հաջողություններից ծնունդ առած չափից դուրս լավատեսությունը որոշակի սխալների հասցրին տնտեսական ասպարեզում։ Այսպես, հեղափոխությունից հետո առաջին տարիներին (1959—1963) անցկացվում էր երկրի ինդուստրացումն արագացնելու կուրս և ընդ որում անհրաժեշտ չափով հաշվի չէին առնվում երկրի հնարավորությունները։

Հաջորդ տարիներին այդ սխալները հաղթահարվեցին և սոցիալիստական Կուբան լուրջ հաջողությունների հասավ, հատկապես էկոնոմիկայի ավանդական ճյուղերի՝ շաքարի արդյունաբերության, անասնապահության և ծխախոտագործության զարգացման մեջ։ 1970 թ. հավաքվեց երկրում աննախընթաց շաքարեղեգի բերք, արտադրվեց 8,6 մլն. տ. շաքար։

Կուբան զգալի հաջողությունների է հասել էներգետիկայի, շինարարական, ցեմենտի, նիկելի արդյունաբերության և ձկնային տնտեսության զարգացման ասպարեզում։ 1958 թ. համեմատությամբ 1970 թ. ցեմենտի արտադրությունն աճել է 2 անգամ, էլեկտրակայանների հզորությունն ավելացել է 397 հազ. կվտ. ժամից մինչև 909 հազ. կվտ. ժամ, նիկելի հանույթը 14,8 հազ. տոննայից մինչև 40 հազ. տոննայի, առևտրական նավատորմի բեռնատարողությունը բարձրացել է 57,9 հազ. տոննայից մինչև 421,8 հազ. տոննայի։ Կուբան հաջողությամբ շարունակում է սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը։

Կուբայում սոցիալիզմի շինարարության առաջատար և ուղղություն տվող քաղաքական ուժը կոմունիստական կուսակցությունն է։ Նրա աճն ու գործունեությունը անխզելիորեն կապված են հեղափոխության զարգացման ու խորացման հետ։ 1961 թ. երեք առաջատար հեղափոխական կազմակերպությունների՝ «Հուլիսի 26-ի շարժման», «Հեղափոխական դիրեկտորատի» և ժողովրդա-սոցիալիստական կուսակցության հիման վրա կազմավորվեց միասնական կազմակերպություն՝ Միացյալ հեղափոխական կազմակերպություններ (ՄՀԿ)։

«ՄՀԿ-ն,— ասվում էր նրա ստեղծման մասին որոշման մեջ,— մարքսիստական-լենինյան կազմակերպություն է, Կուբայի բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր ժողովրդի հեղափոխական իշխանության արտահայտությունը»։ ՄՀԿ-ն, սակայն, ո՛չ հստակ ծրագիր ուներ, ո՛չ էլ կազմակերպական սկզբունքներ։ 1963 թ. ՄՀԿ-ն վերակազմվեց սոցիալիստական հեղափոխության միասնական կուսակցության, իսկ 1965 թ. հոկտեմբերին, երբ տեղի ունեցավ կուսակցության ղեկավարության համազգային խորհրդակցությունը, ստեղծվեց նրա Կենտրոնական կոմիտեն, Քաղբյուրոն, Քարտուղարությունը և Կենտկոմի աշխատանքային հանձնաժողովները, իսկ ինքը՝ կուսակցությունը վերանվանվեց Կուբայի կոմունիստական կուսակցություն (ԿԿԿ)։ 1965—1970 թթ. ամբողջ երկրում՝ գործարաններում, ֆաբրիկաներում, բանակում, մինիստրություններում և հիմնարկություններում տեղի էր ունենում կուսակցական կազմակերպությունների, ավանային, շրջանային, պրովինցյալ կոմիտեների ստեղծման պրոցեսը։ 1970 թ. վերջին ԿԿԿ-ն միավորում էր ավելի քան 100 հազ. անդամ և կուսակցության թեկնածու։

ԿԿԿ-ն Կուբայի աշխատավորության նոր պետության իսկական ղեկավար ուժն է, մի պետության, որը պրոլետարիատի դիկտատուրա է և կառուցում է սոցիալիզմ։

Շատ է բարձրացել Կուբայի միջազգային հեղինակությունը, աննախընթաց ընդլայնվել են նրա արտաքին քաղաքական կապերը։ Կուբան հավասարների մեջ հավասարն է սոցիալիստական երկրների եղբայրական ընտանիքում։ 1972 թ. մայիս—հունիսին Ֆ. Կաստրոյի կատարած այցելությունը Բուլղարիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Չեխոսլովակիա, ԳԴՀ և Սովետական Միություն նպաստեց սոցիալիզմի երկրների հետ Կուբայի բարեկամության և բազմակողմանի համագործակցության հետագա ամրապնդմանը։

ԱՄՆ-ի իմպերիալիզմի փորձերը՝ մեկուսացնել Կուբան լատինաամերիկյան մյուս երկրներից, ձախողման ենթարկվեցին։ Լատինաամերիկյան մի շարք պետություններ վերջին տարիներին վերականգնեցին դիվանագիտական հարաբերությունները Կուբայի հետ։

1975 թ. օգոստոսին Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ) Լատինական Ամերիկայի երկրների հասարակական կարծիքի ճնշման տակ որոշում ընդունեց ԱՊԿ-ի անդամ երկրներին իրավունք վերապահել «իրենց հայեցողությամբ և ազգային քաղաքականության ու յուրաքանչյուր երկրի շահերի համաձայն նորմալացնել իր դիվանագիտական հարաբերությունները Կուբայի Հանրապետության հետ»։

Սոցիալիզմի կառուցման պրոցեսը Կուբայում անխզելիորեն կապված է համաշխարհային սոցիալիստական լագերի երկրների և ամենից առաջ Սովետական Միության հետ Կուբայի համագործակցության ընդլայնման ու խորացման հետ։ 1970 թվականը նշանավորեց ՍՍՀՄ-ի ու Կուբայի միջև համագործակցության նոր փուլի սկիզբը։ 1970 թ. դեկտեմբերին ստեղծվեց տնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական սովետա-կուբայական հանձնաժողով։ Այդ հանձնաժողովի ստեղծումը նպաստեց ՍՍՀՄ-ի ու Կուբայի միջև տնտեսական հարաբերությունների ասպարեզում գոյություն ունեցող կոնտակտների ընդլայնմանն ու խորացմանը։ 1970 թ. հետո Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ Կուբայի հարաբերությունների զարգացումն ընթանում էր Տնտեսական փոխօգնության խորհրդի մեջ Կուբայի ընդունման նախապատրաստության գծով։ 1972 թ. հունիսին ՏՓԽ-ի XXVI նստաշրջանում Կուբան դարձավ նրա լիիրավ անդամը։ Կուբայի ընդունվելը ՏՓԽ վկայում է համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման տնտեսական օրինաչափությունների խորապես գործելու մասին։ Դա բարերար ազդեցություն ունեցավ երկրի էկոնոմիկայի զարգացման վրա։ Մեծ տեղաշարժեր կատարվեցին սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի մեջ։ Արհմիությունների XIII կոնգրեսում, որը կայացավ 1973 թ. աշնանը, սկզբունքային գնահատականներ տրվեցին կուբայական աշխատավորների ձեռք բերած հաջողություններին և նրանց առջև կանգնած խնդիրներին։ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի» սոցիալիզմի սկզբունքը որոշիչ ու առաջատար է դարձել ներպետական քաղաքականության մեջ։ Դրա հաջող իրականացմանը զգալի չափով նպաստում են երկրի ներսում տեղի ունեցած քաղաքական կարևոր փոփոխությունները։ Դա ամենից առաջ նոր սահմանադրության մշակումն է, պետական մարմինների վերակառուցումը, այնպիսի հասարակական կազմակերպությունների գործունեության ակտիվացումը, ինչպես հեղափոխության պաշտպանության կոմիտեն, Կուբայի կանանց ֆեդերացիան, մանր հողագործների ազգային ասոցիացիան և այլն։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ԳԼՈՒԽ 9

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԿՈՒՐՍԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1945—1948)

Ռեկոնվերսիայի պրոբլեմները

Ճապոնիայի կապիտուլյացիայի հայտարարման հաջորդ օրը պրեզիդենտ Հ. Տրումենը իր աշխատանքային սեղանի թնդանոթի մոդելը փոխարինեց նրբորեն պատրաստված գութանով, դրանով խորհրդանշելով երկրի մուտք գործելը ռեկոնվերսիայի շրջանը, այսինքն ազգի կյանքի վերադարձը խաղաղ ռելսերին։ Սակայն պարզվեց, որ խաղաղությանը վերադառնալն ավելի բարդ գործ է, քան Սպիտակ տանը դեկորներ փոխելը։ Պատերազմի տարիներին ուժեղացած ռեակցիոներները ռեկոնվերսիայի մասին խորհում էին ոչ թե որպես պարզ անցում պատերազմից խաղաղություն, այլ որպես 1929—1945 թթ. «ոչ նորմալ» ժամանակաշրջանից վերադարձ դեպի «նորմալ» ժամանակները, որպես այն ամենի ապամոնտաժում, ինչը կուտակվել էր «նոր կուրսի» տարիներին։ Բայց վերադարձ «նորմալ» ժամանակներին տեղի չունեցավ։ Ընդհակառակը, 1933—1945 թթ. շատ սոցիալ-տնտեսական միտումներ, և ամենից առաջ պետության դերի ուժեղացումը, պատերազմից հետո հետագա զարգացում ստացան։

Արդեն առաջին հետպատերազմյան տարիներին կառավարող շրջաններում սկսեց ուժեր կուտակել նեոպահպանողական ուղղությունը։ Հրաժարվելով «կոշտ անհատապաշտության» ծայրահեղություններից, նեոպահպանողականները անհրաժեշտ էին համարում պետության դերի ակտիվացումը, բայց ավելի զգույշ ձևով և ավելի ցայտուն արտահայտված հակաբանվորական պլանով, քան անում էին այդ «նոր կուրսի» նեոլիբերալները։

Վախը ճգնաժամից, որին սպասում էին բնակչության տառացիորեն բոլոր խավերը պատերազմն ավարտվելուց հետո, թուլացնում էր կառավարող շրջաններում գտնվող «կոշտ անհատապաշտների» դիրքերը։ Կառավարությունը առանձնապես վախենում էր բանակի զանգվածային զորացրման հաշվին գործազրկության աճից։ Մեկ տարվա ընթացքում ԱՄՆ-ի զինված ուժերից դուրս եկան ավելի քան 12 մլն. զինվոր ու սպա։

Հետպատերազմյան իրադրությունը թույլ չէր տալիս դեն նետել հին պետական-մոնոպոլիստական դեղատոմսերը։ Պետության դերի հարցի վերաբերյալ ծայրահեղ անհատապաշտների, նեոլիբերալների և նեոպահպանողականների բոլոր տարաձայնությունների առկայությամբ հանդերձ կոնգրեսը 1946 թ. փետրվարին ընդունեց զբաղվածության մասին օրենքը՝ ԱՄՆ-ի ամբողջ պատմության մեջ ամենակարևոր սատատուներից մեկը։ Կոնգրեսն օրինականացրեց

պետության ղեկավարի պատասխանատվությունը էկոնոմիկայի վիճակի համար, նրան առընթեր ստեղծելով Տնտեսական խորհրդակցությունների կոմիտե։

Պետական-մոնոպոլիստական կուրսը հետպատերազմյան առաջին տարիներին օգնեց խուսափել ճգնաժամից. պետության օգնությամբ կապիտալիստները այն վիթխարի միջոցները, որ կուտակել էին պատերազմի տարիներին, կարողացան օգտագործել էկոնոմիկայի լուրջ անկումը կանխելու համար։ Արդյունաբերական արտադրության ինդեքսը (1947—1949 = 100) ռազմական արտադրության կրճատման և արդյունաբերությունը խաղաղ ռելսերին փոխադրելու կապակցությամբ 1945 թ. 110-ից 1946 թ. ընկնելով մինչև 90-ի, 1947 թ. բարձրացավ մինչև 100-ի, իսկ 1948 թ.՝ 103-ի։ Գործազրկությունը 1947—1948 թթ. մնում էր աշխատուժի 3,8%-ի մակարդակի վրա (2,3 մլն. մարդ)։

Ճգնաժամի կանխման գործում մեծ դեր խաղաց տնտեսական ու քաղաքական կյանքի ռազմականացումը հետպատերազմյան դեռ ամենաառաջին տարիներին։ 1940 թ. ուղղակի ռազմական ծախսերը կազմում էին 3,5 մլրդ. դոլար, իսկ 1948 թ. (հետպատերազմյան բոլոր տարիների ամենացածր մակարդակը) դրանք հասնում էին 13,4 մլրդ. դոլարի՝ 1957—1959 թթ. անփոփոխ գներով։ Միլիտարիզմն ԱՄՆ-ի տնտեսական զարգացման կարևոր և մշտական գործոնի էր վերածվում դեռ հենց այն տարիներին, երբ ամերիկացիները պատերազմից անցնում էին խաղաղության։

Ռազմականացումը խորապես շոշափեց նաև ԱՄՆ-ի ամբողջ պետական կառուցվածքը։ 1947 թ. ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդը որպես պրեզիդենտին կից բարձրագույն խորհրդակցական մարմին, որը հանձնարարականներ էր մշակում ներքին և միջազգային պրոբլեմների վերաբերյալ։ Այդ նույն ակտով էլ վերակառուցվում էին ԱՄՆ-ի ռազմական գերատեսչությունները, որոնք կենտրոնացվեցին պաշտպանության մինիստրի կառավարման ներքո։ 1947 թվականից սկսեց գործել նաև Կենտրոնական հետախուզական վարչությունը։

Ռեկոնվերսիայի ժամանակաշրջանում 30-ական թվականների «նոր կուրսը» ուժի մեջ մնաց այն հարցերում, որոնք վերաբերում էին պետական-մոնոպոլիստական ծրագրին, բայց սրընթաց կորցնում էր մյուս կարևորագույն գիծը՝ լիբերալիզմը սոցիալական հարցերում։

Ներքաղաքական ռեակցիայի հարձակումը

Պատերազմն ավարտվելուն պես ԱՄՆ-ում ուժեղացավ դեռևս պատերազմի ժամանակ սկսված հարձակումն արհմիութենական և համադեմոկրատական իրավունքների վրա։ Այն ընթանում էր «ազգային շահերի» պաշտպանության լոզունգի ներքո, շահեր, որոնք նույնացվում էին մոնոպոլիաների շահերի հետ։ 1946 թ. ընտրությունները երկու պալատներում մեծամասնություն տվեցին հանրապետականներին, որոնք կոչ էին անում վերջ տալ «նոր կուրսի» լիբերալիզմին։

1947 թ. հունիսին կոնգրեսը, հակառակ պրեզիդենտական վետոյի, ընդունեց Տաֆտ-Հարթլիի օրենքը։ Եթե ըստ Վագների օրենքի, «անազնիվ աշխատանքային պրակտիկայի» համար պատժի ենթակա էին միայն ձեռնարկատերերը, ապա այժմ դրա համար սկսեցին հալածանքի ենթարկվել նաև արհմիությունները։ Այդ օրենքի տակ էին ընկնում արհմիությունների այնպիսի գործողություններ, ինչպես բանվորներին «ստիպելը» ընդունվելու միության մեջ, ձեռնարկատիրոջն «ստիպելը» իր ներկայացուցիչներն ընտրելու գործում՝ կոլեկտիվ բանակցություններ վարելու համար, «փակ արտադրամասի» պահանջը և այլն։ Դա ձեռնարկատերերին լայն հնարավորություն էր տալիս արհմիութենական գործունեության շատ ձևեր կանխելու համար։

Տաֆտ-Հարթլիի օրենքը էականորեն դժվարացրեց գործադուլների, բոյկոտների և պիկետավորման անցկացումը։ Որոշ դեպքերում այդ գործողությունները լիովին արգելվում էին, օրինակ, պետական ծառայողների համար, մյուս դեպքերում գործադուլների կիրառումը պայմանավորվում էր մի շարք վերապահումներով, որոնց չպահպանելը հասցնում էր դաժան պատիժների։ Նույնիսկ բոլոր տեսակետերից օրինական գործադուլը պետք է անցկացվեր ըստ սահմանված պրոցեդուրայի, ձեռնարկատիրոջը տեղյակ պահելով այն ըսկսելուց 60 օր առաջ։ Այդ «սառեցնող» ժամանակաշրջանում գործադուլային գործողություններին դիմելն արգելվում էր։ Այդ ժամկետի ընթացքում ձեռնարկատերերը, որպես կանոն, հասցնում էին բոլոր ուժերը մոբիլիզացնել առաջիկա գործադուլի դեմ պայքարելու համար, ստեղծելով արհմիությանը թշնամաբար տրամադրված հասարակական կարծիք։ Իսկ եթե գործադուլը «սպառնում էր ազգի առողջապահությանը և անվտանգությանը», ապա ԱՄՆ-ի պրեզիդենտը դատարանի միջոցով կարող էր այն հետաձգել ևս 80 օրով։ 80 օրից հետո գործադուլը համարվում էր օրինական, բայց պրեզիդենտն իրավունք ուներ դիմել կոնգրեսին՝ խնդրելով հատուկ ստատուտով այն արգելել։

Վերջապես, Տաֆտ-Հարթլիի օրենքով սահմանվում էր իշխանությունների վերահսկողություն ներարհմիութենական գործունեության նկատմամբ։ Արհմիությունները պարտավոր էին պետական մարմիններին ներկայացնել կանոնադրությունների պատճենները, ինչպես նաև տարեկան հաշվետվություններ իրենց գործերի մասին։ Որպես պարտադիր պայման օրենքը պահանջում էր, որպեսզի արհմիությունը դիմեր Աշխատանքային հարաբերությունների ազգային վարչությանը՝ բողոքելով ձեռնարկատերերի «անազնիվ աշխատանքային պրակտիկայի» դեմ, երդմամբ հանդերձ գրավոր ցուցմունք տար այն մասին, որ իր բոլոր ղեկավարներն ու ֆունկցիոներները չեն պատկանում կոմունիստական կուսակցությանը։ Օգտվելով այդ հոդվածից, ձեռնարկատերերը և ռեակցիոն արհմիութենական պարագլուխները հալածանքներ սկսեցին կոմունիստների և մոնոպոլիաների հարձակմանը վճռական դիմադրություն ցույց տալու բոլոր կողմնակիցների դեմ։

Առաջադիմական շարժման դեմ մղված պայքարում տիրող դասակարգը հանդես բերեց բարձր աստիճանի միասնություն։ Ռեակցիոներների հակաարհմիութենական կուրսին լիբերալների ցույց տված դիմադրությունը թույլ էր։ Ինքը՝ պրեզիդենտ Հ. Տրումենը հայտնվեց պետական ապարատը «ոչ լոյալ» տարրերից մաքրելու համար մղված պայքարի առաջավոր դիրքերում։ 1947 թ. մարտի 22-ին նա հրաման տվեց լոյալության ստուգման մասին, որի հիման վրա պետական ծառայությունից սկսեցին վտարվել աջ ուժերին անձեռնտու անձինք։ Բայց ռեակցիոներները պահանջում էին «կոմունիստներից» մաքրել ոչ միայն պետական ապարատը, այլև ամբողջ երկիրը։ 1947—1948 թթ. նրանք հասան մինչև Հոլլիվուդի, բուհերի, հասարակական կազմակերպությունների, մամուլի օրգանների լիբերալ մտավորականությանը։ Սկսեցին կազմել «սև ցուցակներ»։ 1948 թ. ամռանն ի պատասխան կոմունիստների հանդեպ ցուցաբերած «մեղմության» մեղադրանքների, Հ. Տրումենը կարգադրություն արեց կուսակցության 12 պարագլուխներին Սմիթի օրենքի համաձայն դատական պատասխանատվության ենթարկելու մասին։

Իմպերիալիստական արտաքին-քաղաքական դոկտրինաները: «Սառը պատերազմի» սանձազերծումը

Միջազգային իրադրությունը հետպատերազմյան առաջին տարիներին խիստ փոխվեց՝ աշխարհը դեմոկրատանում և հեղափոխականանում էր։ Վաշինգտոնում աշխարհի նորացումը ընկալում էին որպես նրա կործանում. բուրժուազիային շատ բան էր վախեցնում՝ և՛ սոցիալիստական կարգերի հաստատումը մի շարք եվրոպական երկրներում, և՛ Անգլիայում պահպանողականների կրած պարտությունն ընտրություններում։ Մյուս կողմից, ԱՄՆ-ի մոնոպոլիաների առջև հեռվում ուրվագծվում էին «ամերիկյան դարի» հեռանկարները, որոնք նրանք համարում էին միանգամայն ռեալ՝ իրենց իմպերիալիստական մրցակիցների թուլացմանը զուգընթաց։ Սարսափի ու լավատեսության այդ կոմբինացիան էլ հենց ծնունդ տվեց հետպատերազմյան իմպերիալիստական դոկտրինաներին և ագրեսիվ արտաքին քաղաքականությանը։ Սակայն ԱՄՆ-ի կառավարությունը բախվեց ոչ քիչ դժվարությունների հետ, տեսնելով ամերիկյան ռազմատնտեսական հզորության և ֆաշիզմի ջախջախումից հետո ուժի քաղաքականության միջև, ամբողջ աշխարհում ամերիկյան կանոնների մթակողմանի հաստատման պատրաստակամության և 1941—1945 թթ. դիվանագիտական փաստաթղթերում արձանագրված կոլեկտիվ պարտավորությունների միջև, համաշխարհային տիրապետության ամերիկյան ձգտումների և ՍՍՀՄ-ի վճռական հակաիմպերիալիստական քաղաքականության միջև առաջացած հակասությունը։

Վերաբերմունքը ՍՍՀՄ-ի նկատմամբ պատերազմն ավարտվելուց հետո դարձավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության կենտրոնական պահը։ Հետպատերազմյան առաջին տարիներին այն հակասական էր։ Պայքարում էին երկու տենդենցներ՝ համագործակցության կուրսի շարունակում, որին հետևում էին Հ. Ուոլեսը, Հ. Հոպկինսը և մի քանի ուրիշ պետական գործիչներ, և հարաբերությունների սրման գիծը, որի կրողները գերիշխում էին կառավարող շրջաններում։ Պրեզիդենտ Հ. Տրումենը և պետական քարտուղար Դ. Բիրնսը 1945—1946 թթ. երբեմն հարկ էին համարում խաղաղասիրական ժեստեր կատարել ՍՍՀՄ-ի հասցեին, որի համար ենթարկվում էին Ա. Վանդենբերգի կատաղի հարձակումներին. նրա թիկունքում կանգնած էր ամերիկյան քաղաքագետների մեծամասնությունը։ 1947 թ. սկզբին ՍՍՀՄ-ի նկատմամբ Վաշինգտոնում գերակշռություն ստացավ իմպերիալիստական կուրսը։ Պրեզիդենտը լիովին միացավ Ա. Վանդենբերգի գծին։

Ծավալվեց «ատոմային դիվանագիտությունը»։ Դրան ուղեկցում էին պատերազմի ժամանակաշրջանի ամերիկա-սովետական համագործակցության վրա կատարվող գաղափարական և քաղաքական հարձակումները։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն ստացավ վառ արտահայտված իմպերիալիստական գծեր։ Ագրեսիվ գործողությունները դադարեցին կանխվել պատերազմի ժամանակ հակաֆաշիստական պետությունների համագործակցության հետագարձ հայացքներով։ Այդ կուրսը գաղափարապես ամրապնդվեց «սառը պատերազմի» և «երկաթյա վարագույրի» մասին թեզիսներով, իսկ քաղաքականապես՝ «զսպման դոկտրինայով»։ Այն կոնկրետ արտահայտություն գտավ «Տրումենի դոկտրինայում» և «Մարշալի պլանում»։ 1947 թ. սկզբին ԱՄՆ-ի պետական քարտուղարի պոստում գեներալ Ջ. Մարշալի նշանակումը ցուցադրում էր Պենտագոնի միավորվելը դիվանագետների հետ և զինվորականության աճած դերը արտաքին քաղաքական կուրսի որոշման մեջ։

«Տրումենի դոկտրինան» ծնունդ առավ 1947 թ. մարտի 12-ին, որպես Հունաստանին ու Թուրքիային «օգնություն» ցույց տալու անհետաձգելի միջոց։ «Դոկտրինայի» էությունը «օգնություն» ցուցանակի տակ ռազմաքաղաքական

միջամտության միջոցով աշխարհի ցանկացած մասում ռեակցիոն ռեժիմների պահպանման համար ամերիկյան պատասխանատվության միակողմանի հրռչակումն էր։ ԱՄՆ-ում պլաններ էին հղանում արևմտաեվրոպական կապիտալիզմի ամրապնդման համար Եվրոպա ավելի կազմակերպված ու ընդգրկուն տնտեսական ու ռազմա-քաղաքական ներխուժման, կոմունիստական ու սոցիալիստական կուսակցությունների հարաճուն ազդեցության քայքայման և ամերիկյան «ներկայության» հավերժացման մասին։ Այդպես 1947 թ. հունիսի 5-ին լույս աշխարհ եկավ «Մարշալի պլանը»։ Ի զարգացումն այդ պլանի 1948—1951 թթ. կոնգրեսը 12,5 մլրդ. դոլար հատկացրեց Եվրոպային «օգնելու» համար։ Դա և՛ ներարկում էր ԱՄՆ-ի էկոնոմիկայում (որովհետև մարշալականացված երկրներ էր ուղարկվում հնացած քաղաքացիական և ռազմական արտադրանքը), և՛ «օգնություն ստացող երկրներին ամերիկյան թելադրանքին ենթարկելու միջոց։

1947 թ. հուլիսին պետական դեպարտամենտի չինովնիկ Դ. Կենանը հանդես եկավ «զսպման դոկտրինայով», որը հռչակում էր, թե «Սովետական Միության հանդեպ Միացյալ Նահանգների ցանկացած քաղաքականության գլխավոր տարրը պետք է լինի ռուսական էքսպանսիոնիստական միտումների երկարատև, համբերատար, բայց հաստատուն ու զգոն զսպման տարրը»։ Այդ գաղափարը իսկույն ևեթ բարձրացրին պաշտոնական քաղաքականության աստիճանին, և հաջորդ բոլոր իմպերիալիստական արտաքին քաղաքական դոկտրինաները սոսկ զարգացնում ու ճշգրտում էին այն։

«Ռուսական զավթողական միտումների զսպումն» սկսվեց Հարավային Ամերիկայից, ուր 1947 թ. սեպտեմբերի 2-ին ստորագրվեց փոխադարձ անվրտանգության վերաբերյալ միջամերիկյան պայմանագիր, որը հայտնի է որպես, «Ռիո դե Ժանեյրոյի պակտ»։

Ապա, հաղթահարելով «մեկուսացման» քաղաքականության նախկին կողմնակիցների պասսիվ դիմադրությունը, 1948 թ. հունիսի 11-ին սենատն ընդունեց Ա. Վանդենբերգի բանաձևը, որը պրեզիդենտին թույլ էր տալիս և հանձնարարում մյուս երկրների հետ «ազատ աշխարհի» փոխադարձ պաշտպանության մասին պակտեր կնքել։ Այսպես կատարվեց կարևորագույն արտաքին քաղաքական քայլը, որը խախտեց խաղաղ պայմաններում եվրոպական պետությունների հետ ռազմական դաշինքների հանդեպ ԱՄՆ-ի բացասական վերաբերմունքի կեսդարյա ավանդույթը։

ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների դեմ Եվրոպայի մարշալականացված պետությունների ռազմական բլոկի ստեղծման ուղին հարթված էր։ 1948 թ. վերջին պարտնյորների գաղտնի բանակցությունները մոտենում էին ավարտին։

Արհմիությունները և կոմունիստական կուսակցությունը հետպատերազմյան առաջին տարիներին

Պատերազմը բարդ ազդեցություն ունեցավ ԱՄՆ-ի բանվորական շարժման զարգացման վրա։ 1939—1945 թթ. արհմիությունների անդամների թիվը 8,8 միլիոնից աճեց 14,3 միլիոնի։ Պատերազմը բանվորներին ավելի զգուշավոր դարձրեց ռեակցիոներների ամեն տեսակի ոտնձգությունների հանդեպ, ընդլայնեց արհմիությունների, հատկապես ԱԱԿ-ի մեջ մտնող արհմիությունների մտահորիզոնը։ Բայց դրա հետ մեկտեղ պատերազմի տարիներին բթացվեց հակամոնոպոլիստական սուր ծայրը, որը ձեռք էր բերվել 30-ական թվականների լարված քաղաքական պայքարում։ Պատերազմը բանվորական շարժման մեջ արմատավորեց «ազգային միասնության» պատրանքները։

Պատերազմի ավարտումով նախապատերազմյան տասնամյակի մարտական ոգին կարճ ժամանակով աշխուժացավ։ Ջեռնարկատերերին աշխատավարձի բարձրացման մասին պահանջներ ներկայացվեցին։ Ի պաշտպանություն դը-

բանց սկսվեց ԱՄՆ-ի պատմության մեջ խոշորագույն գործադուլային կամպանիան։ Եթե ԱՄՆ-ի պատերազմին մասնակցելու ժամանակամիջոցում գործադուլների հետևանքով կորցվել է ընդամենը 36 մլն. աշխատօր, ապա 1946 թ. գործադուլներին մասնակցել է 4,6 մլն. մարդ և կորցվել է 116 մլն. մարդ-օր։ Մասնակիցների և աշխատաժամանակի կորստի քանակությամբ այդ թվականը ռեկորդային եղավ ԱՄՆ-ի ամբողջ պատմության մեջ։ Բանվորները հասան ամերիկյան պատմության մեջ աշխատավարձի ամենամեծ բարձրացմանը, որը նպաստեց վճարունակ պահանջարկի ընդլայնմանը։

Իր ամբողջ նշանակությամբ հանդերձ զանգվածային գործադուլային շարժումը դուրս չեկավ տնտեսական պահանջների շրջանակներից։ Դրան ավելի մեծ քաղաքական հնչեղություն տալու կոմունիստների կատարած փորձերը չհանդիպեցին ԱԱԿ-ի նույնիսկ ձախ ցենտրիստական շրջանների աջակցությանը, չխոսելով ԱԱՖ-ի ղեկավարության մասին։ Անցյալում ևս աչքի չընկնելով դասակարգային պայքարի նկատմամբ լայն հայացքով, ԱԱՖ-ի պարագլուխներն այն է՛լ ավելի նեղացրին հենց այն պահին, երբ կյանքը պահանջում էր քաղաքական կարևորագույն պրոբլեմների առաջադրում և լուծում։ Ու. Գրինը բանվորներին «ազգային միասնության բարձր աստիճանի» էր կոչում, հորդորում «ազատ նախաձեռնությունը» պաշտպանել ԱԱԿ-ի ձախ թևի և կոմունիստական կուսակցության «ծայրահեղականներից»։

Դրությունն ավելի բարդ էր ԱԱԿ-ում։ Այդ արհմիութենական միավորման գոյության առաջին տասը տարվա ընթացքում նրա մեջ ղեկավար դիրքեր էին գրավում ցենտրիստներն ու ձախերը, որոնք իրենց բոլոր տարաձայնություններով հանդերձ կարողանում էին շատ հարցերում պահպանել միասնությունը։ Սակայն պատերազմից հետո այդ կոալիցիան փլուզվեց։ Ցենտրիստները, Ֆ. Մերեյի գլխավորությամբ, սկսեցին զիջել Ու. Ռեյտերի, Դ. Կերիի, Է. Ռիվի գլխավորած ավելի ազդեցիկ ուժերին և սրընթաց գլորվել դեպի աջ, հետևելով «ազգային շահերի» գաղափարներին։ Ցենտրիստներն աջերի հետ միասին այժմ խզում էին նախապատրաստում և՛ իրենց ձախ թևի, և՛ Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի հետ, որի ստեղծմանը ԱԱԿ-ը գործուն մասնակցություն ունեցավ հակառակ ԱԱՖ-ի պարագլուխների դիմադրությանը։ ԱԱԿ-ի ձախ ուժերը ջանում էին թույլ չտալ կենտրոնի անցմանը ԱԱՖ-ի պարագլուխների դիրքերին։ Այդ բանում նրանց ակտիվորեն աջակցում էր կոմունիստական կուսակցությունը։

Ճակատը շրջելով ձախ ուժերի դեմ, ԱԱԿ-ն ու ԱԱՖ-ը իրենց դինաթափեցին ռեակցիայի դեմ, մասնավորապես Տաֆտ-Հարթլիի օրենքի դեմ մղվող պայքարում։ ԱԱՖ-ի պարագլուխները պամֆլետային կամպանիայից այն կողմ չանցան։ ԱԱԿ-ի ղեկավարությունը ավելի գործուն միջոցներ կիրառեց, բայց դրանք էլ էին ձախողման դատապարտված՝ արհմիութենական վերնախավերի վարած «ազգային նպատակներին» հասնելու ընդհանուր կուրսի կապակցությամբ։ Տաֆտ-Հարթլիի օրենքը բոյկոտի ենթարկելու մասին Ջ. Լյուիսի կոչը մերժվեց։ Ենթարկվելով «ազգային շահերին», արհմիութենական շարժման ղեկավարությունը թաղեց արհմիութենական անդամությունն ընդլայնելու իր պրոլանները։

1945 թ. ամերիկյան արհմիությունների շարքերում հաշվվում էր 14 322 մլն. անդամ, իսկ 1949 թ. նույնիսկ ավելի քիչ՝ 14 300 մլն. (7 մլն. ԱԱՖ-ում, 5 մլն. ԱԱԿ-ում, մյուսները անկախ միություններում)։ Բուրժուական պրոպագանդան և արհմիութենական աջ պարագլուխները օգտագործելով «կոմունիստական սպառնալիքի» խրտվիլակը, 1947 թ. հասան ձախ ուժերի լուրջ թուլացմանը։

Առաջացած իրադրության մեջ չէր կարելի հույսը դնել անկախ քաղաքական գործողությունների գաղափարը և երրորդ կուսակցության համար նախապատերազմյան շարժումների ավանդույթը վերածնելու ուղղությամբ կոմունիստների կատարած փորձերի հաջողության վրա։ Կուսակցության XIV համագումարում (1948 թ.) որպես «կենտրոնական» գաղափար առաջ քաշվեց «հակամոնոպոլիստական ամենալայն և խաղաղ կոալիցիայի» ստեղծման գաղափարը, կոալիցիա, «որտեղ բանվոր դասակարգը պետք է խաղա առաջատար դեր»։ Կուսակցությունը ենթադրում էր, որ կոալիցիայի հիմք կդառնան ԱԱԿ-ի առաջադեմ միությունները, որոնց կհարեն բոլոր արհմիություններին պատկանող միլիոնավոր բանվորներ։ Բայց արհմիութենական շարժման աջ ուժերը խեղդեցին այդ գաղափարը։

1948 թ. ընտրությունները

1948 թ. ընտրությունների պահին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ կառավարող շրջանները, որոնց աջակցում էր արհմիութենական շարժման պաշտոնական ղեկավարությունը, կանգնած էին «սառը պատերազմի» և կոմունիզը «զսպելու» պլատֆորմի վրա։ Ներքին քաղաքականության մեջ մնում էին բավական խոր տարաձայնություններ պետական-մոնոպոլիստական ռեալականության հետ քաղաքական կուրսը հարմարեցնելու ուղիների վերաբերյալ։ 30-ական թվականների սոցիալական ժառանգության մասին եղած սուր վիճաբանություններում ուռուցիկ կերպով ներկայացան ռեակցիոներները և ավելի անկատ՝ լիբերալները, «նոր կուրսի» էպիգոնները։

Պրեզիդենտի թեկնածու առաջադրելով Նյու Յորքի նահանգապետ Թ. Դյուիին, հանրապետականները հաստատապես համոզված լինելով հաղթանակում, նրան տրամադրեցին ռեֆորմների պլատֆորմ, որոնք իրենք էլ հենց տորպեդահարել էին կոնգրեսում, որտեղ նրանք ունեին մեծամասնություն։

Դեմոկրատական կուսակցությունը 1948 թ. ընտրություններին գնաց պառակտված վիճակում։ Ձախից հանդես էր գալիս Հ. Ուոլեսի խումբը, որը ձևավորվեց որպես առաջադիմական կուսակցություն։

Հ. Ուոլեսի կուսակցության ծրագիրը կառուցված էր «առաջադիմական կապիտալիզմի» վերաբերյալ ձախ բեյնսական թեզիսի վրա։ Հ. Ուոլեսը աներկմիտ դատապարտում էր ոչ միայն «ռեակցիոն կապիտալիզմը», այլև սոցիալիզմը, մի բան, որը հերքում է բուրժուական պրոպագանդայի հերյուրանքները կոմունիզմի հանդեպ նրա հակվածության մասին։ Նա միայն դատապարտում էր կոմունիստների քաղաքական հալածանքը և դատական հետապնդումները, ինչպես նաև չէր հրաժարվում ընտրությունների ժամանակ կոմունիստական կուսակցության ցույց տված աջակցությունից։ Ձախ թևում հանդես եկավ ևս մեկ կազմակերպություն՝ «Ամերիկացիները հանուն դեմոկրատական գործողությունների» (ԱԴԳ), որը բաժանելով Հ. Տրումենի արտաքին քաղաքականության հիմունքները, պահանջում էր սոցիալական ռեֆորմներ և վճռական պայքար ներքին ռեակցիայի դեմ։ Երբ կուսակցության համագումարը կետ ընդունեց նեգրերի քաղաքացիական իրավունքների մասին, դեմոկրատներից բաժանվեց նրանց հարավային, ռասիստական թևը։ Հարավի ռեակցիոներները՝ դիքսիկրատներն ստեղծեցին «Նահանգների իրավունքներ» կուսակցությունը և պրեզիդենտ առաջադրեցին Հարավային Կարոլինայի նահանգապետ Ս. Թերմոնդին։ Դեմոկրատների թեկնածու Հ. Տրումենը մնաց առանց ծայրաթևերի պաշտպանության։ Սակայն դեմոկրատների պլատֆորմը Տաֆտ-Հարթլիի օրենքը վերացնելու և մի շարք ռեֆորմներ իրականացնելու իր խոստումով Հ. Տրումենին ապահովեց արհմիությունների պաշտպանությամբ։ Նրա արտաքին քաղաքական մասը և, ամենագլխավորը, կառավարության արտաքին քաղաքական պրակտիկան Հ. Տրումենին լայն աջակցություն ստեղծեցին բուրժուական

շրջաններում։ Դրան նպաստեց նաև դեմոկրատների պետական-մոնոպոլիստական ամբողջ փիլիսոփայությունը։

Հաղթանակ տարավ Հ. Տրումենը։ Դեմոկրատներն իրենց վերադարձին կոնգրեսի երկու պալատների մեծամասնությունը։ Պետական-մոնոպոլիստական սկզբունքներն այս անգամ է՛լ ավելի ուժեղ գտնվեցին, քան անհատապաշտական գաղափարախոսությունը, որը ներկայացված էր հանրապետական կուսակցության մեջ։ Այդ նույն սկզբունքները գերակշռեցին Հ. Ուոլեսի ռադիկալ-առաջադիմական ծրագրի նկատմամբ, որի ետևից գնաց մեկ միլիոնից փոքր-ինչ ավելի ընտրող։

ՌԵԱԿՑԻԱՅԻ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՍՐՈՒՄԸ (1949—1954)

Հ. Տրումենի «արդարացի կուրսի» ձախողումը։ Հակակոմունիստական հիստերիան

1949 թ. հունվարին պրեզիդենտ Հ. Տրումենը կոնգրեսին հղեց մի ուղերձ, որը պարունակում էր ռեֆորմների լայն ծրագիր։ Սպիտակ տան այդ ուղերձը և առանձին մինիստրությունների՝ դրան հետևած առաջարկությունները ի մի հավաքեցին 1945 թ. աշնանից առաջադրվող սոցիալական ռեֆորմատորության նախագծերը։ Դրանք նախատեսում էին Տաֆտ-Հարտլիի օրենքի վերացում, սոցիալական ապահովության էական ընդլայնում, բուժապահովության համակարգի սահմանում, ֆինանսական օգնության տրամադրում նահանգներին՝ կրթությունը բարելավելու համար, աշխատավարձի նվազագույնի ավելացում, էժան բնակարանների շինարարության ծավալում՝ նվազ եկամուտներ ունեցող ընտանիքների համար, աշխատանքի վարձակալության ժամանակ խտրականությունը կանխելու գծով մշտական հանձնաժողովի ստեղծում, հիդրոէներգաշինարարության լայն ծրագրի իրականացում և այլն։ Բացի, այդ, առաջարկվում էր «ֆերմերական եկամտի ստանդարտը» պետական վարկավորման օգնությամբ պահել նախորդ 10 տարվա մակարդակի վրա։ Քանի որ այդ 10 տարվա մեջ մտցվում էին ֆերմերական բարձր եկամուտներով պատերազմի տարիները, ֆերմերները, հատկապես մանր և միջին ֆերմերները բարյացակամորեն ընդունեցին Զ. Բրեննեի՝ գյուղատնտեսության մինիստրի «պլանը»։

Բայց Հ. Տրումենին հաջողվեց իր «արդարացի կուրսից» իրականացնել միայն երեք միջոցառում, այն էլ ոչ լիովին։ Միջոցներ հատկացվեցին ցածր եկամուտներ ունեցող ընտանիքներին 810 հազար բնակարանների շինարարության համար։ Բացի այդ, կոնգրեսը ժամավճար աշխատավարձի նվազագույնը 40 ցենտից բարձրացրեց մինչև 75 ցենտ։ Այդ քայլի նշանակությունը չպետք է չափազանցացնել ոչ միայն այն պատճառով, որ նոր չափը ևս շատ էր ետ մնում կոլեկտիվ-պայմանագրային նվազագույն դրույքներից, այլև ինֆլյացիայի պատճառով։ Նույնիսկ պաշտոնական տվյալներով 1945—1950 թթ. գները բարձրացել էին 33%-ով։ Կառավարությունը հասավ սոցիալական ապահովության օրենքի գործողությանը ենթակա անձանց շրջանակի ընդլայնմանը 10 մլն. մարդով և թոշակային վճարումների չափերի ավելացմանը, բայց չկարողացավ հաղթահարել ռեակցիաների դիմադրությունը բուժապահովման հարցում։

Բոլոր թվարկված միջոցառումները զիջում էին հետպատերազմյան ինֆլյացիայի պայմաններում աշխատավորության պահանջներին և միևնույն ժամանակ պետական-մոնոպոլիստական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներ էին։ Մնացած մասում «արդարացի կուրսի» ծրագիրը մերժվեց։ Նրա ձախողումը բացատրվում է մի ամբողջ շարք գործոններով։

Արդեն 1948 թ. աշնանը էկոնոմիկայում ի հայտ եկան հետպատերազմյան առաջին ճգնաժամի նախանշանները։ Այդ պահին սպառվեցին տնտեսական ակտիվության խթանման այնպիսի ժամանակավոր աղբյուրներ, ինչպես ռազմական ժամանակվա իրացվելիք կուտակումների օգտագործումը, քաղաքացիական արտադրության ճյուղերի զարգացումը, սպասարկման ցանցի ընդլայնումը, արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը, համաշխարհային կապիտալիստական շուկայի պահանջարկը։ Հետպատերազմյան առաջին տարիների տնտեսական վերելքն զգալի չափով պահպանվում էր հիմնական կապիտալի նորացման շնորհիվ, որի տեմպերի նվազումը 1948 թ. խիստ կրճատեց իր խթանող ազդեցությունը։ 1949 թ. արդյունաբերական արտադրության ծավալն ընկավ 6%-ով, իսկ եթե անկումը չափենք ցիկլի բարձրագույն կետից (1948 թ. հուլիս) մինչև ցածրագույնը (1949 թ. հոկտեմբեր), ապա այն կազմեց 10%։ 1949 թ. ճգնաժամը հասցրեց գործազրկության աճի։ Գործազուրկների թիվը հասնում էր մինչև 4 միլիոնի, որը կազմում էր ամբողջ բանվորական ուժի 6%-ը։ Էկոնոմիկայի անկումն առաջ բերեց աշխատավարձի նվազում և մոնոպոլիաների շահույթների կրճատում։ Դա սրեց և՛ դասակարգային, և՛ հասարակական-քաղաքական պայքարը։

Միջազգային կյանքի իրադարձություններն է՛լ ավելի բարդացրին ԱՄՆ-ի ներքաղաքական իրադրությունը։

ՍՍՀՄ-ում ատոմային ռումբի փորձարկումը և հեղափոխության հաղթանակը Չինաստանում օգտագործվեցին բուրժուական պրոպագանդայի կողմից լուրեր տարածելու այն մասին, որ ամերիկացիները «կորցրել» են Չինաստանը, և ատոմային ռումբի գաղտնիքները «հանձնվել են» ռուսներին։

Սանձը կտրած ռեակցիոներները հանդես եկան՝ պահանջելով գտնել նշված «կորուստների» մեղավորներին։ Սկսեցին ամենուրեք մեղավորներ որոնել, հասնելով մինչև հենց պրեզիդենտի շրջապատը։ Հակակոմունիստական հիստերիայի բորբոքման գործում կարևոր դեր խաղաց «Օ. Հիսի գործը»։ Օ. Հիսը նախկինում աչքի ընկնող դիրք էր գրավում պետական դեպարտամենտում, իսկ հետո դարձավ «խաղաղության պահպանության համար Կարնեգիի ֆոնդի» պրեզիդենտ։ Նա արիստոկրատական-մտավորական ընտրանու տիպիկ ներկայացուցիչներից էր։ 1948 թ. օգոստոսին նրա դեմ սկսվեց մի «գործ», որով նա մեղադրվում էր որպես «ռուսական լրտես»։ Սակայն շուտով «գործը» դադարեցրին մեղադրանքի բացահայտ կեղծիքի պատճառով։ Պրեզիդենտ Հ. Տրումենը և պետական քարտուղար Դ. Աչեսոնը հրապարակայնորեն ծաղրի ենթարկեցին դատավարության կազմակերպիչներին։ Բայց «կոմունիստական սպառնալիքով» ահաբեկելու զանգվածային կամպանիայի սանձազերծմամբ «գործին» վերստին ընթացք տրվեց։ 1950 թ. Օ. Հիսին բանտ նետեցին։ Դա այն տարիներին բնորոշ հատկանիշ էր։ Պրովակատորներն ու կարիերիստները ծավալեցին «կոմունիստների» մատնությունների կամպանիա, իսկ «կոմունիստների» կարգն էին դասվում առաջադիմորեն մտածող ցանկացած մարդիկ և պարզապես մատնիչներին անձեռնտու անձինք։

Հակակոմունիստական արշավի մեջ ներգրավվեցին բոլոր նրանք, ովքեր չէին կարողանում գտնել աշխարհում կատարվող հեղափոխական-դեմոկրատական փոփոխությունների, բուրժուական հասարակության մասնավոր կապիտալիստական հիմքերի ճգնաժամի խորացման, հենց ԱՄՆ-ի պետական-մոնոպոլիստական զարգացման էության ռացիոնալ բացատրությունը։ Դա օգտագործվեց կառավարող շրջանների կողմից։ 1949 թ. հունվար-հոկտեմբերին կազմակերպելով կոմունիստական կուսակցության պարագլուխների դատավարություն, ռեակցիոներները ԱԱԿ-ին ստիպեցին իրենց շարքերից վտարել 11 առաջադեմ արհմիություն, որոնցում հաշվվում էր ավելի քան 1 մլն. անդամ։ Դա կա-

տարվեց այն պատրվակով, թե իբր դրանց մեջ թափանցել են կոմունիստներ։

«Չորրորդ կետի ծրագիրը»։ ՆԱՏՕ։ Ինտերվենցիան Կորեայում

«Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» օգնությամբ ամրապնդելով իր դիրքերը Եվրոպայում, ԱՄՆ-ի կառավարությունն ակտիվացրեց քաղաքականությունը գաղութային և կիսագաղութային երկրների նկատմամբ։

Այդ քաղաքականությունը ձևակերպվեց կառավարության գործողությունների չորրորդ կետում, որը նշեց Հ. Տրումենը՝ 1949 թ. հունվարի 20-ին նոր ժամկետով ստանձնելով պրեզիդենտական լիազորությունները։ Այն պետք է դառնար, ըստ պրեզիդենտի արտահայտության, «կոմունիզմի դեմ ուղղված ուժեղագույն հակաթույն»։ Դրա համաձայն գաղութային և կախյալ երկրներին տեխնիկա-տնտեսական օգնություն ցույց տալը պլանավորվեց այն պայմանով, որ նրանք «դեմոկրատիա կսովորեն» ամերիկյան ուսուցիչների վերահսկողությամբ։ «Օգնություն» ցույց տալու գործի մեջ ակտիվորեն ներգրավվեց մասնավոր կապիտալը։ Իսկ ինքը՝ պետությունը սահմանափակվեց 1952 թ. 147 մլն. դոլարի և 1953 թ. 156 մլն. դոլարի հատկացումներով։ «Չորրորդ կետի ծրագիրը» ձևակերպեց ամերիկյան նեոգաղութատիրության հիմունքները, որի տարիները հանդես էին եկել դեռ մինչև II համաշխարհային պատերազմը։

ԱՄՆ-ի կառավարությունը, արտաքին քաղաքական պլանների և գործողությունների ամբողջ մասշտաբայնությամբ հանդերձ, չէր կարող իր համաշխարհային դիրքերը ամուր համարել առանց ռազմա-քաղաքական հեգեմոնիա հաստատելու Եվրոպայում։ 1949 թ. ապրիլի 4-ին ստորագրելով Հյուսիս-atլանտյան պակտը (ՆԱՏՕ), ԱՄՆ-ն իր պատմության մեջ առաջին անգամ խաղաղ ժամանակ ռազմական դաշինքի մեջ մտավ եվրոպական պետությունների հետ։ Կանխատեսելով սենատում պակտի վավերացման դժվարությունները, Հ. Տրումենը բանակցություններ վարող պատվիրակության մեջ մտցրեց նաև հանրապետականների։ Արտաքին գործերի հանձնաժողովում, որը ղեկավարում էին դեմոկրատ Թ. Կոننելին և հանրապետական Ա. Վանդենբերգը, պայմանագրի տեքստը փոխվեց այն ձևով, որ ԱՄՆ-ին իրավունք էր տալիս յուրովի մեկնաբանել նրա մի կարևորագույն հոդվածը, որը նախատեսում էր կողմերի պարտավորությունները «ագրեսիայի» դեպքում։ Այդ և մյուս ուղղումները պետք է բավարարեին Ռ. Տաֆտին և նրա կողմնակիցներին, որոնք հանդես էին գալիս ՆԱՏՕ-ի ստեղծման դեմ, գտնելով, որ ԱՄՆ-ը կարող է ներգրավվել կոնֆլիկտի մեջ իր համար խորթ շահերի պատճառով։ Սակայն Ռ. Տաֆտը «պաշտպանում էր երեկվա օրը»։ Նրա ետևից գնացին միայն 10 հանրապետական սենատորներ, և 1949 թ. հունիսի 21-ին պայմանագիրը վավերացվեց ձայների գերակշռող մեծամասնությամբ (82 դեմ 13)։

«Չորրորդ կետի ծրագիրը» և ՆԱՏՕ-ն եզրափակեցին կապիտալիստական աշխարհի ճակատագրի համար ԱՄՆ-ի գլոբալ «պատասխանատվության» իրականացման միջոցառումները։ Թվում էր, թե ամեն ինչ նախատեսված է այն բանի համար, որպեսզի պաշարել հեղափոխական և առաջադիմական պրոցեսները։ Բայց Չինաստանում տեղի ունեցած հեղափոխության հաղթանակը, ԳԴՀ-ի կազմավորումը, մի շարք երկրներում սոցիալիզմի հաջող շինարարությունը ցուցադրեցին «զսպման» անզորությունը։

Հ. Տրումենի քաղաքականությունն սկսեց անզուսպ հարձակումների ենթարկվել աջից, հատկապես Հեռավոր Արևելքում ունեցած «կորուստների» համար. Հ. Տրումենը չհետևեց մայրցամաքային Չինաստան ներխուժելու պահանջներին, որոնք տարածված էին ծայրահեղ ռազմամոլների միջավայրում, նրանք իրենց ռազմական հերոսն ունեին ի դեմս Դ. Մակարթուրի։ Բայց երբ 1950 թ. հունիսին Կորեայում քաղաքացիական պատերազմ սկսվեց. Հ. Տրումենը անհապաղ միջամտեց։

Կորեական ինտերվենցիան անջնջելի հետք թողեց ԱՄՆ-ի ներքաղաքական զարգացման վրա։ Այսուհետև միլիտարիզմը վերածվեց մի հատուկ ինստիտուտի, առանց որի ո՛չ բիզնեսը, ո՛չ կառավարող շրջաններն այլևս չէին պատկերացնում երկրի տնտեսական զարգացման հեռանկարները։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը ձեռք էր բերում ռազմապետական-մոնոպոլիստական կապիտալիզմի գծեր։

Ամերիկյան իմպերիալիստների պլանների ձախողումն այդ պատերազմում խորացրեց ներքաղաքական ճգնաժամը։ Կատաղած բուրժուաների լայն շրջանները հիմա արդեն ավելի լրջորեն, քան 1949 թ., հավատացնում էին, որ իրենց կառավարում են «դավաճաններն» ու «կոմունիստները», որոնք գիտակցաբար երկիրը հրում են դեպի փակուղի և Դ. Մակարթուրին թույլ չեն տալիս շահել պատերազմը։

Դ. Մակարթուրն իր բարեկամներին ու երկրպագուներին ոմբակոծում էր նամակներով, որոնցով պահանջում էր պատերազմ սկսել Չինաստանի և ՍՍՀՄ-ի դեմ՝ ատոմային ռումբերի կիրառմամբ։ Դա հայտնի դարձավ հասարակայնությանը։ Հ. Տրումենը ստիպված էր հանդգնել ազատելու սանձը կտրած գեներալին, որը իսկական փոթորիկ բարձրացրեց։ Լայնորեն տարածված էր «կոմունիստներին ծախված» պրեզիդենտին և Դ. Աչեսոնին դատի տալու պահանջը։ ԱՄՆ վերադարձած Դ. Մակարթուրին ցնծալից հանդիպում կազմակերպվեց։ Կոնգրեսը հոտնկայս ողջունեց գեներալ-բոնապարտիստին և 30 անգամ բուռն ծափահարություններով ընդհատեց նրա 34-րոպեանոց ճառը։

Հ. Տրումենի ցուցումով պենտագոնը մի շարք փաստաթղթեր բերեց, որոնք հաստատում էին Դ. Մակարթուրի գլխավորությամբ ծայրահեղ ռազմամոլների ավանտյուրիզմը։ Դա փոքր ինչ շափավորեց համաշխարհային պատերազմի սանձազերծման կողմնակիցներին, բայց և քննադատությունը պրեզիդենտի հասցեին շարունակվում էր։

Հիստերիայի մթնոլորտում տեղի էին ունենում 1952 թ. ընտրությունները։ Հ. Տրումենին առաջադրելու մասին լրջորեն մտածել անգամ չէր կարելի։ Դեմոկրատների անխուսափելի պարտության բաժակը ընդունեց Իլլինոյսի նահանգապետ լիբերալ է. Ստիվենսոնը։ Առաջադրելով ժողովրդականություն վայելող գեներալ Դ. Էյզենհաուերին, որը խոստացել էր վերջ տալ այդ ժամանակ ժողովրդականություն չվայելող պատերազմին, հանրապետականները ստացան հաղթելու իրական շանսեր։ Հակակոմունիստական հիստերիան և «կարմիրների» հալածանքն այնքան ուժեղ էին, որ Դ. Էյզենհաուերին օգնելու համար տրամաբանորեն պահանջվում էր այդ կամպանիայի առաջատար դրոշակակիրներից մեկին դնել նրա մոտ։ Հանրապետականները նվաճեցին ոչ միայն Սպիտակ տունը, այլև կոնգրեսի զույգ պալատները։ Նման բան չէր եղել 1928 թ. ի վեր։

«Սառը պատերազմի» հետագա սրումը

Վաշինգտոնում տեղի ունեցած կառավարության փոփոխությունը արտաքին քաղաքական երկակի արձագանք ունեցավ։ ԱՄՆ-ի ժողովրդական լայն զանգվածները համոզված էին, որ գեներալ Դ. Էյզենհաուերը կարող է վերջ տալ կորեական պատերազմին և թույլ չի տա համաշխարհային կոնֆլիկտի սանձազերծում։

Գեներալն, իրոք, հակված էր խաղաղության կողմը, որովհետև չէր տեսնում հաղթական ելքի հնարավորություն։ Բայց հանրապետական կուսակցության ղեկավարությունը դեպի խաղաղություն էր գնում ամենևին էլ ոչ խաղաղ լոզունգներով։ 1952 թ. ընտրական կամպանիայում այն անթերկմտորեն հայտարարեց, որ Կորեայում հաշտություն կնքելով, նա վերցնելու է «սովետական տիրապետության» տակ գտնվող ժողովուրդներին կոմունիզմից «ազատագրելու» կուրս։ Ջ. Դալեսը և Դ. Էյզենհաուերը «զսպման» դոկտրինան համարում էին արատա-

վոր, որովհետև այն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը դատապարտում էր առանց նախաձեռնության հետևելու այն իրադարձությունների ընթացքին, որը նրանց վրին «փաթաթում» էին Սովետական Միությունը և «համաշխարհային կոմունիզմը»։ «Ազատագրման» դոկտրինան, նրանց կարծիքով, իրենց դարձնում է դրության տերը։ Ավելի մեծ համոզվածության համար Ջ. Դալեսը այն լրացրեց «զանգվածային հատուցման» թեզիսով։

1954 թ. հունվարի 12-ին նա հանդես եկավ իր ամբողջ դիվանագիտական գործունեության մեջ ամենառադմատենչ ճառով։ Նա այնտեղ նշեց, որ ցանկացած «ճգնաժամային իրադրության» մեջ ԱՄՆ-ը դիմելու է «զանգվածային հատուցման ահաբեկիչ ուժին» և գործելու է «անհապաղ մեր ընտրած միջոցներով ու վայրերում»։ Այդ ելույթը, որը նպատակ ուներ ահաբեկել «կոմունիստական աշխարհը», ամենից շատ հենց ամերիկացիներին վախեցրեց։ Դա «սառը պատերազմի» զենիթն էր։

Իշխանության գլուխ գտնվելու մեկ տարվա ընթացքում հանրապետականները իրենց ուլտրաագրեսիվ, միլիտարիստական լոզունգներով ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը հերթական փակուղու մեջ մտցրին։ ՍՍՀՄ-ի հզորությունը, որը վիթխարի հաջողություններ էր հասել միջուկային զենքի արտադրության ասպարեզում, գաղութային ժողովուրդների ազատության անդուսպ ձգտումը, դաշնակիցների չկամենալը չափազանց ամուր կապվելու «սառը պատերազմի» մարտակառքին՝ նրա դալեսյան կառուցվածքով հանդերձ, հենց ԱՄՆ-ում առաջացած բողոքը միլիտարիզմի ծայրահեղությունների դեմ՝ այս բոլորը Դ. Էյզենհաուերի կառավարությանն ստիպեց փոքր ինչ չափավորել 1953—1954 թթ. վերցրած տոնը։

1954 թ. ապրիլին Ջ. Դալեսը ստիպված էր հանդես գալ հասարակայնությանը հանգստացնող մի հոդվածով, որտեղ «սառը պատերազմի» գլխավոր զինակիրը վկայակոչում էր իրեն ոչ հատուկ բառապաշարի այնպիսի տերմիններ, ինչպես «ճկունությունը», «զգուշությունը» պատերազմի պրոբլեմներին անդրադառնալու ժամանակ։ Երբ ֆրանսիական գաղութարարները 1954 թ. հեռանում էին Հնդկաչինից, Դ. Էյզենհաուերը չպաշտպանեց պատերազմի դիմելու Ջ. Դալեսի և Ռ. Նիքսոնի առաջարկությունները և գերադասեց գնալ բանակցությունների։

ԱՄՆ-ի կառավարությունը գործնականորեն վերադարձավ «զսպման դոկտրինայի» հունը, թեև պաշտոնապես այն չէր ընդունում։ 1954—1955 թթ. Ջ. Դալեսը իրականացրեց ագրեսիվ գործողությունների նոր սերիա՝ ստեղծեց ՍԵԱՏՕ-ն, շարունակում էր սպառնալիքները ՉԺՀ-ի հասցեին, ինտերվենցիա կազմակերպեց Գվատեմալայում և այլն։ Բայց այդ քայլերը «կենտրոնին» հասցված հարվածներ չէին, որը մինչ այդ խոստացել էին հանրապետականները։ Իմպերիալիստական տեսակետից, «կոմունիստական հզորության կենտրոնի», այսինքն ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները զարգանում էին ոչ այնպես, ինչպես պետք էր։ Օրակարգի մեջ էին դրվում նույնիսկ բանակցությունները ՍՍՀՄ-ի ղեկավար գործիչների հետ։

Մակարտիզմ

Ռեակցիայի և շովինիզմի սանձարձակությունները 1950—1954 թթ. ստացան «մակարտիզմ» անունը՝ Վիսքոնսինից հանրապետական սենատորի անունով, որին առաջատար դեր էր պատկանում այդ կամպանիայում։ Բայց մակարտիզմը հանգեցնել, ինչպես այդ արվում է բուրժուական պատմագրության մեջ, Մակարտիի գործունեությանը, որը հայտարարում էր, թե ինքը բանն ավարտելու է Սպիտակ տնով կամ բանտով, միանգամայն սխալ կլիներ։ Մակարտիզմի ծագումը չի կարելի բացատրել նաև միայն կորեական պատերազմով։

Մակարտիզմն ամերիկյան հասարակության սոցիալ-քաղաքական խոր ճգնաժամի արտահայտությունն էր, խոշոր և մանր բուրժուազիայի այն խավերի սոցիալական հոգեբանության արտահայտությունը, որոնք չկարողացան հարմարվել պետական-մոնոպոլիստական ռեալականությանը։

Մակարտիզմի համար առանձնապես նպաստավոր հող էր ստեղծում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի միջազգային ասպեկտը։ Ո՛չ կոմունիզմի «զսպումը», ո՛չ էլ «դուրս մղումը» չէին կարող կանգնեցնել պետությունների սոցիալիստական սիստեմի ամրապնդումը և ամբողջ աշխարհում կոմունիստական շարժման աճը։ Քաղքենու պատկերացումների մեջ չէր տեղավորվում այն, որ ԱՄՆ-ը զգում էր «ուժի անզորություն»։ Այդ տրամադրություններն իրենց համար շահավետ ձևով օգտագործեցին ռազմաարդյունաբերական մոնոպոլիաները, որոնք «ուժի անզորությանը» առաջարկում էին պատասխանել է՛լ ավելի մեծ ուժով։

Մակարտիզմը թափանցեց ամերիկյան հասարակության սոցիալական, քաղաքական և գաղափարախոսական ամբողջ կառուցվածքի մեջ։ Հակակոմունիզմն ընդհանուր լոզունգ էր, որն օգտագործվում էր ոչ միայն կոմունիստների դեմ, այլև բոլոր առաջադիմական սոցիալական խմբերի, երևույթների և ինստիտուտների դեմ պայքարելու համար։ Հակակոմունիզմի դրոշի ներքո պայքար էր ծավալվում առաջադեմ արհմիությունների, լիբերալ մտավորականության դեմ, աշխատավորների պահանջները հաշվի առնող ռեֆորմների դեմ, սոցիալիստական պետությունների հետ բանակցությունների քաղաքականության դեմ։

Լինելով անհատապաշտության հուսահատ ճիչը, բուրժուադեմոկրատական ազատությունների ճնշման գործիքը, «կոմունիզմի» դեմ համաշխարհային պատերազմի սանձազերծման ձայնափողը՝ մակարտիզմը չէր կարող հակասության մեջ չմտնել Հ. Տրումենի քաղաքականության հետ, որը պետական-մոնոպոլիստական կուրսն էր, իր մեջ պարունակում էր լիբերալ ռեֆորմատորության տարրեր և «զսպումը» չէր հասցնում համաշխարհային պատերազմի, ինչպես այդ ապացուցվեց Դ. Մակարտուրի ազատումով։ Բայց անցկացնելով տարաբաժանման այդ գիծը, չպետք է ուշադրությունից բաց թողնել մակարտիզմի ընդհանրությունը տրումենյան կուրսի հետ։ Ե՛վ ներքին, և՛ արտաքին քաղաքականության մեջ մակարտիստներն այլանդակ ծայրահեղությունների էին հասցնում կառավարության հետադեմ միտումները։ Հ. Տրումենն սկսեց «ստուգել լոյալությունը», իսկ մակարտիստները, շրջանցելով պրեզիդենտական վետոն, 1950 թ. սեպտեմբերի 23-ին ընդունեցին «Ներքին անվտանգության մասին» Մակարենի օրենքը, որը քայքայիչ գործողության նկատմամբ հսկողության հատուկ վարչության պարտականության մեջ էր մտցնում հետաքննությունների անցկացումը, «կոմունիստական գործողության» և «կոմունիստական ճակատի» կազմակերպությունների հայտնաբերումն ու գրանցումը՝ սրանց ու նրանց անդամներին զրկելով հիմնական քաղաքացիական իրավունքներից։ Հ. Տրումենը կարգադրություն արեց կոմկուսի պարագլուխներին դատել որպես օտարերկրյա գործակալների, իսկ մակարտիստները, դարձյալ հակառակ նրա վետոյի, 1952 թ. ընդունեցին Մակարեն-Ուոլտերի օրենքը իմիգրացիայի սահմանափակման մասին, որը գերհագեցված էր հակակոմունիստական հոդվածներով։

1952 թ. ընտրություններում հանրապետականների տարած հաղթանակով մակարտիզմը մոտեցավ պաշտոնական կառավարական կուրսին։ 1953 թվականից սկսվեց մակարտիզմի ծաղկման ժամանակաշրջանը։ Առավել լիակատար ձևով այն մարմնավորվեց հետաքննության գծով կոնգրեսի զանազան հանձնաժողովների գործունեության մեջ, որոնք աշխատում էին Ջ. Մակարտիի

ընդհանուր ղեկավարությամբ։ Դրանք էլ հենց կազմում էին մակարտիզմի ողնաշարը։ Հանձնաժողովներում կենտրոնացվել էին մակարտիստական գլխավոր կադրերը, որոնք հիմնականում հանրապետականներ էին (Ու. Զեներ, Հ. Վելդ և ուրիշներ)։ Նրանց շարքերում, սակայն, կային նաև դեմոկրատներ՝ Ֆ. Ուոլտերը, Պ. Մակարենը։

Օգտվելով կոնգրեսում ունեցած իրենց բարձր դիրքից, մակարտիստների պարագլուխները հետաքննությունների ինստիտուտը վերածեցին երկրում եղած ամբողջ առաջադիմականի ու դեմոկրատականի հալածանքի։ Նրանք պրակտիկայի մեջ մտցրին իրենց հետաքննչական հանձնաժողովների արտադնա նիստերը, որին կանչվում էին իրենց անձեռնտու առաջադիմական հասարակական գործիչները։ Կոնգրեսի սեհարյուրակայինների ամեն մի ուղևորություն «դեպի տեղերը» հասցնում էր առաջադիմական կազմակերպությունների թուլացմանը, իսկ երբեմն էլ ջախջախմանը։ Մակարտիստական հալածանքների հենց եռուն շրջանում, 1953—1954 թթ., գրանցված է պարտությունների այն ամենաբարձր տոկոսը (34%), որ կրել են արհմիությունները ձեռնարկատերերի հետ բանակցություններ վարելու համար իրենց ներկայացուցիչներ ընտրելու ժամանակ։ Բավական էր, որ մակարտիստները ստվեր գցեին բանվորի կամ ծառայողի վրա, և նա անմիջապես կորցնում էր աշխատանքը, ենթարկվում հասարակական օստրակիզմի։ Մակարտիստների ցուցումով Դ. Էյզենհաուերը պետական ծառայությունից ազատեց 8808 «անհուսալի տարրերի»։ Մակարտիզմի ամենախայտառակ էջերն էին «Օպենհեյմերի գործը», խաղաղ ժամանակ առաջին անգամ «լրտեսների»՝ Ռոզենբերգ ամուսինների մահապատիժը, բուհերի լիբերալ պրոֆեսուրայի հալածանքը, գրքերի հրկիզումը և այլն։

Մակարտիզմը ԱՄՆ-ի դատական համակարգը վերածեց ռեակցիայի գործիքի։ Դատաքննության ժամանակ քաղաքացիական իրավունքների պահպանման դարավոր ավանդույթները մի կողմ նետվեցին։ Գերագույն դատարանում, որն այդ «խառնակ ժամանակներում» գլխավորում էր Ֆ. Վինսոնը, միայն Ա. Բլեկն ու Ու. Դուգլասը պահպանեցին հավատարմությունը դեմոկրատիզմին, գործերի քննարկման ժամանակ անփոփոխ կերպով մնալով փոքրամասնության մեջ։ Մակարտիզմի դարաշրջանը ամերիկյան լիբերալիզմի խայտառակությունն է, լիբերալիզմ, որը քննության չդիմացավ որպես քաղաքական հոսանք, չնայած նրա առանձին ներկայացուցիչների քաջարի դիմադրությանը ռեակցիային։ Լիբերալների անկման գագաթնակետը եղավ 1954 թ. «Կոմունիստների նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի ընդունման նախաձեռնությունը։

Այդ ակտով կոմունիստական կուսակցությունը զրկվում էր «ակն մի օրինական կազմակերպությանը տրվող իրավունքներից, արտոնություններից ու երաշխիքներից»։ Կուսակցության անդամ լինելը հայտարարվում էր հանցագործություն, որը պատժվում էր 10 հազ. դոլար տուգանքով և մինչև 5 տարի ժամկետով բանտարկությամբ։ Օրենքն ուներ նաև հակաարհմիութենական ուղղվածություն։ Նրա դրույթներն այն կազմակերպությունների վերաբերյալ, «որոնց մեջ թափանցել են կոմունիստներ», էականորեն ընդլայնեցին «քայքայիչ կազմակերպությունների» շրջանակը, որը գծագրվել էր Մակարենի օրենքով 1950 թ.։ Զախ արհմիությունները ընկնում էին հենց այդ ցուցակի մեջ։

Մակարտիզմը քայքայիչ ազդեցություն ունեցավ նաև աջ արհմիութենական ղեկավարության վրա, որը սեհարյուրակայինների հետ ունեցած առաջին իսկ շփման ժամանակ ցուցադրեց իր հակակոմունիզմը և դիմադրություն ցույց չէր տալիս ռեակցիոներներին։

Դեմոկրատական ուժերի պայքարը ռեակցիայի դեմ

1966 թ. ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության պարագլուխներից մեկը՝ Գ. Ապտեկերն ասում էր. «Մակարտիզմի ամենաեռուն շրջանում նրա դեմ հանդես եկողները քիչ էին, և նրանք առավելապես հետապնդվող ու հալածվող ձախ ուժերի ներկայացուցիչներն էին։ Բանականության, դեմոկրատիայի և ռադիկալիզմի գրոշն իջեցնելուց նրանց հրաժարվելը այնպիսի ծառայություն կատարեց, որի իսկական նշանակությունը դեռևս պետք է լիովին գնահատվի»։ Անհերևակայելի դժվարին պայմաններում, երբ նրանց գլխին տեղում էր բռնությունների ալիքը, կոմունիստներն իրենց մեջ ուժ գտան մակարտիզմին դիմադրելու համար։ Նրանք ճիշտ գնահատեցին նրա դասակարգային էությունը որպես վառ արտահայտված ֆաշիստական միտումներով մոնոպոլիստական ռեակցիա, որն իր սուր ծայրով ուղղված է բանվորական շարժման և դեմոկրատական ուժերի դեմ։ Կոմունիստները կոչ էին անում զանգվածային գործողություններ դիմել ռեակցիայի դեմ մղվող պայքարում։ Բայց նրանց հնարավորությունները խիստ սահմանափակ էին։ Դատարաններն ու բանտերը գրեթե միակ ինստիտուտներն էին, որոնք բաց էին կոմունիստների համար։ Դատավարությունների ժամանակ նրանք մտածող Ամերիկային կոչ էին անում կանգնեցնել մակարտիզմի մոլեգնումը։ 1953 թ. դեկտեմբերի 16-ին դիմելով այն դատավորին, որը նրան դատապարտեց 7 տարվա բանտարկության, Իսպանիայում մարտնչած Լինկոլնի անվան բրիգադի ղեկավար և երկրորդ համաշխարհային պատերազմի հերոս Ռ. Թոմպսոնն ասում էր. «Բոլոր մտածող մարդկանց համար, անկախ նրանց դիրքից, վաղուց արդեն ժամանակն է մտածելու, որ կոմունիստական կուսակցությունն արգելելու ուղղությամբ վերջին չորս տարվա ընթացքում ձեռնարկված փորձերը և երկրի իշխանությանը տիրելու մակարտիստական բանդայի սանձարձակ ձգտումը՝ միևնույն մեդալի երկու կողմերն են»։

Կոմունիստները մշտապես ընդգծում էին մակարտիզմի կապը Հ. Տրումենի ու Դ. Էյզենհաուերի ռեակցիոն-միլիտարիստական քաղաքականության հետ, չնույնացնելով կառավարությունը մակարտիզմի հետ։

Սակայն կոմունիստական կուսակցությունն ի վիճակի չեղավ մոբիլիզացնելու լայն զանգվածներին՝ ծայրահեղ ռեակցիայի դեմ պայքարելու համար։ Զախերի հեռացումը ԱԱԿ-ից և աջ պարագլուխների դիրքերի ուժեղացումը արհմիութենական երկու կենտրոններում կուսակցությանը զրկեցին բանվոր դասակարգի հետ ունեցած կապից։ 1950—1954 թթ. հակակոմունիստական օրենսդրությունը կոմունիստներին հնարավորություն չտվեց ավելի ակտիվորեն պայքարել մակարտիզմի և արհմիութենական շարժման մեջ ռեակցիոներների բռնադատման դեմ։ Նման պայմաններում կոմունիստները, որոնց ղեկավարները նստած էին բանտերում կամ գտնվում էին ՀՖԲ-ի մշտարթուն հսկողության տակ, թույլ տվեցին նաև տակտիկական որոշ սխալներ. չէին պրոպագանդում խաղաղ ձևով սոցիալիզմին անցնելու լոզունգներ, թեև դրանք ընդհանուր պլանով առաջադրվում էին 40-ական թվականների վերջերից. չհիմնավորված դաժան պահանջներ սահմանեցին կուսակցության շարքերն ընդունվելու համար, որը նույնպես թուլացրեց նրա կապը աշխատավորների հետ։

Արհմիութենական շարժումը ռեակցիայի տարիներին նույնպես մեծ դժվարություններ էր ապրում, որոնք սպառնում էին վերացնել տասնամյակների ընթացքում ձեռք բերված բոլոր նվաճումները։ Այդ ժամանակ, հատկապես կորեական պատերազմի ժամանակ, ամեն մի գործադուլ դիտվում էր որպես դավաճանություն։ Եվ այն բանը, որ գործադուլների դիմելով բանվորները շարունակում էին պաշտպանել իրենց շահերը, առավել զորեղ հարված եղավ մակարտիզմի դեմ։ Ռեակցիոներներին ու ռազմամոլներին չհաջողվեց ստեղծել

նույնիսկ «ազգային միասնությանը» նմանվող ինչ-որ բան։ Միայն 1952 թ. կորցվեց մոտ 59 մլն. մարդ-օրվա աշխատաժամանակ (պատերազմի տարիներին՝ 36 մլն.) և արձանագրվեց գործադուլների ռեկորդային թիվ՝ 5117։ Գործադուլային սուր պայքարի պրոցեսում աճեց արհմիութենական անդամների թիվը. 1949 թ. 14,3 մլն. անդամից 1954 թ. հասավ մինչև 17 մլն. անդամի։ Դրան նպաստեց նաև զբաղվածության ընդլայնումը ռազմական կոնյունկտուրայի պայմաններում։

Արհմիությունները մակարտիզմի դեմ նաև ուղղակի պայքարի ոչ քիչ էջեր գրեցին։ Սկզբում դա գրեթե բացառապես անում էին ԱԱԿ-ից վտարված ձախ արհմիությունները, որտեղ իր խիզախությամբ ու վճռականությամբ աչքի էր ընկնում Հ. Բրիջեսը։ 1952 թվականից ակտիվացան նաև ԱԱԿ-ի ու ԱԱՖ-ի մեջ մտնող այլ արհմիություններ։ 1952 թ. ԱԱՖ-ն իր պատմության մեջ առաջին անգամ պաշտպանպես հանդես եկավ գլխավոր կուսակցություններից մեկի պրեզիդենտության թեկնածուի օգտին, պաշտպանելով Է. Ստիվենսոնին։ Դեմոկրատների պարտությունից հետո ԱԱԿ-ի և ԱԱՖ-ի արհմիությունները ավելի վճռական քննադատության ենթարկեցին թե՛ մակարտիզմը, թե՛ Դ. Էյզենհաուերի թողտվությունը մակարտիստներին։ ԱԱԿ-ի գործկոմը նույնիսկ որոշում ընդունեց, որը դատապարտում էր մակարտիզմը կանխելուց Դ. Էյզենհաուերի «հանցագործ կերպով հրաժարվելը»։

Երբեմն բանվորները դիմում էին ավելի գործուն միջոցների։ 1953 թ. դեկտեմբերին Սան Ֆրանցիսկոյի նավահանգստային բեռնակիրները Հ. Վեյդի հանձնաժողովի քաղաք ժամանելը դիմավորեցին բողոքի 24-ժամյա գործադուլով։ Բայց արհմիությունների ղեկավարությունը հավանություն չէր տալիս նման միջոցներին, հանձնարարելով մնալ քաղաքական չափավորության ու լեգալիզմի հունի մեջ։ Եվ չնայած որ 1954 թ. արհմիությունների այնպիսի գործիչներ, ինչպես Ու. Ռեյտերը, Դ. Կերին, Դ. Պորտոֆսկին, Ֆ. Ռոզենբլատը, արդեն չափազանց վճռականորեն էին տրամադրված ծայրահեղ ռեակցիոներների սանձարձակությունների դեմ, ամբողջությամբ վերցրած արհմիութենական շարժումը անընդունակ գտնվեց ստանձնելու մակարտիզմի դեմ պայքարի կազմակերպչի դերը։

Մակարտիզմի դեմ մղվող պայքարում որոշակի դեր խաղացին բուրժուական լիբերալիզմն ու պրոգրեսիվիզմը, չնայած այն խոր ճգնաժամային վիճակին, որի մեջ նրանք գտնվում էին 1950—1954 թթ.։ Լիբերալներն ու ռադիկալները, պահպանելով իրենց դիրքերը դեմոկրատական կազմակերպություններում («Քաղաքացիական ազատությունների ամերիկյան միություն», «Սեամորթ բնակչության առաջադիմությանն աջակցող ազգային ասոցիացիա» և այլն), մամուլի մի քանի օրգաններում («Նեյշն», «Նյու Յորք պոստ», «Քեփիթալ թայմս», «Ամստերդամ նյուս»), համալսարաններում ու քոլեջներում, բողոքական եկեղեցում (հատկապես կվակերների շրջանում), կարողացան պահպանել բուրժուական դեմոկրատիայի ավանդույթները։ Չի կարելի հաշվի չառնել նաև այն դիմադրությունը մակարտիզմին, որ ցույց էին տալիս հենց կառավարող վերնախավերում, հատկապես սենատում, որտեղ հանրապետական Ռ. Ֆլանդերսը, դեմոկրատներ Դ. Լիմենը, Է. Քեֆովերը, Պ. Դուգլասը, Դ. Հեմֆրին, Ու. Մորզեն և ուրիշներ վերջիվերջո 1954 թ. տապալեցին մոլեգին Ջ. Մակարտիին։ Ռեակցիայի և միլիտարիզմի հակառակորդների ցուցակի մեջ չի կարելի չմտցնել նաև Էլեոնորա Ռուզվելտին, որի քաղաքական արիությունն այնքան պակասում էր 50-ական թվականների առաջին կեսի լիբերալների մեծ մասին։

1954 թ. Ջ. Մակարտիի դեմ վերջապես հանդես եկավ ինքը՝ պրեզիդենտ Դ. Էյզենհաուերը, երբ վիսքոնսինցին ձեռք բարձրացրեց պենտագոնի վրա, այնտեղ ևս «կոմունիստներ» հայտնաբերելով։

Այսպիսով, 1954 թ. վերջին մակարտիզմը որպես քաղաքական հոսանք կանգնեցվեց իր զարգացման մեջ։ Բայց դա ռեակցիայի ջախջախում չէր։ Սկսվեց ռեակցիոներների դանդաղ նահանջ իրենց դիրքերից։ Իրադարձությունների նման ելքը բացատրվում էր նրանով, որ մակարտիզմին հարվածը հասցվեց ոչ այնքան զանգվածային քաղաքական պայքարի հետևանքով, որքան նրա ներքին ինքնաբայքայման պրոցեսում, երբ իրենք իսկ՝ հանրապետական վերնախավերը, երես դարձրին իրենց ծնած հրեշից, որ դուրս էր եկել հսկողությունից և վնաս էր հասցնում ներքին ու միջազգային այն կայունությանը, որին աստիճանաբար հակվում էր Դ. Էյզենհաուերի կառավարությունը։

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ «ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ (1955—1960)

ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական զարգացումը 50-ական թվականներին

50-ական թվականների ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական զարգացումը վերլուծելիս հարկավոր է ամենից առաջ հաշվի առնել նրա այնպիսի բնորոշ պահերը, ինչպես արտադրության աճի դանդաղ տեմպերը և հաճախակի ճգնաժամերը, ավտոմատացման զանգվածային արմատավորման սկսվելը և գիտատեխնիկական հեղափոխության նախադրյալների նախապատրաստումը, բանվորական ուժի կառուցվածքի նկատելի փոփոխությունը, որն արտահայտվում էր արտադրական բանվորների հարաբերական նվազմամբ և աշխատավորների ոչ արտադրողական կատեգորիայի մեծացմամբ, ֆերմաների ու ֆերմերների թվի վճռական կրճատումը, միլիտարիզմի հաստատումը որպես կապիտալիստական վերարտադրության հիմնական գործոններից ու շարժիչ ուժերից մեկի, ամերիկյան կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական գծերի հետագա ուժեղացումը, չնայած որ իշխանության գլուխ էր կանգնած կառավարություն, որի անդամները դեմոկրատների կառավարման շրջանում վերջիններիս պետական-մոնոպոլիստական կուրսը անվանում էին «սողացող սոցիալիզմ»։

Կարճատև ժամանակամիջոցում (1948—1960) ամերիկյան կարգավորվող էկոնոմիկան չորս անգամ ճգնաժամ ապրեց՝ 1948—1949 թթ., 1953—1954 թթ., 1957—1958 թթ. և 1960—1961 թթ.։ Արտադրությունը 50-ական թվականներին միջին հաշվով տարեկան աճեց միայն 2,5—3%-ով, իսկ եթե հաշվի չառնենք 1950—1952 թթ. իրենց բարձր ռազմական կոնյունկտուրայով հանգերձ, որն առաջացել էր ամերիկյան իմպերիալիստների Կորեա ներխուժմամբ, ապա 1953—1961 թթ. միջին տարեկան աճը կազմեց միայն 2,3%։ 1953—1954 թթ. ճգնաժամի շրջանում արդյունաբերական արտադրանքի արտադրությունը 9 ամսում ընկավ 10%-ով, 1957—1958 թթ. 14 ամսում՝ 14%-ով, 1960—1961 թթ. 12 ամսում՝ 7%-ով։

50-ական թվականներին աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ ավելի արագ աճեց, քան արդյունաբերության մեջ։ Ավարտվեց հողի մշակման բոլոր օպերացիաների մեքենայացումը, իրականացվեց տնտեսության այդ ճյուղի համատարած էլեկտրիֆիկացում և տրակտորացում։ Այդ արտադրական առաջադիմությունը նպաստեց մանր ապրանքային ֆերմաների սնանկացմանը։ 1950-ից մինչև 1959 թվականը ֆերմերական տնտեսությունների թիվը 5389 հազարից նվազեց մինչև 3711 հազարի, իսկ գյուղական բնակչությունը՝ 25 միլիոնից մինչև 21 միլիոն մարդու։ Սնանկացած ֆերմերների միգրացիան դեպի քաղաքները է՛լ ավելի սրեց գործազրկության պրոբլեմը արդյունաբերության մեջ։

Գործազրկությունը՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակա-

շրջանի այդ խրոնիկական երևույթը, հատկապես սուր պրոբլեմի վերածվեց հաճախակի տնտեսական ճգնաժամերի կապակցությամբ։

Ուսումնասիրելով 1949—1961 թթ. ժամանակաշրջանի տնտեսական ճգնաժամերը, չի կարելի ուշադրություն չդարձնել նրանց ոչ տեղականության և արդյունաբերական արտադրության անկման աստիճանի հարաբերական կրճատման վրա։ Իրադարձությունների նման ելքի մեջ իր դերը խաղաց պետության տնտեսական քաղաքականությունը, այն կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական փուլում դարձավ կապիտալիստական զարգացման անբակտելի տարրը, որը ցիկլը ենթարկում էր որոշակի ձևափոխության։ Հանրապետական կուսակցությունը 50-ական թվականներին ընթանում էր արդեն տրորված պետական-մոնոպոլիստական կուրսով, թեև իշխանության հասավ անհատապաշտության լոզունգների ներքո։ Պրեզիդենտին կից տնտեսական խորհրդականների կոմիտեի 1966 թ. հաշվետվության մեջ ճիշտ է նշված, որ գտնվելով հաճախակի կրկնվող անկումների աքցանի մեջ, «հանրապետական կառավարությունը դիմեց այնպիսի քայլերի, որոնք նախկինում ասոցիացվում էին նոր կուրսի և քեյնսական քաղտնտեսության հետ»։

Պետական ներդրումները հանրապետականների, ինչպես և նախկինում դեմոկրատների օրոք հանդիսացան էկոնոմիկայի հետագա ռազմականացման միջոց։ Ընդհանուր ռազմական ծախսերը կորեական պատերազմից հետո կրճատվելով (1953 թ. 66 միլիարդից մինչև 54 միլիարդ՝ 1956 թ.), 1957 թվականից վերստին սկսեցին անշեղորեն աճել, 1960 թ. հասնելով 60 միլիարդ դոլարի (1957—1959 թթ. գներով)։ Այդ տվյալները համեմատելով 1940 թ. ընդհանուր ռազմական ծախսերի թվի հետ (30 միլիարդ դոլար՝ նույն գներով), դժվար չէ տեսնել, որ հանրապետականների կառավարությունը 50-ական թվականների երկրորդ կեսին շատ բան արեց «ռազմաարդյունաբերական կոմպլեքսի» ամրապնդման համար։

ԱՄՆ-ի էկոնոմիկան ընդունեց այնքան վառ արտահայտված միլիտարիստական գծեր, որ 1960 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցությունը բոլոր հիմքերն ուներ հայտարարելու, «կապիտալիզմի ամենաարդացած արդյունաբերական երկիրը վերածվել է ամենաայլանդակ ձևով ռազմականացված էկոնոմիկայի երկրի»[2]։

Խոսելով ամերիկյան կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական բնույթի մասին, հարկավոր է նկատի ունենալ նրա տարբերությունը եվրոպական երկրների պետական-մոնոպոլիստական կապիտալիզմից։ ԱՄՆ-ում չկա ազգայնացված սեկտոր, որը խոսում է մասնավոր կապիտալիստական հիմքերի հարաբերական ամրության մասին, հիմքեր, որոնց վրա հենվում է ԱՄՆ-ի պետական-մոնոպոլիստական կառուցվածքը։ Այսպիսով, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի միջնարդը միաժամանակ հանդիսանում է մասնավոր սեփականատիրական հարաբերությունների գլխավոր ամրոցը։ Այդ երևույթի ամբողջ յուրահատկությամբ հանդերձ դրանում զարմանալի ոչինչ չկա։ Տնտեսական ու սոցիալական պրոցեսների պետականացումը, որն ընկած է պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման հիմքում, ավելի լայն կատեգորիա է, քան ֆիզիկապես տեսանելի պետական սեփականությունը։

Ասենք, նման բան նույնպես գոյություն ունի ԱՄՆ-ում, և այն անընդհատ աճում է. 1939 թ. 90,3 մլրդ., 1949 թ. 170,9 մլրդ., 1958 թ. 224,9 մլրդ. (անփոփոխ գներով)։ Բայց դա չէ՞ որ պետք է գլխավոր չափանիշ դառնա պետական-մոնոպոլիստական զարգացման աստիճանի որոշման ժամանակ։ Ավելի կարևոր ցուցանիշ են պետական-մոնոպոլիստական կապերի մասշտաբները արտադրության պրոցեսում, որոնք իրենց արտահայտությունն են գտնում պետության ֆինանսատնտեսական, բյուջետային, վարկային, վայրուտային քաղաքականության մեջ, ինչպես նաև սոցիալական, քաղաքական և գաղափարախոսական պրոբլեմներ լուծելիս, որոնք մի ժամանակ մասնավոր կապիտալիստական առանձնաշնորհումների առարկա էին։

Պահպանողականության տիրապետությունը բուրժուական կուսակցությունների գաղափարախոսության ու քաղաքականության մեջ

1955 թվականից ԱՄՆ-ը սկսեց դուրս գալ մակարտիստական ճահճից, բայց այդ պրոցեսը ընթանում էր տանջալիորեն դանդաղ։ Պետական ղեկի մոտ կանգնած էին այնպիսի քաղաքական գործիչներ, որոնք ծայրահեղ ռեակցիայից երես դարձնելով, բոլոր սոցիալական պրոբլեմների լուծումը խորհում էին պահպանողականության շրջանակներում։ Մակարտիստներին չհաջողվեց Դ. Էյզենհաուերին դարձնել իրենց հլու գործիքը։ Պարզվեց, որ պրեզիդենտը, ոչ ավել, ոչ պակաս, պահպանողական է։ Նա գտնում էր, որ սեփականատիրական շրջանները հոգնել են քսանամյա այն անկախությունից, որը ծնունդ է առել նրանց արտոնությունների մեջ պետական ուժեղացած միջամտությամբ, որ ժողովրդի բարոյաքաղաքական ուժերը քայքայվել են այն մշտական գերլարվածության պատճառով, որ արտաքին քաղաքականության մեջ պարտադրել են դեմոկրատները հանուն հեռուն գնացող նպատակների, որ ժամանակն է վերջ տալ այն անդուսպ խրախճանքին, որ սկսել էին երկու կուսակցությունների ծայրահեղ շովինիստները, ռեակցիոներներն ու դեմագոգները և սպառնում էին պետությունը խոր քաղաքական ճգնաժամի հասցնել։

Պետական-մոնոպոլիստորեն մտածող էյզենհաուերական նեոպահպանողականներին միշտ չէ, որ հաջողվում էր ընդհանուր լեզու գտնել իրենց կուսակցության հետադիմականների հետ, որոնց պաշտպանում էին այնպիսի ճանաչված դեմքեր, ինչպիսիք էին Հ. Հուվերը և Դ. Մակարտուրը։ Դ. Էյզենհաուերին այլ բան չէր մնում անել, քան դաշնակցել դեմոկրատների հետ, որոնք 1954 թ. կոնգրեսի երկու պալատներում իրենց էին վերադարձրել մեծամասնությունը։

Դեմոկրատական կուսակցությունը 50-ական թվականներին ևս շարունակում էր մնալ ավելի բարդ քաղաքական օրգանիզմ, քան հանրապետականը։ Նրա հարավային թևում գերակշռում էին ռասիստները՝ «նահանգների իրավունքների» կողմնակիցները, մի հանգամանք, որը նրանց մերձեցնում էր հանրապետականներին։ Սակայն քաղաքականությանն ավելի լայն նայող հարավային դեմոկրատներն իրենց բոլոր խնդիրները չէին հանգեցնում «նահանգների իրավունքների» պրոբլեմին։ Նրանց տիպիկ ներկայացուցիչները՝ տեխասցի Ս. Ռեյբերնը և Լ. Ջոնսոնը, որ համապատասխանաբար գրավում էին ներկայացուցիչների պալատի սպիկերի և սենատի դեմոկրատական մեծամասնության պարագլխի պաշտոնները, հասան մինչև համազգային ղեկավարների մակարդակը։ Նրանց էլ պատկանում էր ռեալ իշխանությունը կոնգրեսում և կուսակցության մեջ։ 1956 թ. դեմոկրատները Է. Ստիվենսոնին նորից առաջադրեցին պրեզիդենտության թեկնածու։ Բայց նա կրկին պարտություն կրեց։ Պրեզիդենտ մնաց Դ. Էյզենհաուերը։ Դեմոկրատները 30-ական թվականներից հարելով նեոլիբերալիզմի կուսակցությանը, պետական իշխանությունն ակտիվորեն օգտագործում էին կապիտալիզմի աղաղակող խոցերը վերացնելուն։ 40—50-ական թվականներին նրանք ընթացան շատ ավելի աջ, և դեմոկրատական կուսակցության ղեկավարությունն արդեն այն ուշադրու-

[2] «Программные документы борьбы за мир, демократию и социализм». М., 1961, стр. 43.

թյունը չէր դարձնում արհմիությունների կարիքներին, ինչպիսին նրանց ցույց էր տալիս Ֆ. Ռուզվելտի կառավարությունը 30-ական թվականներին։

Այս բոլորը ծնունդ տվեց կոնսենզուսի, այսինքն համաձայնողականության գաղափարախոսությանը և քաղաքականությանը, որում նեոլիբերալներն ընթացան շափազանց աջ, իսկ նեոպահպանողականները Հ. Հուվերի «կոշտ անհատապաշտության» և Ջ. Մակարտիի շովինիզմի դիրքերից որոշ շափով թեքվեցին դեպի կենտրոն։ Ստեղծվեց այնպիսի իրադրություն, երբ երկու կուսակցությունների ղեկավարությունն էլ վախենում էր համարձակորեն նայել ԱՄՆ-ի առջև կանգնած պրոբլեմներին, անտեսում էր աշխատավորների կենսական կարիքները, գաղափարախոսության մեջ փառաբանում էր շափավորությունը, հնազանդությունը, կոնֆորմիզմը։ Երկիրն աճեցնում էր երիտասարդության «լռակյաց սերունդ»։ Ինչպես լինում էր նման դեպքերում նաև անցյալում, գլուխ բարձրացրեց եկեղեցին։ ԱՄՆ-ը «կրոնական բում» էր ապրում։ 1958 թ. շափահաս բնակչության 98 տոկոսը հայտարարեց եկեղեցուն իր պատկանելու մասին։

50-ական թվականների նեոպահպանողական-նեոլիբերալ կոնսենզուսի խոշորագույն քաղաքական արտահայտություն դարձավ Լինդոն-Դրիֆինի հակաբանվորական օրենքը։ Այն ստեղծեցին ամերիկյան բուրժուազիայի երկու կուսակցությունն էլ։ Սենատոր-դեմոկրատներ Դ. Մակլելանը և Ջ. Քենեդին պետք է համարվեն իրավահավասար հեղինակակիցն այդ ստատուտի, որի օգտին շատ համերաշխորեն քվեարկեցին և՛ հանրապետականները, և՛ դեմոկրատները։ Տաֆտ-Հարթլիի օրենքը վերջապես փոխվեց, բայց բոլորովին էլ ոչ այն առումով, ինչ պահանջում էին արհմիությունները։ Ռեակցիոն նորամուծությունները կատարվում էին երեք գլխավոր ուղղություններով. ուժեղացվում էր իշխանությունների թելադրանքը ներարհմիութենական պրոբլեմների լուծման ժամանակ, մտցվում էին ավելի խիստ միջոցառումներ բոյկոտների դեմ, արհմիություններում սահմանվել էին կոմունիստների գործունեության հետագա սահմանափակումներ։ 50-ական թվականների «համաձայնողականությունը» ցույց տվեց իր իսկական սոցիալական դեմքը, որը ծածկված էր ոչ միայն պահպանողական, այլև բացահայտ ռեակցիոն սպիներով։

Դ. Էյզենհաուեր—Ջ. Դալեսի արտաքին քաղաքականությունը

Եթե 1953—1954 թթ. ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսը Ջ. Դալես—Դ. Էյզենհաուերի կուրսն էր, ապա 50-ական թվականների երկրորդ կեսի համար արտաքին քաղաքականության գլխավոր ճարտարապետների տեղերը պետք է փոխել։ Ինչ-որ շափով Ջ. Դալեսի հետ պատահեց նույն բանը, ինչ Ջ. Մակարտիի հետ ներքին քաղաքական ճակատում։ Երկուսն էլ պարտություն կրեցին, բայց դալեսյան կուրսն ավելի կենսունակ դուրս եկավ, քան Ջ. Մակարտիի ժառանգությունը։

50-ական թվականների կեսերը և երկրորդ կեսը դալեսյան «զանգվածային հատուցման» սնանկացման ժամանակն էր։ ՍՍՀՄ-ի պաշտպանական հզորության աճը, Վարշավայի պայմանագրի ստեղծումով սոցիալիստական պետությունների դաշնակցային կապերի ամրապնդումը, ինչպես նաև դիվանագիտական ճակատում ՍՍՀՄ-ի խաղաղ հարձակման ակտիվացումն անխուսափելի էին դարձնում դալեսյան կուրսի վերանայումը։ ԱՄՆ-ի կառավարող շրջաններում ոմանք նույնիսկ սկսեցին արտասանել «խաղաղ դոյակցություն» նոր քաղաքական տերմինը։ Վաշինգտոնում այն ժամանակ դա յուրացրին շատ քչերը։ Սենատում հանրապետականների պարագլուխ Ու. Նոուլենդը «դոյակցությունն» անվանեց «տրոյական ձի»։ Դրա համար էլ, երբ հարց առաջացավ ծնունդ մեծ տերությունների կառավարությունների ղեկավարների

խորհրդակցության մասին, Ջ. Դալեսը և Դ. Էյզենհաուերի մյուս խորհրդականները պրեզիդենտին առաջարկում էին Եվրոպա չմեկնել։

Սակայն խորհրդակցության գաղափարը պաշտպանեցին մամուլի շատ օրգաններ, հասարակական կազմակերպություններ և ազդեցիկ պետական-քաղաքական գործիչներ հատկապես դեմոկրատների միջավայրից։ ԱՄՆ-ի հետծնելյան արտաքին քաղաքականությունն արդեն այնքան միանշանակ ագրեսիվ չէր, ինչպես 1949—1954 թթ.։ Տասնամյակի վերջում սովետա-ամերիկյան հարաբերությունները որոշակիորեն բարելավվել էին։

Միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի իմպերիալիստական դիրքերի թուլացման և սոցիալիզմի ու առաջադիմության ուժերի ամրապնդման մասին էր խոսում նաև 50-ական թվականների իրադարձությունների՝ Գվատեմալայում (1954) և Կուբայում (1959) կատարված հեղափոխությունների նկատմամբ ամերիկյան կառավարության տարբեր գործելակերպը։ Եթե առաջին դեպքում տեղի ունեցավ ցուցադրաբար իրականացված ինտերվենցիա, ապա երկրորդում հարկ եղավ կուլ տալ դառը դեղահաբը և հակահեղափոխական գաղտնի հեղաշրջում պատրաստել։

Դալեսյան ծայրահեղություններից նահանջելը, սակայն, ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքական դիրքորոշման արմատական փոփոխություն չէր։ Միլիտարիզմը, սոցիալիստական երկրները թուլացնելու ու ոչնչացնելու ձգտումը և դրանից բխող սոցիալիզմի հետ կապիտալիզմի մրցության հարցի ռազմական լուծումը, նեոգաղութատիրությունը, եվրոպական, ասիական և ամերիկյան դաշնակիցների՝ Վաշինգտոնի թելադրանքին ենթարկելը՝ այս բոլորը մնում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գլխավոր գիծը։

1955—1958 թթ. ամերիկյան կառավարությունը մերձավորարևելյան մի շարք գործողություններով ցույց տվեց, որ ԱՄՆ-ի հակումը «համաշխարհային պատասխանատվության» գաղափարին ամենևին չի թուլացել։

1955 թ. Ջ. Դալեսն ստեղծեց Բաղդադի պակտը։ 1957 թ. հնարվեց «Էյզենհաուերի դոկտրինան», որը կոչված էր լցնելու Մերձավոր Արևելքում իմպերիալիստական «վակուումը», Անգլիայի և Ֆրանսիայի դիրքերն այստեղ թուլացնելով հանդերձ։ Սուեզյան ավանտյուրայի տապալումից հետո այդ «դոկտրինան» կենսագործվեց Լիբանան ներխուժելով, որտեղից, ճիշտ է, շուտով ամերիկացիներն ստիպված էին իրենց զորքերը փոխադրել Միջերկրականում դրեյֆող 6-րդ նավատորմի վրա։

Դ. Էյզենհաուերի կառավարությունը իր «պաշտպանության նկատմամբ նոր հայացքին» համապատասխան, չէր ցանկանում այն շափով, ինչ Հ. Տրումենի ժամանակ էր, ծախսեր կատարել «ազատ աշխարհի» պաշտպանության համար։ Նա փորձում էր ակտիվացնել իր եվրոպական դաշնակիցների ռազմական բյուջեները՝ ՆԱՏՕ-ի մեջ Արևմտյան Գերմանիայի մտնելու հետևանքով ձեռք բերելով ռազմաքաղաքական ակտիվության մեծ հակում ունեցող պարտնյոր։

Մոնոպոլիստները, զինվորականությունը, վիթխարի պետական ապարատի բյուրոկրատները, լրագրողները, գիտական փորձագետների ընտրանին, ամեն տեսակ կազմակերպությունների վերնախավերը, ներառյալ արհմիություններում Ջ. Մինիի կլիկը առաջադիմական քննադատության համար անխոցելի այս ամբողջ համալիրը բոլոր ուժերով իր ձեռքում էր պահում արտաքին քաղաքականության գլխավոր լծակները։ Ուստի Դ. Էյզենհաուերը չէր կարող նույնիսկ այլ կերպ մտածել, քան այնպես, ինչպես պահանջում էր այդ միլիտարիստական վիթխարի մեքենան։ 1960 թ. մայիսին ՍՍՀՄ տա-

բածքում խփված Ու—2 ինքնաթիռի լրտեսական թռիչքի դեպքը ցույց տվեց, որ Դ. Էյզենհաուերի կառավարման վերջում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը հատուկ էին խճճվածությունն ու ճգնաժամը, իսկ դրա հետ մեկտեղ նաև՝ «սառը պատերազմի» վատթար ժամանակների վերածնման վտանգին ուղեկցող ագրեսիվությունը։

Բանվորական և դեմոկրատական շարժումը

Բանվորական և դեմոկրատական շարժումը 50-ական թվականներին լուրջ դժվարություն էր ապրում, որ բացատրվում էր ոչ միայն նրանով, որ մակարտիզմը և «սառը պատերազմը» երկրում թողել էին խոր արմատներ, այլ նաև բնակչության սոցիալական կառուցվածքում կատարված կարևոր ներքին տեղաշարժերով։ Այդ տեղաշարժերը կապված էին երկու պրոցեսների հետ՝ արտադրության ավտոմատացման և վարձու աշխատողների շրջանում անարտադրողական բանվորների բաժնի աճով։ Առաջինն արհմիություններից պահանջում էր առաջադրել նոր խնդիրներ. աշխատուժի վերապատրաստում, սոցիալական ապահովության պետական համակարգը լրացնող ապահովագրական ֆոնդի ստեղծում, արտադրական պրոցեսում ձեռնարկատերերի կամայականության սահմանափակում և այլն։ Երկրորդ պրոբլեմը բուն աշխատավորների տարբեր կատեգորիաների միջև եղած հակասություններն էին, որոնք ազդում էին արհմիութենական կազմակերպությունների զարգացման պրոցեսի վրա։ Ֆիզիկական աշխատանքի ոլորտից դուրս գրաղված միլիոնավոր մարդիկ օբյեկտիվորեն, ըստ սեփականության և արտադրության մեջ իրենց տեղի նկատմամբ ունեցած հարաբերության, վերածվում էին բանվոր դասակարգի բաղկացուցիչ մասի, բայց սուբյեկտիվորեն չէին ցանկանում դրա հետ հաշտվել և սրտում բողոքում էին իրենց սոցիալական կարգավիճակի իջեցման ու «միջին մեծ դասակարգից» հանելու դեմ։

ԱՄՆ-ը 50-ական թվականների կեսին դարձավ առաջին երկիրը, որտեղ անարտադրողական վարձու բանվորների քանակը (նրանց մեջ նշանակալի մաս էին կազմում «սպիտակ օձիքավորները») գերազանցում էր արտադրողական բանվորների քանակին։ Դա խիստ բարձրացնում էր բանվորի որակավորման նշանակությունը։ Կատարվեց հետաքրքիր ձևափոխություն, որի հետևանքով, մի կողմից, իր նշանակությունը կորցրեց նեղարտադրամասային որակավորումը, իսկ, մյուս կողմից, նշանակալիորեն աճեց բառի ավելի լայն իմաստով որակավորման դերը, սկսած ցածր աստիճանից, ուզած տեղում աշխատանք ստանալու համար։ Դրա համար էլ կենսամակարդակի ընդհանուր վերելքի պայմաններում 50-ական թվականներին վատացավ չորակավորված բանվորների դրությունը։ Նեգրերին, որոնք աստիճանաբար տեղափոխվում էին Հյուսիսի քաղաքները, դա հարվածեց առաջին հերթին և ամենից ուժեղ։

Արհմիությունների առջև կանգնած դժվարությունների աճն ԱԱՖ-ի և ԱԱԿ-ի ղեկավարությանը ստիպեց դադարեցնել քսանամյա վեճերը, և 1955 թ. երկու ֆեդերացիան միավորվեցին մեկ կազմակերպության՝ ԱԱՖ—ԱԱԿ-ի մեջ։ Նշելով այդ փաստի դրական նշանակությունը, չի կարելի աչքաթող անել նաև այն, որ միավորումը տեղի ունեցավ խիստ պահպանողական հիմքով և միայն ԱԱԿ-ից բոլոր ձախ տարրերի հեռացումից հետո։ Ջ. Մինիի կլիկը միացյալ ֆեդերացիայում պահպանեց հրամանատարական դիրքեր, որը բացառում էր առաջադիմության ուղիով արմատական տեղաշարժերի հնարավորությունը։ Միավորման պահին ԱԱՖ—ԱԱԿ-ի ղեկավարությունը հայտարարեց, որ ինքը 10 տարվա ընթացքում կհասնի անդամների կրկնապատկմանը, բայց այդ խիզախ պլաններն իրականացնել չհաջողվեց։ Դրան խանգարեցին հետադիմական օրենքները, որոնք արգելակում էին արհմիությունների աճը և ԱԱՖ—ԱԱԿ-ի ղեկավարության գաղափարախոսական, քաղաքական և կազմակերպչական-տակտիկական դրույթները։ Այստեղից էլ տխուր արդյունքները՝ արհմիությունների անդամների թիվը 1955—1970 թթ. փաստորեն չաճեց, մնաց 17 միլիոնի մակարդակին։

50-ական թվականներին է՛լ ավելի ակտիվորեն էին պրոպագանդվում «դասակարգային համագործակցության» գաղափարները։ Բայց դա արվում էր բոլորովին ոչ այնպես, ինչպես 30-ական թվականներին. այն ժամանակ համագործակցությունը ենթադրվում էր իրականացնել լիբերալ ռեֆորմների պրոցեսում, իսկ այժմ այն համարվում էր մի նպատակ, որին կարելի էր հասնել միայն արհմիությունների «չափից ավելի հզորությունը» սահմանափակելու միջոցով։ ԱԱՖ-ԱԱԿ-ի աջ պարագլուխները, չնայած «համագործակցության» նման դիրքորոշման բացահայտ պահպանողականությանը, ընդառաջ գնացին բուրժուական գաղափարախոսներին։ Ջ. Մինին չափազանց տարված էր ձեռնարկատերերի և արհմիությունների միջև «չհարձակման պակտի» պլաններով, իսկ նրա տեղակալ Ու. Ռեյտերը բիզնեսի և բանվոր դասակարգի դիրքերում «ընդհանուր հայտարար» էր փնտրում։ Բայց սպասվող առաջադիմական օրենսդրության փոխարեն արհմիութենական պարագլուխներն ստացան Լենդրեմ-Դրիֆֆինի օրենքը։ Արհմիութենական վերնախավերը բանվորական կազմակերպությունների ուժեղացող ստրկացմանն արձագանքեցին է՛լ ավելի պասիվորեն, քան 1947 թ.։ Այժմ նրանք չէին էլ փորձում հակառակել նոր օրենքին, դրա փոխարեն զբաղված էին իրենց կանոնադրությունները դրա պահանջներին հարմարեցնելով։

Դասակարգային պայքարը «չանհետացավ» 50-ական թվականներին ևս, չնայած դասակարգային «համագործակցության» գաղափարների քարոզին։ Ոչ քիչ գործադուլներ եղան, հակառակ արհմիութենական վերնախավի դիրքորոշման։ Շատ գործադուլներ հավանություն ստացան վերևից, քանի որ մոնոպոլիաների ճնշմանը դիմակայելու այլ միջոց չէր մնում։ 50-ական թվականների դասակարգային պայքարում հատկապես սուր դարձավ աշխատանքային կարգուկանոնի և արտադրության կազմակերպման վրա արհմիությունների ազդեցության աստիճանի հարցը։ Մոնոպոլիաները ցանկանում էին այն հասցնել զրոյի, առաջադրելով «ձեռնարկատիրական արտոնությունների» պաշտպանության լոզունգը։ Հենց այդ՝ արտադրության կազմակերպման մեջ արհմիությունների տեղի մասին, հարցն էր պողպատաձույլերի 116 օր տևած 1959 թ. պատմական գործադուլի ժամանակ ծագած կոնֆլիկտի գլխավոր պատճառը։

ԱԱՖ—ԱԱԿ-ի ղեկավարության մեջ պահպանողականների ճնշիչ ազդեցությունն ամերիկյան արհմիություններին խանգարեց կանգնելու դեմոկրատական վերափոխումների՝ նեգրերի իրավահավասարության, մակարտիզմի հետևանքների հաղթահարման, կայուն խաղաղության հասնելու, մոնոպոլիաների ճնշումը սահմանափակելու համար մղվող պայքարի ավանգարդում։ ԱԱՖ—ԱԱԿ-ում գործում էր քաղաքական լուսավորության կոմիտեն, համանման ինչ-որ բան ունեին նաև անկախ արհմիությունները։ Բայց այդ բոլոր քաղաքական կցորդները չէին կարող փոխարինել անկախ բանվորական կուսակցությանը։ ԱԱՖ—ԱԱԿ-ի միավորման ժամանակ մի քանի պատվիրակ, օրինակ, տրանսպորտայինների արհմիության պարագլուխ Մ. Քվիլը, երրորդ կուսակցություն ստեղծելու հարց դրեցին, բայց նման կոչերը սուզվեցին ապոլոտիկության ծովում։

Աշխատավորների մասսայական կուսակցություն ստեղծելու գաղափարը հաջող իրականացնելու շատ քիչ շանսեր կային այն պատճառով, որ կոմու-

նիստները, որոնք 30-ական թվականներին մյուսներից ավելի ակտիվորեն էին պաշտպանում այն, գտնվում էին ծայրահեղ ծանր պայմաններում։ Ենթարկվելով իշխանությունների մշտական դաժան ռեպրեսիաներին, բուրժուական և ռեֆորմիստական կազմակերպությունների ու գաղափարախոսների հարձակումներին, կուսակցությունը 50-ական թվականների երկրորդ կեսին ստիպված էր դիմակայել ևս մեկ այլ ճակատում՝ ետ մղել ռևիզիոնիստների և լիկվիդատորների ուժեղ հարձակումները։ Ենթարկվելով «ծաղկման» և կոնսենզուսի պատրանքներին, Ջ. Հեյտսը, Ա. Բիթլմենը և նրանց կողմնակիցները հանգեցին ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը լիկվիդացնելու եզրակացությանը։

Ռևիզիոնիստների ծրագիրը շարադրված էր Դ. Հեյտսի «Փոփոխությունների ժամանակը» հոդվածում, որը հրապարակվեց 1956 թ. կուսակցության գլխավոր տեսական ամսագրում։ Այդ հոդվածում և մյուս ելույթներում ռևիզիոնիստները ջնջում էին ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության ամբողջ հերոսական անցյալը և պահանջում էին վերադառնալ Բրաուդերյան դեղատոմսերին, առաջ քաշելով կուսակցությունը «քաղաքական գործողության ասոցիացիայի» վերածելու գաղափարը։ Նրանք մարքսիզմ-լենինիզմը բնութագրում էին իբրև «ձախ աղանդավորություն»։ Ջ. Հեյտսի, Ա. Բիթլմենի և նրանց հետևորդների ելույթները լի էին ՍՍՀՄ-ի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների դեմ ուղղված հարձակումներով։

Շուտով ռևիզիոնիստական-լիկվիդատորական տրամադրությունները գերիշխեցին «Դեյլի Ուորկեր» ամենօրյա թերթի խմբագրությունում, կուսակցության նյույորքյան կոմիտեում, որը գլխավորում էր ամենախոշոր կուսակցական կազմակերպությունը։ 1957 թ. փետրվարին կայացած կուսակցության 16-րդ համագումարը կարողացավ հակահարված տալ այդ հարձակումներին։ Պաշտպանելով համագումարում կուսակցության կառուցվածքի հեղափոխական սկզբունքները և նրա ծրագրերը, ամերիկյան կոմունիստներն առաջադրեցին «սոցիալիզմի հասնելու խաղաղ, դեմոկրատական և սահմանադրական ուղու» լոզունգը։ Սակայն Ջ. Հեյտսը, որ զբաղեցնում էր «Դեյլի Ուորկեր»-ի գլխավոր խմբագրի պաշտոնը, հրաժարվեց պրոպագանդել համագումարի որոշումները։ Համագումարից հետո ռևիզիոնիստները նորից ուժեղացրին իրենց հարձակումները կուսակցության դեմ։ Կուսակցության մեծամասնությունը վճռական հակահարված տվեց ռևիզիոնիստական-լիկվիդատորական հարձակումներին։ Համախմբվելով Ու. Ֆոստերի, Գ. Հոլի, Հ. Ուինստոնի, Է. Ֆլինի և կուսակցության մյուս առաջնորդների շուրջը, ԱՄՆ-ի կոմունիստները աջերի դեմ մղված պայքարում ոչ միայն դիմացան, այլև կարողացան ջախջախել նրանց։ Գտնվելով մեկուսացված վիճակում, Ջ. Հեյտսը 1958 թ. փետրվարին դուրս եկավ կուսակցությունից։ Նրա հետևորդները, չհրաժարվելով իրենց դաղափարներից, վտարվեցին կուսակցության շարքերից։

Ռևիզիոնիստները ուժեղ հարված հասցրին կուսակցությանը։ Նրանց դեմ մղված պայքարի պրոցեսում 1958 թ. հարկ եղավ դադարեցնել «Դեյլի Ուորկեր» թերթի հրատարակությունը։ Կուսակցության ուժերը միաժամանակ շեղվեցին պոզիտիվ խնդիրներից։ Ճգնաժամի խորությունը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ կոմունիստներն անընդհատ ենթարկվում էին ոստիկանական ճնշման։ 1938 թ. կուսակցությունն ուներ 75 հազար անդամ, բրաուդերյան ռևիզիոնիզմի պատճառով նա 1945 թ. մոտերքին կորցրեց մոտ 20 հազար մարդ, իսկ բռնությունների և ռևիզիոնիստական-լիկվիդատորական նոր հարվածների տակ 1957 թ. պահպանեց միայն 7 հազար անդամ։

1959 թ. դեկտեմբերին կայացավ կուսակցության 17-րդ համագումարը, որն ավարտեց ռևիզիոնիստական տարրերի դեմ մղվող պայքարը։ Գլխավոր

բարտուղար ընտրվեց Գ. Հոլը։ Այդ համագումարում կուսակցությունը նորից ամբողջ ուժով ընդգծեց հակամոնոպոլիստական կոալիցիայի ստեղծման անհրաժեշտությունը, որում վճռական դերը հատկացվում էր արհմիություններին և զանգվածային շարժումներին։

Համագումարը հանեց 1928 թ. ընդունված նեգրերի ազգային ինքնորոշման վերաբերյալ սխալ լոզունգը։ Նեգրական հարցի վերաբերյալ որոշման մեջ ասվում էր, որ հարկավոր է պայքարել «նեգրերի լիակատար տնտեսական, քաղաքական և սոցիալական հավասարության համար», որոնք լինելով «ամերիկյան ժողովրդի հատկապես ճնշված մասը», «առանձին ազգ չեն ներկայացնում»։ Պրոբլեմի նման դրվածքը միանգամայն ժամանակին էր՝ կապված 50-ական թվականների երկրորդ կեսին սկսված նեգրական զանգվածային շարժման վերելքի հետ։

Դրան նպաստեց 1954 թ. ձեռք բերված կարևոր հաղթանակը, երբ գերագույն դատարանը ոչ սահմանադրական ճանաչեց ռասայական խտրականությունը դպրոցներում։ Գերագույն դատարանը, որը 1953 թ. գլխավորեց Է. Ուորենը, սկսեց դանդաղ, բայց անշեղորեն հրաժարվել մակարտիզմի ավանդույթներից նաև ընդհանուր քաղաքական հարցերում։ Ինքը՝ Է. Ուորենը, ինչպես նաև դատավորներ Հ. Բլեկը, Ու. Դուգլասը և Ու. Բրեննը հանդես եկան քաղաքացիական ազատությունների ավելի խստիվ պահպանման օգտին։

Մակարտիզմի և «սառը պատերազմի» ծայրահեղությունների անցյալի գիրկն անցնելով, ոտքի կանգնեց խաղաղության կողմնակիցների շարժումը։ Նա 50-ական թվականներին լայն թափ չընդունեց և ընդգրկեց առավելապես նվազ ազդեցիկ հասարակական և եկեղեցական կազմակերպությունները, որոնք հանդես էին գալիս Սովետական Միության հետ բանակցությունների և միջուկային զինաթափման օգտին։

Դեմոկրատների հաղթանակը 1960 թ. ընտրություններում

1960 թ. ամերիկացիները ամփոփեցին հանրապետականների ութամյա կառավարման արդյունքները։ ԱՄՆ-ի բուրժուական հասարակական կարծիքի համար հիմնավորապես ընդունված էր համարվում ճանաչված երկու ճշմարտություն։ Նախ, պահպանողական հանրապետականների կառավարման ժամանակ ամրապնդվել էր այն, ինչը նախկինում շատերը դիտում էին որպես «ռուզվելտյան խռովարարություն», անցումը «բարեկեցության կապիտալիզմին», ինչպես բուրժուական գաղափարախոսների լեզվով կոչվում էր պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը։ Երկրորդ, վերջնական ճանաչում ստացավ ԱՄՆ-ի «համաշխարհային պատասխանատվությունը», բայց կարևոր վերափոխումով՝ սոցիալիստական աշխարհի հզորության ճանաչումով և խաղաղ գոյակցության ինչ-որ ձևի անհրաժեշտությամբ։ Ե՛վ այս, և՛ այն բացարձակ անվիճելի չէին, քանի որ ռեակցիոն անհատապաշտությունը չէր զրկվել իր սոցիալական արմատներից, իսկ խաղաղ գոյակցության գաղափարին մշտապես դիմադրություն էին ցույց տալիս «ռազմաարդյունաբերական կոմպլեքսի» պարագլուխները։

Բուրժուական մամուլը միահամուռ կերպով Դ. Էյզենհաուերի առաքելությունը համարում էր կատարված՝ նա կայունացրեց դրությունը, ավելի հրստակ գծագրեց «համաշխարհային պատասխանատվության» ուրվագծերը և դիմակայեց կոմունիզմին, հակասությունները չհասցնելով պատերազմի։ Բայց հետո սկսվում էր քննադատությունը։ Քննադատները, նշելով էյզենհաուերյան ղեկավարության նվաճումները, այն համարում էին ոչ բավականաչափ եռանդուն, համարձակ մտահղացումներից, նորամուծություններից, «ազգային գաղափարներից» զուրկ։ 1957 թ. սովետական արբանյակների արձակումը

հատկապես աշխուժացրեց էյզենհաուերյան պահպանողականության քննադատներին։

Այդ իրադրության մեջ դեմոկրատները պրեզիդենտության թեկնածու առաջադրեցին Ջ. Քեննեդիին, չնայած բիզնեսին վախեցնում էր նրա հարստությունը, որը կարող էր պետության ապագա ղեկավարին չափից ավելի անկախ դարձնել։ Արհմիությունները չէին մոռացել Լենդրեմ-Գրիֆինի օրենքին նրա հեղինակակից լինելը։ Լիբերալները հիշեցին, որ այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր պաքարել մակարտիզմի դեմ, Ջ. Քեննեդին գրեց «Արիության օրինակներ» գիրքը, ինքը հանդես չբերելով այդ հատկությունները։ Դեմոկրատները Ջ. Քեննեդիի գլխավորությամբ խոստացան համարձակորեն նայել ճշմարտության աչքերին և երկիրը տանել դեպի «նոր բնագծեր»։

Հանրապետականների թեկնածու դարձավ Ռ. Նիքսոնը, որի հաղթանակին խանգարեց այն հանգամանքը, որ բնակչության լայն խավերը ցանկանում էին ընթանալ դեպի ինչ-որ նոր բնագծեր և նրան (որ ծառայել էր Դ. Էյզենհաուերի մոտ) առաջնորդ լինելու ընդունակ չէին համարում։ Հանրապետական Ռ. Նիքսոնի դիրքերը, բացի այդ, թուլացան իրենից քիչ կախված երկու հանգամանքով՝ էկոնոմիկայում սկսված անկումով և Ու—2 ինքնաթիռի խայտառակ թռիչքի հետևանքներով։

Ձայների աննշան առավելությամբ հաղթեցին դեմոկրատները։

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (1961—1969)

Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունն ամերիկյան կապիտալիզմի զարգացման վրա

Հետպատերազմյան ժամանակաշրջանում արտադրողական ուժերի զարգացումը և գիտության՝ ժողովրդատնտեսական գործունեության կարևորագույն ոլորտներից մեկի վերածվելը 50—60-ական թվականներին հանդիսացան գիտատեխնիկական հեղափոխության փուլի սկիզբը։ Այն հնարավորությունները, որոնք նա բացում էր մարդկության առջև, արդեն համոզիչ կերպով երևում էին։

Դա ԱՄՆ-ը ցույց տվեց պատմական նշանակություն ունեցող իրադարձությամբ՝ Ն. Արմսթրոնգի և Է. Օլդրինի տիեզերական թռիչքով։ Լուսնի վրա 1969 թ. հուլիսի 20-ին նրանց իջնելը կանգնեց այնպիսի ուղենիշների շարքում, ինչպիսիք էին 1957 թ. հոկտեմբերի 4-ին ՍՍՀՄ-ում իրականացված առաջին արհեստական արբանյակի արձակումը և 1961 թ. ապրիլի 12-ին Յու. Գագարինի կատարած՝ մարդու առաջին թռիչքը տիեզերք։

Հեղափոխականացնելով արտադրության պրոցեսը, գիտությունը խորագույն ազդեցություն է թողնում արդի հասարակության կյանքի բոլոր ոլորտների վրա։ Դրա հետ կապված ամբողջ հասակով մեկ կանգնում է սոցիալ-քաղաքական խոշորագույն պրոբլեմներից մեկը՝ գիտատեխնիկական հեղափոխության և կապիտալիստական հասարակության կառուցվածքի ընկղբունքների միջև առաջացող հակասությունը։

Գիտատեխնիկական հեղափոխության կարևորագույն դրսևորում էր ավտոմատացումը և էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների կիրառումը։ ԱՄՆ-ում դրանց առևտրական օգտագործումը գրանցված է դեռևս 50-ական թվականների սկզբին, սակայն արտադրության մեջ ներդրումն իրականացվեց 60-ական թվականներին։ 1960 թ. ԱՄՆ-ում գործում էր 4267 էլեկտրոնային հաշվիչ մեքենա, 1970 թ. 45000։ Դա մի քանի անգամ շատ էր, քան մյուս բոլոր կապիտալիստական երկրներում՝ միասին վերցրած։

Արտադրության ավտոմատացումը հատկապես արագ տեմպերով էր զարգանում էլեկտրաէներգետիկայում, կապում, մեքենաշինության, սև մետաղամշակման, քիմիական արդյունաբերության մեջ։

Գիտատեխնիկական հեղափոխության դարում սրընթաց արագացում ստացան ԱՄՆ-ի աշխատուժի կառուցվածքում վաղուց նախատեսված առաջադիմական պրոցեսները։ Նախ, գիտատեխնիկական հեղափոխությունը խթանեց աշխատուժի անարտադրողական մասի հետագա ավելացմանը, որը Կ. Մարքսը դեռ ավելի քան հարյուր տարի առաջ համարում էր արտադրողական ուժերի և աշխատանքի արտադրողականության աճի կարևոր ցուցանիշներից մեկը[2]։ 1965 թ. մոտերքին անարտադրական ոլորտներում բանվորների և ծառայողների քանակը, նախապատերազմյան ժամանակամիջոցի համեմատությամբ, ավելացավ ավելի քան երկու անգամ։ Նրանց տեսակարար կշիռը բանուժի մեջ (գյուղատնտեսությունը չհաշված) 1947 թ. 48 տոկոսից 1970 թ. բարձրացավ մինչև 60 տոկոսի։ Երկրորդ, խիստ փոխվեց բանուժի որակավորման կառուցվածքը։ 1947 թվականից մինչև 1965 թվականը՝ ինժեներատեխնիկական աշխատողների և բարձր որակավորում ունեցող բանվորների բաժինը 38-ից աճեց և հասավ բանուժի մինչև 47 տոկոսի։ Երրորդ, գիտատեխնիկական հեղափոխությունը, հակառակ ԱՄՆ-ում «ապապրոլետարականացման» մասին բուրժուական տեսությունների, ընդլայնեց պրոլետարիատի շարքերը։ 1967 թ. ԱՄՆ-ի քաղաքացիական վարձու բանուժը հաշվվում էր 77,5 մլն. մարդ. Նրա բացարձակ մեծամասնությունը կազմում էր բանվոր դասակարգը։

Գիտատեխնիկական հեղափոխությունն արագացրեց գյուղատնտեսության ինդուստրացումը, որը էլ ավելի ուժեղացրեց նրա սոցիալական տարբերակումը։ 1969 թ. 21 տոկոս կազմող խոշոր ֆերմաները (որոնք տարեկան վաճառում էին 10 հազար և ավելի դոլարի ապրանք) արտադրեցին գյուղատնտեսության արտադրանքի 70 տոկոսը։ 8 տարվա ընթացքում (1960—1968) ֆերմաներից հեռացավ 5 միլիոն մարդ, և 1968 թ. ֆերմերական բնակչությունը (10,5 մլն.) կազմեց ԱՄՆ-ի բնակչության ընդամենը միայն 5,2 տոկոսը։

Գիտատեխնիկական հեղափոխությունն արագացրեց կապիտալիստական սեփականության ձևերի և սոցիալական պրոբլեմների լուծման մեթոդների շարժման պրոցեսը պետական-մոնոպոլիստական միտումների ուժեղացման ուղղությամբ։ Խոշորագույն կորպորացիաները, որոնք հազարավոր թելերով կապված էին պետության հետ, ամրապնդեցին հրամանատարական դիրքերը երկրի էկոնոմիկայում։ 1964 թ. կոոպերացիայի տիպի բաժինների ընկերությունները, որոնք կազմում էին ԱՄՆ-ի ձեռնարկությունների ընդհանուր թվի միայն 12 տոկոսը, տնօրինում էին գործարար օպերացիաներից ստացված դրամամուտքի 80 տոկոսը։ Կապիտալի կենտրոնացման և համակենտրոնացման արագացած տեմպը հասցրեց միահյուսման նոր տիպի՝ կոնգլոմերատների, այսինքն արտադրության պրոցեսում քիչ կամ բոլորովին իրար հետ չկապված ընկերությունների միավորմանը։ 60-ական թվականների վերջին կոնգլոմերատային միավորումների բաժինը հասավ բոլոր միավորված կոոպերացիաների եկամուտների 90 տոկոսին։

Կապիտալի կենտրոնացումն ամերիկյան կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական շենքի կարևոր, բայց ոչ միակ հենարանն է։ Ինչպես նշված է կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թ. միջազգային խորհրդակցության փաստաթղթերում, ներկայումս կապիտալիզմը, որը «ձգտում է հարմարվել երկու սիստեմների պայքարի պայմաններին, գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին, ձեռք է բերել որոշ նոր գծեր։ Ու-

[2] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, էջ 205—206, 215։

բայց ազդեցին նեգրերի և պուերտոռիկացիների դրության որոշ բարելավմանը։ 1965 թ. հուլիսին ամենակարևոր փոփոխությունը մացվեց 1935 թ. ընդունված սոցիալական ապահովության օրենքի մեջ՝ զառամյալների համար հիվանդության գծով սահմանվեցին ապահովության միջոցներ։

1966 թ. կատարվեց վարձակալման արդարացի պայմանների մասին 1938 թ. օրենքի հերթական փոփոխությունը։ Ժամավճարի մինիմումը, որ 1961 թ. բարձրացել էր մինչև 1,25 դոլարի, 1968 թ. փետրվարի 1-ից ավելացավ և հասավ մինչև 1,6 դոլարի։

Դեմոկրատների կառավարությունը մեծացրեց ֆերմերությանը տրվող օգնության չափերը, ավելացնելով դրամական նպաստները և վարկերը՝ գները պահպանելու համար։ 1968 թ. ֆերմերները հարկերի ձևով պետությանը վճարեցին 2,4 միլիարդ դոլար, իսկ նրանից ստացան 3,5 միլիարդ։ Անկասկած է, որ պետական նպաստների առյուծի բաժինը հասավ խոշորագույն տնտեսություններին։ Իսկ նրանց առավել ձեռնտու էր հենց գների պահպանումը համեմատաբար բարձր մակարդակի վրա։ Սակայն նպաստների քաղաքականությունն ինչ-որ չափով կասեցնում էր մանր ֆերմերների եկամուտների աղետալի անկումը։ Հանրապետականները, որոնց պաշտպանում էին խոշոր ֆերմերության կազմակերպությունները, առաջին հերթին ֆերմերական բյուրոյի ամերիկյան ֆեդերացիան, դա օգտագործում էին դեմոկրատներին մեղադրելու գյուղատնտեսության պրոբլեմին «ռեակցիոն» կերպով մոտենալու մեջ և պահանջում էին չխանգարել «անպետք» ֆերմաների դուրսմղման պրոցեսին։

«Մեծ հասարակության» ծրագիրը, ինչպես պաշտոնական պրոպագանդան էր անվանում Լ. Ջոնսոնի-Հ. Հեմֆրիի կուրսը, հեռու էր ԱՄՆ-ի առջև կանգնած սոցիալական պրոբլեմների խորությանը համապատասխանելուց։ Ռասիզմը, քաղաքային գետնախորշերը, հանցագործության աճը, աղքատների բազմամիլիոն բանակի առկայությունը (1966 թ. պաշտոնական տվյալներով, աղքատության մեջ էր ապրում 28,8 միլիոն մարդ, այսինքն բնակչության 15 %-ը) պահանջում էին ավելի արմատական միջոցառումներ։ Բայց ագրեսիան Վիետնամում ստիպում էր սեղմել նույնիսկ այդ չափավոր ռեֆորմները, քանի որ նրա կարիքների համար տարեկան ծախսվում էր 25—30 միլիարդ դոլար։

Լ. Ջոնսոնին հարկ եղավ շտապ կարգով բարձրացնել հարկերը։ Դեմոկրատների դրությունը նկատելիորեն սկսեց վատանալ։ Կուսակցությունը 1966 թ. ընտրություններում կորցրեց մի շարք տեղեր, իսկ 1968 թվականի պրեզիդենտական ընտրությունների նախօրյակին հայտնվեց ճգնաժամի վիճակում։

Ջ. Քենեդիի և Լ. Ջոնսոնի արտաքին քաղաքական կուրսը

Ջ. Քենեդիի կառավարությունն իշխանության գլուխ անցավ այն պահին, երբ Վաշինգտոնի արտաքին քաղաքական դիրքերը լրջորեն խախտվել էին։ Դեմոկրատներն ստիպված էին բռնել «զանգվածային հատուցման» ագրեսիվ դոկտրինան վերանայելու ուղին։ Բայց քաղաքական զենք դարձնելով «ճկուն ընկալման» նոր դոկտրինան, Ջ. Քենեդին ոչ այնքան հրաժարվեց «զանգվածային հատուցման» դոկտրինայից, որքան այդ կոնցեպցիան հարմարեցրեց աշխարհի նոր իրադրությանը։ Միլիտարիստական գլոբալիզմին կույր նվիրվածությունը փոխարինվեց դիսկրեցիոնականով, հաշվի առնելով, ինչպես մեծ, այնպես էլ փոքր պատերազմները։ Մեծ պատերազմներ ասելով Վաշինգտոնում հասկանում էին ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների դեմ պատերազմը։ Փոքրերի կարգին պենտագոնյան ստրատեգիան դասում էր այն պատերազմները, որոնք ուղղվում էին ազգային-ազատագրական շարժումները ճնշելուն։ Այդ ցուցանակի տակ, օրինակ, գրանցվեց ԱՄՆ-ի ագրեսիան Հնդկաչինում։

Արտաքին քաղաքական նոր դիրքորոշումը պահանջում էր միջուկային զինանոցի այնպիսի ընդարձակում, որը չէր անցնում նույնիսկ Դ. Էյզենհաուերի և Ջ. Դալեսի մտքով։ Սուզանավերից արձակվող միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների և «պոլարիսների» քանակն ավելանում էր տիեզերական արագությամբ. 1961 թ. 63-ից 1967 թ. մինչև 1054՝ առաջինները և 1961 թ. 96-ից 1967 թ. մինչև՝ 656՝ երկրորդները։

Սոցիալիստական աշխարհի հետ հարաբերություններում Ջ. Քենեդին ղեկավարվում էր ակտիվ քաղաքականության կոնցեպցիայով, որն իրենից ներկայացնում էր բավականին խիզախ խաղաղ բանակցությունների կոմբինացիա՝ սպառնալիքներով հանդերձ, որ հաճախ վտանգավոր կերպով մերձենում էր ռազմական գործողություններին։ Նրա ժամանակ որոշ չափով լավացավ սովետա-ամերիկյան հարաբերությունների ընդհանուր եղանակը։ 1963 թ. հաջողությամբ ավարտվեցին երեք ոլորտներում (օդում, ջրի տակ, տիեզերքում) միջուկային փորձարկումների արգելման մասին բանակցությունները։ Շարունակելով այդ գիծը, Լ. Ջոնսոնը 1968 թ. համաձայնագիր ստորագրեց միջուկային զենքը չտարածելու մասին, որը վավերացվեց արդեն հանրապետական պրեզիդենտի ժամանակ։

Ջ. Քենեդին 1963 թ. հունիսի 10-ին իր ճառում արտահայտեց ԱՄՆ-ի պատրաստակամությունը «խաղաղ մրցություն վարել աշխարհի ուզած մյուս սիստեմի հետ»։ «Դա,— ասում էր պրեզիդենտը,— պահանջում է մեծ փոխըմբռնում ՍՍՀՄ-ի և մեր երկրի միջև, իսկ մեծ փոխըմբռնումը պահանջում է մեծ կոնտակտներ և կապեր»։

Սակայն սոցիալիստական երկրների նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական գիծն անցնում էր այն ուղիներով, որ գցել էին «զսպման» դոկտրինայի ստեղծողները «սառը պատերազմի» սկզբին։ Սոցիալիզմի թուլացմանն էին ուղղված ամերիկյան իմպերիալիզմի բոլոր ուժերը։ Սպառազինությունների մրցավազքը, որ կանխամտածված էր սոցիալիստական երկրների էկոնոմիկայի քայքայման և ռազմական բնագավառում ԱՄՆ-ի «գերազանցության» ապացուցման համար, քաղաքական կոմբինացիաները և գաղափարական դիվերսիաները (հաշվի առնելով սոցիալիստական աշխարհի փոքրագույն տարաձայնությունները), վերջապես, սոցիալիստական ընկերակցության երկրների դեմ ղեկված ագրեսիայի ուղղակի գործողությունների իրականացումը՝ այս բոլորը գտնվում էր դեմոկրատների կառավարության արտաքին քաղաքականության կենտրոնում։ Նա իր գործունեությունն սկսեց սոցիալիստական Կուբայի դեմ խայտառակությամբ ձախողված ներխուժումով, որ կազմակերպեց Ջ. Քենեդին 1961 թ. ապրիլին, իսկ իր գոյությունն ավարտեց մի այլ սոցիալիստական պետության՝ Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության դեմ ագրեսիվ պատերազմի մեջ խրվելով։

ԱՄՆ-ի կառավարության քաղաքականությունը բուրժուական Եվրոպայում ուղղված էր ոչ միայն կոմունիզմի դեմ մղած պայքարում իր դաշնակիցների ակտիվացմանը։ Նա ձգտում էր պարտյորների ինքնուրույնության թուլացմանը և կենտրոնախույս միտումների խափանմանը։ ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունից Ֆրանսիայի դուրս գալը թուլացրեց ԱՄՆ-ի դիրքերը։

Լատինական Ամերիկայի համար Ջ. Քենեդին 1961 թ. «Դաշինք հանուն առաջադիմության» շրջանակներում հռչակեց ամերիկյան օգնության ծրագիրը, որպեսզի ԱՄՆ-ի ֆինանսական մասնակցությամբ ռեֆորմների միջոցով ամրապնդվեր տեղական բուրժուազիայի այն մասի դիրքերը, որն ընդունակ

էր սոցիալական մանևրման։ Դա Լատինական Ամերիկայի ժողովուրդների վրա կուբայական հեղափոխության ազդեցության հակակշիռն էր։ «Դաշինք հանուն առաջադիմության» ստեղծողների «հեղափոխական» ճոռոմաբանությունն սկզբում իր կողմը գրավեց լատինաամերիկյան լիբերալներին ու ռադիկալներին և ոչ առանց կատակի վախեցրեց դիկտատորներին և լատիֆունդիստներին։ 1961—1968 թթ. ընթացքում ԱՄՆ-ը այդ օգնության համար հատկացրեց 4,6 միլիարդ դոլար, որը կարճ ժամանակամիջոցում իսկապես ուժեղացրեց տեղական լիբերալ բուրժուազիայի ազդեցությունը։ Բայց նա չկանգնեցրեց հեղափոխական շարժումը, և 60-ական թվականների կեսերից ԱՄՆ-ի կառավարությունը շատ հաճախ էր դիմում քաղաքականության ավանդական, ինտերվենցիոն մեթոդներին։ Դոմինիկյան Հանրապետության դեմ 1965 թ. ինտերվենցիայից հետո «հեղափոխական» ճարտասանությունն արդեն քիչ էր ներգործում լատինաամերիկացիների վրա։ 60-ական թվականների վերջին Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում հեղափոխական շարժման վերելքը համոզիչ կերպով ապացուցեց ԱՄՆ-ի իմպերիալիստական կառավարության հովանու ներքո «խաղաղ հեղափոխություն» նախաձեռնողների պլանների ձախողումը։

ԱՄՆ-ն ավելի «առաջադիմական» էր ցանկանում երևալ դեմոկրատների ժամանակ նաև Աֆրիկայում։ Աֆրիկացիների և ասիացիների, սակայն, ինչպես և լատինաամերիկացիների համար, Վաշինգտոնում հնարեցին «խաղաղության կորպուսը», որում ԿՀՎ-ի գործակալների հետ մեջընդմեջ երբեմն պատահում էին նաև խաղաղության և առաջադիմության իսկական կողմնակիցներ՝ լիբերալ գաղափարներով տարված երիտասարդ ամերիկացիներ։ Բայց ԱՄՆ-ի իսկական ագրեսիվ մտադրություններն Աֆրիկայում բացահայտորեն դրսևորվեցին այլ բնագավառում՝ Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում առաջադիմական կարգերի տապալման փորձերում, Հարավաֆրիկյան Հանրապետության և Հարավային Ռոդեզիայի ուլտրառասսայական վարչակարգերի պաշտպանության մեջ։

Մերձավոր Արևելքում սոցիալական առաջադիմության դեմ մղած պայքարում, այնտեղ ԱՄՆ-ի նավթային մոնոպոլիաների տիրապետությունը պաշտպանելու համար դեմոկրատները գնացին «էյզենհաուերի դոկտրինայի» սկզբունքները և Իսրայելի իմպերիալիստական կառավարող շրջաններին պաշտպանելը զուգակցելու ուղիով։ ԱՄՆ-ից սկսեցին անընդհատ Իսրայել ուղարկվել ժամանակակից զենք և փոխառություններ։ ԱՄՆ-ի թողտվությամբ Իսրայելը սաբոտաժի ենթարկեց իսրայելական զորքերը զավթած տարածքներից դուրս բերելու մասին Անվտանգության խորհրդի բանաձևերը։

Հեռավոր Արևելքը դարձավ աշխարհի այն շրջանը, որտեղ 60-ական թվականներին ԱՄՆ-ի իմպերիալիստական դոկտրիններն անցնում էին դաշտային փորձարկումներ։ Ջ. Քենեդիի ժամանակ արդեն բացահայտ էին Վիետնամում պատերազմի հայտանիշերը։ Բեկում կատարվեց այն բանից հետո, երբ Սպիտակ տունը հասավ կոնգրեսի կողմից 1964 թ. օգոստոսի 7-ին «Տոնկինյան բանաձևի» ընդունմանը, որը պրեզիդենտին լիազորում էր Հարավ-արևելյան Ասիայում «ագրեսիան» դադարեցնելու գծով «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, ներառյալ զինված ուժեր օգտագործելը»։ 1965 թ. սկզբին ԱՄՆ-ն սկսեց ՎԴՀ-ի պարբերաբար ռմբակոծությունները, իսկ 1965 թ. հուլիսին Լ. Ջոնսոնը Հարավային Վիետնամ ուղարկեց ամերիկյան զորքերի խոշոր ստորաբաժանումներ։ Երեք տարի անց ինտերվենտների բանակն ավելացավ, հասնելով մինչև 550 հազար մարդու։

Վիետնամում ձախողվեցին ԱՄՆ-ի բոլոր ռազմական և քաղաքական դոկտրինները։ 60-ական թվականների սկզբի «խաղաղ» և «հեղափոխական»

«խոստումներն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ճգնաժամի միայն մի կողմն էին։ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն ստիպված էին ընդունել «ուժի» ռազմաքաղաքական «անզորությունը»։

Պատերազմը Վիետնամում ցնցեց ԱՄՆ-ը, հատկապես այն բանից հետո, երբ սպանվածների թիվն սկսեց հաշվվել տասնյակ հազարներով։ Նորագույն ժամանակների պատմության մեջ առաջին անգամ ԱՄՆ-ի կառավարությունը լայն քննադատության ենթարկվեց պատերազմին մասնակցելու համար։ Երկրում ծավալվեց զանգվածային հակապատերազմական շարժումը։

Մայրահեղ աջ շարժումների աճը

60-ական թվականների սոցիալ-քաղաքական կլիման բարենպաստ եղավ աջ շարժումների ակտիվացման համար, որոնց ընդհանուր գաղափարական դրոշը դարձավ ծայրահեղ անհատապաշտությունը։ Բարենորոգչորեն տրամադրված դեմոկրատների իշխանության գլուխ անցնելով «անհատապաշտական ազատությունների» կողմնակիցներն իրենց զգում էին Սպիտակ տան պաշտպանությունից զրկված։ 1929—1933 թթ. ճգնաժամից և «նոր կուրսից» սկսած ամերիկյան մոնոպոլիստական կապիտալիզմը պետական-մոնոպոլիստականի վերաճման համեմատ բուրժուական անհատապաշտության գաղափարախոսությունը աստիճանաբար ճանապարհ էր հարթում պետական-մոնոպոլիստական տարբեր կոնցեպցիաներին։ Դա չի նշանակում, որ ռեակցիոն անհատապաշտության գաղափարախոսությունը, որ հենվում է մասնավոր սեփականության և շուկայական տարերքի անսահմանափակ մեծարման վրա, անհետանցել է անէության գիրկը։ Նա չի կարող անհետանալ պետական-մոնոպոլիստական զարգացման ուղած աստիճանում, քանի որ անհատապաշտությունը ծայրահեղ չափով սնում են երեք մշտական աղբյուրներ։

Մի կողմից, դա մանր մասնավոր սեփականությունն է, որը ոչ մի չափով չորոշելով ներկա բուրժուական կարգերի դեմքը և ժամ առ ժամ գտնվելով կործանման եզրին, աչքի է ընկնում կոնգլոմերատ-մոնոպոլիաների տիրապետության, թվում է թե, անտանելի պայմաններին հարմարվելու զարմանալի կարողությամբ։ Մյուս կողմից, դա ինքը պետական-մոնոպոլիստական համալիրն է, որը, չնայած մասնավոր-սեփականատիրական հիմքերի ժխտմանն իր սկզբնական տեսքով, հենվում է մասնավոր սեփականության վրա։ Հետագեմ անհատապաշտության այդ երկու աղբյուրների միջև միջակա տեղ են գրավում գերազանցապես Հարավի և Հարավարևմուտքի շրջաններում կենտրոնացած հզոր մոնոպոլիաները, որոնց խորթ են բիզնեսի «սոցիալական պատասխանատվության» գաղափարները և որոնք դեռևս տեղ չեն գրավում պետական-մոնոպոլիստական ընտրանու շարքերում, ուստի և անհրաժեշտ չափով չեն ընկալել գերիշխող փիլիսոփայությունը։

Աջ շարժումների ակտիվացման պատճառները ներառում են նաև երկու, խորապես ամերիկյան գործոն՝ ռասիզմը, որ ուժեղացել էր նեգրական շարժման վերելքի հետ կապված, և ԱՄՆ-ի «համաշխարհային պատասխանատվության» հավակնությունների մշտական ձախողումները։ Այն անհատների և խմբերի շրջանակի ընդարձակումը, որոնք կոչ էին անում վերանայել ներքին և արտաքին քաղաքականության հիմունքները, է՛լ ավելի խթանեց ծայրահեղ ռեակցիոներների ակտիվությունը, ռասիզմը և միլիտարիզմը դարձնելով ամերիկյան ծայրահեղ աջ շարժման կարևոր առանձնահատկությունները։

Ռեակցիոն անհատապաշտության գաղափարներն իրենց մարմնավորումը գտան ծայրահեղ աջ կազմակերպությունների մի ամբողջ խայտաբղետ բազմության գործունեության մեջ։ Նրանցից ամենաազդեցիկը «Ջոն Բերչի ընկերությունն» էր, որը 1958 թ. ստեղծել էին մի խումբ ռեակցիոն գործիչներ, Ռ. Ուելչի գլխավորությամբ։ 1965 թ. «Ընկերությունը» ուներ 100 հազար ան-

դամ։ Ծայրահեղ աջերի մյուս կազմակերպությունների մեջ առանձնանում էին Ռ. Շվարցի «Քրիստոնեական հակակոմունիստական խաչակրաց արշավանքը», քահանա Բ. Հարջիսի «Քրիստոնեական խաչակրաց արշավանքը», Դ. Ռոքուելի (որն սպանվեց ներքին ծեծկռտոցներից մեկի ժամանակ) «Նացիստական կուսակցությունը», Ռ. Դեպյուի գլխավորած «Մինիտմենները» և մյուսները։ Ծայրահեղ աջերի մեծ թվով նոր կենտրոնների հանդես գալն ակտիվացրեց Կու-կլուքս-կլանի տիպի ավանդական ռասկցիոն կազմակերպություններին։ Բոլոր ծայրահեղ աջերին միավորող լոզունգներ հանդիսացան կոմունիզմի գաղափարների, բանվորական շարժման առաջադեմ ուժերի, երիտասարդության արմատական ձգտումների, նեգրերի իրավահավասարության կողմնակիցների դեմ պայքարի ծայրահեղ միջոցներ կիրառելու կոչերը։ Արտաքին քաղաքականության մեջ ծայրահեղ աջերը գլխավոր նպատակը համարում էին «համաշխարհային կոմունիզմի» ջախջախումը։ Հարձակվելով ամենից առաջ ձախ կազմակերպությունների վրա, ծայրահեղ աջերը միաժամանակ իրենց թշնամիներն էին համարում և՛ լիբերալներին, և՛ նույնիսկ չափավոր պահպանողականներին։ Նրանք ամեն տեղ, ներառյալ կառավարական հիմնարկները, փնտրում էին «կարմիրների»։ Ամենամեծ հարձակումները գործում էին գերագույն դատարանի նախագահ Է. Ուորենի և պրեզիդենտ Ջ. Քեննեդիի վրա։ Քաղաքական գործիչների սպանություններն օրակարգի մեջ մրտան։ 1963 թ. նոյեմբերի 22-ին բռնության և տեռորի զոհ դարձավ ինքը պրեզիդենտ Ջ. Քեննեդին, որ սպանվեց Դալասում։ Դալասյան գործողության կրկնությունը 1968 թ., երբ երկու ամսվա ընթացքում սպանվեցին Մ. Քինգը և սենատոր Ռ. Քեննեդին, կասկած չի թողնում այն բանում, որ քաղաքական սպանությունների կազմակերպիչներին պետք է փնտրել ԱՄՆ-ի ծայրահեղ հետադեմ ուժերի միջավայրում։

ԱՄՆ-ում աջ վտանգը գալիս էր ոչ միայն մի ամբողջ շարք կազմակերպություններից, որոնց գործունեությունը հանցագործություն է։ Նա ուներ նաև ավելի պատկառելի արտաքին տեսք, որը համոզիչ ցուցադրեցին 1964 թ. ընտրությունները, երբ հանրապետական կուսակցության թեկնածու Բ. Գոլդուոտերը ծայրահեղ հետադիմական ներքին և արտաքին քաղաքական լոզունգների ներքո իշխանության էր ձգտում։ Նրա տանուլ տալը դժվար չէր կանխատեսել, բայց նա ստացավ 27 միլիոն ձայն։ Բուրժուական պրոպագանդան այն ժամանակ տագնապած հասարակական կարծիքը հանգստացնում էր նրանով, որ միլիոնավոր ընտրողներ իներցիայով գնացին Բ. Գոլդուոտերի ետևից, քանի որ նա առաջադրվել էր հանրապետական կուսակցության կողմից։

Բայց ահա եկան 1968 թ. ընտրությունները։ Եվ չնայած պահպանողականներն ունեին հարմար թեկնածու՝ Ռ. Նիքսոնը, 10 միլիոն մարդ գնաց Ալաբամայի նահանգապետ Դ. Ուոլեսի ետևից, որին ոչ ոք չէր համարում բուրժուական պատկառելիության ներկայացուցիչ։ Դա խոսում է ամերիկացիների միջավայրում ռասկցիոն գաղափարների և տրամադրությունների խոր կերպով թափանցելու մասին։

Բանվորական և դեմոկրատական շարժման վերելքը

60-ական թվականները ոչ միայն ծայրահեղ աջ հոսանքների ակտիվացման ժամանակներ էին։ Որոշիչ նոր գիծ էր ուղղակի հակադիր գործոնը՝ առաջադիմական շարժման վերելքը, որն ընդունել էր այնպիսի արմատական ձևեր և թափ, ինչպիսին այդ երկրում չէին տեսել 30-ական թվականներից սկսած։

60-ական թվականների դեմոկրատական վերելքը վերլուծելիս պետք է հաշվի առնել երկրի սոցիալական կառուցվածքի այն փոփոխությունները, որ

կատարվեցին գիտատեխնիկական հեղափոխության ներգործությամբ։ Պրոլետարականացման պրոցեսի ուժեղացումն ընդարձակեց սոցիալական բողոքի շարժման դասակարգային բաղադրությունը։ Այդ շարժման բնույթի վրա իր կնիքը դրեց նրա մասնակիցների անհատապաշտությունը, նրանց անկազմակերպվածությունը, որ բացատրվում է սոցիալական հոգեբանության առանձնահատկություններով և այդ խմբերի շահերը ԱԱՖ-ԱԱԿ-ի ղեկավարների կողմից անտեսելով։

Աշխատավորների այդ խավերի ձգտումների արտահայտիչը դարձավ 60-ական թվականների ըմբոստացած երիտասարդությունը, որը փոխարինելու եկավ 50-ական թվականների «լռակյաց» սերնդին։ Երիտասարդական շարժումը դարձավ «նոր ձախերի» հոսանքի հիմքը։ Ուսանողական հուզումներն ըստ էության ունեին նույն արմատները, ինչ որ բանվորական շարժումը։

Բուրժուական գրականությունը կցանկանար «նոր ձախերի» շարժումը ներկայացնել իբրև վերացական, «սերունդների կոնֆլիկտ», իբրև շատ պատանիների արարք, որոնք «չեն հասկանում» ավագ սերնդի ապրելակերպը և մտքերը։ Բայց դա կարելի էր վերագրել միայն «հիպիներին»։ 60-ական թվականների ռադիկալ երիտասարդական շարժմանը յուրահատուկ էին բոլորովին այլ գծեր։ Նա հենց սկզբից սկսեց կիրառել զանգվածային գործողություններ (արշավներ, միտինգներ, «նստած ցույցեր», համալսարանական շենքերի գրավում և այլն), իր մեջ կրելով անհաշտ, պայքարի ամենածայրահեղ ձևերին դիմելուն պատրաստ, հարուստների իշխանությանը վախեցնող մարտական հզոր լիցք, որը հատկապես բնորոշ էր նեգր երիտասարդությանը։ Նա հանդես էր գալիս միլիտարիզմի, ագրեսիայի դեմ և բացահայտորեն հրաժարվում էր հակակոմունիզմից։ «Նոր ձախերը» մերժում էին կապիտալիստական կարգերը, որը նրանց գաղափարախոսության ուժեղ կողմն էր։ Սակայն այդ շարժման իր բովանդակությամբ հակամոնոպոլիստական և հակաիմպերիալիստական գաղափարախոսությունը և ծրագրային կողմնորոշումը տառապում էին տեսական խառնաշփոթությամբ։ Դրանցում գերակշռում էր կապիտալիստական սիստեմի էմոցիոնալ դատապարտումը, որը բավականին համոզիչ էր, որպեսզի գրավեր հարյուր հազար և միլիոնավոր դժգոհների, բայց ոչ բավականաչափ խորը, որպեսզի նշեր նոր հասարակություն ստեղծելու ռեալ ուղիները։ «Նոր ձախերի» խոշորագույն կազմակերպությունը՝ «Ուսանողները հանուն դեմոկրատական հասարակության» (ՈԻԴՀ), որ 1969 թ. իր շարքերում ուներ 100 հազար անդամ, 1962 թ. Պորտ Հուրոնում ընդունված իր ծրագրային հայտարարության մեջ նշում էր «սեփականության վրա հենվող իշխանությունը» «սիրո, մտքի, բանականության և ստեղծագործության վրա հենվող» իշխանությամբ փոխարինելու մասին։ «Նոր ձախերի» հայացքներում դրսևորվում էր նաև հասարակության վերափոխման գործում բանվոր դասակարգի առաջատար դերը չհասկանալը։

Ռադիկալ երիտասարդական շարժման տեսական թուլությունից փորձում են օգտվել սոցիալական արդարության կարգերի հաստատման ուտոպիական դեղամոտսերի հեղինակները։ Բուրժուական պրոպագանդան հատկապես կրցանկանար, որպեսզի ԱՄՆ-ի ըմբոստացած երիտասարդությունն իր տեսական առաջնորդը համարեր Դ. Հ. Մարկուզեին, քանի որ նա մյուս ռադիկալ գաղափարախոսներից (Ռ. Միլս, Մ. Հարինգտոն և ուրիշներ) ավելի շատ է գրպարտում սոցիալիզմը։

60-ական թվականների պատմությունը չի կարելի ներկայացնել առանց այն մասսայական ցույցերի, որոնք հաճախ կոորդինացվում էին համազգային մասշտաբով, օրինակ, ագրեսիան Վիետնամում դադարեցնելու համար ելույթները։ Հանդես գալով ռասիզմի դեմ, Վիետնամում խաղաղության հաս-

տատման, էկոնոմիկայի և սոցիալական բոլոր ինստիտուտների, ապառազմականացման, կրթության դեմոկրատացման, համագգային պրոբլեմները լուծելիս հերթականության կարգի արմատական վերանայման համար, «նոր ձախերը» տասնամյակի վերջերին շփման առանձին կետեր գտան ԱՄՆ-ի արմիությունների առաջադեմ ուժերի հետ։

60-ական թվականների դեմոկրատական վերելքը որոշ չափով թուլացրեց ԱԱՖ—ԱԱԿ-ի պահպանողական ղեկավարության դիրքերը։ Վերջինս ցուցադրեց մոնոպոլիաների հարձակմանն ինքնուրույն գիծ հակադրելու իր անկարողությունը, գիծ, որը համապատասխաներ բանվոր դասակարգի շահերին։ Դա հատկապես պարզորոշ դրսևորվեց այնպիսի պրոբլեմներում, ինչպիսիք էին գիտատեխնիկական հեղափոխության բացասական սոցիալական հետևանքների հաղթահարումը, նեգրերի իրավահավասարությանը հասնելը, վիետնամական պատերազմի խափանումը, միլիտարիզմի հաղթահարումը։ 1965 թ. դեկտեմբերին Ջ. Մինին նույնիսկ ԱԱՖ—ԱԱԿ-ի համագումարին պարտադրեց Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիվ պատերազմը պաշպանելու բանաձև։

Սակայն 60-ական թվականների արմիութենական շարժման մեջ կատարվեցին նաև կարևոր դրական տեղաշարժեր։ Նրանում ուժեղացան մարտական տրամադրությունները, ընդունելով «շարքայինների ըմբոստության» ձևը։ Դա դժվարացնում էր ձեռնարկատերերի հետ արմիութենական ղեկավարների գործարքները, քանի որ կոլեկտիվ պայմանագրերը շատ ավելի հաճախ, քան 50-ական թվականներին, չէին վավերացնում ստորին կազմակերպությունները։ Միայն 1964 թ. ստորին կազմակերպությունների բողոքների հետևանքով ընտրություններում ձախողվեցին համազգային միությունների 6 պարագլուխներ, այդ թվում Ջ. Կերին (էլեկտրիկների միություն) և Ջ. Մակդոնալդը (պողպատաձուլների միություն)։

1966—1967 թթ., կորեական պատերազմից հետո ամբողջ ժամանակաշրջանում առաջին անգամ, իջավ բանվորների և ծառայողների մեծաթիվ զանգվածի ռեալ աշխատավարձը։ Դա գործադուլային շարժման վերելքի գլխավոր պատճառներից մեկը դարձավ, որին ակտիվորեն մասնակցեցին պետական ծառայողները։ Հաջորդ տասնամյակի գործադուլները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ում դասակարգային պայքարը չի թուլանում, այլ սրվում է։ 1961 թ. տեղի ունեցավ 3367 գործադուլ, որոնց մասնակցեց 1450 հազար բանվոր և կորսվեց 16 միլիոն մարդ-օր։ 1968 թ. համանման թվերն ունեին հետևյալ պատկերը՝ 5045, 2650 հազար և 49 միլիոն։

60-ական թվականների բանվորական շարժումը, ամբողջությամբ մնալով ավանդական ռեֆորմիստական շրջանակներում, քաղաքական առումով դարձավ ավելի սուր։ Նրանում հանդես եկավ Ու. Ռեյտերի գլխավորած ուղղությունը, որը առաջ քաշեց արմիությունների սոցիալական նպատակների ընդարձակման ծրագիրը։ Ու. Ռեյտերի խումբը մասամբ հեռացավ «գործնական յունիոնիզմի» կոնցեպցիայից, որը սկսած 19-րդ դարի վերջերից գերիշխող էր արմիութենական շարժման մեջ և հանդես եկավ Վիետնամում իմպերիալիստական պատերազմի դատապարտմամբ։ 1967 թ. նոյեմբերին Չիկագոյում հրավիրվեց հանուն խաղաղության արմիությունների ասամբլեան, որին մասնակցեցին ազգային միությունների 50 պատգամավորներ և բուրժուա-դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչներ (Մ. Քինգը, Դ. Հելբրեյտը, սենատոր-դեմոկրատ Յուջին Մակարտին և ուրիշներ)։

1968 թ. մայիսին Ու. Ռեյտերի արմիությունը վտարվեց ԱԱՖ—ԱԱԿ-ից։ Երկու ամիս անց, 1968 թ. հուլիսի 22-ին, ավտո և ավիաարդյունաբերության ու բեռնատար տրանսպորտի վարորդների բանվորական արմիությունները (վերջինս ԱԱՖ—ԱԱԿ-ից հեռացվել էր դեռևս 1957 թ.), որ իրենց շարքերում ունեին 3,6 միլիոն անդամ, ստեղծեցին Արմիութենական գործողությունների միությունը (ԱԳՄ)։ Երկու արմիությունների պարագլուխները նախազգուշացրին, որ ԱԳՄ-ի դռները բաց են այն բոլոր կազմակերպությունների համար, որոնք այս միության մեջ ընդունվելու դեպքում պարտավոր չեն իրենց կապերը խզել ավանդական կենտրոնների հետ։

1969 թ. մայիսին ԱԳՄ-ն գումարեց իր առաջին հիմնադիր կոնֆերանսը։ Միության կանոնադրությունը և 1968 ու 1969 թթ. համագումարների հատուկ բանաձևերը նախատեսում էին այնպիսի գործողություններ, որոնց նպատակն էր արմիություններում չմիավորված զանգվածների կազմակերպումը, կոլեկտիվ բանակցությունների համար պայքարի կոորդինացումը, բանակցություններ, որոնցում առաջադրվեին սոցիալական լայն նպատակներ, սոցիալական ապահովության և հարկային գործում առաջադիմական ռեֆորմ, բնակարանային շինարարության արմատական ընդարձակում և քաղաքային գետտոների վերակառուցում, քաղաքացիական իրավունքների համար շարժման հետ արմիությունների ջանքերի միավորում, ռադիկալ խմբերի հետ տարաձայնությունների հաղթահարում։ ԱԳՄ-ի ղեկավարությունը, իհարկե, դուրս չէր գալիս ռեֆորմիստական գաղափարախոսության սահմաններից։ Նա շաղատագրվեց հակակոմունիզմից և լիբերալ բուրժուազիայի ղեկավարությանը ենթարկվելու ոգուց։

Կոմունիստական կուսակցությունը զգոնորեն գնահատեց ԱԳՄ-ի ուժեղ և թույլ կողմերը, պաշտպանելով նրա գործողությունների ամբողջ առաջադիմականը։ Կոմունիստական մամուլը ողջունեց այդ նոր երևույթները, գտնելով, որ դրանք ժխտում են նրանց հայացքները, ովքեր շտապում էին կասկածի տակ դնել բանվոր դասակարգի ավանդարդային դերը։

Նեգրերի իրավահավասարության համար պայքարի նոր փուլը

ԱՄՆ-ը այն երկիրն է, որտեղ խտրականությունը բազմաթիվ դրսևորումներ ունի։ Բայց խտրական գաղափարախոսության և քաղաքականության առաջին զոհը «գունավոր» ամերիկացիներն են և առաջին հերթին նեգրերը, ԱՄՆ-ի 25 միլիոնանոց նեգրական բնակչության ճնշող մեծամասնությունը բանվորներն են՝ իրենց ընտանիքներով։ 1968 թ. բոլոր նեգրերի 73 տոկոսը բնակվում էր քաղաքներում։ Կենտրոնանալով քաղաքային գետնատներում, նեգրերը քարշ են տալիս իսկական խղճուկ գոյություն։ Աղքատությունը, որ 1966 թ. բնորոշ էր ԱՄՆ-ի բնակչության 15 տոկոսին, նեգրերի 40 տոկոսի ճակատագիրն էր։ Գործազուրկների տոկոսը նեգրերի մեջ միշտ երկրի միջինից շատ ավելի բարձր էր։ 1968 թ. գործազուրկներն ամբողջությամբ կազմում էին բանուժի 3,6 տոկոսը, իսկ նեգրերի մեջ՝ 7,4 տոկոսը։ Գործազուրկ երիտասարդության (մինչև 20 տարեկան) բաժինը նեգրերի մոտ 1968 թ. մոտենում էր 25 տոկոսի, իսկ խոշորագույն 9 քաղաքներում հասնում էր մինչև 33 %-ի։ 1958 թ. նեգրերի աշխատավարձը կազմում էր սպիտակամորթ բանվորների աշխատավարձի 58 %-ը, իսկ 1964 թ.՝ 56,7 տոկոսը։ Նեգրական հարցը միտված է վերաճելու սոցիալական պրոբլեմի, բանվոր դասակարգի պրոբլեմի։ Սակայն այն երբեք չի վերածվի զուտ դասակարգային հարցի, քանի որ խտրականության է ենթարկվում նեգրական ամբողջ համայնքը՝ անկախ նրա առանձին խմբերի սոցիալական դրությունից։

Առաջադիմական-հեղափոխական ուժերի կողմից նեգրական պրոբլեմի գնահատման մեջ կար երկու հավասար չափով տեսականորեն սխալ և քաղաքականապես վնասակար կարծիք։ Նրանցից մեկը նեգրական հարցը տարալուծում էր մյուսների, առաջին հայացքից, ավելի լայն պրոբլեմների մեջ՝ սկզբում ֆերմերական, իսկ հետո պրոլետարական։ Դա առաջ էր բերում նեգ-

ների դրության առանձնահատկության մոռացում և միշտ նրանց հեռու էր մղում այն կազմակերպություններից ու ուժերից, որոնք առաջ էին քաշում նման լոզունգներ։ Մյուս ծայրահեղությունը մեկուսացման և անջատման ձգտումն էր, նեգրերի շարժումը մյուս դեմոկրատական հոսանքներից և պրոլետարիատի դասակարգային պայքարից կտրելը։ Ըստ այդ հայացքի, սպիտակամորթները և սեամորթները ներքուստ մեկը մյուսի նկատմամբ միասնական և թշնամական ուժեր են։ Այդ ծայրահեղությամբ տառապում են, իբրև կանոն, իրենք, նեգրական կազմակերպությունները։ Այս երկու սխալն էլ ունեն, ըստ էության, նույն աղբյուրը՝ հուսահատությունը, նեգրերի իրավահավասարության համար զանգվածային պայքար կազմակերպելու հնարավորությանը չհավատալը։

ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը նեգրական պրոբլեմը վերլուծելիս նշում է կյանքի բոլոր ոլորտներում մոնոպոլիաների տիրապետության հետ նեգրերի ճնշված դրության կապը։ Նեգրերի իրավահավասարության հասնելը նա կապում է մոնոպոլիստական բուրժուազիայի դեմ պայքարի հետ։ Կուսակցությունն ընդգծում է, որ ռասայական ճնշումից նեգրերի ազատագրումը միայն նեգրական բնակչության խնդիրը չէ, այլ կարևորագույն համազգային նպատակ է։ Դրա իրականացման գործում առաջատար դերը պետք է պատկանի բանվոր դասակարգին։

Ռասիզմի դեմ պայքարի արդի փուլի սկիզբը կարելի է վերագրել 50-ական թվականների կեսերին և երկրորդ կեսին։ Զանգվածային շարժումն ընկալվեց Հարավի քաղաքներում՝ ռասիզմի միջնաբերդերում։ Նրա ուղու խորհրդանիշն էր 1956—1957 թթ. խտրականացված ավտոբուսային գծերի լայն բոյկոտը։ 1957 թ. այդ շարժման պրոցեսում, որի կենտրոնն էր Մոնտգոմերի քաղաքը (Ալաբամա), ծնվեց նոր կազմակերպություն՝ քրիստոնեական ղեկավարության կոնֆերանսը՝ երիտասարդ հոգևորական, դոկտոր Մարտին Լյութեր Քինգի գլխավորությամբ։

Ի տարբերություն պայքարի դուստ լեգալ մեթոդների, որոնցով առաջնորդվում էին երկու ավանդական կազմակերպությունները՝ գունավոր բնակչության առաջադիմությանն աջակցող ազգային ասոցիացիան և ազգային-քաղաքային լիգան, քրիստոնեական ղեկավարության կոնֆերանսը լայնորեն կիրառում էր խտրականության դեմ պայքարի զանգվածային միջոցներ՝ բոյկոտը, փողոցային երթերը և այլն։ Նրա օրինակով Գրինսբորո քաղաքի (Հյուսիսային Կարոլինա) ուսանողները 1960 թ. փետրվարին կազմակերպեցին մի շարք «նստած ցույցեր» այն ճաշարաններում, որոնք հրաժարվում էին սպասարկել նեգրերին։ Այդ կամպանիայի ընթացքում, որը տարածվեց նաև Հարավի մյուս քաղաքներում, ստեղծվեցին պայքարի նոր կենտրոններ՝ ռասայական հավասարության կոնգրեսը և ոչ բռնի գործողությունների ուսանողական կոորդինացիոն կոմիտեն։ 1960—1963 թթ. հարավային նահանգներն ականատես եղան սպասարկման և աշխատանքի վարձակալման ժամանակ խտրականության դեմ ուղղված մեծաթիվ արշավների։

1963 թ. օգոստոսին 250 հազար ցուցարարների Վաշինգտոն կատարած երթը շրջադարձային կետ դարձավ նեգրերի իրավահավասարության շարժման մեջ, այդ ժամանակից սկսած ընդունելով «նեգրական հեղափոխության» բնույթ։ Ռասիզմի դեմ պայքարի առանձնահատկությունն սկսած 1963 թ. նրա զանգվածային բնույթն էր, գործողությունների մարտական ձևերը և իրադարձությունների կենտրոնը Հյուսիսի քաղաքները տեղափոխվելու միտումը։ Հենց այստեղ, քաղաքային գետոներում, իրենց պայթունակ սոցիալ-քաղաքական մթնոլորտով, 60-ական թվականներին առաջացան բազմաթիվ կազմակերպություններ, որոնք կողմնակից էին ռասայական խտրականության դեմ պայ-

քարի մարտական, ընդհուպ մինչև ծայրահեղ, մեթոդներին։ Գետոների երիտասարդությունը խստորեն քննադատում էր ավանդական կազմակերպություններին և նույնիսկ քրիստոնեական ղեկավարության կոնֆերանսին՝ նեգրական պրոբլեմի սոցիալական ասպեկտների նկատմամբ նրանց անուշադրության համար։

1966 թ. հանդես եկավ նոր տիպի ամենահանրաճանաչ կազմակերպությունը՝ «Սև հովազները», որի վրա երկու տարի անց տեղաց բռնությունների կարկուտը։ Ռասիստներին և կառավարող շրջաններին շատ էր մտահոգում այն, որ նեգրական կազմակերպությունները, հաշվի առնելով գետոների պահանջները, սկսել էին իրենց ծրագրերը հարմարացնել պայքարի նոր պայմաններին։ Բոլորից համարձակորեն գետոների խռովարար երիտասարդության կանչն ընդունեց Մ. Քինգը։ Նա դիմեց բանվորների հետ համագործակցության։ 1968 թ. ապրիլին նրա սպանությունը, որ ալեկոծեց ամբողջ երկիրը, հենց ռասիստների՝ նեգրական կազմակերպությունների քաղաքականության մեջ կատարված փոփոխությունների պատասխանն էր։

60-ական թվականների վերջին նեգրական շարժումն ընդունեց պետական-մոնոպոլիստական հիմքերի դեմ սոցիալական պայքարի վառ արտահայտված բնույթ։ Բանվորական զանգվածներն սկսեցին ավելի կարևոր դեր խաղալ քաղաքացիական իրավունքների համար պայքարի մեթոդները որոշելու գործում։

60-ական թվականներին առաջվա պես առախ մնաց նեգրական հարցի լուծման մեջ արհմիությունների դերի խնդիրը։ ԱԱՖ—ԱԱԿ-ի ռեակցիոն վերնախավի մեղքով արհմիութենական շարժումն այդ հարցի առթիվ հստակ ծրագիր չմշակեց։ Բեռնակիրների արհմիության պարագլուխ, նեգրերի քաղաքացիական իրավունքների համար պայքարի վետերան Ա. Ֆ. Ռենդոլֆը 1963 թ. ԱԱՖ—ԱԱԿ-ի համագումարում իրավացիորեն նշեց ճնշված նեգրական բնակչության կարիքների նկատմամբ գլխավոր արհմիութենական կենտրոնի առաջնորդների շարունակվող անուշադրությունը։

Դեմոկրատների պարտությունը 1968 թ. ընտրություններում

1968 թ. ընտրական կամպանիայի կարևորագույն պրոբլեմներն էին գների և հարկերի աճը, քաղաքների ճգնաժամը, հանցագործության ցնցող չափերը, նեգրական գետոների ընդվզումը, պատերազմը Վիետնամում։ Պրոբլեմների պրոբլեմն էր Վիետնամը, և այդ պրոբլեմը գլխավոր դեր խաղաց դեմոկրատների պարտության գործում։

Այն կոալիցիան, որի վրա 30-ական թվականների կեսից հենվում էին դեմոկրատների պարագլուխները, 1968 թ. ընտրություններ եկավ հիմնավորապես քայքայված։ Լիբերալ մտավորականությունը, որ 60-ական թվականներին նկատելի ազդեցություն ուներ, բացահայտորեն դատապարտում էր Լ. Ջոնսոնին Վիետնամի պատերազմի համար։ Նեգրական կազմակերպությունները և նրանց ետևից գնացող զանգվածները նույնպես բավական չափով կորցրել էին պրեզիդենտի նկատմամբ ունեցած վստահությունը, որը 1964—1965 թթ. խոստումնալի ելագծից հետո իր ուշադրությունը թուլացրել էր նրանց կարիքների նկատմամբ։ Արհմիութենական վերնախավերը հավատարիմ էին մնում կառավարությանը, բայց բուն արհմիություններում Սպիտակ տունը կորցրել էր օժանդակությունը՝ արհմիությունների մի մասը պաշտպանում էր ավելի առաջադեմ թեկնածուներին, իսկ մյուս մասը՝ Դ. Ուոլեսին։ Գործարար շրջանների համար Լ. Ջոնսոնը մնում էր դեմոկրատների ամենաընդունելի թեկնածուն, բայց Ուոլեսթրիթին և բիզնեսի մյուս կենտրոններին վախեցնում էր պրեզիդենտի անկարողությունը իրադարձությունների ընթացքը պահելու իր ձեռքում այն չափով, ինչ անհրաժեշտ էր։

Զանգվածային բողոքների ազդեցությամբ կուսակցության ներսում ըսկըսվեցին լուրջ տարաձայնություններ։ Դժգոհներին միավորող ամենահարմար դեմքը սենատոր Ռ. Քենեդին էր, որն իրեն դրսևորել էր որպես վիետնամական պրոբլեմի խաղաղ կարգավորման և ռեսուրսներն անհետաձգելի ներքին սոցիալական հարցերի լուծմանը կենտրոնացնելու կողմնակից։ Բայց Ռ. Քենեդին չանսաց օպոզիցիան բացահայտորեն ղեկավարելու կոչերին։ Նա խիստ նվազեցնում էր Լ. Ջոնսոնի քաղաքականության դեմ մասսայական շարժման ուժը։ Նրա հաշվենկատության սխալն ուղղեց սենատոր Յու. Մակարտին, 1967 թ. նոյեմբերին հայտարարելով իրեն պրեզիդենտության թեկնածու։ Նրա թեկնածությունը խանդավառություն առաջ բերեց ուսանողների և ռադիկալ մտավորականության շրջաններում։ 1968 թ. մարտին Նյու Հեմպշիրի նահանգի նախնական ընտրություններում նա հաղթեց Լ. Ջոնսոնին։ Միայն այդ ժամանակ Ռ. Քենեդին պայքարի մեջ մտավ և հայտարարեց իր թեկնածությունն առաջադրելու մասին։ Դա ժամանակավորապես իրարանցում առաջացրեց լիբերալների լագերում, բայց ամբողջությամբ ուժեղացրեց Լ. Ջոնսոնի հակառակորդների ճակատը։ Վերջինիս ոչինչ չէր մնում, քան հրաժարվել իր թեկնածությունն առաջադրելուց։ Ռ. Քենեդիի սպանվելով դեմոկրատների ամենահավանական թեկնածուն մնաց փոխպրեզիդենտ Հ. Համֆրին, սակայն նրա դիրքերը խախուտ դուրս եկան Լ. Ջոնսոնին չափից ավելի եռանդով ծառայելու պատճառով։ Դա նշանակում էր, որ դեմոկրատներն ընտրողների առջև կանգնեցին իբրև Լ. Ջոնսոնի կուսակցություն, որը բավական էր հանրապետականների հաղթանակի համար։

Հանրապետականների թեկնածուներ առաջադրվեցին Ռ. Նիքսոնը և Մերիլենդի նահանգապետ Ս. Ագնյուն։ Ռ. Նիքսոնի ամբողջ կամպանիայում գլխավորը «Օրենքի և կարգուկանոնի» լոզունգն էր։ Ոմանք բնակչության լայն խավերը դրանում տեսնում էին նեգրական և ուսանողական խռովություններին վերջ դնելու միջոց։ Հանրապետականների թեկնածուն խոստացավ հաշտեցման հասնել երկրում, որ դեմոկրատները հասցրել էին մինչև պառակտման։ Այլևս նա ոչինչ չխոստացավ։ Ընդհակառակը, Ռ. Նիքսոնը դատապարտեց «խոստումների արժեքազրկումը», որոնք կուտակվել, բայց չէին կատարվել դեմոկրատական կուսակցության կողմից։ Նա հնար գտավ ոչինչ չխոստանալու նույնիսկ Վիետնամի պատերազմի կապակցությամբ։ Ռ. Նիքսոնը հասկացրեց, որ դեղատոմս ունի նաև այդ պրոբլեմը լուծելու. եթե ամերիկացիները ցանկանում են իրեն ճանաչել, ապա թող ձայն տան իր օգտին։

Դեմոկրատական կուսակցությունը 1968 թ. ընտրություններում կարողացավ մեծամասնություն պահպանել երկու պալատներում էլ, բայց գլխավոր մրցանակը՝ պրեզիդենտական բաղկաթոռը, բաժին հասավ հանրապետականներին։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ (1969—1973)

Ռ. Նիքսոնի կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը

Հանրապետականների կառավարման արդեն առաջին տարում ԱՄՆ-ի էկոնոմիկան, որ անկման նշաններ էր ցույց տվել 1966—1967 թվականներից, գտնվում էր հերթական տնտեսական ճգնաժամի վտանգի առաջ։ Արտադրությունը 1969 թ. սեպտեմբերին անցնելով ցիկլի բարձրագույն կետը, սկսեց իջնել և 1970 թ. նոյեմբերին հասավ ցածրագույն կետին։ Արդյունաբերական արտադրանքի ինդեքսն այդ ժամանակում ընկավ 111,9-ից մինչև 102,6-ի (1967 թ. 100)։ 1970 թ. վերջից սկսվեց դեպրեսիան, որ շարունակվեց տարվա ընթացքում։ Աշխուժացման փուլն ըսկըսվեց 1971 թ. վերջում, իսկ հերթական ցիկլային վերելքն սկսվեց միայն 1972 թ. աշնանը։

Ճգնաժամը հասցրեց գործազրկության ուժեղ աճի։ Այն 1968 թ. 2,8 միլիոնից 1970 թ. հասավ 4,5 միլիոնի և շարունակեց աճել (1971 թ. 5 միլիոնից ավելի էր)։

1969—1971 թթ. տնտեսական ճգնաժամը և դեպրեսիան չհասցրին գների անկման, որը հատուկ էր նախորդ ցիկլային ճգնաժամերին, այլ, ընդհակառակը, ուղեկցվում էին ինֆլյացիայով, որը էլ ավելի ուժեղ հարվածեց բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների շահերին։

Ռ. Նիքսոնի կառավարությունը չորս տարվա ընթացքում իրեն դրսևորեց իբրև մի կաբինետ, որը երկիրը տանում էր ամուր կերպով արմատավորված պետական-մոնոպոլիստական կուրսով։ Նա նախորդ կառավարությունից տարբերվում էր միայն մասնավոր նախաձեռնությունը պաշտպանելու մեծ հակումով և սոցիալական ոլորտում պետության միջոցառումների պահպանողական ուղղվածությամբ։

Պրեզիդենտը և նրա պահպանողական խորհրդականներն սկզբում հայտարարեցին, թե սրանից հետո մասնավոր նախաձեռնությունը և իշխանության տեղական մարմիններն իրենց վրա են վերցնում բոլոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պրոբլեմների կարևոր, եթե ոչ հիմնական մասը։ Սակայն էկոնոմիկայի ճգնաժամային վիճակը և սոցիալական սուր հակասություններն ստիպեցին կառավարությանն առաջվա պես ֆեդերալ պետական իշխանությանն ակտիվորեն ներգրավել սոցիալ-տնտեսական հարցերի լուծման գործին։ Ռ. Նիքսոնի տնտեսական քաղաքականության առանցքն առաջին 2,5 տարվա ընթացքում էկոնոմիկայի աճի գիտակցաբար արգելակման ճանապարհով պայքարն էր ինֆլյացիայի դեմ։ Այդ քաղաքականության բաղկացուցիչ տարրն էր գործազրկության կանխամտածված ավելացումը՝ հանուն չափից ավելի գերտաքացած մեքենայի «սառեցման»։ Դա նշանակում էր, որ կառավարությունը փորձում էր ճգնաժամային պրոբլեմները լուծել բացառապես աշխատանքի մարդկանց հաշվին։

Նշված գծի իրականացման գործում հանրապետականները «հաջողության» հասան միայն գործազուրկների բանակն ավելացնելու ասպարեզում, որտեղ կառավարության գործողությունները համընկնում էին տնտեսական ճգնաժամի տարերային ուժերի գործողությունների հետ։ Ինչ վերաբերում է ինֆլյացիային, ապա այն կանգնեցնել չհաջողվեց։ Կառավարությունը չէր ցանկանում ուշադրություն դարձնել ինֆլյացիայի աճի ռեալ պատճառներին, մոնոպոլիաների ճնշիչ ազդեցությանը, որոնք թելադրում էին գնագոյացումը և ամբողջ ֆինանսական քաղաքականությունը, իմպերիալիստական արտաքին քաղաքականության վրա կատարվող ծախսերին և այլն։

1971 թ. օգոստոսին Ռ. Նիքսոնը հայտարարեց «նոր տնտեսական քաղաքականության» սկսվելու մասին և իրականացրեց մի շարք արտակարգ միջոցառումներ։ «Նոր տնտեսական քաղաքականության» առաջին փուլը նախատեսված էր 90 օրվա համար։ Պրեզիդենտն ստեղծեց մի շարք հատուկ վարչություններ, նրանց առջև խնդիր դնելով կանգնեցնել աշխատավարձի և գների բարձրացումը։ 90 օրերի ընթացքում արգելվեց աշխատավարձի ամեն տեսակ բարձրացում, նույնիսկ եթե այդ ժամանակ ուժի մեջ էին մտնում աշխատանքի վճարման դրույքների ավելացման մասին արհմիությունների և ձեռնարկատերերի վաղօրոք համաձայնեցված որոշումները։ Ռ. Նիքսոնի արտակարգ կարգադրությունը փաստորեն արգելից 353 գործադուլ, որոնք տեղի էին ունենալու նրա հրապարակման պահին, որովհետև գործադուլների կարևորագույն հարցը՝ աշխատավարձի հավելումները, հանվում էր կոլեկտիվ

բանակցությունների օրակարգից։ Միաժամանակ ձեռնարկատերերին արվում էր հարկային էական զեղչ, որը կոչված էր խրախուսելու ճգնաժամի հարվածած էկոնոմիկայի մեջ նոր կապիտալ ներդրումները։

1971 թ. նոյեմբերին, աշխատավարձի ժամանակավոր սառեցման ավարտման նախօրյակին, աշխատավարձի գծով խորհուրդը, որ ստեղծվել էր եռակողմ հիմքի վրա (բիզնեսի, արհմիությունների, «հասարակայնության»), ձայների մեծամասնությամբ որոշում ընդունեց աշխատանքի վարձատրման դրույքի բարձրացման առաստաղ սահմանել 5,5 տոկոսը։ Արհմիությունների կողմից խորհրդի անդամները քվեարկեցին այդ պետական-մոնոպոլիստական թելադրանքի դեմ։

1971 թ. նոյեմբերի կեսին սկսվեց «նոր տնտեսական քաղաքականության» երկրորդ փուլը, որի գլխավոր հատկանիշը աշխատավարձի սառեցումից անցումն էր նրա կարգավորմանը։ Այս անգամ կառավարությունն արդեն ավելի քիչ էր հույս դնում արհմիութենական պարագլուխների պաշտպանության վրա, որովհետև 1972 թ. մարտին արհմիությունների ներկայացուցիչների 4-ից 5-ը ցուցադրաբար դուրս եկան աշխատավարձի գծով խորհրդից։ «Նոր տնտեսական քաղաքականության» բաղկացուցիչ մասը դարձավ պետության ակտիվ միջամտությունը արտադրական պրոցեսին, նպատակ ունենալով բարձրացնել դրա արդյունավետությունը։

Հանրապետական կառավարությունը բազմիցս զինված ուժ գործադրեց բանվոր դասակարգի գործադուլային ելույթների դեմ։ Նա շատ անգամ աշխատանքային հարաբերություններում դիմեց հարկադրական արբիտրաժի ռեակցիոն զենքին, նպատակ ունենալով այդպիսով ստիճանաբար լիկվիդացնել գործադուլի իրավունքը։

Կառավարությունը խիստ ուժեղացրեց բռնությունները դեմոկրատական շարժման, հատկապես նեգրական զանգվածների դեմ, ինչպես նաև ռադիկալորեն տրամադրված երիտասարդության հակառազմական ելույթների ու բողոքների դեմ։ Բազմաթիվ անգամ գնդակոծվեցին ուսանողական ցույցերը։ 1971 թ. օգոստոսին Սան Ֆրանցիսկոյի Սան Քվենտին բանտում սպանվեց նեգրական շարժման հայտնի գործիչ Ջ. Ջեկսոնը։ Ռեակցիայի սարքած դատական պրոցեսների մեջ կարևորագույն դեր էր հատկացվել Ա. Դեյվիսի «գործին», որը կոչված էր ամերիկացիների անբավականությունն ուղղել հակակոմունիստական և հականեգրական հունը։ Կարևոր նշանակություն ունեցավ նաև Բերիգեն եղբայրների «գործը», որոնց ՀՖԲ-ի շեֆ Է. Հուվերը վերագրեց կառավարության դեմ «դավադրության» հնարովի մեղադրանքը։ Դրա հետ միասին ծավալվեց ընդհանուր ահաբեկման կամպանիան, որն ԱՄՆ-ում շատերին հիշեցրեց մակարտիզմի մռայլ տարիները։ Հանրապետական վարչակազմի ներքին քաղաքականությունը շատ ուժեղ ռասիստական երանգ ուներ։ Ռ. Նիքսոնի «Հարավային ստրատեգիան» նպատակ ուներ ազդեցություն նվաճել դիքսիկրատների միջավայրում և իր կողմը գրավել այն ուժերի մեծ մասը, որոնք հավաքվել էին ծայրահեղ ռեակցիոներ Դ. Ուոլեսի լագերում։ Ռ. Նիքսոնը վարում էր դպրոցների ապախտարկանացումն արգելակելու գիծ, որով պաշտպանություն էր գտնում սպիտակամորթ բնակչության ռասիզմով վարակված ուներոր շրջանների միջավայրում, ուներորներ, որոնք խոշոր քաղաքների կենտրոնական շրջաններից տեղափոխվում էին արվարձանները՝ հույս ունենալով մեկուսանալ նեգրական գետոներից։

Ռ. Նիքսոնի կառավարման ժամանակ փոխվեց գերագույն դատարանի անդամների համարյա կեսը, դատարան, որը բացառիկ կարևոր դեր է խաղում ԱՄՆ-ի պետական կառուցվածքում։ Հատկապես նկատելի դարձավ Է. Ուորենի և Հ. Բլեկի հեռանալը։ Լրացնելով չորս թափուր տեղերը, Ռ. Նիքսոնը

կարևոր քայլ կատարեց բարձրագույն դատական ատյանը դեպի աջ շրջելու ուղղությամբ։ ԱՄՆ-ի գերագույն դատարանը դարձավ ավելի նվազ դեմոկրատական՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետ կապված գործերի քննման, ինչպես նաև ԱՄՆ-ի աշխատանքային իրավունքի մեկնաբանման ժամանակ։

Հակառակ սոցիալական հարցերում պահպանողական հայացքներին, Ռ. Նիքսոնին չհաջողվեց վճռականորեն արգելակել հասարակության ստորին շերտերի օգնության համար սոցիալական ծախսերի ծրագիրը, որը, չնայած պակասեցված չափով, իրագործում էին դեմոկրատները։ Սոցիալական ծախսերը, տնտեսական ճգնաժամի հարվածների և բողոքի զանգվածային շարժման ներգործությամբ հարկ եղավ նույնիսկ ավելացնել։ Այնուամենայնիվ, գնահատելով Ռ. Նիքսոնի կառավարության ներքին քաղաքականությունը, հարկավոր է ասել, որ ամերիկյան բուրժուազիայի սոցիալական քաղաքականության երկու գլխավոր միտումներից՝ լիբերալիզմից և ռեակցիայից, հանրապետականներ-պահպանողականների գործունեության մեջ բացահայտորեն գերակշռում էր ռեակցիոն գիծը։

Արտաքին քաղաքականությունը։ 1972 թ. սովետա-ամերիկյան համաձայնագրերը

Ռ. Նիքսոնի կառավարության արտաքին քաղաքականության մեջ սոցիալիստական երկրների հետ հարաբերությունները, ինչպես և առաջ, գերակշռում էին մնացած բոլոր հարցերին։ 1969 թ. աշնանը ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների ներկայացուցիչների միջև բանակցություններ սկսվեցին ստրատեգիական զենքի արտադրությունը սահմանափակելու միջոցառումների վերաբերյալ։ 1970 թ. փետրվարի 18-ին կոնգրեսին հղած ուղերձում Ռ. Նիքսոնը խոսում էր «որոշ հին դիրքեր ուշադիր վերանայելու» և համաշխարհային պրոբլեմներին «նոր մոտեցման» անհրաժեշտության մասին։

70-ական թվականները նշանավորվեցին ներիմպերիալիստական նոր հակասությունների սրումով։ Կապիտալիստական աշխարհում ԱՄՆ-ի անբաժան տիրապետության և թելադրանքի ժամանակը անցյալի գիրկն էր անցնում։ Ամերիկյան մոնոպոլիաների տնտեսական դիրքերը քայքայվել էին, որն իր ամենավառ արտահայտությունը գտավ միջազգային ֆինանսավալյուտային ճգնաժամում։ Ամերիկյան մոնոպոլիաների տնտեսական հեգեմոնիզմին շոշափելի հարված հասցրին Ճապոնիան և ԳՖՀ-ն, իսկ առանձին ուղղություններով՝ նաև Ֆրանսիան և Անգլիան։ Այդ պայմաններում ԱՄՆ-ը արդեն չէր կարող տանել ռազմատնտեսական պարտավորությունների բեռը, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում բարդվել էր ամերիկյան ժողովրդի վրա։

Ընդունելով տնտեսական արտակարգ ծրագիր, Ռ. Նիքսոնը նրանում կետ մտցրեց ներմուծման մաքսը 10 տոկոսով բարձրացնելու մասին։ Դրա հետ միասին ամերիկացիները, նկատի ունենալով ոսկու պաշարների սպառվելը, հրաժարվեցին դոլարը ոսկով փոխանակելուց։ Դա ճգնաժամ առաջ բերեց միջիմպերիալիստական հարաբերություններում։ Մրցակիցները դոլարի դեվալվացիա պահանջեցին։ 1972 թ. ապրիլին, 1934 թ. հետո առաջին անգամ, օրինականացվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների վալյուտայի նոր արժեզրկումը. դոլարի ոսկու պարունակությունը պակասեց 7,89 տոկոսով։

Ոչ պակաս սրված էր նաև իր դաշնակիցների հետ ԱՄՆ-ի քաղաքական հարաբերությունների պրոբլեմը։ ԱՄՆ-ի գլխավոր մայրցամաքային դաշնակիցները՝ ԳՖՀ-ն և Ֆրանսիան, հանդես էին գալիս միջազգային լարվածության թուլացման և անվտանգության պրոբլեմների գծով համաեվրոպական խորհրդակցության հրավիրման օգտին։

Ամերիկյան իմպերիալիզմը մնում էր բոլոր մայրցամաքներում ազգա-

յին-ազատագրական շարժման, դեմոկրատական հեղափոխությունների դեմ պայքարի գլխավոր ուժը։ Եթե Լատինական Ամերիկայում ԱՄՆ-ի կառավարությունը հենարան էր փնտրում լատիֆունդիստների միջավայրում, ռեակցիոն զինվորականության և խոշոր բուրժուազիայի հակաազգային շրջաններում, ապա Աֆրիկայում նա հույսը դնում էր ռասիստական վարչակարգերի նորաստեղծ ինքնուրույն պետությունների ներքին դժվարություններն օգտագործելու վրա։

Մերձավոր Արևելքում ամերիկյան իմպերիալիզմի փորձված դաշնակից և զենք էր ծառայում սիոնիզմը։ Ռ. Նիքսոնի կառավարությունը շարունակում էր Իսրայելի զավթողական քաղաքականությունը բոլոր միջոցներով խրախուսելու դեմոկրատների կուրսը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ամենահիվանդոտ տեղը շարունակում էր մնալ Հնդկաչինը։ Ռ. Նիքսոնը առաջ քաշեց պատերազմի «վիետնամացման» ծրագիրը, այսինքն՝ ԱՄՆ-ի ռազմատնտեսական հետագա օգնությամբ նրա մեծ ծանրությունը մարիոնետային սայգոնյան վարչակարգի վրա դնելը։ Դա ձևակերպվեց «գուամական» հատուկ դոկտրինայում։

Ռ. Նիքսոնը կրճատեց ամերիկյան զորքերի թիվը Հնդկաչինում (1972 թ. ամռան մոտերը այնտեղ մնացել էր 100 հազարից էլ պակաս), սակայն, կրճատելով ինտերվենցիոն բանակի թվաքանակը, նա ընդարձակեց պատերազմը, հիմնական շեշտը դնելով ռմբակոծիչ գործողությունների վրա։ 1970 թ. ամերիկյան զորքերը ներխուժեցին Կամպուչիա, իսկ 1971 թ.՝ Լաոս։ 1971 թ. դեկտեմբերին վերսկսվեց ՎԴՀ-ի ռմբակոծությունը։ Սակայն ամերիկյան իմպերիալիզմը Հնդկաչինում կրեց հերթական պարտությունը։ Վիետնամացման ծրագիրը չօգնեց։ 1972 թ. գարնան-ամռանը հարավվիետնամական հայրենասերները մի շարք ծանր հարվածներ հասցրին մարիոնետային զորքերին և ամերիկյան զինվորականությանը։

1972 թ. մայիսը միջազգային հարաբերությունների պատմության մեջ մտավ որպես մի ժամանակ, երբ ԱՄՆ-ի կառավարող շրջանները պաշտոնապես խոստովանեցին, որ «աշխարհում գերազանցության» հասնելու իրենց հավակնությունները վերջնականապես փուլ են եկել։ Նշանակալից է, որ սովետա-ամերիկյան հարաբերություններում պատմական տեղաշարժերին, խաղաղ գոյակցության սկզբունքների պաշտոնական ճանաչմանը և նույնիսկ Սովետական Միության հետ համագործակցմանը ԱՄՆ-ին հասցրեց հենց պրեզիդենտ Ռ. Նիքսոնը, որը մի ժամանակ «սառը պատերազմի» ամենաակտիվ կողմնակիցներից և կազմակերպիչներից մեկն էր։ Դա տարբեր սոցիալ-տնտեսական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության քաղաքականության օբյեկտիվ անխուսափելիության համոզիչ ապացույցն է։

«Համաշխարհային կոմունիզմի» ոչնչացմանը կամ թուլացմանն ուղղված արտաքին քաղաքական դոկտրինների կրախը կանխորոշող գլխավոր գործոնը ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հզորության աճն էր։ Փուլ եկավ երկու գլխավոր առասպել, որոնց վրա հենվում էր ամբողջ հետպատերազմյան հակակոմունիստական պրոպագանդան, իսկ դրա հետ նաև սոցիալիստական երկրների նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը, մի կողմից, սոցիալիստական կարգերի անկայունության և գիտատեխնիկական հեղափոխության դարում բարդ սոցիալ-տնտեսական պրոբլեմներից գլուխ հանելու նրա «անկարողության» մասին պնդումը, և «սովետական սպառնալիքի» մասին թեզիսը՝ մյուս կողմից։

Ամերիկյան ժողովրդի լայն խավերը և կառավարող շրջանների զգալի մասը տեսնում էին, որ «ուժի դիրքերից» ելնող քաղաքականության շարունակումը տանում է ԱՄՆ-ի հեղինակության անկմանը։ ՍՍՀՄ-ն ապացուցեց,

որ ԱՄՆ-ի ինչ-որ ռազմական «գերազանցության» բոլոր հաշիվները կառուցված են ավազի վրա։

Սովետա-ամերիկյան բանակցություններն ավարտվեցին կարևոր համաձայնագրերի ստորագրումով։ Դրանք կարելի է բաժանել երկու խմբի, առաջինը վերաբերում է սովետա-ամերիկյան հարաբերություններին, երկրորդը՝ միջազգային պրոբլեմներին։ Առաջին կատեգորիայի համաձայնագրերի մեջ կարևորագույն նշանակություն ունեն երեք փաստաթուղթ՝ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների հիմունքները, հակահրթիռային պաշտպանության համակարգի սահմանափակման վերաբերյալ պայմանագիրը և ստրատեգիական հարձակողական զենքի բնագավառում մի քանի միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր համաձայնագիրը։

Փոխհարաբերությունների հիմունքներում նշված են այնպիսի սկզբունքներ, որոնք կոչված էին երկու ամենահզոր պետությունների միջև դնելու կայուն խաղաղ հարաբերությունների հիմքը։ ԱՄՆ-ի կառավարությունը առաջին անգամ պաշտոնապես և հստակ հայտարարեց այն մասին, որ Սովետական Միության հետ հարաբերություններում ինքն առաջնորդվելու է խաղաղ գոյակցության սկզբունքով։ Այդ պայմանագրի ստորագրումով ստեղծվեցին միջազգային-իրավական նախադրյալներ այն բանի համար, որպեսզի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր բնագավառներում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կապերն ու համագործակցությունը կառուցվեին կայուն, երկարաժամկետ հիմքի վրա։

ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հակահրթիռային պաշտպանության համակարգի սահմանափակման պայմանագրի և ստրատեգիական հարձակողական զենքի բնագավառում մի քանի միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր համաձայնագրի ստորագրումը կարևոր միջոց էր, որը նպաստում էր միջուկային պատերազմի սպառնալիքի թուլացմանը, սպառազինության մրցավազքի զսպմանը և համընդհանուր զինաթափման հասնելու հեռանկարի ստեղծմանը։ Այդ համաձայնագրերը հարված հասցրին ամերիկյան «միջուկային գերազանցության» կոնցեպցիաներին, որոնք պաշտպանում էին ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական համալիրի ազդեցիկ խմբերը։ Այդ փաստաթղթերում հռչակված հավասար անվտանգության մասին թեզը բացառում էր այս կամ այն կողմի միակողմանի առավելությունների հարցադրման հնարավորությունը, իսկ երկու պետությունների փոխադարձ վստահության սկզբունքը ներգործում էր սովետա-ամերիկյան հարաբերությունների և ամբողջ աշխարհի միջազգային իրադրության առողջացմանը։

Բանակցությունների ընթացքում ստորագրվեցին նաև կարևոր այլ համաձայնագրեր, որոնք ուղղված էին սովետա-ամերիկյան հարաբերությունների, ամենից առաջ առևտրական և գիտատեխնիկական համագործակցության արմատական բարելավմանը։

Սովետա-ամերիկյան բանակցությունների միջազգային ասպեկտը ներառում էր հետևյալ պրոբլեմները. եվրոպական անվտանգությունը, Մերձավոր Արևելքը, Հնդկաչինը, զինաթափումը, Միավորված ազգերի կազմակերպության դերի ամրապնդումը։

Մոսկվայի բանակցություններում ամենասուր տարաձայնությունների առարկան Հնդկաչինի իրադարձություններն էին։ Սովետական Միությունը իր համերաշխությունը հայտնեց Վիետնամի, Լաոսի, Կամպուչիայի ժողովուրդների՝ ազատության, անկախության և սոցիալական առաջադիմության համար մղած արդարացի պայքարին։ Նա հանդես եկավ ՎԴՀ-ի ռմբակոծությունները դադարեցնելու, ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների զորքերը Հարավային Վիետնամից լիովին և առանց պայմանի դուրս բերելու օգտին, այն բանի

համար, որպեսզի Հնդկաչինի ժողովուրդները հնարավորություն ունենային իրենք որոշելու իրենց ճակատագիրը։ Ամերիկյան կողմը, ի վիճակի չլինելով արդարացնել ԱՄՆ-ի քաղաքականությունը Հնդկաչինում, առաջ չքաշեց Հարավարևելյան Ասիայում իր ագրեսիվ գործողությունների որևէ լուրջ բացատրություն։ Ռ. Նիքսոնը ստիպված էր հայտարարել, որ ԱՄՆ-ը պլանավորել է կրակը դադարեցնել, ապա և դուրս բերել Հարավային Վիետնամում գտնվող ամերիկյան բոլոր զորքերը։

Ռ. Նիքսոնի Մոսկվա կատարած այցը և սովետա-ամերիկյան համաձայնագրերը ԱՄՆ-ի համար առաջնակարգ ներքաղաքական պրոբլեմի վերածվեցին։ Դա նաև գտնվեց միջազգային հասարակայնության ուշադրության կենտրոնում, բանակցությունների արդյունքներն ընդունվեցին թեթևացման զգացումով, որպես ոչ միայն սովետա-ամերիկյան փոխհարաբերություններում, այլև միջազգային բոլոր հարաբերություններում կատարված շրջադարձ դեպի լավը։

Այս բոլորն ապահովեց սովետա-ամերիկյան համաձայնագրերի քաղաքական լայն պաշտպանությունը ԱՄՆ-ում։ Երկու քաղաքական կուսակցությունների և կոնգրեսում նրանց ֆրակցիաների պարագլուխները հայտարարեցին պայմանագրերի լիակատար պաշտպանության մասին։

Սակայն կնքված համաձայնագրերը որոշակի շրջաններում կատաղի դիմադրություն առաջ բերեցին ԱՄՆ-ում և կապիտալիստական աշխարհի մյուս երկրներում, դեռ կային այնպիսի ազդեցիկ ուժեր, որոնք կցանկանային միջազգային հարաբերությունները վերադարձնել «սառը պատերազմի» բնագծերը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության բոլոր ելևէջներով հանդերձ, անվիճելի է, որ 1972 թ. մայիսին Մոսկվայում ստորագրված համաձայնագրերը կարևոր դրական իրադարձություն էին սովետա-ամերիկյան հարաբերություններում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Կոնկրետ գործերի վերածելով Մոսկվայում ձեռք բերված սկզբունքային համաձայնությունը, կողմերը դիմեցին նոր կարևոր որոշումներ ընդունելուն։ 1972 թ. հոկտեմբերին առևտրական պայմանագիր ստորագրվեց, որը նախատեսում էր եռամյա ժամանակամիջոցի համար առևտրի ծավալն ավելացնել ծայրահեղ դեպքում եռակի չափով։ ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարեց, որ կձգտի կոնգրեսում հասնել առևտրական գործերում առավել բարենպաստման ազգի ստատուսը անվերապահորեն ՍՍՀՄ-ի վրա տարածելու հարցի որոշմանը։ Գիտատեխնիկական համագործակցության գծով սովետա-ամերիկյան խառը հանձնաժողովն արդեն հավանություն էր տվել գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառների ավելի քան 25 ծրագրի։

Բանվորական և դեմոկրատական շարժումը

60-ական թվականների վերջը 70-ականների սկիզբն ԱՄՆ-ում գործադուլային շարժման վերելքի ժամանակաշրջան էր։ Գործադուլային պայքարի սրվելը կապված էր ամերիկյան էկոնոմիկայում ճգնաժամային երևույթների խորացման հետ։ 1969 թ. ԱՄՆ-ում եղել են ռեկորդային թվով գործադուլներ՝ 5700։ Գործադուլների հետևանքով 1970 թ. աշխատաժամանակի կորստի չափը (62 միլիոն մարդ-օր) մոտեցել էր ռեկորդային թվերի, միայն զիջելով 1946 և 1959 թթ. տվյալներին։ 1971 թ. այն հիմնական ցուցանիշները, որոնք բնորոշում են գործադուլային շարժման վիճակը՝ գործադուլների թիվը, մասնակիցների քանակը, կորսված ժամանակի ծավալը, չնայած դրանք որոշ չափով զիջում էին 1970 թ. տվյալներին, ավելի բարձր մակարդակի վրա էին, քան 1960—1966 թթ.։

Գործադուլային շարժման վերելքը, որ նկատվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1966—1967 թթ., շարունակվեց նաև 70-ական թվականների սկզբին։

Վերջին տարիների գործադուլներին բնորոշ է այնպիսի երևույթ, որը 1949 թվականից չի հանդիպում գործադուլային պայքարի պատմության մեջ։ «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության դեմ բանվոր-էլեկտրիկների գործադուլի ժամանակ, ձախ արհմիություններն ԱԱԿ-ից հեռացնելուց հետո, ԱԱՖ—ԱԱԿ-ի արհմիությունները և ձախ արհմիութենական պարագլուխների ղեկավարած էլեկտրիկների անկախ արհմիությունը 1969—1970 թթ. առաջին անգամ հանդես եկան միասնական ճակատով։ Նույնիսկ Ջ. Մինին ի վիճակի չեղավ խորականության ենթարկել էլեկտրիկների առաջադիմական արհմիությանը և թույլատրեց նրանց հետ միասնական գործողությունները։

1969—1972 թթ. իրադարձությունները ցույց տվեցին, որ արհմիութենական նոր կենտրոնը՝ Արհմիութենական գործողությունների խորհուրդը, շարադարացրեց այն մեծ հույսերը, որ նրա հետ կապում էին ԱՄՆ-ի բանվոր դասակարգի առաջավոր ուժերը։ ԱԳԽ-ի ղեկավարությունն ի վիճակի չեղավ վճռականորեն ազատվել արմատացած ռեֆորմիստական ավանդույթներից։ 1970 թ. Ռ. Ռեյտերի մահը ԱԳԽ-ին զրկեց հեղինակավոր և փորձված պարագլխից, որը նույնպես բացասաբար անդրադարձավ նոր արհմիութենական միավորման կազմակերպման և զարգացման վրա։

Այնուամենայնիվ, սխալ կլիներ ԱՄՆ-ի արհմիութենական շարժման մեջ չտեսնել կատարված առաջադիմական քաղաքական երևույթների աճը։ 70-ական թվականների սկզբին զարգացավ արհմիությունների քաղաքական ակտիվացման այնպիսի ինստիտուտ, ինչպիսին են շարքայինների կոնֆերանսները, որոնց մասնակցում էին արհմիութենական աշխատողների ստորին և միջին օղակի լայն խավերը, հաճախ նաև արհմիութենական բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչներ։ Դրանցում քննարկվում էին տնտեսական և քաղաքական պրոբլեմներ, հատկապես այնպիսի հարցեր, որոնք կապված էին Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիան դադարեցնելու համար պայքարի ուղիների մշակման հետ։

ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը, ընդհանուր ճգնաժամի սրման և զանգվածների քաղաքական վերելքի այս պայմաններում ակտիվացրեց իր գործունեությունը։ 1968 թ. 28 տարվա ընթացքում առաջին անգամ կուսակցությունն իր սեփական թեկնածուներն առաջադրեց պետության բարձրագույն ընտրովի պաշտոնների համար։ Կոմունիստները կարողացան օրենսդրական արգելքները հաղթահարել միայն երկու նահանգում, բայց ընտրական կամպանիային մասնակցելը կարող էր կապերն ընդարձակել աշխատավորների հետ։

Կուսակցության պատմության մեջ կարևոր իրադարձություն էր ամենօրյա թերթի հրատարակության վերսկսումը։ Այն լույս տեսավ 1968 թ. ամռանը, «Դեյլի ուորլդ» անվամբ։

1968 թ. կուսակցության 19-րդ համագումարում ընդունվեց կոմունիստների նոր ծրագիրը։ Նրանում կենտրոնական տեղ է գրավում անկախ քաղաքական գործողությունների պրոբլեմը, հաշվի առնելով զանգվածային դեմոկրատական շարժումների վերելքը։ Անդրադառնալով 30-ական թվականների փառապանծ ավանդույթներին, կուսակցությունը միաժամանակ նշում է, որ այժմ ավելի խոր սոցիալական վերակառուցման պայմաններ են հասունացել, որոնք ուղի են հարթում ամերիկյան հասարակության սոցիալական վերափոխման համար։

1970 թ. փետրվարին Դյուբայի ակումբների հիման վրա, ակումբներ, որոնք գործում էին 1964 թվականից, ԱՄՆ-ում ստեղծվեց կոմերիտմիություն՝

«Ազատության համար պայքարի երիտասարդ բանվորների միությունը», որ ակտիվորեն մասնակցում է ռադիկալ երիտասարդական շարժմանը։

ԱՄՆ-ի դեմոկրատական շարժման պայքարն ընթանում էր երեք ուղղությամբ. սոցիալ-տնտեսական ոլորտում մոնոպոլիաների ճնշման սահմանափակում, խտրականության ենթարկվող փոքրամասնության համար քաղաքացիական իրավունքների ձեռքբերում, իմպերիալիստական ագրեսիայի դադարեցումը Հնդկաչինում։ Այդ պրոբլեմների լուծման ճանապարհին կանգնած էր մոնոպոլիաների և ռազմաարդյունաբերական համալիրի տիրապետությունը, ուստի ԱՄՆ-ի կոմկուսի նոր ծրագիրն էլ հենց խնդիր էր դնում ստեղծել «նոր ժողովրդական կուսակցություն», որը ղեկավարեր հակամոնոպոլիստական պայքարը։

ԱՄՆ-ի համար 70-ական թվականների սկիզբը տարբերվում էր 50-ական թվականների սկզբից ռեակցիայի և միլիտարիզմի էական թուլացմամբ։ Երկրում ակտիվորեն գործում էին ազդու առաջադեմ ուժեր, որոնք արդեն տեղի չէին տալիս հակակոմունիստական և հակասովետական լոզունգներով վախեցնելուն և արմատական փոփոխություններ էին պահանջում ներքին ու արտաքին քաղաքականության մեջ։ Ամերիկյան ռեակցիային, օրինակ, չհաջողվեց քաղաքական շահ ստանալ Անջելա Դևիսի «գործից» և այն որպես միջոց օգտագործել հակակոմունիստական հիստերիա բորբոքելու համար։ Ընդհակառակը, 1972 թ. հունիսին հակակոմունիստների և ռասիստների թխած Ա. Դևիսի «գործը» փակվեց, և քաջարի կոմունիստուհին ազատ արձակվեց։

1972 թ. ընտրությունները և Ռ. Նիքսոնի երկրորդ կառավարության գործունեության սկիզբը

1972 թ. ընտրական կամպանիան բնորոշ էր ամենից առաջ նրանով, որ դրանում ԱՄՆ-ի ամբողջ հետպատերազմյան ժամանակաշրջանի համար ամենաուժեղ կերպով հնչեց բողոքող, առաջադեմ Ամերիկայի ձայնը։ ԱՄՆ-ի հետպատերազմյան պատմության մեջ երկկուսակցական հաշվեկշիռն առաջին անգամ նկատելիորեն խախտվեց 1964 թ., երբ երկու գլխավոր կուսակցություններից մեկն ավանդաբար ստեղծված նեոլիբերալ-նեոպահպանողական կենտրոնից դեպի աջ։ 1972 թ. կատարվեց հաշվեկշռի երկրորդ խախտումը։ Բայց այս անգամ դա կատարվեց քաղաքական ստանդարտից դեպի ձախ կատարված շեղման պատճառով, որն արտահայտվեց դեմոկրատական կուսակցության կողմից լուրջ սոցիալական ռեֆորմների ծրագրի և պատերազմը Վիետնամում անհապաղ դադարեցնելու կուրսի ընդունումով։ Սենատոր Ջ. Մակգովերնի թեկնածության առաջադրումն արտացոլում էր կուսակցության մեջ դեպի ձախ կատարված տեղաշարժը։ Դրան օգնեց Միացյալ Նահանգների սահմանադրության 26-րդ լրացման ուժի մեջ մտնելը, որի համաձայն ընտրական ձայնի իրավունք ստացան 18-ից մինչև 21 տարեկան 25 միլիոն երիտասարդ ընտրողներ։

Ջ. Մակգովերնը կուսակցության ղեկավարության էր հասել 60-ական թվականների վերջից ծավալված բողոքի զանգվածային շարժման ալիքի շնորհիվ։ Դեմոկրատական կուսակցությունը, զանգվածների լոզունգների մի մասն իր ծրագրաքաղաքական կողմնորոշման մեջ ներառնելով, նորից ապացուցեց նրանց ռադիկալ, հակամոնոպոլիստական պահանջները մարելու կարողությունը։ Այդպես էր պոպուլիզմի և «նոր կուրսի» ժամանակաշրջաններում, դա կատարվեց նաև 1972 թ., ամերիկյան կապիտալիզմի սոցիալ-քաղաքական հերթական խորագույն ճգնաժամի պահին։

ԱՄՆ-ի կառավարող շրջաններն անհանգստացած էին գլխավոր կուսակցություններից մեկի դեպի ձախ կատարված տեղաշարժից։ Ռեակցիոներները, պահպանողականները և չափավոր լիբերալներն անկախ իրենց կուսակցական

պատկանելությունից շտապեցին խառնվել Ջ. Մակգովերնի նախընտրական կամպանիային։ Նրանք հասան դեմոկրատների պլատֆորմի մեջ իսրայելական ագրեսորներին ուժեղացված օգնություն ցույց տալու մասին կետեր մտցնելուն։ Ռեակցիոն լագերի ջանքերով կուսակցության ծրագրում մտցվեցին ստանդարտ հակակոմունիստական հերյուրանքներ։

ԱԱՖ—ԱԱԿ-ի պարագլուխներն ընտրություններում «չեզոքության» դիրք գրավեցին, որը ձեռնտու էր հանրապետականներին։ Իսկ բեռնատար ավտոտրանսպորտի վարորդների ուժեղ արհմիության նախագահ Ֆիտցսիմոնսը պաշտոնապես հանդես եկավ Ռ. Նիքսոնի օգտին։

Պրեզիդենտ Ռ. Նիքսոնը 1972 թ. ընտրական կամպանիայում իր ակտիվի մեջ մտցրեց երեք կարևոր հաղթաթուղթ՝ տնտեսական կոնյունկտուրայի բարելավումը, Մոսկվա կատարած իր այցի պոզիտիվ արդյունքները և Վիետնամում խաղաղություն հաստատելու բանակցությունները։ Հանրապետականներն օգտագործեցին նաև դեմոկրատական կուսակցության ներսում եղած տարաձայնությունները։

1972 թ. ընտրություններում նշանակալի հաջողության հասան կոմունիստները։ Նրանց թեկնածուներ Գ. Հոլը և Դ. Թայները գրանցվեցին 14 նահանգների և Կոլումբիա ֆեդերալ օկրուգի ընտրական ցուցակներում։

Ռ. Նիքսոնը 1972 թ. ընտրություններում հասավ տպավորիչ հաղթանակի, Ջ. Մակգովերնին զիջելով միայն Մասաչուսետս նահանգը և Կոլումբիա (Վաշինգտոն) ֆեդերալ օկրուգը։ Սակայն կոնգրեսի երկու պալատներում էլ դեմոկրատների դիրքերը չսասանվեցին, և հանրապետականները դարձյալ մնացին փոքրամասնության կուսակցություն։

Երկրորդ ժամկետով անցնելով պրեզիդենտական իր պարտականությունների կատարմանը, Ռ. Նիքսոնը ընտրելով պահպանողական ուղղության մինիստրների և խորհրդականների, էականորեն փոխեց կաբինետի կազմը։ 1978 թ. սկզբին հռչակեց «նոր տնտեսական քաղաքականության» երրորդ փուլը։ Նրա առանցքային գաղափարը գների շարժման, աշխատավարձի և տնտեսական մյուս կարևորագույն ցուցանիշների վրա պետական վերահսկողության թուլացումն էր։ Նկատի ունենալով, որ աշխատավարձի բարձրացման ոչ պաշտոնական բարձրակետը ձեռնարկատերերը ջանասիրաբար պահպանում էին, երրորդ փուլի էությունն ստանում էր գները սաստիկ բարձրացնելու հնարավորության ձև, որը հասցրեց աշխատավորների դրության հետագա վատացմանը։ «Նոր տնտեսական քաղաքականության» հակաբանվորական բնույթը չփոխվեց նաև չորրորդ փուլում (1973 թ. ամռանից մինչև տնտեսական կայունացման մասին օրենքի ժամկետի՝ 1974 թ. ապրիլի 30-ի լրանալը)։

Իմպերիալիստական սիստեմի չթուլացող վալյուտա-ֆինանսական ճգնաժամը Ռ. Նիքսոնի կառավարությանն ստիպեց 1973 թ. փետրվարին որոշում ընդունել դոլարը ևս 10 տոկոսով դևալվացնելու մասին։

Միջազգային հարաբերություններում 1973 թ. սկիզբը նշանավորվեց հրսկայական պատմական նշանակության իրադարձությամբ։ 1973 թ. հունվարի 27-ին Փարիզում համաձայնագիր ստորագրվեց Վիետնամում պատերազմը դադարեցնելու մասին։ Չկարողանալով կոտրել վիետնամական ժողովրդի կամքը, ամերիկյան իմպերիալիստները ստիպված էին իրենց զորքերը դուրս բերել Հարավային Վիետնամից և ընդունել այն, ինչը նշվել էր դեռևս 1954 թ. Ժնևյան համաձայնագրերում՝ վիետնամական ժողովրդի սուվերենությունը, Վիետնամի անկախությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ առաջվա պես կարևոր տեղ

էին գրավում սովետա-ամերիկյան հարաբերությունները։ Սովետա-ամերիկյան համագործակցության ճանապարհին դեռևս քիչ արգելքներ չէին մնում։ Առևտրում Սովետական Միությանն առավել բարենպաստման ազգի ստատուսի տրամադրումն ակտիվ դիմադրության է հանդիպում կոնգրեսում և որոշակի հասարակական-քաղաքական շրջաններում։

Ամբողջությամբ վերցրած, սակայն, սովետա-ամերիկյան հարաբերություններն ընդարձակվելու և ամրապնդվելու ռեալ շանսեր ունեին։

Ամերիկյան հետպատերազմյան պատմագրության մի քանի պրոբլեմներ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում արմատապես ընդարձակվեց պատմական հետազոտությունների շրջանակը։ Միաժամանակ նկատվում էր ամերիկյան պատմաբանների հետազոտական և քաղաքական հետաքրքրությունների ավելի սերտ միահյուսում։ Քանի որ ԱՄՆ-ի տիրապետող դասակարգի քաղաքականության առաջին գիծը ռեակցիան էր, ապա դա էլ կանխորոշեց ռեակցիոն կոնցեպցիաների տիրապետությունը ամերիկյան պատմական գիտության մեջ։

Ամերիկյան պատմաբաններին միավորող բազմաթիվ կազմակերպությունների մեջ գլխավոր դեր են խաղում երկու կենտրոն. ամերիկյան պատմական ասոցիացիան և ամերիկյան պատմաբանների ասոցիացիան։ Նրանցից հնագույնը և ավելի մեծաթիվն առաջինն է։ Նա միավորում է այն պատմաբաններին, որոնք զբաղվում են և՛ ամերիկյան, և՛ համաշխարհային պատմությամբ, սակայն գերակշռում են ընդհանուր պատմության գծով մասնագետները։ Ամերիկյան պատմական ասոցիացիան հրատարակում է «Ամերիկյան պատմական տեսություն» ամսագիրը։

Ամերիկյան պատմաբանները ստեղծել են իրենց հատուկ կենտրոնը՝ ամերիկյան պատմաբանների ասոցիացիան, և լույս են ընծայում «Ամերիկյան պատմության հանդես» ամսագիրը։

Բացի այս կազմակերպություններից, ԱՄՆ-ում գործում են պատմական մեծաթիվ ռեգիոնալ և պրոբլեմաթեմատիկ կենտրոններ՝ հարավային պատմաբանների ասոցիացիան, նեգրերի կյանքը և պատմությունն ուսումնասիրող ասոցիացիան և այլն։ Նահանգներն ունեն իրենց պատմական ընկերությունները, գործում է նաև Հ. Հուվերի գրադարանը (Այովա)։

Արխիվային նյութերի կարևորագույն պահպանողներ են ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանը և Ազգային արխիվը։ Բացի դրանցից, ԱՄՆ-ում կան մեծ քանակի մասնավոր և պետական արխիվներ։ Պատմաբաններին արխիվային փաստաթղթեր մատակարարելու գործում կարևոր դեր են խաղում պրեզիդենտական գրադարանները։ 1940 թ. Հայդ Պարկում (Նյու Յորքի նահանգ) ստեղծվեց Ֆ. Ռուզվելտի գրադարանը։ Այդ օրինակին հետևեցին բոլոր հաջորդ պրեզիդենտները։ Ներկայումս գործում են Հ. Տրումենի (Միսսուրի), Դ. Էյզենհաուերի (Կանզաս), Ջ. Քենեդու (Մասաչուսետս) և Լ. Ջոնսոնի (Տեխաս) գրադարանները։

1948 թ. խոշոր պատմաբան Ա. Նևինսի նախաձեռնությամբ Կոլումբիական համալսարանին առընթեր (ք. Նյու Յորք) հիմնադրվեց անգիր պատմական արխիվը՝ հարցազրույցների մեքենագրված և մագնիտոֆոնային գրանցումների առաջին պահեստարանը։ Դրանք հարցազրույց են այն անձանց հետ, որոնք, արխիվի ղեկավարների կարծիքով, կարող են հաղորդել այնպիսի փաստեր կամ դատողություններ, որոնք որոշակի պատմական նշանակություն ունեն։ Ներկայումս ԱՄՆ-ի շատ ինստիտուտներ և այլ հիմնարկներ ունեն անգիր պատմական արխիվներ։

Հետպատերազմյան առաջին 15 տարվա ընթացքում ամերիկյան պատ-

մագրության, ինչպես և քաղաքականության մեջ, անբաժան կերպով տիրապետում էին նեոլիբերալ և նեոպահպանողական գաղափարական հոսանքները։ Նեոլիբերալները (Հ. Կոմաջեր, Ռ. Հոֆստեդտեր, Ա. Լինկ, Ա. Շլեզինգերկրտսեր, Է. Հոլդմեն, Ֆ. Ֆրեյդել և այլոք) դրականորեն են նայում սոցիալ-տնտեսական պրոցեսների վրա պետական ակտիվ միջամտությանը, պնդելով, որ լիբերալ բարենորոգչության շնորհիվ այն կհասցնի կապիտալիզմի և սոցիալական ներդաշնակության կատարելագործմանը։

Նեոպահպանողականները (Ռ. Բրաուն, Ք. Ռոսիտեր, Ջ. Բրուստին, Ս. Սլիտչեր, Ա. Նևինս և մյուսները) բուրժուական կարգերի պահպանումը նույնպես կապում են պետական իշխանության առանձնաշնորհության ընդարձակման հետ։ Նրանք, սակայն, կողմնակից են մասնավոր սեփականատիրական հարաբերություններում իշխանության ավելի զգույշ միջամտությանը և հանձին պետության տեսնում են ոչ այնքան լիբերալ ռեֆորմների գործիքի, որքան ճնշման ապարատի, որն ուղղված է սոցիալական ոլորտում եղած գրության պահպանմանը։ Երկու հոսանքն էլ մինչև օրս կազմում են ԱՄՆ-ի հասարակական գիտությունների մեջ պետական-մոնոպոլիստական գաղափարախոսության հիմքը։

Այս կոմբինացիայից աջ է կանգնած ռեակցիոն-անհատապաշտական ուղղությունը (Ռ. Մերիտ, Մ. Ֆրիդմեն և մյուսները)։ Այն գլխավորապես ներկայացնում են ոչ թե պատմաբանները, այլ սոցիոլոգները, տնտեսագետները և իրավագետները։ Այս հոսանքը չի գրանցվում արդի պետական-մոնոպոլիստական կառուցվածքում, դրա համար էլ առաջատար դիրք չի գրավում հասարակական գիտություններում։ Ռեակցիոն անհատապաշտները բուրժուական պետությունը համարում են կոլեկտիվիստական այն ձևերից մեկը, որոնք քայքայում են մասնավոր սեփականատիրության հիմքերը, ուստի հանդես են գալիս հասարակական հարաբերություններում պետական առանձնաշնորհումների սահմանափակման օգտին։

Ամերիկյան պատմագրության նեոլիբերալ-նեոպահպանողական կոմբինացիան չի ընդունում դասակարգային պայքարի գաղափարը և ԱՄՆ-ի պատմությունից վտարել է ամեն տեսակ կոնֆլիկտ։ Ամերիկյան բուրժուական պատմաբանները քարոզում են, որ ԱՄՆ-ի պատմության շարժիչ ուժը ոչ թե պայքարն է, այլ տարբեր սոցիալական ուժերի պահպանողական կոմպրոմիսի գաղափարը։ Դրա համար էլ պատերազմից հետո բանադրանքի ենթարկվեցին բուրժուա-լիբերալ այն պատմաբանները (Չ. Բիրդ, Վ. Պարինգտոն և ուրիշներ), որոնք Ամերիկայի պատմության մեջ նշանակալի դեր էին հատկացրել սոցիալական կոնֆլիկտին։

Հետպատերազմյան պատմագրությունն ստեղծեց բիզնեսի իսկական պաշտամունք։ Եթե 30-ական թվականներին բիզնեսմենը պատմական հետազոտությունների էջերում ներկայացվում էր իբրև «թալանչի-բարոն», որի դիմանկարը դասականորեն տրված էր Մ. Ջոզեֆսոնի գրքում, ապա 40—50-ական թվականներին պատմաբան-նեոպահպանողականների գրչի տակ բիզնեսմենը կանգնեց որպես այն ամենի ստեղծողը, ինչի հասել էր ԱՄՆ-ը։ Պատմագրության մեջ հանդես եկավ մի ամբողջ ջատագովական ուղղություն՝ Ա. Նևինսի գլխավորած «բիզնեսի դպրոցը»։

ԱՄՆ-ի բուրժուական առաջատար պատմաբանները մեծ նշանակություն են տալիս նոր և նորագույն պատմության գծով ընդհանուր դասընթացների ստեղծմանը, հատուկ ուշադրություն դարձնելով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանին։ Դա բացատրվում է ամե-

րիկյան պատմության նոր, արմատական-առաջադիմական մեկնաբանությունը թույլ չտալու մեծ ձգտումով։

Ամերիկյան պատմագրության կենտրոնական թեմաներից են երկրորդ համաշխարհային պատերազմը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և հետպատերազմյան միջազգային հարաբերությունների պրոբլեմները։ Եթե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ԱՄՆ-ի ներքին պրոբլեմների գծով, պատմության ընթացքի մեկնաբանման հակակոմունիզմը և հակագիտականությունը հատուկ է բուրժուական աշխատություններին, ապա միջազգային հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում հակակոմունիզմը կենտրոնական տեղ է գրավում ամերիկյան հեղինակների բոլոր հորինվածքներում, իսկ փաստերի կեղծ մեկնաբանումը երբեմն հասնում է բացահայտ կեղծարարության։

Երկրորդ համաշխարհային պատերազմի գնահատման ասպարեզում տիրապետում է պաշտոնական դպրոցը, որն արդարացնում է ԱՄՆ-ի կառավարության բոլոր գործողությունները։ Այդ պաշտոնական ուղղության առաջատար ներկայացուցիչներն են Ս. Մորիսոնը (ռազմածովային պատմության գծով խոշորագույն հեղինակություն), Ու. Լանգերը, Ս. Գլիսոնը, Դ. Ֆեյսը և մյուսները։ Պաշտոնական ուղղությանը հակադրվում է «ռևիզիոնիստական», այսինքն պաշտոնական կոնցեպցիաները վերանայող հոսանքը։ «Ռիզիոնիստները» (Չ. Բիրդ, Չ. Թենզիլ և ուրիշներ) իրենց ծագմամբ կապված են նախապատերազմյան մեկուսացվածության հետ։ Սակայն նրանք, հատկապես Չ. Թենզիլը, զարգացրել են միայն ռեակցիոն մեկուսացվածության գիծը։ Նրանց կոնցեպցիայի առանցքը Ֆ. Ռուզվելտին «կոմունիզմին աջակցելու» մեջ մեղադրելն է։ Երկու ուղղություններին հատուկ են նաև ընդհանուր կողմեր. երկրորդ համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ի իմպերիալիստական նպատակների ժխտում, պատերազմի ընթացքի և առաջին հերթին ֆաշիզմի ջախջախման գործում ՍՍՀՄ-ի ավանդի կեղծում, պատերազմական ժամանակների համատեղ կոնֆերանսներում դաշնակիցների որոշումների իմպերիալիստական, հակասովետական մեկնաբանում և այլն։

Արտաքին քաղաքական պրոբլեմների ուսումնասիրման բնագավառում առավել խոշոր աշխատություններ գրել են այս կամ այն աստիճանի պետական գործիչները։ Նրանք պատմությունը լիովին ենթարկել են քաղաքականությանը, ստեղծելով «սառը պատերազմի» առաջացման և ԱՄՆ-ի ամբողջ հետպատերազմյան արտաքին քաղաքականության բոլորովին կեղծ պատմությունը։ «Սառը պատերազմի» և մակարտիզմի եռուն շրջանում, 1950 թ. դեկտեմբերին, Հ. Տրումենը ամերիկյան պատմական ասոցիացիայի համագումարին ուղղած իր ուղերձում խնդիր դրեց պայքարել կոմունիզմի դեմ և դրանով իսկ «նպաստել ազատ ազգերի գործին, կառավարությանն օգնելով հավերժացնելու և մեկնաբանելու այն քաղաքականությունը, որը մեր ազգը վարում է աշխարհում խաղաղությունը և ազատությունը պահպանելու համար»։ Դրանով էլ երկար ժամանակ և կուրորեն ղեկավարվում էր ամերիկյան պատմաբանների բացարձակ մեծամասնությունը։ Նրանք ստեղծեցին «ռեալ քաղաքականության» դպրոցը, որի նշանավոր ներկայացուցիչներն են Հ. Մորգենթաուն և Ջ. Քենանը։ Սակայն այս ուղղության շատ ներկայացուցիչների, հատկապես Ռ. Ստրաուս-Հյուպեի և Ս. Պոսոնիի, աշխատություններում ԱՄՆ-ի կառավարությանն առաջարկվում էին ավելի ռեակցիոն կոնցեպցիաներ և դեղատոմսեր։

60-ական թվականներին, խոր սոցիալ-քաղաքական հարվածների և իմպերիալիստական արտաքին քաղաքական դոկտրինների ձախողման պատճառով նոր երևույթներ երևան եկան նաև ամերիկյան բուրժուական պատ-

մագրության մեջ։ Պատմական գիտության մեջ հանդես եկավ ռադիկալ ուղղությունը, որի հիմնադիրն էր հայտնի պատմաբան, «Ամերիկյան դիվանագիտության ոգբերգությունը» գրքի հեղինակ Ու. Ուիլյամսը։ Ամերիկյան պատմագրության «նոր ձախերի» խմբի մեջ են մտնում Հ. Ալպրովիցը, Յու. Ջենովեզեն, Ռ. Ջինջերը, Մ. Դուբրովսկին, Հ. Զիննը, Հ. Կոլկոն, Ու. Լաֆեբերը, Ս. Լինդը, Կ. Լեշը, Ռ. Ռադոշը և ուրիշներ։ Նրանց միավորում և տիրապետող նեոլիբերալ-նեոպահպանողական պատմագրության հետ խիստ հակասության մեջ է դնում գլխավորապես հետևյալը. նախ, նրանք ժխտում են «սառը պատերազմի» ծագման պաշտոնական դոգմաները և նրա գլխավոր նախաձեռնողներ են համարում ԱՄՆ-ի կառավարող շրջաններին, երկրորդ, «նոր ձախերը» մեծ ուշադրություն են դարձնում ԱՄՆ-ի պատմության մեջ ժողովրդական զանգվածների դերին, երրորդ, նրանց աշխատություններում պսակազերծվում է շահերի համաձայնեցման (կոնսենզուսի) կոնցեպցիան և աչքի ընկնող տեղ է տրվում դասակարգերի պայքարին, բառի ամենալայն իմաստով կոնֆլիկտին։

«Նոր ձախերի» աշխատությունները կատաղի հարձակման են ենթարկվում լիբերալների և պահպանողականների կողմից։ Բայց ռադիկալ պատմաբանների հետազոտությունները, չնայած տառապում են լուրջ մեթոդական թերություններով, պատմագրության մեջ հետք են թողել։ Հատկապես դա երևում է այն աշխատություններում, որոնք նվիրված են բանվորական շարժման պատմությանը։ 1972 թ. գարնանը «Labor History» լիբերալ ամսագիրը, որի շուրջը համախմբվում են բանվորական շարժման պատմաբանները, տպագրեց տվյալ թեմայով նոր աշխատությունների տեսություն։ Նրանում նշվում է, որ «նոր ձախերի» ազդեցությամբ լուրջ շրջադարձ է նկատվել ուսումնասիրելու բանվորական շարժումն իբրև զանգվածների և ոչ թե արհմիութենական պարագլուխների խմբի գործունեություն։

Մարքսիստ հետազոտողները 1927 թվականից միավորված են աշխատանքի պրոբլեմների հետազոտման ասոցիացիայի մեջ։ Ու. Ֆոստերի, Ֆ. Ֆոների, Ջ. Մորիսի, Հ. Գրինի և ամերիկյան մյուս մարքսիստների ստեղծագործություններում մուծվել է ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ բանվոր դասակարգի դերի գիտական կոնցեպցիան և գիտական վերլուծման է ենթարկվել ամերիկյան կառավարության իմպերիալիստական արտաքին քաղաքականությունը։

ԳԼՈՒԽ 10

ԱՆԳԼԻԱ

ԱՆԳԼԻԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ (1945—1957)

Տնտեսական դրությունը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Անգլիան՝ հաղթող տերություններից մեկը, պատերազմից դուրս եկավ զգալի կորուստներով։ Մեծ Բրիտանիայի ընդհանուր վնասները, որ անմիջականորեն հասցրել էր պատերազմը, գնահատվում էր 6,8 միլիարդ դոլար, որը կազմում էր նրա ազգային հարստության

մոտ 25 տոկոսը։ Պատերազմի ներքին պարտքը 1945 թ. հունիսին երեք անգամ գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը և կազմում էր ավելի քան 21 միլիարդ ֆունտ ստեռլինգ։ Արտաքին պարտքը հասնում էր 3,335 միլիոն ֆունտ ստեռլինգի։ Արտասահմանյան կապիտալ ներդրումների ավելի քան քառորդը, ոսկու պաշարների մի մասը և առևտրական նավատորմի մոտ 30 տոկոսը կորսվել էին։ Արդյունաբերական արտադրանքը 1946 թ. չէր հասել նախապատերազմյան մակարդակին։

Ամերիկայի Միացյալ Նահանգները Անգլիային ուժգին նեղեց համաշխարհային շուկաներում, այդ թվում նաև Բրիտանական կայսրությունում. 1947 թ. ԱՄՆ-ի արտահանությունը Բրիտանական կայսրությունում անգլիականին գերազանցեց 70 տոկոսով։ Անգլիական արտահանության խիստ կրճատումը հասցրեց վճարման հաշվեկշռի հսկայական դեֆիցիտին, որը 1945 թ. գերազանցեց 800 միլիոն ֆունտ ստեռլինգից։ Լրջորեն թուլացել էին անգլիական իմպերիալիզմի դիրքերը, որը, ինչպես և ամբողջ կապիտալիստական աշխարհը, թևակոխել էր ընդհանուր ճգնաժամի նոր փուլը։

Պատերազմի ընթացքում, ազգային-ազատագրական շարժման հզոր աճի հետևանքով, առաջացան Անգլիայի գաղութային կայսրության ճգնաժամի, առաջներում չտեսնված, սրման նախադրյալները։

Ամրապնդելով խոշորագույն մոնոպոլիաների տնտեսական ուժը և քաղաքական ազդեցությունը, պատերազմը հասցրեց զանգվածների դրության լուրջ վատթարացման։ «Հաղթանակ և ողբերգություն»՝ այս խոսքերով Ու. Չերչիլը ընդհանրացրեց անգլիական իմպերիալիզմի համար հակասական երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները։

Լեյբորիստական երրորդ կառավարությունը

Սովետական ժողովրդի հերոսական պայքարը նացիզմի դեմ, հակահիտլերյան կոալիցիայի առջև ֆաշիստական Գերմանիայի կապիտուլացումը հսկայական տպավորություն գործեցին անգլիական ժողովրդի վրա։ Խիստ ազդեցիկ ուժ դարձավ լեյբորիստական կուսակցությունը, որի շարքերում կար ավելի քան 3 միլիոն մարդ (նրա անդամների 80 տոկոսը տրեդ-յունիոններն էին, որոնք կուսակցության մեջ էին մտել կոլեկտիվ սկզբունքներով)։ Անգլիական բանվորական շարժման մեջ, ամենից առաջ արհմիություններում, ուժեղացել էին մարտական տրամադրությունները։ Այս բոլորն իր կնիքը դրեց լեյբորիստների նախընտրական «դեմքով դեպի ապագան» ծրագրի վրա։ Լեյբորիստական պարագլուխներն անհրաժեշտ գտան ընդգծելու իրենց նվիրվածությունը «Մեծ Բրիտանիայի սոցիալիստական ընկերակցության» ստեղծման գաղափարին։ Սոցիալիզմի նրանց ռեֆորմիստական իդեալը ելնում էր աստիճանական ռեֆորմների միջոցով կապիտալիզմը էվոլյուցիոն ճանապարհով սոցիալիզմի վերաճելու նախադրյալից։ Նրանց նախընտրական պլատֆորմի գլխավոր կետը արդյունաբերության մի շարք ճյուղերի ազգայնացումն էր, ճյուղեր, որոնք, նրանց կարծիքով «հասունացել են հասարակության սեփականությանը հանձնելու համար»։ Խոսքն ամենից առաջ էկոնոմիկայի այն ճյուղերի մասին էր, որոնք վնասաբեր էին դարձել և պահանջում էին հատկապես մեծ կապիտալ ներդրումներ՝ քարածխի արդյունաբերությունը, երկաթուղային տրանսպորտը և էլեկտրաէներգետիկան։ Այսպիսով, լեյբորիստներն առաջարկեցին պետականացնել միայն արդյունաբերության մի մասը, չշոշափելով մոնոպոլիստական կապիտալի հիմնական դիրքերը։ Ազգայնացման պետական-մոնոպոլիստական բնույթն արտահայտվեց նաև նրանում, որ լեյբորիստները փաստորեն ոչինչ չէին ասում ազգայնացվող ճյուղերի կառավարման գործում բանվոր դասակարգի դերի վերաբերյալ իրենց պլատֆորմի մասին։

Օբյեկտիվորեն լեյբորիստական ազգայնացումը պետական-մոնոպոլիստական միտումների ուժեղացումն էր։ Սակայն բանվորների զգալի մասին այն թվում էր սոցիալիստական միջոցառում։

Որպեսզի գրավեին ընտրողների համակրանքը, լեյբորիստների պարագլուխները խոստացան ծավալել բնակարանային շինարարությունը, ստեղծել առողջապահության ազգային ծառայություն, նշանակալիորեն ընդարձակել սոցիալական օրենսդրությունը, ապահովել ժողովրդի «բարձր և աճող կենսամակարդակը», վերացնել արհմիությունների մասին 1927 թ. ռեակցիոն օրենքը։ Հաշվի առնելով Անգլիայի աշխատավորների կայուն և երկարատև խաղաղության ձգտումները, լեյբորիստները հայտարարեցին պատերազմի տարիներին առաջացած բրիտանական ընկերակցության, ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի դաշինքը պահպանելու անհրաժեշտության մասին։

Պահպանողականների կուսակցությունը ցանկանում էր պառլամենտական ընտրությունները որքան կարելի էր շուտ անցկացնել, հույս ունենալով իր շահերին ծառայեցնել պատերազմի հաղթական ավարտը և պահպանողական պարագլուխների «հեղինակությունը» (ամենից առաջ Չերչիլի)։ Պահպանողականները, որ մնացել էին մոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական կուսակցությունը, ըստ էության լեյբորիստներին ուրիշ ոչինչ չկարողացան հակադրել։ Պահպանողականների դիրքերը թուլանում էին ագրեսիայի թողտվության քաղաքականությամբ, որ կուսակցությունը վարում էր նախապատերազմյան տարիներին, որի մասին Անգլիայում չէին մոռացել։ Իրենց ուսերին պատերազմի հիմնական ծանրությունը տարած աշխատավորների վատացող դրությունը նույնպես խախտում էր պահպանողականների հաջողության հավանականությունն ընտրություններում։

Չնայած լեյբորիստական կուսակցության պարագլուխ Էտլին համոզում էր Չերչիլին ընտրությունները հետաձգել մինչև 1945 թ. հոկտեմբերը,, պահպանողականները դրանք անցկացրին հուլիսին և, հակառակ իրենց սպասածի, պարտություն կրեցին։ Նրանց օգտին ձայն տվեց ընտրողների 39,8 տոկոսը, իսկ լեյբորիստներին՝ 48,3 տոկոսը։ Պահպանողականները պառլամենտ անցկացրին իրենց 189 թեկնածուներին, լեյբորիստները՝ 392, լիբերալները՝ 12, կոմունիստները՝ 2։

1945 թ. հուլիսի 27-ին իշխանության գլուխ անցավ լեյբորիստական երրորդ կառավարությունը (1945—1950), որ կազմել էր Էտլին հիմնականում կուսակցության աջ պարագլուխներից։ Արտաքին գործերի մինիստրի պոստը զբաղեցրեց հայտնի աջ տրեդ-յունիոնիստական գործիչ Էռնստ Բևինը։

Անգլիայի տնտեսական զարգացումը 1945—1951 թթ.

Անգլիայի հետպատերազմյան առաջին տարիների տնտեսական զարգացմանը բնորոշ էր արտադրության համեմատաբար արագ աճը (տարեկան միջին հաշվով 6 %)։ Արդեն 1947 թ. ձեռք բերվեց, իսկ այնուհետև նաև նշանակալիորեն գերազանցվեց արդյունաբերական արտադրության նախապատերազմյան մակարդակը։ Տնտեսական վերելքը բացատրվում է արդյունաբերության հետպատերազմյան վերակառուցման ժամանակաշրջանի յուրահատուկ պայմաններով, որոնք պահանջում էին հիմնական կապիտալի զանգվածային նորացում, արդյունաբերական արտադրանքի արտահանման աճած հնարավորություններով (նրա ֆիզիկական ծավալը 1937 թ. համեմատությամբ 1951 թ. ավելացավ 53 տոկոսով), ինչպես նաև «սառը պատերազմի» պայմաններում ռազմական ծախսերի մեծացումով։ Սակայն էկոնոմիկայի զարգացումն անհավասարաչափ էր։ Եթե քիմիական, ավտոմոբիլային, նավաշինական, նավթավերամշակման արդյունաբերության մեջ

նկատվում էր որոշ աճ, ապա այն ճյուղերը, որոնք անմիջականորեն կապված չէին ռազմական արտադրության հետ (տեքստիլ արդյունաբերությունը, բնակարանային շինարարությունը, քարածխի հանույթը և այլն) չէին հասել նախապատերազմյան մակարդակին։ Դրությունը բարդանում էր վճարունակ հաշվեկշռի խրոնիկական դեֆիցիտի պատճառով, որը 1946—1951 թթ. կազմեց 1.356 միլիոն ֆունտ ստեռլինգ։ Չնայած երկրի տնտեսական կյանքին պետության ակտիվ միջամտությանը, ֆինանսական ճգնաժամերը Անգլիայի վրա տեղացին 1947, 1949 և 1951 թվականներին։

Լեյբորիստների կառավարման ժամանակ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ուժեղացումը զուգակցվում էր բրիտանական արդյունաբերության ֆեդերացիայի գլխավորած (որը 1950 թ. ներկայացնում էր արդյունաբերության կարևորագույն ճյուղերն ընդգրկող մոտ 300 ասոցիացիա և մի քանի հազար անհատական ֆիրմաներ) ֆինանսական օլիգարխիայի և խոշորագույն մոնոպոլիաների ու այդ ֆեդերացիայի հետ կապված բրիտանական ձեռնարկատերերի կոնֆեդերացիայի դիրքերի ամրապնդման հետ։

Անգլիայում պետական-մոնոպոլիստական միտումներն ամենահստակորեն հանդես եկան արդյունաբերության մի շարք ճյուղերի ազգայնացման բնագավառում։ Բացի էլեկտրականներից, քարածխի և գազի արդյունաբերությունից պետության սեփականությանն անցան երկաթուղային տրանսպորտը, ինչպես նաև մասնակիորեն ներքին ավտոփոխադրումները, ջրային տրանսպորտը, առանձին ավիաընկերություններ, ռադիոկապը, բազմաթիվ բանկերից մեկը (ընդ որում ամենևին էլ ոչ ամենամեծ)՝ Անգլիական բանկը։ Լեյբորիստական չորրորդ կառավարության ժամանակաշրջանում (1950—1951) ազգայնացվեցին մի շարք պողպատաձուլական գործարաններ։

1958 թ. տվյալներով էկոնոմիկայի պետական սեկտորում զբաղված էր Անգլիայի ամբողջ ինքնագործ բնակչության (ներառյալ զինված ուժերի ամբողջ թվաքանակը, ինչպես նաև կառավարական և մունիցիպալ հիմնարկների բանվոր-ծառայողները) 24,4%-ը։ Ինչ վերաբերում է անմիջականորեն ազգայնացված ճյուղերին՝ «հասարակական կորպորացիաներին», ապա դրանցում զբաղվածների թիվը համեմատած ամբողջ ինքնագործ բնակչության հետ կազմում էր 8,4 % (2038 հազար մարդ)։ «Հասարակական կորպորացիաներին» բաժին էր ընկնում հիմնական կապիտալում համախառն ներդրումների 20 %-ը և համախառն ներքին արտադրանքի մոտ 9 %-ը։

Չնայած ազգայնացումն անցկացվել էր որոշակի չափով երկրի դեմոկրատական ուժերի ճնշման տակ, նա պատասխանում էր խոշոր մոնոպոլիստների շահերին։ Դա ազգայնացման կապիտալիստական բնույթի հետևանք էր։ Ձեռնարկությունների նախկին տերերին վճարվում էր սեփականության իսկական արժեքը չափից ավելի գերազանցող փոխհատուցում։ Նրանց տրվեց 2,5 միլիարդ ֆունտ ստեռլինգ ընդհանուր գումարի բաժնետոմս, որը երաշխավորում էր տարեկան ավելի քան 80 միլիոն ֆունտ ստեռլինգի կայուն եկամուտ։ Դա նպաստում էր մոնոպոլիաների կապիտալը արտադրության ավելի եկամտաբեր ճյուղեր փոխադրելուն։ Ժողովրդական մասսաների ուսերին դրվում էր ոչ միայն փոխհատուցման վճարումը, այլև ազգայնացված ճյուղերի մոդեռնացման ծախսերը։

Ազգայնացման հակադեմոկրատական բնույթն արտահայտվեց նաև նրանում, որ բանվորներին թույլ չտվեցին մասնակցել պետության ձեռքն անցած ձեռնարկությունների կառավարմանը, դրանց վրա բանվորական վերահսկողություն չէր սահմանվել։ Ազգայնացված ճյուղերը կառավարող 131 դիրեկտորների, որոնց նշանակել էր կառավարությունը, մոտ կեսը միաժամանակ նաև մասնավոր ընկերությունների դիրեկտորներ էին, 23-ն ունեին

ազնվականական տիտղոս, իսկ 9-ը խոշոր հողատերեր էին։ Արդեն 40-ական թվականների վերջին, սպառելով ազգայնացման գծով ռեֆորմների իր սահմանափակ ծրագիրը, լեյբորիստական կառավարությունը շտապեց հայտարարել, թե «սոցիալիզմի պատմական առաքելությունը» ավարտվել է և հարկավոր է անցնել ազգայնացված ճյուղերի «համախմբմանը»։ Սկսվեց պրոպագանդվել «խառը էկոնոմիկայի» տեսությունը՝ մասնավոր և պետական «սեկտորների» միաժամանակյա գոյակցության անհրաժեշտությունը և նրա պատակահարմարությունը, որը և դրվեց «դեմոկրատական սոցիալիզմի» տնտեսական ծրագրի հիմքում։ Լեյբորիստական կուսակցության 1950 թ. կոնֆերանսում հայտարարվեց քիմիական և նավաշինական արդյունաբերությունը ազգայնացնելուց հրաժարվելու մասին։

Բացի ազգայնացումից, լեյբորիստական կուսակցությունը էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման համար ձեռնարկեց նաև այլ միջոցառումներ։ Նա աջակցեց արտադրության և կապիտալի համակենտրոնացմանը, ֆինանսավորեց զարգացման և գիտական հետազոտությունների ծրագիրը, մոնոպոլիաներին առատորեն բաշխեց ռազմական պատվերներ, փորձեց կարգավորել արտահանությունը, ներմուծումը, կապիտալի արտահանումը և այլն։ 1947 թ. ստեղծվեց տնտեսական պլանավորման խորհուրդը։ Նույն տարում պառլամենտն ընդունեց «Զբաղվածության վրա վերահսկողություն սահմանելու մասին» օրենքը, որը կառավարությանն իրավունք էր տալիս, համարյա ինչպես պատերազմական ժամանակ, անմիջականորեն խառնվելու բանուժի կարգավորմանը։

Լեյբորիստներն ստիպված էին մասնակիորեն կատարել իրենց նախընտրական խոստումները։ 1946 թ. վերացվեց 1927 թ. հակաարհմիութենական օրենքը, բայց պատերազմի ժամանակ ընդունված «№ 1305» օրենքը, որը փաստորեն արգելում էր գործադուլները, թողնվեց ուժի մեջ։ Պահպանվեց կընոջ աշխատանքի վարձատրման խտրականությունը, չնայած լեյբորիստական կուսակցության 1948 թ. կոնֆերանսն արտահայտվեց «հավասար աշխատանքի դիմաց՝ հավասար վարձատրության» սկզբունքի օգտին։ Լորդերի պալատի իրավունքներն ու լիազորությունները 1949 թ. ակտով կրճատվեցին, բայց նրա սուսպենսիվ վետոյի իրավունքը (այսինքն՝ օրինագծերի կասեցման իրավունքը) պահպանվեց։ Մասնակիորեն իրականացվեցին բնակարանային շինարարության պլանները։ Ընդարձակվեց սոցիալական ապահովության և բժշկական օգնության ազգային համակարգը, ավելացվեցին գործազրկության գծով նպաստների դրույքները, սակայն ապահովության ֆոնդին բանվորների մուծումների համակարգի պահպանման դեպքում։ Միաժամանակ աճեց հարկային բեռը։ Հարկերի տեսակարար կշիռը 1951 թ. կազմում էր ազգային եկամտի ավելի քան 40 % (1938 թ. 17,6 %-ի դիմաց)։ Արդեն 1947 թ. վկայակոչելով բյուջետային դեֆիցիտը, լեյբորիստական կառավարությունը հռչակեց «խիստ տնտեսման» և անուղղակի հարկերի ավելացման ծրագիրը։ 1948 թ. գարնանը նա մտցրեց բանվորների աշխատավարձի սառեցում, 1949 թ. հոկտեմբերին հայտարարվեց սոցիալական կարիքների համար ծախսերի կրճատման մասին (250 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով)։ Վարձ մտցվեց դեղատոմսերի դուրսգրման և ատամների բուժման, ինչպես նաև բժշկական ծառայության այլ տեսակների համար։ 1949 թ. սեպտեմբերին լեյբորիստների կառավարությունն անցկացրեց ֆունտ ստեռլինգի հետագա դևալվացիա (նրա արժեքը իջավ 30,5 %-ով), որը հասցրեց աշխատավորների կենսամակարդակի իջեցման, դրա հետ միասին բարելավելով խոշոր կապիտալի արտահանման հնարավորությունները։

Լեյբորիստների գաղութային և արտաքին քաղաքականությունը

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական շարժման հզոր վերելքի հարվածների տակ լեյբորիստական կուսակցության հին դիրքորոշումները, որ նախատեսում էին բրիտանական գաղութային տիրապետության նախկին չափերով պահպանումը, խորտակվեցին։ Բրիտանական գաղութային կայսրությունը կոպիտ ուժի և արյունալի ճնշման միջոցով պահպանելու փորձերում անհաջողության մատնվելով, լեյբորիստներն ստիպված էին հրաժարվել գաղութային տիրապետության որոշ ավանդական ձևերից, ձգտելով գաղութային և կախյալ երկրներում առավելագույն դիրքեր պահպանել։ Շրջանառության մեջ դրվեց «ազգերի ընկերակցություն» տերմինը, դրան համապատասխան էլ 1947 թ. դոմինիոնների գործերի գծով անգլիական մինիստրությունը վերանվանվեց Ազգերի ընկերակցության գործերի գծով մինիստրություն։ Լեյբորիստական կառավարությունը, ձգտելով թաքցնել մի շարք ժողովուրդների անկախություն տալու հարկադրական բնույթը, այն ներկայացնել իբրև «գթասրտության և մեծահոգության ակտ», հռչակեց իմպերիալիզմի ավարտման նոր դարաշրջան և նույնիսկ «սոցիալիզմի արմատավորում գաղութներում»։

1947 թ. իմպերիալիստական «բաժանիր ու տիրիր» սկզբունքի համաձայն Հնդկաստանը մասնատվեց երկու դոմինիոնի՝ Հնդկաստանի և Պակիստանի։ 1948 թ. դոմինիոնի ստատուս ներկայացվեց Ցեյլոնին (ներկայումս՝ Շրի Լանկա)։ Նույն տարում անկախ հռչակվեց Բիրման, որը կապերը խզեց Ազգերի ընկերակցությունից։ Նրա հետևից 1949 թ. Ազգերի ընկերակցությունից դուրս եկավ Իռլանդական Հանրապետությունը, հայտարարվեց Անդրհորդանանին անկախություն տալու և Պաղեստինի մանդատից հրաժարվելու մասին։ Քաղաքական անկախություն ստացած երկրներին անգլիական իմպերիալիզմը ձգտում էր պահել տնտեսական շահագործման շղթաներում։ Իսկ այնտեղ, որտեղ բավարարում էր ռազմական ուժը և այն հաջող կիրառելու հույս կար (Մալայայում, Ոսկե ափում, Նիգերիայում, Ուգանդայում, Քենիայում) մղվում էին դաժան գաղութային պատերազմներ։

Անգլիայի կառավարող շրջանների արտաքին քաղաքականության հիմքը աշխարհում սոցիալիզմի ազդեցության ուժեղացման, ՍՍՀՄ-ի գլխավորությամբ սոցիալիստական լագերի ամրապնդման դեմ, հին կարգերից անջատված երկրներում կապիտալիզմի վերականգնման համար մղվող պայքարն էր։ Այդ խնդիրները լիովին համընկնում էին ԱՄՆ-ի և կապիտալիստական մյուս երկրների խնդիրների հետ։ Անգլիական իմպերիալիզմը արդեն հույս չունենալով ամբողջ կապիտալիստական աշխարհում վերադարձնել նախկին լիդերությունը, դեմ չէր, հենվելով ԱՄՆ-ի վրա, ապահովել իր ղեկավար դերը Եվրոպայում, պահպանել Բրիտանական կայսրությունը, որն ազգային-ազատագրական շարժման հարվածների տակ սկսել էր քայքայվել։

Պատերազմի ավարտից հետո շուտով Անգլիան հանուն խոշորագույն բանկերի, արդյունաբերական և գաղութային մոնոպոլիաների և հակառակ ժողովրդի շահերի հրաժարվեց վարել արտաքին քաղաքական այն կուրսը, որ նախանշվել էր հակահիտլերյան կոալիցիայի տերությունների Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներում, և դիմեց ԱՄՆ-ի հետ դաշինքի, որպես նրա կրտսեր պարտնյորի։ Արդեն 1945 թ. դեկտեմբերին Անգլիան ԱՄՆ-ից ստացավ 4400 միլիոն դոլարի փոխառություն (դրանից 650 միլիոն դոլարը գնաց լենդ լիզի գծով վճարմանը), որը ծախսվեց 1947 թ. անգլիական էկոնոմիկայի դրության բարելավման համար։ Փոխառության համաձայնագրի կնքման ժամանակ ԱՄՆ-ը Անգլիային մի շարք պարտավորություններ պարտադրեց, որոնք սահմանափակում էին արտաքին առևտրական և վալյուտային ասպարեզներում վերջինիս ինքնուրույնությունը։ Դա պայմաններ նախապատրաստեց անգլո-ամերիկյան ռազմական դաշինքի ձևավորման և ամերիկյան լիդերությամբ ՍՍՀՄ-ի, Արևելյան Եվրոպայի երկրներում հեղափոխական-դեմոկրատական վերափոխումների և ազգային-ազատագրական շարժման դեմ պայքար ծավալելու այն ծրագրի համար, որ 1946 թ. մարտին Ֆուլտոնում արտասանած իր ճառում ձևակերպել էր Չերչիլը։ Շարունակում էր գործել պատերազմի ընթացքում ստեղծված շտաբի պետերի միացյալ անգլո-ամերիկյան խորհուրդը։ Անգլիան պաշտպանեց Տրումենի դոկտրինան և ընդունեց «Մարշալի պլանի» գծով ամերիկյան օգնությունը։ Միաժամանակ Անգլիայի կառավարող շրջանները հրաժարվեցին դիմել ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավմանը, մերժելով 1942 թ. պայմանագիրը հետպատերազմյան պայմաններին համապատասխան փոփոխելու մասին սովետական կառավարության առաջարկությունը, և ներգրավվեցին ՍՍՀՄ-ի ու Արևելյան Եվրոպայի երկրների նկատմամբ առևտրական խտրական քաղաքականության գործին։

Կապիտալիստական Եվրոպայի գլուխ կանգնելու հույսերը չկորցնելով, Անգլիան մտավ ագրեսիվ «Արևմտյան դաշինք»-ի մեջ (Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի հետ միասին)։ 1949 թ. ապրիլին Անգլիան մտավ ագրեսիվ ռազմաքաղաքական Հյուսիսատլանտյան բլոկի մեջ, որն ամրացրեց նրա կախումն ԱՄՆ-ից և ստիպեց մտնելու սպառազինման էլ ավելի մեծ մրցավազքի ուղին։ Հակասովետիզմը և հակակոմունիզմն անգլիական կառավարությանը մղեցին մասնակցելու Կորեայում ԱՄՆ-ի ագրեսիվ պատերազմին, Գերմանիայի մասնատմանը, ԳՖՀ-ի վերառազմականացմանը։

Անգլիական բանվոր դասակարգի պայքարն իր կենսական շահերի պաշտպանության համար

Անգլիայի կառավարող դասակարգերը հույս ունեին, որ աջ լեյբորիստական պարագլուխներն իշխանության գլուխ անցնելով թույլ չեն տա զանգվածային գործադուլային շարժում և դրանով իսկ կհեշտացնեն կապիտալիստական էկոնոմիկայի հետպատերազմյան վերակառուցման խնդիրների լուծումը։ Հայտնի շափով այդ հույսերն արդարացան։ Անցկացվող ռեֆորմների հետ կապված լեյբորիստների ծավալած ագիտացիայում բանվորներին կոչ էր արվում ամուր պահպանել աշխատանքային կարգապահությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, հրաժարվել գործադուլներից։ Դրա հետևանքով լեյբորիստների իշխանության գլուխ գտնվելու տարիներին բանվորական շարժումը ակտիվ չէր (դրան կաշկանդում էր նաև «№ 1305 օրենքի» գործադրումը)։ 1945—1951 թվականների ընթացքում գործադուլների և լոկաուտների հետևանքով «կորած» աշխատօրերի թիվը կազմում էր 12.740 հազար (առաջին համաշխարհային պատերազմից հետո վեց տարում համապատասխանաբար այն կազմում էր 18.7580 հազար աշխատանքային մարդ-օր)։

1945 թ. երկրորդ կեսի մի ամբողջ շարք գործադուլների մեջ հետաքրքրություն է ներկայացնում 50 հազար նավահանգստային բանվորների գործադուլը։ Գործադուլավորները պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, աշխատանքային շաբաթը սահմանափակել 40 ժամով, տրամադրել երկշաբաթյա վճարովի արձակուրդ։ Գործադուլն ավարտվեց բանվորների մասնակի հաղթանակով։ 1946—1948 թթ. գործադուլներին մասնակցեցին ավտոմոբիլային մի շարք գործարանների բանվորներ, Լոնդոնի տրանսպորտային-

ները, Գրիմսորնի հանքագործները։ Վերջիններս, որոնց պաշտպանեցին այլ վայրերի 50 հազար հանքագործներ, հաղթանակ տարան աշխատանքի պայմանների բարելավման համար մղված պայքարում։ 1947—1948 թթ. հանքագործները կազմում էին բոլոր գործադուլավորների մոտ կեսը։ 1948 թ. նավահանգստային բանվորների կրկնած գործադուլի դեմ կառավարությունը զորքեր ուղարկեց, կիրառելով արտակարգ դրության մասին 1920 թ. օրենքը։ ՏԲԿ-ի 1948 թ. կոնգրեսում աջ պարագլուխները հասան «ոչ պաշտոնական» գործադուլները դատապարտելու հատուկ որոշման ընդունմանը։ 1949 թ. նավահանգստային բանվորների և հանքագործների հետ գործադուլային պայքարին մասնակցեցին երկաթուղայինները, մետաղագործները և բանվոր դասակարգի այլ ջոկատներ։ 1950 թ. սեպտեմբերին, երբ բռնկվեց Լոնդոնի գազի գործարանների բանվորների «ոչ պաշտոնական» գործադուլը, կառավարությունը կիրառեց «№ 1305 օրենքը» և գործադուլի կազմակերպիչներին բանտ նետեց։

Լեյբորիստական կառավարության գործողությունները բանվորների բողոքի ալիք առաջացրին «№ 1305 օրենքի» դեմ, որը շաղկապվեց աշխատավարձի սառեցման և գների բարձրացման քաղաքականության դեմ 1950 թ. ծավալված ակտիվ շարժման հետ։ Բանվորների շահերի պաշտպանությամբ վճռականորեն հանդես եկավ կոմունիստական կուսակցությունը։ Ի նշան բողոքի նա «№ 1305 օրենքի» և աշխատավարձի սառեցման դեմ մեծ կամպանիա անցկացրեց։ 1950 թ. սեպտեմբերին ՏԲԿ-ի կոնգրեսը, հակառակ գրլխավոր խորհրդի դիրքի, մերժեց աշխատավարձի սառեցման քաղաքականությունը։ Դա լեյբորիստական կառավարության խոշորագույն պարտությունն էր, որը նշանակալի չափով կանխորոշեց նրա հետագա ճակատագիրը։ Ցանկալի արդյունք չտվեց նաև «№ 1305 օրենքի» լայնորեն կիրառումը։ Նրա հիման վրա գործադուլավորների դեմ սկսված դատական պրոցեսները միայն յուղ էին լցնում կրակի վրա, առաջ բերելով համերաշխության գործադուլներ, դատական շենքերի առջև ցույցեր, միտինգներ, որոնք ուղեկցվում էին ոստիկանության հետ ընդհարումներով։ Այդ պայմաններում կառավարությունն ստիպված էր 1951 թ. վերացնել «№ 1305 օրենքը»։ Դա բանվորների խոշորագույն հաղթանակն էր։ Սակայն աշխատավարձի սառեցման քաղաքականությունը պարտության մատնել չհաջողվեց։ ՏԲԿ-ի հաջորդ կոնգրեսը (1951 թ. սեպտեմբեր) բանաձև ընդունեց կառավարության կողմից ոչ միայն աշխատավարձի, այլ նաև գների և շահույթների վրա «ավելի լայն» վերահսկողություն սահմանելու անհրաժեշտության մասին։

Ժողովրդական զանգվածների պայքարը հանուն խաղաղության, ընդդեմ իմպերիալիստական արտաքին քաղաքականության

Կառավարության հակաբանվորական քաղաքականության դեմ պայքարը միաձուլվում էր նրա ռեակցիոն արտաքին քաղաքական կուրսի դեմ մղվող պայքարի հետ։ Աշխատավորների զգալի թվով զանգվածներ բողոքում էին ամերիկյան թելադրանքին Անգլիայի ենթարկվելու դեմ, Գերմանիայի պառակտման քաղաքականության, ԳՖՀ-ի վերառազմականացման, Կորեայում ագրեսիային մասնակցելու, սոցիալիստական երկրների հետ առևտրում խտրականության կուրսի դեմ և այլն։ Նրանք հանդես էին գալիս նաև խաղաղ պայմաններում պարտադիր զինապարտության պահպանման դեմ։

Կառավարության արտաքին քաղաքական կուրսի դեմ մարտնչողների առաջին շարքերում էին ընթանում կոմունիստները։ Նրանք 1948 թ. անցկացրին խաղաղության պաշտպանության մի շարք կոնֆերանսներ, որոնց մասնակցեցին տրեդ-յունիոնների և բանվորական մյուս կազմակերպությունների ներկայացուցիչներ։ 1948 թ. հուլիսին «Դեյլի Ուորկերի» խմբագրության նախաձեռնությամբ Լոնդոնում կոնֆերանս հրավիրվեց, որին մասնակցում էին 1300 պատվիրակներ, որոնք ներկայացնում էին երկրի շատ շրջաններ, տրեդ-յունիոնիստական և բանվորների այլ կազմակերպություններ։ Կոնֆերանսը կոչ արեց պայքարել ատոմային զենքի ոչնչացման, սպառազինությունների և զինված ուժերի կրճատման, միասնական դեմոկրատական Գերմանիայի ստեղծման համար, ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ հարաբերությունների համակողմանի կանոնավորման համար։ Կոմունիստական կուսակցությունը ձգտում էր խաղաղության շարժման մեջ ներգրավել անգլիական ժողովրդի բոլոր խավերին։

Անգլիայի ներկայացուցիչները մասնակցեցին 1949 թ. ապրիլին կայացած խաղաղության համաշխարհային կոնգրեսին, որը խաղաղության համաշխարհային խորհրդի կազմում ընտրեց անգլիացի պրոֆեսոր Ջ. Բեռնալին, բանվորական շարժման հետ կապված առաջադեմ գործիչներ Ջ. Պրիսթլին, Կ. Զիլիակուսին։ Ջ. Պլեսս-Միլսին, Քենտերբերյան տաճարի վանահայր Հուլետ Ջոնսոնին։ Այդ կոնգրեսի պատգամավորների ակտիվ մասնակցությամբ 1949 թ. հունիսին ստեղծվեց խաղաղության պաշտպանության անգլիական կոմիտեն։

Կառավարության արտաքին քաղաքական կուրսի քննադատությունն ուժեղացավ նաև լեյբորիստական կուսակցության շարքերում, պառլամենտական ֆրակցիայի անդամների շրջանում։ Ի պատասխան լեյբորիստական կուսակցության գործկոմը խաղաղության պաշտպանության շարժմանը մասնակցելն անհամատեղելի համարելով լեյբորիստական կուսակցության շարքերում գտնվելու հետ, խաղաղության պաշտպանության կոմիտեն մտցրեց «արգելված» կազմակերպությունների ցուցակում։ Մի շարք ձախ լեյբորիստներ (այդ թվում Կ. Զիլիակուսը) հեռացվեցին կուսակցությունից։ Սակայն լեյբորիստական կուսակցության պարագլուխների այդ գործողությունները խաղաղության պաշտպաններին չկարողացան ստիպել լռելու։ 1300 հազար անգլիացիներ իրենց ստորագրությունը դրեցին ատոմային զենքն արգելելու մասին Ստոկհոլմի կոչի տակ։ Լեյբորիստական և տրեդ-յունիոնիստական խոշոր շատ կազմակերպություններ պահանջեցին հրավիրել լեյբորիստական կուսակցության արտակարգ կոնֆերանս՝ քննարկելու արտաքին քաղաքականության հարցերը։

Ակտիվացավ ձախ լեյբորիստների պայքարը կառավարության արտաքին քաղաքականության դեմ։ 1951 թ. մարտին դրա դատապարտմամբ հանդես եկավ «Սոցիալիզմի հաղթանակի համար» լեյբորիստական խումբը։ Արտաքին քաղաքականության կարևորագույն և ներքին քաղաքականության որոշ հարցերի գծով տարաձայնություններ դրսևորվեցին նաև կառավարության ներսում։ Այս հանգամանքները կուսակցության աջ ղեկավարությանն ստիպեցին դիմելու մանևրների, որոնց արդյունքը եղավ, մասնավորապես, 1951 թ. օգոստոսին հրապարակված «Մեր կուսակցության նպատակը խաղաղության պահպանումն է ամբողջ աշխարհում» անունով նախընտրական մանիֆեստը։ Սակայն լեյբորիստների հեղինակությունն ընկել էր, և նրանք ընտրություններում չկարողացան հաղթանակ տանել։

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության նոր ծրագիրը

Հասնելով բանվորական շարժման մեջ մարտական տրամադրության ակտիվացմանը, Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը ձգտում էր բարձրացնել կոմունիստների դերը արեդ-յունիոններում, ուժեղացնել իր մասնակցությունը գործադուլային շարժմանը, աշխատավորների կենսամակարդակի բարձրացման և սոցիալական իրավունքների ընդարձակման, խաղաղության համար, նոր պատերազմի սպառնալիքի դեմ մղվող պայքարին: Սակայն կոմունիստական կուսակցության գործունեությունն ուժեղ դիմադրության էր հանդիպում ոչ միայն բուրժուազիայի, պահպանողականների, լիբերալների, այլև աջ լեյբորիստական և աջ տրեդ-յունիոնիստական պարագլուխների կողմից:

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը ձգտում էր, հատկապես «սառը պատերազմի» տարիներին, ամրապնդել իր կապերը աշխատավորների հետ, հաղթահարել կուսակցության անդամների մի մասի աղանդավորական և դոգմատիկ հայացքները, անդամներ, որոնք երկյուղում էին լեյբորիստների հետ մերձենալուց և ամբողջ լեյբորիստական կուսակցությունը համարում էին հետադեմ զանգված: Կուսակցությունը պայքար էր մղում նաև բանվորական շարժման մեջ իր դերը նվազեցնելու, լեյբորիստական կուսակցության հետ կոնտակտներ հաստատելու պատրվակով սկզբունքային դիջումների դիմելու փորձերի դեմ:

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը մշակեց «Սոցիալիզմին անցնելու Բրիտանիայի ուղին» ծրագիր, որն 1951 թ. հունվարին կուսակցության գործկոմը և 1952 թ. իր 22-րդ համագումարը հավանություն տվեցին: Ծրագիրն ընդգծում էր բանվոր դասակարգի գլխավորությամբ ժողովրդի մեծամասնության կողմից իշխանությունը նվաճելու անհրաժեշտությունը, որպեսզի Անգլիայում կառուցվի սոցիալիզմ: Կոմունիստներն այն միտքն էին արտահայտում, որ բրիտանական ժողովուրդը կարող է պառլամենտը վերափոխելով դարձնել դեմոկրատիայի իսկական զենք: Բրիտանիայի ժողովուրդը, ասվում էր ծրագրում, կարող է «կապիտալիստական դեմոկրատիան վերածել իսկական ժողովրդական դեմոկրատիայի», պառլամենտի բազայի վրա հաստատելով ժողովրդական կառավարություն: Այդ կառավարությունը կվերացնի կապիտալիստների քաղաքական իշխանությունը:

Որպես սոցիալիզմին անցնելու անհրաժեշտ նախադրյալ Անգլիայի կոմունիստական կուսակցությունը առաջ էր քաշում «ժողովրդական լայն կոալիցիայի կամ աշխատավորների բոլոր խավերի՝ կազմակերպված բանվոր դասակարգի, ֆիզիկական և մտավոր աշխատանքի բոլոր աշխատավորների, ազատ մասնագիտության և տեխնիկական մտավորականության, քաղաքների բնակչության բոլոր ցածր ու միջին խավերի և գյուղական վայրերի ֆերմերների դաշինք» ստեղծելու խնդիրը: Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության ծրագրում կտրականապես հերքվում էին այն զրպարտչական պնդումները, թե իբր կոմունիզմը մտցվում է ագրեսիայի և նվաճումների օգնությամբ, և հայտարարվում էր, որ սոցիալական վերափոխումները կարող են իրականացվել միայն ներքին փոփոխությունների հետևանքով, յուրաքանչյուր առանձին երկրի պայմաններին համապատասխան:

Անգլիական կառավարությունների անցկացրած կապիտալիստական ազգայնացմանը ծրագրում հակադրված էր սոցիալիստական ազգայնացումը, «որը պետք է անցկացվեր ժողովրդական կառավարության կողմից և տարածվեր ամբողջ խոշոր արդյունաբերության և առևտրի, խոշոր հողային սեփականության և բանկերի վրա»: Սոցիալիստական ազգայնացումը «արմատապես կվերափոխեր Բրիտանիան, նրան կապիտալիստական երկրից վերածելով մի երկրի, որը կգնա սոցիալիզմի ուղիով»,— ասված էր Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության ծրագրում: Արտադրության բոլոր կարևորագույն միջոցները ժողովրդի սեփականություն հռչակելը և աշխատանքի հիմնական արդյունքների բաշխման վրա ժողովրդական վերահսկողությունը նախադրյալներ կստեղծեն «սոցիալական ծառայության ամբողջ համակարգի վերակառուցման ու ընդարձակման և այդ համակարգի կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցության» համար: Կոմունիստական կուսակցության ծրագրում հերքվում էր համաշխարհային պատերազմի անխուսափելիության «տեսությունը» և ընդգծվում էր խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը:

Պահպանողականների կուսակցության իշխանության գլուխ անցնելը: Երկրի տնտեսական զարգացումը 1951—1957 թթ.

1951 թ. հոկտեմբերի պառլամենտական ընտրություններում հաղթանակ տարավ պահպանողական կուսակցությունը, պառլամենտում ստանալով 321 տեղ (լեյբորիստները՝ 295): Նոր կառավարությունը գլխավորեց Ու. Չերչիլը (1951—1955), որին այնուհետև այդ պոստում փոխարինեց Ա. Իդենը (1955—1957): Պահպանողականների իշխանության գլուխ գտնվելու տարիներին Անգլիայում, չնայած դանդաղ տեմպերով, շարունակվում էր արտադրության աճը, նրա ինդեքսը (1938 թ.—100) 1951 թ. 130-ից 1957 թ. բարձրացավ 153-ի: Միաժամանակ այդ ընթացքում բռնկվեց հետպատերազմյան առաջին ճգնաժամը (արտադրությունը 1951—1952 թթ. նվազեց 3 %-ով): 1955 և 1957 թթ. Անգլիան նոր ֆինանսավալյուտային ճգնաժամեր ապրեց: Անգլիայի ամբողջ էկոնոմիկայի համար վիթխարի բեռ էին ռազմական ծախսերը: Սպառազինության մրցավազքի լարվածությունը առավելագույնի հասավ 1953—1956 թթ., երբ ռազմական ծախսերը կազմեցին բյուջեի 37 %-ը (երկրի տարեկան արտադրանքի 9—11 %): 1954 թ. անգլիական զինված ուժերի թվաքանակը հասավ համարյա 1 միլիոն մարդու (1938 թ. այն չէր գերազանցում 330 հազարը): Հսկայական ռազմական ծախսերը երկրի էկոնոմիկայի դանդաղ զարգացման և նրա գիտատեխնիկական մակարդակի ետ մնալու պատճառներից մեկն էին: Պահպանողականները լեյբորիստների անցկացրած ազգայնացումը ճանաչեցին իբրև «կատարված փաստ», դրանով իսկ հաստատելով այդ միջոցառման համապատասխանելը մոնոպոլիստական կապիտալի շահերին: Ազգայնացված ճյուղերի նկատմամբ նրանց վերաբերմունքի հիմքը կազմեց Չերչիլի այն հայտարարությունը, որ հարկավոր է դեկավարվել «ոչ թե բարոյական փաստարկներով, այլ ռեալ նկատառումներով, այսինքն նրանով, թե արդյոք ազգայնացումը տալի՞ս է լավագույն բիզնես»: Միաժամանակ պահպանողականների պարագլուխը պարզորոշ ընդգծեց, որ կուսակցությունը «սկզբունքորեն առարկում է ազգայնացման դեմ»:

Պահպանողականների իշխանության գլուխ գտնվելու տարիներին շարունակվում էին պետական ձեռնարկությունների նախկին սեփականատերերին փոխհատուցման վճարումները (այդ բեռը կպահպանվի մինչև 2006 թ.), աճեց խոշորագույն մոնոպոլիաների դերը նրանց գործունեությունը սահմանելիս, ուժեղացավ այդ ձեռնարկություններում զբաղված բանվորների շահագործումը: Չնայած պետությունը շարանակում էր ազգայնացված ճյուղերում ներդնել զգալի կապիտալներ, սակայն դրանց վերակառուցման համար անհրաժեշտ ներդրումների պետական ծրագիրը չկատարվեց (որոշակի բացառություն կազմեց էլեկտրաէներգետիկան):

1953 թ. պահպանողական կառավարությունը դիմեց լեյբորիստների ազգայնացրած պողպատաձուլական գործարանների մի մասի վերականգնմանը։ Մոնոպոլիաների համար ձեռնտու պայմաններով հետագայում նրանց վաճառվեցին բոլոր պողպատաձուլական և չուգունի ձուլման 55 ձեռնարկությունները։ Նոր տերերն սկսեցին ստանալ զգալի շահույթներ, որոնք սկզբնական մակարդակից 1957 թ. աճեցին մինչև 188 %, ծավալի միայն մինչև 123 % աճի դեպքում։ Մասնավորներին հանձնվեց ավտոմոբիլային և բեռնատար տրանսպորտը։

Անգլիայի արտաքին քաղաքականությունը 1951—1957 թթ.

Պահպանողականների կառավարություններն իրենց արտաքին քաղաքականության մեջ շարունակում էին իմպերիալիստական կուրսը։ 50-ական թվականների առաջին կեսին կարևոր տեղ էին գրավում ամենից առաջ Արևմտյան Գերմանիայի վերազինման և ՆԱՏՕ-ի մեջ ԳՖՀ-ի ներգրավման միջոցով հյուսիսատլանտյան ագրեսիվ բլոկի ամրապնդման համար նրանց գործադրած ջանքերը։ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին Անգլիան 1952 թ. մայիսին ԳՖՀ-ի հետ ստորագրեց «Ընդհանուր պայմանագիրը», որը պաշտոնապես վերացնում էր օկուպացիոն ստատուսը, բայց ամրապնդում էր Արևմտյան Գերմանիայում օտարերկրյա զորքերի գտնվելը։ Արևմտյան տերությունների ռազմաքաղաքական խմբավորման մեջ Արևմտյան Գերմանիայի զինված ուժերի ներգրավման ձևերից մեկի՝ Եվրոպական պաշտպանական ընկերակցության ստեղծման պլանը Ֆրանսիայի ազգային ժողովի կողմից մերժելը Անգլիային և ԱՄՆ-ին ստիպեց գերմանական միլիտարիզմի վերածնման այլ ուղի փնտրել։ Այդպիսի ուղի գտնվեց 1954 թ. հոկտեմբերին ստորագրված փարիզյան համաձայնագրերում։ Դրանց հիման վրա 1955 թ. մայիսին ԳՖՀ-ն մտավ ՆԱՏՕ-ի կազմի մեջ։ Նպաստելով դեպքերի նման զարգացմանը, անգլիական կառավարությունը դրանով վերացրեց 1942 թ. անգլո-սովետական պայմանագիրը։ Սովետական կառավարությունն ստիպված էր 1955 թ. մայիսի 7-ին հայտարարել այն անվավեր համարելու մասին։

Անգլիան ակտիվորեն մասնակցում էր միջուկային զենքի մրցավազքին և 1952 թ. հոկտեմբերին Խաղաղ օվկիանոսում միջուկային պայթեցում կատարեց։ Ընդարձակվեց ԱՄՆ-ի հետ Անգլիայի ռազմական համագործակցությունը։ Բրիտանական կղզիների տարածքում տեղակայվեցին ամերիկյան զորքեր, ինքնաթիռներ, հրթիռներ։

Պահպանողական կառավարությունները վարում էին գաղութային ակտիվ քաղաքականություն, ձգտելով պահպանել կայսրությունը և իրենց դիրքերը ազատագրված երկրներում։ Սակայն հեղափոխությունը Եգիպտոսում, որը 1952 թ. տապալեց Ֆարուխ թագավորի պրոամերիկյան վարչակարգը, և եգիպտական ժողովրդի հակաիմպերիալիստական շարժման հետագա զարգացումը անգլիական կառավարությանն ստիպեցին զորքերը դուրս բերել այդ երկրից։ Սուեզի ջրանցքի ազգայնացումը նոր հարված էր անգլիական գաղութարարներին։ 1956 թ. Եգիպտոսի դեմ ձեռնարկված անգլո-ֆրանս-իսրայելական կոլեկտիվ ագրեսիան, որ նկատի ուներ ետ վերադարձնել իմպերիալիստական կորսված դիրքերը, ավարտվեց ագրեսորների պարտությամբ։ Այդ պարտությունն ազդեցություն գործեց բուն Անգլիայում ներքաղաքական պայքարի սրման վրա։

Բանվոր դասակարգի պայքարը պահպանողականների ներքին և արտաքին քաղաքականության դեմ

Պահպանողական կառավարությունների քաղաքականությունը որն ուժեղացրել էր բանվոր դասակարգի վրա հարձակումը, դժգոհությունների աճ առաջ բերեց։ 50-ական թվականների առաջին կեսը բնութագրվում էր գործադուլային շարժման աճով։ ԵթԷ 1950 թ. եղել էր ավելի քան 1300 գործադուլ, որոնց մասնակցել էր համարյա 300 հազար մարդ, ապա 1955 թ. 2419 գործադուլներին մասնակցել էր ավելի քան 670 հազար բանվոր։ Համապատասխանաբար ավելացել էր նաև կորսված մարդ-օրերի թիվը՝ 1,4 միլիոնից հասնելով 3,7 միլիոնի։

1955 թ. խոշոր գործադուլներից էին մայիս—հունիսին երկաթուղային-ների երեքշաբաթյա գործադուլը, որը համարյա լրիվ կազմալուծեց երկաթուղային տրանսպորտը, տպագրիչների գործադուլը, որը շարունակվեց 4 շաբաթ, և նավահանգստային բանվորների վեցշաբաթյա գործադուլը։ 1956 թ. գործադուլների թիվն աճեց, չնայած մասնակիցների քանակը և «կորսված» աշխատանքային օրերը պակասեցին։ 1957 թվականը ամբողջ հետպատերազմյան տարիների մեջ ռեկորդային էր «կորսված» աշխատանքային օրերի թվով (երեք անգամ շատ, քան նախորդ երեք տարիները միասին վերցրած)։ Մեքենաշինարարների և նավաշինարարների գործադուլը (1957 թ. մարտ—ապրիլ) ընդունեց համազգային բնույթ, ընդգրկելով 1,5 միլիոն մարդ։ Կառավարության միջամտությունը հաստատեց բանվորների և ձեռնարկատերերի միջև կոմպրոմիսի (աշխատավարձը պահանջվելիք 10-ի փոխարեն բարձրացվեց 6,5 տոկոսով)։

50-ական թվականներից սկսեց էլ ավելի մեծ թափ ստանալ խաղաղության համար պայքարը։ Այն զուգակցվում էր գոյության լավ պայմանների համար պայքարի հետ։ Այն պահանջները, որ սկզբում առաջ էր քաշում կոմունիստական կուսակցությունը, սկսեցին պաշտպանություն գտնել տրեդ-յունիոններում, լեյբորիստական կուսակցության մեջ, բանվորական մյուս կազմակերպություններում։ 1953 թ. ՏԲԿ-ի կոնգրեսում աջ պարագլուխները չկարողացան խանգարել խաղաղությունն ապահովելու կոչող բանաձևի ընդունմանը։ 1954 թ. ՏԲԿ-ի կոնգրեսը հավանություն տվեց ատոմային ու ջրածնային զենքի արգելումը և սպառազինության կրճատումն ապահովելու համար մեծ տերությունների ներկայացուցիչների միջազգային խորհրդակցություն հրավիրելու գաղափարին։ Նրա պատգամավորների համարյա կեսը դեմ արտահայտվեց Արևմտյան Գերմանիայի վերազինման քաղաքականությանը։ Այդ պահանջի օգտին տրվեց ավելի քան 3 միլիոն ձայն նաև 1954 թ. լեյբորիստական կուսակցության կոնֆերանսում։

1954 թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի կոմկուսի նախաձեռնությամբ անցկացվեց ԳՖՀ-ի զինման դեմ ազգային երթ։ Խաղաղության պաշտպանության անգլիական կոմիտեն կոնֆերանս կազմակերպեց, որը դիմում ընդունեց, կոչ անելով պայքարել Արևմտյան Գերմանիայի զինման դեմ։ 1954 թ. վերջին այդ հարցը Անգլիայի քաղաքական կյանքի կենտրոնական պրոբլեմն էր։ Այս իրադրության մեջ 1955 թ. ապրիլին կայացած լեյբորիստական կուսակցության կոնֆերանսը բանաձև ընդունեց, որով Անգլիայի կառավարությանը կոչ էր արվում համաեվրոպական անվտանգության վերաբերյալ պայմանագիր մշակելու նպատակով բանակցություններ սկսել մեծ տերությունների, այդ թվում Սովետական Միության հետ։

Ատոմային ռումբ ստեղծելու մասին անգլիական կառավարության հայտարարությունը անգլիական հասարակայնության ուշադրությունը ուղղեց միջուկային քաղաքականության հարցերին։ 1955 թ. սեպտեմբերին Լոնդոնում

ատոմային զենքն արգելելու օգտին կոնֆերանս հրավիրվեց։ ՏԲԿ-ի 1955 թ. սեպտեմբերին կայացած կոնգրեսը բանաձև ընդունեց, որով պահանջեց ոչընչացնել ատոմային և ջրածնային զենքի բոլոր պաշարները։

Անգլիայում խաղաղության համար շարժման կարևոր փուլ եղավ անգլիական աշխատավորների պայքարը Եգիպտոսի նկատմամբ կատարված ագրեսիայի դեմ։ Այդ պայքարի սրությունը լեյբորիստական ղեկավարությունը ստիպեց հանդես գալ պահպանողականների ձեռնարկած պատերազմի դեմ։ Լեյբորիստական կուսակցության պառլամենտական ֆրակցիան դատապարտեց սուեզյան հարցում կառավարության քաղաքականությունը։ Առաջին անգամ Անգլիան պատերազմ էր վարում բանվոր դասակարգի նշանակալի մասը ներկայացնող օպոզիցիոն կուսակցության կողմից չպաշտպանված։ Իդենն ստիպված էր սուեզյան ավանտյուրայից հետո հրաժարական տալ։

Մեծ Բրիտանիայի Կոմկուսի XXV (արտակարգ) համագումարը (1957 թ. ապրիլ)

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը, պայքար մղելով խաղաղության պաշտպանության և աշխատավորների կենսամակարդակի բարձրացման համար, ձգտում էր ամրապնդել իր շարքերը, հասնել ձախ ուժերի միասնության։ Դրա հետ միասին, ինչպես նշել է Մեծ Բրիտանիայի կոմկուսի գործկոմի պլենումներից մեկում Հարրի Պոլիտը, կուսակցությունը թերագնահատում էր լեյբորիստական կուսակցության և տրեդ-յունիոնների շարքային անդամների ձախ տրամադրությունները և բավարար ջանքեր չգործադրեց նրանց հետ փոխըմբռնման հասնելու համար։ Գոյություն ուներ ԱՄՆ-ից անկախ ազգային քաղաքականության համար պայքարի նշանակության որոշակի թերագնահատում։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի դիրքավորման վրա բացասաբար ազդեց նաև աշխատավորական ֆաբրիկա-գործարանային բջիջների լիկվիդացման միտումը, որի հետ կուսակցությունը հաշտվեց պատերազմից հետո։ 50-ական թվականների երկրորդ կեսին անգլիական կոմկուսը ակտիվացրեց իր գործունեությունը երկրում առաջադիմական ուժերի համախմբման ուղղությամբ, ձգտելով լիակատար օգնություն ցույց տալ լեյբորիստական կուսակցության ներսի ձախ խմբավորումներին։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի գործկոմը 1956 թ. հավանություն տվեց այդ գծին, նշելով, որ լեյբորիստների հետ գործողությունների միասնությունը մոնոպոլիստական կապիտալի դեմ մղվող պայքարում հաջողությունն ապահովելու անհրաժեշտ պայմաններից մեկն է։

Կոմկուսի գործունեության շրջադարձային փուլում նրա գլխավոր գծի դեմ հանդես եկան ռևիզիոնիստական տարրերը։ Համերաշխորեն գործելով բացահայտ հակակոմունիստների հետ, նրանք պահանջում էին կուսակցությանը մեկուսացնել համաշխարհային կոմունիստական շարժումից։ Ռևիզիոնիստների ելույթները կուսակցության շարքերում առաջ բերեցին տարընթացություն, թուլացրեցին զանգվածների շրջանում կուսակցության աշխատանքի արդյունավետությունը։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի անդամների թիվը 1956 թ. մարտին 34 հազարից 1957 թ. ապրիլին դարձավ 27 հազար։ 1956 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի կոմկուսի Կենտկոմի պլենումը կուսակցության շարքերից հեռացրեց ամենաակտիվ ռևիզիոնիստներին։

1956—1957 թթ., երբ կուսակցությունը ետ էր մղում ռևիզիոնիստների հարձակումները, նրանում ակտիվացան աղանդավորական միտումները։ Փորձ էր արվում կուսակցությունը դիտել իբրև «ընտրանի», ընտրյալ հեղափոխականների մի ոչ մեծ խումբ։ Դրանից էլ եզրակացվում էր մասսայական կուսակցություն ստեղծելու պայքարը դադարեցնելու անհրաժեշտության մասին։ Այդ իրադրության մեջ 1957 թ. ապրիլին

գումարվեց Մեծ Բրիտանիայի կոմկուսի XXV (արտակարգ) համագումարը, որը կարևոր փուլ հանդիսացավ նրա պատմության մեջ։ Նա վճռական պարտության մատնեց ռևիզիոնիստներին, պաշտպանեց դեմոկրատական ցենտրալիզմի կազմակերպական հիմքերը և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, մերժեց ռևիզիոնիստական պատրանքներն այն մասին, թե իբր կապիտալիզմը փոխել է իր բնույթը և միայն լեյբորիստական կուսակցությունը բավական է անգլիական բանվոր դասակարգին՝ սոցիալիզմին հասնելու համար։ XXV համագումարը մերժեց նաև աղանդավորական գաղափարները, որոնք կուսակցությանը դատապարտում էին բանվորական շարժումից մեկուսացման։ Նա լրացրեց և ճշգրտեց 1951 թ. ծրագիրը։ Այդ ճշգրտումները վերաբերում էին լայն ժողովրդական դաշինքի ստեղծման գաղափարների հետագա զարգացմանը, որպես սոցիալիզմին անցնելու անհրաժեշտ պայման։ «Այդպիսի դաշինքը, բանվոր դասակարգի գլխավորությամբ,— ասվում էր ծրագրի նոր տարբերակում,— կարևոր պայման կհանդիսանա իսկական սոցիալիստական կառավարության ստեղծման համար, որը կկարողանա կառուցել սոցիալիստական Բրիտանիա»։ Այդ կապակցությամբ համագումարն ընդգծեց «ձախ ոչ մարքսիստական, բայց մարտական խավերի» հետ կոմունիստների մերձեցման անհրաժեշտությունը, միաժամանակ նշելով այդ ձախ ուժերի թուլությունը։ Նա կոմկուսին դրեց բանվորական շարժման բոլոր ջոկատների գործողությունների միասնության, հակաիմպերիալիստական կոալիցիայի ստեղծման համար պայքարի մանրամասն մշակված ծրագրով։

ԱՆԳԼԻԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

Անգլիայի էկոնոմիկայի զարգացումը 1958—1964 թթ.

Պահպանողականների իշխանության գլուխ գտնվելը անխախտելի երկարատև եղավ՝ 13 տարի (1955 թ. հաջող ընտրություններից հետո նրանք կրկին հաղթանակ տարան 1959 թ. ընտրություններում)։ 1957 թ. պրեմիեր Ա. Իդենին փոխարինեց Մակմիլանը, որին փոխարինելու եկավ Դուգլաս Հյումը։ Այդ տարիներին, գիտատեխնիկական հեղափոխության ծավալման, հիմնական կապիտալի հետագա նորացման, սպառողինության հրսկայական ծախսերի, Բրիտանական գաղութային կայսրության փլուզմանը և եվրոպական տնտեսական ինտեգրացմանը անգլիական էկոնոմիկան հարմարեցնելու պայմաններում, ամբողջ ուժով դրսևորվեց Անգլիայի «աթիլևսյան գարշապարը»՝ տնտեսական զարգացման ցածր տեմպերը։

1957—1958 թթ. երկրի էկոնոմիկան լուրջ անկում էր ապրում (2 %)։ Արդյունաբերական արտադրության ինդեքսը (1938 թ.=100), որ 1958 թ. կազմում էր 151, 1964 թ. բարձրացավ միայն մինչև 179-ի։

Անգլիայում արտադրության աճի տեմպերը ցածր էին համեմատած ոչ միայն սոցիալիստական երկրների, այլև զարգացած կապիտալիստական երկրների մեծամասնության հետ։ Դրա պատճառները թաքնված էին անգլիական համախառն ազգային արտադրանքում կապիտալ ներդրումների ցածր բաժնի, տեխնիկական առաջադիմության նվաճումները և արտադրության կազմակերպումը թերօգտագործելու, մի շարք ճյուղերում որակյալ բանուժի պակասի և այլնի մեջ։ Հիմնական կապիտալի նորոգումը նշանակալի չափով արգելակվում էր ռազմական ծախսերի բարձր մակարդակի պատճառով։ 11 տարվա ընթացքում (1951 թ. ապրիլից մինչև 1962 թ. մարտ) անմիջականորեն ռազմական նպատակների համար ծախսերը կազմեցին համարյա 16

միլիարդ ֆունտ ստեռլինգ, այսինքն երկու անգամ գերազանցեցին երկրի արդյունաբերական արտադրանքի 75 %-ը ավելի վերամշակող արդյունաբերության մեջ ներդրված կապիտալներին։

Արդյունաբերական արտադրության աճի և տեխնիկական առաջադիմության ցածր տեմպերի պատճառով համաշխարհային կապիտալիստական արտադրության մեջ Անգլիայի բաժինն անշեղորեն նվազում էր (1948 թ. 11,9 %, 1956 թ.՝ 8,2 %)։ Նույն վիճակն էր նաև կապիտալիստական աշխարհում արդյունաբերական արտադրության նրա արտահանման բնագավառում (1949 թ. 12,9 %, 1962 թ. 8,6 %)։ 50-ական թվականների վերջին ԴՏՀ-ն համաշխարհային առևտրում Անգլիային երկրորդից մղեց երրորդ տեղը։ Այս հանգամանքները, ռազմական ծախսերի հսկայական աճի և կապիտալի արտահանման հետ միասին անգլիական վճարունակ հաշվեկշռի համար ստեղծեցին լուրջ դժվարություններ, քանի որ ներմուծումը հարկ էր լինում վճարել հիմնականում արտահանման միջոցով, որովհետև ոչ ապրանքային գործառնություններից ստացվող միջոցները նշանակալիորեն պակասել էին։ Դրա հետևանքով հաճախ կրկնվում էին ֆինանսավալյուտային ճգնաժամերը։ Թույլ զարգացած երկրներ արտահանությունն ավելացնելու պայքարի հետ միասին անգլիական բուրժուազիան որպես վաճառահանման շուկաներ սկսեց ակտիվորեն օգտագործել զարգացած կապիտալիստական, մասնավորապես արևմտաեվրոպական երկրները, մի հանգամանք, որը ազդում էր անգլիական արդյունաբերության կառուցվածքի վրա։

60-ական թվականների սկզբին անգլիական արտահանությունում Ազգերի համագործակցության երկրները մի շարք կարևոր ապրանքների գծով (ընդհանուր մեքենաշինության արտադրանք, ավտոմոբիլներ, էլեկտրասարքեր, գյուղատնտեսական մեքենաներ, պլաստմասսա, քիմիական սարքեր և միացություններ, նավթամթերքներ) նահանջեցին երկրորդ տեղը։ Առաջին տեղը դուրս եկան «Ընդհանուր շուկայի» և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի երկրները (ընդ որում ԵՏՀ-ի բաժինը գերազանցում էր ԱԱԵԱ-ի բաժնին)։ Անգլիայի արտահանությունը Արևմտյան Եվրոպա 1957 թ. կազմում էր նրա ընդհանուր արտահանության 27,6 %-ը, 1963 թ. 37,3 %-ը. Արևմտյան Եվրոպայից Անգլիա ներմուծումը համապատասխանաբար կազմում էր 25,8 և 30,7 %։ 1963 թ. «Ընդհանուր շուկայի» երկրներ անգլիական ապրանքների արտահանությունը նրանցից ներմուծվածներին գերազանցեց 15 տոկոսով։

Համաշխարհային շուկայի փոփոխված պայմաններին անգլիական մոնոպոլիաների հարմարվելու գործում մեծ նշանակություն ուներ պետական մոնոպոլիստական կարգավորումը։ Կառավարությունը մասնավոր արդյունաբերությանը տրամադրում էր հսկայական գումարի ուղղակի և անուղղակի դրամական օժանդակություն, օգնելով իջեցնելու արտադրության ծախսերը։ Ազգային համախառն արդյունքի ավելի քան կեսը (1950 թ. 55 %, 1960 թ. 53 %) բաժին էր ընկնում պետությանը։ Տնտեսության մեջ բոլոր կապիտալ ներդրումների կեսը 1964 թ. կազմում էին պետական կապիտալ ներդրումները (դրանցից 50 %-ը գնում էր ազգայնացված ճյուղերի, 50 %-ը՝ օգտակարակայանների, նավահանգիստների, ճանապարհների և այլնի համար)։

Էկոնոմիկայում խոշոր մոնոպոլիաների տիրապետության ուժեղացմանը նպաստում էին կապիտալի և արտադրության կենտրոնացումն ու համակենտրոնացումը։ 50-ական թվականների մոտերքը Անգլիայի վերամշակող արդյունաբերության ճյուղերի մեծ մասը գտնվում էր 2500 կարտելներում։ Մի շարք խոշորագույն գաղութային մոնոպոլիաներ իրենց գործունեության ծանրության կենտրոնը փոխադրեցին մայր երկիր։ 1958 թ. մարդահամարը

Անգլիայում գրանցեց 185 խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություն (յուրաքանչյուրում ավելի քան 5 հազար բանվոր), որոնցում աշխատում էր երկրի բոլոր արդյունաբերական բանվոր-ծառայողների 25 %-ը։ Այդ ձեռնարկությունների հիմնական կապիտալը կազմում էր ընդհանուր հիմնական կապիտալի 30 %-ը։ 50-ական թվականների վերջից մոնոպոլիաների միաձուլման պրոցեսն ուժեղացավ, և 60-ական թվականների սկզբին արդյունաբերական արտադրության մակարդակով Անգլիան Արևմտյան Եվրոպայում դուրս եկավ առաջին տեղը. երկրի չափահաս բնակչության 1 %-ը տիրում էր ամբողջ սեփականության 43 %-ին (50-ական թվականների վերջին), հավելյալ արժեքի նորման աճել էր 207 %-ով (1938 թ. 170 %)։

Անգլիայի գյուղատնտեսությունը երկրի էկոնոմիկայում շարունակում էր գրավել համեմատաբար ոչ մեծ տեսակարար կշիռ (զբաղված բնակչության 600 հազարից մի քիչ ավելին) և հանդիսանում էր աշխարհում առավել մեքենայացվածը։ Նրա տեխնիկական վերազինմանը և ինտենսիվացմանը նպաստում էին կառավարական խոշոր դրամական օժանդակությունները, որոնք, սակայն, չէին վերաբերում մանր ֆերմաներին, որոնց տերերը տառապում էին գյուղատնտեսական մթերքների գնման ցածր գներից և վարկերի պակասությունից։ Ամբողջությամբ վերցրած անգլիական գյուղատնտեսությունն սկսեց զգալի չափով, քան նախքան պատերազմը, երկիրն ապահովել սննդամթերքներով։ Գյուղատնտեսական մեքենաների, պարարտանյութերի և այլնի աճած պահանջարկը հասցրեց Անգլիայի արտադրության ընդարձակմանը։

Պահպանողական կառավարությունների երրորդ բաղադրությունը 1950—1964 թթ.

Երկրի տնտեսական զարգացման առանձնահատկությունը, որը մեծ չափով կախված էր հումքի և արդյունաբերական ապրանքների ներմուծումից, պահպանողականների կառավարություններին ստիպում էր խրախուսել պետական-մոնոպոլիստական միտումների զարգացումը։ Դա էլ հենց առաջ էր բերում վճարունակ հաշվեկշռի պարբերական սրում։ Կառավարությունը, դրա հետ կապված, ժամանակ առ ժամանակ անցկացնում էր արտադրության «սեղմում», որպեսզի, կրճատելով ներմուծումը, պակասեցնի վճարունակ հաշվեկշռի դեֆիցիտը։ Այդ քաղաքականությունը ստացավ «կանգնիր-գնա» անվանումը։ Արտադրության աճի խթանումը կամ սահմանափակումը ձեռք էր բերվում գլխավորապես բանկային տոկոսային դրույթի մանիպուլյացիայով։ Զգուշանալով խուսափել էկոնոմիկայի «գերտաքացումից», կառավարությունը երեք անգամ (1957, 1961, 1964 թթ.) ավելացրեց բանկային տոկոսը։ Մյուս կողմից, պահպանողական կառավարություններն անընդհատ ավելացնում էին հարկերը, ինֆլյացիա թույլ չտալու պատրվակով արգելակում էին աշխատավարձի աճը։ Իսկ երբ իջնում էին աճի տեմպերը, կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում նրա խրախուսման համար։

Պահպանողական կառավարությունը փորձում էր էկոնոմիկայի զարգացումը դնել որոշ պլանային հիմքի վրա։ 1962 թ. սկզբին ստեղծվեց կիսակառավարական մի կազմակերպություն՝ Տնտեսական զարգացման ազգային խորհուրդը (ՏԶԱԽ), որի նպատակն էր էկոնոմիկայի զարգացման արագացված համամասնական պլաններ մշակելը, արդյունաբերության հիմնական ճյուղերում կապիտալ ներդրումների չափերն ու արտադրության ծավալը որոշելը և աշխատավարձի հարցերում արբիտրաժի իրականացումը։ Կառավարության հաստատած ՏԶԱԽ-ի առաջին «հնգամյա պլանը» (1961—1966) հա-

մախառն հասարակական արտադրանքի տարեկան աճ էր նախատեսում 4 %-ի չափով։ Սակայն այն ռեալ դուրս չեկավ։ Մոնոպոլիաները հաճույքով ՏՋԱԽ-ի մարմիններից իրենց համար անհրաժեշտ ինֆորմացիա էին քաղում (իրենք նրան ինֆորմացիա էին տալիս միայն «կամավորության սկզբունքներով»), բայց հաշվի չէին առնում նրա հանձնարարականները։ ՏՋԱԽ-ի գործունեությունը մասնավոր կապիտալիստական տնտեսության պայմաններում իսկական պլանավորման անհնարինության ևս մեկ հաստատումն էր։

Լայնորեն օգտագործվում էր նաև հարկային համակարգը որպես ազգային եկամտի վերաբաշխման կարևոր գործիք։ Պետական բյուջեի ընդհանուր մուտքերում աճեց բանվորների բաժինը, իսկ շահույթներից մուտքերը պակասեցին։ 1951-ից մինչև 1959 թ. կառավարությունը մոնոպոլիստական միավորումներին դրամական օժանդակության ձևով հատկացրեց ավելի քան 2 միլիարդ ֆունտ ստերլինգ, ռազմական պատվերների մոտ 90 %-ը։ «Յունիլևների» կապիտալը, օրինակ, 1949-ից մինչև 1961 թ. աճեց ավելի քան կրկնակի, իսկ առևտրական շահույթները եռապատկվեցին։ Վերամշակող արդյունաբերության համախառն շահույթն ավելացավ համարյա կրկնակի չափով։

Համառ պայքարի հետևանքով անգլիական բանվորները հասան աշխատանքի պայմանների որոշ բարելավման (աշխատանքային շաբաթվա կրճատում, երկշաբթյա վճարովի արձակուրդ և այլն) և շահույթների աճի համեմատությամբ աննշան չափով աշխատավարձի բարձրացման։ Նրանք պահպանողականներին ստիպեցին հրաժարվել լեյբորիստների մտցրած «աշխատավարձի սառեցումից»։ Աշխատավարձի մակարդակը դրամական արտահայտությամբ բարձրացավ տարեկան միջին հաշվով (1949—1960 թթ.) 5 տոկոսով, գների միջին տարեկան աճի 3 %-ի դեպքում, որը նշանակում էր աշխատավարձի տարեկան աճ մոտ 2 %-ով։ Բայց 60-ական թվականների սկզբին աշխատավարձի ռեալ բարձրացումը դադարեց։ 1961 թ. պահպանողական կառավարությունը, նախնական կարգով իջեցնելով գերշահույթների հարկերը 80 միլիոն ֆունտ ստերլինգով, «ինֆլյացիայի» դեմ պայքարի պատրվակով աշխատավարձի բարձրացման «դադար» հայտարարեց։ Հաջորդ, 1962 թ. նա ստիպված էր վերադառնալ աշխատավարձի աճի «սահմանափակման» քաղաքականությանը (տարեկան 2,5 տոկոսից ոչ ավելի), որը ապրուստի արժեքի բարձրացման պայմաններում նշանակում էր աշխատավորական լայն զանգվածների դրության վատթարացում։ Բանվոր դասակարգի զգալի մասի դրությունը վատացավ նաև ռացիոնալիզացման կապակցությամբ, առաջ բերելով գործազրկության աճ։ 1955-ից մինչև 1959 թ. գործազրկությունն ըստ պաշտոնական տվյալների, ավելացավ համարյա կրկնակի՝ 264,5 հազարից հասնելով 512,1 հազար մարդու, հաջորդ տարիներին ևս մնալով բարձր մակարդակի վրա։

Պահպանողականների գաղութային և արտաքին քաղաքականությունը

Չնայած Բրիտանական կայսրության փլուզմանը, որ ավարտվեց հիմնականում պահպանողականների իշխանության գլուխ գտնվելու ժամանակաշրջանում, Անգլիայի էկոնոմիկայում և քաղաքականության մեջ գաղութատիրությունն իրեն զգացնել էր տալիս անհամեմատ մեծ չափով, քան իմպերիալիստական մյուս երկրներում, չնայած Անգլիայի ազգային հարստության մետրոպոլիա տեղափոխումն ընթանում էր արագ տեմպերով (1913 թ. նրա մեկ քառորդը գտնվում էր երկրի սահմաններից դուրս, իսկ 60-ական թվականների կեսին միայն 10 %-ը)։ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գաղութային և կիսագաղութային երկրներում Անգլիայի ներդրումները կազմում էին նրա արտասահմանյան կապիտալ ներդրումների 45 %-ը, իսկ 60-ական թվականների կեսին զարգացող երկրներին բաժին էր ընկնում նրա ուղղակի մասնավոր կապիտալ ներդրումների գումարի միայն $^1/_3$-ը (առանց նավթային մոնոպոլիաների, ապահովագրական ընկերությունների և բանկերի արտասահմանյան ակտիվների)։ Համապատասխանաբար աճեց արդյունաբերականորեն զարգացած երկրներում կապիտալ ներդրումների բաժինը։

Բայց մասնավոր «անդրծովյան» կապիտալ ներդրումները, որ 1945 թ. կրճատվել էին մինչև 2417 միլիոն ֆունտ ստերլինգ, 60-ական թվականների կեսին աճեցին մինչև 11 միլիարդ ֆունտ ստերլինգի։ Ընդ որում այդ գումարի $^2/_3$-ն ընկնում էր ստերլինգային գոտու երկրներին, որը վկայում էր բրիտանական իմպերիալիզմի անցյալ մակարդակի հետ համեմատած շնչին գաղութային բնույթի պահպանման մասին։

Միաժամանակ պահպանողականներն ստիպված էին խոստովանել Բրիտանական կայսրության փլուզման փաստը։ 1962 թ. Համագործակցության գործերի մինիստրի և գաղութային գործերի մինիստրի պոստերը միացվեցին։ Համագործակցությունը, որ 1965 թ. առաջին կեսին կազմված էր 750 միլիոն բնակչությամբ 21 անդամից, պահպանողականները դիտում էին որպես ձևափոխված Բրիտանական կայսրություն, որը նրանք ձգտում էին իրենց ձեռքում պահել ինչպես հին, այնպես էլ նոր (նեոգաղութատիրական) մեթոդներով, որոնք նախատեսում էին պահպանել անիրահավասար հարաբերությունները և քաղաքական, տնտեսական, գաղափարական, ռազմական և այլ միջոցներով իրենց ձեռքում պահել ավելի պակաս զարգացած երկրները, որպես տնտեսական շահագործման և քաղաքական վերահսկողության օբյեկտներ։ Օգտագործվում էր նաև առավելության համակարգը, ինչպես նաև ֆունտ ստերլինգի գոտում անգլիական գերիշխանությունը։ Մինչև 1947 թ. Համագործակցությունն իր մեջ ներառում էր հետևյալ դոմինիոնները. Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան Միությունը (մինչև 1961 թ.), իսկ այնուհետև նաև անկախություն ձեռք բերած նախկին գաղութները. Հնդկաստանը, Պակիստանը, Ցեյլոնը, Գանան և Մալայական Ֆեդերացիան, Նիգերիան, Կիպրոսը, Քենիան, Սիերա-Լեոնեն, Տանգանիկան, Յամայկան։ 1963 թ. անգլիական գաղութ Սինգապուրը նահանգի իրավունքներով մտցվեց Մալազիայի Ֆեդերացիայի կազմի մեջ։

Մտնելով Համագործակցության կազմի մեջ, նախկին գաղութային երկրները մնացին Անգլիայից տնտեսապես կախված վիճակում, չկարողացան հաղթահարել հետամնացությունը և բնակչության ցածր կենսամակարդակը։ Նրանցից մի քանիսում պահպանողականներն ապահովեցին նույնիսկ անգլիական ռազմական բազաների պահպանումը (Կիպրոս, Սիերա-Լեոնեն, Սինգապուր)։ Ջիբլարթարի, Հոնկոնգի, Մալթայի, Բահրեյնյան կղզիների ռազմական բազաների հետ միասին Անգլիան ռազմաօդային բազաներ ուներ Քենիայում (Նայրոբի, Քիսումի), Լիբիայում (Բենգազի և Ալ. Ադամի), Տանգանիկայում և Ուգանդայում, ռազմածովային բազաներ՝ Մոմբասում (Քենիա) և Դար էս Սալամում (Տանգանիկա)։ Հարավ-Աֆրիկյան Միության հետ, որը 1961 թ. Համագործակցությունից դուրս գալուց հետո, սկսեց անվանվել Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն, պահպանողականները 1955 թ. պայմանագիր կնքեցին, որը նախատեսում էր Անգլիայի կողմից Սայմոնթաուն ռազմածովային բազան օգտագործելը։ Փոխարենը Անգլիան համաձայնեց ՀԱՀ-ին զենք, մասնավորապես ռազմանավեր մատակարարել։ Անգլիայի քա-

ղաքականությունն օժանդակեց Հարավային Ռոդեզիայում ռասիստական վարչակարգի ամրապնդմանը։

Բրիտանական կայսրության մի մասը մնաց Անգլիայի գաղութային անմիջական կառավարման տակ (1946 թ. Բրիտանական կայսրության բնակչության 80 %-ը, 1960 թ. 6 %-ը)։ Գաղութներում շարունակում էին կառավարել անգլիական նահանգապետները, իսկ երբ նրանց իշխանությունը կարիք էր զգում, մտցվում էր արտակարգ դրության ռեժիմ, որը ոչնչով չսահմանափակվող ազատություն էր տալիս գաղութային կամայականությանն ու բռնությանը։

Անգլիայի փոխհարաբերությունները եվրոպական երկրների հետ նշանակալիորեն բարդացան հատկապես եվրոպական տնտեսական ինտեգրացիայի կապակցությամբ։ Պահպանողականների կառավարությունն սկզբում փորձեց չթուլացնելով Համագործակցության երկրների հետ կապը և իր հեգեմոնիան նրանում, ԵՏՀ-ի հետ համաձայնության հասնել։ Անհաջողություն կրելով, նա իր ղեկավարությամբ 1958 թ. ի հակակշիռ «Ընդհանուր շուկայի» ստեղծեց եվրոպական երկրների մյուս խմբավորումը՝ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան (ԱԱԵԱ), որի կազմի մեջ մտնում էին Մեծ Բրիտանիան, Շվեդիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Դանիան, Ավստրիան և Շվեյցարիան։

Սակայն եվրոպական երկրների, գլխավորապես «Ընդհանուր շուկայի» պետությունների կողմը անգլիական արտաքին առևտրի շարունակվող վերակողմնորոշման պատճառով պահպանողականները 1961 թ. դիմեցին նրա ղեկավար մարմիններին, խնդրելով Անգլիային ընդունել իրենց կազմի մեջ։ Ընդորում նրանք հույս ունեին, որ այնպիսի պայմաններ կապահովվեին, որոնք կպաշտպանեին Համագործակցության երկրների շահերը։ Անգլիային մերժեցին ընդունել։ Բացասական դիրք գրավեց Ֆրանսիան, երկյուղելով, որ Անգլիան «հատուկ հարաբերություններ» ունենալով ԱՄՆ-ի հետ, «Ընդհանուր շուկայում» կխաղա ամերիկյան «տրոյական ձիու» դերը։

50-ական թվականների վերջին, աշխարհում ուժերի հարաբերակցության փոփոխման, ՍՍՀՄ-ի հեղինակության աճի, խաղաղության կողմնակիցների շարժման ակտիվացման պայմաններում, պահպանողականների կառավարությունն ստիպված էր որոշ չափով նահանջել անցկացվող հակասովետական քաղաքականությունից։ 1959 թ. սկզբին պրեմիեր մինիստր Մակմիլանը արտաքին գործերի մինիստրի ուղեկցությամբ այցելեց ՍՍՀՄ։ 1959 թ. կնքվեց անգլո-սովետական առևտրական համաձայնագիր, որը երկարացվեց 1964 թ.։ Անգլիան մասնակցեց երեք միջավայրերում միջուկային փորձարկումներն արգելելու մասին պայմանագրի մշակմանը, պաշտպանեց միջուկային զենք կրող օբյեկտները երկրի ուղեծիր դուրս բերելն արգելելու մասին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված համաձայնագիրը։

Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը սոցիալական կառուցվածքի վրա

Գիտատեխնիկական հեղափոխությունը, էկոնոմիկայի կառուցվածքային տեղաշարժերը և սեփականատիրական հարաբերությունների փոփոխությունները հասցրին անգլիական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխություններին։ 60-ական թվականների երկրորդ կեսին վարձու աշխատողները կազմում էին ամբողջ ինքնագործ բնակչության ավելի քան 90 տոկոսը։ Բանվոր դասակարգի ընդհանուր թիվն աճեց աննշան չափով, բայց արդյունաբերության մեջ բարձր որակավորում ունեցող բանվորների, գիտատեխնիկական աշխատողների և ծառայողների տեսակարար կշիռը 1960 թ. աճեց և հասավ 22 % (1935 թ. 13 %)։ Մի շարք ճյուղերում որակյալ աշխատանքուներ ավելի մեծ տեսակարար կշիռ՝ ավիացիոն արդյունաբերության մեջ, պլաստմասսաների արտադրությունում ավելի քան 36 %։ 1948—1959 թթ. 45 տոկոսով ավելացավ վարչական, տեխնիկական և գրասենյակային աշխատողների թիվը, որոնցից շատերն ըստ իրենց դրության և աշխատավարձի մոտ էին բանվորներին։ Այսպես կոչված «սպիտակօձիքավորները» 1961 թ. կազմում էին վարձու աշխատողների 35,9 %-ը։ Փոփոխվել էր ըստ ճյուղերի բանվորների քանակական հարաբերակցությունը։ Մեքենաշինական ճյուղում զբաղվածների թիվն ավելացել էր երեք անգամ, իսկ տեքստիլ, քարածխի արդյունաբերության մեջ, երկաթուղային տրանսպորտում այն կրճատվել էր։

Հասարակության սոցիալական փոփոխություններն իրենց կնիքը դրեցին Անգլիայի տնտեսական ու քաղաքական պայքարի բնույթի և ձևերի վրա։ Վարձու աշխատանքի աշխատողների կազմի ընդարձակումը և բանվորների որակավորման կառուցվածքի փոփոխությունները մի կողմից բանվորների դասակարգային գիտակցության աճի հնարավորություն են ստեղծում, գիտատեխնիկական կադրերի է՛լ ավելի լայն խավեր ներգրավում մոնոպոլիստական կապիտալի դեմ մղվող պայքարի մեջ, մյուս կողմից հենց դրանք էլ բարդացնում են բանվորական շարժումը, բաղա դառնալով ռեֆորմիզմի և մանրբուրժուական պատրանքների համար։

Գործադուլային պայքարը և խաղաղության համար շարժումը 1958—1964 թթ.։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի պայքարն իր շարքերի ամրապնդման համար

50-ական թվականների վերջին—60-ական թվականների սկզբին, երբ բանվոր դասակարգի կենսամակարդակի վրա պահպանողականների ուժեղացած հարձակման կապակցությամբ բարձրացել էր գործադուլային ալիքը, ավելի ակնառու, քան առաջներում, սկսեցին դրսևորվել բանվոր դասակարգի տնտեսական պայքարի քաղաքականացման միտումները։ Այն գործադուլների բաժինը, որոնք անմիջապես կապված չէին աշխատավարձի բարձրացման պահանջների հետ, 1960 թ. աճեց, կազմելով ընդհանուր գործադուլների քանակի $^3/_4$-ը (1940 թ. միայն $^1/_3$)։ Բանվորական շարժման մեջ մարտական տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան «վայրենի», այսինքն տրեդյունիոնների ղեկավարության կողմից չթույլատրված գործադուլների աճած թվում։ 1962 թ. գործադուլների թիվը, համեմատած նախորդ տարվա հետ, ավելացավ 5,5 անգամ, գերազանցելով նախորդ հինգ տարիների գործադուլների քանակը։ 1962 թ. առաջին ամիսներին աշխատավարձի բարձրացման պահանջով հանդես եկավ 6 միլիոն մարդ։ Գործադուլային պայքարի մեջ մտան «սպիտակօձիքավորները», փոստային աշխատողները, բուժքույրերը, ուսուցիչները, բանկերի ծառայողները և այլն։ Գործադուրկները, որոնց թիվը 1962 թ. կազմում էր 800 հազար մարդ, ելույթ ունեցան պառլամենտի շենքի առջև։

Գործադուլային շարժումը ցույց տվեց բանվոր դասակարգի կենսամակարդակի դեմ հարձակումներին նրա դիմակայելու կարողությունը։ Սակայն ազդեցին լայնորեն տարածված ռեֆորմիստական պատրանքներն ու ավանդույթները, որոնք դրսևորվեցին, մասնավորապես, պառլամենտական ընտրություններում, երբ շատ բանվորներ իրենց ձայնը տվեցին պահպանողականներին։

Զանգվածային պայքարի քաղաքական բնույթը մեծ չափով դրսևորվեց արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ ելույթներում։ 1958 թ. Անգլիայում ստեղծվեց «Արշավ միջուկային զինթափման համար» կազմակերպությունը։ Նրա պաշտպանությամբ հանդես եկան «Սոցիալիզմի հաղթանակի համար» լեյբորիստական խումբը և առաջադիմական այլ կազմակեր-

պություններ։ Նրան ակտիվորեն մասնակցեցին անգլիական կոմունիստները։

50-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին անցկացվեցին խաղաղության պաշտպանների բազմահազար մասնակիցների երթեր և քաղաքացիական անհնազանդության այլ գործողություններ (նստած գործադուլներ և այլն)։ Սակայն դրանց արդյունավետությունը նվազում էր լեյբորիստների կուսակցության ղեկավարության դիրքի պատճառով, քանի որ նա փաստորեն պաշտպանում էր «ատոմային ահաբեկման» և սպառազինման մրցավազքի քաղաքականությունը։ Շարժման վրա բացասաբար էին ազդում նաև անգլիական հասարակության տարբեր խավերում արմատացած հակակոմունիստական նախապաշարմունքները, ինչպես նաև հեղինակավոր կոորդինացիոն այն կենտրոնների բացակայությունը, որոնք կարողանային հաղթահարել դեմոկրատական շարժման մասնատվածությունը։

Մեծ Բրիտանիայի կոմկուսը, ձգտելով միավորել խաղաղության կողմնակիցներին, բազմիցս դիմեց լեյբորիստներին, միասնության կոչ անելով խաղաղության համար, պատերազմի սպառնալիքի դեմ մղվող պայքարում։ Միաժամանակ նա միջոցներ ձեռնարկեց կուսակցության ամրապնդման, նրա մարտունակության բարձրացման, աշխատավորների հետ կապերի ընդարձակման համար։ Մեծ նշանակություն ունեցավ Մեծ Բրիտանիայի կոմկուսի XXVI համագումարը (1959), որն ընդունեց կուսակցության նոր կանոնադրությունը, որով Մեծ Բրիտանիայի կոմկուսի անդամներին պարտավորեցվում էր կուսակցության շարքերը ներգրավել նոր կադրեր ու ակտիվորեն աշխատել նրա կազմակերպություններից մեկում։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի XXVII համագումարն (1961) ընդունեց «կուսակցության ամրապնդման տարի» անցկացնելու հատուկ որոշում։

1962 թ. հունիսի մոտերքը կուսակցության թվաքանակն աճեց և հասավ մինչև 32,5 հազար մարդու։ Քանակապես աճեց նաև անգլիական կոմերիտական կազմակերպությունը՝ «Երիտասարդ կոմունիստների լիգան»։

Հակամոնոպոլիստական ժողովրդական դաշինքի կազմավորման իր առաջադրած ծրագրի հիման վրա լեյբորիստական կուսակցության և տրեդյունիոնների ներգրավմամբ ձախ առաջադիմական միավորում ստեղծելու կոմունիստական կուսակցության պայքարը նպաստեց կուսակցության շարքերի որոշ չափով ամրապնդմանը և բանվոր դասակարգի շրջանում իր ազդեցության ուժեղացմանը։

Լեյբորիստական կուսակցության ներսում ծրագրային հարցերի գծով բանավեճը։ Լեյբորիստական V կառավարությունը

50-ական թվականների վերջին լեյբորիստական կուսակցության պարտությունն ընտրություններում կուսակցության պարագլուխները փորձում էին ներկայացնել իբրև կուսակցության սոցիալիստական ծրագրաքաղաքական սկզբունքներն ընտրողների մեծամասնության տրամադրություններին չհամապատասխանելու արդյունք։ Այդ պատրվակով կուսակցության ղեկավարության աջ ուժերը ձգտում էին նրա ծրագրից հանել այն բոլորը, ինչը դեռևս լեյբորիստներին տարբերում էր սովորական բուրժուական-լիբերալ կուսակցությունից, այսինքն ծրագրային դիրքորոշումներն ավելի ընդունելի դարձնել բուրժուազիայի և միջին խավերի համար։ Արդեն լեյբորիստական կուսակցության 1955 թ. կոնֆերանսում դրվեց կուսակցության քաղաքականության և ծրագրի մեջ ազգայնացման ու հասարակական սեփականության վերաբերյալ հարցը վերանայելու խնդիր։ Աջ թևի ներկայացուցիչ Գեյտսկելը 1956 թ. հանդես եկավ «Սոցիալիզմը և ազգայնացումը» տրակտատով, որում ըստ էության ժխտեց որպես սոցիալիզմի ստեղծման նախադրյալ արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության հաստատումը։ Խոսքը վերաբերում էր սահմանափակ ազգայնացման սկզբունքների հետագա վերանայմանը, սկզբունքներ, որոնք առկա էին լեյբորիստական կուսակցության հետպատերազմյան ծրագրում։ 1957 թ. «Արդյունաբերությունը և հասարակությունը» փաստաթղթում ազգայնացման պահանջի փոխարեն արդեն հիշատակվում էր մի քանի խոշորագույն ֆիրմաների բաժնետոմսերը կառավարության կողմից գնելու պլանը։

Միաժամանակ կուսակցության ներսում ակտիվացավ ձախ թևը, ամենից առաջ «Սոցիալիզմի հաղթանակի համար» խումբը, որն արտացոլում էր սոցիալիստական կողմնորոշումից կուսակցության պարագլուխների հրաժարվելու փորձերի առիթով նրա շարքային անդամների անբավականությունը։ Ձախ լեյբորիստները, ամբողջությամբ մնալով ռեֆորմիզմի դիրքերում, ընտրություններում կուսակցության պարտության պատճառները բացատրում էին սոցիալիստական ալտերնատիվից նրա հրաժարվելով, պրակտիկայում ազգայնացման գաղափարների խեղաթյուրմամբ։

Խոշոր տրեդ-յունիոնների մեծամասնությունը նույնպես հանդես եկավ կուսակցության կանոնադրության 4-րդ կետը պահպանելու օգտին, որը հրաշակում էր արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության սկզբունքը։ Այդ իրադրությունում Հարոլդ Վիլսոնը և նրա կողմնակիցները, որ զուգվել էին «ձախերի» զգեստներով (շատերը նրանց անվանում էին ավելի ճշգրիտ՝ «ցենտրիստներ»), նույնպես հանդես եկան ծայրահեղ աջ թևի՝ կուսակցության կանոնադրությունը ռևիզիայի ենթարկելու բացահայտ փորձերի դեմ։ Այդ պայքարի և արհմիությունների դիրքի հետևանքով կանոնադրության 4-րդ կետը պահպանվեց, բայց 1960 թ. կոնֆերանսում այն լրացվեց «հասարակական սեփականությունը» «խառը էկոնոմիկայի» ոգով մեկնաբանությամբ, որը գործնականում ապահովում էր աջ լեյբորիստական քաղաքական կուրսի անցկացումը։ Լեյբորիստական կուսակցության «Վաթսունական թվականների ուղենիշները» հերթական ծրագրային փաստաթուղթը, որ 1961 թ. կոնֆերանսին ներկայացրել էր կուսակցության գործկոմը, փաստորեն հաստատում էր հետագա ազգայնացման պահանջից հրաժարվելը։

1963 թ. կուսակցության պարագլուխ դարձավ Հարոլդ Վիլսոնը, որը հայտնի էր իբրև աջ կուրսի հակառակորդ և կուսակցության համախմբման կողմնակից։ Լեյբորիստական կուսակցության նախընտրական մանիֆեստում, որ մշակվել էր 1964 թ. նրա ղեկավարությամբ, առաջ էին քաշվում տնտեսական և հարկային քաղաքականության մեջ արմատական փոփոխություններ մտցնելու, «կանգնիր-գնա»-ի քաղաքականությունից հրաժարվելու, արդյունաբերության արդիականացման, կրկին ստեղծվող հարստությունների «բավականին մասը» «մարդկային անհետաձգելի կարիքներին» ուղղելու և այլ պահանջներ։ Ազգայնացման լոզունգներն ավելի քան համեստ էին. պողպատաձուլական արդյունաբերության ազգայնացում և պետությանը ջրամատակարարման հանձնում։

Լեյբորիստներն արտաքին քաղաքականության սկզբունքների ձևակերպման մեջ լայնորեն օգտագործել էին զինաթափման, միջուկային զենքը չտարածելու, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Կենտրոնական Եվրոպայում ատոմազերծ գոտիներ սահմանելու, ռազմական ծախսերի կրճատման և այլ լոզունգներ։ Լեյբորիստական կուսակցությունն այս ծրագրով 1964 թ. հոկտեմբերի ընտրություններում հաղթանակ տարավ, ստանալով ընտրողների ձայների 44,1 տոկոսը։ Հաղթանակը կայուն չէր, նրա պառլամենտական մեծամասնությունը միայն 3 ձայնով էր ավելի։

Լեյբորիստական V կառավարության տնտեսական քաղաքականությունը

Լեյբորիստական կառավարությունը մշակեց 1964—1970 թվականների զարգացման ազգային պլան, որը նախատեսում էր արդյունաբերական արտադրանքն ավելացնել մոտավորապես 5 %-ով։ Սակայն աշխուժացումն սկսվեց միայն 60-ական թվականների վերջին, բանվորների հաշվին արտադրության ծախսերի իջեցման դրակոնյան միջոցներ կիրառելուց և 1967 թ. ֆունտ ստերլինգի դևալվացիա անցկացնելուց հետո։ Այդ միջոցառումները ժամանակավորապես բարելավեցին արտաքին շուկաներում անգլիական ապրանքների արտահանման դիրքերը։ 1968 թ. արդյունաբերական արտադրությունը 1967 թ. մակարդակի համեմատությամբ աճեց 5 %-ով։ Սակայն լեյբորիստների իշխանության գլուխ գտնվելու տարիներին արտադրության աճը միջին հաշվով չգերազանցեց 2,3 %-ից։ Պահպանողականներից ժառանգած վճարունակ հաշվեկշռի խրոնիկական դեֆիցիտը չհաղթահարվեց։ Փորձելով «աշխուժացնել» էկոնոմիկան, լեյբորիստները վերականգնեցին «կանգնիր-գնա»-ի քաղաքականությունը, նույնիսկ ուժեղացրին այն ի վնաս աշխատավորների, սկսեցին դիմել արտասահմանյան փոխառություններ։ Այնուամենայնիվ այդ միջոցառումները չհասցրին կայուն էկոնոմիկայի ստեղծմանը։ Լեյբորիստները, ինչպես և պահպանողականները, չհամարձակվեցին կրճատել ռազմական ծախսերը և սահմանափակել կապիտալի արտահանումը։ Դրա համար էլ ապրանքների և կենցաղային ծառայության պետության բոլոր ընթացիկ ծախսերի $^1/_6$-ը գնում էր ռազմականացման նպատակին, կառավարական արտասահմանյան հատկացումների $^3/_5$-ը «կլանում» էին ռազմական ծախսերը։ 1963—1968 թթ. միայն ռազմական ծախսերն արտասահմանում կազմեցին համարյա 1,6 միլիարդ ֆունտ ստերլինգ (վճարունակ հաշվեկշռի դեֆիցիտն այդ նույն տարիներին արտահայտվեց 1,8 միլիարդ ֆունտ ստերլինգով)։

Մոնոպոլիստական կապիտալի կառուցվածքի փոփոխությունը (գաղութահումբային մոնոպոլիաների քանակի քչացումը) հասցրեց գաղութային մաքուր եկամուտների կրճատմանը՝ համախառն ազգային արտադրանքի 1,5 % մակարդակից ցածր (1910—1914 թթ. 8%)։ Մոնոպոլիստական կապիտալի տեղափոխումը կամ «վերադարձը» մետրոպոլիա և դեպի նոր ճյուղեր նրա ձգտումը (ավիացիոն, ավտոմոբիլային, քիմիական, էլեկտրոնային, ատոմային և այլն) փոխեց անգլիական արդյունաբերության ճյուղային կառուցվածքը։ Լեյբորիստական կառավարությունն օժանդակեց այդ միտումներին, բարենպաստ պայմաններ ստեղծելով կապիտալի ներդրմանը երկրում։ Անգլիայի մոնոպոլիաները, 1965 թ. միավորվելով բրիտանական արդյունաբերության կոնֆեդերացիայում (նրա կորիզը դարձավ նախկինում եղած բրիտանական արդյունաբերական ֆեդերացիան), լայնորեն օգտագործում էին իրենց առջև բացված հնարավորությունները։ Անգլիայում կապիտալներ ներդնելու հնարավորությունից օգտվեց ամերիկյան կապիտալը. ամերիկյան կապիտալ ներդրումների ընդհանուր գումարով Անգլիան գրավում էր երկրորդ տեղը (Կանադայից հետո)։ Ամերիկյան ակտիվները երկրում 1967 թ. գերազանցում էին 5,6 միլիարդ դոլարից, որը հավասար էր ԱՄՆ-ի այն ամբողջ կապիտալին, որ ներդրվել էր ԳՖՀ-ում, Ֆրանսիայում և Իտալիայում։

Ազգայնացման բնագավառում Վիլսոնի կառավարությունն իրականացրեց միակ, բայց հույժ կարևոր գործողությունը՝ 1967 թ. մարտին ազգայնացնելով սև մետալուրգիան։ Լեյբորիստական կուսակցությունն ամբողջությամբ երնելով կառավարող դասակարգերի շահերից, դիմեց այդ միջոցին ամենից առաջ նրա համար, որ Անգլիայում պողպատի արտադրությունն սկսել էր իր տեխնիկական մակարդակով կտրուկ կերպով ետ մնալ։

Սև մետալուրգիայի ազգայնացումն Անգլիայում էականորեն ուժեղացրեց պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը։ Պետության ձեռքում կենտրոնացվեց երկրում արտադրվող պողպատի 90 %-ը։ Ճյուղի կառավարմանը բանվորների մասնակցության տրեդ-յունիոնների պահանջները մերժվեցին։

Կառավարության հակաբանվորական քաղաքականությունը

Իշխանության գլուխ գտնվելու առաջին ամիսներին լեյբորիստական պարագլուխներն ստիպված էին կատարել նախընտրական որոշ խոստումներ։ 20 %-ով բարձրացվեցին թոշակները, սահմանափակվեց տնատերերի կամայականությունը բնակարան վարձողների նկատմամբ, վերացվեց պետական բժշկական հիմնարկների բժիշկների կողմից դուրս գրվող դեղատոմսերի համար վճարելը։ Եվ չնայած իշխանության գլուխ անցնելուց հետո լեյբորիստները սկսեցին իրականացնել աշխատավարձի աճը սահմանափակող քաղաքականություն, այն կրում էր «կամավոր» բնույթ։ Նրանց ստեղծած գների և եկամուտների ազգային վարչությունն արհմիությունների հավանությամբ աշխատավարձի աճը սահմանափակեց տարեկան 3,5 %-ով։

Մասսաների՝ 1964 թ. նախընտրական հայտարարությունների ոգով արմատական փոփոխությունները սպասելու մթնոլորտում հենց 1964 թ. մարտին ժամկետից շուտ անցկացվեցին պառլամենտի ընտրությունները։ Լեյբորիստները հասան մեծ հաջողության, ստանալով տրված ձայների մոտ 48 %-ը և պառլամենտում ապահովեցին 94 ձայնի հուսալի մեծամասնություն (363 մանդատ)։

Սակայն լեյբորիստները չարդարացրին իրենց ընտրողների հույսերը։ Վկայակոչելով տնտեսական ծանր դրությունը, նրանք պառլամենտ ուղարկեցին մի օրինագիծ, որը, օգտագործելով գների և եկամուտների ազգային վարչության մեխանիզմը, նախատեսում էր ընդարձակել պետության միջամտությունը էկոնոմիկայում և աշխատանքային հարաբերություններում։ Մտցվում էր գործադուլի մասին «նախնական զգուշացման» համակարգ։ Ենթադրվող գործադուլի մասին նախապես հայտնվելու էր աշխատանքի մինիստրին։ Վերջինս այն հանձնելու էր գների և եկամուտների ազգային վարչությանը՝ մինչև երեք ամսում ուսումնասիրելու համար։ Այսպիսով, բանվորները չորս ամիս չէին կարող գործադուլի մասին իրենց իրավունքն օգտագործել։ Իսկ երբ այդ արարողությունը վերջանում էր և բանվորներն ստանում էին բացասական պատասխան, նրանք 100-ից մինչև 500 ֆունտ ստերլինգ տուգանքի սպառնալիքի տակ չէին կարող գործադուլ հայտարարել։ Օրենքում սոսկ ձևականության համար ասվում էր, որ գները և շահաբաժինները բարձրացնելու մտադրությունների վերաբերյալ նույնպես պետք է տեղյակ պահվի մինիստրին։

1966 թ. հուլիսի 20-ին, ի խախտումն «գների և եկամուտների մասին» փաստաթղթի, աշխատավարձի ամեն տեսակ բարձրացման վրա 6-ամսյա արգելք դրվեց։ Եվս մեկ տարի երկարաձգելով, այնուհետև այն սկսեց անցկացվել որպես այս կամ այն չափով մշտական քաղաքականություն։ 1967 թ. նոյեմբերին, վկայակոչելով վճարունակ հաշվեկշռի կրիտիկական դրությունը, լեյբորիստները ֆունտ ստերլինգի կուրսն իջեցրին 14,3 %-ով, որն ամենից առաջ հարվածեց բանվորների բյուջեին։ 1968 թ. հունվարին լեյբորիստները հայտարարեցին սոցիալական միջոցառումների, բնակարանային շինարարության և լուսավորության ծախսերը կրճատելու ծրագրի մասին։ 1968 թ. գարնանից բարձրացվեցին հարկերը, մտցվեց բժշկական ծառայության մասնավոր վճարում։

1969 թ. հունվարին նախապատրաստվեց և պառլամենտ ուղարկվեց հակարհմիութենական օրինագիծ։ Այն նախատեսում էր «ոչ պաշտոնական»

ելույթների վրա մեկամսյա վետո մտցնելու միջոցով փաստորեն գործադուլների արգելում (այդ ելույթների թիվը կազմում էր բոլոր գործադուլների 90 %-ը)։ Ազգային գործադուլների հայտարարման համար նախատեսվում էր անհատական քվեարկություն։

Հանդիպելով արհմիությունների և լեյբորիստական կուսակցության շարքային անդամների վճռական դիմադրությանը (նույնիսկ նրա գործկոմը մերժեց օրինագիծը), կառավարությունն ստիպված էր այդ հարցը հանել պառլամենտի քննարկումից։

Մեծ Բրիտանիայի կոմկուսը կառավարության հակաբանվորական քաղաքականության դեմ

Մեծ Բրիտանիայի կոմկուսը ժամանակին բացահայտեց լեյբորիստական կառավարության ներքին քաղաքականության էությունը և ակտիվ պայքար ծավալեց աշխատավորների կենսամակարդակի իջեցման դեմ։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի 29-րդ համագումարը (1965) գործողությունների ծրագիր ընդունեց, որտեղ կոչ էր արվում մերժել աշխատավարձի սառեցման քաղաքականությունը, ինչպես և տրեդ-յունիոնների իրավունքների ամեն մի սահմանափակում։ Մեծ Բրիտանիայի կոմկուսը պահանջեց կրճատել ռազմական ծախսերը, ավելացնել հարուստների հարկադրումը և պակասեցնել աշխատավորների հարկային բեռը, ընդարձակել սոցիալական կարիքների համար հատկացումները, միջոցառումներ իրականացնել անգլիական արդյունաբերության ազգայնացման և արդիականացման ուղղությամբ, սահմանափակել մոնոպոլիաների տիրապետությունը, վերահսկողություն սահմանել շահաբաժինների վրա և արդյունավետ միջոցներ՝ գների աճի դեմ։ Կոմկուսի համագումարն առաջադրեց համատեղ ծրագրի հիման վրա երկրի բոլոր ձախ ուժերին համախմբելու գաղափարը՝ նպատակ ունենալով հասնել լեյբորիստների ներքին և արտաքին քաղաքականության արմատական փոփոխմանը։

Մեծ Բրիտանիայի կոմկուսի 30-րդ համագումարը (1967) կոչ արեց համընդհանուր օպոզիցիա կազմել կառավարական «գների և եկամուտների քաղաքականության» դեմ, տրեդ-յունիոնների իրավունքների պաշտպանության համար օգտագործել գործադուլային զենքը։ Ձախ ուժերի միասնության մասին հատուկ բանաձևը բովանդակում էր կառավարության քաղաքականության և մոնոպոլիաների հարձակման դեմ մղվող պայքարում նրանց միավորման դիրքորոշումը։ Նրա հիմքն էին կազմում հետևյալ պահանջները, որպես տնտեսական աճի նախադրյալ աշխատավարձի բարձրացում, «եկամուտների քաղաքականությունից» հրաժարում, ազգայնացման ընդարձակում և մոնոպոլիաների դեմ գործողությունների ուժեղացում, «Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիայի մտնելը պաշտպանելուց հրաժարում, Վիետնամում ԱՄՆ-ի քաղաքականության վրա հակազդում, բրիտանական միջուկային ստրատեգիայի և դեպի «Սուեզից արևելք» քաղաքականության դադարեցում, Ռոդեզիայում սպիտակամորթների տիրապետության վերացում, ռազմական ծախսերի 50 %-ով կրճատում, սոցիալական ապահովության ընդլայնում և կարիքավորության ստուգումից հրաժարում։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի XXXI համագումարն (1969) ընդունեց «Մոնոպոլիաների, կոմունիստական կուսակցության և ձախ ուժերի միասնության մասին» բանաձևը, որը ճշգրտեց և կոնկրետացրեց կառավարության քաղաքականության դեմ պայքարի մասին նախորդ համագումարների որոշումները։ Մասնավորապես ընդգծվում էր ազգայնացված ձեռնարկությունների կառավարմանը բանվորների արդյունավետ մասնակցության, կանանց և տղամարդկանց հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարման վերաբերյալ նախընտրական խոստումների անհապաղ կատարման համար պայքար ծավալելու անհրաժեշտությունը։

Օպոզիցիայի ուժեղացումը տրեդ-յունիոններում և լեյբորիստական կուսակցության ներսում

Կառավարության քաղաքականության նկատմամբ օպոզիցիան տրեդ-յունիոններում և լեյբորիստական շարժման մեջ ուժեղացավ աստիճանաբար, լեյբորիստների իշխանության գլուխ անցնելու հետ կապված իր հետքը թողեց ռեֆորմիստական պատրանքների որոշ աշխուժացման ազդեցությունը։ ԱԲԿ-ի գլխավոր խորհուրդը արդեն 1965 թ. դեկտեմբերին «գների և եկամուտների քաղաքականության» իրականացման համար համագործակցության մեջ մտավ կառավարության հետ։ Տրեդ-յունիոնների գործկոմի կոնֆերանսը (1965 թ. ապրիլին) 6649 հազար ձայնով հավանություն տվեց դրան (դեմ քվեարկեց 1311 հազարը)։ Այսպիսով, արդեն կոնֆերանսում լուրջ օպոզիցիա առաջացավ, որի միջուկը կազմեց տրանսպորտային և որակավորում չունեցող բանվորների միությունը (1,4 միլիոն ձայն)։ ԱԲԿ-ի կոնգրեսը 1965 թ. սեպտեմբերին 5251 հազար ձայների մեծամասնությամբ, ընդդեմ 3312-ի, հաստատեց ապրիլյան կոնֆերանսի որոշումը։ Հետևապես, օպոզիցիայի ուժերը խիստ նշանակալի չափով աճեցին։ «Գների և եկամուտների քաղաքականությանը» հավանություն չտալն արտահայտվեց նաև լեյբորիստական կուսակցության կոնֆերանսում (1965 թ.). օպոզիցիան հավաքեց 2,5 միլիոն ձայն (3,7 միլիոն ձայնի դիմաց)։ Հետագա ժամանակաշրջանում «գների և եկամուտների քաղաքականություն»-ից անբավականությունն աճեց։ Այդ իրադրության մեջ արհմիութենական պարագլուխներից մեկը՝ Ֆրենկ Կաղենսը, որ Վիլսոնի կառավարությունում գրավում էր տեխնիկայի մինիստրի պոստը, ցուցադրաբար հրաժարական տվեց, վերադառնալով Տրանսպորտային և որակավորում չունեցող բանվորների միության գլխավոր քարտուղարի իր նախկին պաշտոնին։ «Գների և եկամուտների քաղաքականության» դեմ պայքարի մեջ ներգրավվեց ձախ լեյբորիստների օրգան «Տրիբյունա» շաբաթաթերթը։ ԱԲԿ-ի 1966 թ. սեպտեմբերին կայացած կոնգրեսում «գների և եկամուտների քաղաքականության» դեմ տրվեց 3814 հազար ձայն (հօգուտ՝ 4936 հազար), իսկ մեկ տարով երկարացնելու դեմ՝ 4223 հազար (կողմ՝ 4567 հազար)։ 1964—1966 թթ. ԱԲԿ-ի ղեկավարությանը հաջողվեց կանխել դժգոհությունները զանգվածային գործադուլային շարժման վերաճելու պրոցեսը։ Սակայն 1967 թվականից գործադուլների քանակն սկսեց աճել։ 1968 թ. հայտարարվեց մեքենաշինարարների և նավաշինարարների 24-ժամյա նախազգուշական գործադուլը, որով նրանց հաջողվեց հասնել աշխատավարձի բարձրացման։

1967 թ. ԱԲԿ-ի կոնգրեսը հրաժարվեց հավանություն տալ «գների և եկամուտների քաղաքականությանը»։ Համանման որոշում ընդունեց լեյբորիստների 1968 թ. կոնֆերանսը։ 1969 թ. աշխատանքի բրիտանական կոնֆեդերացիայի արտակարգ կոնգրեսը մերժեց Վիլսոնի կաբինետի նախապատրաստած հակաարհմիութենական օրենքը։ Դա, ըստ էության, կառավարությանն անվստահության քվե էր։

Լեյբորիստների արտաքին քաղաքականությունը

Աջ լեյբորիստական պարագլուխների վարկաբեկմանն օժանդակեց նաև նրանց վարած արտաքին քաղաքականությունը։ Նախընտրական խոստումները (սոցիալիստական երկրների հետ համագործակցության ամրապնդում, Ռապացկու պլանի պաշտպանություն, ԳԴՀ-ի և Օդեր-Նեյսեյի սահմանների դե ֆակտո ճանաչում, ԳՖՀ-ին միջուկային զենքի թույլատրելուն հականերգործում, ռազմական ծախսերի նվազեցում, օտարերկրյա տարածքներում ռազմական բազաների վերացում և այլն) մոռացության տրվեցին։ Վիլսոնի կառավարությունը համաձայնություն տվեց ԳՖՀ-ն միջուկային ստրատեգիայի գծով ՆԱՏՕ-ի հատուկ կոմիտեի աշխատանքային խմբի մեջ

ներգրավելուն. նա անվերապահորեն պաշտպանեց ԱՄՆ-ի ընդհանուր կուրսը Հնդկաչինում, մասնավորապես Վիետնամում ամերիկյան ագրեսիան, «սև գնդապետների» վարչակարգը Հունաստանում, ղեկը մատակարարեց ԱՄՀ-ի դեմ պատերազմ սանձազերծած Իսրայելին։

Ռոդեզիական հարցում անգլիական կառավարությունը վարում էր ռասիստների բացահայտ թողտվության քաղաքականություն, միակողմանի կարգով հռչակելով Հարավային Ռոդեզիայի «անկախությունը» (1965 թ. նոյեմբերի 11)։ Անգլիական «լաբի ձեռնոցներով սանկցիաները» փաստորեն օգնում էին Հարավային Ռոդեզիայում Յան Սմիթի ռասիստական վարչակարգի ամրապնդմանը։ Ոգևորված անգլիական կառավարության լիակատար անգործությունից, Սմիթի կլիկը 1970 թ. գարնանը հռչակեց ռասիստական հանրապետության՝ ՀԱՀ-ի նմանակի ստեղծումը։ ՀԱՀ-ում խոշոր կապիտալ ներդրումներ ունեցող և նրա հետ լայն առևտուր անող անգլիական մոնոպոլիաների և բանկերի շահերը, ինչպես նաև ռազմաստրատեգիական նկատառումները կանխորոշեցին անգլիական կառավարության կողմից ՀԱՀ-ում «սպիտակամորթ փոքրամասնության» կառավարման փաստացի օգնությունը։

Կեղծավորությամբ էր աչքի ընկնում Լոնդոնի քաղաքականությունը Նիգերիական հարցում։ Անգլիան ձգտում էր իր ազդեցությունը պահպանել Աֆրիկայի այդ խոշորագույն, նավթով հարուստ երկրում՝ մի ցեղին հրահրելով մյուսի դեմ։

Հակառակ նախընտրական խոստումներին, լեյբորիստներն սկսեցին ձրգտել «Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիայի մտնելուն։

Իրադրության սրումը Հյուսիսային Իռլանդիայում

Լեյբորիստական կառավարությունը չկարողացավ լուծել նաև Հյուսիսային Իռլանդիայի (Օլսթերի) պրոբլեմները, որը փաստորեն մնացել էր Մեծ Բրիտանիայի գաղութային մարը։ Դրությունը բարդանում էր անգլիական կառավարող շրջանների կողմից արմատավորվող կրոնական երկպառակության պատճառով (բնակչության $^1/_3$-ը կաթոլիկներ են, մնացածները՝ բողոքականներ)։ Կրոնական թաղանթը քողարկում էր սոցիալական սուր պրոբլեմները։ Բողոքականները, որպես կանոն, իշխող դիրք էին գրավում գործարար շրջաններում, ազատ մասնագիտությունների ներկայացուցիչների ու աստիճանավորների միջավայրում, խոշոր ֆերմերներ և բարձր վարձատրվող բանվորներ էին։ Իսկ կաթոլիկները, որոնց ճնշող մեծամասնությունը որակավորում չունեցող բանվորներ, մանր ֆերմերներ էին, Հյուսիսային Իռլանդիայում համարվում էին «երկրորդ սորտի մարդիկ» և ենթարկվում էին խտրականության։ Սեփական պառլամենտի և կառավորության առկայությունը չէր կարող էականորեն մեղմացնել Օլսթերում տիրող դրությունը. ընտրական համակարգի ծայրահեղ ոչ դեմոկրատականության պատճառով նրանցում գերիշխում էին բողոքականների յունիոնիստական կուսակցության ամենառազմատենչ պրոտեստանտական թևի ներկայացուցիչները։

1968 թ. հոկտեմբերին Լոնդոնդերիում, Բելֆաստից հետո իր մեծությամբ Հյուսիսային Իռլանդիայի երկրորդ քաղաքում, սկսվեցին քաղաքացիական իրավունքների համար մարտնչողների ընդհարումները ոստիկանության հետ։ Շուտով դրանք ընդգրկեցին ամբողջ Օլսթերը։ Անգլիայի կառավարող շրջանները, ձգտելով Հյուսիսային Իռլանդիան պահպանել որպես Մեծ Բրիտանիայի անբաժան մաս, փաստորեն պաշտպանում էին կրոնական բաժանվածությունը, օգտագործում նույնիսկ ուղղակի խաբեությունը. 1969 թ. անգլիական ռազմական հրամանատարությունը և Օլսթերի կառավարությունը, պահանջելով վերացնել բարիկադները, ապստամբներին խոստացան անվտանգություն ապահովել և ռեֆորմներ անցկացնել։ Կաթոլիկները համաձայնություն տվեցին, սակայն բողոքականների ծայրահեղական տարրերը, օգտվելով նրանց դյուրահավատությունից, ուժեղացրին տեռորիստական գործողությունները կաթոլիկների դեմ։ Օլսթերում դրությունը նորից սրվեց։ 1970 թ. փետրվարին Օլսթերի պառլամենտը հրապարակեց «Հասարակական կարգի պահպանության մասին» օրենքը։ 1970 թ. մայիսին Հյուսիսային Իռլանդիայում ավելացվեց անգլիական օկուպացիոն ուժերի համակազմը։ Նրանց իրավունքների մեջ էր մտնում ցրել մարդկանց ամեն տեսակի կուտակում, ձերբակալել «անկարգության մասնակիցներին»։

Հյուսիսային Իռլանդիայի քաղաքացիական հավասար իրավունքների համար մարտնչողների հանդեպ Վիլսոնի «լիբերալ ժեստերի» քաղաքականությունը (նա դիմեց այդ իրավունքների պաշտոնական ճանաչմանը), Օլսթերի բողոքական մեծամասնության ակնհայտ խիստ թշնամական դիրքի պայմաններում չապահովելով դրանց կենսագործման որևէ ռեալ երաշխիք, փաստորեն պայմաններ էր ստեղծում Հյուսիսային Իռլանդիայում բոլոր հակասությունների նոր բռնկման համար։

Խաղաղության կողմնակիցների շարժումը

60-ական թվականների երկրորդ կեսին Անգլիայում խաղաղության համար պայքարի ավանգարդում էր կոմունիստական կուսակցությունը։ Խաղաղության համար պայքարում նշանակալի դեր էր խաղում Խաղաղության պաշտպանության անգլիական խորհուրդը՝ Դորոթի Շաֆերի և Քոլին Սուիթի գլխավորությամբ։ Խաղաղության համար շարժմանը մասնակցում էին «բարեկամների ընկերություն» «խաղաղության երդման դաշինք» և այլ կվակերյան տիպի հին պացիֆիստական կազմակերպություններ։ «Միջուկային զինաթափման համար շարժումը» շարունակում էր պահպանել օլդեր-մանստոնյան արշավների ավանդույթը։ Առաջանում էին նաև նոր կազմակերպություններ։ 1968 թ. Լոնդոնում ստեղծվեց քիմիական և բակտերիոլոգիական զենքերի դեմ պայքարի խումբ, որին միացան «միջուկային զինաթափման համար շարժումը», այդ շարժման քրիստոնեական խումբը, խաղաղության պաշտպանության ազգային խորհուրդը և այլն։

Խաղաղության բոլոր կողմնակիցներին Անգլիայում մերձեցնում էր մի կարևոր հարց՝ Վիետնամում ամերիկյան ագրեսիայի դեմ պայքարի խնդիրը։ 1965 թ. գարնանն ստեղծվեց Վիետնամում խաղաղության համար բրիտանական կոմիտեն։ Վիետնամում պատերազմի դեմ բողոքն արտահայտվում էր տարբեր միտինգներում, ժողովներում, ցույցերում։ 1966 թ. հունիսին առաջացավ նոր կազմակերպություն՝ «երիտասարդությունը՝ հանուն խաղաղության Վիետնամում»։ 1966 թ. հոկտեմբերին Վիետնամի պաշտպանության համար իր ձայնը բարձրացրեց անգլիական կանանց կոնֆեդերացիան։

Լեյբորիստական շարժման մեջ նկատվեցին քաղաքական և արհմիութենական շրջանների միասնական գործողություններ. 1966 թ. հոկտեմբերին ձախ տրեդ-յունիոնիստների և լեյբորիստների առաջարկությամբ լեյբորիստական կուսակցության կոնֆերանսը մեկ միլիոն ձայնի մեծամասնությամբ բանաձև ընդունեց, կառավարությանը կոչ անելով «իր բոլոր հնարավորություններն օգտագործել այն բանի համար, որպեսզի Վիետնամում վերջ տրվի պատերազմին և հասնել Հյուսիսային Վիետնամի ամերիկյան ռմբակոծությունների անհապաղ դադարեցմանը», միջոցներ ձեռնարկել 1954 թ. Ժնևյան համաձայնության ոգով հարցի կարգավորման համար։ 500 հազար ձայնի մեծամասնությամբ բանաձև ընդունվեց ռազմական ծախսերը կրճատելու, Մալայզիայից, Սինգապուրից և Պարսից ծոցի շրջանից զորքերի դուրս բերման անհրաժեշտության մասին։

1968 թ. Անգլիայում «Վիետնամում խաղաղության համար Մեծ Բրիտա-

նիայի ժողովրդի դեկլարացիայի» տակ ստորագրությունների հավաքում անցկացվեց։ 1968 թ. հոկտեմբերի 10-ի մոտերքին այդ ստորագրել էին քաղաքական-հասարակական և արհմիութենական կազմակերպությունների մոտ 5 միլիոն ներկայացուցիչներ։ 1969 թ. աշնանն ամբողջ Անգլիայով մեկ տարածվեց Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիայի դեմ ելույթների ալիքը։

1970 թ. հունիսի պառլամենտական ընտրությունները։ Պահպանողական կառավարության քաղաքականությունը

Լեյբորիստների կառավարությունը պառլամենտական ընտրությունները նշանակեց 1970 թ. հուլիսի 18-ին, հույս ունենալով ընտրական պայքարում օգտագործել տնտեսական կոնյունկտուրայի որոշ բարելավումը։ Չընայած լեյբորիստական կուսակցությունը հետպատերազմյան տարիներին աճել էր ավելի քան կրկնակի չափով (6 միլիոն մարդ, որոնց 90 %-ը մտնում էր տրեդ-յունիոնների մեջ), նրա աջ ղեկավարությունը որոշակի չափով իրեն վարկաբեկել էր կառավարման շրջանում։ Ընդհանուր ընտրություններում հաղթեցին պահպանողականները, ստանալով տրված ձայների 45,5 %-ը (330 մանդատ, իսկ լեյբորիստները՝ 287)։ Շատ ընտրողներ ընդհանրապես խուսափեցին քվեարկությանը մասնակցելուց, տարբերություն չտեսնելով լեյբորիստների և պահպանողականների միջև։ Կառավարությունը գլխավորեց Էդվարդ Հիթը, նրա կաբինետի կազմի մեջ որպես մինիստրներ մտան խոշոր բանկերի, ընկերությունների, ֆիրմաների դիրեկտորներ, հողատերեր։

Պահպանողականներն առաջին իսկ օրերից բանվոր դասակարգի նկատմամբ սկսեցին վարել «կոշտ ձեռքի» քաղաքականություն։

1970 թ. հոկտեմբերին հրապարակվեց արդյունաբերության մեջ հարաբերությունների վերաբերյալ օրենքի նախագիծը (օրինագիծը օրենք դարձավ 1971 թ. հուլիսին)։ Օրենքը պահանջում էր նոր ստեղծվող հսկողության մարմիններում տրեդ-յունիոնների պարտադիր գրանցում, որպեսզի տրեդ-յունիոններին պառակտեր «գրանցվածների» (այսինքն ակտն օրինական ճանաչողների) և գրանցումից հրաժարվողների։ Նախատեսվում էր ստեղծել հատուկ տեղական «արդյունաբերական տribունալներ»՝ աշխատանքային վեճերին միջամտելու իրավունքներով։ Արտադրական հարաբերությունների գործերի գծով ազգային դատարանին իրավունք էր վերապահվում արգելել այն գործադուլները, որոնք իշխանությունների կարծիքով համարվում էին «անօրինական», նման գործադուլներ հայտարարելու համար տրեդ-յունիոնների ղեկավարներին տուգանել հսկայական չափի հասնող գումարներով (մինչև 100 հազար ֆունտ ստերլինգ), իսկ դատարանի վճիռը չկատարելու դեպքում նրանց ենթարկել բանտարկության։ Մտցվում էր երկամսյա «սառեցնող շրջան», արգելվում էին համերաշխության գործադուլները։

«Արդյունաբերության մեջ հարաբերությունների մասին օրենքը» դարձավ արհմիությունների, աշխատավորների սոցիալական և տնտեսական նվաճումների վրա մոնոպոլիաների նոր հարձակման գլխավոր զենքերից մեկը։ Կառավարության դրակոնյան միջոցառումներից բանվորների դայրույթն Անգլիայում գործադուլային շարժումը բարձրացրեց այնպիսի մակարդակի, որպիսին չէր տեսնվել 1926 թ. համընդհանուր գործադուլի ժամանակից ի վեր։ Գործադուլային պայքարի ծավալման ընթացքում անգլիական բանվորական շարժումը հակահարված տվեց արհմիությունների իրավունքների վրա պահպանողական կառավարության հարձակման քաղաքականությանը։ 1971 թ. հունվարի 20-ին սկսվեց փոստի և հեռագրի աշխատողների արհմիության 230 հազար անդամների, անգլիական բանվորական շարժման պատմության մեջ առաջին համազգային գործադուլը։ 1971 թ. մարտին Կրոյդոնում կայացած ԱԲԿ-ի արտակարգ կոնֆերանսը կառավարության հետ «համագործակցելուց հրաժարվելու» կոչ արեց, չնայած աջ պարագլուխների ազդեցությամբ ձեռնպահ մնաց օրինագծի դեմ բողոքի համընդհանուր գործադուլ հայտարարելուց։ 1971 թ. կեսին Անգլիայում սկսվեց ութամսյա «Կլայդի էպոպեան», որտեղ, հայտարարելով «աշխատանքային գործադուլ», առաջացավ «բանվորների կարմիր հանրապետությունը»։

Բանվորները գրավեցին Վերին Կլայդի նավաշինական կոնցեռնի փակման ենթակա նավաշինարանները և շարունակեցին աշխատանքը, աշխատավարձ ստանալով համերաշխության ֆոնդից։ 1972 թ. հունվարին բռնկվեց 280 հազար հանքագործների համազգային գործադուլը։ Հանքագործները կարողացան հասնել հաղթանակի՝ իրենց համար ապահովելով երկրի ածխային արդյունաբերության ամբողջ պատմության ընթացքում աշխատավարձի ամենաէական բարձրացումը։

Բանվորների պայքարի ընթացքում դրսևորված պրոլետարական համերաշխությունը ծայրահեղ կերպով անհանգստացրեց կառավարությանը, որը 1972 թ. փետրվարից սկսել էր գործողության մեջ դնել «Արդյունաբերության մեջ հարաբերությունների մասին օրենքի» կարևորագույն ռեպրեսիվ հոդվածները, հատկապես 1972 թ. ապրիլի կեսին բռնկված 200 հազար երկաթուղայինների խոշոր գործադուլի կապակցությամբ, որոնք դիմել էին «աշխատանք՝ բոլոր կանոնների պահպանման դեպքում» միջոցին։ 1972 թ. ապրիլ—մայիսին օրենքը կիրառվեց նավահանգստային բանվորների ծավալած գործադուլի նկատմամբ։

1972 թ. հուլիսի 26-ին ԱԲԿ-ի գլխավոր խորհուրդը բանվորական զանգվածների ճնշման տակ որոշեց հուլիսի 31-ին մեկօրյա համընդհանուր գործադուլ հայտարարել ի պաշտպանություն նավահանգստային բանվորների, որը 1926 թ. հետո առաջինը կլիներ Բրիտանական կղզիներում։ Պարզվեց, որ միայն համընդհանուր գործադուլի սպառնալիքը բավական էր, որպեսզի կառավարությանը ստիպեր նահանջել։ Նավահանգստային բանվորների ձերբակալված պարագլուխներն ազատ արձակվեցին։

1972 թ. աշնան մոտերքը պարզ դարձավ, որ բանվորների գործադուլային շարժումը խափանելու ձգտման մեջ տորիները լիակատար ձախողում են կրել։ Եթե 1970 թ. գործադուլների հետևանքով կորսվել էր 11 միլիոն աշխատանքային օր, ապա 1971 թ. արդեն 15 միլիոն, իսկ 1972 թ. նույնիսկ պաշտոնական տվյալներով՝ համարյա 24 միլիոն։ Պահպանողականները խրփեցին բոլոր ռեկորդները, իրենց կառավարման երկու տարում դիմելով այնպիսի ծայրահեղ միջոցի, ինչպիսին էր երկրում արտակարգ դրություն հայտարարելը (չորս անգամ այդ միջոցին դիմեցին Անգլիայում իշխանության գլուխ կանգնած կառավարություններն ամբողջ հետպատերազմյան 25 տարիների ընթացքում, 1945—1970 թթ.)։

Ձախողվելով ռեպրեսիվ օրինագծերի օգնությամբ կազմակերպված բանվորական շարժումը պարտության մատնելու իր ձգտման մեջ, տորիների կառավարությունն իր հակաբանվորական ստրատեգիայի ծանրության կենտրոն փոխադրեց աշխատավարձի «սառեցումը», դրա անհրաժեշտությունը հիմնավորելով «ինֆլյացիայի հացթահարումով»։ 1972 թ. նոյեմբերին, ապրուստի արժեքի զգալի աճի պայմաններում օրենքով մտցվեց աշխատավարձի լրիվ «սառեցում», որը 1973 թ. հունվարին երկարացվեց ևս 60 օր, որից հետո մարտի վերջից սկսվեց աշխատավարձի հարկադրական մեկուսացման «երկրորդ փուլը»։

Անգլիայում նորից ծավալվեցին սուր դասակարգային ելույթները։ Գործադուլները արագորեն ընդգրկեցին ավելի քան մեկ միլիոն աշխատավորների՝ երկաթուղայիններին, գազագործներին, ավտոմոբիլաշինարարներին,

ուսուցիչներին։ Ավելի քան քառորդ միլիոն պետական ծառայողներ դիմեցին գործադուլի։ Կառավարության քաղաքականությանը հակահարված կազմակերպելու համար 1973 թ. մարտի 5-ին հրավիրվեց ԱԲԿ-ի արտակարգ կոնգրես, որը որոշեց 1973 թ. մայիսի 1-ին անցկացնել համընդհանուր մեկօրյա գործադուլ։

Երկրում քաղաքական իրադրությունը սրվեց նաև այն սոսկալի արյունոտ բռնություններ առնչությամբ, որ տեղացին հյուսիսիռլանդացի կաթոլիկների վրա։ Օլսթերը հեղեղելով անգլիական զորքերով, տորիներն այնտեղ Լոնդոնի ուղղակի կառավարում հաստատեցին, փաստորեն օգնելով բողոքական ծայրահեղականներին։ Նրանք շտապեցին «հանրաքվեի» (1973 թ. մարտ) կատակերգության օգնությամբ Հյուսիսային Իռլանդիայում կրկին «սրբագործել» բրիտանական կիսագաղութային ենթումը։ Նախօրոք վստահ լինելով նրա հաջողությանը, անգլիական կառավարությունը կարող էր այժմ «հեռվել» հյուսիսիռլանդացիների «կամքի արտահայտության» վրա։ Ընտրողների 1031 հազար ընդհանուր թվից Միացյալ թագավորության հետ դաշինքի օգտին փաստորեն քվեարկեց 57,5 %-ը (մոտ 592 հազար)։ Օլսթերցի 428 հազար մարդ, գլխավորապես իռլանդացիներ, բոյկոտեցին այդ ֆարսը։

Աշխատավորների դժգոհությունն էր առաջ բերում նաև պահպանողականների ռեակցիոն արտաքին քաղաքականությունը, որոնք փորձում էին Անգլիային որքան կարելի է ավելի երկար պահել «սառը պատերազմի» շրջաններում։ 1973 թ. հունվարին Անգլիան մտավ «Ընդհանուր շուկայի» մեջ, որը հասցրեց թանկության աճին և աշխատավորների կենսամակարդակի իջեցմանը։ Պայքարելով ՆԱՏՕ-ի ամրապնդման համար, բորբոքելով հակասովետական, հակակոմունիստական կամպանիա, տորիները դրանց քողի տակ 1973 թ. մարտին հասան Անգլիայի ռազմական բյուջեին հավանություն տալուն, որը նախատեսում էր նոր ֆինանսական տարում (1973/74) ռազմական ծախսերն ավելացնել 523 միլիոն ֆունտ ստերլինգով, ռազմական նպատակների համար հատկացումները հասցնելով մինչև 4 միլիարդ ֆունտ ստերլինգի։

Այս բոլորը հերթական պառլամենտական ընտրություններում հասցրեց պահպանողականների կուսակցության պարտությանը։

Անգլիայի հետպատերազմյան պատմությունը պատմագրության մեջ

Հետպատերազմյան ժամանակաշրջանում նորագույն (ժամանակակից) պատմության ուսումնասիրման խոշորագույն կենտրոն դարձավ Օքսֆորդում 1948 թ. ստեղծված սուրբ Անտոնի քոլեջը։ Սիդնեյ և Բեատրիսա Ուէբների հիմնադրած լոնդոնյան «էկոնոմիկայի և սոցիալական գիտությունների դպրոցը» մեծ ուշադրություն է դարձնում ժամանակակից տնտեսական և սոցիալական պրոբլեմներին։ Բացի այդ, Լոնդոնում գոյություն ունի ժամանակակից պատմության ինստիտուտ։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Անգլիայի պատմության լուսաբանման մեջ գերակշռում են հրապարակախոսական հրատարակությունները։ Դրանք գլխավորապես տնտեսագիտական, իրավաբանական, սոցիոլոգիական և այլ հատուկ գործեր են։ Պատմագրության մեջ հետպատերազմյան ժամանակաշրջանի պրոբլեմների գծով կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն՝ պահպանողական և լեյբորիստական։ Որոշ հարցերի գծով նրանց դիրքերը նշանակալիորեն համընկնում են։ Հատկապես դա վերաբերում է միջազգային հարաբերությունների բնագավառին։ Այդ ուղղությունների ներկայացուցիչները պաշտպանության տակ են առնում կառավարող շրջանների «ատլանտյան» քաղաքականությունը, ԱՄՆ-ի հետ «հատուկ հարաբերությունների» քաղաքականությունը, հակակոմունիզմը։ Այդ «հան-

ընկելը» բացատրվում է ամենից առաջ այն փաստով, որ չնայած Անգլիայի և ԱՄՆ-ի դաշինքի գլխավոր ճարտարապետը պահպանողականների պարագլուխ Ու. Չերչիլն էր, բայց փաստորեն այդ դաշինքը ձևակերպվեց Էտլիի լեյբորիստական կառավարության ժամանակ։ Այսպիսով, գոյություն ունի կառավարող կուսակցությունների արտաքին քաղաքականության գծով «կոնտինուիտետ» (որը, հասկանալի է, չի բացառում ընդհանուր գծից այս կամ այն շեղման հնարավորությունը)։

Անգլիական պատմաբանները Անգլիայի՝ ԱՄՆ-ի կրտսեր պարտնյորի վերածվելը փորձում են բացատրել հիմնականում «բրիտանական հզորության նվազումով»։ Այդ թեզը բերվում է նաև Ֆիցսայմոնսի «Բրիտանական լեյբորիստական կառավարության արտաքին քաղաքականությունը 1945—1951» գրքում և պահպանողական Վուդհաուզի գրքում, որն ընդգծում է, թե Անգլիան այլևս բավականաչափ հզոր չէ, «որպեսզի աշխարհում գործի միայնակ»[1]։

Ինչ վերաբերում է կայսերական և գաղութային քաղաքականությանը[2], բրիտանական կայսրության անկման պրոբլեմներին, ապա դրանց վերլուծման ժամանակ վերևում նշված երկու ուղղություններում դրսևորվում են որոշ նրբերանգներ։ Լեյբորիստական հեղինակները հիմք են ընդունում Բրիտանական կայսրության՝ մի շարք երկրների անկախություն տալու «կամավորությունը», այդ ծառայությունը վերագրելով լեյբորիստական կառավարություններին[3]։ Իսկ պահպանողական մի քանի հեղինակներ էլ, մի շարք գաղութների անկախություն տալու «կամավորության» հետ միասին պատրաստ են խոստովանել նաև «ստիպվածության» տարրերը։ Սակայն, ըստ նրանց պնդումների, դա ոչ թե կապված է գաղութների ժողովուրդների ազգայինազատագրական պայքարի աճի, այլ «համաշխարհային բոլշևիզմի»[4] մեքենայությունների հետ։ Եթե որոշ, գերազանցապես լեյբորիստական, հեղինակներ պնդում են, թե շնորհիվ լեյբորիստների ջանքերի կայսրությունը, որ կերպարանափոխվել է Համագործակցության, շարունակում է գոյատևել, ապա շատ պահպանողականներ երբեմն պատրաստ են խոստովանել Բրիտանական կայսրության պատրանքի վերածվելը, իսկ Համագործակցությունը համարել «հսկայական ֆարս»։ Բրիտանական կայսրության կրախը «բացատրելու» բոլոր փորձերի ընդհանուր գիծն այդ պրոցեսում պատմական օրինաչափության դրսևորումը տեսնել չցանկանալն է։

Անգլիական պատմագրության մեջ նշանակալի տեղ է հատկացվում այն պրոբլեմներին, որոնք կապված են պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման և Անգլիայի էկոնոմիկայի մի շարք ճյուղերի ազգայնացման հետ։ Տնտեսական պրոբլեմների քննարկումը հաճախ կապվում է Անգլիայի «համընդհանուր բարօրության պետության» վերածվելու և կապիտալիզմի՝ «պլանային կապիտալիզմի» ինչ-որ տարբերակի ձևափոխվելու ընդհանուր կոնցեպցիայի հետ։ Այսպես, օրինակ, է. Շոնֆիլդն իր «Արդի կապիտալիզմը» խոշոր աշխատությունում գովաբանում է պետական-մոնոպո-

---

[1] M. A. Fitssimans. The Foreign Policy of the British Labour Government. 1945—1951. Notre—Dame (Indiana). 1953. p. v., C. M. Woodhouse. British Policy since the Second Wold War. London, 1961, p. 215.

[2] Այդ հարցերի ուսումնասիրմամբ զբաղվում է Կայսերական ինստիտուտը, որը հիմնադրվել է դեռևս 1869 թ., ինչպես նաև 1949 թ. ստեղծված Համագործակցության գործերի ինստիտուտը։

[3] Տե՛ս H. Wilson. The Relevance of British Socialism, London, 1964։

[4] Տե՛ս M. D. Cennedy. A Short History of Communism in Asia. London, 1957։

լիստական տենդենցները, որոնք իբրև թե փոխել են կապիտալիզմի էությունը[5]:

Հուրջ չընդունելով ազգայնացման «սոցիալիստական» բնույթի մասին լեյբորիստական հեղինակների պնդումները, բուրժուական հեղինակներն ընդգծում են, և ոչ առանց հիմքի, որ լեյբորիստների ու պահպանողականների միջև ազգայնացման և դրա մոտիվների հետ կապված «տարաձայնությունների շրջանակները» փաստորեն հարթվել են: «Խառը էկոնոմիկայի» կապակցությամբ նրանց տարբերությունները նեղացել են և վերաբերում են միայն հասարակական սեփականության չափերին և կառավարման մեթոդներին[6]: Վերջին ժամանակներս հենց իրենք լեյբորիստական հեղինակները էլ ավելի են նահանջում ազգայնացման «սոցիալիստական» բնույթի թեզից, տնտեսական կյանքի մեջ տարբեր ձևերով պետական միջամտությունն անհրաժեշտ համարելով կապիտալիստական էկոնոմիկայի «արդյունավետությունը» բարձրացնելու համար[7]:

Հետպատերազմյան շրջանում Անգլիայում մի շարք հեղինակներ քարոզելով «համընդհանուր բարօրության պետության» տեսությունը, որին իբր թե վերածվում է կապիտալիստական պետությունը, իրենց առջև նպատակ են դրել Անգլիայի աշխատավորներին նախազգուշացնել հեղափոխական գործողությունների դիմելուց: Նման ոգով հանդես եկավ լեյբորիստական խոշոր պատմաբան և տնտեսագետ Դ. Դ. Հ. Քոուլը[8]:

Անգլիական պատմագրության մեջ հետպատերազմյան բանվորական շարժման պրոբլեմների գծով դեռևս նշանակալի աշխատանքներ հանդես չեն եկել. չնայած ընդհանուր առմամբ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բանվորական շարժման պատմության նկատմամբ հետաքրքրությունն աճել է: Դրա արտահայտությունն են Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններին առանձին հատուկ ամբիոնների ստեղծումը, ինչպես նաև 1960 թ. պրոֆեսոր Ասա Բրիգսի նախագահությամբ բանվորական շարժման ուսումնասիրման ընկերության հիմնադրումը:

Լեյբորիստական պատմագրությունը շատ բան է արել բանվորական շարժման պրոբլեմների նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու համար, այդ պրոբլեմները դնելով պատմական հետազոտությունների մյուս կարևոր պրոբլեմների շարքում: Բայց աջ լեյբորիստական պատմագրությունը տալիս է բանվորական շարժման աղավաղված պատկերացումը, այն վերլուծելով ռեֆորմիզմի, դասակարգային պայքարի հակառակորդների և տխրահռչակ «կոմպրոմայզերականության» կողմնակիցների դիրքերից: Ինչպես պահպանողական, այնպես էլ աջ լեյբորիստական պատմաբանները բացասաբար են վերաբերվում արդի բանվոր դասակարգի մարտական ավանդույթներին և մարտական գործողություններին, ձգտելով դրանց մասին լռել: Միաժամանակ աջ լեյբորիստական հեղինակները հաճույքով պատմում են լեյբորիստական կուսակցության աճի և ուժեղացման մասին[9]:

---

[5] *Տե՛ս* **A. Shonfield**. Modern Capitalism. The Changing Balance of Public and Private Power. London, 1965.

[6] *Տե՛ս* **L. Tivey**. Nationalization in British Industry. London, 1966, **Kelf Cohen** Twenty Years of Nationalization. The British Experience, London, 1969.

[7] *Տե՛ս, օրինակ,* **H. Wilson**. The Relevance of British Socialism, London, 1964; „The Labour Government 1964—1970, A. Personal Record" London, 1971.

[8] **Գ. Դ. Հ. Կոլ**, Կապիտալիզմ ժամանակակից աշխարհում. Մ., 1958, էջ 75.

[9] *Տե՛ս* **F. Williams**. Fifty Years March. the Rise of The Labour Party. London, 1954.

Ռալֆ Միլիբենդը իր «Պառլամենտական սոցիալիզմ» գրքում[10] ձախ լեյբորիստական դիրքերից տվել է հետպատերազմյան պրոբլեմների վերլուծությունը: Սակայն հեղինակն աջ լեյբորիստական պարագլուխների քաղաքականության նկատմամբ քննադատական վերաբերմունքը չի հասցնում անգլիական բանվորական շարժման համար հստակ ալտերնատիվ ծրագրի հիմնավորման:

Անգլիական հայտնի գիտնական Դենիս Նոյել Պրիտի գրքում[11], որի հեղինակը լեյբորիստական կուսակցությունից հեռացվել է իր առաջադիմական հայացքների համար, տրված է լեյբորիստական կառավարության գործունեությունը 1945—1951 թթ.[12]:

Առաջադիմական դիրքերից 1951 թ. իշխանության գլուխ անցած պահպանողականների քաղաքականության համառոտ քննադատական վերլուծություն է տվել Ա. Բրաունը[13]: 60-ական թվականների նույն շրջանակի պրոբլեմների վերլուծություն է պարունակում Մեծ Բրիտանիայի կոմկուսի գլխավոր քարտուղար Ջոն Գոլանի «Մեծ Բրիտանիայի կոմունիստները սոցիալիզմի համար մղվող պայքարում» գիրքը[14]:

Կոմունիստ Էմիլ Բերնսը, վերլուծելով Էտլիի կառավարության գործունեությունը, ցույց է տվել, որ այն հակասում էր աշխատավորների շահերին և համապատասխանում անգլիական մոնոպոլիստների շահերին[15]: Անգլիական արհմիութենական շարժման կարևորագույն հարցերն իր գրքերից մեկում[16] քննարկել է անգլիացի պատմաբան կոմունիստ Ալեն Հատը: Բրիտանական մոնոպոլիստական կապիտալի հետազոտմանն է նվիրված Ս. Արոնովիչի գիրքը[17]: Անգլիայի կոմունիստական շարժման հնագույն ղեկավարներից մեկը՝ Պալմ Դատն իր աշխատություններում վերլուծել է Բրիտանական կայսրության ճգնաժամը[18]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պատմության կարևորագույն պրոբլեմների մշակման գործում մեծ ներդրում է կատարել սովետական պատմագրությունը[19]: Նրանում մեծ ուշադրություն է դարձվում անգլիական իմպերիալիզմի ճգնաժամի խորացման պրոբլեմներին[20], Բրիտանա-

---

[10] *Տե՛ս* **Ралф Милибенд**. Парламентский социализм. Исследование политики лейбористской партии, М., 1964.

[11] **Դ. Ն. Պրիտ**, անգլիական հայտնի իրավաբան և հասարակական գործիչ, «ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման համար» լենինյան միջազգային մրցանակի դափնեկիր, շատ տարիներ խաղաղության պաշտպանության համաշխարհային խորհրդի անդամ: Մահացել է 1972 թ. մայիսին, 85 տարեկան հասակում:

[12] *Տե՛ս* **А. Н. Притт**, Очерки внешней и внутренней политики лейбористов в 1945—1951 гг. М., 1964.

[13] *Տե՛ս* **А. Н. Браун**, Консерваторы у власти в 1951—1962 гг. М., 1964.

[14] *Տե՛ս* **Джон Голлан**, Коммунисты Великобритании в борьбе за социализм. М., 1968.

[15] *Տե՛ս* **Э. Берис**. Теория и практика правых лейбористов. М., 1962, стр. 61.

[15] *Տե՛ս* **А. Хатт**. Английское профсоюзное движение. М., 1954.

[17] *Տե՛ս* **С. Аронович**. Британский монополистический капитализм. М., 1956.

[18] *Տե՛ս* **Палм Датт**, Кризис Британии и Британской империи. М., 1959.

[19] *Սովետական հեղինակների գործերի բիբլիոգրաֆիան բովանդակում է մինչև 1962 թ.* **А. Н. Байкова**. История Англии и Ирландии. «Библиографический указатель литературы, изданной в СССР за 1918—1962 гг.» М., 1963, *գրքում, 1963—1966 թթ.՝* «Проблемы Британской истории 1972 г.» *ժողովածուում,* М., Наука, 1972; 1966—1970 *թթ.՝* «Вопросы истории». 1971, № 4, стр. 20—40:

[20] *Տե՛ս* «Экономика и политика Англии после второй мировой войны». М., 1958; **И. М. Лемин**. Обострение кризиса Британской империи после второй мировой войны.

կան կայսրության և նեոգաղութատիրության փլուզմանը[21], Անգլիայի տնտեսական զարգացմանը, ներքին և արտաքին քաղաքականությանը[22], անգլիական բանվորական շարժմանը[23] և մի շարք այլ հարցերի։

ԳԼՈՒԽ 11

ՖՐԱՆՍԻԱ

1944—1946 ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՌԵԺԻՄԸ

Ֆրանսիան ազատագրումից հետո

Պատերազմը և օկուպացիան ծանր վնաս հասցրին Ֆրանսիայի էկոնոմիկային։ 1944 թ. արդյունաբերական արտադրությունը, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, ընկել էր 38 %-ով, գյուղատնտեսականը՝ 60 %-ով։ Ֆրանսիայի արտաքին առևտուրը փաստորեն դադարել էր, դրամական համակարգը գտնվում էր խոր քայքայման վիճակում։ Երկրում վառելիքի, հումքի, սննդամթերքի, լայն սպառման առարկաների սուր պակաս էր զգացվում։ Վիշիական ռեժիմը լիովին սնանկ էր դուրս եկել։ Բուրժուական քաղաքական կուսակցությունները, որ առաջատար դեր էին խաղում Երրորդ հանրապետության ժամանակներում, քայքայվել կամ կորցրել էին նախկին նշանակությունը։

Աղատագրված Ֆրանսիայի քաղաքական մթնոլորտը բնութագրվում էր ժողովրդական զանգվածների ակտիվության բուռն վերելքով։

Առաջին պլան դուրս եկան այն ուժերը, որոնք Դիմադրության շարժմանը մասնակցելով ապացուցել էին իրենց հայրենասիրությունը։ Աշխատավորների շրջանում հատկապես մեծ հեղինակություն նվաճեց ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը։ Նրա թվաքանակը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ ավելացավ ավելի քան երեք անգամ և 1945 թ. ամռանը գերազանցեց 900 հազար մարդուց։ ՖԿԿ-ն դարձավ Ֆրանսիայի ամենախոշոր քաղաքական կուսակցությունը, կապիտալիստական աշխարհի խոշորագույն կոմկուսներից մեկը։

М., 1951; **В. Г. Трухановский.** Новейшая история Англии. М., 1958; его же. Очерки новейшей истории Англии. М., 1963.

[21] *Տե՛ս* «Распад Британской империи». М., 1964; **Н. А. Ерофеев.** Закат Британской империи. М., 1967.

[22] *Տե՛ս* **В. Г. Трухановский:** Уинстон Черчиль. Политическая биография. М., 1968; **А. Н. Красильников.** Внешняя политика Англии и лейбористская партия (1951—1964). М., 1968; **Р. С. Овинников.** Хозяева английской политики. М., 1966.

[23] *Տե՛ս* **И. И. Жигалов.** Великобритания: народ и внешняя политика. М., 1967; **Н. В. Матковский.** Краткий очерк профсоюзного движения в Англии. М., 1963; **С. П. Перегудов.** Антивоенное движение в Англии и лейбористская партия (1957—1968). М., 1969; **В. В. Песчанский.** Современное рабочее движение в Англии. М., 1963; **В. А. Горбик.** Правящий класс и рабочее движение в Англии. 1959—1964. Киев. 1968; **В. А. Зайцев.** Рабочий класс Англии в борьбе против наступления монополий (1956—1966). М., 1968.

Իր դիրքերն ամրապնդեց սոցիալիստական կուսակցությունը (ՍՖԻՈ[1]), որն իրեն անվանում էր մարքսիստական, բայց կանգնած էր սոցիալ-ռեֆորմիզմի դիրքերում։ 1946 թ. նրա թվաքանակը գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը և հասել էր 350 հազար մարդու։

Դիմադրության տարիներին կոմունիստները և սոցիալիստները հաճախ գործում էին համատեղ։ 1944 թ. կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունները կազմակերպեցին մշտական համաձայնեցնող կոմիտե և բանակցություններ սկսեցին միասնական բանվորական կուսակցություն ստեղծելու համար։

Հասարակական կյանքում կարևոր տեղ գրավեց Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիան (ԱՀԿ), որի ղեկավարությունում դիմադրության ժամանակաշրջանում կոմունիստները և սոցիալ-ռեֆորմիստներն սկսել էին համագործակցել. այն վերածվեց հզոր կազմակերպության, իր շարքերում միավորելով 5,5 միլիոն մարդ։ Զգալիորեն աճեց Աշխատավոր քրիստոնյաների ֆրանսիական կոնֆեդերացիան (ԱՔՖԿ), որի շարքերում էին 750 հազար անդամներ։ 1944 թ. ստեղծվեց արհմիութենական նոր միավորում՝ Կադրերի համընդհանուր կոնֆեդերացիան (ԿՀԿ), որի մեջ մտավ բարձրագույն և միջին ինժեներատեխնիկական աշխատողների, կառավարող անձնակազմի և ծառայողների մի մասը։

Շատ մեծ դեր խաղացին Դիմադրության կազմակերպությունները, որոնց անդամները հանդես էին գալիս Դիմադրության ազգային խորհրդի (ԴԱԽ) ծրագրի հիման վրա գործողությունների միասնության համար։ Օկուպանտների հետ համագործակցած խոշոր բուրժուազիայի հակաազգային դերը այն ժամանակ այնքան ակնհայտ էր, որ նույնիսկ Դիմադրության բուրժուական կազմակերպությունների ներկայացուցիչները դատապարտում էին ֆինանսական օլիգարխիային, պահանջում խոշոր մոնոպոլիաների ազգայնացում, անհրաժեշտ էին համարում հասարակական արտադրության պլանավորումը, հանդես էին գալիս աշխատավորների կենսամակարդակի բարձրացման և կոմունիստների հետ համագործակցելու օգտին։

Բայց եթե բուրժուազիայի մի մասը, որ օկուպացիայի տարիներին իրեն արատավորել էր, լիովին վարկաբեկվել էր, ապա նրա մյուս մասը, որ մասնակցել էր Դիմադրության շարժմանը, ժողովրդի շրջանում պահպանել և նույնիսկ ավելացրել էր իր ազդեցությունը։ Մեծ հեղինակություն էր վայելում գեներալ Շարլ դը Գոլը, որի շուրջը ստեղծվեց Դիմադրության հիմնադրի, Ֆրանսիայի «ազատարարի» և նույնիսկ «փրկչի» լուսապսակ։

Այն անհետաձգելի խնդիրները, որ կանգնած էին երկրի առջև՝ պատերազմի ավարտումը, էկոնոմիկայի վերականգնումը, դավաճաններին պատժելը, դեմոկրատական իրավունքների և ազատությունների ապահովումը, նոր սահմանադրության մշակումը, պահանջում էին ազգի բոլոր ուժերի համախմբում։ Կոմունիստական կուսակցությունը գտնում էր, որ այդ խնդիրների լուծմանը կնպաստեր լայն ազգային և դեմոկրատական կառավարության գալուխ անցնելը, որը կարող էր կենսագործել Դիմադրության ազգային խորհրդի մշակած ազգային և սոցիալական նորացման ծրագիրը։ 1945 թ. հունիսին հավաքվելով իր հետպատերազմյան առաջին համագումարին (ՖԿԿ

---

[1] *ՍՖԻՈ—ֆրանսիական սոցիալիստական կուսակցության ավանդական կրճատ անվանումը, երբ նա գտնվում էր Երկրորդ ինտերնացիոնալի կազմում։ Կազմված է բանվորական, այսինքն՝ Երկրորդ ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիա (Section française de l'Internationale ouvrée: SFIO) ֆրանսերեն բառերի առաջին տառերից։*

10-րդ համագումարը), կոմունիստները հանդիսավորապես հայտարարեցին, որ Ֆրանսիայի վերածնունդը մի կուսակցության կամ պետական մի քանի գործիչների գործը չէ, այլ մի խնդիր, որը պետք է լուծի ամբողջ ազգը։

Ժամանակավոր կառավարությունը

Այն քաղաքական կարգը, որ Ֆրանսիայում գոյություն ուներ ազատագրման պահից մինչև նոր սահմանադրության ուժի մեջ մտնելը, ստացավ ժամանակավոր ռեժիմ անվանումը։ Այդ ժամանակ երկիրը կառավարում էր կոալիցիոն ժամանակավոր կառավարությունը՝ գեներալ դը Գոլի գլխավորությամբ։ Կառավարության կազմում, Ֆրանսիայի պատմության մեջ առաջին անգամ, մտան երկու կոմունիստ։ Ժամանակավոր կառավարության պաշտոնական ծրագիրը հաշվի էր առնում Դիմադրության պահանջները և շատ բանով համընկնում էր ԴԱԽ-ի ծրագրի հետ։ Այն նախատեսում էր վիշիական դավաճաններին պատժելը, «հանրապետական օրինականության» վերականգնումը, աշխատավորների կենսամակարդակի բարձրացումը և արտադրության կառավարմանը մասնակցելու նրանց իրավունքների ճանաչումը, բանկերի, տրանսպորտային միջոցների, արդյունաբերության որոշ ճյուղերի ազգայնացումը։

Արտաքին քաղաքականության բնագավառում ժամանակավոր կառավարությունը հանդես էր գալիս ինչպես ՍՍՀՄ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի և Անգլիայի հետ դաշինքի օգտին։ Ֆրանսիական արտաքին քաղաքականության հիմքերից մեկը նա համարում էր 1944 թ. դեկտեմբերի 10-ի ֆրանս-սովետական դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիրը։ Ժամանակավոր կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում Գերմանիայի հետպատերազմյան կառուցվածքի պրոբլեմին։ Նա ձգտում էր Սաարի և Հռենոսի ձախ ափի միավորմանը Ֆրանսիային, պնդում էր Գերմանիայից անջատելու Ռուրը, պահանջում էր պատերազմական տուգանքներ վճարել և գերմանական ածուխ մատակարարել Ֆրանսիային։

Դեմոկրատական ուժերի ճնշման տակ ժամանակավոր կառավարությունը իրականացրեց մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք գրված էին ԴԱԽ-ի ծրագրում։ Բանվորների աշխատավարձը, թոշակները և բազմազավակ ընտանիքների նպաստները ավելացան 40—50 %-ով, չնայած որ շարունակում էին ետ մնալ գների աճից։ Վերականգնվեցին հիմնական դեմոկրատական ազատությունները, սկսվեց պետական ապարատից օկուպանտների հետ համագործակցած անձանց վտարումը։ Գերագույն դատարանը Վիշիի կառավարության ղեկավարներ Պետենին և Լավալին դավաճանության համար դատապարտեց մահվան։ Լավալը գնդակահարվեց, իսկ Պետենի մահվան դատավճիռը փոխարինեցին ցմահ բանտարկությամբ։

1944 թ. դեկտեմբերին կառավարությունը ձեռնամուխ եղավ ածխահանքերի ազգայնացմանը։ Այնուհետև ազգայնացվեցին «Ռենո» ավտոգործարանները, «Գնոմ և Ռոն» ավիամոտորային գործարանը, մի քանի ավիտրանսպորտային ընկերություններ։

Որպեսզի արագորեն վերականգնվեր պատերազմի հետևանքով կազմալուծված երկրի էկոնոմիկան, կոմունիստները բանվորներին կոչ էին անում «արտադրության համար ճակատամարտ» ծավալել։ Ի պատասխան, հանքափորները մեկ տարում կրկնապատկեցին ածխի հանույթը։ Իր ուսերին տանելով տնտեսական քայքայվածության գլխավոր ծանրությունը, բանվոր դասակարգն իր հերոսական աշխատանքով վերականգնում էր արտադրությունը։

«Նոկուսակցական համակարգը»

Բանվոր դասակարգի ազդեցության աճը և նախկին բուրժուական կուսակցությունների սնանկանալը լրջորեն անհանգստացրին բուրժուազիային։ Բուրժուական

քաղաքագետները հասկանում էին նոր կուսակցությունների կազմակերպման անհրաժեշտությունը, կուսակցություններ, որոնք կապված լինեին Դիմադրության շարժման հետ և կարողանային զանգվածների շրջանում դիմակայել կոմունիստների ազդեցությանը։ Աչքի ընկնող կաթոլիկական գործիչներ, Դիմադրության շարժման մասնակիցներ Ժ. Բիդոն (ԴԱԽ-ի նախկին նախագահը), Ֆ. դը Մանտոնը և մյուսները ստեղծեցին քաղաքական նոր կուսակցություն՝ ժողովրդա-հանրապետական շարժումը։ Այդ կուսակցությունն առաջանալով մինչև պատերազմը եղած ժողովրդական դեմոկրատներ ոչ մեծ կաթոլիկական կուսակցության հիման վրա, կապեր էր պահպանում Վատիկանի հետ և արտահայտում բուրժուազիայի այն շրջանների տրամադրությունները, որոնք անհրաժեշտ էին համարում սոցիալական ռեֆորմների անցկացումը և էկոնոմիկայի ղեկավարմանը պետության մասնակցությունը։ Դիմադրության շարժումը պառակտվեց։ Նրա աջ տարրերը բացահայտորեն հանդես եկան կոմունիստների դեմ, ձախերն արտահայտվեցին նրանց հետ համագործակցելու օգտին։ Ֆրանսիայում հատկապես քաղաքական սուր պայքար ծավալվեց սահմանադիր ժողովի գալիք ընտրությունների կապակցությամբ, որը պետք է նոր սահմանադրություն մշակեր։

Կոմունիստական կուսակցությունը և մյուս առաջադիմական կազմակերպությունները (այդ թվում Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիան, որը կոմունիստների ազդեցությամբ հրաժարվել էր «քաղաքականությանը չմասնակցելու» անարխիո-սինդիկալիստական ավանդություններից) պահանջում էին լիիրավան սահմանադիր ժողովի հրավիրում, որը պետք է նոր սահմանադրության նախագիծ պատրաստի, իսկ մինչև դրա հաստատումը վերահսկի կառավարության գործունեությունը։ Իր գործունեությունը վերսկսած ռադիկալների կուսակցությունը արտահայտվելով սահմանադիր ժողովի հրավիրման դեմ, հանդես եկավ Երրորդ հանրապետության տարիներին գործած 1875 թ. սահմանադրության պահպանման օգտին։ Գեներալ դը Գոլը և սոցիալիստների կուսակցությունների պաշտպանությամբ առաջարկեց հանրաքվե անցկացնել այն հարցի շուրջը, թե արդյոք վերադառնա՞ 1875 թ. սահմանադրությանը, թե՞ սահմանադիր ժողով հրավիրել։ Ընդ որում դը Գոլը անհրաժեշտ գտավ նախօրոք սահմանադիր ժողովի իրավունքները սահմանափակել միայն նոր սահմանադրության մշակմամբ։ Դը Գոլի նախագիծը ժամանակավոր կառավարությունը հաստատեց։

1945 թ. հոկտեմբերի 21-ին Ֆրանսիայում կայացան ազատագրումից հետո առաջին համընդհանուր ընտրությունները և միաժամանակ սահմանադիր ժողովի մասին հանրաքվեն։ Առաջին անգամ ձայնի իրավունք տրվեց կանանց։ Ընտրողների 96,4 %-ը արտահայտվեց 1875 թվականի սահմանադրության փոփոխման և սահմանադիր ժողովի հրավիրման օգտին։ Ընտրողների 66,3 %-ը համաձայնեց դը Գոլի առաջարկած իշխանության կազմակերպման նախագծին։

Սահմանադիր ժողովի ընտրությունները արտացոլեցին քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունը։ Խոշոր հարթանակ տարավ կոմունիստական կուսակցությունը, որը գրավեց առաջին տեղը։ Հարող խմբավորումների հետ նա հավաքեց ավելի քան 5 միլիոն ձայն (ընտրողների ընդհանուր թվի 26 %-ը) և նվաճեց սահմանադիր ժողովի 152 մանդատ։ Երկրորդ տեղը ուրս եկավ սոցիալիստական կուսակցությունը։ Նա ստացավ 4,6 միլիոն ձայն (ընտրողների ընդհանուր թվի 24 %-ը) և 142 մանդատ։ Երրորդ տեղում էր ՄՌՊ կուսակցությունը, որի օգտին, մի կողմից, քվեարկեց աշխատավորների այն մասը, որը հրապուրվել էր Դիմադրության հետ նրա կապերով և սոցիալական ռեֆորմների խոստումներով, իսկ մյուս կողմից՝ բնակչության

բուրժուական խավերը, որոնք հանձին ՄՌՊ-ի տեսնում էին կոմունիզմի դեմ հենարանին։ ՄՌՊ-ի օգտին քվարկեց ընդամենը 4,5 միլիոն մարդ, կամ ընտրողների 23,6 %-ը։ Սահմանադիր ժողովում նա ուներ 141 մանդատ։ Բոլոր մնացած կուսակցությունները շատ ետ մնացին։ Այսպիսով, սահմանադիր ժողովի երեք գլխավոր կուսակցությունները՝ կոմունիստները, սոցիալիստները և ՄՌՊ-ն հավաքեցին ձայների համարյա 75 %-ը։ Կոմունիստները և սոցիալիստները Ֆրանսիայի պատմության մեջ առաջին անգամ սահմանադիր ժողովում ունեին բացարձակ մեծամասնություն (545 մանդատից 294-ը)։

Դեմոկրատական ավանդույթներին համապատասխան, որի համաձայն այն կուսակցությունները, որոնք ունեն մեծամասնություն, կազմում են կառավարություն, կոմունիստները սոցիալիստներին առաջարկեցին համատեղ կառավարություն կազմել։ Կոմունիստների նախաձեռնությունը հեռանկար էր բացում իսկական դեմոկրատական կառավարություն ստեղծելու համար, որը կարող էր սոցիալ-տնտեսական խոր վերափոխումներ իրականացնել և բարելավել աշխատավորների դրությունը։ Սակայն սոցիալիստական կուսակցության պարագլուխները, «կոմունիստական դիկտատուրայի» հանդեպ վախով բռնված, մերժեցին կոմունիստական կուսակցության առաջարկությունը, հայտարարելով, թե կմասնակցեն միայն եռակուսակցական կառավարությանը՝ ՄՌՊ-ի հետ միասին։

Դրա հետևանքով դը Գոլի գլխավորությամբ ձևավորվեց կոալիցիոն կառավարություն։ Նրա մեջ մտան երեք գլխավոր կուսակցություններից՝ կոմունիստականից, սոցիալիստականից և ՄՌՊ-ից, հինգական ներկայացուցիչ, բացի այդ, դը Գոլի 6 կողմնակիցներ։ Այդ ժամանակից մինչև 1947 թ. մայիսը «եռակուսակցական կոալիցիան» հիմք հանդիսացավ Ֆրանսիական համարյա բոլոր կառավարությունների ձևավորման համար։

Պայքար դեմոկրատական վերափոխումների համար

Սահմանադիր ժողովի ընտրություններից հետո կառավարական կոալիցիայի բոլոր կուսակցությունները համաձայնեցրին իրենց հիմնական պահանջները սոցիալ-տնտեսական քաղաքականության բնագավառում։ ԴԱԽ-ի ծրագրին համապատասխան նրանք առաջարկեցին ազգայնացնել գլխավոր բանկերը, ապահովագրական ընկերությունները և «մոնոպոլիաների ձեռքում գտնվող արդյունաբերության գլխավոր ճյուղերը»։ Բոլոր երեք կուսակցությունները համաձայնեցին մշակելու էկոնոմիկայի զարգացման պլաններ, ոչնչացնել վիշիական ռեժիմի մնացուկները, երաշխավորել դեմոկրատական ազատությունները, բարելավել սոցիալական ապահովության համակարգը։

Շուտով կոնֆլիկտ առաջացավ կառավարության ղեկավարի և սահմանադիր ժողովի մեծամասնությունը կազմող կոմունիստների ու սոցիալիստների միջև։ Չնայած պատերազմն ավարտվել էր, կառավարությունը պահպանում էր ռազմական ծախսերի բարձր մակարդակը, այն դեպքում, երբ դեպուտատների մեծամասնությունն առաջարկում էր կրճատել դրանք։ Զրցանկանալով ենթարկվել սահմանադիր ժողովի մեծամասնությանը, գեներալ դը Գոլը 1946 թ. հունվարի 20-ին հրաժարական տվեց։

Դը Գոլի հրաժարականից հետո կոմունիստները կրկին սոցիալիստներին առաջարկեցին համատեղ կառավարություն կազմել, որը «կարող էր դեմոկրատիային նոր բովանդակություն տալ, ամրապնդել այն, և հենվելով զանգվածների շարժման վրա, դեն նետել մոնոպոլիաների խնամակալությունը»[2]։ Սակայն սոցիալիստների պարագլուխները մերժեցին ՖԿԿ-ի առաջարկը։ Իշխանության գլուխ մնաց «եռակուսակցական կոալիցիան»։ Կառավարության ղեկավար դարձավ սոցիալիստ Ֆ. Գուենը, իսկ այնուհետև (1946 թ. հունիսից) ՄՌՊ-ի պարագլուխ Ժ. Բիդոն։

Ֆ. Գուենի և Բիդոյի կառավարություններին կոմունիստների մասնակցությունը հնարավորություն տվեց մի շարք խոշոր ռեֆորմներ անցկացնել, որոնք վաղուց էին պահանջում աշխատավորները։ Ազգայնացվեցին հինգ խոշոր բանկեր (Ֆրանսիական բանկը, Լիոնի վարկային բանկը, գլխավոր ընկերությունը, ազգային հաշվառման գրասենյակը, Ազգային առևտրաարդյունաբերական բանկը), գլխավոր ապահովագրական ընկերությունները, քարածխի, էլեկտրաէներգետիկական և գազի արդյունաբերությունը։ Նախկինում ազգայնացված ձեռնարկությունների հետ միասին դրանք կազմեցին խոշոր պետական հատվածը, որը թողարկում էր արդյունաբերական արտադրանքի 20—25%-ը և վերահսկում բոլոր կապիտալ ներդրումների 35—40 %-ին։

Ազգայնացման՝ Ֆրանսիայում ընդունված պայմանները հաշվի էին առնում աշխատավորների որոշ պահանջները։ Չնայած ազգայնացված ձեռնարկությունների սեփականատերերը փոխհատուցում էին ստանում, սակայն այն անձինք, ովքեր համագործակցել էին օկուպանտների հետ, զրկվում էին փոխհատուցման իրավունքից։ Ազգայնացված ձեռնարկությունների կառավարման մեջ մտնում էին կառավարության, բանվորների և ծառայողների ներկայացուցիչները։ Չնայած դրան, Ֆրանսիայում (ինչպես և կապիտալիստական մյուս երկրներում) մասնակի ազգայնացումը չփոխեց էկոնոմիկայի բնույթը, որը հիմնված էր մոնոպոլիաների տիրապետության և բանվոր դասակարգի շահագործման վրա։ Իր տնտեսական բովանդակությամբ այն անցում էր մասնավոր-մոնոպոլիստականից պետական-մոնոպոլիստական սեփականության, խոշոր քայլ հանդիսանալով պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման գործում։

Ֆրանսիական աշխատավորներն ավելի կայուն հաջողությունների հասան սոցիալական օրենսդրության բնագավառում, որը մինչև օրս ամենաառաջադիմականներից մեկն է կապիտալիստական աշխարհում։ Այդ հաջողություններն ապահովելու գործում մեծ դեր խաղացին կոմունիստները։ Աշխատանքի մինիստր, կոմունիստ Ա. Կրուազի նախաձեռնությամբ վերականգնվեց 40-ժամյա աշխատանքային շաբաթը և երկշաբաթյա վճարովի արձակուրդը։ Մ. Թորեզի ղեկավարությամբ մշակվեց հանքափորների ստատուտը, իսկ հետո՝ պետական ծառայողների ստատուտը, որոնք այդ պրոֆեսիաների տեր անձանց տալիս էին մի շարք առավելություններ։

Ստեղծվեց սոցիալական ապահովության պետական միասնական համակարգ, որը տարածվեց վարձու աշխատանքի բոլոր անձանց վրա։ Նրանք ստացան ծերության (սկսած 65 տ) և հաշմանդամության թոշակի, հիվանդության և գործազրկության նպաստի իրավունք, բազմազավակ ընտանիքների համար մտցվեց նպաստների լայն համակարգ։

50-ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկություններում և հիմնարկներում ստեղծվեցին «ձեռնարկության կոմիտեներ»։ Այդ կոմիտեները, որ կազմված էին վարչակազմի, բանվորների, ինժեներների և տեխնիկների ներկայացուցիչներից, ունեին միայն խորհրդատու ֆունկցիաներ և գլխավորապես զբաղվում էին ձեռնարկության աշխատանքի ու կենցաղի պայմաններով։

Իրադրությունն էականորեն փոխվեց Ֆրանսիայի գաղութային տիրապետություններում, որտեղ հզոր ազգային-ազատագրական շարժում ծավալվեց։ 1946 թ. գարնանը ֆրանսիական զորքերը թողեցին Սիրիան և Լիբանանը, ո-

[2] М. Торез, Избранные произведения, т. 2. М., 1959, стр. 348.

թոնք հասել էին անկախության։ Նախկին Ֆրանսիական Հնդկաչինում առաջացավ Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը։

1946 թ. սահմանադրությունը

Սահմանադիր ժողովում կոմունիստների և սոցիալիստների համագործակցությունը հնարավորություն տվեց մշակել սահմանադրության դեմոկրատական նախագիծ։ Այն նախատեսում էր հաստատել լայն դեմոկրատական ազատություններ և ստեղծել միապալատ պառլամենտ, որը ունակ վերահսկեր կառավարության գործունեությունը։ Նախագիծը հաստատվեց սահմանադիր ժողովի մեծամասնությամբ, բայց նրա դեմ հանդես եկան ՄՌՊ-ի կուսակցությունը և բուրժուական այլ խմբավորումներ։ 1946 թ. մայիսին կայացավ հանրաքվե, որի հետևանքով սահմանադիր ժողովի նախագիծը ձայների աննշան մեծամասնությամբ մերժվեց։ Հարկ եղավ սահմանադիր ժողովի երկրորդ ընտրություն անցկացնել և մշակել սահմանադրության նոր նախագիծ։

Սահմանադրության նախագծի շուրջը քաղաքական սուր պայքարի մեջ մրցավազքը դեներալ դը Գոլը։ 1946 թ. հունիսին նա ճառով հանդես եկավ Բայե քաղաքում, որով պահանջեց ստեղծել «ուժեղ իշխանություն»։ Դը Գոլն առաջարկեց հիմնել պառլամենտին ոչ հաշվետու կառավարության ղեկավարի, պրեզիդենտի պոստ, որը օժտված լիներ ամենալայն լիազորություններով։ Պրեզիդենտը պետք է գլխավորեր կառավարությունը, նշանակեր և պաշտոնազրկեր մինիստրների, լիներ զինված ուժերի հրամանատարը, ղեկավարեր արտաքին քաղաքականությունը, իրավունք ունենար արձակելու սահմանադիր ժողովը և «միջնորդ» ծառայեր քաղաքական տարաձայնություններում։

Երկարատև բանավեճերից հետո երկրորդ սահմանադիր ժողովը մերժեց «ուժեղ իշխանության» գաղափարը։ Ընդունվեց սահմանադրության կոմպրոմիսային նախագիծ, որը պաշտպանեցին «եռկուսակցական կոալիցիայի» բոլոր կուսակցությունները։ 1946 թ. հոկտեմբերի 13-ին կայացավ երկրորդ հանրաքվեն, որի հետևանքով ընտրողների մեծամասնությունը հավանություն տվեց սահմանադրության նոր նախագծին։ 1946 թ. դեկտեմբերին սահմանադրությունը պաշտոնապես ուժի մեջ մտավ։

1946 թ. ֆրանսիական սահմանադրության բնորոշ առանձնահատկությունը պաշտոնապես հռչակված ազատությունների լայն ծավալն էր և կառավարության խիստ հաշվետու լինելը պառլամենտին։ Բացի դեմոկրատական իրավունքներից, որ գրված էին դեռևս 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայում», նա հռչակում էր «մեր ժամանակներում որպես հատկապես անհրաժեշտ» աշխատանքի իրավունք, հանգստի իրավունք, սոցիալական ապահովվածության իրավունք, կրթության իրավունք։ Սահմանադրությունը ճանաչում էր տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարությունը, աշխատավորների՝ ձեռնարկությունների ղեկավարմանը, արհմիութենական և քաղաքական գործունեությանը, «օրենքի սահմաններում» գործադուլին մասնակցելու իրավունքը։

1946 թ. սահմանադրության աչքի ընկնող գիծը, որը իրավական հիմք էր տալիս ավելի խոր սոցիալ-տնտեսական վերափոխումների պայքարին, այն դրույթն էր, որ ամեն մի ունեցվածք կամ ձեռնարկություն, որը ձեռք է բերում փաստական մոնոպոլիայի գծեր, պետք է դառնա կոլեկտիվ սեփականություն։

Սահմանադրության համաձայն, Ֆրանսիան պարտավորվում էր խուսափել «կամայականության վրա հենվող գաղութատիրության ամեն տեսակ սիստեմից», խոստանում էր «նվաճողական նպատակներով չձեռնարկել ոչ մի պատերազմ և երբեք իր ուժերը չօգտագործել որևէ ժողովրդի ազատության դեմ»։ «Ֆրանսիական կայսրություն» անվանումը փոխարինվեց «Ֆրանսիական միություն» տերմինով։ Հռչակվում էր Ֆրանսիայի բնակչության և այդ միության մեջ մտնող ֆրանսիական «անդրծովյան տարածքների» բնակչության իրավունքների ու պարտականությունների հավասարությունը։

Ըստ 1946 թ. սահմանադրության, պետական իշխանության բարձրագույն մարմինն էր պառլամենտը, որը բաղկացած էր ազգային ժողովից և հանրապետության խորհրդից։ Միայն ազգային ժողովը, որն ընտրվում էր ընդհանուր, ուղղակի և հավասար քվեարկությամբ, կարող էր օրենքներ հրատարակել։ Հանրապետության խորհուրդը, որ ընտրվում էր անուղղակի քվեարկությամբ, իրավունք ուներ հետաձգել ընդունված օրենքը և այն ուղարկել ազգային ժողովի կրկին քննարկմանը։ Կառավարությունը պատասխանատվություն էր կրում ազգային ժողովի առջև և նրա պահանջով պարտավոր էր հրաժարական տալ։ Սահմանադրությամբ հռչակված իրավունքներն ու ազատությունները ոչնչով չէին երաշխավորված։ Այնուամենայնիվ, դրանց պաշտոնապես ճանաչումը հայտնի արգելք էր դնում իշխանությունների կամայականությունների դեմ և հեշտացնում բանվոր դասակարգի պայքարը։

Ազգային ժողովի ընտրությունները

1946 թ. նոյեմբերին կայացան ազգային ժողովի առաջին ընտրությունները։ Կոմունիստական կուսակցությունը հավաքեց 5,5 միլիոն ձայն և նվաճեց (իր դաշնակիցների հետ միասին) 182 դեպուտատական մանդատ։ ՄՌՊ-ն ստացավ 5 միլիոն ձայն և 164 մանդատ, սոցիալիստական կուսակցությունը սահմանադիր ժողովի ընտրությունների համեմատությամբ կորցրեց ավելի քան 1 միլիոն ընտրողներ։ Նա ստացավ 3,5 միլիոն ձայն և 101 մանդատ։

Ընտրությունների արդյունքներով կոմունիստական կուսակցությունը, որ գրավել էր առաջին տեղը, պետք է գլխավորեր կառավարությունը։ Նա Մ. Թորեզի թեկնածությունը առաջադրեց պրեմիեր մինիստրի պոստի համար և մշակեց կառավարական ծրագիր, որը հիմնված էր ԴԱԽ-ի ծրագրային ընկերզրույցների վրա։ Կոմունիստները առաջարկում էին ազգայնացնել խոշոր մոնոպոլացված արտադրության միջոցները, օգնել մանր և միջին ձեռնարկություններին, տրեստներից պաշտպանել գյուղացիական սեփականությունը։ ՖԿԿ-ի առաջարկությունները Ֆրանսիայի առջև իսկական դեմոկրատական զարգացման հնարավորություն էին բացում, սակայն դրանք պաշտպանություն չգտան «եռկուսակցական կոալիցիայի» մյուս անդամների կողմից։ ՄՌՊ-ն դեմ դուրս եկավ պրեմիեր մինիստրի պոստի համար Մ. Թորեզի թեկնածության առաջադրմանը։ Սոցիալիստական կուսակցությունը ձևականորեն պաշտպանեց կոմունիստների առաջարկությունները, սակայն սոցիալիստ դեպուտատների մի մասը հրաժարվեց քվեարկել ՖԿԿ-ի գլխավոր քարտուղարի օգտին, և նրա թեկնածությունը չհավաքեց ձայների պահանջվող մեծամասնությունը։

Քանի որ ՄՌՊ-ի պարագլուխները չէին ցանկանում վերսկսել «եռկուսակցական կոալիցիայի» գործունեությունը, իսկ սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը հրաժարվեց երկկուսակցական կառավարությանը մասնակցելուց, որը կազմված լիներ կոմունիստներից և սոցիալիստներից, ՍՖԻՕ-ի պարագլուխ Լ. Բլյումի գլխավորությամբ ստեղծվեց անցողիկ կառավարություն, որը կազմված էր միայն սոցիալիստներից։ Բլյումի կառավարությունը գոյություն ունեցավ ընդամենը մեկ ամիս, բայց հասցրեց կատարել այնպիսի գործողություն, որը բացասական խոր հետևանքներ ունեցավ երկրի համար։ 1946 թ. դեկտեմբերին նա գաղութային պատերազմ սանձազերծեց Վիետնամում։

1947 թ. հունվարին Բլյումի կառավարությունն իր տեղը զիջեց սոցիա-

լիստ Ռամադիեի կոալիցիոն կառավարությանը, որի մեջ մտան կոմունիստները, սոցիալիստները, ՄՌՊ-ի, ինչպես նաև ռադիկալների կուսակցության և նրանց հարող խմբերի ներկայացուցիչները։ 1946 թ. վերջին կայացան հանրապետության խորհրդի ընտրությունները և ավարտվեց սահմանադրությամբ նախատեսված կառավարական բարձրագույն հիմնարկների ձևավորումը։ Ժամանակավոր ռեժիմը դադարեց գոյություն ունենալուց։ Սկսվեց Չորրորդ հանրապետության[3] ժամանակաշրջանը։

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1946—1958)

Ֆրանսիայի տնտեսական զարգացումը Չորրորդ հանրապետության տարիներին

Չորրորդ հանրապետության առաջին տարիներին Ֆրանսիայի տնտեսական դրությունը ծանր էր մնում։ Միայն 1948 թ. արդյունաբերական արտադրության ծավալը գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։ 1950 թ. գյուղատնտեսության արտադրանքի մակարդակը գերազանցեց նախապատերազմյան մակարդակը և վերացվեց մատակարարման քարտային համակարգը։ Այնուհետև Ֆրանսիայի տնտեսական զարգացումն արագացավ, չնայած, ինչպես և մյուս երկրներում, այն անհամաչափ էր։ 1958 թ. Ֆրանսիայի արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելի քան երկու անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, իսկ գյուղատնտեսական արտադրանքն ավելացավ միայն 16 %-ով։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիական իմպերիալիզմը կորցրեց վաշխառուական բնույթը։ Կապիտալ ներդրումների հիմնական մասը փոխադրվեց արդյունաբերության բնագավառը, ապահովելով նրա աճի տեմպերի արագացումը։ Կապիտալի արտասահման արտահանումը կրճատվեց և սկսեց իրականացվել գլխավորապես արտադրողական և ոչ թե վարկային կապիտալի ձևով։ Եթե 20-րդ դարի սկզբին ֆրանսիական կապիտալ ներդրումները պետական փոխառությունների և արտասահմանյան արժեթղթերի մեջ 10 անգամ գերազանցում էին արդյունաբերության և առևտրի մեջ կատարվող ներդրումներին, ապա 60-ական թվականների սկզբին արտասահման արտահանվող կապիտալների չափերը համարյա 6 անգամ փոքր էին արդյունաբերության, առևտրի և տրանսպորտի մեջ կատարված ներդրումներից։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիայի էկոնոմիկայի բընորոշ գիծը դարձավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի արագ զարգացումը և հատկապես էկոնոմիկայի կապիտալիստական «ծրագրավորման» լայն կիրառումը։ 1946 թ. Ֆրանսիայում կազմակերպվեց պլանավորման գլխավոր քարտուղարություն, որի խնդիրն էր նախապատրաստել տնտեսական զարգացման պլաններ։ 1947 թ. կառավարությունն ընդունեց Ֆրանսիայի պատմության մեջ առաջին մոդեռնացման և վերակառուցման ընդհանուր պլանը, որը հայտնի է նրա հեղինակի՝ «Մոնեի պլան» անվամբ։ Դրա ավարտումից հետո հանդես եկավ «երկրորդ պլանը» (1954—1957), և էկոնոմիկայի «ծրագրավորումը» դարձավ Ֆրանսիայի տնտեսական կյանքի մշտական տարրը։

Ի տարբերություն սոցիալիստական երկրների պլանների, էկոնոմիկայի «ծրագրավորման» ֆրանսիական համակարգը գործում է մոնոպոլիստական

[3] Ֆրանսիայում Առաջին հանրապետությունը գոյություն ունեցավ 1792-ից մինչև 1800 թ., Երկրորդ հանրապետությունը՝ 1848-ից մինչև 1852 թ., Երրորդը՝ 1870-ից մինչև 1940 թ.։

կապիտալի տիրապետության պայմաններում և կրում է ոչ պարտադիր, այլ հանձնարարական կամ «ինդիկատիվ» բնույթ։ Կառավարության մշակած ծրագրերը պարտադիր են միայն պետական հատվածի ձեռնարկությունների համար։ Մասնավոր հատվածի խոշոր ձեռնարկությունների հետ կառավարությունը կնքում է հատուկ կոնտրակտներ, որոնց համաձայն ձեռնարկատերերը պարտավորվում են հավատարիմ մնալ պլանային առաջադրանքներին։ Բացի այդ, անուղղակի միջոցառումների համակարգով՝ պետական վարկեր և հարկային արտոնություններ տալով, խոշոր ձեռնարկություններ կառուցելու նախնական թույլտվություն մացնելով, արտասահմանում սարքավորում գընելու համար արտասահմանյան վալյուտա տրամադրելով և այլն, կառավարությունը կարող է ազդել էկոնոմիկայի զարգացմանն իր համար ցանկալի ուղղությամբ։

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության համակարգը խիստ սահմանափակում է ֆրանսիական էկոնոմիկայի պլանավորման հնարավորությունները։ Նույնիսկ պլանային առաջադրանքները մշակվում են խոշոր մոնոպոլիաների մասնակցությամբ և ի շահ իրենց։ Մանր և միջին ձեռնարկությունները, որպես կանոն, չեն ընդգրկվում պետական կոնտրակտներում։

Չապահովելով ժողովրդական տնտեսության բաղմակողմանի ղեկավարումը, ինդիկատիվ ծրագրավորման համակարգը այնուամենայնիվ բուրժուական կառավարությանը հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգործել էկոնոմիկայի վրա՝ ի շահ մոնոպոլիստների։ Բանկերի ազգայնացմամբ ստանալով հսկայական ֆինանսական ռեսուրսներ, մոնոպոլիաներին ցածր տարիֆներով մատակարարելով ածուխ, էլեկտրաէներգիա, գաղ, նրանց տալով հարկային արտոնություններ և առատ վարկեր, պետությունը նպաստում է արդյունաբերության մոնոպոլիստական համակենտրոնացմանը և խոշոր ձեռնարկությունների տեխնիկական վերասարքավորմանը՝ ի վնաս մանր ու միջին ձեռնարկությունների։

Ռեակցիայի հարձակումը

1946—1947 թթ. Անգլիայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները Սովետական Միության դեմ «սառը պատերազմ» սկսեցին։ Ֆրանսիական կառավարող շրջանները շուտով հրաժարվեցին ինքնուրույն արտաքին քաղաքականությունից և միացան անգլո-ամերիկյան բլոկին։ 1947 թ. մարտի 4-ին Դյունկերկում ստորագրվեց անգլո-ֆրանսիական փոխադարձ օգնության պայմանագիրը, որը ձևականորեն ուղղված էր Գերմանիայի կողմից ագրեսիայի սպառնալիքի դեմ, իսկ իրականում նպաստեց արևմտաեվրոպական պետությունների սեպարատ միավորման ստեղծմանը։ Ֆրանսիան ստացավ ամերիկյան փոխառություններ և վարկեր, որը ավելացնում էր նրա տնտեսական կախումն ԱՄՆ-ից։

Երկրի ներսում ուժեղացավ հակասովետական և հակակոմունիստական պրոպագանդան, աշխուժացավ աջ խմբավորումների գործունեությունը։

1947 թ. ապրիլին գեներալ դը Գոլը հայտարարեց նոր քաղաքական կազմակերպության՝ «ֆրանսիական ժողովրդի միավորման»՝ ՖԺՄ-ի ստեղծման մասին։ ՖԺՄ-ի ղեկավարները հայտարարեցին, որ իրենց կազմակերպությունը սովորական քաղաքական կուսակցություն չէ, այլ իրենից ներկայացնում է լայն միավորում, որը կոչված է փոխարինելու բոլոր մյուս կուսակցություններին։ Նրանք խստորեն հարձակվեցին քաղաքական կուսակցությունների սիստեմի վրա, որոնց պայքարն իբրև թե «ջլատել է պետությունը», պահանջում էին փոխել 1946 թ. սահմանադրությունը և ստեղծել «ուժեղ իշխանություն» ի դեմս կուսակցություններից անկախ պրեզիդենտի։

Արտաքին քաղաքականության բնագավառում ՖԺՄ-ն հանդես էր գալիս տնտեսական և քաղաքական բլոկի մեջ արևմտաեվրոպական երկրների միա-

վորման օգտին, որը կարողանար դիմակայել ինչպես ՍՍՀՄ-ին, այնպես էլ ԱՄՆ-ին։ ՖԺՄ-ի ղեկավարությունը պաշտպանում էր գաղութային պատերազմը Վիետնամում և պահանջում էր պահպանել Ֆրանսիայի տիրապետությունը գաղութներում, հիմնական բնակիչներին տալով միայն «ներքին ներկայացուցչության» իրավունք (այսինքն՝ ինքնավարական մարմիններին մասնակցելը)։ Ըստ էության ՖԺՄ-ն հանդես էր գալիս որպես բուրժուական աջ կուսակցություն, որը միավորում էր ռեակցիոն տարրերին։ Նա կազմակերպում էր հավաքներ և ջահերով երթեր, որոնք հաճախ ուղեկցվում էին արյունոտ ընդհարումներով, ստեղծում էր ռազմականացված ջոկատներ, որոնք պատրաստվում էին փողոցային մարտերի։

Ռեակցիայի հարձակումը խոր ազդեցություն ունեցավ սոցիալիստական կուսակցության քաղաքականության վրա, որի ղեկավարությունում ուժեղացավ կոմունիզմի հայտնի թշնամի Բլյումի ազդեցությունը։ Սոցիալիստական կուսակցությունը հրաժարվեց մասնակցել համաձայնեցման կոմիտեի աշխատանքներին։ Նրա պրակտիկ քաղաքականությունը է՛լ ավելի էր հակասության մեջ մտնում Դիմադրության ազգային խորհրդի ծրագրի և «եկուսակցական կոալիցիայի» պաշտոնական կառավարական հայտարարությունների հետ։

Սահմանադրությանը հակառակ Ռամադիեի կառավարությունը շարունակեց գաղութային պատերազմը Վիետնամում, ճնշեց ազգային-ազատագրական շարժումը Մադագասկարում։ Նա հանդես եկավ աշխատավարձի բարձրացման դեմ, որն, իբր թե, իր հետ անխուսափելիորեն կբերեր ինֆլյացիա։

Այդ քաղաքականության դեմ վճռականորեն պայքարում էր կոմունիստական կուսակցությունը։ Նա պաշտպանում էր աշխատավորների շահերը, օժանդակում ազգային-ազատագրական շարժմանը, կոչ էր անում ամրապնդել բարեկամությունը ՍՍՀՄ-ի հետ։ Կոմունիստներից հակահարված ստանալով, Ֆրանսիայի կառավարող շրջանները որոշեցին նրանց հեռացնել կառավարությունից։ Որպես առիթ օգտագործվեց կառավարության ներսում եղած կոնֆլիկտը, որն առաջացել էր նրանից, որ կոմունիստ-մինիստրները պաշտպանում էին «Ռենո» գործարանի գործադուլավոր բանվորներին, որոնք պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, իսկ կառավարական կոալիցիայի մնացած կուսակցությունները հրաժարվեցին բավարարել բանվորների պահանջները։ Ռամադիեն կոմունիստներին մեղադրեց «մինիստրական համերաշխությունը խախտելու» մեջ և ազգային ժողովում դրեց կառավարությանը վստահություն տալու հարցը։ Բոլոր կուսակցությունները, բացի կոմունիստներից, պաշտպանեցին Ռամադիեին։ Հենվելով այդ քվեարկության արդյունքների վրա, Ռամադիեն 1947 թ. մայիսի 4-ին կառավարության կազմից հանեց կոմունիստ-մինիստրներին։

Այսպիսով, Ֆրանսիայի ամենախոշոր կուսակցությունը, որն օգտվում էր ամենամեծ թվով ընտրողների վստահությունից, հեռացվեց կառավարությունը մասնակցելուց։ «Եկուսակցական կոալիցիան» քայքայվեց։ Ֆրանսիայում, ինչպես և արևմտաեվրոպական մյուս երկրներում, շրջադարձ կատարվեց դեպի քաղաքական ռեակցիան։

Դասակարգային պայքարի սրումը։ Բանվորական շարժման պառակտումը

Կառավարությունից կոմունիստների հեռացումը նպաստեց դասակարգային պայքարի սրմանը։ «Ռենոյի» գործարանի բանվորների գործադուլը, որն առիթ ծառայեց կոմունիստներին կառավարությունից հանելուն, աստիճանաբար տարածվեց ամբողջ Փարիզի շրջանի բանվոր-մետաղագործների շրջանում։ 1947 թ. հունիսին սկսվեց երկաթուղայինների գործադուլը, ընդգրկելով համարյա կես միլիոն մարդ։ Նրանց միացան ածխահատները, բանկերի, քաղաքային տրանսպորտի և հիվանդանոցների ծառայողները։ 1947 թ. նոյեմբերին առանձին կատեգորիաների աշխատավորների գործադուլները վերաճեցին համընդհանուր գործադուլի, որին մասնակցեց մոտ 3 միլիոն մարդ։ 1946 թ. հետ համեմատած (երբ կոմունիստները դեռևս մտնում էին կառավարության մեջ) գործադուլավորների քանակն ավելացավ 16 անգամ, իսկ կորցրած աշխատանքային օրերի քանակը՝ համարյա 60 անգամ։ 1947 թ. համընդհանուր գործադուլը տարբերվում էր իր մեծ համառությամբ և կատաղությամբ։ Նա տևեց համարյա երկու շաբաթ (նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 9-ը) և հաճախ ուղեկցվում էր ոստիկանության հետ բանվորների ընդհարումներով։

Գործադուլային շարժման հզոր վերելքը, որը ղեկավարում էին ՖԿԿ-ն և Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան, բուրժուազիայի, և աջ սոցիալ-դեմոկրատների շրջանում խուճապ առաջ բերեց։ Բուրժուական մամուլը բնակչությանը ահաբեկում էր քաղաքացիական կռվի և «կոմունիստական դիկտատուրայի» սպառնալիքով։ Կառավարությունը մոբիլիզացրեց ռեզերվիստներին և ոստիկանությանը։ Մանր ու միջին բուրժուական զանգվածի մեջ ուժեղացան ռեակցիոն միտումները։ Տեղական ինքնավարության մարմինների (մունիցիպալիտետների) 1947 թ. հոկտեմբերի ընտրություններում ՖԺՄ կուսակցությունը, որն առաջին անգամ մասնակցեց ընտրական պայքարին, գուրս եկավ առաջին տեղը, ստանալով ձայների ավելի քան 38 %-ը։ Նա նվաճեց Ֆրանսիայի 13 գլխավոր քաղաքների, ներառյալ Փարիզի մունիցիպալիտետների ղեկավարությունը։ Մնացած կուսակցությունները (բացի կոմունիստականից) կորցրին իրենց ընտրողների զգալի մասը։ Վկայակոչելով ընտրության արդյունքները, գեներալ դը Գոլը պահանջեց արձակել ազգային ժողովը, որն, իբրև թե, արդեն չէր արտահայտում ազգի կամքը, ժամկետից շուտ անցկացնել պառլամենտական ընտրություններ և վերանայել սահմանադրությունը։

Ռեակցիայի հարձակման իրադրության մեջ տեղի ունեցավ բանվորական շարժման պառակտումը։ 1947 թ. գործադուլային մարտերի ժամանակ Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայում վերջնականապես առաջացավ ռեֆորմիստական խումբը, որը գլխավորեց ԱԲԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Ժուոն։ Գտնվելով ԱԲԿ-ի ղեկավարության փոքրամասնության մեջ, այդ խմբի պարագլուխները, անարխո-սինդիկալիստական հին դոգմաներին համապատասխան, հանդես էին գալիս արհմիութենական շարժման «քաղաքականացման» և կոմունիստական կուսակցության հետ արհմիությունների համագործակցության դեմ։ 1947 թ. դեկտեմբերին, ընդհանուր գործադուլի ամենաեռուն շրջանում, նրանք ԱԲԿ-ի ղեկավարության մեծամասնությանը մեղադրեցին արհմիութենական շարժման «քաղաքականացման» համար և կոչ արեցին դադարեցնել գործադուլը։ Այնուհետև նրանք գուրս եկան Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայից և ստեղծեցին ինքնուրույն «Ֆորս ուվրիեր» («Բանվորական ուժ») արհմիութենական պառակտիչ կազմակերպությունը։ Պառակտիչների գործողությունները մեծ վնաս պատճառեցին բանվորական շարժմանը։ Ընդհանուր գործադուլը ձախողվեց, նախքան կհասներ իր հիմնական պահանջների բավարարմանը։

Պառակտումից հետո Ֆրանսիայում մնացին չորս մրցակից ազգային արհմիութենական կենտրոններ։ Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերենցիան, որը կանգնած էր դասակարգային պայքարի դիրքերում, «Ֆորս ուվրիեր»-ը, որը հետևում էր սոցիալիստներին, Աշխատավոր-քրիստոնյաների ֆրանսիական կոնֆեդերենցիան, որը կապված էր ՄՌՊ-ի հետ, կադրերի համընդհանուր կոնֆեդերացիան, որը գերազանցապես կողմնորոշվում էր դեպի աջ կու-

սակցությունները։ Ավելի հեղինակավոր էր մնում ԱԿԿ-ն, որի թվաքանակը գերակշռում էր մնացած բոլոր արհմիությունները միասին վերցրած։ 50-ական թվականներին ԱԿԿ-ն միավորում էր 1,2—1,5 միլիոն անդամներ, այն դեպքում, երբ «Ֆորս ուվրիերում» հաշվվում էր 300 հազար, ԱՔՖԿ-ում՝ 400 հազար և ԿԿԿ-ում՝ 200 հազար մարդ։ Այնուամենայնիվ պառակտումից հետո արհմիությունների ընդհանուր քանակը զգալիորեն կրճատվեց և բանվորական շարժումը թուլացավ։

Այդ ժամանակ բացասական դեր խաղացին սոցիալիստական կուսակցության ղեկավարները։ Ազգային ժողովի բուռն նիստի ընթացքում, որը նվիրված էր 1947 թ. ընդհանուր գործադուլին և շարունակվեց անընդհատ 5 օր ու գիշեր, սոցիալիստական կուսակցության դեպուտատները, բուրժուական կուսակցությունների դեպուտատների հետ միասին, կատաղաբար հարձակվում էին կոմունիստների վրա, զրպարտչաբար նրանց մեղադրելով զինված ապստամբություն նախապատրաստելու մեջ։ Ներքին գործերի մինիստր, սոցիալիստ Ժ. Մոկը գործադուլավորների դեմ զորքեր և ոստիկանություն ուղարկեց։ Սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը լիովին հավանություն տվեց «Ֆորս ուվրիերի» գործողություններին, կուսակցությունից հեռացրեց ձախ խմբավորումները և հարձակում սկսեց կոմունիստների դեմ։

ՍՖԻՕ-ի պարագլուխներն առաջ քաշեցին այսպես կոչված «երրորդ ուժի» գաղափարը, այսինքն՝ սոցիալիստների, ՄՌՊ-ի և ռադիկալների կոալիցիան, որը, ըստ նրանց պնդման, պետք է դիմակայեր ինչպես կոմունիստներին, այնպես էլ աջերին։ Իրականում «երրորդ ուժի» քաղաքականությունն ամենից առաջ նպատակ էր հետապնդում մեկուսացնելու կոմկուսակցությունը։ «Երրորդ ուժի» առաջին կառավարությունը գլխավորեց ՄՌՊ-ի պարագլուխ Ռ. Շումանը։ Սոցիալիստների և ռադիկալների հետ նրա մեջ պատերազմից հետո առաջին անգամ մտավ աջ կուսակցությունների երկու ներկայացուցիչ։

Ըստ էության, «երրորդ ուժի» քաղաքականությունը նշանակում էր ետ դեպի բուրժուական պառլամենտարիզմի վատթարագույն ավանդույթները՝ երբ կաբինետները կայուն մեծամասնություն չունեին, իշխում էին մշտական մինիստրական ճգնաժամերը և կառավարության խրոնիկական անկայունությունը։ «Երրորդ ուժի» կոալիցիայի կառավարման ավելի քան երեք տարվա ընթացքում, մնալով իշխանության գլուխ մինչև 1951 թ. ընտրությունները, Ֆրանսիայում փոխվեց ութ կառավարություն։ Նրանք բոլորը հենվում էին սոցիալիստների, ՄՌՊ-ի և ռադիկալների դաշինքի, աջերի վրա և պայքարում կոմունիստական կուսակցության դեմ։

Ֆրանսիան և «սառը պատերազմը»

«Երրորդ ուժի» կառավարման տարիներին Ֆրանսիան ակտիվորեն մասնակցում էր «սառը պատերազմին»։ Բուրժուական պրոպագանդան սոցիալիստական կուսակցության պարագլուխների լիակատար պաշտպանությամբ պնդում էր, թե իբր Սովետական Միությունը մտադիր է ներժուխել Արևմտյան Եվրոպա և միայն ամերիկյան օգնությունը կարող է ապահովել Ֆրանսիայի անկախությունը։ 1948 թ. ամռանը ֆրանսիական կառավարությունն ընդունեց «Մարշալի պլանը», որով վարկեր, ապրանքներ և սննդամթերք էր տրվում այն երկրներին, որոնք համաձայնում էին մտնել ամերիկյան քաղաքականության ոլորտը։ Բնակչությանը «Մարշալի պլանով» ստացված ամերիկյան ապրանքների վաճառքից գոյացած միջոցները ֆրանսիական կառավարությունը կարող էր ծախսել միայն ԱՄՆ-ի համաձայնությամբ։ Ֆրանսիան պարտավորվել էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին մատակարարել դեֆիցիտային նյութեր, բարենպաստ պայմաններ ստեղծել ֆրանսիական էկոնոմիկայում ամերիկյան կապիտալ ներդրումների համար։

«Մարշալի պլանի» գործողության ժամանակաշրջանում (1948 թ. մինչև 1952 թ.) Ֆրանսիան ստացավ 3,2 միլիարդ դոլարի ամերիկյան ապրանքներ և պարեն։ Ամերիկյան մատակարարումները, որ կազմում էին ֆրանսիական էկոնոմիկայի կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 10 %-ը, նպաստեցին ֆրանսիական արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացմանը, բայց Ֆրանսիային վերջնականապես հասցրեցին անգլո-ամերիկյան բլոկին միանալուն։

1949 թ. ապրիլին Ֆրանսիան 11 այլ կապիտալիստական պետությունների հետ դարձավ Միացյալ Նահանգների կողմից ղեկավարվող ագրեսիվ Հյուսիսատլանտյան պակտի (ՆԱՏՕ) մասնակից։ Ֆրանսիայի տարածքում տեղավորվեց ՆԱՏՕ-ի շտաբ-կայանը, հայտնվեցին ամերիկյան զորքեր և ռազմական բազաներ։ Արմատապես փոխվեց Ֆրանսիայի դիրքը գերմանական հարցում։ Ֆրանսիան հրաժարվեց ռազմական տուգանքներ ստանալուց, համաձայնեց Արևմտյան Գերմանիայի՝ «Մարշալի պլանին» մասնակցելուն, հավանություն տվեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծմանը։ Շուտով ֆրանսիական կառավարությունը ԳՖՀ-ի հետ մերձեցման կուրս վերցրեց, նկատի ունենալով, մի կողմից, Արևմտյան Գերմանիան օգտագործել ՍՍՀՄ-ի դեմ, իսկ, մյուս կողմից, նրան ներգրավել Արևմտյան Եվրոպայի երկրների միավորման մեջ, որում Ֆրանսիան հուսով էր առաջատար դեր խաղալ։

1950 թ. մայիսին ՄՌՊ-ի պարագլուխներից մեկը՝ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ռ. Շումանն առաջարկեց արևմտաեվրոպական երկրներում միավորել քարածխի և պողպատի արտադրությունը։ Անգլիան մերժեց «Շումանի պլանը», բայց ԳՖՀ-ն, Իտալիան, Բելգիան, Հոլանդիան և Լյուքսեմբուրգը պաշտպանեցին այն։ 1951 թ. ապրիլին այդ վեց երկրների ներկայացուցիչներն ստորագրեցին քարածխի և պողպատի եվրոպական միավորման մասին (ՔՊԵՄ) պայմանագիրը։ Պայմանագիրը նախատեսում էր վերացնել մաքսային տուրքերը և ստեղծել պայմանագրի բոլոր մասնակիցների քարածխի և մետալուրգիական արդյունաբերության համար միասնական շուկա։ Դա վեց արևմտաեվրոպական տերությունների ներփակ խմբավորում ստեղծելու առաջին քայլն էր։

1950 թ. հոկտեմբերին, Կորեայում պատերազմն սկսվելուց շատ չանցած Ֆրանսիայի նոր պրեմիեր մինիստր Ռ. Պլևենը հանդես եկավ Արևմտյան Գերմանիայի վերազինման պլանով։ Գիտենալով, որ ֆրանսիական ժողովրդական զանգվածները հավանություն չեն տա Գերմանիայի վերազինմանը, Պլևենը առաջարկեց այն իրականացնել այսպես կոչված «Եվրոպական բանակի» շրջանակներում, որի մեջ պետք է մտնեին վեց երկրների՝ ՔՊԵՄ-ի անդամների, ներառյալ Արևմտյան Գերմանիայի բանակները։

Անգլո-ամերիկյան բլոկին Ֆրանսիայի միանալը և «սառը պատերազմին» նրա մասնակցելը ուղեկցվում էին հակասովետական և հակակոմունիստական լայն կամպանիայով։ Սովետական Միության հետ բարեկամությունն ամրապնդելու համար պայքարող կոմունիստներին բուրժուազիան փորձում էր ներկայացնել իբրև «օտարերկրյա տերության գործակալներ»։ Սկսվեց պետական ապարատից, բանակից, ազգայնացված ձեռնարկությունների կառավարող մարմիններից կոմունիստների զանգվածային ազատումը։ 1948 թ. աշնանը, հանքագործների զանգվածային գործադուլի ժամանակ կառավարությունը կոմկուսին մեղադրեց «Կոմինֆորմի ցուցումով» զինված ապստամբություն նախապատրաստելու մեջ։ Հակակոմունիստական պրոպագանդան և ոստիկանները լուրջ ազդեցություն թողցին բազմաբական մթնոլորտի վրա։ Մանր և միջին բուրժուազիայի զգալի մասը, որ վախեցել էր գործադուլային

շարժման թափից, մոլորեցվել բուրժուական պրոպագանդայի կողմից, համակվել էր հակակոմունիստական տրամադրություններով։ Երկրում և կառավարությունում աճում էր աջերի ազդեցությունը։ Նրանց հիմնական կազմակերպությունը դարձավ 1948—1949 թթ. վերջնականապես կազմավորված «անկախների» կուսակցությունը։ Արտացոլելով խոշոր և միջին բուրժուազիայի մի մասի տրամադրությունները, որը դժգոհ էր էկոնոմիկայի կառավարմանը պետության միջամտությունից, նա հանդես էր գալիս «ձեռնարկատիրության ազատության» օգտին, դեմ էր արդյունաբերության ազգայնացմանը և սոցիալական ռեֆորմներին։ «Անկախների» պարագլուխները պահանջում էին Ամերիկայի հետ սերտ դաշինք, Արևմտյան Գերմանիայի վերազինում, Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծում՝ Ֆրանսիայի և ԳՖՀ-ի մասնակցությամբ։

«Սառը պատերազմի» իրադրության մեջ Դիմադրության կազմակերպությունների մեծամասնությունը քայքայվեց։ Սկսվեց վիշիականների վերականգնում, հանձին որոնց բուրժուազիան այժմ տեսնում էր ՍՍՀՄ-ի և կոմունիստական կուսակցության դեմ պայքարի դաշնակիցների։ Է՛լ ավելի հաճախ էին վիշիականները ներկայացվում իբրև հայրենասերներ, որոնք, իբրև թե, Ֆրանսիան պաշտպանել էին օկուպանտներից։ Գերմանիայի հետ համագործակցության նրանց քաղաքականությունը փառաբանվում էր իբրև պետական իմաստության ակտ։

Բանվորական և կոմունիստական շարժումը «սառը պատերազմի» տարիներին

«Սառը պատերազմի» տարիներին բանվորական և կոմունիստական շարժման կենտրոնական պրոբլեմը խաղաղության, դեմոկրատիայի և անկախության համար պայքարն էր։ Ֆրանսիական կոմունիստական կուսակցության 11-րդ (1947) և 12-րդ (1950) համագումարներում մերկացվեցին ամերիկյան էքսպանսիոնիստական դիտավորությունները, դատապարտվեց «երրորդ ուժի» կառավարության վարած «ռեակցիայի, աղքատության և պատերազմի» քաղաքականությունը։ Կոմունիստները խստորեն քննադատում էին «Մարշալի պլանը», պարզաբանում էին Հյուսիսատլանտյան պակտի ագրեսիվ բնույթը, վճռականորեն հանդես էին գալիս Արևմտյան Գերմանիայի վերազինման դեմ։ Հսկայական արձագանք առաջ բերեց ՖԿԿ-ի գլխավոր քարտուղար Մ. Թորեզի հետևյալ հանդիսավոր հայտարարությունը. «Ֆրանսիայի ժողովուրդը չի պատերազմի, երբեք չի պատերազմի Սովետական Միության դեմ»[4]։

Կոմունիստները դարձան խաղաղության կողմնակիցների շարժման ոգին, որի հիմնադիրներից էր ֆրանսիական նշանավոր գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր, ՖԿԿ Կենտկոմի անդամ Ֆ. Ժոլիո-Կյուրին։ 14 միլիոն ֆրանսիացիներ ստորագրեցին խաղաղության համաշխարհային խորհրդի դիմումի տակ, կոչ անելով արգելել ատոմային զենքը։ 12 միլիոն ստորագրություն հավաքվեց հինգ մեծ տերությունների միջև «խաղաղության պակտ» կնքելու դիմումի օգտին։ Լայն ճանաչում ստացավ երիտասարդ կոմունիստ Ռայմոնդա Դիենի խիզախ քայլը, որը պառկեց երկաթուղային գծերի վրա, որպեսզի կանգնեցներ ամերիկյան ռազմական նյութեր փոխադրող գնացքը։

Շարունակելով աշխատավորների միջազգային համերաշխության փառապանծ ավանդույթները, ՖԿԿ-ն վճռականորեն հանդես էր գալիս գաղութային պատերազմների, առաջին հերթին Վիետնամում ֆրանսիական գաղութարարների «կեղտոտ պատերազմի» դեմ։ Նա պաշտպանության լայն կամպանիա

[4] **М. Торез**, Избранные произведения, т. 2, стр. 165.

ծավալեց ֆրանսիական նավատորմի նավաստի Ա. Մարտենի օգտին, որը հրաժարվել էր մասնակցել Վիետնամում մղվող պատերազմին և դրա համար դատապարտվել էր բանտարկության։

Շատ մեծ նշանակություն ուներ ՖԿԿ-ի և Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի անդուլ պայքարն աշխատավարձի բարձրացման և աշխատանքի պայմանները բարելավելու համար։ Նրանց ճնշման տակ 1950 թ. օրենք ընդունվեց աշխատավարձի երաշխավորված մինիմումի մասին, որի համաձայն աշխատավարձը չպետք է իջներ ապրուստի համար պաշտոնական անհրաժեշտ մինիմումից։ Սակայն «սառը պատերազմի» իրադրությունը լուրջ դժվարություններ էր ստեղծում բանվորական շարժման համար։ Բանվոր դասակարգի պառակտումը, կառավարության ռեպրեսիաները, բուրժուական պրոպագանդայի լայն թափը, ԴԱԽ-ի ծրագրում հռչակված նպատակները չիրականանալու պատճառով առաջացած հիասթափության և հոգնածության զգացումը լրջորեն ազդեցին բնակչության լայն զանգվածների տրամադրության վրա։ 1945—1946 թթ. վերելքին փոխարինեց քաղաքական ակտիվության նվազումը։ Բանվոր դասակարգի բոլոր քաղաքական և արհմիութենական կազմակերպությունների թվաքանակը կրճատվեց։ 1947 թ. ՖԿԿ-ն ուներ 895 հազար անդամ, իսկ 1954 թ. 506 հազար։ Հատկապես խիստ թուլացավ սոցիալ-ռեֆորմիստների ազդեցությունը, որոնց քաղաքականությունը դժգոհություն առաջ բերեց առաջադեմ բանվորների շրջանում։ 1946-ից մինչև 1951 թվականը սոցիալիստական կուսակցությունը կորցրեց իր անդամների ավելի քան կեսը (353 հազարից իջավ մինչև 126 հազարի)։ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունից բանվորները հեռացան, մնացին մանրբուրժուական տարրերը։ 1951 թ. ՖՍԿ-ի անդամների 46 %-ը կազմում էին ծառայողները, արհեստավորները, առևտրականները և միայն 24 %-ն էին բանվորներ։

1951 թ. ընտրությունները

«Երրորդ ուժի» պարագլուխները հույս ունեին իշխանության գլուխ դանվելն օգտագործել այն բանի համար, որպեսզի իրենց հաղթանակն ապահովեն 1951 թ. ամռանը կայանալիք ազգային ժողովի ընտրություններում։ Ընտրությունների նախօրյակին նրանք հրապարակեցին ընտրական նոր օրենք, որով համամասնական ներկայացուցչության դեմոկրատական սկզբունքը փոխարինեցին մաժորիտար համակարգով («մաժորիտե»— մեծամասնություն բառից)։ Եթե համամասնական ներկայացուցչության համակարգը յուրաքանչյուր կուսակցությանն ապահովում էր դեպուտատական մանդատների այն քանակը, որը համամասնական էր հավաքված ձայների թվին, ապա ըստ մաժորիտար համակարգի, այն կուսակցությունը կամ կուսակցությունների բլոկը, որի օգտին քվարկել էր ընտրողների կեսից ավելին, ստանում էին տվյալ օկրուգի դեպուտատական բոլոր մանդատները։ Եթե ոչ մի կուսակցություն չէր հավաքում ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությունը, անցկացվում էր քվեարկության երկրորդ տուրը, որտեղ հաղթող էր ճանաչվում այն թեկնածուն, որն ավելի շատ ձայն էր ստացել, քան մյուսները։ Ընդ որում այն կուսակցությունները, որոնք առաջին տուրում հանդես էին գալիս իրար դեմ, կարող էին միավորվել՝ երկրորդ տուրում ձայներ շահելու համար։ Քվեարկության մաժորիտար համակարգը, որ գործում է Ֆրանսիայում մինչև օրս, ուղղված էր առաջին հերթին կոմունիստների դեմ։ Հավաքված ձայների քանակով գերազանցելով ամեն մի բուրժուական կուսակցության, կոմունիստական կուսակցությունն այնուամենայնիվ բավականին հաղվադեպ էր առաջին տուրում հասնում բացարձակ մեծամասնության։ Մյուս կուսակցությունների

հետ միավորվելու վրա նա հույս չէր կարող դնել, այն դեպքում, երբ բուրժուական կուսակցությունները, մեկը մյուսի հետ բլոկ կազմելով, հնարավորություն ունեին տեղերի մեծամասնություն նվաճել։ Ընտրական օրենքի հակակոմունիստական բնույթը ապացուցում էր Նրանով, որ Փարիզյան շրջանում, որտեղ կոմունիստներն ամենամեծ հավանականությամբ կարող էին ստանալ ձայների բացարձակ մեծամասնություն, կիրառվում էր ոչ թե մաժորիտար, այլ քվեարկության համամասնական համակարգը։

1951 թ. հունիսին կայացան ազգային ժողովի ընտրությունները։ Չնայած բուրժուական պրոպագանդայի կատաղի հարձակումներին, ՖԿԿ-ն հիմնականում պահպանեց իր դիրքերը։ Նա հավաքեց 5 միլիոնից ավելի ձայն (26,5 %) և նորից դուրս եկավ առաջին տեղը։ Երկրորդ տեղը զբաղեցրեց ՖԺՄ կուսակցությունը (ֆրանսիական ժողովրդի միավորում)։ 1947 թ. մունիցիպալ ընտրությունների համեմատությամբ կորցնելով ընտրողների մի մասը, նա այնուամենայնիվ ստացավ 4,1 միլիոն ձայն (21,7 %)։ «Անկախականները» և մյուս աջ խմբավորումները որոշ չափով առաջադիմեցին, նվաճելով ընտրողների 13,1 %-ը։ «Երրորդ ուժի» կուսակցությունները լուրջ պարտություն կրեցին։ ՄՌՊ-ն կորցրեց իր ընտրողների մոտ կեսը (ավելի քան 2 միլիոն ձայն), իսկ սոցիալիստները՝ 700 հազար։

Ընտրությունների արդյունքները վկայեցին կոմունիստական կուսակցության ուժի և «երրորդ ուժի» կոալիցիայի ձախողման մասին, սակայն քվեարկության մաժորիտար համակարգը խեղաթյուրեց այդ արդյունքները։ Կոմունիստական կուսակցությունը, որին պաշտպանեց ընտրողների ամենամեծ քանակը, ըստ ստացած մանդատների գրավեց երկրորդ տեղը (103 մանդատ) սոցիալիստներից հետո, որոնց ձայն տվեցին կրկնակի չափով քիչ ընտրողներ։ ՖԺՄ կուսակցությունը հավաքեց 900 հազարով քիչ ձայն, քան կոմունիստները, բայց ունեցավ 118 դեպուտատ, կազմելով պառլամենտական ամենախոշոր ֆրակցիան։

Ազգային ժողովում ուժերի հարաբերակցությունը էականորեն փոխվեց։ Այժմ ոչ թե երեք, այլ վեց քաղաքական խմբավորումներ (կոմունիստները, սոցիալիստները, ՄՌՊ-ն, ռադիկալները, «անկախականները» և ՖԺՄ-ն) ազգային ժողովում ունեին խոշոր ֆրակցիաներ, այդ պատճառով էլ ստացան «վեցկողմանի ժողով» մականունը։ Նրանցից ոչ մեկը բացարձակ մեծամասնություն չուներ և չէր կարող կազմել միակուսակցական կառավարություն։ Կոալիցիոն կառավարության ձևավորումը նույնպես հանդիպեց լուրջ դժվարությունների։ «Երրորդ ուժի» կոալիցիան մեծամասնություն չստացավ։ Նա չէր կարող հույս դնել ոչ կոմունիստական և ոչ էլ ՖԺՄ-ի պաշտպանության վրա։ Վերջինս ընդհանրապես հրաժարվեց բլոկ կազմել որևէ քաղաքական կուսակցության հետ։

Բուն «երրորդ ուժի» կոալիցիայի ներսում գոյություն ունեին լուրջ տարաձայնություններ։ Ռադիկալները (ինչպես և «անկախականները») հանդես էին գալիս էկոնոմիկայում պետական միջամտության դեմ, իսկ սոցիալիստները և ՄՌՊ-ն պաշտպանում էին «դիրիժիզմի» սկզբունքը, այսինքն՝ արտադրության կառավարմանը պետության մասնակցությունը («դիրիժե»— կառավարել բառից)։ Իր հերթին ՄՌՊ-ն սոցիալիստների և ռադիկալների հետ տարակարծիք էր աշխարհիկ կրթության հարցում, որը երկարատև ավանդույթների շնորհիվ ուներ քաղաքական բավականին կարևոր նշանակություն։ ՄՌՊ-ն պահանջում էր, որպեսզի պետությունը ֆինանսավորեր մասնավոր կրոնական դպրոցները, այն դեպքում, երբ սոցիալիստները և ռադիկալները պաշտպանում էին կրթության աշխարհիկ բնույթը։

Այս բոլոր հակասությունները կանխորոշեցին ամեն մի հնարավոր կառավարության անկայունությունը և ի վերջո հասցրին «երրորդ ուժի» կոալիցիայի քայքայմանը։

Ի նշան կրոնական դպրոցներին տրվելիք նպաստների օրենքի դեմ բողոքի, 1951 թ. սեպտեմբերին սոցիալիստները դուրս եկան կառավարությունից։ Այդ ժամանակից սկսած սոցիալիստական կուսակցությունն անցավ օպոզիցիայի։ Ֆրանսիայի քաղաքական կյանքի առանցքը տեղափոխվեց աջ։ Հաջորդ վեց կառավարությունները (մինչև 1956 թ. ընտրությունները) սովորաբար ձևավորվում էին աջերի և կենտրոնի, այսինքն՝ ՄՌՊ-ի, ռադիկալների, «անկախականների» և նրանց հետ կապված խմբերի կոալիցիայի հիման վրա։

Պայմար Գերմանիայի վերազինման դեմ

Կենսագործելով «Պլևենի պլանը», նախկին վիշիական, «անկախականների» պարագլուխ Ա. Պինեի գլխավորած կառավարությունը 1952 թ. մայիսին ստորագրեց եվրոպական պաշտպանական խմբակցության (ԵՊԽ) հիմնադրման վերաբերյալ պայմանագիրը։ Պայմանագիրը նախատեսում էր ստեղծել վեց պետությունների՝ «Շումանի պլանի» մասնակիցների, միասնական եվրոպական բանակ, որը պետք է ունենար հատուկ զինվորական հագուստ, միջազգային սպայական կազմ և գեներալիտետ։ Զորքերի տեղաբաշխումը, կոմպլեկտավորումը և ուսուցումը մտնում էր ԵՊԽ-ի ղեկավար մարմինների իրավասության մեջ։ Օպերատիվության տեսակետից եվրոպական բանակը ենթարկվում էր Հյուսիսատլանտյան պակտի մասնակիցների զորքերի գլխավոր հրամանատարին։

Եվրոպական պաշտպանական խմբավորման վերաբերյալ պայմանագիրը, որ սպառնալիքի տակ էր դնում Ֆրանսիայի անկախությունը, ֆրանսիական ժողովրդի լայն խավերում լուրջ դժգոհություն առաջ բերեց։ ՖԿԿ-ն պահանջեց չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը։ Բուրժուական լագերում առաջացավ ազդեցիկ օպոզիցիա, որը հանդես եկավ նրա վավերացման դեմ։ «Անկախականների» մի մասը երկյուղ էր կրում, որ ֆրանսիական բանակի՝ ԵՊԽ-ի վերահսկողությանն անցնելն իր հետ կբերեր ֆրանսիական իմպերիալիզմի դիրքերի թուլացում և գաղութների կորուստ։ Որոշ սոցիալիստների և ռադիկալների մոտ տագնապ առաջ բերեց Գերմանիայի վերազինման հեռանկարը, որը մեկ սերնդի կյանքի ընթացքում երեք անգամ պատերազմել է Ֆրանսիայի դեմ։ Եվրոպական պաշտպանական խմբակցության դեմ հանդես եկավ ՖԺՄ-ի կուսակցությունը և նրա ղեկավար գեներալ դը Գոլը, որը գրտնում էր, որ ԵՊԽ-ի ստեղծումը Ֆրանսիային կզրկի ազգային բանակից։ 1954 թ. օգոստոսին ազգային ժողովը մերժեց Եվրոպական պաշտպանական խմբակցության վերաբերյալ պայմանագիրը։ Սակայն ֆրանսիական կառավարող շրջանները չհրաժարվեցին Արևմտյան Գերմանիայի վերազինման պլաններից։ Նրանք սկսեցին ԳՖՀ-ի վերազինման և ՆԱՏՕ-ի հետ նրա հաղորդակցման այլ ձև փնտրել։ Եվրոպական բանակի գաղափարը փոխարինվեց ՆԱՏՕ-ի հետ կապված արևմտաեվրոպական երկրների բանակների կոալիցիայով։ 1954 թ. դեկտեմբերին ազգային ժողովը ձայների աննշան մեծամասնությամբ հաստատեց կառավարության նախապատրաստած Փարիզյան համաձայնագիրը, ըստ որի Ֆրանսիան դառնում էր վեց պետությունների՝ Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի և հատուկ պայմաններով Անգլիայի բանակների կոալիցիայի մասնակից։ Յուրքանչյուր երկրի բանակի նկատմամբ վերահսկողությունը մնում էր նրա կառավարության ձեռքում։ Սակայն բոլոր երկրները պարտավորվում էին համագործակցել Հյուսիսատ-

լանտյան պակտի կազմակերպության հետ, իսկ Արևմտյան Գերմանիան իրավունք էր ստանում ստեղծել ինքնուրույն բանակ և նրան թույլ էր տրվում մտնելու Հյուսիսատլանտյան բլոկի մեջ։

Քանի որ Փարիզյան համաձայնագրերը նշանակում էին Ֆրանսիայի մղտնելը հակասովետական խմբավորման մեջ, Սովետական Միությունը ստիպված էր եզրակացնել, որ 1944 թ. դեկտեմբերի 10-ի ֆրանս-սովետական դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիրն անհամատեղելի է ստեղծված իրադրության հետ։ Ուստի ՍՍՀՄ-ը չեղյալ հայտարարեց այդ պայմանագիրը։ Ֆրանսիայի արտաքին քաղաքական դիրքերը լրջորեն թուլացան։

Ֆրանսիական գաղութային կայսրության քայքայման սկիզբը

Շուտով, երկրի ազատագրումից հետո, իմպերիալիստները Ֆրանսիային ներքաշեցին երկարատև գաղութային պատերազմների մեջ։ 1946 թ. դեկտեմբերին Հընդկաչինում Բլյումի կառավարության սանձազերծած «կեղտոտ պատերազմի» 8 տարվա ընթացքում Ֆրանսիան կորցրեց 320 հազար զինվոր ու սպա (դա ավելի շատ էր, քան Ֆրանսիան կորցրել էր երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում)։ Նրա ռազմական ծախսերը տասնյակ անգամով գերազանցում էին Հնդկաչինում նախապատերազմյան ֆրանսիական կապիտալ ներդրումներին։ Այնուամենայնիվ, գաղութարարները լուրջ պարտություն կրեցին։ 1954 թ. սկզբին վիետնամական ժողովրդական բանակն անցավ հարձակման և ֆրանսիական զորքերին ծանր պարտության մատնեց Դիեն-Բիեն-ֆուի շրջանում։ «Անկախականների» պարագլուխ Ժ. Լանիելի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ։ Ֆրանսիայի պրեմիեր մինիստր դարձավ ձախ ռադիկալ Պ. Մենդես-Ֆրանսը, որը հայտարարեց Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության հետ բանակցություններ սկսելու իր մտադրության մասին։

1954 թ. հուլիսին ՍՍՀՄ-ի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Չինաստանի, Ֆրանսիայի և Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությունում Մենդես-Ֆրանսի կառավարությունը համաձայնագիր ստորագրեց Հնդկաչինում պատերազմը դադարեցնելու մասին։ 1954—1955 թթ. ընթացքում Ֆրանսիան ստիպված էր ճանաչել նախկին ֆրանսիական Հնդկաչինի երկրների՝ Վիետնամի, Լաոսի, Կամպուչիայի անկախությունը, և աստիճանաբար իր զորքերը դուրս բերեց այնտեղից։

Ազատագրման համար պայքար ծավալվեց Ֆրանսիայի աֆրիկյան գաղութներում, ամենից առաջ Ալժիրում, Թունիսում և Մարոկկոյում։ Թունիսում և Մարոկկոյում բնակչությունը անկախություն էր պահանջում։ 1954 թ. նոյեմբերի 1-ին Ալժիրում սկսվեց զինված ապստամբություն, որը վերածվեց գաղութարարների դեմ պարտիզանական պատերազմի։ Հաշվի առնելով ազատագրական շարժման թափը, Մենդես-Ֆրանսի կառավարությունը դիմեց մասնակի զիջումների։ 1954 թ. հուլիսին նա հայտարարեց Թունիսին «ներքին ինքնավարություն» տալու մասին, իսկ 1955 թ. նոյեմբերին համաձայնեց ճանաչել Մարոկկոյի ինքնավար կառավարությունը։ Ֆրանսիական գաղութային կայսրությունը քայքայվեց։

Զորրորդ հանրապետության ճգնաժամը

Ֆրանսիական գաղութային սիստեմի քայքայման ընկրկվելը, Ֆրանսիայի միջազգային հեղինակության ընկնելը, ԱՄՆ-ից նրա կախումը սուր քննադատություն առաջ բերեցին բուրժուազիայի ազգայնականորեն տրամադրված խմբերի շրջանում։ Ժողովրդական զանգվածների դրությունը լրջորեն բարելավելու կառավարող կուսակցությունների անկարողությունը, պաշտոնական հայտարարությունների և ռեալ գործերի միջև հսկայական խզումը գցում էին կառավարման պառլամենտական համակարգի հեղինակությունը։ Բանվորները և ծառայողները դժգոհ էին աշխատանքի պայմաններից և աշխատավարձից, որի բարձրացումն անփոփոխ կերպով ետ էր մնում գների աճից։ 1952 թ. մոտերքը, նույնիսկ պաշտոնական տվյալներով, ապրանքների մանրածախ գները 23 անգամ գերազանցումի էին նախապատերազմյան մակարդակը, այն դեպքում, երբ որակյալ բանվորի աշխատավարձն ավելացել էր միայն 15 անգամ։ Գյուղացիները տառապում էին բարձր հարկերից և իրենց արտադրանքի գնման ցածր գներից։ Մանր առևտրականները և արհեստավորները պահանջում էին հարկային արտոնություններ տալ, ընդարձակել սոցիալական ապահովության համակարգը։

1953 թ. դժգոհությունը միաձուլվեց աշխատավորների զանգվածային շարժման մեջ։ Թոշակային տարիքն ավելացնելու և մանր ծառայողների աշխատանքի պայմանները փոխելու կառավարության քաղաքականությանը բանվորները և ծառայողները պատասխանեցին գործադուլներով, որոնց մասնակցեց մոտ 4 միլիոն մարդ։

Նորից բարձրացավ գյուղացիական զանգվածային շարժումը։ Գյուղացիները պահանջում էին իջեցնել հարկերը և սահմանել գյուղատնտեսական մթերքների գնման արդարացի գներ։ Որպեսզի իրենց պահանջների վրա ուշադրություն գրավեն, նրանք կազմակերպում էին միտինգներ և ցույցեր, ճանապարհներին արգելափակոցներ էին դնում, կանգնեցնում էին տրանսպորտի շարժումը։ Ֆրանսիայի հարավում և կենտրոնական մասում հանդես եկան խանութպանները և արհեստավորները՝ նախկին վիշիական, գրենական պիտույքների խանութպան Պ. Պուժադի գլխավորությամբ։ Այդ շարժումը, որ արտացոլում էր կառավարության քաղաքականության դեմ մանր բուրժուազիայի բողոքը, օգտագործեցին աջ ուժերը։ Պ. Պուժադը և նրա համախոհները հարձակվում էին բոլոր քաղաքական կուսակցությունների, բայց հատկապես կատաղորեն՝ կոմունիստների վրա։ Նրանք պահանջում էին ցրել պառլամենտը, սահմանափակել դեմոկրատական ազատությունները, անխնա ճնշել գաղութային ժողովուրդների շարժումը։

Բուրժուական հիմնական կուսակցություններն այդ ժամանակ խոր ճգնաժամ էին ապրում։ ՖԺՄ կուսակցությունը, որ այդպես էլ չկարողացավ իշխանության գլուխ անցնել, արագորեն կորցնում էր իր ազդեցությունը։ 1953 թ. գարնանային մունիցիպալ ընտրություններում նրա ընտրողների թվաքանակը կրճատվեց 3—4 անգամ։ Դրանից հետո գեներալ դը Գոլը վերացրեց ՖԺՄ-ի պառլամենտական ֆրակցիան և հայտարարեց, որ հրաժարվում է քաղաքական գործունեությունից։ 1953 թ. ՖԺՄ-ն դադարեցրեց իր գոյությունը։ Արևմտաեվրոպական երկրների միավորման և Արևմտյան Գերմանիայի վերազինման հարցի կապակցությամբ սկսված պայքարի պրոցեսում բոլոր մնացած բուրժուական կուսակցությունները բաժանվեցին «եվրոպականների» (Արևմտյան Եվրոպայի պետությունների առավելագույնս սերտորեն միավորվելու կողմնակիցներ) և «ազգայնականների», որոնք հանդես էին գալիս նրման ձուլման դեմ։ Ուժեղացան տարաձայնությունները գաղութային հարցի կապակցությամբ։ Բուրժուազիայի ամենառեակցիոն, ծայրահեղ գաղութարարական շրջանները դժգոհություն էին արտահայտում Հնդկաչինում պատերազմը դադարեցնելու և Թունիսում ու Մարոկկոյում ազգային-ազատագրական շարժմանը զիջումներ անելու համար։ 1955 թ. տեղի ունեցավ Ֆրանսիայի հնագույն քաղաքական կուսակցություն՝ ռադիկալների պառակտումը։ Նրա ձախ թևը, որ հայտնի չափով արտացոլում էր բնակչության միջին խավերի դժգոհությունը, գլխավորում էր Պ. Մենդես-Ֆրանսը։ Ռադիկալիզմի հայտնի գործիչներ Է. Էրիոյի և Է. Դալադիեի պաշտպանությամբ նա վերցրեց

և ՄՌՊ-ի, և «անկախականների» հետ կապերը խզելու կուրս, այն դեպքում, երբ ռադիկալների աջ թևը հանդես եկավ նրանց հետ դաշնակցելու օգտին։

Աշխատավորների զանգվածային դժգոհության ազդեցությամբ և կառավարող լագերում եղած տարաձայնությունների պատճառով փոխվեց սոցիալիստական կուսակցության քաղաքականությունը։ 1955 թ. ամռանը կայացած Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության 47-րդ համագումարը արտահայտվեց ռադիկալների հետ մերձեցման օգտին և որոշում ընդունեց ՄՌՊ-ի և «անկախականների» հետ դաշինքի անթույլատրելիության մասին։ Սոցիալիստական կուսակցության ստորին կազմակերպությունների շրջանում նկատվեց կոմունիստների հետ դաշինքի ձգտումը։ Կառավարող լագերում լուրջ քաղաքական ճգնաժամի կարևորագույն արտահայտությունն էր ազգային ժողովի ցրումը և 1956 թ. հունվարին ժամկետից շուտ պառլամենտական ընտրություններ անցկացնելը։

Հանրապետական ճակատի կառավարությունը

1956 թ. ընտրությունների հետևանքով ազգային ժողովում առաջացավ երեք գլխավոր խմբավորում. կոմունիստները, «հանրապետական ճակատը» (սոցիալիստական կուսակցության և ձախ ռադիկալների միավորումը) և ՄՌՊ-ի հետ «անկախականների» բլոկը։ Կոմունիստական կուսակցության հավաքած ձայների քանակը ավելացավ և հասավ մինչև 5,6 միլիոնի, նա նորից գրավեց առաջին տեղը, ստանալով 150 մանդատ։

Քանի որ ազգային ժողովում խմբավորումներից ոչ մեկը բացարձակ մեծամասնություն չուներ, կայուն կառավարություն կազմելու միակ հնարավորությունը կոմունիստական կուսակցության և հանրապետական ճակատի դաշինք կազմելն էր։ Կոմունիստական կուսակցությունը սոցիալիստներին և ռադիկալներին առաջարկեց համատեղ քննարկել կառավարություն կազմելու հարցը։ Սակայն հանրապետական ճակատի ղեկավարները հրաժարվեցին կոմկուսի հետ համագործակցելուց և դրանով իսկ կանխորոշեցին Չորրորդ հանրապետության բոլոր հաջորդ կառավարությունների խրոնիկական անկայունությունը։

1956 թ. հունվարին սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Գի Մոլեն կազմեց հանրապետական ճակատի կառավարություն, որը կազմված էր սոցիալիստներից և ձախ ռադիկալներից։ Տասը տարվա ընդմիջումից հետո վերադառնալով իշխանության գլուխ, սոցիալիստները խոստացան խաղաղություն հաստատել Ալժիրում, բարելավել ընտրական համակարգը, ավելացնել թոշակների և ընտանիքների նպաստների չափերը, երկարացնել վճարովի արձակուրդների ժամկետները, պայքարել դպրոցական կրթության աշխարհիկ բնույթի համար, հակադրել ինֆլյացիային։ Որպեսզի պայմաններ ստեղծվեին այդ ծրագրի իրականացմանը, կոմունիստական կուսակցությունը քվեարկեց Գի Մոլեի կառավարության օգտին, որի շնորհիվ նա ազգային ժողովում ստացավ ձայների մեծամասնություն։ 1956 թվականի առաջին ամիսներին կառավարությունն իրականացրեց իր ծրագրի մի մասը։ Վարձատրվող արձակուրդի տևողությունը հասցվեց մինչև երեք շաբաթվա, բարձրացավ որոշ կատեգորիաների բանվորների և ծառայողների աշխատավարձը, ավելացվեցին թոշակները և ընտանիքների նպաստները։ Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունն արտահայտվեց միջազգային լարվածության մեղմացման և Սովետական Միության հետ բանակցությունների օգտին։ 1956 թ. մարտին Գի Մոլեի կառավարությունը ճանաչեց Թունիսի և Մարոկկոյի անկախությունը, հունիսին հայտարարեց սև Աֆրիկայի ֆրանսիական գաղութային երկրների հիմնական բնակիչներին տեղական ինքնավարություն տալու մասին։

Այնուամենայնիվ, հանրապետական ճակատի քաղաքականության հիմնական կուրսը շատ հեռու էր ժողովրդի ակնկալիքները բավարարելուց։ Սոցիալական ռեֆորմների պլանը, որը նախատեսում էր, մասնավորապես, պետության կողմից բուժման ծախսերի վճարումը, չկենսագործվեց։ Աշխատավարձը ետ էր մնում գների աճից։ Պահպանվեցին կրոնական դպրոցներին տրվող պետական դրամական նպաստները։ Ֆրանսիան մնաց Հյուսիսատլանտյան պակտի անդամ, շարունակեց Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական պետությունների միավորման գիծը։ 1956 թ. հոկտեմբերին Գի Մոլեի կառավարությունը ԳՖՀ-ին հանձնեց Սաարի մարզը։ 1957 թ. մարտին Ֆրանսիան «Շումանի պլանը» վաղօրոք ընդունած հինգ մյուս երկրների հետ, Հռոմում ստորագրեց «Ընդհանուր շուկա» կազմակերպելու համաձայնագիրը։ Համաձայնագրի մասնակիցները պարտավորվեցին միմյանց հետ առևտրում աստիճանաբար վերացնել մաքսային արգելքները, վերացնել տնտեսական սահմանները և կազմակերպել ապրանքների, կապիտալների և աշխատուժի ազատ շրջանառության միասնական գոտի։ Մայրահեղ գաղութարարների ճնշման տակ Գի Մոլեի կառավարությունը հրաժարվեց նախատեսված ռեֆորմներից և վերադարձավ ալժիրյան ազատագրական շարժումը ռազմական միջոցներով ճնշելու քաղաքականությանը։ 1956 թ. աշնանը Ֆրանսիան Անգլիայի և Իսրայելի հետ մասնակցեց Եգիպտոսի դեմ սկսված ագրեսիային, որը տեղի ունեցավ Սուեզի ջրանցքը եգիպտական կառավարության կողմից ազգայնացնելու պատճառով։

Իր իսկ ծրագրից Գի Մոլեի հրաժարվելը հասցրեց հանրապետական ճակատի քայքայմանը։ Կոմունիստական կուսակցությունը դադարեց կառավարությանը պաշտպանելուց։ Ձախ ռադիկալների խումբը Մենդես-Ֆրանսի գլխավորությամբ հանդես եկավ Գի Մոլեի ալժիրյան քաղաքականության դեմ և դուրս եկավ կառավարությունից։ Սոցիալիստական կուսակցության նշանավոր գործիչները (Ա. Ֆիլիպը, Դ. Մայերը, Ռ. Վերդիեն) դատապարտեցին Ալժիրում խաղաղության հասնելուց կառավարության հրաժարվելը։ Որոշ ժամանակ Գի Մոլեի կառավարությունը իշխանության գլուխ էր մնում «անկախականների» պաշտպանության շնորհիվ, որոնք հավանություն էին տալիս նրա քաղաքականության ռեակցիոն տեսակետներին, սակայն 1957 թ. մայիսին նա ստիպված էր հրաժարական տալ։

Պատերազմը Ալժիրում։ Չորրորդ հանրապետության անկումը

Հանրապետական ճակատի կառավարությունը և նրան հաջորդած աջ ռադիկալների երկու կարճատև կաբինետները չկարողացան լուծել Ֆրանսիայի առջև կանգնած պրոբլեմները։ Ֆրանսիացիները հոգնել էին մինիստրական հաճախակի փոփոխություններից, կյանքում չիրականացված մեծադղորդ խոստումներից, կորցրել էին հավատն այն բանի նկատմամբ, որ ձախ խմբավորումները կարող են ապահովել երկրի կայուն ղեկավարությունը։ Խոշոր մոնոպոլիստական բուրժուազիան իր հերթին դժգոհ էր կառավարությունից։ Նրան գրգռում էր քաղաքական կյանքում կայունության բացակայությունը, անհանգստացնում էր ՖԿԿ-ի աճող ազդեցությունը, գաղութներում ազգային-ազատագրական շարժման թափը։ Խոշոր բուրժուազիայի նշանակալի մասը անհրաժեշտ էր գտնում սահմանափակել դեմոկրատական ազատությունները և ստեղծել «ուժեղ» կառավարություն, որը կարողանար հաշիվ տեսնել բանվորական շարժման հետ և մնացած գաղութները պահել Ֆրանսիայի տիրապետության տակ։ Երկրում սկսվեց գեներալ դը Գոլին իշխանության գլուխ վերադարձնելու կամպանիան, որը միշտ հանդես էր գալիս «ուժեղ իշխանության» հաստատման օգտին և խիստ քննադատում էր Չորրորդ հանրապետության քաղաքական սիստեմը։ Այդ

կամպանիան արձագանք էր գտնում բնակչության այն զանգվածների շրջանում, որոնց համար դը Գոլի անունը խորհրդանշում էր ամենից առաջ Դիմադրության շարժման հետ կապը։ Դը Գոլն ուներ անձնական մեծ հեղինակություն, ազգային շահերի համար մարտնչողի և Գերմանիայի վերազինման հակառակորդի համբավ։

Իրադարձությունների ընթացքի վրա հսկայական ազդեցություն գործեց Ալժիրում մղվող պատերազմը, որն, ըստ Մ. Թորեզի կարծիքի, դարձավ «խոց երկրի մարմնի վրա»։ Ջնայած ֆրանսիական իմպերիալիստները հաշտվեցին Հնդկաչինի, Սիրիայի, Լիբանանի, Թունիսի, Մարոկկոյի անկախության հետ, նրանք համառորեն ձգտում էին ճնշել ազատագրական շարժումն Ալժիրում։ Նրանց համառությունը շատ բանով բացատրվում էր նրանով, որ Ալժիրը հատուկ տեղ էր գրավում ֆրանսիական գաղութային կայսրության սիստեմում։ Ալժիրում ավելի քան հարյուրամյա գաղութացման ընթացքում առաջացել էր եվրոպացիների նշանակալի խավ։ Ալժիրի 9 միլիոն բնակիչներից եվրոպացիները կազմում էին մոտ 1 միլիոն մարդ, ընդ որում նրանց ձեռքում էր գտնվում երկրի կառավարումը։ Իրավականորեն Ալժիրը համարվում էր ոչ գաղութ և ոչ էլ պրոտեկտորատ, ինչպիսին էին Հնդկաչինը կամ Թունիսը, այլ «անդրծովյան դեպարտամենտ»։ Տասնամյակներով եվրոպական գաղութարարների գիտակցության մեջ արմատացել էր այն մտայնությունը, թե նրանք և ոչ թե արաբներն են ներկայացնում Ալժիրը։ Ֆրանսիական պլանտատորները, արդյունաբերողները, առևտրականները, որ տիրում էին Ալժիրի լավագույն հողերին և վերահսկում ամբողջ էկոնոմիկան, կտրականապես ժխտում էին ալժիրյան ազգի բուն գոյությունը։ Նրանք հավատացնում էին, թե «Ալժիրը՝ Ֆրանսիան է», իսկ ալժիրյան ժողովրդի ազատագրական շարժումը՝ սոսկ միայն խռովություն, որ դրդվել է դրսից։ Հենց եվրոպական բնակչության այդ վերնախավը, որի շահերը հարվածի տակ կարող էին գտնվել Ալժիրին անկախություն տալու դեպքում, կազմում էր ալժիրյան ծայրահեղ գաղութարարների խմբավորման հենարանը, խմբավորում, որ ամուր դիրքեր ուներ ոչ միայն Ալժիրում, այլև Ֆրանսիայում։

Ծայրահեղ գաղութարարների պարագլուխներն Ալժիրում ստեղծեցին հասարակական փրկության ինքնագլուխ կոմիտեներ, որոնք փաստորեն գործում էին իբրև իշխանության մարմիններ, հաշվի չառնելով կենտրոնական կառավարությանը։ Ալժիրում ազատագրական շարժումը ճնշող ֆրանսիական բանակի վերնախավի լուռ հավանությամբ, նրանք հայտարարեցին, թե չեն ենթարկվի կառավարությանը, եթե նա համաձայնի բանակցություններ վարել Ալժիրի անկախության վերաբերյալ։ 1958 թ. գարնանը, երբ Ֆրանսիայում սկսվեց կառավարական հերթական ճգնաժամը, ծայրահեղ գաղութարարներն անցան գործողությունների։ Պնդելով, թե ֆրանսիական կառավարությունը պատրաստ է «հրաժարվել Ալժիրից» (այսինքն Ալժիրին անկախություն տալ), նրանք խռովություն բարձրացրին։ 1958 թ. մայիսի 13-ին հասարակական փրկության ծայրահեղ գաղութատիրական կոմիտեներն Ալժիրում զանգվածային ցույց կազմակերպեցին։ Բանակի հրամանատարական կազմը միացավ ցուցարարներին։ Ալժիրում ռազմական հրամանատարությունը և հասարակական փրկության կոմիտեները հայտարարեցին, թե չեն ենթարկվի կառավարությանը, քանի դեռ գեներալ դը Գոլը չի վերադառնա իշխանության գլուխ։ 1958 թ. մայիսի 15-ին դը Գոլը հայտարարեց, թե «պատրաստ է հանրապետության իշխանությունը վերցնել իր ձեռքը», պայմանով, որ իրեն տրվեն արտակարգ լիազորություններ և փոխվի 1946 թ. սահմանադրությունը։

Ալժիրում խռովություն սկսվելու հենց առաջին լուրն ստացվելուց հետո

կոմունիստական կուսակցությունը աշխատավորներին գործադուլների և ցույցերի կոչ արեց։ Նա նորից բոլոր ձախ ուժերի գործողությունների միասնության կոչ արեց, վճռականորեն հանդես եկավ սահմանադրության և դեմոկրատական ազատությունների պաշտպանությամբ։ Սակայն ոչ սոցիալիստները, ոչ էլ մյուս ձախ քաղաքական խմբավորումները չպաշտպանեցին կոմկուսին։ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության պարագլուխները պնդում էին, թե իբր կոմունիստների հետ միասնությունն անխուսափելիորեն կբերի հասցնի խռովարարների հետ քաղաքացիական պատերազմի, մինչդեռ իշխանությունը դը Գոլին հանձնելը Ֆրանսիային կազատի այդ վիճակից։ Սոցիալիստական կուսակցությունը, «Ֆորս ուվրիերը», քրիստոնեական արհմիությունները հրաժարվեցին մասնակցել կոմունիստական կուսակցության և Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի կազմակերպած բողոքի գործադուլին։

1958 թ.. հունիսի 1-ին ազգային ժողովը, հակառակ կոմունիստների առարկություններին, դը Գոլին նշանակեց Ֆրանսիայի պրեմիեր մինիստր։ Հաջորդ օրը դը Գոլի կառավարությունը, որի կազմի մեջ մտան բուրժուական բոլոր գլխավոր կուսակցությունների ներկայացուցիչները և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության պարագլուխ Գի Մոլեն, արտակարգ լիազորություններ և նոր սահմանադրության նախագիծ մշակելու թույլտվություն ստացավ։ Դրանից հետո ազգային ժողովը ցրվեց և այլևս չհավաքվեց։ Չորրորդ հանրապետությունը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1958 թ. սահմանադրությունը

1958 թ. սեպտեմբերի 4-ին գեներալ դը Գոլը հրապարակեց նոր սահմանադրության նախագիծը, որն ի հաշիվ պառլամենտի և մյուս ներկայացուցչական հիմնարկությունների իրավունքների, զգալիորեն ուժեղացնում էր գործադիր իշխանությունը։ Նրանում միայն ընդհանուր ձևով հաստատվում էին 1946 թ. սահմանադրության ներածական մասում տրված դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները։ Բացառիկ լայն լիազորություններ էին տրվում Ֆրանսիայի պրեզիդենտին, որը հռչակվում էր որպես հանրապետության ազգային անկախության և տարածքային ամբողջականության «երաշխավոր անձ»։ Պրեզիդենտն ընտրվում է 7 տարով, անուղղակի քվեարկության բարդ համակարգով։ Նա հանդիսանում է պետության ղեկավարը և գերագույն գլխավոր հրամանատարը, ղեկավարում է կառավարությունը, նշանակում պրեմիեր մինիստրին և մինիստրներին, ինչպես նաև բոլոր զինվորական և քաղաքացիական բարձրագույն պաշտոնատար անձանց, ստորագրում է բոլոր օրենքները։ Նա ունի ամեն օրենք պառլամենտին կրկնակի քննարկման համար ետ վերադարձնելու կամ շրջանցելով պառլամենտը, օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու իրավունք։ Պառլամենտի հետ կոնֆլիկտի դեպքում պրեզիդենտը կարող է ցրել ազգային ժողովը և նոր ընտրություններ անցկացնել։ 16-րդ հոդվածը պրեզիդենտին հնարավորություն է տալիս արտակարգ դրություն հայտարարել և իր ձեռքը վերցնել ամբողջ իշխանությունը, եթե նա գտնի, որ «պետական իշխանության սահմանադրական մարմինների կանոնավոր գործունեությունը խախտվել է»։

Օրենսդիր իշխանությունն սկզբունքորեն պատկանում է պառլամենտին, որը բաղկացած է երկու պալատից՝ ազգային ժողովից, որն ընտրվում է ուղղակի ընդհանուր քվեարկությամբ, և սենատից, որն ընտրվում է անուղղակի

քվեարկությամբ։ Պառլամենտի իրավունքներն էականորեն սահմանափակված են։ Ոչ ազգային ժողովը, ոչ էլ սենատը չեն կարող փոխել պրեզիդենտին։ Նրանք կարող են հասնել կառավարության հրաժարական տալուն, բայց դրա համար պահանջվում է մտցնել հատուկ «պարսավանքի բանաձև», որի օգտին պետք է քվեարկի դեպուտատների բացարձակ մեծամասնությունը (ընդ որում ձեռնպահ կամ բացակայող դեպուտատները մեխանիկորեն համարվում են կառավարության օգտին քվեարկողներ)։

Պարսավանքի բանաձև ընդունվելու դեպքում պրեզիդենտը կարող է արձակել պառլամենտը և նշանակել նոր ընտրություններ։

Կոմունիստական կուսակցությունը կոչ արեց դեմ քվեարկել սահմանադրության նախագծին։ Մնացած քաղաքական կուսակցությունները, բացառությամբ պուժադիստների, որոնք կառավարական նախագիծը համարեցին շափից ավելի լիբերալ, և մասամբ սոցիալիստների, պաշտպանեցին կառավարությանը։ 1958 թ. սեպտեմբերի 28-ին կայացած հանրաքվեի ժամանակ ընտրողների 79 %-ը արտահայտվեց նոր սահմանադրության օգտին։ Հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ երկրում կատարվել էին լուրջ փոփոխություններ։ Միլիոնավոր ընտրողներ, որ 1956 թ. ձայն էին տվել ձախ կուսակցությունների օգտին, այս անգամ վստահություն հայտնեցին գեներալ դը Գոլին։ Նման շրջադարձի գլխավոր պատճառը քաղաքական սիստեմի և Չորրորդ հանրապետության պրակտիկ գործունեության նկատմամբ աշխատավորների հուսախաբությունն էր։ Հսկայական նշանակություն ուներ ընտրողներին քաղաքացիական պատերազմի սպառնալիքով վախեցնելը, որին լայնորեն դիմում էին բուրժուական բոլոր կուսակցությունները, ինչպես նաև սոցիալիստների պարագլուխները։ Շատ ֆրանսիացիներ, հիշելով, որ դը Գոլը կարևոր դեր էր խաղացել Դիմադրության շարժման մեջ և արտահայտվում է Գերմանիայի վերազինման դեմ, գտնում էին, որ միայն նրա կառավարությունը կարող է Ֆրանսիային դուրս բերել փակուղուց, Ալժիրում հասնել խաղաղության, պաշտպանել Ֆրանսիայի ազգային շահերը։

Այսպիսով, դը Գոլին պաշտպանում էր տարբեր դասակարգային ուժերի լայն կոալիցիան, որի մասնակիցները հաճախ ղեկավարվում էին հակադիր մոտիվներով։

Անձնական իշխանության ռեժիմը և նրա դասակարգային էությունը

1958 թ. սահմանադրության հաստատումն իր հետ բերեց մի շարք նոր ընտրություններ, որոնք անհրաժեշտ էին բարձրագույն պետական մարմինների կազմավորման համար։ 1958 թ. նոյեմբերին կայացան ազգային ժողովի ընտրությունները։ Աջ լագերն այդ ընտրություններում ներկայացնում էր «Դաշինք հանուն նոր հանրապետության պաշտպանության» քաղաքական նոր կուսակցությունը (ՅՈՒՆՌ)։ Նա հիմնադրվել էր 1958 թ. հոկտեմբերի 1-ին, ՖԺՄ-ի նախկին ղեկավարներ Ժ. Սուստելի, Մ. Դեբրեի, Ժ. Շաբան-Դելմասի և դը Գոլի մյուս կողմնակիցների կողմից։ Ինքը դը Գոլը, ցանկանալով գրավել «անաչառ դատավորի» դիրք, որն, իբրև թե, վեր է կանգնած կուսակցություններից, դասակարգերից, հրաժարվեց ՅՈՒՆՌ-ի պաշտոնական ղեկավարությունից։ Այնուամենայնիվ ՅՈՒՆՌ-ի պարագլուխները շարունակում էին դը Գոլին համարել իրենց առաջնորդը և իրենց գլխավոր նպատակը հռչակեցին նրա քաղաքականության պաշտպանությունը։ Իր դասակարգային էությամբ ՅՈՒՆՌ-ն բուրժուական աջ կուսակցություն էր, որն արտահայտում էր մոնոպոլիստական կապիտալի վերնախավի շահերը։ Սակայն, դատապարտելով Չորրորդ հանրապետությունը և հռչակելով «սոցիալական ռեֆորմների» անհրաժեշտությունը, որ իրականացնում

է «ուժեղ պետությունը» վերևից, նա հույս ուներ իր կողմը գրավել բնակչության լայն խավերին։

Ձախ ուժերի պառակտումը և ընտրողների մի մասի աջ թեքվելն ազդեցին ընտրությունների արդյունքների վրա։ Առաջին տեղը դուրս եկավ ՅՈՒՆՌ-ն, որը քվեարկության երկրորդ տուրում հավաքելով 5,2 միլիոն ձայն, պառլամենտում ստացավ («անկախականների» հետ) բացարձակ մեծամասնություն։

Մյուս աջ կուսակցությունները, որոնք պաշտպանում էին դը Գոլին, ամենից առաջ «անկախականները», համեմատած 1956 թ. հետ, ավելացրին իրենց ընտրողների քանակը համարյա 1 միլիոնով։ Միայն պուժադիստները, որոնք քննադատում էին դը Գոլի քաղաքականությունը ծայրահեղ աջ դիրքերից, լիովին ջախջախվեցին և շուտով ասպարեզից հեռացան։ Սոցիալիստական կուսակցությունը և ՄՌՊ-ն ընդհանրապես պահպանեցին իրենց դիրքերը, այն դեպքում, երբ ռադիկալները կորցրին մոտ 1,5 միլիոն ձայն։ Կոմունիստական կուսակցությունը երկրորդ տուրում հավաքեց 3,83 միլիոն ձայն (20,5 %), 1956 թ. ընտրությունների համեմատությամբ կորցնելով մոտավորապես 1,6 միլիոն ընտրող։

Մաժորիտար ընտրական համակարգի պատճառով պառլամենտի կազմը դարձավ էլ ավելի աջ, քան դա բխում էր քվեարկության արդյունքներից։ ՖԿԿ-ն, որ հավաքել էր 3,8 միլիոն ձայն, ազգային ժողովում ստացավ ընդամենը 10 տեղ, այն դեպքում, երբ «անկախականները», որոնց օգտին քվեարկել էր 2,9 միլիոն ընտրող, ունեին 133 տեղ, իսկ ՅՈՒՆՌ-ն՝ 188 տեղ։

1958 թ. դեկտեմբերին գեներալ դը Գոլն ընտրվեց Ֆրանսիայի պրեզիդենտ։ Պրեմիեր մինիստր դարձավ նրա մերձավոր աշխատակից, ՅՈՒՆՌ-ի հիմնադիրներից մեկը՝ Մ. Դեբրեն։ Դեբրեի կառավարության կազմի մեջ մտան «անկախականները» և ՄՌՊ-ի անդամները։ Հիմնական պոստերում էին գտնվում ՅՈՒՆՌ-ի ներկայացուցիչները։ Զբաղեցնելով պրեզիդենտի պոստը, դը Գոլը իր ձեռքում կենտրոնացրեց ներքին և արտաքին քաղաքականության ղեկավարումը, ստեղծելով «անձնական իշխանության» ռեժիմ՝ ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալի հատուկ ձևը։ Մոնոպոլիստների ներկայացուցիչները Վիշիի ժամանակներից հետո մեծ չափով մտան կառավարության և պետական ապարատի մեջ, այնտեղ գրավելով կարևոր պոստեր։ Ինքը՝ դը Գոլը այդ ժամանակներում բարեկամացել էր ծանր արդյունաբերության խոշորագույն մագնատների դինաստիաների՝ Շնեյդերների և դը Վանդելների հետ։ Պրեմիեր մինիստր Մ. Դեբրեն կապված էր դը Վանդելի դինաստիայի հետ և մասնակցում էր արդյունաբերական մի քանի ընկերությունների կառավարմանը։ Դեբրեի կառավարությունում արտաքին գործերի մինիստրն էր Մ. Կուվ դը Մյուրվիլը՝ «Փարիզյան միություն-Միրաբո» բանկի վարչության անդամը, ֆինանսների մինիստրն էր Վ. Ժիսկար դը Էստենը, որը դը Վանդելի դինաստիայի անդամ էր, սերտորեն կապված էր Հնդկաչինյան բանկի հետ, պետական մինիստր Լ. Ժակինոն լաղար եղբայրների բանկի վարչությունից էր։ Դը Գոլի անձնական գրասենյակի պետ դարձավ Ժ. Պոմպիդուն, որը Ռոտշիլդի բանկի գլխավոր դիրեկտորն էր, նավթային և տրանսպորտային մոնոպոլիաների վարչության անդամը։ Այսպիսով, դը Գոլի կառավարությունում ներկայացված էին բոլոր խոշոր բանկերը և ֆրանսիական ֆինանսական օլիգարխիայի գլխավոր դինաստիաները։

Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական զարգացումը Հինգերորդ հանրապետության տարիներին

Սկսված գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը, էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման կիրառումը, «Ընդհանուր շուկային» մասնակցելը նպաստեցին ֆրանսիական արդյունաբերության աճին։ 10 տարվա ընթացքում՝ 1958-ից մինչև 1968 թվականը, արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացավ ավելի քան 60 տոկոսով։ Այդ ժամանակ նշանակալի չափով աճեց արդյունաբերության տեխնիկական հագեցվածությունը։ Ավելացան հարահոս արտադրության մասշտաբները, սկսվեց լայնորեն կիրառվել ավտոմատացումը, սկսեցին օգտագործվել էլեկտրոնային հաշվիչ մեքենաները։ Հսկայական միջոցներ ծախսելով, կառավարությունն ստեղծեց ատոմային և հրթիռային արդյունաբերություն։ Վերակառուցվեցին արդյունաբերության կարևոր շատ ճյուղեր, այդ թվում՝ մետաղամշակման, քիմիական, ավիացիոն։ Լայն թափ ստացավ բնակարանային շինարարությունը, խիստ աճեց արտաքին առևտուրը։

Արդյունաբերության տարբեր ճյուղերը զարգանում էին անհամաչափորեն։ Արտադրության 60 % ընդհանուր աճի պայմաններում նավթային արդյունաբերությունն աճեց 2,6 անգամ, իսկ կաշվինը՝ միայն 16 %-ով։ Աճեց արտասահմանյան, հատկապես ամերիկյան կապիտալի դերը։ Կոնվեերային արտադրությունը և ապառիկ վաճառքի լայն տարածումը՝ ավտոմեքենաները, սառնարանները, հեռուստացույցները, լվացքի մեքենաները, որ առաջներում համարվում էին պերճանքի առարկա, վերածեցին լայն սպառման ապրանքների։

Հինգերորդ հանրապետության տարիներին Ֆրանսիայի արդյունաբերական զարգացման բնորոշ գիծը դարձավ արտադրության ուժեղացված համակենտրոնացումը։ Առաջացան ֆինանսական կապիտալի խոշորագույն խմբեր, արդյունաբերության տարբեր ճյուղերի մոնոպոլիաները միավորող և պետական ապարատի հետ սերտորեն կապված ֆինանսա-արդյունաբերական համալիրներ։ Ֆինանսական տասը խոշորագույն խմբեր անօրինում էին մասնավոր ունեցվածքի համարյա 40 տոկոսը և փաստորեն վճռական ազդեցություն ունեին արդյունաբերության ազգայնացված ճյուղերի ղեկավարման գործում։ Չնայած դրան, արդյունաբերության համակենտրոնացման գծով Ֆրանսիան հետ էր մնում բարձր զարգացած կապիտալիստական մյուս երկրներից։ Արդյունաբերական ձեռնարկությունների 84 %-ը առաջվա պես մանրերն ու մանրագույններն էին, որոնցից յուրաքանչյուրում զբաղված էր 5-ից ոչ ավելի բանվոր։

Լուրջ փոփոխություններ կատարվեցին բնակչության դասակարգային կազմում, որի թվաքանակը Հինգերորդ հանրապետության 10 տարում 44,5 միլիոնից աճեց և հասավ մինչև 50 միլիոն մարդու։ Ինքնագործ բնակչության վարձու աշխատանքով զբաղվող անձանց բաժինը աճեց և 60 %-ից հասավ մինչև 70 %-ի։ Սոցիալական վճռական ուժ էր մնում բանվոր դասակարգը և նրա հիմնական միջուկը՝ արդյունաբերական պրոլետարիատը, որի թվաքանակը գերազանցում էր 7 միլիոն մարդուց։ Գյուղատնտեսական բանվորների (մոտ 800 հազար մարդ), ինչպես նաև արտադրության պրոցեսում զբաղված տրանսպորտի, կապի բանվորների, ծառայողների և տեխնիկների մի մասի հետ միասին ֆրանսիական բանվոր դասակարգի թվաքանակը հասել էր 9 միլիոն մարդու։ Ֆրանսիայի առանձնահատկությունը բնակչության մանրարտադրական խավերի՝ արհեստավորների, առևտրականների, մանր արհեստանոցների տերերի մեծ տեսակարար կշիռն էր։ Չնայած մանր արտադրության և առևտրի դերի մշտական անկմանը, նրանցում դեռևս զբաղված էր ավելի քան 5 միլիոն մարդ։ Ֆրանսիայի գյուղատնտեսական բնակչությունը կրճատվում է, չնայած ավելի դանդաղ տեմպերով, քան մյուս զարգացած երկրներում։ Հինգերորդ հանրապետության տարիներին այն պակասեց 25 %-ով, բակայն երկրի գյուղատնտեսության մեջ զբաղված էր ավելի շատ աշխատող, քան ԱՄՆ-ում, Անգլիայում կամ ԳՖՀ-ում։

Վերջին տարիներին ամենից արագ աճում էր ոչ արտադրական ոլորտում զբաղվածների թիվը (առևտրի, սպասարկման, պետական ապարատի, գիտության, կրթության)։ Մի կողմից դա բացատրվում էր այնպիսի ճյուղերում աշխատողների թվի ավելացմամբ, որոնք հասարակական օգտակար բնույթ ունեին, իսկ մյուս կողմից՝ վարչաբյուրոկրատական ապարատի աճով։ Տարբեր գրասենյակներում, բյուրոներում, առևտրական հիմնարկներում 8 տարում՝ 1954-ից մինչև 1962 թ. ծառայողների թիվն ավելացավ 16 %-ով, հասնելով 2,4 միլիոն մարդու։ Էլ ավելի արագ աճեցին մտավորականների շարքերը։ 1954-ից մինչև 1968 թ. մտավոր աշխատանքի անձանց թիվը (չհաշված ուսանողներինը) աճեց և 1 միլիոնից հասավ մինչև 3 միլիոն մարդու։ Ընդամենը ոչ արտադրողական ոլորտում զբաղված է ինքնագործ բնակչության մինչև $^1/_3$-ը։

Ծառայողների և մտավորականների քանակի խիստ ավելացումը ֆրանսիական հասարակության միջին շերտերի կազմում բարձրացրեց նրանց տեսակարար կշիռը։ Բնակչության այդ խմբերի զգալի մասն ըստ իրենց դրության վարձու աշխատողներ էին։ Մոնոպոլիստական կապիտալի կողմից շահագործումը շատ բանով նրանց մերձեցնում է բանվորների հետ, որը պայմաններ է ստեղծում բանվոր դասակարգի շուրջը բնակչության միջին խավերի լայն հակամոնոպոլիստական միավորման համար։

Ֆրանսիական գաղութային կայսրության քայքայումը

Հինգերորդ հանրապետության ժամանակաշրջանում ավարտվեց ֆրանսիական գաղութային կայսրության քայքայումը։ Զգալով, որ ազատագրական շարժումը ռազմական միջոցներով ճնշելու փորձերը ցանկալի արդյունքներ չեն տալիս, ֆրանսիական բուրժուազիայի մի մասն անցավ նեոգաղութատիրության դիրքերը։ Այդ կուրսի կողմնակիցները գերադասում էին գաղութներին քաղաքական ինքնավարություն կամ նույնիսկ անկախություն տալ, այն հաշվով, որպեսզի նրանք մնային ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալի ազդեցության ոլորտում։

1958 թ. հոկտեմբերի 1-ին անկախության հասավ Գվիննեան։ 1960 թ. հունվարի 1-ին անկախ դարձավ Կամերունը։ Նրանց հետևեցին նախկինում ֆրանսիական Հասարակածային և ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի[5] կազմի մեջ մտնող մի շարք պետություններ։ 1960 թ. ընթացքում, որը կոչվեց «Աֆրիկայի տարի», Աֆրիկայում անկախություն ստացան ֆրանսիական 14 նախկին գաղութներ։ Նրանց մեծամասնությունը տնտեսական սերտ կապեր պահպանեց նախկին մետրոպոլիայի հետ։

Միայն Ալժիրում դեռևս շարունակվում էր պատերազմը։ Սկզբում դը Գոլը, ինչպես որ նրանից սպասում էին ծայրահեղ գաղութարարները, գլխավոր հույսը դրեց ալժիրյան հայրենասերների ռազմական ճնշման վրա։ Սակայն, ժամանակն անցնում էր, իսկ հաղթանակն անհասանելի էր դառնում։ Ալժիրում պատերազմի ծախսերը չորս անգամ գերազանցեցին Հնդկաչինի պատե-

[5] Նրանց տեղում կազմավորվեցին ինքնուրույն պետություններ. Տոգոն, Դահոմեան, Նիգերը, Փղոսկրյա ափը, Գաբոնը, Վերին Վոլտան, Չադը, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Կոնգոն (Բրազավիլ), Մալագասյական հանրապետությունը (Մադագասկար), Սուդանը, Մալին, Սենեգալը և Մավրիտանիան։

բազմի ծախսերին, հասնելով 1 միլիարդ ֆրանկի։ Այստեղ գործում էր ֆրանսիական խոշոր բանակ, բայց չէր կարողանում ճնշել Ալժիրի ժողովրդի ազատագրական շարժումը։

Կառավարող շրջաններում լուրջ տարաձայնություններ առաջացան։ Այն ժամանակ, երբ ծայրահեղ գաղութարարները պահանջում էին շարունակել ռազմական գործողությունները, խոշոր բուրժուազիայի մի մասը, հատկապես նավթարդյունաբերողները, հակված էին քաղաքական կոմպրոմիսի կողմը։ Նրանց հայացքները բաժանում էր գեներալ դը Գոլը։ 1959 թ. սեպտեմբերի 16-ին նա առաջինը հայտարարեց, որ Ալժիրը հանդիսանում է ալժիրյան և ոչ թե ֆրանսիական տարածք և, հետևապես, ինքնորոշման իրավունք ունի։

Ծայրահեղ գաղութարարները դը Գոլի խոսքերն ընդունեցին իբրև դավաճանություն, իբրև «Ֆրանսիական Ալժիրի» գաղափարից հրաժարում։ 1960 թ. հունվարի 24-ին, որպես առիթ օգտագործելով Ալժիրից իրենց ղեկավարներից մեկի (գեներալ Մասյուի) ետ կանչումը, ծայրահեղ գաղութարարները խռովություն սկսեցին։ Բանակային վերնախավի քաջալերանքով նրանք ցույցեր և գործադուլներ կազմակերպեցին, բարիկադներ կառուցեցին և մոտ մեկ շաբաթ իրենց ձեռքում պահեցին Ալժիրի մայրաքաղաքի մի քանի թաղամաս։ Կառավարությունն սկզբում տատանվեց, բայց ի վերջո խռովարարներից պահանջեց զենքը վայր դնել։ 1960 թ. փետրվարի 1-ին Ֆրանսիայի բոլոր դեմոկրատական կազմակերպությունները կոմկուսի գլխավորությամբ բողոքի մեկժամյա գործադուլ անցկացրին, որին մասնակցեց 11 միլիոն մարդ։ Այդ գործադուլի վիթխարի թափը ցույց տվեց, որ խռովարարները պաշտպանություն չեն գտնում ֆրանսիական բնակչության շրջանում։ Նույն օրն էլ հենց խռովարարներն անձնատուր եղան։ Մի քանի ծայրահեղ գաղութարարներ ձերբակալվեցին և դատի տրվեցին, ամենավարկաբեկված գեներալները փոխադրվեցին մետրոպոլիա կամ պաշտոնաթող արվեցին։

Ծայրահեղ գաղութարարների խռովությունը, որ հայտնի է «բարիկադների շաբաթ» անունով, կառավարող շրջաններում պառակտում առաջ բերեց։ Ծայրահեղ գաղութարարները, որոնք 1958 թ. մայիսին հասել էին դը Գոլի իշխանության գլուխ անցնելուն, այժմ պահանջում էին նրա հրաժարականը։ 1961 թ. ապրիլի 22-ին հենվելով ընդհատակյա տեռորիստական «գաղտնի բանակի կազմակերպության» (ՕԱՍ) վրա, նրանք փորձեցին Ալժիրի մայրաքաղաքում զավթել իշխանությունը։

Կոմունիստական կուսակցությունը անհապաղ կոչ արեց հակահարված տալ խռովարարներին։ 1961 թ. ապրիլի 24-ին Ֆրանսիայում նորից կայացավ համընդհանուր քաղաքական գործադուլ, որին մասնակցեցին կոմունիստները, սոցիալիստները, ռադիկալները, բոլոր արհմիութենական հիմնական միավորումները, անկուսակցական բանվորներն ու ծառայողները։ Գործադուլի հաջողությունը, որին մասնակցեց ավելի քան 12 միլիոն մարդ, կանխորոշեց խռովարարների պարտությունը։ Բուն Ալժիրում հանրապետական հրամանատարները և զինվորները հրաժարվեցին ենթարկվել խռովարարներին։ Ապրիլի 25-ին դը Գոլը հրամայեց «ապստամբությունը վերացնել բոլոր միջոցներով»։ Ալժիր ուղարկվեցին կառավարությանն հավատարիմ զորամասեր։ Խռովարարները մեկուսացվեցին։ Նրանց մեծ մասը զենքը վայր դրեց։ ՕԱՍ-ի կազմակերպիչները պետական պաշտոններից հանվեցին։

Ծայրահեղ գաղութարարների խռովության ձախողումից հետո, ժողովրդական զանգվածների ճնշման տակ, կառավարությունը ուղղակի բանակցություններ սկսեց Ալժիրի հանրապետության ժամանակավոր կառավարության հետ։ 1962 թ. մարտի 18-ին այդ բանակցությունները, որ տեղի էին

ունենում Էվիան քաղաքում (Շվեյցարիա), ավարտվեցին մի շարք համաձայնագրերով, ըստ որոնց Ալժիրն ստանում էր անկախություն, իսկ Ֆրանսիան ժամանակավորապես Ալժիրում պահպանում էր ռազմական բազան և Սահարայում նավթի հանույթի գերակշիռ իրավունքը։

1962 թ. դը Գոլի անցկացրած հերթական հանրաքվեն ցույց տվեց, որ ընտրողների ավելի քան 90 %-ը հավանություն են տալիս Էվիանյան համաձայնագրերին։ Նեոգաղութարարական քաղաքականության կողմնակիցները կառավարությունում գրավեցին վճռական պաստերը։ Ֆրանսիայի պրեմիեր մինիստր դարձավ Ժ. Պոմպիդուն, որը աչքի ընկնող դեր էր խաղացել Ալժիրի ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչների հետ գաղտնի բանակցությունների ժամանակ։

Էվիանյան համաձայնագրերի կնքումով Ալժիրում ավարտվեց ութամյա գաղութային պատերազմը։ Ֆրանսիական գաղութային կայսրությունը վերջնականապես քայքայվեց։ Ֆրանսիայի իշխանության տակ մնացին միայն նախկին տիրապետությունների ոչ մեծ կտորներ. ֆրանսիական Սոմալին (Աֆրիկայում), ֆրանսիական Գվիանան (Լատինական Ամերիկայում), մի քանի կղզիներ Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներում։

Հինգերորդ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականությունը

Պատերազմն Ալժիրում և ծայրահեղ գաղութարարների դեմ պայքարը նպաստեց իշխանության կենտրոնացմանը կառավարության ձեռքում։ 1962 թ. դը Գոլը որոշեց 1958 թ. սահմանադրությունը փոխել այնպիսի ձևով, որպեսզի պրեզիդենտի ընտրություններն անցկացվեն ոչ թե անուղղակի, այլ ուղղակի ընդհանուր քվեարկությամբ։ Պրեզիդենտին տալով միանձնյա մանդատ, որը համարժեք էր պառլամենտի բոլոր դեպուտատների կոլեկտիվ մանդատին միասին վերցրած, ընդհանուր քվեարկությունը պետք է, ըստ իր՝ դը Գոլի արտահայտության, ամրապնդեր պրեզիդենտի իբրև «պետության ղեկավարի և Ֆրանսիայի առաջնորդի» դիրքը։ Չնայած համարյա բոլոր քաղաքական կուսակցությունների (բացի ՅՈՒՆՌ-ի) բողոքներին, պրեզիդենտի ընտրությունների նոր կարգի մասին օրինագիծը դրվեց հանրաքվեի և հավաքեց ընտրողների ձայների մոտ 60 տոկոսը։ Այդ ժամանակից սկսած Ֆրանսիայի պրեզիդենտն ընտրվում է ուղղակի ընդհանուր քվեարկությամբ։

Միջազգային հարաբերությունների բնագավառում դը Գոլի կառավարությունը ձգտում էր Ֆրանսիան վերադարձնել անկախ արտաքին քաղաքական կուրսի ուղին։ Դը Գոլի նախաձեռնությամբ Ֆրանսիան մի շարք կարևոր քայլեր ձեռնարկեց, որոնք նպաստեցին միջազգային լարվածության թուլացմանը։ 1959 թ. գեներալ դը Գոլը հանդես եկավ Օդեր—Նեյսեյով անցնող գոյություն ունեցող սահմանների ճանաչման օգտին։ 1964 թ. ֆրանսիական կառավարությունը ճանաչեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը։ Նա դատապարտեց օտարերկրյա ինտերվենցիան Հնդկաչինում, առաջարկեց ամերիկյան զորքերը դուրս բերել Վիետնամից և համաձայնագիր կնքել այդ երկրի չեզոքության վերաբերյալ։ Միջազգային լայն արձագանք ստացավ Հյուսիսատլանտյան պակտի ռազմական կազմակերպությունից դուրս գալու մասին Ֆրանսիայի կառավարության որոշումը։ 1966—1967 թթ. ՆԱՏՕ-ի ռազմական ծառայությունները և ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Ֆրանսիայից։ Ամերիկյան ռազմական բազաները վերացվեցին։

Պրեզիդենտ դը Գոլը մեծ ավանդ ներդրեց Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի միջև բարեկամության ու համագործակցության հարաբերությունները զարգացնելու գործում։ 1966 թ. ՍՍՀՄ նրա կատարած այցի հետևանքով միջազգային լարվածության թուլացման ուղղությամբ մերձեցան Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի

դիրքերը, ընդարձակվեցին ֆրանս-սովետական առևտրական և մշակութային կապերը։

Հինգերորդ հանրապետության արտաքին քաղաքականության բացասական կողմերին է վերաբերում Ֆրանսիայի մասնակցությունը սպառազինությունների մրցավազքին։ Չնայած ֆրանսիական դեմոկրատական կազմակերպությունների բողոքներին, կառավարությունը ձեռնարկեց ինքնուրույն «հարվածային միջուկային ուժերի» ստեղծմանը։ Նա չմիացավ միջուկային զենքի փորձարկումներն արգելելու պայմանագրին և հրաժարվեց մասնակցել ՄԱԿ-ում սկսված զինաթափման բանակցություններին։

Դասակարգային պայքարի և կառավարության ճկատմամբ օպոզիցիայի աճը

Հինգերորդ հանրապետության առաջին տարիներին բուրժուական բոլոր կուսակցությունները, ինչպես նաև սոցիալիստական կուսակցության պարագլուխները, պաշտպանում էին կառավարությանը։ Նրա դեմ հանդես էին գալիս միայն կոմունիստական կուսակցությունը և ԱԸԿ-ն։ Նրանց ղեկավարությամբ բանվորները շարունակում էին պայքարն իրենց քաղաքական և տնտեսական պահանջների բավարարման համար։ 1962—1963 թթ. նրանք չորսշաբաթյա վճարովի արձակուրդի իրավունք նվաճեցին, հասան աշխատավարձի բարձրացման և բուժման համար ծախսերի 80 % փոխհատուցման։ Չնայած դրան, բանվորների և ծառայողների դրությունը մնում էր ծանր։ 1958 թ-ից մինչև 1964 թ. անվանական աշխատավարձը ավելացավ 32 %-ով, սակայն գներն այդ ժամանակամիջոցում, ըստ պաշտոնական տվյալների, բարձրացան 30 %-ով, իսկ ըստ արհմիությունների տվյալների՝ 42 %-ով։ 4 միլիոն աշխատավորների աշխատավարձը չէր գերազանցում ապրուստի պաշտոնական մինիմումին։ Գործազուրկների քանակը աստիճանաբար աճեց և 1968 թ. սկզբին հասավ 400 հազար մարդու։

Դասակարգային հակասությունների սրման հետևանքով քայքայվեց այն քաղաքական ուժերի կոալիցիան, որը 1958 թ. հանրաքվեում պաշտպանում էր դը Գոլին։ 1959 թ. հունվարին, ի նշան կաթոլիկական դպրոցներին պետության կողմից ֆինանսավորելու օրենքի դեմ բողոքի, սոցիալիստական կուսակցությունն անցավ օպոզիցիայի։ 1959 թ. սեպտեմբերին կառավարությունից դուրս եկան ռադիկալները, որոնք առարկում էին սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ, որը սահմանափակում էր մանր և միջին բուրժուազիայի շահերը։ «Անկախականների» և ՄՌՊ-ի գործիչներն սկսեցին անբավականություն արտահայտել ինքնավարության ընտրովի մարմինների իրավունքները սահմանափակելու կապակցությամբ, մարմիններ, որոնցում նրանք հաճախ գերակշռում էին։

Հատկապես քաղաքական սուր կոնֆլիկտ առաջացավ Ալժիրում պատերազմը վերջանալուց հետո ընդհանուր քվեարկությամբ հանրապետության պրեզիդենտ ընտրելու առաջարկության կապակցությամբ։ Ոչ միայն կոմունիստները, սոցիալիստները և ռադիկալները, այլև նույնիսկ ՄՌՊ-ի և «անկախականների» ղեկավարները դատապարտեցին կառավարական օրինագիծը։ 1962 թ. հոկտեմբերին նրանք բոլորը քվեարկեցին Պոմպիդուի կառավարությանը պարտավելու բանաձևի օգտին, որը Հինգերորդ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ հավաքեց ձայների գերակշիռ մասը։ Պրեզիդենտ դը Գոլը հրաժարվեց պաշտոնանկ անել կառավարությանը, ցրեց ազգային ժողովը և նշանակեց նոր ընտրություններ։

1962 թ. նոյեմբերի ընտրություններում պատգամավորական մանդատների բացարձակ մեծամասնությունը նորից ստացավ ՅՈՒՆՌ-ն, որը Ալժիրում

պատերազմն ավարտվելուց հետո ձեռք էր բերել լայն ժողովրդականություն։ Պոմպիդուի կառավարությունը մնաց իշխանության գլուխ։

ՖԿԿ-ի պայքարը ձախ ուժերի միասնության համար

1956 թ. ամռանը կայացած ՖԿԿ-ի 14-րդ համագումարը առաջ քաշեց մոնոպոլիաների դեմ պայքարում ազգային և դեմոկրատական բոլոր ուժերի համախմբման գաղափարը։ Համագումարն իր փաստաթղթերում արձանագրեց, որ պատերազմն անխուսափելի չէ և որ Ֆրանսիայում հնարավոր է սոցիալիզմին անցնել խաղաղ ճանապարհով, օգտագործելով պատմականորեն առաջացած պառլամենտական հիմնարկները։ Միաժամանակ համագումարի որոշումներում նշվում էր, որ չի կարելի բացառել նաև ոչ խաղաղ ճանապարհով սոցիալիզմին անցնելու հնարավորությունը այն դեպքում, եթե բուրժուազիան ժողովրդի դեմ բռնության դիմի։

Կարևոր նշանակություն ունեցան ՖԿԿ 15-րդ (1959) և 16-րդ (1961) համագումարները, որոնք որպես առաջնահերթ խնդիր առաջ քաշեցին անձնական իշխանության վարչակարգի վերացումը և Ալժիրում պատերազմը դադարեցնելը։ ՖԿԿ 17-րդ (1964) և 18-րդ (1967) համագումարների որոշումներում մշակվեց գործողությունների կոնկրետ ծրագիր, որը հնարավորություն էր տալիս բոլոր հակամոնոպոլիստական ուժերը միավորել առաջավոր դեմոկրատիայի համար մղվող պայքարում, որը ուղի էր բացում սոցիալիզմին անցնելու համար։ Այդ ծրագիրը պահանջում էր բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը, վերացնել դեմոկրատական ազատությունների սահմանափակումները, վերջ տալ անձնական իշխանության վարչակարգին և ժողովրդական զանգվածների ակտիվ գործողությունների հիման վրա ստեղծել դեմոկրատական միասնության կառավարություն։ Այդպիսի կառավարությունը պետք է ազգայնացնի բոլոր բանկերը և արդյունաբերության հիմնական ճյուղերը, ապահովի դրանց դեմոկրատական կառավարումը, ժողովրդի շահերի օգտին անցկացնի հարկային ռեֆորմ, բարձրացնի աշխատավորների կենսամակարդակը, հետևողականորեն կենսագործի անկախ արտաքին քաղաքականություն։ Այդ միջոցառումների իրականացումը հնարավորություն կըտար լուրջ հարված հասցնել մոնոպոլիաներին, սահմանափակել նրանց իշխանությունը և պայմաններ ստեղծել սոցիալիզմին անցնելու հաջորդ քայլի համար։

60-ական թվականների սկզբին, բանվոր դասակարգի պայքարի, մոնոպոլիաների ճնշման ուժեղացման և բուրժուազիայի միջավայրում տարաձայնությունների աճի ազդեցությամբ էականորեն փոխվեցին սոցիալիստական կուսակցության և ռեֆորմիստական արհմիությունների դիրքերը։ 1963 թ. Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության 54-րդ համագումարը 1947 թ. հետո առաջին անգամ արտահայտվեց դեմոկրատական ազատությունների վրա կառավարության հարձակման դեմ պայքարում կոմունիստների հետ «համատեղ պաշտպանական գործողությունների» օգտին։ 1963 թ. ֆրանսիական աշխատավոր քրիստոնյաների կոնֆեդերացիայի ղեկավարության գլուխ անցավ ձախ թևը։ Նրա ազդեցությամբ ՖԱՔԿ-ի համագումարը կապերը խզելով բազմամյա ավանդույթների հետ, դատապարտեց դասակարգային համագործակցության քաղաքականությունը։ Կոնֆեդերացիայի կանոնադրությունից հանվեցին «քրիստոնեական բարոյականության» վկայակոչումները։ Աջ թևը դուրս եկավ կոնֆեդերացիայից, որից հետո այն քրիստոնեականից վերանվանվեց Ֆրանսիական աշխատավորների դեմոկրատական կոնֆեդերացիայի (ՖԱԴԿ)։ 1966 թ. ԱԸԿ-ն և ՖԱԴԿ-ն աշխատավարձի բարձրացման, աշխատօրվա կրճատման, սոցիալական ապահովության բարելավման և արհ-

միությունների իրավունքների պաշտպանման համար համատեղ պայքարի համաձայնություն կնքեցին։

Ձախ ուժերի վերախմբավորման պրոցեսում կատարվեց սոցիալիստների, ռադիկալների և նրանց մոտիկ խմբերի միավորում։ 1965 թ. նրանք հիմնադրեցին Ձախ ուժերի դեմոկրատական և սոցիալիստական ֆեդերացիան (ՁՈՒԴՍՖ), որի նախագահ դարձավ Ֆ. Միտերանը։ Չնայած մի շարք կարևոր հարցերի գծով (հատկապես արտաքին քաղաքականության բնագավառում) ՁՈՒԴՍՖ-ի դիրքերը էականորեն տարբերվում էին կոմունիստների դիրքերից, ՖԿԿ-ն և ֆեդերացիան համաձայնություն կնքեցին 1965 թ. դեկտեմբերին կայանալիք պրեզիդենտական ընտրություններում համատեղ ելույթների վերաբերյալ։ Բոլոր ձախ ուժերը պաշտպանեցին Ֆրանսիայի պրեզիդենտության պոստի համար Ֆ. Միտերանի թեկնածությունը։ Ընտրությունների երկրորդ տուրում Միտերանը հավաքեց ձայների 45 %-ը, բայց պրեզիդենտ ընտրվեց գեներալ դը Գոլը, որի օգտին քվեարկեց ընտրողների 55 %-ը։ 1967 թ. պառլամենտական ընտրություններում ՖԿԿ-ը և ֆեդերացիան նույնպես հանդես եկան համատեղ։ Կոմունիստների օգտին քվեարկեցին ավելի քան 5 միլիոն ընտրողներ, ՁՈՒԴՍՖ-ի թեկնածուների օգտին՝ 4,2 միլիոն։ Նրանք միասին հավաքեցին ձայների ավելի քան 40 %-ը, սակայն ազգային ժողովում փոքրամասնություն կազմեցին։

Բացի ձախ օպոզիցիայից, դը Գոլի կառավարության դեմ հանդես եկավ աջերի մի մասը, որը դժգոհ էր գլխավորապես նրա անկախ արտաքին քաղաքականությունից, ինչպես նաև դեկավարման ավտորիտար մեթոդներից։ 1966 թ. ՄՌՊ-ն և «անկախականների» մի մասը միավորվեցին «դեմոկրատական կենտրոն»-ի մեջ, որի պարագլուխները հանդես եկան ՍՍՀՄ-ի հետ Ֆրանսիայի մերձեցման դեմ, պահանջեցին ամրապնդել կապերը ԱՄՆ-ի հետ Ֆրանսիայի ակտիվ մասնակցությունը ՆԱՏՕ-ին, ձգտեցին «Ընդհանուր շուկան» վերածել «Եվրոպայի Միացյալ Նահանգների»։ 1965 թ. պրեզիդենտական, ինչպես և 1967 թ. պառլամենտական ընտրություններում, «դեմոկրատական կենտրոնը» հանդես եկավ ինքնուրույն, բայց պարտություն կրեց, հավաքելով ձայների միայն 13 %-ը։ Ազգային ժողովում մեծամասնությունը պահպանեց ՅՈՒՆՌ կուսակցությունը և նրան պաշտպանող «անկախականների» մի մասը, որն ընդունեց Անկախ հանրապետականների ֆեդերացիա անվանումը։

1968 թ. մայիս-հունիսի իրադարձություններ։ Գեներալ դը Գոլի հրաժարականը

1968 թ. գարնանը դասակարգային հակասությունների սրվելը հասցրեց պայթյունի։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում չտեսնված թափով զանգվածային շարժման սկիզբը դնող խթան ծառայեցին ուսանողական հուզումները։ Այդ ժամանակ ուսանողական շարժումն իրենից նշանակալի ուժ էր ներկայացնում։ 1945 թ. համեմատությամբ ուսանողների թիվը աճել էր 5 անգամ և հասել էր 650 հազար մարդու, ընդ որում ուսանողների միայն 12 %-ն էին բանվորների և գյուղացիների ընտանիքների զավակներ։ Ուսանողներն առաջին հերթին դժգոհ էին ուսուցման հնացած կազմակերպումից և նյութական ծանր դրությունից, բայց օբյեկտիվորեն նրանց բողոքն ուղղված էր բուրժուական հասարակության հիմնարկների և բարոյական հիմքերի, պետական-մոնոպոլիստական տիրապետության ամբողջ համակարգի դեմ։

1968 թ. մայիսի սկզբին Փարիզի ուսանողները դասադուլ հայտարարեցին, դադարեցրին պարապմունքները և գրավեցին ուսումնական հաստատությունների շենքերը։ Համալսարանական իշխանությունները դիմեցին ոստիկանությանը, որը դիմեց զանգվածային ձերբակալությունների և ուսանողների ծեծին։ Ի պատասխան դրա ուսանողներն սկսեցին բարիկադներ կառուցել, մարտի բռնվելով ոստիկանության հետ։

Ուսանողների հալածանքները բողոք առաջ բերեցին բնակչության լայն խավերում՝ և ամենից առաջ բանվորների շրջանում։ 1968 թ. մայիսի 13-ին ՖԿԿ-ի և արհմիությունների կոչով սկսվեց ոստիկանության գազանությունների դեմ բողոքի գործադուլ։ Շուտով այն վերաճեց հսկայական թափի համընդհանուր գործադուլի։ Ամբողջ երկրում բանվորները և ծառայողները դադարեցրին աշխատանքը և գրավեցին ձեռնարկությունները։ Նրանք պահանջեցին բարձրացնել ապրուստի պաշտոնական մինիմումը և աշխատավարձը, բարելավել սոցիալական ապահովությունը, միջոցներ ձեռնարկել գործազրկության դեմ, ապահովել արհմիությունների իրավունքների և դեմոկրատական ազատությունների պահպանումը։ Մի քանի օր անց գործադուլավորների թվաքանակն անցավ 9 միլիոն մարդուց։ Փաստորեն գործադուլ էր անում ամբողջ բանվոր դասակարգը և ծառայողների մի զգալի մասը։ Ձեռնարկությունների հիմնական զանգվածը դադարեցրել էր աշխատանքը, կանգ էր առել տրանսպորտը, գործադուլ էին արել ռադիոյի և հեռուստատեսության աշխատողները։ Շատ շաբաթներ չէին գործում բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք գրավել էին դասադուլավոր ուսանողները։

Զանգվածային շարժման ավանգարկում էր կոմունիստական կուսակցությունը, որը պահանջում էր կառավարության անհապաղ հրաժարականը և կոմունիստների մասնակցությամբ դեմոկրատական միասնության ժողովրդական կառավարության ստեղծումը։ Կոմկուսը մյուս օպոզիցիոն կուսակցությունների հետ պառլամենտ մտցրեց կառավարությանը պարսավելու բանաձև։ Այնուամենայնիվ, աշխատավորների շարժումը միասնական չէր և չուներ ընդհանուր դեկավարություն։ Ուսանողության կազմում մանրբուրժուական տարրերի գերակշռելը նպաստեց ձախ և անարխիստական խմբավորումների ազդեցության աճին, որոնք իրենց ձեռքը վերցրին ուսանողների ազգային խորհուրդը։ Կոմկուսին և բանվոր դասակարգին մեղադրելով մտացածին «պահպանողականության» և «հեղափոխական ոգին կորցնելու» մեջ, նրանք պնդում էին, թե, իբր, Ֆրանսիայում հեղափոխական իրադրություն է ստեղծվել, դրա համար էլ անհրաժեշտ է ապստամբություն և պետական իշխանությունն անհապաղ գրավելու կուրս վերցնել։ Իրականում Ֆրանսիայում քաղաքական ճգնաժամը դեռևս չէր հասել այնպիսի սրության, «երբ,—ինչպես ասում էր Լենինը,— «ներքևախավերը» չեն ուզում հինը, և երբ «վերնախավերը» չեն կարող հին ձևով»[6]։ Ֆրանսիական էկոնոմիկան գտնվում էր վերելքի փուլում։ Կառավարող կուսակցությունները և գեներալ դը Գոլը նշանակալի հեղինակություն էին վայելում։ Բանակը և ոստիկանությունը հիմնականում շարժմանը չէին մասնակցում և ենթարկվում էին կառավարության հրամաններին։ Բանվորների և միջին խավերի հսկայական մեծամասնությունը մասնակցելով բողոքի շարժմանը և տնտեսական պահանջներ ներկայացնելով, պատրաստ չէր իշխանության գրավմանը։

Հաշվի առնելով այս իրադրությունը, կոմունիստական կուսակցությունը և Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան հանդես եկան «հեղափոխական գործողությունների» անպատասխանատու կոչերի դեմ, որոնք կարող էին պրովոկացիոն նպատակներով օգտագործվել բուրժուազիայի կողմից։ Մայիսի 29-ին կոմունիստական կուսակցության կոչով Փարիզի փողոցները դուրս եկավ ավելի քան 800 հազար մարդ, որոնք պահանջում էին կառավարության հրաժարականը։ Կոմունիստական կուսակցությունը Ձախ ուժերի դեմոկրատա-

[6] Վ. Ի. Լենին, հ. 41, էջ 85։

կան և սոցիալիստական ֆեդերացիային առաջարկեց անհապաղ դեմոկրատական կառավարության համար պայքարի համատեղ ծրագիր մշակել։ Կոմունիստների աճող ազդեցությունից վախեցած՝ ֆեդերացիայի պարագլուխները չընդունեցին այդ առաջարկությունը։

Այդ ընթացքում կառավարությունը օգտագործելով ձախ տարրերի անկարգություններից բնակչության լայն խավերի դժգոհությունը, անցավ հակահարձակման։ 1968 թ. մայիսի 30-ին դը Գոլը ճառով հանդես եկավ ռադիոյով և հեռուստատեսությամբ, որում պնդեց, թե Ֆրանսիային, իբր, քաղաքացիական պատերազմ և կոմունիստների կողմից դիկտատուրա է սպառնում։ Վկայակոչելով արտակարգ հանգամանքները, դը Գոլը հայտարարեց պառլամենտը ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու մասին։ Նա սպառնաց «այլ ուղիներ» օգտագործել կարգ ու կանոնը պահպանելու համար։

Դը Գոլի գործողությունները պաշտպանություն գտան բնակչության բուրժուական խավերում։ Կառավարության կողմնակիցները խոշոր ցույց կազմակերպեցին Փարիզի արիստոկրատական թաղամասերում։

Միաժամանակ ձեռնարկատերերը և կառավարությունը որոշեցին զիջումների դիմել։ 1968 թ. հունիսին Գրենել փողոցում գտնվող պրեմիեր մինիստրի նստավայրում կայացած արհմիությունների, ձեռնարկատերերի և կառավարության ներկայացուցիչների խորհրդակցությունում կազմվեց «Գրենելյան արձանագրությունը», որը հաշվի էր առնում բանվոր դասակարգի հիմնական պահանջները։ Բանվորները մեծ հաջողության հասան։ Աշխատավարձը միջին հաշվով աճեց 14 %-ով, թոշակները՝ 15—20 %-ով։ Աշխատավարձի մինիմումն ավելացվեց 35 %-ով, հասնելով ամսական 600 ֆրանկի։ Գյուղատնտեսական բանվորների աշխատավարձի նվազագույնը բարձրացավ 56 %-ով և հասավ արդյունաբերական բանվորների աշխատավարձի մակարդակին։ Բանվորների և ծառայողների մի քանի կատեգորիաներ ստացան հանգստի լրացուցիչ օրեր։ Կառավարությունը պարտավորվեց օրենք ընդունել, որը երաշխավորեր ձեռնարկություններում արհմիությունների իրավունքները։

Մասնակիորեն բավարարվեցին ուսանողների պահանջները։ Կառավարությունը օրենք ընդունեց, որը նախատեսում էր փոփոխություններ մտցնել բարձրագույն կրթության համակարգում, մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը ուսանողներին մասնակից դարձնելու գործում։ Բանվորներն իրենց պահանջների բավարարման չափով, աստիճանաբար վերադառնում էին աշխատանքի, և հունիսի կեսին գործադուլային շարժումը հիմնականում դադարեց։

1968 թ. մայիս—հունիսի իրադարձությունները ցույց տվեցին բանվոր դասակարգի հսկայական ուժը և խորը կերպով ցնցեցին Հինգերորդ Հանրապետության ամբողջ շենքը։ Միաժամանակ դրանք ուժեղացրին մանր բուրժուազիայի և գյուղացիության վախը հեղափոխության և քաղաքացիական պատերազմի հանդեպ։ 1968 թ. պառլամենտական ընտրություններում, որ անցկացվեցին համընդհանուր գործադուլի ավարտից մի քանի օր հետո, ՅՈՒՆՌ-ի կուսակցությունը, որ հանդես եկավ որպես «կարգ ու կանոնի կուսակցություն», լրացուցիչ ստացավ 1200 հազար ձայն և պառլամենտում նվաճեց բացարձակ մեծամասնություն։ Կոմունիստական կուսակցությունը, որ ենթարկվել էր կառավարության և ձախլիկ խմբերի հարձակմանը, կորցրեց 600 հազար ձայն, բայց պահպանեց օպոզիցիայի առաջին կուսակցության դիրքը։ Ձախ ուժերի ֆեդերացիան կորցրեց զգալի թվով ընտրողներ և շուտով քայքայվեց։

Ձնայած կառավարության համար ընտրությունների նպաստավոր արդյունքներին, գեներալ դը Գոլը հասկանում էր, որ 1968 թ. մայիս—հունիսի

շարժումը վկայում էր կապիտալիստական սիստեմից աշխատավորների խոր դժգոհության մասին։ 1969 թ. գարնանը նա հանդես եկավ կորպորատիվ ոգով կապիտալիստական սիստեմը բարեփոխելու պլանով։ Զարգացնելով նախկինում շարադրած իր գաղափարները, դը Գոլն ասում էր, որ անհրաժեշտ է վերջ տալ դասակարգային պայքարին՝ ձեռնարկությունների շահույթներին բանվորների «մասնակցությամբ», հիմնարկների կառավարմանը ծառայողների «մասնակցությամբ», բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը ուսանողների «մասնակցությամբ»։

Այդ պլանի իրականացման առաջին քայլը եղավ տեղական ինքնակառավարման մարմինների վերակառուցման մասին, առաջին հայացքից նվազ նշանակություն ունեցող օրինագիծը։ 90 դեպարտամենտների փոխարեն ենթադրվում էր ստեղծել 21 շրջան՝ ռեգիոնալ խորհուրդների գլխավորությամբ, որոնք մասամբ լինելու էին ընտրովի, իսկ մասամբ էլ նշանակվելու էին վերևից։ Ռեգիոնալ խորհուրդների գլխավոր ֆունկցիան պետք է դառնար նրանցում ներկայացված «սոցիալական-պրոֆեսիոնալ խմբերի» (բանվորների, գյուղացիների, արհեստավորների, արդյունաբերողների, ազատ պրոֆեսիայի տեր անձանց) միջև դասակարգային համագործակցության իրականացումը։ Գործադիր իշխանությունը մնում էր կառավարության կողմից նշանակվող պրեֆեկտների ձեռքում, որոնց լիազորությունները մեծանում էին։ Ցանկանալով ընդգծել օրինագծի նշանակությունը, գեներալ դը Գոլը այն դրեց հանրաքվեի և հայտարարեց, որ օրինագծի մերժման դեպքում նա հրաժարական կտա։

Կառավարական օրինագծի դեմ, որը սահմանափակում էր տեղական ինքնավարման մարմինների իրավունքները, հանդես եկան կոմունիստական կուսակցությունը և նախկինում Ձախ ուժերի ֆեդերացիայի մեջ մտնող խմբավորումները։ Օրինագիծը դատապարտեցին «դեմոկրատական կենտրոնի» ղեկավարությունը և «անկախ հանրապետականները», որոնք վախենում էին տեղական ինքնավարման մարմիններում իրենց ազդեցությունը կորցնել։

1969 թ. ապրիլի 27-ին կայացավ հանրաքվե, որը Ֆրանսիայի պատմության մեջ առաջին անգամ պարտություն բերեց այն նախապատրաստած կառավարությանը։ Ընտրողների 52 %-ը արտահայտվեց կառավարական օրինագիծը մերժելու օգտին։ Իմանալով այդ մասին, գեներալ դը Գոլը հանրապետության պրեզիդենտի պոստից անհապաղ հրաժարական տվեց[7]։

Նոր պրեզիդենտի ընտրությունները կայացան 1969 թ. հունիսին։ Ընտրությունների նախօրյակին կոմունիստական կուսակցությունը բոլոր ձախ խմբավորումներին առաջարկեց միասնական թեկնածու առաջադրել։ Սակայն նրա առաջարկությունը պաշտպանություն չգտավ սոցիալիստական կուսակցության, ռադիկալների կուսակցության և մյուս ձախ ուժերի ղեկավարության կողմից։ Ձախ ուժերի պառակտման հետևանքով ընտրություններում հաղթանակ տարավ ՅՈՒՆՌ կառավարող կուսակցությունը, որը 1968 թ. վերանվանվել էր ՅՈՒԴՌ-ի («Հանրապետության պաշտպանության դեմոկրատների միություն») կուսակցություն։ Նրա թեկնածու, նախկին պրեմիեր մինիստր Ժ. Պոմպիդուն ընտրվեց Ֆրանսիայի պրեզիդենտ։

Պրեզիդենտ Պոմպիդուն իր քաղաքականության հիմնական ուղղությունը սահմանեց «հաջորդություն և երկխոսություն» խոսքերով։ Դա նշանակում էր, որ Պոմպիդուն մտադիր էր հիմնականում շարունակել պրեզիդենտ դը Գոլի քաղաքականությունը, բայց միաժամանակ պատրաստ էր աջ օպոզիցիայի ներկայացուցիչների հետ բանակցությունների և կոմպրոմիսների դիմելու։

[7] Գեներալ դը Գոլը մահացավ 1970 թ. նոյեմբերին։

Պոմպիդուի կառավարությունը հայտարարեց ԱՄՆ-ի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու իր մտադրության մասին և համաձայնեց Անգլիայի մասնակցությամբ «Ընդհանուր շուկայի» համակարգի ընդարձակմանը։ Միաժամանակ նա արտահայտվեց Սովետական Միության հետ կապերն ամրապնդելու և միջազգային լարվածությունը թուլացնելու օգտին։ Քաղաքական կարևոր նշանակություն ունեն Ժ. Պոմպիդուի Սովետական Միություն այցը (1970 թ. հոկտեմբեր) և Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի այցը Ֆրանսիա (1971 թ. հոկտեմբեր)։ Լ. Ի. Բրեժնևի այցի արդյունքը եղավ «Սովետա-ֆրանսիական դեկլարացիայի» և «ՍՍՀՄ-ի ու Ֆրանսիայի միջև համագործակցության սկզբունքների» ստորագրումը, որոնք նախատեսում էին համատեղ գործողություններ Եվրոպայում և ամբողջ աշխարհում անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, կանոնավոր քաղաքական կոնսուլտացիաներ, տնտեսական, գիտական և մշակութային համագործակցության ընդարձակում։ Լ. Ի. Բրեժնևի հետ 1974 թ. մարտին պրեզիդենտ Պոմպիդուի հանդիպման ժամանակ Ֆրանսիան և ՍՍՀՄ-ը արտահայտվեցին երկու կողմերի համագործակցության հետագա զարգացման խորացման օգտին։

Ֆրանսիական կառավարությունը ներքին քաղաքականության բնագավառում իր նպատակը հռչակեց «նոր հասարակության» ստեղծումը, որը նախատեսում էր ձեռնարկատերերի հետ «դասակարգային համագործակցության» հիման վրա արտադրության կառավարմանը աշխատավորների «մասնակցությունը»։ Սակայն կառավարությանը չհաջողվեց հասնել դասակարգային պայքարի դադարեցման և թուլացնել օպոզիցիան։ 1972 թ. ամռանը կոմունիստական կուսակցությունը, սոցիալիստական կուսակցությունը և ձախ ռադիկալները Ֆրանսիայի պատմության մեջ առաջին անգամ ընդունեցին միասնական կառավարական ծրագիր։ Այդ ծրագիրն առաջարկում էր ազգայնացնել էկոնոմիկայի հիմնական ճյուղերը, բարձրացնել ժողովրդական զանգվածների կենսամակարդակը, ապահովել Ֆրանսիայի անկախությունն ու անվտանգությունը։

1973 թ. մարտին կայացան պառլամենտի ընտրությունները, որոնցում ձախ կուսակցությունները, որոնք հանդես էին գալիս միասնական ծրագրի հիման վրա, նվաճեցին ընտրողների ձայների 45 %-ը։ Սակայն քվեարկության մաժորիտարական համակարգը օգնեց ՅՈՒԴՈ-ին և նրա դաշնակիցներին՝ «անկախ հանրապետականների» ֆեդերացիային, պառլամենտում պահպանելու մեծամասնությունը։ Ժ. Պոմպիդուի մահից հետո, 1974 թ. մայիսին կայացան պրեզիդենտի վաղաժամկետ ընտրություններ։ Ձախ ուժերը ՖԿԿ-ի գլխավորությամբ նորից հանդես եկան միասնաբար։ Նրանց թեկնածու Ֆ. Միտերանը հավաքեց ընտրողների ձայների 49 %-ը։ Կառավարող կոալիցիայի թեկնածու, «անկախ հանրապետականների» ֆեդերացիայի պարագլուխ Վ. Ժիսկար դը Էստենը ստացավ ձայների 51 %-ը և ընտրվեց Ֆրանսիայի պրեզիդենտ։

Ֆրանսիայի հետպատերազմյան պատմությունը պատմագրության մեջ

Ֆրանսիայում, ինչպես և շատ այլ երկրներում, նորագույն պատմությունը ուսումնասիրվում է ոչ այնքան պատմաբանների կողմից, որքան այսպես կոչված «քաղաքական» գիտությունների բնագավառի մասնագետների՝ սոցիոլոգների, իրավաբանների, տնտեսագետների կողմից։ Նորագույն ժամանակների պատմագրության զարգացման վրա լուրջ ազդեցություն են գործում քաղաքական գործիչների և ժուռնալիստների հրապարակախոսական աշխատությունները։

Նորագույն պատմության բնագավառի գլխավոր հետազոտական և կազմակերպող կենտրոն է 1945 թ. կազմակերպված Քաղաքական գիտությունների ազգային ֆոնդը (ինստիտուտ)[8]։ Նրա ղեկավարության կազմում խոշոր գիտնականների հետ միասին մտնում են հայտնի բանկերի դիրեկտորներ և նշանավոր պետական պաշտոնյաներ։ Խմբվելով ինստիտուտի շուրջը, մասնագետներն զբաղվում են գերազանցապես հետպատերազմյան Ֆրանսիայի պառլամենտական և կուսակցական-քաղաքական համակարգի ուսումնասիրմամբ։ Նրանց աշխատություններում մանրամասնորեն քննարկված են ընտրական աշխարհագրության, տարբեր կուսակցությունների ազդեցության, սոցիալական դասակարգերի հետ նրանց կապի հարցերը։ Չորրորդ և Հինգերորդ հանրապետությունների պատմությանն են նվիրված ինստիտուտի ամենահայտնի մասնագետների՝ ակադեմիկոս Ա. Զիգֆրիդի[9], պրոֆեսոր Մ. Դյուվերժեի[10], պրոֆեսոր Ֆ. Գոգելի[11], հայտնի ժուռնալիստ Ժ. Ֆովելի[12] գրքերը։ Այդ հեղինակների մեծամասնությունը հետպատերազմյան Ֆրանսիայի պատմությունը դիտում է իբրև բուրժուա-դեմոկրատական ազատությունների և հիմնարկների զարգացման պրոցես։ Նրանք խստորեն քննադատում են մինիստրական հաճախակի փոփոխությունները և Չորրորդ հանրապետության մյուս թույլ կողմերը, բայց հաճախ հավանություն չեն տալիս անձնական իշխանության համակարգին։

Վերջին տարիներին լայն տարածում ստացավ այսպես կոչված «ինդուստրիալ հասարակության» տեսությունը, որը զարգացված է, մասնավորապես, հայտնի ժուռնալիստ և սոցիոլոգ Ռ. Արոնի գրքերում։ Ռ. Արոնը գրանում է, որ Չորրորդ հանրապետության «անարխիական պառլամենտարիզմը» չէր համապատասխանում ինդուստրիալ հասարակության պահանջմունքներին, այն դեպքում, երբ Հինգերորդ հանրապետության վարչակարգը Ֆրանսիայի համար բացում է «ուղի դեպի արդի քաղաքակրթությունը»[13]։

Քաղաքական որոշ հոսանքներ, որոնք բավականին արտացոլում չեն գտել պատմական գրականության մեջ, լայնորեն ներկայացված են հրապարակախոսության մեջ։ Դրանց է վերաբերում գրգոլյան հոսանքը, որի աչքի ընկնող ներկայացուցիչն է Ֆրանսիայի նախկին պրեմիեր մինիստր Մ. Դեբրեն։ Չորրորդ հանրապետության պատմությունը, դը Գոլի 1946 թ. հրաժարականից հետո, այդ ուղղության աշխատանքներում ներկայացվում է իբրև քաոսի և անկարգության պատմություն, որը առաջ էր եկել ամուր իշխանության բացակայությունից և կուսակցությունների կործանարար պայքարով։ Դատելով, որ գոլիզմն «ամուր իշխանության» և «Ֆրանսիայի մեծության» գաղափարներով մարմնավորում է ազգային լավագույն ավանդույթները, այդ հեղինակները Հինգերորդ հանրապետության հաստատման մեջ տեսնում են «փրկության միակ հնարավորությունը» մի երկրի համար, որը կանգնած էր «սնանկացման և քաղաքացիական պատերազմի եզրին»[14]։

---

[8] Քաղաքական գիտությունների ազգային ֆոնդը հրատարակում է «Քաղաքական գիտությունների ֆրանսիական հանդես» ժուռնալը („Revue francaise de Science politique"։) Ինստիտուտի աշխատակիցների աջակցությամբ 1946 թվականից լույս է տեսնում «Քաղաքական տարեգիրքը („Année politique"), որը օգտակար տեղեկատու նյութեր է պարունակում։

[9] Տե՛ս A. Siegfried, De la III à la IV République. Paris, 1956; նույնի՝ De la IV à la V Republique, Paris, 1958։

[10] Տե՛ս M. Duverget, La République, Paris, 1960։

[11] Տե՛ս F. Goguel, Le régime politique francaisè. Paris, 1959; Géngraphie des élections ou la troisième et la guatrième républigue. P., 1970։

[12] Տե՛ս J. Fauvel, La IV Républigue, Paris, 1959։

[13] R. Aron Immuable et chanqeante. De la IV à la V Rèpubligue, Paris, 1959.

[14] M. Debré. Sur le gaullisme. Paris, 1967, p. 7.

Աջերի կողմից գեներալ դը Գոլի քաղաքականության խիստ քննադատությունը տրված է ծայրահեղ գաղութարարների դրականության մեջ, որը լայն տարածում գտավ 50-ական թվականների վերջին և 60-ական թվականների սկզբին, ֆրանսիական գաղութային կայսրության քայքայման հետ կապված։

Ծայրահեղ գաղութարարների համար, որոնց հայացքները հատկապես հստակորեն տրված են նրանց պարագլուխներ Ժ. Սուստելի և Ժ. Բիդոյի գրքերում, Ֆրանսիայի ամբողջ հետպատերազմյան պատմությունը «դեպի անկման ուղի է», որը կանխորոշվեց գաղութները կորցնելով։ Գեներալ դը Գոլին, որը բռնեց նախկին գաղութների անկախությունը ճանաչելու ուղին, ծայրահեղ գաղութարարները դիտում են որպես «դավաճան», որը «վերացնում է ազգային հարստությունը և խեղդում ազատությունը»[15]։

Անձնական իշխանության վարչակարգի քննադատությունը և սոցիալիստական կուսակցության ղեկավարության քաղաքականության արդարացումը բովանդակվում է Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Գի Մոլեի ելույթներում[16]։ Նրա հիմնական փաստարկը հանգեցնում է այն պնդմանը, թե, իբր, 1958 թ. զանգվածները պատրաստ չէին պաշտպանելու հանրապետությունը, իսկ կոմունիստների և սոցիալիստների միջև դաշինքը չէր կարող խանգարել խռովարար-ծայրահեղ գաղութարարների հաղթանակին։

1968 թ. մայիս—հունիսի իրադարձությունները կյանքի կոչեցին հրապարակախոսական առատ գրականություն, որն արտացոլում էր ձախլիկ (գոշիստական՝ ֆրանսերեն գոշ—ձախ բառից) խմբավորումների հայացքները։ Պնդելով, որ 1968 թ. գարնանը Ֆրանսիայում իբրև թե ստեղծվել էր հեղափոխական իրադրություն, որը զինված ապստամբությունն անհրաժեշտ էր դարձրել, նրանք անգիտակցաբար Ֆրանսիայի բանվոր դասակարգին և կոմունիստական կուսակցությանը մեղադրում են հեղափոխականության պակասի և կապիտալիզմը տապալել չցանկանալու մեջ։

Ֆրանսիական կոմունիստները հակահարված են տալիս բուրժուական և գոշիստական պատմագրությանը։ ՖԿԿ-ի ղեկավարների ելույթները[17], «ֆրանսիական կոմունիստական կուսակցության պատմություն»[18] կոլեկտիվ աշխատությունը, ֆրանսիական տնտեսագետների և պատմաբան-մարքսիստների[19] հատուկ աշխատությունները բովանդակում են ֆրանսիական իմպերիալիզմի զարգացման և նրա հակասությունների դասակարգային խոր վերլուծությունը։

Ֆրանսիայի հետպատերազմյան պատմության ուսումնասիրման գործում մեծ ներդրում են կատարել սովետական հետազոտողները։ Նրանց ուշադրությունը առաջին հերթին գրավել են դասակարգային և քաղաքական պայքարի հարցերը, բանվորական և կոմունիստական շարժման պատմությունը, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը, գաղութային կայսրության քայքայումը, արտաքին քաղաքականության պրոբլեմները[20]։

Ֆրանսիայի հետպատերազմյան պատմության առանձին պրոբլեմների հետազոտության հետ միասին սովետական գիտնականները ստեղծել են մի շարք կոլեկտիվ աշխատություններ[21] և ընդհանրացնող մենագրություններ Չորրորդ և Հինգերորդ հանրապետությունների պատմության վերաբերյալ[22]։

---

[15] J. Soustelle, L'espérance trahie. Paris, 1962, p. 11.

[16] Տե՛ս G. Mollet, 13 mai 1958—13 mai 1962, Paris, 1962.

[17] Տե՛ս **Մ. Торез**, Сын народа. М., 1960; նույնի. Избранные произведения т. 1—11 М., 1959; նույնի. Избранные статьи и речи. М., 1966. **Ж. Дюкло.** Избранные произведения, т. I—II. М., 1959; նույնի. Голлизм, технократия, корпоративизм. М., 1964; **В. Роше.** Путь к освобождению крестьянства. М., 1953; նույնի. Труженики полей. М., 1964.

[18] Տե՛ս „Histoire du Parti communiste Français (manuel)". Paris, 1964.

[19] Տե՛ս «Тресты-миллиардеры во Франции», М., 1953; «Франция и тресты». М., 1955; **Ж. Брюа** и **М. Пиоло.** Очерки истории Всеобщей конфедерации труда Франции. М., 1959; **Ф. Бонт.** Германский милитаризм и Франция. М., 1961; **А. Клод.** Голлизм и крупный капитал. М., 1961; **М. Инкер.** Новые черты финансовой олигархии во Франции. М., 1961.

ԳԼՈՒԽ 12

ԻՏԱԼԻԱ

Պատերազմի հետևանքները և քաղաքական ուժերի տեղաբաշխումը

Երկրորդ համաշխարհային պատերազմում իտալական բանակը կորցրեց 450 հազար սպանված կամ անհայտ կորած՝ ավելի քիչ, քան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Բայց այս անգամ ռազմական գործողություններն ընդգրկեցին ամբողջ թերակղզին և նյութական վնասներն զգալիորեն շատ էին։ Իտալիայի ազգային սեփականությունը կրճատվեց համարյա մեկ երրորդով, կորուստները գնահատվում էին մոտավորապես 10 միլիարդ լիրա (1945 թ. գներով)։ Ավերվել էր արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների 20 %-ը, նավահանգստային կառուցվածքների 90 %-ը, խճուղային 60 և երկաթուղային ճանապարհների 40 %-ը։ 1945 թ. արդյունաբերական արտադրության ծավալը կազմում էր նախապատերազմյանի մոտ 30 %-ը, իսկ սննդամթերքի ներքին պաշարներն ապահովում էին երկրի պահանջարկի մոտ մեկ երրորդը։ Տնտեսական կյանքի կազմալուծումն առաջ բերեց դեֆլվացիայի բուռն պրոցես։ Դրան նպաստում էր անգլո-ամերիկյան իշխանությունների կողմից օկուպացիոն լիրայի թողարկումը, որը շրջանառության մեջ էր իտալական վալյուտայի հետ միասին։ Ընդամենը մինչև 1946 թ. դաշնակիցներն օկուպացիոն դրամներ թողարկեցին 860 միլիարդ լիրայի չափով։

Ինակչության կյանքի պայմանները ծայրահեղորեն ծանր էին։ Քաղաքներում էլեկտրական լուսավորություն, գազ չկար, չէր բավականացնում ջուրը, համարյա չէին աշխատում կապը և տրանսպորտը։ Ամբողջ Իտալիայով մեկ թափառում էին անօթևան տասնյակ հազարավոր մարդիկ։ Խոշոր քաղաքների շուրջն աճեցին բարաքներից և հյուղակներից բաղկացած թաղամա-

---

[20] Ֆրանսիայի պատմության մատենագիտությունը սիստեմատիկաբար հրապարակվում է «Ֆրանսիական տարեգրքում» (լույս է տեսնում 1959 թվականից)։ Մանրամասնորեն տե՛ս **В. А. Дунаевский.** История Франции в советской послевоенной научной литературе (1945—1959) «Французский ежегодник, 1959». М., 1961; «Историография новой и новейшей истории стран Европы и Америки», т. 2. М., 1968.

[21] Տե՛ս «Проблемы экономики и политики Франции после второй мировой войны». М., 1962; «Очерки рабочего движения во Франции (1917—1967). М., 1968; «Борьба французской коммунистической партии за единство левых сил». М., 1968; «Франция. Экономика и политика стран современного капитализма». М., 1973; История Франции, т. 3, М., 1973:

[22] Տե՛ս **Н. Н. Молчанов,** Четвертая республика. М., 1963; **Ю. И. Рубинский.** Пятая республика. М., 1964:

սեր։ Մենդամիերքի պակասն առաջ բերեց սպեկուլյացիա. ամեն տեղ ծաղկում էր սև շուկան։ Արտադրության անկումը հասցրեց գործազուրկների բանակի ստեղծմանը, որը 1946 թ. վերջերին հասավ 2 միլիոն մարդու։

Անգլո-ամերիկյան զորքերի կողմից Իտալիայի օկուպացումն է՛լ ավելի քայքայեց երկրի էկոնոմիկան։ Անգլիացիները և ամերիկացիները լայնորեն դիմում էին ոչ միայն հասարակական և բնակելի շենքերի, այլև արդյունաբերական ձեռնարկությունների, դրանց արտադրանքի ու սարքավորման, արդյունաբերական ու գյուղատնտեսական հումքի բռնագրավմանը։

Չնայած տնտեսական ծանր պայմաններին, իտալական աշխատավորները հույսով էին նայում ապագային։ Երկրի քաղաքական կյանքում սկսեցին կարևորագույն դեր խաղալ այն ուժերը և կուսակցությունները, որոնք պատերազմի տարիներին ղեկավարում էին հակաֆաշիստական պայքարը և Դիմադրական շարժումը։ 1945 թ. հունիսի 21-ին ազգային ազատագրության կոմիտեների մեջ մտնող հակաֆաշիստական կուսակցությունները, գործողության կուսակցության ղեկավար, Դիմադրության հայտնի գործիչ Ֆ. Պարիի գլխավորությամբ, կառավարություն կազմեցին։ Կոմունիստական կուսակցության կողմից նրա մեջ որպես մինիստրներ մտան Պ. Տոլյատին, Մ. Սկոչիմարոն և Ֆ. Գուլոն։

Իտալական կոմունիստական կուսակցությունը վերածվեց բանվոր դասակարգի ուժեղագույն կուսակցության, իտալական աշխատավորների մասսայական կուսակցության։ 1945 թ. նրա շարքերում հաշվվում էր ավելի քան 1,5 միլիոն մարդ. նա հենվում էր մասսայական երիտասարդական, կանանց և մյուս կազմակերպությունների վրա։ Համատեղ հակաֆաշիստական պայքարն ամրապնդել էր սոցիալիստների հետ կոմունիստական կուսակցության դաշինքը։ Սոցիալիստական կուսակցությունը, որի գլուխ կանգնած էր Պ. Նենին, միավորում էր համարյա 900 հազար անդամներ։ 1946 թ. երկու կուսակցությունների միջև գործողությունների միասնության պակտ կնքվեց, որն ընդհանուր նպատակներին հասնելու պայքարի հիմք ծառայեց։

Կոմունիստները և սոցիալիստներն առաջատար դեր խաղացին 1944 թ. ստեղծված Աշխատանքի իտալական ընդհանուր կոնֆեդերացիայում (ԱԻԿԿ)։ Դա հզոր միացյալ արհմիութենական կազմակերպություն էր, որն ընդգրկում էր քաղաքի և գյուղի մոտ 6 միլիոն աշխատավորների։ Կոմունիստների և սոցիալիստների հետ միասին նրա մեջ մտնում էին նաև քրիստոնեական դեմոկրատները և մանր կուսակցությունների ներկայացուցիչները։ ԱԻԿԿ-ի գլխավոր քարտուղարն էր բանվորական շարժման հայտնի գործիչ, կոմունիստ Ջ. Դի Վիտորիոն։

Հետպատերազմյան Իտալիայի ամենախոշոր բուրժուական կուսակցությունը դարձավ կաթոլիկական քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը (ՔԴԿ)։ Այն ստեղծվեց 1944 թ. և հանդիսացավ քայքայված ժողովրդական կուսակցության ժառանգորդը։ Այդ կուսակցությունն իրեն հռչակեց դասակարգերի համագործակցության կուսակցություն և կապիտալիստական հասարակությունը ներկայացնում էր իբրև մի միասնական օրգանիզմ, որում աշխատանքը և կապիտալը կատարում են միատեսակ օգտակար դեր։ Իր գաղափարական հիմք նա հայտարարեց քրիստոնեությունն իբրև բարձրագույն բարոյական օրենք։ ՔԴԿ-ի ծրագրային փաստաթղթերը նախատեսում էին անցկացնել մասնակի ագրարային և արդյունաբերական ռեֆորմներ, բաժնետոմսերի գնման միջոցով բանվորների մասնակցությունը ձեռնարկություններին տիրելու գործում, կոոպերատիվ շինարարության զարգացում և այլն։ ՔԴԿ-ի դեկլարացիաներում մեծ տեղ էր տրված մարզային ինքնավարության

համակարգի ստեղծման միջոցով պետական իշխանության ապակենտրոնացման պահանջին։

Կրոնական գաղափարախոսությունը հակադրելով մարքսիզմին և օգտագործելով կաթոլիկական եկեղեցու հզոր ապարատի օգնությունը, քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը դարձավ Իտալիայի բուրժուական կարգերի գլխավոր հենարանը։ Նրան սկսեցին օգնել մոնոպոլիստական շրջանները, մասսայական-կաթոլիկական կուսակցությունը դիտելով որպես հեղափոխական պոռթկումների վտանգի դեմ հենարանի։ Սխական քահանաների օգնությամբ ՔԴԿ-ն իր ազդեցությունը տարածեց գյուղացիության, քաղաքային միջին խավերի ղգալի մասի և բանվորների մի մասի վրա։ Դրան նպաստեց քրիստոնեա-դեմոկրատական ղեկավարների խորամանկ դեմագոգիկ քաղաքականությունը, որոնք խոստանում էին եռանդուն միջոցներով բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը և հետպատերազմյան առաջին տարիներին հանդես էին գալիս էկոնոմիկայի վերականգնման գործում բանվոր դասակարգի կուսակցությունների հետ համագործակցելու օգտին։ Քրիստոնեական դեմոկրատների գլուխ էր կանգնած ժողովրդական կուսակցության նախկին գործիչ Ա. դե Գասպերին։

Իտալիայում քաղաքական կլիման բնութագրվում էր ժողովրդական զանգվածների բարձր ակտիվությամբ։ Իտալական ժողովուրդը մեծ ավանդ ներդնելով ֆաշիստական դիկտատուրայից և գերմանական օկուպացումից երկրի ազատագրման գործում, ծարավի էր հասարակության սոցիալական և քաղաքական ամբողջ կառուցվածքի խոր նորացման։ Իտալիայում սոցիալիզմի նկատմամբ համակրանքի աճի վրա վիթխարի ազդեցություն ունեցավ հիտլերիզմի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակը։

Խոշոր բուրժուազիան, որ իշխանության գլուխ էր կարգել ֆաշիզմը և մինչև վերջին հնարավորությունը պաշտպանել էր նրան, կազմալուծվել և թուլացել էր։ Նրա ամենանշանավոր որոշ ներկայացուցիչներ, որ հիտլերականների հետ համագործակցել էին նաև դիմադրության հաղթանակից հետո, ձերբակալվեցին պարտիզանների կողմից կամ փախան արտասահման։ Ճնշված ապրած հին կառավարող դասակարգին օգնության եկան անգլո-ամերիկյան օկուպացիոն իշխանությունները, որոնք Հյուսիսային Իտալիայում ռազմական դրություն մտցրին և նրան մեկուսացրին երկրի մնացած մասից։ Դաշնակցային զինվորական վարչության (ԱՄԳՕՏ) մարմինները ձգտում էին վերացնել Դիմադրության շարժման ժամանակ ստեղծված ժողովրդական իշխանության հիմնարկները։ Իտալական կառավարության գործունեությանը հսկում էր դաշնակցային վերահսկիչ հանձնաժողովը, որում գլխավոր դերը կատարում էին Անգլիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները, նրանք առանց քաշվելու միջամտում էին երկրի ներքին գործերին։ Երբ 1945 թ. մայիսին մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Պ. Տոլյատին մեկնեց Հյուսիսային Իտալիա, ապա նրան արգելվեց հրապարակայնորեն հանդես գալ, իսկ սոցիալիստական կուսակցության ղեկավար Պ. Նենին նույնիսկ ձերբակալվեց։

Երկրում քաղաքական ուժերի տեղաբաշխման վրա ազդում էր Հյուսիսային և Հարավային Իտալիայի քաղաքական զարգացման տարբեր մակարդակը։ Հյուսիսում, որն անցել էր երկամյա ազգային-ազատագրական պատերազմի միջով, նշանակալի չափով ձեռք էր բերվել ազգային ազատագրության կոմիտեների ղեկավարությամբ մարտնչած ուժերի միասնություն։ Երկրի կենտրոնական և հատկապես հարավային շրջաններում, որոնք ֆաշիզմից և

գերմանական օկուպացիայից ազատագրվել էին դաշնակից զորքերի կողմից, պահպանողական ուժերի ազդեցությունն ավելի զգալի էր, պետական իշխանության հին, բյուրոկրատական ապարատն այստեղ բավականին ամուր էր մնում։

Այս պայմաններում իտալական կոմունիստական կուսակցությունը շարունակում էր վարել 1944 թ. իր հռչակած ազգային միասնությունը պահպանելու քաղաքական գիծը։ Այդ գիծը հետագա մշակում ստացավ կուսակցության 5-րդ համագումարում (1945 թ. դեկտեմբեր)։ Կոմունիստական կուսակցությունն առաջադրեց բանվոր դասակարգի, քաղաքի և գյուղի միջին խավերի և բուրժուազիայի որոշ մասի դաշինքի հիման վրա առաջադեմ դեմոկրատական կարգեր հաստատելու ծրագիր։ Կոմունիստներն ընդգծում էին, որ առաջադեմ դեմոկրատական կարգերի զարգացման վերջնական նպատակը սոցիալիզմն է։ Որպեսզի այդ հեռանկարը ռեալ դարձվեր, կոմունիստներն անհրաժեշտ էին գտնում անցկացնել խոր դեմոկրատական ռեֆորմներ, հրաշակել հանրապետություն, հրավիրել սահմանադիր ժողով և ընդունել նոր սահմանադրություն, կնքել հաշտության պայմանագիր և օտարերկրյա զորքերը շտապ դուրս բերել Իտալիայից։ Կոմունիստները պահանջում էին ազգայնացնել արդյունաբերական և ֆինանսական մոնոպոլիաները, կազմակերպել պետական պլանավորում և աշխատավորների վերահսկողություն սահմանել արտադրության վրա, վերացնել խոշոր հողային սեփականությունը և այդ միջոցով ազատված հողերը հանձնել գյուղացիներին։

Իտալիայի հոչակումը հանրապետություն։ Հակաֆաշիստական կուսակցությունների պառակտումը

Ազգային ազատագրության կոմիտեների վրա հենվող Ֆ. Պարիի կառավարության գործունեությունը անմիջապես հանդիպեց ռեակցիայի ուժերի թաքնված, բայց համառ դիմադրությանը։ Դաշնակցային զինվորական վարչության ներկայացուցիչները սահմանափակեցին նրա լիազորությունները, հարուստների դասակարգերը սարոտաժի էին ենթարկում սպեկուլյացիայի և սև շուկայի դեմ ձեռնարկվող միջոցառումները, բարձր պաշտոնյաները արգելակում էին ֆաշիստական տարրերից պետական ապարատը մաքրելը։

Այդ ժամանակամիջոցում երկրի քաղաքական կյանքում կարևոր տեղ գրավեց պետական կառուցվածքի ձևի հարցը։ 1945-ի վերջին—1946 թ. սկզբին կայացած կուսակցական համագումարներում կոմունիստները, սոցիալիստները և գործողության կուսակցությունն արտահայտվեցին հանրապետություն հաստատելու օգտին։ Հանրապետական կարգերի հաստատման կողմնակից էր նաև քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության մեծամասնությունը։ Չնայած միապետության կողմնակիցների բոլոր մանևրներին, որոնք ձգտում էին ժամանակ շահել, 1946 թ. հունիսի 2-ին կառավարման ձևի մասին կայացավ հանրաքվե։ Իտալական ժողովրդի մեծամասնությունն արտահայտվեց միապետության դեմ, և 1946 թ. հունիսի 18-ին Իտալիան հռչակվեց հանրապետություն։

Հանրաքվեի հետ միաժամանակ տեղի ունեցան սահմանադիր ժողովի ընտրություններ, որը կոչված էր նոր սահմանադրություն մշակել։ Ֆաշիստական վարչակարգի տապալումից հետո այդ առաջին ընտրությունները նշանավորվեցին բանվոր դասակարգի կուսակցությունների հաջողություններով. կոմունիստական կուսակցությունն ստացավ ձայների 19 %-ը, սոցիալիստները՝ 20 %-ը։ Ձախ ուժերի մյուս ներկայացուցիչների հետ միասին նրանք սահմանադիր ժողովում ունեին տեղերի 45 %-ը։ Քրիստոնեա-դեմոկրատա-

կան կուսակցությունը, կաթոլիկական եկեղեցու ակտիվ օգնությամբ ստացավ ձայների 35 %-ը։ Դա հնարավորություն տվեց կաթոլիկների պարագլուխ դը Գասպերիին զբաղեցնելու մինիստրների խորհրդի նախագահի պոստը։ Նրա կազմած կառավարությունը կոալիցիոն էր՝ բացի քրիստոնեական դեմոկրատներից նրա մեջ մտան կոմունիստները, սոցիալիստները, հանրապետականները և «անկախականները»։

Նոր կառավարության արտաքին քաղաքականության կարևոր քայլը հաշտության պայմանագրի ստորագրումն էր։ Հաշտության պայմանագրի շրջապտույտ ստորագրման օգտին եռանդուն հանդես եկավ Սովետական Միությունը։ Նրա ներկայացուցիչները պաշտպանում էին հաշտության պայմանագրի այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն տային Իտալիային զարգանալու դեմոկրատական ուղիով և նրա անկախությունը պաշտպանեին իմպերիալիստների ոտնձգություններից։

Հաշտության պայմանագիրն ստորագրվեց 1947 թ. փետրվարի 10-ին Փարիզի կոնֆերանսում։ Սովետական պատվիրակության պնդմամբ նրա մեջ մտցվեցին այնպիսի կետեր, որոնք խոչընդոտում էին երկրում ֆաշիստական կազմակերպությունների վերականգնմանը։ Անգլիան և ԱՄՆ-ը պարտավորվեցին իրենց օկուպացիոն զորքերը դուրս բերել պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 20 օր հետո։ Իտալիայի ցամաքային սահմանները որոշվեցին հիմնականում 1938 թ. հունվարի 1-ին գոյություն ունեցածին համապատասխան։ Իտալիան հրաժարվեց Աֆրիկայում իր նախկին գաղութների պահանջից, ճանաչեց Ալբանիայի և Եթիոպիայի անկախությունը, Հունաստանին վերադարձրեց Դոդեկանեզյան կղզիները։ Տրիեստ քաղաքն իր օկրուգով առանձնացվեց իբրև ազատ տարածք, որի նահանգապետը նշանակվում էր Միավորված ազգերի կազմակերպության կողմից (Իտալիայի և Հարավսլավիայի միջև հետագա բանակցությունների հետևանքով 1954 թ. ազատ տարածք Տրիեստը բաժանվեց երկու երկրների միջև և Տրիեստ քաղաքն անցավ Իտալիային)։ Պայմանագիրը Իտալիայի զինված ուժերի սահմանափակում նախատեսեց, արգելեց նրա տարածքում ռազմական բազաների տեղադրումը և սահմանեց, որ Իտալիան պետք է ռազմատուգանք վճարի ՍՍՀՄ-ին, Հարավսլավիային, Հունաստանին և Այրանիային՝ այն երկրներին, որոնց տարածքները տուժել էին իտալական ֆաշիստական բանակների ներխուժումից։

Կոմունիստները և սոցիալիստները կառավարությունում եռանդով պայքարում էին ազգային էկոնոմիկայի վերականգնման և աշխատավորների կենսամակարդակի բարձրացման համար։ Նրանք հասան կալվածատիրական չմշակվող հողերը գյուղացիական կոոպերատիվներին հանձնելու, կիսարբության պայմանների փոփոխման և բերքի ավելի արդարացի բաժանման, առանց արհմիությունների համաձայնության ձեռնարկություններից բանվորների ազատումն արգելելու և աշխատավարձի շարժական սանդղակ մտցնելու մասին օրենքների ընդունմանը։ 1946 թ. սեպտեմբերին կոմունիստները կառավարությանը սոցիալ-քաղաքական վերափոխման ծրագիր առաջարկեցին, որը ներառում էր խոշորագույն մոնոպոլիաների ազգայնացումը և ագրարային ռեֆորմը։

Սակայն բուրժուական կուսակցություններն ակտիվորեն հակազդեցին երկրի սոցիալական և տնտեսական նորացման քաղաքականությանը։ Պահպանողական ուժերի ձգողության ավելի բացահայտ կենտրոն դարձավ քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը։ Քրիստոնեական դեմոկրատներն ամեն կերպ կրկնում էին, թե իտալական էկոնոմիկան անկարող է սեփական ուժերով գլուխ հանել դժվարություններից։ 1947 թ. հունվարին դը Գասպերին

այցելեց ԱՄՆ, որտեղ նրան խոստացան 100 միլիոն դոլարի փոխառություն տալ և պարտավորվեցին կոմունիստների հետ համագործակցությունը դադարեցնելու փոխարեն Իտալիան մտցնել ամերիկյան օգնության ծրագրում։

Ռեակցիոն ուժերի պլաններին այդ ժամանակ լրջորեն աջակցեցին աջ սոցիալիստները։ 1947 թ. հունվարին կայացած սոցիալիստական կուսակցության համագումարում աջ թևի պարագլուխ Ջ. Սարագատը պահանջեց լուծել կոմունիստների հետ գործողությունների միասնության մասին պակտը։ Երբ պատգամավորների ճնշող մեծամասնությունը հանդես եկավ այդ պահանջի դեմ, Սարագատի կողմնակիցները հեռացան համագումարից և կազմավորեցին սոցիալ-ռեֆորմիստական կուսակցություն, որը 1952 թ. ընդունեց Իտալական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն անվանումը։ Պառակտիչների գործողությունները լրջորեն անդրադարձան սահմանադիր ժողովում ուժերի հարաբերակցության վրա։

Օգտվելով դրանից, դը Գասպերին հայտարարեց կառավարության հրաժարականի մասին։ Նա հույս ուներ կոմունիստներին հեռացնել կառավարությունից։ Չնայած այդ պահին նրան չհաջողվեց հասնել այդ նպատակին, բայց արդեն պարզ էր, որ դրսի օգնությամբ ոգեշնչված ռեակցիան ակտիվանում է։ Պիոս 12-րդ պապը հանդես եկավ ճառով, որով կոչ արեց արշավանք ըսկըսել ձախ ուժերի դեմ, կրկնելով Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը. «Արթնացեք հռոմեացիներ։ Ժամն է հասել»։ Էլ ավելի վճռական կոչեր էին հընչում ամերիկյան պետական գործիչների կողմից, որոնք պարբերաբար հայտարարում էին, որ Իտալիան օգնություն չի ստանա, մինչև որ կոմունիստներին «դուրս չշպրտեն»։ 1947 թ. մայիսին դը Գասպերին նորից կառավարական ճգնաժամ հրահրեց։ Այս անգամ պահպանողական ուժերի խորամանկ քայլը, որ պաշտպանություն գտավ ԱՄՆ-ի կառավարող շրջանների և Վատիկանի կողմից, հաջողվեց։ Դը Գասպերին կառավարություն կազմեց, որը բաղկացած էր միայն քրիստոնեական դեմոկրատներից։

Դա նշանավորեց ազգային ազատագրության կոմիտեների մեջ մտած կուսակցությունների համագործակցության վերջնական խզումը և քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության կողմից իշխանության մենաշնորհի հասնելը։

1948 թ. նոր սահմանադրությունը և պառլամենտական ընտրությունները

1947 թ. կառավարական «հեղաշրջումը» պետական մարմիններում խախտեց դեմոկրատական լագերի դիրքերը, բայց երկրում չփոխեց քաղաքական ուժերի հարաբերակցությունը։ Անցնելով օպոզիցիայի, կոմունիստները և սոցիալիստները շարունակում էին կարևոր դեր խաղալ պետական կյանքի կարևորագույն հարցերի լուծման գործում։ Դրա դրսևորումներից մեկը ձախ կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությունն էր նոր սահմանադրության մշակմանը, սահմանադրություն, որը հավանության արժանացավ սահմանադիր ժողովի կողմից և 1948 թ. հունվարի 1-ից մտավ ուժի մեջ։

Սահմանադրության համաձայն Իտալիան աշխատանքի վրա հենվող հանրապետություն է։ Սահմանադրության հոդվածները հռչակում են քաղաքական համոզմունքների, խոսքի, խղճի, մամուլի, ժողովների, անձի ազատություն, բնակարանի անձեռնմխելիություն, սահմանում են աշխատանքի և կատարված աշխատանքի համեմատ վճարման, արհմիութենական գործունեության ազատության և գործադուլի իրավունքի վերաբերյալ կարևոր դրույթներ։ Սահմանադրության համաձայն առանձին անձանց տնտեսական գործունեությունը չպետք է վնասի հասարակության շահերին, իսկ մասնավոր սեփականությունը, այդ թվում և արտադրական ձեռնարկությունները, կարող

են փոխհատուցման միջոցով բռնագրավվել հանուն ընդհանուր շահերի, հօգուտ աշխատավորների։ Ճանաչվում էր ձեռնարկությունների կառավարմանը մասնակցելու իրավունքը. սահմանափակվում էին հողային սեփականության չափերը և նշվում կոոպերատիվներին ու մանր տնտեսություններին օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը։ Իտալիայի պատմության մեջ առաջին անգամ ճանաչվում էր կանանց և տղամարդկանց հավասարության իրավունքը, դպրոցներում պարտադիր և անվճար ուսման ժամկետը հասցվում էր մինչև 8 տարվա։

Ավելի սուր բնույթ էր կրում Իտալիայի վարչական կառուցվածքի մասին հոդվածների քննարկումը։ Հավանություն ստացան այն հոդվածները, որոնք նախատեսում էին մարզերի վարչական ինքնավարություն և կառավարման մարզային մարմինների ստեղծում։ Ձախ կուսակցությունները հասան ապագա պառլամենտի երկու պալատների՝ սենատի և դեպուտատների պալատի, իրավահավասարությանը։ Ինչպես դեպուտատների պալատը, այնպես էլ սենատը ձևավորվում են ընդհանուր ընտրությունների ուղիով, սակայն եթե դեպուտատների պալատն ընտրվում է ամբողջ բնակչության համամասնական ներկայացուցչության հիման վրա, ապա սենատ են ուղարկվում յուրաքանչյուր մարզից որոշակի թվով դեպուտատներ՝ ըստ նրա բնակչության թվի։

Այն հոդվածների քննարկման ժամանակ, երբ որոշվում էին պետության և եկեղեցու հարաբերությունները, քրիստոնեական դեմոկրատներն առաջարկեցին նրանց մեջ մտցնել 1929 թ. Լաթերանյան համաձայնագրերը։ Դրանով իսկ նրանք հույս ունեին պառակտում առաջացնել սահմանադիր ժողովում և Վատիկանին առիթ տալ կոմունիզմի դեմ խաչակրաց նոր արշավանք սկսելու։ Սակայն կոմունիստները խափանեցին այդ մանևրը, համաձայնելով սահմանադրության մեջ Լաթերանյան համաձայնագրերը մտցնելուն, որպեսզի արգելքներ չստեղծվեն աշխատավոր կաթոլիկների հետ ձախ ուժերի շփման և դաշնակցելու համար։

Միաժամանակ Վատիկանը իտալական հասարակությունում դեռևս մեծ հնարավորություններ ուներ իր ազդեցությունը պահպանելու համար։ Իտալիայում եկեղեցական ամուսնությունն առաջվա պես քաղաքացիականի հետ հավասար էր ճանաչվում, և փաստորեն համարյա բոլոր ամուսնությունները եկեղեցական էին։ Եկեղեցին իրավունք ուներ դպրոցներում դասավանդել կաթոլիկական ուսմունքներ և ստեղծել սեփական դպրոցներ։ Քահանաների մեծաթիվ բանակն անարգել շարունակում էր հավատացյալների շրջանում քաղաքական ագիտացիա մղել, միջամտում էր Իտալիայի ներքին գործերին։

Չնայած սահմանադրության հոդվածները չէին էլ շոշափում կապիտալիստական կարգերի հիմքերը, բայց դրանք բանվոր դասակարգի կուսակցություններին հնարավորություն էին տալիս պայքարելու երկրի դեմոկրատականացման և կառուցվածքային ռեֆորմների համար, հենվելով հիմնական պետական օրենքի դրույթների վրա պահանջելու խաղաղասիրական քաղաքականություն։ Սահմանադրության ընդունումը, հանրապետական կարգերի հաստատումից հետո իր կարևորությամբ Իտալիայի առաջադիմական ուժերի երկրորդ նվաճումն էր հետպատերազմյան ժամանակաշրջանում։

Նոր սահմանադրության մշակումն ու ընդունումն անցնում էին դասակարգային սուր պայքարի և բանվոր դասակարգի կուսակցությունների կազմակերպական ուժի աճի իրադրության մեջ։ Չնայած ոստիկանական բռնություններին, որոնց սկսեց դիմել կառավարությունը, երկրում շարունակվում էր գործադուլային շարժումը։ Անընդհատ Հյուսիսային Իտալիայի ձեռնարկություններում հուզումներ էին տեղի ունենում։

Դասակարգային խոշոր ընդհարումներ սկսվեցին նաև գյուղում։ Հատկապես համառ էին Հարավային Իտալիայի գյուղացիների ելույթները։ Ցասմամբ լցվելով իրենց դրությունը բարելավելու պահանջներով, գյուղացիներն սկսեցին այստեղ ինքնակամ իրականացնել չմշակվող հողերն իրենց հանձնելու կառավարության կողմից սաբոտաժի ենթարկված օրենքը։ Նեապոլից հարավ գտնվող մի շարք շրջանների տղամարդկանց, կանանց և երեխաների շարասյուներն ուղևորվում էին կալվածատիրական հեռավոր հողամասերը և սկսում հերկել խոպանը։ Այս ճանապարհով չմշակվող հողեր ունեցող հարավային բարոններից 1945-ից մինչև 1947 թ. նվաճվեց մոտ 200 հազար հեկտար վարելահող։

Պատերազմն ավարտվելուց հետո իտալական կոմունիստների նշած դեմոկրատական ուղին պահանջում էր ստեղծել այնպիսի կազմակերպություններ, որոնք կարողանային շարժման մեջ դնել աշխատավոր միլիոնավոր զանգվածներին։ Կոմկուսը մասսայական կուսակցության վերածելու 1944 թ. առաջ քաշված լոզունգը հաջողությամբ կատարվում էր. 1947 թ. վերջերին նրա շարքերում հաշվվում էր մոտ 2 միլիոն անդամ, որոնք միավորված էին տաս հազարից ավելի սեկցիաներում։ Կոմունիստներն օգտվում էին աշխատավորների ամենօրյա պայքարը ղեկավարող Աշխատանքի համընդհանուր իտալական կոնֆեդերացիայի գերակշիռ ազդեցությունից։ Բուռն կերպով զարգանում էին դեմոկրատական մյուս՝ երիտասարդական, սպորտային, կանանց կազմակերպությունները։ Հատկապես ակտիվ էր նախկին պարտիզանների ասոցիացիան։ Վերելք էր ապրում աշխատավորների կոոպերատիվ շարժումը։ 1946 թ. վերջին նա միավորում էր մոտ 20 հազար սպառողական և արտադրական կոոպերատիվ ընկերություններ, որոնք ունեին ավելի քան 5 միլիոն անդամներ։ Կոոպերատիվների գործունեությունը ձեռք էր բերել այնպիսի զգալի թափ, որ նրանք ազդում էին երկրի որոշ մարզերի տնտեսական կյանքի վրա։

Զանգվածային ելույթները հատուկ սրության հասան 1947 թ. աշնանը։ Ժողովրդական հզոր ցույցերն ուղղված էին պարենամթերքի մատակարարման և աշխատավարձի հարցերում կառավարության անգործության դեմ։ Շատ քաղաքներում արյունալի ընդհարումներ եղան ոստիկանության հետ։ Մեծ արձագանք առաջ բերեց ազգային-ազատագրության կոմիտեի առաջադրած ոստիկանապետին պաշտոնանկ անելու դեմ Միլանում կայացած գործադուլը։ Միլանցիները դադարեցրին աշխատանքը, նախկին պարտիզանների ուժեղ ջոկատը գրավեց ոստիկանատունը, իսկ Լոմբարդիայի 160 քաղաքագլուխներ ի նշան բողոքի հրաժարական տվեցին։ Վախեցած կառավարությունը ստիպված էր զիջումների դիմել։

1948 թ. հունվարի լարված իրադրության մեջ հրավիրվեց իտալական կոմունիստական կուսակցության 6-րդ համագումարը։ Համագումարը նշեց իտալական ժողովրդի աղատությանը կառավարության կողմից ուժեղացող սպառնալիքի մասին և հռչակեց դեմոկրատիայի պաշտպանության համար ժողովրդական բոլոր ուժերի համախմբման անհրաժեշտությունը։ Համագումարն ընդունեց սոցիալիստական կուսակցության առաջարկությունը՝ ստեղծել ժողովրդա դեմոկրատական լայն ճակատ, որն առաջիկա ընտրություններում թեկնածուների միասնական ցուցակ առաջադրի։

Պառլամենտական ընտրությունները նշանակվեցին 1948 թ. ապրիլի 18-ին։ Պահպանողական ուժերը նախընտրական կամպանիայի համար մոբիլիզացրին իրենց բոլոր միջոցները։ Քահանաներն սպառնացին եկեղեցուց հեռացնել նրանց, ովքեր կքվեարկեն ժողովրդա-դեմոկրատական ճակատի օգտին։ Ամերիկյան կառավարությունը բացահայտորեն հայտարարեց, որ ձախ

ուժերի հաղթանակի դեպքում Իտալիային ամեն տեսակ օգնություն կդադարեցվի։ Ներքին գործերի մինիստր Շելբան կոմունիստներին մեղադրելով հեղաշրջում նախապատրաստելու մեջ, այդ պատրվակով մի շարք հարձակումներ կազմակերպեց դեմոկրատական կազմակերպությունների շենքերի վրա։

Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունն ընտրություններում ստացավ ձայների ընդհանուր թվի 48 %-ը (12 միլիոն ընտրական թերթիկ), պառլամենտում, սահմանադիր ժողովի հետ համեմատած, ի հաշիվ լիբերալների, միապետականների և աջ թևի այլ մանր կուսակցությունների ավելացնելով իր դեպուտատների քանակը։ Ժողովրդա դեմոկրատական ճակատը հավաքեց ձայների 31,1 %-ը (8,1 միլիոն) և պահպանեց իր դիրքերը, չհաշված այն ձայները, որոնք հավաքել էին սոցիալիստական կուսակցությունից դուրս եկած սոցիալ-դեմոկրատները։ Ընտրություններից հետո դե Գասպերին կառավարություն կազմեց, որի կազմում բացի քրիստոնեական դեմոկրատներից մըտան լիբերալները, հանրապետականները, իսկ ավելի ուշ նաև սոցիալ-դեմոկրատները։

Ընտրությունների արդյունքները քրիստոնեական դեմոկրատներին թույլ տվեցին հակահարձակման անցնել դեմոկրատական ուժերի դեմ։ Դա նշանակում էր, որ դեմոկրատական հեղափոխության զարգացումը կանգնեցվել է, իսկ նրա սոցիալ-քաղաքական ծրագիրը, որ ուղղված էր առաջին հերթին մոնոպոլիաների դեմ, մնում էր չկատարված։ Իշխանության համակենտրոնացումը բուրժուական կուսակցությունների ձեռքում կատարվեց զգալի չափով ԱՄՆ-ի և կաթոլիկական եկեղեցու օգնությամբ։ Սակայն ՔԴԿ-ի ղեկավարության քաղաքական մանյովրները հեշտացան նաև բանվորական շարժման մեջ նկատված պառակտողական միտումների, բանվոր դասակարգի մի մասի շրջանում տարածված պառլամենտական պատրանքների պատճառով։

1948 թ. պառլամենտական ընտրությունների նախօրյակին հակակոմունիստական հիստերիան և ոստիկանական բռնությունները բարենպաստ իրադրություն ստեղծեցին ֆաշիստական տարրերի ակտիվացման համար։ Ընտրություններից քիչ առաջ նեոֆաշիստներն ստեղծեցին իրենց քաղաքական կուսակցությունը, այն քողարկելով «Իտալական սոցիալական շարժում» անվամբ։ Քաղաքական ասպարեզ իր հանդես գալն այդ կուսակցությունը նշանավորեց կոմկուսի շենքերի վրա հարձակումներով, միտինգների գնդակոծությամբ և արհմիութենական գործիչների սպանություններով։

1948 թ. հուլիսի 14-ին պառլամենտի մուտքի մոտ մահափորձ կատարվեց Պ. Տոլյատիի դեմ։ Իտալական կոմունիստների ղեկավարը ծանր վիրավորվեց երեք գնդակով։ Մահափորձից մեկ ժամ անց ամբողջ Իտալիայի թերթերը հաղորդեցին, որ Տոլյատիի դրությունը շատ ծանր է։ Անմիջապես տարբերայնորեն բռնկվեց չտեսնված թափի և ուժի ընդհանուր գործադուլ։ Քաղաքներում կյանքը կազմալուծվեց, չէր աշխատում տրանսպորտը, փակվեցին խանութները, փողոցներով անցնում էին ցուցարարների շարասյուները։ Միլանում շարժման գլուխ կանգնեց քաղաքական ձախ կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված կոմիտեն։ Թուրինում բանվորները գրավեցին ՖԻԱՏ-ի գործարանները։ Շատ բնակավայրերում ցուցարարները գրավեցին մունիցիպալ մարմինները։ Գործադուլը տևեց երկու օր և ընդգրկեց ավելի քան 7 միլիոն մարդ։ Իր մարտական ոգով նա հավասարը չուներ Իտալիայի բանվորական շարժման պատմության մեջ։

Դեմոկրատիայի թշնամիները ցանկանում էին մահափորձն օգտագործել նրա համար, որպեսզի մահացու հարված հասցնեն կոմունիստական կուսակցությանը և ամբողջ ժողովրդական շարժմանը։ Ներքին գործերի մինիստր Շելբան ցուցարարների դեմ շարժեց ոստիկանությունը և զորամասեր։ Ընդհար-

ման ժամանակ սպանվեց 20 և վիրավորվեց ավելի քան 600 մարդ։ Գործադուլի մոտ 7 հազար ակտիվ մասնակիցներ ձերբակալվեցին և դատի տրվեցին։ Կառավարությանը արհմիություններում պաշտպանեցին քրիստոնեական դեմոկրատների ներկայացուցիչները։ Նրանք դուրս եկան ԱՀԿԿ-ի կազմից և ստեղծեցին Աշխատավորների արհիմությունների իտալական կոնֆեդերացիա անունով սեփական արհմիութենական կազմակերպությունը, որը բռնեց կառավարության միջոցառումները պաշտպանելու ուղին։ Նրանց օրինակին հետևեցին սոցիալ-դեմոկրատները, որոնք նույնպես դուրս գալով միասնական արհմիութենական կազմակերպությունից, ստեղծեցին Աշխատանքի իտալական միության կազմակերպությունը։ ԱՀԿԿ-ն շարունակում էր մնալ Իտալիայի ամենախոշոր արհմիութենական կազմակերպությունը, սակայն արհմիությունների պառակտումը, անկասկած, թուլացրեց բանվորական շարժումը։

Միաժամանակ հուլիսի 14-ի իրադարձությունները ցուցադրեցին ժողովրդի կողմից ԻԿԿ լայն պաշտպանությունը։ Ժողովրդական ուժերի միահամուռ ելույթը, որն աջ մամուլը անվանում էր ապստամբություն, բարձրացրեց դեմոկրատների մարտական ոգին և նպաստեց այն հոռետեսության հաղթահարմանը, որն ապրիլի 18-ի ընտրություններում քրիստոնեական դեմոկրատների հաղթանակից հետո տարածվել էր աշխատավորների որոշ մասի շրջանում։

Իտալիայի միանալը «Մարշալի պլանին» և Հյուսիսատլանտյան պակտին

Քրիստոնեա-դեմոկրատական կառավարությունների արտաքին քաղաքականությունը հետպատերազմյան առաջին տարիներին բնութագրվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Իտալիային կապելու ձգտմամբ։ 1947 թ. Իտալիայի և ԱՄՆ-ի միջև կնքվեցին մի շարք տնտեսական համաձայնագրեր։ Օգնություն տալու փոխարեն ԱՄՆ-ի կառավարությունը հնարավորություն ստացավ ուղղակիորեն միջամտելու Իտալիայի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գործերին։ 1948 թ. փետրվարի 2-ին կնքված «Բարեկամության, առևտրի և նավագնացության մասին պայմանագիրը» ԱՄՆ-ի քաղաքացիներին իրավունք էր տալիս անարգել մեկնել Իտալիայի տարածքը, այնտեղ առևտուր անել, ծավալել արդյունաբերական, ֆինանսական և այլ գործունեություն։ Այդ պայմանագրի գաղտնի հավելվածում կային ռազմական հոդվածներ, որոնք նախատեսում էին «երրորդ տերության դեմ» ռազմական գործողությունների դեպքում ամերիկյան զորքերի կողմից իտալական տարածքի օգտագործում, ամերիկյան հրամանատարությանը իրավունք էր տրվում լիակատար վերահսկողություն սահմանել իտալական նավահանգիստների և ավիաբազաների նկատմամբ։ «Եվրոպայի վերականգնման ծրագրերի» («Մարշալի պլան») շրջանակներում Իտալիային տնտեսական օգնություն ցույց տալու մասին 1948 թ. հունիսին կնքված համաձայնագիրն էլ ավելի ուժեղացրեց Իտալիայի կախվածությունը։ Այդ համաձայնագիրը, ի խախտումն սահմանադրության, ընդունվել էր առանց պառլամենտում նախնական քննարկման և միայն ավելի ուշ ներկայացվել էր վավերացման։ Կոմունիստները և սոցիալիստները հանդես եկան «Մարշալի պլանին» միանալու դեմ, քանի որ ամերիկյան «օգնությունը» բացահայտորեն նկատի ուներ ուժեղացնել ամերիկյան իմպերիալիզմի դիրքերն Իտալիայում։ Սակայն պառլամենտի բուրժուական մեծամասնությունը քվեարկեց համաձայնագրին հավանություն տալու օգտին։ Տնտեսական օգնության ծրագիրն իրականացվեց երեք տարվա ընթացքում ամերիկյան ապրանքների ներմուծումով։ Այդ ժամանակվա ընթացքում մատակարարվեց 1,5 միլիարդ դոլարի ապրանք, ընդ որում միջոցների գերակշիռ մասն

ուղղվեց խոշոր մոնոպոլիստական ձեռնարկությունների մոդեռնացմանը։ Մոնոպոլիստական մի քանի ձեռնարկություններում, ինչպես, օրինակ, ՖԻԱՏ-ում, ՖԱԼԿ-ում, «Մարշալի պլանի» գործողության տարիներին սարքավորումը լրիվ նորացվեց։

Իտալական կառավարող մոնոպոլիստական շրջանների վարած կուրսը տրամաբանական շարունակությունն էր 1949 թ. ապրիլին Իտալիայի միանալը Հյուսիսատլանտյան պակտին։ Երկրի դեմոկրատական ուժերը եռանդուն հանդես էին գալիս դրա դեմ։ Պայմանագրի քննարկումը դեպուտատների պալատում կրում էր ծայրահեղ բուռն բնույթ։ 58 ժամ անընդհատ օպոզիցիայի դեպուտատները մեկը մյուսի ետևից խոսք էին վերցնում, հնարավորություն չտալով քվեարկության անցնելու։ Պառլամենտում կատաղի բանավեճն ամբողջ երկրում ուղեկցվում էր բողոքի գործադուլներով ու միտինգներով։ Պայմանագիրը վավերացնելուց հրաժարվելու պահանջի հանրագրի տակ հավաքվեց 8 միլիոն ստորագրություն։ Սակայն պառլամենտական մեծամասնությունը քվեարկեց ՆԱՏՕ-ին միանալու օգտին։

Հյուսիսատլանտյան պակտի պայմաններին համապատասխան իտալական կառավարությունը, խախտելով հաշտության պայմանագրի դրույթները, թույլ տվեց երկրի տարածքում ամերիկյան բազաներ ստեղծել։ Սիցիլիայի հարավային ծովափը և Պանտելերիա ու Լասպեդուզա կղզիները Միջերկրական ծովում դարձան ամերիկյան նավատորմի հենակետեր։ Լիվոռնո նավահանգիստը դրվեց ամերիկյան հրամանատարության տրամադրության տակ։ Նեապոլում, Վերոնայում, Ֆլորենցիայում և այլ քաղաքներում տեղավորվեցին Հյուսիսատլանտյան պակտի տարբեր հրամանատարական շտաբներ։

1950 թ. հունվարի 27-ին իտալական կառավարությունն ԱՄՆ-ի հետ ստորագրեց «պաշտպանության նպատակով փոխադարձ օգնության մասին» և ամերիկյան զենքի մատակարարման վերաբերյալ համաձայնագիրը։ Նա ողջունում էր ամերիկյան ագրեսիան Կորեայում և համաձայնում Արևմտյան Գերմանիայի վերազինման քաղաքականությանը։ Իտալական կառավարության կողմից հաշտության պայմանագրի պայմանների խախտումը և ՍՍՀՄ-ի դեմ ուղղված ռազմական բլոկի մեջ Իտալիայի մտնելը վատացրեցին սովետա-իտալական հարաբերությունները։

Ռեակցիայի հարձակումը և պայքարը «խարդախ» ընտրական օրենքի դեմ

Հենվելով ամերիկյան իմպերիալիզմի պաշտպանության վրա, իտալական կառավարող շրջանները երկրի ներսում ուժեղացրին հակադեմոկրատական կուրսը։ Հակակոմունիստական կամպանիայի նախաձեռնող դարձավ կաթոլիկական եկեղեցին։ 1949 թ. հուլիսի 14-ին՝ Տոլյատիի վրա մահափորձ կատարելուց ուղիղ մեկ տարի անց, հրապարակվեց Վատիկանի սրբազան գրասենյակի դեկրետը՝ կոմունիստական կուսակցության անդամներին և նրան օգնող անձանց բանադրանքի ենթարկելու մասին։ Սակայն շուտով պարզվեց, որ աշխատավորներն անտեսում են այդ դեկրետը, և Վատիկանը ստիպված էր փաստորեն հրաժարվել նրա կիրառումից։

1949 թ. ընթացքում ոստիկանական միավորումների հետ եղան աշխատավորների բազմաթիվ արյունահեղ ընդհարումներ, որոնց զոհ դարձան շատ գյուղացիներ, բատրակներ, բանվորներ։ Միշտ հարձակվող կողմ էին ոստիկանական մեքենայացված «չելերե» ջոկատները, որոնք հատկապես ստեղծվել էին ցույցերի դեմ պայքարելու համար։ Ոստիկանական հաշվեհարդարները հատկապես հաճախակի երևույթ էին երկրի հարավում, որտեղ շարունակվում էր անմշակ հողերի գրավման շարժումը։

Առավել նշանակալի իրադարձություններ կատարվեցին բանվորական

շարժման միջնաբերդերից մեկում՝ Էմիլիայում, Մոդենա քաղաքում։ 1950 թ. հունվարին Մոդենայի բանվորներն ի պատասխան աշխատանքից մի շարք ազատումների գործադուլ հայտարարեցին։ Քաղաքում կենտրոնացվեցին ոստիկանական խոշոր ուժեր, ոստիկանները կրակ բացեցին մետալուրգիական գործարանի դարպասների մոտ հավաքված բանվորների վրա։ Սպանվեց չորս մարդ, մյուս երկուսն սպանվեցին հարևան փողոցներում։ Հենց որ հայտնի դարձան Մոդենայի ողբերգական իրադարձությունները, երկրում համընդհանուր գործադուլ բռնկվեց։ Բողոքի հզոր շարժումն ընդունեց բացառիկ լայն թափ։ Կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունները բոլորին, ովքեր ցանկանում էին իրենց բողոքը հայտնել, կոչ արեցին մեկնել Մոդենա։ Սպանված բանվորների թաղմանը մասնակցեց Իտալիայի բոլոր քաղաքներից եկած ավելի քան 300 հազար մարդ։ Թափորը գլխավորում էին պառլամենտի օպոզիցիոն կուսակցություններին պատկանող բոլոր դեպուտատները։ 1948, 1949 թթ. ընթացքում և 1950 թ. առաջին կեսին Իտալիայում ոստիկանության հետ ընդհարումների հետևանքով զոհվեց 62 մարդ, 3126 մարդ վիրավորվեց։ Այդ նույն ժամանակամիջոցում ձերբակալվեց 92169 մարդ և 19306 մարդ դատապարտվեցին միասին վերցրած 8441 տարվա բանտարկության։

Ոստիկանական տեռորի տարիներին իտալական բանվոր դասակարգը շարունակում էր պայքարը ազգային էկոնոմիկայի վերածնման դեմոկրատական ուղու համար։ 1949 թ. աշնանը ԱՀԿԿ-ն առաջ քաշեց «Աշխատանքի պլանը», որը նախատեսում էր արդյունաբերական և ագրարային ռեֆորմների անցկացում, գործազրկությունը վերացնելու, աշխատավորների դրությունը բարելավելու նպատակով պետության ակտիվ միջամտություն էկոնոմիկայում, Հարավային Իտալիայի արդյունաբերական զարգացում։ Այդ պլանը դեմոկրատական ուժերը հակադրեցին մոնոպոլիաների գործողություններին, որոնք «Մարշալի պլանը» օգտագործում էին իրենց շահերի օգտին։ Կառավարությունը մերժեց «Աշխատանքի պլանը»։ Այն ժամանակ երկրում սկսվեց լայն պայքար այն կենսագործելու համար։ Բանվորները հանդես էին գալիս աշխատանքից համատարած ազատումների դեմ, որոնք ձեռնարկվում էին կապված արդյունաբերության «վերակառուցման» և մի շարք գործարանների փակման հետ։ Այդ ժամանակաշրջանում լայն տարածում ստացավ «հակառակ գործադուլը», որի էությունն այն էր, որ աշխատավորները սեփական նախաձեռնությամբ գործարաններում կատարում էին տարբեր աշխատանքներ, իսկ հետո հասնում էին ձեռնարկատերերի կողմից դրանց վճարմանը։

1950 թ. երկրորդ կեսին կառավարությունն ստիպված էր մեղմացնել ոստիկանական տեռորը և դիմել աշխատավորներին մի շարք զիջումների։ Օրենք ընդունվեց, չնայած կրճատված տեսքով, ագրարային ռեֆորմի մասին. մինչև 1955 թ. վերջը հետգնման պայմանով կալվածատերերից բռնագրավվեց ավելի քան 1,5 միլիոն հեկտար հող։ Դա հասցրեց Հարավային Իտալիայի և Սիցիլիա կղզու լատիֆունդիաների զգալի մասի վերացմանը։ Բացի այդ, կառավարությունն ստեղծեց հատուկ «Հարավի ֆոնդ»՝ տնտեսապես այդ հետամնաց շրջանի արդյունաբերական զարգացումը ֆինանսավորելու համար։ Չնայած այդ միջոցառումները լրիվ չափով չէին լուծում հողատիրության և Հարավային Իտալիայի զարգացման պրոբլեմը, բայց հանդիսացան աշխատավորների ձեռք բերած կարևոր նվաճումը։

Տնտեսական զիջումներ անելով աշխատավոր զանգվածներին, կառավարող կուսակցությունները շարունակում էին երկրում սրել բաղաքական դրությունը։ Կորեական պատերազմի հետ կապված միջազգային իրադրության բարդացումն իտալական կառավարությունն օգտագործեց հակասովետական և հակակոմունիստական կամպանիան ուժեղացնելու համար։ Ընթացքի մեջ դրվեցին «կարմիր վտանգի», կոմունիստների կողմից պետական հեղաշրջում կատարելու և այլ ամենաանհեթեթ հերյուրանքներ։ Գործը հասավ նրան, որ ռազմական մինիստր Պաչչարդին պաշտոնապես հայտարարեց, որ կառավարությունը պատրաստել է «պետության համար վտանգավոր» 400 անձանց ցուցակ, որոնք լարված իրադրության առաջացման դեպքում ենթակա են ձերբակալման։ Սակայն իտալական աշխատավորները չգնացին կառավարական պրոպագանդայի հետևից։ 1951 և 1952 թթ. կայացած մունիցիպալ ընտրություններում ձախ կուսակցությունները 1948 թ. համեմատությամբ ավելացրին ձայների թիվը, այն ժամանակ, երբ քրիստոնեական դեմոկրատները կորցրին մոտ 4 միլիոն ընտրող։

Մունիցիպալ ընտրությունների արդյունքները կառավարող կոալիցիոն կուսակցություններում տագնապ առաջ բերին։ Վախենալով, որ 1953 թ. պառլամենտական ընտրություններում չեն հավաքի ձայների մեծամասնությունը, քրիստոնեական դեմոկրատները փորձեցին վերացնել պառլամենտում ներկայացուցչության համամասնական համակարգը։ 1952 թ. աշնանը նրանք օրինագիծ մտցրին, որի համաձայն այն կուսակցությունը կամ կուսակցությունների բլոկը, որը կհավաքեր ձայների 50 %-ը, պառլամենտում կստանար տեղերի $^2/_3$-ը։ Խոսքը այնպիսի ընտրական համակարգ մտցնելու մասին էր, որը կառավարական մեծամասնության կուսակցություններին հնարավորություն կտար սահմանել ավտորիտար ռեժիմ և սկսել սահմանադրության վերանայումը։ Պայքարը այդ օրենքի դեմ, որն ստացավ «խարդախ» անվանումը, համառ բնույթ ընդունեց։ Ամբողջ երկրում անցկացվում էին գործադուլներ և ցույցեր։ Ոստիկանությունը մոբիլիզացրեց իր բոլոր ուժերը։ Հազարավոր մարդիկ բողոքի շարժմանը մասնակցելու համար ձերբակալվեցին։ Աշխատավորների կազմակերպությունների շենքերի վրա հարձակումները և խուզարկությունները դարձան սովորական երևույթ։ Օպոզիցիայի դեպուտատների և սենատորների պառլամենտական անձեռնմխելիությունը նրանց չփրկեց ոստիկանական մահակներից։ «Խարդախ» օրենքի դեմ վեցամսյա պայքարն ավարտվեց 1953 թ. մարտի համընդհանուր գործադուլով։ Դեպուտատների պալատում օրենքի քննարկման եղրափակիչ նիստն առանց ընդմիջման տևեց 68 ժամ, իսկ սենատում ավարտվեց ձեռնամարտով։ Այնուամենայնիվ, կառավարական մեծամասնությունը քվեարկեց օրենքն ընդունելու օգտին, որի դեմ բողոքում էր ամբողջ երկիրը։

1953 թ. հունիսի 7-ին կայացած պառլամենտական ընտրությունների արդյունքները կառավարող շրջանների լիակատար հիասթափություն բերեցին։ Կառավարական կուսակցությունները չկարողացան հավաքել ձայների այնպիսի քանակություն, որն անհրաժեշտ էր պառլամենտում ստանալու տեղերի $^2/_3$-ը։ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը հավաքեց ձայների 40 %-ը (1,8 միլիոն ձայն պակաս, քան 1948 թ. ընտրություններում) և այդպիսով կորցրեց մեծամասնությունը, որը մինչև այդ ուներ պառլամենտում. իր համար անհրաժեշտ որոշումներ ընդունելու համար այսուհետև նա պետք է հենվեր մյուս կուսակցությունների օգնության վրա։ Իտալական կոմունիստական կուսակցությունն ստացավ ձայների 22,7 %-ը, սոցիալիստները՝ 12,7 %-ը։ Բանվոր դասակարգի երկու կուսակցությունների օգտին քվեարկեց 2 միլիոն ընտրող ավելի, քան 1948 թ.։ Միաժամանակ նեոֆաշիստական «Իտալական սոցիալական շարժում» կուսակցությունը, որ կլանել էր ծայրահեղ աջ կուսակցությունների ձայները, հավաքեց ձայների 6 %-ը և իրավունք ստացավ իր դեպուտատներին պառլամենտ ուղարկել։ Քվեարկության արդյունքները վկայեցին այն մասին, որ իտալական աշխա-

տավորները պաշտպանեցին պառլամենտի ներկայացուցչական բնույթը և դրանով իսկ շահեցին հետպատերազմյան կարևորագույն քաղաքական ճակատամարտերից մեկը։ 1953 թ. պառլամենտը վերացրեց «խարդախ» ընտրական օրենքը և վերականգնեց համամասնական ներկայացուցչության համակարգը։

Ընտրությունների արդյունքները խուճապ առաջացրին կառավարական լագերում։ Փոքր կուսակցությունները՝ լիբերալները, հանրապետականները և սոցիալ-դեմոկրատները, որ նախկինում գտնվում էին դը Գասպերիի քաղաքականության ազդեցության ոլորտում, հրաժարվեցին պաշտպանել ՔԴԿ-ին։ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության պարագլուխն ստիպված էր ընդունել իր պարտությունը և ութ տարի իշխանության գլուխ գտնվելուց հետո հրաժարական տվեց։ Քաղաքական ասպարեզից հեռացավ այն գործիչը, որին բուրժուական պրոպագանդան անվանում էր «Իտալիայի վերականգնումն արարող»։ Իրականում խուսանավելու և իրենից կախում ունեցող քաղաքական խմբերի տարաձայնություններն օգտագործելու իր կարողությունը դե Գասպերին կիրառում էր խոշոր կապիտալի խախտված դիրքերը վերականգնելու համար։

Իտալական «տնտեսական հրաշքը»

1950—1951 թթ. մոտերքը Իտալիայի արդյունաբերական արտադրությունը հասավ նախապատերազմյան մակարդակին։ Արդյունաբերական արտադրության ծավալի տարեկան միջին աճը հաջորդ տասնամյակում կազմեց 10 %։ Իտալական արդյունաբերությունն այդ ժամանակաշրջանում աճեց համարյա երկու անգամ, ընդ որում ամբողջ արդյունաբերական արտադրության $^3/_4$-ն սկսեց տալ գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունն ամենից շատ կրած վերամշակող արդյունաբերությունը։ Հատկապես արագ տեմպերով էին զարգանում արդյունաբերության մեքենաշինական, քիմիական և ավտոմոբիլային ճյուղերը։ Ագրարային-ինդուստրիալ երկրից Իտալիան վերածվեց ինդուստրիալ-ագրարային երկրի՝ գյուղատնտեսության նկատմամբ արդյունաբերության նշանակալի գերակշռությամբ։ Դա իտալական էկոնոմիկայի զարգացման որակական թռիչք էր։ Տնտեսական վերելքն ընդգրկեց նաև գյուղատնտեսությունը։ Մասնակի ագրարային ռեֆորմի իրականացումը խթան հանդիսացավ նրա ինտենսիվացմանը և մեքենայացմանը։ Զգալիորեն աճեց գյուղատնտեսական մթերքների հիմնական տեսակների՝ հացահատիկի, կարտոֆիլի, կաթի արտադրությունը։

«Տնտեսական հրաշքը», ինչպես անվանեց բուրժուական մամուլը 50-ական թվականների և 60-ական թվականների սկզբի վերելքն Իտալիայում, մի շարք ներքին և արտաքին պատճառների հետևանք էր։ Ֆաշիզմի անկումը հասցրեց կորպորատիվ համակարգի և ավտարկիայի վերացմանը, որոնք իտալական էկոնոմիկան ծանրաբեռնում էին հսկայական անարտադրողական ծախսերով և նրան տալիս էին վառ արտահայտված միլիտարիստական բնույթ։

Քանի որ այն տարիներին, երբ իշխանության գլուխ էին գտնվում ֆաշիստները, արդյունաբերության մեջ հիմնական կապիտալը նորացվում էր բոլորովին աննշան չափով, իսկ պատերազմի ժամանակ արդյունաբերական սարքավորումը մեծ վնաս էր կրել, ապա նրա լայն նորացման սուր անհրաժեշտություն էր հասունացել։ Մեծ մասամբ դա կատարվում էր ոչ թե սարքավորման հիմնական վերանորոգման ճանապարհով, որի զգալի մասը հնացել կամ վնասվել էր, այլ ժամանակակից տեխնիկական բազայի վրա արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելով, հաշվի առնելով գիտության վերջին նվաճումները։

Հետպատերազմյան տարիներին առաջին անգամ հիմնական կապիտալի

նորացումն արգելակում էին ազատ միջոցների պակասը և շարունակվող ինֆլյացիան։ 1948 թ. կառավարությունն աշխատավարձի սառեցման, խոշոր ձեռնարկատերերի հարկային զիջողության և մանր ու միջին ձեռնարկությունների վարկերի կրճատման միջոցով հասավ լիրայի կայունացմանը։ Ձեռնարկությունների նորացման գործում մոնոպոլիաներին զգալի օգնություն ցույց տվեցին նաև այն վարկերը, որ նրանք ստացան «Մարշալի պլանի» միջոցով։

50-ական թվականների սկզբին ավարտվեց իտալական արդյունաբերության մոդեռնացումը, ընդարձակվեցին ազատ կապիտալի կուտակման մասշտաբները։ Մոնոպոլիաները լավ նախապատրաստված գտնվեցին գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն օգտագործելու ասպարեզում։ Մեծ միջոցներ էին ծախսվում արտադրության նոր առաջադիմական ճյուղերի՝ նավթաքիմիականի, էլեկտրոնիկայի, ավտոմատիկայի զարգացման համար. լայնորեն կիրառվում էր արտասահմանում նոր տեխնոլոգիայի լիցենզիաներ և պատենտներ գնելը։ Նավթաքիմիայի զարգացմանը նպաստեցին բնական գազի հանքավայրերի հայտնաբերումը և մշակումը։ Արհեստական և քիմիական թելերի արտադրության գծով Իտալիան Արևմտյան Եվրոպայում առաջատար տեղ գրավեց։

«Ընդհանուր շուկայի» մեջ երկրի մտնելը նպաստավոր իրավիճակ ստեղծեց իտալական արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերի համար։ Աշխատուժի էժանությունը և նրանով ապահովվածությունը իտալական արդյունաբերողներին հնարավորություն տվեցին հաջողությամբ մրցակցել եվրոպական շուկայում։ Գործազուրկների շարունակվող տարագրությունը (1946-ից մինչև 1966 թ. Իտալիայից հեռացան ավելի քան 6 միլիոն աշխատավորներ) փոխեց իր բնույթը։ Եթե հետպատերազմյան առաջին տարիներին տարագիրները՝ գլխավորապես որակավորում չունեցող երիտասարդ մարդիկ, մեկընդմիշտ հեռանում էին հայրենիքից, ապա հետագայում նրանց մեծ մասը, որ մասնագիտություն էր ձեռք բերում արտասահմանում, սկսեց վերադառնալ Իտալիա։ Որակյալ աշխատուժի հոսքը երկիր հեշտացրեց արդյունաբերության առաջադիմական ճյուղերի զարգացումը։ Վերջապես, Իտալիայի տնտեսական զարգացմանը նպաստեց անարտադրողական ռազմական ծախսերի համեմատաբար ցածր մակարդակը։ Համեմատած այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, որը բանակը պահում էր նշանակալի չափով ՆԱՏՕ-ի հաշվին, նրա վրա արտադրական ոլորտի համեմատությամբ ծախսում էր համեստ միջոցներ։

Երկրի տնտեսական կյանքի կարգավորման գործում կարևոր դեր էր խաղում պետությունը։ Պետական-մոնոպոլիստական հատվածը, որ Իտալիայում ֆաշիզմի ժամանակներում շատ նշանակալի տեղ էր գրավում, ուժեղացավ և զարգանում էր է՛լ ավելի ինտենսիվորեն, քան մյուս երկրների մեծ մասում։ Հետագա զարգացում ստացավ 1933 թ. ստեղծված արդյունաբերական վերակառուցման ինստիտուտը (ԻՐԻ), որը վերածվելով պետական վիթխարի տրեստի, ղեկավարում էր մեծաթիվ ֆինանսական և արդյունաբերական միավորումներ։ ԻՐԻ-ի վերահսկողության տակ գտնվող ձեռնարկություններին բաժին է ընկնում երկաթի հանույթի 80, չուգունի ձուլման ավելի քան 90, պողպատի արտադրության 70, նավաշինարանների 90, մեքենաշինության արտադրանքի 25 %-ը։ ԻՐԻ-ն վերահսկում էր իտալական համարյա ամբողջ առևտրական նավատորմը և քաղաքացիական ավիացիան, հեռախոսային ցանցի և ավտոմոբիլային ճանապարհների մեծ մասը։

ԻՐԻ-ի հետ միասին պատերազմից հետո հանդես եկավ երկրորդ պետական-մոնոպոլիստական հսկան, ԷՆԻ-ն՝ հեղուկ վառելիքի ազգային վարչությունը։ Նրան բաժին է ընկնում բնական գազի հանույթի 75, արհեստական

կաուչուկի արտադրության 100, նավթավերամշակման հզորությունների 30 %-ը և այլն։

Իտալական մասնավոր ընկերությունները, ինչպես, օրինակ «Էդիսոնը», «Մոնտեկատինին», ՖԻԱՏ-ը և մյուսները, «տնտեսական հրաշքի» ժամանակաշրջանում շատ ավելացրին իրենց եկամուտները։ Խոշոր ընկերությունների եկամուտների տարեկան միջին աճը կազմեց մոտավորապես 30 %։ Այդ նույն ժամանակ իտալական աշխատավորների դրությունը շարունակում էր ծանր մնալ։ Բանվորների աշխատավարձը զգալիորեն ցածր էր, քան Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասում։

Իտալիայի ազգային եկամուտը 1950-ից մինչև 1963 թ. աճեց ավելի քան 40 %-ով։ Բաժնետիրական ընկերությունների եկամուտներն ավելացան 3,5 անգամ, նրանց կապիտալը եռապատկվեց, իսկ բանվորների ռեալ աշխատավարձն այդ ժամանակամիջոցում բարձրացավ միայն 12 %-ով։ Խիստ աճեց աշխատանքի ինտենսիվությունը, փաստորեն Իտալիայի ձեռնարկություններում աշխատօրը հասավ 9—10 ժամի։ Չնայած այն բանին, որ արտադրության աճը բարձրացրեց զբաղվածությունն արդյունաբերությունում, գործազուրկների քանակը մնաց 1 միլիոն մարդուց ոչ պակաս։

Արդյունաբերության զարգացումը կատարվում էր գերազանցապես երկրի հյուսիսային մարզերում, հարավը ինդուստրացման մակարդակով առաջվա պես հետ էր մնում հյուսիսից։ Հարավային շրջանների բնակչությունն աշխատանք փնտրելով շարունակում էր զանգվածային միգրացիան դեպի հյուսիս։ Հարավում գյուղատնտեսության մեջ դեռևս պահպանվում էին ֆեոդալական որոշ մնացուկներ։

50-ական թվականների արդյունաբերական զարգացումն զգալի փոփոխություններ առաջ բերեց իտալական էկոնոմիկայի հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, սպասարկման ոլորտի հարաբերակցության մեջ։ Գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատավորների թիվը 1951 թ. 8,2 միլիոնից կրճատվեց և 1961 թ. կազմեց մինչև 5,8 միլիոն։ Այդ նույն ժամանակամիջոցում բանվոր դասակարգի քանակն ավելացավ և 4,2 միլիոնից հասավ մինչև 5,6 միլիոնի, այսինքն՝ ավելացավ համարյա 1,5 միլիոն մարդով։

Գյուղացիների հոսքը քաղաք զգալիորեն նորացրեց պրոլետարիատի կազմը։ Միաժամանակ տեխնիկական առաջադիմությունը փոփոխություն առաջ բերեց բանվոր դասակարգի կառուցվածքում, նրան ճյուղային և պրոֆեսիոնալ տեսակետից դարձրեց ավելի բազմազան։ Այդ դրությունը բարենպաստ կոնյունկտուրայի հետ միասին թեթևացնում էր արդյունաբերողների մանևվրները, որոնք նպատակ ունեին պառակտել և թուլացնել բանվոր դասակարգին։ Իտալիայի արդյունաբերական ձեռնարկություններում լայն տարածում ստացավ «ացիենդալիզմի» և «պատերնալիզմի» քաղաքականությունը՝ վարչակազմի հետ համագործակցության համար տարբեր տեսակի պարգևատրումներով զուգակցված ձեռնարկատերերի և ձեռնարկությունում զբաղված աշխատավորների շահերի համաչափության քարոզը։

1954—1956 թթ. Իտալիայում նկատվեց բանվորական շարժման որոշ անկում։ Պրոլետարիատի գործադուլային ելույթների քանակը շարունակում էր մնալ բարձր (տարեկան 1500—2000 գործադուլ), սակայն նրանց մասնակցում էր 2 միլիոնից ոչ ավելի աշխատավոր։ Իտալական էկոնոմիկայի նոր երևույթները և դրանց հետ առաջացող պրոբլեմները բանվոր դասակարգի կուսակցությունները և արհմիությունները ոչ միանգամից հասկացան ու վերլուծեցին։ Դեռ ավելին, սոցիալիստական կուսակցության ղեկավար միջուկը և նրա պարագլուխ Պ. Նենին սկսեցին սահել աջօպորտունիստական և հակակոմունիստական դիրքերը։ Ելնելով այն փաստից, որ Իտալիայում մոնոպոլիստական կապիտալը կարողացավ դուրս գալ հետպատերազմյան առաջին տարիների ցնցումներից, Նեննին և նրա կողմնակիցներն արեցին ռեֆորմիստական եզրակացություններ։ Նրանք սկսեցին խոսել կապիտալիզմի «վերջնական կայունացման» և պետության կառավարմանը բուրժուական ուժերի հետ սոցիալիստների համագործակցության անհրաժեշտության մասին։ Սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը վերցրեց կոմունիստների հետ կապերը խզելու կուրս և 1956 թ. հրաժարվեց կոմունիստական կուսակցության հետ գործողությունների միասնության մասին պակտից։

ԻԿԿ 8-րդ համագումարը

Այն սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, որ կատարվեցին Իտալիայում 50-ական թվականներին, խիստ անհրաժեշտ դարձրին բանվորական շարժման նոր ստրատեգիական գծի մշակումը։ Խոսքն այն մասին էր, թե ինչ ուղիով պետք էր պայքարել սոցիալիզմի համար այն պայմաններում, երբ դիմադրության ընթացքում սկսված դեմոկրատական նորացման խոր պրոցեսն ընդհատվել էր, իսկ 50-ական թվականների տնտեսական վերելքն ընդարձակել էր առաջատար մոնոպոլիստական խմբերի տիրապետության ոլորտը և ուժեղացրել իտալական կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական բնույթը։

Նոր ստրատեգիական գծի հիմունքները մշակվեցին 1956 թ. դեկտեմբերին կայացած ԻԿԿ-ի 8-րդ համագումարում։ Համագումարն ընդունեց «Սոցիալիզմին անցնելու իտալական ուղու» մասին ծրագրային թեզիսները, զգուշարներ, որոնք հետագա մշակման ենթարկվեցին ԻԿԿ-ի հաջորդ համագումարներում։ Հատուկ ուշադրություն էր դարձվել հանուն սոցիալիզմի և դեմոկրատիայի կապերին, նրանց և սոցիալիզմին անցնելու ճանապարհին միջանկյալ փուլերի սահմանմանը։ Ելնելով նրանից, որ արդի կապիտալիստական հասարակությունում աշխատավորների հիմնական թշնամին մոնոպոլիստական օլիգարխիան է, իտալական կոմունիստներն առաջ քաշեցին կառուցվածքային ռեֆորմների լայն ծրագիր, որն ուղղված էր մոնոպոլիաների իշխանության դեմ։ Դեմոկրատական այդ ռեֆորմները պետք է պրոլետարիատի հակակապիտալիստորեն տրամադրված զանգվածներին միավորեին միջին խավերի այն խմբերի հետ, որոնք հենց նոր էին մտնում հակամոնոպոլիստական պայքարի ուղին։

Կուսակցությունը որպես մոտակա խնդիր նախատեսեց ռեֆորմներ իրականացնել էկոնոմիկայի բնագավառում (արդյունաբերության կարևոր ճյուղերի ազգայնացում, ագրարային լիակատար ռեֆորմ) և սոցիալ-քաղաքական ասպարեզում (սահմանադրության սկզբունքների լիակատար կենսագործում, պետության կառավարմանն աշխատավորների ներգրավում, մարզային ինքնավարության իրականացում)։ Ի տարբերություն արդյունաբերության պետականացման, որ Իտալիայում իրականացվում էր տասնամյակների ընթացքում, կոմունիստներն այնպիսի ազգայնացման պահանջ առաջադրեցին, որն ուղեկցվեր պառլամենտի և մասսայական կազմակերպությունների կողմից մոնոպոլիաների վրա դեմոկրատական վերահսկողության սահմանումով։ Ագրարային ռեֆորմի պահանջը չէր սահմանափակվում հողը տալ նրան, ով այն մշակում է լոզունգով, այլ նախատեսում էր պետության կողմից աշխատավորների կոոպերատիվ շարժման խրախուսում և անմիջական օգնություն փոքր կարողություն ունեցող գյուղացիներին։

Իտալական կոմունիստներն ընդգծում էին, որ կառուցվածքային ռեֆորմների ծրագրի իրականացումը և Իտալիայում դեպի սոցիալիզմ առաջընթացը հնարավոր է դեմոկրատական սահմանադրության շրջանակներում, սակայն դա չի

նշանակում պայքարի սահմանափակում զուտ պառլամենտական մեթոդներով։ Աշխատավորների զանգվածային շարժման ամենալայն ծավալման դեպքում համառ դասակարգային պայքար, բանվոր դասակարգի և ամբողջ հակամոնոպոլիստական ճակատի միասնության ամրապնդում՝ այսպիսին է դեպի սոցիալիզմ դեմոկրատական ուղին, որը նկատի է առնվում ավելի լայն, քան դա հնարավոր էր նախկինում, սոցիալական և քաղաքական ուժերի բլոկի համար՝ բանվոր դասակարգի գլխավորությամբ։ ԻԿԿ-ն ընդ որում ելնում էր այն դրույթից, որ նույնիսկ սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո մանր և միջին արտադրողները կարող են երկար ժամանակ մասնակցել սոցիալիզմի կառուցմանը դեռ մինչև այն պահը, երբ իրենց տնտեսությունը կվերակառուցեն սոցիալիզմի հիմունքներով։ Այսպիսով, պրոլետարիատի դաշինքն աշխատավոր գյուղացիության և քաղաքային մանր բուրժուազիայի հետ ձեռք էր բերում ստրատեգիական բնույթ։

Կոմունիստները, կոնկրետացնելով իրենց գիծը, կուսակցության 9-րդ համագումարում (1960 թ. հունվար) լոզունգ առաջադրեցին՝ երկրում և պառլամենտում ստեղծել «նոր դեմոկրատական մեծամասնություն»։ Այդ լոզունգը նկատի էր առել բանվորական կուսակցությունների և ձախ կաթոլիկական ուժերի մասնակցությամբ կառավարություն ստեղծելը և ելնում էր սոցիալիստական վերափոխումներին ձախ կաթոլիկների մասնակցության հնարավորությունից, նրանց կողմից իրենց քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների պահպանման դեպքում։

Բանվորական և զանգվածային դեմոկրատական շարժման վերելքը

ԻԿԿ 8-րդ համագումարի առաջադրած ծրագիրը նրան ապահովում էր աշխատավորների լայն շերտերի պաշտպանությունը։ 1958 թ. պառլամենտական ընտրություններում կոմունիստների օգտին քվեարկեց կես միլիոն մարդ ավելի, քան 1953 թ.։ Նրանց ցուցակը հավաքեց բոլոր ձայների 22,7 %-ը։

1957 թ. նկատվող բանվորական և արհմիութենական շարժման վերելքը կապված էր առաջին հերթին բանվորների և բոլոր աշխատավորների տնտեսական պայքարի ընդարձակման հետ։ Բանվորների պահանջները վերաբերում էին նյութական դրության բարելավմանը, կոլեկտիվ պայմանագրերի վերանայմանը և աշխատավորների շահերի օգտին արտադրության զարգացմանը։ Գործադուլային շարժումն ընդգրկել էր սոցիալական ամենալայն խավերին. բանվորներին և գյուղացիներին, ծառայողներին և միջնակարգ դպրոցների ուսուցիչներին, ուսանողներին և դատական աշխատողներին։

1957 թ. «Ընդհանուր շուկայի» մեջ Իտալիայի մտնելը հասցրեց որոշ ձեռնարկությունների կրճատման։ Դա գործադուլային շարժման նոր ալիք առաջացրեց։ 1959 թ. գործադուլներին մասնակցեց ավելի քան 5 միլիոն մարդ՝ անհամեմատ շատ, քան նախորդ տարիներին։ Տնտեսական բնույթի գործադուլների հետ միասին լայն թափ ստացան ատոմային մարտագլխիկներով ամերիկյան հրթիռները Իտալիայում տեղադրելու նախապատրաստման դեմ ուղղված ելույթները։

Զանգվածային պայքարի աշխուժացումը հասցրեց արհմիութենական շարժման նոր հովերի։ Ներքևի ճնշմամբ կաթոլիկական արհմիությունների իտալական կոնֆեդերացիան և սոցիալ-դեմոկրատական աշխատանքի իտալական միությունը սկսեցին ավելի վճռականորեն քննադատել իտալական հասարակության սոցիալական հակադրությունները, հետևողականորեն պահանջել իրականացնելու սահմանադրության դրույթները, այդ թվում՝ մոնոպոլիաների շահերի դեմ ուղղված կառուցվածքային ռեֆորմներ։

Ճիշտ է, ինչպես կաթոլիկական, այնպես էլ սոցիալ-դեմոկրատական

արհմիութենական ղեկավարները կառուցվածքային ռեֆորմների իրականացման ուղին տեսնում էին ոչ թե զանգվածների պայքարի, այլ քաղաքական կուսակցությունների վերնախավային համաձայնության մեջ։ Քաղաքական առումով այդ երկու արհմիութենական հոսանքները բուրժուա-դեմոկրատական ազատությունների պահանջից հեռու չգնացին, և նրանց սոցիալական իդեալները շաղկապվեցին «համընդհանուր բարեկեցության պետության» նեոկապիտալիստական միտումների հետ։

Կոմունիստների ղեկավարած Աշխատանքի իտալական ընդհանուր կոնֆեդերացիան 1956 թ. հանդես եկավ հանուն երեք արհմիութենական կենտրոնների գործողությունների միասնության։ Արհմիութենական կենտրոնների միջև կայացած բանակցությունները հասցրեցին աշխատավարձի բարձրացման, աշխատօրվա կրճատման, ձեռնարկություններում արհմիութենական գործունեության ազատության համար պայքարում ընդհանուր նպատակների մշակման։ Արդեն 1958 թ. մի քանի ճյուղային արհմիություններ, որոնք մրտնում էին երեք արհմիութենական կենտրոնների մեջ, համատեղ գործադուլներ անցկացրին՝ ի պաշտպանություն աշխատավորների շահերի։ Հետագա տարիներին գործադուլային պայքարում համատեղ ելույթների տեսակարար կշիռն անընդհատ բարձրացավ։ 60-ական թվականների սկզբին հատուկ նշանակություն ունեին երեք արհմիութենական կենտրոնների համազգային գործադուլները, որոնք ուղղված էին էլեկտրական ընկերությունների սեփականությունը ազգայնացնելու պահանջը պաշտպանելուն։

Քրիստոնեական դեմոկրատների «ուժեղ իշխանություն» հաստատելու կուրսը

Դե Գասպերիի քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո ՔԴԿ-ի ներսում քաղաքական պայքարը սրվեց։ Կուսակցության ղեկավարության ներսում դրսևորվեց քաղաքական երկու գիծ։ Նրանցից մեկն առաջարկում էր շարունակել դե Գասպերիի քաղաքական գիծը, մյուսը, որ ներկայացնում էին Ա. Ֆանֆանին և Դ. Գրոնկին, գտնում էին, որ պետք է վարել ավելի ճկուն քաղաքականություն, այսինքն մասնակի ռեֆորմների, տնտեսական ծրագրավորման ավելի լայն կուրս, աշխատավորներին սոցիալական զիջման և դրա հիման վրա, կոմունիստներին մեկուսացնելու նպատակով, սոցիալիստական կուսակցության հետ մերձեցման քաղաքականություն վարել։ Այդպիսի քաղաքականության իրականացմանը, որը հետագայում ստացավ «ձախցենտրիստական» անվանումը, ՔԴԿ-ի ներսում հակազդում էին աջ խմբավորումները, որոնց դրսից պաշտպանում էին լիբերալները և միապետականները։ Դե Գասպերիի հեռանալուն հաջորդած կառավարական ձգձգված ճգնաժամը լուծվեց Դ. Պելլայի և Ա. Ֆանֆանիի միակուսակցական կառավարությունների ստեղծումով։ Այդ կառավարություններն ստացան «անցողիկ» անվանումը, քանի որ կառավարող խմբերը դրանք դիտում էին որպես կառավարական ավելի կայուն կոմբինացիաների նախապատրաստական փուլ։ Ստեղծված դրությունից դուրս գալու ելքը գտնվեց Շելբայի—Սարագատի «ուժեղ» կառավարություն ստեղծելու փորձի միջոցով, որում սոցիալ-դեմոկրատներն ստացան մի քանի կարևոր մինիստրական պոստեր (1954—1955 թթ.)։ Նոր պրեմիերը, որը դե Գասպերիի կառավարությունում ներքին գործերի մինիստրի պոստում գտնվելու ժամանակաշրջանում իրեն դրսևորել էր որպես կատաղի հակակոմունիստ, փորձեց վերադառնալ կառավարման ոստիկանական մեթոդներին։ Նոր կառավարություն կազմելուց արդեն մի քանի օր անց ոստիկանությունը Միլանում հարձակվեց բանվորական ցույցի վրա և սպանեց նրա մասնակիցներից մեկին։ Հաջորդ օրը ոստիկանությունը գործադրելով արտասովոր դաժան նռնակներ, Սիցիլիայում ցրեց կանանց ցույցը, ընդհարման ժամանակ սպանվեց չորս մարդ։

Կառավարության դրությունն ավելի ու ավելի էր խախուտ դառնում։ Հասարակայնության զայրույթն առաջ բերեցին լայն հրապարակում ստացած «Մոնտեզիի դատավորության» հետ կապված մամուլի մերկացումները։ Երիտասարդ աղջիկ Վիլմա Մոնտեզիի սպանության գործով դատական պրոցեսը բացահայտեց քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության կառավարող վերնախավի կաշառակերության, սպեկուլյացիայի, ոստիկանության և արդյունաբերողների միջև սերտ կապերի ցնցող պատկերը։ Սկանդալն ավարտվեց ոստիկանության պետի գլխավորությամբ ոստիկանական մի շարք պաշտոնյաների և մինիստր Պիչոնիի հրաժարականով։ Վերջինիս տղան սպանության մեղադրանքով դատի տրվեց։

Կառավարության հասարակական համակրանք չվայելելն ուժեղացրին այն միջոցառումները, որ նա ընդունեց 1954 թվականին։ Դրանք արտահայտվում էին առաջներում ֆաշիստական կուսակցություններին պատկանող շենքերը (որ 1945 թ. զբաղեցրել էին դեմոկրատական կազմակերպությունները) վերցնելու փորձերի, արտասահմանի հետ մշակութային կապերը սահմանափակելու և արվեստի բնագավառում ոստիկանական գրաքննությունն ուժեղացնելու մեջ։ Այդ ժամանակ էլ օրենք հրապարակվեց կառավարական հիմնարկներից կոմունիստներին «զտելու» մասին։ Պառլամենտում գնալով հաճախակի էր ստեղծվում այնպիսի մեծամասնություն, որը քվեարկում էր կառավարության միջոցառումների դեմ, ընդ որում օպոզիցիայի ձայներին միանում էին քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության որոշ դեպուտատներ, որոնք ստացան «ազատ հրաձիգներ» անվանումը։

Շելբայի կառավարությանը վճռական հարված հասցրին 1955 թ. ապրիլին կայացած հանրապետության պրեզիդենտի ընտրությունները։ Կառավարության առաջադրած թեկնածուները մեկը մյուսի հետևից մերժվեցին, և պրեզիդենտ ընտրվեց ՔԴԿ-ի ձախ թևի ներկայացուցիչ Դ. Գրոնկին։ Նոր պրեզիդենտի պառլամենտին ուղղված արդեն առաջին ուղերձում եռանդուն կերպով ընդգծվում էր սահմանադրությունը և բոլոր քաղաքացիների իրավահավասարության պահպանությունն ապահովելու անհրաժեշտությունը։ Գրոնկին կոչ արեց անցնել սոցիալական ռեֆորմների և բանվորական շարժման ուղղակի ճնշումից հրաժարվելու քաղաքականությանը։ Խախտելով նախորդ պրեզիդենտների «չմիջամտելու» ավանդական քաղաքականությունը, նա հայտարարեց երկրի քաղաքական կյանքին գործնականորեն մասնակցելու իր մտադրության մասին։ Նոր պրեզիդենտի առաջին ելույթներն իմպերիալիստական շրջաններում ուժեղ տպավորություն թողեցին։ Ամերիկյան մամուլում նույնիսկ հանդես եկան հայտարարություններ, որ ԱՄՆ-ը ցանկանում է դադարեցնել օգնությունը Իտալիային։

Սակայն 1955—1960 թթ. ընթացքում մեկը մյուսին փոխարինած կառավարությունները, որոնք չնայած գլխավորում էին չափավոր հոսանքին պատկանող քրիստոնեական դեմոկրատները, վարում էին պրեզիդենտի հայտարարություններին հակասող քաղաքականություն։ Այդ տարիներին փոխվեցին հինգ կառավարություններ, որոնց գլխավորում էին Ա. Սենին, Ա. Զոլին ու Ա. Ֆանֆանին և որոնց կազմում քրիստոնեական դեմոկրատները մտնում էին կամ առանձին, կամ սոցիալ-դեմոկրատների և լիբերալների հետ կոալիցիա կազմած։ Կառավարական տարբեր կոմբինացիաներն անկայուն դուրս եկան և շուտով քայքայվեցին։ Նրանց գործունեությունը նպաստեց կապիտալիստական խոշոր միավորումների օգտին կապիտալ ներդրումների աճին և առաջատար մոնոպոլիաների դիրքերի ամրապնդմանը։ Ագրարային քաղաքականության մեջ կենտրոնական տեղ գրավեց «հիմնավորված մոտիվի» սկզբունքը։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո իտալական գյուղացիները հասել էին կալվածատիրոջ կողմից հողի վարձակալման պայմանագիրը լուծելու դեպքում «հիմնավորված մոտիվի» իրավունքի պահանջին։ Այժմ կառավարությունը բացահայտորեն կանգնել էր խոշոր հողատերերի կողմը, մշակելով նոր օրենք, որը հեշտացնում էր նրանց կողմից վարձակալներին հողից վտարելը։ «Հիմնավորված մոտիվի» օրենքի քննարկումը գյուղում առաջ բերեց հուզումների նոր բռնկում։

1958 թ. կայացած պառլամենտի հերթական ընտրությունների արդյունքները կառավարական բլոկի կուսակցությունների համար մխիթարական չէին։ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը, ճիշտ է, որոշ չափով ավելացրեց իր դեպուտատների քանակը և հավաքեց բոլոր ձայների 42 %-ը, սակայն նրան չհաջողվեց պառլամենտում վերադարձնել բացարձակ մեծամասնություն։ Այնուամենայնիվ, կառավարող շրջանները, անփոփոխ կերպով հենվելով օտարերկրյա իմպերիալիզմի օգնության վրա, երկրում «ուժեղ ձեռքի» իշխանություն հաստատելու հույսերը չէին կորցնում։ Քրիստոնեական դեմոկրատների կառավարություններն արտաքին քաղաքականության բնագավառում շարունակում էին մնալ ատլանտյան համերաշխության ամենահավատարիմ կողմնակիցներ, պաշտպանելով Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր միջոցառումները։ Իտալական կառավարությունը ողջունեց Հյուսիսատլանտյան պակտին ԳՖՀ-ի միանալը և 1957 թ. Ֆրանսիայի ու ԳՖՀ-ի հետ սպառազինության ստանդարտացման և նորագույն զենքի ստեղծման համատեղ աշխատանքներ կատարելու համաձայնագիր ստորագրեց։

Չնայած բողոքի լայն շարժմանը, քրիստոնեական դեմոկրատները պաշտոնապես համաձայնեցին Իտալիայի տարածքում ամերիկյան հրթիռների տեղաբաշխմանը, կրկին խախտելով հաշտության պայմանագրի պայմանները։ Միաժամանակ նրանք մերժեցին երկու երկրների միջև բարեկամության և չհարձակման պայմանագիր կնքելու սովետական կառավարության առաջարկը։ Մյուս կողմից, ուժեղացած իտալական մոնոպոլիաները գնալով էլ ավելի էին ճնշվում ամերիկյան կապիտալի խիստ տնտեսական խնամակալությունից։ Իտալական արդյունաբերական շրջանների ներկայացուցիչները ձգտում էին ընդարձակել միջազգային կապերը, այդ թվում նաև սոցիալիստական սիստեմի երկրների հետ։ Սկսած 1955 թ. նկատելիորեն աշխուժացան Իտալիայի առևտրական հարաբերությունները Սովետական Միության հետ։ Իտալական ֆիրմաների կապերը ՍՍՀՄ-ի հետ հատկապես ամրապնդվեցին փոխադարձ ապրանքաշրջանառության մասին 1957 թ. ստորագրված առաջին հնգամյա համաձայնագրի ստորագրումից հետո։ Երկարատև համաձայնության հիման վրա փոխշահավետ առևտրի բնորոշ օրինակ են Սովետական Միությունից նավթի մատակարարումները ԷՆԻ-ին (հեղուկ վառելիքի ազգային վարչություն)։

Նեոֆաշիստների ակտիվացումը։ Դասակարգային պայքարը 60-ական թվականների սկզբին

1960 թ. երկամսյա ճգնաժամից հետո կազմվեց միակուսակցական կառավարություն՝ աջ քրիստոնեական դեմոկրատ Ֆ. Տամբրոնիի գլխավորությամբ։ Այդ կառավարությունը դեպուտատների պալատում նեոֆաշիստների շնորհիվ ստացավ վստահության քվե, այն ժամանակ, երբ մնացած բոլոր կուսակցությունները, բացառությամբ քրիստոնեական դեմոկրատների, քվեարկեցին նրա դեմ։ Նեոֆաշիստների հետ քրիստոնեական դեմոկրատների ձևավորված պառլամենտական բլոկն ակտիվացրեց ծայրահեղ ռեակցիայի ուժերը։ Նեոֆաշիստական կուսակցությունը փորձեց հունիսի սկզբին անցկացնել իր համագումարը Ջենովայում՝ քաղաք, որը հռչակված է իր հակաֆաշիստական ավանդույթներով։ Այդ փորձը ձախողվեց Ջենովայի աշխատավորների հզոր ելույ-

թով։ Համընդհանուր քաղաքական գործադուլին և ցույցերին մասնակցեց, ոչ-ոչ տվյալներով, մինչև 100 հազար մարդ։ Ջենովայի իրադարձություններն ալեկոծեցին ամբողջ երկիրը։ Ֆաշիզմի վերածնման փորձերի դեմ շարժման մեջ միավորվեցին այն կուսակցությունների դեմոկրատական ուժերը, որոնք մասնակցել էին Դիմադրությանը։ Աշխատավորները պահանջում էին արգելել նեոֆաշիստական կուսակցությունը և Տամբրոնիի կառավարության հրաժարականը։ Կառավարությունը փորձեց ուժով զսպել զանգվածային շարժումը։ Ռեջո-Էմիլիա քաղաքում ոստիկանությունը գնդակոծեց հակաֆաշիստական ցույցը, այնուհետև բողոքի համազգային գործադուլի օրը հաջորդեցին գընդակոծությունները Պալերմոյում և Կատանիայում (Սիցիլիա)։ Սակայն ոստիկանական ռեպրեսիաները միայն ուժեղացրին աջ ուժերի մեկուսացումը, որոնք երկիրը հասցրել էին քաղաքացիական պատերազմի եզրին։ Տամբրոնին ստիպված էր հրաժարական տալ։ Կառավարության նոր ղեկավար Ա. Ֆանֆանին պաշտոնապես դատապարտեց նեոֆաշիստական շարժումը և հաստատեց սահմանադրական ազատությունների անձեռնմխելիությունը։

60-ական թվականների սկիզբը բնութագրվեց դասակարգային մարտերի հետագա ուժեղացմամբ։ Գործադուլային ելույթների աճը և կոմկուսի դիրքերի ամրապնդվելը հերքեցին բուրժուական գաղափարախոսների և ռեֆորմիստների այն թեզը, թե իբր բարենպաստ տնտեսական կոնյունկտուրան հասցընում է աշխատավորների պայքարի թուլացմանը։ 1960 թ. գործադուլների միջոցով բանվորները կոլեկտիվ պայմանագրեր կնքելիս ձեռնարկատերերի կողմից զիջումների հասան։ Կոլեկտիվ նոր պայմանագրերը նախատեսում էին աշխատավարձի բարձրացում և աշխատաժամանակի կրճատում։ 1961 և 1962 թթ. Իտալիայում գործադուլ արեց ավելի քան 11 միլիոն մարդ, ընդ որում 8 միլիոն աշխատավորներ մասնակցեցին համազգային գործադուլներին։ Հատուկ նշանակություն ունեցավ համարյա մեկ ամիս տևած 1962 թ. ՖԻԱՏ-ի գործարանների գործադուլը։ Ավտոմոբիլային խոշորագույն կոնցեռնի բանվորները 1955 թ. հետո առաջին անգամ մասնակցեցին մետաղագործների համաժողովրդական շարժմանը։ Համառ պայքարի շնորհիվ նրանք հասան իրենց հիմնական պահանջների բավարարմանը։

Ձախցենտրիստական մաղամականությանն անցնելը

Կղերաֆաշիստական ռեժիմ հաստատելու իտալական կառավարող շրջանների փորձերի ձախողումը նրանց ստիպեց իրենց իշխանությունն ամրապանդելու այլ ուղիներ փնտրել։ «Ցենտրիզմի» քաղաքականությունը, որը աչքի էր ընկնում ընդհանուր պահպանողականությամբ և բանվոր դասակարգի կուսակցությունն անտեսելու փորձերով, սպառել էր իրեն։ Գնալով է՛լ ավելի վճռականորեն էր հանդես գալիս «ձախցենտրիզմը»՝ լայն սոցիալական մանևրականության, աշխատավորների համակրանքը շահելու նպատակով տարբեր ռեֆորմներ և զիջումներ անցկացնելու քաղաքականությունը։ 60-ական թվականների սկզբներին վերջնականապես ձախողում կրեց ճակատային ուղղագիծ հակակոմունիզմը։ Կառավարող շրջաններն ավելի ճկուն քաղաքականության կարիք էին զգում, որը չսահմանափակվեր այն ամենի ժխտումով, ինչ ասում էին կոմունիստները, այլ օգտագործեր կապիտալիստական կարգ ու կանոնի որոշ տարրերի քննադատությունը՝ նրանց «ուղղման» համար։ Այսպիսի ուղիով «ձախ կենտրոնի» կողմնակիցները հույս ունեին թուլացնել կոմունիստական կուսակցությունը և իր կողմը գրավել բանվոր դասակարգի մի մասին, առաջին հերթին սոցիալիստական կուսակցության հետևից գնացողներին։

Բուրժուական ռեֆորմիզմը խոշոր քաղաքական ցնցումների սպառնալիքի, ինչպես նաև կապիտալիստական էկոնոմիկայի պահանջմունքների պարտուղն էր։ «Տնտեսական հրաշքի» տարիներին կատարված տեղաշարժերը բուրժուական գաղափարախոսներին բերեցին երկրի կյանքի առավել ճշգրտող հակասությունները վերևից, ռեֆորմների ուղիով վերացնելու անհրաժեշտության համոզմանը, հակասություններ, որոնք առաջ էին եկել էկոնոմիկայի տարերային զարգացումից, ագրարային Հարավի հետամնացությունից, գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին կրթության համակարգի անհամապատասխանությունից, վարչական համակարգի և հարկային քաղաքականության արխայիկությունից և այլն։ Ստեղծված դրությունն ուղղելու միջոց պետք է ծառայեին տնտեսական կյանքի մեջ պետության ակտիվ միջամտությունը, պետական մոնոպոլիստական միտումների ուժեղացումը։ Ազգային հարստության աճը պետությանը հայտնի նյութական հնարավորություններ է տալիս անցկացնելու անհետաձգելի ռեֆորմներ և իրականացնելու ծրագրավորում, այնպիսի ծրագիր, որը պետք է թուլացներ տնտեսական զարգացման ճանապարհին եղած որոշ արգելքները։

Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության գաղափարական էվոլյուցիայի վրա զգալի ազդեցություն թողեց Վատիկանի սոցիալական նոր քաղաքականությունը։ 1958 թ. Պիոս 12-րդի մահից հետո պապական գահին նստեց Հովհաննես 23-րդը, որն իր նախորդից՝ պահպանողական արիստոկրատից, «սառը պատերազմի» նախանձախնդիր կողմնակցից և հակակոմունիզմի ջատագովից, սկսած իր գյուղացիական ծագումից շատ բանով էր տարբերվում։ Հովհաննես 23-րդը վերցրեց կաթոլիկ եկեղեցու «նորացման» կուրս, գիտակցելով, որ չի կարող իր ազդեցությունը պահպանել, եթե հետագայում ևս անտեսի աշխարհում կատարված վիթխարի փոփոխությունները։ 1961 թ. Հովհաննես 23-րդը հրապարակեց «Մատեր էտ մագիստրա» («Մայրը և խրատատուն») կոնդակը, որը հաստատելով մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, միաժամանակ բովանդակում էր կապիտալիզմի դաժանության և անարդարության քննադատություն, խոսում տնտեսական կյանքի մեջ պետության միջամտության հնարավորության և նույնիսկ «հասարակական սեփականության» ստեղծման մասին։ Իր մահվանից քիչ առաջ, 1963 թ. Հովհաննես 23-րդը հանդես եկավ «Պացեմ ին տերրիս» («Խաղաղություն աշխարհին») նոր կոնդակով, որով հաստատակամորեն կոչ արեց կըրճատել սպառազինությունները և պահպանել խաղաղությունը, ընդունեց կաթոլիկների և «այլախոհների» մերձեցման հնարավորությունը։

Վատիկանի սոցիալական և գաղափարական նոր դրույթները ՔԴԿ-ում ուժեղացրին այն հոսանքները, որոնք պաշտպանում էին «ձախ կենտրոնի» քաղաքականությունը։ Կուսակցության ղեկավարությունը վերցրեց սոցիալիստական կուսակցության հետ կոալիցիայի կուրս։ Այդ կուրսը հեշտացրեց 60-ական թվականների սկզբին շարունակվող սոցիալիստական կուսակցության դեպի աջ կատարվող էվոլյուցիան։ Սոցիալիստական կուսակցության ղեկավարությունում ռեֆորմիստական տրամադրությունների աճի և բուրժուական բարենորոգչականության հետ նրա գաղափարական ուղղվածության պատճառները խիստ տարբեր էին։ Չնայած բացահայտ հակակոմունիստները 1947 թ. դուրս եկան նրա շարքերից, նրանում շարունակում էին գոյակցել ամենատարբեր միտումները՝ աջ սոցիալ-դեմոկրատականից մինչև ձախ-մարքսիմալիստականը։ Դրա համար էլ սոցիալիստական կուսակցությունը միշտ շատ հիվանդագին էր տանում քաղաքական իրադրություններում կատարվող շեշտակի փոփոխությունները, ձախ օպտիմիզմից անցնելով ծայրահեղ պեսիմիզմին։ Տնտեսական վերելքը, բանվորական շարժման նվազումը և միջազգային կոմունիստական շարժման դժվարությունները սոցիալիստների պարագլուխների մեծամասնությունը դիտում էր իբրև հեղափոխական շարժման

ամբողջ ստրատեգիայի ձախողում։ Պ. Նեննին և նրա կողմնակիցները սկսեցին պնդել, թե պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ պետությունն արդեն իրենից բուրժուազիայի դիկտատուրա չի ներկայացնում, այլ արտացոլում է դասակարգերի միջև «սոցիալական հավասարակշռությունը»։ Այդ կապակցությամբ նրանք ենթադրում էին, թե դեպի սոցիալիզմ ընթանալու համար բանվոր դասակարգին բավական է կառավարությանը «մասնակցելը»։

Սոցիալիստական պարագլուխների համար «զանգի կոճակը սեղմելով բնակարան» ներս թափանցելը, այսինքն պետության կառավարմանը մասնակցելը դարձավ ինքնաբավ խնդիր, որը գնալով նրանց ավելի էր անջրպետում բանվոր դասակարգից։ 1962 թ. սոցիալիստական կուսակցությանը պառլամենտում առաջինը պաշտպանեց այն կառավարությունը, որի գլուխ կանգնեց ՔԴԿ-ում «ձախցենտրիզմի» մունետիկներից մեկը՝ Ա. Ֆանֆանին։

Որպեսզի ապահովի այդ պաշտպանությունը, կառավարության ղեկավարը արմատական ռեֆորմների ծրագիր հռչակեց, որոնցից շատերը արդեն վաղուց էին առաջադրում բանվոր դասակարգի կուսակցությունները։

Այդ ծրագիրը նախատեսում էր ազգայնացնել էլեկտրաէներգետիկան, վերացնել կիսրարությունը, իրականացնել մարզային ինքնավարությունը, ինդուստրացնել Հարավը և այլն։ Սակայն կառավարությունը խոստացված ռեֆորմներից կարողացավ իրականացնել միայն էլեկտրական ընկերությունների ազգայնացումը, հետաձգելով մյուս միջոցառումները։

Կառավարական ծրագրի կատարումից հրաժարվելն իր դերը խաղաց 1963 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ։ Համարյա 8 միլիոն մարդ ձայն տվեց կոմունիստական կուսակցության թեկնածուների օգտին, որը հավաքեց բոլոր ընտրական ձայների 25,3 %-ը։ Դա կոմունիստների նոր առաջխաղացումն էր։ Սոցիալիստներն հավաքեցին շատ ավելի պակաս ձայներ, քան նախորդ ընտրություններում։ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը նույնպես կորցրեց 800 հազար ձայն։

Չնայած սոցիալիստական կուսակցության ղեկավարության քաղաքականությունն ընտրողների կողմից դատապարտելուն, Պ. Նեննին բանակցություններ սկսեց կառավարության մեջ մտնելու համար։ 1963 թ. նոյեմբերի վերջին չորս կուսակցությունների՝ քրիստոնեա-դեմոկրատական, հանրապետական, սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական ներկայացուցիչների միջև համաձայնություն ձեռք բերվեց, որը վկայում էր բուրժուական կուսակցությունների պահանջների առջև սոցիալիստների ղեկավարության կապիտուլացումը։ Համաձայնության մեջ ասվում էր, որ կոմունիստական կուսակցությանը թույլ չի տրվի մտնել կառավարության մեջ, իսկ նախկինում խոստացված ռեֆորմներից համարյա ոչինչ չէր մնում. այսպես, ագրարային ռեֆորմը հանգեցվում էր բերքի բաշխման ժամանակ կիսրարների բաժնի ավելացմանը։ Միաժամանակ կոալիցիայի կուսակցությունները պարտավորվում էին հավատարիմ մնալ Հյուսիսատլանտյան պատկին և հավանություն էին տալիս բազմակողմանի միջուկային ուժեր ստեղծելու նախագծին։ Դեկտեմբերի 4-ին հայտարարվեց քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության քարտուղար Ա. Մորոյի գլխավորությամբ ձախցենտրիստական կառավարություն կազմելու մասին։ 1947 թ. հետո առաջին անգամ բանվոր դասակարգի մեծամասնության կամքին հակառակ, նրա կազմի մեջ մտան սոցիալիստները, բայց այս անգամ ոչ թե կոմունիստների հետ դաշնակցած։

Նենիի գործողությունները բուն սոցիալիստական կուսակցության ներսում վրդովմունք առաջ բերեցին։ 25 ձախ սոցիալիստ դեպուտատներ պառլամենտում նոր կառավարությանը վստահություն տալու դեմ քվեարկեցին։

1964 թ. հունվարին սոցիալիստական կուսակցության ձախ հոսանքի ներկայացուցիչները հավաքվեցին ազգային կոնֆերանսին, որը որոշում ընդունեց ղեկավարության հետ կապերը խզելու և սոցիալիստական նոր կուսակցության՝ պրոլետարական միասնության իտալական սոցիալիստական կուսակցություն հիմնելու մասին։ ՊՄԻՍԿ-ն հայտարարեց, որ ինքը վերջնական նպատակի՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում հանդես է գալիս բանվոր դասակարգի միասնության և կոմունիստների հետ դաշինքի օգտին։ Արտաքին քաղաքականության բնագավառում նա հանդես եկավ Հյուսիսատլանտյան պակտի դեմ, Իտալիայի չեզոքության համար։ Նոր կուսակցությունը իր հետևից տարավ սոցիալիստական հին կուսակցության մոտ 20 %-ը։ Նրա քարտուղար ընտրվեց Տ. Վեկետին։

1964 թ. Իտալիայի կոմունիստական կուսակցությունը ծանր կորուստ կրեց՝ օգոստոսին մահացավ իտալական բանվոր դասակարգի փորձված առաջնորդ Պալմիրո Տոլյատին, որն իր ամբողջ կյանքը տվեց աշխատավոր ժողովրդին, դեմոկրատիայի և սոցիալիզմի գործին։ Համարյա 40 տարի նա գլխավորում էր ԻԿԿ-ն։ Տոլյատիի թաղումը վերածվեց կոմունիստական կուսակցության ուժի և կազմակերպվածության, աշխատավոր լայն զանգվածների հետ նրա անխզելի կապի ազդու ցույցի։ Աշխատավորների միլիոնավոր բանակը սգո երթով անցավ Հռոմի փողոցներով։

Իտալական կոմունիստական կուսակցության նոր գլխավոր քարտուղար ընտրվեց Լուիջի Լոնգոն։

1964—1965 թթ. տնտեսական անկումը

1960 թվականը իտալական արդյունաբերության հետպատերազմյան զարգացման ռեկորդային տարին էր, երբ տարեկան աճը կազմեց 15 %։ Այդ ժամանակից սկսած համախառն ազգային արտադրանքում և ազգային եկամտում արդյունաբերական արտադրության բաժինն սկսեց երկու անգամ գերազանցել գյուղատնտեսության բաժնին։ Սակայն 1963 թ. նկատվեց գործնական ակտիվության նվազում, որը մեծ մասշտաբներ ընդունեց 1964—1965 թթ.։ Ամենից ուժեղ այն արտահայտվեց արդյունաբերության հիմնական՝ մետաղամշակման և մասնավորապես մեքենաշինական ճյուղերում։ Այդ տարիներին արդյունաբերական արտադրանքի ընդհանուր աճը կազմեց մոտ 4 %։

1965 թ. վերջին արդյունաբերական արտադրությունում աշխուժացում նկատվեց, որը հաջորդ տարում վերածվեց արդյունաբերական նոր վերելքի։ Սակայն ի տարբերություն «տնտեսական հրաշքի» տարիների, այժմ կապիտալ ներդրումների նշանակալիորեն մեծ մասը սկսեց ծախսվել արդեն գոյություն ունեցող ձեռնարկությունների կատարելագործման վրա։ Ուժեղացավ արդյունաբերական ընկերությունների ձուլման պրոցեսը։ Ամենախոշոր մասնավոր կոնցեռնը կազմավորվեց պետությունից հսկայական փոխհատուցում ստացած «էդիսոն» էլեկտրական ազգայնացված տրեստի կապիտալները «Մոնտեկատինի» ընկերությանը միացնելու միջոցով։ Մոնոպոլիստական «Մոնտէդիսոն» նոր ընկերությունը դարձավ Իտալիայի և կապիտալիստական աշխարհի խոշորագույն տրեստներից մեկը։ 1968 թ. նա միջազգային խոշորագույն կորպորացիաների մեջ գրավեց ութերորդ տեղը։

Իտալիայի դեմոկրատական ուժերը վաղուց էին պահանջում երկրի էլեկտրաէներգետիկ տնտեսության ազգայնացումը։ Դա բխում էր նրանից, որ մասնավոր միավորները, և առաջին հերթին «էդիսոն» ընկերությունը, օգտվելով մենաշնորհային դրությունից, էլեկտրաէներգիայի տարիֆները պահպանում էին շատ բարձր մակարդակի վրա և ստանում էին հսկայական շահույթներ։ 1962 թ. օրենք ընդունվեց «էդիսոն» տրեստը ազգայնացնելու և

պետական մարմնի՝ «Էլեկտրաէներգետիկ արդյունաբերության ազգային միավորում» (ԷԱԱՄ) ստեղծելու մասին, որի կազմավորումն ավարտվեց 1965 թ.։ ԷԱԱՄ-ն Իտալիայում դարձավ առաջին միավորումը, որի ղեկավարած արդյունաբերության ճյուղերում լիովին ազգայնացվեց կապիտալը։ Իտալական կոմունիստներն այդ միջոցառումը գնահատեցին իբրև ազգային էկոնոմիկայի դեմոկրատականացման համար պայքարում աշխատավորների տարած նշանավոր հաղթանակ։

60-ական թվականներին Իտալիայի էկոնոմիկայում նույնպես նոր երևույթ էր ծրագրավորումը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման մասնավոր պլանների մշակման առաջին փորձերը կատարվեցին 50-ական թվականներին ի պատասխան այն պլանների, որ առաջ էր քաշվել արհմիությունների ղեկավարության կողմից, մասնավորապես ԱՀԲԿ-ի աշխատանքային պլանում։ «Ձախ կենտրոնի» կառավարությունները ծրագրավորումն առաջ քաշեցին որպես տնտեսական քաղաքականության կարևորագույն սկզբունք։ Երկարատև ձգձգումներից և կասեցումներից հետո, որ նշանակալի չափով առաջացել էր մոնոպոլիաների դիմադրության պատճառով, 1965 թ. զարգացման ճյուղային և ռեգիոնալ պլանները միացվեցին մի միասնական համազգային հնգամյա պլանում, որը գործողության մեջ մտավ 1967 թ.։

Իտալական արդյունաբերության արագ աճն զգալի փոփոխություններ առաջ բերեց երկրի բնակչության կառուցվածքում։ 1950-ից մինչև 1966 թ. ամբողջ գյուղատնտեսական բնակչության մոտավորապես կեսը գնաց քաղաքները։ Դա գյուղատնտեսական արտադրության ինդուստրացման հետևանք էր, որը հնարավորություն տվեց երկիրն ապահովել կարևոր մթերքներով, մասնավորապես հացահատիկով։ Բայց Իտալիայի ագրարային էկոնոմիկայի վրա «Ընդհանուր շուկայի» ներգործությունը հակասական էր. նպաստելով գյուղատնտեսական արտադրության որոշ ճյուղերի մոդեռնացմանը, նա բացասաբար էր ազդում մյուսների վրա։ Այն ժամանակ, երբ գյուղատնտեսության բաժինը իտալական էկոնոմիկայում նվազում էր, աճում էր «երրորդ ճյուղերի»՝ տրանսպորտի, կապի, առևտրի և այլնի դերը։ Մասնավորապես դա կապված էր տուրիզմի մեծ զարգացումով, առանձին տարիներին Իտալիա այցելող զբոսաշրջիկների քանակը հասնում էր 30 միլիոն մարդու։ Արագ տեմպերով կառուցվում էին բարձրագույն կարգի ավտոուղիներ, որոնցից կարևորագույնը՝ «Արևի ավտոուղին», հյուսիսից հարավ կտրում անցնում է ամբողջ Ապենինյան թերակղզին։

Կոալիցիոն կառավարությունների փաղաքականությունը և զանգվածային շարժման նոր վերելքը

1964 թ. դեկտեմբերին կայացան Իտալիայի նոր պրեզիդենտի ընտրությունները, որոնք նշանավորվեցին քրիստոնեական դեմոկրատների լուրջ պարտությամբ։ Պրեզիդենտ ընտրվեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխ Դ. Սարագատը։

Ձախցենտրիստական կառավարությունները, որոնց 1964-ից մինչև 1968 թ. գլխավորում էր քրիստոնեական դեմոկրատների պարագլուխ Ա. Մորոն, վարում էին այնպիսի քաղաքականություն, որը կարելի է անվանել իբրև չափավոր «աջացող»։ 1964—1965 թթ. տնտեսական բոլոր դժվարությունների հետևանքները ձախցենտրիստական կառավարությունները ձգտում էին դնել աշխատավորների ուսերին, ավելացնելով անուղղակի հարկերը և կրճատելով ժողովրդական սպառումը։

Սոցիալիստական կուսակցության աջանալու պրոցեսը, որ սկսվեց 50-ական թվականների կեսից, ավարտվեց 1966 թ. սոցիալ-դեմոկրատների հետ այդ կուսակցության ձուլվելով։ Նոր կուսակցությունն ստացավ միացյալ սոցիալիստական կուսակցություն անվանումը, նրա նախագահ ընտրվեց Պ.

Նենին։ Ձուլման ժամանակ ընդունված միասնության փաստաթղթում կապիտալիստական սիստեմի լիկվիդացումը պայմանավորվում էր ոչ թե մասսաների հեղափոխական գործունեությամբ, այլ «պետությունը ներսից վերափոխելով»։ Փաստաթղթում ոչինչ չէր ասվում արդյունաբերական մոնոպոլիաների նկատմամբ ցույց տրվելիք վերաբերմունքի մասին, բայց դրա փոխարեն ընդգծվում էր կոմունիստներից քաղաքականապես և գաղափարապես սահմանազատվելու անհրաժեշտությունը։ Արտաքին քաղաքականության բնագավառի մասին նրանում հաստատվում էր հավատարմությունը Հյուսիսատլանտյան պակտին։ Այսպիսով, կուսակցությունների միավորումը կատարվեց սոցիալ-դեմոկրատական հիմքի վրա և իրենով նշանավորեց դասակարգային դիրքերից սոցիալիստական պարագլուխների նահանջի նոր քայլը։

60-ական թվականների երկրորդ կեսին երկրում իրադրությունը բնութագրվում էր իրենց իրավունքների համար աշխատավորների պայքարի ուժեղացումով։ Շատ նշանակալից երևույթ էին երեք արհմիութենական կազմակերպությունների՝ Աշխատանքի ընդհանուր իտալական ֆեդերացիայի, Կաթոլիկական աշխատավորների արհմիութենական իտալական կոնֆեդերացիայի և Սոցիալ-դեմոկրատական աշխատանքի իտալական միության համատեղ գործողությունները։ Իտալիայում մթնոլորտը արտասովոր շիկացման հասավ 1968 թ.։ Չէին դադարում բանվորների գործադուլները, տեղի էին ունենում թոշակառուների խոշոր ցույցեր, որոնք պահանջում էին ավելացնել թոշակները։ Հուզումներ բռնկվեցին համալսարաններում, որոնք շարունակվեցին երեք ամսից ավելի և ընդգրկեցին կես միլիոնից ավելի ուսանողների ու սովորողների։ Պատանիներն ու աղջիկները պահանջում էին անցկացնել բարձրագույն կրթության ռեֆորմ, դեմոկրատացնել ուսման պրոցեսը և պակասացնել ուսման վարձը։ Ուսանողները զբաղեցնում էին համալսարանները, դիմանալով ոստիկանության հետ դաժան գոտեմարտին։

Այդ բուռն մթնոլորտում, 1968 թ. մայիսին կայացան պառլամենտական ընտրություններ։ Դրանք նշանավորեցին իտալական հասարակական կարծիքի դեպի ձախ կատարած նոր առաջընթացը։ Կոմունիստների օգտին քվեարկեց 8,5 միլիոն մարդ՝ բոլոր ընտրողների 26,9 %-ը։ Քրիստոնեական դեմոկրատները հավաքեցին մի քիչ շատ ձայն, քան նախորդ ընտրություններում։ Ընտրությունների գլխավոր արդյունքը միացյալ սոցիալիստական կուսակցության ջախջախիչ պարտությունն էր. նա կորցրեց մոտ մեկ ու կես միլիոն ձայն, համեմատած սոցիալիստների ու սոցիալ-դեմոկրատների 1963 թ. ընտրություններում ունեցած ձայների թվի հետ։ Հիմնականում այդ ձայները տրվեցին պրոլետարական միասնության իտալական սոցիալիստական կուսակցությանը, որը առաջին անգամ էր մասնակցում պառլամենտական ընտրություններին և հասավ զգալի հաջողությունների, հավաքելով բոլոր տրված ձայների 4,5 %-ը։

Պառլամենտական ընտրությունները ցուցադրեցին ձախցենտրիստական կոալիցիայի և միացյալ սոցիալիստական կուսակցության լուրջ ճգնաժամը։ Այդ կուսակցության ղեկավարությունը որոշեց չմասնակցել ընտրություններից հետո կազմված կառավարությանը, որն ստացավ «սպասողական կառավարություն» անվանումը։ Միայն 1968 թ. դեկտեմբերին նոր ռեֆորմներ անցկացնելու խոստումների գնով քրիստոնեական դեմոկրատներին հաջողվեց վերականգնել կոալիցիան, սոցիալիստները (այդ ժամանակ ընդունելով իտալական սոցիալիստական կուսակցություն հին ավանդական անվանումը) վերադարձան կառավարության կազմի մեջ, որը գլխավորում էր քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության քարտուղար Մ. Ռումորը։

Ձախցենտրիստական քաղաքականության այլընտրանք առաջ քաշեց Իտալիայի կոմունիստական կուսակցության 1969 թ. փետրվարին կայացած 12-րդ համագումարը։ Համագումարի որոշումներում ասվում էր, որ ձախ կենտրոնի քաղաքականությունը ձախողվել է և որ ելք կարելի է գտնել կոմունիստների, սոցիալիստների ու կաթոլիկական ձախ ուժերի մասնակցությամբ կառավարական բլոկ ստեղծելու ճանապարհին։ Նման վերախմբավորման պայմանների ստեղծման համար անհրաժեշտ էր կաթոլիկական ձախ ուժերի հետ կոմունիստների երկխոսության ընդարձակում և սոցիալ-դեմոկրատական խմբերի ու հոսանքների մեկուսացում։ Համագումարում ունեցած իր ելույթում Լ. Լոնգոն ընդգծեց, որ այդ մեծամասնությունը կարելի է ստեղծել միայն այն պայմանով, եթե պառլամենտական պայքարը զուգակցվի մասսաների անմիջական պահանջների և դեմոկրատական ինստիտուտների խորապես նորացման համար պայքարի հետ։

Սոցիալիստական կուսակցության ներսում գնալով էլ ավելի սրվող տարաձայնությունները 1969 թ. ամռանը հասցրին նրա պառակտմանը։ Ծայրահեղ աջերի խումբը, չկարողանալով իր գիծը փաթաթել ղեկավարությանը, հեռացավ կուսակցությունից և ստեղծեց միավորիչ սոցիալիստական կուսակցություն անունով նոր կազմակերպություն։ Հետագայում այդ կուսակցությունը վերադարձավ հին անվանը և սկսեց կոչվել իտալական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Նրա ղեկավարությունն անմիջապես ծայրահեղ հակակոմունիզմի դիրքեր գրավեց և իր նվիրվածությունը հայտնեց պրոատլանտյան արտաքին քաղաքականությանը։

Իտալական սոցիալիստական կուսակցությունը 1969 թ. հետո ընթացավ կոմունիստների հետ որոշակի մերձեցման ուղիով։ Նա սկսեց համագործակցել նրանց հետ տեղական ինքնավարության մարմիններում, նախընտրական կամպանիայի ընթացքում հրաժարվեց հակակոմունիստական լոզունգներից և այլն։

1968—1969 թթ. զանգվածային ընդհարումների ամբ հաստատեց երկրում ձախ կենտրոնի քաղաքականությունից դժգոհելու կոմունիստների եզրակացությունները։ Թոշակային համակարգի ռեֆորմի լոզունգով 1969 թ. կայացած համընդհանուր գործադուլը, որին մասնակցեց մինչև 18 միլիոն մարդ, հարկադրեց պառլամենտի միջոցով նոր օրենք անցկացնել սոցիալական ապահովության մասին, իսկ նույն տարում մյուս հզոր գործադուլը հասցրեց արհմիությունների և արդյունաբերողների միջև համաձայնության՝ աշխատավարձի մակարդակի զոնալ տարբերությունները վերացնելու մասին։ Մասսայական բնույթ էին կրում արտաքին քաղաքական հարցերի, առաջին հերթին Վիետնամում ամերիկյան ագրեսիայի դեմ ուղղված ցույցերը։

Աշխատավորների պայքարի պատմության մեջ հատուկ տեղ են գրավում 1969 թ. «թեժ աշնան» դասակարգային մարտերը։ Այդ ժամանակաշրջանի խոշորագույն ելույթ էր նոյեմբերյան համընդհանուր գործադուլը, որին մասնակցեց 20 միլիոն մարդ, այսինքն Իտալիայի համարյա ամբողջ ինքնագործ բնակչությունը։ Գործադուլավորները կառավարությունից պահանջում էին նոր քաղաքականություն վարել բնակարանային շինարարության բնագավառում։ «Թեժ աշնան» արդյունքը եղան աշխատավորների ձեռք բերած մի շարք կարևոր նվաճումներ. աշխատավարձի բարձրացումը, 40-ժամյա աշխատանքային շաբաթ մտցնելը (աստիճանաբար, ավարտելով 1972 թ. սկզբին), բանվորների և ծառայողների իրավունքի հավասարեցումը բուժսպասարկման ասպարեզում, արտադրամասերի պատգամավորներ ընտրելը և ձեռնարկություններում ժողովներ անցկացնելու բանվորների իրավունքի ճանաչումը, ձեռնարկությունների ներսում արհմիությունների իրավունքի ընդլայնումը։

1970 թ. ամռանը արհմիութենական երեք կոնֆեդերացիաներ Իտալիայի պատմության մեջ առաջին անգամ անմիջական բանակցություններ սկսեցին կառավարության հետ։ Աշխատավոր զանգվածների անունից նրանք պահանջեցին ռեֆորմներ անցկացնել բնակարանային շինարարության, հարկերի համակարգի և առողջապահության գծով։ Այս դեպքում արհմիությունների իրավասությունը չէր հաստատվում ավանդույթով կամ օրենքով՝ այդ իրավունքն աշխատավորները նվաճել էին իրենց պայքարով։

Այդ նույն տարում ԱՀԲԿ-ի ղեկավարությունն առաջարկեց ստեղծել արհմիութենական երեք կենտրոնների ֆեդերացիա։ 1970—1971 թթ. ընթացքում երեք արհմիությունների միջև կայացան մի շարք խորհրդակցություններ՝ արհմիութենական միասնության վերականգնման նախապատրաստման համար, միասնություն, որը քայքայվել էր 1948 թ.։

Սահմանադրության հոդվածներով, մարզերի համար սահմանադրությամբ նախատեսված ինքնավարության ստատուսի կենսագործման նպատակով կոմունիստների գլխավորությամբ Իտալիայի դեմոկրատական ուժերի պայքարն ավարտվեց 1970 թվականին մարզային կառավարման մարմիններ ստեղծելու օրենքի ընդունմամբ։ Այդ մարմինների ընտրությունները կայացան նույն տարվա հունիսին։ Էմիլիա-Ռոմանյայում կոմունիստները և ձախ սոցիալիստներն ստացան ձայների բացարձակ մեծամասնությունը, իսկ Տոսկանայում և Ումբրիայում «ձախ կենտրոնի» կուսակցությունների հետ հավաքեցին հավասար թվով ձայներ։ Այդ մարզերում ստեղծված ինքնավարության մարմիններում բանվոր դասակարգի կուսակցությունները գրավեցին գերակշռող դիրքերը։

«Ձախ կենտրոնի» կոալիցիայի քայքայումը և անցումը «Աջ կենտրոնին»

Միացյալ սոցիալիստական կուսակցության պառակտումից հետո ձախցենտրիստական կառավարության դիրքերը դարձան էլ ավելի խախուտ։ 1971 թ. սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը նոր քարտուղար Ջ. Մանչինիի գլխավորությամբ հանդես եկավ կոմունիստների հետ հետագա մերձեցման օգտին։ Միաժամանակ ՔԴԿ-ում ուժեղացան աջ խմբերը, որոնք հանդես էին գալիս ռեֆորմների քաղաքականությունից հրաժարվելու, գործադուլային շարժմանը վերջ տալու, արհմիութենական կենտրոնների միջև համագործակցությունը դադարեցնելու և այլ պահանջներով։ Այդ տարվա վերջին կայացած պրեզիդենտական ընտրությունները ամենաերկարատև էին Իտալիայի պատմության մեջ՝ ավելի քան երկու շաբաթվա ընթացքում թեկնածուներից ոչ մեկը չկարողացավ հավաքել ձայների պահանջվող քանակը։ Երբ ի վերջո պրեզիդենտ ընտրվեց բրիստոնեական դեմոկրատ Ջ. Լեոնեն, պարզ դարձավ, որ կառավարության ղեկավարի պոստի համար թեկնածուներից ոչ մեկը չի կարող ստեղծել ձախցենտրիստական կոալիցիա։ Լեոնեն ստիպված էր ժամկետից շուտ արձակել պառլամենտը և ընտրությունները նշանակել 1972 թ. մայիսին։

Ձախցենտրիստական բլոկի քայքայումը իտալական հասարակության շարունակվող սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքն էր։ Մասնակի ռեֆորմների քաղաքականությունը էականորեն չբարելավեց ազգային էկոնոմիկայի զարգացման պայմանները։ Երկրում պահպանվում էին անհամամասնությունները, որոնցից գլխավորը երկրի հյուսիսի և հարավի զարգացման անհամամասնությունն էր։ Գյուղական վայրերից բանուժի զանգվածային տեղաշարժը դեպի քաղաքները հասցրեց հարավային մի շարք շրջանների ամայաց-

մանը։ Դրան նպաստեց նաև իտալացիների, գլխավորապես երկրի հարավային մասից շարունակվող տարագրությունը արտասահման։

1971 թվականը նշանավորվեց արդյունաբերական արտադրության խիստ անկումով։ Այդ տարի ազգային եկամուտը համարյա չաճեց, իսկ արտադրությունը կրճատվեց 2,7 %-ով։ Դրա հիմնական պատճառներից մեկը նախորդ տարիներին աննշան կապիտալ ներդրումներն էին. արտադրության աճը կատարվում էր հիմնականում ի հաշիվ աշխատանքի արտադրողականության ավելացման, առաջին հերթին նրա ինտենսիվացման։ 1971 թ. մոտերքը այդ տեսակ ռեզերվները սպառված դուրս եկան։ Բայց 1971 թ. երկրի արդյունաբերական կարողությունները օգտագործվում էին 75 %-ից ոչ ավելի, այն ժամանակ, երբ գործազուրկների քանակը խիստ ավելացավ և գերազանցեց 1 միլիոն մարդուց։

Սոցիալական հարաբերությունների բնագավառում ձախցենտրիստական կառավարությունների գոյության վերջին տարիները նշանավորվեցին դասակարգային մարտերի բարձր շիկացածությամբ։ Արդյունաբերության մեջ առավել ակտիվ էին այն ելույթները, որոնք ուղղված էին ձեռնարկությունների փակման դեմ, գյուղական վայրերում բատրակները անց էին կացնում համազգային գործադուլներ, պահանջելով կնքել ավելի ձեռնտու աշխատանքային պայմանագրեր։

Նման դրությունից դուրս գալու որոնումներում կառավարող վերնախավի մի մասը 70-ական թվականների սկզբից հույսը դնում էր քաղաքական առանցքի աջ շարժվելու և «ուժեղ» կառավարություն ստեղծելու վրա։ Այդ նպատակով գիտակցաբար ուժեղացվում էր լարվածությունը և անվստահությունը։ Իտալական կառավարական մամուլը և կառավարական կոալիցիայի որոշ պարագլուխներ ապացուցում էին, թե երկրում լարվածությունը առաջացել է մի կողմից, «ծայրահեղ ուժերի»՝ նեոֆաշիստների և մյուս կողմից, կոմունիստների ընդհարման պատճառով։ Ընդ որում օգտագործվում էին տարբեր խմբավորումների (տրոցկիստների և անարխիստների) անպատասխանատու գործողությունները, խմբավորումներ, որոնք իրենց անվանում էին «ձախեր» և նույնիսկ «կոմունիստական»։ «Կարգ ու կանոն պահպանելու» պատրվակով ոստիկանությունը ավելի ու ավելի հաճախակի էր հարձակվում գործադուլավորների վրա, այն ժամանակ, երբ նեոֆաշիստների ելույթները մնում էին անպատիժ։ Իշխանությունները միջոցներ չէին ձեռնարկում նույնիսկ ֆաշիզմի բացահայտ գովաբանման դեմ, չնայած 1952 թ. օրենքով դրա համար պատիժ էր նախատեսվում։

Զգալիորեն ակտիվացել էին տարբեր աջ խմբավորումներ, որոնց ձգողության կենտրոնն էր դարձել «Իտալական սոցիալական շարժում» նեոֆաշիստական կուսակցությունը։ Այն ժամանակ, երբ չէին դադարում նեոֆաշիստների «մարտական խմբերի» հարձակումները ձախ կուսակցությունների շենքերի, ակտիվիստ-հակաֆաշիստների և դեմոկրատական կազմակերպությունների վրա, ԻՍՇ-ի պարագլուխ Դ. Ալմիրանտեն բարձրաձայն հայտարարեց, որ նրա նպատակը «կարգ ու կանոնի» կուսակցություն ստեղծելն է։ Չնայած նեոֆաշիստները ժխտում էին Մուսոլինիի ռեժիմի իրենց ժառանգորդ լինելը, սակայն նրանց ծրագրային դրույթները բովանդակում էին հին ֆաշիզմի զինանոցից փոխառված շատ գաղափարներ։ Այնպես, ինչպես նախկինում, նեոֆաշիստների գաղափարախոսության հիմքն էին կազմում անսանձ հակակոմունիզմը և նացիոնալիզմը։ Նեոֆաշիստները լույս աշխարհ հանեցին թեթևակի նորոգված «կորպորատիվ համակարգը», որը իբրև թե ի վիճակի է աշխատանքի և կապիտալի միջև համագործակցություն և «դասակարգային խաղաղություն» հաստատել։ Ձևակերպելով իրենց «քաղաքական ծրագիրը», նեոֆաշիստները 70-ական թվականների սկզբին առաջին անգամ լուրջ փորձ ձեռնարկեցին ներգրավվելու բուրժուական «պատկառելի» կուսակցությունների քաղաքական խաղի մեջ։ Նրանց հաշիվները կառուցված էին այն բանի վրա, որպեսզի մտնեն ինչ-որ «կարգ ու կանոնի ուժի բլոկի» մեջ, որը կարողանար դառնալ ավտորիտար ռեժիմի հենարանը, ընդունակ լիներ երկրում ճնշելու դեմոկրատական շարժումը։ ԻՍՇ-ն միավորվեց ոչ մեծ միապետական կուսակցության հետ և սկսեց ուժեղ թափով սիրախոսություն անել ՔԴԿ-ի աջ խմբավորումների հետ։ Նեոֆաշիստները հատուկ ուշադրություն էին դարձնում բանակի և ոստիկանության շարքերը ներթափանցելուն և իրենց ազդեցությունը միջին շերտերի վրա տարածելուն։

Ռեակցիոն ուժերի զորեղացման վտանգը նշվեց 1972 թ. մարտին կայացած իտալական կոմունիստական կուսակցության 13-րդ համագումարում։ Համագումարի քաղաքական բանաձևում ասվում էր, որ երկրի իրադրությունը համառորեն պահանջում է դեմոկրատական շրջադարձ կատարել, որը կփոխեր սոցիալական զարգացման նպատակները և բնույթը, ինչպես նաև ազգային կյանքում աշխատավոր զանգվածների դերը։ Համագումարի քաղաքական բանաձևն ընդգծում էր հանուն սոցիալիստական հեռանկարի մղվելիք հաջող պայքարի համար պրոլետարիատի դասակարգային դաշինքի ընդարձակման անհրաժեշտությունը։ Համագումարում Լ. Լոնգոն ընտրվեց ԻԿԿ-ի նախագահ, իսկ Է. Բերլինգուերը՝ գլխավոր քարտուղար։

1972 թ. մայիսին կայացած պառլամենտական ընտրությունները ցույց տվեցին, որ ԻԿԿ-ի ծրագիրը պաշտպանում են իտալական աշխատավոր լայն զանգվածները։ ԻԿԿ-ն ստացավ բոլոր ձայների 27,2 %-ը և կրկին ապացուցեց, որ նա Իտալիայում միակ կուսակցությունն է, որն ընտրություններից ընտրություն ավելացնում է իր ընտրողների քանակը։ Միաժամանակ բուրժուական կուսակցությունների լագերում բացահայտ շարժում կատարվեց դեպի աջ։ ՔԴԿ-ն հիմնականում պահպանեց իր դիրքերը, սակայն նեոֆաշիստներին, որոնք իրենց անվանում էին «աջ նացիոնալիստներ», հաջողվեց հավաքել ընտրողների ձայների ավելի քան 8 %-ը։ «Աջ նացիոնալիստական» կուսակցությունն ըստ քանակի վերածվեց չորրորդ քաղաքական կուսակցությանը Իտալիայում։ Ընտրություններից հետո Ջ. Անդրեոտին երեք՝ քրիստոնեա-դեմոկրատական, սոցիալ-դեմոկրատական և լիբերալ, կուսակցությունների ներկայացուցիչներից կառավարություն կազմեց։ Այդ կառավարությունն ստացավ աջցենտրիստական անվանումը, քանի որ սոցիալիստների փոխարեն նրանում տեղ գրավեց պահպանողական լիբերալ կուսակցությունը։ Կառավարական ծրագիրը արմատական ռեֆորմների ոչ մի առաջարկ չէր պարունակում։ Կառավարական նոր կոմբինացիան ամենևին էլ կայուն դուրս չեկավ։ Այն առաջ բերեց բոլոր առաջադիմական ուժերի խիստ օպոզիցիա և շուտով սպառեց իրեն։ Երկրում ծավալվող հասարակական-քաղաքական ճգնաժամն ավելի խոր և երկարատև դարձավ։ Ինչպես նշում էր ԻԿԿ-ն, ճգնաժամից դուրս գալու ելքը կարելի էր գտնել միայն ժողովրդական երեք գլխավոր՝ կոմունիստական, սոցիալիստական և կաթոլիկական հոսանքների միջև համագործակցության միջոցով։ Հենց այդ հիման վրա կարելի կլիներ ստեղծել դեմոկրատական շրջադարձի կառավարություն, որն ընդունակ կլիներ զարգացնել և պաշտպանել դեմոկրատիան և լուծել տնտեսական-սոցիալական հասունացած պրոբլեմները։

Իտալիան 1939—1969 թթ. պատմագրության մեջ

Սովետական պատմագրության մեջ այդ ժամանակաշրջանը լուսաբանված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության ինստիտուտի պատրաստած «Իտալիայի պատմության» երրորդ հատորում (Մ., 1971)։ Իտալիայի հետպատերազմյան ամփոփիչ պատկերը տրված է Ն. Պ. Կոմոլովայի «Իտալիայի նորագույն պատմություն» գրքում (Մ., 1970)։ Սովետական պատմաբանների մի շարք գրքեր նվիրված են Իտալիայի պատմության պատերազմական և հետպատերազմյան տարիների առանձին ժամանակաշրջաններին կամ պրոբլեմներին[1]։

Սովետական պատմաբանները մեծ ուշադրություն են դարձրել հետպատերազմյան Իտալիայի դասակարգային պայքարի, բանվորական, գյուղացիական և դեմոկրատական շարժման ուսումնասիրմանը[2]։ Արտաքին քաղաքականության պրոբլեմներին է նվիրված Ա. Պ. Պրոտոպոպովի հետազոտությունը[3]։

Իտալական պատմաբան-մարքսիստները ավյալ ժամանակաշրջանին վերաբերող իրենց աշխատությունների մեծ մասը նվիրել են Դիմադրության շարժման պատմությանը։ Իտալական կոմունիստների ղեկավար Լ. Լոնգոյի «Իտալիայի ժողովուրդը պայքարում» (Մ., 1951) և պատմաբան Ռ. Բատալյայի «Դիմադրության շարժման պատմություն» (Մ., 1964) գրքերը այդ շարժումը գնահատում են իբրև դեմոկրատական մեծ հեղափոխություն, որում ղեկավար դերը պատկանում էր բանվոր դասակարգին։ Պատերազմական տարիների իրադարձությունները նշանակալի տեղ են գրավում Է. Սանտարելու երկհատոր աշխատությունում[4]։ Ռ. Զանգրանդիի մանրամասն աշխատությունը նվիրված է 1943 թ. աշնանը Բադոլիոյի կառավարության իշխանության գլուխ գտնվելու կարճատև ժամանակաշրջանին[5]։ Զանգրանդիի, ինչպես նաև մյուս կոմունիստների համար, բնորոշ է երկրորդ համաշխարհային պատերազմում Իտալիային հասած աղետի համար կառավարող դասակարգի պատասխանատվությունը ցույց տալու ձգտումը։

Բուրժուական պատմագրության՝ ավյալ թեմատիկան մշակած ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը կանգնած է հակաֆաշիստական դիրքերում։ Սակայն, որպես կանոն, ֆաշիստական ռեժիմի խորտակման հիմնական պատճառները նրանք տեսնում են նրա ռազմական անհաջողություններում, նվազեցնելով բանվոր դասակարգի և նրա կուսակցության պայքարի դերը։ Իտալական բանակի պարտության մեղքն այդ պատմաբանները հաճախ փորձում են վերագրել բացառապես Մուսոլինիին, դրանով իսկ արդարացնելով կառավարող դասակարգի նրան պաշտպանող խմբին։ Լիբերալ ուղղության պատմաբանները դիմադրության շարժման գլխավոր շարժիչ ուժը համարում են ֆաշիզմի դեմ բարոյական բողոքը, իսկ կաթոլիկական պատմաբանները դրան միացնում են կրոնական մոտիվները։ Պատերազմական տարիների իրադարձությունների ժամանակագրությունը տրված է Լ. Սալվատորելլու գրքում և Դ. Միրայի «Իտալիայի ֆաշիստական ժամանակաշրջանի պատմության» մեջ[6]։

Բուրժուական հեղինակների աշխատությունների մեջ առանձնակի է պատմաբան-նացիոնալիստ Ա. Տամարոյի երկհատոր գիրքը[7]։ Բացահայտորեն ձգտելով արդարացնել ֆաշիզմի ռազմական անհաջողությունները, նա դրանք բացատրում է Մուսոլինիի ստրատեգիական առանձին սխալներով, դաշնակցի՝ հիտլերյան Գերմանիայի անլոյալ վարմունքով։ Իտալիայի պատերազմական տարիների, հատկապես պատերազմի երկրորդ ժամանակաշրջանի փաստագրական պատմությունը գրել է անգլիական պատմաբան Ֆ. Վ. Դիկինը, որն օգտագործել է իտալացի հետազոտողներին անմատչելի արխիվային նյութերը[8]։

Իտալացի պատմաբանները սովորաբար իրենց հետազոտություններն ավարտում են երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանով կամ հետպատերազմյան առաջին տարիներով։ Հետպատերազմյան առաջին տարիների պատմության մարքսիստական լուսաբանումը ավել է «Իտալական կոմունիստական կուսակցության գոյության և պայքարի երեսուն տարին» ժողովածուն (Մ., 1953)։ Մինչև 50-ական թվականների վերջն են հասցրել կոմունիստներ Մ. և Մ. Ֆերարաներն իրենց հրապարակախոսական «Քաղաքական կյանքի ակնարկներ» (Մ., 1961) գիրքը։

[1] Տե՛ս Н. П. Комолова, Движение Сопротивления и политическая борьба в Италии. М., 1972; Г. С. Филатов. Крах итальянского фашизма. М., 1973; Н. Н. Ковальский. Итальянский народ в борьбе. М., 1957; Г. С. Филатов. Итальянские коммунисты и движение Сопротивления. М., 1964; его же. Восточный поход Муссолини. М., 1968; И. Смирнова. Балканская политика фашистской Италии. М., 1969.

[2] Տե՛ս И. М. Петранович, Положение рабочего класса Италии. М., 1970; В. К. Наумов. Коммунисты Италии. М., 1972; К. Г. Холодовский. Рабочее движение в Италии. М., 1969; Н. П. Комолова. Классовые бои в итальянской деревне. М., 1963; Ю. П. Лисовский. Аграрный вопрос и крестьянское движение в современной Италии. М., 1966.

[3] Տե՛ս А. П. Протопопов. Внешняя политика Италии после второй мировой войны. М., 1963.

[4] Տե՛ս E. Santarelli, Storia del movimento e del regime fascasta, vol, I—II. Roma, 1967։

[5] Տե՛ս R. Zangrandi, 1943, 25 luglio—8 settembre, Milano, 1964։

[6] Տե՛ս L. Salvatorelli, G. Mira, Storia d Italia del periodo fascista, Torino, 1962։

[7] Տե՛ս A. Tamaro, Due anni di storia, vel, I—II, Roma, 1948—1950։

[8] Տե՛ս F. W. Deakin, The Brutal Friendship, London, 1962.

ԳԼՈՒԽ 13

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ (1945—1949)

Տնտեսական և քաղաքական դրությունը արևմտյան օկուպացիոն գոտիներում

Հակահիտլերյան կոալիցիայի տերությունների որոշումներին համապատասխան, նախկին ռայխի արևմտյան և հարավ արևմտյան շրջանները բաժանվեցին անգլիական, ամերիկյան և ֆրանսիական օկուպացիոն գոտիների։ Դրանք ամբողջությամբ կազմում էին հետպատերազմյան սահմաններում Գերմանիայի ոչ միայն տարածքային (մոտավորապես $^2/_3$), այլև ամենախիտ բնակեցված և արդյունաբերական տեսակետից զարգացած մասը։

Յալթայում և Պոտսդամում արևմտյան տերությունների ընդունած լայն դեմոկրատացման, նացիզմի վերացման և ապառազմականացման պարտա-

[6] Տե՛ս L. Salvatorelli, G. Mira, Storia d Italia del periodo fascista, Torino, 1962։

[7] Տե՛ս A. Tamaro, Due anni di storia, vel, I—II, Roma, 1948—1950։

[8] Տե՛ս F. W. Deakin, The Brutal Friendship, London, 1962.

վորություններն արդեն վաղ փուլերում հակասության մեջ մտան նրանց քաղաքականության դասակարգային էության, գերմանական կապիտալիզմի հիմքերն ամրապնդելու անհրաժեշտությամբ նրա համար, որպեսզի հետպատերազմյան Եվրոպայում կանգնեցվեր հեղափոխական-դեմոկրատական զարգացումը և հետագայում Գերմանիան վերածվեր Արևմուտքի հակասոցիալիստական ֆորպոստի։ Այդ հստակ գիտակցված ստրատեգիական նկատառումները հայտնի չափով սահմանափակում էին ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի մոնոպոլիստական շրջանների՝ հաղթված մրցակցի հաշվին ապրելու և նրան թուլացնելու նույնիսկ «օրինական» ցանկությունը։ Դրանով էր որոշվում նաև այն, որ Գերմանիայի արևմուտքում՝ ի տարբերություն սովետական գոտու, ինքնակամ հակաֆաշիստական նախաձեռնությունն անմիջապես և խստորեն կանխարգելվեց, իսկ ձախ ուժերն ամեն մի պատրվակով հեռացվում էին վարչական ֆունկցիաներից. նացիզմի լիկվիդացումը ձեռք բերեց մակերեսային և ձևական բնույթ, երկրամասերի կառավարությունները, մունիցիպալիտետները և կոնսուլտատիվ մարմինները զինվորական վարչության ժամանակ աղտոտվել էին աջ և նացիստական տարրերով։ Արդեն մեկ-երկու տարի անց որպես զինվորական իշխանությունների «անփոխարինելի մասնագետներ» և կոնսուլտանտներ վերադարձան սկզբում ռազմական հանցագործների ցուցակ մտցված մոնոպոլիստական կապիտալի գլխավոր դեմքերը՝ բանկիրներ՝ Դ. Աբսը, Դ. Ստինես-կրտսերը, Դ. Դինկելբախը, Վ. Յանգենը, Ֆ. Գանիելը և ուրիշներ։

Խոշորագույն կոնցեռնների վերացման մասին վերահսկիչ խորհրդի որոշումները սաբոտաժի ենթարկվեցին (օրինակ, «ԻԳ ֆարբենինդուստրիի» գույքի բռնագրավման և նրա արտադրական հզորությունների ապամոնտաժման մասին)։ Մոնոպոլիաների «ապակարտելացման» լայնորեն ռեկլամվող ամերիկա-անգլիական պլանները և լեռնահանքային ու մետալուրգիական արդյունաբերության «սոցիալացման» բրիտանական խոստումները մնացին թղթի վրա։ «Բանկերի մեծ եռյակի»՝ «Դոյչե բանկի», «Դրեզդներ բանկի» և «Կոմերսբանկի» ապակենտրոնացումը դուրս եկավ զուտ ձևական, մի քանի տարի անց նրանցից յուրաքանչյուրը դարձավ է՛լ ավելի հզոր, քան առաջ։ Արդեն 1946 թ. սկսեցին գործել տասնյակ տարբեր տեսակի ձեռնարկատիրական միավորումներ։ Արևմտյան տերությունների հակապոդստամյան կուրսը համընկավ գերմանական իմպերիալիստական բուրժուազիայի դասակարգային շահերի հետ, նրան գործելու միակ շանսը տվեց, թեկուզև երկրի մի մասում։

Օկուպացիոն արևմտյան գոտիներում տնտեսական կյանքի նորմալացումն ընթանում էր կրիայի քայլերով։ 1946 թ. վերջին արդյունաբերական արտադրության ընդհանուր մակարդակը հազիվ կազմեց նախապատերազմյանի մեկ երրորդը։ Զգալի չափեր ընդունեց գործազրկությունը։ Օկուպացիոն իշխանությունների թողտվությամբ ծաղկում էր սև շուկան։

1946—1947 թթ. բոլոր արևմտյան գոտիները պարենային սուր ճգնաժամ էին ապրում, որը շատ բանով օկուպացիայի ընդհանուր իմպերիալիստական բնույթի, ագրարային ռեֆորմից և գյուղում դեմոկրատական վերափոխումներից հրաժարվելու հետևանք էր։ Ներքին և արտաքին ռեակցիան գիտակցաբար, քաղաքական մոտիվներով, սով էր ստեղծում, նպատակ ունենալով սովի միջոցով կազմալուծել աշխատավորների պայքարի կամքը, նրանց ներշնչել այն միտքը, թե փրկություն կարող են բերել միայն հարուստ, «առատաձեռն», «ազատ» Ամերիկան և «նորմալ» գործող, այսինքն կապիտալիստական էկոնոմիկայի լիովին վերականգնումը։

Արևմտագերմանական կուսակցական-քաղաքական համակարգի հաստատումը

Սովետական գոտում հակաֆաշիստական նորացման ֆոնի վրա, որտեղ արդեն 1945 թ. հունիսի 10-ից թույլատրվեց հակաֆաշիստական կուսակցությունների ստեղծումն ու գործունեությունը, հատկապես ցայտունորեն դրսևորվեցին Արևմտյան և Հարավային Գերմանիայի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման արհեստականորեն դանդաղեցված տեմպերը։ Այստեղ ընդհուպ մինչև աշունը ուժի մեջ էր մընում քաղաքական և արհմիութենական ամեն տեսակ գործունեության արգելքը։ Միայն արևելյան գոտու օրինակի ուղղակի ճնշման ազդեցությամբ օկուպացիոն իշխանություններն ստիպված էին 1945 թ. վերջերին թույլատրել կուսակցական-քաղաքական գործունեությունը, այն էլ սկզբում օկրուգների մակարդակով, և միայն 1946 թ.՝ գոտիներից յուրաքանչյուրի մասշտաբով։ Արևելյան և Արևմտյան գոտիների կոմունիստների գաղափարաքաղաքական ծրագիրը ԳԿԿ-ի 1945 թ. հունիսի 11-ի մանիֆեստն էր։ Հակառակ օկուպացիոն իշխանությունների և ռեակցիայի հարուցած արգելքներին, կոմունիստական կուսակցությունն արդեն 1946 թ. գարնանը վերականգնեց իր կառուցվածքը և մեկ տարի հետո իր շարքերում ուներ 324 հազար անդամ, այսինքն այնքան, ինչքան կար մինչև 1933 թ. ամբողջ երկրում։ Ելնելով ծրագրային փաստաթղթից, կոմունիստներն ակտիվորեն աշխատանքի ներգրավվեցին տեղական ինքնավարման մարմիններում։ 1946—1947 թթ. ընտրություններում նրանք զգալի հաջողությունների հասան, արևմտագերմանական երկրամասերի տասնմեկ կառավարություններից տասում աշխատում էին կոմունիստ մինիստրներ և մինիստրների տեղակալներ (պետական քարտուղարներ)։

Ժողովրդական զանգվածների հետ բանվոր դասակարգի ավանգարդի սերտ կապերի մասին էին վկայում արհմիություններում և արտադրական խորհուրդներում կոմունիստական կուսակցության ամուր դիրքերը։ Արևմտյան Գերմանիայի կոմունիստներն ազատագրումից հետո հենց առաջին օրերից վերցրին պրոլետարների շարքերի գաղափարաքաղաքական պառակտումը հաղթահարելու, բանվոր դասակարգի միասնական կուսակցություն և միասնական արհմիություններ ստեղծելու կուրս։ Սակայն միասնության միտումը հանդիպեց աջ սոցիալ-դեմոկրատական տարրերի կատաղի դիմադրությանը։ Նրանց գաղափարական և կազմակերպչական կենտրոնը դարձավ 1945 թ. մայիսին Հանովերում ստեղծված «Շումախերի բյուրոն», որը գլխավորում էր փորձված դեմագոգ ու խիստ խարդախ քաղաքագետ, ռայխստագի նախկին դեպուտատ Կ. Շումախերը (1892—1952)։ Չնայած Կ. Շումախերին, ինչպես և հազարավոր սոցիալ-դեմոկրատների, նացիստները հետապնդում էին, նա մընացել էր համոզված հակակոմունիստ և հակասովետական։ «Շումախերի բյուրոն» դրեց արևմտագերմանական սոցիալ-դեմոկրատիայի հետպատերազմյան քաղաքական կուրսի հիմքերը։ Սոցիալ-դեմոկրատների աջ թևի պարագլուխները հայտարարում էին, թե Գերմանիայում նացիզմի հետ խորտակվել է նաև ինքը կապիտալիստական կարգը և «օրակարգի հարց է դարձել սոցիալիզմը». դրան անցումը նրանք ի նկատի ունեին իրականացնել սոցիալ-դեմոկրատական կուսակցության մենաշնորհ ղեկավարությամբ, առանց ԳԿԿ-ի հետ համագործակցելու, առանց «իրեն սպառած դասակարգային պայքարի», միայն ընտրական պրոցեդուրայի միջոցով։ Կապիտալիզմի «ծայրահեղությունները» հաղթահարելու համար նախատեսվում էին հետևյալ միջոցառումները. արդյունաբերական որոշ ճյուղերի (լեռնահանքային, էներգետիկ) և առաջատար բանկերի պետականացում, խոշոր հողատիրությունների սահմանափակում, ձեռնարկություններում բանվորական ներկայացուցչության իրավունքների ընդարձակում։ Այդ առաջադիմական պահանջներն առանց որևէ հիմնա-

մշակմանը։ 1946 թ. դեկտեմբերի 1-ին Հեսենում անցկացված հանրաքվեում ընտրողների 72 %-ը արտահայտվեց առաջատար ճյուղերը հանրային սեփականություն դարձնելու օգտին։ 1947 թ. գարնանային բազմաթիվ ելույթների մեջ աչքի ընկնող տեղ գրավեց Ռուրի 330 հազար ածխահատների համընդհանուր գործադուլը։ Նրանք պահանջում էին ազգայնացնել ածխի և մետալուրգիական արդյունաբերությունը։ ԳԿԿ-ի Հեսենի, Հյուսիսային Հենոս—Վեստֆալիայի, մյուս երկրամասերի լանդտագների պառլամենտական ներկայացուցիչները բոլոր ջանքերը ներդնում էին, որպեսզի կենսագործվեն «սոցիալացման» վերաբերյալ օրինագծերը և օրենքները, իրականացվեն համարյա բոլոր երկրամասերի սահմանադրություններում հաստատված «համակառավարման» աշխատավորների իրավունքները։ Սակայն ԳՍԴԿ ղեկավարության թուլակամությունը և կապիտուլանտականությունը, սահմանադրությունների առանձին հոդվածների և օրենքների վրա զինվորական նահանգապետների դրած ուղղակի արգելքները հասցրին նրան, որ առաջադիմական օրինագրությունները մնացին թղթի վրա։

Արևմտյան տերությունների ճակատագրական կուրսը

Գերմանական իմպերիալիզմի վերածնման միջազգային ռեակցիայի կուրսը տրամաբանորեն վերաճեց երկրի պառակտման և Արևմտյան Գերմանիան՝ ագրեսիվ բլոկների արդեն ծրագրված հակասովետական ստրատեգիայի հիմնական պլացդարմի վերածելու քաղաքականության։ Շրջանցելով վերահսկիչ խորհրդին, ԱՄՆ-ը և Անգլիան 1946 թ. դեկտեմբերին համաձայնագիր ստորագրեցին իրենց գոտիները Բիզոնիայի մեջ (ֆրանսիական գոտին միացավ 1948 թ.) միավորելու վերաբերյալ։ 1947—1948 թթ. արագորեն ստեղծվեցին սեպարատ բիզոնալ մարմիններ՝ տնտեսական և գործադիր խորհուրդներ, որոնք իրենց ֆունկցիաներով համապատասխանաբար մոտեցան գերմանական երկրամասերի պառլամենտին և կառավարությանը, գերագույն դատարանին, բանկերին և այլն։

Գերմանիայի պառակտումն իրականացնելու գործում կարևոր դեր խաղաց բիզոնիայի վրա «Մարշալի պլանի» տարածումը։

1948 թ. փետրվարի վերջից մինչև հունիսը Լոնդոնում նիստեր էր անում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Բենիլյուքսի երկրների սեպարատ կոնֆերանսը, որի որոշումները գերմանական պրոբլեմի կարգավորման քառակողմ համաձայնեցված սկզբունքներից լիովին խզում էին նշանակում։ Կոնֆերանսի եզրափակիչ կոմյունիկեն նախատեսում էր արևմտագերմանական հիմնադիր ժողովի հրավիրում՝ ապագա (փաստորեն սեպարատ) պետության սահմանադրությունը մշակելու համար։ Ռուրի հզոր կարողությունը ենթարկվում էր կոնֆերանսի մասնակից երկրների ներկայացուցիչներից կազմված հատուկ մարմնին։ Այդ ժամանակ էլ գաղտնի որոշում էր ընդունվել արևմտյան գոտիներում դրամական ռեֆորմ անցկացնելու մասին։

1948 թ. հունիսի 20-ի դրամական ռեֆորմը հասցրեց օկուպացիոն սովետական զոնայի և Տրիզոնիայի միջև տնտեսական կապերի խզմանը, իսկ Բեռլինի արևմտյան հատվածի վրա նրա անօրինական տարածումն անմիջական նախերգանք հանդիսացավ մայրաքաղաքի պառակտման, Արևմուտքի կողմից 1948—1949 թթ. «Բեռլինյան բլոկադա» հրահրելու և նրա շուրջը հիստերիա բորբոքելու համար։

Դեվալվացիայից հետո (1948—1949), տնտեսական վերելքի իրադրության մեջ բանվոր դասակարգը մի շարք հարձակողական բնույթի դասակարգային լարված մարտեր մղեց, որոնց գագաթնակետը դարձավ 1948 թ. նոյեմբերի 12-ի բիզոնյան համընդհանուր գործադուլը։ Այդ մարտական ելույթին, որը մեծագույն չափով զուգակցում էր տնտեսական ու քաղաքական պահանջները,

մասնակցում էր ավելի քան 9 միլիոն բանվոր և ծառայող (11,7 միլիոն ընդհանուր թվից)։ Սակայն արևմտագերմանական աշխատավորների, նրանց կոմունիստական ավանգարդի, արհմիությունների լավագույն տարրերի ջանքերը հաջողությամբ չպսակվեցին, չհաջողվեց հին կարգերի վերականգնման և ազգային դավաճանության ուժերը կազմալուծել և զարգացումն ուղղել հակաֆաշիստական-դեմոկրատական հուն։

ԳՖՀ-ի կազմավորումը

1948 թ. սեպտեմբերի 1-ին Բոննում Կ. Ադենաուերի նախագահությամբ սկսվեցին պառլամենտական խորհրդի նիստերը, որն իրենից Սահմանադիր ժողովի խղճուկ պարոդիա էր ներկայացնում։ Ամուր փակված դռների ետևում, երբեմն տառացիորեն զինվորական նահանգապետների թելադրանքով, ստեղծվում էր արևմտագերմանական ապագա պետության սահմանադրությունը։ Բոննի օրենսդիրները պետք է նրա հոդվածները խցկեին օկուպացիոն ստատուտի շրջանակներում։ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների անունից տրված այդ փաստաթուղթը սահմանում էր օկուպացիոն իշխանությունների հետ ապագա արևմտագերմանական պետության հարաբերությունները։ Առաջինների օգտին անժամկետ պահպանում էին լայն իրավունքներ. վերահսկողություն արտաքին քաղաքականության և առևտրի, սահմանադրության պահպանման նկատմամբ։ Զինվորական նահանգապետներն իրենց հայեցողությամբ կարող էին դադարեցնել սահմանադրության գործողությունը, արձակել գերմանական մարմինները, իրենց ձեռքը վերցնել ամբողջ իշխանությունը։ Ըստ էության դա սահմանադրության վրա սահմանադրություն էր, որը գերմանական ժողովրդին զրկում էր ինքնորոշման իրավունքից։ Օկուպացիոն ստատուտին սերտորեն հարում էր ռուրյան ստատուտը, որի հիման վրա հիմանդրվեց «Ռուրի համար միջազգային մարմինը». նրա վարագույրի ետևում փաստորեն գործում էին ամերիկյան մոնոպոլիաները, որոնք վերահսկում էին քարածխի, կոքսի, պողպատի հանույթն ու արտադրությունը։

1949 թ. մայիսի 8-ին պառլամենտական խորհուրդը հավանություն տրվեց արևմտագերմանական սահմանադրությանը՝ հիմնական օրենքին, որը գործում է մինչև օրս։ Պառլամենտական խորհրդում ԳԿԿ-ի ներկայացուցիչները հրաժարվեցին ստորագրել օրենքը, որովհետև սեպարատ սահմանադրությունն ամրապնդում էր երկրի պառակտումը և հեշտացնում մոնոպոլիաների և միլիտարիզմի վերածնունդը։ Բայց ԳԿԿ-ի ղեկավար Մ. Ռայմանը հենց այն ժամանակ հայտարարեց, որ կոմունիստները ռեակցիայի ոտնձգություններից կպաշտպանեն սահմանադրականորեն ամրապնդված դեմոկրատական իրավունքների յուրաքանչյուր թիզը։ Սեպարատ պետությունն ստացավ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն անվանումը։ Ֆեդերալիստական կառուցվածքին համապատասխան (հանրապետությունը կազմված է տասը երկրամասերից) ստեղծվեցին չորս տարին մեկ ընտրվող բունդեստագ և բունդեսրատ, որի դեպուտատներին նշանակում են երկրամասերի կառավարությունները։ Բունդեստագը կատարում է պառլամենտի հիմնական ֆունկցիաները։ Պետության ղեկավարը, ֆեդերալ պրեզիդենտը, ընտրվում է 5 տարի ժամկետով, հատուկ ընտրական կորպուսի կողմից, որը կազմված է բունդեստագի դեպուտատներից և բոլոր երկրամասերի լանդտագների պատգամավորներից։ Պրեզիդենտի դերը հիմնականում հասցվում է ներկայացուցչական ֆունկցիաներին։ Բայց դրա փոխարեն ֆեդերալ կանցլերի, կառավարության ղեկավարի իշխանությունը, որին պրեզիդենտի ներկայացմամբ ընտրում է բունդեստագը, բացառիկորեն մեծ է։ Սահմանադրությունը նրան իրավունք է տալիս միանձնաբար սահմանել քաղաքականության հիմնական ուղղությունները։

Սահմանադրությունը հռչակել է բուրժուական ավանդական իրավունքներ ու ազատություններ և, հաշվի առնելով ժամանակի ոգին ու սովետական գոտու հեղափոխականացնող օրինակը, հնարավոր էր համարում էկոնոմիկայի առանձին ճյուղերի հանրայնացումը, ամրապնդում էր կոլեկտիվ պայմանագրեր կնքելու արհմիությունների իրավունքները և հակասահմանադրական համարում այն գործողությունները, որոնք «կարող էին խախտել ժողովուրդների խաղաղ համատեղ կյանքը կամ ուղղված կլինեն ագրեսիվ պատերազմի նախապատրաստմանը»։ Միաժամանակ 23 հոդվածը ռևանշիզմը դարձնում էր սահմանադրական սկզբունք, քանի որ դրանով հիմնական օրենքի գործողության պահանջ էր հռչակվում ԳՖՀ-ի սահմաններից դուրս, այսինքն ԳԴՀ-ի տարածքի, Արևմտյան Բեռլինի և այն մարզերի վրա, որոնք տրվել էին ժողովրդական Լեհաստանին և ՍՍՀՄ-ին։

Արևմտագերմանական սահմանադրությունը, հակառակ նրա ստեղծողների բոլոր հավաստիացումներին, ամրացնում էր Գերմանիայի պառակտումը։ Նա իրավականորեն ամրապնդում էր մոնոպոլիստական կապիտալի ամենակարողության վերականգնումը արևմտյան երեք գոտիներում։

1949 թ. օգոստոսի 14-ին կայացան առաջին բունդեստագի ընտրությունները։ Դրանք ցույց տվեցին, որ ընտրողների հսկայական մեծամասնությունը չի ըմբռնել իրադրության ամբողջ լրջությունը։ Բանվոր դասակարգի կուսակցություններն անհաջողություն կրեցին։ Չնայած ընդհանուր գումարով նրանք հավաքեցին ավելի շատ ձայներ (ԳՍԴԿ-ն՝ 29,2 %, ԳԿԿ-ն՝ 5,7 %), քան ՔԴՄ/ՔՍՄ-ն (31 %), բանվորական շարքերի պառակտումը և աջ սոցիալիստների հակակոմունիստական անհաշտությունը մեխանիկորեն հասցրին բուրժուազիայի առաջատար կուսակցության իշխանության գլուխ դտնվելու ամրապնդմանը։ ՔԴՄ/ՔՍՄ-ի պարագլուխ Կ. Ադենաուերը, իր սեփական մեկ ձայնի գերակշռությամբ ընտրվելով ֆեդերալ կանցլեր, ԱԴԿ-ի և գերմանական կուսակցության մասնակցությամբ կառավարություն կազմեց։ Այդ կառավարության թիկունքում կանգնած էին արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի հիմնական ուժերը, կաթոլիկական վերնախավը և միլիտարիստական ռեակցիան։

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ (1949—1955)

50-ական թվականների տնտեսական վերելքը։ «Սոցիալական շուկայական տնտեսության» դոկտրինան

Արևմտագերմանական պետության գոյության առաջին տարիներին արդյունաբերական արտադրությունն ուներ շատ կայուն տեմպեր։ Արդեն 1951 թ. արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալը մեկ երրորդով բարձր էր, քան 1936 թ., իսկ 1956 թ. այն կրկնապատկվեց։ 50-ական թվականների կեսերին ԳՖՀ-ի բաժինը կապիտալիստական երկրների արդյունաբերական արտադրության մեջ հասավ համարյա 10 %-ի, իսկ պատրաստի արտադրանքի համաշխարհային արտահանության մեջ նրա տեսակարար կշիռը (1955 թ. 7,3 %) բարձր էր, քան Ֆրանսիայինը, և շուտով հավասարվեց անգլիականին։ Արևմտագերմանական արդյունաբերությունը ձեռք էր բերում նոր տեխնոլոգիական հիմք, ծավալվում էր նրա ամբողջ կառուցվածքի վերակառուցումը, ստեղծվում էին նոր ճյուղեր (նավթաքիմիան, էլեկտրոնիկան, սինթետիկ թելերի արտադրությունը), ընթանում էր համեմատաբար ետ մնացող շրջանների արագացված ինդուստրիալ զարգացումը։

Տնտեսական սրընթաց վերելքը, որ բուրժուական գրականության մեջ ստացավ «տնտեսական հրաշք» անվանումը, պայմանավորված էր բազմաթիվ գործոններով, այդ թվում նաև հիմնական կապիտալի լայնորեն նորացմամբ։ Ամբողջությամբ 1950 թ. էկոնոմիկայի մեջ կապիտալ ներդրումները կազմեցին 18,3 միլիարդ, 1955 թ. 41 միլիարդ մարկ։ Դրանց հիմնական աղբյուրն էին մոնոպոլիաների ինքնաֆինանսավորումը և պետական բյուջեն, այսինքն այն միջոցները, որոնք ստացվում էին աշխատավորների շահագործման խիստ ուժեղացման և հարկադրման հետևանքով։ Բացի այդ, բումի խթանման համար շատ արժեքավոր ստարտային օգնություն էր «Մարշալի պլանով» ստացվող դրամական օժանդակությունը (50-ական թվականների կեսերին դրա ընդհանուր ծավալը կազմում էր համարյա 4 միլիարդ դոլար)։ Քաղաքականության և կապիտալ ներդրումների մասշտաբների վրա դրականորեն ազդեց, չնայած ԳՖՀ-ն կրում էր օկուպացիոն զգալի ծախսերի բեռը, այն փաստը, որ մինչև 1956 թ. նրա էկոնոմիկան ծանրաբեռնված չէր ռազմական բյուջեով։

Ամբողջ էկոնոմիկայի հիմնական կապիտալի նորացման կենտրոնացված պրոցեսը և այսպես կոչված կուտակված պահանջարկը, խաղաղ ժամանակվա արտադրանքի բոլոր տեսակների նկատմամբ չտեսնված սովը տարիներով ապահովեցին ներքին արտակարգ տարողունակ շուկա, իսկ միլիոնավոր վերաբնակիչներն ստեղծեցին էժան բանվորական ուժի ընդարձակ ռեզերվ։ Կորեայում ԱՄՆ-ի 1950 թ. ագրեսիան արևմտագերմանական ինդուստրիային հսկայական պատվերներ բերեց և էականորեն թեթևացրեց համաշխարհային շուկաներում իրենց դիրքերը վերականգնելու արևմտագերմանական մոնոպոլիաների պայքարը։ Տնտեսական արագացված զարգացումն առաջ հղվեց այն անհամաչափությունը հաղթահարելու անհրաժեշտությունը, որ առաջացել է Արևելյան Գերմանիայի հետ վաղեմի տնտեսական կապերի խզման հետևանքով։

Տնտեսական վերելքի պայմաններում արագ տեմպերով էր ընթանում խոշորագույն մոնոպոլիաների տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդումը։ Այն մոնոպոլիաները, որոնք Հիտլերին իշխանության էին հասցրել և հարստացել հանցագործություններով ու ագրեսիայով, 50-ական թվականների կեսերին արդեն նորից էկոնոմիկայում զբաղեցնում էին հիմնական դիրքեր։ Մոնոպոլիստական օլիգարխիան գնալով աճող ազդեցություն էր գործում պետական քաղաքականության վրա, տարբեր միջոցներով և ձևերով վերահսկում էր պետական ապարատը, ֆինանսավորում էր բուրժուական կուսակցություններին, իրենց դրածոներին ուղղակի մտցնում էր բունդեստագ, նրա հանձնաժողովների ու մինիստրությունների և հատկապես 1949 թ. հոկտեմբերին ստեղծված հիմնական ձեռնարկատիրական կազմակերպության՝ գերմանական արդյունաբերական ֆեդերալ միության մեջ։

Ձևավորվող պետական-մոնոպոլիստական կարգավորման արևմտագերմանական տարբերակի հիմնարար դոկտրինա ծառայեց «սոցիալական շուկայական տնտեսության» տեսությունը, որը պատերազմից հետո զարգացրին նեոլիբերալ մի խումբ տնտեսագետներ, այդ թվում Ադենաուերի կառավարությունում էկոնոմիկայի անփոփոխ մինիստր Լյուդվիգ Էրհարդը։ Այն հավակնում էր մեթոդներ գտնել ձեռնարկատիրոջ անձնական նախաձեռնության, ազատ մրցակցության ապահովումը իդեալականորեն զուգակցելու պետական կարգավորման տարրերի հետ։ Վերջինիս գլխավոր նպատակն էր հռչակվում գների համակարգի «կանոնավոր» գործողությունը և «շուկայական էկոնոմի-

կան» «աղավաղող» մոնոպոլիստական միտումներից ազատելը։ Ցիկլային ճգնաժամերը կանխելու համար պետությունը պետք է օգտագործեր վարկային, վալյուտային, հարկային քաղաքականության լծակները։ Սակայն «կոպիտ ինտերվենցիոնիզմը», այսինքն՝ մոնոպոլիստական միավորումների տընտեսական գործունեությանը պետական դիրեկտիվ միջամտությունը, միանգամայն անթույլատրելի էր ճանաչվում։

50-ական թվականներին «սոցիալական շուկայական տնտեսության» դոկտրինան լիովին համապատասխանում էր արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի շահերին։ Էկոնոմիկայի գործունեության ընդհանուր պայմանները (զգալի քանակով\ազատ կապիտալի առկայությունը, ներքին արտակարգ տարողունակ շուկան, որակյալ էժան բանուժը, ինչպես նաև արդյունաբերական և ֆինանսական կապիտալի համակենտրոնացման մակարդակի իջնելը, լայնությամբ ու խորությամբ կապիտալիստական զարգացման լայնարձակ հնարավորությունները) թույլ էին տալիս հենվելու «ազատ մրցակցության» ավտոմատիզմի վրա և պետական կարգավորմանը սահմանափակ դեր հատկացնել։

«Սոցիալական շուկայական տնտեսության» տեսությունը, ծառայելով որպես կառավարական քաղաքականության պաշտոնական հիմք, ուներ նաև հրատակ գաղափարական, դեմագոգիկ ասպեկտ։ Նա պետությանը պարտավորեցնում էր տնտեսական կյանքի մեջ մտցնել «սոցիալական երաշխիքներ»՝ «հոգատարություն» վարձու աշխատանքի անձանց նկատմամբ, ընդ որում ուշադրությունը կենտրոնացվում էր աշխատանք տվողների (ձեռնարկատերերի) «սոցիալական քաղաքականության» վրա։ 50-ական թվականների ընթացքում, լրիվ զբաղվածության, գների համեմատաբար կայունության, ռեալ աշխատավարձի աճի պայմաններում, «սոցիալական շուկայական տնտեսության» ջատագովները ոչ առանց որոշ հաջողության աշխատավորներին ներշնչում էին, թե արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում ԳՖՀ-ում կարելի է հասնել դասակարգերի ներդաշնակության։ Նեոլիբերալիզմի քողի տակ կատարվում էր արևմտագերմանական մոնոպոլիաների ամենազորության արագ վերականգնումը և պետության հետ նրանց սերտաճումը։

Դեպի վերառազմականացման կուրս

Կ. Ադենաուերի կաբինետի կառավարական գործունեության ամբողջ իմաստը հանգեցվում էր երեք կանորագույն, սերտորեն փոխկապակցված խնդիրների լուծմանը. մոնոպոլիստական կապիտալի տնտեսական հզորության վերականգնում և հետագա համախմբում, վերառազմականացում և նոր բանակի ստեղծում, իմպերիալիստական բլոկների համակարգի մեջ Արևմտյան Գերմանիայի ներգրավում։ «Սառը պատերազմը» ամեն տեսակ միջոցներով բորբոքելու պայմաններում այդ ծրագրի իրականացման հետ էին կապվում Գերմանական Դեմոկրատական Հանրապետության կլանման և Արևմուտքի մեծ տերությունների ոլորտը, որպես ամբողջ «ազատ աշխարհի» միջնաբերդ, միավորված Գերմանիայի վերադարձի՝ արևմտագերմանական իմպերիալիզմի հույսերը։ Չնայած Բոնների պետության ստեղծումից հետո արևմտագերմանական բուրժուազիան նորից ձեռք էր բերել իր դասակարգային տիրապետության իրականացման գործիքը, սակայն իմպերիալիստական լագերում նրա իրավահավասարության մասին խոսք անգամ լինել չէր կարող։ ԳՖՀ-ի մոնոպոլիստական շրջանները հաճույքով հաշվեցին ԱՄՆ-ին ժամանակավորապես ենթարկվելուն։ 1949—1957 թթ. կոալիցիոն կառավարության մեջ մտնող կուսակցություններն իրենց իմպերիալիստական, հակաազգային ստրատեգիան քողարկում էին «արևմտյան միասնության», «Եվրոպայի ինտեգրացման», «կոմունիստական վտանգին հակահարված տալու» լոզունգներով։

Արևմտագերմանական զինված ուժեր ստեղծելու հարցը Ադենաուերն ԱՄՆ-ի կառավարության առջև առաջին անգամ դրեց դեռևս 1950 թ. ամռան վերջին։ Այն բանից հետո, երբ 1950 թ. հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Ռ. Պլևենը հրապարակեց եվրոպական բանակ՝ Եվրոպական պաշտպանական ընկերակցություն (ԵՊԸ) ստեղծելու պլանը, որի մեջ ենթադրվում էր մտցնել նաև արևմտագերմանական միավորումները, ԳՖՀ-ի կառավարության բոլոր ջանքերը կենտրոնացվեցին դրա շուտափույթ իրականացմանը։ Այդ նույն 1950 թ. աշնանը հիմնադրվեց Բլանկի գերատեսչությունը՝ ապագա ռազմական մինիստրության սաղմը։ Վաշինգտոնի խրախուսանքով։, Ադենաուերի կաբինետը հենց սկզբից մերժեց ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների՝ «գերմանական հարցի» խաղաղ կարգավորմանը և գերմանական ագրեսիայի վերածնման դեմ հուսալի երաշխիքներ ստեղծելուն ուղղված առաջարկները։ 1952 թ. մարտի 10-ին Սովետական Միությունը հանդես եկավ Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի նախագծով։ Նրա հիմնական դրույթները, ելնելով Պոտսդամի աղնիվ սկզբունքներից, նախատեսում էին Գերմանիայի պետական միասնության և անկախության վերականգնում, օկուպացիոն բոլոր զորքերի դուրսբերում, գերմանական խաղաղ էկոնոմիկայի վրայից ամեն տեսակ սահմանափակումների վերացում։ Գերմանիան, որին թույլատրվելու էր նույնիսկ ունենալ իր զինված ուժերը, պետք է ճանաչեր հետպատերազմյան սահմանները, պարտավորություն վերցներ չմտնելու պատերազմում հիտլերյան ռայխի դեմ մասնակցած որևէ երկրի դեմ ուղղված ռազմական բլոկների մեջ։

Ադենաուերի կառավարությունը, որը պատրանքային հույս էր դնում ուժի դիրքերից ելնող ստրատեգիայի վրա, այդ առաջարկությունները գնահատեց իբրև խորամանկ քայլ, իբրև «արևմտյան աշխարհի ստեղծվող պաշտպանական ընկերակցությանը հարված հասցնելու» փորձ։

1952 թ. մայիսի 26-ին, ԵՊԸ-ի ստեղծման վերաբերյալ փարիզյան պայմանագրի ստորագրման նախօրյակին, Բոննում ընդհանուր պայմանագիր ստորագրվեց ԳՖՀ-ի և երեք արևմտյան տերությունների միջև հարաբերությունների վերաբերյալ (Բոննի պայմանագիր)։ Այն վերացրեց օկուպացիոն ստատուտը, բայց արևմտյան տերությունների զորքերը շարունակում էին մնալ ԳՖՀ-ի տարածքում։ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի համար պահպանվում էին հատուկ իրավունքներ, այդ տերություններն ուված պահին կարող էին արտակարգ դրություն մտցնել և իշխանությունն ամբողջովին վերցնել իրենց ձեռքը։ Սակայն արևմտագերմանական իմպերիալիստական միլիտարիստական շրջանների կարծիքով ամենագլխավորը ձեռք էր բերվել՝ իմպերիալիստական բլոկների մյուս մասնակիցների հետ ԳՖՀ-ի իրավական հավասարության ուղին բացվել էր։

Բանվորական շարժումը 50-ական թվականների սկզբին

Մոնոպոլիստական վերականգնմանը և վերառազմականացմանը հակահարված տալը կազմակերպելու գործում կարևոր դեր կարող էին խաղալ արհմիությունները։ 1949 թ. հոկտեմբերի 12—14-ը Մյունխենում կայացավ գերմանական արհմիությունների միավորման (ԳԱՄ) հիմնադիր կոնգրեսը, որի մեջ մտան մոտ 5,5 միլիոն (35,4 %) աշխատավորներ։ ԳԱՄ-ի ծրագիրը պայքար էր հռչակում միլիտարիզմի դեմ, հանուն դեմոկրատական իրավունքների, հանուն «աշխատավորների համակառավարմանը էկոնոմիկայում» և առաջադրում էր արդյունաբերության առաջատար ճյուղերի հանրայնացման պահանջ։ Սակայն ԳԱՄ-ի ղեկավարությունը ամուր կերպով գտնվում էր նախագահի պոստում ընտրված Հ. Բեկլերի տիպի աջեֆորմիստական և հակակոմունիստական տրամադրություններ ունեցող քաղաքագետ-

ների ձեռքում։ Դրա համար էլ ԳԱՄ-ի մեջ մտնող արհմիությունները իրականում հենց սկզբից իրենց գործունեությունը սահմանափակեցին կոլեկտիվ պայմանագրեր կնքելու բանակցություններով։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որ ԳՖՀ-ի կազմավորման ժամանակից սկսած գտնվում էր իր «անմիջականորեն սոցիալիստական» ստրատեգիայի կտորտանքների կույտի առջև, 50-ական թվականների առաջին կեսի ընթացքում փորձում էր պահպանել բանվորական հակակապիտալիստական կուսակցության կերպարը, Ադենաուերի կառավարության նկատմամբ գրավելով «անհաշտ օպոզիցիայի» դիրք։ Համագումարների բանաձևերում և կուսակցության պարագլուխների (Կ. Շումախերի մահից հետո 1952 թ. կուսակցության նախագահ դարձավ Է. Օլենհաուերը) հայտարարություններում պահանջվում էր արդյունահանման արդյունաբերության ազգայնացում, վերաոազմականացման դատապարտում, կոչեր էր պարունակվում ԵՊՐ-ին չմասնակցելու և «ընդհանուր պայմանագիրը» չստորագրելու վերաբերյալ։ Արտաքին քաղաքականության մեջ հետապնդելով շատ բանով բուրժուական կուսակցությունների ստրատեգիային համընկնող (ամենից առաջ ԳԴՀ-ն վերացնելու) նպատակներ, աջ սոցիալիստական ղեկավարությունը կարծում էր, թե ԱՄՆ-ին «չափից ավելի» ենթարկվելը, ռազմաարդյունաբերական արևմտաևրոպական ինտեգրացիայի վրա հույսը դնելը սխալ է։ Բայց ԳՍԴԿ-ի հռչակած սոցիալական ու դեմոկրատական ռեֆորմների և արտաքին քաղաքականության նկատմամբ ռեալիստական մոտեցման առանձին տարրերի ռեալ նշանակությունը նսեմանում էր նրա վարած անողուսպ հակակոմունիզմի, 1937 թ. սահմանների «ցուցադրական» պահանջների, պրոարևմտյան կողմնորոշման պատճառով։ Կուսակցության պաշտոնական նպատակներից որևէ մեկի համար զանգվածային պայքար ծավալելը ԳՍԴԿ-ի ղեկավարության համար անընդունելի էր։

Ժողովրդի արմատական սոցիալական և ազգային շահերի համար պայքարի միակ իսկական հետևողական մարտիկը ԳԿԿ-ն էր։ 50-ական թվականների շեմին կուսակցության դրությունը բարդ էր. տնտեսական սրընթաց վերելքի, նացիզմի, պատերազմի, օկուպացիայի տարիներին տառապած աշխատավորների զգալի խավերի կյանքի նկատելի բարելավման իրադրության մեջ, հակակոմունիզմի և միլիտարիստական հիստերիայի ճնշման պայմաններում նրա սկզբունքային հեռատես դիրքորոշումը լայն արձագանք չէր գտնում։ Կոմունիստների դեմ համախմբված ճակատով հանդես էին գալիս արևմտագերմանական բոլոր քաղաքական կուսակցությունները։ Կառավարությունը, ոտնահարելով հիմնական օրենքը, կոմունիստների դեմ ռեպրեսիաների կարկուտ էր տեղում։ Արդեն 1951 թ. ընդունվեց «բլից-օրենքը», որն ուղղված էր բոլոր այլախոհների դեմ։ Հաջորդ տասնամյակում այդ օրենքի հիման վրա գործեր հարուցվեցին 500 հազար քաղաքացիների դեմ։ ԳԿԿ-ի մի շարք աչքի ընկնող գործիչներ նորից բանտարկվեցին։ Անկայունները հեռանում էին կուսակցությունից. արդեն 50-ական թվականների սկզբին նրա թվաքանակը, համեմատած 1947 թ. հետ, կրճատվեց մի քանի անգամ։ Մունիցիպալիտետների և լանդտագի ընտրություններն անմխիթար արդյունքներ բերեցին։ Արհմիությունների աջ ղեկավարությունը կոմունիստներին հեռացրեց արհմիութենական ընտրովի բոլոր պաշտոններից։ Աճող մեկուսացման պայմաններում կուսակցության անդամների մի մասի մեջ նկատվեցին ինչպես օպորտունիստական, կապիտուլանտական, այնպես էլ հատկապես ազանդավորական-դոգմատիկ թեքումներ։

1952 թ. նոյեմբերին ԳԿԿ-ն հանդես եկավ Գերմանիայի ազգային վերամիավորման ծրագրով։ Կոմունիստները երկու գերմանական պետությունների

բանակցությունների, բոլոր զորքերի դուրսբերման, ազգային ժողովի համագերմանական ընտրությունների կոչ էին անում։ Դա իսկական ազգային հայրենասիրական դիրքորոշում էր։ Միաժամանակ ծրագրում, ինչպես հետագայում ինքնաքննադատաբար նշեց ԳԿԿ-ի Կենտրոնական կոմիտեն, պարունակվում էին վոլյունտարիստական ազանդավորական, մասնավորապես հեղափոխական ճանապարհով Ադենաուերի կառավարությունը տապալելու ձևակերպումներ, որոնք հետագայում առիթ դարձան ԳԿԿ-ի արգելման համար։

1953 թ. բունդեստագի ընտրություններից առաջ ընտրական օրենքում մտցվեց այսպես կոչված 5 տոկոսանի վերապահումը. այդուհետև իր դեպուտատներին ուղարկում էր այն կուսակցությունը, որն ստանում էր ձայների ոչ պակաս 3 %-ը։ Այդ նորամուծությունն ուներ բացահայտ հակակոմունիստական ուղղվածություն։ ԳԿԿ-ն ստացավ 608 հազար ձայն (2,2 %)։

Աշխատավորների պայքարը վերառազմականացման դեմ

Բոնների ռևանշիստական միլիտարիստական ստրատեգիան հենց սկզբից հանդիպեց բնակչության ակտիվ դիմադրությանը։ Հակամիլիտարիստական ակտիվության ամենավաղ դրսևորումը «առանց մեզ» պերճախոս լոզունգով գործող շարժումն էր, որի հիմնական ուժը ռազմաճակատային սերնդի տղամարդիկ էին։ 1949 թ. դեկտեմբերին բունդեստագում ԳԿԿ-ի ֆրակցիան որոշման նախագիծ մտցրեց, որով կառավարությանն արգելվում էր զինված ուժեղ ստեղծելը և ռազմական արտադրության ծավալումը։ Միլիտարիստական պլանները մերժվեցին սոցիալ-դեմոկրատների գրեթե մեծամասնությամբ։ 1950 թ. ԳՍԴԿ-ի համագումարը կոչ արեց «վերառազմականացմանը հակազդել բոլոր միջոցներով և ամեն ձևով»։ Ադենաուերի պլաններին ակտիվորեն դիմադրելուն ներգրավվեցին սոցիալական տարբեր խավեր։ 1951 թ. սկզբին վերառազմականացման դեմ ներկայացուցչական կոնգրեսն առաջ քաշեց հանրաքվե անցկացնելու գաղափարը։ Ֆեդերալ կառավարությունը, դրանից անհանգստացած, հանրաքվեի անցկացումը հայտարարեց հակասահմանադրական։ Չնայած ոստիկանական հալածանքներին, շարժման ակտիվիստներն արտադրամասերում, գործարանային դարպասների մոտ, հրապարակներում հարցումներ էին անցկացնում։ Արևմտյան միլիոնավոր գերմանացիներ միլիտարիզմին ասում էին «ոչ»։ 1952 թ. հունվարին ԳՍԴԿ վարչությունը դիմեց ֆեդերալ սահմանադրական դատարանին, պահանջելով վերառազմականացման մասին օրենքներ ընդունելու համար սահմանել պառլամենտական $^2/_3$-ի մեծամասնություն։ Այդ դեպքում ԳՍԴԿ-ն իր տրամադրության տակ արգելակող փոքրամասնություն կունենար։ Դատարանը մերժեց միջնորդությունը։ Միաժամանակ ԳՍԴԿ ղեկավարությունը համառորեն մերժում էր համատեղ գործողությունների, արտապառլամենտական քայլերի վերաբերյալ ԳԿԿ-ի բոլոր առաջարկությունները։

ՆԱՏՕ-ի մեջ մտնելը

50-ական թվականների սկզբի զանգվածային հակապատերազմական շարժումն իր նպատակին չհասավ. 1953 թ. գարնանը բունդեստագը վավերացրեց Բոնների և Փարիզի պայմանագրերը։ Ֆրանսիայի ազգային ժողովում «եվրոպական բանակի» վերաբերյալ պայմանագրի ձախողումը (1954 թ. օգոստոսի 30-ին) չսասանեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի կառավարությունների վճռականությունը։ Նրանց համար պահանջվեց երկու ամսից էլ պակաս ժամանակ նրա համար, որպեսզի հնարվեր Արևմտաևրոպական ընկերակցության միջոցով ՆԱՏՕ-ի մեջ Արևմտյան Գերմանիային մտցնելու նոր ձև։ 1954 թ. հոկտեմբերի 23-ին ստորագրվեցին փարիզյան համաձայնագրերը, որոնց համաձայն ԳՖՀ-ն դառնում էր ԱԵՄ-ի և ՆԱՏՕ-ի անդամ։ Նրան թույլատրվում էր մինչև 500 հազարանոց մարդուց բաղկացած 12 դիվիզիայով բանակ՝ բունդեսվեր ստեղծել։

Բունդեսվերը մտցվում էր ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի կազմի մեջ։

ԳՖՀ-ի առաջադեմ ուժերը համառորեն դիմադրում էին փարիզյան համաձայնագրերի վավերացմանը։ 1954 թ. դեկտեմբերի 28—30-ը կայացավ ԳԿԿ համագումարը։ Նա փարիզյան համաձայնագրերի և ԳՖՀ-ի վերառազմականացման դեմ պայքարը բնութագրեց իբրև ժողովրդի կենսական կարևոր խնդիր և կոմունիստների ու սոցիալ-դեմոկրատների գործողությունների միասնության կոչ արեց։ Բայց ԳՍԴԿ ղեկավարությունը նորից մերժեց համատեղ գործողությունների գաղափարը։ 1955 թ. հունվարի 29-ին ԳՍԴԿ-ի և ԳԱՄ-ի պարագլուխները իրենց ցույցն անցկացրին Մայնիֆրանկֆուրտի սուրբ Պողոսի եկեղեցում, որտեղ ընդունվեց ԳՖՀ-ի՝ փարիզյան համաձայնագրերից և վերառազմականացման պլաններից հրաժարվելու պահանջ ներկայացնող գերմանական մանիֆեստը. այսպես ծնվեց արտապառլամենտական խոշոր «Սուրբ Պողոսի եկեղեցու շարժումը»։ Սակայն ԳՍԴԿ-ի ղեկավարությունը շուտով ինքը հեռացավ այդ շարժումից։

1955 թ. փետրվար-մարտին ազգենաուերյան մեծամասնությունը Բոննի պառլամենտում հասավ փարիզյան համաձայնագրերի վավերացմանը։ 1955 թ. մայիսի 5-ին դրանք ուժի մեջ մտան։ Մայիսի 8-ին ԳՖՀ-ն պաշտոնապես ընդունվեց ՆԱՏՕ-ի մեջ, իսկ հաջորդ օրը Բոննի պատվիրակությունը հանդիսավորությամբ մասնակցեց ՆԱՏՕ-ի խորհրդի աշխատանքին։ Այսպես գերմանական իմպերիալիզմը, արևմտյան տերությունների պաշտպանության շնորհիվ, նշեց իր ջախջախման տասնամյակը։

Գերմանական պետությունների զարգացման միմյանցից հեռացած ուղիները բացառում էին համագերմանական ընտրություններ անցկացնելու ճանապարհով նրանց միավորման հնարավորությունը։ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի հարաբերությունների բոլոր հարցերը, ներառյալ նաև վերամիավորման պրոբլեմը, այժմ կարող էին լուծվել միայն ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի կառավարությունների բանակցությունների միջոցով՝ իրավահավասար, միջազգային իրավական հիման վրա։

Ագրեսիվ բլոկի մեջ ԳՖՀ-ի մտնելն ամրապնդեց և քաջալերեց ռեակցիային։ 1956 թ. օգոստոսի 17-ին խախտելով օրինականությունը և իրավական տարրական նորմերը, ընդունվեց ԳԿԿ-ն արգելելու մասին հակասահմանադրական վճիռը։ Այդ վճիռը հնչեց իբրև «սանձարձակ տեռորի» կոչ։ «Թաքնված-կոմունիստական» կազմակերպություններ հայտարարվեցին և արգելվեցին ազատ գերմանական երիտասարդական միությունը, կանանց դեմոկրատական միությունը, գերմանա-սովետական բարեկամության ընկերությունը, կոլտուրբունդը և այլն։

ԳՖՀ-Ն ՔԴՄ/ՔՍՄ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԱԳՐԵՍԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՃԸ (1956—1966)

Սոցիալ-տնտեսական զարգացումը

Արևմտագերմանական հրապարակախոսության մեջ 50-ական թվականների վերջը, հատկապես հետագա զարգացման ֆոնի վրա, բնութագրվում է իբրև «ոսկյա ժամանակ», «համընդհանուր ծաղկման, խաղաղեցման» գագաթնակետ։ Չնայած տնտեսական զարգացման ռեկորդային տեմպերը (1951—1955 թթ. արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին հաշվով 12,3 % աճը) փոխարինվեցին ավելի համեստ (1956 թ. 6—7 %, 1961—1965 թթ. 5,4 %) և ավելի նվազ կայուն (1958 և 1963 թթ. առկա էին խիստ անկումները) տեմպերով, արևմտագերմանական էկոնոմիկան ամբողջությամբ վերցրած խորհրդանշում էր կայունություն և դինամիզմ։ ԳՖՀ-ն վերածվել էր արևմտաեվրոպական էկոնոմիկայի հեգեմոնի։

Հենվելով տնտեսական հզոր պոտենցիալի վրա և ծավալելով տնտեսական էքսպանսիա, արևմտագերմանական մոնոպոլիաները հանդես եկան որպես «եվրոպական ինտեգրացիայի» ամենաակտիվ նախաձեռնողներ. 1958 թ. հունվարից ԳՖՀ-ն «Ընդհանուր շուկայի» անդամ էր։ Այդ ժամանակամիջոցում ԳՖՀ-ն կապիտալիստական աշխարհում արդյունաբերական արտադրության, ոսկու վալյուտայի ռեզերվների և արտահանության գծով արդեն դուրս եկավ երկրորդ տեղը։ ԵՏԸ-ում արևմտագերմանական մոնոպոլիաների իշխող դիրքն անվիճելի էր. ամբողջ արդյունաբերական արտադրանքի 44 %-ը (1960 թ.)։ 50-ական թվականների երկրորդ կեսից կապիտալի արտահանման միջոցով ԳՖՀ-ն հզոր հարձակում ծավալեց իր պարտնյորների դեմ (1955 և 1967 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում մասնավոր կապիտալ ներդրումները աճեցին համարյա երեսուն անգամ)։

Տնտեսական աճը պայմանավորված էր արտադրության խիստ ինտենսիվացմամբ և աշխատավորների շահագործումով, արտադրության համեմատաբար ցածր ծախսերով։ Մինչև 60-ական թվականների սկիզբը արևմտագերմանական բանվորների աշխատավարձն էապես ցածր էր, քան կապիտալիստական առաջատար երկրներում։ Միաժամանակ 1956—1962 թթ. ընթացքում միջին տարեկան արտադրանքը մեկ բանվորի հաշվով բարձրացավ 70 %-ով։ Ընդորում ԳՖՀ-ն, ամբողջ աշխարհի կապիտալիստների կարծիքով, մնում էր սոցիալական կայունության նախանձելի կղզյակ։ Աշխատանքի և կապիտալի ճակատում երկարատև «զինադադարը», որը միայն երկու անգամ ընդհատվեց 1956 թ. Շլեզվիգ-Հոլշտեյնի երկրամասում և 1963 թ. Բադեն Վյուրտենբերգում մետաղագործների և մետալուրգների մարտական խոշոր ելույթներով, բացատրվում էր նշված փաստերի ամբողջությամբ։

Դեմ առ դեմ բախվելով ԳԴՀ-ում սոցիալիստական շինարարության հեղափոխականացնող ներգործությանը, ԳՖՀ-ի բուրժուազիան գնալով հաղվադեպ կարող էր իրեն թույլ տալ դիմելու «մտրակի քաղաքականությանը»։ Նա ստիպված էր հիմնավորապես և սիստեմատիկաբար, քան մյուս երկրների շահագործող դասակարգերը, վարել սոցիալական խուսանավման, պատերնալիստական բարեգործության և բանվոր դասակարգի լայն խավերին զիջելու տակտիկա։ Վերջապես 50—60-ական թվականներին է ընկնում «բանվորական ձեռքերում սեփականության ստեղծման», «սեփականության ցրման», «ժողովրդական բաժնետոմսերի» սոցիալ-դեմագոգիական քաղաքականության «ծաղկումը»։ Դրա սոցիալական, քաղաքական իմաստը խտացած ձևով ձևակերպել է «մեծ բանկիր» Աբսը. «Ֆեդերատիվ հանրապետությունում մասնավոր ձեռնարկատիրության համակարգը երկաթե վարագույրի անմիջական մոտիկությամբ երկարատև պահպանելն անհնարին է, եթե մեզ չհաջողվի այդ համակարգին սերտորեն կապել մի քանի միլիոն արևմտյան գերմանացիների, նրանց դարձնելով մանրբաժնետերեր»։ Ճկուն տակտիկայի նյութական հիմքերը դրվեցին բարձրը կոնյունկտուրայի տասնամյակում խոշոր կապիտալի ֆանտաստիկ հարստացմամբ։

Այդ պայմաններում բանվոր դասակարգին հաջողվեց, առանց բացահայտ մարտական մեթոդներ կիրառելու, բուրժուազիայից շատ էական զիջումներ կորզել. 1950 թ. համեմատությամբ ռեալ աշխատավարձի կրկնակի բարձրացում, աշխատանքային շաբաթի կրճատում, տարեկան արձակուրդների օրենսդրականորեն ամրապնդում, «դինամիկ», այսինքն պարբերաբար աշխատավարձի և գների մակարդակի բարձրացմանը և տնտեսական ընդհանուր

զարգացմանը համապատասխան, նախատեսվող թոշակներ, նպաստների ավելացում երեխաներին և այլն։

Սոցիալական օրենսդրության առաջադիմությունը, պետական մանևրման տարբեր մեթոդները և մասնավոր պատերազմի շրջանակներում նպաստները, սեփականության «ցրման» ուղղությամբ սոցիալ-դեմագոգիկ միջոցառումները նպաստեցին ռեֆորմիստական պատրանքների տարածմանը։

ՔԴՄ/ՔՍՄ-ն, որն իրեն հռչակել էր ժողովրդական կուսակցություն, ճկունորեն օգտագործելով պետական իշխանության լծակները, սոցիալական դեմագոգիայի տակտիկան և լայն գաղափարական մանիպուլյացիայի միջոցները, կարողացավ գլխավորել արևմտագերմանական բուրժուազիայի հիմնական ֆրակցիաներն ու խմբերը և հանդես գալ նրա փաստորեն միակ կուսակցության դերում։ Դա իր արտացոլումը գտավ բուրժուական մանր կուսակցությունների անկման և նրանց՝ աստիճանաբար Ադենաուերի կուսակցության կողմից կլանվելու մեջ։ ԳՖՀ-ի գոյության առաջին տասնամյակին ստեղծվեց ուժերի այն հաշվեկշիռը, որում, մասամբ պետական-իրավական բռնության միջոցներով, մասամբ էլ լայն ու ճկուն «սոցիալական քաղաքականությամբ, պարտադրվեց ու գնվեց հասարակական հիմնական խավերի և քաղաքական հոսանքների «լոյալությունը», իսկ սոցիալական բողոքը և դժգոհությունը, թվում էր, թե մղվել էին արևմտագերմանական իրականության ծայրամասերը։ 1957 թ. բունդեստագի ընտրությունները, որոնք Ադենաուերը դիմավորեց, «ոչ մի փորձ» ինքնագոհ-պահպանողական լոզունգով, նրա կուսակցությանը բերեցին հաղթական հաջողություն՝ բոլոր ձայների 50,2 %-ը։

Միլիտարիզմի և ռևանշիզմի քաղաքականությունը

Ադենաուերն ընտրությունների ելքը մեկնաբանեց իբրև իր քաղաքականության վստահության քվե։ Լայն զանգվածները լիովին չէին ըմբռնում Բոննի ավանտյուրիստական քաղաքականությունը, նրա հնարավոր ճակատագրական հետևանքները։ Այնինչ միլիտարիստական նախապատրաստությունների, ռևանշիստական հայտարարությունների, արտաքին քաղաքական պրովոկացիաների պարույրը քանդվում էր ամբողջ թափով։ 1956 թ. ձևավորվեցին բունդեսվերի առաջին միավորումները, մտցվեց համընդհանուր զինապարտություն, ստեղծվեց ռազմական մինիստրություն՝ ՔՍՄ-ի նախագահ, ծայրահեղ աջ ավանտյուրիստական ուժերի ներկայացուցիչ Ֆ. Ի. Շտրաուսի գլխավորությամբ։ Բունդեսվերը (որի թվաքանակը 1957 թ. 125 հազար էր, 1962 թ. վերջին՝ 400 հազար) հենց սկզբից ձևավորվեց իբրև ագրեսիայի ժամանակակից բանակ, հարմարեցված հրթիռա-միջուկային պատերազմի պայմաններում հարձակողական ստրատեգիային։ Նրա բոլոր գեներալները եղել էին հիտլերյան ռայխսվերի գեներալներ կամ ավագ սպաներ։ 1958 թ. մարտի 25-ին բունդեստագը, հակառակ ԳՍԴԿ-ի ձայների, օրենք ընդունեց բունդեսվերը «ամենաարդիական», այսինքն միջուկային զենքով զինելու մասին։ ՆԱՏՕ-ի ներսում ԳՖՀ-ի բոլոր ջանքերն ուղղված էին այն բանին, որպեսզի իրենց գեներալիտետին հրամանատարական պոստեր ապահովեն և պարտադրեն իրենց ռազմաստրատեգիական դոկտրինան։

1960 թ. հրապարակվեց և նույնիսկ ՆԱՏՕ-ի երկրների կառավարող շրջաններում անհանգստություն առաջացրեց իր տոնով անսովոր ագրեսիվ և լկտի «գեներալների հուշագիրը»։ Այն պահանջում էր ԳՖՀ-ին սեփական միջուկային զենք տրամադրել, ՆԱՏՕ-ում ուժեղացնել Բոննի գեներալիտետի ազդեցությունը և հասարակական կյանքի համակողմանի ռազմականացումը։

Ռևանշի դիվանագիտությունը

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքները վերանայելու և նախապատերազմյան սահմաններում գերմանական ռայխը վերականգնելու ձգտումը որոշում էր ՔԴՄ/ՔՍՄ կառավարող կուսակցության ամբողջ արտաքին քաղաքականությունը։ Ռևանշիստների պլանավորած էքսպանսիայի առաջին փուլը, որ տարածվում էր Լեհաստանի արևմտյան վոևոդությունների և Սովետական Միության Կալինինգրադի մարզի վրա, պետք է հանդիսանար ԳԴՀ-ի կլանումը։ Հաջողությամբ սոցիալիզմ կառուցող գերմանական բանվորների և գյուղացիների պետության գոյության բուն փաստում ԳՖՀ-ի իմպերիալիստական ուժերը մահացու սպառնալիք էին տեսնում իրենց տիրապետությանը։ Հատկապես ԳԴՀ-ի դեմ պայքարի համար Բոննում ստեղծվել էր համագերմանական հարցերի գծով մինիստրություն։

1955 թ. դեկտեմբերին Ադենաուերի կառավարությունն ընդունեց «Հալշտայնի դոկտրինան», որը հայտարարում էր, որ ԳՖՀ-ն դիվանագիտական հարաբերություններ չի պահպանելու այն պետությունների հետ, որոնք ճանաչում են ԳԴՀ-ն։ Հետևելով իմպերիալիստական այդ դոկտրինային, ԳՖՀ-ն խզեց դիվանագիտական հարաբերությունները Հարավսլավիայի (1957 թ. հոկտեմբեր) և Կուբայի հետ (1963 թ. հունվար)։ 50—60 թվականներին ռևանշիստական ուժերի մոբիլիզացման գործում մեծ դեր խաղացին արևելյան և սուդետական գերմանացիների հայրենակցական միությունները։

Կառավարության ագրեսիվ կուրսը հակառազմականացման շարժման նոր ալիք առաջ բերեց։ Նրա սկիզբը դրեցին Բոննի կործանարար պլանները ճախողելու արևմտագերմանական 18 խոշոր գիտնական-ֆիզիկոսների (1957 թ. ապրիլ) և բարձրագույն դպրոցների 44 պրոֆեսորների (1958 թ. փետրվար) կոչերը։ «Ատոմային մահվան դեմ» շարժումը հարկադրված էին գլխավորել ԳՍԴԿ-ն և ԳԱՄ-ը, որոնց նրանց աջ պարագլուխները դիմեցին ոչ առանց տատանվելու։ Այնուամենայնիվ հասարակական բողոքի ընդարձակմանը դեմ հանդիման ԳՍԴԿ-ի և ԳԱՄ-ի նախագահներ է. Օլենհաուերը և Վ. Ռիխտերը դիմեցին պառլամենտին և կառավարությանը՝ կոչ անելով հրաժարվել ատոմային զենքից և պաշտպանել Եվրոպայում ատոմազերծ գոտու ստեղծման վերաբերյալ «Ռապացկու պլանը»։

Այդ շարժման բարձրակետում, 1958 թ. կեսին, ԳՍԴԿ-ն առաջ քաշեց բունդեսվերը ատոմային զենքով զինելու հարցի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու գաղափարը, բայց կողմնորոշվելով բացառապես պառլամենտական մեթոդներով, նրա ղեկավարությունը բացահայտ հեշտությամբ ընդունեց սահմանադրական դատարանի որոշումը, որը հարցումները (Համբուրգում և Բրեմենում արդեն կայացած և մինչև 90 % «դեմ» տրված ձայները) անօրինական ճանաչեց։ Հետագայում աջսոցիալիստական վերնախավն իր ամբողջ ազդեցությունն օգտագործեց ռազմականացման դեմ աշխատավորների ելույթները դադարեցնելու համար։

ԳՍԴԿ-ի «Բադ-գոդեսբերգյան» կուրսը և ԳԱՄ-ի էվոլյուցիան

50-ական թվականների երկրորդ կեսին ԳՍԴԿ-ն լուրջ ճգնաժամ էր ապրում. առկա էր նրա սոցիալիստական նպատակների և «երրորդ ուղու» ստրատեգիայի սնանկությունը։ Սոցիալ-դեմոկրատիայի շարքերը նկատելի և անշեղորեն կրճատվում էին։ 1957 թ. բունդեստագի ընտրություններում ԳՍԴԿ-ի հերթական անհաջողությունն ազդանշան ծառայեց կուսակցության ներսում էլների, Մոմմերի, Դայստի ծայրահեղ աջ խմբավորման հարձակման անցնելու համար։ Նրանք մտադրվել էին «ՔԴՄ-ին շրջանցել աջից»՝ «անել նույն բանը, բայց ավելի լավ» նշանաբանով։

Տիրապետող գաղափարախոսությանը ԳՍԴԿ-ի հարմարվելն ամրապնդվեց կուսակցության Բադ-գոդեսբերգի արտակարգ համագումարում ընդունված ծրագրային սկզբունքներով (1959 թ. նոյեմբեր)։ Այն նշանավորեց դասակարգային աշխարհայացքից բացահայտ խզումը և սոցիալիստական ի-

դեալներից նահանջելը, որոնք ձևականորեն դեռևս հիշատակվում էին ծրագրային փաստաթղթերում։ «Հասարակության լավագույն կազմակերպման» մշուշապատ հեռանկարն այժմ բխեցվում էր ոչ թե իրական հասարակական հարաբերություններից և հակասություններից, այլ կանտյան էթիկաբարոյական բացարձակ, արտաժամանակյա, սոցիալապես չհիմնավորված «իմպերատիվներից» և «հիմնական արժեքներից» (աղատություն, արդարություն, եղբայրություն)։ ԳՍԴԿ-ն հրաժարվում էր հասարակական հարաբերությունների նպատակաուղղված արմատական վերակառուցումից և, ըստ էության, ամբողջ առաջադիմությունը հանգեցնում «արժեքների» տարերային ինքնազարգացման, իսկ իր դերը՝ գոյություն ունեցող կարգերի բարոյական կատարելագործման և «մարգասիրության» խթանման։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ պատմության մեջ առաջին անգամ նրա ծրագրից դուրս նետվեց կապիտալիստական սեփականության հանրայնացման պահանջը և գովեստներ շռայլվեցին «ձեռնարկատիրական նախաձեռնությանն» ու «ազատ մրցակցությանը»։ Նոր ծրագիրը հայտարարում էր Բոնների անսահման նվիրվածությունը պետությանը և նրա «պաշտպանությանը»։ Դեմոկրատական և պացիֆիստական առանձին դրույթները (խոշոր բիզնեսի նկատմամբ վերահսկողություն սահմանելը, հիմնական օրենքը պաշտպանելը, ատոմային զենքից ԳՖՀ-ի հրաժարվելու պահանջը) սուզվել էին ընդհանուր ֆրազների հոսանքում։

ԳՍԴԿ-ի կապիտուլյանտականությունը հատկապես ակնառու դրսևորվեց արտաքին քաղաքական և ռազմական հարցերի նրա վերակողմնորոշման մեջ, այսինքն այն բնագավառում, որտեղ նախկինում սոցիալ-դեմոկրատիայի օպոզիցիոն լինելը, իր կիսատպռատությամբ հանդերձ, ավելի որոշակի էր։ 1960 թ. հունիսի 30-ին Վեները և Էռլերը բունդեստագում տխրահռչակ հայտարարություն արեցին կառավարական կուրսը լիովին պաշտպանելու և այսուհետև արտաքին քաղաքական ամեն տեսակ ալտերնատիվից հրաժարվելու մասին։

60-ական թվականների սկզբին գերմանական արհմիությունների միավորման ներսում ստեղծվեց երկու հստակորեն արտահայտված թև, որոնք մոտավորապես համապատասխանում էին դասակարգային երկու գծի՝ նեոկապիտալիստական--տրեդյունիոնիստականի և հարձակողական, դեմոկրատական ու հակամոնոպոլիստական կողմնորոշում ունեցողի։ Ըստ էության պայքարը գնում էր հետևյալ դիլեմմայի շուրջը, արդյոք արհմիություններն առաջվա պես պետք է մնան աշխատավորների դասակարգային կազմակերպություններ՞ը, նրանց սոցիալական ու դեմոկրատական շահերի արտահայտիչներ, թե՞ վերածվելու են տիրապետող սիստեմի, «կազմակերպող տարրի», պետական-մոնոպոլիստական ապարատի կցորդի։ Զախ հոսանքը, հանձին ամենախոշոր և ազդեցիկ արհմիությունների՝ մետաղագործների (ավելի քան 2 միլիոն անդամ), կոմունալ տնտեսության աշխատողների (մոտ 1 միլիոն անդամ), քիմիագործների (0,5 միլիոն անդամ), վճռական ներդրում կատարեց ԳՖՀ-ի ամբողջ արհմիութենական շարժման բաղմակողմանի «քաղաքականացման», նրա սոցիալական դերի բարձրացման, այն ռեակցիային և ռազմականացմանը դիմադրելու հիմնական հենարանի վերածելու գործում։ «Սոցիալ-պարտնյորական թևի» անձնավորված մարմնացում էր շինարարների և հողափորների արհմիության նախագահ Գ. Լեբերը։ Նրա շուրջը հավաքված խմբավորումը հանդես էր գալիս նույնիսկ ոչ թե տրեդյունիոնիստական ռեֆորմիզմի դիրքերից, այլ որպես «նեոկապիտալիզմի» անզուսպ ջատագով։

1963 թ. նոյեմբերին Դյուսելդորֆում գումարված ԳԱՄ-ի արտակարգ կոնգրեսն ամփոփեց ծրագրային հարցերի գծով մի քանի տարի ձգձգված

պայքարը։ Դասակարգային մոտեցման կողմնակիցների ջանքերով ծրագրի ներածականից ջնջվեց այն դարձվածքը, թե ձեռնարկատերերի կամայականությունն անցյալի գիրկն է անցել, հանվեց բուն «սոցիալական պարտնյորություն» հասկացությունը։ Դրա փոխարեն կոնգրեսն արձանագրեց, որ «կապիտալիստական կարգերն աշխատավորներին զրկում են հասարակական իրավահավասարությունից, բանվորներին թողնում են ձեռնարկատերերի կամայականությանը, ծնում են սոցիալական կոնֆլիկտներ և ճգնաժամեր։ Բանուժն այսօր էլ մնում է նրանց եկամուտների միակ աղբյուրը»։

Չնայած իր կոմպրոմիսայնությանը, 1963 թ. ծրագիրն ամրապնդեց արհմիութենական շարժման առաջադիմական և ամբողջությամբ հակամոնոպոլիստական կողմնորոշումը։ Կոմունիստական կուսակցությունը բազմիցս ընդգծեց, որ այդ փաստաթղթի հիմնական գաղափարներն իրենցից ներկայացնում են բանվորական և դեմոկրատական շարժման բոլոր հոսանքների համախմբման քաղաքական ծրագիրը։ Այսպես առաջին անգամ գերմանական բանվորական շարժման ամբողջ պատմության մեջ արհմիությունները, որոնք ավանդաբար բանվոր դասակարգի կուսակցությունից աջ էին կանգնած, օպորտունիզմի կենտրոնակետն էին, ԳՍԴԿ-ի նկատմամբ անցան ձախակողմյան բնագիծը։ Դա բացատրվում էր ոչ միայն նրանով, որ ԳՍԴԿ-ն խիստ կերպով թեքվեց աջ. արհմիություններին ավելի մարտական և հստակ դիրքեր մղեց պետական-մոնոպոլիստական զարգացման տրամաբանությունը։

«Ադենաուերի դարաշրջանի» վերջը

Արևմտագերմանական իմպերիալիզմն ու նրա կուսակցությունները իրական և մտացածին տնտեսական ներքին ու արտաքին քաղաքական հաջողություններով իրենց արբեցածությամբ, թվում էր, անտեսում էին էկոնոմիկայում և հասարակության մեջ աստիճանաբար աճող հակասությունները, ուժերի փոփոխությունն աշխարհում խաղաղության և սոցիալիզմի օգտին։

Աստիճանաբար ակնառու էր դառնում երկիրը մենաշնորհ կառավարող ՔԴՄ/ՔՍՄ-ի քաղաքական մաշվածությունը։ Նրա վերնախավին ցնցում էին ներքին սուր հակասությունները, ծերացած կանցլերի ժառանգության համար մղվող պայքարում պատվախնդրության և խմբավորումների բախումը։ Կանցլերին առաջին անգամ փորձեցին պաշտոնից ազատել դեռևս 1959 թ.։ Քրիստոնեական դեմոկրատիայի բարոյական հեղինակությունն ընկավ մի շարք բարձրագույն կուսակցական և պետական գործիչների «դարշնագույն» անցյալի մերկացումներով, Ֆ. Ի. Շտրաուսի անմաքուր ֆինանսական և քաղաքական խարդախ գործերով, որին հասարակայնության ճնշումը 1963 թ. այնուամենայնիվ դցեց մինիստրական աթոռից։

1961 թ. բունդեստագի չորրորդ ընտրություններն արտացոլեցին Ադենաուերի քաղաքականության նկատմամբ եղած դժգոհությունը. նրա կուսակցությունը ոչ միայն զրկվեց մանդատների բացարձակ մեծամասնությունից, այլև դրանք ստացավ ավելի պակաս, քան 1953 թ.։ Ադենաուերը կարող էր նոր կաբինետ կազմել միայն կոալիցիայի մեջ մտնելով ազատ դեմոկրատական կուսակցության հետ, բայց նրա անձնական վարկն արդեն այն չափով էր խախտվել, որ ԱԴԿ-ն պայման դրեց «երկաթե Կոնրադի՝» կանցլերի պոստից հեռանալը դեռևս մինչև հաջորդ ընտրությունները։ 1963 թ. հոկտեմբերին 87-ամյա «սառը պատերազմի նահապետը» հրաժարական տվեց։ Պաշտոնական փառաբանման հեղեղը չէր կարող քողարկել 15-ամյա կառավարման լրիվ սնանկացումը, որը Արևմուտքում ստացել էր «Ադենաուերի դարաշրջան» հավակնոտ անվանումը։

Էրհարդի կառավարությունը: ՔԴՄ/ՔՍՄ-ի կառավարական մենաշնորհի մայրամուտը

Կանցլեր, իսկ 1966 թվականից նաև ՔԴՄ-ի նախագահ դարձավ Լ. Էրհարդը, որի հետ ֆինանսա-մոնոպոլիստական օլիգարխիան մեծ հույսեր էր կապում։ Ենթադրվում էր, որ շարաշահելով «տնտեսական հրաշքի հոր» արհեստականորեն ուռճացրած անձնական հանրաճանաչությունը, նա կկարողանա ամրապնդել բուրժուական բոլոր խավերի համախմբվածությունը, նորացնել ՔԴՄ/ՔՍՄ-ի խամրող կերպարանքը, փրկել ներքին և արտաքին հին քաղաքականության էությունը։ Շումբուրգի պալատում Լ. Էրհարդի եռամյա գտնվելը (1965 թ. բունդեստագի ընտրությունները քրիստոնեական դեմոկրատներին հնարավորություն տվեցին ԱԴԿ-ի հետ բլոկ կազմած գլխավորել կառավարությունը), սակայն, ցույց տվեց այդ խնդիրների անլուծելիությունը։ Էրհարդը «արևելյան քաղաքականության» մեջ փորձեց, շափավոր տոնը խառնել սպառնալիքներով, որոնք ոչ ոքի չէին վախեցնում, փրկել «Հալշտայնի դոկտրինայի» մնացորդները, նորացնել լեհական և չեխական հողերի նկատմամբ հավակնությունները։ Նրա ժամանակ առաջ քաշվեց ամբողջ Եվրոպայի լայնքով՝ ԳԴՀ-ի և ՉՍՍՀ-ի սահմանների երկարությամբ, ատոմային ականներից կազմված գոտի ստեղծելու նախագիծը։ Արևմտյան Բեռլինում չէին դադարում պրովոկացիոն գործողությունները։ Բնական էր, որ նման իրադրության մեջ 1966 թ. մարտին ՍՍՀՄ-ին և սոցիալիստական մյուս պետություններին ուղղված «խաղաղ հուշագիրը» և նրանում պարունակվող ուժ գործադրելուց հրաժարվելու մասին հայտարարություններ փոխանակելու առաջարկությունը գերազանցապես տակտիկական քայլ էր։ Այն իրենից ներկայացնում էր սոցիալիստական երկրների համար կանխապես անընդունելի պահանջներ. հնարավոր երկխոսությունից հանել «արևելյան սահմանների մասին հարցը» և առավել ևս ԳԴՀ-ի միջազգային իրավական ստատուսի հարցը։ Ամեն գնով լարվածության թուլացում թույլ չտալու, «վերամիավորման» իրենց զառանցական բանաձևերին արևմտյան բոլոր դաշնակիցներին կապելու ձգտումը, անօրինական «Բոնն—Վաշինգտոնի առանցք» ստեղծելու փորձերը (ԳՖՀ-ն այն ոչ շատ պետություններից մեկն էր, որոնք բարոյական և նյութական օժանդակություն էին ցույց տալիս ԱՄՆ-ին Վիետնամում), հրթիռամիջուկային զենք ձեռք բերելու մոլագար ձգտումը՝ այս բոլորը ԳՖՀ-ին կասկածելի էին դարձնում նույնիսկ ՆԱՏՕ-ի գծով նրա պարտնյորների աչքում։ Ադենաուերի հեռանալուց հետո նկատելիորեն սառեցին Ֆրանսիայի հետ հարաբերությունները. իսրայելական ռազմամոլներին ցույց տված ակտիվ օգնությունը Էրհարդին հասցրեց խոշոր ձախողման նաև Մերձավոր Արևելքում. 1965 թ. մայիսին արաբական տասը պետություններ Բոննի հետ խզեցին դիվանագիտական հարաբերությունները։

Ներքին քաղաքականության գծով Լ. Էրհարդը փորձում էր վարել «կոշտ դիծ». հակասահմանադրական «արտակարգ օրենքների» ընդունման արագացում, նացիստական հանցագործների՝ «վաղեմության ժամկետն անցնելու» պատճառով լիովին ներում անցկացնելու փորձ, կոմունիստների հետապնդում և բոլոր օպոզիցիոն ուժերի քամահրում։ Սակայն ստացվեց հակառակ արդյունքը. օպոզիցիային սարսափեցնելու և ճնշելու, կառավարող կուսակցության և նրա քաղաքականության մասսայական բազայի կայունացման փոխարեն հասարակության բոլոր խավերում աճեցին դժգոհությունն ու բողոքը։ «Սոցիալական շուկայական տնտեսության» հնացած դոկտրինային նվիրվածության պատճառով անհաջող էր նաև Լ. Էրհարդի տնտեսական քաղաքականությունը։ ՔԴՄ/ՔՍՄ-ի համար գնալով դժվարանում էր պահպանել «ժողովրդական կուսակցության» իր ռեկլամային պիտակը. դեռ ավելին, նա գնալով վատ էր կատարում ամբողջ արևմտագերմանական կապիտալի կուսակցության դերը, որն իրականացնում էր բուրժուազիայի տարբեր խմբավորումների շահերի կարգավորումը և հավասարեցումը։ Նրա բացահայտ պրոմոնոպոլիստական կողմնորոշումը վանեց ոչ միայն աշխատավորների մի մասին, այլև որոշակի մանրբուրժուական և բուրժուական խավերին։ Կապիտալի ամենաաջ ֆրակցիան, ամենից առաջ ամրապնդված ռազմաարդյունաբերական կոմպլեքսը, զինվորականությունը, բնակչության ռևանշիստորեն տրամադրված խավերը կորցրել էին հավատը իր «արևելյան պլանները» իրականացնելու ՔԴՄ/ՔՍՄ-ի կարողության և պատրաստակամության նկատմամբ։ Այդ տարրերը դատապարտում էին ինչպես ադենաուերյան իմաստով «ատլանտիզմը», այնպես էլ Արևելքում ավելի ճկուն քաղաքականություն անցնելու անհաջող փորձերը։ Ոչ պատահականորեն 1964 թ. առաջացած նեոնացիստական նացիոնալ-դեմոկրատական կուսակցությունը (ՆԴԿ), որսալով այդ տրամադրությունները, հեշտությամբ հաղթահարեց 5 տոկոսի արգելքը և մի քանի լանդտագների ընտրություններում հասավ առաջին սենսացիոն հաջողությունների։

Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության սոցիալ-քաղաքական բազայի նեղացումը փաստ դարձավ։ Հին դաշնակցի՝ ԱԴԿ-ի խռովությունը, որը 1966 թ. աշնանը լքեց սովորական կառավարական տանդեմը, առաջ բերեց իր խորությամբ և երկարատևությամբ անսովոր կառավարական ճգնաժամ։ Հոկտեմբերին, ժամկետից երեք տարի շուտ, Էրհարդը թողեց իր պոստը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱԴԱՐՁԸ (1967—1972)

«Մեծ կոալիցիայի» ստեղծումը

1966 թ. դեկտեմբերի 1-ին կազմվեց քրիստոնեական դեմոկրատների և սոցիալ-դեմոկրատների կոալիցիոն կառավարությունը։ Ֆեդերալ կանցլեր դարձավ Կուրտ-Գեորգի Քիզինգերը (ՔԴՄ), փոխ-կանցլեր և արտաքին գործերի մինիստր՝ Վ. Բրանդտը, որը 1964 թվականից, Է. Օլենհաուերի մահվանից հետո, գրավեց ԳՍԴԿ-ի նախագահի պոստը։ «Սևա-կարմիր» բլոկի ստեղծումը թելադրված էր արևմտագերմանական իմպերիալիզմի ինչպես մոտակա քաղաքական խնդիրներով, այնպես էլ ավելի ընդհանուր հեռանկարային պահանջներով։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը, ինչպես փորձը ցույց տվեց, ՔԴՄ/ՔՍՄ-ն միայնակ կամ ԱԴԿ-ի հետ բլոկ կազմած, գնալով ավելի ու ավելի վատ էր գլուխ բերում։ Միայն ՔԴՄ/ՔՍՄ-ի կոալիցիան սոցիալ-դեմոկրատիայի հետ, որը վաղուց էր ձգտում ինչ-որ ձևով գոնե առնչվել իշխանությանը, սոցիալական, քաղաքական, պառլամենտական լայն բազա էր ստեղծում հասունացած խնդիրների իրականացման համար։

Առաջին կարգի պրոբլեմներից էր Արևմտյան Գերմանիայի համար անհապաղ գերարտադրության ճգնաժամի հաղթահարումը, որը նրան կազմալուծել էր 1966 թ. վերջին—1967 թ. առաջին կիսամյակում։ Այդպես թե այնպես շոշափվեցին բոլոր, նույնիսկ ամենադինամիկ և ծաղկող ճյուղերը. առաջին անգամ տեղի ունեցավ արտադրության բացարձակ կրճատում, իսկ գրանցված գործազուրկների թիվը բարձրացավ և հասավ մինչև 500 հազարի։

Ճգնաժամը հաղթահարելու կուրս վերցնելով, էկոնոմիկայի մինիստր, սոցիալ-դեմոկրատ Կ. Շիլլերը ուղղակի հարձակման անցավ աշխատավորնե-

րի կենսամակարդակի վրա։ Սոցիալ-դեմոկրատական մինիստրները ԳԱՄ-ի ղեկավարությունից խոստում կորզեցին հավատարիմ մնալու կառավարության մշակած «աշխատավարձի կողմնորոշիչ ինդեքսներին»։ Ֆեդերալ բյուջեից ջնջվեցին «սոցիալական» շատ հոդվածներ, կրճատվեցին թոշակների, առողջապահության, կրթության համար հատկացումները, ավելացվեցին անուղղակի հարկերը։ Բարձրացվեց կառավարության կողմից կարգավորվող բնակվարձը, ինչպես նաև տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, գազի գները։ Միաժամանակ կապիտալ ներդրումներ կատարելու մոնոպոլիաների պատրաստակամությունը խրախուսելու և շահույթներն ապահովելու համար նրանց խոշոր և շատ ձեռնտու պայմաններով վարկեր ու պատվերներ տրվեցին, վարկերը մարելու համար մտցվեցին հարկային հատուկ արտոնություններ և այլն։ Միլիտարիստական ուռճացված բյուջեն, հասկանալի է, թողնվեց անձեռնմխելի։

Էկոնոմիկայի պետական կարգավորման նոր ձևերին անցնելը

60-ական թվականների կեսերին լիովին դրսևորվեց պետական-մոնոպոլիստական տնտեսավարման այն տիպի հնացածությունը, որը թաքնվում էր «սոցիալական շուկայական էկոնոմիկայի» ճակատի տակում։ Զևախախտող կապիտալիստական շրջանակներում սեղմված հասարակական արտադրության զարգացման օրինաչափությունները, սոցիալիստական աշխարհի «մարտահրավերին» դիմակայելու կենսական անհրաժեշտությունը, արտաքին շուկաներում սրվող մրցակցային պայքարը, գիտատեխնիկական հեղափոխությունը և ԳՖՀ-ի էկոնոմիկայի է՛լ ավելի ուժեղացող ռազմականացումը հրամայաբար պահանջում էին էկոնոմիկայի պետական կարգավորման հետագա պետականացում և կատարելագործում։

ԳՖՀ-ի համար բնորոշ են պետական սեփականության համեմատաբար չափավոր մասշտաբները։ Պետական հատվածը գերակշռող դիրքեր է գրավում միայն մի քանի ճյուղերում՝ ածխի, լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի, ալյումինի ձուլման ասպարեզում։ Սոցիալ-դեմոկրատների տնտեսական կոնցեպցիան, որոնք կոալիցիոն կառավարությունում իրենց վերահսկողության տակ էին վերցրել էկոնոմիկայի մինիստրությունը, բնավ պետական հատվածի ընդարձակում կամ «սոցիալացման» որևէ տարատեսակ չէր նախատեսում։ Նրանում կենտրոնական տեղ էր գրավում պետական կարգավորման մեթոդների կատարելագործումը՝ ստեղծել գիտականորեն ավելի հիմնավորված, բնակազմական, գործարար-ճկուն, ներառյալ նաև ծրագրավորման մեթոդներ։ Դա էին պահանջում մոնոպոլիաների շահերը, որոնք որոշակի դասեր էին քաղել 1966—1967 թթ. ցիկլային ճգնաժամից, որի խորացման պատասխանատվությունը դրվում էր նեոլիբերալիստ Էրհարդի վրա։ Էկոնոմիկայի ղեկավարումը Կ. Շիլլերին անցնելը ոչ միայն պետական տնտեսական հիմնարար դոկտրինայի՝ «շուկայական էկոնոմիկայի» նեոքեյնսիանականով փոխարինում, այլև տնտեսական քաղաքականության էական վերակառուցում էր նշանակում։

Արդեն հույսը չդնելով ուժերի ազատ խաղի վրա, պետությունը պարտավորվեց ձևակերպել տնտեսական քաղաքականության նպատակները՝ կարճաժամկետ՝ կոնյունկտուրային և երկարաժամկետ՝ կառուցվածքային։ Այդ խնդիրների իրականացման գործում, Շիլլերի մինիստր դառնալուց հետո, կարևոր դեր սկսեց խաղալ տնտեսական փորձագետների խորհուրդը, որն ստեղծվել էր դեռևս 1963 թ., բայց փաստորեն անտեսվում էր Էրհարդի կողմից։ Կառավարությունից պաշտոնապես անկախ այդ մարմինը կոչված էր ամեն տարի հրապարակել իր հաշվետվությունը՝ տնտեսական հիմնավորված հանձնարարականներով։

1967 թ. բունդեստագը օրենք ընդունեց «կայունացման մասին», որի համաձայն բյուջեի միջոցներից ստեղծվում էր կոնյունկտուրային ֆոնդ. կառավարությունը իրավունք էր ստանում իր հայեցողությամբ 10 %-ով բարձրացնել կորպորացիաներից ստացվող եկամտահարկը, մանիպուլացիա կատարել ամորտիզացիոն դուրսգրումներով։ Այս կերպով կուտակված միջոցները կառավարության ձեռքին հակացիկլային քաղաքականության բավականին ներգործուն, գործնական ակտիվության արգելակման կամ բարձրացման զենք էին։ Միաժամանակ սկսեցին միջոցառումներ իրականացվել 3—5 տարվա համար «միջին ժամկետի ֆինանսական պլանավորման» գծով։

Այդ տարիներին լրջորեն աճեց պետության միջամտությունը ռեգիոնալ և կառուցվածքային քաղաքականությանը, ֆեդերալ կառավարությունը գնալով համառորեն ձգտում էր կրճատել երկրամասերի և համայնքների բյուջետաֆինանսական արտոնությունները։ Պետական-մոնոպոլիստական կարգավորման մեխանիզմի շիլլերյան վերակառուցման կարևոր տարր դարձավ «կենտրոնացված (այսինքն համաձայնեցված) գործողությունների» կիրառումը։ Այդ անվանման մեջ թաքնված էր «եկամուտների քաղաքականության» արևմտագերմանական տարբերակը։ «Կենտրոնացված գործողությունն» իրենից ներկայացնում էր «իրավահավասար պարտնյորների»՝ ֆեդերալ մինիստրների, ֆեդերալ բանկի, ձեռնարկատիրական միավորումների և արհմիությունների միջև պարբերաբար անցկացվող կոնսուլտացիա։ «Ազատ» բանավեճերի ընթացքում մշակվում էին աշխատավարձի վերաբերյալ պաշտոնապես ոչ պարտադիր, բայց ըստ էության ԳԱՄ-ի ձեռքերը խիստ կապող հանձնարարականներ։ Դա բացահայտ հարձակում էր արհմիությունների ինքնավարության դեմ։

«Արտակարգ օրենսդրությունը»

Քաղաքական ծրագրի ոլորտում պետական-մոնոպոլիստական լծակների օպտիմալացմանը համապատասխանում էին բուրժուա-դեմոկրատական ազատությունների վրա գործադրվող ճնշումը, պառլամենտի արտոնությունների խախտումը, ֆեդերատիվ երկրամասերի ինքնավարության կրճատումը, խիստ մաժորիտար ընտրական համակարգի մշակումը։ Ամբողջ կուրսի գագաթնակետը դարձավ 1968 թ. պառլամենտի ընդունած «արտակարգ օրենսդրությունը»։

«Արտակարգ օրենքները» մշակվել էին դեռևս 1960 թ. իբրև արևմտագերմանական իմպերիալիզմի ընդհանուր ագրեսիվ և ռևանշիստական ստրատեգիայի բաղկացուցիչ մաս. դրանք կոչված էին նրան ապահովել ներքաղաքականապես։ Դրանց սուր ծայրը, «Արևելքից եկող սպառնալիքի» պատրվակով, ուղղված էր ամենից առաջ բանվոր դասակարգի, արհմիությունների, բոլոր օպոզիցիոն ուժերի դեմ։ Այս օրենսդրությամբ նախատեսվում էր, որ կառավարությունը ուղած պահին, ելնելով ներքին կամ արտաքին քաղաքական իրադրությունից, իրավունք ունի վերացնելու սահմանադրական երաշխիքները, ցրել պառլամենտը, գործողության մեջ դնել բունդեսվերը և սահմանապահ զորքերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիների դեմ, սահմանել աշխատանքային հարկադիր պարհակ, վերացնել պետական կարգերի ֆեդերալիստական սկզբունքները։ Պաշտոնապես հայտարարված, բունդեստագի հաստատման կարիքն զգացող «արտակարգ օրենքներից» բացի ներքին գործերի մինիստրությունը մշակել էր խիստ գաղտնի կարգադրությունների ընդարձակ կոմպլեքս, որոնցում արդեն խոսքը վերաբերում էր զանգվածային ձերբակալություններին, համակենտրոնացման ճամբարներին, բացահայտ տեռորին։ Այս ամենը, միասին վերցրած, հնարավորություն էր ստեղծում «լեգալ», «սահմանադրական» միջոցներով միլիտարիստական դիկտատուրայի հաստատման համար։ 1965 թ. գարնանը, երբ «արտակարգ օրենսդրությունը»

արդեն բունդեստագի քննարկման պլանում էր գտնվում, նրա ընդունումը, ռեակցիայի համար անսպասելիորեն, ձախողվեց ներքևից եկած հզոր ճընշմամբ, արհմիությունների վճռականությամբ, որը ԳՍԴԿ-ի ղեկավարությանն ստիպեց վերջին րոպեին հեռանալ օրինագծերը պաշտպանելուց։

1966 թ. մտնելով Քիզինգերի կառավարության կազմի մեջ, ԳՍԴԿ-ի աջ պարագլուխները պարտավորություն վերցրին նպաստել բունդեստագի կողմից «արտակարգ ծրարի» շուտափույթ ընդունմանը։ Չնայած լայն և զանգվածային-դեմոկրատական շարժման չտեսնված վերելքին, 1968 թ. մայիսի 30-ին արևմտագերմանական դեմոկրատիայի ճակատագրի համար վտանգավոր օրենքները ձայների երկու երրորդի հաշվով ընդունվեցին։

Քիզինգեր-Բրանդտի կաբինետի քաղաքականության հակասությունները

Արևմտագերմանական իմպերիալիզմի ստրատեգիական շահերը, իմպերիալիզմ, որն ստիպված էր հաշվի առնել համաշխարհային ուժերի փոփոխված հարաբերակցությունը, համառորեն Քիզինգերին և Բրանդտին որոշ արտաքին քաղաքական, ամենից առաջ Եվրոպայի սոցիալիստական երկրների նկատմամբ կիրառվող դոգմաների զգույշ վերանայման էին մղում։ «Հոլշտայնի դոկտրինան» փաստորեն թաղվեց ՀՖՍՀ-ի ու ՌԺՀ-ի հետ ԳՖՀ-ի դիվանագիտական հարաբերություններ հաստատելով, դեսպաններ փոխանակելու պատրաստակամության հայտարարություններով և բոլոր սոցիալիստական պետությունների նկատմամբ ուժ չգործադրելու դեկլարացիաներով։ ԳԴՀ-ին այդ կուրսի ոլորտից բացառելու, սոցիալիստական գերմանական պետությունը նրա դաշնակիցներին հակադրելու փորձը, Օդեր-Նեյսեի սահմանների անսասանությունը, արդեն չխոսելով ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միջև եղած սահմանները ճանաչելուց հրաժարվելը բացահայտում էին այն տարիների «արևելյան նոր քաղաքականության» մակերեսային բնույթը։ Այնուամենայնիվ, ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի միջև 1967—1968 թթ. երկխոսության համար որոշակի նախադրյալներ ստեղծվել էին։ Հետագան ցույց տվեց, որ դրանք հասունացած փոփոխությունների առաջին նախանշաններն էին։

«Մեծ կոալիցիան» ոչ միայն չկարողացավ վերածնել նախկին կայունությունը, այլև ընդհակառակը, խիստ արագացրեց սոցիալական և քաղաքական տարբերակման պրոցեսները։ Ներքին և արտաքին քաղաքական լայն բնագավառի հարցերում տարաձայնությունները ծայրահեղորեն սրվեցին բոլոր կուսակցություններում։ «Զախից» խիստ օպոզիցիոն բնագծեր գրավեց ԳՍԴԿ-ի մասսայական երիտասարդական «Երիտասարդ սոցիալիստներ» կազմակերպությունը, որը պահանջում էր վարել ալտերնատիվ, հարձակողական քաղաքականություն։ ՔՍՄ-ն Շտրաուսի ղեկավարությամբ գնալով է՛լ ավելի էր վերածվում նեոֆաշիստական տարրերին միացած ամենաաջ ուժերի հենարանի։ Փոքրաքանակ, սոցիալական բազայի ողողվող օբյեկտիվ զարգացմամբ և փխրուն կազմակերպական կառուցվածքով ԱԴԿ-ն, որը բունդեստագում անուժ օպոզիցիայի դեր էր կատարում, բզկտվում էր հին ղեկավարության դեմ ավելի ճկուն «առաջադիմական» թևի և երիտասարդական կազմակերպության սուր պայքարով։ ԱԴԿ-ի տարընթացությունն արտացոլում էր պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ուժեղացման պրոցեսում մոնոպոլիստական վերնախավի և բուրժուազիայի հիմնական զանգվածի ու միջին խավերի միջև հակասությունների աճը։ ԱԴԿ-ն սկսեց վերակողմնորոշվել դեպի այլ զանգվածային բազա՝ դեպի ծառայողները, աստիճանավորությունը, վարձով աշխատող մտավորականները (արհեստավորների, մանր և միջին ձեռնարկատերերի և «ազատ մասնագիտության անձանց» փոխարեն)։ 1968 թ. հունվարին կուսակցության նախագահ է. Մենդեին շրջապատող

խմբավորումը պաշտոնանկ արվեց, ղեկավարության գլուխ անցան «բարենորոգիչները». ԱԴԿ-ի պարագլուխ դարձավ Վ. Շելը։ Համասոցիալական անկայունության ուժեղացման ամենաակնառու ցուցանիշ էր «մեծ կոալիցիայի» տարիներին նեոֆաշիստական շարժման փարթամ ծաղկումը։ Անպատկառ դեմագոգիայով, շարաշահելով հակակոմունիզմի և ռևանշիստական լոզունգների մոլուցքով տարված գյուղացիության, մանր բուրժուազիայի, բանվորների մի մասի շրջանում վաղվա օրվա նկատմամբ աճող անվստահությունը, ՆԴԿ-ն երկու տարվա ընթացքում կարողացավ համարյա 15 անգամ ավելացնել իր շարքերը (մինչև 30—40 հազար), 1968 թ. կեսերին ներխուժել տասը լանդտագներից յոթը, նրանց ընտրություններում ստանալով 2 միլիոնից ոչ պակաս ձայն։ Տադդենի («Ադոլֆ 2-րդ») կուսակցությանը առատորեն դրամական օգնություն էին տալիս մոնոպոլիաները, նա օգտվում էր ֆեդերալ բյուջեի պաշտպանությունից։ ՆԴԿ-ի ու ՔԴՄ-ի և հատկապես Շտրաուսի կուսակցության ու ռևանշիստական հայրենակցությունների միջև որոշակի դաշտափարաբաղաքական փոխգործողության հաստատումն ազդարարում էր դեպի աջ ընդհանուր տեղաշարժի ռեալ վտանգի մասին։

Դեմոկրատական արտապառլամենտական օպոզիցիան

Բոնների ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի ճգնաժամից, արևմտագերմանական պառլամենտարիզմի անկումից ծնվեց նոր ազդեցիկ քաղաքական գործոն՝ դեմոկրատական հասարակական լայն շարժումը, որն ստացավ արտապառլամենտական օպոզիցիա անվանումը։ 50-ական թվականների հակամիլիտարիստական և դեմոկրատական ելույթներից այն տարբերվում էր սոցիալական իմաստով իր ավելի զանգվածային և լայն բազայով, անհամեմատ մեծ թափով։ Լայն, կազմակերպորեն չձևավորված դեմոկրատական հոսանքն ընդգրկեց քաղաքական կուսակցությունները՝ արգելված ԳԿԿ-ը և առաջադիմական հակամիլիտարիստական խաղաղության գերմանական միությունը (ստեղծվել է 1960 թ.), ձախ սոցիալիստական միավորումները, ուսանողական կազմակերպությունները, պացիֆիստական միությունները, տարբեր «միանպատակային» շարժումները (օրինակ, «Զինաթափման համար կամպանիան», «Հանուն ԳԿԿ-ի քաղաքական ներման և լեգալացման»)։ Արտապառլամենտական շարժման մեջ ներգրավվեցին սոցիալ-դեմոկրատիայի և արհմիությունների ձախ տարրերը, նրան համակրողներ գտնվեցին լանդտագների և բունդեստագի ֆրակցիաներում, որպես նրա ջերմ համակրողներ հանդես եկան խոշոր գիտնականներ, գրողներ, հրապարակախոսներ։ 1966—1968 թթ. տարատեսակ հոսանքների գաղափարների և նպատակի միավորողը «արտակարգ օրենսդրության» ձախողումն էր. իսկ օպոզիցիայի տարերայնորեն ձևավորված իրական ծրագիրն անչափ լայն էր՝ հանուն ԳԴՀ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ հարաբերությունների նորմալացման և մերձեցման, հանուն քաղաքական ներման, հանուն կրթության դեմոկրատական ռեֆորմների, հանուն Վիետնամում ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիայի դատապարտման, հանուն Շպրինգերի հրատարակչական կոնցեռնի սեփականազրկման և այլն։ 60-ական թվականների վերջի արտապառլամենտական օպոզիցիան իրենից ներկայացնում էր Բոնների ամբողջ քաղաքականության նկատմամբ օպոզիցիա, որպես պետական-մոնոպոլիստական կապիտալի ստրատեգիային, նրա ագրեսիվ մտադրություններին և ֆաշիստական վտանգի կրկնմանը շատ բանով տարերային համադեմոկրատական պատասխան։ Ի տարբերություն 50-ական թվականների շարժումների, դեմոկրատական օպոզիցիան զարգանում էր ոչ միայն ԳՍԴԿ-ից անկախ, այլև զգալի չափով նրա կուրսի դեմ։

ԳՍԴԿ-ի և ՔԴՄ/ՔՍՄ-ի համատեղ ջանքերով նախապատրաստած «ար-

տակարգ օրենսդրության» դեմ ամբողջ 60-ական թվականների ընթացքում հանդես էր գալիս ԳԱՄ-ը։ Նրա տասնվեց ճյուղային միություններից վեցը 1966 թ. հանդես եկան որպես արտակուսակցական «Կուրատորիում-դեմոկրատիան վտանգի տակ է» կազմակերպության համահիմնադիրներ, որը դարձավ արտապառլամենտական շարժման կարևոր մասը։

Քրիստոնեական դեմոկրատների հետ ԳՍԴԿ-ի կառավարական բլոկի տարիներին դեմոկրատական ուժերի մոբիլիզացման գործում կարևոր դեր խաղացին երիտասարդությունը, ուսանողությունը։ Բացահայտ քաղաքական և գաղափարական թուլություններով հանդերձ (բանվոր դասակարգի դերի նվազեցում, հակում դեպի անարխիստական «ուղղակի գործողությունները», նեոտրոցկիստական գաղափարների բեկորները) «ուսանողական բունտերը» համալսարաններում, ոստիկանության հետ իսկական ճակատամարտերը արմատական ներգործություն ունեցան ամբողջ արտապառլամենտական օպոզիցիայի վրա, նրան տալով հարձակողական բնույթ, հասարակական կարծիքն ուղղեցին արևմտագերմանական հասարակության և ամբողջությամբ վերցրած կապիտալիստական սիստեմի շատ արատների վրա։

Արտապառլամենտական օպոզիցիան չհասավ իր անմիջական նպատակին։ Աջ սոցիալիստական պարագլուխներին հաջողվեց արհմիությունների ղեկավարության մեծ մասին իր կողմը գրավել։ Հակառակ նախկին որոշումներին և դեկլարացիաներին, ԳԱՄ-ի վարչությունը վճռական պահին՝ 1968 թ. վերջին «արտակարգ ծրարը» բունդեստագի կողմից ընդունելու նախօրյակին, չհամարձակվեց կշեռքի նժարին դնել իր ամբողջ հզորությունը և համընդհանուր գործադուլի կոչ անել։ Շուտով արտապառլամենտական դեմոկրատական դիմադրությունն անկում ապրեց։ Այնուամենայնիվ, նա հիմնավոր կերպով կարող էր իր ակտիվում գրանցել այն տեղաշարժերը, որոնք իրականում նկատվեցին արևմտագերմանական բնակչության լայն խավերի գիտակցության մեջ։ Կույր հակակոմունիզմը, ռևանշիստական տրամադրությունները, «կոմունիստական ագրեսիայից» խուճապային երկյուղը, «սովետական գոտին» քամահրելն աստիճանաբար նահանջեցին աշխարհում և գերմանական հողում ստեղծված ռեալությունները, ԳԴՀ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ խաղաղ գոյակցությունը ճանաչելու ձգտման առջև։

Կոմունիստների պայքարը խաղաղության և դեմոկրատիայի համար

Գտնվելով ընդհատակում և հետապնդման մեջ ԳԿԿ-ն ոչ մի օր չէր դադարեցնում իր պայքարը։ Նույնիսկ ներքին գործերի մինիստրությունը հարկադրված էր խոստովանել որ 60-ական թվականների սկզբին ԳՖՀ-ում գործում էր ԳԿԿ-ի սկզբնական 300-ից ոչ պակաս կազմակերպություն և ձեռնարկություններում հրատարակվում էր նրա մոտ 300 ընդհատակյա թերթ։ Կոմունիստները որոշակի դիրքեր էին գրավում արհմիություններում, արտադրական խորհուրդներում, նրանք մշտապես գտնվում էին գործադուլավորների առաջին շարքերում, հակապատերազմական զատկական երթերի և հակաֆաշիստական միտինգների մասնակիցների շրջանում։ 1957, 1960, 1963 թթ. համագումարներում, 1968 թ. նոր ծրագրի նախագծում արևմտագերմանական կոմունիստներն ընդունեցին կարևորագույն դիրքորոշումներ, որոնցում խոր արտահայտություն գտան գերմանական ժողովրդի սոցիալական և ազգային շահերը, նշվեցին հակամոնոպոլիստական արմատական վերափոխումների ուղիներ։

Կոմունիստները շատ տարիներ նպատակասլաց հասարակական կամպանիա էին մղում կուսակցության օրինական իրավունքների վերականգնման համար։ Նշանավոր հասարակական ինչպես և արհմիութենական գործիչների, բանվորների կողմից ստորագրված հարյուրավոր նամակներ և խնդրագրեր էին ուղարկվում բունդեստագին և կառավարությանը, որոնցում կոչ էր արվում վերացնել ամոթալի արգելքը։ ԳԿԿ-ի մասին բանավեճը թափանցեց «մեծ մամուլի» էջերը, արհմիութենական և ուսանողական ժողովներն ու կոնֆերանսները։ Սակայն չնայած կոմունիստների անձնուրաց ջանքերին, չնայած նրա շարքերի հայտնի աճին, ակնառու էր դառնում, որ կոմունիստների հնարավորությունները, աշխատանքի մասշտաբները և մակարդակը չէին համապատասխանում փոփոխվող իրադրությանը, դասակարգային հակասությունների ընդհանուր սրմանը։

1968 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին կազմվեց նոր լեգալ գերմանական կոմունիստական կուսակցությունը։ Կես տարվա ընթացքում, մինչև 1-ին համագումարը (1969 թ. ապրիլ) նրա շարքերն աճեցին մինչև 22 հազարով. ըստ երևույթի լույս տեսնել «Ունդերե ցայտ» շաբաթաթերթը։ Որպես ծրագրային նպատակ ԳԿԿ-ն հռչակեց «հասարակության սոցիալիստական վերափոխումը» և «ժողովրդի աշխատավոր մյուս խավերի հետ դաշնակցած բանվոր դասակարգի կողմից քաղաքական իշխանության նվաճումը»։ Բայց հիմնական շեշտը դրվում էր դեմոկրատական մերձակա խնդիրների վրա։ «Մեր ժողովրդի կենսականորեն կարևոր հարցերի լուծման ուղին ընկած է աշխատավոր զանգվածների քաղաքական ակտիվության և ինքնուրույն գործողությունների ծավալման, պետության և հասարակության դեմոկրատական նորացման միջոցով։ Դեմոկրատական նորացումը նշանակում է ֆեդերատիվ հանրապետության՝ ռեալ քաղաքական դեմոկրատիայի պետության վերածում, մոնոպոլիստական կապիտալի իշխանության սահմանափակում, նեոնացիզմի և մեծապետական միլիտարիստական քաղաքականության վերացում»։

«Փոքր կոալիցիան» և շրջադարձը «արևելյան քաղաքականության» մեջ

1969 թ. բունդեստագի հերթական ընտրություններն արտացոլեցին և ամրապնդեցին ԳՖՀ-ի սոցիալ-տնտեսական կյանքում, ամբողջ ներքաղաքական կլիմայում և հասարակական տարբեր խավերի գիտակցության մեջ կատարված փոփոխությունները։ Աջ լագերը պարտություն կրեց։ ՔԴՄ/ՔՍՄ-ն իշխանությունից զրկվեց, իսկ Տագենի նացիոնալ-դեմոկրատական կուսակցությունը չկարողացավ հաղթահարել 5 տոկոսի արգելքը, չնայած որ ստացավ 1,4 միլիոն ձայն։ Սոցիալ-դեմոկրատներից և ազատ դեմոկրատներից կազմված կոալիցիոն նոր կառավարությունը գլխավորեց Վ. Բրանդտը։ Այդ բլոկի առաջատար կողմը, բնականաբար, դարձավ ԳՍԴԿ-ն։

Կառավարության ղեկավարի պոստն ստանձնելու ժամանակ Վ. Բրանդտը ներկայացավ իբրև «ներքին ռեֆորմների կանցլեր» և նշեց բավականին ընդարձակ ծրագիր, որում հայտնի չափով հաշվի էին առնված աշխատավորների սոցիալական պահանջները («համակառավարման» ընդարձակում, կրթության և առողջապահության համակարգի մոդեռնացում, թոշակային ապահովության բարելավում)։ Միաժամանակ հանգստացնող հավաստիացումներ էին տրված ֆինանսա-մոնոպոլիստական շրջաններին այն մասին, որ ԳՍԴԿ-ն չի մտածում որևէ ձևով սահմանափակել ձեռնարկատերերի ազատությունը և նախաձեռնությունը։

«Սոցիալ-լիբերալ» կաբինետի գործունեության հիմնական բնագավառը, սակայն, դարձավ արտաքին քաղաքականությունը։ Վ. Բրանդտը և փոխկանցլեր Վ. Շելը արդեն առաջին ամիսներից կարևոր քայլեր ձեռնարկեցին ռեալիստական, լարվածության թուլացմանը ծառայող քաղաքականության ուղղությամբ։ Պայմանագիր ստորագրվեց միջուկային զենքը չտարածելու մասին։ 1970 թ. գարնանը, հետպատերազմյան պատմության մեջ առաջին անգամ,

Էրֆուրտում և Քասելում կայացան երկու գերմանական պետությունների կառավարությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումներ։

«Փոքր կոալիցիայի» կենտրոնական նվաճումը դարձավ 1970 թ. օգոստոսի 12-ին (երկարատև և բարդ բանակցություններից հետո) Մոսկվայում ՍՍՀՄ-ի հետ կնքված պայմանագիրը։ Երկու կողմերը պարտավորվեցին ձեռնպահ մնալ ուժով սպառնալուց կամ դրա կիրառելուց, անխախտելի ճանաչեցին բոլոր եվրոպական պետությունների սահմանները, այդ թվում Լեհական Ժողովրդական Հանրապետության արևմտյան սահմանը Օդեր-Նեյսեով և ԳՖՀ-ի ԳԴՀ-ի միջև սահմանները։ 1970 թ. դեկտեմբերի 7-ին համանման բովանդակությամբ պայմանագիր կնքվեց Լեհական Ժողովրդական Հանրապետության հետ։

Մոսկվայում և Վարշավայում պայմանագրերի ստորագրումից հետո հաջորդ մեկուկես տարվա ընթացքում բունդեստագի կողմից դրանք վավերացնելու շուրջը ծավալված պայքարը գրավեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնական տեղը, հզոր կատալիզատորի դեր խաղաց արևմտագերմանական հասարակության գաղափարաքաղաքական սահմանազատման գործում։ Ռեալիզմի և խաղաղության կուրսի դեմ կատաղի հարձակում էր վարում ՔԴՄ/ՔՍՄ-ի ղեկավարությունը, որի հովանու ներքո փաստորեն կազմավորվեց հզոր «աջ կարտել», որը հենվում էր ռազմաարդյունաբերական կոմպլեքսի, ՆԴԿ-ի, հայրենակցության վրա։ Բոլոր աջերի գաղափարական առաջնորդի դերն իր վրա վերցրեց Ֆ. Ի. Շտրաուսը, իսկ որպես նրանց ձայնափող հանդես եկավ Շպրինգերի լրագրային կոնցեռնը։ Նեոֆաշիստական կազմակերպությունների վայ-երիտասարդները սանձարձակ գիշերաժողովներ էին անցկացնում, սպառնում ֆիզիկական հաշվեհարդար տեսնել նոր կանցլերի հետ։

Պայմանագրերի վավերացման և ԳԴՀ-ի հետ հարաբերությունները բարելավելու համար մղված պայքարում, ինչպես երբեք առաջներում, դրսևորվեց արևմտագերմանական բանվոր դասակարգի քաղաքական եռանդը, որը անհաշիվ ցույցերով, կարճատև գործադուլներով խաղաղության իր կամքն էր արտահայտում։ Հստակ դիրք գրավեցին արհմիությունները։ Ծանրակշիռ ավանդ ներդրեցին կոմունիստները, որոնք անձնուրացորեն պայքարում էին ՍՍՀՄ-ի և Եվրոպայի սոցիալիստական երկրների հետ նոր հարաբերությունների համար։ Կառավարության ռեալիստական քայլերը պաշտպանություն գտան նաև խոշոր մոնոպոլիստական բուրժուազիայի որոշակի շրջաններում։

Քաղաքական իրադրության սրությունը և անհավասարակշռությունը պայմանավորված էին նրանով, որ «փոքր կոալիցիան» բունդեստագում ուներ նվազագույն մեծամասնություն՝ ընդամենը 12 ձայն։ Եվ աջ բլոկը նպատակասլաց էներգիայով հարվածներ էր հասցնում այդ ամենախոցելի տեղամասում։ Կառավարական մեծամասնության քայքայման համար գործի էին դրվում բոլոր միջոցները՝ ընդհուպ մինչև շանտաժն ու կաշառքը։ Այնուամենայնիվ, Բրանդտ-Շեելի կառավարությունը իր մեջ վճռականություն գտավ շարունակելու լարվածության թուլացման կուրսը։ 1970 թ. աշնանից սկսվեցին ԳԴՀ-ի հետ ուղղակի բանակցությունները՝ պետական քարտուղարների մակարդակով։ Այդ երկխոսությունը վճռական փուլ մտավ այն բանից հետո, երբ 1971 թ. սեպտեմբերի 3-ին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանների միջև ստորագրվեց Արևմտյան Բեռլինի մասին քառակողմ համաձայնագիրը։ Այն ամբողջ որոշակիությամբ ընդգծեց, որ Արևմտյան Բեռլինը «չի հանդիսանում ԳՖՀ-ի բաղկացուցիչ մասը»։ Համաձայնագիրը վերջ դրեց ԳՖՀ-ի հավակնություններին, նորմալացման հեռանկարներ բացեց մայրցամաքի ամենաթեժ, պայթունակ կետում։ 1971 թ. վերջերին այդ փաստաթղթի հիման վրա ԳԴՀ-ի,

ԳՖՀ-ի և արևմտաբեռլինյան սենատի միջև պայմանագիր մշակվեց, որով կարգավորվեցին ԳՖՀ-ի հետ Արևմտյան Բեռլինի տրանսպորտային կապերի, նրա բնակիչների ԳԴՀ ուղևորվելու և այլ հարցեր։

Ստիպված լինելով ռեալիստական քայլեր ձեռնարկել ԳԴՀ-ի հետ փոխհարաբերություններում, «փոքր կոալիցիայի» կառավարությունը ձգտում էր խուսափել ԳԴՀ-ն լրիվ ծավալով միջազգային-իրավականորեն ճանաչելուց, դեռ էլի փորձում էր թող փչելով, «համազգային» ճամարտակությամբ, զոռով անցկացնել ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև հարաբերությունների «հատուկ բնույթի» թեզը։ Բանակցությունների մեջ մտնելով ՍՍՀՄ-ի հետ, նա ձգտում էր խուսափել 1938 թ. մյունխենյան հարկադրանքի ճանաչումից, որը հենց սկզբից անվավեր էր։

1972 թ. գարնանը քրիստոնեական դեմոկրատներին, նոր պարագլուխ Ռ. Բարցելի և Ֆ. Շտրաուսի գլխավորությամբ, հաջողվեց ԱԴԿ-ի ու ԳՍԴԿ-ի ֆրակցիաներից վերահավաքագրել վեց պառլամենտականների, և բունդեստագում առաջացավ «պատային» իրադրություն։ Քրիստոնեական դեմոկրատները փորձում էին «կոնստրուկտիվ վստահության քվե տալու» ընթացակարգի օգնությամբ, այսինքն առանց պառլամենտական նոր ընտրությունների, տապալել «փոքր կոալիցիան»։ Եվ այս մանները քիչ էր մնում հաջողվեր. օպոզիցիային չբավականացրեց ընդամենը մեկ ձայն։ Այնուամենայնիվ, կառավարությունը դիմեց խիզախ քայլի։ 1972 թ. մայիսի 17-ին վերջապես բունդեստագը վավերացրեց արևելյան պայմանագրերը։ Նրանց օգտին տրվեց ընդամենը 248 ձայն, այսինքն ուղիղ կեսը, և պայմանագրերի բախտը դրականորեն լուծվեց միայն նրա համար, որ հակասություններից բզկտվող ՔԴՄ/ՔՍՄ-ի ղեկավարությունը ի վիճակի չեղավ որոշակի որոշման հանգել և իր ֆրակցիային հանձնարարեց ձեռնպահ մնալ։ Դա քաղաքական սնանկության փայլուն վկայություն էր։

Ստեղծված դրության միակ ելքը կարող էին լինել բունդեստագի վաղաժամկետ ընտրությունները։ Դեռևս ոչ մի ընտրական կամպանիա ԳՖՀ-ում աչքի չէր ընկել սոցիալ-դասակարգային և քաղաքական ուժերի բախման այնպիսի կատաղությամբ, լայն զանգվածների այնպիսի ակտիվ ներգրավվածությամբ և քաղաքականացվածությամբ, ինչպիսին էր 1972 թ. աշնանայինը։

ՔԴՄ/ՔՍՄ-ն, մոնոպոլիստական շրջաններից ստանալով հսկայական գումարներ, շարաշահում էր որոշակի տնտեսական դժվարությունները (վալյուտաֆինանսական ցնցումները, ինֆլյացիոն միտումները), վախեցնում էր «բոլշևիկյան կոլեկտիվիզմի» ուրվականով, գուշակում «ազատ էկոնոմիկայի» և «ազատ պլյուրալիզմի» վախճանը, ջանքեր էր թափում ԳՍԴԿ-ից կտրել ԱԴԿ-ին և նրան իր կողմը գրավել։ Բրանդտ-Շեելի կաբինետի խոշորագույն հաղթաթուղթը, որ խաղի մեջ մտցվեց ընտրություններից տասը օր առաջ, դարձավ ԳԴՀ-ի հետ բանակցությունների ավարտը, որը պսակվեց ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև հիմնական հարաբերությունների մասին պայմանագրի նախաստորագրմամբ։ Այդ պայմանագրի հիմնական դրույթները հանգում էին հետևյալին. ճանաչել ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միջև գոյություն ունեցող սահմանների և Եվրոպայի բոլոր սահմանների անխախտությունը, ձեռնպահ մնալ ուժ գործադրելուց և ուժով սպառնալուց, հաստատել «նորմալ բարի դրացիական հարաբերություններ՝ իրավահավասարության հիման վրա», կատարել քաղաքական ներկայացուցչության փոխանակում։ Երկու գերմանական պետությունների առջև ՄԱԿ-ի մեջ ընդունվելու ճանապարհ բացվեց։

1972 թ. նոյեմբերի 19-ի ընտրությունների հետևանքով ՔԴՄ/ՔՍՄ-ն պարտություն կրեց, նա հավաքեց ձայների 44,8 %-ը և 225 մանդատ ստացավ (1969 թ. 46,1 %-ի և 242 տեղի փոխարեն)։ ԳՖՀ-ի պատմության մեջ

առաջին անգամ սոցիալ-դեմոկրատիան դարձավ առաջին կուսակցությունը՝ ձայների 45,9 %-ը և 230 մանդատ (42 % և 224 տեղի փոխարեն)։ Զգալի հաջողության հասավ ԱԴԿ-ն (1969 թ. 5,8 %-ի հետ համեմատած ձայների 8,4 %-ը), որով հաստատվեց նրա ղեկավարության «մոդեռնացման» ջանքերի իրավացիությունը։

Այսպիսով, այժմ «փոքր կոալիցիան» կարող էր հենվել պառլամենտական 46 մանդատներով հիմնավոր մեծամասնության վրա։ 1972 թ. նոյեմբերյան ընտրությունները նշանավորեցին նեոֆաշիստական ՆԴԿ-ի ջախջախիչ պարտությունը. նրա օգտին տրվել էր ձայների ընդամենը 0,6 %-ը (200 հազարից մի փոքր ավելի)։

Այսպես 1972 թ. աշնանը, բոլոր ռեալիստական և դեմոկրատական ուժերի ջանքերով, ամրապնդվեց արևմտագերմանական պետության ներքին և արտաքին քաղաքականության մեջ կատարված շրջադարձը։

ԳՖՀ-ի պատմության գծով գրականության տեսություն

ԳՖՀ-ին նվիրված գրականությունը բացառիկ ընդարձակ, բազմազան և ինտերնացիոնալիստական է։ Եղած գրականությունը պրոբլեմային-թեմատիկ տեսակետից կարելի է խմբավորել մի քանի ուղղություններ։

ԳՖՀ-ի տնտեսական և սոցիալ-տնտեսական պրոցեսներն անփոփոխ եղել և մնում են ամենասևեռուն ուսումնասիրման օբյեկտ։ Սովետական և ԳԴՀ-ի գիտնականներն ստեղծել են մի շարք կապիտալ մենագրական հետազոտություններ[2]։ 40—50-ական թվականների տնտեսական պրոցեսների քննարկումն առաջադիմական դիրքերից տրված է Կ. Պրիցկոլեյտի լուրջ մենագրություններում[3]։

Արևմտագերմանական հասարակության մինչև 50-ական թվականների վերջի սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացումը մանրազնին հետազոտված է սովետական գիտնական Ա. Բ. Վեբերի մենագրությունում[4]։

Բնական է, որ ԳՖՀ-ի արտաքին քաղաքականության, արևմտագերմանական միլիտարիզմի և ռևանշիզմի սպառնալիքի դեմ պայքարի հարցերը քննարկող աղբյուրների և գրականության շրջանակը հիրավի շատ մեծ է։ Հենց այստեղ առաջին հերթին կատաղի գաղափարական-քաղաքական պայքար ծավալվեց ռևանշի և ագրեսիայի բացահայտ պրոպագանդիստների, «օստֆորշերների», «աբենդլանդի» գաղափարախոսության տրուբադուրների կողմից[5]։

[2] Տե՛ս «ФРГ—проблемы экономики и политики», М., 1973; «Империализм сегодня. Го ударственно-монополистический капитализм в Западной Германии». М., 1968. Пер. с нем.; **Е. Л. Хмельницкая.** Монополистический капитализм Западной Германии. М., 1959; **О. В. Сальковский.** Социальная политика буржуазии и пролетариат (на примере ФРГ). М., 1970.

[3] Տե՛ս **К. Прицколейт,** Кому принадлежит Западная Германия? М., 1960. Пер. с нем.: его же. На золотой волн. М., 1963. Пер. с нем.

[4] Տե՛ս **А. Б. Вебер,** Классовая структура общества в Западной Германии, М., 1961. Նոր տվյալների հիման վրա այս պրոբլեմը հասցված է մինչև մեր օրերը արևմտագերմանական մարքսիստների «ԳՖՀ-ի սոցիալ-քաղաքական կառուցվածքը» (Մայնի Ֆրանկֆուրտ, 1973) հիմնարար եռահատոր աշխատությունում։

[5] Սովետական պատմաբանների տվյալ պրոբլեմատիկայի կարևորագույն հետազոտություններն են.**А. С. Ерусалимский.** Германский империализм. История и современность. М., 1964; **Н. Н. Иноземцев.** Американский империализм и германский вопрос (1945—1954). М., 1954; **А. А. Галкин, Д. Е. Мельников.** СССР, западные державы и германский вопрос (1945—1965). М., 1966; **В. И. Милюкова.** Дипломатия реванша (внешняя политика ФРГ в Европе). М., 1966: **Л. Г. Истягин.** ФРГ и НАТО. М., 1963; **А. Ф. Залетный.** Милитаризация ФРГ. М., 1969.

Մարքսիստական-լենինյան պատմագրությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրել կուսակցական-քաղաքական համակարգի էվոլյուցիան, արևմտագերմանական առանձին կուսակցությունների, ԳՖՀ-ի ամբողջ քաղաքական վերնաշենքի պատմությունը։ Այս բնագավառում ընդհանրացնող աշխատություն է ԳԴՀ-ի գիտնականների կոլեկտիվի կատարած տեղեկատու բնույթի գործը[6]։

Մոնոպոլիստական կապիտալի դասակարգային տիրապետության մեխանիզմի կոմպլեքսային քննարկման լուրջ փորձ է «ԳՖՀ-ի մոնոպոլիաներն ու պետությունը» (Մ., 1962) սովետական մենագրական հետազոտությունը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Գ. Բերջի (ԳԴՀ) «ՔԴՄ/ՔՍՄ-ն առանց դիմակի» (Մ., 1963 թարգ. գերմ.-ից) և նրա մյուս աշխատությունը ԱԴԿ-ի մասին[7]։

Իշխանության սիստեմի գործելու սահմանադրական-իրավական ասպեկտին է նվիրված Ն. Ա. Սիդորովի աշխատությունը[8]։ Ռ. Պ. Ֆեդորովի մենագրությունում խոր կերպով բացահայտված է արևմտագերմանական մոնոպոլիաների ներքին ապարատը, ցույց են տրված պետության վրա ձեռնարկատիրական միությունների ներգործության լծակները[9]։

Մարքս-լենինյան գիտության ուշադրության կենտրոնում է Արևմտյան Գերմանիայում բանվորական շարժման և դասակարգային պայքարի զարգացումը։ Այդ պրոբլեմատիկային մեծ տեղ է հատկացվել ԳՍՄԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի պատրաստած «Գերմանական բանվորական շարժման պատմության» (հ. 6—8) բազմահատորյակում[10]։ Հետպատերազմյան երկու տասնամյակում արևմտագերմանական կոմունիստների հերոսական պայքարի մասին համառոտ, բայց արտակարգ հագեցված ակնարկ է պարունակվում ԳԿԿ-ի Կենտկոմի աշխատակիցների գրքում[11]։

Մոնոպոլիստների տիրապետության սիստեմում արևմտագերմանական արհմիությունների դերին ու դրությանն է նվիրված Ա. Բերենդտի և Ռ. Զիբերտի ղեկավարությամբ հեղինակային կոլեկտիվի ընդհանրացնող աշխատությունը[12] (ԳԴՀ)։ Մարքսիստական մի շարք հետազոտություններում տրված է աջ սոցիալիստական կոնցեպցիաների հիմնավոր քննադատությունը, բացահայտված է ԳՍԴԿ-ի ղեկավարության հակակոմունիստական կուրսի կործանարարությունը[13]։ ԳՖՀ-ի պրոլետարիատի պայքարի հիմնական ուղղությունների բացահայտմանն է նվիրված Վ. Դ. Եժովի «Բանվորական շարժումը Արևմտյան Գերմանիայում։ 1945—1968» (Մ., 1969) մենագրությունը։ Օկուպացիայի պայմաններում արևմտագերմանական բանվորական շարժման սկզբնական փուլն է քննարկվում Վ. Պ. Իերուսալիմսկու «Հաստատման և պայքարի տարիները» (Մ., 1970) գրքում։

[6] Տե՛ս „Die Westdeutschen Parteien 1945—1965". B., 1966.

[7] Տե՛ս „Die FDP und der deutsche Liberalismus, 1789—1963", B., 1965.

[8] Տե՛ս **Н. А. Сидоров,** Центральные государственные органы ФРГ. М., 1961.

[9] Տե՛ս **Р. П. Федоров,** Анонимная власть. М., 1971.

[10] Տե՛ս „Geschichte der deutschen Arbeiterbewegung in acht Bänden", B., 1966.

[11] Տե՛ս „KPD, 1945—1965. Abri B. Dokumente. Zeittafel", B., 1968.

[12] Տե՛ս „Die Westdeutschen Gewerkschaften und das staatsmonopolistische Herrschaftssystem. 1949—1966", B., 1968.

[13] Տե՛ս **Г. Зедер,** Очерк правосоциалистической идеологии. М., 1959. Пер. с нем.; **И. Н. Дворкин.** Критика экономических теорий правых социалистов. М., 1959; **С. И. Попов.** Идейное банкротство современного реформизма. М., 1963; **Н. А. Трумин.** Милитаризация ФРГ и политика СДПГ. М., 1968.

ԳԼՈՒԽ 14

ԱՎՍՏՐԻԱ

Բաղամական պայքարը Ավստրիայում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Համաձայն 1943 թ. Մոսկվայի կոնֆերանսի որոշման, Ավստրիան դիտվում էր որպես ֆաշիստական լծից ազատագրված երկիր, որը, սակայն, պետք է պատասխանատվություն կրեր հիտլերյան Գերմանիայի կողմում պատերազմին մասնակցելու համար։ Գերմանա-ֆաշիստական զորքերից Ավստրիայի ազատագրման գործում վճռական դեր խաղաց սովետական բանակը։ Նա մեծ օգնություն ցույց տվեց երկրի կյանքի նորմալացման գործում։

1945-ից մինչև 1955 թթ. Ավստրիայում իրականացվում էր օկուպացիոն ռեժիմ, բայց նա կառավարություն կազմելու իրավունք ուներ։ 1945 թ. ապրիլի վերջին կազմավորվեց ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ մտան քաղաքական երեք կուսակցությունների՝ Ավստրիական ժողովրդական կուսակցության (ԱԺԿ), Ավստրիայի սոցիալիստական կուսակցության (ԱՍԿ) և Ավստրիայի կոմունիստական կուսակցության (ԱԿԿ) ներկայացուցիչները։

ԱԺԿ-ն ընդգրկում էր նախկին քրիստոնեա-սոցիալական կուսակցության հիմնական մասը և բուրժուական մյուս խմբավորումները։ Նրա պարագլուխները (Կունշակը, Ռաաբը, Ֆիգլը և մյուսները) փորձեցին անցյալից կապերը խզելու պատրանք ստեղծել, որպեսզի կուսակցության համար ավելի լայն սոցիալական հենարան ապահովեն։ Կուսակցությունը կառուցված էր ըստ կոոպերատիվ սկզբունքի, երեք միություններից՝ գյուղացիական, տնտեսական և բանվորների ու ծառայողների։ Գյուղացիական միությունը պաշտպանում էր կալվածատերերի և կուլակության շահերը։ Նա Ավստրիայում գոյություն ուներ մինչև անշլյուսը, դրա համար էլ կուսակցությունը պատրաստի հենարան ուներ գյուղում։ Բանվորների և ծառայողների միությունն իրեն ներկայացնում էր որպես բանվորական կազմակերպություն, դրանով քողարկելով կուսակցության բուրժուակալվածատիրական էությունը։ Տնտեսական միությունը պաշտպանում էր արդյունաբերողների և ֆինանսիստների շահերը։

ԱՍԿ-ն ստեղծվեց 1945 թ. սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմքի վրա։ Նրա ղեկավարությունը ղավթեցին Կ. Ռենների և Ա. Շերֆի տիպի օպորտունիստները, որոնք, հարմարվելով 1945 թ. իրադրությանը, ձևականորեն սոցիալիստական սկզբունքներ հռչակեցին։

ԱԿԿ-ն, որ դեմոկրատիայի համար պայքարի հիմնական ուժն էր, գրտնվում էր ծանր դրության մեջ։ Այն դեմոկրատական սահմանակարգերը, որոնց վրա կարող էր հենվել կուսակցությունը, ջախջախվել էին ֆաշիստական դիկտատուրայի ժամանակաշրջանում, իսկ փորձված կադրերը ոչնչացվել էին։

Բոլոր երեք կուսակցությունները մտան ժամանակավոր կառավարության կազմի մեջ, որը մշակեց հակաֆաշիստական ծրագիր և ընդունեց մի շարք օրենքներ, որոնք ուղղված էին երկրի դեմոկրատացմանը (ֆաշիստական կուսակցության արգելում, ազգայնացման օրենքներ և այլն)։ Ի պատասխան դրա, ռեակցիան սկսեց իր դիրքերն ամրացնել հատկապես ամերիկյան, անգլիական և ֆրանսիական օկուպացիոն գոտիների լանդտագներում և մունիցիպալիտետներում։ (Ժամանակավոր կառավարությանն արևմտյան տերությունները մինչև 1945 թ. հոկտեմբերի 20-ը չէին ճանաչում)։ Այդ պատճառով

էլ ժամանակավոր կառավարության դեմոկրատական ծրագիրը չկենսագործվեց ամբողջ երկրի տարածքում, մի հանգամանք, որն ամրապնդում էր ռեակցիայի դիրքերը։ Ռեակցիայի հենարանն էր նաև եկեղեցին։

ԱԿԿ-ն կուսակցության նախագահ Ի. Կոպլենիգի գլխավորությամբ հասավ երկու բանվորական կուսակցությունների (սոցիալիստների և կոմունիստների) գործողությունների միասնությանը։ Նրա նախաձեռնությունը պաշտպանում էին ԱՍԿ-ի շարքային անդամները։ Վիեննայում ստեղծվեցին շփման կոմիտեներ, Տիրոլում կոմունիստները և սոցիալիստները ձևավորեցին տեղական սոցիալիստական միասնական կուսակցություն։ Սակայն ԱՍԿ-ի օպորտունիստ պարագլուխները, Կ. Ռենների գլխավորությամբ, վարում էին բուրժուական ԱԺԿ-ի հետ համագործակցելու կուրս։ Նրանք հասան արհմիությունների պառակտմանը և բլոկ կազմեցին այդ կուսակցության հետ։ Այս ձևով ավստրիական սոցիալ-դեմոկրատիան ավստրոմարքսիզմից (մարքսիզմի ճանաչումը խոսքով, բայց աղավաղելով նրա հեղափոխական էությունը) անցավ բացահայտ օպորտունիզմին։

1945 թ. պառլամենտական ընտրություններին ԱԺԿ-ն և ԱՍԿ-ն ստացան մանդատների մեծամասնությունը։ ԱԺԿ-ի պարագլուխ Լ. Ֆիգլի գլխավորությամբ ստեղծվեց կոալիցիոն կառավարություն, հանրապետության պրեզիդենտ դարձավ Կ. Ռենները։ Կառավարության կազմի մեջ մտան ԱԺԿ-ի, ԱՍԿ-ի և ԱԿԿ-ի ներկայացուցիչները։ Սակայն ԱԿԿ-ի դիրքերը կառավարությունում շատ թույլ էին։ Կոմունիստներն ստացան մինիստրական մեկ պոստ. կոմունիստ Ալտմանը գլխավորեց էներգետիկայի մինիստրությունը։ Լ. Ֆիգլի կառավարությունը փաստորեն ԱԺԿ-ի և ԱՍԿ-ի կոալիցիոն կառավարություն էր հանուն Ավստրիայում կապիտալիստական կարգերի պահպանման։ Այդ խնդրի կատարման մեջ մեծ դեր էին խաղում աջ սոցիալիստներն իրենց «դեմոկրատական սոցիալիզմի» տեսությամբ։

ԱՍԿ-ի պարագլուխները դեմոկրատական սոցիալիզմի հակագիտական տեսությունը պրոպագանդում էին ամբողջ աշխարհում սոցիալիստական գաղափարների ձգողական ուժի աճման իրադրության մեջ։ Այն աջ սոցիալիստներին օգնում էր քողարկելու իրենց քաղաքականությունը, որն ուղղված էր ըստ էության երկրում կապիտալիստական կարգերի ամրապնդմանը և բանվոր դասակարգի մեծ մասի վրա իրենց ազդեցության պահպանմանը։ Ավստրիայի աշխատավորների զգալի թվով խավերի վրա աջ սոցիալիստական պարագլուխների ազդեցությունն ապահովվում էր նաև սոցիալական ռեֆորմների ծրագրի օգտին նրանց հանդես գալով, որոնց անցկացումը կառավարությունում հանդիպում էր ԱԺԿ-ի կատաղի դիմադրությանը։

Խարուսիկ տպավորություն էր ստեղծվում, թե ԱՍԿ-ի պարագլուխները կատաղի պայքար են մղում բուրժուազիայի դեմ։

Լ. Ֆիգլի կառավարության ժամանակ աշխատավորների ճնշման տակ Ավստրիայում անցկացվեցին դեմոկրատական մի շարք ռեֆորմներ, մրցվեց սոցիալական ապահովության բավականին առաջադիմական համակարգ, օրենքներ բանվոր-ծառայողների արձակուրդների և կոլեկտիվ պայմանագրերի վերաբերյալ։ Վերջինս, ձեռնարկություններում արտադրական խորհուրդներ ստեղծելու մասին օրենքի հետ, հայտնի չափով հնարավորություն էր տալիս սահմանափակելու բուրժուազիայի կամայականությունը։

40-ական թվականների վերջերին ԱԺԿ-ն, օգտագործելով կառավարող կուսակցության դերը, ամրապնդեց իր դիրքերը երկրամասերի կառավարություններում ու մունիցիպալիտետներում և շրջադարձ կատարեց դեպի աջ։ Ավստրիական բուրժուական կուսակցության տնտեսական պահանջները շարադրվեցին ԱԺԿ-ի 1951 թ. ընդունված աշխատանքային ծրագրում։ Մոնո-

պոլիստական կապիտալը, որի շահերը պաշտպանում էր ԱԺԿ-ն, կատաղորեն այդ ծրագրում հարձակվում էր ազգայնացման դեմ, պահանջելով գործողությունների լիակատար ազատություն տալ մոնոպոլիստական միավորումներին։

ԱԺԿ-ի պարագլուխները քաղաքական բնագավառում եկան այն եզրակացության, որ հնարավոր է կոալիցիայից ԱՍԿ-ի դուրս մղումը և միակուսակցական բուրժուական կառավարության ստեղծումը։ Անկախականների միության նեոֆաշիստական կուսակցության կազմավորումով ԱԺԿ-ի պարագլուխները մեծ հնարավորություն ստացան ճնշում գործադրելու ԱՍԿ-ի վրա, սպառնալով այդ միության հետ կառավարական կոալիցիա ստեղծել։

Ռեակցիայի ճանապարհին արգելք կարող էր լինել բանվորական մյուս կուսակցությունների գործողությունների միասնությունը։ Սակայն ԱՍԿ-ի ղեկավարության միայն ձախերի մի փոքր խումբ է. Շարֆի գլխավորությամբ հանդես եկավ կոմունիստների հետ համագործակցելու օգտին։ 1949 թ. պառլամենտական ընտրությունների ընթացքում ԱՍԿ-ից անջատված ձախ սոցիալիստները և կոմունիստներն ստեղծեցին ձախ բլոկ։ 1956 թ. ձախ սոցիալիստները միավորվեցին ԱԿԿ-ի հետ։ Ձախ բլոկի ոչ մի կուսակցություն մասսայական չէր։ 1949 թ. ընտրություններում ԱԺԿ-ն ստացավ ամենամեծ թվով մանդատները։ Ստեղծվեց Լ. Ֆիգլի գլխավորած երկրորդ կոալիցիոն կառավարությունը։

Կոալիցիոն կառավարության տնտեսական քաղաքականությունը

Պատերազմն ավարտվելուց հետո Ավստրիայի էկոնոմիկան գտնվում էր ծանր վիճակում։ Արդյունաբերության արտադրանքի թողարկումը կազմում էր 1937 թ. մակարդակի 20—25%-ը։ Չէին աշխատում էլեկտրակայանները, չէր բավականացնում պարենամթերքը։ Երկրում ծաղկում էր սպեկուլյացիան։ Ավստրիայի բնակչությանը պատերազմն ավարտվելուց հետո առաջին ամիսներին մեծ օգնություն ցույց տվեց սովետական բանակը։

Տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար ԱԿԿ-ն առաջարկեց կիրառել պլանային տնտեսություն և պարենամթերքի բաշխման վերահսկողություն սահմանել։ Սակայն Լ. Ֆիգլի կառավարությունը, որ հանդես էր գալիս մասնավոր նախաձեռնության պաշտպանության լոզունգով, հրաժարվեց կենսագործել այդ առաջարկությունը։ ԱԿԿ-ին հաջողվեց ստեղծել միայն պարենային և արդյունաբերական ապրանքների բաշխման տեղական կոմիտեներ, որոնց գործունեությունը կրում էր սահմանափակ բնույթ։

Քաղաքական սուր պայքար ծավալվեց ազգայնացման շուրջը։ ԱԿԿ-ն, պայքարելով Ավստրիայի դեմոկրատական ուղիով զարգանալու համար, աշխատավորներին կոչ էր անում հասնել արդյունաբերության հիմնական ճյուղերի և բանկերի ազգայնացմանը։ Ազգայնացման մասին բանաձևեր էին ընդունվում արհմիութեական բազմաթիվ ժողովներում։ Ազգայնացման օգտին շարժումը դարձավ զանգվածային, ԱՍԿ-ն ստիպված էր միանալ նրան։ Սակայն ԱՍԿ-ի ռեֆորմիստ պարագլուխները, որ ընդունել էին ազգայնացման առաջին (1946) և երկրորդ (1947) օրենքները, գնացին բուրժուական կուսակցությանը զիջելու ուղիով։ Երկրում ստեղծվել էր բավականին խոշոր պետական սեկտոր, որը տալիս էր արդյունաբերական արտադրանքի 32%-ը, և որը ավստրիական էկոնոմիկայում կարևոր դիրքեր գրավեց գերմանական խոշոր կապիտալի ազգայնացման շնորհիվ։ Սկզբում ազգայնացումը (չուգունի, պողպատի, էլեկտրաէներգիայի, նավթի, քարածխի և այլնի արտադրությունը) կարևոր դեր էր խաղում տեղական և արտասահմանյան կապիտալի տիրապետությունը խախտելու գործում։ Հետագայում, կապիտալիստական էկոնոմիկայի վերականգնման և ավստրիական մոնոպոլիաների դիրքերն ամրապնդվելու կապակցությամբ, ազգայնացված սեկտորը վերածվեց ավստրիական պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի սիստեմի բաղկացուցիչ մասի։

Ավստրիական բուրժուազիան զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը, կապված 1947 թվականի դրամական ռեֆորմի օրենքի հետ, ըստ որի աշխատավորների խնայողությունները սառեցվեցին (առձեռն չտալը) և օգտագործվեցին բանկային համակարգն ամրապնդելու համար։ Ի նշան այդ օրենքի դեմ բողոքի կոմունիստները դուրս եկան կառավարությունից։

Ավստրիական բուրժուազիայի տնտեսական և քաղաքական դիրքերը վերականգնելու գործում մեծ դեր խաղաց ամերիկյան, հատկապես «Մարշալի պլանի» գծով ստացված օգնությունը։ Ընդամենը 1945 թ. մայիսից մինչև 1955 թ. նոյեմբերը ներառյալ Ավստրիան ստացավ 1,6 միլիարդ դոլարի արտասահմանյան օգնություն, որից 1,4 միլիարդը (88%) ԱՄՆ-ից։

Բանվորական շարժումն Ավստրիայում 40-ական թվականների երկրորդ կեսին

Լ. Ֆիգլի կառավարության հակաբանվորական քաղաքականությունը հանդիպեց աշխատավորների հակազդեցությանը։ Բանվոր դասակարգը պահանջում էր բարելավել պարենային մատակարարումը և բարձրացնել աշխատավարձը։ ԱԿԿ-ի կոչով 1948 թ. ընթացքում ամբողջ Ավստրիայում շարժում ծավալվեց աշխատավարձը 25%-ով ավելացնելու համար։ Կառավարությունն ստիպված էր զիջումների դիմել և բարձրացնել բանվորների աշխատավարձը, բայց միայն 6%-ով։

Պայքարը գների աճի դեմ շարունակվեց նաև դրանից հետո։ Նրա բարձրակետը 1950 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի գործադուլային շարժումն էր, որը աշխատավորների՝ կառավարության հետ արհմիությունների ռեֆորմիստ պարագլուխների հերթական համաձայնության պատասխանն էր։ Այդ համաձայնության հետևանքով աշխատավարձի բարձրացումը չէր համապատասխանում գների աճին։ Սեպտեմբեր-հոկտեմբերյան շարժումը Ավստրիայի բանվոր դասակարգի ամենամեծ ելույթն էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Այն կարող էր օգտագործվել ռեակցիային կազմակերպված հակահարված տալու համար, բայց պարտություն կրեց ԱՍԿ-ի պարագլուխների շտեյկբրեխերական գործողությունների հետևանքով, որոնք բացահայտորեն ձգտում էին համագործակցել ԱԺԿ-ի հետ և համատեղ պայքարել կոմունիզմի դեմ։ Ռեակցիան օգտվեց դրանից իր դիրքերը ամրապնդելու համար։

Պետական պայմանագիր Ավստրիայի հետ։ Ավստրիայի չեզոքությունը

Ավստրիայի արտաքին քաղաքական ինքնուրույնությունն ամրապնդելու համար կարևոր էր միջազգային հարաբերությունների համակարգում որոշել նրա տեղը Եվրոպայում։ Այդ հարցի կապակցությամբ բախվում էին ինչպես երկրի ներսի, այնպես էլ միջազգային ասպարեզի տարբեր ուժեր։ Արևմտյան տերությունները ձգտում էին Ավստրիան միացնել հակասովետական ուղղվածության ռազմաքաղաքական բլոկներին։ Սովետական Միությունը շահագրգռված էր ազատ, դեմոկրատական և անկախ Ավստրիայի գոյությամբ։ 1947 թվականից, երբ սկսվեց Ավստրիայի հետ պետական պայմանագրի մշակումը, և մինչև 50-ական թվականների կեսերը Սովետական Միությունը անփոփոխ կերպով պնդում էր պայմանագրում մտցնել Ավստրիայի չեզոքության մասին դրույթը։ Չնայած այն բանին, որ երկրի ժողովրդական լայն զանգվածները հանդես էին գալիս չեզոքության քաղաքականության օգտին, ավստրիական ռեակցիան վարում էր հակասովետական կուրս և դրանով արգելակում հաշտության պայմանագրի մշակումը։ Միայն 1955 թ. Մոսկվայի բանակցություններում համաձայնություն ձեռք բերվեց մի շարք վի-

ճելի հարցերի շուրջը (մասնավորապես Ավստրիայում նախկին գերմանական սեփականության համար Սովետական Միությունը փոխհատուցելու չափերի մասին)։ Ավստրիան պարտավորվեց հետևել մշտական չեզոքությանը։ Դա ճանապարհ բացեց 1955 թ. մայիսի 15-ին Վիեննայում ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի ներկայացուցիչների կողմից ստորագրելու անկախ և դեմոկրատական Ավստրիայի վերականգնման վերաբերյալ պետական պայմանագիրը։ Նույն տարվա հոկտեմբերին ավստրիական պառլամենտն օրենք ընդունեց, որ հռչակում էր երկրի մշտական չեզոքությունը։ Ավստրիայի հետ պետական պայմանագրի կնքումը կարևոր նշանակություն ուներ Եվրոպայում միջազգային լարվածության թուլացման համար Սովետական Միության գլխավորությամբ խաղաղասեր ուժերի հետագա պայքարի գործում։

Ավստրիայի տնտեսական և քաղաքական դրությունը 1950—1973 թթ.

50-ական թվականներին Ավստրիայի տնտեսական զարգացումն ընթանում էր անհամաչափորեն և ուներ աճի ցածր տեմպ։ 1957—1958 թթ. տնտեսական անկում և տնտեսական դրության վատթարացում էր նկատվում։ Գործազրկությունը հասել էր 10%-ի։ 60-ական թվականներին տնտեսական աճի տեմպերը բարձրացան։ Դրանում կարևոր դեր խաղաց պետական-մոնոպոլիստական միտումների ուժեղացումը։ Էկոնոմիկայում նշանակալի տեսակարար կշիռ ստացավ ազգայնացված սեկտորը, որում 1971 թ. զբաղված էր 104 հազար մարդ (արդյունաբերության բոլոր ճյուղերում եղած 644 հազարից)։ Այդ հատվածին է ընկնում ավստրիական արդյունաբերության թողարկվող արտադրանքի արժեքի մոտ 25%-ը։ Էկոնոմիկայում տիրապետող դիրք են գրավում մոնոպոլիստական միավորումները՝ ինչպես մասնավոր, արտասահմանյան, այնպես էլ պետական կապիտալի մասնակցությամբ։ Վերջին տարիներին աճել է արտասահմանյան կապիտալի ներդրումների ազդեցությունը (արտասահմանյան կապիտալ ներդրումների ընդհանուր գումարից գլխավորապես ԳՖՀ-ինը՝ 25%, ԱՄՆ-ինը՝ 20%, Շվեյցարիայինը՝ 16%) ավստրիական արտաքին առևտրի բնույթի վրա։ Երկիրը արտահանում է ազգային արտադրանքի արժեքի 25%-ը, այդ թվում արտադրվող ալյումինի 70%-ը, թղթի 60%-ը։

Գյուղատնտեսության բաժինը, որում առաջատար տեղը պատկանում է անասնապահությանը (գյուղատնտեսական արտադրության 60%-ը) նվազում է (1959 թ. 13%, 1969 թ. 7,5%)։

Տնտեսական զարգացումը խթանելու նպատակով 1971 թ. կառավարությունը հաստատեց 1971—1980 թթ. երկարատև կապիտալ ներդրումների ծրագիրը։ Հայտնի չափով դա կապված էր այն բանի հետ, որ 1969 թ. հետո կատարվել էր տնտեսական աճի տեմպերի իջեցում (1969 թ. 12%-ից 1970—1973 թթ. մինչև 5—7%)։ 70-ական թվականների սկզբին Ավստրիայում աճեց ինֆլյացիան, որն առաջ բերեց ապրուստի արժեքի բարձրացում (1965—1970 թթ. տարեկան միջին հաշվով 3,3%-ով, իսկ 1970—1973 թթ. տարեկան 5,7%-ով)։ Առևտրական հաշվեկշռի դեֆիցիտը տարեցտարի կրում էր խրոնիկական բնույթ։ 1972 թ. հուլիսին Եվրոպական տնտեսական ընկերակցության հետ Ավստրիան համաձայնագիր ստորագրեց ազատ առևտրի գոտի ստեղծելու մասին, որը նախատեսում է մաքսային տուրքերի փուլային վերացում։

50-ական թվականների սկզբին ԱԺԿ-ի ղեկավարության մեջ ուժեղացավ Յու. Ռաաբի խմբավորման ազդեցությունը։ Յու. Ռաաբի և ֆինանսների մինիստր Կամիցի կուրսը հանգում էր նրան, որպեսզի աշխատանքի ինտենսիվացման և կապիտալ ներդրումների խթանման ուղիով մոնոպոլիստական կապիտալին միջազգային շուկայում կայուն դիրքեր ապահովվի։ ԱԺԿ-ն 1951 թ. կազմակերպեց տնտեսական դիրեկտորատ, որը պետական-մոնոպոլիստական

կարգավորման և գների, հումքի և հատկապես վարկերի բաշխումը վերահսկելու քաղաքականություն իրականացրեց։ Մարտահրավեր նետելով կոալիցիայի սոցիալիստական պարտնյորին, ֆինանսների մինիստր Ռ. Կամիցը 1952—53 ֆինանսական տարվա բյուջեում կրճատեց թոշակների պետական դոտացիաները և ազգայնացված երկաթուղային տրանսպորտին տրվող վարկերը։ Առաջացավ կառավարական ճգնաժամ։ ԱՍԿ-ի պարագլուխները կարող էին, կանգնելով դեմոկրատական ուժերի համախմբման և պառլամենտից դուրս նրանց ակտիվության զարգացման ուղին, ճգնաժամն օգտագործել կառավարական կոալիցիայում իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Սակայն ԱՍԿ-ն առաջվա պես վարեց ԱԺԿ-ի հետ ամեն գնով կոալիցիան պահպանելու կուրսը և դիմեց զիջումների։ Յու. Ռաաբի գլխավորած նոր կառավարությունում սոցիալիստների դիրքերը թուլացան։ Դա «սոցիալական պարտնյորության» կամ պարզապես բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության հասնելու սոցիալիստների ընդհանուր քաղաքական և գաղափարական գծի հետևանքն էր։

Յու. Ռաաբի կառավարությունը շարունակում էր հարձակումներն ազգայնացված հատվածի վրա։ 1956 թ. պառլամենտական ընտրություններից հետո ստեղծվեց ազգայնացված հատվածի կառավարման հատուկ ընկերություն՝ ազգայնացված արդյունաբերության ղեկավարումը ԱՍԿ-ի և ԱԺԿ-ի հավասար հիմունքներով իրականացնելու համար (առաջ ազգայնացված հատվածի կառավարումը գտնվում էր ԱՍԿ-ի ձեռքին)։ Հետագայում սոցիալիստները դուրս մղվեցին ազգայնացված արդյունաբերության կառավարումից, իսկ արտադրական խորհուրդների իրավունքները կրճատվեցին։ Ազգայնացված հատվածը գնալով էլ ավելի մեծ չափով սկսեց ենթարկվել մոնոպոլիաների շահագիտական նպատակներին։

ԱԺԿ-ի կառավարությունը նոր զիջումների դիմեց արտասահմանյան կապիտալին, որի օգնությամբ հույս ուներ մոդեռնացնել արդյունաբերությունը։ Վիեննայի հուշագրի համաձայն, որը գաղտնի ստորագրվել էր պետական պայմանագիրը կնքելուց հինգ օր առաջ, արտասահմանյան կապիտալին վերադարձվեցին մինչև անշլյուսը նրան պատկանած նավթամղիչ գործարանների զգալի հզորություններ, որը հասցրեց Ավստրիայում արևմտագերմանական մոնոպոլիաների ազդեցության ուժեղացմանը։

60-ական թվականներին ռեակցիոն ուժերն ակտիվացան։ Ծայրահեղ աջ «Ազատության կուսակցությունը» («Անկախականների միության» փոխված անվանումը) բացահայտորեն հանդես էր գալիս պառլամենտի օրինականացրած չեզոքության քաղաքականության դեմ։ 1963 թվականից ԱԺԿ-ում Կլաուսի և Վիտհալմի գլխավորությամբ ուժեղացել էր աջ թևը, որն իր առջև նպատակ էր դրել կառավարություն ստեղծել առանց սոցիալիստների։ 1966 թ. մարտի պառլամենտական ընտրություններում ԱԺԿ-ն հաղթանակ տարավ։ Միակուսակցական կառավարությունը գլխավորեց Ի. Կլաուսը։

ԱԺԿ-ի միակուսակցական կառավարության ժամանակաշրջանը բնորոշվում էր Ավստրիայում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ուժեղացմամբ, աշխատավորների կենսամակարդակի վրա հարձակմամբ։

1970 թ. մարտին Ավստրիայում կայացան հերթական պառլամենտական ընտրությունները, որոնցում ԱՍԿ-ն ստացավ ավելի շատ մանդատներ, քան ԱԺԿ-ն, և կազմեց Ավստրիայի պատմության մեջ առաջին կառավարությունը՝ Բ. Կրայսկու գլխավորությամբ։ 70-ական թվականների սկզբին ԱՍԿ-ն ամրապնդեց կառավարական կուսակցության իր դրությունը։ 1971 թ. ապրիլին կայացած պրեզիդենտական ընտրություններում հաղթանակ տարավ ԱՍԿ-ի կողմից թեկնածու առաջադրված Ֆ. Իոնասը։ Միաժամանակ ԱԺԿ-ում սրվեցին ներքին հակասությունները, որոնք թուլացրեցին այդ բուրժուական կուսակցու-

թյան դիրքերը։ Դա աղդեց 1971 թ. հոկտեմբերին վաղաժամկետ կայացած պառլամենտական ընտրությունների արդյունքների վրա։ Ընտրություններում ԱՍԿ-ն առաջին անգամ ստացավ ձայների կեսից ավելին (50,04%) և տեղերի բացարձակ մեծամասնությունը, որը Բ. Կրայսկուն հնարավորություն տվեց կայուն միակուսակցական կառավարություն կազմելու։

Ավստրիական բանվորական շարժման մեջ ձախ ուժերի պայքարը գլխավորում է Ավստրիայի կոմունիստական կուսակցությունը։ Դեմոկրատիայի և խաղաղության համար ամենօրյա պայքարում ԱԿԿ-ն ղեկավարվում էր 1958 թ. փետրվարին կայացած կուսկոնֆերանսի ընդունած «Ավստրիայի ուղին դեպի սոցիալիզմ» ծրագրով։ Ծրագիրը նախատեսում էր սոցիալիզմին անցնելու խաղաղ ուղու հնարավորություն՝ լայն հակաիմպերիալիստական ճակատի ստեղծման հիման վրա, որը կհասցնի խոշոր կապիտալի իշխանության վերացմանը։ ԱԿԿ-ն հետևողական պայքար էր մղում նեոնացիզմի ակտիվացման դեմ։

Երկրի հակաիմպերիալիստական ուժերի համախմբման համար ավստրիական կոմունիստների պայքարը մի քանի տարի թուլացել էր հակակուսակցական խմբավորման գործողությունների պատճառով, որը քարոզում էր բուրժուական ու սոցիալիստական դաղափարախոսությունների գոյակցություն և փորձում էր կուսակցությունը պառակտել ֆրակցիաների։ 1970 թ. կայացած ԱԿԿ-ի 21-րդ համագումարը վճռականորեն դատապարտեց ռևիզիոնիստների գործողությունները։ 1974 թ. հունվարին կայացած ԱԿԿ-ի 22-րդ համագումարն ընդունեց «գործողությունների ծրագիր», որը սահմանում էր հակամոնոպոլիստական պայքարի խնդիրները։

ԳԼՈՒԽ 15

ԿԱՆԱԴԱ

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Ֆաշիստական Գերմանիայի կիպիտուլյացիայից մեկ ամիս անց Կանադայում կայացան ֆեդերալ ընտրություններ։ Լիբերալների կուսակցությունը, որը խոստացել էր պահպանել «լրիվ զբաղվածություն», ապահովել «բարեկեցություն բոլորի համար» և «նոր սոցիալական կարգ ու կանոն Կանադայի համար», հաղթանակ տարավ։ 1945 թ. հունիսին Ու. Լ. Մակենզի Քինգը նորից կառավարություն կազմեց (1948 թ. զառամյալ պրեմիերին և լիբերալների կուսակցության պարագլխին փոխարինեց Լուի Սեն-Լորանը)։

Էկոնոմիկայի բնագավառում պատերազմի պայմաններից խաղաղությանն անցնելուն ուղեկցեց արտադրության կրճատումը 1945 թ. 12%-ով և 1946 թ. էլի 7,5%-ով։ Վերսկսվեց գործազրկությունը։ Մոնոպոլիստական կապիտալը փորձեց բանվոր դասակարգի վրա դնել վերափոխման պրոցեսի ծախքերը։ 1945 թ. սեպտեմբերին Ֆորդի ավտոմոբիլային Ուինսորի գործարանի բանվորների գործադուլը բաց արեց ամբողջ Կանադան ընդգրկած գործադուլային մարտերի ժամանակաշրջանը։ Միայն 1946 և 1947 թթ. եղավ ավելի քան 450 գործադուլ, որոնց մասնակցեց 240 հազար բանվոր։ Կորցվեց մոտ 7 միլիոն մարդ-օր։ 1945—1948 թթ. գործադուլային պայքարն ավարտվեց նրանով, որ ժամավճարով աշխատավարձը 69-ից բարձրացավ մինչև 91 ցենտի և աշխատանքային շաբաթը 44-ից կրճատվեց մինչև 42 ժամի։

Հետպատերազմյան տարիներին Կանադայի արդյունաբերական արտադրությունը ենթարկվեց նույն ցիկլային տատանումներին, ինչ որ ԱՄՆ-ում։ 40-ական թվականների վերջին 50-ական թվականների սկզբին արդյունաբերության հայտնի վերելքը կապված էր հիմնական կապիտալի նորացման, հումքի նոր աղբյուրների շահագործման ենթարկելու (հատկապես ուրանի հանույթը և այդ ժամանակ Ալբերտա նահանգում հայտնաբերված նավթի խոշոր հանքաշերտերի շահագործման հանձնելը), սինթետիկ նյութերի արտադրության զարգացման և, ոչ պակաս չափով, Կանադայի՝ կորեական պատերազմին մասնակցելու տարիների ռազմականացման հետ։ 1957—1958 թթ. ճգնաժամն ավարտեց առաջին հետպատերազմյան տնտեսական ցիկլը։ 60-ական թվականների կեսին վերականգնված աճի արագացված տեմպերը 60-ական թվականների վերջին կտրուկ կերպով իջան, առաջ բերելով գործազրկության ռեկորդային չափի աճ (բանուժի ընդհանուր թվաքանակի 7,8%-ը)։ Կանադայի համար բնորոշ է լեռնահանքային արդյունաբերության զարգացումը։ Երկիրն արտահանում է հանքային հումք և կիսաֆաբրիկատներ, որոնք պարենային արտադրանքի հետ կազմում էին կանադական արտահանության ավելի քան 85 տոկոսը։ Կանադայի արտաքին ապրանքաշրջանառության համարյա 2/3-ը բաժին էր ընկնում Ամերիկայի Միացյալ Նահանգներին։

Հետպատերազմյան տարիներին խոշոր փոփոխություններ կատարվեցին գյուղատնտեսության մեջ, որն ավանդաբար, հատկապես հացահատիկի արտադրությունը պրերիաներում (տափաստաններում), երկրի էկոնոմիկայում աչքի ընկնող տեղ է զբաղեցնում։ Կապիտալիստական ինդուստրացումը և արտադրության համակենտրոնացումն առաջ բերեցին այդ ոլորտում զբաղված բնակչության խիստ կրճատում։ 1941 թ. գյուղատնտեսության մեջ զբաղված էր աշխատունակ բնակչության ավելի քան 30%-ը, իսկ 1973 թ. մոտ 6%-ը։ Ֆերմաների քանակն այդ ժամանակամիջոցում կրճատվեց ավելի քան երկու անգամ։ Նոր պայմաններում մրցակցունակ են խոշոր կապիտալիստական տնտեսությունները, որոնք լայնորեն կիրառում են գյուղատնտեսական մեքենաների, պարարտանյութերի, ագրոտեխնիկայի նորագույն նվաճումների համալիրը։

Պետական-մոնոպոլիստական քաղաքականությունը նպաստում է գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման պրոցեսին։ 1971 թ. օրենք ընդունվեց, որը հատուկ պետական մարմիններին թույլ էր տալիս գնելու մանր ու պակաս շահութաբեր ֆերմաները և խոշորացված տեղամասերը արտոնյալ պայմաններով վաճառել խոշոր կապիտալ ունեցող ֆերմերներին։ Մենդի արդյունաբերության մոնոպոլիաների և պետական վարկային ու գնման հիմնարկների հետ խոշոր կապիտալիստական ֆերմերական տնտեսությունների կապը գյուղատնտեսությունը պետական-մոնոպոլիստական կարգավորման ընդհանուր համակարգի մեջ ներգրավելու հիմքն է։

Կանադայի էկոնոմիկայի առանձնահատկություններից մեկը արտասահմանյան, հիմնականում ամերիկյան (արտասահմանյան կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 80%-ը) կապիտալի մեծ տեսակարար կշիռն է։ 1945 թ. արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումները կազմեցին 7, իսկ 1972 թ. 30 միլիարդ դոլար։ Կանադական արդյունաբերության ավելի քան 56%-ն արտասահմանյան կապիտալի սեփականությունն է և 62%-ը վերահսկվում է նրանց կողմից։ Չնայած կանադական մոնոպոլիաների վերնախավը հայտնի չափով սերտաճել է ամերիկյան կապիտալի հետ և հանդես է գալիս որպես նրա «կրտսեր պարտնյոր», այդ սերտաճումը և համագործակցությունը ներթափանցված են խոր անտագոնիզմով։ Ունենալով իր սեփական շահերը, կանադական մոնոպոլիստական կապիտալիզմը, սակայն, ամերիկյան կապիտալի կցորդը չէ։ Կանադական բուրժուազիան եռանդով պահպանում է երկրի վար-

կաբանկային համակարգի վճռական դիրքերը, նա վճռական դեր է խաղում այնպիսի բարձր եկամտաբեր ճյուղերում, ինչպիսիք են սև մետալուրգիան, նավաշինությունը, գյուղատնտեսական մեքենաշինությունը և այլն։ Կանադական մոնոպոլիաները հենվում են պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի վրա, որի կառուցվածքը և քաղաքականությունը գնալով հարմարվում են կանադական մոնոպոլիաների շահերի պաշտպանությանն ինչպես մրցակիցների, այնպես էլ երկրում բանվորների և դեմոկրատական շարժման դեմ մղվող պայքարում։

Հետպատերազմյան տարիներին կանադական կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական բնույթն ուժեղացավ։ Մինչև 50-ական թվականների երկրորդ կեսը, բացի կառավարության ավանդական մաքսային և վարկային քաղաքականությունից, էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման մեջ կարևոր դեր էին խաղում զենքի, ստրատեգիական հումքի պետական գնումների կենտրոնացված շուկան, ֆերմերական արտադրանքի, գլխավորապես հացահատիկի վաճառքում պետական միջնորդությունը։ Էկոնոմիկայի վրա ներգործելու կարևոր գործիք էին նաև պետական ձեռնարկությունները։ Նրանք առաջացել էին ոչ թե ազգայնացման հետևանքով, ինչպես եվրոպական կապիտալիստական մի շարք երկրներում, այլ պետական միջոցներով կառուցելու կամ կառավարության կողմից բաժնետոմսերի գնման հետևանքով (երկաթուղային և ավիացիոն տրանսպորտը, միջուկային արդյունաբերությունը, ճանապարհները, նավահանգստային կառուցվածքները, էլեկտրաէներգետիկան և այլն)։ Միաժամանակ առաջադիմում էր խոշոր մոնոպոլիաների ձեռքում կապիտալի և արտադրության կենտրոնացումը։

1957—1958 թթ. ճգնաժամը և 1960—1961 թթ. անկումը Կանադայի կառավարող շրջաններին ստիպեցին անցնելու պետական-մոնոպոլիստական կարգավորման նոր փուլի։ Ամենից առաջ էկոնոմիկայում աճեց պետական կապիտալ ներդրումների դերը։ Պետության տնօրինմանն էր անցնում ստացվող ազգային միագումար արտադրանքի մինչև 35%-ը (1974 թ. ավելի քան 26 միլիարդ դոլար)։ Միջոցների մեծ մասը պետական բանկերի համակարգի, ֆինանսավարկային գործակալների միջոցով (բոլոր երկարատև ներդրումների մինչև 40%-ը) դրվում էր երկրի արդյունաբերական հատվածում։ Գիտատեխնիկական հեղափոխության հետ կապված, 60-ական թվականներին կտրուկ կերպով ավելացան գիտական հետազոտություններին և մշակումներին հատկացվող պետական կապիտալ ներդրումները։ Գիտական հետազոտությունների արդյունքները բռնատիրում էին խոշորագույն մոնոպոլիաները։

60-ական թվականների սկզբին Կանադայի համար նոր երևույթ էր էկոնոմիկայի տնտեսական ծրագրավորման և կարգավորման կենտրոնական մարմինների ընդարձակումը։ 1963 թ. ստեղծվեց Կանադայի տնտեսական խորհուրդը, որը, չունենալով վարչական ֆունկցիաներ, զբաղվում է տնտեսական աճի պրոցեսների ուսումնասիրմամբ և կանխագուշակմամբ, կառավարության և մասնավոր հատվածի համար առաջարկություններ նախապատրաստելով։ Պետական բանկային համակարգի հետ կապված, 1957—1967 թթ. պրովինցիաներում զարգացավ ֆինանսավարկային գործակալությունների համակարգը։ Միաժամանակ տնտեսական քաղաքականության հարցերում ուժեղացավ պայքարը կանադական մոնոպոլիստական բուրժուազիայի ներսում, որը բացատրվում է բուրժուազիայի անմիատարրությամբ և նրա տարբեր ֆրակցիաների շահերի տարբերությամբ։ 50-ական թվականների վերջից տնտեսական քաղաքականության մեջ սրվեց երկու միտումների պայքարը՝ մի կողմից, կանադամերիկյան «ինտեգրացիան» ուժեղացնելու կողմնակիցների, իսկ մյուս կողմից՝ այսպես կոչված «տնտեսական նացիոնալիզմն» արտահայտող, այսինքն ամերիկյան կապիտալի ճնշիչ ազդեցությունը սահմանափակելու միտումն արտահայտողների միջև։ Գործարար շրջանների մի մասն արտահայտվում է Անգլիայի և ամբողջությամբ բրիտանական համագործակցության, եվրոպական, այդ թվում սոցիալիստական, երկրների հետ առևտրական հարաբերությունները զարգացնելու օգտին, պահանջում երկրում սահմանափակել բազմազգ կորպորացիաների ազդեցությունը։

Հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը Կանադայում հասցնում է սեփականատիրական հարաբերությունների փոփոխմանը։ Հարստությունն էլ ավելի մեծ չափով կենտրոնանում է ֆինանսաարդյունաբերական օլիգարխիայի նեղ խմբի ձեռքում։ Դա փոփոխություններ է առաջ բերում կանադական հասարակության սոցիալական կառուցվածքում, կապված մանր և միջին ֆերմերության քայքայման, քաղաքներում ինքնուրույն սեփականատերերի թվի կրճատման և վարձու աշխատանքի մարդկանց քանակի աճի հետ, որոնք 70-ական թվականների սկզբին կազմում էին ինքնագործ բնակչության ոչ պակաս 87 տոկոսը։

Աճում է արդյունաբերական պրոլետարիատի թվաքանակը։ Հատկապես աճել է ոչ նյութական ոլորտի զբաղվածությունը։ 1946 թ. վարձու աշխատանքի մարդկանց ընդհանուր թվաքանակը կազմում էր 3 միլիոն 272 հազար, իսկ 1967 թ. 6 միլիոն 668 հազար մարդ։ Դրանցից 3 միլիոն 271 հազար մարդ զբաղված էր արտադրական ոլորտում, իսկ սպասարկման, կրթության ոլորտներում, հիմնարկներում և կառավարական մարմիններում՝ 3 միլիոն 397 հազար մարդ։

Ժողովրդական տնտեսության ոչ նյութական ոլորտում զբաղվածության 39-ից մինչև 53% աճն արտացոլում է էկոնոմիկայում ամբողջությամբ վերցրած աշխատանքի արտադրողականության բարձրացող մակարդակը։ Նոր երևույթ է դառնում աշխատող կանանց թվի արագ աճը։ 1946—1947 թթ. ընթացքում նրանց թվաքանակը 850 հազարից աճեց և հասավ մինչև 2 միլիոն 140 հազար մարդու, իսկ բանվորների և ծառայողների մեջ նրանց տեսակարար կշիռը 30-ից բարձրացավ և հասավ մինչև 40%-ի։ Կանանց ավելի քան 75%-ը զբաղված է ոչ արտադրական ոլորտում։

Վերջին տասնամյակների ընթացքում բարձրացել է բանվոր դասակարգի նշանակալի թվով ջոկատների հանրակրթական և մասնագիտական մակարդակը, որը իր հերթին բարձրացրել է վարձու աշխատանքի արժեքը և գինը։ Միաժամանակ աճել է աշխատավորների այնպիսի խմբերի թվաքանակը, որոնց կենսամակարդակը և աշխատավարձը ցածր է աղքատության պաշտոնական սահմանից (ինքնագործ բնակչության մինչև 20%-ը)։ Նրանց մեջ նկատելի բաժինն ընկնում է մայրցամաքային Եվրոպայի հետպատերազմյան վտարանդիներին։ Վերջապես, ամբողջ հետպատերազմյան ժամանակաշրջանին բնորոշ է բավականին կայուն կառուցվածքային գործազրկությունը (այն երկրում միջին հաշվով կազմում է բանվորների ու ծառայողների ընդհանուր թվի 4-ից մինչև 7%-ը, բայց ավելի բարձր է մերձծովյան մարզերում և Քվեբեկում)։

Ներքաղաքական պայքարը հետպատերազմյան Կանադայում

Կանադայի հետպատերազմյան քաղաքական պատմությունը ստորաբաժանվում է երկու մեծ ժամանակամիջոցի։ Առաջին ժամանակամիջոցը (1945—1957) բանվորական և դեմոկրատական շարժման 1945—1948 թթ. վերելքի կարճատև փուլն է, երբ աշխատավորները հասան մի շարք տնտեսական զիջումների, և «սառը պատերազմի» համարյա տասնամյակը, որը բնութագրվում է ռեակցիայի հակահարձակումով և երկրի քաղաքական կյանքի դե-

պի աջ ընդհանուր տեղաշարժով։ Այդ տարիներին կանադական կառավարությունները գլխավորում էր Լուի Սեն-Լորանը (1948—1957)։

Բուրժուական երկու՝ առաջադիմական-պահպանողական և լիբերալ, կուսակցությունների միջև ծավալված պայքարում արտացոլվում էր հետպատերազմյան տարիներին երկրում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի և միջազգային մասշտաբով երկու սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի, սրված պայքարում նոր ռեալությանը նրանց քաղաքականության և գաղափարախոսության հարմարվելու տարբեր աստիճանը։ Լինելով կառավարող կուսակցություն, լիբերալները էկոնոմիկայի պետական-մոնոպոլիստական կարգավորման ստեղծված ապարատն ու փորձն օգտագործեցին կանադական մոնոպոլիստական բուրժուազիայի դասակարգային դիրքերն ամրապնդելու և քաղաքական կայունությունն ապահովելու համար։ Նրանք հանդես բերեցին ավելի մեծ ճկունություն և մանևրականություն, քան պահպանողական կուսակցությունը, և դրանով ամրապնդեցին լիբերալ կուսակցության, որպես արդի կանադական մոնոպոլիստական օլիգարխիայի գլխավոր քաղաքական ուժի, դրությունը։

Լիբերալիզմի դոկտրինայի վերակառուցումն արտահայտվեց ամենից առաջ տնտեսական քաղաքականությունն առաջին պլան մղելու մեջ, չնայած ազատության, հավասարության, արդարության մասին լիբերալների ավանդական լոզունգներն առաջվա պես կարևոր տեղ էին գրավում փաստաթղթերում և պրոպագանդայում։ Հետպատերազմյան լիբերալիզմը գաղափարական հիմք ընդունեց «համընդհանուր բարեկեցության պետության» տեսությունը։ Լրիվ զբաղվածության, եկամուտների կայունության և տնտեսական աճի կայուն տեմպերի խոստումներ՝ այսպիսին էին լիբերալների կուսակցության տնտեսական ծրագրի գլխավոր կետերը 1945, 1949, 1953 և 1957 թթ. ընտրական կամպանիաների ժամանակաշրջանում։ Տնտեսական քաղաքականության տեսական հիմքը դարձավ քեյնսականությունը։ Լիբերալ կուսակցությունը հռչակեց ամերիկյան էկոնոմիկայի հետ «ինտեգրացիայի» քաղաքականություն (1947), որը պաշտպանեցին պահպանողականները։ Սակայն բարենպաստ վարկային քաղաքականության միջոցով խթանելով կանադական մոնոպոլիաների գործունեությունը, լիբերալները մեծ զգուշությամբ էին վերաբերվում պետական սեփականության և հասարակական աշխատանքների ոլորտն ընդարձակելու վերաբերյալ քեյսականների առաջարկություններին։

Հետպատերազմյան առաջին տարիներին պահպանողական կուսակցությունը մասնավոր ձեռնարկատիրության ազատության պաշտպանության դիրքերից քննադատում էր լիբերալների պետական-մոնոպոլիստական քաղաքականությունը, դեմագոգորեն այն անվանելով համարյա քայլ դեպի սոցիալիզմ։ Պահպանողականները քննադատում էին նաև անհատի բարեկեցության համար պետության պատասխանատվության մասին նեոլիբերալ դոկտրինան։ Սակայն, չնայած այն քաղաքական գաղափարախոսությունների տարբերություններին, որոնք ժամանակի ընթացքում դառնում էին էլ ավելի թափանցիկ, և՛ լիբերալները, և՛ պահպանողականները հանդես էին գալիս որպես պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի կողմնակիցներ։ Երբ 50-ական թվականների վերջին պահպանողականներն իշխանության գլուխ էին գտնվում, հենց նրանք էին ստիպված 1957—1958 թթ. ճգնաժամից հետո արագացնելու պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը։

40-ականների վերջը և 50-ական թվականների առաջին կեսը բնութագրվում էին քաղաքական ռեակցիայի հարձակմամբ, որի ընթացքում կառավարող շրջանները հույս ունեին ամրապնդել երկկուսակցական համակարգը և քայքայել դեմոկրատական ուժերը երկրում։ Ռեակցիան հարվածն առաջին հերթին

ուղղեց կոմունիստական կուսակցության դեմ։ 1953 թ. ընտրություններում պահպանողականներն իրենց ընտրական ծրագրում պահանջ մտցրին՝ օրենք ընդունել կոմունիստական ամեն տեսակ գործունեություն արգելելու վերաբերյալ։ «Սառը պատերազմի» տարիներին ռեակցիայի հարձակումը մեծ վնաս հասցրեց նաև սոցիալ-դեմոկրատական Կոոպերատիվ համագործակցության ֆեդերացիային (ԿՀՖ)։ 1958 թ. մոտերքը ԿՀՖ-ի ներկայացուցչությունը ֆեդերալ պառլամենտում 1945 թ. 28-ի դիմաց կրճատվելով, ստացավ 8 տեղ։

50-ական թվականների երկրորդ կեսից Կանադայի քաղաքական կյանքում սկսվեց նոր ժամանակաշրջան։ Շրջադարձ կատարվեց դեպի դասակարգային և ազգային հակասությունների սրումը։ Ամերիկյան կապիտալի էքսպանսիան երկրի անկախության համար սպառնալից մասշտաբներ ընդունեց, որը հակաամերիկյան տրամադրությունների աճի պատճառ դարձավ ոչ միայն աշխատավոր լայն զանգվածների, այլև կանադական մոնոպոլիստական բուրժուազիայի մի մասի շրջանում։ 1957 թ. ֆեդերալ ընտրություններում պահպանողականները, որոնց գլխավորում էր նոր պարագլուխ Ջոն Դիֆենբեյկերը, հաղթեցին։ Առաջին անգամ 1935 թ. պարտությունից հետո նրանք կազմեցին ֆեդերալ կառավարություն։ Սակայն պահպանողականները պառլամենտում բացարձակ մեծամասնություն չունեին։ Ամերիկյան ներդրումները սահմանափակելու ուղղությամբ անցկացված որոշ միջոցառումները, ֆերմերներին տրվող վարկերի և նրանց արտադրանքի արտաքին շուկաներում վաճառահանման ընդարձակումը, գործազրկությունը մեղմացնելու համար հասարակական աշխատանքներ կազմակերպելու կանադական Հյուսիսի զարգացման ծրագիրը և այլ խոստումներ պահպանողականներին հնարավորություն տվեցին հաջողությամբ անցկացնելու 1958 թվականի արտահերթ պառլամենտական ընտրությունները, որոնցում նրանք խոշոր հաղթանակ տարան (208 տեղ՝ լիբերալների 48 և ԿՀՖ-ի 8 տեղի դիմաց)։

Պահպանողականների երկրորդ անգամ հաղթելը բացահայտեց կանադական քաղաքական կյանքում կատարված նոր երևույթը՝ հակաամերիկանիզմի աճը և երկրի անկախությունն ամրապնդելու ձգտումը։ Սակայն պահպանողական կառավարության քաղաքականության մեջ «տնտեսական նացիոնալիզմի» դրսևորումը կարճատև էր և շատ բանով ցուցադրական։ Կանադա-ամերիկյան մոնոպոլիստական օլիգարխիան, որը շահագրգռված էր շարունակելու կանադա-ամերիկյան «ինտեգրացիան», ավելի ուժեղ դուրս եկավ։ Կանադայից դուրս տարվող ամերիկյան շահույթների վրա հարկերն ավելացնելու հարցի կապակցությամբ առաջին կոնֆլիկտն ավարտվեց «տնտեսական նացիոնալիզմի» նահանջով։ Այդ միտումն անձնավորող Կանադական բանկի պրեզիդենտ Դ. Կոյնը 1961 թ. ազատվեց պաշտոնից։

Պահպանողական կառավարությունը չկարողացավ կատարել նաև իր մյուս խոստումը՝ թուլացնել ֆեդերալ-պրովինցիալ հարաբերությունների ճգնաժամը։ Իր ծրագրում մտցնելով «Կոնֆեդերացիային՝ այո, համակենտրոնացմանը՝ ոչ» լոզունգը, պահպանողականները գործնականում շարունակում էին համակենտրոնացման լիբերալների տնտեսական քաղաքականությունը։ Ֆեդերալ և պրովինցիալ կառավարությունների ֆունկցիաներն ու լիազորությունները սահմանազատելու մասին 1867 թ. սահմանադրության հոդվածներն արդեն վաղուց հնացել էին։ Սոցիալական խոշոր տեղաշարժերը և արտադրողական ուժերի տեղաբաշխման անհամաչափությունը հասցրեցին դեպրեսիոն շրջանների առաջացմանը, հատկապես Քվեբեկի պրովինցիայում և մերձծովյան պրովինցիաներում անշարժացած գործազրկությանը։ Քվեբեկում այդ պրոբլեմը բարդացավ ազգային անհավասարության խորացման պատճառով։ 1960 թվականից ծավալվեց ֆրանս-կանադական ազգային շարժումը, որի պահանջն էր ֆրանս-

կանադական ազգի իրավահավասարությունը սահմանադրականորեն ճանաչելը և սոցիալական ռեֆորմներ անցկացնելը։ 60-ական թվականներին այսպես հասունացավ «կանադական կոնֆեդերացիայի ճգնաժամը», որի հաղթահարման բավարար ծրագիր չունեին ոչ պահպանողականները, ոչ էլ լիբերալները։

Դրա համար էլ քաղաքական անկայունությունը դարձավ երկրի կյանքի բնորոշ գիծը։ Ձնայած պահպանողականները 1962 թ. հերթական ընտրությունների արդյունքներով վերադարձան իշխանության գլուխ, բայց նրանք արդեն բացարձակ մեծամասնություն չունեին։ Պառլամենտում կուսակցության այն խմբի կողմից, որը գլխավորապես խոշոր կապիտալիստական ֆերմերությունն էր ներկայացնում, սոցիալական վարկավորումը ուղեփակելը պահպանողական կաբինետին կայունություն չտվեց։ 1963 թ. նրանց փոխարինեցին լիբերալները, սակայն նրանք էլ պառլամենտում չստացան բացարձակ մեծամասնություն։ 60-ական թվականների՝ Կանադայի համար աննախադեպ արտահերթ ընտրությունների շարքը հանդես բերեց սոցիալական ուժերի սահմանազատման խոր պրոցեսը, ցույց տվեց, որ պահպանողականների օգտին ամենից առաջ քվեարկում են գյուղական շրջանների քաղաքականապես ամենահետամնաց ընտրողները և քաղաքային մանրբուրժուական ու բուրժուական խավերը, որոնց մեջ դեռևս «գործում էին» «հաստատուն անհատապաշտության» գաղափարները։ Լիբերալ կուսակցությունը կողմնորոշվում էր դեպի քաղաքային ընտրողները և սոցիալական ռեֆորմիզմի հողի վրա մրցակցում էր նոր դեմոկրատական կուսակցության (ՆԴԿ) հետ։ 1968 թ. ընտրություններում լիբերալների նոր պարագլուխ Պ. Է. Թրյուդոյի բազմախոստում ընտրական ծրագիրը նրանց հնարավորություն տվեց պառլամենտում հասնելու կայուն մեծամասնության։

Լիբերալների կուսակցության ծրագիրը փորձեց պատասխան տալ «կոնֆեդերացիայի ճգնաժամի» բոլոր սուր հարցերին։ Նա միջոցառումներ հուշակեց Կանադայի միասնությունը պահպանելու, սահմանադրությունը և ֆեդերալ-պրովինցիալ հարաբերությունների ամբողջ համակարգը վերանայելու, ամբողջ երկրի վրա, որտեղ կան ոչ պակաս 10% ֆրանս-կանադացիներ, անգլիական և ֆրանսիական լեզուների իրավունքները տարածելու, Կանադայի մայրաքաղաքի, որպես երկու ազգերի՝ ֆրանս-կանադացիների և անգլո-կանադացիների միասնությունը խորհրդանշողի, զարգացման պատվախնդիր նախագիծը Քվեբեկի, Օնտարիոյի և ֆեդերալ կառավարության միացյալ ջանքերով իրականացնելու վերաբերյալ։ Նա խոստանում էր վերանայել աշխարհում և նրա ամբողջ արտաքին քաղաքականության մեջ Կանադայի դերը, կառուցել «արդար հասարակություն», որի համար առաջարկվում էր մտցնել մարդու իրավունքների խարտիա, առողջացնել քաղաքները, ընդարձակել սոցիալական ապահովության համակարգը, բարելավել կառավարումը։ Տնտեսական քաղաքականության բնագավառում լիբերալների կուսակցության ծրագիրն ավելի հստակ, քան առաջ, հուշակում էր համընդհանուր ֆեդերալ մասշտաբով «զարգացման» ազգային ծրագրերի խրախուսման համար ֆեդերալ կառավարության առավելագույն պատասխանատվությունը։ Ծրագիրը խոստանում էր օգնություն ցույց տալ ֆերմերներին, անցկացնել նոր օրենսդրություն, որը «արդյունաբերության մեջ խաղաղություն» ապահովեր։

Խոստումների գործնական իրականացումը շատ շուտով բախվեց աճող ինֆլյացիային և միաժամանակ տնտեսական անկմանը։ Հուշակելով «խնայողական» քաղաքականություն, լիբերալների կառավարությունը գործադուլային շարժման հզոր ալիք առաջ բերեց, որը թաղեց «արդյունաբերության մեջ խաղաղության» հույսերը։ Քվեբեկի 1970 թ. հոկտեմբերյան ճգնաժամը բացահայտեց ազգային կոնֆլիկտի ամբողջ սրությունը երկրում։ Կառավարությունը արտակարգ լիազորություններ ստանալով, ֆեդերալ զորքեր մտցրեց Քվեբեկ։ Զեվական ահեղ ծառայեց տեռորիստների կողմից Քվեբեկի նահանգի աշխատանքի մինիստրին առևանգելը և սպանելը։ «Ռազմական ժամանակների միջոցառումների մասին օրենքի» (1914) հիման վրա ամբողջ երկրում արտակարգ դրություն մտցնելը Կանադայի դեմոկրատական և առաջադիմական ուժերը գնահատեցին որպես դեմոկրատական իրավունքների ու ազատությունների նկատմամբ սպառնալիք։ Այն ժամանակ պառլամենտը, միայն ՆԴԿ-ի պատգամավորների խմբի օպոզիցիայով հանդերձ, ժամանակավոր օրենք ընդունեց հասարակական կարգուկանոնի մասին։ Օրենքն «անօրինական ասոցիացիաների» անորոշ բնութագիրը տալով, ոստիկանության ղեկավարած ուժերի ներկայացուցիչներին փաստորեն անսահմանափակ իրավունքներ էր վերապահում խուզարկելու և ձերբակալելու (առանց օրդերի) ամեն մի անձի, որը պատկանում էր «անօրինական ասոցիացիաների» կամ կասկածվում էր այդպիսի ասոցիացիաների պատկանելու մեջ։ Օրենքը ոստիկանությանը իրավունք էր տալիս ձերբակալվածներին առանց դատի և դատաքննության բանտարկության մեջ պահել առնվազն երեք ամիս։ Դեմոկրատական ուժերի բողոքների պատճառով այդ օրենքն իր գործելու ժամկետը 1971 թ. ապրիլի 30-ին լրանալուց հետո չնորացվեց։

Բանվորական և դեմոկրատական շարժումը

Առաջին հետպատերազմյան տարիները նշանավորվեցին բանվորական շարժման վերելքով, գործադուլային ակտիվ մարտերով։ Տարեկան լինում էր ավելի քան 200 գործադուլ, որոնց մեծամասնությունը ավարտվում էր բանվորների հաղթանակով։ Բուռն կերպով աճում էին արհմիությունների շարքերը։ Միայն երեք տարում արհմիութենական կազմակերպությունների անդամների քանակն աճեց 300 հազարով և հասավ 1 միլիոն մարդու։ Ձանգվածների ընդհանուր ձախացումն անդրադարձավ բանվորների շրջանում Կանադայի բանվորական առաջադիմական կուսակցության (ԿԲԱԿ) ազդեցության և հեղինակության ընդարձակման վրա։ Կոմունիստների ղեկավարությամբ գործում էին էլեկտրիկների, փայտահատների, լեռնահանքային և ձուլման արդյունաբերության բանվորների, ավտոմոբիլաշինարարների խոշոր արհմիությունները։ Կոմունիստները ղեկավար պոստեր էին գրավում քիմիագործների, տեքստիլագործների, ծովայինների և այլ արհմիություններում։ 1945 թ. ֆեդերալ ընտրություններում ԿԲՍԿ-ի օգտին ձայն տվեցին ավելի քան 110 հազար ընտրողներ։ Բացի ԿԲՍԿ-ից, ընտրություններում իրենց ծրագրերով հանդես եկան ԿՀՖ-ն, սոցիալական վարկի կուսակցությունը, ժողովրդական բլոկը (Քվեբեկում), որն արտացոլում էր բնակչության նշանակալի խավերի՝ երկու ավանդական բուրժուական կուսակցություններից հիասթափվելն ու հեռանալը։

Սակայն հետպատերազմյան առաջին տարիներին բանվորական շարժման մեջ մարտական ձախ թևի ամրապնդումն այնքան ուժեղ չէր, որպեսզի հաղթահարեր այն ավանդական ֆունդամենտալ թերությունները, որոնք հատուկ էին ամենից առաջ արհմիություններին։ Պահպանվում էր արհմիութենական շարժման երեք խոշոր կենտրոնների՝ Կանադայի պրոֆեսիոնալ և բանվորական կոնգրեսի (ԿՊԲԿ), Աշխատանքի կանադական կոնգրեսի (ԱԿԿ) և Աշխատանքի կանադական կաթոլիկական ֆեդերացիայի (ԱԿԿՖ, որը 1960 թվականից ընդունեց Աշխատանքի կանադական ազգային ֆեդերացիա անվանումը) պառակտումը։ Գերակշռող էր մնում տրեդյունիոնիստական ռեֆորմիզմը և ինքնուրույն քաղաքական գործողությունների նկատմամբ արհմիությունների «չեզոքությունը»։

Հաջորդ տարիներին «սառը պատերազմի», սանձարձակ հակակոմունիզմի և հակասովետիզմի իրադրության մեջ, ԱԱՖ-ի և ԱԱԿ-ի աջ ռեֆորմիստական պարագլուխների ուղղակի միջամտությամբ կանադական արհմիությունների

ղեկավարության աջ ուժերը կոնգրեսներից հեռացրին առաջադիմական ղեկավարություն ունեցող մի շարք արհմիություններ։ Դրա հետևանքով կանադական արհմիութենական կոնգրեսներում ամրապնդվեց ռեֆորմիստական ղեկավարությունը։ Նա ԿՄԲԿ-ի և ԱԿԿ-ի 1948—1953 թթ. համագումարներին պարտադրեց մի շարք որոշումներ, որոնք հակասում էին կանադական բանվորների դասակարգային շահերին։ Արհմիութենական կենտրոնների ռևպրեսիաներով թուլացած ձախ թևը չէր կարող խանգարել կոմունիստներին արհմիութենական ղեկավար պոստերում ընտրելն արգելելու մասին հակադեմոկրատական որոշումներ ընդունելուն, «Մարշալի պլանին», ՆԱՏՕ-ին, Կորեայում ամերիկյան ագրեսիային հավանություն տալուն և այլն։ Միաժամանակ կանադական բուրժուազիան լրիվ չափով օգտագործում էր և՛ բանվոր դասակարգի որակյալ վերնախավի տնտեսապես կաշառումը, և՛ բուրժուական գաղափարախոսությունն արմատավորելու գաղափարական ներգործության վիթխարի ապարատը։

50-ական թվականների երկրորդ կեսից կանադական բանվորական շարժման մեջ կարևոր փոփոխություններ կատարվեցին։ 1956 թ. կանադական արհմիութենական երկու կենտրոններ՝ ԿՄԲԿ-ն և ԱԿԿ-ն ձուլվեցին կանադական Բանվորական կոնգրեսի (ԿԲԿ) մեջ, որի մեջ մտան մոտ 2 միլիոն անդամներ, արհմիութենական շարժման միասնությունն ամրապնդվեց։ Սակայն ԿԲԿ-ի սահմաններից դեռևս դուրս էին մնում ԱԿԿՖ-ի Քվեբեկում գործող արհմիությունները և տարբեր անկախ արհմիութենական կազմակերպություններ, այդ թվում նաև առաջադեմ ղեկավարություն ունեցող արհմիությունները, որոնք բոլորը միասին միավորում էին ավելի քան 30 հազար անդամներ։

Բանվորական շարժման մեջ կատարված մյուս կարևոր փոփոխությունն ավանդական «գործնական յունիոնիզմի» ճգնաժամն էր, որը կողմնորոշվում էր դեպի տնտեսական պայքարը և հոչակում քաղաքական գործողությունների նկատմամբ արհմիությունների «չեզոքությունը»։ Կառավարության պետական մոնոպոլիստական քաղաքականության հետ բախումները, աշխատանքային կոնֆլիկտներին նրա միջամտությունը 50-ական թթ. վերջին մի շարք արհմիությունների շրջանում հստակ միտում առաջ բերեցին դուրս գալու զուտ տնտեսական պայքարի շրջանակներից և երկու բուրժուական կուսակցություններից անկախ նույնիսկ ակտիվորեն մասնակցելու քաղաքական գործունեությանը։ Այդ պրոցեսն արտացոլվեց լայն բանվոր-ֆերմերական կուսակցություն ստեղծելու պահանջներում։ Կոմունիստական կուսակցությունը մշտապես պրոպագանդում էր քաղաքական ուժերի հակամոնոպոլիստական կոալիցիա ստեղծելու գաղափարը։ Նոր քաղաքական կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը գիտակցվում էր նաև այն կապակցությամբ, որ 50-ական թվականների երկրորդ կեսին սոցիալ-դեմոկրատական ԿՀՖ-ն ճգնաժամ էր ապրում, նրա անդամների թիվը կիսով չափ կրճատվել էր։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմին և սոցիալիստական ինտերնացիոնալի դոգմաներին հարմարվելը կանադական սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը չփրկեց ներքին ճգնաժամից։ Ուժեղացավ ԿՀՖ-ի կառուցվածքը արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի օրինակով վերակառուցելու միտումը, և սկսեց գիտակցվել արհմիությունների կողմից պաշտպանության անհրաժեշտությունը։ Այդ պրոցեսների հետ կապված ստեղծվեց ԿՀՖ-ի և Կանադական բանվորական կոնգրեսի ներկայացուցիչներից բաղկացած միացյալ քաղաքական կոմիտե, որը գլխավորեց նոր կուսակցություն ստեղծելու շարժումը։ 1961 թ. ամռանը կայացավ հիմնադիր համագումարը, որը հոչակեց նոր դեմոկրատական կուսակցության (ՆԴԿ) ստեղծումը։ ԿՀՖ-ն դադարեցրեց իր գոյությունը, նրա անդամները մտան նորաստեղծ կուսակցության մեջ։ Նրա մեջ հիմնականում որպես կոլեկտիվ անդամներ, մտան մի շարք արհմիություններ, որոնք ունեին մոտ 300 հազար անդամներ։ Այսպիսով, Կանադայի պայմաններում երկու ավանդական բուրժուական կուսակցություններից (պահպանողականներից և լիբերալներից) բանվորների մի մասի հեռանալն ընդունեց սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը պաշտպանելու բնույթ և ձև։ Սակայն երկրում նոր քաղաքական կազմակերպության շրջանակներում լայն դեմոկրատական և հակամոնոպոլիստական ուժերի միասնություն ստեղծելու միտքը չիրականացավ։ Կանադայի կոմունիստական կուսակցությունը և առաջադեմ ղեկավարություն ունեցող արհմիություններին, որոնք պատրաստակամություն հայտնեցին նոր կուսակցության մեջ մտնել որպես կոլեկտիվ անդամներ, չթույլատրեցին մասնակցելու նրա ստեղծմանը։ ՆԴԿ-ի ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրին ԿՀՖ-ի պարագլուխները, որոնք կանգնած էին սոցիալ-դեմոկրատական դիրքերում, և արհմիությունների աջ պարագլուխների մի մասը, որը դավանում էր տրեդյունիոնիզմի գաղափարախոսությունը։ Սոցիալ-ռեֆորմիզմի հետ տրեդյունիոնիզմի այդ միացումն էլ հենց բնորոշում էր ստեղծված կուսակցության բնույթը։ Միաժամանակ պետք է նշել, որ ՆԴԿ-ի ծրագիրը պարունակում էր մի շարք հակամոնոպոլիստական և դեմոկրատական պահանջներ, որոնք այդ կուսակցության կողմը գրավեցին բնակչության զգալի խավերի համակրանքը։ ՆԴԿ-ն գլխավորեց Մանիտոբի, Սասկաչեանի և Բրիտանական Կոլումբիայի պրովինցիալ կառավարությունները։

60-ական թվականներին դասակարգային պայքարի սրման կարևոր ցուցանիշը գործադուլային շարժման բուռն աճն էր։ 1946—1964 թթ. միջին հաշվով տարեկան եղավ 210 գործադուլ, իսկ 1965—1973 թթ. գործադուլների միջին տարեկան թիվը կազմեց 580։ Միաժամանակ ակտիվացավ նաև ֆերմերական հակամոնոպոլիստական շարժումը։ Կանադայի ֆերմերական միության ղեկավարությամբ անցկացվեցին ֆերմերների գործադուլներ։ Մոնոպոլիստական կապիտալի դեմ պայքարում ֆերմերներն օգտագործում էին իրենց կոոպերատիվ կազմակերպությունները։ Կրթության դեմոկրատականացման համար սովորող երիտասարդության և հանուն սոցիալական իրավունքների ու դեմոկրատական ազատությունների մտավորականության աճող պայքարն արտացոլում են քաղաքական պայքարի մեջ նոր սոցիալական խավերի ներգրավման պրոցեսը։ Կանադայի քաղաքական իրադրության կարևոր գիծը դարձավ խաղաղության համար շարժումը և երկրի դեմոկրատական ուժերի՝ Վիետնամում ամերիկյան ագրեսիվ պատերազմը դադարեցնելու համար պայքարը։

Կանադայի կոմունիստական կուսակցությունը (այդ անվանումը վերականգնվեց 1959 թ. հոկտեմբերին կայացած բանվորական առաջադիմական կուսակցության համագումարում) սոցիալական առաջադիմության, դեմոկրատիայի և ազգային անկախության համար պայքարում հաստատակամորեն ձգտում էր բանվոր դասակարգի, աշխատավոր ֆերմերության և առաջադեմ մտավորականության համատեղ գործողությունների հասնել։ 1971 թ. նոյեմբերի 27—29-ը կայացավ Կանադայի կոմունիստական կուսակցության 21-րդ համագումարը, որը հանդիսավորությամբ նշեց կուսակցության կազմավորման 50-ամյակը։ Համագումարն ընդունեց մի շարք կարևոր փաստաթղթեր, այդ թվում «Կուսակցության քաղաքականության մասին գլխավոր բանաձևը», որով զարգացվեցին արդի պայմաններում կուսակցական քաղաքականության տակտիկական հիմունքները։ Համագումարի մեծ նշանակությունը բնորոշվում է ԿԿԿ-ի «Կանադայում սոցիալիզմին անցնելու ուղին» նոր ծրագրի ընդունմամբ (նախկին ծրագիրը հաստատվել էր 1962 թ.), որում տրված է կանադական կոմունիստների քաղաքականության խոր մշակումը։ Այդ փաստաթղթում, ինչպես նաև 1974 թ. մայիսին կայացած ԿԿԿ-ի 22-րդ համագումարի որոշումներում հետագա զարգացում է ստացել նոր քաղաքական դաշինքի՝ բանվոր դասակարգին, Ֆրանսիական Կանադայի ազգային-դեմոկրատական ուժերին, ֆերմերնե-

ին, միջին խավերի ներկայացուցիչներին միավորող դեմոկրատական, հակամոնոպոլիստական, հակաիմպերիալիստական ճակատի ձևավորման կուսակցության կուրսը։ Այդ նոր քաղաքական դաշինքի հիման վրա հակաիմպերիալիստական կառավարության ստեղծումը և նրա դեմոկրատական հակամոնոպոլիստական ծրագրի իրականացումը ուղի կբացի դեպի սոցիալիզմ նրա առաջընթացի համար։

Ֆրանս-կանադական ազգային շարժման վերելքը 60-ական թվականներին

Կանադայում ազգային հարցն ունի պատմական խոր արմատներ և սկիզբ է առնում 1760 թ. Նոր Ֆրանսիայի անգլիական նվաճման ժամանակաշրջանից։

Կանադա դոմինիոնի կազմավորման հարյուրամյակը համընկավ ֆրանս-կանադական ազգային շարժման նոր վերելքի հետ։ Աշխարհի հեղափոխական խոր վերափոխումները, գաղութային սիստեմի խորտակման հետ կապված ազգային պետությունների ստեղծման պրոցեսի ավարտը, կապիտալիստական երկրներում սոցիալական լարվածության աճը, համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը, անկասկած, ազդեցին և ազդում են ֆրանս-կանադական ազգային շարժման վրա։ Սակայն այն ամենից առաջ ներքին պատճառների և բուն քվեբեկյան հասարակության սոցիալական խոր փոփոխությունների ծնունդ է։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Քվեբեկը հիմնական ցուցանիշներով դարձավ նույնիսկ ավելի ինդուստրիալ, քան հարևան Օնտարիոն։ 60-ական թվականների սկզբներին գյուղում մնացել էր բնակչության ընդամենը 7,3 %-ը։ Սակայն Քվեբեկի էկոնոմիկայի 80 %-ը գտնվում էր մի բուռն ամերիկյան և անգլո-կանադական մոնոպոլիստների ձեռքին, որոնք, ինչպես կանոն, գործավարությունը կատարում էին անգլերեն։ Ֆրանս-կանադական բանվորների աշխատավարձը 20—25%-ով ավելի ցածր էր, իսկ գործազուրկների քանակը կրկնակի բարձր, քան հարևան Օնտարիոյում։

1944—1960 թթ. Քվեբեկի պրովինցիալ կառավարությունները գլխավորում էր Յունիոն նասիոնալ ռեակցիոն-ազգայնական կուսակցությունը։ Կուսակցության պարագլուխ և պրովինցիալ կառավարության ղեկավար Մ. Դյուպլեսին այսպես կոչված «մեկուսացման նացիոնալիզմով» քողարկում էր արտասահմանյան կապիտալի խրախուսման քաղաքականությունը և միաժամանակ դիմադրում նույնիսկ սոցիալական համեստ ռեֆորմներ անցկացնելուն։ 1949 թ. ազբեստի հանքերի բանվորների գործադուլից հետո, որի ընթացքում Դյուպլեսին կանգնեց ամերիկյան ընկերության կողմը, նրա ռեժիմի նկատմամբ օպոզիցիայի կողմն անցան մանր բուրժուազիայի նշանակալի խավեր և նույնիսկ հոգևորականության մի մասը։ 1959 թ. Դյուպլեսիի մահը և 1960 թ. պրովինցիալ ընտրություններում նրա կուսակցության պարտությունը ֆրանս-կանադական հասարակության զարգացման ուղիների վերաբերյալ Քվեբեկում հասարակական-քաղաքական բանավեճ առաջ բերեցին։ Այդ բանավեճի ընթացքում առաջին պլան առաջ քաշվեց «տեր լինել սեփական տանը» պահանջը։ Դրան տոն էին տալիս մանրբուրժուական ինտելեկտուալ խավերը, որոնք գտնում էին, թե եկել է փոփոխությունների ժամանակը։

Ֆրանս-կանադական հասարակության սոցիալական խայտաբղետությունը, քաղաքական կյանքի անհասունությունը 60-ական թվականների սկզբին հասցրին տասնյակ ամենաբազմազան և կազմով ու գաղափարական դիրքերով խայտաբղետ կազմակերպությունների տեղծմանը (սկսած ծայրահեղ ձախերից, անջատողականներից և նույնիսկ գաղտնի տեռորիստներից մինչև ծայրահեղ աջերը, թունդ ռեակցիոներները)։ Քաղաքական ասպարեզում այդ անջատվածության պատճառով շարունակում էին գերիշխել երկու ավանդական բուրժուական կուսակցությունները (լիբերալ և յունիոն նասիոնալ), որոնք իշխանության դեկավարմամբ փոխարինում էին իրար։ 60-ական թվականների երկրորդ կեսին քաղաքական և ազգայնական մանր շատ կազմակերպություններից Ռենե Լևեկի ղեկավարությամբ ստեղծվեց մանրբուրժուական ազգայնական օպոզիցիոն հոսանքը՝ «Քվեբեկյան կուսակցությունը»։

Քվեբեկի բանվոր դասակարգին ամբողջովին վերցրած խորթ է անջատողականությունը և նեղ նացիոնալիզմը։ Քվեբեկի արհմիությունները վերջին տասնամյակներին դարձան Կանադայի բանվորների ամենամարտական կազմակերպությունները։ Նրանք ազգային իրավահավասարության պայքարը կապում են դասակարգային շահերի պաշտպանության հետ։ 1970 թ. հոկտեմբերյան ճգնաժամի օրերին, արտակարգ օրենսդրությունը փոխելու, սոցիալական և դեմոկրատական իրավունքների ու ազատությունների համար պայքարի նպատակով ստեղծվեց արհմիութենական կազմակերպությունների, այդ թվում նաև անգլերեն խոսող մեծ թվով բանվորների արհմիությունների միասնական ճակատը։

Կանադայի բանվոր դասակարգի առաջավոր խավերի հայացքներն ազգային պրոբլեմի վերաբերյալ ամենահստակ կերպով արտահայտում են Քվեբեկի և Կանադայի կոմունիստական կուսակցությունները։ Քվեբեկի կոմունիստական կուսակցությունը որպես հատուկ կազմակերպություն առաջացել է 1965 թ., բայց նա գործում է Կանադայի կոմունիստական կուսակցության կառուցվածքի շրջանակներում։ Կանադական կոմունիստները նշում են, որ ֆրանս-կանադական ազգի ինքնորոշման և կոնֆեդերացիայի մեջ նոր սահմանադրությանը համապատասխան անգլիական ու ֆրանսիական Կանադայի կամավոր իրավահավասար միավորման իրավունքի ճանաչման հիման վրա ազգային հարցի դեմոկրատական լուծումը կուժեղացներ ամբողջ Կանադայի աշխատավորների պայքարն ինչպես ամերիկյան կապիտալի էքսպանսիայի, այնպես էլ մոնոպոլիաների տիրապետության դեմ ամբողջությամբ վերցրած։

Կանադայի արտաքին քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Կանադայի և ԱՄՆ-ի միջև ստեղծված ռազմաքաղաքական փոխադարձ համաձայնության համակարգը պահպանվեց նաև հետպատերազմյան տարիներին։ Դեռ ավելին, այն լրացվեց ՆԱՏՕ-ին Կանադայի մասնակցությամբ, Կանադայի տարածքում կանադա-ամերիկյան ռազմական բազաների գոտու (ՆՕՐԱԴ) և մի շարք այլ ռազմաքաղաքական և ռազմատնտեսական կազմակերպությունների ստեղծմամբ։ Ամբողջությամբ Կանադան հետպատերազմյան տարիներին գտնվում էր ԱՄՆ-ի ընդհանուր արտաքին քաղաքական կուրսի ազդեցության ոլորտում։ Միաժամանակ Կանադան մտնում է բրիտանական համագործակցության կազմի մեջ և մասնակցում նրա մարմինների աշխատանքին։ Ներիմպերիալիստական հակասությունների աճի կապակցությամբ 60-ական թվականներին դրսևորվում է երկրի ավելի մեծ արտաքին քաղաքական ինքնուրույնության միտումը։ Կանադան չհետևեց Կուբայի տնտեսական բլոկադայի ԱՄՆ-ի կուրսին։ Կանադական գործարար շրջաններում աճում են սոցիալիստական երկրների հետ տնտեսական հարաբերություններն ընդարձակելու պահանջները։ Այդ փոփոխությունների վրա ազդեցություն գործեց ինքնուրույն արտաքին քաղաքական կուրս վարելու համար կանադական ժողովրդի պայքարը։ Կանադան վերացրեց Անգլիայից նախկին գաղութային կախվածության որոշ մնացուկներ. 1947 թ. օրենք ընդունվեց կանադական քաղաքացիության մասին, 1965 թ. կայացավ կանադական դրոշակի բարձրացման պաշտոնական արարողությունը. «Օ՜, Կանադա» հայրենասիրական երգի մեղեդին դարձավ ազգային հիմնը։

Հետպատերազմյան առաջին տարիներին սովետա-կանադական հարաբե-

ռությունների զարգացման գործում նկատելի առաջադիմություն ձեռք չբերվեց։ 50-ական թվականների կեսից և հատկապես 60-ական թվականներին սովետա-կանադական հարաբերությունների բարելավման միտումն ավելի հստակորեն դրսևորվեց։ Դրան նպաստեցին առևտրի, գիտատեխնիկական և կուլտուրական փոխանակման վերաբերյալ մի շարք համաձայնագրերի կնքումը, սովետական պետական գործիչների այցերը Կանադա, երկու երկրների միջև ուղղակի օդային և ծովային կանոնավոր հաղորդակցության հաստատումը։ 1971 թ. հունվարին ՍՍՀՄ-ի և Կանադայի միջև համաձայնագիր կնքվեց համագործակցության և արդյունաբերության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների կիրառման վերաբերյալ, ստեղծվեց համագործակցության սովետա-կանադական խառն հանձնաժողով։ 1971 թ. մայիսի 19-ին ստորագրված «Կոնսուլտացիաների մասին սովետա-կանադական արձանագրությունը» նախատեսում է երկու երկրների պաշտոնական ներկայացուցիչների կանոնավոր կոնսուլտացիաներ և հանդիպումներ միջազգային պրոբլեմներն ու երկկողմ հարաբերությունների հարցերը քննարկելու համար։

ԳԼՈՒԽ 16

ՀՈՒՆԱՍՏԱՆ

1946—1949 թթ. քաղաքացիական պատերազմը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հունաստանի ռեակցիոն-միապետական ուժերն անգլո-ամերիկյան իմպերիալիզմի պաշտպանությամբ գտնվելով իշխանության գլուխ, ձգտեցին քաղաքացիական պատերազմ հրահրել, որպեսզի ուղղակի ընդհարմամբ ոչնչացնեն դեմոկրատական շարժումը։

Սկզբնական շրջանում, Վարկիզյան համաձայնությունից հետո, ՀԿԿ-ն իր ջանքերն ուղղեց քաղաքացիական պատերազմը կանխելուն։ Այս ընթացքը ջերմ պաշտպանություն գտավ հույն ժողովրդի կողմից։ Սակայն ՀԿԿ-ի ղեկավարությունը չկարողացավ օբյեկտիվորեն գնահատել այդ ժամանակաշրջանում երկրում ստեղծված իրադրությունը, որը հետագայում հասցրեց մի շարք սխալների, որոնցից օգտվեց ռեակցիան։ 1946 թ. մարտին ձախ ուժերը բոյկոտի ենթարկեցին ընտրությունները, որը միապետականներին և ֆաշիստներին հնարավորություն տվեց պառլամենտում մեծամասնություն գրավելու։ Դեմոկրատների դեմ տեռորի ուժեղացումը տարերային դիմադրություն առաջացրեց։ Երկիրը մտավ քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը, որին ձախ ուժերը դեռևս նախապատրաստված չէին։

Այսպիսով, ՀԿԿ-ն զինված պայքարի ներգրավվեց այն պայմաններում, երբ դեռևս հեղափոխական իրադրություն չէր հասունացել։ Զինված պայքարին չէր նպաստում նաև միջազգային իրադրությունը։ ՀԿԿ-ի ղեկավարությունն այդ պայքարի համար համապատասխան կազմակերպչական-տեխնիկական նախապատրաստություն չէր անցկացրել։ Ավելի քան մեկ և կես տարի ձեռքից բաց թողնվեց, և միայն 1947 թ. սեպտեմբերին ՀԿԿ-ն որոշեց իր բոլոր ուժերը կենտրոնացնել զինված ազգային-ազատագրական պատերազմի համար։ Շատ դժվարին պայմաններում էր ստիպված պայքար մղել 1946 թ. հոկտեմբերին անջատ-անջատ ջոկատներից ստեղծված Հունաստանի դեմոկրատական բանակը (ՀԴԲ)։

1946 թ. ընտրություններից հետո հունական ռեակցիան, հենվելով անգլո-ամերիկյան իմպերիալիզմի պաշտպանության և ԱՄՆ-ի ռազմատնտեսական օգնության վրա, ստեղծեց բանակ և ոստիկանություն, հաստատեց դաժան տեռորի ռեժիմ։ Յոթ տարվա ընթացքում, սկսած 1944 թ. նոյեմբերից, այդ օգնությունը կազմեց ավելի քան 3,7 միլիարդ դոլար։ Քաղաքացիական պատերազմին անգլո-ամերիկյան իմպերիալիստների բացահայտ միջամտությունը հունական ռեակցիային հնարավորություն տվեց 1949 թ. ամռանը ռազմական լայն կամպանիա անցկացնել։ Հունաստանի դեմոկրատական բանակը երեք տարվա հերոսական ճակատամարտերից հետո ստիպված էր դադարեցնել պայքարը։ Դեմոկրատական ուժերը քաղաքացիական պատերազմում կորցրեցին իրենց ավելի քան 75 հազար լավագույն մարտիկներին։

Հունաստանի տնտեսական դրությունը քաղաքացիական պատերազմից հետո

Քաղաքացիական պատերազմում դեմոկրատական ուժերի պարտությունը հասցրեց Հունաստանում ոստիկանական ռեժիմի հաստատմանը, որը ենթարկվում էր ամերիկյան իմպերիալիզմի շահերին։ 1946—1949 թթ. մտցված շատ «արտակարգ օրենքներ» ուժի մեջ մնացին նաև 1952 թ. հունվարին սահմանադրական կարգի վերականգնումից հետո էլ։ Հույն ժողովրդի հազարավոր լավագույն զավակներ, կոմունիստներ մահապատժի ենթարկվեցին կամ մահացան բանտերում։ Նրանց մեջ էր նաև Հունաստանի փառաբանված ժողովրդական հերոս Նիկոս Բելոյանիսը, «մեխակով մարդը», որը դարձավ հույն ժողովրդի արիության խորհրդանիշը։ 1952 թ. ամերիկյան իմպերիալիստները իշխանության գլուխ կանգնեցրին 1951 թ. կազմավորված «Հունական հավաք» ռեակցիոն կուսակցությունը՝ մարշալ Պապագոսի գլխավորությամբ։ Այդ կուսակցությունն արտահայտում էր խոշոր ֆինանսա-արդյունաբերական մոնոպոլիստական բուրժուազիայի և կալվածատերերի շահերը։ Երկիրը ներքաշվել էր ՆԱՏՕ-ի ագրեսիվ բլոկի մեջ, իսկ 1953 թ. հույն-ամերիկյան երկկողմանի պայմանագրի հետևանքով Հունաստանի ամբողջ տարածքը, տրանսպորտային միջոցները, նավահանգիստները, օդանավակայանները, հաղորդակցման ուղիները, պահեստները և զինված ուժերը փաստորեն ընկան ԱՄՆ-ի վերահսկողության տակ։ Արտասահմանյան մոնոպոլիաները Հունաստանի էկոնոմիկայում հրամանատարական պոստեր էին գրավում։ Այսպես, եթե 1938 թ. արտասահմանյան կապիտալ ներդրումների բաժինը կազմում էր 52 %, ապա 1960 թ. 67 % էր։ 1962 թ. «Ընդհանուր շուկայի» մեջ ընկերության անդամի իրավունքներով Հունաստանի մտնելը հասցրեց նրա էկոնոմիկան արտասահմանյան մոնոպոլիաներին հետագա ենթարկելուն։ Մեծ չափով աճեց պետական պարտքը՝ 1967 թ. հասնելով ավելի քան 34 միլիարդ դրահմի, որից 17 միլիարդ դրահմը կազմում էր արտաքին պարտքը։

Հունական մոնոպոլիստական բուրժուազիան, հարմարվելով այդ իրադրությանը և համագործակցելով արտասահմանյան մոնոպոլիաների հետ, զոհաբերեց հույն ժողովրդի ազգային շահերը։ Դա հետպատերազմյան տարիներին ազդեց էկոնոմիկայի բնույթի, նրա հետամնաց, ագրարային-հումքային կառուցվածքի պահպանման վրա։ 60-ական թվականների վերջին ինքնագործ բնակչության 50,6 %-ն զբաղված էր գյուղատնտեսության մեջ, որտեղ ստեղծվում էր ազգային եկամտի 27 %-ը։ Վարելահողի համարյա կեսը գտնվում էր կալվածատերերի ձեռքին, որոնք դրանք վարձակալությամբ տալիս էին հողազուրկ և սակավահող գյուղացիներին։ Մոտ 800 հազար գյուղացիների հասնում էր մեկ հեկտարից էլ պակաս հողակտոր։

Հունաստանի ինքնագործ բնակչության մոտավորապես 30 %-ը զբաղված

էր սպասարկման հատվածում։ ԱՄՆ-ի և մյուս երկրների մոնոպոլիաները արհեստականորեն արգելակում էին Հունաստանի էկոնոմիկայի զարգացումը, պահպանելով էկոնոմիկայի գերազանցապես ագրարային բնույթը։ Վերջին տարիներին որոշակի զարգացում ստացան արդյունաբերության մետալուրգիական, մեքենաշինական, նավաշինական, քիմիական և նավթավերամշակման ճյուղերը, բայց այդ զարգացումը շատ բանով կապված էր ռազմականացման հետ, հիմնականում Հունաստանում գերիշխում էր թեթև արդյունաբերությունը։ Այսպես, օրինակ, տեքստիլ, յուղի, սննդի և կաշվի արդյունաբերության մեջ զբաղված էր արդյունաբերական բոլոր բանվորների ավելի քան 50%-ը։

Ներքաղաքական պայքարը 1950—1965 թթ.

Չնայած քաղաքացիական պատերազմում (1946—1949) իրենց պարտությանը և ռեակցիայի տեռորին, Հունաստանի դեմոկրատական ուժերը շարունակում էին պայքարը։ 1950 թ. պառլամենտական ընտրություններում ձախ կազմակերպությունները և խմբերը հանդես եկան համատեղ, կազմակերպելով «Դեմոկրատական միություն» կոալիցիան։ Նրանք պառլամենտում նվաճեցին 30 տեղ։

Սանձարձակ ռեակցիայի դժվարագույն պայմաններում կոմունիստները կազմակերպում էին բանվոր դասակարգի և աշխատավորների պայքարն իրենց ամենօրյա կարիքների, քաղաքական ազատությունների հաստատման, մահապատիժների դադարեցման, քաղաքական բանտարկյալների ազատման համար։ Այդ պայքարը ավելի կազմակերպված բնույթ ընդունեց 1951 թ. հետո դեմոկրատական կուսակցությունների և խմբերի՝ միասնական, դեմոկրատական ձախ բլոկի (ԷԴԱ) ստեղծումից հետո։ Նրա մեջ մտան կոմունիստները, սոցիալիստները և ձախ դեմոկրատները։ ԷԴԱ-ի գլխավոր նպատակն էր դեմոկրատական ուժերը միավորել Հունաստանում դեմոկրատական փոփոխությունների համար մղվող պայքարում։

Հունաստանի դեմոկրատական շարժման կարևորագույն փուլ բացեց ՀԿԿ Կենտկոմի և ԿՎՀ-ի 6-րդ ընդլայնված պլենումը (1956)։ Պլենումը գնահատական տվեց 7-րդ համագումարից (1945) մինչև 1956 թվականն ընկած ժամանակամիջոցում կուսակցության գործունեությանը։ 1957 թ. ընդունված «ծրագրային դեկլարացիան» խնդիր էր դնում բանվոր դասակարգի ղեկավարությամբ ստեղծել համազգային դեմոկրատական ճակատ՝ հակաիմպերիալիստական դեմոկրատական հեղափոխություն իրականացնելու համար, որը կարող է ուղի բացել Հունաստանում հետագա սոցիալիստական վերափոխումների համար։ Հետագա իրադարձությունները հաստատեցին ՀԿԿ-ի նոր գծի ճշտությունը։ Ժողովրդական զանգվածների շրջանում աճեց կոմկուսի և ԷԴԱ-ի հեղինակությունն ու ազդեցությունը։ Ձախերը դիրքեր գրավեցին արդյունաբերական կենտրոններում, ուժեղացավ նրանց ազդեցությունը գյուղացիության վրա։

1958 թ. մայիսի ընտրություններում ԷԴԱ-ի օգտին տրվեց մոտ 1 միլիոն ձայն, կամ ընտրողների ընդհանուր թվի 24,4%-ը։ 1958 թ. ընտրությունների արդյունքները դեմոկրատական փոփոխությունների հասնելու, ազատության վերականգնման և երկրի ազգային շահերին պատասխանող Հունաստանի կողմից անկախ արտաքին քաղաքականություն վարելու հույն ժողովրդի ձգտման համոզիչ ապացույցը հանդիսացան։

Ռեակցիայի գլխավոր ուժն այն ժամանակ «Ազգային ռադիկալ միություն» կառավարող կուսակցությունն էր (ԷՌԷ)։ Կառավարությունը ձախ ուժերի վրա դաժան ռեպրեսիաներ էր տեղում։ Նա ընդարձակեց իր մասնակցությունը «սառը պատերազմին», տալով, մասնավորապես, իր համաձայնությունը Հունաստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ռազմական բազաների կառուցմանը, և մերժվեց ՍՍՀՄ-ի ու Բալկանյան երկրների՝ Բալկանները և Միջերկրական ծովի արևելյան շրջանը խաղաղության գոտու վերածելու առաջարկությունը։

ԷՌԷ-ի կառավարության հակաազգային քաղաքականությունը հույն ժողովրդի մեծամասնության դժգոհության աճ առաջ բերեց։ 50-ական թվականների վերջին սրվեցին հակասությունները արտաքին իմպերիալիստական ուժերի հետ համագործակցած տեղական պլուտոկրատական օլիգարխիայի և հիմնական հասարակական դասակարգերի ու խմբերի՝ բանվոր դասակարգի, գյուղացիների, քաղաքի միջին խավերի, ազգային բուրժուազիայի միջև։ Դեմոկրատիայի համար պայքարի առաջին շարքերում ընթանում էր բանվոր դասակարգը։ Գործադուլային շարժումը գնալով ընդունում էր ավելի եռանդուն բնույթ։ Եթե 1962 թ. գործադուլավորների թիվը կազմում էր 450 հազար, ապա 1963 թ. այն բարձրացավ մինչև 750 հազարի։ Դեմոկրատական շարժման մարտական ջոկատ դարձավ երիտասարդությունը։ Այդ ժամանակաշրջանում ուժեղացավ գյուղացիների և քաղաքի միջին խավերի պայքարը։ Զանգվածային շարժման միասնության ամրապնդումը լրջորեն խախտեց ռեակցիոն ոստիկանական ռեժիմը։

Ռեակցիան դիմեց բացահայտ տեռորիստական գործողությունների։ Սալոնիկում սպանվեց խաղաղության հունական կոմիտեի նախագահի տեղակալ, պառլամենտի դեպուտատ Գրիգորիոս Լամբրակիսը։ Լամբրակիսի թաղումը վերածվեց մարտական ցույցի, որով ժողովրդի կես միլիոնանոց զանգվածը իր զայրույթը և վրդովմունքը արտահայտեց կառավարության տեռորիստական քաղաքականության նկատմամբ։ Նա ստիպված էր հրաժարական տալ։

1963 թ. նոյեմբերի և 1964 թ. ընտրություններում աջերը պարտություն կրեցին։ Իշխանության գլուխ անցավ «Կենտրոնի միություն» կուսակցության կառավարությունը՝ Գեորգ Պապանդրեուի գլխավորությամբ։ «Կենտրոնի միությունը» մի կոալիցիա էր, որ միավորում էր ինչպես մոնոպոլիստական բուրժուազիայի մի մասի ներկայացուցիչներին, այնպես էլ հակամոնոպոլիստական դեմոկրատական տարրերին։ Ժողովրդական զանգվածների ճնշման տակ Պապանդրեուի կառավարությունը 1964—1965 թթ. չնայած տատանումներին և ռեակցիային արած զիջումներին, դիմեց երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի դեմոկրատացման որոշ միջոցառումների անցկացմանը։ Սակայն նա ձեռք չտվեց ռեակցիայի հիմնական դիրքերին, պետական ապարատը և հատկապես բանակը շմաքրեց ֆաշիստական տարրերից։ Այդ ուժերի ճնշումը երկիրը հասցրեց ռեակցիոն պետական հեղաշրջման։

Ռազմաֆաշիստական դիկտատուրայի հաստատումը

1965 թ. հուլիսի 15-ին Կոնստանտին թագավորը, հենվելով ԱՄՆ-ի իմպերիալիզմի պաշտպանության վրա, իշխանությունից հեռացրեց «Կենտրոնի միությանը»։ Ի պատասխան այդ պետական հեղաշրջման, երկրում ծավալվեց դեմոկրատական ուժերի բողոքի լայն շարժում։ Հունաստանի բոլոր շրջանների հարյուր հազարավոր մարդիկ, հակամոնոպոլիստական բոլոր դասակարգերի և խավերի ներկայացուցիչները պահանջում էին վերականգնել սահմանադրական կարգը և դեմոկրատական ազատությունները։ Միայն 1965 թ. հուլիսի 16-ից մինչև օգոստոսի 29-ը երկրում եղավ մոտ 400 զանգվածային ժողովրդական ելույթ։ Դիմադրությունը, որ հայտնի է իբրև 1965 թ. ամառային «70 օրերի» պայքար, եղավ դեմոկրատիայի ուժերի և ռեակցիայի ուժերի կարևորագույն փորձարկում։ «Կենտրոնի միության» պարագլուխների տատանման և համաձայնողականության պատճառով դեմոկրատական լագերում բավականաչափ միասնություն չկար։ Արդյունքը եղավ այն, որ դեմոկրատական ուժերը չկարողացան խոչընդոտել ռեակցիայի դիրքերի ամրապնդմանը։

Թագավորական արքունիքը և աջ շրջանները փորձեցին ընտրություններ անցկացնելով օրինականացնել պետական հեղաշրջումը։ Ընտրությունները նշանակվեցին 1967 թ. մայիսի 28-ին։ Սակայն զանգվածային դեմոկրատական

շարժման աճի պայմաններում ընտրությունների եզրի նկատմամբ հունական ռեակցիայի և ՆԱՏՕ-ի երկրների իմպերիալիստական շրջանների երկյուղը ներանց հրեց պետական նոր հեղաշրջման ուղին։ 1967 թ. ապրիլի 21-ին, պատերազմի կամ ներքին հեղափոխության դեպքում Հունաստանի համար ՆԱՏՕ-ի մշակած «Պրոմեթևս» գաղտնի պլանի համաձայն, կատարվեց ռազմաֆաշիստական հեղաշրջում։ Իշխանության գլուխ անցավ զինվորական խունտան։

Դեմոկրատական շարժմանը լուրջ հարված հասցվեց։ Նորից բանտերը և համակենտրոնացման ճամբարները նետվեցին հազարավոր դեմոկրատներ և ամենից առաջ ԷԴԱ-ի ու ՀԿԿ անդամները, վերացվեցին դեմոկրատական ազատությունների վերջին մնացորդները։

Հեղաշրջումից անմիջապես հետո ՀԿԿ-ն ժողովրդին ուղղված իր դիմումում կոչ արեց ակտիվ դիմադրություն ցույց տալ ֆաշիստական դիկտատուրային։

Հասկանալով, որ արդի ժամանակաշրջանում բացահայտ տեռորիստական ֆաշիստական դիկտատուրան հասարակական համակրանք չի վայելում, իշխանության գլուխ անցած խունտան հայտարարեց իր ռեժիմը «լիբերալացնելու» և դեմոկրատիան «վերականգնելու» մտադրությունների մասին։ 1968 թ. մշակվեց և ձևականորեն մտցվեց նոր սահմանադրություն, որի համաձայն Հունաստանը հայտարարվում էր սահմանադրական միապետություն։ Թագավորի լիազորություններն իջեցվել էին մինչև պետության ղեկավարի նրա ձևական ճանաչումը։ Իշխանության ամբողջ կառավարումը կենտրոնացված էր խունտայի ձեռքում։ Նա էր նշանակում պրեմիեր մինիստրին, մինիստրներին, հաստատում էր օրենքները, ստեղծում և ցրում էր պառլամենտը։

Սակայն խունտային չհաջողվեց ձեռք բերել որևէ նշանակալից սոցիալական հենարան, և նա չհամարձակվեց ուժի մեջ դնել ամենակարևոր սահմանադրական հոդվածներ, որոնք վերաբերում էին քաղաքական իրավունքներին և ազատություններին, պառլամենտի ընտրություններին և գործունեությանը։ Բուն խունտայի շարքերում միասնության բացակայությունը, կառավարությունում հաճախակի վերատեղափոխումները և գործադիր ու օրենսդրական իշխանության՝ խունտայի ղեկավար Գ. Պապադոպուլոսի ձեռքում կենտրոնացումը վկայում էին ռեժիմի ճգնաժամի մասին։

Դիկտատուրան դաները էլ ավելի լայն բացեց արտասահմանյան կապիտալի Հունաստան թափանցելու համար, այդ նպատակով ստեղծվեցին բարենպաստ պայմաններ, ավելացավ պետական պարտքը, Հունաստանի առևտրական հաշվեկշիռը շարունակում էր մնալ պասիվ, ինֆլյացիան իջեցնում էր բանվորների և ծառայողների կենսամակարդակը։ Նախկին համաձայնագրերի և Պիրեյում ամերիկյան 6-րդ նավատորմի մշտական բազայի ստեղծման մասին Հունաստանի ու ԱՄՆ-ի կառավարությունների միջև 1971 թ. ստորագրված պայմանագրի համաձայն Հունաստանում ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը հակասում էր Հունաստանի ազգային շահերին։

1974 թ. հուլիսին Կիպրոսում հունական զինվորականության կողմից հրահրած պետական հեղաշրջումը վերջին հաշվով արագացրեց ռազմական դիկտատուրայի սնանկացումը։ Հունաստանում վերականգնվեցին սահմանադրական կարգերը։ Ռազմական դիկտատուրայի տապալումը Հունաստանի դեմոկրատական ուժերի մեծ հաղթանակն էր։

ԳԼՈՒԽ 17

ԻՍՊԱՆԻԱ

Ֆաշիստական դիկտատուրան Իսպանիայում

1939 թ. ապրիլին ամբողջ Իսպանիայում հաստատվեց ֆաշիստական դիկտատուրա, որն արտահայտում էր ֆինանսաարդյունաբերական և կալվածատիրական օլիգարխիայի ամենառեակցիոն շրջանների շահերը։ Պետության գլուխ կանգնեց արտակարգ լիազորություններով օժտված դիկտատոր (կառուդիլիո) գեներալ Ֆ. Ֆրանկոն։ Ֆաշիստական տիրապետության գլխավոր զենքը տեռորն էր, որ իրականացնում էին բանակը, ոստիկանությունը, ֆաշիստական ջոկատները։ Ըստ պաշտոնական տվյալների, 1939 թ. ապրիլից մինչև 1944 թ. հուլիսն ընկած ժամանակաշրջանում ռազմական տribունալները մահվան դատավճիռ են կայացրել 192682 հակաֆաշիստների նկատմամբ։ Տասնյակ հազարավոր մարդիկ գնդակահարվել են առանց դատի։ Ֆաշիստական դիկտատուրայի քաղաքական համակարգում գլխավորող դերը էր գրավում «ավանդականների և ԽՄՆՍ-ի իսպանական ֆալանգա» ֆաշիստական կուսակցությունը։ Նրա գլուխ նույնպես կանգնած էր Ֆրանկոն, որն անձամբ էր նշանակում ամբողջ կուսակցական ղեկավարությունը։ Երկրում չկար իշխանության ոչ մի ներկայացուցչական օրենսդիր մարմին։ 1942 թ. ստեղծված կորտեսներն ընդհանուր ոչինչ չունեին հանրապետական կորտեսների (պառլամենտների) հետ։ Դիկտատորն էր նշանակում կորտեսների բոլոր անդամներին։ Նրանք միայն խորհրդակցական մարմին էին, որոնք «պետության ղեկավարի լիազորություններին վնաս չհասցնող» օրենքներ էին առաջարկում։

Ֆաշիստական դիկտատուրան ձգտում էր զսպել բանվոր դասակարգին։ Երկրում ստեղծվեցին կառավարական «ուղղահայաց» արհմիություններ, որոնց ղեկավարում էր ֆալանգիստական կուսակցությունը։ Այդ արհմիությունների մեջ մտնում էին այս կամ այն ճյուղի բոլոր բանվորները, ձեռնարկատերերը և տեխնիկական-կառավարչական անձնակազմը, ղեկավար պոստերը գրավում էին վերևից նշանակվող ֆալանգիստական կուսակցության անդամները։

Ֆաշիստական դիկտատուրայի կարևոր հենարանը կաթոլիկական եկեղեցին էր։ Ֆրանկիզմը վերադարձրեց նրա նախկին արտոնությունները, պետական նպաստները, բոլոր ուսումնական հաստատություններում կրոնի պարտադիր դասավանդումը, բոլոր հրատարակչությունների և թատերական ներկայացումների վրա եկեղեցական ցենզուրայի հաստատումը, հարկերի վճարումից ազատելը, ամուսնության գործերով նրա լիակատար իրավասությունը և այլն։ 1941 թ. Վատիկանի և ֆրանկոյական կառավարության միջև համաձայնագիր ստորագրվեց, որը 1953 թ. ամրապնդվեց համաձայնությամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանկոյական ռեժիմը պաշտպանում էր իտալո-գերմանական ագրեսորներին։ Պաշտոնապես Սովետական Միությանը պատերազմ չհայտարարելով, ֆրանկոյական Իսպանիան սովետա-գերմանական ռազմաճակատ ուղարկեց «կապույտ դիվիզիան», որն իր կազմում ուներ ավելի քան 50 հազար մարդ։ 1939 թ. մարտից հանդիսանալով Հակակոմինտերնական պակտի անդամ, Իսպանիան երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մշտապես օգնում էր հիտլերյան Գերմանիային։ Իրենց հերթին Անգլիան և ԱՄՆ-ը ձգտում էին Իսպանիային ռազմական կոնֆլիկտից հեռու պահել և միաժամանակ թույլ չտալ հակաֆաշիստական պատերազմի կրկնվելը բուն Իսպանիայում։

Հիտլերյան Գերմանիայի պարտությունը և եվրոպական մյուս երկրներում ֆաշիստական ռեժիմների տապալումը Ֆրանկոյին ստիպեցին մաներել։ 1945 թ. մայիսի 8-ին, նացիստական Գերմանիայի կապիտուլացման օրը, Ֆրանկոն հայտարարեց նացիստական Գերմանիայի հետ կապերը խզելու և «առանցքի» պետությունների ամբողջ սեփականությունը Իսպանիայում բռնագրավելու մասին, հուլիսի 17-ին նա հրապարակեց «Իսպանացիների խարտիան», որը սահմանում էր իսպանական քաղաքացիների «իրավունքներն ու պարտականությունները»։ «Խարտիան» ցույց տվեց, որ իր դիկտատուրան պաշտպանելու համար ֆրանկոյական ռեժիմը կիրառում է ոչ միայն տեռորը և բռնությունը, այլև ճարպկորեն օգտվում է սոցիալական և քաղաքական դեմագոգիայի զենքից։ «Խարտիան» հռչակում էր խոսքի, ժողովների և միավորումների ազատություն, բայց մի վերապահությամբ՝ ազատություն ֆրանկիզմի կողմնակիցների համար։ Հռչակված ազատություններն իրական էին կաուդիլիոյին հավատարմության շրջանակներում։ «Խարտիան» բովանդակում էր պետության խոստումը՝ օգնություն ցույց տալ աղքատության մեջ գտնվող աշխատավորներին և բազմազավակ ընտանիքներին։ Սակայն այդ խոստումներն ամրապնդված չէին համապատասխան պետական օրենքների ընդունմամբ։

Պետական–մոնոպոլիստական կապիտալիզմը

Ֆաշիստական դիկտատուրան արագացրեց պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը։ 1941 թ. ստեղծված արդյունաբերական ազգային ինստիտուտը (ԱԱԻ) դարձավ ֆինանսաարդյունաբերական օլիգարխիայի գործիքը, որի օգնությամբ նա ստեղծում կամ վերացնում էր ձեռնարկություններ, վերահսկում էր մատակարարումը, վաճառքը, սահմանում գները և աշխատավարձը։ Ֆինանսաարդյունաբերական և կալվածատիրական օլիգարխիայի հարստացմանը մինչև 1959 թ. նպաստեց ավտարկիայի (ինքնապահովման) քաղաքականությունը։ Նրա կարևոր բաղադրամասը պրոտեկցիոնիզմն էր։ Ներքին շուկայում տիրապետում էր մոնոպոլիստական միավորումների նեղ խումբը։ Պետական սեկտորի ձեռնարկությունները 1965 թ. տալիս էին սնդիկի արտադրանքի 95%-ը, նավթի վերամշակման 82%-ը, երկաթի արտադրության 41%-ը, ալյումինի՝ 82%-ը, ավտոմոբիլների՝ 60%-ը, առանցքակալների՝ 95%-ը, վիսկոզի՝ 50%-ը։ Պետական ձեռնարկություններն իրականացնում էին օդային բոլոր փոխադրումները, հեռախոսային-հեռագրական կապը։ Ֆրանկոյական պետությանն էր պատկանում երկրում բաժնետիրական կապիտալի 28%-ը։ Պետական հատվածը դարձավ ոչ միայն օլիգարխիայի, այլև ֆաշիստական բյուրոկրատիայի և բռնության ապարատի լայն շրջանի հարստացման կարևոր աղբյուրը։ Երկրի 7 խոշորագույն բանկեր (112 ընդհանուր թվից) 1965 թ. իրենց տրամադրության տակ ունեին ավանդների 70%-ը և տրվող վարկերի 60%-ը։ Արդյունաբերության ֆինանսավորման համար ֆաշիստական պետությունը լայնորեն օգտագործում էր «հարկադրական կուտակումը» (վերցվում էր աշխատավարձի մի մասը՝ մինչև 20%-ը) և ապահովագրական ֆոնդերը, որոնք նա լրիվ տնօրինում էր։

Իսպանիայում կան բազմաթիվ մանր ու միջին ձեռնարկություններ, որոնք առաջացել և գործում են ավտարկիայի ու բարձր պրոտեկցիոն տուրքերի պայմաններում։ Մանր ձեռնարկություններում (թվով մինչև 50 բանվոր) զբաղված է բանվոր դասակարգի ավելի քան 40 տոկոսը։ Այդ մանր ձեռնարկությունները հաճախ պատվերներ են ստանում խոշոր մոնոպոլիաներից և գտնվում նրանցից կախվածության մեջ։

Մինչև 60-ական թվականները Իսպանիային բնորոշ էին արդյունաբերական զարգացման դանդաղ տեմպերը։ Հաջորդ տարիներին արտադրության միջին

տարեկան աճը արագացավ, կապված գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն օգտագործելու և պետական-մոնոպոլիստական կարգավորման ուժեղացման հետ։ 60-ական թվականների արդյունաբերական զարգացումը Իսպանիան վերածեց ինդուստրիալ-ագրարային երկրի։ 1972 թ. ազգային եկամտի 36%-ը ստեղծվում էր արդյունաբերության մեջ, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 11%-ը։ Ազգային եկամտի 53%-ը ստեղծվում է սպասարկման սեկտորում։ Բայց արդյունաբերական վերելքը 60-ական թվականներից ուղեկցվում էր ինֆլյացիայով, որից տուժում էին աշխատավոր զանգվածները։

Երկրի գյուղատնտեսությունը հետպատերազմյան տարիներին խրոնիկական ճգնաժամ էր ապրում։ Պահպանվում էր խոշոր կալվածատիրական հողատիրությունը։ 50 հազար խոշոր հողատերեր ունեին ավելի քան 22 միլիոն հեկտար հող, իսկ 5,5 միլիոն գյուղացիներ՝ միայն 8,5 միլիոն հեկտար (այսինքն յուրաքանչյուր տնտեսության ընկնում է միջին հաշվով 1,4 հեկտար)։ Սակայն Իսպանիայի գյուղատնտեսությունը պետական ու մոնոպոլիստական գնման և վարկային գործակալությունների ընկերությունների միջոցով միացված էր ընդհանուր պետական-մոնոպոլիստական համակարգին։ «Ցորենի ազգային վարչությունը» իրականացնում էր հացահատիկի գնման ու պահպանման մոնոպոլիան, կարգավորում գները, մատակարարում վարկեր և պարարտանյութեր։ Գնման գների մակարդակի որոշման մեջ մեծ դեր էր պատկանում գյուղատնտեսության մինիստրությանը։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետությունը հասցնում էր գյուղի քայքայմանը, այն վնաս էր հասցնում ոչ միայն գյուղացիության բոլոր խավերին, այլև նույնիսկ կալվածատերերի մի մասին, որը հնարավորություն էր ստեղծում ֆրանկոյական դիկտատուրայի դեմ ձևավորել լայն ճակատ։

Ավտարկիայի քաղաքականությունը Իսպանիային չազատեց արտաքին առևտրական հաշվեկշռի ծանր ճգնաժամից։ Արդյունաբերական զարգացման ետ մնալը արտահայտվում է իսպանական արտահանման մեջ արդյունաբերական արտադրանքի ցածր տեսակարար կշռի մեջ (միայն 23%)։ Իսպանիայի արտահանության արժեքը միայն 1/3—1/2-ով է ծածկում ներմուծումը։ Արտաքին առևտրական դեֆիցիտը ծածկվում էր տուրիզմից ստացվող եկամուտներով և արտասահմանում աշխատող իսպանական վտարանդիների դրամական փոխանցումներով։ Արտասահմանյան տուրիզմի զարգացումը կարևոր խթան հանդիսացավ 60-ական թվականների արդյունաբերական վերելքի համար։ 1946 թ. Իսպանիա են այցելել 84 հազար արտասահմանյան տուրիստներ, 1965 թ. 14 միլիոն, 1972 թ. 32,6 միլիոն։ Արտասահմանյան տուրիզմը դարձավ վալյուտայի ստացման գլխավոր հոդվածը։ 60-ական թվականները հայտնի են իբրև զանգվածային տնտեսական վտարանդիության տարիներ. տասնամյակի ընթացքում երկրից հեռացել է ավելի քան 2 միլիոն մարդ։ 1962 թվականից Իսպանիան «Ընդհանուր շուկայի» հետ ասոցիացիայի է ձգտում։

Ֆաշիստական ռեժիմի ճգնաժամը

Հետպատերազմյան առաջին տարիներին դեմոկրատական շարժման ճնշման տակ ամբողջ աշխարհում և բուն Իսպանիայում ֆրանկիզմի լագերը սասանվեց։ Միապետականների, գլխավորապես հողային արիստոկրատիայի, զինվորականության և բարձրագույն պաշտոնյաների մի մասը հակվեց ֆաշիստական դիկտատուրան սահմանադրական միապետությամբ փոխարինելուն և Խուան Բուրբոնի՝ 1931 թ. տապալված Իսպանիայի վերջին թագավոր Ալֆոնս 13-ի որդու թեկնածությունը առաջադրեց իսպանական գահի համար։ Որպեսզի խանգարի ֆաշիստական բլոկի պառակտմանը, Ֆրանկոն 1947 թ. հուլիսի 27-ին հրապարակեց «պետության ղեկավարի պոստը ժառանգելու մասին օրենքը», ըստ որի Իսպանիան հռչակվում էր թագավորություն, ստեղծվում էր թագավորության խորհուրդ և

որոշվում պետության ղեկավարի պոստը ժառանգելու կարգը։ Սակայն այդ ակտը չէր սահմանափակում դիկտատորի արտոնությունները. օրենքի 2-րդ հոդվածը Ֆրանկոյին հռչակում էր պետության ղեկավար։ Օրենքը Ֆրանկոյին իրավունք էր տալիս ուզած պահին և իր հայեցողությամբ նշանակելու իր հաջորդին՝ այնպիսի փոխարինողի, որն էլ կառուցիլյոյի մահվանից, կամավոր հրաժարականից կամ անկարողության ապացուցումից հետո կդառնար Իսպանիայի թագավոր կամ խնամակալ։ Օրենքը Ֆրանկոյին իրավունք էր վերապահում վերացնել փոխարինողի նախկին նշանակումը։ Թագավորական խորհուրդը միայն պետությանը կից խորհրդակցական մարմին էր։ 20 տարուց ավելի Իսպանիան, որ հռչակվել էր թագավորություն, ոչ թագավոր ուներ, ոչ խնամակալ, ոչ էլ Ֆրանկոյին փոխարինող։ Միայն 1969 թ. հուլիսի 22-ին Ֆրանկոն իրեն հաջորդ նշանակեց 30-ամյա արքայազն Խուան-Կառլոս Բուրբոնին։

1957 թ. Ֆրանկոն ֆալանգիստական կուսակցության խիստ անցանկալի անունը փոխեց «Ազգային շարժում» անվանումով։ 50-ական թվականների վերջից կուսակցությունը խոր, երկարատև ճգնաժամ էր ապրում, որը 1967 թ. վերջին հասցրեց նրա փաստական քայքայմանը։ Դրա հետևանքով «Ազգային շարժումը» երկրի քաղաքական կյանքում կորցրեց իր նախկին գերիշխանությունը։

60-ական թվականներին ֆաշիստական դիկտատուրան, թևակոխելով քաղաքական խոր ճգնաժամի ժամանակաշրջանը, ստիպված էր խուսանավել, որպեսզի պահպաներ իշխանությունը և ֆինանսական օլիգարխիայի արտոնությունները։ Այդ մասին են խոսում շատ փաստեր. կառավարության 1962, 1965 և 1969 թթ. վերակառուցումը, նրանից ֆալանգիստական վերջին մինիստրների հեռացումը և դրանց կաթոլիկական գաղտնի «Օպուս դեյ»-ի[1] մինիստրներով կամ նրանց դրածոներով՝ «տեխնոկրատներով» փոխարինումը, 1963 թ. զինվորական արտակարգ տրիբունալի վերացումը, 1966 թվականից «պրոֆեսիոնալ կարգի բոլոր կոնֆլիկտներում» գործադուլի իրավունքի ճանաչումը, մամուլի վերաբերյալ 1965 և 1966 թթ. օրենքների հրապարակումը, որոնք ձևականորեն թուլացնում էին նախնական գրաքննությունը։

Ֆրանկիզմի քաղաքական ճգնաժամն առաջ բերեց բանվորական ու դեմոկրատական շարժում և դրա ազդեցությամբ բուրժուազիայի ավելի նշանակալի խավերի օպոզիցիայի անցնելը։ Որպեսզի խանգարեր օպոզիցիային տարբեր ուժերի մերձենալը, Ֆրանկոն 1966 թ. նոյեմբերի 22-ին կորտեսների առջև բարձրաձայն կարդաց «պետության օրգանական օրենքը» և դեկտեմբերի 14-ին կազմակերպեց «հանրաքվե»։ Այս բոլորը պաշտոնապես ներկայացվում էր իբրև «ժամանակակից Իսպանիայի ռեալ իրականությանը պետական ինստիտուտների հարմարվելու» Ֆրանկոյի ձգտում։ Իրականում դա պատրանք ստեղծելու մի փորձ էր, իբրև թե վերևից կարելի է փոխել ֆաշիստական դիկտատուրայի էությունը։ Հանրաքվեի ընթացքում ընտրողները կարող էին ասել կամ «այո», որը նշանակում էր ֆրանկոյական նոր օրենքի հետ համաձայնելը, կամ «ոչ», որը նշանակում էր երկրում նախկին կարգ ու կանոնի հետ համաձայնությունը։

«Օրգանական օրենքը» պետության ղեկավարի և կառավարության ղեկավարի պաշտոնների բաժանում մտցրեց, որոնք նախկինում կենտրոնացված էին Ֆրանկոյի ձեռքում։ 1968 թ. կառավարության ղեկավար նշանակվեց հետեողական ֆրանկիստ, ծովակալ Կարրերո Բլանկոն (սպանվեց 1973 թ. դեկտեմբերին)։ Նոր օրենքի համաձայն կորտեսների 100 անդամներ, այսինքն նրանց 1/5 մասը, ընտրվում են, բայց ոչ թե ամբողջ բնակչության, այլ միայն ընտանիքների գլխավորների կողմից։ Հռչակվեց դավանանքի ազատություն։

---

[1] «Օպուս դեյ»-ը («աստծու գործը») քաղաքական-կրոնական աղանդ էր, որ սերտորեն կապված էր երկրի ֆինանսական շրջանների հետ։

«Օրգանական օրենքի» ընդունումից հետո ֆրանկոյականները հակահարձակման անցան բանվորական և դեմոկրատական շարժման դեմ։ Սկսվեցին բանվորական հանձնաժողովների ղեկավարների ձերբակալությունները, չեղյալ հայտարարվեցին արհմիութենական պատգամավորների ընտրությունների արդյունքները, 1967 թ. սկզբին բասկերի երկրում, իսկ 1969 թ. սկզբին երեք ամսով նաև ամբողջ Իսպանիայում մտցվեց պաշարողական դրություն։ Սակայն ժողովրդի համընդհանուր հակահարվածը (նույնիսկ եպիսկոպոսների ազգային կոնֆեդերացիան արտահայտվեց պաշարման դրության դեմ) կառավարությանն ստիպեց վերացնել այն։

70-ական թվականների սկզբներին ֆրանկոյական դիկտատուրայի սոցիալական բազան նեղացավ։ Սակայն ռեժիմի էությունը մնաց նախկինը՝ իսպանական ժողովրդին բռնությամբ փաթաթված ֆինանսական օլիգարխիայի և կալվածատերերի խմբի իշխանությունը։

Բանվորական և հակաֆաշիստական շարժումը (1945—1970)

1945—1948 թթ. Իսպանիայում հակաֆաշիստական շարժումը վերելք ապրեց։ Տարբեր օպոզիցիոն քաղաքական ուժերը վտարանդիության մեջ և բուն Իսպանիայում ակտիվացրին իրենց գործունեությունը։ Առաջատար դեր խաղաց ընդհատակում պահպանված միակ՝ Իսպանիայի կոմունիստական կուսակցությունը։ Իսպանիայի առանձին շրջաններում, Արագոնի, Աստուրիայի, Գալիսիայի և Անդալուզիայի լեռնային տարածքներում ստեղծվեցին պարտիզանական ջոկատներ։ Իսպանական հարյուրավոր և հազարավոր հակաֆաշիստներ, որոնք մարտնչել էին ֆրանսիական և այլ երկրների Դիմադրության շարժման շարքերում, անցան սահմանը և մտան պարտիզանական ջոկատները։ Միայն 1945 թ. պարտիզաններն անցկացրին ավելի քան 100 օպերացիա։ 1945 թվականից պարտիզանական շարժումը զարգանում էր վերընթաց գծով։

1945 թ. օգոստոսին Մեքսիկայում ձախ հանրապետական Խոսե Խիրալի գլխավորությամբ ստեղծվեց վտարանդիական նոր կառավարություն։ 1946 թվականի սկզբից մինչև 1947 թ. ամառը հանրապետականների կուսակցության, Կատալոնիայի, բասկերի երկրի ազգային կուսակցությունների և մյուս կազմակերպությունների ներկայացուցիչների հետ նրան մասնակցում էր Իսպանիայի կոմունիստական կուսակցությունը։ Նա առավելագույն ջանքեր էր գործադրում երկրի ներսի հակաֆրանկոյական ուժերը համախմբելու, ժողովրդական զանգվածների ելույթներն ակտիվացնելու համար։ Այս հարցերը քննարկվեցին ԻԿԿ-ի Կենտկոմի 1945 թ. դեկտեմբերին Տուլուզում (Ֆրանսիա) կայացած հետպատերազմյան առաջին պլենումում։ Կենտկոմի հաշվետու զեկուցումը տվեց ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար Դոլորես Իբարուրին, որը 1942 թ. Խոզե Դիասի մահվանից հետո փոխարինել էր նրան։

«Սառը պատերազմի» և ռեակցիայի սկսվելու կապակցությամբ 1947 թ. երկրորդ կեսին իրադրությունն էականորեն փոխվեց։ Սոցիալիստական կուսակցության պարագլուխ Ի. Պրիետոյի գլխավորությամբ հանրապետական վտարանդիների մի մասը վտարանդիական հանրապետական կառավարության ճրագնաժամ ստեղծեց։ 1947 թ. հուլիսին կազմավորվեց նոր կառավարություն, որն իր կազմից վտարեց կոմունիստներին։ Հակաֆաշիստական ճակատը պառակտվեց։ Պրիետոն դարձավ «սառը պատերազմի» և հակակոմունիզմի ձայնափողը։ Ֆրանկոյականությունը վերացնելու այլ ուղի չտեսնելով, բացի Անգլիայի և ԱՄՆ-ի օգնությունից, Պրիետոն հրաժարվեց ձախերի հետ դաշինքից և 1948 թ. նույնիսկ միապետականների հետ համաձայնություն կնքեց («Սան-Խուան դե Լուիսի համաձայնությունը»), որը պաշտոնապես ուղղված էր «ֆրանկոյականության և կոմունիզմի դեմ»։ Ֆրանկոյի հետ իմպերիալիստական տերություն-

ների տնտեսական և դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը ցույց տվեց Պրիետոյի հաշիվների սնանկությունը, սոցիալիստական կուսակցության պարագլուխներին գցեց անտարբերության մեջ և հասցրեց բանվորական զանգվածների շրջանում նրա հեղինակության խիստ անկմանը։

1947—1948 թթ.-ից հակաֆրանկոյական շարժման վերելքի ժամանակաշրջանը փոխարինվեց անկման ժամանակաշրջանով։ Ֆրանկոյական Իսպանիայի միջազգային դրությունն ամրապնդվել էր. հզոր ռևպրեսիվ ապարատը լուրջ հարված էր հասցրել պարտիզանական շարժմանը։ Նոր պայմաններում հարկավոր էր փոխել պայքարի տակտիկան։ 1948 թ. ԻԿԿ ղեկավարության ընդլայնված խորհրդակցությունում վերանայվեց կուսակցության տակտիկական գիծը։ Որոշվեց դադարեցնել պարտիզանական պայքարը։ ԻԿԿ-ն իր անդամներին հանձնարարեց պայքար մղել «ուշղահայաց» արհմիությունների ներսում և հրաժարվել գաղտնի արհմիություններ ստեղծելուց։ ԻԿԿ-ն կոչ արեց անլեգալ աշխատանքը զուգակցել դիկտատուրայի բոլոր մասսայական կազմակերպություններում լեգալ հնարավորությունների հետ։ ՀԿԿ-ի և ԿՄՍԿ-ի[2] նոր տակտիկայի առաջին գրական արդյունքները երևացին 1951 թ. գարնանը։ 1951 թ. մարտի 1-ին Բարսելոնի բանվորները, ի նշան երթևեկության արժեքի բարձրացման դեմ բողոքի, սկսեցին տրամվայով երթևեկելու բոյկոտը։ Բանվորներին միացան ուսանողները, ծառայողները, մանր և միջին բուրժուազիան։ Մարտի 12-ին ԿՄՍԿ-ի կոչով բոյկոտը վերածվեց թանկության դեմ, աշխատավարձի բարձրացման համար, տեռորի դեմ ուղղված համընդհանուր գործադուլի։ Չնայած այն բանին, որ Բարսելոնը փաստորեն օկուպացված էր զորքերի և ոստիկանության կողմից, աշխատավորները հասան մեծ հաղթանակի։ Կառավարությունն ստիպված էր վերացնել տրանսպորտի տարիֆների բարձրացումը, բանվորներին վճարել գործադուլի օրերի աշխատավարձը։ Բարսելոնի իրադարձություններն ալեկոծեցին երկիրը։ Հաջորդ ամիսներին նույն պահանջներով հանդես եկան Մադրիդի, Բիսկայայի, Նավարայի, Գիպուսկոայի և մյուս պրովինցիաների աշխատավորները։

Է՛լ ավելի մեծ նշանակություն ունեցան երկրի բանվորների և դեմոկրատական ուժերի 1956 թ. ելույթները։ Այդ տարվա գարնանն ամբողջ երկրում պրոլետարիատը հանդես եկավ հետևյալ ընդհանուր պահանջներով. սահմանել աշխատավարձի մինիմում, աշխատավարձի շարժական սանդղակով 8-ժամյա աշխատանքային օր և գործադրկության համար նպաստ։ Հատկապես գործադուլները կատաղի էին Կատալոնիայում, Բասկերի երկրում, Գիպուսկոայում։ Դրանք կառավարությանն ստիպեցին 1956 թ. հոկտեմբերին դեկրետ հրապարակել աշխատավարձի բարձրացման և աշխատավարձի մինիմում սահմանելու մասին, աշխատավարձ, որն այնուամենայնիվ մնում էր Եվրոպայում ամենացածրերից մեկը։

1956 թ. գարնանը ուսանողական բուռն ելույթներ եղան Մադրիդում, Բարսելոնում, Սևիլիայում, որոնք լայն արձագանք գտան երկրում։ Ուսանողները պահանջում էին հրավիրել ուսանողների ազգային համագումար և ուսանողական դեմոկրատական կազմակերպություն ստեղծել։ Ուսանողների ելույթներն արտացոլում էին միջին խավերի և բուրժուազիայի մի մասի դժգոհությունը։ Ուսանողների պաշտպանությամբ հանդես եկան ֆալանգայի մի քանի գաղափարախոսներ՝ Դ. Ռիդրուեխոն, Լաին Էնտրալգոն և ուրիշներ։ Ստեղծվեց բուրժուա-լիբերալիստական օպոզիցիան։

1957 թ. սկզբին Ֆրանկոն, իշխանությունն ամրապնդելու նպատակով, կառավարության վերակառուցում անցկացրեց։ Նա, նեղելով ֆալանգիստներին, ուժեղացրեց զինվորականության ներկայացուցչությունը և մտցրեց այն ժամանակ նոր «Օպուս դեյ» քաղաքական ուժը։

60-ական թվականների սկզբից Իսպանիայի բանվորական շարժումը թեվակոխեց նոր փուլ, որի գլխավոր գիծն այսպես կոչված «բանվորական հանձնաժողովների» գործունեությունն էր։ «Բանվորական հանձնաժողովները», որոնք բացի պաշտոնական արհմիություններից և նրանցից դուրս ընտրվում էին բուն բանվորների կողմից ձեռնարկությունների վարչակազմի հետ բանակցություններում իրենց շահերը պաշտպանելու համար, արդեն 1962 թ. գարնանը Աստուրիայի հանքագործների խոշոր գործադուլների ժամանակ գործնականում գոյության իրավունք նվաճեցին։ Նույնիսկ աշխատանքի մինիստրն ստիպված էր «դե ֆակտո» ճանաչել նրանց և նրանց հետ բանակցությունների մեջ մտնել։ ԻԿԿ-ն պաշտպանում էր «բանվորական հանձնաժողովները» և նպաստում նրանց ամենուրեք տարածմանը։ Այդ ժամանակից սկսած բանվորական հանձնաժողովները դարձան քաղաքական կարևոր գործոն։ Դրանք ստեղծվում էին առանձին ձեռնարկություններում, հանքերում, արհեստանոցներում, հետո՝ ըստ արտադրության ճյուղերի (օրինակ, Աստուրիայի հանքագործների, Մադրիդի մետաղագործների և այլն) և նույնիսկ ըստ մարզերի՝ բանվորների ելույթները կոորդինացնելու համար։ 1966 թ. սկզբին, 4-ամսյա լայն քննարկումից հետո, հրապարակվեց Մադրիդի բանվորական հանձնաժողովների առաջին փաստաթուղթը։ Բանվորները պահանջում էին ավելացնել մինիմալ աշխատավարձը, գործազրկության համար նպաստ տալ, միջոցներ ձեռնարկել անվտանգության տեխնիկայի գծով, սահմանել գործադուլի իրավունք, սոցիալական ապահովության բարելավում, ժողովների իրավունք և այլն։ Հետզհետե բանվորական հանձնաժողովները դառնում էին մշտական գործող։ Նրանց հեղինակությունն աճում էր, նրանք հանում տնտեսական, սոցիալական և դեմոկրատական պահանջների կազմակերպում էին աշխատավորների ելույթներ։ Բանվորական հանձնաժողովների օրինակով ստեղծվում էին գյուղատնտեսական բանվորների և գյուղացիների հանձնաժողովներ, որոնք կոորդինացնում էին իրենց գործողությունները։

Ամբողջ երկրում շարունակում էին ակտիվորեն հանդես գալ ուսանողները, պահանջելով ազատ ասոցիացիայի ստեղծում, կրթության ռեֆորմներ, բանվորների պաշտպանություն։ Ազգային ազատության համար շարժումն ուժեղացավ Կատալոնիայի, Բասկերի երկրի, Գալիսիայի ժողովուրդների շրջանում։ Դեմոկրատական շարժմանն ակտիվորեն մասնակցում էին առաջադեմ կաթոլիկները։

Գնալով բուրժուազիայի էլ ավելի լայն խավերն անցնում էին ֆրանկոյականության դեմ օպոզիցիայի լագերը։ Նույնիսկ խոշոր բուրժուազիայի մի մասը գտնում էր, որ ֆրանկոյական դիկտատուրան արդեն չի կարող երաշխավորել ներքին հանգստությունը, մինչդեռ խանգարում է մաներել, խոչընդոտ է «Ընդհանուր շուկային» միանալուն և սոցիալիստական երկրների հետ լայն գործարար հարաբերություններ հաստատելուն։

Իսպանիայի բանվոր դասակարգը, որի թվաքանակն հասնում է 4 միլիոնի, հանդիսանում է հակաֆաշիստական օպոզիցիայի գլխավոր և բոլորից լավ կազմակերպված ուժը։ Բանվոր դասակարգի շրջանում ամենահեղինակավոր կուսակցությունը Իսպանիայի կոմունիստական կուսակցությունն է, որը 1972 թ. անցկացրեց իր 8-րդ համագումարը։ ԻԿԿ-ն հրատարակում և Իսպանիայում տարածում է մամուլի 32 օրգան։ «Մանդո օբրերոն»՝ նրա կենտրոնական օրգա-

---

[2] Կատալոնիայի միացյալ սոցիալիստական կուսակցությունը (այսպես է կոչվում Կատալոնիայի կոմունիստների կուսակցությունը)։

նը, կանոնավոր կերպով լույս է տեսնում ամսական 4 անգամ 100 000 օրինակ տպաքանակով։

Իսպանիայի արտաքին քաղաքականությունը

1945 և 1946 թթ. աշխարհում հակաֆաշիստական շարժումը վերելք էր ապրում, և Եվրոպայի ու Լատինական Ամերիկայի շատ կառավարություններ համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ դիվանագիտական հարաբերությունները խզեցին ֆրանկոյական Իսպանիայի հետ։ 1946 թ. դեկտեմբերին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան որոշում ընդունեց ՄԱԿ-ի անդամներին խորհուրդ տալ՝ իրենց դեսպաններին ետ կանչել Մադրիդից։

1948 թ. «սառը պատերազմի» եռուն շրջանում ֆրանկոյականության միջազգային դրությունը բարելավվեց։ Ֆրանսիան և Անգլիան Իսպանիայի հետ առևտրական համաձայնագիր ստորագրեցին։ Արգենտինան վարկ տվեց՝ հացահատիկ գնելու համար, իսկ ԱՄՆ-ը 1950 թ. 62,5 միլիոն դոլարի փոխառություն տվեց։ 1950 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան մասնակիորեն չեղյալ հայտարարեց իր 1946 թ. որոշումը, թույլատրելով Իսպանիա ուղարկել դեսպաններ ու դեսպանորդներ, որն անհապաղ կատարեցին իմպերիալիստական բոլոր խոշոր տերությունները։ 1952 թ. Իսպանիան դարձավ ՅՈՒՆԵՍԿՈ-ի, իսկ 1955 թ. ՄԱԿ-ի անդամ։

1953 թ. սեպտեմբերի 23-ին ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև ստորագրվեց «Մադրիդյան պակտը», որը կազմված էր երեք ռազմատնտեսական համաձայնագրերից։ Այդ պակտը նախատեսում էր Իսպանիայի տարածքում ստեղծել ԱՄՆ-ի ռազմաօդային և ծովային բազաներ՝ ատոմային ռումբերի իրենց պահեստներով և «Պոլարիս» տիպի ատոմային սուզանավերի կայանքներով հանդերձ։ Փոխարենը ԱՄՆ-ը պարտավորվում էր «օգնություն» ցույց տալ վերազինելու իսպանական բանակը։ 1963 թ. դեկտեմբերին այդ պակտը շարունակելու հետ միաժամանակ 5 տարվա համար ստորագրվեց իսպանա-ամերիկյան համատեղ դեկլարացիա, որը հավասարազոր էր ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև ռազմական և քաղաքական դաշինքի կնքմանը, որը ԱՄՆ-ին պարտավորեցնում էր պաշտպանելու ֆրանկոյական ռեժիմը։

1970 թ. օգոստոսի 6-ին Իսպանիայի արտաքին գործերի մինիստրը Վաշինգտոնում ԱՄՆ-ի հետ նոր համաձայնագիր կնքեց, որը երկու գաղտնի հուշագիր էր պարունակում։ Ըստ այդ համաձայնագրի ԱՄՆ-ը հաջորդ 5 տարիներին (1970—1975) պահպանում էր 4 հիմնական ռազմաօդային և ծովային բազաները և Կադիքս-Սարագոս նավթամուղը։ Բացի այդ, Պիրենեյան թերակղզում ստեղծվում էր ռադարային «նախազգուշացման ցանց»։ Միաժամանակ ԱՄՆ-ը պարտավորվեց իսպանական բանակին ինքնաթիռներ, ուղղաթիռներ և տանկեր տրամադրել։

60-ական թվականներին ֆրանկոյական կառավարությունների արտաքին քաղաքականությունը չէր սահմանափակվում ԱՄՆ-ի հետ ռազմական դաշինքի ամրապնդմամբ։ Միաժամանակ մերձեցում էր կատարվում ԳՖՀ-ի և Ֆրանսիայի հետ։ 1964 թ. ամռանն ստորագրվեց իսպանա-ֆրանսիական համաձայնագիրը՝ Կանարյան կղզիներում ֆրանսիական տիեզերական հրթիռներին հետևելու կայանների շինարարության մասին։

Վաճառահանման շուկաներ փնտրելով, Իսպանիան վերջին տարիներին ձգտում է միանալ «Ընդհանուր շուկային»։

ԳԼՈՒԽ 18

ԲԵԼԳԻԱ

Բելգիան ազատագրումից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Բելգիայում, ինչպես ֆաշիստների զավթած մյուս երկրներում, ծավալվեց Դիմադրության շարժումը, որում վճռական դեր խաղաց կոմունիստական կուսակցությունը։ Դիմադրական շարժումը միավորեց Բելգիայի հայրենասիրական ուժերը և նշանակալի ներդրում կատարեց նրա ազատագրման գործում։

Ազատագրված Բելգիայում գերմանական օկուպացիայի ժամանակ թշնամու հետ գործակցած մոնոպոլիստական բուրժուազիայի դիրքերը լրջորեն թուլացել էին։ Օկուպանտների դեմ պայքարի ընթացքում համախմբվել էին Դիմադրության դեմոկրատական ուժերը։ Հատկապես մեծացել էր Բելգիայի կոմունիստական կուսակցության ազդեցությունը, որի թվաքանակը, չնայած օկուպացիայի տարիներին կրած մեծ կորուստներին, 1945 թ. վերջերին ավելացավ մինչև 100 հազար մարդով։

1944—1947 թթ. կոմկուսի ներկայացուցիչները մտնում էին կառավարության կազմի մեջ։ Կոմունիստների նախաձեռնությամբ Բելգիայում ծավալվեց «Ճակատամարտ արտադրության համար» շարժումը, այսինքն պայքար պատերազմի հասցրած վերքերն արագորեն բուժելու և աշխատավորների դրությունը բարելավելու համար։ Ջանքվածների ճնշմամբ վերականգնվեցին բուրժուա-դեմոկրատական ազատությունները, կանանց տրվեցին ընտրական իրավունքներ, ընդարձակվեցին արհմիությունների իրավունքները։ Աշխատավորները հասան աշխատավարձի նշանակալի բարձրացման և սոցիալական ապահովության միասնական համակարգի ստեղծման։ Այնուամենայնիվ, երկրում իշխանությունը մնաց բուրժուազիայի ձեռքում, որը էկոնոմիկայում և քաղաքականության բնագավառում պահպանեց ամուր դիրքեր և կարող էր հենվել Բելգիայում տեղաբաշխված անգլո-ամերիկյան զորքերի վրա։ Օգտվելով դրանից, Պյերլո-Սպաակի բուրժուական կառավարությունը (պատերազմի տարիներին գտնվում էր Լոնդոնում), բելգիական սոցիալիստական կուսակցության և ռեֆորմիստական արհմիությունների ղեկավարության աջակցությամբ, զինաթափեց Դիմադրության մասնակիցներին։

Երկրի տնտեսական զարգացումը պատերազմից հետո

Բելգիան համեմատաբար քիչ տուժեց ռազմական գործողություններից և ֆաշիստական օկուպացիայից։ Հիմնական կորուստները, որ առաջ էին եկել գլխավորապես արդյունաբերական և պարենային ապրանքների բռնագրավումից, կազմում էին 35 միլիարդ ֆրանկ կամ ազգային հարստության 8 %-ը։ Դրա, ինչպես նաև Կոնգոյի գաղութային շահագործման և մի շարք այլ բարենպաստ գործոնների հետևանքով (մասնավորապես նավահանգիստների և տրանսպորտի անգլո-ամերիկյան զորքերի օգտագործելուց ստացվող զգալի եկամուտները) բելգիական էկոնոմիկան համեմատաբար արագորեն բուժվեց պատերազմի հետևանքներից։ 1947 թ. մոտերքը ձեռք բերվեց արդյունաբերական արտադրանքի նախապատերազմյան մակարդակը։ 50-ական թվականների կեսին և 60-ական թվականների երկրորդ կեսին երկրի էկոնոմիկան արդյունաբերական արտադրության տեմպերի ցիկլային կրճատում էր ապրում, իսկ 50-ական թվականների սկզբին և 60-ական թվականների վերջին նկատվում էր արտադրության տարեկան 5%-ի վերելք։ Բելգիական էկոնոմիկան սերտորեն

կապված էր Արևմտյան Եվրոպայի երկրների տարբեր պետական-մոնոպոլիստական և մաքսային միավորումների հետ։ Բելգիան իրրև «Բենիլյուքսի» (Բելգիայի, Նիդեռլանդների և Լյուքսեմբուրգի մաքսային ու տնտեսական միության) անդամ մտնում էր քարածխի և պողպատի եվրոպական միավորման (ՔՊԵՄ) մեջ։ «Ընդհանուր շուկայի» մեջ Բելգիայի մտնելը պահանջում էր բելգիական ապրանքների մրցակցային կարողության բարձրացում, մասնագիտացում, արդի տեխնիկական առաջընթացի պահանջներին արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի հարմարեցում, ձեռնարկությունների վերասարքավորում, գիտական հետազոտությունների բնագավառում նպատակաուղղված քաղաքականություն։ Այս խնդիրները լուծվեցին երկրի տնտեսական կյանքին պետության կողմից էլ ավելի մեծ չափով միջամտելու և աշխատավորների շահագործումն ուժեղացնելու ուղիով։ Մինչև 50-ական թվականների կեսը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը Բելգիայում ամբողջությամբ վերցրած ավելի պակաս էր զարգացած, քան արևմտաեվրոպական մյուս երկրներում. Բելգիայում արդյունաբերական ճյուղերի փաստորեն ազգայնացում չկար, երկրի էկոնոմիկայում պետական հատվածը ներկայացնում էին միայն խառը ձեռնարկությունները, առաջին հերթին ռազմականը և տրանսպորտայինները, որոնցում ներդրված էին պետության և մասնակիորեն մոնոպոլիաների միջոցները։

«Ընդհանուր շուկայի» մեջ Բելգիայի մտնելուց հետո երկրի տնտեսական կյանքին պետական միջամտությունը նշանակալիորեն ուժեղացավ։ Պետական ծախսերի, պետական սպառման և պետական կապիտալ ներդրումների տեսակարար կշռով Բելգիան ընդհուպ մոտեցավ «Ընդհանուր շուկայի» հիմնական երկրների միջին մակարդակին, բայց նրանցից ետ էր մնում պետական սեփականությունից և պետական ձեռնարկությունների արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների համեմատական մակարդակով։

Հետպատերազմյան տարիներին Բելգիայում ուժեղացավ արտասահմանյան, գլխավորապես ամերիկյան և արևմտագերմանական կապիտալի ներթափանցումը։ 1959-ից մինչև 1972 թ. ընթացքում արտասահմանյան կապիտալ ներդրումները կազմեցին 131,1 միլիարդ բելգիական ֆրանկ։ Արտասահմանյան ընկերությունները տիրապետող դիրք էին գրավում արդյունաբերության մի շարք ճյուղերում, օրինակ, ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, ավտոհավաքման, նավթային և այլ ճյուղերում։ Զգիմանալով արտասահմանյան և հայրենական մոնոպոլիաների մրցակցությանը, գլխավորապես կարի, տեքստիլ, կաշվի և մասնավորապես մեքենաշինական արդյունաբերության հարյուրավոր մանր ու միջին ձեռնարկություններ քայքայվեցին կամ կանգնեցին սրանկացման առջև։ Կրճատվեց քարածխի հանույթը, որն ածխահատների շրջանում առաջ բերեց գործազրկության աճ։ Այս պրոցեսների հետ է կապված ազգային հիմնական շրջաններ Ֆլանդրիայի և Վալոնիայի անհամաչափ զարգացումը։ Ընթանում էր երկրի էկոնոմիկայում վալոնական շրջանների տեսակարար կշռի անկումը և ֆլամանդականների նշանակության բարձրացումը։

Բելգիայի գյուղատնտեսությունն աստիճանաբար կորցնում էր հողագործական մասնագիտացումը։ Գլխավորը դառնում էր անասնապահությունը, որին բաժին էր ընկնում գյուղատնտեսության համախառն եկամտի ավելի քան երկու երրորդը։ Բելգիայի ժամանակակից գյուղատնտեսությունն ունի ինտենսիվ բնույթ, տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակ։ 1972 թ. գյուղական բնակչությունը կազմում էր ամբողջ Բելգիայի բնակչության մինչև 5%-ը։

Բելգիական աշխատավորների դասակարգային պայքարը 1945—1973 թթ.

Բանվորական շարժումը Բելգիայում աչքի է ընկնում բարձր աստիճանի կազմակերպվածությամբ։ Արհմիություններում, փոխօգնության դրամարկղներում, կոոպերատիվներում, կանանց, երիտասարդական և մյուս մասսայական կազմակերպություններում է գտնվում բանվորների ու ծառայողների ճնշող մեծամասնությունը։ Արհմիություններում կազմակերպված աշխատավորների տեսակարար կշիռը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վարձու աշխատանքի աշխատողների ընդհանուր թվաքանակի 40%-ից աճել և հասել է մինչև 70%-ի։ Ֆլանդրիայում աշխատավորների կազմակերպվածությունն ավելի բարձր է, քան Վալոնիայում և Բրյուսելի շրջանում։ 60-ական թվականների կեսից Բելգիայում ուժեղացավ բանվոր-իմիգրանտների հոսքը (իտալացիներ, իսպանացիներ, հույներ, թուրքեր և հյուսիսաֆրիկացիներ), որոնք զբաղված են ծանր և վատ վարձատրվող աշխատանքներում։ Նրանց թիվը 1972 թ. կազմում էր մոտ 600 հազար մարդ։ Բելգիական բանվորները մտնում են հիմնականում երկու խոշոր կազմակերպության ռեֆորմիստական 800 հազար անդամ ունեցող Բելգիայի աշխատանքի համընդհանուր ֆեդերացիայի (ԲԱՀՖ) և Քրիստոնեական արհմիությունների կոնֆեդերացիայի մեջ (ՔԱԿ), որն ունի 900 հազար անդամ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում բելգիական աշխատավորները համառ դասակարգային պայքար էին մղում իրենց իրավունքների և շահերի համար, ընդ որում հանդես բերելով բարձր մարտունակություն։ Հատկապես պայքարը համառ էր հետպատերազմյան առաջին տարիներին (1945—1948)։ Աշխատավորների խոշոր ելույթներ եղան նաև 50-ական և 60-ական թվականների սկզբին։

Բելգիական բանվորական շարժման ամբողջ պատմության մեջ ամենաերկարատևը 34-օրյա (1960 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1961 թ. հունվարի 23-ը) համընդհանուր գործադուլն էր, որն ընդգրկել էր ավելի քան 1 միլիոն աշխատավորների։ Այն սկսվեց բանվորական կազմակերպությունների և ամենից առաջ Բելգիայի կոմունիստական կուսակցության կոչով՝ ի նշան կառավարական «տնտեսական զարգացման» ծրագրի դեմ բողոքի, ծրագիր, որի իսկական իմաստն աշխատավորների եկամուտները կրճատելն էր։ Գործադուլը կրում էր կատաղի բնույթ, մի շարք քաղաքներում գործադուլավորների և կառավարական զորքերի միջև լուրջ ընդհարումներ եղան։ Վճռական պահին, երբ կառավարական շրջաններում անվստահությունը բոպե առ բոպե աճում էր, կառավարությանն օգնության հասան սոցիալիստական կուսակցության և ԲԱՀՖ-ի աջ լիդերները, որոնք հանդես էին գալիս «պատվավոր կոմպրոմիսի» օգտին։ Դրա հետևանքով գործադուլը թուլացավ և հունվարի 23-ին լրիվ դադարեց։

60-ական թվականների վերջին և 70-ական թվականների սկզբին գործադուլային շարժումը տարածվեց երկրի մնացած շրջաններում և ընդգրկեց նախկինում դասակարգային պայքարից հեռու կանգնած բնակչության մյուս կատեգորիաներին։ Հաճախակի դարձան «վայրի գործադուլները», որոնք աշխատավորները հայտարարում էին հակառակ արհմիութենական բոսերի ցանկության։ Հատկապես կատաղի էր Լիմբուրգի ածխահատների վեցշաբաթյա գործադուլը (1970 թ. հունվար), ինչպես նաև Անտվերպենի և Գենտի նավահանգստային բանվորների գործադուլը (1972 թ. գարնանը)։

Ներքաղաքական պայքարը հետպատերազմյան տարիներին

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին շրջանում Բելգիայի դեմոկրատական ուժերն ամրապնդվեցին։ Դա արտահայտվեց, մասնավորապես, կառավարության մեջ մտած կոմունիստական կուսակցության ազդեցության աճով։ Սակայն շուտով ռեակցիայի ուժերը, անգլո-ամերիկ-

յան իմպերիալիստների օգնությամբ, վերախմբավորվեցին և հարձակման անցան։ 1947 թ. մարտին կոմունիստները կառավարությունից հեռացվեցին։ Բանվորական շարժումը պառակտվեց։ Սոցիալիստական կուսակցության պարագլուխները և ռեֆորմիստական արհմիութենական ղեկավարները պայքարն ուղղեցին կոմունիստների դեմ։ Բուրժուական կուսակցությունների, հատկապես նրանցից ամենախոշորի՝ քրիստոնեա-սոցիալիստական կուսակցության (ՔՍԿ) ազդեցությունը նշանակալիորեն աճեց։ Կառավարող շրջաններն ուժեղացրին հակասովետական և հակակոմունիստական պրոպագանդան։ 1948—1949 թթ. հարձակումներ կատարվեցին Բելգիայի կոմունիստական կուսակցության կենտկոմի և մի քանի ֆեդերացիաների շենքերի վրա։ 1950 թ. օգոստոսին ֆաշիստական վարձկան մարդասպանների ձեռքով սպանվեց ԲԿԿ-ի նախագահ Ժուլիեն Լյաոն։

Ներքաղաքական պայքարի սուր պահ դարձավ «թագավորական հարցը»։ Բելգիայի թագավոր Լեոպոլդ 3-րդը, որ խրախուսել էր հիտլերյան Գերմանիային, 1940 թ. մայիսին բելգիական բանակի կապիտուլյացիայից հետո կամավոր կերպով իրեն հայտարարեց ռազմագերի և հրաժարվեց գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ պայքարը շարունակելու համար արտասահման մեկնել։ Այդ ժամանակից սկսած ժողովրդի լայն զանգվածների համար նա դարձավ ազգային դավաճանության մարմնացում։ Ֆաշիստական Գերմանիայի պարտությունից հետո բելգիական պառլամենտը դեմոկրատական կազմակերպությունների պահանջով օրենք ընդունեց, որը Լեոպոլդ 3-րդին զրկում էր գերիշխանի առանձնաշնորհից և արգելում նրան երկիր վերադառնալ։ Ռեակցիոն ուժերը (առաջին հերթին կաթոլիկական եկեղեցին, քրիստոնեա-սոցիալիստական կուսակցությունը և ֆաշիստական կուսակցության մնացուկները) պայքար էին մղում թագավորի վերադառնալու օգտին։ Օգտվելով Սենատի բացարձակ մեծամասնությունից, որը ՔՍԿ-ն ստացել էր 1949 թ. ընտրություններում, միապետականները որոշում անցկացրին «թագավորական հարցի» շուրջը երկրում հանրաքվե կազմակերպելու վերաբերյալ։ 1950 թ. մարտի 12-ին կայացած հանրաքվեում ձայների աննշան մեծամասնությամբ հավանություն էր տրվում այն առաջարկությանը, որը թույլատրում էր Լեոպոլդ 3-րդին վերադառնալ Բելգիա։ Այնուհետև բելգիական պառլամենտը ձայների նվազագույն մեծամասնությամբ Լեոպոլդ 3-րդին գահին վերադառնալու որոշում ընդունեց։

Այդ որոշումը զայրույթի փոթորիկ առաջ բերեց։ 1950 թ. հունիսի 22-ին, թագավորի վերադարձի օրը Բելգիայի աշխատավորները բողոքի զանգվածային ցույցեր և համընդհանուր գործադուլ կազմակերպեցին, որն ընդգրկեց մոտ կես միլիոն մարդկանց։ Վախեցած շարժման թափ՝ բելգիական սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխները բուրժուական կուսակցությունների հետ միասին համաձայնություն կնքեցին, ըստ որի Լեոպոլդ 3-րդը կառավարումը հանձնում էր իր տղային՝ թագաժառանգ Բոդուենին, իսկ երբ նա չափահաս դառնար (1951 թ. սեպտեմբերի 7) հրաժարվում էր գահից։

50—60-ական թվականներին Բելգիայի ներքաղաքական դրությունը բնութագրվում էր երկու խոշոր կուսակցությունների՝ կաթոլիկական քրիստոնեա-սոցիալիստական կուսակցության և բելգիական սոցիալիստական կուսակցության միջև տեղի ունեցող ընտրական մենամարտերով, որոնք հերթով գլխավորում էին կառավարությունները, հենվելով, երբ դա անհրաժեշտ էր, լիբերալների (ներկայումս՝ ազատության և առաջադիմության կուսակցություն) կամ մյուս մանր ազգայնական կազմակերպությունների վրա։ 1950-ից մինչև 1964 թ. երկիրը կառավարում էր քրիստոնեա-սոցիալիստական կուսակցությունը։ 1954-ից մինչև 1958 թ. իշխանության գլուխ էր գտնվում սոցիալիստական

կուսակցությունը՝ լիբերալների հետ բլոկ կազմած։ 1958 թ. կառավարությունը նորից գլխավորեց ՔՍԿ-ն՝ նույնպես հենվելով լիբերալների պաշտպանության վրա։ 1961 թ. իշխանության գլուխ անցավ քրիստոնեա-սոցիալիստական և բելգիական սոցիալիստական կուսակցությունների կոալիցիան, որը իշխանության գլուխ մնաց մինչև 1966 թ.։ 1966—1968 թթ. Բելգիան կառավարում էր ՔՍԿ-ի և ազատության ու առաջադիմության կուսակցության, իսկ 1968—1972 թթ.՝ քրիստոնեա-սոցիալիստական և բելգիական սոցիալիստական կուսակցությունների կոալիցիան։

Բելգիայի կոմունիստական կուսակցությունը, չնայած այն բանին, որ իր շարքերի թվաքանակով զգալիորեն զիջում է մյուս կուսակցություններին, մշտական պայքար է մղում բանվոր դասակարգի գործողությունների միասնության և երկրի բոլոր առաջադիմական ուժերի համագործակցության, բելգիական աշխատավորների կենսական շահերի բավարարման, խաղաղության և անվտանգության համար, մասնավորապես ՆԱՏՕ-ին Բելգիայի մասնակցության դեմ, հանուն երկրի ակտիվ չեզոքության քաղաքականության։

Ազգային հարցի սրվելը

1947 թ. մարդահամարի տվյալներով, երկրի բնակչության 52,5%-ը խոսում է ֆլամանդերեն, այսինքն հոլանդերեն, 41,9%-ը՝ ֆրանսերեն։ Երկու խոշոր էթնիկական խմբերի առկայությունն ազդում է Բելգիայի ամբողջ քաղաքական կյանքի վրա, զգացվում է մշակութային կյանքում, քաղաքական կուսակցությունների կառուցվածքում և բանվորական շարժման մեջ։

60-ական թվականների սկզբին ազգային հարցը սրվեց, որը կապված էր Վալոնիայի տնտեսական զարգացման ետ մնալու հետ։ Երկրի այդ մարզում առաջացան ժողովրդական վալոնյան շարժում և այլ կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս Բելգիայի միացյալ կառուցվածքը ֆեդերալով փոխարինելու օգտին։ Իր հերթին ֆլամանդական ազգային կազմակերպությունները պայքար էին ծավալել ռեալ իրավահավասար ֆլամանդական մշակույթի համար։ Լեզվական երկու համայնքների միջև հաճախ ընդհարումներ էին լինում։ Կառավարող կուսակցությունները հրաժարվելով ազգային հարցը լուծել իսկական դեմոկրատական ուղիով, 1962 թ. նոյեմբերին պառլամենտի միջոցով օրենք անցկացրին, որը կամայականորեն, առանց շահագրգռված բնակչության կարծիքը հարցնելու, լեզվական սահման որոշեց։ Դա նոր ընդհարումներ առաջ բերեց։

Ազգային փոխհարաբերությունների պրոբլեմը լուծելու համար 1964—1965 թթ. խոշոր քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ հրավիրվեց «կլոր սեղանի» կոնֆերանս, որը նախապատրաստեց Բելգիայի սահմանադրության նախագիծը (1970)։ Պետության միասնական կառուցվածքի շրջանակներում քայլեր ձեռնարկվեցին Ֆլանդրիայի և Բրյուսելի (երկլեզվյան) լեզվական վարչական մարզեր ստեղծելու ուղղությամբ։ Սակայն այդ պրոբլեմը մինչև օրս մնում է չկարգավորված։

Բելգիական գաղութային կայսրության քայքայումը

Հետպատերազմյան տարիների կարևոր իրադարձությունը եղավ, ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ կապված, բելգիական գաղութային կայսրության քայքայումը։ 1960 թ. անկախության հասավ Բելգիայի ամենախոշոր գաղութը՝ Կոնգոն (մայրաքաղաքը՝ Լեոպոլդվիլ, ներկայումս՝ Կինշասա)։ 1962 թ. առաջացան երկու ինքնուրույն պետություններ՝ Ռուանդան և Բուրունդին։

Ստիպված լինելով Կոնգոյին անկախություն տալ, Բելգիայի կառավարող շրջանները բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի փաստացի վերահսկողու-

թյուն պահպանեն այդ գաղութի նկատմամբ։ Շուտով, անկախ Կոնգոյի հանրապետության հռչակվելուց հետո, բելգիական զորքերը հրահրեցին Կոնգոյի բանակի անկարգություններ և մեծ դեր խաղացին Կոնգոյից նրա ամենահարուստ Կատանգա նահանգը բաժանելու գործում։ Կատանգայում իմպերիալիզմի դրածոներն ստեղծեցին սեպարատիստական ռեժիմ։ 1960 թ. հուլիսի 9-ին բելգիական զորքերը, «եվրոպական նորարնակների պաշտպանության» պատրվակով, գրավեցին Կոնգոյի կարևորագույն ստրատեգիական կետերը։

Ի պատասխան օկուպացիայի, Կոնգոյի կառավարությունը Պատրիս Լումումբայի գլխավորությամբ հայտարարեց Բելգիայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին և չեղյալ հայտարարեց 1960 թ. հունիսի 29-ին նրա հետ ստորագրած համագործակցության պայմանագիրը։ Չնայած արևմտյան տերությունների հակազդեցությանը, Անվտանգության խորհուրդը բանաձև ընդունեց, որով պարտավորեցրեց Բելգիային՝ դադարեցնել ինտերվենցիան և Կոնգոյից դուրս հանել իր զորքերը։ Դրանից հետո բելգիական գաղութարարները և նրանց ամերիկյան հովանավորները դավադրություն սարքեցին, նպատակ ունենալով տապալել Պատրիս Լումումբայի կառավարությունը։ 1960 թ. սեպտեմբերի 5-ին նա հանվեց պրեմիեր մինիստրի պաշտոնից և շուտով սպանվեց։ Սակայն, չնայած այդ գործողություններին, բելգիական իմպերիալիստներին չհաջողվեց իրենց ձեռքում պահել նախկին դիրքերը Աֆրիկայում։ Կոնգոյի կառավարությունը լիկվիդացրեց Կատանգայի սեպարատիստական խռովությունը և պահպանեց իր երկրի քաղաքական ինքնուրույնությունը։ Բելգիական իմպերիալիզմը ծանր պարտություն կրեց։

Բելգիայի արտաքին քաղաքականությունը

Բելգիայի արտաքին քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին շրջանում բնութագրվում էր Բելգիայի պրոամերիկյան կողմնորոշմամբ՝ Բելգիան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Եվրոպայում ստեղծված բոլոր ռազմաքաղաքական դաշինքների և բլոկների ակտիվ անդամ էր։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ «Մարշալի պլանին» (1947), ստորագրեց Բրուսելյան պակտը (1948), մտավ Հյուսիսատլանտյան դաշինքի մեջ (1949), հավանություն տվեց «Շումանի պլանին» և նրա հիման վրա Ածխի և պողպատի եվրոպական կազմակերպության ստեղծմանը (1952), Փարիզյան համաձայնագրերին և արևմտաեվրոպական դաշինքին (1954—1955), մտավ Եվրատոմ և «Ընդհանուր շուկայի» մեջ (1957)։ ՆԱՏՕ-ի մեջ Բելգիայի մտնելուց հետո նրա ռազմական ծախսերը կտրուկ կերպով աճեցին։ Եթե 1947 թ. դրանք կազմում էին 3,7 միլիարդ, ապա 1962 թ. կազմեցին մոտ 20 միլիարդ ֆրանկ։ 1950—1953 թթ. Բելգիայի կառավարող շրջանները պաշտպանեցին ամերիկյան իմպերիալիստների ագրեսիվ գործողությունները Կորեայում։

Բելգիական կառավարող շրջանները պաշտպանում էին Արևմտյան Գերմանիայի իմպերիալիստների քաղաքականությունը։ 1948 թ. Բելգիան հավանություն տվեց բիզոնիայի (երկու զոնա) ստեղծմանը, իսկ այնուհետև նաև սեպարատ ընտրություններին, որը հասցրեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծմանը։ Բելգիայի և ԳՖՀ-ի միջև ՆԱՏՕ-ի շրջանակներում հաստատվեցին դաշնակցային սերտ հարաբերություններ։ 1960 թ. մարտին Բելգիայի կառավարությունը Արևմտյան Գերմանիայի հետ ստորագրեց երկու երկրների տարածքներում զենքի պահեստներ ստեղծելու համաձայնագիր, որը գործնականում նշանակում էր բելգիական տարածք տրամադրել վերմախտի բազաների համար։

Այդպիսի կուրսի դեմ հանդես եկան բելգիական աշխատավորների լայն

շրջանները, և առաջին հերթին կոմունիստները։ 1950 թ. Անտվերպենի նավահանգստային բանվորները համառ գործադուլային պայքար մղեցին Եվրոպային ամերիկյան զենք մատակարարելու դեմ։ 1952 թ. ամռանը տեղի ունեցան զինվորների հզոր ելույթներ, որոնք պաշտպանեցին աշխատավոր լայն զանգվածները։ Այդ ելույթների անմիջական պատճառը ԱՄՆ-ի ճնշմամբ զինվորական ծառայության ժամկետը երկարացնելու կառավարության որոշումն էր։ Այդ ժամանակաշրջանում գործադուլ արեց մոտ մեկ միլիոն մարդ։

60-ական թվականների սկզբներին միջազգային լարվածության թուլացման նկատվող իրադրությունում Բելգիայի կառավարող շրջանները ինչ-որ չափով վերանայեցին իրենց արտաքին քաղաքականության միակողմանի կողմնորոշումը, սկսեցին մաներել, հանդես եկան խաղաղության ձգտման հայտարարություններով։ Բելգիայի արտաքին գործերի մինիստր Արմելը առաջ քաշեց սպառազինության մրցավազքը կրճատելու վերաբերյալ Վարշավայի պայմանագրի երկիրների և ՆԱՏՕ-ի միջև համաձայնագիր կնքելու պլան։ Բելգիայի կառավարող շրջանները դրականորեն գնահատեցին 1970 թ. ստորագրված, իսկ այնուհետև 1972 թ. վավերացված ԳՖՀ-ի և Սովետական Միության միջև, ԳՖՀ-ի և Լեհաստանի միջև կնքված պայմանագրերը, ինչպես նաև Արևմտյան Բեռլինի գծով քառակողմ համաձայնագիրը։ Բելգիայի ներկայացուցիչները մասնակցեցին անվտանգության և համագործակցության համաեվրոպական խորհրդակցությանը։ Այդ ժամանակաշրջանում որոշ չափով ակտիվացան սովետա-բելգիական հարաբերությունները։

ԳԼՈՒԽ 19

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ

Նիդեռլանդները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Պատերազմը հսկայական վնաս պատճառեց Նիդեռլանդների ժողովրդական տնտեսությանը։ Երկիրը կորցրեց ազգային հարստության մեկ երրորդից ավելին։ Մեծ վնաս էր հասցվել արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը։ Բոլոր վարելահողերի մեկ տասներորդը ողողվել էր, մեկ քառորդով կրճատվել էր անասունների գլխաքանակը։ Ուժեղ չափով տուժել էին նաև տնտեսության մյուս ճյուղերը, կորսվել էր նավատորմի զգալի մասը, ավերվել էին քաղաքները, այդ թվում եվրոպական խոշոր նավահանգիստ Ռոտերդամը։

Գերմանական զավթիչների դեմ պայքարը նպաստեց ժողովրդական զանգվածների քաղաքական ակտիվության ուժեղացմանը։ Հակաֆաշիստական տրամադրությունները, հասարակության դեմոկրատականացման ձգտումը տիրապետել էին բնակչության ամենալայն խավերին։ Երկրում զգալիորեն աճել էր կոմունիստական կուսակցության ազդեցությունը։ Ուժեղանում էր ինդոնեզական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ համակրանքը, որը 1945 թ. օգոստոսի 17-ը հռչակել էր անկախ հանրապետության ստեղծումը։ Վախենալով զանգվածների ակտիվացումից, վտարանդիությունից վերադարձած կառավարությունը շտապեց 1945 թ. սեպ-

տեմբերին ցրել Դիմադրության շարժման զինված ուժերը։ Ինդոնեզիա ուղարկվեցին հոլանդական և անգլիական զորքեր, փորձելով ճնշել ազատագրական շարժումը։

Համարյա երեք տարի Նիդեռլանդները պատերազմ էին մղում Ինդոնեզիայում, ձգտելով այդ երկիրը պահել գաղութային վիճակում, սակայն անհաջող։ Բազմամսյա բանակցություններից հետո Հաագայում, «կլոր սեղանի շուրջը» 1949 թ. նոյեմբերի 2-ին ստորագրվեց պայմանագիր, որով Նիդեռլանդները ճանաչեցին Ինդոնեզիայի պետական ինքնուրույնությունը։ Պայմանագիրը նախատեսնում էր ստեղծել Նիդեռլանդա-ինդոնեզական միություն, սահմանափակելով Ինդոնեզիայի իրավասությունը պաշտպանության և արտաքին քաղաքականության հարցերում։ Ինդոնեզիային պարտադրվեց այնպիսի ֆեդերատիվ կառուցվածք, որը թուլացնում էր հանրապետությունը։ Միայն 1950 թ. Ինդոնեզիան նորից դարձավ միացյալ պետություն, իսկ 1956 թ. «կլոր սեղանի կոնֆերանսի» բոլոր համաձայնագրերը չեղյալ հայտարարվեցին։ Ձգտելով պահպանել իր կայսրության մնացորդները, Նիդեռլանդները իրենց հարավամերիկյան գաղութներին՝ Սուրինամին և Անտիլյան կղզիներին ինքնավարություն տվեցին։

Գաղութային պատերազմը ուժեղացրեց բուն Նիդեռլանդների կախվածությունը իմպերիալիստական խոշոր տերություններից և նպաստեց ագրեսիվ ռազմաքաղաքական բլոկների մեջ նրան ներգրավվելուն։ Նիդեռլանդները մտան այն երկրների թվի մեջ, որոնք ԱՄՆ-ից «Մարշալի պլանի» շրջանակներում օգնություն ստացան և որը ԱՄՆ-ին հնարավորություն տվեց վերահսկելու երկրի տնտեսական զարգացումը։ 1949 թ. ապրիլին Նիդեռլանդները մտան ագրեսիվ ՆԱՏՕ-ի բլոկի մեջ։ «Ամերիկյան շահերը մեր սեփական շահերն են»,— այդ իրադարձության կապակցությամբ հայտարարեց կաթոլիկական ժողովրդական կուսակցության պարագլուխներից մեկը։

Առաջին հետպատերազմյան տարիներին Նիդեռլանդների տնտեսական դրությունը ծանր էր։ Հոլանդական կապիտալը միջազգային ասպարեզում կորցրել էր նախկին դիրքերը, կտրուկ կերպով կրճատվել էին գաղութային եկամուտները, 2,5 անգամ քչացել էին կապիտալ ներդրումներն արտասահմանում, արտաքին պարտքը հասել էր 4 միլիարդ գուլդենի։ Երկրի էկոնոմիկայում ուժեղացել էր արտասահմանյան, ամենից առաջ ամերիկյան, կապիտալի ներթափանցումը։ Նախապատերազմյան ժամանակաշրջանի հետ համեմատած լրջորեն վատացել էր աշխատավորների դրությունը։ Մեկուկեսերկու անգամ ավելացել էին հարկերը, գները կրկնակի բարձր էին, իսկ աշխատավարձը պահպանվում էր նախապատերազմյան ժամանակի ցածր մակարդակին։ Այսպիսով, աշխատավորների ուսերին էր փաստորեն դրվել երկրի էկոնոմիկայի վերականգնման բեռը։ Իսկ էկոնոմիկան նախապատերազմյան մակարդակին հասավ միայն 50-ական թվականների վերջերին։

Այդ ժամանակ քաղաքական կյանքը Նիդեռլանդներում բնութագրվում էր առաջադեմ և ռեակցիոն ուժերի սուր պայքարով։ 1946 թ. հուլիսին կայացած առաջին հետպատերազմյան պառլամենտական ընտրություններն զգալի հաջողություններ բերեցին կոմունիստներին։ Կուսակցությունն ստացավ կես միլիոնից ավելի ձայն և գլխավոր շտաբների երկրորդ պալատում անցկացրեց 100 դեպուտատներից 10-ը (նախքան պատերազմը, 1937 թ. նա ուներ միայն երեք պատգամավոր)։ Նախապատերազմյանի հետ համեմատած տասնյակ անգամ ավելացավ կոմունիստական հրատարակությունների տպաքանակը։ Կոմունիստների ղեկավարությամբ ստեղծված միասնական արհմիութենական կենտրոնը (ՄԱԿ) իր շարքերում միավորեց ավելի քան 170 հազար մարդ, կամ երկրում կազմակերպված բոլոր բանվորների 16 %-ը։

Քաղաքական կուսակցությունների և արհմիությունների վերականգնման ու վերակառուցման պրոցեսում, որն ընթացավ 1945—1947 թթ., բուրժուական և կղերական ուժերն աշխատում էին ճնշել բանվոր դասակարգի միավորման ձգտումը, պառակտել նրան, որպեսզի ապահովեն իրենց տիրապետությունը։ 1946 թ. փետրվարի մոտերքին նախկին ՍԴԲԿ-ի բազայի վրա առաջացավ աշխատանքի կուսակցությունը։ Նրա մեջ բանվորների հետ միասին լցվեցին նաև բուրժուական շատ տարրեր։ Սոցիալիստների ղեկավարությամբ վերականգնվեց արհմիությունների Նիդեռլանդական միավորումը (ԱՆՄ), որի շարքերում էր գտնվում բոլոր բանվորների ավելի քան 30 %-ը։ Կոմունիստների և սոցիալիստների մերձեցման, ինչպես նաև արհմիությունների Նիդեռլանդական միավորման և միացյալ արհմիութենական կենտրոնի միաձուլման փորձերը հաջողություն չունեցան։ Դա հասցրեց ռեակցիայի դեմ հանդիման բանվոր դասակարգի դիրքերի թուլացմանը։ 1947 թ. հոկտեմբերին աշխատանքի կուսակցության աջ թևի մի մասը լիբերալների հետ համատեղ հիմնադրեց նոր կազմակերպություն՝ հանուն ազատության և դեմոկրատիայի պայքարի ժողովրդական կուսակցությունը, որը ներկայացնում էր խոշոր կապիտալի շահերը։

Կղերական կուսակցություններն այդ տարիներին էական փոփոխություններ չկրեցին։ Միայն հռոմեակաթոլիկական կուսակցությունը վերանվանվեց կաթոլիկական ժողովրդական կուսակցության։ Ձգտելով լայնացնել իր ազդեցությունը, նա սկսեց անդամ ընդունել նաև ոչ կաթոլիկներին։ Հենվելով եկեղեցու ճյուղավորված ապարատի, բազմաթիվ կաթոլիկական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների վրա, այդ կուսակցությունն իր ազդեցությանը ենթարկեց կաթոլիկ բանվորներին։ Կաթոլիկական ժողովրդական կուսակցությունը և աշխատանքի կուսակցությունը, որոնցից յուրաքանչյուրը պառլամենտում ուներ տեղերի մեկ երրորդը, կազմեցին կառավարական կոալիցիա, երկար տարիներ իրենց վերահսկողությունը հաստատեցին երկրի քաղաքական կյանքի վրա։

Երկրի արտաքին քաղաքականությունը 1950—1971 թթ.

50-ական թվականների սկզբից Նիդեռլանդները թևակոխեցին տնտեսական արագ զարգացման շրջանը, որը կապված էր կապիտալիստական աշխարհում բարձր կոնյունկտուրայի և գիտատեխնիկական հեղափոխության հետ։ Այդ զարգացումը շատ բանով կապիտալիստական ինտեգրացիայի հետևանք էր և ուղեկցվում էր իմպերիալիստական երկրների տնտեսական միությունների սիստեմում և ռազմաքաղաքական բլոկների մեջ Նիդեռլանդների ներգրավումով, որը սահմանափակում էր վերջինիս ազգային ինքնուրույնությունը։

Կաթոլիկների և սոցիալիստների կոալիցիոն կաբինետների, որ գլխավորում էր սոցիալիստ Դրեյսը, արտաքին քաղաքականությունը մի շարք տարիներ կրում էր վառ արտահայտված իմպերիալիստական բնույթ։ 1948 թ. հունվարից սկսեց կենսագործվել Բելգիայի և Լյուքսեմբուրգի հետ մաքսային միության («Բենիլյուքս») վերաբերյալ պայմանագիրը։ 1951 թ. Նիդեռլանդները մտան ԱՊԵՄ-ի մեջ, 1957 թ. մասնակցեցին Եվրատոմի և միաժամանակ «Ընդհանուր շուկայի» ստեղծմանը։ Այդ համաձայնագրերը հեշտացրին արտասահմանյան մոնոպոլիաների ներթափանցումը Նիդեռլանդներ և արագացրին մանր ու միջին արտադրողների քայքայումը։ Դրանք Նիդեռլանդներին ռազմական բլոկների մեջ հետագա ներքաշման հիմքն էին։ ՆԱՏՕ-ին մասնակցելու հետ միասին Նիդեռլանդները «Բենիլյուքսի» շրջանակներում, ինչպես նաև արևմտյան մյուս տերությունների հետ կնքեցին ռազմական համաձայնագրեր, որոնք հիմք դարձան ԳՖՀ-ի և Իտալիայի մասնակցությամբ 1954 թ.

ստեղծված արևմտաեվրոպական դաշինքի համար։ Այդ նույն տարում Նիդեռլանդներում կառուցվեց ԱՄՆ-ի զինված ուժերի առաջին ավիացիոն բազան, իսկ 1957 թ. Դրեյսը համաձայնություն տվեց իր երկրում տեղադրել ամերիկյան միջուկային հրթիռային բազա։

Նիդեռլանդների իմպերիալիստական շրջանները, չսահմանափակվելով ռազմական բլոկներին մասնակցելուց, ագրեսիվ քայլեր ձեռնարկեցին արտաքին քաղաքականության մեջ։ Ինդոնեզիայի տարածքի մի մասը կազմող Արևմտյան Իրիանն իր ձեռքում պահելու Նիդեռլանդների ձգտման պատճառով 1958 թ. նոր կոնֆլիկտ առաջացավ Ինդոնեզիայի հետ։ Միայն 1962 թ. Ինդոնեզիայի հաստատակամ դիրքը և համաշխարհային հասարակայնության ճնշումն ստիպեցին Նիդեռլանդներին՝ հրաժարվելու իր հավակնություններից։ 1966 թ. Ինդոնեզիայում ռեակցիոն հեղաշրջումից, այդ երկրում ձախ ուժերի ջախջախումից հետո Նիդեռլանդները մի քանի այլ կապիտալիստական երկրների հետ տնտեսական լայն օգնություն ցույց տվեցին նոր ռեժիմին։ Ավելացավ Ինդոնեզիայի հետ Նիդեռլանդների առևտուրը, հոլանդական կապիտալը նորից հնարավորություն ստացավ շահագործելու Ինդոնեզիայի բնական հարստությունները։

Ագրեսիվ ռազմական բլոկներին Նիդեռլանդների մասնակցությունը զգալի վնաս էր պատճառում ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ նրա հարաբերությունների զարգացմանը։ Կառավարության քաղաքականությունը հանդիպում էր նաև լայն զանգվածների հակադրեցությանը։ Նիդեռլանդներում կես միլիոնից ավելի ստորագրություն հավաքվեց միջուկային զենքն արգելելու վերաբերյալ Ստոկհոլմի կոչի տակ։ Սոցիալիստական երկրների խաղաղասիրական հետևողական քաղաքականությունը և ժողովրդի դժգոհությունը Նիդեռլանդների կառավարող շրջաններին ստիպեցին միջուկային զենքի նկատմամբ ավելի զուսպ դիրք գրավել, իսկ հետագայում նույնպես հանդես գալ անվտանգության հարցերի գծով համաեվրոպական խորհրդակցություն հրավիրելու գաղափարի պաշտպանությամբ։ Վերջին տարիներին հակաիմպերիալիստական տրամադրություններ են նկատվում ինչպես օպոզիցիայի շարքերում, այնպես էլ կառավարող կուսակցությունների միջավայրում։ Սակայն, չնայած բողոքներին, ՆԱՏՕ-ին մասնակցելն առաջվա պես մնում էր Նիդեռլանդների արտաքին քաղաքականության անկյունաքարը։ 1970 թ. ռազմական նպատակների համար ընդհանուր ծախսերը կազմում էին համարյա 4 միլիարդ գուլդեն։

Նիդեռլանդների տնտեսական զարգացումը 1950—1971 թթ.

Այդ շրջանում բուռն զարգացումը հասցրեց Նիդեռլանդների էկոնոմիկայի որակական լուրջ տեղաշարժերի։ Արդյունաբերական արտադրանքի թողարկումն այդ շրջանում ավելացավ չորս անգամ, ազգային եկամտում նրա բաժինը կազմեց մոտ 50 %։ Աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը տարեկան հասան 6—7 %-ի, իսկ առանձին տարիներին՝ 10—11 %-ի։ Հատկապես արագ էին զարգանում արդյունաբերության առաջատար ճյուղերը։ 1938 թ. համեմատությամբ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1970 թ. աճեց 12 անգամ, լայն մասշտաբներով սկսեց իրականացվել գազի հանույթը, որի մեծ պաշարներ էին հայտնաբերվել հետպատերազմյան տարիներին։ Արտակարգ ինտենսիվորեն աճեց նավթաքիմիական, էլեկտրատեխնիկական և արդյունաբերության մի շարք այլ ճյուղերի արտադրությունը։

Արագ տեմպերով էր զարգանում գյուղատնտեսական արտադրությունը։ Արտադրանքի տարեկան աճը գերազանցում էր 4 %-ը, այսինքն կրկնակի ավելի էր, քան ԵՏՄ-ում։ Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությունը 1950—1967 թթ. աճեց 6—7 անգամ։ Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը շարունակվեց նաև հաջորդ տարիներին։ Միաժամանակ այդ ճյուղը վնասներ կրեց ԵՏՄ-ի ներսում եղած մրցակցության և վաճառահանման կրճատման հետևանքով, որը հատկապես անդրադարձավ մանր արտադրության վրա։ 1955—1965 թթ. լիկվիդացվեց 5 հեկտարից պակաս տարածությամբ ավելի քան 53 հազար հողամաս։

1950—1970 թթ. 6 անգամ աճեց Նիդեռլանդների արտաքին առևտուրը, որը կարևոր դեր էր խաղում երկրի էկոնոմիկայում։ Տնտեսական այդ ճյուղի մասշտաբների վերաբերյալ պատկերացում են տալիս հետևյալ տվյալները։ 1967 թ. պատերազմի փլատակներից վերականգնված Ռոտերդամի բեռնաշրջանառությունը, նախապատերազմյան ժամանակի հետ համեմատած, աճեց 3,6 անգամ։ Նավահանգիստ այցելեցին 36 հազար ծովային և 250 հազար գետային նավեր։ Ընդունվեց միայն 74 միլիոն տոննա նավթ։ Նիդեռլանդների առևտրական շրջանառության կեսից ավելին ընկնում է ԵՏՄ-ի երկրներին, որոնց մեջ երկրի գլխավոր պարտնյորը ԳԴՀ-ն է։ Նիդեռլանդներն զգալի եկամուտներ են ստանում նաև տրանզիտից, նավային փոխադրավարձից և այլ սպասարկումներից։

Նկատվում էր ոսկու պետական պաշարի կայուն աճ, 1970 թ. նրա գումարը գերազանցեց 12 միլիարդ գուլդենից։

Էկոնոմիկայում կատարված այդ փոփոխություններն իրենց հերթին դեմոգրաֆիական բնույթի լուրջ տեղաշարժեր առաջ բերեցին։ Այն ժամանակ, երբ երկրի ամբողջ բնակչությունը, նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ, աճեց և 9 միլիոնից հասավ մինչև 13 միլիոն մարդու, ինքնագործ բնակչության թվաքանակն ավելացավ մեկուկես անգամ և հասավ 4,8 միլիոն մարդու։ Ընդ որում զգալիորեն ավելացավ այն մարդկանց քանակը, որոնք զբաղված են կառավարչական և սպասարկման ոլորտներում, այն դեպքում, երբ գյուղատնտեսության մեջ այն կրճատվել է երկու անգամից ավելի։

Էկոնոմիկայի արագ աճը նպաստեց պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի հակասությունների սրմանը։ Հարստությունը նախկինում չբաժանված մասշտաբներով կուտակվեց մոնոպոլիաների ձեռքին։ 1965—1967 թթ. Նիդեռլանդների արդյունաբերության միջին տարեկան եկամուտը կազմում էր 18 %, այն ժամանակ, երբ նախքան պատերազմն այն չէր գերազանցում 7—8 %-ին։ Այնպիսի ճյուղերում, ինչպիսին նավթաքիմիական արդյունաբերությունն է, եկամուտը հասավ 27 %-ի, մետալուրգիականում՝ 29, իսկ էլեկտրատեխնիկականում՝ նույնիսկ 38 %-ի։ Այս եկամուտների յուրացման բնույթի մասին ակնառու կերպով վկայում են հետևյալ տվյալները։ 1953 թ. Նիդեռլանդներում հաշվվում էին 1550 միլիոնատերեր՝ 3,25 միլիարդ գուլդեն ընդհանուր ունեցվածքով, իսկ 1965 թ. դրանք արդեն կազմում էին 6000՝ 13 միլիարդ գուլդենի ունեցվածքով։

Նիդեռլանդական մոնոպոլիստական «Ռոյալ դաչ շելլ» «Յունիլևեր», «Ֆիլիպս» միավորումները պատկանում են կապիտալիստական աշխարհի հրսկաների թվին։ Նիդեռլանդները նորից հանդես եկան կապիտալի խոշորագույն արտահանողի դերում, կապիտալ ներդրումների գծով երրորդ տեղը գրավելով ԳԴՀ-ում և ԱՄՆ-ում։ Արագացավ կապիտալ համակենտրոնացման պրոցեսը, մեկ տարվա ընթացքում ձուլվեցին տասնյակ տարբեր ձեռնարկություններ։ Միաժամանակ ուժեղանում էր միջազգային կապիտալից Նիդեռլանդների էկոնոմիկայի հետագա կախվածությունը։ 1965 թ. Նիդեռլանդներում կար 700 արտասահմանյան և խառը ձեռնարկություն, 1970 թ. դրանք արդեն հասել էին 936-ի, այդ թվում 376-ը ամերիկյան, 170-ը անգլիական, 128-ը արև-

մըտագերմանական էին։ Արտասահմանցիների ձեռքին էր գտնվում «Ռոյալ դատչ շելլի»-ի բաժնետոմսերի 75 %-ը, «Յունիլևերի»՝ 50, «Ֆիլիպսի» բաժնետոմսերի 60 %-ը։

Դասակարգային և քաղաքական պայքարը 1950—1971 թթ.

Նիդեռլանդների կառավարող շրջանների ներքին քաղաքականությունը 50—60-ական թվականներին կրում էր խիստ կերպով արտահայտված հակակոմունիստական բնույթ։ Ռեակցիայի հարձակումը հատկապես ուժեղացավ 1957—1958 թթ.։ Դրանք Նիդեռլանդների էկոնոմիկայում ճգնաժամային երևույթների և ժողովրդական զանգվածների դրության վատթարացման տարիներ էին։ Երկրի քաղաքական իրադրության վրա լուրջ ազդեցություն թողեցին Հունգարիայի 1956 թ. իրադարձությունները։ Խեղաթյուրելով այդ իրադարձությունների էությունը, ռեակցիան հակասովետական և հակակոմունիստական կամպանիա սանձաղերծեց, նպատակ ունենալով մեկուսացնել կոմունիստներին։ Ռևիզիոնիստական խմբերի գործունեությամբ կոմունիստական կուսակցության դիրքերը թուլացան։ 1958 թ. Նիդեռլանդների կոմունիստական կուսակցության 19-րդ համագումարը ռևիզիոնիստներին հեռացրեց կուսակցությունից։ Ելնելով բանվորական շարժման միասնության շահերից, միասնական արհմիութենական կենտրոնը ցրվեց, որի անդամները հետո մտան արհմիությունների Նիդեռլանդական միավորման մեջ։ Հետագայում Նիդեռլանդների կոմունիստական կուսակցությունը պայքար ծավալեց մոնոպոլիաների ճնշման, ՆԱՏՕ-ին մասնակցելու դեմ, ինքնուրույն արտաքին քաղաքականության համար և ամերիկյան թելադրանքին ենթարկվելու դեմ։ Սակայն կուսակցության ղեկավարությունը միաժամանակ թույլ տվեց հոլանդական բանվոր դասակարգի ինտերնացիոնալ խնդիրների թերագնահատում, որը թուլացրեց նրա կապերը կոմունիստական մյուս կուսակցությունների և միջազգային բանվորական շարժման հետ։

Ռեակցիայի հարձակումն անդրադարձավ նաև սոցիալիստների դրության վրա։ Մի կողմից, ռեակցիան այլևս նրանց ծառայության կարիքը չուներ, իսկ մյուս կողմից, բուրժուական կառավարությանը երկար ժամանակ սոցիալիստների մասնակցությունը զանգվածների շրջանում գցել էր նրանց ազդեցությունը։ Զգալով պահպանել իրենց դիրքերը, աշխատանքի կուսակցությունը հանդես եկավ ռազմական ծախսերը կրճատելու, ինչպես նաև հարկերը վերաբաշխելու, ձեռնարկատերերի բաժինը որոշ չափով բարձրացնելու և քիչ ունեցողների հարկերը իջեցնելու առաջարկությամբ։ Այդ առաջարկությունը պառլամենտը մերժեց, և աշխատանքի կուսակցությունը, դուրս գալով կառավարության կազմից, սկսեց իրականացնել «կոնստրուկտիվ» օպոզիցիա, այսինքն բուրժուական կաբինետներին պաշտպանում էր միայն առանձին դեպքերում։ Հաշվի առնելով ժողովրդի տրամադրությունները, աշխատանքի կուսակցությունը սկսեց ավելի ակտիվորեն հանդես գալ ռազմական ծախսերը կրճատելու և աշխատավորների դրությունը բարելավելու օգտին։

1957—1958 ճգնաժամային տարիներին հանդես եկան հիմնական քաղաքական կուսակցությունների շերտավորման առաջին նշանները և առաջացան քաղաքական նոր կուսակցություններ։ Աշխատանքի կուսակցության անդամների խումբը, միավորվելով մի շարք պացիֆիստական կազմակերպությունների հետ, 1957 թ. ստեղծեց պացիֆիստական-սոցիալիստական կուսակցությունը, որը նկատելի դեր խաղաց միլիտարիզմի դեմ մղվող պայքարում։ 1963 թ. առաջացավ գյուղացիական կուսակցությունը, որը ծայրահեղ աջ դիրք գրավեց։ Քաղաքական կյանքին սկսեց ակտիվորեն մասնակցել երիտասարդությունը, որը կազմելով այնպիսի կուսակցության միջուկը, ինչպիսին էր «1966 թ. դեմոկրատիան», հանդես էր գալիս ՆԱՏՕ-ից Նիդեռլանդների դուրս

գալու պահանջով։ Հետագա տարիներին առաջացան ևս մի քանի կուսակցություններ։ 1970 թ. աշխատանքի կուսակցության աջ թևի նախկին անդամների խումբը հիմնադրեց «70-ական թվականների դեմոկրատական սոցիալիստներ» կազմակերպությունը, որը մտավ կառավարական կոալիցիայի կազմի մեջ։ Միաժամանակ, ինչպես ցույց տվեցին 1971 թ. գարնանը կայացած ընտրությունները, նկատելիորեն ընկել էր հին՝ կաթոլիկական ժողովրդական կուսակցության և աշխատանքի կուսակցության ազդեցությունը։ Իր ազդեցությունը կորցրել էր նաև գյուղացիական կուսակցությունը։ Այդ բոլոր երևույթները վկայում էին տիրապետող դասակարգերի քաղաքականությունից զանգվածների հասունացող դժգոհության մասին։

Նիդեռլանդների բանվոր դասակարգը նաև բարձր տնտեսական կոնյուկտուրայի պայմաններում է հարկադրված լինում համառ պայքար մղել գոյության պայմանները բարելավելու համար։ Եթե կոլեկտիվ պայմանագրեր կնքելիս տարվա սկզբին բանվորներին հաջողվում է պաշտպանել իրենց իրավունքները, ապա արդեն հաջորդ տարում գների բարձրացումը ոչնչի է հասցնում ստացած հավելումը։ 1960 թ. գործադուլ արեցին 230 հազար շինարարներ, պահանջելով աշխատավարձն ավելացնել 5 %-ով։ 1962 թ. կառավարությունը վկայակոչելով օբյեկտիվ տնտեսական պայմանները, առաջարկեց մետաղամշակման արդյունաբերության մեջ հավելումները սահմանափակել 2,7 %-ով։ Ամստերդամի մետաղագործները դիմելով գործադուլի, ընկերությանն ստիպեցին 10 տոկոսի հավելում տալ և դրանով իսկ ուղի հարթեցին իրենց ճյուղի, ինչպես նաև մյուս ճյուղերի բոլոր բանվորների համար։ 1963 թ. կորցվեց 36 հազար, իսկ 1964 թ.՝ 43 հազար մարդ-օր։ Գների աճը 1969—1970 թթ. առաջ բերեց գործադուլների նոր ալիք։ 1970 թ. սեպտեմբերին գործադուլավորների ընդհանուր թիվը գերազանցեց 150 հազար մարդուց։

Մոնոպոլիաների կառավարությունը մշտապես դիմում է աշխատավարձի սառեցմանը և օրենսդրական ուղիով արհմիությունների իրավունքների սահմանափակմանը։ Բանվորները, անկախ այն բանից՝ իրենք կղերական, թե՞ սոցիալիստական միություններին են պատկանում, ավելի հաճախակի պայքարի միասնական ճակատով հանդես են գալիս մոնոպոլիաների դեմ, գործնականում աստիճանաբար հաղթահարելով իրենց փաթաթված պառակտումը և էլ ավելի գիտակցելով իրենց շահերի միասնությունը։

ԳԼՈՒԽ 20

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Սոցիալ-տնտեսական զարգացումը հետպատերազմյան տարիներին

40-ական թվականների երկրորդ կեսին Սկանդինավյան երկրներում ձեռք բերվեց արտադրության նախապատերազմյան մակարդակը, իսկ պատերազմից ավելի տուժած Նորվեգիայում նույնիսկ այն գերազանցվեց։ Բայց բոլոր երկրներում չէին բավականացնում լայն սպառման ապրանքները։ Ինֆլյացիա, հսկայական պետական ներքին պարտք, սարքավորման, տրանսպորտի, բնակֆոնդի մաշվածություն, օտարերկրյա փախստականների և ռազմագերիների կուտակում — ահա այն պրոբ-

լեմները, որոնք մնացել էին պատերազմից։ Բացառություն էր կազմում Իսլանդիան, որը չէր պատերազմել և դաշնակիցների շրջափակմանը չէր ենթարկվել։

Հետպատերազմյան տարիներին Սկանդինավիայի ժողովրդական տնտեսությունն ամբողջությամբ հաջողությամբ էր զարգանում, քան երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում։ Արտադրության աճի տեմպերը, հատկապես 40-ական և 60-ական թվականներին, ավելի բարձր էին արևմտաեվրոպական երկրների միջինից։ Նույնիսկ Դանիայում, որը երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո ամենից շատ էր տուժել գործազրկությունից, գործազուրկների տոկոսը (նրանից ապահովագրվածների շրջանում) 1938—1968 թթ. իջավ և 21-ից հասավ 5%-ի։ Վերամշակող արդյունաբերության մեջ արտադրության ցուցանիշը (1969 թ.= 100) 1971 թ. Դանիայի համար կազմեց 196, Նորվեգիայի համար՝ 184, Շվեդիայի համար 1970 թ.՝ 194։ Իսլանդիայում ազգային համախառն արտադրանքի ցուցանիշը (1959 թ.=100) 1969 թ. հասավ 150-ի։

Տնտեսական բուռն աճը հենվում էր արագացվող ինդուստրացման վրա։ Ագրարային-ինդուստրիալ Դանիան 50-ական թվականների վերջին դարձավ ինդուստրիալ-ագրարային երկիր։ Իսլանդիայում նշանակալիորեն կատարելագործվեցին ձկան որսը և վերամշակումը։ Զկնորսական-ագրարային Իսլանդիան վերածվեց արդյունաբերականորեն զարգացած երկրի։ Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում հումքի կամ կիսաֆաբրիկատների արտադրության հաշվին կամ դրա հետ միասին ընդարձակվեց պատրաստի արտադրանքի արտադրությունը։ Ստեղծվեցին ռադիոէլեկտրոնիկայի, ավտոմոբիլաշինության, նավթաքիմիայի, պլաստմասսաների արտադրության, ատոմային արդյունաբերության և այլ նոր ճյուղեր։ Շվեդիան, իսկ նրա հետևից Նորվեգիան և Դանիան թևակոխեցին գիտատեխնիկական հեղափոխության փուլը։ Հյուսիսային Եվրոպան (ներառյալ Ֆինլանդիան) պահպանեց կապիտալիստական աշխարհի բարձր զարգացած շրջանի իր դիրքերը։ Կազմելով համաշխարհային բնակչության միայն 1%-ից մի քիչ ավելին, այդ ռեգիոնը 60-ական թվականների կեսին ապահովում էր ձկան համաշխարհային արտադրանքի մոտ 10%-ը, ցելյուլոզի 17%-ը, լրագրային թղթի 13%-ը, առևտրական նավերի ջրարկման 16%-ը։ Ավելի ինդուստրացված Շվեդիայում պողպատի արտադրությունը 1939—1970 թթ. աճեց և 1150 հազար տոննայից հասավ մինչև 5424 հազար տոննայի, էլեկտրաէներգիան՝ 9 միլիարդից մինչև 52,5 միլիարդ կվտ. ժամի, ջրարկվող նավերի տոննաժը՝ 328 հազարից մինչև 1711 հազար տոննայի։ Շվեդիային, Դանիային, Նորվեգիային 60-ական թվականներին բնորոշ էր կապիտալիստական աշխարհում աշխատավարձի ամենաարագ աճը, որն աշխատավարձի մակարդակով Շվեդիային բուրժուական Եվրոպայում մղեց առաջին տեղը։ Ռեալ աշխատավարձի աճն առաջին հերթին աշխատավորների ակտիվ պայքարի, նրանց արհմիութենական բարձր կազմակերպվածության պտուղն էր, սակայն գների աճը, հատկապես ամենավերջին տարիներին, հաճախ կրճատում և երբեմն առ ոչինչ էր դարձնում այդ կապակցությամբ ձեռք բերվածը։ Օրինակ, շվեդական արդյունաբերական բանվորի միջին ժամավճար աշխատավարձը 1963—1971 թթ. աճեց 74%-ով, սակայն ապրուստի արժեքը այդ տարիներին նույնպես բարձրացավ 45%-ով։ Համեմատաբար բարձր կենսամակարդակ ձեռք բերվեց լարված, հաճախ արտաժամյա աշխատանքի գնով։ Աշխատավարձի մեծ բաժինը գնում էր հարկերը վճարելուն։ Շվեդիայում, օրինակ, երկու երեխա և մեկ կերակրող ունեցող որակյալ բանվորի ընտանիքը 1971 թ. հարկերի հաշվին տալիս էր իր համախառն եկամտի (երեխաների համար նպաստների հաշվառմամբ) մեկ երրորդից ոչ պակաս մասը։

Մրցակցության աճը և համաշխարհային շուկայում պահանջարկի տատանումները, արտադրանքի համեմատաբար բարձր ինքնարժեքը, վճարման հաշվեկշռի դեֆիցիտը և ավելի սրվող ինֆլյացիան արգելակում էին հատկապես Իսլանդիայի և Դանիայի էկոնոմիկայի զարգացումը։ Կառավարությունները խնայողության և կայունացման խիստ միջոցներ էին փնտրում, բարձրացնում էին անուղղակի հարկերը, շրջափակում քաղաքացիների եկամտի մի մասը, հարկադիր խնայողություն մտցնելով բարձրացնում էին վարկային տոկոսի մակարդակը, սառեցնում գները և այլն։ Այն հարցը, թե բնակչության ո՞ր խավերի հաշվին կիրառել այս կամ այն միջոցառումը, կազմում էր դասակարգային և քաղաքական պայքարի կարևոր առարկան։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը։ Սկանդինավյան «բարեկեցիկ հասարակության» իսկական բնույթը

Ինդուստրացման աճը և գիտատեխնիկական հեղափոխությունը հասցրեցին Սկանդինավիայի բնակչության պրոֆեսիոնալ և սոցիալական կազմի փոփոխությունների։ Արագորեն կրճատվեց այն անձանց տեսակարար կշիռը, որոնք զբաղված էին գյուղական, անտառային և ձկնային տնտեսության մեջ։ Մանր ֆերմերները, արհեստավորները, առևտրականները լիկվիդացնում էին իրենց ձեռնարկությունները։ Ավելացավ առևտրի, տրանսպորտի և հանրային սպասարկման ոլորտի (կառավարում, գիտություն, լուսավորություն, առողջապահություն) աշխատողների քանակը։ Արագորեն աճեց արտասահմանցի բանվորների տեսակարար կշիռը։

Նախապատերազմյան ժամանակամիջոցի հետ համեմատած նկատելիորեն աճեցին պետական, կոոպերատիվ և կոմունալ հատվածները, նրանք տիրապետող դարձան էներգետիկայում, կապում, երկաթուղային և օդային տրանսպորտում, առողջապահության, լուսավորության, գիտության մեջ։ Սակայն խոշոր մասնավոր սեփականությունն առաջվա պես գերիշխում էր, որոշելով տիրապետող արտադրական հարաբերությունների կապիտալիստական բնույթը։ Նույնիսկ Նորվեգիայում, որտեղ արդյունաբերության հանրային հատվածի բաժինը բոլորից բարձր էր, այն 8%-ը չէր գերազանցում։ Պետությունը և ինքնակառավարման մարմինները իրենց կապիտալները պատրաստակամությամբ ներդնում էին մասնավոր ընկերությունների բաժնետոմսերի մեջ, և կապիտալ ներդրումներում հանրային հատվածի բաժինը բավականին բարձր էր (60-ական թվականներին Շվեդիայում այն կազմում էր կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի մոտ 40%-ը, Դանիայում և Նորվեգիայում՝ մոտ 20%-ը)։

Արդյունաբերության հիմնական ճյուղերը վերահսկում էր, որպես կանոն, մասնավոր, բայց երբեմն էլ պետական-մասնավոր խոշոր կորպորացիա-կոնցեռնների նեղ շրջանը։ Այդ կորպորացիաներից մի քանիսը, հատկապես շվեդականները, կարողացան դառնալ միջազգային մոնոպոլիաներ։ Արտասահմանյան կապիտալի տեսակարար կշիռը բարձր էր միայն իսլանդական ամենաերիտասարդ ինդուստրիայում, ինչպես նաև Նորվեգիայում, որտեղ արտասահմանյան սեփականատերերը վերահսկում էին արդյունաբերության մոտ 30%-ը, իսկ ցածր էր միայն Շվեդիայում, որն ինքն էր հանդես գալիս որպես կապիտալի խոշոր արտահանող։ Շվեդական արդյունաբերական և առևտրական ֆիրմաների արտասահմանյան մասնաճյուղերի թիվը 1960—1969 թթ. աճեց և 890-ից հասավ մինչև 1806-ի։

Սկանդինավիայի արտադրության և կապիտալի համակենտրոնացման պրոցեսն ուժեղացավ։ Շվեդիայի խոշորագույն արդյունաբերական ընկերու-

թյունների առաջին տասնյակի բաժինն արդյունաբերական արտադրության համախառն արժեքի մեջ մեծացավ, 1957—1963 թթ. 18-ից հասնելով մինչև 21 %-ի։ Նրանց վաճառքի (ներառյալ արտասահմանյան ձեռնարկությունների վաճառքը) գումարը 1967 թ. հասավ 21 միլիարդ կրոնի, որը մեկայն մի քիչ էր զիջում Շվեդիայի նույն տարվա ամբողջ արտահանության արժեքին (23 միլիարդ կրոն)։ Սկանդինավիայում ստեղծվեց պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակակից սիստեմ։ Առկա էին բուրժուական պետության տնտեսական գործունեության բոլոր հիմնական տեսակները՝ պետական ձեռնարկատիրությունը, մասնավոր ընկերություններին մասնակցությունը, վարկերը մասնավոր ֆիրմաներին, պետության կողմից ապրանքներ և կապիտալ արտահանողներին աջակցելը, տնտեսական աճի ազգային ծրագրավորումը (որը ավելի զարգացած է Նորվեգիայում), վերջապես, տնտեսության անուղղակի կարգավորումը հարկային, դրամական, բանկային, մաքսային քաղաքականության միջոցով։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացմանը նպաստեց նաև բուրժուական պետությունների միջազգային տնտեսական կազմակերպությունների՝ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության (1948) և Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի (1959) մեջ Սկանդինավիայի ուժեղացած ներգրավումը։ Վերջինս ներկայումս փաստորեն քայքայվել է, քանի որ Դանիան Անգլիայից հետո մտավ «Ընդհանուր շուկայի» մեջ (1972), իսկ Շվեդիան, Նորվեգիան և Իսլանդիան նրա հետ կնքեցին ասոցիացիայի վերաբերյալ հեռուն տանող համաձայնագիր (1972—1973)։

Պետական մոնոպոլիստական կապիտալիզմն իր տիրապետությունն ամրապնդելու նպատակով օգտագործեց սոցիալական ապահովության լավ կազմակերպված համակարգը։ Այն ներառում էր ծերության (թոշակային շատ բարձր տարիքի դեպքում), հաշմանդամության, կերակրողին կորցնելու, ինչպես նաև ծառայության տարիների համար տրվող թոշակները, երեխաներին, հղիության և ծննդաբերության, գործազրկության, հիվանդության, աղքատության համար տրվող նպաստները, բոլոր աստիճաններում անվճար ուսուցումը, մասնակի անվճար բուժումը։ Սոցիալական ապահովության ծախսերը հոգում էին քաղաքացիները, պետությունը և կոմունաները (ինքնավարության մարմինները), ինչպես նաև ձեռնարկատերերը, որոնք վարձատրում էին, մասնավորապես, աշխատավորների տարեկան արձակուրդները։ Իր արդի տեսքը Սկանդինավիայի սոցիալական ապահովությունն ընդունեց հենց հետպատերազմյան տարիներին։ 60-ական թվականներին աշխատավորների կարևորագույն նվաճումը եղավ բանվորներին և ծառայողներին թոշակ սահմանելը (նախկինում դա կար միայն Շվեդիայում), որ պետք է իրագործվեր ամբողջովին գործատերերի հաշվին, 1960 թվականից, որպես ծերության այսպես կոչված ժողովրդական թոշակի լրացում։ 60-ական թվականների վերջին աշխատանքային շաբաթը կրճատվեց կես ժամով և դարձավ 42 (Շվեդիայում 1973 թվականից՝ մինչև 40 ժամ)։

Տնտեսական կյանքին պետության ակտիվ մասնակցություն, անձնական եկամուտների բարձր մակարդակ և քաղաքացիների սոցիալական ապահովության զարգացած համակարգ՝ այսպիսին են սկանդինավյան «բարեկեցիկ հասարակության» բնորոշ գծերը։ Արդի կապիտալիստական հասարակության այս տարբերակը բուրժուական և ռեֆորմիստական ուղղության որոշ հեղինակներ, գլխավորապես ոչ բուն Սկանդինավիայում, ներկայացրին որպես ինչ-որ «սկանդինավյան սոցիալիզմ», որը ազատ է կապտալիզմի և կոմունիզմի «բացասական ծայրահեղություններից»։

«Սկանդինավյան սոցիալիզմի» կոնցեպցիան զուրկ է ամեն մի հիմքից և

ներկայումս այն քչերն են պաշտպանում։ Սոցիալիզմին խորթ են արտադրության հիմնական միջոցների մասնավոր սեփականությունը, ժողովրդական տնտեսությունում մի քանի տասնյակ ընտանեկան խմբերի գերիշխող դիրքը, կապիտալի տեր մարդու կողմից միայն աշխատող ձեռքեր ունեցող մարդու շահագործման ազատությունը, մի կողմից ձեռնարկատիրական, հողատիրական, բյուրոկրատական և պրոֆեսիոնալ «ընտրանու», մյուս կողմից՝ աշխատավոր հիմնական զանգվածների միջև եղած գույքային խոր անհավասարությունը։ Կառավարական հիմնարկների հաստիքները առաջվա պես կոմպլեկտավորվում էին գերազանցապես բուրժուազիայի և միջին խավերի շրջաններից սերածներով։ Գործազրկությունը, հանցագործությունը, թմրադեղամոլությունը և պոռնկությունը չանհետացող սոցիալական երևույթ են մնացել։ 1971 թ. 8 միլիոն շվեդներին ընկնում էր 12 հազար ակտիվ ներարկում անող թմրադեղամոլներ։ Սկանդինավյան բուրժուական «սպառման հասարակությանը» յուրահատուկ են մարդկանց փոխադարձ օտարացման, միայնակության, մեքենաների կողմից նրանց «շահագործման», ռեկլամային, ցածրատեսակ «մասսայական կուլտուրայի» դժվարին պրոբլեմները։ Այդ հասարակության կապիտալիստական բնույթն ընդունել են նույնիսկ տեղական աջ սոցիալ-դեմոկրատներն իրենց 60-ական և 70-ական թվականների կուսակցական ծրագրային փաստաթղթերում։

Կուսակցական-քաղաքական պայքարը և բանվորական շարժումը

Ֆաշիզմի դեմ, ՍՍՀՄ-ի վճռական մասնակցությամբ, հակահիտլերյան կոալիցիայի հաղթանակը, Դիմադրության շարժման տարիներին կոմունիստների զոհերն ու սխրագործությունները, իսկ մյուս կողմից, հիտլերականների հետ տեղական ռեակցիոներների, արդյունաբերողների և խոշոր հողատերերի համագործակցությունը պատերազմի վերջին և անմիջապես նրանից հետո քաղաքական ձախ տեղաշարժ առաջ բերեցին։ Կոմունիստական կուսակցությունները դարձան մասսայական կազմակերպություններ, զգալիորեն շատ տեղեր ստացան պառլամենտում, քան ունեին մինչև պատերազմը, մտան Դանիայի, Նորվեգիայի և Իսլանդիայի առաջին հետպատերազմյան կաբինետների կազմի մեջ (առաջին երկու երկրում միայն մինչև 1945 թ. վերջը, երրորդում՝ 1947 թ.)։ Պահպանողականների կուսակցությունները կորցրին իրենց ընտրողներին հօգուտ լիբերալների։ Անհետացան կամ կորցրին հասարակական ամեն մի նշանակություն ֆաշիստական կուսակցությունները, թշնամու տասնյակ հազարավոր ակտիվ աջակիցներ դատի տրվեցին։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն ամեն տեղ, բացի Իսլանդիայից, քաղաքական խոշորագույն կուսակցությունների դիրք էին զբաղեցնում։ Շվեդիայում և Նորվեգիայում նրանք արդեն 1945 թ. կազմավորեցին միակուսակցական կաբինետներ։ Դրանց գլուխ կանգնեցին այդ կուսակցությունների նոր պարագլուխները՝ պրոֆեսիոնալ քաղաքագետներ, որոնք հետագայում լայն ճանաչում գտան նաև իրենց երկրների սահմաններից դուրս։ Դրանք 1946—1969 թ. Շվեդիայի պրեմիեր Տագե Էրլանդերն էր, լուսավորության նախկին մինիստր և Նորվեգիայի պրեմիեր Էյնար Հերհարդսենը (վերջինս այդ պոստն զբաղեցրել էր 1945—1965 թթ., երկու ընդմիջումով)։ Է. Հերհարդսենը սոցիալական ծագումով բանվոր էր, Դիմադրության շարժման ակտիվ մասնակից, Զակսենհաուզենի կալանավոր։ Դանիական սոցիալ-դեմոկրատները, որոնք 1940—1943 թթ. ակտիվորեն համագործակցել էին զավթիչների հետ, ընտրություններում առաջին հաջողությանը հասան միայն 1947 թ., որից հետո նրանց միակուսակցական կաբինետը գլխավորեց Հանս Հեդտոֆտը, որը հանրաճանաչ էր դարձել պատերազմի ժամանակ իր հակա-

ֆաշիստական դիրքի շնորհիվ։ Իսլանդիայում հետպատերազմյան կառավարությունները գլխավորում էր մեծ մասամբ «ինքնուրույնության կուսակցությունը»՝ տեղական պահպանողականները, խոշոր արդյունաբերող Օլաֆուր Թորսոմի գլխավորությամբ։

Սկանդինավյան երկրներում դեմոկրատական վերելքը հատկապես առաջին հետպատերազմյան տարիներին նպաստեց սոցիալական ապահովության, աշխատանքային օրենսդրության, հարկային և ընտրական համակարգերի բնագավառներում մի շարք հասունացած օրենքների ընդունմանը։ Երեխաների համար մտցվեցին ամենամյա նպաստներ և համընդհանուր պարտադիր ապահովություն՝ հիվանդության դեպքում սահմանվեց երեքշաբաթյա (հետագայում շորսշաբաթյա) վճարովի արձակուրդ, պակասեցվեցին ցածր եկամուտներ ունեցող անձանցից հավաքվող հարկերը, որոշ չափով ուժեղացվեցին բուրժուազիայի եկամուտներից և ունեցվածքից վերցվող հարկերը, իջեցվեց ընտրողների և դեպուտատների համար սահմանված տարիքային ցենզը։

Իրադրությունը վատացավ 40—50 թվականների սահմանագծին, «սառը պատերազմի» ուժեղացման կապակցությամբ։ Սոցիալ-դեմոկրատների և կոմունիստների միջև տարաձայնությունները խիստ սրվեցին, իսկ սոցիալ-դեմոկրատների և բուրժուազիայի միջև հարթվեցին ամենից առաջ կապիտալիստական տնտեսության կայունացման քաղաքականություն վարելու միասնության, արևմտյան տերությունների հետ գաղափարական միասնության և «Մարշալի պլանը» պաշտպանելու հողի վրա։ 40—50-ական թվականների սահմանագծին կայացած պառլամենտական ընտրություններում (Սկանդինավիայում դրանք անցնում էին, որպես կանոն, չորս տարին մեկ) բուրժուական կուսակցությունները որոշ չափով նեղեցին սոցիալ-դեմոկրատներին, իսկ կոմունիստների մանդատների քանակը խիստ պակասեց։ Սոցիալ-դեմոկրատական միակուսակցական կառավարություն, պառլամենտում սոցիալ-դեմոկրատական մեծամասնությամբ հանդերձ, մնաց միայն Նորվեգիայում։ Դանիայում պառլամենտական փոքրամասնություն կազմող սոցիալ-դեմոկրատական կառավարության գոյությունը կախված էր մանրբուրժուական ռադիկալ և այլ կուսակցությունների պաշտպանությունից։ Շվեդիայում բանվորական երկու կուսակցությունները համարյա ամբողջ ժամանակ պառլամենտում մեծամասնություն էին պահպանում, բայց աջ սոցիալ-դեմոկրատները մարբուրժուական գյուղացիական միության կուսակցության հետ բլոկ կազմելը գերազանցեցին կոմունիստների օժանդակությունից և 30-ական թվականների փորձով վերականգնեցին նրա հետ կառավարական կոալիցիան (1951—1957)։ Սոցիալական ռեֆորմներն այդ տարիներին դադարեցվեցին, որը կապված էր նաև տնտեսական դժվարությունների հետ՝ թանկության աճով (1949 թ. վալյուտայի դևալվացիայի հետ կապված) և կորեական պատերազմով, իսկ այնուհետև էկոնոմիկայի մեջ տիրող անկմամբ և լճացմամբ (ռազմական գործողությունները դադարեցնելուց հետո)։

Հակասովետիզմի և հակակոմունիզմի աճը, բուրժուական և ռեֆորմիստական կուսակցությունների «միասնական ճակատը» Սկանդինավիայում թուլացրին կոմունիստական շարժման ազդեցությունը։ Կոմունիստական կուսակցություններում ուժեղացան աղանդավորական տրամադրությունները, նրանց թվաքանակը պակասեց, սրվեցին ներքին տարաձայնությունները (հատկապես Նորվեգիայում, որտեղ 1949 թ. կուսակցությունից հեռացվեց աջ թեքման մի մեծ խումբ)։ Բայց նույնիսկ այդ դժվարին տարիներին սկանդինավյան կոմունիստները արհմիություններում, ձեռնարկություններում բավականին մեծ ազդեցություն էին պահպանում և ընթանում էին Սկանդինավիայում

համեմատաբար մեծ թափ ստացած խաղաղության կողմնակիցների շարժման ավանդարդում։ Իսլանդիայում կոմունիստները (Իսլանդիայի սոցիալիստական միասնական կուսակցությունը) գլխավորում էին կղզուց ամերիկյան զորքերը դուրս բերելու օգտին ծավալված շարժումը։

Տնտեսական վերելքը, թանկության աճման հետ միասին, 50-ական թվականների առաջին կեսին նպաստեց բանվորական շարժման ակտիվացմանը։ Աշխատավորները պահանջում էին բարձրացնել աշխատավարձը։ Դասակարգային պայքարն ամենամեծ թափն ստացավ Դանիայում, որտեղ 1956 թ. գարնանը համընդհանուր կարճատև գործադուլ եղավ։ Գործադուլային շարժումը և կոլեկտիվ պայմանագրերի պարբերաբար վերակնքման ժամանակ ֆաբրիկանտների վրա արհմիությունների ճնշումը սովորաբար աշխատավորներին հաջողություն էին բերում։ Պայքարի ակտիվ մասնակիցն էին կոմունիստները, որոնք հաղթահարելով աղանդավորական սխալները, նորացնելով իրենց ծրագրային փաստաթղթերը, բանվոր դասակարգի գործողությունների միասնության հասնելու կուրս էին վերցրել։ 50-ական թվականների կեսին կայացած պառլամենտական ընտրություններում կոմունիստներն ստացան մի քանի նոր մանդատներ, այն դեպքում, երբ սոցիալ-դեմոկրատների դիրքերը թուլացել էին (բացի Նորվեգիայից, որտեղ կոմունիստական կուսակցությունը 1949 թ. իր պառակտման հետևանքներից ուշքի չէր եկել)։

50-ական թվականների վերջին, միջազգային լարվածության թուլացման պայմաններում, Սկանդինավիայում նոր քաղաքական ձախ տեղաշարժ կատարվեց։ Կառավարող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները հանդես եկան հանրածանոթ ռեֆորմների առաջարկություններով ու պլաններով, ամենևին չշոշափելով բուրժուական հասարակության հիմքերը։ Ավելի արմատական էր շվեդական սոցիալ-դեմոկրատական թոշակային ռեֆորմի նախագիծը, որը 1957 թ. աշնանն առաջ բերեց ագրարայիններ հետ սոցիալ-դեմոկրատների կառավարական «կարմրա-կանաչ» կոալիցիայի քայքայումը (Շվեդիայի և Նորվեգիայի գյուղացիական կուսակցությունները այդ ժամանակ, նկատի ունենալով ֆերմերականության շարքերի արագ կրճատումը, վերանվանվեցին կենտրոնի կուսակցություն)։ Ստեղծվեց սոցիալ-դեմոկրատական փոքրամասնության կառավարություն, ստանալով պառլամենտում նրան պակասող շվեդական կոմունիստների ձայները, որոնց դերն աճել էր։ Նույն 1957 թ. գարնանը Դանիայում ձախողվեց իշխանության գլուխ անցնելու բուրժուական օպոզիցիայի փորձը, և 1945 թվականից հետո առաջին անգամ կազմավորվեց սոցիալ-դեմոկրատներից, ռադիկալներից և էլի մեկ մանրբուրժուական կուսակցությունից կազմված պառլամենտական մեծամասնության կոալիցիոն կառավարություն («եռանկյունու կառավարություն»), որը գոյություն ունեցավ մինչև 1964 թ.։ Իսլանդիայում 1956—1958 թթ. ընթացքում իշխանության գլուխ էր գտնվում առաջադիմական կուսակցության (ագրարայիններ), սոցիալ-դեմոկրատների և ժողովրդական միության՝ կոմունիստների (Իսլանդիայի սոցիալիստական միասնական կուսակցության) և ձախ սոցիալիստների բլոկի կոալիցիոն կառավարությունը։ Դա ՆԱՏՕ-ի անդամ երկրի կառավարությանը կոմունիստների մասնակցության առաջին դեպքն էր։

Տնտեսական դրության կայունացման ժամանակ (հատկապես Դանիայում, որտեղ 1957 թվականից երկարատև անշարժությունը փոխարինվեց կտրուկ վերելքով) սոցիալ-դեմոկրատական կաբինետների պառլամենտական բազայի ամրապնդումը հնարավորություն տվեց վերսկսել սոցիալական ռեֆորմների անցկացումը։ Դրանցից ամենահայտնին վերը նշված 1969 թ. թոշակային ռեֆորմն էր Շվեդիայում։ Սկսվեց սոցիալական նպաստների վե-

բաբերյալ դրույթների վերանայումը մյուս երեք երկրներում։ 1953 թ. դանիական պառլամենտական, ամբողջությամբ վերցրած առաջադիմական, ռեֆորմին (անցումը միապալատ պառլամենտին) հետևեցին 1953 թ. Նորվեգիայի և 1959 թ. Իսլանդիայի ընտրական ռեֆորմները (գյուղական «փտած տեղերի» հաշվին քաղաքային ընտրական օկրուգների օգտին մանդատների վերաբաշխումը)։ Շվեդական նոր, ավելի դեմոկրատական սահմանադրությունը վերջնականապես ընդունվեց բավականին ուշ՝ 1974 թ.։

Ամբողջ 60-ական և 70-ական թվականների սկզբում Սկանդինավիայում քաղաքական հակասությունները, ինչպես և բուրժուական աշխարհի մյուս շատ մասերում, սրվեցին։ Հասարակական-քաղաքական ուժերը բևեռացան, աճեցին նոր խմբավորումներ, որոնք սոցիալ-դեմոկրատներից ձախ էին կանգնած, հաղթահարելով տարաձայնությունների նշանակալի մասը՝ բուրժուական, հատկապես ձախ-բուրժուական, «ցենտրիստական» կուսակցությունները փոխադարձաբար մերձեցան։

Ձախ ուժերի աճը պայմանավորված էր առաջին հերթին սկանդինավյան պետական-մոնոպոլիստական «բարեկեցիկ հասարակության», իբրև բուրժուական աշխարհի բաղկացուցիչ մասի, արմատական արատներով։ Մասսայական ռադիկալ շարժումը, հատկապես երիտասարդականը, հանդես էր գալիս պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի էկոնոմիկայի, քաղաքականության, գաղափարախոսության արմատական արատների, ամբողջությամբ վերցրած «սիստեմի» դեմ։ Այդ բողոքն ուղղված էր ոչ միայն համապատասխան երկրի «ներսի», այլև դրսի, համաշխարհային իմպերիալիզմի դեմ։ Կուբայական հեղափոխության հաղթանակը, գաղութատիրության մնացորդների և ռասիստական ռեժիմների դեմ պայքարը Աֆրիկայում, ԱՄՆ-ում նեգրերի քաղաքացիական իրավունքների համար պայքարը և հատկապես վիետնամական ժողովրդի հերոսական պայքարը համակրանքի արձագանք առաջ բերեցին Սկանդինավիայում։ 50—60-ական թվականների սահմանագծին ատոմային ռումբի, միջուկային փորձարկումների և Արևմտյան Գերմանիայի վերառազմականացման դեմ հասարակական կամպանիաներին փոխարինելու եկավ մարտնչող Վիետնամին օգնելու ավելի հզոր և կազմակերպված շարժումը. բուն այդ տասնամյակն ստացավ (Շվեդիայում, ուր շարժումն ընդունեց համեմատաբար մեծ թափ) «Վիետնամի տասնամյակ» անվանումը։

Դժբախտաբար 60-ական թվականներին զանգվածների ռադիկալացման և հասարակական կարծիքի պրոցեսը, սկանդինավյան հակաիմպերիալիզմի աճը չկարողացան իրենց ղեկավարության տակ առնել բանվոր դասակարգի առաջավոր մարտիկները՝ կոմունիստները։ Սոցիալիստական կուսակցությունների և խմբավորումների այն ամբողջությունը, որը չէր հարում ոչ սոցիալ-դեմոկրատներին, ոչ էլ կոմկուսներին, ստացավ «նոր ձախեր» անվանումը։ Նրանց ամենաակտիվ մասը ուսանողներն էին, որոնք համալսարանական դասավանդման և կառավարման հնացած համակարգը դեմոկրատականորեն վերափոխելու պահանջների հետ միասին առաջ էին քաշում նաև համասոցիալիստական և հակաիմպերիալիստական բնույթի, հաճախ, սակայն, շատ մըշուշապատ և տհաս պահանջներ։ Երբեմն ուսանողական շարժումը և «նոր ձախերը» ընդհանրապես ունենում էին հակասովետական ելույթներ։

«Նոր ձախ» երիտասարդության հետ աշխատանքը Սկանդինավիայի կոմունիստների կարևոր խնդիրն էր։ 1958 թ. Դանիայում ռևիզիոնիստները գործը հասցրին կոմկուսի պառակտմանը։ ԴԿԿ-ից հեռացված նրա նախկին նախագահ, փորձված և բանվորների շրջանում հանրաճանաչ քաղաքագետ Աքսել Լարսենը 1969 թ. հիմնադրեց նոր՝ ժողովրդասոցիալիստական կուսակցությունը, որն իր ծրագրով ռեֆորմիստական, բայց միաժամանակ պացիֆիստական և հականատոյական էր։ 1960 թ. ընտրություններում այդ կուսակցությունը շահելով բանվորների մի մասի և մանրբուրժուական ընտրողների համակրանքը, աննախադեպ հաջողություն ունեցավ (10 մանդատ) և երկար ժամանակ դանիական պառլամենտից (նրա անվանումը 1953 թ. նոր սահմանադրության ընդունումից հետո դարձավ ֆոլկետինգ) դուրս մղեց կոմունիստներին։ Նորվեգական բանվորական կուսակցության ներսում «Օրիենտերինգ» օպոզիցիոն հականատոյական խումբը, որ կանգնել էր հեռացման վերտանգի առջև, դանիականի նմանությամբ 1961 թ. հիմնադրեց ժողովրդասոցիալիստական կուսակցությունը։ Նույն տարվա ընտրություններում ժողովրդական սոցիալիստներն ստացան ստորտինգի երկու մանդատ։ Սակայն կառավարող ԺԲԿ-ն ստորտինգում կորցրեց բացարձակ մեծամասնությունը։ Իսլանդիայում ԻՍՄԿ-ում աջ ռևիզիոնիստական տրամադրությունների աճը 1968 թ. հասցրեց կուսակցության ինքնացրմանը և ժողովրդական միության՝ ընտրական բլոկից ձախ սոցիալիստական ռևիզիոնիստական քաղաքական կուսակցության վերափոխվելուն։

Միջակա սոցիալիստական կուսակցությունները բարդացնում էին դանիական և նորվեգական կոմկուսների դրությունը, իրենց կողմը գրավելով նրանց հնարավոր կողմնակիցների զգալի մասը։ Դա չկատարվեց Շվեդիայում, որտեղ ՇՍԴԿ-ն մեծ համբերատարություն էր ցուցաբերում սեփական ձախ օպոզիցիայի նկատմամբ, իսկ գլխավորը՝ կոմկուսի գործունեության նոր բացումն սկսվեց առաջ և կատարվեց անհամեմատ եռանդով, քան Սկանդինավյան հարևան երկրներում։ Ձախ կուսակցության կոմունիստները (ԿՁԿ՝ 1967 թվականից կուսակցության անունը) կուսակցության մեջ լայնորեն ներգրավեց սոցիալիստական իդեալներ ունեցող մարդկանց, աղատություն տվեց շարքային կոմունիստների նախաձեռնությանը։ ԿՁԿ-ն Շվեդիայի հասարակական կյանքի կենսական հարցերում առաջ քաշեց ալտերնատիվային առաջարկություններ, հիմնավոր քննադատության ենթարկեց ՇՍԴԿ-ին՝ մոնոպոլիաների շահերին մշտապես հարմարվելու համար, բայց միաժամանակ օժանդակում էր սոցիալ-դեմոկրատներին՝ բուրժուական օպոզիցիայի դեմ։ ԿՁԿ-ի աշխատանքի վերակառուցումը ուղեկցվում էր, սակայն, լուրջ աջ ռևիզիոնիստական սխալներով, օրինակ, միջազգային կոմունիստական շարժումից ժամանակավոր ինքնամեկուսացումով։ Այդ սխալները դիմադրության հանդիպեցին բուն ԿՁԿ-ում. ներկուսակցական պայքարը մերթ ընդ մերթ հասնում էր մեծ սրության, և միայն 70-ական թվականների սկզբին ոչ առանց կոմկուսների 1969 թ. Մոսկովյան խորհրդակցության ներգործության կուսակցությունն սկսեց համախմբվել սկզբունքային առողջ հիմքի վրա։ ԿՁԿ-ն կարողացավ դառնալ երկրի տարբեր ձախ ուժերի ձգողական կենտրոնը և նոր, միապալատ ռիկսդագի (ընտրական ռեֆորմից հետո, որը վերջնականապես ընդունվեց 1969 թ.) 70-ական թվականների երկու առաջին պառլամենտական ընտրություններում ստացավ ձայների մոտ 5 %-ը և 17—19 մանդատներ (350-ից)։

ԿՁԿ-ի ամրապնդումը համընկավ Շվեդիայի բանվորական շարժման նոր վերելքին՝ «վայրի» գործադուլների ալիքին։ Դրանցից ամենահայտնին 1969/70 թ. ձմռանը Անդրբևեռի, Կիրունիի շրջանի պետական երկաթահանքերի հանքագործների գործադուլն էր։

60—70-ական թվականների սահմանագծին որոշակի հաջողությունների հասավ նաև դանիական կոմկուսը, որն իր դիրքերն ամրապնդել էր մի շարք արհմիություններում։ Այդ ոչ մեծ կուսակցությունը ավելի հետևողականորեն էր հանդես գալիս սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, միջազգային կոմունիստական շարժման համախմբման օգտին (Սկանդինավիայի կոմկուս-

ներից միակը, որը ստորագրեց 1969 թ. խորհրդակցության հիմնական փաստաթուղթը)։

«Ընդհանուր շուկայի» մեջ Դանիայի և Նորվեգիայի մտնելու դեմ ամենալայն հասարակական կամպանիայի ընթացքում (տե՛ս ստորև), պատերազմական տարիների հակաֆաշիստական դիմադրական շարժումից հետո առաջին անգամ, նշված երկրներից յուրաքանչյուրում՝ կոմունիստների ամենագործարար մասնակցությամբ հարթվեց ձախ ուժերի կազմակերպված համագործակցությունը։ Նորվեգական ստորտինգի և դանիական ֆոլկետինգի 1973 թ. ընտրությունները, 50-ական թվականներից հետո առաջին անգամ, փաստորեն վերադարձրին պառլամենտական ներկայացուցչությունները նորվեգական և դանիական կոմունիստներին։

Սկանդինավիայի բուրժուական կուսակցությունները 60-ական թվականներին վերցրին ավելի ճկուն կուրս, փոխադարձ բանավեճերը հասցնելով նվազագույնի և ձգտեցին հանդես գալ միասնական ճակատով։ Սոցիալ-դեմոկրատիայի կուսակցությունները, կատարելով սոցիալական ռեֆորմների ծրագրերը, չկարողացան իրենց կողմը գրավել երիտասարդ ընտրողների հիմնական զանգվածին և հաղթահարել իրենց հին կողմնակիցների մեծ մասի պասսիվությունը։ 1965 թ. Նորվեգիայում, 1968 թ. Դանիայում բուրժուական կուսակցությունները, չնայած աննշան մեծամասնությամբ, հաղթեցին ընտրություններում և տասնյակ տարիների ընթացքում առաջին անգամ կազմեցին կոալիցիոն կառավարություն։ Երկու դեպքում էլ պրեմիեր մինիստրի պորտֆելը տրվեց Դանիայում՝ մանրբուրժուական ռադիկալների կուսակցությանը (առևտրական խ. Բաունսգոր) և Նորվեգիայում՝ կենտրոնի կուսակցությանը (գյուղատնտես Պ. Բորտեն)։ Վերջապես, Շվեդիայում 1969 թ. ՇՍԴԿ-ի նախագահ և կառավարության ղեկավար դարձավ Էոլանդերի նախկին քարտուղար, հետո նրա կառավարության մինիստր Ուլոֆ Պալմեն։

Ամբողջությամբ վերցրած բուրժուական կաբինետները շարունակում էին սոցիալ-դեմոկրատական իրենց նախորդների ներքին ու արտաքին քաղաքականությունը, սակայն մեծ զիջումներ անելով մասնավոր կապիտալին և չնայած կառավարության կուսակցական գունավորմանը, պետության տնտեսական գործունեության ոլորտը, էկոնոմիկայի վրա նրա վերահսկողությունը շարունակում էր ընդարձակվել։ 60—70-ական թվականներին Սկանդինավիայի ներքին քաղաքականության գլխավոր հարցերն էին գների ինֆլյացիոն աճին, վճարունակ հաշվեկշռի խրոնիկական դեֆիցիտին, իսկ 1973 թ. վերջից նաև էներգետիկ ճգնաժամին հակազդելու միջոցները, շվեդական և նորվեգական հետ մնացող շրջաններին՝ Անդրբևեռին, Դանիական Յուտլանդիային օգնություն ցույց տալու չափերը, անուղղակի հարկերի բաժինն ավելացնելու նպատակով հարկային համակարգը փոխելը, աշխատավորների ներկայացուցիչներից կազմված արտադրական կոմիտեների իրավունքների սահմանումը կամ ընդարձակումը, թմրամոլության և երիտասարդության մի մասի հակասոցիալական վարմունքի այլ ձևերի դեմ պայքարը, բնական միջավայրի աղտոտմանը հակազդելը։

Սկանդինավյան երկրների արտաքին քաղաքականությունը

Հետպատերազմյան առաջին տարիներին սկանդինավյան բոլոր պետությունները մերժեցին նախապատերազմյան պասսիվ մեկուսացումը։ Նրանք դարձան ՄԱԿ-ի անդամ, իսկ Նորվեգիան և Դանիան, որպես հակահիտլերյան կոալիցիայի անդամ, դարձան նույնիսկ նրա համահիմնադիրներ։ Բարելավվեցին սովետա-սկանդինավյան հարաբերությունները, փոփոխությունը ուրվագծվեց դեռևս պատերազմի վերջին տարիներին։ Պատերազմից չտուժած Շվեդիան Սովետական Միությանը իր պատմության մեջ

խոշորագույն մեկ միլիարդ կրոնի վարկ տվեց մեր պատվերների վճարման համար (1946)։

Սկանդինավյան պետությունների արտաքին քաղաքական կուրսի մերձեցումը, ֆաշիզմի դեմ տարած հաղթանակից հետո հակահիտլերյան կոալիցիայի քայքայման և անգլո-ամերիկյան իմպերիալիստների սանձազերծած «սառը պատերազմի» հետ միաժամանակ, կյանքի կոչեց սկանդինավյան պաշտպանական դաշինքի գաղափարը, որը առաջացել էր դեռևս 30-ական թվականներին։ Նման դաշինքի վերաբերյալ Շվեդիայի, Դանիայի և Նորվեգիայի միջև բանակցությունները վարվում էին ամբողջ 1948 թ. ընթացքում, բայց արդյունք չտվեցին։ Շվեդիան պաշտպանում էր ապագա դաշինքի չեզոք բնույթը, իսկ Նորվեգիան գերադասում էր նրա պրոամերիկյան կողմնորոշումը։ Ամերիկյան դիվանագիտությունը փաստորեն շանտաժի էր ենթարկում սկանդինավցիներին, նրանց վախեցնելով «սովետական սպառնալիքով» և զգուշացնում էր անգլո-ամերիկյան բլոկին չմիանալու դեպքում նրանց ռազմական նյութեր մատակարարելուց հրաժարվելու մասին։ 1949 թ. գարնանը Դանիան, Նորվեգիան և Իսլանդիան դարձան ՆԱՏՕ-ի անդամ-համահիմնադիրներ։ Որպես փաստարկներ, որոնցով այդ երկրների կառավարող շրջանները փորձում էին արդարացնել այդ որոշումը, բերվում էին ազգային անվտանգության տագնապը, վկայակոչելով երկրորդ համաշխարհային պատերազմի փորձը, իրենց ուժերով պաշտպանության հնարավորությանը չհավատալը, ԱՄՆ-ից և Անգլիայից տնտեսապես կախված լինելը։ Ավելի ուժեղ Շվեդիան հաստատեց մեծ տերությունների բլոկին չմասնակցելու, այսինքն չեզոքության, ժամանակի քննությունը բռնած քաղաքականությունը շարունակելու իր վճռականությունը։

ՆԱՏՕ-ի մեջ Դանիայի և Նորվեգիայի մտնելն ուղեկցվեց դանիական և նորվեգական պետական գործիչների այն հայտարարություններով, թե իրենց տարածքներում խաղաղ ժամանակ օտարերկրյա զինված ուժեր չեն տեղաբաշխվի։ Իսլանդիան հայտարարեց իր մտադրության մասին՝ այսուհետև էլ մնալ անզեն և հետագայում չմտավ ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպության մեջ։ Սակայն կղզում՝ Կեֆլավիկում, պատերազմի ժամանակներից պահպանվում էր ամերիկյան, հետագայում ՆԱՏՕ-ի ռազմաօդային բազան, կոմպլեկտավորված ամերիկյան զինծառայողներով, իսկ Դանիական Գրենլանդիայում՝ ամերիկյան դիտարկման ծառայությունը։

Սկանդինավյան պետությունների արտաքին քաղաքական սահմանազատումը լիակատար չէր և քիչ անդրադարձավ նրանց փոխհարաբերությունների վրա։ Նրանք բոլորը համագործակցում էին մի շարք արևմտաեվրոպական և միջազգային տնտեսական ու քաղաքական կազմակերպություններում։ 1952 թ. դանիական նախաձեռնությամբ սկսեց գործել չորս պետությունների (1955 թվականից նաև Ֆինլանդիայի) պառլամենտների ու պետությունների ներկայացուցիչներից կազմված Հյուսիսային կոնսուլտատիվ խորհուրդը։ Խորհրդի նպատակն էր աջակցել մասնակից երկրների բոլոր բնագավառներում համագործակցությանը և փոխադարձ մերձեցմանը, բայց առանց վնաս պատճառելու մեծ տերությունների հետ նրանց փոխհարաբերություններին։ Հյուսիսային խորհուրդը հանձնարարականներ տվեց, իսկ համապատասխան կառավարություններն ընդունեցին և մեծ թվով զուգահեռ միջոցառումներ իրականացրին համաիրավական, սոցիալական օրենսդրության բնագավառներում, ժողովրդական լուսավորության և կուլտուրայի ոլորտում։ Ներկայումս Հյուսիսային խորհրդի երկրներում իրավական նորմերն ավելի մոտ են, քան ԱՄՆ-ի առանձին նահանգներում։ Հյուսիսային երկրներից յուրաքանչյուրի քաղաքացիները ազատորեն բնակվում, աշխատանքի են տեղավորվում և սո-

ցիալական ապահովության իրավունք են ձեռք բերում Հյուսիսային Եվրոպայի ամեն մի կետում։ Հյուսիսային խորհրդի հովանու ներքո գործում են տասնյակ ռեգիոնալ կառավարական և հասարակական կազմակերպություններ, որոնց մի մասն առաջացել էր բուն խորհրդից առաջ։ Խորհրդի հանձնարարականները պարտադիր չեն մասնակից երկրների համար, սակայն նրանց կառավարությունները խորհրդին պետք է զեկուցեն այդ հանձնարարականներով անցկացված միջոցառումների մասին։ Հյուսիսային խորհրդի գործունեությունը նվազագույն չափով հաջող ստացվեց զուտ տնտեսական բնագավառում. հյուսիսային մաքսային միության, տնտեսական միավորման («Նորդեքս» պլանը), ծագումով գլխավորապես դանիաշվեդական, պլանները մնացին թղթի վրա։

50-ական թվականների կեսին Սկանդինավիայում նորից սկսեցին բարելավվել ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները, միջազգային լարվածության որոշ թուլացումը գոհունակությամբ ընդունվեց։ 1953 թվականից սկսած մեծաթիվ երկկողմ համաձայնագրեր կնքվեցին էկոնոմիկայի, տրանսպորտի, գիտության և կուլտուրայի տարբեր բնագավառների համագործակցության վերաբերյալ, կարճաժամկետ և երկարաժամկետ արձանագրություններ՝ ապրանքաշրջանառության մասին։ Սովետա-սկանդինավյան, հատկապես սովետա-շվեդական հարաբերությունների բարելավմանը նպաստեց նաև ՍՍՀՄ-ի հետ Ֆինլանդիայի հարաբերությունների հաջող զարգացումը։ Սովետական Միության և Արևելյան Եվրոպայի երկրների հետ ապրանքաշրջանառությունը, որ նախկինում կրճատվել էր, նորից սկսեց աճել, հատկապես 60-ական թվականների կեսից։ Ըստ բացարձակ ցուցանիշների ՍՍՀՄ-ի հետ առևտուրը բարձր էր միայն Շվեդիայի հետ, ըստ հարաբերության՝ ՍՍՀՄ-ին ձկնամթերքների խոշոր մատակարար Իսլանդիայի հետ։

Կորեայում պատերազմի ավարտումով և ՄԱԿ-ի կազմում երիտասարդ չմիացած երկրների թվի աճով աշխուժացավ սկանդինավյան պետությունների գործունեությունն այդ կազմակերպությունում, չնայած ՄԱԿ-ում նրանք առաջվա պես պահպանում էին չափավոր պրոարևմտյան գիծ։ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում և Անվտանգության խորհրդում նրանց դիրքն ԱՄՆ-ի նկատմամբ դարձավ ավելի ինքնուրույն (դա հատկապես վերաբերում է Շվեդիային) և փոխադարձորեն ավելի համաձայնեցված։ Սկանդինավյան տերությունները պատրաստակամությամբ ՄԱԿ-ի տրամադրության տակ էին ուղարկում դիտորդներ, միջնորդներ ու ամբողջ զինվորական կոնտինգենտներ։ ՄԱԿ-ի առաջին երկու գլխավոր քարտուղարները սկանդինավցիներ էին՝ համապատասխանաբար նորվեգացի և շվեդ։

Դանիան, Նորվեգիան և Իսլանդիան մնացին ՆԱՏՕ-ի անդամ, իսկ չեզոք Շվեդիան, ելնելով «զինված չեզոքության» իր պաշտոնական կոնցեպցիայից, մասնակցում էր սովորական զենքի մրցավազքին։ Դանիացիների, նորվեգացիների և շվեդների ռազմական ծախսերը հասան իրենց պատմության մեջ չտեսնված բազմամիլիարդ թվերի, ծանրաբեռնելով ժողովրդական տնտեսությունը և ուժեղացնելով ինֆլյացիան։ Դանիայի և Նորվեգիայի տարածքներում ռազմական շինարարությունը կատարվում էր ՆԱՏՕ-ի ընդհանուր ստրատեգիայի շրջանակներում։ Երկու երկրներն էլ խճճվեցին օդանավակայանների, ծովային կառույցների, թաքստոցների, պահեստների, ռադարային և օդերևութաբանական սարքերի ցանցով։ Չնայած բողոքի բազմամյա շարժմանը, ամերիկյան զինվորականները այդպես էլ չհեռացան Իսլանդիայից։

50-ական թվականների վերջին Սկանդինավյան երեք երկրների կառավարությունները, որոնք ունեին ազգային զինված ուժեր, իրենց վճռականությունը հայտնեցին շարտադրել և իրենց մոտ չտեղաբաշխել միջուկային զենք։ Դանիան և Նորվեգիան դրանով իսկ միաժամանակ հաստատեցին նաև իրենց այսպես կոչված բազային վերապահումներն օտարերկրյա զինված ուժերի նկատմամբ։ 60-ական թվականներին Սկանդինավյան բոլոր պետությունները ողջունեցին միջուկային զենքը չտարածելու պայմանագիրը և միացան դրան, հանդես եկան վիետնամական կոնֆլիկտի խաղաղ կարգավորման օգտին։ Շվեդական կառավարությունը մյուս արևմտաեվրոպական պետություններից առավել վճռականորեն դատապարտեց ամերիկյան քաղաքականությունը Հարավարևելյան Ասիայում, դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՎԴՀ-ի հետ, վիետնամական պատերազմի տարիներին ապաստան տվեց ԱՄՆ-ի բանակի շարքերը լքած ամերիկացիներին։

ԳԼՈՒԽ 21

ՖԻՆԼԱՆԴԻԱ

Հետպատերազմյան դեմոկրատացումը

1944 թ. սեպտեմբերին Ֆինլանդիան դուրս եկավ պատերազմից, զինադադար կնքելով ՍՍՀՄ-ի և Անգլիայի հետ։ Նա տվեց մոտ 60 հազար սպանված և համարյա այդքան էլ հաշմանդամ։ Արդյունաբերական արտադրանքի ծավալը, 1938 թ. համեմատությամբ, կրճատվեց մեկ վեցերորդով, գյուղատնտեսականը՝ մեկ երրորդով։ Պատերազմի տարիներին պետական պարտքն աճեց և 3,3 միլիարդից հասավ 67,3 միլիարդ մարկի։ Չէին բավականացնում հումքը, պարարտանյութերը, վառելիքը, պարենամթերքը։ Սովետական Միությունը Ֆինլանդիային պարենային օգնություն ցույց տվեց։ 1945 թ. սկզբին նա հանքային հումքի և մետաղների փոխարեն սկսեց հացահատիկ և շաքար մատակարարել Ֆինլանդիային։ Սովետական Միության հետ տնտեսական և առևտրական հարաբերությունները կարևոր գործոն դարձան Ֆինլանդիայի էկոնոմիկայի վերականգնման, երկրում մեքենաշինության, մետաղամշակման զարգացման համար։

Զինադադարի պայմանների համաձայն ֆաշիստական կազմակերպություններն արգելվեցին, քաղբանտարկյալներն ազատվեցին։ Սկսեց դեմոկրատական ուժերի ակտիվության բուռն վերելք։ Հիմնադրվեցին մամուլի ձախ օրգաններ և կազմակերպություններ։ Կոմունիստական կուսակցությունը առաջինը Ֆինլանդիայում դարձավ լեգալ և սկսեց արագորեն աճել։ 1945 թ. վերջերին նա արդեն իր շարքերում ուներ ավելի քան 20 հազար անդամ։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ընդհակառակը, ճգնաժամ էր ապրում։ Նրանում առաջացավ ուժեղ ձախ օպոզիցիա, որը պահանջում էր ղեկավար պոստերից վտարել այն գործիչներին, որոնք վարել էին պատերազմական քաղաքականություն։ 1944 թ. նոյեմբերին կայացած համագումարում աջերին մեծ դժվարությամբ հաջողվեց ղեկավարությունը պահել իրենց ձեռքում։

Կոմկուսը առաջ բաշեց բոլոր դեմոկրատական և հակաֆաշիստական ուժերը ռեակցիայի և ֆաշիզմի դեմ, հանուն դեմոկրատական ռեֆորմների համախմբելու լոզունգը։ 1944 թ. հոկտեմբերի վերջին ՖԿԿ-ի և իրենց կուսակ-

ցությունից վտարված ձախ սոցիալ-դեմոկրատների նախաձեռնությամբ հիմնադրվեց Ֆինլանդիայի ժողովրդի դեմոկրատական միությունը (ՖԺԴՄ), որը դարձավ երկրի առաջադեմ ուժերի մասսայական կազմակերպություն։ Նրա մեջ մտան կոմկուսը, ակադեմիական սոցիալիստական ընկերությունը, սոցիալ-դեմոկրատական մի քանի կազմակերպություններ, իսկ հետո՝ 1944 թ. դեկտեմբերին հիմնադրված Ֆինլանդիայի կանանց դեմոկրատական միությունը և 1945 թ. հունվարին՝ Ֆինլանդիայի երիտասարդական դեմոկրատական միությունը։ Ֆինլանդիայի արհմիությունների կենտրոնական միավորման (ՖԱԿՄ) ղեկավարությունը դատապարտեց պատերազմը պաշտպանելու իր նախկին դիրքը։ 1944 թ. սեպտեմբերից մինչև 1945 թ. վերջը ՖԱԿՄ-ի շարքերն աճեցին և 83 հազարից հասան մինչև 300 հազարի՝ թվեր, որոնք Ֆինլանդիան դեռևս չէր տեսել, չնայած երկիրը առաջ էլ աչքի էր ընկնում բանվորական շարժման կազմակերպվածության բարձր մակարդակով։ Բանվոր դասակարգը ակտիվ պայքար ծավալեց հանուն կենսամակարդակի բարձրացման։

1944 թ. նոյեմբերին կազմվեց Պաասիկիվիի առաջին կառավարությունը։ Ֆինլանդիայի պատմության մեջ առաջին անգամ կառավարության կազմի մեջ մտավ կոմունիստ։ 1945 թ. մարտին կայացած պառլամենտական ընտրություններն արտացոլեցին դեպի ձախ կատարված մեծ տեղաշարժը։ Կոմկուսի ղեկավարած ՖԺԴՄ-ն պառլամենտի 200 տեղից ստացավ 49 տեղ՝ մեկ տեղ պակաս, քան սոցիալ-դեմոկրատները, և այնքան, որքան ավանդական գյուղացիական կուսակցությունը՝ ագրարային միությունը։ Այդ երեք խոշոր ֆրակցիաների միջև (դրանց անվանում էին «երեք մեծեր») 1945 թ. ապրիլին, ՖԺԴՄ-ի առաջարկությամբ համագործակցության վերաբերյալ համաձայնություն կնքվեց։ Դրա հիման վրա կազմավորվեց Պաասիկիվիի երկրորդ կառավարությունը։ Նրա մեջ մտան երեք կոմունիստներ։

Պաասիկիվիի առաջին և երկրորդ կառավարությունների ժամանակ վերացվեցին պատերազմական ժամանակի արտակարգ օրենքները, վերականգնվեցին դեմոկրատական ազատությունները։ Նախկին պրեզիդենտ Ռյուտին, պատերազմական ժամանակաշրջանի պրեմիեր մինիստրները, ինչպես նաև Տաները և մի քանի այլ գործիչներ դատարանի առջև կանգնեցին, որպես պատերազմին ֆաշիստական Գերմանիայի կողմից Ֆինլանդիայի մասնակցելու հանցավորներ։ Նրանք բոլորը դատապարտվեցին բանտարկության։

1946 թ. մարտին հրաժարական տված Մաններհայմի փոխարեն պրեզիդենտ ընտրվեց Պաասիկիվին։ Նոր կաբինետը, որն ստեղծվեց «երեք մեծերի» համագործակցության բազայի վրա և ընդգրկելով երեք կոմունիստների, գլխավորեց ՖԺԴՄ-ի անդամ Մաունո Պեկալան։ Պեկալայի կառավարությունն անցկացրեց աշխատավորների օգտին մի շարք քաղաքական և սոցիալական ռեֆորմներ։ Պետական ապարատը մաքրվեց ֆաշիստական տարրերից, աշխատանքի սկսեցին ընդունել նաև ՖԺԴՄ-ի անդամներին։ Նախկին քաղաքական ոստիկանությունը փոխարինվեց դեմոկրատական պետական ոստիկանությամբ։ Չնայած կառավարության միջոցառումները չէին շոշափում մոնոպոլիաների տնտեսական իշխանությունը և «20 ընտանիքներ» առաջվա պես վերահսկում էին արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրության մեծ մասի վրա, Պեկալայի կառավարության քաղաքականությունը առաջ բերեց բուրժուական շրջանների դժգոհությունը, և նրանք սպասում էին նրան տապալելու հարմար պահին։

«Պաասիկիվիի գիծը»։ ՍՍՀՄ-ի հետ բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը

Տանուլ տված պատերազմի դասերը Ֆինլանդիային ստիպեցին վարել այնպիսի քաղաքականություն, որով ապահովվեր հետագայում նման դժբախտություններ չկրկնելը։ Կոմունիստները և մյուս ձախ ուժերը, որոնք այժմ արդեն մեծ ազդեցություն ունեին, պահանջում էին ՍՍՀՄ-ի հետ զարգացնել բարիդրացիական հարաբերություններ։ 1944 թ. հոկտեմբերին հիմնադրվեց «Ֆինլանդիա—ՍՍՀՄ» ընկերությունը, որի շարքերը արագորեն աճեցին։ ՍՍՀՄ-ի նկատմամբ նոր կուրսի հիմնադիրը դարձավ Պաասիկիվին։ Նա ընդգծեց այնպիսի քաղաքականության անհրաժեշտությունը, որը ՍՍՀՄ-ի մոտ լրիվ վստահություն առաջացներ Ֆինլանդիայի նկատմամբ։ Դեմոկրատական ուժերը պաշտպանեցին «Պաասիկիվիի գիծը», աջ շրջաններն ամեն քայլափոխում սաբոտաժի էին ենթարկում այն։

«Պաասիկիվիի գծին» նպաստեց Սովետական Միության քաղաքականությունը։ Նա մեծ տերություններից առաջինը 1945 թ. օգոստոսին Ֆինլանդիայի հետ վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները։ 1946 թ. վերջին սովետական կառավարությունը երկու տարով երկարաձգեց ռեպարացիաների վճարման ժամկետը, այսինքն մինչև 1952 թ. (որը մեկուկես անգամ կրճատեց ամենամյա մատակարարումների գումարը), իսկ 1948 թ. հունիսին կիսով չափ կրճատեց մնացած ռեպարացիաների գումարը։

1947 թ. փետրվարի 10-ին Փարիզում Ֆինլանդիայի և նրա հետ պատերազմական վիճակի մեջ գտնվող երկրների միջև հաշտության պայմանագիր ստորագրվեց, հաստատելով զինադադարի պայմանները։

1948 թ. ապրիլի 6-ին ՍՍՀՄ-ի նախաձեռնությամբ կնքվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության սովետա-ֆինլանդական պայմանագիրը։ Կողմերը պարտավորվեցին չմիջամտել մեկը մյուսի ներքին գործերին, զարգացնել տնտեսական և կուլտուրական կապերը, իսկ ռազմական հարձակման սպառնալիքի դեպքում խորհրդակցել միմյանց հետ։ Ֆինլանդիան պարտավորվեց հակահարված տալ իր տարածքի վրայով ՍՍՀՄ-ի դեմ ուղղված ագրեսիային, անհրաժեշտության դեպքում ընդունելով սովետական օգնությունը։ Պայմանագիրը դարձավ երկու երկրների իսկական բարիդրացիական հարաբերությունների հիմքը։

«Առանց կոմունիստների» կառավարման ժամանակաշրջանը (1948—1966 թթ.)

Հաշտության և 1948 թ. պայմանագրերը ամրապնդեցին Ֆինլանդիայի արտաքին քաղաքական դիրքերը։ «Սառը պատերազմի» սկսվելով հետադեմ շրջանները որոշեցին, թե հասել է երկրի քաղաքականության մեջ շրջադարձ կատարելու պահը։ Ուժեղացան Պեկալայի կաբինետի և հատկապես կոմունիստների վրա հարձակումները։ 1948 թ. փետրվարին Չեխոսլովակիայի բանվոր դասակարգի հաղթանակից հետո Ֆինլանդիայի բուրժուական շրջաններն սկսեցին լուրեր տարածել, իբրև թե ֆինլանդական կոմունիստները պետական հեղաշրջում են նախապատրաստում։ 1948 թ. մայիսին պառլամենտն անվստահություն հայտնեց կոմունիստ ներքին գործերի մինիստրին։ Սոցիալ-դեմոկրատները և ագրարային միությունը չեղյալ հայտարարեցին «երեք մեծերի» համաձայնությունը։ ԱՄՆ-ը, ձգտելով աջերի համար բարենպաստության ոգով ներգործել պառլամենտական ընտրությունների վրա, հայտարարեց Ֆինլանդիային 40 միլիոն դոլարի վարկ տրամադրելու մասին։ Հակակոմունիստական կամպանիայի հետևանքով ՖԺԴՄ-ն 1948 թ. հուլիսի ընտրություններում կորցրեց 11 մանդատ։ Հուլիսի վերջին ստեղծվեց միակուսակցական ֆագերհոլմի սոցիալ-դեմոկրատական կառավարությունը։ Նա ետ շրջեց այն պրոցեսը, որ սկսվել էր դեմոկրատա-

կան համագործակցության կառավարությունների ժամանակ։ Արևմուտքի հետ մերձեցման կառավարության կողմնորոշումը և երկրի ներսում հակակոմունիստական քաղաքականությունը այն հետևանքն ունեցան, որ վատացան ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները, թուլացան տնտեսական կապերը։ Առաջացավ գործազրկություն. 1949 թ. վերջերին հաշվվում էր համարյա 70 հազար գործազուրկ։ Ֆագերհոլմի կառավարությունն անուժ էր գլուխ հանելու դժվարություններից և 1950 թ. մարտին ընկավ։

Այդ ժամանակից սկսած մի քանի տարի քաղաքականության ձևավորման ղեկավարությունն անցավ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մրցակից ագրարային միությանը, որի պարագլուխները հանդես բերեցին ՍՍՀՄ-ի հետ լավ հարաբերություններ պահպանելու կարողություն։ 1950 թ. մարտից մինչև 1953 թ. նոյեմբերը փոխվեց չորս կաբինետ, որոնց գլխավորում էր ագրարային միության պարագլուխ Ու. Կեկկոնենը։ ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները կանոնավորվեցին, կնքվեց երկարաժամկետ առևտրական համաձայնագիր 1951—1955 թթ. համար (հնգամյա համաձայնագրերն այդ ժամանակից սկսած սիստեմ դարձան)։ 1955 թ. սեպտեմբերին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը երկարացվեց 20 տարով։ Միաժամանակ սովետական կառավարությունը ժամկետից շուտ հրաժարվեց Հելսինկիի մոտ գտնվող Պորկալա-Ուդդ տարածքի վարձակալությունից, որը զինադադարի և հաշտության պայմաններով 50 տարով տրվել էր Սովետական Միությանը՝ ռազմածովային բազա ստեղծելու համար։ Սովետական կողմի այդ քայլը գոհունակություն առաջ բերեց Ֆինլանդիայում և ներգործեց «Պաասիկիվիի գծի» լայն ճանաչմանը։ Ֆինլանդիան այդ նույն տարում դարձավ Հյուսիսային միության և ՄԱԿ-ի անդամ։

1956 թ. սկզբին պրեզիդենտական ընտրություններում 85-ամյա Պաասիկիվին չցանկացավ իր թեկնածությունը առաջադրել (տարվա վերջին նա մահացավ)։ Պրեզիդենտ ընտրվեց Կեկկոնենը։ Նա դարձավ իր նախորդի քաղաքականության արժանավոր շարունակողը, քաղաքականություն, որը սկսեց կոչվել «Պաասիկիվիի-Կեկկոնենի գիծ»։

50-ական թվականների առաջին կեսին ՖԱԿՄ-ի ռեֆորմիստական ղեկավարությունը ինֆլյացիան կանխելու պատրվակով շարունակում էր կասեցնել աշխատավարձի բարձրացման համար բանվորների պայքարը։ 1951 թ. նա ձեռնարկատերերի կենտրոնական միության հետ տնտեսական «զինադադարի» համաձայնագիր կնքեց։ Այն արհմիությունները, որոնք կոմունիստների հետ պայքարում էին աշխատավարձի բարձրացման համար, հեռացվեցին ՖԱԿՄ-ից։ Բայց 1956 թ. մոտերքը շարքային անդամների ճնշմամբ ՖԱԿՄ-ի ղեկավարությունը ևս սկսեց պաշտպանել բանվորների աշխատավարձը բարձրացնելու պահանջը։ 1955 թ. մարտի 1-ից մինչև 19-ը ընդհանուր գործադուլ անցկացվեց, որին մասնակցեցին մոտ կես միլիոն բանվորներ։ Փաստորեն կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև գործողությունների միասնություն իրականացվեց։ Բանվորները հաղթեցին, բայց շուտով գների և հարկերի աճը զրոյի հավասարեցրեց աշխատավարձի բարձրացումը։

1957 թ. Տաների սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ ընտրվելուց հետո կուսակցության ղեկավարության հակակոմունիստական գիծն ուժեղացավ։ Դա սոցիալ-դեմոկրատական շարժման ճգնաժամ առաջ բերեց։ 1959 թ. աջ ղեկավարության նկատմամբ օպոզիցիոն ուժերը հիմնադրեցին ավելի ձախ ոչ մեծ կուսակցությունը՝ բանվորների և մանր հողագործների սոցիալ-դեմոկրատական միությունը (ՍԴՄ)։ Օպոզիցիայի առանձնանալուց հետո սոցիալ-դեմոկրատները ՖԱԿՄ-ի ղեկավարությունում կորցրին մեծամասնությունը։ Այն ժամանակ նրանք ՖԱԿՄ-ից անջատեցին արհմիու-

թյունների մի մասը, 1960 թ. նոյեմբերին ստեղծելով Ֆինլանդիայի արհմիութենական կազմակերպությունը (ՖԱԿ)։ Սակայն արհմիությունների մեծ մասը մնաց ՖԱԿՄ-ի կազմում։ Սոցիալ-դեմոկրատները պառակտեցին նաև բանվորական մյուս կազմակերպությունները։ Դա թուլացրեց բանվոր դասակարգի մարտունակությունը։

1958 թ. պառլամենտական ընտրություններից հետո ՖԺԴՄ-ն պառլամենտում ուներ ամենախոշոր ֆրակցիան, բայց կառավարություն կազմելուն մասնակցելուց նորից մի կողմ մղվեց։ Ֆագերհոլմի երրորդ կառավարության մեջ մտան բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, բացի ՖԺԴՄ-ից։ Դեռ մինչ այդ կապիտալիստական աշխարհում սկսվել էր ճգնաժամ, որը շոշափեց նաև Ֆինլանդիային։ 1958 թ. գարնանը կար 80 հազար գործազուրկ և մոտ 100 հազար կիսագործազուրկ։ Երկրի դրությունը թեթևացնել կարող էր սոցիալիստական երկրների հետ տնտեսական կապերի ընդարձակումը։ Բայց Ֆագերհոլմի կառավարության ժամանակ ՍՍՀՄ-ի հետ հարաբերություններում վրա էր հասել «թեթև ցրտահարությունը»։ Նոր երկարաժամկետ առևտրական համաձայնագրի բանակցությունները դադարեցին։ Ժողովրդական դեմոկրատների գլխավորությամբ աշխատավորներն սկսեցին պահանջել ՍՍՀՄ-ի հետ նորմալացնել հարաբերությունները և ընդարձակել առևտուրը։ Դա ձեռք բերվեց միայն այն բանից հետո, երբ 1959 թ. հունվարին Ֆագերհոլմի կաբինետն իր տեղը զիջեց ագրարային միության անդամներից կազմված Սուքսելայնենի կառավարությանը։

Սոցիալ-դեմոկրատները և բուրժուական կուսակցությունները ցանկանում էին թույլ չտալ, որպեսզի Կեկկոնենը պրեզիդենտ վերընտրվի։ Նրանք բլոկ կազմեցին բուրժուական գործիչ Հոնկի թեկնածությունը պաշտպանելու համար։ Դա կհասցներ Պաասիկիվի-Կեկկոնենի գծի վերանայմանը։ Բայց ընտրություններից առաջ բլոկը քայքայվեց, և Հոնկին իր թեկնածությունը հանեց։ 1962 թ. պառլամենտական և պրեզիդենտական ընտրությունները ցուցադրեցին այն ուժերի պարտությունը, որոնք ձգտում էին փոխել երկրի արտաքին քաղաքական կուրսը։ Պրեզիդենտ վերընտրվեց Կեկկոնենը։

Մինչև 1966 թ. պառլամենտական նոր ընտրությունները իշխանության գլուխ հերթափոխվեցին բուրժուական կառավարությունները, որոնց բանվորական երեք կուսակցությունների ներկայացուցիչները չմասնակցեցին։ Այդ կառավարությունները վարում էին խոշոր կապիտալի շահերից ելնող քաղաքականություն։

«Երեք մեծերի» համագործակցության վերականգնումը

60-ական թվականների կեսերին պայմաններ ստեղծվեցին ՖԺԴՄ-ի, սոցիալ-դեմոկրատական կուսակցության և կենտրոնի կուսակցության (1965 թվականից այդպես սկսեց կոչվել ագրարային միությունը, որը, նկատի ունենալով իր սոցիալական բազայի կրճատումը գյուղական վայրերում, սկսեց նաև քաղաքային միջին խավերի շահերն արտահայտելու հավակնություն դրսևորել) համագործակցությունը վերականգնելու համար։ 1963 թ. Տաների փոխարեն սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ ընտրվեց ավելի չափավոր գործիչ Պաասիոն։ Կուսակցության քարտուղար Վ. Լեսկինենը կոմունիստների հետ համագործակցելու հակառակորդից դարձավ նման համագործակցության կողմնակից։ Կուսակցության ղեկավարության մեջ այդ փոփոխությունները հասցրին նրա ազդեցության աճին։ 1966 թ. պառլամենտական ամբողջ ընտրություններում նա ստացավ հետպատերազմյան ժամանակամիջոցի մանդատների ամենամեծ թիվը։ Բանվորական երեք կուսակցությունները պառլամենտում մեծամասնություն ունեին։

1966 թ. մայիսին Պաասիոն ձախ կուսակցությունների և կենտրոնի կուսակցության ներկայացուցիչներից ստեղծեց կաբինետ։

Չնայած կառավարությանը կոմունիստների մասնակցությունը չվարողացավ նրա քաղաքականությանը հակամոնոպոլիստական բնույթ տալ, բայց այն դրականորեն ազդեց նրա ծրագրի վրա։ Ավելացվեցին մանր գյուղացիական տնտեսություններին տրվող նպաստները, կերակրողից զրկված ընտանիքների թոշակները, բարելավվեց աշխատանքային օրենսդրությունը, ավելացվեցին բնակարանային շինարարության, պետական ձեռնարկություններին տրվող ներդրումները։ Պետական հատվածի ընդարձակումը պետք է ներգործեր զբաղվածության ավելացմանը և էկոնոմիկայի համամասնական զարգացմանը։

Քանի որ կոալիցիայի կոմունիստների պարտնյորները չհամաձայնեցին վճռականորեն սահմանափակելու մոնոպոլիաների տնտեսական իշխանությունը, երկրի տնտեսական կյանքի արմատական բարելավում ձեռք չբերվեց։ Գործազուրկների թիվը աճեց և Պաասիոյի կաբինետի կառավարման վերջին հասավ 113 հազարի։ Արտաքին առևտրի պասսիվ հաշվեկշիռը կրկնապատկեց ֆինանսական դժվարությունները։ 1967 թ. հոկտեմբերին Պաասիոյի կառավարությունը ապավինեց դևալվացիային։

Արտաքին քաղաքականության բնագավառում կոալիցիայի մասնակիցները շարունակեցին «Պաասիկիվի-Կեկկոնենի գիծը»։ Նրանք համատեղ 1968 թ. պրեզիդենտական ընտրություններին առաջադրեցին Կեկկոնենի թեկնածությունը։ Կեկկոնենը պրեզիդենտ ընտրվեց երրորդ անգամ։ Դրանից հետո սոցիալ-դեմոկրատ Կոյվիստոյի կառավարության մեջ մտան նույն կուսակցությունների և շվեդական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները։ Էկոնոմիկան կայունացնելու ջանքերը, որ գործադրում էր նաև նախորդ կաբինետը, այժմ սկսեցին ավելի շոշափելի արդյունքներ տալ։ Գործազրկությունը պակասեց, բայց դեռևս պահպանվում էր բարձր մակարդակի վրա։ Մասնավորապես այն գյուղատնտեսության մեքենայացման, կապիտալիզմի սիստեմում ուրբանիզացիայի և գիտատեխնիկական հեղափոխության հետևանք էր։ Գյուղական բնակչության զգալի մասը, հատկապես երիտասարդությունը, թողնում էր գյուղը և ձգտում էր դեպի քաղաքները, բայց անբավարար որակավորման պատճառով աշխատանք չէր գտնում, այն դեպքում, երբ բարձր որակավորման աշխատողների պակաս էր զգացվում։ Գործազրկությունը առաջ բերեց վտարանդիություն։ Կապիտալիստական սիստեմի արատների նկատմամբ աշխատավորների դժգոհությունը հաճախ ուղղվում էր իշխանության գլուխ գտնվող կուսակցությունների դեմ։ Դա հմտորեն օգտագործում էին աջ օպոզիցիոն կուսակցությունները։

1969 թ. ապրիլին իր 15-րդ համագումարում ընդունած ծրագրում կոմունիստական կուսակցությունը հաստատեց Ֆինլանդիայում խաղաղ ճանապարհով սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու իր ձգտումը։ Համագումարը նախանշեց տնտեսական և սոցիալական քաղաքականության և դեմոկրատիայի ընդարձակման բնագավառներում գործնական միջոցառումների լայն ծրագիր։ Սակայն համագումարին չհաջողվեց ամրապնդել կուսակցության միասնությունը։ 60-ական թվականների երկրորդ կեսին ՖԿԿ-ում դրսևորված տարաձայնությունները հասցրեցին ժամանակավոր պառակտման։

Պառլամենտական ընտրություններից առաջ 1970 թ. փետրվարի 14-ին կայացած արտակարգ համագումարում ՖԿԿ-ի միասնությունը ձևականորեն վերականգնվեց, բայց տարաձայնությունները մնացին։ Մի քիչ առաջ, 1969 թ. հոկտեմբերին համաձայնություն էր ձեռք բերվել արհմիութենական միասնությունը վերականգնելու վերաբերյալ։ 1972 թ. մոտերքը նախկին ֆինլանդական արհմիությունների կենտրոնական միավորման բազայի վրա ստեղծված Ֆինլանդիայի արհմիությունների կենտրոնական կազմակերպությունում կար մոտ 700 հազար մարդ։

1970 թ. ընտրություններին կառավարական կուսակցությունները, հօգուտաջ կոալիցիոն և գյուղական կուսակցությունների, պառլամենտում կորցրին տեղերի մի մասը։ Բայց վերջիններիս դրանից հետո էլ չհաջողվեց մտնել կառավարության կազմի մեջ։ Ճիշտ է, ոչ անմիջապես և դժվարությամբ, բայց ստեղծվեց առանց աջերի կառավարություն։ Նրա հիմքը ձախերի և կենտրոնի նախկին կոալիցիան էր։ Սակայն Կարյալայնենի կաբինետի մեջ մտած կուսակցություններին չհաջողվեց համաձայնության գալ դժվարություններից դուրս գալու (արտաքին առևտրի պասսիվ հաշվեկշիռը, պետական պարտքի աճը, գործազրկությունը և այլն) եղանակների վերաբերյալ, որոնք առաջացել էին վերջին հաշվով արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի, դեպի Արևմուտք Ֆինլանդիայի կողմնորոշման պրոբլեմների սրությունից։ Կառավարությունում գլխավոր հակասություններն առաջացան ՖԺԴՄ-ի և կաբինետի մեծամասնության միջև։ 1971 թ. մարտին ՖԺԴՄ-ի անդամ երեք մինիստրներ, չցանկանալով աշխատավորների շահերին հակասող գների քաղաքականության պատասխանատվությունը կրել, դուրս եկան կառավարությունից։ Այսպես ավարտվեց սոցիալ-դեմոկրատների և կենտրոնի հետ կոմունիստների կառավարական համագործակցության երկրորդ փուլը, որը շարունակվել էր համարյա հինգ տարի։ Ֆիննական այդ փորձը նշանակություն ուներ ոչ միայն Ֆինլանդիայի, այլև մյուս երկրների համար։ Այն կրկին ակնառու կերպով ցույց տվեց կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների համագործակցության հնարավորությունն ու բեղմնավորությունը։ Կառավարության մեջ կոմունիստների մտնելը բարերար ազդեցություն թողեց արտաքին և ներքին քաղաքականության վրա. բարելավվեցին ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները, աճեց արդյունաբերական բանվորների ռեալ աշխատավարձը։

Կարյալայնենի վերակազմված կառավարությունը, տնտեսական քաղաքականության հարցերի տարաձայնությունների պատճառով, 1971 թ. հոկտեմբերին ընկավ։ Վերականգնել ձախերի և կենտրոնի կոալիցիան, որը աշխատավորների շահերի օգտին քաղաքականություն վարելու ամենալայն հնարավորություններ ուներ, չհաջողվեց նաև 1972 թ. հունվարի արտահերթ ընտրություններից հետո, որոնք նշանավորվեցին դեպի ձախ տեղաշարժով։ Կազմվեց Պաասիոյի սոցիալ-դեմոկրատական միակուսակցական կառավարությունը։ Սա շուտով հրաժարական տվեց, չցանկանալով ԵՏՄ-ի հետ հարաբերությունների լուծման հարցի պատասխանատվությունն իր վրա վերցնել, հարց, որը Ֆինլանդիայի առջև ամբողջ սրությամբ կանգնեց նրա արտաքին առևտրական ամենախոշոր պարտնյորներից մեկի՝ Անգլիայի ԵՏՄ-ի մեջ մտնելուց հետո։ 1972 թ. սեպտեմբերին սոցիալ-դեմոկրատ Կ. Սորսան առանց ՖԺԴՄ-ի և աջ կուսակցությունների կազմեց բազմակուսակցական կառավարություն, որը 1973 թ. վերջին ԵՏՄ-ի հետ կնքեց «ազատ առևտրի» համաձայնագիր, վերապահում անելով, որ դա արտաքին քաղաքականության փոփոխություն չի առաջացնի։ Դրա երաշխիք ծառայեց Ֆինլանդիայի պառլամենտի կողմից չորս տարով (1973 թ հունվարից մինչև 1978 թ. մարտը) պրեզիդենտ Կեկկոնենի լիազորությունները երկարացնելը։ ԵՏՄ-ի հետ համա-

1966 թ. մայիսին Պաասիոն ձախ կուսակցությունների և կենտրոնի կուսակցության ներկայացուցիչներից ստեղծեց կաբինետ։

Չնայած կառավարությանը կոմունիստների մասնակցությունը չկարողացավ նրա քաղաքականությանը հակամոնոպոլիստական բնույթ տալ, բայց այն դրականորեն ազդեց նրա ծրագրի վրա։ Ավելացվեցին մանր գյուղացիական տնտեսություններին տրվող նպաստները, կերակրողից զրկված ընտանիքների թոշակները, բարելավվեց աշխատանքային օրենսդրությունը, ավելացվեցին բնակարանային շինարարության, պետական ձեռնարկություններին տրվող ներդրումները։ Պետական հատվածի ընդարձակումը պետք է ներգրծեր զբաղվածության ավելացմանը և էկոնոմիկայի համամասնական զարգացմանը։

Քանի որ կոալիցիայի կոմունիստների պարտնյորները չհամաձայնեցին վճռականորեն սահմանափակելու մոնոպոլիաների տնտեսական իշխանությունը, երկրի տնտեսական կյանքի արմատական բարելավում ձեռք չբերվեց։ Գործազուրկների թիվը աճեց և Պաասիոյի կաբինետի կառավարման վերջին հասավ 113 հազարի։ Արտաքին առևտրի պասսիվ հաշվեկշիռը կրկնապատկեց ֆինանսական դժվարությունները։ 1967 թ. հոկտեմբերին Պաասիոյի կառավարությունը ապավինեց դևալվացիային։

Արտաքին քաղաքականության բնագավառում կոալիցիայի մասնակիցները շարունակեցին «Պաասիկիվի-Կեկկոնենի գիծը»։ Նրանք համատեղ 1968 թ. պրեզիդենտական ընտրություններին առաջադրեցին Կեկկոնենի թեկնածությունը։ Կեկկոնենը պրեզիդենտ ընտրվեց երրորդ անգամ։ Դրանից հետո սոցիալ-դեմոկրատ Կոյվիստոյի կառավարության մեջ մտան նույն կուսակցությունների և շվեդական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները։ Էկոնոմիկան կայունացնելու ջանքերը, որ գործադրում էր նաև նախորդ կաբինետը, այժմ սկսեցին ավելի շոշափելի արդյունքներ տալ։ Գործազրկությունը պակասեց, բայց դեռևս պահպանվում էր բարձր մակարդակի վրա։ Մասնավորապես այն գյուղատնտեսության մեքենայացման, կապիտալիզմի սիստեմում ուրբանիզացիայի և գիտատեխնիկական հեղափոխության հետևանք էր։ Գյուղական բնակչության զգալի մասը, հատկապես երիտասարդությունը, թողնում էր գյուղը և ձգտում էր դեպի քաղաքները, բայց անբավարար որակավորման պատճառով աշխատանք չէր գտնում, այն դեպքում, երբ բարձր որակավորման աշխատողների պակաս էր զգացվում։ Գործազրկությունը առաջ բերեց վտարանդիություն։ Կապիտալիստական սիստեմի արատների նկատմամբ աշխատավորների դժգոհությունը հաճախ ուղղվում էր իշխանության գլուխ գտնվող կուսակցությունների դեմ։ Դա հմտորեն օգտագործում էին աջ օպոզիցիոն կուսակցությունները։

1969 թ. ապրիլին իր 15-րդ համագումարում ընդունած ծրագրում կոմունիստական կուսակցությունը հաստատեց Ֆինլանդիայում խաղաղ ճանապարհով սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու իր ձգտումը։ Համագումարը նախանշեց տնտեսական և սոցիալական քաղաքականության և դեմոկրատիայի ընդարձակման բնագավառներում գործնական միջոցառումների լայն ծրագիր։ Սակայն համագումարին չհաջողվեց ամրապնդել կուսակցության միասնությունը։ 60-ական թվականների երկրորդ կեսին ՖԿԿ-ում դրսևորված տարաձայնությունները հասցրեցին ժամանակավոր պառակտման։

Պառլամենտական ընտրություններից առաջ 1970 թ. փետրվարի 14-ին կայացած արտակարգ համագումարում ՖԿԿ-ի միասնությունը ձևականորեն վերականգնվեց, բայց տարաձայնությունները մնացին։ Մի քիչ առաջ, 1969 թ. հոկտեմբերին համաձայնություն էր ձեռք բերվել արհմիութենական միասնությունը վերականգնելու վերաբերյալ։ 1972 թ. մոտերքը նախկին ֆինլանդական արհմիությունների կենտրոնական միավորման բազայի վրա ստեղծված Ֆինլանդիայի արհմիությունների կենտրոնական կազմակերպությունում կար մոտ 700 հազար մարդ։

1970 թ. ընտրություններին կառավարական կուսակցությունները, հօգուտ աջ կոալիցիոն և գյուղական կուսակցությունների, պառլամենտում կորցրին տեղերի մի մասը։ Բայց վերջիններիս դրանից հետո էլ չհաջողվեց մտնել կառավարության կազմի մեջ։ Ճիշտ է, ոչ անմիջապես և դժվարությամբ, բայց ստեղծվեց առանց աջերի կառավարություն։ Նրա հիմքը ձախերի և կենտրոնի նախկին կոալիցիան էր։ Սակայն Կարյալայնենի կաբինետի մեջ մտած կուսակցություններին չհաջողվեց համաձայնության գալ դժվարություններից դուրս գալու (արտաքին առևտրի պասսիվ հաշվեկշիռը, պետական պարտքի աճը, գործազրկությունը և այլն) եղանակների վերաբերյալ, որոնք առաջացել էին վերջին հաշվով արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի, դեպի Արևմուտք Ֆինլանդիայի կողմնորոշման պրոբլեմների սրությունից։ Կառավարությունում գլխավոր հակասություններն առաջացան ՖԺԴՄ-ի և կաբինետի մեծամասնության միջև։ 1971 թ. մարտին ՖԺԴՄ-ի անդամ երեք մինիստրներ, չցանկանալով աշխատավորների շահերին հակասող գների քաղաքականության պատասխանատվությունը կրել, դուրս եկան կառավարությունից։ Այսպես ավարտվեց սոցիալ-դեմոկրատների և կենտրոնի հետ կոմունիստների կառավարական համագործակցության երկրորդ փուլը, որը շարունակվել էր համարյա հինգ տարի։ Ֆիննական այդ փորձը նշանակություն ուներ ոչ միայն Ֆինլանդիայի, այլև մյուս երկրների համար։ Այն կրկին ակնառու կերպով ցույց տվեց կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների համագործակցության հնարավորությունն ու բեղմնավորությունը։ Կառավարության մեջ կոմունիստների մտնելը բարերար ազդեցություն թողեց արտաքին և ներքին քաղաքականության վրա. բարելավվեցին ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունները, աճեց արդյունաբերական բանվորների ռեալ աշխատավարձը։

Կարյալայնենի վերակազմված կառավարությունը, տնտեսական քաղաքականության հարցերի տարաձայնությունների պատճառով, 1971 թ. հոկտեմբերին ընկավ։ Վերականգնել ձախերի և կենտրոնի կոալիցիան, որը աշխատավորների շահերի օգտին քաղաքականություն վարելու ամենալայն հնարավորություններ ուներ, չհաջողվեց նաև 1972 թ. հունվարի արտահերթ ընտրություններից հետո, որոնք նշանավորվեցին դեպի ձախ տեղաշարժով։ Կազմվեց Պաասիոյի սոցիալ-դեմոկրատական միակուսակցական կառավարությունը։ Սա շուտով հրաժարական տվեց, չցանկանալով ԵՏՄ-ի հետ հարաբերությունների լուծման հարցի պատասխանատվությունն իր վրա վերցնել, հարց, որը Ֆինլանդիայի առջև ամբողջ սրությամբ կանգնեց նրա արտաքին առևտրական ամենախոշոր պարտնյորներից մեկի՝ Անգլիայի ԵՏՄ-ի մեջ մտնելուց հետո։ 1972 թ. սեպտեմբերին սոցիալ-դեմոկրատ Կ. Սորսան առանց ՖԺԴՄ-ի և աջ կուսակցությունների կազմեց բազմակուսակցական կառավարություն, որը 1973 թ. վերջին ԵՏՄ-ի հետ կնքեց «ազատ առևտրի» համաձայնագիր, վերապահում անելով, որ դա արտաքին քաղաքականության փոփոխություն չի առաջացնի։ Դրա երաշխիք ծառայեց Ֆինլանդիայի պառլամենտի կողմից չորս տարով (1973 թ հունվարից մինչև 1978 թ. մարտը) պրեզիդենտ Կեկկոնենի լիազորությունները երկարացնելը։ ԵՏՄ-ի հետ համա-

ձայնագիրը, ինչպես կանխատեսում էին կոմունիստները և ժողովրդական դեմոկրատները, ուժեղացրեց գործազրկությունը, ինֆլյացիան, արտաքին առևտրի պասսիվ հաշվեկշիռը և պետական բյուջեի դեֆիցիտը։

Սովետա-ֆինլանդական հարաբերությունները և Ֆինլանդիայի արտաքին քաղաքականությունը 60-ական—70-ական թվականների սկզբին

60-ական և 70-ական թվականների սկզբին ՍՍՀՄ-ի հետ Ֆինլանդիայի տնտեսական համագործակցությունը բազմակողմանի էր։ Ֆինլանդիան Հյուսիսի սահմանային գետերի վրա կառուցեց մի քանի հիդրոէլեկտրակայաններ։ ՍՍՀՄ-ը 1962 թ. սեպտեմբերին նրան վարձակալության տվեց Սայմենյան ջրանցքի սովետական մասը, օգնեց Ռաախայում մետալուրգիական կոմբինատի կառուցմանը, 1970 թ. հուլիսի 20-ին Մոսկվայում արձանագրություն ստորագրվեց Ֆինլանդիայի հետ բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը ժամկետից շուտ 20 տարով, այսինքն մինչև 1990 թ. երկարացնելու մասին։ 1971 թ. ապրիլի 20-ին ՍՍՀՄ-ի և Ֆինլանդիայի միջև պայմանագիր կնքվեց տրնտեսական, տեխնիկական և արդյունաբերական համագործակցության մասին։ Դրան համապատասխան ֆիննական ֆիրմաները և աշխատուժը ներգրավվեցին ՍՍՀՄ-ի մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության մեջ։ ՍՍՀՄ-ի օգնությամբ Ֆինլանդիայում կառուցվեց ատոմային երկու էլեկտրակայան։ ՍՍՀՄ-ից բնական գազ է մատակարարվում Ֆինլանդիա։ Հաջողությամբ են զարգանում և ընդարձակվում գիտական ու մշակութային կապերը։ Երկու երկրների հարաբերություններում տիրող լավ մթնոլորտի մասին են վկայում պետական գործիչների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների փոխադարձ բարեկամական այցերը, տուրիստների լայն փոխանակումը։ Սովետա-ֆինլանդական իսկական բարիդրացիական և բարեկամական հարաբերությունները դարձել են տարբեր սոցիալական կարգեր ունեցող երկրների խաղաղ գոյակցության օրինակ։ 1973 թ. մայիսին Ֆինլանդիան ՏՓԽ-ի հետ համագործակցության համաձայնագիր ստորագրեց։ Նա Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի շարք զարգացող երկրների հետ նույնպես գիտական և տեխնիկական համագործակցության համաձայնագրեր ունի։

Միջազգային ասպարեզում Ֆինլանդիան ակտիվորեն հանդես է գալիս խաղաղության և անվտանգության ամրապնդման, միջազգային լարվածության թուլացման օգտին։ Պրեզիդենտ Կեկկոնենը առաջադրեց Հյուսիսային Եվրոպան միջուկազերծ գոտու վերածելու (1963), Ֆինլանդիայի և Նորվեգիայի միջև սահմանների անվտանգությունը համատեղ ապահովելու պայմանագիր կնքելու (1965) կոնստրուկտիվ առաջարկներ։ Ֆինլանդական կառավարությունը պաշտպանեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության վերաբերյալ խորհրդակցություն հրավիրելու սոցիալիստական երկրների առաջարկը և իր վրա վերցրեց դրա կազմակերպական նախապատրաստման նախաձեռնությունը։ Այդ խորհրդակցության առաջին փուլը կայացավ Հելսինկիում 1973 թ. ամռանը, 1975 թ. նույն տեղում անցկացվեց նրա երրորդ, եզրափակիչ փուլը։ Ֆինլանդիայի մայրաքաղաքն ընտրվեց ստրատեգիական զենքի սահմանափակման սովետա-ամերիկյան բանակցությունների անցկացման վայր։ Այն նաև խաղաղության համաշխարհային խորհրդի քարտուղարության նստավայրն է։

ԳԼՈՒԽ 22

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Պորտուգալիայի հետպատերազմյան տնտեսական և քաղաքական զարգացումը

Պատերազմի տարիներին հարստանալով բարձր կոնյունկտուրայից և Պորտուգալիայի ու նրա գաղութների ժողովուրդների շահագործման ուժեղացումից, պորտուգալացի բանկիրները դարձան կապիտալ արտահանողներ։ Նրանք գերադասում էին իրենց կապիտալները ներդնել զենքի, ռազմական օբյեկտների և գաղութային ձեռնարկությունների շինարարության մեջ, այսինքն արդյունաբերության այն ճյուղերում (լեռնահանքային, տեքստիլ, ձկնապահածոների, գինեգործական), որոնցում գերակշռում էին մանր և կիսատնայնագործական ձեռնարկությունները։ Արդյունաբերական արտադրությունը 10 տարում (1947—1956) ավելացավ միայն 42 %-ով, այսինքն աճեց Եվրոպայում ամենացածր տեմպերով։ Գյուղացիությունը տառապում էր հողազրկությունից և սակավահողությունից։ 50-ական թվականների սկզբին գյուղում եղած 800 հազար տնտեսությունների 95 %-ը տիրում էր մշակելի հողատարածությունների մեկ երրորդին, իսկ խոշոր հողատերերի 0,3 %-ն իր ձեռքում էր կենտրոնացրել հողերի 39 %-ը։ 130 հազար չքավոր գյուղացիների հողակտորները չէին հասնում 1/4 հեկտարի։ Գյուղական բնակչության 70 %-ից ավելին ընդհանրապես հողամաս չուներ և քարշ էր տալիս ծայրահեղ աղքատ գոյություն։ Պորտուգալիան մնում էր ամենացածր բերք ստացողը, ամենաբարձր տոկոս անգրագիտություն ունեցողը Եվրոպայում։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում շարունակվում էր պետական-մոնոպոլիստական կապիտալին և օտարերկրյա կապիտալին երկրի ենթարկվելու պրոցեսի ուժեղացումը։ Խոշոր մոնոպոլիաներն իրենց շահերի օգտին օգտագործում էին պետական ապարատը, «Ազգային միություն» ֆաշիստական կուսակցությունը, ՊԻԴԵ քաղաքական ոստիկանությունը, բանակի և կաթոլիկական եկեղեցու վերնախավը։ Սալազարի կառավարությունը մեկը մյուսի հետևից օրենքներ էր հրապարակում խոշոր մոնոպոլիաների և հողատերերի օգտին։ Պորտուգալիայում խոշորագույն ԿՈԻՖ («Ֆարրիկային միության ընկերություն») կոնցեռնը մենաշնորհ էր դարձրել երկրի ամբողջ քիմիական արդյունաբերությունը և իր վերահսկողության տակ վերցրել արդյունաբերության մի շարք այլ ճյուղեր։ «Մանր հողաբաժինները համակենտրոնացնելու մասին» օրենքները խոշոր հողատերերը օգտագործում էին իրենց տիրույթները խոշորացնելու համար։ Կտրուկ ավելացավ վտարանդիությունը Պորտուգալիայից։

Աշխատավորների գործադրկության աճին և աղքատացմանը նպաստում էր համաշխարհային շուկայում պորտուգալական ավանդական ապրանքների՝ գինու, խցանային և տեքստիլ ապրանքների վաճառման գների անկումը։ Պորտուգալական ապրանքների մրցակցունակության անկումից օգտվեցին ԱՄՆ-ի մոնոպոլիաները, որոնք Պորտուգալիան հեղեղեցին իրենց ապրանքներով։ Միաժամանակ ընդարձակվեց ԱՄՆ-ի իմպերիալիստների հետ Պորտուգալիայի կառավարողների պայմանավորվածությունը։ 1948 թ. Սալազարի կառավարությունը վավերացրեց պատերազմի ժամանակ ԱՄՆ-ին և Անգլիային տրամադրված Ազորյան կղզիների ռազմական բազաներն օգտագործելու իրավունքը։ 1949 թ. ապրիլին Պորտուգալիան մտավ Հյուսիսատլանտյան

բլոկի մեջ։ Աֆրիկայում նրա գաղութները մտան ՆԱՏՕ-ի բազաների ու հաղորդակցման համակարգի մեջ։

ՆԱՏՕ-ի մեջ մտնելուց հետո Պորտուգալիայի կառավարողները ճնշման հեղեղ տեղացին դեմոկրատական ուժերի, հատկապես կոմունիստների վրա։ 1949 թ. բռնվեց և երկարատև բանտարկության ենթարկվեց ՊԿԿ-ի ղեկավար Ալվարո Կունյալը։ ՊԿԿ-ի Կենտկոմի քարտուղարության անդամ Մելիտո Ռիբեյրեին մեռցրին բանտային տանջարանում։ Կոմկուսի շատ ակտիվիստներ ձերբակալվեցին, իսկ նրանց ղեկավարած կուսակցակերպությունները ջախջախվեցին։ Սալազարականները հակակոմունիստական զրպարտչական կամպանիայի միջոցով պառակտում մտցրին հակաֆաշիստների միջև։ 40-ական թվականների վերջին ազգային հակաֆաշիստական միասնության շարժումը քայքայվեց, իսկ դեմոկրատական միասնության շարժումից դուրս եկան տատանվող դեմոկրատները։ Առաջադեմ շատ դեմոկրատներ ստիպված էին դիմել վտարանդիության։ Սալազարի կառավարությունը ճնշումն ուժեղացրեց նաև գաղութների ազգային-ազատագրական շարժման դեմ։ 1951 թ., գաղութային ճնշումը քողարկելու նպատակով, գաղութները վերանվանվեցին Պորտուգալիայի «անդրծովյան նահանգներ»։ Դա ոչինչ չէր տալիս գաղութների ժողովուրդներին, բայց դրա փոխարեն գաղութներում ՊԻԴԵ-ի քաղաքական ոստիկանության գործունեությունն ուժեղացվեց։

Չնայած կոմկուսի նկատմամբ տեռորին, Պորտուգալիայի բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները շարունակում էին պայքարը։ Բռնկվում էին խոշոր գործադուլներ, որոնց հետևանքով բանվորների մեծամասնությունը 1956 թ. հաջողվեց աշխատավարձը բարձրացնել տալ 10—30 %-ով։ Գյուղացիները բողոքում էին ԱՄՆ-ի արտահանողների մրցակցության, խոշոր հողատերերի և ֆաշիստական կորպորացիաների ճնշող տիրապետության դեմ։ Առաջադեմ մտավորականությունը առաջավոր բանվորների հետ միասին մասնակցում էր խաղաղության կողմնակիցների շարժմանը, Սալազարի կլիկի գաղութային ավանտյուրաների մերկացմանը։ Երկրում ընդարձակվում էր ֆաշիստական տեռորի դեմ, հանուն քաղբանտարկյալների ազատման պայքարը։ 1946 թ. ամռանը, ի նշան հակաֆաշիստական ուժերի միասնության, անլեգալ պայմաններում կայացավ ՊԿԿ-ի 4-րդ համագումարը։

Պորտուգալիան կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլում

50-ական թվականների երկրորդ կեսին Պորտուգալիայում սկսվեց ֆաշիստական դիկտատուրայի խոր ճգնաժամը։ Արդյունաբերողները և կապիտալիստները դժգոհում էին Սալազարի տնտեսական քաղաքականությունից, որի հետևանքով Պորտուգալիան շարունակում էր մնալ առանց ծանր ինդուստրիայի, գյուղատնտեսության ամենացածր մեքենայացման մակարդակով երկիր։ Պորտուգալիայի գաղութային կայսրությանը լուրջ հարվածներ էին հասցվում։ 1961 թ. դեկտեմբերին հընդկական զորքերը ազատագրեցին Դոան, Դամանը և Դիուն, որոնք վերամիացվեցին Հնդկաստանին։ Աֆրիկական գաղութներում ստեղծվեցին ազգային-ազատագրական պայքարի ճակատներ. 1961 թ. պարտիզանական պայքար սկսեցին Անգոլայի հայրենասերները, 1963 թ. զինված պայքար բռնկվեց Գվինեայում (Բիսաու), 1964 թ.՝ Մոզամբիկում։

Այս բոլորը տանում էր ֆաշիստական կլիկի ներսում տարաձայնությունների ուժեղացմանը, նրա սոցիալական բազայի նեղացմանը։ 1958 թ. հունիսին օպոզիցիայի ուժերը, համախմբվելով պրեզիդենտության պոստի թեկնածու, գեներալ Ումբերտո Դելգադոյի շուրջը, նույնիսկ պաշտոնական կեղծված տվյալներով, հավաքեցին ձայների 23,5 %-ը, մի դեպք, որը չէր եղել ֆաշիստական պետության պատմության մեջ։ 1962 թ. հունվարի 1-ին տեղի ունեցավ Բեժա քաղաքի կայազորի զինված ապստամբությունը։ Կաթոլիկական շրջանների ներսում սկսեց ձևավորվել ձախ հոսանքը, որը հանդես եկավ դիկտատուրայի քննադատությամբ։

Ռեժիմին հզոր հարվածներ էր հասցնում բանվոր դասակարգը։ Ֆաշիստական ճնշման դեմ հերոսական պայքար էր մղում կոմունիստական կուսակցությունը։ 60-ական թվականների սկզբին կոմունիստները Ալվարո Կունյալի գլխավորությամբ կազմակերպեցին ՊԿԿ-ի գործիչների մի շարք փախուստներ բանտերից։ Կոմկուսի ղեկավարությամբ ծավալվեց գործադուլային շարժումը։ Պրոլետարիատի և մտավորականության խոշոր ելույթներ տեղի ունեցան 1962 թ. մայիսին։ Մի ամբողջ ամիս մայրաքաղաքում և մի շարք այլ քաղաքներում ցույցեր էին տեղի ունենում, որոնց մասնակիցները պահանջում էին Սալազարի հրաժարականը, դեմոկրատական ազատությունների վերականգնում, քաղաքական ներում և աշխատավորների կյանքի պայմանների բարելավում։ Քաղաքների բանվորների ելույթները պաշտպանեցին գյուղական պրոլետարները։ Կոմունիստների գլխավորած Հարավի 350 հազար գյուղատնտեսական բանվորներ հասան 8-ժամյա աշխատանքային օրվա հաստատման, ամենուրեք աշխատավարձի բարձրացման։ 1962 թ. դեկտեմբերին կոմկուսի նախաձեռնությամբ օպոզիցիայի տարբեր հոսանքների ներկայացուցիչները (կոմունիստներ, սոցիալիստներ, լիբերալներ, առաջադեմ կաթոլիկներ) միավորվեցին Ազգային ազատագրության հայրենասիրական ճակատի (ԱԱՀՃ) մեջ, որի շտաբ-կայանը գտնվում էր Ալժիրում։ Պորտուգալական հակաֆաշիստները կապեր ստեղծեցին գաղութների ազգային-ազատագրական շարժումների հետ։

Սալազարի կառավարությունը ռեժիմի խոր ճգնաժամը հաղթահարելու իր փորձերում առաջվա պես հենվում էր գլխավորապես դատական-ոստիկանական ապարատի վրա։ 1959 թ. Պորտուգալիայում կայացավ 3811 դատական պրոցես։ 1960 թ. ձերբակալվեցին 4500 դեմոկրատներ և հայրենասերներ։ Ֆաշիզմի դեմ ակտիվ շատ մարտնչողներ սպանվեցին։ Սալազարականները նաև ընդարձակեցին սոցիալական դեմագոգիան և հակակոմունիստական պրոպագանդան։ Բնակչության զգալի մասը, հատկապես մանրբուրժուական խավերը, հավատում էին նրանց այն պնդմանը, թե առանց գաղութների Պորտուգալիան իրև ազգություն չի կարող գոյատևել։ Այդ պրոպագանդայի քողի տակ, որը պաշտպանում էր կաթոլիկական եկեղեցին, Պորտուգալիայի կառավարությունը գաղութների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ բարբարոսական, բնաջնջող պատերազմ ծավալեց։ Շարունակ զորքերի նորանոր կոնտինգենտներ էին ուղարկվում Անգոլա, Գվինեա (Բիսաու), Մոզամբիկ։ Անչափ աճեց ռազմական բյուջեն, բարձրացան հարկերը։ ՆԱՏՕ-ի առաջատար տերություններն ավելացնում էին Պորտուգալիային զենքի մատակարարումները, նրան տրամադրում էին երկարաժամկետ փոխառություններ։ ՆԱՏՕ-ի երկրների օգնության համար որպես վարձ Պորտուգալիայի գաղութներում նրանց նոր կոնցեսիաներ էին տրվում։ Սալազարն ընդարձակում էր համագործակցությունը Հարավ-Աֆրիկյան Հանրապետության և Ռոդեզիայի ռասիստական ռեժիմների հետ։

Պորտուգալիայի կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունը չփոխվեց նաև այն բանից հետո, երբ 79-ամյա Սալազարին, որն անդամալույծ էր դարձել (նա մահացավ 1970 թ.), 1968 թ. սեպտեմբերի 26-ին պրեմիեր մինիստրի պոստում փոխարինեց նրա զինակից Մարսելո Կաետանոն։ Կյանքի բոլոր ոլորտների վրա մոնոպոլիաների ուղղակի վերահսկողությունն է՛լ ավելի ուժեղացավ։ 1969—1971 թթ. երկրի տնտեսական զարգացման տեմպերն իջան, որը գլխավորապես կապված էր գաղութների ժողովուրդ-

ների դեմ պատերազմը շարունակելու հետ։ 70-ական թվականների սկզբներին ռազմական ծախսերը կլանում էին պետական բոլոր միջոցների ավելի քան 40 %-ը։ Աֆրիկայում կռվող գաղութային բանակի թվաքանակը հասել էր 150 հազար մարդու։ Միաժամանակ Պորտուգալիայի բնակչությունը դադարել էր աճելուց։ Պորտուգալիայից գլխավորապես Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական երկրներ վտարանդիների թիվն աճեց և 1968 թ. 92 հազարից 1970 թ. հասավ մինչև 178 հազարի։

Կաետանոի կառավարության ներքին քաղաքականության հիմնական զենքը, ինչպես Սալազարի ժամանակ, մնում էին ռեպրեսիաները։ Բանտերում տառապում էին կոմկուսի շատ ղեկավարներ և անդամներ, ուսանողական շարժման և դեմոկրատական այլ կազմակերպությունների ակտիվիստներ։ Դրա հետ միասին, փորձելով ճգնաժամից դուրս գալու ուղի գտնել, Կաետանոն ռեժիմի «լիբերալացում» հռչակեց։ 1969 թ. ապրիլին ՊԻԴԵ քաղաքական ոստիկանությունը «ցրվեց» և անմիջապես վերականգնվեց անվտանգության գլխավոր վարչություն անվան տակ։ Երկրում միակ լեգալ «Ազգային միություն» ֆաշիստական կուսակցությունը նույնպես ցրվեց և անմիջապես վերականգնվեց «Ազգային ժողովրդական գործողություն» անվան տակ։ 1971 թ. հուլիսին սահմանադրության «ռեֆորմների» հետևանքով պորտուգալական գաղութներն ստացան «քաղաքական ինքնավարություն» և «պետություններ» «պատվավոր» տիտղոսներ, որը ոչ մի բան չէր փոխում ռազմական միջոցներով ազգային-ազատագրական շարժումը ճնշելուն ուղղված Լիսաբոնի նեոգաղութատիրական գործողություններում։ Որոշ չափով թուլացվեց գրաքննությունը, բանտերից ազատեցին մի շարք ոչ կոմունիստ քաղբանտարկյալների, 1969 թ. աշնանը և 1973 թ. օպոզիցիային թույլատրվեց մասնակցելու պառլամենտի՝ ֆաշիստականի նմանակ ազգային ժողովի, ծաղրանկարային ընտրություններին։

Այդ պայմաններում պորտուգալական կոմկուսը մերկացնում էր, մի կողմից, կեղծ լիբերալացումը և կառավարող կլիկի կողմից առանց Սալազարի նրա քաղաքականությունն անցկացնելու համառ ձգտումը և, մյուս կողմից, զանգվածներին կոչ էր անում նոր իրադրությունն օգտագործել իրենց պահանջների բավարարման պայքարի համար։ Կոմկուսի ղեկավարությամբ հարյուր հազարավոր պորտուգալացիներ 1969-ի աշնան և 1973 թ. «ընտրական կամպանիաների» ընթացքում մասնակցեցին ժողովների, միտինգների, ցույցերի։ Այդ կամպանիաների ընթացքում տարբեր ձախ ուժերի մասնակցությամբ ակտիվորեն գործում էին դեմոկրատական ընտրական հանձնաժողովներ։ Այդ հանձնաժողովների գործունեությունն ի վերջո ձուլվեց կոմունիստներից, սոցիալիստներից, քրիստոնեական դեմոկրատներից կազմված «Պորտուգալական դեմոկրատական շարժման» մեջ։

Ռեժիմը գնալով ավելի էր վերահսկողությունը կորցնում արհմիությունների նկատմամբ. 1974 թ. սկզբներին արհմիությունների մեծամասնությունում ղեկավարման գլուխ անցան դեմոկրատականորեն տրամադրված ղեկավարներ։ Աշխատավարձի բարձրացման համար ակտիվ պայքարի ելան ավելի քան 200 հազար աշխատավորներ։ Ֆաշիստական ռեպրեսիաներին ուռանդուն դիմադրություն էր ցույց տալիս ուսանողությունը։

Հատկապես լայն և զանգվածային դարձավ հակապատերազմական շարժումը, որն ընդգրկեց ոչ միայն բնակչության մեծամասնությունը, այլև բանակի նշանակալի մասը։ Հաճախակի դարձան չենթարկվելու, սաբոտաժի և դասալքության դեպքերը։ Սկսած 1973 թ. կեսից բանակում ընդարձակվեց գաղութային պատերազմի դեմ և դեմոկրատական պահանջների համար պայքարի կազմակերպված ձևը՝ «կապիտալների շարժումը», որն ընդգրկեց զինված ուժերի բոլոր տեսակների տարբեր աստիճանների հարյուրավոր սպաներ։ Ոչ մի բռնություն արդեն չէր կարող կանգնեցնել զինվորների և սպաների շրջանում սկսված խմորումը։

Բոլոր հակաֆաշիստական և հակապատերազմական ուժերը լցվեցին մի հոսանքի մեջ։ Այս պրոցեսի գագաթնակետը, որի հիմնական տարբերն էին ֆաշիստական ռեժիմի ներքին ճգնաժամը, գաղութային պատերազմի ծանր հետևանքները, պորտուգալական ֆաշիզմի և գաղութատիրության մեկուսացումն ու միջազգային դատապարտումը, Գվինեա-Բիսաուում, Մոզամբիկում և Անգոլայում ազգային-ազատագրական շարժման հաջողությունները, պորտուգալական ժողովրդի պայքարի հզոր վերելքը, եղավ «Զինված ուժերի շարժման» կազմակերպած 1974 թ. ապրիլի 25-ի ապստամբությունը, որից հետո ֆաշիստական ռեժիմը տապալվեց և դրվեց երկրի դեմոկրատացման և ապագաղութացման սկիզբը։

Հեղաշրջումից հետո ստեղծված իշխանության ժամանակավոր մարմինները՝ փրկության ազգային խորհուրդը և ժամանակավոր կառավարությունը, վերջ տվեցին գաղութային պատերազմին, ապագաղութացման ընթացքում իրականացրին առաջին լուրջ քայլերը, լուրջ հարվածներ հասցրին նախկին ֆաշիստական ապարատին, լեգալացրին քաղաքական կուսակցություններն ու արհմիությունները, դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ, մի շարք միջոցներ ձեռնարկեցին աշխատավորների դրությունը բարելավելու համար։

Պորտուգալիայի հեղափոխականացման պրոցեսում վճռական դեր է խաղում «Զինված ուժերի շարժման» հետ երկրի դեմոկրատական շարժման դաշինքը։ Այդ պրոցեսում աչքի ընկնող դերը պատկանում է Պորտուգալիայի կոմունիստական կուսակցությանը՝ երկրի բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների մարքս-լենինյան տեսությամբ զինված ավանգարդին։

ԳԼՈՒԽ 23

ԻՌԼԱՆԴԻԱ

Հետպատերազմյան Իռլանդիայի սոցիալ-տնտեսական զարգացումը

Իռլանդիան կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլը դիմավորեց որպես քաղաքական անկախ (1937 թ. «Էյրե անկախ պետության» հռչակումից հետո) երկիր, մնալով բրիտանական համագործակցության անդամ։ Սակայն իռլանդական ազգային-ազատագրական հեղափոխությունը չէր ավարտվել։ Ազգային տարածքը չէր միավորվել. Օլսթերի 6 կոմսություններ մնում էին Անգլիայի իշխանության տակ։ Իռլանդական էկոնոմիկան առաջվա պես կախման մեջ էր նախկին մայր երկրի տնտեսական մեքենայից։ Անգլիան համարյա միանձնարար մրցում էր իռլանդական գյուղատնտեսական արտահանման սպառողը, արդյունաբերական ապրանքների հիմնական մասի Իռլանդիային մատակարարողը, գրավում էր բանկային ոլորտի գլխավոր դիրքերը։ Մասնավոր կապիտալիստական ձեռնարկատիրության խոշորագույն ֆիրմաները կա՛մ վերահսկվում

էին բրիտանական կապիտալի կողմից, կա՞մ էլ սերտորեն կապված էին նրա հետ։

Երկրում իմպերիալիզմի և նեոգաղութատիրության դեմ պայքարի լուծված օբյեկտիվ խնդիրների առկայությունը վերջին հաշվով որոշում էր հետպատերազմյան Իռլանդիայի քաղաքական կոնֆլիկտի գլխավոր գծերը։ Իսկական անկախության և առաջադիմական արտաքին քաղաքականության, երկրի Հյուսիսի և Հարավի վերամիավորման համար պայքարի պրոբլեմները գտնվում էին և գտնվում են իռլանդական հասարակայնության ուշադրության կենտրոնում։

Իռլանդական բուրժուական պետության այդ տարիների տնտեսական քաղաքականության մեջ կարելի է տարբերել երկու ժամանակաշրջան։ Առաջինը՝ մինչև 50-ական թվականների վերջը, երկրի սահմանափակ կապիտալիստական ինդուստրացման և սեփական միջոցների վրա հենվող նրա ներքին շուկայի ընդարձակման՝ ազգային բուրժուազիայի գլխավոր ֆիաննա ֆայլ կուսակցության նախապատերազմյան կուրսի շարունակությունն էր, որի ընթացքում ձեռք բերվեցին որոշ հաջողություններ. պետության խրախուսմամբ և օժանդակությամբ ստեղծվեցին ոչ քիչ թվով արդյունաբերական նոր ձեռնարկություններ (գլխավորապես մանր և միջին), աճեց արդյունաբերության նոր ճյուղերի՝ էլեկտրատեխնիկական, քիմիական, մետալուրգիական, շինանյութերի արտադրության և այլնի համախառն արտադրանքը, շարունակվում էր արդյունաբերության մեջ պետական հատվածի բավական ինտենսիվ զարգացումը (շաքարի, էլեկտրաէներգիայի, տորֆի վերամշակման արտադրությունը, երկրի տրանսպորտային ցանցը)։ Չնայած 1948 թ. Անգլիայի հետ կնքած առևտրական պայմանագրին, որն իռլանդական շուկայում ընդարձակում էր անգլիական արդյունաբերության արտահանման առավելությունները, իռլանդական արդյունաբերությունն ամբողջությամբ վերցրած մնում էր հովանավորական տարիֆների պաշտպանության ներքո։

Սակայն դա բավական չէր օտարերկրյա իմպերիալիզմից կախվածության պայմաններում դարավոր տնտեսական հետամնացությունը հաղթահարելու համար։ 50-ական թվականների վերջերին գործազրկությունը և երկրից էմիգրացիան հասան սպառնալի չափերի (տարեկան Իռլանդիայից հեռանում էր մոտ 50 հազ. մարդ), վճարունակ հաշվեկշիռն այնքան անբարենպաստ էր, որ պետությանը կանգնեցրեց անանկացման եզրին։ Աղետալի չափեր ընդունեց գյուղերի ամայացումը։ Կարևորագույն պրոբլեմը՝ կուտակման պրոբլեմը, մնում էր լուծված։ Երկրից «կապիտալների փախուստը» գլխավորապես Անգլիա և Բրիտանական համագործակցության երկրներ, շարունակվում էր։ «Էմիգրացվող» կապիտալն ավելի քան երեք անգամ գերազանցում էր Իռլանդիայի պետական և մասնավոր ընկերությունների ընդհանուր կապիտալին, հասնելով 3 միլիարդ ֆունտ ստեռլինգ գումարի։ Հրապարակախոսի պատկերավոր արտահայտությամբ, Իռլանդիան կարելի էր անվանել «առանց կապիտալի կապիտալիստական երկիր»։

Այդ դժվարին պայմաններում իռլանդական կառավարությունը, պրեմիեր մինիստր Շ. Լեմասի գլխավորությամբ, գերադասեց ավելի արմատական և հետևողական հակաիմպերիալիստական կուրսը, որը կարող էր երկրի առջև նոր, նախկինում չօգտագործված հնարավորություններ բացել սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտներում, բախտ որոնել իմպերիալիստական մոնոպոլիաների հետ էլ ավելի սերտ շփման մեջ։ 1959 թ. կառավարությունն ընդունեց առաջին, իսկ 1965 թ. երկրորդ «տնտեսական զարգացման հնգամյա պլանը», որը նախատեսում էր արտասահմանյան ներմուծման տարիֆների կտրուկ իջեցում։ Նա հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էր

ներքին շուկայի համար աշխատող արդյունաբերական արտահանման ճյուղերի զարգացմանը։ «Նոր կուրսի» գլխավոր կողմը արդյունաբերական զարգացումն «արագացնելու» և «գործազրկության դեմ պայքարի» համար Իռլանդիայում արտասահմանյան կապիտալը լայնորեն ներգրավելն էր։ Իռլանդիայում հիմնավորված օտարերկրյա արդյունաբերական ֆիրմաներին տրվում էին բազմաթիվ արտոնություններ. միանվագ դոտացիա արդյունաբերական շենքերի կառուցման, երկարաժամկետ վարկեր նրանց սարքավորման համար, հարկերի իջեցում, առաջին տասը տարվա ընթացքում արդյունաբերական շահույթներն արտասահման ազատորեն փոխանցելու թույլտվություն և այլն։ Այդ պայմանները, ինչպես նաև երկրում էժան աշխատուժի ռեզերվի առկայությունը հասցրին մեծ թվով արտասահմանյան արդյունաբերական ընկերությունների (ամերիկյան, արևմտագերմանական, ֆրանսիական, ճապոնական, կանադական, հոլանդական և այլն) հոսքին, որոնք Իռլանդիայում ստեղծեցին հարյուրավոր (350—400) ամենատարբեր արդյունաբերական ձեռնարկություններ։

Շարունակելով ընթանալ այդ ուղիով, իռլանդական կառավարությունը 1965 թ. Անգլիայի հետ կնքեց երկու երկրների միջև «ազատ առևտրի գոտի» ստեղծելու տնտեսական համաձայնագիրը։ Այդ համաձայնագիրը նախատեսում էր Իռլանդիայի և Անգլիայի միջև 10-ամյա ժամկետով լրիվ վերացնել արդյունաբերական արտահանման մաքսային սահմանափակումները։ Արտասահմանյան մոնոպոլիաները երկրի էկոնոմիկային ենթարկելու այդ կուրսի տրամաբանական ավարտը եղավ 1972 թ. Անգլիայից հետո «Ընդհանուր շուկայի» մեջ Իռլանդիայի մտնելը։

«Ամեն գնով» օտարերկրյա կապիտալը երկիր ներգրավելու քաղաքականությունը հայտնի չափով ներգործեց նրա կապիտալիստական զարգացման, վտարանդիությունը կրճատելու վրա (60-ական թվականների վերջերին նրա մակարդակը իջավ երեք անգամ)։ Վերջին տասնամյակներին տնտեսական աճի տարեկան տեմպերը միջին հաշվով կազմեցին 4 %, իսկ 1921—1958 թթ. 1 %։ Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը (արժեքային արտահայտությամբ) ավելացավ ավելի քան երեք անգամ, գերազանցելով գյուղատնտեսական արտադրանքի արժեքը։ Վերջինում ներկայումս զբաղված է աշխատուժի միայն 28 %-ը, արդյունաբերության մեջ՝ համարյա մեկ երրորդը, սպասարկման ոլորտում՝ մինչև 45 %-ը։ Վարձու աշխատանքի անձինք կազմում են երկրի ինքնագործ բնակչության մոտավորապես 70 %-ը։ Իռլանդիայի աշխատուժի մեկ տասներորդը զբաղված է պետական հատվածի ձեռնարկություններում։ Շարունակվում է ինտենսիվ կապիտալիստական կոնսոլիդացիան գյուղատնտեսության մեջ. վերջին ժամանակաշրջանի ընթացքում մանր և մանրագույն ֆերմաների թվաքանակը կրճատվել է ևս 80 հազարով։ Միաժամանակ նրա հասարաժինը մինչև օրս մնում է անասնապահական մոնոկուլտուրան, որը պարփակված է, ինչպես և առաջ, Մեծ Բրիտանիայի շուկայով (անասնապահական արտահանման մինչև 70 %-ը)։

Իռլանդական տնտեսական «բումը» ունի, սակայն, իր հակառակ կողմը, նրանից հիմնականում շահում են միայն օտարերկրյա կոնցեռնները և տեղական ոչ մեծ թվով խոշոր ֆիրմաները, որոնք աշխատում են արտահանման համար։ Նրանք տալիս են երկրի արդյունաբերական ամբողջ արտադրանքի ոչ պակաս երեք քառորդ մասը։

Մոնոպոլիաները գրոհում են իռլանդական մանր և միջին բիզնեսի վրա, որը գլխավորապես կողմնորոշվում է դեպի տեղական շուկան (կլանում է իռլանդական միջին ֆիրմաների արտադրանքի մոտավորապես 72 %-ը)։ Վերջին տարիներս նրանց ձեռքն անցան հարյուրավոր արդյունաբերական և

առևտրական ձեռնարկություններ և նույնիսկ պետական հատվածի մի քանի ձեռնարկություններ (իռլանդական հայտնի «Erin's Food» ընկերությունը)։ Մաքսային տարիֆների իջեցման համեմատ անգլիական արդյունաբերական ապրանքների հոսանքը հեղեղում է տեղական շուկան։ Իռլանդիան անգլիական արդյունաբերական արտահանման սպառողի տեսակետից չորրորդն է (60-ական թվականների կեսին նա զբաղեցնում էր իններորդ տեղը)։ Անկախ դրանից, օտարերկրյա մոնոպոլիաներն է՛լ ավելի աճող ակտիվությամբ զավթում են և թալանում երկրի վերջերս հայտնաբերված հարստությունները (հազվագյուտ մետաղների հանքաշերտերը, մերձափնյա նավթը)։

Այս բոլորն անխուսափելիորեն հացնում է քաղաքային միջին խավերի, ազգային-բուրժուական նշանակալի խավերի, մանր և հաճախ էլ միջին ֆերմերության «լվացմանը»։ Աճում են աշխատանքի ինտենսիվացումը, բանվոր դասակարգի շահագործումը։ Անկարող լինելով գլխավորել ազգային իսկական ազատ զարգացման պայքարը, իռլանդական խոշոր բուրժուազիան կապիտուլացվում է օտարերկրյա մոնոպոլիաների առջև։

Մրցունակ են մնում միայն արտահանող խոշոր ֆիրմաները։ Մյուսների ճակատագիրը քայքայումը և կուլ գնալն է։

Քաղաքական կուսակցությունները և քաղաքական պայքարը

Իռլանդիայում հետպատերազմյան քաղաքական ստեղծված իրադրության բնորոշ գծերը հանդիսացան ֆիանա ֆայլ կուսակցության մեջ պահպանողական միտումների ուժեղացումը և հակաիմպերիալիստական պայքարի սկզբունքներից նրա հեռանալը։ Երկրում ամբողջ ներքաղաքական իրադրության վրա վերջին տասնամյակում որոշիչ ներգործություն է ունենում նաև Օլսթերում սոցիալ-քաղաքական ճգնաժամի զարգացումը։ Քաղաքական կուրսի «նոր ռեալիզմը», որը հատկապես հստակորեն դրսևորվեց 50-ականների վերջին—1960 թվականների սկզբին, անմիջականորեն կապված է իռլանդական ազգային բուրժուազիայի վերնախավի ընդհանուր սոցիալ-տնտեսական վերափոխության, արտասահմանյան մոնոպոլիստական կապիտալին նրա սերտաճման հետ։ Կատարվում է ամենաառակցիոն, պրոիմպերիալիստական տրամադրություններ ունեցող աջ բուրժուական խմբավորումների ավանդական ներկայացուցիչ ֆինե գալ ակնհայտ պահպանողական կուսակցության հետ ֆիանա ֆայլի ծրագրային դրույթների և քաղաքական գործունեության մերձեցում։

Իռլանդիայի քաղաքական կյանքի մյուս կարևոր առանձնահատկությունը իռլանդական ժողովրդի մեջ, ներառյալ բանվոր դասակարգը, գյուղացիությունը, քաղաքային միջին խավերը և մոնոպոլիաների հետ չկապված ազգային արդյունաբերողների մի մասը, հակաիմպերիալիստական զգալի կարողությունների առկայությունն է։ Այդ հիման վրա ազգային սուր ճգնաժամերի պահին առաջանում էին քաղաքական նոր կուսակցություններ։ Չնայած այդ կուսակցությունների քաղաքական ղեկավարման մանրբուրժուական հիմքին և բնույթին, դրանց գործունեությունը հակաիմպերիալիստական պայքարի ծավալման դրական գործոն էր։ Այսպես, 1947 թ. առաջացավ հանրապետական կուսակցությունը (կլան նա պորլախտան), որը հանդես եկավ հետևյալ պահանջներով. Հյուսիսը և Հարավը վերամիավորել իրրև միասնական անկախ հանրապետություն, ակտիվորեն շարունակել ազգային անկախ էկոնոմիկայի ստեղծման, ազգային մշակույթի վերածնման, բնակչության լայն զանգվածների կյանքի բարելավման աշխատանքները և այլն։ 1957 թ. ակտիվացավ հանրապետական նոր կուսակցությունը, որն ընդունեց երկրում հանրահայտ շին-ֆեյն («մենք ինքներս») անունը։ Նա պահանջեց վճռական պայքար մղել Իռլանդիայի էկոնոմիկայում օտարերկրյա կապիտա-

լի ճնշման դեմ, կապերը խզել անգլիական տնտեսական և ֆինանսական համակարգից, արդյունավետ միջոցներ ձեռնարկել մասսաների կենսամակարդակի վերելքի համար։

1968 թ. շին-ֆեյնը իր պայքարի վերջնական նպատակը համարեց սոցիալիզմը և պահանջ առաջադրեց երկրում իրականացնել հակաիմպերիալիստական ու հակամոնոպոլիստական վերափոխումներ։ 1971 թ. սկզբին ձախ ուժերն ստեղծեցին Իռլանդիայի սոցիալիստական կուսակցությունը։

Անլեգալ դրության մեջ գտնվող հանրապետականների մի մասը՝ գլխավորապես ռադիկալորեն տրամադրված երիտասարդ բանվորների, մանր ծառայողների, դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչների թվից, միավորվեց Իռլանդական հանրապետական բանակի (ԻՀԲ) մարտական խմբերի մեջ։ 1956 թվականից նա Օլսթերում մարտական գործողություններ անցկացրեց անգլիական զորքերի և ոստիկանության դեմ, հույս ունենալով դրանով նպաստել երկրի վերամիավորմանը։ Այդ կամպանիան արդյունքներ չտվեց և դադարեց 1962 թ.։ 60-ականների վերջին—70-ական թվականների սկզբին ԻՀԲ-ն, քաղաքացիական իրավունքների համար պայքարող հյուսիս-իռլանդական մարտիկների դեմ անգլիական իշխանությունների և յունիոնիստական ռեակցիայի կիրառվող տեռորի կապակցությամբ, նորից ակտիվացրեց իր գործունեությունը։ Ինչպես շին-ֆեյնը, այնպես էլ ԻՀԲ-ն ակտիվորեն հանդես էին գալիս Իռլանդիան «Ընդհանուր շուկայի» մեջ ներգրավելու դեմ։

Օլսթերյան ճգնաժամի բուռն զարգացումը և դրան ուղեկցող քաղաքական ուժերի բևեռացումը երկրի հյուսիսում և հարավում 1970 թվականի սկզբներին հասցրեցին հանրապետական շարժման պառակտմանը։ Այդ շրջանում առանձնանում էին «պաշտոնական» շին-ֆեյնը և «պաշտոնական» ԻՀԲ-ն, որոնք օգտվում էին հանրապետական շարժման մասնակիցների մեծամասնության պաշտպանությունից և իրենց նպատակն էին համարում ժողովրդի շահերից ելնող դեմոկրատական լայն վերափոխումները, գլխավոր հույսը դրելով քաղաքական ու սոցիալական ոլորտներում զանգվածային գործողությունների վրա։ Դրանց հակառակ «ժամանակավոր» շին-ֆեյնը և ԻՀԲ-ն վարում են աղանդավորական, նեղ ազգային գիծ, լայնորեն կիրառելով տեռորիստական մեթոդներ (ռումբերի պայթեցում, քաղաքական սպանություններ), որը վնաս է հասցնում հակաիմպերիալիստական պայքարին։

Իռլանդիայի իրադրության ընդհանուր ռադիկալացման հետ կապված և Հյուսիսի իրադարձությունների ազդեցությամբ ֆիանա ֆայլ կառավարող կուսակցության դիրքերն սկսեցին թուլանալ։ 1971 թ. կուսակցությունը պառակտում էր ապրում։ Բաժանված այն մասը, որը դժգոհ էր Օլսթերի նկատմամբ ֆիանա ֆայլի քաղաքական երկչոտ կուրսից, ստեղծեց քաղաքական նոր միավորում՝ իռլանդական միասնության կուսակցությունը։ 1972 թ. վերջին ֆիանա ֆայլ կուսակցությունը պառլամենտական հերթական ընտրություններում պարտություն կրեց։ Իշխանության գլուխ անցավ երկու՝ ֆինե գալի և իռլանդական լեյբորիստական կուսակցությունների բլոկը։

Երկրի քաղաքական իրադրության վրա քիչ ազդեցություն չի գործում իռլանդական լեյբորիզմի կայուն ավանդույթ դարձած իռլանդական լեյբորիստական կուսակցության սոցիալ-ռեֆորմիստական ղեկավարության՝ ազգային հակաիմպերիալիստական պայքարի բնագավառում սեփական այլընտրանքի ծրագիր առաջադրելուց հրաժարվելը։ Նման հարցերը համարելով «քաղաքագետների մասնավոր գործը», նա իր ջանքերն ուղղում է կապիտալի և աշխատանքի հարաբերություններում «ներդաշնակություն» հաստատելուն։ 1968 թ. լեյբորիստական կուսակցությունը ձևականորեն սոցիալիստական ծրագիր ընդունեց, սակայն իռլանդական լեյբորիստների պաշտոնական մեկ-

նաբանման մեջ «սոցիալիզմը» հավասարազոր է «խառը էկոնոմիկային»։ ԻԿԿ-ի շարքերում ուժեղ և ազդեցիկ ձախ թևը հանդես է գալիս ազգային ու սոցիալական պրոբլեմների «ավանդական մոտեցման» վերանայման, երկրի բոլոր ձախ ուժերի միասնական ճակատ ստեղծելու օգտին։

1959 թ. կայացավ երկրի Հյուսիսի և Հարավի արհմիութենական կենտրոնների միավորումը միասնական տրեդյունիոնների իռլանդական կոնգրեսի մեջ, որը միավորում էր ավելի քան կես միլիոն կազմակերպված բանվորների։ Սակայն իռլանդական բանվորական շարժման պոտենցիալ մեծ հընարավորությունները թուլանում են լեյբորիստական սոցիալ-ռեֆորմիզմի և արհմիութենական բյուրոկրատիայի, ինչպես նաև բուրժուանացիոնալիստական և կրոնաազանդավորական (Հարավում կաթոլիկական գաղափարախոսության, Հյուսիսում՝ մարտնչող բողոքականության) հայացքների առկայության պատճառով։

Դասակարգային պայքարի շիկացումն իջեցնելու գործում շատ մեծ դեր է խաղում աշխատանքային հարաբերությունների ոլորտին իռլանդական բուրժուական պետության մշտական միջամտությունը։

1949 թ., ազգային անկախության համար իռլանդական ժողովրդի բազմամյա անձնուրաց պայքարի հետևանքով, Իռլանդիան դուրս եկավ ազգերի բրիտանական համագործակցությունից և իրեն հռչակեց հանրապետություն։ 1972 թ. համաժողովրդական հանրաքվեի արդյունքը եղավ Իռլանդական հանրապետության սահմանադրությունից կաթոլիկական եկեղեցու հատուկ արտոնությունների վերաբերյալ հոդվածները հանելը։

Հակաիմպերիալիստական մարտունակ և ակտիվ ուժը, իռլանդական բանվորական և համադեմոկրատական շարժման իսկական ավանգարդը Իռլանդիայի կոմունիստական կուսակցությունն է (1940 թ. արգելված լինելով, նա 1970 թ. մարտին, մարքսիստական Իռլանդական բանվորական կուսակցության և Հյուսիսային Իռլանդիայի կոմունիստական կուսակցության միավորման հետևանքով, վերամիավորվեց իրրև համաիռլանդական կուսակցություն)։

ԻԿԿ-ի «Իռլանդական կոմունիստական մանիֆեստ—1970» առաջին պաշտոնական փաստաթուղթը երկրի առջև կանգնած դժվարությունները հաղթահարելու և նրա ազգային ազատ զարգացումն ապահովելու լայն ծրագիր էր առաջադրում։ Ելնելով նրանից, որ Իռլանդիայի ներքին կյանքում սոցիալիզմի ուղուն հասնելու առաջին քայլը պետք է լինի օտարերկրյա մոնոպոլիստական, առաջին հերթին բրիտանական իմպերիալիզմի, կապիտալի տիրապետության վերացումը, մանիֆեստը նախատեսում է մեկ միասնական պետության շրջանակներում իռլանդական բոլոր հողերը միավորելը, Անգլիայի հետ կնքած առևտրական անիրավահավասար համաձայնագրերը չեղյալ հայտարարելը, ներքին շուկան հետագայում ընդարձակելը, բոլոր պետությունների, այդ թվում Արևելյան Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի սոցիալիստական երկրների հետ դիվանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատելը, օտարերկրյա բոլոր ֆիրմաները և դրանց հետ կապված իռլանդական մեծ բիզնեսը, բոլոր բանկերը, ապահովագրական և վարկատու ընկերություններն ազգայնացնելը, մանր ֆերմերներին պետության կողմից օգնություն ցույց տալն ապահովելը, առողջապահության անվճար համակարգ մտցնելը, շտապ կարգով բնակարանային պրոբլեմը լուծելը։ Կուսակցությունն իր առաջնահերթ խնդիրն է համարում ռեակցիայի դեմ, հանուն քաղաքական կյանքի դեմոկրատացման և կրոնական խտրականության դադարեցման Օլսթերի աշխատավորների պայքարին օգնելը։ ԻԿԿ-ն պայքարում է այդ լոզունգով հանրապետականների, ձախ լեյբորիստների, ֆիանա ֆայլ

կառավարող կուսակցության օպոզիցիոն տարրերի, Օլսթերում դեմոկրատիայի համար պայքարող մարտիկների հետ միասնական լայն ճակատ ստեղծելու համար։

Արտաքին քաղաքականությունը

Իռլանդիայի հետպատերազմյան արտաքին քաղաքական կուրսը հակասական է, այն շատ բանով արտացոլում է երկրում իշխանության գլուխ գտնված ազգային բուրժուազիայի էվոլյուցիան։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Իռլանդիան կենսագործում էր չեզոքության քաղաքականություն, այդ կուրսը հիմնավորելով Անգլիայի հետ ռազմական դաշինքի մեջ մտնելու անհնարինությամբ, որն իր տիրապետության տակ էր պահում իռլանդական ազգային տարածքի (Օլսթեր) մի մասը։ Իռլանդիան Եվրոպայի կապիտալիստական այն փոքրաթիվ երկրներից է, որը չի մասնակցում ռազմաքաղաքական բլոկներին։ 1955 թ. մտնելով ՄԱԿ-ի մեջ, նա իր պատվիրակների միջոցով բազմիցս հանդես եկավ խաղաղության ամրապնդման, միջուկային զինաթափման, գաղութային երկրներին և ժողովուրդներին լիակատար անկախություն տալու օգտին։

Իռլանդական հանրապետությունը մյուս կապիտալիստական պետություններից ուշ (1973 թ.) նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մի քանի այլ երկրների հետ։ Հյուսիսային Իռլանդիայում Մեծ Բրիտանիայի իմպերիալիստական քաղաքականության, երկրի այդ շրջանում դեմոկրատական շարժումը նրա կողմից դաժանորեն ճընշելու կապակցությամբ Իռլանդիայի կառավարությունը ձեռնարկեց արտաքին քաղաքական մի շարք գործողություններ (միջազգային դատարանին դիմելը, Լոնդոնից իր դեսպանին ժամանակավորապես ետ կանչելը և այլն)։ Սակայն այդ բոլորը մեծ մասամբ կրում են ցուցադրական բնույթ. կառավարող իռլանդական խոշոր բուրժուազիան շատ թանկ է գնահատում բրիտանական իմպերիալիզմի հետ բարյացակամ հարաբերությունները և ամենից շատ վախենում է նրանց հետ վճռականորեն կապերը խզելուց։

Զմիանալու և չեզոքության ավանդական քաղաքականության պահպանման, Իռլանդիայի արտաքին քաղաքական կուրսի պոզիտիվ ավանդույթների զարգացման, սոցիալիստական երկրների հետ լիովին փոխշահավետ դիվանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատելու օգտին հանդես են գալիս երկրի առաջադիմական ուժերը, կոմունիստները, հանրապետականների և լեյբորիստների մի մասը։ Նրանց կողմն է իռլանդական ժողովրդական զանգվածների նշանակալի մասի համակրանքը։

ԳԼՈՒԽ 24

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Լատինական Ամերիկան աշխարհի ամենախոշոր ռեգիոններից է, գրավում է այդ ցամաքի 15 %-ը (20 միլիոն քկմ)։ 1974 թ. մայրցամաքի բնակչությունը կազմում էր մոտ 320 միլիոն մարդ։ Լատինական Ամերիկայում կա

26 անկախ պետություն, պահպանվել են գաղութային տիրապետությունները՝ Պուերտո-Ռիկոն, Ֆրանսիական և Նիդեռլանդական Գվիանան և այլն, որոնցում ապրում է մոտ 5 միլիոն մարդ։

Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով Լատինական Ամերիկան միջանկյալ տեղ է գրավում Ասիայի ու Աֆրիկայի զարգացող երկրների և զարգացած կապիտալիստական երկրների միջև։ Նրան հատուկ են այնպիսի գծեր, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետամնացությունը, էկոնոմիկայի միակողմանի զարգացումը, արտասահմանյան, ամենից առաջ ամերիկյան կապիտալից ֆինանսատնտեսական կախվածությունը։ Միաժամանակ, ի տարբերություն Ասիայի և Աֆրիկայի երկրների մեծամասնության, Լատինական Ամերիկայի երկրներին հիմնականում բնորոշ է կապիտալիզմի զարգացման միջին մակարդակը։ Կարելի է առանձնացնել երկրների երեք խումբ։ Առաջին խմբի մեջ է մտնում «մեծ եռյակը»՝ Արգենտինան, Բրազիլիան և Մեքսիկան, որոնք ունեն զարգացած ֆաբրիկագործարանային արդյունաբերություն, ներառյալ այնպիսի նոր ճյուղերը, ինչպիսիք են՝ նավթաքիմիան, էլեկտրոնիկան, ատոմային արդյունաբերությունը, զարգացած մեքենաշինությունը։ Այդ երեք երկրներին բաժին է ընկնում մայրցամաքի արդյունաբերական ամբողջ արտադրանքի 65 %-ը, նշանակալի զարգացման են հասել կապիտալիստական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ, չնայած որ դա չի հասցրել լատիֆունդիզմի վերացմանը։

Երկրորդ խումբն են կազմում Կոլումբիան, Չիլին, Վենեսուելան, Պերուն։ Այդ խմբին բնորոշ է լեռնահանքային արդյունաբերության նշանակալի զարգացումը, համեմատաբար զարգացած վերամշակող արդյունաբերությունը։ Կապիտալիստական կացութաձևը կարևոր տեղ է գրավում գյուղատնտեսության մեջ, բայց լատիֆունդիզմի դիրքերը դեռևս ուժեղ են։ Կապիտալիստական զարգացման մակարդակով այդ խմբին կարելի է դասել նաև Կոստա-Ռիկան, Սալվադորը, Ուրուգվայը։

Առաջին և երկրորդ խմբի երկրներում նկատվում է արտադրության համակենտրոնացման բարձր մակարդակ։ Նրանցից մի քանիսում գոյություն ունեն տեղական մոնոպոլիստական խմբեր և դրսևորվում են պետական-մոնոպոլիստական միտումներ։

Երրորդ խմբին են պատկանում մնացած գերակշիռ լատիֆունդիաներով և մանր ապրանքային կացութաձևով ագրարային երկրները (Հաիթին, Հոնդուրասը, Նիկարագուան, Գվատեմալան, Պարագվայը)։ Արդյունաբերությունը նրանցում շատ թույլ է զարգացած։

Ըստ տնտեսական զարգացման մակարդակի երկրների դասակարգումը հնարավորություն է տալիս լավ հասկանալու նրանց յուրահատկությունները և պարզելու քաղաքական ու դասակարգային պայքարի առանձնահատկությունները, չնայած այն խիստ պայմանական է։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Լատինական Ամերիկայի տնտեսական և քաղաքական զարգացումը

1945 թ. մոտերքը Լատինական Ամերիկայի բոլոր երկրները պատերազմ հայտարարեցին ֆաշիստական տերություններին, սակայն նրանց մեծամասնությունը մասնակցություն չունեցավ այդ պատերազմին։ Պատերազմի մեջ նրանց ներգրումը հիմնականում սահմանափակվեց ստրատեգիական հումքի մատակարարմամբ և Միացյալ Նահանգներին ռազմական բազաներ տրամադրելով։

Պատերազմական իրադրությունը Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական զարգացման մեջ լուրջ տեղաշարժեր առաջ բերեց։ Եվրոպայի հետ տնտեսական կապերի, ԱՄՆ-ից արդյունաբերական որոշ ապրանքների և ամբողջությամբ ներքին շուկայում արտասահմանյան մրցակցության կրճատումը հնարավորություն տվեցին այնպիսի երկրների, ինչպիսիք են Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, արագացնել իրենց արդյունաբերական զարգացման տեմպերը։ 40-ական թվականների կեսերին նրանց արդյունաբերական արտադրությունն ավելացավ 50 %-ով։ Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում վերամշակող արդյունաբերության զգալի աճ էր նկատվում։ Արագացված տեմպերով էին զարգանում արդյունաբերության ավանդական տեքստիլ և սննդի ճյուղերը։ Պատերազմի տարիներին Մեքսիկայում, Բրազիլիայում, Չիլիում, Արգենտինայում դրվեցին ժամանակակից մետալուրգիայի հիմքերը։ Այդ երկրներում չուգունի և պողպատի ձուլումը աճեց երեք-չորս անգամ, հանդես եկան արտադրության ավարտուն ցիկլով մետալուրգիական խոշոր կոմբինատներ, առաջացան մեքենաշինությունը, քիմիական, նավթավերամշակման և արդյունաբերության այլ ճյուղեր։ Ծանր արդյունաբերության և էլեկտրաէներգետիկայի զարգացման գործում կարևոր դեր խաղացին պետական հատվածը և ինդուստրացման պետական խրախուսանքը։ 1940 թ. Բրազիլիայում կազմավորվեց «Կոմպանիա դե սիդերուրժիկա նասիոնալ» պետական մետալուրգիական ընկերությունը։ 1945 թ. շարք մտան ավիացիոն մոտորների արտադրության գծով պետական ընկերության ձեռնարկությունները, ստեղծվեց պետական էլեկտրական ընկերություն։ Մեքսիկայում, որտեղ պետական հատվածի հիմքերը դրվել էին արտասահմանյան նավթային ընկերությունների ազգայնացման հետևանքով, դեռևս 30-ական թվականների վերջին զգալիորեն ամրապնդվեց «Պեմեքս» պետական նավթային ընկերությունը։ Ազգային մետալուրգիայի հիմքը դարձավ պետական մետալուրգիական կոմբինատը։

1940—1945 թթ. աճեց ներլատինաամերիկյան առևտուրը, որ նախքան պատերազմն աննշան էր։ Ամենազարգացած երկրները՝ Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան, Չիլին դարձան հարևան երկրներ պատրաստի արտադրանքի խոշոր արտահանողներ։

Պատերազմի տարիներին ազգային էկոնոմիկայի աճի տենդենցի հետ միասին ուժեղացավ լատինաամերիկյան երկրների կախումը ԱՄՆ-ի մոնոպոլիաներից, որոնք վճռական դիրքեր գրավեցին ստրատեգիական հումքի արդյունահանման մեջ, երկրորդ պլան մղելով անգլիական մոնոպոլիաներին և լրիվ դուրս մղելով գերմանական ու ճապոնական կապիտալը։ Ուժեղացավ ԱՄՆ-ի դերը լատինաամերիկյան երկրների արտաքին առևտրում։ 1938 թ. ԱՄՆ-ի բաժինը Լատինական Ամերիկայի արտահանման մեջ կազմում էր 30 %, իսկ ներմուծման մեջ՝ 32,2 %։ 40-ական թվականների կեսերին այն ավելացավ համապատասխանաբար մինչև 37,1 և 51,6 %։ Հատկապես ուժեղացավ լատինաամերիկյան երկրների կախվածությունը Միացյալ Նահանգներից ստացվող արդյունաբերական սարքավորման գծով։ Պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կապիտալների հիմնական մասը ուղղվում էր արդյունահանող արդյունաբերությանը։ 1943 թ. 2,4 միլիարդ դոլար ուղղակի մասնավոր կապիտալ ներդրումներից վերամշակող արդյունաբերության մեջ ներդրվեց 322 միլիոն, իսկ արդյունահանման ճյուղերում՝ ավելի քան 2 միլիարդ դոլար։ Դա նպաստեց լատինաամերիկյան երկրների ագրահումքային մասնագիտացման խորացմանը, չնայած արդյունաբերական արտադրության աճին։

26 անկախ պետություն, պահպանվել են գաղութային տիրապետությունները՝ Պուերտո-Ռիկոն, Ֆրանսիական և Նիդեռլանդական Դվիանան և այլն, որոնցում ապրում է մոտ 5 միլիոն մարդ։

Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով Լատինական Ամերիկան միջանկյալ տեղ է գրավում Ասիայի ու Աֆրիկայի զարգացող երկրների և զարգացած կապիտալիստական երկրների միջև։ Նրան հատուկ են այնպիսի գծեր, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետամնացությունը, էկոնոմիկայի միակողմանի զարգացումը, արտասահմանյան, ամենից առաջ ամերիկյան կապիտալից ֆինանսատնտեսական կախվածությունը։ Միաժամանակ, ի տարբերություն Ասիայի և Աֆրիկայի երկրների մեծամասնության, Լատինական Ամերիկայի երկրներին հիմնականում բնորոշ է կապիտալիզմի զարգացման միջին մակարդակը։ Կարելի է առանձնացնել երկրների երեք խումբ։ Առաջին խմբի մեջ է մտնում «մեծ եռյակը»՝ Արգենտինան, Բրազիլիան և Մեքսիկան, որոնք ունեն զարգացած ֆաբրիկագործարանային արդյունաբերություն, ներառյալ այնպիսի նոր ճյուղերը, ինչպիսիք են՝ նավթաքիմիան, էլեկտրոնիկան, ատոմային արդյունաբերությունը, զարգացած մեքենաշինությունը։ Այդ երեք երկրներին բաժին է ընկնում մայրցամաքի արդյունաբերական ամբողջ արտադրանքի 65 %-ը, նշանակալի զարգացման են հասել կապիտալիստական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ, չնայած որ դա չի հասցրել լատիֆունդիզմի վերացմանը։

Երկրորդ խումբն են կազմում Կոլումբիան, Չիլին, Վենեսուելան, Պերուն։ Այդ խմբին բնորոշ է լեռնահանքային արդյունաբերության նշանակալի զարգացումը, համեմատաբար զարգացած վերամշակող արդյունաբերությունը։ Կապիտալիստական կացութաձևը կարևոր տեղ է գրավում գյուղատնտեսության մեջ, բայց լատիֆունդիզմի դիրքերը դեռևս ուժեղ են։ Կապիտալիստական զարգացման մակարդակով այդ խմբին կարելի է դասել նաև Կոստա-Ռիկան, Սալվադորը, Ուրուգվայը։

Առաջին և երկրորդ խմբի երկրներում նկատվում է արտադրության համակենտրոնացման բարձր մակարդակ։ Նրանցից մի քանիսում գոյություն ունեն տեղական մոնոպոլիստական խմբեր և դրսևորվում են պետական-մոնոպոլիստական միտումներ։

Երրորդ խմբին են պատկանում մնացած գերակշիռ լատիֆունդիաներով և մանր ապրանքային կացութաձևով ագրարային երկրները (Հաիթին, Հոնդուրասը, Նիկարագուան, Գվատեմալան, Պարագվայը)։ Արդյունաբերությունը նրանցում շատ թույլ է զարգացած։

Ըստ տնտեսական զարգացման մակարդակի երկրների դասակարգումը հնարավորություն է տալիս լավ հասկանալու նրանց յուրահատկությունները և պարզելու քաղաքական ու դասակարգային պայքարի առանձնահատկությունները, չնայած այն խիստ պայմանական է։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Լատինական Ամերիկայի տնտեսական և քաղաքական զարգացումը

1945 թ. մոտերքը Լատինական Ամերիկայի բոլոր երկրները պատերազմ հայտարարեցին ֆաշիստական տերություններին, սակայն նրանց մեծամասնությունը մասնակցություն չունեցավ այդ պատերազմին։ Պատերազմի մեջ նրանց ներդրումը հիմնականում սահմանափակվեց ստրատեգիական հումքի մատակարարմամբ և Միացյալ Նահանգներին ռազմական բազաներ տրամադրելով։

Պատերազմական իրադրությունը Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական զարգացման մեջ լուրջ տեղաշարժեր առաջ բերեց։ Եվրոպայի հետ տնտեսական կապերի, ԱՄՆ-ից արդյունաբերական որոշ ապրանքների և ամբողջությամբ ներքին շուկայում արտասահմանյան մրցակցության կրճատումը հնարավորություն տվեցին այնպիսի երկրների, ինչպիսիք են Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, արագացնել իրենց արդյունաբերական զարգացման տեմպերը։ 40-ական թվականների կեսերին նրանց արդյունաբերական արտադրությունն ավելացավ 50 %-ով։ Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում վերամշակող արդյունաբերության զգալի աճ էր նկատվում։ Արագացված տեմպերով էին զարգանում արդյունաբերության ավանդական տեքստիլ և սննդի ճյուղերը։ Պատերազմի տարիներին Մեքսիկայում, Բրազիլիայում, Չիլիում, Արգենտինայում դրվեցին ժամանակակից մետալուրգիայի հիմքերը։ Այդ երկրներում շուգունի և պողպատի ձուլումը աճեց երեք-չորս անգամ, հանդես եկան արտադրության ավարտուն ցիկլով մետալուրգիական խոշոր կոմբինատներ, առաջացան մեքենաշինությունը, քիմիական, նավթավերամշակման և արդյունաբերության այլ ճյուղեր։ Ծանր արդյունաբերության և էլեկտրաէներգետիկայի զարգացման գործում կարևոր դեր խաղացին պետական հատվածը և ինդուստրացման պետական խրախուսանքը։ 1940 թ. Բրազիլիայում կազմավորվեց «Կոմպանիա դե սիդերուրժիկա նասիոնալ» պետական մետալուրգիական ընկերությունը։ 1945 թ. շարք մտան ավիացիոն մոտորների արտադրության գծով պետական ընկերության ձեռնարկությունները, ստեղծվեց պետական էլեկտրական ընկերություն։ Մեքսիկայում, որտեղ պետական հատվածի հիմքերը դրվել էին արտասահմանյան նավթային ընկերությունների ազգայնացման հետևանքով, դեռևս 30-ական թվականների վերջին ղգալիորեն ամրապնդվեց «Պեմեքս» պետական նավթային ընկերությունը։ Ազգային մետալուրգիայի հիմքը դարձավ պետական մետալուրգիական կոմբինատը։

1940—1945 թթ. աճեց ներլատինաամերիկյան առևտուրը, որ նախքան պատերազմն աննշան էր։ Ամենազարգացած երկրները՝ Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան, Չիլին դարձան հարևան երկրներ պատրաստի արտադրանքի խոշոր արտահանողներ։

Պատերազմի տարիներին ազգային էկոնոմիկայի աճի տեմպերի հետ միասին ուժեղացավ լատինաամերիկյան երկրների կախումը ԱՄՆ-ի մոնոպոլիաներից, որոնք վճռական դիրքեր գրավեցին ստրատեգիական հումքի արդյունահանման մեջ, երկրորդ պլան մղելով անգլիական մոնոպոլիաներին և լրիվ դուրս մղելով գերմանական ու ճապոնական կապիտալը։ Ուժեղացավ ԱՄՆ-ի դերը լատինաամերիկյան երկրների արտաքին առևտրում։ 1938 թ. ԱՄՆ-ի բաժինը Լատինական Ամերիկայի արտահանման մեջ կազմում էր 30 %, իսկ ներմուծման մեջ՝ 32,2 %։ 40-ական թվականների կեսերին այն ավելացավ համապատասխանաբար մինչև 37,1 և 51,6 %։ Հատկապես ուժեղացավ լատինաամերիկյան երկրների կախվածությունը Միացյալ Նահանգներից ստացվող արդյունաբերական սարքավորման գծով։ Պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կապիտալների հիմնական մասը ուղղվում էր արդյունահանող արդյունաբերությանը։ 1943 թ. 2,4 միլիարդ դոլար ուղղակի մասնավոր կապիտալ ներդրումներից վերամշակող արդյունաբերության մեջ ներդրվեց 322 միլիոն, իսկ արդյունահանման ճյուղերում՝ ավելի քան 2 միլիարդ դոլար։ Դա նպաստեց լատինաամերիկյան երկրների ագրահումքային մասնագիտացման խորացմանը, չնայած արդյունաբերական արտադրության աճին։

Քաղաքական իրադրությունը Լատինական Ամերիկայում պատերազմի տարիներին

Պատերազմի տարիներին էական տեղաշարժեր կատարվեցին Լատինական Ամերիկայի երկրների քաղաքական կյանքում։ Ֆաշիզմի նկատմամբ Սովետական Միության հաղթանակը ուժեղ ներգործություն ունեցավ Լատինական Ամերիկայի դեմոկրատական ուժերի պայքարի վրա։ Նկատվեց Սովետական Միության նկատմամբ ժողովրդական զանգվածների համակրանքի արագ աճ։ Առաջադեմ ուժերը պահանջում էին դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՍՍՀՄ-ի հետ։ 1942 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ՍՍՀՄ-ի և Մեքսիկայի միջև, 1944 թ. հարաբերություններ Չիլիի, 1945 թ. Բրազիլիայի, 1946 թ. Արգենտինայի հետ։ ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Գվատեմալան, Վենեսուելան, Կոլումբիան, Դոմինիկյան Հանրապետությունը։

Մայրցամաքի քաղաքական կյանքի ամենաբնորոշ գիծը բանվոր դասակարգի հասարակական դերի ուժեղացումն էր։ Նա քանակապես աճեց, ամրապնդեց իր միասնությունը, ուժեղացավ կազմակերպորեն։ Լատինաամերիկյան շատ երկրներում բանվորները հասան արհմիություններ ստեղծելու իրավունքին։ Պատերազմի տարիներին բանվորական շարժման զարգացման գործում մեծ դեր խաղաց 1938 թ. ստեղծված Լատինական Ամերիկայի աշխատավորների կոնֆեդերացիան (ԼԱԱԿ), որը միավորում էր տարբեր ուղղությունների արհմիություններ։ ԼԱԱԿ-ը ակտիվորեն պայքարում էր ԱՄՆ-ի իմպերիալիզմի ճնշման դեմ, հանուն դեմոկրատիայի, հանուն լատինաամերիկյան երկրների տնտեսական ու քաղաքական լիակատար անկախության։ Կոլումբիայում, Պերուում, Վենեսուելայում կոմունիստական կուսակցությունները դուրս եկան ընդհատակից, ակտիվորեն ներգրավվեցին հակաիմպերիալիստական պայքարի մեջ։

Պատերազմի տարիներին ակտիվացավ գյուղացիական շարժումը։ Մի շարք երկրների գյուղատնտեսական պրոլետարիատը իրավունք նվաճեց ստեղծելու իր միավորումները և արհմիությունները։ Դեմոկրատական շարժման մեջ ներգրավվեցին միջին խավերը։ Բոլիվիայում, Վենեսուելայում, Պարագվայում, Կուբայում առաջացան քաղաքական նոր կուսակցություններ, որոնք արտահայտում էին միջին խավերի շահերը, ուժեղացավ ավանդական քաղաքական կուսակցությունների քաղաքականության վրա դեմոկրատական ուժերի ճնշումը։

Հասարակության մանրբուրժուական խավերի ակտիվացումն ուներ նաև իր սովորոտ կողմերը, քանի որ հող էր ստեղծում նացիոնալ-ռեֆորմիզմի ազդեցության համար, որով զինված էր Լատինական Ամերիկայի մի շարք երկրների բուրժուազիան։ Այդ տարիներին լայն տարածում ստացավ պերուական ապրիստական կուսակցության պարագլուխ Այյա դե լա Թորեի առաջքաշած կոնցեպցիան՝ իմպերիալիստական կապիտալիզմի «առաջադիմականության», Լատինական Ամերիկայի ինդուստրացման գործում նրա դրական դերի, Լատինական Ամերիկայի երկրների և ԱՄՆ-ի իմպերիալիզմի միջև հակասությունները մարելու և նրա հետ «ներդաշնակ» համագործակցելու անհրաժեշտության մասին։

Ազատագրական շարժման վերելքը, ժողովրդական լայն զանգվածների ակտիվության աճը հասցրին ռեակցիոն դիկտատորական ռեժիմների տապալմանը Բոլիվիայում (1943), Էկվադորում և Սալվադորում (1944)։ 1944 թ. հուլիսին Գվատեմալայում աշխատավորների համընդհանուր գործադուլը հասցրեց Ուբիկոյի զինվորական դիկտատուրայի անկմանը։ 1944 թ. հոկտեմբերին երկրում հաստատվեց բուրժուական դեմոկրատիայի ռեժիմ։ Պրեզիդենտ ընտրվեց առաջադեմ գործիչ Խոսե Արևալոն։ Սակայն բուրժուաօլիգարխիկական շրջանները և ռեակցիոն զինվորական վերնախավն առաջվա պես ուժեղ դիրքեր էին պահպանում լատինաամերիկյան երկրների էկոնոմիկայում և քաղաքական կյանքում։

ԱՄՆ-ի քաղաքականությունը Լատինական Ամերիկայում

Պատերազմի վերջին, ազգային-ազատագրական շարժման աճի պայմաններում, ԱՄՆ-ը փորձեց ամրապնդել իր դիրքերը և տնտեսական լայն հարձակում սկսել Լատինական Ամերիկայում։ Դրա արտացոլումը եղավ «բարի դրացու» քաղաքականության ուժեղացված քննադատությունը «աջից», որ 30-ական թվականների սկզբին հռչակել էր Ֆ. Ռուզվելտի կառավարությունը։ ԱՄՆ-ի մոնոպոլիստական ազդեցիկ շրջանները կառավարությանը մեղադրեցին «մեղմության» և «լիբերալիզմի» մեջ։ ԱՄՆ-ի նոր կուրսն իր ավարտուն արտահայտությունը գտավ «Կլեյտոնի պլանում», որն առաջարկվեց Չապուլտեպեկում կայացած ներլատինաամերիկյան կոնֆերանսում (Մեքսիկա, 1945 թ. փետրվար-մարտ)։ Կլեյտոնը կոչ էր անում վերջ տալ «տնտեսական նացիոնալիզմին», ընդարձակել ԱՄՆ-ի կապիտալի հետ համագործակցությունը և նրա օգնությամբ «ինդուստրացվել մասնավոր ձեռնարկատիրության և ազատ մրցակցության հիման վրա»։ Չապուլտեպեկի կոնֆերանսում ԱՄՆ-ի պատվիրակությունը պահանջեց վերացնել մաքսային արգելքները, սահմանափակել պետական հատվածի գործունեությունը, ազգային և ինտերնացիոնալ կապիտալին «հավասար հնարավորություններ» տրամադրել։ Չնայած լատինաամերիկյան մի շարք երկրների (Մեքսիկա, Ուրուգվայ, Կոլումբիա, Չիլի) կատաղի դիմադրությանը, Կրեյտոնի հիմնական դրույթները, որոշ չափով մեղմացված մտցվեցին «տնտեսական խարտիայի» մեջ։

Չապուլտեպեկյան կոնֆերանսի աշխատանքում կարևոր տեղ էր հատկացվել պանամերիկյան դաշինքի վերակառուցմանը և ամերիկյան մայրցամաքի երկրների ռազմական և «պաշտպանական» բլոկի ստեղծման նախապատրաստությանը։ Ընդունվեց Չապուլտեպեկյան ակտը, որը նախատեսում էր ագրեսիան ետ մղելու համար զինված ուժերի համատեղ օգտագործում, դրանով դրվեցին հակակոմունիստական բլոկի հիմքերը։ ԱՄՆ-ը հնարավորություն ստացավ ամերիկյան ռեգիոնալիզմի դրոշով Լատինական Ամերիկայում իրականացնել իր քաղաքական ազդեցությունն ընդարձակելու պլանները։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԵՎ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1946—1956)

Ամերիկյան իմպերիալիզմի էքսպանսիայի ուժեղացումը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո լատինաամերիկյան երկրների մեծամասնությունը պատրաստակամությամբ ամերիկյան իմպերիալիզմի հետ դաշինքի դիմեցին։ Ռիո դե Ժանեյրոյի կոնֆերանսում (1947 թ. օգոստոս-սեպտեմբեր) Արևմտյան կիսագնդի փոխադարձ պաշտպանության վերաբերյալ ներամերիկյան պայմանագիր կնքվեց, որը դարձավ ազգային-ազատագրական շարժման դեմ ամերիկյան իմպերիալիզմի և լատինաամերիկյան ռեակցիայի պայքարի դենքը։ Ըստ նոր պայմանագրի «ագրեսիա» էին համարվում մայրցամաքի ներսում այն բոլոր գործողությունները, որոնք վտանգի տակ էին դնում «ամերիկյան որևէ պետության ինքնուրույնությունը կամ քաղաքական անվտանգությունը»։

Հենվելով ԱՄՆ-ի իմպերիալիզմի վրա, ռեակցիան հակակոմունիստական կամպանիա սանձազերծեց։ 1947 թ. Բրազիլիայում կոմունիստական կու-

սակցությունը օրենքից դուրս հայտարարվեց։ Այդ նույն տարում Չիլիի կոալիցիոն կառավարությունից հեռացվեցին կոմունիստները, կոմկուսի հարյուրավոր անդամներ ձերբակալվեցին և համակենտրոնացման ճամբարներ նետվեցին։ 1947 թ. Չիլին և Բրազիլիան դիվանագիտական հարաբերությունները խզեցին ՍՍՀՄ-ի հետ։

Հակակոմունիզմի սանձարձակության և ռեակցիայի հարձակման իրադրության մեջ, 1948 թ. գարնանը Բոգոտայում կայացավ Ներամերիկյան 9-րդ կոնֆերանսը։ Կոնֆերանսի ժամանակ տարբերյալներն առաջացավ ժողովրդական ապստամբություն, որին առիթ ծառայեց ռեակցիոներների կողմից Կոլումբիայի լիբերալների կուսակցության ձախ թևի պարագլուխ Խորխե Գայտանայի սպանությունը։ Այդ ելույթում արտահայտվեց կառավարող պահպանողական կուսակցության քաղաքականությունից Կոլումբիայի ժողովրդական զանգվածների դժգոհությունը։ ԱՄՆ-ի կառավարող շրջանները շտապեցին ապստամբությունը հայտարարել «միջազգային կոմունիզմի» գործունեության արդյունք։ Շտապ կարգով Պանամայի ջրանցքի գոտուց զորք ուղարկվեց Կոլումբիա, ապստամբությունը ճնշելու ժամանակ սպանվեց 1200, վիրավորվեց 2500 մարդ։ Այդ պայմաններում Բոգոտայում ԱՄՆ-ի ներկայացուցիչներն անցկացրին հակակոմունիստական բանաձևը՝ «Դեմոկրատիայի պաշտպանության մասին դեկլարացիան», որը ներծծված էր «սառը պատերազմի» ոգով և լի էր «միջազգային կոմունիզմի» կողմից «ազատ աշխարհին» սպառնացող վտանգի մասին դատողություններով։ Կոնֆերանսում ստեղծվեց ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ) և ընդունվեց նրա կանոնադրությունը։ ԱՄՆ-ի մահազդմամբ ԱՊԿ-ն պետք է դառնար Լատինական Ամերիկայում իր էքսպանսիոնիստական քաղաքականության զենքը։

«Սառը պատերազմի» ժամանակամիջոցում ԱՄՆ-ը պաշտպանում էր ամենառեակցիոն ռեժիմները, կազմակերպում էր պետական հեղաշրջումներ։ Նրա օգնությամբ դիկտատորական ռեժիմներ հաստատվեցին ռեգիոնի 12 երկրում։

«Սառը պատերազմի» իրադրությունը և հակակոմունիստական հիստերիան բարենպաստ պայմաններ ստեղծեցին Լատինական Ամերիկայում ԱՄՆ-ի կապիտալի էքսպանսիայի համար։ Իջեցված գներով ապրանքներ գնելով լատինաամերիկյան երկրներում, ԱՄՆ-ը դրանք ըստ «Մարշալի պլանի» վաճառում էր Եվրոպայում և միաժամանակ լատինաամերիկյան երկրների վրա փաթաթում, ի հաշիվ «օգնության», ամերիկյան մասնավոր ֆիրմաների կողմից ապրանքների ու սարքավորման մատակարարման համակարգը։

ԱՄՆ-ի հետ անիրավահավասար առևտուրը 50-ական թվականների կեսին զգալի դեր էր խաղում լատինաամերիկյան էկոնոմիկայի ճգնաժամային երևույթների խորացման գործում։ Կտրուկ կերպով պակասեցին վալյուտային ռեզերվները, ուժեղացավ ինֆլյացիան։ Լատինաամերիկյան երկրներն ստիպված էին կրճատել սարքավորման գնումները, մտցնել մաքսային սահմանափակումներ և այլն։ 10 տարվա ընթացքում, 1945-ից մինչև 1955 թ., Լատինական Ամերիկայի բաժինը համաշխարհային առևտրի ընդհանուր ծավալում կրճատվեց և 10-ից իջավ մինչև 6 %-ի։

Վերջին տարիներին լատինաամերիկյան երկրների տնտեսական դրությունը վատացրեց նաև ԱՄՆ-ի կապիտալ ներդրումների քաղաքականությունը։ Մերժելով լատինաամերիկյան երկրներին պետական փոխառություններ տալը, ԱՄՆ-ը ամեն կերպ խրախուսում էր ուղղակի մասնավոր ներդրումները։ Միացյալ Նահանգների իմպերիալիզմը լատինաամերիկյան կառավարություններից պահանջում էր բարենպաստ «կլիմա» ստեղծել մասնավոր ներդրումների համար։

Հեղափոխությունները Գվատեմալայում և Բոլիվիայում

1944 թվականից Գվատեմալայում և Բոլիվիայում իրականացվում էին հակաիմպերիալիստական և դեմոկրատական վերափոխումներ։ «Սառը պատերազմի» նոուն շրջանում Գվատեմալայի ժողովուրդը դիմադրություն էր ցույց տալիս ամերիկյան իմպերիալիզմի բացահայտ ճնշմանը։ 1951 թ. պրեզիդենտ դարձած գնդապետ Հակոբ Արբենսի կառավարությունը համագործակցում էր կոմունիստների հետ, որոնք ընդհատակից դուրս գալուց հետո միավորվել էին աշխատանքի գվատեմալական կուսակցության մեջ։ Հատկապես ներքին ռեակցիայի և ամերիկյան իմպերիալիստների զայրույթն առաջացրեց 1952 թ. անցկացված հակաֆեոդալական դեմոկրատական ագրարային ռեֆորմը։ 1954 թ. խոշոր կալվածատերերից և ամերիկյան «Յունայտեդ ֆրուտ» մոնոպոլիայից բռնագրավվեցին հարյուրավոր հեկտարների հողեր, կենսագործվեց դեմոկրատական աշխատանքային օրենսդրությունը, բանվորներն արհմիություններ ստեղծելու իրավունք ստացան, սահմանափակվեց օտարերկրյա մոնոպոլիաների գործունեությունը։ Ամբողջությամբ վերցրած, Հ. Արբենսի կառավարության միջոցառումները բուրժուա-դեմոկրատական վերափոխումների շրջանակներից չէին անցնում։ Սակայն ԱՄՆ-ը դրպարտչական կամպանիա ծավալեց Գվատեմալայի դեմ, Հ. Արբենսի հեղափոխական կառավարության ռեֆորմները հայտարարելով «միջազգային կոմունիզմի» միջամտության արդյունք։

Հենվելով Արևմտյան կիսագնդի պաշտպանության վերաբերյալ պայմանագրի և ԱՊԿ-ի կանոնադրության դրույթների վրա, ԱՄՆ-ը Կարակասում կայացած (1954 թ. ապրիլ) ԱՊԿ-ի Ներամերիկյան 10-րդ կոնֆերանսում հասավ Գվատեմալայի գործերին ԱՊԿ-ի երկրների միջամտության բանաձևի ընդունմանը։ 1954 թ. հունիսին ներքին ռեակցիայի ուժերը, հենվելով Հոնդուրասի տարածքից Գվատեմալա ներխուժած ինտերվենտների զորքերի վրա, տապալեցին Հ. Արբենսի կառավարությունը և հաստատեցին գեներալ Կաստիլո Արմասի դիկտատորական իշխանությունը։

40-ական թվականների վերջից ազատագրական շարժման վերելք նկատվեց Բոլիվիայում, անշեղորեն աճեց բոլիվյան պրոլետարիատի մարտական միջուկ լեռնագործների գործադուլային շարժումը։ 1952 թ. Բոլիվիայի մայրաքաղաք Լա Պասում բռնկված ժողովրդական ապստամբության հետևանքով իշխանության գլուխ անցավ բանվոր դասակարգի, գյուղացիության և մանր բուրժուազիայի վրա հենվող «Ազգային-հեղափոխական շարժում» կուսակցությունը։ Հեղափոխությունը վերջ տվեց օլիգարխիայի քաղաքական գերիշխանությանը։ Երկրում անցկացվեցին սոցիալ-տնտեսական խոր վերափոխումներ, ազգայնացվեցին խոշոր հանքերը, կատարվեց ագրարային ռեֆորմ, մտցվեց համընդհանուր ընտրական իրավունք, բարելավվեց սոցիալական օրենսդրությունը, ընդարձակվեցին արհմիությունների իրավունքները։ Բանակը և ոստիկանությունը ցրվեցին ու փոխարինվեցին բանվորագյուղացիական միլիցիայով։

Սակայն, բանվոր դասակարգի անբավարար հասունության և կազմակերպվածության, միայն 1950 թ. կազմավորված կոմունիստական կուսակցության թուլության պատճառով, քաղաքականության մեջ որոշիչ դեր սկսեցին խաղալ ազգային-ռեֆորմիստական տարրերը, որոնք զիջումների դիմեցին իմպերիալիզմին։ Բացի այդ, ԱՄՆ-ը Բոլիվիայի նկատմամբ վարում էր այլ քաղաքականություն, քան գվատեմալական հեղափոխության նկատմամբ։ Նա համաձայնեց Բոլիվիային տնտեսական և ֆինանսական օգնություն ցույց

ռալ, նպատակ ունենալով թույլ չտալ հեղափոխական պրոցեսի խորացում և սոցիալական վերափոխումները սահմանափակել կապիտալիստական մոդեռնացման շրջանակներում։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1956—1965)

Սոցիալ-տնտեսական կառուցվածքի ճգնաժամի խորացումը

50-ական թվականների կեսից նորից սրվեց լատինամերիկյան երկրների սոցիալ-տնտեսական կառուցվածքի ճգնաժամը, որը հատկապես խոր կերպով ցընցեց գյուղատնտեսությունը։ Լատինական Ամերիկային բնորոշ է հողային սեփականության արտակարգ բարձր համակենտրոնացումը. հաշվառված հողային ֆոնդի 50 %-ը (յուրաքանչյուրն ավելի քան 6 հազար հեկտար տարածությամբ) բաժին է ընկնում 1,5 % խոշոր տնտեսություններին։ Մեծ քանակությամբ մանր և մանրագույն տնտեսություններ ունեն ընդամենը 1—5 հեկտար հող, նրանց բաժին է ընկնում հողի 6 %-ը։ Հողատիրության հետամնաց ձևերի տիրապետելը (մանր և միջին տնտեսությունների ճնշող մեծամասնությունում բացառապես կիրառվում է ձեռքի աշխատանքը) ծնում է ագրարային խրոնիկական գերբնակչություն, գյուղերից մարդկանց զանգվածային տեղափոխում քաղաքները։

Գյուղատնտեսության մեջ կառուցվածքային ճգնաժամն արտահայտվում էր արտահանման ճյուղերում արտադրանքի գերարտադրությամբ և սննդամթերքների խրոնիկական պակասով։ Դրա հետևանքով սննդամթերքների գները, ինչպես նաև պարենի արտահանման ծախսերն աճում էին, որը լատինամերիկյան երկրների վճարունակ հաշվեկշռի վրա ծանր բեռ էր դառնում։

50-ական թվականների կեսերին լատինամերիկյան երկրների արտաքին առևտրի պայմանները խիստ կերպով վատացան։ Արտահանման ճգնաժամը առաջ էր եկել սինթետիկ նյութերի լայնորեն օգտագործման հետ կապված զարգացած կապիտալիստական երկրներում բնական հումքի պահանջարկի կրճատման հետևանքով։ ՄԱԿ-ի տվյալներով 50-ականների վերջին—60-ական թվականների սկզբին լատինամերիկյան երկրները, արտաքին առևտրի պայմանների վատացման հետևանքով, միջին հաշվով տարեկան կորցրին 2,5 միլիարդ դոլար։ Արտահանումից ստացվող եկամուտների իջնելը հասցրեց արդյունաբերական սարքավորման և կիսաֆաբրիկատների ներմուծման խիստ կրճատմանը, ինդուստրիայի զարգացման տեմպերի դանդաղեցմանը։

Կառուցվածքային ճգնաժամի խորացումը հասցրեց արտաքին ֆինանսավորման ճգնաժամին. Լատինական Ամերիկայի երկրներից կապիտալների արտահոսքն ավելացավ, այն ժամանակ, երբ արտասահմանյան կապիտալների ներհոսքը կրճատվեց։ 1946—1963 թթ. ԱՄՆ-ի մոնոպոլիաները Լատինական Ամերիկայից տարան 11 միլիարդ դոլարի շահույթ, իսկ կապիտալի մաքուր ներհոսքը կազմեց ընդամենը 4,6 միլիարդ դոլար։

1956—1963 թթ. լատինամերիկյան երկրներում նկատվում էր բնակչության մեկ շնչի հաշվով ազգային համախառն արտադրանքի աճի կտրուկ անկում։ 1961—1965 թթ. այն, 1956—1960 թթ. համեմատությամբ, կրճատվեց կրկնակի չափով։

Ազգային-ազատագրական շարժումը։ Կուբայական հեղափոխության հաղթանակը

Կառուցվածքային ճգնաժամի խորացումը ներքին կարևոր գործոն հանդիսացավ մայրցամաքում 50-ական թվականների կեսերից սկսված հեղափոխական վերելքի համար։ Համաշխարհային սոցիալիստական սիստեմի ամրապնդվելը, նրա՝ համաշխարհային զարգացման վճռական ուժ դառնալը, ինչպես նաև Ասիայում և Աֆրիկայում իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը նպաստեցին հեղափոխական տրամադրությունների աճին։ 1954 թվականից նկատվեց գործադուլային պայքարի սրընթաց վերելք։ 1950 թ. գործադուլավոր բանվորների թիվը կազմեց 2,5—3 միլիոն մարդ, 1954 թ. 6—7,4 միլիոն, իսկ 1965 թ. 8,5—9 միլիոն մարդ։ Դրա հետ միաժամանակ տարածվեց հակաիմպերիալիստական ելույթների ալիքը։ Մեկը մյուսի ետևից տապալվեցին ռեակցիոն դիկտատորական ռեժիմները Պերուում (1956), Կոլումբիայում (1957), Վենեսուելայում (1958)։ 1959 թ. հունվարին հեղափոխություն կատարվեց Կուբայում, որն իրենով նշանավորեց Լատինամերիկյան մայրցամաքում սոցիալիզմին անցնելու սկիզբը։ Կուբայական հեղափոխության հաղթանակը Լատինական Ամերիկայի հեղափոխական վերելքի բարձրակետը հանդիսացավ և հսկայական ազդեցություն թողեց մայրցամաքի հեղափոխական պրոցեսի հետագա զարգացման վրա։

ԱՄՆ-ի իմպերիալիստական քաղաքականությունը. «Հանուն առաջադիմության» դաշինքը

Մայրցամաքի հեղափոխական վերելքը վկայում էր ԱՄՆ-ի լատինամերիկյան քաղաքականության խոր ճգնաժամի մասին։ Արդեն էյզենհաուերի կառավարության գործունեության վերջին տարիներին սկսեց մշակվել ԱՄՆ-ի լատինամերիկյան քաղաքականության նոր կուրսը, որն ավելի ավարտուն ձև ստացավ Քենեդիի պրեզիդենտության տարիներին։

Առաջին անգամ Լատինական Ամերիկայի նկատմամբ նոր քաղաքականությունն անցնելը հայտարարվեց 1961 թ. մարտին, վարձկանների՝ Կուբա զինված ներխուժելուց մեկ ամիս առաջ։ Պրեզիդենտ Քենեդին կոչով դիմեց Արևմտյան կիսագնդի բոլոր երկրներին՝ միավորվել «Հանուն առաջադիմության դաշինքի» մեջ և համատեղ ջանքեր գործադրել Լատինական Ամերիկայի աղքատությունն ու հետամնացությունը վերացնելու համար։ «Նոր բնագծերի» քաղաքականության հիմքում դրվեց «հեղափոխության խաղաղ կարգավորման» կոնցեպցիան։ «Նոր բնագծերի» գաղափարախոսները այդ կոնցեպցիան առաջ քաշեցին որպես կուբայական «բռնի և արյունոտ» հեղափոխության ալտերնատիվ։ Նրանք հայտարարեցին, որ հեղափոխությունը Լատինական Ամերիկայում պետք է անցկացվի «վերևից», լատինամերիկյան երկրների կառավարող շրջանների միջոցով, ԱՄՆ-ի պաշտպանությամբ։ «Խաղաղ հեղափոխության» տակ հասկացվում էր սոցիալական մի շարք, առաջին հերթին ագրարային և հարկային ռեֆորմների անցկացում, ինդուստրացումն արագացնելու ուղիով լատինամերիկյան երկրների տնտեսական զարգացման տեմպերի բարձրացում։ Ամերիկյան իմպերիալիզմը «Հանուն առաջադիմության դաշինքի» օգնությամբ ցանկանում էր իր կողմը գրավել ազգային բուրժուազիայի և «միջին խավերի» որոշ շրջաններ, որը նրան թույլ կտար պառակտել և թուլացնել հակաիմպերիալիստական շարժումը, ընդարձակել իր տիրապետության սոցիալական բազան։

«Հանուն առաջադիմության դաշինքի» պաշտոնական ընդունումը կայացավ 1961 թ. օգոստոսին Պունտա դել Էստեում (Ուրուգվայ) տեղի ունեցած ԱՊԿ-ի ներամերիկյան տնտեսական և սոցիալական խորհրդի արտակարգ նստաշրջանում։ «Դաշինքի» ծրագրային փաստաթղթերը առաջ էին քաշում հետևյալ խնդիրները. մեկ շնչի հաշվով ազգային համախառն արտադրանքի աճի ավելացումը տարեկան հասցնել մինչև 3,6 %-ի, Լատինական Ամերիկայում ստեղծել բազմաճյուղ էկոնոմիկա, ագրարային ռեֆորմներ անցկացնելու ճանապարհով հաղթահարել ագրարային ճգնաժամը, 1970 թ. մոտերքին վերացնել անգրագիտությունը, ապահովել բոլոր երեխաների վեցամյա նախ-

նական կրթությունը, բնակարանային շինարարությունը, համաշխարհային շուկայում կայունացնել լատինամերիկյան արտահանման ապրանքների գները, օգնել լատինամերիկյան ինտեգրացիայի նախագծերին։ Այդ ծրագրի իրականացման համար ԱՄՆ-ի կառավարությունը խոստացավ Լատինական Ամերիկայի երկրներին, ի հաշիվ սեփական մասնավոր և պետական միջոցների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի երկրների և Ճապոնիայի միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերի ու փոխառությունների հաշվին 10 տարվա ընթացքում տրամադրել 20 միլիարդ դոլարի երկարաժամկետ փոխառություններ։ «Հանուն առաջադիմության դաշինքի» ծրագրին համաձայն հատկացումներ ստանալու համար յուրաքանչյուր երկիր պետք է խորհրդի փորձագետներին ներկայացներ երկարաժամկետ տնտեսական զարգացման պլանները և սոցիալական ռեֆորմների անցկացման ծրագրերը։

«Հանուն առաջադիմության դաշինքի» ծրագրում դրսևորվեցին Լատինական Ամերիկայի նկատմամբ ԱՄՆ-ի նեոգաղութատիրական քաղաքականության գծերը, մայրցամաքի ագրարային, հակաիմպերիալիստական, դեմոկրատական հեղափոխությունը կանխելու ձգտումը։

«Պունտա դել Էստեի խարտիայի» ընդունումից հետո սկսվեց սոցիալական մի քանի ռեֆորմների մշակումն ու իրականացումը։ Այսպես, 1964 թ. 16 երկրներում օրենքներ ընդունվեցին ագրարային ռեֆորմի վերաբերյալ, սակայն դրանց մեծամասնությունն առաջին պլան մղեց պետական անմշակ հողերը գաղութաբնակեցնելու և լատիֆունդիստների չմշակվող հողերի որոշակի մասը ետ գնելու նախագծեր։ Բոլոր երկրներում, բացառությամբ Վենեսուելայի, գյուղացիներին հողերի բաժանումը պետք է կատարվեր եղդնման միջոցով։ Ռեֆորմիստական շրջանները ձգտում էին ստեղծել ունևոր գյուղացիների զգալի խավ, որը գոյություն ունեցող ռեժիմների հուսալի հենարան էր դիտվում։

Նույնիսկ սահմանափակ ագրարային վերափոխումների և մյուս, մասնավորապես հարկերի, ռեֆորմների անցկացումը կատաղի դիմադրության հանդիպեց տեղական հողային օլիգարխիայի և պրոիմպերիալիստական խոշոր բուրժուազիայի կողմից։ Բուն Միացյալ Նահանգներում խոշոր բիզնեսի ներկայացուցիչները քննադատեցին «նոր բնագծերի» կողմնակիցների քաղաքականությունը՝ ներդրման քաղաքականության ուղղությունը փոխելու՝ ի վնաս ուղղակի մասնավոր կապիտալ ներդրումների, պետական փոխառությունների և վարկերի ընդարձակման կողմն այն ուղղելու ձգտման համար։ «Դաշինքի» քաղաքականությունը խստորեն քննադատում էին նաև ձախ հակաիմպերիալիստական ուժերը, որոնք հանդես էին գալիս սոցիալական խոր վերափոխումներ կատարելու, լատինամերիկյան երկրների հետամնաց սոցիալ-տնտեսական կառուցվածքը արմատականորեն փոխելու օգտին։

ԱՄՆ-ի կառավարող շրջանները դիմում էին օլիգարխիային վախեցնելու և հորդորելու միջոցներին, փորձելով նրան համոզել վերափոխումների անհրաժեշտությունը՝ հեղափոխությունը կանխելու համար։ «Նոր բնագծերի» գաղափարախոսները հեղափոխական ուժերի նկատմամբ շտապ կերպով մշակեցին «ներքին ճակատի»՝ հակահեղափոխական պատերազմի կոնցեպցիան, պատերազմ, որը մայրցամաքում ազատագրական հակաիմպերիալիստական շարժման դեմ պետք է մղեին բուն լատինամերիկյան երկրների զինված ուժերը։ 1961 թվականից ԱՄՆ-ում սկսվեց մեծ մասշտաբներով «պարտիզանական պատերազմի» մասնագետների պատրաստումը։ 1963 թ. հետո հատուկ «կանաչ բերետներ» դիվերսիոն զորամասերը մասնակցեցին Բոլիվիայում, Կոլումբիայում, Գվատեմալայում պարտիզանական շարժման ճնշմանը, 1965 թ. Սանտո Դոմինգոյի դեմ ուղղված ինտերվենցիային։

«Նոր բնագծերի» քաղաքական լոզունգն էր՝ որպես քաղաքական կայունության պահպանման կարևորագույն գործոն լատինամերիկյան երկրներում «ներկայացուցչական դեմոկրատիայի» ռեժիմի ընդարձակման և ամրապնդման կուրսի հռչակումը։ Սակայն ԱՄՆ-ի կառավարությունը գործնականում պաշտպանում էր այն կառավարություններին, որոնք իշխանության գլուխ էին անցել հեղաշրջումների և «ներկայացուցչական դեմոկրատիայի» ռեժիմների տապալման հետևանքով։ «Դաշինքի» ընդունումից հետո արդեն առաջին տարիներին մի շարք երկրներում զինվորական հեղաշրջումներ եղան, որոնք վերջացան սահմանադրական կառավարությունների տապալումով Արգենտինայում (1962), Գվատեմալայում, Հոնդուրասում, Էկվադորում (1963), Բրազիլիայում և Բոլիվիայում (1964)։ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանները «վերանայեցին» «նոր բնագծերի» կոնցեպցիան։ 1964 թ. առաջ քաշվեց «Մաննի դոկտրինան», որը հռչակում էր այն զինվորական ռեժիմներին պաշտպանելու անհրաժեշտությունը, որոնք «կարող են ապահովել քաղաքական կայունությունը»։

1957—1964 թթ. Լատինական Ամերիկայում դասակարգային պայքարի սրվելը և Կուբայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը լատինամերիկյան բուրժուազիային և ամերիկյան իմպերիալիզմին ստիպեցին այդ երկրներում բռնելու բուրժուական ռեֆորմիզմի ուղին։ Սակայն մայրցամաքում հեղափոխական վերելքի իջնելու չափով, հատկապես 1964 թ. ապրիլին Բրազիլիայում կատարված զինվորական հեղաշրջումից հետո, նկատվեց «կոշտ կուրսին» անցնելը։

ԱՄՆ-ի զինված ագրեսիան Դոմինիկյան Հանրապետությունում

Դեպի «կոշտ կուրսը» կատարված շրջադարձը նշանակող կարևոր իրադարձություն էր 1965 թ. Դոմինիկյան Հանրապետության դեմ ամերիկյան զինված ագրեսիան։ 1963 թ. սեպտեմբերին, զինվորական հեղաշրջման հետևանքով, որը կազմակերպել էր ԿՀՎ-ն, տեղական հողային օլիգարխիայի և սպայության ռեակցիոն շրջանների պաշտպանությամբ, Դոմինիկյան Հանրապետությունում տապալվեց նույն տարում պրեզիդենտ ընտրված Խ. Բոշի կառավարությունը։ Խ. Բոշը, «ներկայացուցչական դեմոկրատիայի» ռեժիմի կոնցեպցիային համապատասխան, հանդես էր գալիս սոցիալ-տնտեսական քաղաքական ռեֆորմներ անցկացնելու օգտին։ ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանները նրան մեղադրում էին նրանում, որ չէր հակադրում «կոմունիստական վտանգին»։

Հեղաշրջման հետևանքով իշխանության գլուխ անցավ զինվորական խունտան։ Խ. Բոշը վտարվեց երկրից։ Հետապնդվող ձախ ուժերը, արհմիությունները, ուսանողական կազմակերպությունները պայքար ծավալեցին 1963 թ. բուրժուա-դեմոկրատական սահմանադրությունը վերականգնելու և դեմոկրատական խոր վերափոխումներ կատարելու համար։ Խ. Բոշի իշխանության գլուխ վերադառնալու, 1963 թ. սահմանադրության վերականգնման և դեմոկրատական ռեժիմի հաստատման լոզունգով 1965 թ. ապրիլի 24-ին բանակային մի խումբ ձախ սպաների պաշտպանությամբ տեղի ունեցավ ժողովրդական ապստամբություն։ Այդ ժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը կանգնեց զինված միջամտության ուղին. ապրիլի 28-ին Դոմինիկյան Հանրապետության տարածքում սկսվեց ամերիկյան ռազմածովային հետևակի ափհանումը։ Մայիսի կեսերին ափ հանված զորքերի քանակն անցնում էր 35 հազարից։

Պրեզիդենտ Ջոնսոնը, հանդես գալով ամերիկյան զինված միջամտության նպատակների կապակցությամբ, բացահայտորեն հայտարարեց, որ ԱՄՆ-ը «թույլ չի տա Արևմտյան կիսագնդում հաստատեր. ևս մեկ կոմու-

նիստական կառավարություն»։ Դոմինիկյան Հանրապետության դեմ ինտերվենցիան նշանակում էր, որ լատինաամերիկյան երկրների գործերին զինված միջամտության սկզբունքը նորից հաստատվում էր պետական քաղաքականության աստիճանի։ 1965 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի կոնգրեսը «միջազգային կոմունիզմի» սպառնալիքի դեմ պայքարի պատրվակով լատինաամերիկյան երկրների գործերին զինված միջամտությանը հավանություն տվող բանաձև ընդունեց։ Այսպես լույս աշխարհ եկավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական նոր դոկտրինան, որն ստացավ «Ջոնսոնի դոկտրինա» անվանումը։

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1965—1973)

1964—1965 թթ. հեղափոխական ուժերի հարձակումը մայրցամաքում դանդաղեց։ Այդ դանդաղելը պայմանավորված էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պատճառներով։

50-ական թվականների վերջի—60-ական թվականների սկզբի հեղափոխական վերելքը բնորոշվում էր հեղափոխական ավանգարդի՝ առաջավոր բանվորների, գյուղացիների, ուսանողության ակտիվության աճով, սակայն պրոլետարիատի և գյուղացիության հիմնական զանգվածի հեղափոխական պայքարին գիտակցաբար ներգրավվելը դանդաղ էր կատարվում։ Դրանում դրսևորվեց մայրցամաքում հեղափոխական պրոցեսի գլխավոր թուլությունը։

Բուրժուական-ռեֆորմիստական շրջանների գործունեության ակտիվացումը և «Հանուն առաջադիմության դաշինքի» ծրագրի անցկացումը ռեֆորմիստական պատրանքներ սերմանեցին աշխատավոր զանգվածների մի մասի շրջանում, նրանց դրության բարելավման հույսեր ծնեցին և թույլ տվեցին ժամանակավորապես թուլացնել քաղաքների ու գյուղերի աշխատավորների ելույթների ալիքը։ Դասակարգային պայքարի թուլացման գործում հայտնի դեր խաղաց լատինաամերիկյան երկրների 1964—1965 թթ. տնտեսական կոնյունկտուրայի բարելավումը։

Լատինական Ամերիկայի գործերին ԱՄՆ-ի իմպերիալիզմի բացահայտ միջամտությունը, որն իր արտահայտությունը գտավ «Ջոնսոնի դոկտրինայում», ամրապնդեց ռեակցիոն շրջանների դիրքերը։

Սակայն, չնայած մայրցամաքի մի շարք երկրներում հեղափոխական պրոցեսի դանդաղելուն, հասարակական զարգացման պայքարի հետ կապված դասակարգային և քաղաքական ուժերի բարդ վերախմբավորում էր կատարվում։

Լատինական Ամերիկայի երկրների տրնտեսական զարգացումը 60-ական թվականներին

60-ական թվականների առաջին կեսին անցկացված սոցիալ-տնտեսական մասնակի վերափոխումների, պետական կարգավորման և լատինաամերիկյան ինտեգրացիայի բազայի վրա մայրցամաքի որոշ երկրների հաջողվեց արագացնել արդյունաբերական զարգացումը։ Դա ամենից առաջ վերաբերում է կենտրոնական ամերիկյան երկրներին, որոնք 60-ական թվականների սկզբներին զարգացման շատ ցածր սկզբնական բազա ունեին։ Մայրցամաքի խոշոր երկրներից միայն Մեքսիկան, որում բուրժուա-դեմոկրատական վերափոխումները կատարվել էին դեռևս 30-ական թվականներին, կարողացավ ապահովել զարգացման բավականին բարձր տեմպեր։ 1967 թ. մոտերքին լատինաամերիկյան միայն 9 երկիր կարողացավ հասնել բնակչության մեկ շնչին ընկնող ազգային համախառն արտադրանքի 2,5 %-ի աճի մակարդակին։

Այն սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնք սկսվել էին «Դաշինքի» գծով, շատ դեպքերում դադարեցվում կամ իրականացվում էին այնքան դանդաղ ու անհետևողական, որ նկատելի ազդեցություն չէին թողնում նյութական արտադրության զարգացման վրա։ Էական արդյունքներ չբերեցին նաև մյուս սոցիալ-տնտեսական միջոցառումները։ Լատինաամերիկյան բուրժուական ռեֆորմիզմը կանգնեց փակուղու առջև։ Նրա անհաջողության գլխավոր պատճառը մայրցամաքի երկրների ներքին խոր հակասություններն էին։

Այդ երկրների խոշոր բուրժուազիան սերտորեն կապված է օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի հետ։ Արդյունաբերական միջին բուրժուազիան հիմնական մասով հակաիմպերիալիստորեն է տրամադրված, բայց նա շատ թույլ էր, քաղաքականապես անկազմակերպ։ Նրա դրությունն անկայուն էր։ Ռեֆորմիստական կուսակցությունները խոր ճգնաժամ ապրեցին։ Տեղական բուրժուազիան, որ հանդես էր գալիս ռեֆորմների օգտին, չէր բավարարվում դրսից տրված դեղատոմսերով, նեղվում էր ԱՄՆ-ի խնամակալությունից։ Միաժամանակ բուրժուազիայի ռեֆորմիստական շրջանները չէին հրաժարվում օտարերկրյա կապիտալի հետ համագործակցելու քաղաքականությունից, շրջանցան արդյունաբերության հիմնական ճյուղերն ազգայնացնելու ուղիով։

ԱՄՆ-ի պետական կապիտալ ներդրումների ակտիվացման կարճատև ժամանակաշրջանից (1961—1964) հետո Լատինական Ամերիկայում նորից աճեցին ուղղակի մասնավոր կապիտալ ներդրումները, որոնք 1960 թ. 8,3 միլիարդ դոլարի դիմաց 1970 թ. կազմեցին 12,8 միլիարդ դոլար։ ԴՏՀ-ի պայմաններում փոխվեց ԱՄՆ-ի մասնավոր ներդրումների կառուցվածքը։ Այսպես, 1960-ից մինչև 1970 թ. ամերիկյան ներդրումները լեռնահանքային և նավթարդյունաբերության մեջ պահպանվեցին նախկին մակարդակով։ Միաժամանակ կտրուկ կերպով ավելացան կապիտալ ներդրումները վերամշակող արդյունաբերության ամենադինամիկ և հեռանկարային ճյուղերում, որտեղ այդ նույն ժամանակամիջոցում մասնավոր ներդրումներն աճեցին և 1,5 միլիարդից հասան մինչև 4,3 միլիարդի։

Այն տարածում ստացավ խառը ձեռնարկությունների ստեղծումը, որոնք հաճախ ամերիկյան ֆիրմաների քողարկված մասնաճյուղերն էին, բայց գործում էին ազգային ընկերության ցուցանակի տակ։ Այս ձևով ԱՄՆ-ի ֆիրմաներն ազատվում էին հարկերից, նրանց համար ավելի բարենպաստ պայմաններ էին ստեղծվում սարքավորում ներմուծելու համար, երաշխավորվում էր շահույթների փոխանցումը։ Ձեռնարկությունների արտադրանքը իրացվում էր գլխավորապես ներքին շուկայում, իսկ ստացվող եկամուտը մեծ մասով փոխադրվում էր արտասահման, որը կործանիչ ազդեցություն էր թողնում լատինաամերիկյան երկրների վճարման հաշվեկշռի դրության վրա, դանդաղեցնում կապիտալի կուտակման պրոցեսը։ 60-ական թվականների առաջին կեսին Լատինական Ամերիկա ԱՄՆ-ի պետական կապիտալի արտահանումն ընդարձակելու հետևանքը եղավ մայրցամաքի երկրների արտաքին պարտքի ղգալի աճը. եթե 1945 թ. այն 2,9 միլիարդ դոլար էր կազմում, ապա 1960 թ. աճեց և հասավ մինչև 6,6 միլիարդի, իսկ 1968 թ. մինչև 16,7 միլիարդ դոլարի։

Ինդուստրացման համար շարունակում էր լուրջ խոչընդոտ մնալ ներքին շուկայի նեղությունը, որի հետևանքով մեծ թվով նոր ստեղծված ձեռնարկություններ տառապում էին խրոնիկական թերբեռնվածությամբ։ Լատինական Ամերիկայի 17 մետալուրգիական կոմբինատներից միայն 4-ն էին օգտագործում իրենց հզորության 80 %-ը, 9-ը՝ դրա 50 %-ից էլ պակաս մասը։

70-ական թվականների ընթացքում, չնայած սահմանափակ ագրարային վերափոխումների անցկացմանը, մայրցամաքի երկրներում չհաջողվեց հաղթահարել երկարատև, մոնոկուլտուրայով, արտահանման կողմնորոշմամբ պայմանավորված ագրարային ճգնաժամը։ Պարենային պրոբլեմը հիմնականում լուծված էր միայն Մեքսիկայում և Վենեսուելայում։

Զարգացած կապիտալիստական երկրներից Լատինական Ամերիկայի պետությունների ետ մնալն ուժեղանում է. պակասել է նրանց բաժինը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության մեջ, կրճատվել նրանց բաժինը համաշխարհային առևտրում (1955 թ. 8,6 %-ից 1970 թ. մինչև 5,3 %)։ Սոցիալ-տնտեսական կառուցվածքի ճգնաժամը ոչ միայն չի հաղթահարվել, այլև, լատինաամերիկյան հասարակության մեջ կատարված դասակարգային և քաղաքական նշանակալի փոփոխությունների ու գիտատեխնիկական հեղափոխության զարգացման հետ կապված, սրվել է։

Սոցիալական կառուցվածքի փոփոխությունները մայրցամաքում 60-ական թվականներին

Կապիտալիզմի զարգացումը վերջին մի քանի տասնամյակում Լատինական Ամերիկայի երկրներում զգալի տեղաշարժեր առաջ բերեց։ Տնտեսապես ավելի զարգացած մի շարք երկրներում ձևավորվեց տեղական մոնոպոլիստական բուրժուազիան, որն ամրապնդում էր իր դիրքերը, հաճախ հենվելով պետական հատվածի և կառավարական քաղաքականության վրա (հատկապես Արգենտինայում, Բրազիլիայում, Վենեսուելայում, Մեքսիկայում, Ուրուգվայում, Չիլիում, Կոլումբիայում)։ Բրազիլիայում կապիտալի 46 %-ը բաժին է ընկնում 66 խոշոր ֆիրմաների, որոնց կեսը օտարերկրյա կապիտալի սեփականություն է։ Չիլիում 40 խոշոր բաժնետերերի խումբը 1968 թ. իր ձեռքում էր պահում խոշոր բանկերի կապիտալի 50 %-ը։ Ուրուգվայում 204 ձեռնարկություններ տալիս էին արդյունաբերական արտադրանքի 45 %-ը։ Այդ խմբերը ակտիվորեն համագործակցում են օտարերկրյա կապիտալի հետ, սակայն ինչպես իրենց երկրների ներսում, այնպես էլ Լատինական Ամերիկայի հիմնական ինտեգրացիոն խմբերի շուկայում իրենց դիրքերն ամրապնդելու շահագրգռվածությունը կոնֆլիկտներ է առաջ բերում ամերիկյան մոնոպոլիաների հետ։

Կապիտալիստների հիմնական զանգվածը քաղաքի ու գյուղի մանր ու միջին բուրժուազիան է։ Նրա ձեռքում է գտնվում բոլոր ձեռնարկությունների մինչև 80—90 %-ը։ Մայրցամաքում դասակարգային հակասությունների սրումը և Կուբայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հասցրեցին այդ բուրժուազիայի զգալի մասի դեպի աջ տեղաշարժին։ Մյուս կողմից, իմպերիալիզմի և խոշոր բուրժուազիայի ճնշումը մանր ու միջին բուրժուազիային մղում է ազգային ինքնուրույնության պաշտպանությանը մասնակցելուն, պաշտպանելու օտարերկրյա մոնոպոլիաների սահմանափակման և առանձին ճյուղերում դրանց ազգայնացման միջոցառումները։

Էական փոփոխություններ են կատարվել բանվոր դասակարգի կառուցվածքում։ Բարդացել է պրոլետարիատի կազմը, աճել նրա որակավորման մակարդակը։ Գնալով մեծ թվով բանվորներ են սկսել համակենտրոնանալ խոշոր ձեռնարկություններում։ Այդպիսի ձեռնարկություններում զբաղված է Բրազիլիայում արդյունաբերական բանվորների 62,9 %-ը, Արգենտինայում՝ 58, Մեքսիկայում՝ 57,3, Կոլումբիայում՝ 82,8, Չիլիում՝ 65 %-ը։ Լատինական Ամերիկայի պրոլետարիատի մոտավորապես կեսը գյուղատնտեսական բանվորներ են։ Մոտ 50 միլիոն լատինաամերիկյան պրոլետարներ կազմում են կապիտալիստական աշխարհի ամբողջ բանվոր դասակարգի $^1/_{10}$ մասը։

Ագրարային ռեֆորմների անցկացումը հասցրեց գյուղացիության ունևոր

վերնախավի ամրապնդմանը, սեփականատեր գյուղացիների թվի աճին այնպիսի երկրներում, ինչպիսիք են Բոլիվիան, Վենեսուելան, Մեքսիկան, Կոլումբիան։ Սակայն պահպանվեցին հողազուրկ գյուղացիության զանգվածը և խոշոր կալվածատիրական հողատիրությունը։ Գյուղատնտեսության մեջ ամրապնդվեցին կապիտալիստական արտադրական հարաբերությունները ինչպես գյուղացիության շերտավորման և վարձու աշխատանքն օգտագործող կապիտալիստական ֆերմերների խավի առանձնացման հաշվին, այնպես էլ կալվածատերերի մի մասի «բուրժուականացման» հաշվին, որոնք անցան տնտեսության վարման ավելի ինտենսիվ կապիտալիստական մեթոդների։ Այս բոլորն էական տեղաշարժեր առաջ բերեց գյուղի սոցիալական կառուցվածքում, բարձրացնելով գյուղական պրոլետարիատի դերը։

Նոր պայմաններում լատիֆունդիզմը գնալով էլ ավելի սերտորեն է միահյուսվում խոշոր բուրժուազիայի և օտարերկրյա կապիտալի շահերի հետ։ Գյուղացիության պայքարն ուղղվում է ոչ միայն նախակապիտալիստական մնացուկների, այլև բուն կապիտալիզմի դեմ։

Լատինական Ամերիկայի երկրների 60-ական և 70-ական թվականների սկզբի քաղաքական ու դասակարգային պայքարի նոր երևույթները

60-ական թվականներին բարձրացավ բանվոր դասակարգի կազմակերպվածությունը, նրա դասակարգային ինքնագիտակցությունը։ Բանվոր դասակարգի ավանգարդ դարձան կոմունիստական կուսակցությունները, որոնց շարքերում հաշվվում էին 350 հազարից ավելի անդամներ։ Սակայն բանվորների որոշ մասը դեռևս գտնվում է մանրբուրժուական և ռեֆորմիստական բուրժուաազգայնական գաղափարախոսության ազդեցության տակ։

Զինվորական-դիկտատորական ռեժիմները, որ հաստատվել էին Արգենտինայում, Բրազիլիայում և մի շարք այլ երկրներում, բարդացնում էին բանվոր դասակարգի պայքարը։ Ձախջախվել էին արհմիությունները, արգելվել գործադուլները։ Մյուս երկրներում գործադուլավորների թվի պակասելու գործում հայտնի դեր խաղաց կառավարող դասակարգերի ռեֆորմիստական քաղաքականությունը, որի հետևանքով ձևափոխվեցին պայքարի ձևերը, մասնավորապես ավելի լայնորեն էին կիրառվում այնպիսի մեթոդներ, ինչպես կոլեկտիվ պայմանագրեր կնքելու համար պայքարը։

1968 թվականից մայրցամաքում գործադուլային շարժման վերելք էր նկատվում։ 1968—1969 թթ. գործադուլավորների թիվն աճեց և հասավ մինչև 19 միլիոնի, իսկ 1970—1972 թթ. մինչև 20—21 միլիոն մարդու։ Վիթխարի թափի հասան բանվոր դասակարգի ելույթները Արգենտինայում, որտեղ 1969—1970 թթ. գործադուլավորների թիվը կազմեց 11—13 միլիոն։

60-ական թվականների երկրորդ կեսին ամրապնդվեցին գյուղական աշխատավորների առաջադեմ միավորումներն Արգենտինայում, Չիլիում, Ուրուգվայում, Մեքսիկայում։ Սակայն այդ կատեգորիայի աշխատավորների կազմակերպվածության մակարդակը դեռևս ետ է մնում քաղաքների դասակարգային ելույթների մակարդակից։

Զգալիորեն բարձրացավ միջին խավերի, ինչպես նաև ուսանողության քաղաքական ակտիվությունը։ Լատինաամերիկյան ուսանողությունն ըստ իր կազմի բազմադաս սոցիալական խումբ է, նրա հիմնական մասը քաղաքային միջին խավերից դուրս եկածներն են, որոնք շահագործվելով տեղական օլիգարխիայի և օտարերկրյա մոնոպոլիաների կողմից, ըստ իրենց շահերի և դրության մերձենում են բանվոր դասակարգին։ Գնալով միջին խավերի է՛լ ավելի մեծաթիվ ներկայացուցիչներ՝ առաջադեմ մտավորականության և ուսանողության թվից, անցնում են մարքսիզմ-լենինիզմի դիրքերը։

Ազատագրական հակաիմպերիալիստական շարժման ազդեցության տակ առաջացան բանակի առաջադեմ հոսանքներ։ Դրան նպաստեցին սպայական կազմի հայտնի դեմոկրատացումը, նրա շարքերի՝ ի հաշիվ բնակչության աշխատավոր խավերից դուրս եկածների համալրումը։ Միաժամանակ մի շարք երկրների զինված ուժերում գերիշխող դիրքեր է գրավում ռեակցիոն, պրոիմպերիալիստական զինվորական բյուրոկրատիան, որն ազդում է քաղաքական կյանքում բանակի դերի վրա։

Նոր երևույթներ են նկատվում նաև կաթոլիկական եկեղեցու շրջաններում։ Հոգևորականների շրջանում առաջանում են ձախ հոսանքներ, որոնց ներկայացուցիչները հանդես են գալիս ամերիկյան իմպերիալիզմի ճնշումից ազատագրվելու, արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումների համար մղվող պայքարում բոլոր առաջադեմ ուժերի համագործակցության օգտին։ Լատինական Ամերիկայի համար, որտեղ ապրում է աշխարհի բոլոր կաթոլիկների 34 %-ը, այդ պրոցեսներն ունեն կարևոր նշանակություն։

Դասակարգային և սոցիալական կոնֆլիկտների սրման պայմաններում տարբեր ուժեր կառուցվածքային ճգնաժամից դուրս գալու ելք են որոնում, առաջարկում են սուր պրոբլեմները լուծելու իրենց պլանները։ Զգալով կանխել դասակարգային հակասությունների հետագա խորացումը և թուլացնել ժողովրդի դժգոհությունը, բուրժուառեֆորմիստական շրջանները բռնում են ԱՄՆ-ի քաղաքականությունը քննադատելու ուղին, ստեղծում են տարբեր ռեգիոնալ կազմակերպություններ և ենթառեգիոնալ միավորումներ։ Այդ երկրների բուրժուազիայի կառավարող շրջանների կողմից ավելի հաճախակի են փորձեր կատարվում միավորվելով, «հավասար հիմունքներով» «ԱՄՆ-ի հետ երկխոսություն» վարելու։

Դրա օրինակ կարող է ծառայել «Անդյան խմբի» (1969) ստեղծվելը, որի մեջ մտան Կոլումբիան, Էկվադորը, Բոլիվիան, Չիլին և Վենեսուելան։ Այդ երկրները միասնական քաղաքականություն մշակեցին օտարերկրյա մոնոպոլիաների նկատմամբ և սահմանափակումներ մտցրին նրանց շահույթներն իրենց երկրներից դուրս բերելու նկատմամբ։ Այդ ուղղությամբ հետագա զարգացում եղավ 1975 թ. օգոստոսին, առանց ԱՄՆ-ի մասնակցության, լատինաամերիկյան տնտեսական կազմակերպության ստեղծումը։

Ներքին քաղաքականության ասպարեզում կառուցվածքային ճգնաժամի խորացումը 60-ականի վերջին—70-ականների սկզբին հասցրեց Լատինական Ամերիկայի երկրների քաղաքական սիստեմների ճգնաժամին, սոցիալական և դասակարգային ուժերի նոր տեղաբաշխմանը։ Այդ ճգնաժամերից դուրս գալու ելքը գտնելու փորձերում մայրցամաքի ավելի զարգացած երկրների տեղական խոշոր բուրժուազիայի մի մասն ավելի ու ավելի էր հակվում այն մտքին, որ այս կամ այն չափով հենվելով օտարերկրյա կապիտալի օժանդակության վրա, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի մեթոդներով կարելի է հասնել սոցիալ-տնտեսական կառուցվածքի վերափոխման։ Ընդ որում առանձնացվում է զարգացման երկու հիմնական տիպ. մի խումբ երկրներում (Կոլումբիա, Մեքսիկա) այդ քաղաքականությունը վարվում է, չնայած ձևականորեն, «ներկայացուցչական դեմոկրատիայի» ինստիտուտները պահպանելու, օտարերկրյա կապիտալի ճնշումը հայտնի չափով սահմանափակելու միջոցով, մյուս երկրներում (Բրազիլիա, Չիլի) այդ ինստիտուտները վերացվեցին և փոխարինվեցին դիկտատորական ռեժիմներով, որոնք դիմում են օտարերկրյա մոնոպոլիաների օգնությանը։

Այն պայմաններում, երբ բուրժուազիայի կառավարող շրջանները, օտարերկրյա իմպերիալիզմի հետ դաշնակցած, բռնեցին պետական-մոնոպոլիստական մոդեռնացում անցկացնելու ուղին, հեղափոխական հակաիմպերիալիստական ուժերն առաջ քաշեցին ստեղծված ճգնաժամից դուրս գալու հակաիմպերիալիստական կառուցվածքային վերափոխումների ուղիների իրենց երկընտրանքը, ուղիներ, որոնք մի շարք երկրներում ձեռք բերեցին հակակապիտալիստական ուղղվածություն (Պերու, Էկվադոր, Պանամա)։ Չիլիի ժողովրդական միասնության կառավարության գործունեությունը (1970—1973) իրադարձությունների նման ընթացքի ամենափայլուն ցուցադրման օրինակներից մեկն էր։ Մյուս օրինակը եղավ Պերուի կառավարության գործունեությունը, որը 1968 թ. հոկտեմբերից գլխավորում էին հակաիմպերիալիստական հոսանքի մեջ մտնող զինված ուժերի ներկայացուցիչները։ Գեներալ Վելասկո Ալվարադոյի կառավարությունը անցկացրեց սոցիալ-տնտեսական խոր փոփոխություններ. նավթարդյունաբերության մեջ ազդայնացվեց ամերիկյան մոնոպոլիաների սեփականությունը, «Արդյունաբերության վերաբերյալ հիմնական օրենքը» պետական սեփականությանն էր հանձնում գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության հիմնական ձեռնարկությունները, լեռնահանքային արդյունաբերությունը։ Գյուղատնտեսության բնագավառում անցկացվեց ագրարային արմատական ռեֆորմ, որը արմատախիլ էր անում լատիֆունդիզմը, և գյուղատնտեսության մեջ լայն զարգացում ստացավ կոոպերատիվ հատվածը։ Վերցնելով բանկերի ազդայնացման կուրս Ալվարադոյի կառավարությունը վերահսկողություն հաստատեց ֆինանսական ինստիտուտների, երկրից դուրս տարվող շահույթների և արտասահմանյան վայլյուտայի փոխանակման, ինչպես նաև արտաքին առևտրի վրա։ Այդ կուրսի պաշտպանությամբ հանդես եկավ լայն կոալիցիան՝ պերուական պրոլետարիատը, գյուղացիությունը, կիսապրոլետարների և քաղաքային մանր բուրժուազիայի լայն խավերը։ Պերուական կոմունիստական կուսակցությունը պաշտպանում էր Պերուի կառավարությանը և սոցիալ-տնտեսական վերափոխումների նրա քաղաքականությունը։

Հասարակական զարգացման երկընտրանքի շուրջը սկսված պայքարը Լատինական Ամերիկայի երկրներում առաջ բերեց դասակարգային և քաղաքական ուժերի վերախմբավորում։ Սոցիալ-տնտեսական ռեֆորմների և հակաիմպերիալիզմի ծրագրերի հիման վրա ձևավորվեցին հակաիմպերիալիստական կոալիցիաներ (Արգենտինա, Ուրուգվայ, Վենեսուելա)։

Առաջադիմական այդ միտումները հանդիպեցին իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի կատաղի դիմադրությանը։ 70-ական թվականների սկզբին մի շարք երկրների ռեակցիոն ուժերն անցան հարձակման։ Նրանք իրենց ստրատեգիայում հենվում էին ոչ միայն բռնության, այլև միջին խավերին ու մանր բուրժուազիային մեկուսացնելու և իրենց կողմը գրավելու վրա, խավեր, որոնք, ինչպես հայտնի է, տատանվում են հատկապես հեղափոխական պրոցեսի խորացման պայմաններում։ 1971 թ. օգտագործելով մանր բուրժուազիայի տատանումները և ծայրահեղ ձախ տարրերի ավանտյուրիզմը, ռեակցիայի ուժերին հաջողվեց տապալել ձախ նացիոնալիստական կառավարությունը Բոլիվիայում և 1973 թ. ծանր հարված հասցնել Ուրուգվայի դեմոկրատական ուժերին։ 1973 թ. սեպտեմբերին Չիլիում ներքին ռեակցիան, օտարերկրյա իմպերիալիզմի օգնությամբ տապալեց ժողովրդական միասնության կառավարությունը և զանգվածային տեռոր սանձազերծեց երկրի առաջադեմ և դեմոկրատական ուժերի դեմ։

Լատինաամերիկյան երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունները բազմակողմանիորեն ուսումնասիրում են մայրցամաքի բարդ ու հակասական պրոցեսները։ Նրանք հիմնավորում են Լատինական Ամերիկայում սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների իրականացման անհրաժեշտությունն ու հնարավորությունը, որոնք սոցիալիզմին անցնե-

լու ուղի են բացում։ Լատինական Ամերիկայի կոմունիստական և բանվորական կուսակցությունների փաստաթղթերում նշվում է արդի պայմաններում տարբեր երկրների պայմաններին համապատասխանող և բոլոր դեմոկրատական, հակաօլիգարխիական ու հակաիմպերիալիստական ուժերի ամուր միասնություն ստեղծելու համար հետևողական պայքար մղելու ճկուն հեղափոխական տակտիկայի մշակման հատուկ կարևորությունը։

ԳԼՈՒԽ 25

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Պերոնիզմը (1945—1955) և նրա դասակարգային բնույթը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի՝ Արգենտինայի համար նպաստավոր տնտեսական կոնյունկտուրան օգնեց վայրաստային ռեզերվների կուտակմանն ու արդյունաբերության զարգացմանը։ Վերամշակող արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թվաքանակը 1935-ից մինչև 1948 թ. ավելացավ ավելի քան երկու անգամ, գերազանցելով 1 միլիոն մարդուց։ Ուժեղացան տեղական բուրժուազիայի ազդեցությունն ու տնտեսական հզորությունը։ Միաժամանակ ուժեղացավ հյուսիսամերիկյան կապիտալի էքսպանսիան, Արգենտինայում օտարերկրյա կապիտալ ներդրումների գծով Անգլիային դուրս մղելով առաջին տեղից։ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեղաշարժերը ուղեկցվում էին նաև քաղաքական փոփոխություններով։ 1943 թ. հունիսի 4-ին կատարված զինվորական հեղաշրջումից հետո կառավարությունում ավանդական կալվածատիրական օլիգարխիայից (որն զգալի չափով կապված էր անգլիական կապիտալի հետ) գերակշռությունն անցավ արգենտինական արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի ազգայնական շրջաններին, որոնք ձգտում էին ռեֆորմներով ու պետական կարգավորման մեթոդներով արագացնել կապիտալիզմի զարգացումը։ Բուրժուական ազգայնականները փորձում էին իրենց վերահսկողությանը ենթարկել բանվորական շարժումը, որպեսզի խանգարեն պրոլետարիատի դասակարգային պայքարին և ամրապնդեն կապիտալիզմը։

Այդ քաղաքականությունը գլխավորում էր 1943 թ. հեղաշրջման մասնակից է. Ֆարելի կառավարության (1944—1946) աշխատանքի մինիստր և ռազմական մինիստր Խուան Դոմինգո Պերոնը (1895—1974), որի անունով էլ նրա կողմնակիցների շարժումն ստացավ «պերոնիզմ» անվանումը։ 1946 թ. փետրվարին գեներալ Պերոնն ընտրվեց Արգենտինայի պրեզիդենտ և այդ պաստում էր գտնվում 1946 թ. հունիսից մինչև 1955 թ. սեպտեմբերը, այսինքն՝ 9 տարուց ավելի, փաստորեն հաստատելով դիկտատուրա։

Պերոնը նպատակ էր դրել բուրժուական նացիոնալ-ռեֆորմիզմի դրոշի տակ միավորել սոցիալական տարբեր խավերը՝ բանվորներից, գյուղացիներից և մանր բուրժուազիայից սկսած մինչև միջին ու խոշոր բուրժուազիան և լիբերալ կալվածատերերի մի մասը։ Որպես իր շարժման դանդվածային բազա նա փորձում էր օգտագործել աշխատավորներին։ Դիմելով ձեռնարկատերերին, Պերոնը հետևյալ ձևով էր պարզաբանում իր մտադրությունները. «Ես ցանկանում եմ բանվորներին կազմակերպել պետական մասշտաբներով, այն հաշվով, որպեսզի նրանց ղեկավարի պետությունը, որպեսզի նա ուղղություն տա բանվորներին։ Այդպիսով բանվորների շարքերում կչեզոքացվեն գաղափարական և հեղափոխական հոսանքները, որոնք հետպատերազմյան ժամանակաշրջանում կարող էին սպառնալիք հանդիսանալ մեր հասարակությանը։ Հարկավոր է բանվորների վիճակը որոշ չափով բարելավել, և նրանք կդառնան այնպիսի ուժ, որին հեշտ կլինի կառավարել»։

Տարբեր ուժերը համախմբելուն և աշխատավորներին պերոնիզմի կողմը գրավելուն էր կոչված «խուստիսիալիզմի» (արդարության) կոնցեպցիան, որի բաղադրիչներն էին կաթոլիցիզմի սոցիալական դոկտրինան, նացիոնալ-ռեֆորմիզմը և ավանդական կաուդիլիզմի, այսինքն զանգվածների վրա առաջնորդի խնամակալության գաղափարները։ «Խուստիսիալիզմը» քարոզում էր արգենտինական ազգի միավորումը հանուն կախվածության և հետամնացության վերացման և «արդարացի», «վերդասակարգային» պետության հովանու ներքո հանրապետության տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքին բոլոր սոցիալական խավերի (այդ թվում աշխատավորների) «մասնակցության» ուղիով «սոցիալական արդարության» հասարակություն կառուցելու։ «Խուստիսիալիզմը» ներկայացվում էր իբրև «հատուկ», «երրորդ», «զուտ արգենտինական» ուղի, որը իբր տարբերվում էր ինչպես կապիտալիզմից, այնպես էլ կոմունիզմից։ Իսկ գործնականում խոսքը վերաբերում էր բուրժուական պետության սիստեմում դասակարգային համագործակցության հիման վրա աշխատավորների ինտեգրացմանը, որպեսզի առանց ստեղծված կառուցվածքը լրջորեն քանդելու, նացիոնալ-ռեֆորմիզմի ոգով ապահովվի կապիտալիզմի կայունացումը և մոդեռնացումը։

Պրոպագանդելով «խուստիսալիզմի» գաղափարները, Պերոնը և նրա կողմնակիցները քննադատում էին իմպերիալիզմը և օլիգարխիան, իրենց հայտարարելով ճնշվածների և ընչազուրկների պաշտպաններ, ապավինելով առաջին հերթին չհասունացած, այդ թվում ոչ վաղուց պրոլետարիատի շարքերն անցած բանվորների, մանրբուրժուական խավերի և ապադասակարգայանացած տարրերի տրամադրություններին։ Դրա հետևանքով Պերոնին հաջողվեց իր ետևից տանել աշխատավոր զանգվածներին և մանր բուրժուազիային։

Պերոնի կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը (1946—1955)

Արտահայտելով արգենտինական բուրժուազիայի ռեֆորմիստորեն տրամադրված խմբավորումների շահերը և իր վրա կրելով ներքևից, աշխատավորների և ժողովրդական զանգվածների կողմից եկող ճնշումը, Պերոնի կառավարությունը ձեռնարկեց պոզիտիվ մի շարք միջոցառումներ։ Բայց միաժամանակ նա ցանկանում էր խուսափել արմատական փոփոխություններից և կանխել աշխատավորների դասակարգային պայքարի զարգացումը։ Այդ գործոնները, ինչպես նաև բուն պերոնիզմի սոցիալական ոչ միատարրությունը պայմանավորեցին կառավարության ներքին և արտաքին քաղաքականության տատանումները և անհետևողականությունը։

Պերոնի կառավարությունը նպաստեց ազգային էկոնոմիկայի զարգացմանը։ Անգլիական կապիտալիստներից գնվեցին և ազգայնացվեցին երկաթուղիներն ու մի շարք ձեռնարկություններ, որոնք պատկանում էին «առանցքի» երկրների մոնոպոլիաներին։ Կառավարությունը մշակեց Արգենտինայի տնտեսության զարգացման հնգամյա պլան, կառուցեց մի շարք պետական ձեռնարկություններ, ավտոմոբիլային և խճուղային ճանապարհներ։ Երկրի էկոնոմիկայում պետական հատվածի տեսակարար կշիռն աճեց 15—18 %-ով։ Վերափոխումներ կատարվեցին սոցիալական բնագավառում. որոշ

չափով բարձրացվեց արդյունաբերական և գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը, միջոցներ ձեռնարկվեցին աշխատավորների կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու ուղղությամբ (բացվեցին հանգստյան տներ, մտցվեցին վճարովի արձակուրդներ, արգելվեց երեխաների աշխատանքը, ընդարձակվեց թոշակային ապահովության համակարգը)։ Միաժամանակ ստեղծվեց ճնշման ճյուղավորված ապարատ, ձերբակալվում և հետապնդման էին ենթարկվում բանվորական շարժման ակտիվիստները, ճնշվում էին գործադուլները։ Երկրի արհմիութենական հիմնական կենտրոնը՝ Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիան (ԱՀԿ) հանձնվեց պերոնիստների ձեռքը և փաստորեն դրվեց կառավարության վերահսկողության տակ։

1949 թ. մարտին Արգենտինայում նոր սահմանադրություն հռչակվեց, որը հայտնի չափով արտացոլում էր պերոնիզմի հակասությունները։ Այն պրեզիդենտին օժտում էր արտակարգ լայն լիազորություններով և նրան վերընտրվելու անսահմանափակ իրավունք էր տալիս։ Պրեզիդենտը կարող էր պաշարողական դրություն հայտարարել և վերացնել սահմանադրական երաշխիքները։

Դրա հետ միասին սահմանադրությունը հռչակում էր յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի իրավունքը, գործադրկությունից բանվորներին պաշտպանելը և այլն։ Սահմանադրությունն ամրապնդում էր ընտրություններին կանանց մասնակցելու 1947 թ. սեպտեմբերի 8-ի օրենքով տրված իրավունքը։

Առաջին անգամ հայտարարելով արհմիություններում ազատորեն կազմակերպվելու և «պրոֆեսիոնալ շահերը պաշտպանելուն ուղղված օրինական գործունեության» այլ տեսակներին մասնակցելու աշխատավորների իրավունքը, սահմանադրությունը թույլատրում էր միայն այնպիսի արհմիությունների ստեղծում, որոնք պետք է գտնվեին կառավարության վերահսկողության տակ։ Սահմանադրությունը հնարավորություն էր տալիս անօրինական հայտարարել պերոնական ռեժիմին անցանկալի կուսակցությունների գործունեությունը, չնայած որ հռչակում էին բուրժուա-դեմոկրատական ազատություններ։

Պերոնական կառավարությունն արտաքին քաղաքականության մեջ ևս ձեռնարկեց մի շարք ինքնուրույն քայլեր, հաճախ փորձելով օգտվել միջիմպերիալիստական հակասություններից։ Նա Արգենտինայի ներքին գործերին խառնվելու համար չվախեցավ երկրից հեռացնել ԱՄՆ-ի իմպերիալիզմի մի շարք դիվանագիտական և այլ ներկայացուցիչների, ձգտում էր իր ղեկավարությամբ ստեղծել «Հարավային բլոկ»՝ մայրցամաքի հարավային շրջանի պետությունների դաշինք, որպեսզի ընդարձակի Արգենտինայի ազդեցությունն այդ ռեգիոնում, և դիմակայել իմպերիալիստական տերությունների չափից ավելի հավակնություններին։ 1946 թ. հունիսի 6-ին Պերոնի կառավարությունը Սովետական Միության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց և հետագայում զարգացրեց առևտրական ու տնտեսական կապերը նրա հետ։

Սակայն «սառը պատերազմի» տարիներին պերոնական կառավարությունը հիմնականում կողմնորոշվեց դեպի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, ԱՄՆ-ի հետ կնքեց ռազմական համագործակցության Ռիո դե Ժանեյրոյի պակտը։

Բանվորական և դեմոկրատական շարժումը Պերոնի կառավարման ժամանակաշրջանում (1946—1955)

Չնայած իր նշած քաղաքականության իրականացման որոշակի հաջողություններին, Պերոնը չկարողացավ հասնել իր հիմնական նպատակներին՝ դասակարգային պայքարի թուլացմանը, բանվորական շարժման լքրիվ ենթարկմանը և կորպորատիվ «խուստիսիալիստական» ռեժիմի հաստատմանը։ 40-ական թվականների բարենպաստ տնտեսական կոնյունկտուրայի դադարելով ավարտվեց աշխատավորների նկատմամբ արգենտինական բուրժուազիայի «բարեգործությունը»։ 50-ական թվականների սկզբին արդյունաբերությունը դեպրեսիա էր ապրում։ Առաջին անհրաժեշտության ապրանքների գները 1948—1954 թթ. աճեցին ավելի քան 3 անգամ։ 1949 թ. հետո սկսեց իջնել ռեալ աշխատավարձը։ Ընդ որում ձեռնարկատերերը շարունակում էին ուժեղացնել աշխատանքի ինտենսիվացումը։ Դա հասցրեց աշխատավորների, ներառյալ պերոնականների, դժգոհության և դիմադրության ուժեղացմանը։ Նույնիսկ Պերոնի համար ամենաբարենպաստ ժամանակաշրջանում՝ 1943—1948 թթ., միայն ֆեդերալ օկրուգում (մայրաքաղաքն առանց արվարձանների) գրանցվեց 387 գործադուլ՝ ավելի քան 1 միլիոն մարդու մասնակցությամբ։ Հետագայում դրանց թիվը և թափը ավելացան։ Եթե նախորդ հինգ տարում գործադուլները կրում էին հիմնականում տնտեսական բնույթ և լոկալ էին, ապա 1949 թվականից գործադուլային շարժումը դարձավ զանգվածային և հաճախ ուներ քաղաքական երանգ։ Մարտական բնույթ էին կրում տպագրիչների (1949 թ. հունվար) և Տուխումանի պրովինցիայի շաքարի արդյունաբերության բանվորների (1949 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր) գործադուլները։ 1950 թ. նոյեմբերից մինչև 1951 թ. օգոստոսը շարունակվեց 220 հազար երկաթուղայինների ընդհանուր գործադուլը։ Կառավարությունը երկաթուղիներում ռազմական դրություն մտցրեց, գործադուլի շատ մասնակիցներ ձերբակալվեցին կամ աշխատանքից հեռացվեցին։ Դա աշխատավոր պերոնիստների մի մասի շրջանում գցեց կառավարության հեղինակությունը։

Որոշ ժամանակ Պերոնին հաջողվեց ճնշման ուղիով, ինչպես նաև առանձին դեպքերում ձեռնարկատերերին ստիպելով մասնակիորեն բավարարել բանվորների պահանջները, գցել գործադուլային շարժման ալիքը, բայց 1954 թվականից գործադուլային շարժումը նորից բարձրացավ։ Հատկապես հզոր էին քիմիական և մետալուրգիական արդյունաբերության բանվորների գործադուլները, որոնք նախկինում, ստանալով ավելի բարձր աշխատավարձ, պաշտպանում էին կառավարությանը։

Աշխատավորների շահերի պաշտպանությանն ակտիվորեն մասնակցում էր կոմունիստական կուսակցությունը, որը հաճախ ենթարկվում էր հետապնդումների։ Հաշվի առնելով, որ պրոլետարիատի մեծ մասը գնացել էր Պերոնի ետևից, կոմկուսն արդեն 1946 թ. իր 11-րդ համագումարում առաջադրեց աշխատավոր պերոնիստների և կոմունիստների միասնության հասնելու կուրս։ Կոմունիստները կոչ էին անում վարել ոչ թե պերոնիստների ու ոչ պերոնիստների, այլ աշխատավորների, ներառյալ նաև բանվոր պերոնիստների, և նրանց դասակարգային հակառակորդների սահմանազատման ուղղություն։ Կոմկուսը որոշում ընդունեց իր ազդեցության տակ գտնվող արհմիությունները ցրելու և նրանց անդամներին պերոնական արհմիությունների մեջ ընդունելու մասին։ Կոմունիստների նախաձեռնությամբ ԱՀԿ-ի ներսում 1949 թ. ստեղծվեց «Դեմոկրատականացման և արհմիությունների անկախության համար շարժումը», որը պայքարում էր բանվորական կազմակերպությունները կառավարությանը ենթարկվելու դեմ, իրենց դասակարգային շահերի պաշտպանության գործում աշխատավորների միավորման համար։ «Շարժման» գոր-

ծունեությունը հասցրեց բանվորների դասակարգային ինքնագիտակցության աճին։

Բանվոր դասակարգի պայքարի զարգացումն ուղեկցվում էր նաև դեմոկրատական շարժման, հատկապես խաղաղության պաշտպանության աճով, ընդդեմ Լատինական Ամերիկայում ԱՄՆ-ի միլիտարիստական քաղաքականության։ Արգենտինայում դեռևս 1949 թ. կայացավ խաղաղության պաշտպանության կոնգրես, որին մասնակցեցին դեմոկրատական մտավորականության, բանվորական և արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Կոնգրեսի կազմակերպման գործում մեծ դեր խաղաց Արգենտինայի կոմկուսը։ Խաղաղության պաշտպանների և ամենից առաջ կոմունիստների նախաձեռնությամբ 1950 թ. հունիս-հուլիսին Բուենոս Այրեսում և Ռոսարիոյում կայացան բողոքի խոշոր ցույցեր Կորեայում Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական գործողությունների դեմ։ Աշխատավորներն իրենց մարտական ելույթներով ձախողեցին արգենտինական զորքերը Կորեա ուղարկելու կառավարության փորձը։

1955 թ. զինվորական հեղաշրջումը

Դասակարգային պայքարի զարգացումը և 50-ական թվականների դեպրեսիան դրսևորեցին բուրժուական պետության տնտեսական և սոցիալական կայունությունն ապահովելու պերոնիստական ռեժիմի անընդունակությունը։ Արգենտինական բուրժուազիայի շատ խմբավորումներ, քանի դեռ ռեժիմի միջոցառումները օգնում էին նրանց դիրքերի ուժեղացմանը և քանի դեռ տնտեսական բարենպաստ իրադրությունը հնարավորություն էր տալիս սոցիալական մանևրներ կատարել, պաշտպանում էին Պերոնին, իսկ այժմ, ամրապնդելով իրենց դրությունը, գնալով ավելի էին հեռանում պերոնական ռեժիմը և նրա «սոցիալական փորձերը» պաշտպանելուց, որը դրսևորում էր իր անարդյունավետությունը և բուրժուազիայի համար պոտենցիալ վտանգավորությունը, հատկապես դեպրեսիայի և դասակարգային պայքարի աճի իրադրության մեջ։ Աջ օպոզիցիայի կողմն անցավ զինվորականության մի մասը, պահանջելով հանրապետության ավելի «ամուր» ղեկավարում և բանվոր դասակարգի նկատմամբ խիստ կուրսի վարում։ Կառավարության դեմ հանդես եկավ նաև կաթոլիկական եկեղեցին։

Պերոնի կառավարությունն աջից և ձախից ընկավ մեկուսացման մեջ, որից օգտվեցին նրա պահպանողական հակառակորդները։ 1955 թ. հունիսի 16-ին խռովություն բռնկվեց ռազմածովային ուժերում, որն անհաջողությամբ վերջացավ։ Սեպտեմբերի 16-ին նոր խռովություն սկսվեց Կորդովոյում, գեներալ Լոնարդիի գլխավորությամբ։ Բանվորները պատրաստ էին զենքը ձեռքներին հանդես գալ խռովարարների դեմ։ Նման փորձ նրանք արդեն ձեռնարկել էին հունիսին։ Սակայն Պերոնը չէր ցանկանում աշխատավորներին զինված պայքարի մեջ ներգրավել, վախենալով նրանց ինքնուրույն գործողություններից, և հրաժարվելով դիմադրություն ցույց տալուց, փախավ երկրից (1955 թ. սեպտեմբերի 20-ին)։

Իրադրությունը երկրում և դասակարգային պայքարը 1955 թ. հեղաշրջումից հետո

1955 թ. սեպտեմբերյան հեղաշրջումը, որ պաշտոնապես կոչվեց «ազատագրական հեղափոխություն», աշխատավորներին նոր զրկանքներ և դժբախտություններ բերեց։ Գեներալներ Լոնարդի (1955 թ. սեպտեմբեր-նոյեմբեր) և Արամբուրուի (1955 թ. նոյեմբեր—1958 թ. մայիս) ժամանակավոր «հեղափոխական» կառավարությունները բացահայտորեն պաշտպանում էին բուրժուակալվածատիրական օլիգարխիայի և օտարերկրյա մոնոպոլիաների շահերը։ Հեղաշրջումից անմիջապես հետո Արգենտինան մտավ Միջազգային վալյուտային ֆոնդի և Վերակառուցման ու զարգացման բանկի կազմի մեջ, ընդունեց օտարերկրյա կապիտալ ներդրումները խրախուսելու պլան և լիովին ենթարկվեց ԱՄՆ-ի իմպերիալիզմին։ Արամբուրուի կառավարությունը 1956 թ. մայիսին վերացրեց 1949 թ. սահմանադրությունը, որում հոդված կար այն մասին, որ ազգային հարստությունները հանդիսանում են Արգենտինայի անօտարելի սեփականությունը։ Դա ուղի հարթեց երկրի էկոնոմիկայում օտարերկրյա կապիտալի հետագա ներթափանցման համար։ Արամբուրուի կառավարությունը, ցրելով պերոնական կուսակցությունը, միլիտարիզացրեց արհմիությունները, նրանց ղեկավարության գլուխ կարգելով զինվորականների։ ԱՀԿ-ի գործունեությունը դադարեցվեց։ Արհմիությունների նախկին շատ ղեկավարներ բանտարկվեցին կամ ոստիկանության կողմից գաղտնի սպանվեցին։ 1957 թ. հունիսին Արամբուրուն երկրում պաշարողական դրություն մտցրեց։

Կոմունիստները ջանքեր էին գործադրում կառավարության ռեակցիոն կուրսի դեմ մղվող պայքարում բանվոր դասակարգի միասնության հասնելու համար։ Կապ հաստատելով պերոնական կազմակերպությունների հետ, նրանք ձգտում էին հաղթահարել աջ պերոնիստական ղեկավարների դիմադրությունը, որը դրսևորվում էր կոմունիստների հետ ամեն տեսակ համատեղ գործողությունների նկատմամբ նրանց թշնամանքում։ Կոմունիստների պայքարը հեշտ չէր։ Արհմիութենական շարժման մեջ բախվում էին տարբեր հոսանքներ։ 1957 թ. նրանում ձևավորվեց երկու հոսանք. պերոնականների ղեկավարած «62 արհմիությունների կազմակերպությունը» և «32 արհմիությունների կազմակերպությունը», որն ավելի ուշ ստացավ «անկախականներ» անվանումը։ Վերջինս գտնվում էր ռեֆորմիստների (սոցիալ-դեմոկրատների, ռադիկալների, սոցիալիստների) ղեկավարության ներքո և կապված էր աշխատավորների միջամերիկյան ռեգիոնալ կազմակերպության հետ (ԱՆՌԿ)։

Ժողովուրդը չհաշտվեց ռեակցիոն դիկտատուրայի հետ, իսկ պերոնական կուսակցության արգելումն աշխուժացրեց պերոնականության նկատմամբ այն համակրանքը, որը նկատվում էր 40-ական թվականներին։

Արգենտինայի աշխատավորների 1957 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համընդհանուր գործադուլները, որոնց մասնակցեց ավելի քան 4 միլիոն մարդ, Արամբուրուի կառավարությանն ստիպեցին վերացնել պաշարողական դրությունը և պրեզիդենտական ընտրություններ նշանակել։ Ընտրություններին մասնակցելուց հեռացվեցին պերոնիստական և կոմունիստական կուսակցությունները։

Արգենտինայի սոցիալ-տնտեսական զարգացումը 50—60-ական թվականներին

50—60-ական թվականներին Արգենտինայի սոցիալ-տնտեսական զարգացումն աչքի էր ընկնում անհամաչափությամբ և հակասականությամբ։ Այդ ժամանակաշրջանում զգալի տեղաշարժեր նկատվեցին երկրի էկոնոմիկայում. երկիրը ագրարային-ինդուստրիալից վերափոխվեց ինդուստրիալ-ագրարայինի։ Հանրային միագումար արտադրանքի մեջ արդյունաբերության բաժինը 1950 թվականից մինչև 1970 թ. ավելացավ՝ 34,4-ից հասնելով 43 %-ի, իսկ գյուղատնտեսության բաժինը կրճատվեց՝ 19-ից իջնելով 15 %-ի։ 1970 թ. քաղաքային բնակչությունը հասավ 80 %-ի, 1947 թ. 62,5 %-ի դիմաց (Արգենտինայի ամբողջ բնակչությունը այդ տարիներին աճեց և 15,9 միլիոնից հասավ մինչև 23,3 միլիոն մարդու)։ Միաժամանակ գյուղատնտեսությունը դեռևս շարունակում էր ապահովել արտահանման հիմնական մասը (60-ական թվականների վերջերին մինչև 85 %-ը) և արտավալյուտային մուտքերը։ Որոշ զարգացում ստացան արդյունաբերության համեմատաբար նոր ճյուղերը՝ մեքենաշինությունը, ավտոմոբիլային, ատոմային, էլեկտրոնային արդյունաբերությունը։ Սակայն ավան-

դական ճյուղերը (սննդի, տեքստիլ, փայտագործական և այլն) կա՛մ գտնվում էին լճացման մեջ, կա՛մ զարգանում էին դանդաղորեն։ Արդյունաբերության զարգացման ընդհանուր տեմպերը համեմատած 1935—1948 թթ. արդյունաբերական վերելքի ժամանակաշրջանի հետ, կտրուկ կերպով իջել էին։ 14 տարում բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի աճը կազմեց ընդամենը 13 %, որոշ չափով բարձրանալով միայն 60-ական թվականների երկրորդ կեսին։

50—60-ական թվականներին արգենտինական արդյունաբերությանը հատուկ էին, մի կողմից, խոշոր և միջին ձեռնարկություններում աշխատանքի զգալի համակենտրոնացումը (1964 թ. վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունների 1,8 %-ը համակենտրոնացրել էին նրանում զբաղված բանվորների կեսից ավելին), մյուս կողմից, մանր տնայնագործական ձեռնարկությունների զանգվածի առկայությունը (վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունների 90 %-ը)։ Արդյունաբերության տեղաբաշխումը նույնպես աչքի էր ընկնում ծայրահեղ անհամաչափությամբ։ 1964 թ. միայն մեկ քաղաքում՝ Բուենոս Այրեսում (արվարձաններով) կենտրոնացված էր երկրի վերամշակող արդյունաբերության բոլոր բանվորների և ծառայողների 53 %-ը։

50—60-ական թվականներին Արգենտինայում արդեն առաջացավ տեղական մոնոպոլիստական կապիտալ, որն ազդեցիկ դիրքեր գրավեց էկոնոմիկայում, դարձավ բուրժուակալվածատիրական օլիգարխիայի կարևոր բաղկացուցիչ մասը։ Արգենտինական «Բունեխ և Բորի» մոնոպոլիան 60-ական թվականների կեսին ուներ արդյունաբերության մի շարք ճյուղերի տասնյակ խոշոր ձեռնարկություններ և մտնում էր աշխարհի (առանց ԱՄՆ-ի) 200 խոշոր մոնոպոլիաների թվի մեջ։ Բայց արգենտինական մոնոպոլիաները ենթակա դեր էին խաղում արտասահմանյան կապիտալի պահպանվող գերակշռության նկատմամբ (առաջին հերթին հյուսիսամերիկյանի)։ Արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումներն Արգենտինայում ավելացան և 1955 թ. 1,3 միլիարդ դոլարից 1973 թ. հասան մինչև 3 միլիարդ դոլարի։ Արտասահմանյան կապիտալ ունեցող ընկերություններին 1973 թ. մոտերքին բաժին էր ընկնում արդյունաբերական արտադրանքի մինչև 40 %-ը և գյուղատնտեսական հողերի $^1/_5$-ը։

50—60-ական թվականներին Արգենտինան աչքի էր ընկնում վարձու աշխատանքի անձանց և պրոլետարիատի բարձր տեսակարար կշռով։ 1960 թ. վարձու աշխատանքի անձինք կազմում էին ինքնագործ բնակչության 70 %-ը (7,5 միլիոնից 5,2 միլիոն մարդ), այդ թվում բուն պրոլետարիատը՝ 41 % (3,1 միլիոն մարդ)։ Ընդ որում արգենտինական պրոլետարիատը համարյա $^1/_3$-ով գյուղատնտեսական էր, իսկ արդյունաբերական պրոլետարիատի զգալի մասը մանր ձեռնարկությունների բանվորներ էին։

Գյուղատնտեսության մեջ մեծ կշիռ ձեռք բերեցին կապիտալիստական խոշոր ապրանքային և միջակ (ֆերմերական) տնտեսությունները։ Գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի անձանց բաժինը ավելացավ և 1947 թ. 48,9 %-ից 1960 թ. հասավ մինչև 64 %-ի։ Սակայն գյուղում կապիտալիզմի զարգացումն ընթանում էր լատիֆունդիզմի գերակշիռ պահպանմամբ։ 1960 թ. 5,7 % հողատերեր տիրում էին գյուղատնտեսական հողային ֆոնդի 74,4 %-ը, իսկ 40 % տնտեսություններ (մինիֆունդներ)՝ հողային ֆոնդի 1 %-ը։ 50—60-ական թվականներին գյուղատնտեսության աճի միջին տարեկան տեմպերը ծայրահեղ ցածր էին՝ մոտ 1,5 % (բնակչության տարեկան աճի 1,8 %-ի դեպքում)։

50—60-ական թվականներին Արգենտինայի էկոնոմիկայի զարգացման տեմպերի դանդաղելը և սոցիալ-տնտեսական հակասությունների սրումն այդ

ժամանակաշրջանում ավանդական սոցիալ-տնտեսական կառուցվածքի խրոնիկական ճգնաժամի սրման դրսևորումն էին, կառուցվածք, որը հենված էր գյուղատնտեսության մեջ լատիֆունդիզմի գերակշռության և օտարերկրյա կապիտալից ու արտաքին շուկայից Արգենտինայի էկոնոմիկայի կախվածության վրա։ Արգենտինայի վրա ծանր անդրադարձան 40-ական թվականների վերջին սկսված համաշխարհային շուկայում նրա ավանդական ապրանքների գների անկումը և ներմուծվող արդյունաբերական արտադրանքի գների բարձրացումը, ինչպես նաև Արգենտինայից օտարերկրյա մոնոպոլիաների դուրս տարվող շահույթների աճը, որը 60-ական թվականներին մի քանի անգամ գերազանցում էր նոր կապիտալների ներհոսքը։ Մշտական երևույթ դարձան կապիտալների դուրս տարվելը, արտաքին առևտրական պասսիվ հաշվեկշիռը, բյուջեի դեֆիցիտը, ինֆլյացիան, թանկության աճը։ Եթե մինչև 1930 թ. 1 դոլարը հավասար էր արգենտինական 1 պեսոյի, 1943 թ. 8 պեսոյի, ապա 1958 թ. 40, իսկ 1970 թ. 400 պեսոյի։ Հանրապետության արտաքին պարտքն աճեց և 1955 թ. 0,5 միլիարդ դոլարից 1972 թվին հասավ 6,2 միլիարդ դոլարի։ Տիրապետող դասակարգերը փորձում էին պահպանել իրենց դիրքերն ի հաշիվ աշխատավորների, որոնց բաժինն ազգային եկամտում կրճատվեց և 1952 թ. 47 %-ից 1970 թ. կազմեց մինչև 38 %։ Երկրում պահպանվում էր գործազրկության բարձր մակարդակը։

50—60-ական թվականներին խորացող կառուցվածքային խրոնիկական ճգնաժամի պայմաններում սոցիալ-տնտեսական հակասությունների սրումը կանխորոշեց տվյալ ժամանակաշրջանում Արգենտինայի դասակարգային և միջքաղաքական պայքարի աճը։

Ֆրոնդիսիի կառավարության քաղաքականությունը և աշխատավորների պայքարի աճը (1958—1962)

Պրեզիդենտական ընտրություններով (1958 թ. փետրվար) իշխանության գլուխ անցավ 1957 թ. ռադիկալ կուսակցության պառակտումից առաջացած երկու կուսակցություններից մեկի՝ «անհաշտների» քաղաքացիական ռադիկալ միության թեկնածու Արտուրո Ֆրոնդիսիի կառավարությունը (1958—1962)։ 28-ամյա ընդմիջումից հետո ռադիկալները, որ արտահայտում էին բուրժուազիայի լիբերալ շրջանների շահերը և կայուն ազդեցություն ունեին մանր ու միջին բուրժուազիայի, ինչպես նաև աշխատավորների մի մասի միջավայրում, նորից անցան իշխանության գլուխ։

Ա. Ֆրոնդիսին ընտրություններից առաջ խոստացավ հաստատել դեմոկրատական ազատությունների ռեժիմ, պահպանել աշխատավորների իրավունքները, արգելել հողից գյուղացի վարձակալներին վտարելը, պահպանել ազգային հարստությունները և վարել անկախ արտաքին քաղաքականություն։ Պրեզիդենտն իր կառավարման սկզբից որոշ չափով հաշվի էր առնում զանգվածների պահանջները։ Վերականգնվեցին սահմանադրական կարգը և դեմոկրատական ազատությունները, բարձրացվեց աշխատավորների աշխատավարձը, ՍՍՀՄ-ի հետ կնքվեցին տնտեսական համաձայնագրեր։

Կառավարության այս միջոցառումները թշնամաբար ընդունեցին զինվորականությունը, բուրժուակալվածատիրական օլիգարխիան և իմպերիալիստական շրջանները, կառավարությունից պահանջելով կտրուկ միջոցներ ձեռնարկել բանվորական շարժման դեմ և համաձայնություն հաստատել ԱՄՆ-ի իմպերիալիզմի հետ՝ ճգնաժամ ապրող «էկոնոմիկան փրկելու» համար։

Նրանց ճնշման տակ Ֆրոնդիսիի կառավարությունը կապիտուլյացվեց և ընդունեց Միջազգային վալյուտային ֆոնդի (ՄՎՖ) առաջարկած «տնտեսական զարգացման» պլանը։ Պլանը նախատեսում էր ինֆլյացիայի քաղաքա-

կանություն, աշխատանքի «ռացիոնալացում» և աշխատավորների աշխատավարձի խուզում, արտոնություններ օտարերկրյա կապիտալին, ՄՎՖ-ի մասնակցությունը կառավարության տնտեսական քաղաքականության վերահսկողությանը։ Օտարերկրյա նավթային մոնոպոլիաներին տրվեցին 5 միլիոն հեկտար չմշակվող հողեր և մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ։ Այս պայմաններում Արգենտինան փոխառություններ ստացավ ՄՎՖ-ից և ԱՄՆ-ի բանկերից։

Ի պատասխան այս միջոցառումների, երկրում ծավալվեցին բողոքի շարժումը և գործադուլային պայքարը։ 1959 թ. հունվարին և սեպտեմբերին աշխատավորների համընդհանուր գործադուլներ եղան կառավարության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ։ Բանվորական շարժման ակտիվացմանը տիրապետող դասակարգերը պատասխանեցին հակակոմունիստական կամպանիայի ուժեղացմամբ։ 1959 թ. Ֆրոնդիսին դեկրետ հրապարակեց կոմունիստական կուսակցությունը և մի քանի այլ առաջադեմ կազմակերպություններ արգելելու մասին։

Սակայն բանվորական շարժման ալիքը շարունակում էր ուժեղանալ։ 1960—1962 թթ. Արգենտինայում, ընդհանուր բարդությամբ հանդերձ, գործադուլներին մասնակցեց մոտ 25 միլիոն մարդ։ Արգենտինան դարձավ կապիտալիստական աշխարհում պրոլետարիատի դասակարգային մարտերի ամենախոշոր կենտրոններից մեկը։

Կոմունիստները ջանքեր էին գործադրում դասակարգային պայքարի հիման վրա համախմբել պրոլետարիատին։ Այդ նպատակով նրանք 1958 թ. վերջին ստեղծեցին Արհմիությունների միասնության և գործողությունների կոորդինացման շարժումը (ՄՈԻԿՍ), մեծ հաջողություններ հասնելով բանվոր դասակարգի մարտական միասնության համար մղվող պայքարում։ Պերոնական արհմիությունների ներսում ուժեղացան ձախ հոսանքները։

1961 թ. բանվոր դասակարգին հաջողվեց հասնել ԱՀԿ-ի, որպես միասնական ազգային արհմիութենական կենտրոնի, լեգալ գործունեության վերականգնմանը։ Այս հաջողության նշանակությունը թուլանում էր նրանով, որ կառավարությունը ԱՀԿ-ի ղեկավարությունը հանձնեց պերոնական և «անկախական» աջ արհմիութենական գործիչներին, ԱՀԿ-ի ներսում պահպանվեցին փաստորեն ինքնավար խմբավորումները, որոնք մեկը մյուսի հետ մրցակցում էին արհմիութենական կենտրոնում ազդեցության հասնելու համար։

1962 թ. մարտին կայացած մասնակի ընտրություններում պերոնիստները, ձախ ուժերի պաշտպանությամբ, տպավորիչ հաղթանակ տարան, վերահսկողություն ստանալով շատ պրովինցիաներում։ Պրոլետարիատի գործադուլային պայքարի թափը և ընտրությունների արդյունքները ցույց տվեցին աշխատավորների ու ժողովրդական զանգվածների ճնշմանը դիմակայելու Ֆրոնդիսիի կառավարության անկարողությունը, որը և կանխորոշեց նրա բախտը։ 1962 թ. մարտի վերջին, զինվորական հեղաշրջման պատճառով, այն տապալվեց, ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարվեցին։

Բանվորական և դեմոկրատական շարժման վերելքը 60-ական թվականների կեսին

Հեղաշրջումից հետո ստեղծված զինվորաքաղաքացիական ժամանակավոր կառավարությունն արտահայտում էր բուրժուակալվածատիրական օլիգարխիայի շահերը։ Նա շարունակեց ՄՎՖ-ի պարտադրած «կայունացման» և «զարգացման» քաղաքականությունը, որը սոցիալական հակասությունների սրում էր ծնում։ Ներքին քաղաքականության բնագավառում նա կանգնեց դեմոկրատական ազատությունները ճնշելու, առաջադեմ ուժերի դեմ ռեպրեսիաներն ուժեղացնելու ուղին։ Երկրում մտցվեց պաշարողական դրություն։ Բացահայտ զինվորական դիկտատուրա ստեղծելու սպառնալիք առաջացավ։

Դրան Արգենտինայի աշխատավորները պատասխանեցին պայքարի և իրենց շարքերի համախմբման նոր վերելքով։

Արդեն 1962 թ. նոր կառավարության քաղաքականության դեմ կայացան երկու համընդհանուր գործադուլ և մի շարք զանգվածային գործադուլներ, որոնց մասնակցեց 12 միլիոն մարդ։ Զինվորաքաղաքացիական կարգի դեմ մղվող պայքարում աշխատավորներին մոբիլիզացնելու գործում մեծ դեր խաղաց կոմունիստական կուսակցությունը։ Իր քաղաքական գիծը նոր պայմաններում կոմկուսը ճշգրտեց Կենտկոմի 1962 թ. հուլիսյան պլենումում և 12-րդ համագումարում (1963 թ. փետրվար—մարտ)։ Կոմկուսը աշխատավորներին կոչ արեց դիկտատուրայի դեմ պայքարի միասնական ճակատ ստեղծել։ Հավաստելով պերոնականների և կոմունիստների ազդեցության տակ գտնվող աշխատավոր զանգվածների որոշակի մերձեցումը, կոմկուսն առաջ քաշեց «պաշտպանել պերոնականների ձախ շրջադարձը», հեղափոխական ուժերի հետ նրանց մերձեցման լոզունգը։

Ռեակցիային հակահարված տալու գործում մեծ նշանակություն ունեցավ ԱՀԿ-ի համագումարը, որը կայացավ 1963 թ. սկզբին։ Համագումարն անցավ «ոչ մի բան թուլացման համար, ամեն ինչ ԱՀԿ-ի ամրապնդման համար» լոզունգով։ Եվ չնայած աջ պերոնականները կոմունիստներին թույլ չտվեցին մտնելու ԱՀԿ-ի ազգային կոմիտեի և քարտուղարության մեջ, այնուամենայնիվ ՄՈԻԿՍ-ի ներկայացուցիչները համագումարում որոշակի դեր խաղացին ԱՀԿ-ի միասնությունը պահպանելու համար մղված պայքարում։ Բանվորների պնդմամբ համագումարն ընդունեց «ԱՀԿ-ի պայքարի պլանը»՝ զինվորաքաղաքացիական կարգի հակազգային և հակաժողովրդական քաղաքականության դեմ, դեմոկրատական ազատությունները վերականգնելու և աշխատավորների դրությունը բարելավելու, հակաիմպերիալիստական և հակաօլիգարխիական վերափոխումներ անցկացնելու համար գործողությունների ծրագիր։

Այդ պլանով 1963 թ. մայիսին ամբողջ երկրով մեկ անցկացվեց «բողոքի շաբաթ», որն իր մեջ ներառավ միտինգները, ցույցերն ու գործադուլները և ավարտվեց 1963 թ. մայիսի 31-ի համընդհանուր գործադուլով։

Ժողովրդական դիմադրության աճը զինվորաքաղաքացիական կառավարությանն ստիպեց համաձայնել 1963 թ. հուլիսի 7-ին ընդհանուր ընտրություններ անցկացնելուն, որոնցում հաղթանակ տարան օպոզիցիոն ուժերը։ 1963 թ. հոկտեմբերի 12-ից հանրապետության պրեզիդենտ դարձավ այդ ժամանակ արգենտինական ռադիկալների հիմնական կուսակցության՝ ժողովրդի քաղաքացիական ռադիկալ միության պարագլուխ Արթուրո Իլիան։

Իլիայի բուրժուա-լիբերալ կառավարությունը վերականգնեց դեմոկրատական իրավունքները, չեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի նավթային մոնոպոլիաների հետ կնքված համաձայնագրերը, միջոցներ ձեռնարկեց ազգային էկոնոմիկայի զարգացման ուղղությամբ։ Սակայն անմիատարր կազմի և օլիգարխիայի ու ռեակցիոն զինվորականության ճնշման հետևանքով Իլիանի կառավարությունը տատանումներ և անվճռականություն էր հանդես բերում, հաճախ ենթարկվում աջից եկող ճնշմանը։ Երկրում շարունակվում էին ինֆլյացիան և գների աճը, պահպանվում էր գործազրկության բարձր մակարդակը։

Դա աշխատավորներին ստիպեց վերականգնել «ԱՀԿ-ի պայքարի պլանի» իրականացումը։ 1964 թ. մայիս—հունիսին բանվորներն ամբողջ երկրում, նրա պատմության մեջ առաջին անգամ, սկսեցին ձեռնարկությունների զանգվածային գրավումը։ Ընդամենը գրավվեց 11 հազար ձեռնարկություն։

Այդ գործողություններին մասնակցեց 4 միլիոն մարդ։ Հետագայում ԱՀԿ-ն կազմակերպեց աշխատավորների զանգվածային նոր ելույթներ։ Դրա հետևանքով բանվորները կառավարությունից որոշ զիջումների հասան մասնավորապես աշխատավարձի բարձրացման գծով։ Լեգալացվեց (չնայած սահմանափակումներով) կոմունիստական կուսակցության գործունեությունը։ Աշխատավորների ճնշման տակ Իլլիայի կառավարությունը սահմանազատվեց Դոմինիկյան Հանրապետության դեմ ԱՄՆ-ի ինտերվենցիայից և Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիան պաշտպանելուց։

«ԱՀԿ-ի պայքարի պլանի» համաձայն մարտական ելույթների (1963—1966 թթ.) ժամանակաշրջանում ուժեղացավ բանվոր դասակարգի գործողությունների միասնության միտումը։ 1966 թ. մայիսին ստեղծվեց ԱՀԿ-ի նոր ղեկավարություն, որի մեջ մտան տարբեր խմբավորումների, այդ թվում նաև ՄՈՒԿՍ-ի ներկայացուցիչները։ Հունիսի 7-ին նրանց անցկացրած համընդհանուր գործադուլին մասնակցեց 4 միլիոն մարդ։

Զինվորական դիկտատուրան (1966—1973) և նրա դասակարգային բնույթը

Իլլիայի կառավարությունն իր լիբերալ մեթոդներով և մշտական տատանումներով անկարող եղավ գլուխ հանել 60-ական թվականների մոտերքին Արգենտինայի անտեսական, սոցիալ-քաղաքական սիստեմի խոր ճգնաժամից։ Բանվորական և դեմոկրատական շարժման հաջողություններն ստիպեցին ռեակցիային անցնելու վճռական գործողություններ։ 1966 թ. հունիսի 26-ին Արգենտինայում զինվորական հեղաշրջում կատարվեց։ Իշխանության գլուխ հաստատվեց գեներալ Խ. Կ. Օնգանիայի գլխավորած զինվորական դիկտատուրան։ Կոնգրեսը ցրվեց, արգելվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները, գործադուլները, հայտարարվեց անորոշ ժամանակով արտասահմանադրական «հեղափոխական» ռեժիմ մըտցընելու մասին, որը կոչված էր «վերակառուցելու» հանրապետությունը։

Նոր ռեժիմն արտահայտում էր բուրժուակալվածատիրական օլիգարխիայի աջ նացիոնալիստական շրջանների (ամենից առաջ արգենտինական բուրժուազիայի մոնոպոլիստական վերնախավի) շահերը, որ կողմնորոշված էր դեպի ամերիկյան իմպերիալիզմի հետ համագործակցելու ուղին։

Հեղաշրջման ղեկավարների նպատակն էր ճնշել դասակարգային պայքարը, հաստատել ավտորիտար և կորպորատիվ միտումներով ռեժիմ, որը կարողանար աշխատավորների շահագործումն ուժեղացնելու և օտարերկրյա կապիտալի առատ հոսանքի ուղիով ապահովել կապիտալիստական մոդեռնացումը և արդյունաբերական զարգացումը։ Զինվորական դիկտատուրայի գաղափարական հիմքը դարձան աջ բուրժուական նացիոնալիզմը, մարտնչող հակակոմունիզմը, դասակարգերի «ինտեգրացման», ազգի «միասնության» գաղափարները, պահպանողական կղերականությունը։

Էկոնոմիկայի բնագավառում Օնգանիան հռչակեց պետության ակտիվ միջամտության գաղափարը։ Իրականում նրա կառավարությունը խրախուսում էր օտարերկրյա մասնավոր կապիտալ ներդրումները, արտոնություններ տալով նրանց, վարում էր արդյունաբերության ապազգայնացում, ԱՄՆ-ի և ԳՖՀ-ի մոնոպոլիաներին հանձնելով նավթային, մասասոցասպանդանոցային, կաթնամթերքների և արդյունաբերական այլ ճյուղերի գիրքերը։ 1968 թ. երկրում գործադուրկների և կիսագործազուրկների թիվը հասել էր 1,5 միլիոն մարդու։ Ֆինանսներն ամրապնդելու պատրվակով Օնգանիան անցկացրեց աշխատավարձի սառեցում։ Այնուհետև մտցվեց աշխատավարձի իջեցման զոնալ համակարգ, այն դեպքում, երբ շարունակվում էր գների աճը։

Կառավարությունն ակտիվորեն միջամտում էր արհմիությունների գործերին, այնտեղ, որտեղ գերակշռում էին դասակարգային պայքարի կողմնակիցները, հաստատում էր իր վերահսկողությունը։ Նա 1966 թ. հոկտեմբերին հասավ ԱՀԿ-ի ղեկավարությունից կոմունիստների վտարմանը։ Գործադուլները դաժանորեն ճնշվում էին։ Բանվորական շարժման շատ ակտիվիստներ ձերբակալվել էին։ 1967 թ. կոմունիզմի դեմ պայքարի «օրենք» հայտարարվեց, օժանդակելով ճնշման ուժեղացմանը։ Օնգանիայի կառավարությունը մտադրվել էր վերակառուցել ԱՀԿ-ն և նրան վերածել իր պլաններն իրագործող գործիքի։

Զինվորական իշխանություններն իրենց վերահսկողությանն էին ենթարկել համալսարանները, վերացնելով համալսարանական ինքնավարությունը, ճնշելով ուսանողական շարժումը։

Արտաքին քաղաքականության բնագավառում Օնգանիայի կառավարությունն օգտագործում էր «գաղափարական սահմանների» դոկտրինան։ Նա հանդես էր գալիս միջամերիկյան զինված ուժեր ստեղծելու ԱՄՆ-ի պլանների պաշտպանությամբ, համերաշխում էր Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիային, պաշտպանում Լատինական Ամերիկայի դիկտատորական ռեժիմները։

Աշխատավորների պայքարը զինվորական դիկտատուրայի դեմ և նրա անկումը (1966—1973)

Հեղաշրջումից հետո համարյա բոլոր բուրժուական և մանրբուրժուական կուսակցություններն առաջին շրջանում կա՛մ կանգնեցին զինվորական ռեժիմի կողմը, կա՛մ սպասողական դիրք գրավեցին։ ԱՀԿ-ի աջ պարագլուխները փորձեցին Օնգանիայի կառավարության հետ համագործակցելու համաձայնության հասնել, սարոտաժի ենթարկելով դիկտատուրայի դեմ զանգվածների պայքարը։

Կոմունիստական կուսակցությունը և ՄՈՒԿՍ-ը հենց սկզբից մերկացրին նոր ռեժիմի հակաժողովրդական ու հակազգային բնույթը և նրա դեմ պայքարի կոչ արեցին։ Կոմունիստները դիկտատուրայի դեմ ժողովրդական դիմադրության առաջին շարքերում էին։ 1969 թ. մարտին ԱՀԿ-ի անլեգալ կայացած 13-րդ համագումարը նույնպես առաջնակարգ ուշադրություն դարձրեց զինվորական ռեժիմի դեմ պայքարում զանգվածներին մոբիլիզացնելու հարցերին։ Համագումարի ընդունած կուսակցության նոր ծրագրում Արգենտինայում ապագա հեղափոխության բնույթը սահմանվում էր իբրև դեմոկրատական, ագրարային և հակաիմպերիալիստական՝ սոցիալիզմին անցնելու հեռանկարով։ Հեղափոխության իրականացման անհրաժեշտ պայման պետք է հանդիսանային բանվոր դասակարգի և դեմոկրատական ուժերի միասնության հասնելը և նոր տիպի ժողովրդական, դեմոկրատական կառավարության ստեղծումը։

Չնայած դաժան ռեպրեսիաներին և ԱՀԿ-ի ղեկավարության կապիտուլյանտական քաղաքականությանը, արդեն զինվորական ռեժիմի առաջին իսկ ամիսներից սկսվեց գործադուլային պայքարը նրա քաղաքականության դեմ։ 1966 թ. դեկտեմբերի 14-ին և 1967 թ. մարտի 1-ին եղան աշխատավորների առաջին համընդհանուր գործադուլները՝ ուղղված Օնգանիայի կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ։

ԱՀԿ-ի պարագլուխների համաձայնողական գիծը բողոքի աճ առաջ բերեց։ Բանվորական կազմակերպություններում, այդ թվում պերոնական արհմիություններում, ուժեղացան ձախ հոսանքները։ 1968 թ. մարտին կայացած ԱՀԿ-ի համագումարում ձախ պերոնականները, կոմունիստների և մյուս առաջադեմ հոսանքների պաշտպանությամբ, հաղթանակ տարան։ Ընտրվեց ԱՀԿ-ի նոր ղեկավարություն, որը կանգնեց դասակարգային պայքարի և դիկտատուրայի դեմ աշխատավորներին մոբիլիզացնելու դիրքերում։ Համաձայ-

նողական տակտիկայի կողմնակիցները հեռացան համագումարից և ստեղծեցին զուգահեռ ԱՀԿ։

1969 թ. մայիս—հունիսին զինվորական ռեժիմի դեմ հզոր ելույթները, որ սկսել էին Կորդովայի բանվորները և հետո ձուլվել ուսանողների ու բնակչության մի քանի այլ խավերի պաշտպանությամբ աշխատավորների մայիսի 29—30-ը կայացած համազգային գործադուլի մեջ, ընդգրկեցին երկիրը։ Պայքարի մեջ մտան երկու ԱՀԿ-ներն էլ։ Կորդովայում գործադուլը վերաճեց ոստիկանության ու զորքերի դեմ բանվորների և ուսանողների կատաղի մարտերի։ Հունիսի 30-ին կառավարությունը պաշարողական դրություն մտցրեց։ ԱՀԿ-ի օպոզիցիոն խմբավորումը, ձախ պերոնականների գլխավորությամբ, ջախջախվեց։ Բայց աշխատավորների պայքարը շարունակվեց։ 1969 թ. օգոստոսին և 1970 թ. ապրիլին դիկտատուրայի դեմ համընդհանուր նոր գործադուլներ եղան։ Աստիճանաբար օպոզիցիայի կողմն անցան համարյա բոլոր քաղաքական կուսակցությունները։ Զինվորական ռեժիմը թեակոխեց ճգնաժամի շրջանը, ի հաշիվ աշխատավորների կապիտալիզմի կայունացման նրա պլաններն անհաջողության մատնվեցին։

1970 թ. հունիսի 8-ին կատարված նոր զինվորական հեղաշրջման հետևանքով պրեզիդենտի պաստում գեներալ Օնգանիային փոխարինեց ուրիշ գեներալ՝ Լևինգստոնը։ Սրա ժամանակ որևէ բան չփոխվեց։ 1970 թ. հուլիսին աջ պերոնականներին հաջողվեց իրենց ղեկավարությամբ վերստեղծել միասնական ԱՀԿ։ Սակայն բանվորական շարժման մեջ ձախ ուժերի համախմբումը հետագա զարգացում ստացավ։ 1970 թ. հոկտեմբերին ԱՀԿ-ի ներսում մի շարք ձախ խմբավորումներ, ներառյալ ՄՈՒԿՍ-ը և ձախ պերոնականների մի մասը, միավորվեցին ազգային ներարհմիութենական շարժման (ԱՆՇ) մեջ։ 1970 թ. նոյեմբերին արհմիութենական և քաղաքական կազմակերպությունների ձախ ուժերը կազմակերպեցին «Արգենտինացիների ազգային հանդիպում» զանգվածային քաղաքական շարժումը (ԱԱՀ), որը նպաստեց խոր դեմոկրատական և հակաիմպերիալիստական վերափոխումների համար պայքարի հիման վրա կոմունիստների, ձախ պերոնականների, ռադիկալների, սոցիալիստների, քրիստոնեական դեմոկրատների համախմբմանը։

Ձախ ուժերի համախմբումը խթանեց դիկտատուրայի դեմ աշխատավորների պայքարի հետագա զարգացմանը։ 1970 թ. հոկտեմբեր—նոյեմբերին Արգենտինայում կայացավ երեք նոր համընդհանուր գործադուլ։ 1971 թ. մարտին Կորդովան նորից դարձավ բարիկադային մարտերի թատերաբեմ։ 1971 թ. մարտի 23-ի հերթական զինվորական հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած գեներալ Լանուսսն փորձեց չափավոր օպոզիցիայի հետ կոմպրոմիսի միջոցով փրկել ռեժիմը, հռչակելով «լիբերալացում» և մասնակիորեն թույլատրելով կուսակցությունների (բացի կոմունիստականից) լեգալ գործունեություն։

Սակայն ժողովրդական զանգվածները պահանջում էին սահմանադրական կարգերի լիակատար վերականգնում և սոցիալ-տնտեսական խոր վերափոխումներ։ 1971 և 1972 թթ. գործադուլներին տարեկան մասնակցեց 14-ական միլիոն մարդ, որը երկրի պատմության մեջ ռեկորդային թիվ էր։ Կայացան մի քանի համընդհանուր գործադուլներ։ 1972 թ. հուլիսին բարիկադային մարտերն ընդգրկեցին Տուկուման քաղաքը։

Ժողովրդական շարժման թափը և դիկտատուրայի կողմնակիցների մեկուսացման մեջ գտնվելը Լանուսսի կառավարությանն ստիպեցին 1973 թ. մարտի 11-ին նշանակել ընդհանուր ընտրություններ։

Ընտրական կամպանիայի ընթացքում դիկտատուրային հակառակ ու-

ժերի համբարում գերակշռություն ստացան հակաիմպերիալիստական, հակաօլիգարխիական կոչերը։ Դրան քիչ ծառայություն չմատուցեց կոմունիստների ակտիվ մասնակցությամբ ստեղծված մի քանի ձախ կուսակցությունների միավորումը՝ Հեղափոխական ժողովրդական միությունը (ՀԺՄ), որն առաջանալով ընտրություններից ամիս ու կես առաջ, հակաիմպերիալիստական և հակաօլիգարխիական արմատական վերափոխումների ծրագիր էր առաջադրել։ Այդ ծրագիրն արագորեն լայն ճանաչման արժանացավ բնակչության զգալի մասի շրջանում, որը մյուս դեմոկրատական կուսակցություններին ևս դրդեց ավելի հստակորեն որոշելու իրենց դիրքերը։

1973 թ. մարտի 11-ի ընտրություններում հաղթանակ տարավ պերոնականների և նրանց հետ դաշնակցած խմբավորումների 1972 թ. դեկտեմբերին ստեղծված Ազատագրման խուստիսիալիստական ճակատը (ԱԽՃ), որը հավաքեց 5,9 միլիոնից ավելի ձայն (49,59 %)։ Ռադիկալները երկրորդ տեղում էին՝ 2,5 միլիոն ձայնով (21,3 %)։ Զգալի հաջողության հասավ Հեղափոխական ժողովրդական միությունը՝ 885 հազար ձայն (7,43 %)։ ՀԺՄ-ի ցուցակով Արգենտինայի պատմության մեջ առաջին անգամ կոնգրեսում ընտրվեց երկու կոմունիստ դեպուտատ։ Դիկտատուրայի նկատմամբ օպոզիցիոն ուժերը, որոնք ընտրություններում հանդես էին գալիս առաջադիմական վերափոխումների լոզունգներով, ընդհանուր գումարում ստացան ձայների 80 %-ը։ Դա դեմոկրատական ուժերի տպավորիչ հաղթանակն էր։

1973 թ. մայիսի 25-ին հանրապետությունում իշխանությունն անցավ պերոնականների կազմած սահմանադրական կառավարությանը։

ԳԼՈՒԽ 26

ԲՐԱԶԻԼԻԱ

«Նոր պետության» երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ ճգնաժամը և անկումը փուլում, միջազգային իրադրության ազդեցությամբ և բուն Բրազիլիայում հակաֆաշիստական ձախ ուժերի աճի հետ կապված, կառավարող դասակարգերն ստիպված էին հրաժարվել կառավարման դիկտատորական մեթոդներից։ 1945 թ. փետրվարին Ժ. Վարգասը հայտարարեց երկրում պառլամենտական կարգը վերականգնելու մասին։ 1945 թ. մարտին Սովետական Միության կառավարությանն առաջարկություն ուղարկվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, և ապրիլի սկզբին դրանք վերականգնվեցին։ 1945 թ. ապրիլին դեկրետով ներում հայտարարվեց 1935 թ. ապստամբության պարտությունից հետո ձերբակալված քաղաքական բանտարկյալներին։ Ընդհատակից դուրս եկավ ԲԿԿ-ն։ Մայիսին նոր ընտրական օրենք հայտարարվեց և 1945 թ. դեկտեմբերի 2-ին նշանակվեցին նոր պրեզիդենտի ընտրությունները։

Այս միջոցառումները կոչված էին թուլացնելու «նոր պետության» խոր ճգնաժամը։ Տիրապետող դասակարգերը հատկապես մեծ վտանգ էին տեսնում ժողովրդական լայն զանգվածների շրջանում դեմոկրատական տրամադրությունների աճի, կոմունիստական կուսակցության քաղաքական ազդեցու-

թյան ուժեղացման մեջ, որի շարքերը 1944—1945 թթ. ընթացքում 3 հազարից աճեցին և հասան 50 հազարի։

Այդ իրադրության մեջ Վարգասի գլխավորությամբ բուրժուանացիոնալիստական տարրերը և արհմիութենական բյուրոկրատիան, որը կորպորատիզմի հիման վրա ամրապնդվել էր «նոր պետության» տարիներին, 1945 թ. մարտին հիմնեցին այսպես կոչվող տրաբալիստական կուսակցությունը, որը փաստորեն գլխավորում էր Վարգասը։

Կուսակցության ծրագիրն ընդգրկում էր ազգային մի շարք պահանջներ (բնական ռեսուրսների պաշտպանություն, պետական հատվածի ամրապնդում, առևտրական կապերի ընդարձակում, արտահանման շահույթների սահմանափակում և այլն)։ Կուսակցությունը հանդես էր գալիս արհմիություններին մի քանի լրացուցիչ իրավունքներ տալու, սոցիալական ապահովության ընդարձակման, աշխատավարձի երաշխավորված մինիմում մտցնելու օգտին և այլն։ Ամբողջությամբ վերցրած տրաբալիստների քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես նացիոնալ-ռեֆորմիստական, որն ուղղված էր այն բանին, որպեսզի բանվորներին պահեին ռեֆորմիզմի և բուրժուական նացիոնալիզմի հոսանքի մեջ։ Տրաբալիստներն իրենց անմիջական խնդիրն էին համարում հասնել Վարգասի պրեզիդենտ վերընտրվելուն։

1945 թ. առաջացան մի քանի տասնյակ տարբեր բուրժուական և ռեֆորմիստական կուսակցություններ, որոնցից ամենանշանակալիները նացոնալ-դեմոկրատական միությունը, հանրապետական կուսակցությունը, սոցիալ-դեմոկրատական կուսակցություն էին։ Դեմագոգիական խոստումներով նրանց հաջողվեց իրենց կողմը գրավել քաղաքային մանր բուրժուազիայի, ծառայողների, մտավորականության, գյուղացիության զգալի խավերին, ինչպես նաև բանվորների մի մասին։

Բանվորական շարժման առաջադեմ ուժերը կարողացան դիմակայել ռեֆորմիստական կուսակցությունների ճնշմանը և 1945 թ. ապրիլին հիմնեցին բանվորների միացյալ շարժումը, որը հանդես եկավ միասնական ազգային արհմիութենական կենտրոն ստեղծելու կոչով։ Նրանց պաշտպանեցին ավելի քան 1,5 միլիոն աշխատավորներ։ «Նոր պետության» աճող ճգնաժամի պայմաններում խոշոր բուրժուազիան, հողային օլիգարխիան և բարձրագույն սպայությունը, ԱՄՆ-ի օգնությամբ, դիմեցին պետական հեղաշրջման։ 1945 թ. հոկտեմբերի 29-ին Ժ. Վարգասը, որ 15 տարի կառավարել էր իբրև լիիշխան դիկտատոր, բարձրագույն գեներալիտետի ճնշման տակ ստիպված էր հայտարարություն ստորագրել հրաժարականի վերաբերյալ։ Հեղաշրջումն իր սուր ծայրով ուղղված էր ոչ այնքան Վարգասի, որքան դեմոկրատիայի և առաջադեմ ուժերի դեմ, որոնք գնալով ավելի վճռականորեն էին ներգրավվում քաղաքական պայքարի մեջ։ Բայց Վարգասի ռեժիմի տապալումը չկանգնեցրեց հեղափոխական պրոցեսների զարգացումը։

Քաղաքական պայքարը Բրազիլիայում 1946—1960 թթ.

1945 թ. դեկտեմբերի պրեզիդենտական ընտրություններում հաղթանակ տարավ սոցիալ-դեմոկրատական և տրաբալիստական կուսակցությունների առաջադրած թեկնածուն՝ գեներալ Է. Գ. Դուտրան։ Նա խոստացավ գործողության մեջ դնել նոր դեմոկրատական սահմանադրությունը, ընդարձակել սոցիալական օրենսդրությունը, բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը, զարգացնել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ և այլն։ 1945 թ. պրեզիդենտական ընտրություններին առաջին անգամ մասնակցեց բրազիլական կոմունիստական կուսակցությունը։ Նրա թեկնածու, ինժեներ Ֆիուզայի օգտին քվեարկեց բոլոր ընտրողների 10 %-ը, 14 կոմունիստներ ընտրվեցին

դեպուտատների պալատի անդամ, ԲԿԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Կ. Պրեստեսն ընտրվեց սենատի կազմում։ Հասարակական կարծիքի ճնշման տակ և կոնգրեսում կոմունիստների եռանդուն գործողությունների շնորհիվ, 1946 թ. սեպտեմբերին ընդունված նոր սահմանադրության տեքստում մտցվեցին մի շարք դեմոկրատական հոդվածներ։

Պրոլետարական շարժման զարգացման կարևոր իրադարձություն դարձավ 1946 թ. սեպտեմբերին միացյալ արհմիութենական կենտրոնի՝ Բրազիլիայի աշխատավորների կոնֆեդերացիայի (ԲԱԿ) ստեղծումը, որը միավորում էր երկրի բոլոր պրովինցիաների 800 կազմակերպություններ։ ԲԱԿ-ում ղեկավար դիրքերը պատկանում էին կոմունիստներին։ 1947 թ. հունվարի ընտրություններում կոմունիստները հավաքեցին 800 հազար ձայն և պրովինցիաների օրենսդրական ժողովներում ստացան 62 տեղ։ Կոմունիստական կուսակցության շարքերն աճեցին մինչև 150 հազար անդամներով։ Դա ձախ ուժերի խոշոր հաջողությունն էր։ Վախենալով դեմոկրատական զանգվածային շարժման հետագա աճից, բրազիլական ռեակցիան ԱՄՆ-ի իմպերիալիզմի օգնությամբ անցավ հարձակման։ 1947 թ. ապրիլին արգելվեց կոմունիստական երիտասարդական միությունը, մայիսին՝ բրազիլական կոմունիստական կուսակցությունը և Բրազիլիայի աշխատավորների կոնֆեդերացիան։ Կոմունիստ դեպուտատները զրկվեցին իրենց մանդատներից։ Երկրում սկսվեցին զանգվածային ձերբակալությունները։ 1947 թ. հոկտեմբերին Դուտրայի կառավարությունը Վաշինգտոնի ցուցումով հայտարարեց ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին, իսկ դրանից ոչ շատ առաջ (օգոստոս—սեպտեմբեր) ստորագրեց Արևմտյան կիսագնդի պաշտպանության ակտը, որը վկայում էր Բրազիլիան ԱՄՆ-ի ագրեսիվ քաղաքականության սիստեմի մեջ ներգրավելու մասին։ Չնայած խիստ բռնություններին, երկրում գործադուլ արեց մինչև 200 հազար մարդ։ Մի շարք քաղաքներում անցկացվեցին ընդհանուր գործադուլներ։ Ակտիվ դասակարգային պայքար ծավալվեց գյուղում։ Զանգվածները գնալով ավելի վճռականորեն էին դժգոհություն արտահայտում Դուտրայի ռեակցիոն քաղաքականության նկատմամբ։ Տեղական միջին բուրժուազիայի մի մասը նույնպես դժգոհ էր նրա քաղաքականությունից, պահանջելով ավելի վճռականորեն պաշտպանել իր տնտեսական շահերը։

1950 թ. պրեզիդենտի պոստում նորից ընտրվեց Ժ. Վարգասը, որը շարունակեց վարել բուրժուանացիոնալիստական քաղաքականություն, ամրապնդելով պետական հատվածը։ 1948—1953 թթ. Բրազիլիայում բնական հարստությունների պաշտպանության զանգվածային կամպանիա ծավալվեց։ «Բրազիլական նավթը՝ բրազիլացիներին» լոզունգը ճանաչում գտավ հասարակության բոլոր խավերում։ Շատ քաղաքներում ստեղծվեցին ազգային բնական ռեսուրսների պաշտպանության կոմիտեներ։ 1952 թ. հունիսին հրավիրվեց նավթի պաշտպանության կոնֆերանս։ Նավթային ստատուտի կապակցությամբ ակտիվ պայքար ծավալվեց կոնգրեսում։ 1953 թ. հոկտեմբերի 3-ին Վարգասը վերջապես օրենք ստորագրեց նավթի հետախուզման, հանույթի և վերամշակման պետական մոնոպոլիա մտցնելու վերաբերյալ («Պետրոբրաս»)։ 1954 թ. կոնգրեսին օրինագիծ ներկայացրեց էլեկտրաէներգիայի արտադրության գծով համանման պետական ընկերություն ստեղծելու մասին, հանդես եկավ գերշահույթների վրա լրացուցիչ հարկեր մտցնելու առաջարկությամբ և այլն։ Դրա հետ միաժամանակ Վարգասը, աշխատավորների շրջանում իր դիրքերն ամրապնդելու նպատակով, դիմեց նրանց որոշ զիջումներ կատարելուն, բարձրացրեց աշխատավարձի մինիմումը, մեծացրեց տրաբալիստների ղեկավարած արհմիությունների իրավունքները և այլն։

Կառավարության լիբերալ-ռեֆորմիստական կուրսը, ամենից առաջ աշ-

խատավարձի բարձրացման գիջումներն ստիպողական միջոցառումներ էին։ Ի տարբերություն «նոր պետության» ժամանակաշրջանի, բանվոր դասակարգը կապված չէր կորպորատիվիզմի կապերով և ակտիվ պայքար ծավալեց, որը 50-ական թվականների առաջին կեսին ընթացավ վերընթաց գծով. 1950 թ. գործադուլ արեց 250 հազար մարդ, 1951 թ. 360 հազար, 1952 թ. 410 հազար, 1953 թ. արդեն 800 հազար, իսկ 1954 թ. ավելի քան 1,2 միլիոն մարդ։ Պայքարի ընթացքում արհմիությունները միմյանց միջև կնքեցին «միասնության պակտեր»։

Երկրում լայն մասշտաբներ ընդունեց խաղաղության համար շարժումը, 4,2 միլիոն մարդ ստորագրեց ստոկհոլմյան կոչը, 5,2 միլիոն բրազիլացիներ իրենց ստորագրությունները դրեցին հինգ մեծ տերությունների միջև խաղաղության պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության համաշխարհային խորհրդի դիմումի տակ։ Լայն մասշտաբներ ընդունեց Կորեայում ԱՄՆ-ի ագրեսիվ պատերազմի դեմ շարժումը։ Հակաամերիկյան տրամադրություններն ընդգրկեցին բնակչության ամենատարբեր խավերը։

1954 թ. ապրիլին առաջադեմ ուժերն ստեղծեցին ազգային ազատագրության լիգան, որը գլխավորեց զանգվածային հայրենասիրական շարժումը։ Նրա ծրագրային խարտիայում առաջ էին քաշվում բնական հարստություններն օտարերկրյա մոնոպոլիաների կողոպուտից պաշտպանելու, ագրարային ռեֆորմ անցկացնելու, ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու և այլ պահանջներ։ Վարգասի կառավարությունը ամբողջությամբ վերցրած բարյացակամորեն էր վերաբերվում ազգային ծավալված շարժմանը, դեռ ավելին, նա նկատի ուներ այդ շարժումն օգտագործել տեղական կապիտալիզմի շահերը պաշտպանելու օգտին։ Իսկ ինչ վերաբերում է կոմունիստական շարժմանը և պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային պայքարին, ապա Վարգասը միշտ վճռականորեն հանդես էր գալիս նրանց դեմ, հաճախ դիմելով ուժի։

Վարգասի բուրժուական-ազգային գիծը և հակաիմպերիալիստական շարժման աճը ծայրահեղ աջ ուժերի շրջանում գնալով էլ ավելի մեծ դժգոհություն էին առաջ բերում։ ԱՄՆ-ի իմպերիալիստները և ներքին ռեակցիան գտնում էին, որ Վարգասի կառավարությունը անկարող է վերահսկել երկրի քաղաքական դրությունը։ 1954 թ. օգոստոսին բարձրագույն գեներալիտետը պահանջեց Վարգասի հրաժարականը։ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը պաշտպանեց հեղաշրջման գաղափարը։ Չհամարձակվելով հենվել ժողովրդի վրա, Վարգասն ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին։

Երկիրը նորից կանգնեց պետական հեղաշրջման սպառնալիքի առջև, սակայն աշխատավորներն ակտիվորեն հանդես եկան ի պաշտպանություն սահմանադրության և դեմոկրատիայի, ռեակցիային ստիպելով հրաժարվել դիկտատորական ռեժիմ հաստատելուց։ 1955 թ. պրեզիդենտ ընտրվեց Ժ. Կուբիչեկը, որի կառավարումն արտահայտվեց մի շարք պոզիտիվ քայլերով։ Չնայած ԱՄՆ-ի իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի ճնշմանը, կառավարությունն ակտիվորեն պաշտպանում էր նավթի մենաշնորհը, արդյունաբերության մեջ ընդարձակում էր պետական հատվածը, դատապարտում էր Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիան։ Սակայն Ժ. Կուբիչեկի, ինչպես և շատ բուրժուական նացիոնալիստների համար բնորոշ էր ծայրահեղ անհետևողականությունը, հակակոմունիստական կանխակալությունը, ԱՄՆ-ի և երկրի ներքին ռեակցիոն շրջանների հետ կոմպրոմիսի գիմելու ձգտումը։ Ժ. Կուբիչեկի պրեզիդենտության գլխավոր արդյունքը Բրազիլիայի տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի (1956—1960) կենսագործման միջոցառումներն էին, չնայած այն առատ խոստումները, թե «5 տարում Բրազիլիան

կանցնի 50 տարվա ճանապարհ», մնացին չկատարված։ Իսկ ամբողջությամբ վերցրած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում կատարվեցին կարևոր տեղաշարժեր։ Փոփոխությունների յուրատեսակ խորհրդանիշ հանդիսացավ պետության նոր մայրաքաղաքի՝ Բրազիլիա քաղաքի, կառուցումը, որի բացումը կայացավ 1960 թ. ապրիլի 21-ին։ Սակայն հիմնական պրոբլեմները չլուծվեցին։ Աշխատավորների նյութական դրությունը մնում էր ծայրահեղորեն դժվարին, շարունակում էր աճել ապրուստի արժեքը, անկասելիորեն խորանում էր ինֆլյացիան, աճում էր հյուսիսամերիկյան կապիտալի էքսպանսիան։

Բրազիլիայի սոցիալ-տնտեսական դրությունը 60-ական թվականների սկզբին

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Բրազիլիան հետամնաց, ագրարային երկրից վերածվեց կապիտալիզմի զարգացման միջին մակարդակի ինդուստրիալ-ագրարային պետության։ Աճեցին խոշոր քաղաքներ, ստեղծվեցին արդյունաբերության ժամանակակից շատ ճյուղեր (ավտոմոբիլային, ռադիոէլեկտրոնիկայի, ատոմային և այլն)։ Նշանակալիորեն աճեց ծանր արդյունաբերության բաժինը։ Մինչև պատերազմը առաջին ստորաբաժանման ճյուղերին բաժին էր ընկնում համախառն արտադրանքի միայն 1/5-ը, իսկ 60-ական թվականների կեսերին արտադրության միջոցների արտադրությունը գերազանցում էր ամբողջ արտադրանքի արժեքի 1/2-ը։ Բրազիլիայում պողպատի արտադրությունը ավելացավ շուրջ 7 անգամ, չուգունինը՝ համարյա 5, ցեմենտինը՝ 5, էլեկտրաէներգիայինը՝ 11 անգամ։ Այս բոլորի շնորհիվ Բրազիլիան 60-ական թվականների մոտերքին մեքենաների և սարքավորման իր պահանջարկի մինչև 2/3-ը բավարարում էր տեղական արտադրության հաշվին։ Ազգային համախառն արտադրանքի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը ավելացավ և 1949 թ. 23,2 %-ից 1969 թ. հասավ մինչև 31,4 %-ի։ Կտրուկ կերպով ուժեղացավ արտադրության և կապիտալի համակենտրոնացումը։ Ըստ 1960 թ. հաշվեգրման տվյալների խոշոր ֆաբրիկաների և գործարանների 2,3 %-ը արտադրում էին ամբողջ համախառն արտադրանքի (ըստ արժեքի) 61 %-ը և կենտրոնացրել էին արդյունաբերության ամբողջ վարձու աշխատանքի 55,2 %-ը։ Երկրում առաջացան տեղական մոնոպոլիստական միավորումներ և «Ինդուստրիաս-ռեունիդաս Մատարազզոս», «Ի. Ռ. Վոտորանտին», «Ի. Ռ. Սիմոնսեն», «Ի. Ռ. Ժաֆֆետ» և այլ կոնցեռները, որոնք սերտորեն կապված էին արտասահմանյան կապիտալի հետ։

60-ական թվականների մոտերքին ազգային մոնոպոլիաներ առաջացան ոչ միայն արդյունաբերության մեջ, այլև բանկային գործերում, սկսվեց բանկային և արդյունաբերական կապիտալի սերտաճը։ 300—350 ամենահարուստ ընտանիքների խումբը կազմում էր տեղական ֆինանսաարդյունաբերական օլիգարխիայի հենարանը։ 20 խոշորագույն ընկերությունների տեսակարար կշիռը մեքենաշինության, պլաստմասսաների արտադրության, հանքային հումքի հանույթի և այլ արտադրության մեջ հասավ 70 %-ի։ Էկոնոմիկայում աճեց պետության դերը։ Նա լիովին վարում էր երկաթուղիները, կարգավորող ազդեցություն էր գործում ֆինանսական համակարգի վրա։ Նրա տրամադրության տակ էին գտնվում Բրազիլիայի կենտրոնական բանկը, մասնագիտացված երկարատև կապիտալ ներդրումների բանկերը, սուրճի ինստիտուտը, շաքարի ինստիտուտը և մի շարք այլ կարևոր լծակներ։ Պետական կապիտալ ներդրումների տեսակարար կշիռն աճեց և 1947 թ. կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 18,6 %-ից 1965 թ. հասավ 77,8 %-ի։

Պետական հատվածի զարգացումը էական փոփոխություններ մտցրեց տնտեսական կառուցվածքում։ 1954 թ., երբ «Պետրոբրաս» պետական նավթա-

յին ընկերությունն սկսեց իր գործունեությունը, նավթի հանույթը ծածկում էր երկրի պահանջմունքների միայն 2 %-ը, իսկ 1968 թ. արդեն 40 %-ը։ 1962 թ. ստեղծվեց «էլեկտրոբրազ» պետական ընկերությունը, այնուհետև «Ատոմբրազը»։ 60-ական թվականներին կազմակերպվեցին երկու նոր մետալուրգիական կոմբինատներ («Կոսիպան», «Ուզիմինասը»), սկսվել էր խոշոր էլեկտրակայանների կառուցումը և այլն։ Պետական հատվածին բաժին էր ընկնում բոլոր արտադրանքի մինչև 1/3-ը, պողպատի ձուլման 66 %-ը, բենզինի արտադրության՝ 77 %-ը, էլեկտրաէներգիայի՝ 25 %-ը, սինթետիկ կաուչուկի՝ 100 %-ը։ 1946—1970 թթ. ընթացքում ընդունվեց տնտեսական և սոցիալական զարգացման համապետական յոթ ծրագիր, տրանսպորտի զարգացման հինգ պլան, երկու պլան ածխարդյունաբերության գծով, մի շարք ռեգիոնալ ծրագրեր (Ամազոնի, Հյուսիս-արևելքի և այլ շրջանների համար)։ Այս բոլորը վկայում էր տեղական կապիտալիզմի և ինդուստրացման դիրքերն ամրապնդելու շահերից բխող՝ էկոնոմիկայում պետական կարգավորման դերի աճման մասին։

Արդյունաբերության զարգացումը և պետական-մոնոպոլիստական միտումների ուժեղացումն ընթանում էր մասնավոր խոշոր հողատիրության պահպանման և արտասահմանյան իմպերիալիզմից տնտեսապես կախվածությունն ուժեղանալու պայմաններում։ Ըստ 1960 թ. հաշվեգրման երկրում կար ավելի քան 1000 հեկտարի չափով 32,6 հազար լատիֆունդիա (1940 թ. կար այդ տիպի 25,8 հազար լատիֆունդիա), որին բաժին էր ընկնում ամբողջ հողատարածության 47,2 %-ը, չնայած այդ լատիֆունդիաներից շատերը նշանակալիորեն բուրժուականացել էին, վերածվել ձեռնարկատիրական կալվածքների։ Դրա հետևանքով հողի մասնավոր խոշոր սեփականատիրությունը այդպես էլ չէր վերացվել։ Միայն 1966 թ. ընդունվեց հողային ստատուտը, որը պետությանը կալվածատիրական հողերը փրկագնով, բռնագրավելու իրավունք էր տալիս, սակայն գործը դրան չհասավ։ Լատիֆունդիզմի պահպանումը կաշկանդում էր արտադրողական ուժերի զարգացումը, խանգարում ներքին շուկայի աճին, հանդիսանում աշխատավոր զանգվածների աղքատության հիմնական պատճառներից մեկը։

Կապիտալիզմի զարգացումը հողագործության մեջ ուղեկցվում էր գգալի թվով գյուղացիների հողազրկմամբ։ Ըստ 1960 թ. հաշվեգրման երկրում հաշվվում էր ավելի քան 1,5 միլիոն տնտեսություն, որոնք ունեին մինչև 10 հեկտար հողատարածություն։ Բայց գյուղական աշխատավորների հիմնական զանգվածը ընդհանրապես սեփական հող չուներ և ստիպված էր կա՛մ այն ստրկական պայմաններով վարձակալել, կա՛մ բատրակ դառնալ։ 10 միլիոն գյուղական աշխատավորների հողազրկություն և ստրկացում՝ այսպիսին էր բրազիլացիների ճակատագիրը։

Բրազիլիայի և նրա էկոնոմիկայի վրա ծայրահեղ բացասական ազդեցություն է գործում օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալը, որը երկրից հսկայական շահույթներ է կորզում։ 1950 թ. մոտերքին օտարերկրյա կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը ավելացավ մինչև 1,3 միլիարդով, իսկ 1966 թ. մոտերքը նա համարյա եռապատկվեց, կազմելով 3,5 միլիարդ դոլար։ Գերիշխող դիրքեր գրավեցին ԱՄՆ-ի մոնոպոլիաները։ 50-ական թվականների վերջից մրցակցային համառ պայքար ծավալվեց Արևմտյան Գերմանիայի, Ճապոնիայի և ԱՄՆ-ի միջև։ 1968 թ. ԳՖՀ-ի մասնավոր ուղղակի ներդրումները Բրազիլիայում գերազանցեցին 1 միլիարդ մարկից (250 միլիոն դոլար)։ ԱՄՆ-ին բաժին էր ընկնում ավելի քան 1,2 միլիարդ դոլար (1940 թ. 240 միլիոն դոլարի համեմատությամբ)։ Օտարերկրյա մոնոպոլիաները 1946-

ից մինչև 1960 թ. Բրազիլիայից դուրս տարան մոտ 2 միլիարդ դոլարի մաքուր շահույթ։

Իմպերիալիստական թալանը ծանր էր ազդում երկրի բնակչության նյութական դրության վրա։ Առաջին անհրաժեշտության ապրանքների գների մշտական աճը, գլխապտույտ ինֆլյացիան, մասնակի ու լրիվ գործազրկությունը, բնակարանային վատ պայմանները, աղքատությունն ու սովը ուղղակիորեն արտացոլվում էին աշխատավորների կյանքի ու կենցաղի մեջ։

Բանվորների ռեալ աշխատավարձն ընդհուպ մինչև 1957 թ. մնում էր համարյա 1939 թ. մակարդակին։ Խոշոր քաղաքների շուրջը (Ռիո դե Ժանեյրո, Սան Պաուլու, Ռեսիֆի) առաջ եկան ամբողջական «աղքատության գոտիներ», որոնցում պատսպարվում էին միլիոնավոր ընտանիքներ։ Ռիո դե Ժանեյրոյում, օրինակ, ֆավելներում (այսպես են կոչվում գետնախորշերը) ապրում էր ավելի քան 1,2 միլիոն մարդ։ Այս բոլորը վկայում է այն մասին, որ կապիտալիզմի զարգացումը չհասցրեց սոցիալ-տնտեսական հասունացած պրոբլեմների լուծմանը։

Միաժամանակ նշանակալիորեն փոփոխվեց բրազիլական հասարակության սոցիալական կառուցվածքը։ Ամենամեծ դասակարգը դարձավ պրոլետարիատը (1960 թ. 10—11 միլիոն մարդ), շատ գյուղացիներ վերածվեցին պրոլետարների և բատրակների։ Խոշոր ֆաբրիկային արտադրությունում համակենտրոնացավ արդյունաբերական բոլոր բանվորների և ծառայողների 63 %-ը։ Գյուղում վարձով աշխատում էր մոտ 5 միլիոն մարդ։ Դա նշանակում է, որ պրոլետարական խավերը բրազիլական գյուղում գերազանցում էին հողատեր գյուղացիների թվին (3 միլիոն մարդ)։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում Բրազիլիայի սոցիալ-տնտեսական զարգացման տեղաշարժերը, հասարակության դասակարգային կառուցվածքի փոփոխությունը, կապիտալիզմի սոցիալական անտագոնիզմի սրումը պայմանավորեցին քաղաքում և գյուղում դասակարգային պայքարի աճը, հակաիմպերիալիստական շարժման մասսայական թափը։

Բանվորական և հակաիմպերիալիստական շարժման վերելքը (1960—1964)

Կուբայի հեղափոխության հաղթանակը խոշոր ներգործություն ունեցավ ամբողջ Լատինական Ամերիկայի, այդ թվում և Բրազիլիայի վրա։ Մինչև այդ աշխատավորները դեմոկրատիայի և ազգային ինքնուրույնության պաշտպանության պայքարի քիչ փորձ չէին կուտակել, ամրապնդվել և կոփվել էր պրոլետարիատը։ Բրազիլիայի կոմունիստական կուսակցությունն իր 5-րդ համագումարում (1960) մշակեց կառուցվածքային ռեֆորմների համար պայքարի, զանգվածային շարժման պաշտպանության ծավալուն ծրագիր։

1955—1959 թթ. գործադուլավորների ընդհանուր թիվը տարեկան կազմում էր մոտավորապես 700—800 հազար մարդ, 1960 թ. այն հասավ 1,5 միլիոնի, 1961 թ. 2 միլիոն մարդու։ Ամենուրեք ստեղծվում էին ազգային մասսայական կազմակերպություններ, գյուղացիական միություններ։

1961 թ. հունվարին իշխանության գլուխ անցավ բուրժուական երկու կուսակցությունների՝ նացիոնալ-դեմոկրատական միության և քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության, կոալիցիայի թեկնածու Ժ. Կուադրոսի կառավարությունը։ Նոր կառավարությունը աշխատավորների ճնշման տակ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի հետ և ընդարձակեց տնտեսական կապերը ՍՍՀՄ-ի ու սոցիալիստական մյուս երկրների հետ։ Կուադրոսը հայտարարություն արեց Կուբայի ժողովրդի ինքնորոշման իրավունքը պաշտպանելու վերաբերյալ։ Կուադրոսի ինքնուրույն արտաքին քաղաքական կողմնորոշումը, բրազիլական էկո-

նոմիկան բուրժուառեֆորմիստական դիրքերից պաշտպանելու փորձերն առաջ բերեցին ռեակցիոն շրջանների դժգոհությունը։ Զինվորականությունը, ԱՄՆ-ի մոնոպոլիստների դրդմամբ, դավադրություն կազմակերպեց Կուադրոսի դեմ, և 1961 թ. օգոստոսի 25-ին նա ստիպված էր հրաժարական տալ։ Երկրում քաղաքական լուրջ ճգնաժամ բռնկվեց։

Ժողովրդական լայն զանգվածները պայքարի ելան երկրում զինվորական դիկտատուրա հաստատելու ռեակցիայի փորձերի դեմ, դեմոկրատական օրինականությունը պաշտպանելու և պրեզիդենտի պոստը փոխպրեզիդենտ Ժ. Գուլարտի զբաղեցնելու օգտին։ Երկրում զինվորական դիկտատուրա հաստատելու ռեակցիայի փորձը ձախողվեց։ Սահմանադրության համաձայն պրեզիդենտ դարձավ Ժ. Գուլարտը։ 1961 թ. նոյեմբերի 23-ին Գուլարտի կառավարությունը վերականգնեց ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները։ 1961 թ. վերջին Բրազիլիայում հիմնադրվեց ազգային ազատագրության ճակատը, որը միավորեց ամերիկյան իմպերիալիզմի և լատիֆունդիզմի դեմ պայքարի, արմատական դեմոկրատական վերափոխումների և Բրազիլիայի առաջադեմ արտաքին քաղաքականության լայն ծրագրի իրականացման օգտին հանդես եկող երկրի քաղաքական ուժերը։

50-ական թվականների վերջին և 60-ական թվականների սկզբին նկատելիորեն բարձրացավ բանվոր դասակարգի քաղաքական ակտիվությունը։ 1962—1963 թթ. գործադուլավորների տարեկան թիվը հասնում էր 2—3 միլիոն մարդու։ Կազմակերպվեցին համազգային խոշոր գործադուլներ, պահանջելով անցկացնել կառուցվածքային խոր ռեֆորմներ։ 1961 թ. նոյեմբերին Բելու Օրիզոնտի քաղաքում կայացավ գյուղական աշխատավորների ազգային 1-ին կոնգրեսը, որը որոշում ընդունեց ագրարային ռեֆորմ անցկացնելու անհրաժեշտության մասին։ Ազգային զանգվածային շարժումը, որին ակտիվորեն մանակցում էին բանվորները, քաղաքային միջին խավերը, գյուղացիները, տեղական բուրժուազիայի որոշ խմբեր, շատ զինծառայողներ, դարձավ երկրի կյանքի քաղաքական կարևոր գործոնը։ Հայրենասիրական և հակաիմպերիալիստական լոզունգները գնալով հաճախ էին լրացվում հեղափոխական սոցիալական բովանդակությամբ։

1962 թ. հունիսին և սեպտեմբերին անցկացվեցին համազգային գործադուլներ, որոնց մասնակցեցին մինչև 1,5 միլիոն բանվորներ և ծառայողներ։ Նրանք հանդես էին գալիս դեմոկրատիայի և կառուցվածքային ռեֆորմների պաշտպանությամբ։ Աստիճանաբար պայմաններ ստեղծվեցին միասնական ժողովրդական ճակատի մեջ բոլոր հակաիմպերիալիստական և հակաֆեոդալ-խիական ուժերի համախմբման համար։ Ազգային ազատագրության ճակատի, կոնգրեսում Գուլարտի կողմնակիցներին միավորող ազգային պառլամենտական ճակատի, տեղական հայրենասիրական կազմակերպությունների բազայի վրա հիմնադրվեց ժողովրդական մոբիլիզացման ճակատը, որը շփման մեջ մտավ արհմիութենական կազմակերպությունների հետ։ 1964 թ մարտի 13-ին կայացած հարյուր հազարանոց միտինգը հավանություն տվեց գործողությունների միասնական ծրագրին։ Պրեզիդենտ Գուլարտը այդ միտինգում պաշտպանեց օտարերկրյա մոնոպոլիաների և տեղական օլիգարխիայի դիրքերը սահմանափակելու նպատակով ռեֆորմներ անցկացնելու ծրագիրը։ Մարտի 23-ին մամուլում տպագրվեց ժողովրդական ճակատի ծրագիրը, որը խորը կառուցվածքային ռեֆորմների (ագրարային, հարկային և այլն), դեմոկրատիայի ընդարձակման և ազգային անկախությունը պաշտպանելու պահանջ էր առաջադրում։

Զախ ուժերի նկատվող միավորումը, կոմունիստական կուսակցության

հեղինակության աճը, Գուլարտի դեպի ձախ շրջվելը լրջորեն անհանգստացրին ռեակցիային։ Ժողովրդական ճակատի ծրագրի հրապարակումից մի շաբաթ անց, 1964 թ. մարտի 31-ից—ապրիլի մեկին, ԱՄՆ-ի մոնոպոլիաների օժանդակությամբ զինվորական ռեակցիոն հեղաշրջում կատարվեց։ Գուլարտի կառավարությունը տապալվեց, երկրում հաստատվեց զինվորական դիկտատուրա։ Բրազիլիայի առաջադեմ ուժերը ծանր պարտություն կրեցին։

Ազգային բուրժուազիայի և նրա քաղաքական պարագլուխների կապիտուլյանտական վարմունքը, ժողովրդական զանգվածների վրա հենվելուց Ժ. Գուլարտի հրաժարվելը նպաստեցին ռեակցիայի արագ հաղթանակին։ Արհմիութենական տարաբալիստական բյուրոկրատիան այդ իրադրության մեջ շփոթվածություն և պասսիվություն հանդես բերեց։ Ժողովրդական ճակատը դեռ չէր հասցրել համախմբել իր ուժերը։ Գյուղացիությունը պայքարից մի կողմ էր մնացել։ Պարտության գլխավոր պատճառը, Լ. Կ. Պրեստեսի խոսքերով ասած, այն էր, որ հեղաշրջման նախօրյակին ձախերը «դեռևս գտնվում էին ուժերի կուտակման փուլում և շատ հեռու էին բանվոր դասակարգի և գյուղացիության մեծամասնությունը նվաճելուց»։

Զինվորական դիկտատուրան և նրա քաղաքականությունը

Հեղաշրջումը երկրում արմատապես փոխեց դասակարգային ուժերի տեղաբաշխումը։ Իշխանության գլուխ անցան զինվորականության և խոշոր բուրժուազիայի ամենառեակցիոն խավերը, Կաստելո Բրանկոյի գլխավորությամբ, որին պաշտպանում էին ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի, Անգլիայի մոնոպոլիաները։ Հեղաշրջումից հետո առաջին օրերին երկրում ամբողջ իշխանությունը փաստորեն իրականացնում էր բանակը։ Մեկ շաբաթ անց, 1964 թ. ապրիլի 9-ին, երեք զինվորական մինիստրներ, որ կազմավորեցին «հեղափոխական հրամանատարություն», վերացրին 1946 թ. սահմանադրությունը և հայտարարեցին կոնգրեսի արձակումը։ Դեմոկրատական երաշխիքները և քաղաքացիների քաղաքական իրավունքները 6 ամսով «դադարեցվեցին»։ Երկրում մտցվեց տեռորի ու բռնության ռեժիմ։ Հազարավոր մարդիկ ձերբակալվեցին և 10 տարով զրկվեցին քաղաքական իրավունքներից։ Բոլոր քաղաքական կուսակցություններն արձակվեցին, շատ արհմիություններ փակվեցին։ Կոմունիստական կուսակցության լեգալ գործունեությունն արգելվեց։ Այս բոլորը հասցրեց բանվորական և հակաիմպերիալիստական շարժման խոր ու երկարատև անկման։

Զինվորական դիկտատուրայի տարիներին աշխատավորների տնտեսական դրությունը կտրուկ կերպով վատացավ, ռեալ աշխատավարձը կրճատվեց, շարունակվում էր ինֆլյացիան, գործազրկությունը հասավ հսկայական չափերի։ Մարշալ Կաստելո Բրանկոյի (1964—1967) և մարշալ Կոստա ի Սիլվայի (1967—1969) կառավարությունը ներքին քաղաքականության մեջ գլխավոր խնդիրը համարում էր զանգվածային դեմոկրատական շարժման դաժան ճնշումը։ Միաժամանակ զինվորական դիկտատուրան դռները բացում էր օտարերկրյա կապիտալի լայն ներհոսման համար։ Սենատոր Օսկար Պասոսի խոսքերով ասած՝ երկրի նոր իրադրությունը բնորոշ էին «սովը, դժգոհությունը, գործազրկությունը, տնտեսական լճացումը, անարդարությունը, ճնշումը, կաշառակերությունը, ժողովրդի վզին անցանկալի ղեկավարների փաթաթումը»։ Այդպիսին էին հեղաշրջման հետևանքները, հեղաշրջում, որը պաշտոնական շրջաններն անվանեցին «առողջացնող դեմոկրատական հեղափոխություն»։

Նոր ռեժիմը դիմեց արտակարգ օրենքների, որոնք սկսում են գործել 1967 թ. հաստատված սահմանադրության կողքին, քաղաքական օպոզիցիայի հնարավորությունը կտրուկ կերպով սահմանափակվում է։ Ձևականորեն

թույլատրվում է երկու՝ ազատագրման ազգային միություն (կառավարող) և բրազիլական դեմոկրատական շարժում (օպոզիցիոն) կուսակցությունների գործունեությունը։ Իրականում ամբողջ իշխանությունը կենտրոնացվում է զինվորականների ձեռքին։ Տնտեսական բնագավառում կառավարության զինվորականները պետական-մոնոպոլիստական կառուցվածքին անցնելու նպատակով խթանում էին տեղական մոնոպոլիաներ ստեղծելու պրոցեսը։ Այդ ճանապարհին զոհ գնացին ոչ միայն աշխատավորների, այլև տեղական մանր և միջին բուրժուազիայի նշանակալի խավերի շահերը։

1967 թ. դեկտեմբերին ԲԿԿ-ն, խոր ընդհատակի պայմաններում, կարողացավ անցկացնել կուսակցության 6-րդ համագումարը, որը ժողովրդին կոչ արեց միավորվել պայքար մղելու ռեակցիայի և զինվորական դիկտատուրայի դեմ։ Չնայած հսկայական դժվարություններին և խոչընդոտներին, աշխատավորները ակտիվ գործողություններ ծավալեցին զինվորական դիկտատուրայի դեմ։ 1970 թ. ակտիվացավ ուսանողական շարժումը։ Սկսեցին պայմաններ ստեղծվել միասնական հակադիկտատորական ճակատի ստեղծման պայքարի համար։

Պրեզիդենտ, գեներալ Մեդիսին, որը պետության ղեկավարի պոստը գրավեց 1969 թ. վերջին, երկրի սոցիալական հակասությունները մեղմացնելու նպատակով անհրաժեշտ համարեց փոխել քաղաքական կուրսը։ Սակայն գործն այդպես էլ մեռյալ կետից չշարժվեց։ Զինվորական դիկտատուրան տեղական մոնոպոլիստական բուրժուազիային անհրաժեշտ էր որպես զանգվածային հեղափոխական շարժումը ճնշելու և կապիտալիստական պետական-մոնոպոլիստական ձևերն արագորեն ձևավորելու միակ երաշխիք։

Զինվորական դիկտատուրան աշխատավարձը սառեցնելու միջոցով կարողացավ որոշ չափով կրճատել ինֆլյացիան, հասնել տնտեսական ակտիվացման բարձրացմանը։ Բուրժուական պրոպագանդան ամեն կերպ գովաբանում էր այն փաստը, որ ազգային համախառն արտադրանքի ծավալը տարեկան միջին հաշվով ավելացել էր 9 %-ով, բայց լռում էր այն մասին, որ դա ձեռք էր բերվել աշխատանքի արտակարգ ինտենսիվացման, բանվորների ռեալ աշխատավարձը մոտավորապես 35—40 %-ով կրճատելու ուղիով։

Ներքին սոցիալական հակասությունների աճն անխուսափելիորեն հասցրեց հակադիկտատորական տրամադրությունների ուժեղացմանը։ Երկրում սկսվեց այն ուժերի համախմբման պրոցեսը, որոնք հանդես էին գալիս կառավարման դեմոկրատական ձևերի վերականգնման օգտին։ Դա ազդեց այն բանի վրա, որ պրեզիդենտ Գեյզելն (այդ պոստը նա գրավեց 1974 թ.) սկսեց հակվել դեպի ավելի ճկուն սոցիալական քաղաքականության կողմը, այն հաշվով, որպեսզի արգելակի հեղափոխական տրամադրությունների աճը։ Բայց այդ խնդիրը կատարել չհաջողվեց։

Սկսած 1968 թվականից երկրում անշեղորեն աճում էր խմորումը։ Մի շարք քաղաքներում անցկացվեցին հակադիկտատորական միտինգներ և ցույցեր, կազմակերպվեցին գործադուլներ։ Աստիճանաբար սկսում է վերածնվել առաջադեմ արհմիությունների գործունեությունը։ Զինվորական դիկտատուրայի դեմ, դեմոկրատիայի վերականգնման համար հանդես եկավ նաև կաթոլիկական եկեղեցին, որը ուղի էր հարթում դեմոկրատական ճակատի ընդարձակման համար։

ԳԼՈՒԽ 27

ՉԻԼԻ

Չիլիի սոցիալ-տնտեսական զարգացումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Հետպատերազմյան ժամանակաշրջանը բնութագրվում է Չիլիի էկոնոմիկայում ամերիկյան կապիտալի էքսպանսիայի աճով։ ԱՄՆ-ի միայն ուղղակի երկարատև ներդրումները 1948-ից մինչև 1959 թ. աճեցին համարյա եռակի չափով։ 1960 թ. մոտերքը երկրի արտաքին պարտքը գերազանցեց 1 միլիարդ դոլարը։ Ամերիկյան մոնոպոլիաները զավթեցին Չիլիի արդյունաբերության շատ ճյուղերի, ամենից առաջ լեռնահանքայինի հիմնական դիրքերը, որին բաժին էր ընկնում այդ երկրում ԱՄՆ-ի կապիտալ ներդրումների 90 %-ը։ Ամերիկյան չորս ընկերություններ՝ «Չիլի կորպորեյշնը», «Սանտյագո Մայնինգը», «Անդես Կոպպեր մայնինգը» («Անակոնդան») և «Բրեդեն Կոպպերը» («Կեննեկոտը»), վերահսկում էին չիլիական պղնձի արտադրության 95 %-ը։ Չիլիական երկաթի խոշորագույն հանքավայրերն ընկան ամերիկյան «Բեթլեհեմ Չիլի այրոն մայնզի» ձեռքը, սելիտրայի արտադրության 80 %-ը վերահսկում էր ԱՄՆ-ի ձեռնարկատերերին պատկանող «Անգլո-Լաուտարոյին»։ Ամերիկացիների ձեռքին էր գտնվում վերամշակող արդյունաբերության 25 %-ը։

Հետպատերազմյան տարիներին բարձր մակարդակի հասավ օտարերկրյա և ազգային կապիտալի համակենտրոնացումը։ 60-ական թվականներին 7 հազար ձեռնարկություններից 63 արդյունաբերական ընկերություններին բաժին էր ընկնում ամբողջ արտադրանքի 46 %-ը և բանվորների ու ծառայողների 42 %-ը։ 1965 թ. երկրում ամբողջ բաժնետիրական կապիտալի կեսը պատկանում էր 59 ընկերությունների։ Տասը ֆինանսատնտեսական խմբեր տիրապետում էին ազգային էկոնոմիկայում, նրանցից խոշորագույնն էր «Բանկո Սուդամերիկանոն», որը տիրում էր երկրի բաժնետիրական կապիտալի 40 %-ին։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում նշանակալի զարգացում ստացավ չիլիական արդյունաբերությունը, էկոնոմիկայում ընդարձակվեց պետական հատվածը։ 1950 թ. շարք մտավ Ուաչիպատոյի մետալուրգիական կոմբինատի առաջին հերթը։ Նույն տարում ստեղծվեց նավթային ազգային ընկերությունը (ԷՆԱՊ), որին չիլիական նավթի հետախուզման, հանույթի և վերամշակման մենաշնորհի իրավունք էր տրված։ Պետությունն իր վերահսկողության տակ վերցրեց էլեկտրաէներգիայի արտադրությունը, մասնակիորեն՝ քիմիական և մետալուրգիական արդյունաբերությունը։

Չիլիի առաջին երեք հետպատերազմյան պրեզիդենտները՝ Գոնսալես Վիդելան (1946—1952), Իբանես դել Կամպոն (1952—1958) և Խորխե Ալեսանդրին (1958—1964), վարում էին էկոնոմիկայում տեղական և արտասահմանյան խոշոր կապիտալի շահերից ելնող պետական հատվածն օգտագործելու քաղաքականություն։ Չնայած նրանք ստիպված էին ժողովրդական շարժման ճնշման տակ իրականացնել սոցիալական սահմանափակ ռեֆորմներ, ամբողջությամբ վերցրած վարում էին պահպանողական կուրս։

Պետության դերի մեծացումը, որի ձեռքերում էին կենտրոնանում բոլոր ավելի հզոր տնտեսական լծակները, հասցրեց պետական իշխանության ինստիտուտների նվաճման քաղաքական պայքարի սրմանը։

Բանվորական և դեմոկրատական շարժումը Չիլիում 1946—1964 թթ.։ Ժողովրդական շարժման նակատը

1946 թ. դեմոկրատական ալյանսը՝ ռադիկալների միությունը, կոմունիստները և սոցիալիստների մի մասը, որոնք ժառանգել էին ժողովրդական ճակատի ծրագիրը, պրեզիդենտական ընտրություններում պարտության մատնեց ռեակցիոն ուժերին։ Երկրի պրեզիդենտ դարձավ ռադիկալ Գոնսալես Վիդելան։ Կառավարության մեջ մտան կոմունիստական կուսակցության երեք ներկայացուցիչներ։ Սակայն ԱՄՆ-ի ճնշմամբ, որը հրաժարվեց անհրաժեշտ վարկեր տրամադրել կառավարությանը, և աջ ուժերի համախմբման կապակցությամբ, որոնք վախենում էին կոմկուսի ազդեցության աճից, ռեակցիան արդեն 1947 թ. անցավ հակահարձակման։ Աջերի կողմն անցավ նաև պրեզիդենտ Գ. Վիդելան։ Կոմունիստները հեռացվեցին կառավարությունից, իսկ պառլամենտը 1948 թ. ընդունեց այսպես կոչված «Դեմոկրատիայի պաշտպանության մասին» օրենքը, որն արգելում էր կոմունիստական կուսակցության գործունեությունը։ Ոստիկանությունն ավերեց կուսակցական շենքերը և առաջադեմ արհմիությունների կենտրոնները։ Ռեպրեսիաների հետևանքով բանվորական շարժումը որոշ անկում ապրեց։ Սակայն դա երկար չշարունակվեց։ Արդեն 1949 թ. բանվորական շարժման նոր վերելք նկատվեց։ 1949 թ. վերջին—1950 թ. սկզբին ամբողջ երկրով մեկ տարածվեց աշխատավարձը սառեցնելու և տրանսպորտային տարիֆները բարձրացնելու փորձերի դեմ սկսված գործադուլային շարժման ալիքը։

Բանվորական շարժման աշխուժացման իրադրության մեջ, 1951 թ. մի շարք սկզբունքային քաղաքական հարցերի գծով կարծիքների միասնության հիման վրա ստեղծվեց կոմունիստական կուսակցության և սոցիալիստների մի մասին միավորող ժողովրդի ճակատը։ Դա նպաստեց Չիլիի աշխատավորների միասնական արհմիութենական կենտրոնի ստեղծման համար պայքարի հաջողությանը։ Այդ ուղղությամբ հերոսական աշխատանք կատարեց անլեգալ դրության մեջ գտնվող Չիլիի կոմունիստական կուսակցությունը։ 1952 թ. մայիսին Սանտյագոյում կայացած միտինգում ընտրվեց արհմիութենական միասնության ազգային հանձնաժողովը։ 1953 թ. փետրվարին Սանտյագոյում կայացավ չիլիական արհմիությունների համագումարը, որին մասնակցում էին ավելի քան 1300 պատգամավորներ։ Այդ համաժողովում հռչակվեց Աշխատավորների արհմիութենական միասնական կենտրոնի (ԿՈԻՏ) ստեղծումը, որը միավորում էր կազմակերպված բանվորների և ծառայողների գերակշռող մեծամասնությանը։ Կառավարությունն ստիպված էր հրապարակել բանվորների ընտանիքների նպաստների և ծառայության տարիների համար վարձատրման երկու դեկրետ։ 1952 թ. պրեզիդենտ ընտրված Կ. Իբանեսը, ձգտելով նախօրոք ստանալ հզոր արհմիութենական կենտրոնի օգնությունը, բանվորական կազմակերպությունների ղեկավարների հետ ցուցադրական կոնսուլտացիաներ կազմակերպեց պետական քաղաքականության շուրջը, նրանց առաջարկեց մտնել կառավարության կազմի մեջ։ Սակայն Չիլիում ընթացող բանվորական շարժման ռադիկալացման պրոցեսը նշանակում էր արհմիությունների գործունեության բոլորովին այլ ուղղություն, որում բուրժուական կառավարության հետ համագործակցելու տեղ չկար։ 1959 թ. վերջին կայացած ԿՈԻՏ-ի երկրորդ կոնգրեսում ընդունվեց սկզբունքների դեկլարացիան, որում խոսվում էր «խոշոր բուրժուազիայի, հակաազգային օլիգարխիայի, իմպերիալիզմի, ռեպրեսիաների և աղքատության դեմ» վճռական պայքարի մասին։ Միասնական արհմիութենական կենտրոնը միավորում էր տարբեր քաղաքական միտումներ ունեցող աշխատավորների, բայց նրանում և նրա ղեկավարության մեջ գերակշռում էին կոմունիստներն ու սոցիալիստները՝ աշխատավորների դասակարգային շահերի ակտիվ պաշտպանները։ Այն վճռական դասակարգային դիրքը, որի վրա կանգնած էր երկրի կազմակերպված բանվորական շարժումը, խոշոր ազդեցություն էր թողնում ներքին քաղաքական իրադրության և քաղաքական կուսակցությունների վրա։

Չիլիում գոյություն ունեին մի քանի խոշոր և մանր շատ քաղաքական կուսակցություններ։ Պահպանողական և լիբերալ կուսակցությունները, որ 60-ական թվականների կեսին միավորվեցին ազգային միասնական կուսակցության մեջ, արտահայտում էին խոշոր բուրժուազիայի և լատիֆունդիստական օլիգարխիայի շահերը։ Նրանք հանդես էին գալիս ամերիկյան մոնոպոլիաների հետ դաշինքի, Չիլիում գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական կառուցվածքի պահպանման օգտին։ Խոշորագույն ցենտրիստական կուսակցությունը՝ Չիլիի քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը (ՔԴԿ) պաշտոնապես ձևավորվեց 1957 թ., ազգային ֆալանգայի և սոցիալ-քրիստոնեական կուսակցությունների միավորվելու հետևանքով։ ՔԴԿ-ն հանդես էր գալիս բուրժուական ռեֆորմիզմի դիրքերից և մեծ ազդեցություն ուներ բնակչության միջին խավերի վրա։ «Դեմոկրատիայի պաշտպանության մասին» օրենքի գործողության ժամանակաշրջանում (1948—1958) սոցիալ-քրիստոնեական հոսանքը բանվորական շարժման մեջ կարող էր որոշակի ազդեցության հասնել։ Բայց հաջորդ տարիներին, բանվորական կազմակերպությունների և միջին խավերի է՛լ ավելի վճռական հակաիմպերիալիստական ու հակակապիտալիստական դիրքերն անցնելու կապակցությամբ, ՔԴԿ-ում առաջացավ ուժեղ ձախ թևը, որը հանդես էր գալիս սոցիալական խոր վերափոխումների օգտին։

Երկար ժամանակ երկրի ամենաուժեղ կուսակցությունն էր ռադիկալ կուսակցությունը (ՌԿ)։ Սակայն ռադիկալների պարագլուխներից Գոնսալես Վիդելայի՝ դեմոկրատական շարժմանը դավաճանելը և այնուհետև կուսակցության ղեկավարության հակակոմունիստական դիրք գրավելը, պահպանողականների և լիբերալների հետ նրա դաշինքի մեջ մտնելն ուժեղ կերպով խախտեցին կուսակցության դրությունը։ Նրա ներսում սուր պայքար ծավալվեց արդյունաբերողների, բանկիրների և Հարավի խոշոր անասնապահների հետ կապված աջ թևի և ամենից առաջ պետական ծառայողների, ուսուցիչների, մասնակիորեն մասնավոր ընկերությունների ծառայողների արհմիությունների ղեկավարներին ներկայացնող ձախ թևի միջև։ Ավելի ուշ, 1967—1969 թթ. այդ պայքարը հասցրեց ձախ թևի հաղթանակին, որից հետո աջ թևը դուրս եկավ կուսակցությունից և կազմակերպեց ռադիկալ-դեմոկրատական կուսակցությունը, որը բլոկի մեջ մտավ ազգային կուսակցության հետ։

Բանվոր դասակարգի հիմնական կուսակցություններն էին կոմունիստականը և սոցիալիստականը։ Չիլիի սոցիալիստական կուսակցությունը, որը պառակտվել էր ֆրակցիաների, 1957 թ. մոտերքին, դասակարգային պայքարի սկզբունքների ճանաչման, կոմկուսի հետ երկրում խոր սոցիալական վերափոխումների համար, իմպերիալիզմի դեմ պայքարի բազայի հիման վրա, հասավ իր շարքերի որոշ համախմբման։

Երկրի բոլոր դեմոկրատական և հակաիմպերիալիստական ուժերի ձգողության կենտրոնը Չիլիի կոմունիստական կուսակցությունն էր (ՉԿԿ)։ Հետպատերազմյան տարիներին ՉԿԿ-ն տասը տարի (1948 թվականից մինչև 1958 թ.) գտնվում էր անլեգալ դրության մեջ։ Սակայն նա կարողացել էր իր ազդեցությունը պահպանել բանվորական շարժման վրա։

Կոմունիստական կուսակցությունը բոլոր ձախ ուժերը համախմբելու համար ջանքեր էր գործադրում։ 1956 թ. փետրվարին այդ ջանքերը պսակվեցին մեծ հաջողությամբ՝ ժողովրդական ճակատը վերակառուցվեց ավելի լայն ժո-

ղովրդական գործողությունների ճակատի (ՖՌԱՊ), որի մեջ մտան կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունները, ինչպես նաև մի շարք մանր քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ։

Ժողովրդական գործողությունների ճակատի ամրապնդմանը նպաստեցին ՉԿԿ-ի 10-րդ համագումարի (1956 թ. ապրիլ) որոշումները, որոնք նշեցին, որ Չիլիում «հիմնականն այն հակասություններն են, որոնք գոյություն ունեն մի կողմից, ամերիկյան իմպերիալիզմի, լատիֆունդիական օլիգարխիայի, չիլիական խոշոր կապիտալիզմի, և մյուս կողմից, երկրի բնակչության հրսկայական մեծամասնության միջև...»[1]։ Համագումարն ընդունեց կուսակցության նոր ծրագիրը և հակաիմպերիալիստական ուժերին միասնության կոչ արեց դեմոկրատական, հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության իրականացման համար մղվող պայքարում։ 1956 թ. դեկտեմբերին կայացավ ՖՌԱՊ-ի առաջին կոնֆերանսը, որտեղ մշակվեց գործողությունների լայն ծրագիր, ներառյալ օտարերկրյա մոնոպոլիաներն ազգայնացնելու, երկրի դեմոկրատականացման, ագրարային ռեֆորմներ անցկացնելու, անկախ և խաղաղասիրական արտաքին քաղաքականության, աշխատավորների դրությունը թեթևացնելուն կոչված միջոցառումներ իրականացնելու պահանջներ։

Բանվորական և դեմոկրատական շարժման միասնության հասնելու հաջողությունները ձախ ուժերին հնարավորություն տվեցին 50-ական թվականների վերջին հասնելու իրենց դիրքերի ամրապնդմանը։ 1958 թ. վերացվեց ՉԿԿ-ի գործունեությունն արգելող «Դեմոկրատիայի պաշտպանության մասին» օրենքը։

ՖՌԱՊ-ի ուժերի և հնարավորությունների խոշոր փորձարկում եղան 1958 թ. պրեզիդենտական ընտրությունները։ Այդ ընտրություններում որպես գլխավոր մրցակիցներ հանդես եկան պահպանողականների և լիբերալների թեկնածու Խ. Ալեսանդրին և ՖՌԱՊ-ի թեկնածու, սոցիալիստ Սալվադոր Ալիենդեն։ Առաջինը կարողացավ հաղթանակ տանել նվազագույն առավելությամբ։ Նա ստացավ մոտ 386 հազար ձայն (31 %, իսկ Ս. Ալիենդեն՝ 354 հազար ձայն (28 %)։ Ընտրությունների արդյունքները հեղափոխական ուժերի մեծ հաջողությունն էին, որ վկայում էին այն մասին, թե Չիլիի պայմաններում հեղափոխական ուժերը, հենվելով աշխատավորների միասնական շարժման և բանվոր դասակարգի կուսակցությունների՝ կոմունիստականի ու սոցիալիստականի, քաղաքական դաշինքի վրա, և օգտագործելով պառլամենտը կարող են անցնել իշխանության գլուխ։

1958 թ. հետո կոմունիստները և սոցիալիստներն ամրապնդեցին իրենց դիրքերը ԿՈՒՏ-ում. 1962 թ. ԿՈՒՏ-ի երրորդ կոնգրեսում ղեկավարության մեջ ընտրվեցին 6 կոմունիստներ, 5 սոցիալիստներ, 3 քրիստոնեական դեմոկրատներ և 1 ռադիկալ։ Կոմունիստների հետ մշտական կոնտակտների ազդեցությամբ սոցիալիստական կուսակցության մեջ ուժեղացավ ՉԿԿ-ի հետ դաշինքն ամրապնդելու ձգտումը։

60-ական թվականների առաջին կեսին շարունակվում էր բանվորական, դեմոկրատական և հակաիմպերիալիստական շարժման միասնության ամրապնդման, հեղափոխական դիրքեր նրա անցման պրոցեսը։ Ուժեղանում էր գործադուլային շարժումը։ Ուսանողները պայքարի էին ելնում համալսարանական ռեֆորմի համար։ Գործադուլներ էին անում ուսուցիչները, բանկային ծառայողները։ Ագրարային ռեֆորմի համար պայքարի էին ելնում գյուղացիները։ Հանձին ԿՈՒՏ-ի հզոր հեղափոխական արհմիութենական կազմակերպության գործունեությունը և ՖՌԱՊ-ում կոմունիստների ու սոցիալիստների միասնությունը երկրում ստեղծեցին քաղաքական ուժերի այնպիսի տեղաբաշխում, որի պայմաններում պահպանողական քաղաքականությանը տեղ չէր մնում։

Այդ իրադրության մեջ, 1964 թ. պրեզիդենտական ընտրություններում պահպանողականները և լիբերալները միայն իրենց թեկնածությունը հանելով հօգուտ ՔԴԿ-ի պարագլուխ Էդուարդո Ֆրեյի, որն ընտրողներին «Հեղափոխություն՝ ազատության պայմաններում» լոզունգով առաջարկեց բուրժուական ռեֆորմների լայն ծրագիր, կարողացան խանգարել ՖՌԱՊ-ի հաղթանակին։ Կատաղի պայքարը, որն ուղեկցվում էր հակակոմունիստական հիստերիայով, վերջացավ Է. Ֆրեյի հաղթանակով, որն ստացավ ընտրողների ձայների մոտ 55 %-ը։ ՖՌԱՊ-ի թեկնածու Ս. Ալիենդեն հասավ ընտրողների 38,6 %-ի պաշտպանությանը, որն ինքնըստինքյան հեղափոխական ուժերի մեծ նվաճումն էր։

Է. Ֆրեյի կառավարության ներքին քաղաքականությունը (1964—1970)

Դառնալով երկրի պրեզիդենտ, չիլիական քրիստոնեական դեմոկրատների պարագլուխ Էդուարդո Ֆրեյը փորձեց բուրժուառեֆորմիստական մեթոդներով լուծել երկրի առջև կանգնած պրոբլեմները։ «Հեղափոխություն՝ ազատության պայմաններում»-ի կենտրոնական առանցքը պետք է կազմեր ագրարային ռեֆորմը։ Քրիստոնեական դեմոկրատների կառավարությունը խոստացել էր հօգուտ գյուղացիների անցկացնել հողային սեփականության լուրջ վերաբաշխում։ Ագրարային ռեֆորմի մասին 1967 թ. հրապարակված օրենքը հնարավորություն էր տալիս դա կատարել։ Սակայն Ֆրեյի կառավարությունը միայն մասնակիորեն վերաբաշխեց կալվածատիրական հողերը, որի մեծ մասը մնաց նրա տերերի ձեռքին։ Միայն 20 հազար գյուղացիական տնտեսություններ բաժնեհող ստացան իբրև սեփականություն, այն ժամանակ, երբ սկզբում նախատեսված էր հող բաժանել 100 հազար ընտանիքների։ Գյուղատնտեսության մեջ խրախուսվում էր կոոպերացումը, վերացվեցին գյուղում արհմիություններ կազմակերպելու սահմանափակումները։ Դա նպաստեց 60-ական թվականների երկրորդ կեսին գյուղատնտեսական բանվորների և գյուղացիների խոշոր արհմիությունների հանդես գալուն։ Ընդ որում ՔԴԿ-ն ձգտում էր գյուղի և քաղաքի մինչև այդ անկազմակերպ աշխատավորների սինդիկալացման պրոցեսը դնել իր վերահսկողության տակ։

Դեմոքրիստոնեական կառավարությունը հռչակեց լեռնահանքային արդյունաբերության՝ չիլիական ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղի, «չիլիացման» քաղաքականությունը։ Դրա գործնական իրականացումն սկսվեց 1967 թվականից, երբ պետությունը ամերիկյան «Սոսիեդադմիներա էլ-Տենյենտե»-ի հետ համաձայնեցված ձևոք բերեց այդ ընկերության բաժնետոմսերի 51 %-ը։ Համանման համաձայնագրեր կնքվեցին երկրում գղնձի հանույթը և արտադրությունը վերահսկող մյուս ընկերությունների հետ։ Կառավարությունը նկատի ուներ պղնձի հանույթը 1972 թ. մոտերքին ավելացնել կրկնակի չափով։ Սակայն ամերիկյան ընկերությունները, չհավատալով երկրում քաղաքական դրության կայունությանը, սկսեցին կրճատել արտադրությունը։ «Անակոնդա» պղնձի ամենամեծ ընկերությունը հրաժարվեց պետությանը վաճառել իր բաժնետոմսերի 51 %-ը։ 1959 թ. վերջին կառավարությունը հասարակայնության ճնշման տակ հանդգնեց դիմել այդ ընկերության ազգայնացմանը, ավելի ճիշտ երեք տարվա ընթացքում նրա բոլոր

[1] «X съезд Коммунистической партии Чили», М., 1957, стр. 23.

բաժնետոմսերի գնմանը։ Գնման գինն այնքան բարձր էր, որ արդարացի բողոք առաջացրեց երկրի առաջադեմ ուժերի շրջանում։ Բացի այդ, տեխնիկական համագործակցության համաձայնագրով օտարերկրյա կապիտալը պահպանում էր ընկերության վերահսկման զգալի բաժինը։

Է. Ֆրեյի կառավարման ժամանակաշրջանում է՛լ ավելի ամրապնդվեց օտարերկրյա և ազգային մոնոպոլիաների հետ պետական հատվածի միավորման միտումը։

ՔԴԿ-ի բարենորոգչությունն անկարող եղավ երկիրը դուրս բերել եղած դժվարություններից և կանգնեցնել դասակարգային պայքարի զարգացումը։ Գյուղատնտեսությունը մնում էր լճացման մեջ, շարունակվում էր գների աճը, ընկավ էսկուդոյի կուրսը։ 1967 թվականից նոր բարձրության հասավ գործադուլային շարժումը, որը կապված էր աշխատավորների հաշվին երկրի ինդուստրացումը ֆինանսավորելու և բանվոր դասակարգի գործադուլ անելու իրավունքը սահմանափակելու կառավարության փորձերի հետ։ Գործադուլները գնալով հաճախ էին քաղաքական բնույթ ստանում։ Չիլիի պրոլետարիատի պայքարի քաղաքական բնույթը հատկապես փայլուն կերպով դրսևորվեց 1969 թ. հոկտեմբերին, երբ ի պատասխան պետական հեղաշրջում կատարելու ռեակցիոն զինվորականության փորձի, ամբողջ երկրի աշխատավորները դադարեցին աշխատանքը և գրավեցին ձեռնարկությունները։ Աշխատավորների ելույթը հեղաշրջման ձախողման գլխավոր պատճառն էր։

ՔԴԿ-ին չհաջողվեց ո՛չ ԿՈԻՏ-ին իր ազդեցությանը ենթարկելու, ոչ էլ զուգահեռ արհմիութենական կենտրոն ստեղծելու փորձը։ Չնայած գյուղում ՔԴԿ-ին հայտնի չափով հաջողվեց սինդիկալացման պրոցեսն իր վերահսկողությանը ենթարկել, այնուամենայնիվ այնտեղ ևս գոյություն ուներ գյուղացիների և հնդկացիների շատ ազդեցիկ Ազգային ֆեդերացիան («Ռանկիլ»), որը կանգնած էր հեղափոխական դիրքերում։ Քաղաքում և գյուղում աշխատավորների շարժման հետ ՔԴԿ-ի կապերի ամրապնդումը հասցրեց ոչ այնքան բանվոր դասակարգի միջավայրում քրիստոնեադեմոկրատական տեսությունների տարածմանը, որքան քրիստոնեական դեմոկրատների շրջանում հեղափոխական տրամադրությունների ազդեցության ուժեղացմանը։ Իր սոցիալական կազմով խայտաբղետ այդ կուսակցության ձախ և աջ թևերի միջև սուր պայքար սկսվեց իշխանության համար, որը փոփոխական հաջողությամբ ընթանում էր մինչև 1969 թ., երբ ձախ թևի նշանավոր ղեկավարներ Ռ. Դումուսիոն, Խ. Սիլվա Սոլաբը և Ժ. Զոնչոլը դուրս եկան կուսակցությունից և ստեղծեցին ժողովրդական միասնության շարժումը (ՄԱՊՈԻ)։ Այդ նույն ժամանակամիջոցում վերջնականապես ամրապնդվեցին ձախ ռադիկալ կուսակցության դիրքերը։

1969 թ. պառլամենտական ընտրությունները ցույց տվեցին ՔԴԿ-ի ազդեցության անկումը, որը 1965 թ. 42,3 %-ի փոխարեն ստացավ ձայների մոտ 30 %-ը, այն ժամանակ, երբ կոմունիստների և սոցիալիստների օգտին քվեարկեց ընտրողների ավելի քան 28 %-ը (1965 թ. 22,7 %-ը)։ Միաժամանակ 1969 թ. ընտրությունները վկայում էին բուրժուազիայի ճամբարում ի վնաս բարենորոգչության կողմնակիցների ծայրահեղ աջ ուժերի համախմբման մասին (ազգային կուսակցությունը 1965 թ. 12,5 %-ի դիմաց ստացավ ձայների 20 %-ը)։ Երկրում նկատվում էր քաղաքական ուժերի բևեռացում։ 1969—1970 թթ. քաղաքում և գյուղում մեծ թափի հասավ դասակարգային պայքարը։ 1970 թ. մայիսին կայացավ Չիլիի պատմության մեջ առաջին գյուղատնտեսական աշխատավորների համընդհանուր գործադուլը։

«Ժողովրդական միասնության» բլոկի հաղթանակը (1970)

Ներքին քաղաքական իրադրությունը հատկապես սրվեց 1970 թ. պրեզիդենտական ընտրությունների կապակցությամբ, որոնցում ձախ ուժերը միասնական լինելու դեպքում հաղթանակի ռեալ շանսեր ունեին։ Իշխանության համար պայքարում ձախ ուժերի համախմբման գործում մեծ նշանակություն ունեցավ Չիլիի կոմունիստական կուսակցության 1969 թ. նոյեմբերին կայացած 14-րդ համագումարը։ «Մենք, կոմունիստներս,— ասված էր համագումարի ընդունած կուսակցության ծրագրում,— պայքարում ենք այն բանի համար, որպեսզի միավորենք երկրի մեծամասնությունը, կապիտալիզմի զոհերին, և նրան առաջնորդենք առաջին փուլում հակաիմպերիալիստական ու հակաօլիգարխիական հեղափոխության ուղիով և նրա անցկացրած վերափոխումների ընթացքում ուղի հարթենք արտադրական նոր հարաբերությունների՝ սոցիալիզմի համար»։ Այդ պրոցեսի շարժիչ ուժերը ծրագիրը սահմանել է հետևյալ կերպ. հեղափոխության շարժիչ ուժերն են՝ պրոլետարիատն ու գյուղացիների, ուսանողների, մտավորականության առաջավոր տարրերը և միջին խավերի լայն շրջանները... բանվոր դասակարգը չիլիական հեղափոխության գլխավոր շարժիչ ուժն է։

1969 թ. դեկտեմբերին քաղաքական ձախ կուսակցություններն ստեղծեցին ժողովրդական միասնության քաղաքական, ավելի լայն քան ՖՌԱՊ-ը, բլոկը։ Նրա մեջ մտան ՁԿԿ-ն, ՁՍԿ-ն, ռադիկալ և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, ՄԱՊՈԻ-ն և ձախերի անկախ շարժումը։ Բլոկի բոլոր մասնակիցները մշակեցին առաջիկա պրեզիդենտական ընտրությունների ծրագիրը։ Նրա հիմքում դրվեցին բնական հարստությունների, օտարերկրյա և տեղական մոնոպոլիաների ազգայնացման, լատիֆունդիզմին վերջ տվող ագրարային խոր ռեֆորմներ անցկացնելու, երկրում դեմոկրատական վերափոխումներ իրականացնելու, աշխատավորների կենսամակարդակը բարձրացնելու, անկախ արտաքին քաղաքականություն վարելու պահանջներ։ Ծրագրում պահանջներ էին բովանդակվում կրթության համակարգի ռեֆորմների, անգրագիտության վերացման, առողջապահության գծով սոցիալական միջոցառումների և այլնի վերաբերյալ։ Այդ արմատական դեմոկրատական վերափոխումների իրականացումը պետք է պայմաններ ստեղծեր հետագայում սոցիալիզմին անցնելու համար։ Ժողովրդական միասնության նպատակները պրոպագանդելու համար ամբողջ երկրով մեկ ստեղծվեցին ժողովրդական միասնության կոմիտեներ, որոնց թիվն ընտրությունների նախօրեին հասավ 15 հազարի։

Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը որպես իր թեկնածու առաջադրեց ձախ թևի պարագլուխ Ռադոմիրո Տոմիչին։ ՔԴԿ-ի ծրագրում կային հետևյալ հիմնական դրույթները. խորացնել ագրարային հեղափոխությունը, ընդարձակել ժողովրդի ընտրական իրավունքները, «վերջ տալ իմպերիալիզմին և նեոգաղութատիրությանը», անցկացնել բանկային և ինդուստրիալ ռեֆորմներ և այլն։ Տոմիչի ծրագրի վերջնական նպատակը «սոցիալիստական» պետության ստեղծման հռչակումն էր։ Հարկավոր է նշել ժողովրդական ճակատի և ՔԴԿ-ի ծրագրերի հայտնի ընդհանրությունը, որը բացատրվում էր ամենից առաջ երկրում հեղափոխական շարժման վերելքով, որը ՔԴԿ-ի պարագլուխներին ստիպեց ծրագրի ձևակերպման այնպիսի ձևեր փնտրել, որոնք կարողանային իրենց կողմը գրավել արմատականորեն տրամադրված ընտրողներին։ Բայց Տոմիչի ծրագրի ամենաբնորոշ գիծը անորոշությունն էր։ Հատկապես տագնապ էր ծնում նրա ծրագրում ազգային շահերի հստակ արտահայտված պաշտպանության բացակայությունը։ Ուստի կոմունիստներն իրավացիորեն նշում էին, որ հաղթանակի դեպքում «Տոմիչի

կառավարումը կլինի Ֆրեյի կապիտալիստական կառավարման շարունակությունը»։

Պրեզիդենտության երրորդ թեկնածու դարձավ երկրի 1958—1964 թթ. նախկին պրեզիդենտ Խ. Ալեսանդրին, որի հետ էին տիրապետող դասակարգերը հիմնականում կապում իրենց հույսը։ Նրան պաշտպանում էին ազգային կուսակցությունը և բանակային շրջանների ռեակցիոն որոշ խմբեր ու կազմակերպություններ։ Ալեսանդրիի հիմնական լոզունգը «երկրում օրինականություն և կարգուկանոն» հաստատելու խոստումն էր։

Ընտրական կամպանիան անցնում էր քաղաքական սուր պայքարում։ 1970 թ. սեպտեմբերի 4-ի ընտրություններում հաղթեց Սալվադոր Ալիենդեն, որն ստացավ ձայների 36,3 %-ը։ Նրա հիմնական հակառակորդ Խ. Ալեսանդրին հավաքեց ձայների 34,9 %-ը, Տոմիչը՝ 27,8 %-ը։

1970 թ. նոյեմբերի 3-ին պրեզիդենտ Սալվադոր Ալիենդեի գլխավորությամբ կազմվեց ժողովրդական միասնության կառավարությունը։ Նրա կազմի մեջ մտան 3 սոցիալիստ, 3 կոմունիստ, 3 ռադիկալ և ձախ ուժերի բլոկի այլ ներկայացուցիչներ։

Հաղթանակը և բանվոր դասակարգի ու նրա դաշնակիցների շահերն արտահայտող հեղափոխական կառավարության սահմանադրական կարգով 1970 թ. իշխանության գլուխ անցնելը, վերջնական նպատակը սոցիալիզմը հռչակելը միջազգային խոշոր նշանակություն ունեին։ Դա հնարավոր դարձավ միջազգային նոր իրադրության և ժողովրդական շարժման աճն օգտագործել կարողացած բանվոր դասակարգի ու մյուս առաջադիմական ուժերի միասնական ճակատի մեջ համախմբվելու հետևանքով երկրի ներսում ձախերի օգտին ուժերի հարաբերակցության նպաստավորության, բուրժուական կուսակցությունների ճամբարում ճգնաժամի և պառակտման շնորհիվ։ Ձախ ուժերի «խաղաղ» ճանապարհով հաղթանակին նպաստեցին երկրի դեմոկրատական ավանդույթները և այդ ժամանակ ժողովրդական միասնության բլոկի նկատմամբ միջին խավերի ու բանակի մեծ մասի բարյացակամ դիրքը։

Սակայն ժողովրդական միասնության կառավարությունն ստացավ ոչ ամբողջ իշխանությունը։ Իշխանության օրենսդրական և դատական մարմինները մնացին նրա հակառակորդների ձեռքին, «Ժողովրդական միասնությանն» անցած գործադիր իշխանության լիազորությունները ուժեղ չափով սահմանափակվել էին, որը խանգարում էր նրա գործունեությանը։ Առաջիկայում ձախ ուժերին համառ պայքար էր սպասվում լիակատար իշխանություն նվաճելու համար։

«Ժողովրդական միասնության» կառավարության գործունեությունը (1970—1973)։ 1973 թ. սեպտեմբերի 11-ի հակահեղափոխական հեղաշրջումը

Չնայած բարդ իրադրությանը և դժվարություններին, ժողովրդական միասնության կառավարությունը կարճ ժամանակամիջոցում անցկացրեց կարևորագույն սոցիալ-տնտեսական վերափոխումներ։ 1971 թ. հուլիսին լեռնահանքային և արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում ազգայնացվեցին արտասահմանյան ընկերությունները։ Ազգայնացվեցին կամ պետական վերահսկողության տակ դրվեցին ազգային արդյունաբերական խոշոր շատ ձեռնարկություններ, բանկային համակարգը, արտաքին առևտուրը, արդյունաբերության մեջ մտցվեց բանվորական վերահսկողություն։ 1971 թ. մոտերքը պետական հատվածն արտադրում էր արդեն արդյունաբերական արտադրանքի ավելի քան 60 %-ը։ Ագրարային ռեֆորմի հետևանքով 1973 թ. սկզբին հիմնականում վերացվել էր լատիֆունդիզմը։ Գյուղատնտեսության մեջ հանրային հատվածը գնալով ավելի առաջատար նշանակություն էր ձեռք բերել։ Անցկացվեցին սոցիալական մի շարք միջոցառումներ, բարձրացվեց աշխատավորների աշխատավարձը, ընդարձակվեցին նրանց իրավունքները, ժողովրդի համար մեծ հաջողություններ ձեռք բերվեցին առողջապահության և կրթության զարգացման գործում։

Ժողովրդական կառավարության միջոցառումները լայն պաշտպանություն էին գտնում բնակչության գերակշիռ խավերի կողմից։ 1971 թ. ապրիլին կայացած մունիցիպալ ընտրություններում «ժողովրդական միասնության» կուսակցությունների օգտին (նրան պաշտպանող մի քանի մանր ձախ խմբերի հետ) քվեարկեց արդեն ընտրողների մոտ 51 %-ը (1970 թ. 36,3 %-ի դիմաց)։ Այդ ընտրություններում ձայների ավելի քան 26 %-ը ստացավ ՔԴԿ-ն, որի ներսում պայքար էր գնում «ժողովրդական միասնության» հետ համագործակցելու կողմնակիցների և հակառակորդների միջև։ Աջ ուժերն ստացան ձայների միայն 22 %-ը (1970 թ. 34,9 %)։ Ժողովրդական կառավարության հենարանը բանվոր դասակարգն էր, գյուղացիների մի մասը, առաջադեմ մտավորականությունը, ուսանողությունը, միջին խավերի մի մասը։

Ժողովրդական կառավարության հեղափոխական վերափոխումները հանդիպեցին ներքին և արտաքին ռեակցիայի կատաղի դիմադրությանը, որոնք օգտագործում էին տնտեսական դժվարությունները, կառավարության իշխանության ոչ լիակատարությունը, ձախ ուժերի ներսում որոշ հարցերի գծով եղած տարաձայնությունները, մանր ու միջին բուրժուազիայի տատանումներն ու անհետևողականությունը, աշխատավորների մի մասի հետամնաց տնտեսական տրամադրությունները։ Ռեակցիան կազմակերպում էր սաբոտաժ ու տնտեսական դիվերսիաներ, սև շուկա, քաղաքական պրովոկացիաներ ու տեռոր, կառավարության դեմ ակտիվորեն օգտագործվում էին կոնգրեսը, դատական իշխանությունը, մամուլը։ Իրենց գործունեությամբ աջ ուժերին 1971 թ. երկրորդ կեսից և հատկապես 1972—1973 թթ. հաջողվեց երկրում լրջորեն բարդացնել տնտեսական ու քաղաքական դրությունը և իր կողմը գրավել միջին խավերի ու բանակի զգալի մասին։ Աջերը կարողացան ՔԴԿ-ի ներսում հաղթանակի հասնել ձախ հոսանքների նկատմամբ և նրանց ներգրավել ռեակցիայի ճամբարը։ Սակայն համընդհանուր գործադուլի (1972 թ. հոկտեմբեր—նոյեմբեր) և պառլամենտական ընտրությունների (1973 թ. մարտ) միջոցով ժողովրդական կառավարությունը տապալելու օպոզիցիայի փորձերը ձախողվեցին շնորհիվ այն բանի, որ աշխատավորների ճնշող մեծամասնությունը հավատարիմ մնաց իր կառավարությանը։ Ժողովրդական կառավարության համար ծայրահեղ անբարենպաստ իրադրության մեջ 1973 թ. մարտյան ընտրություններում նրա կողմնակիցներն ստացան ձայների ավելի քան 44 %-ը՝ 8 % ավելի, քան 1970 թ.։ Դա ձախողեց Ալիենդեի կառավարությունը լեգալ ճանապարհով տապալելու ռեակցիայի հույսերը։ Դրանից հետո օպոզիցիայի հիմնական ջանքերն ուղղվեցին զինվորական խռովություն կազմակերպելու վրա։

Զինվորական խռովության առաջին փորձը (1973 թ. հունիսի 29) ձախողվեց, բայց 1973 թ. սեպտեմբերի 11-ին իր վերահսկողությանը ենթարկելով բանակը, աջերը զինվորական հեղաշրջում կատարեցին։ Իր պոստում սպանվեց երկրի օրինական պրեզիդենտ Ս. Ալիենդեն։ Իշխանությունն անցավ զինվորական խունտայի ձեռքը, գեներալ Պինոչետի գլխավորությամբ, որը դաժան, զանգվածային տեռոր սանձարձակեց։ Տասնյակ հազարավոր հայրենասերներ սպանվեցին և խոշտանգվեցին, շատերը նետվեցին համակենտրոնացման ճամբարներ։ Չիլիում հաստատվեց ֆաշիստական դիկտատուրայի ռեժիմ, որը վերացրեց ժողովրդի ոչ միայն Ալիենդեի կառավարության ժամանակի, այլև նախորդ տասնամյակների նվաճումները։ Չիլիի հայրենասերների առջև կանգնեց դիկտատորական ռեժիմի դեմ պայքարի ուժերը և կազ-

մակերպությունները համախմբելու խնդիրը։ Ամբողջ աշխարհում ծավալվեց պայքարող չիլիական ժողովրդի հետ համերաշխության շարժումը։

ԳԼՈՒԽ 28

ՄԵՔՍԻԿԱ

Մեքսիկան 1945—1959 թթ.

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ ազդեցություն թողեց Մեքսիկայի տնտեսական զարգացման վրա։ Արդյունաբերական արտադրանքի ծավալը պատերազմի տարիներին աճեց 25 %-ով, այդ թվում վերամշակմանը՝ 40 %-ով։ Համարյա երկու անգամ ավելացավ ձեռնարկությունների թիվը։ Տեղական բուրժուազիան, օգտվելով օտարերկրյա կապիտալի մրցակցության ժամանակավոր թուլացումից, հարստացավ։ Բուրժուազիայի հարստացմանը նպաստեց Ավիլի Կամաչոյի կառավարության (1940—1946) քաղաքականությունը։

Մեքսիկական կապիտալիզմը, հենվելով պատերազմական տարիների տնտեսական աճի վրա, հետպատերազմյան տարիներին հետագա զարգացում ստացավ։ 1956 թ. արդյունաբերական արտադրության նախապատերազմյան մակարդակը գերազանցվեց 2,5 անգամ։ 1945-ից մինչև 1958 թ. շուգունի ձուլումը ավելացավ 2,3 անգամ, իսկ պողպատինը՝ 5 անգամ։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճեց 2,5 անգամ։ Մետալուրգիական, նավթաքիմիական և արդյունաբերության մյուս ճյուղերում առաջացան հզոր համալիրներ (Մեխիկոյում, Մոնտերեյում և Մեքսիկական ծոցի մերձափնյա մասում)։ Արտադրության և կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման հիման վրա ուժեղացավ ֆինանսաարդյունաբերական խոշոր բուրժուազիան, որը ձգտում էր գրավել պետության տնտեսական և քաղաքական դիրքերը։

Սակայն Մեքսիկայի էկոնոմիկան պարբերական անկում էր ապրում, որը համընկավ ԱՄՆ-ի ճգնաժամերի հետ (1948—1949, 1953—1954, 1957—1958)։ Մեքսիկայի էկոնոմիկայում ուժեղանում էր ամերիկյան կապիտալի ներթափանցումը։ ԱՄՆ-ի ուղղակի կապիտալ ներդրումներն ավելացան և 1946 թ. 316 միլիոն դոլարից 1957 թ. հասան մինչև 787 միլիոն դոլարի։ Մեքսիկական արտահանման ավելի քան $^{2}/_{3}$-ն ուղարկվում էր ԱՄՆ։ Մեքսիկայի կառավարությունը, որը գլխավորում էր բանկիր Մ. Ալեմանը (1946—1952), զիջումների քաղաքականությամբ շրջադարձ կատարեց դեպի ներքին և արտաքին ռեակցիայի կողմը։ Օտարերկրյա կապիտալի հետ կապված խոշոր բուրժուազիայի պահանջներին ընդառաջելով, Ալեմանի կառավարությունը մի շարք լրացումներ մտցրեց մեքսիկական օրենսդրության մեջ, որը հեշտացնում էր օտարերկրյա կապիտալի երկիր ներթափանցելը։ 1947 թ. կառավարությանն առընթեր կոմիտեին թույլատրվեց վերանայել ազգային ընկերություններում հօգուտ օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժնի ավելացումը (համաձայն 1944 թ. օրենքի այդ բաժինը չպետք է գերազանցեր 49 %-ը)։ 1947 թ. ուղղում մտցվեց ագրարային ռեֆորմի օրենքի մեջ, որի համաձայն չօտարացվող հողերի մինիմումը բարձրացվեց և 50-ից հասցվեց մինչև 500 հեկտարի։

Կառավարող մեքսիկական բուրժուազիան մի շարք քայլեր ձեռնարկեց

իր քաղաքական դիրքերն ամրապնդելու ուղղությամբ։ Այդ կապակցությամբ վերակազմվեց մեքսիկական հեղափոխության կուսակցությունը, որը նախքան պատերազմը Մեքսիկայի ներքաղաքական կյանքում, որպես մեքսիկական բուրժուազիայի տարբեր խմբավորումների շահերի արտահայտիչ, կարևոր դեր էր խաղում։ 1946 թ. հունվարի 18-ին կայացած արտակարգ համագումարում կուսակցությունը վերանվանվեց ինստիտուցիոն-հեղափոխական կուսակցություն (ԻՀԿ)։ Կուսակցության անվանման մեջ «հեղափոխական» բառի պահպանումը կոչված էր արտացոլելու կուսակցության նվիրվածությունը մեքսիկական «պերմանենտ» հեղափոխության պաշտոնական տեսությանը, որն իրականացվելու էր մեքսիկական կառավարությունների կողմից «կոնստրուկտիվ» և աստիճանական կարգով։ Գործնականում, սակայն Ալեմանի կառավարությունը ներկայացնում էր կուսակցության աջ թևը, որը հրաժարվել էր Կարդենասի կառավարության ծրագրային կուրսից։

Դեպի աջ կառավարական կուրսի շրջադարձը կապված էր այն բանի հետ, որ կառավարող շրջաններում ուժեղացել էր ֆինանսաարդյունաբերական օլիգարխիայի ազդեցությունը։

Ամրապնդելով իր քաղաքական տիրապետությունը, մեքսիկական խոշոր բուրժուազիան հարձակում սկսեց աշխատավորների կենսական շահերի վրա։ Վերցվեց հակաբանվորական օրենսդրության ուժեղացման կուրս։ Գործադուլ անելու բանվորների իրավունքը փաստորեն վերացվեց։ Սկսեց լայնորեն կիրառվել «հասարակության քայքայման» պատասխանատվության մասին տխրահռչակ օրենքը, որի հիման վրա քաղաքական մարտիկներին բանտերն էին նետում, իսկ նրանց գործունեությունը հավասարեցնում քրեական հանցագործության։ Ռեպրեսիաների հետ միասին մեքսիկական փորձառու բուրժուազիան չէր խորշում նաև սոցիալական մանևրներ կիրառելուց։

1952 թ. իշխանության գլուխ անցնելով Ադոլֆո Ռուիս Կորտինեսը (1952—1958) մտադրություն հայտնեց աշխատավորների շահերի օգտին ներքին ու արտաքին քաղաքականության մեջ փոփոխություն մտցնելու, պետական ապարատում կաշառակերության դեմ պայքարն ուժեղացնելու մասին։ 1953 թ. ընտրական իրավունք տրվեց կանանց։ Օրենք հրապարակվեց, որով թույլատրվում էր 75 հազար անդամ ունեցող քաղաքական կուսակցությունների լեգալ գործունեությունը։

Բայց, ձեռնարկելով բուրժուադեմոկրատական ազատությունների վերականգնման որոշ միջոցառումներ, Ռուիս Կորտինեսի կառավարությունը չթեթևացրեց աշխատավորների տնտեսական դրությունը, որը շարունակում էր վատանալ։ ԱՄՆ-ի 1957—1958 թթ. տնտեսական ճգնաժամը կործանարար ազդեցություն ունեցավ ամերիկյան շուկայի հետ կապված Մեքսիկայի էկոնոմիկայի վրա։ Արտադրությունը կծկվեց, աճեց գործազրկությունը։

1958 թ. դեկտեմբերի 1-ին ստանձնելով պրեզիդենտի պաստը, ԻՀԿ-ի թեկնածու, Ռուիս Կորտինեսի կառավարության աշխատանքի և սոցիալական ապահովության նախկին մինիստր Ադոլֆո Լոպես Մատեոսը (1958—1964) առաջադրեց սոցիալ-տնտեսական միջոցառումների և Մեքսիկայի արտաքին ինքնուրույն քաղաքականության ծրագիր։

Այդ ծրագիրը հրապարակվեց երկրում դասակարգային պայքարի սրման իրադրության մեջ։ Նրա դագաթնակետը մեքսիկական 100 հազար երկաթուղայինների ելույթն էր։ Երկաթուղայինների գործադուլն սկսվել էր դեռևս 1958 թ. հունիսի 26-ին, նախկին պրեզիդենտի ժամանակ։ Վերջին 13 տարվա մեջ առաջին անգամ դադարել էր շարժումը երկրի բոլոր երկաթուղիներում։ Գործադուլավորները պահանջում էին ոչ միայն բարձրացնել աշխատավարձը, այլև երկաթուղայինների արհմիության ղեկավարությունից հեռացնել

կառավարության գրածներին։ Գործադուլավորների պահանջները կրում էին մեքսիկական բանվորական շարժման մեջ աննախադեպ բնույթ։ Կառավարող շրջանները գործադուլավորներին մեղադրում էին «կոմունիստական դավադրության» մեջ։ Կառավարությունը նրանց դեմ զորքեր դուրս բերեց։ 5 հազար երկաթուղայիններ նետվեցին համակենտրոնացման ճամբարներ, 5 հազար մարդ էլ աշխատանքից հեռացվեց։ 1959 թ. մարտի 29-ին գործադուլի ղեկավարները ձերբակալվեցին, գործադուլը ճնշվեց։

Մեքսիկայի սոցիալ-տնտեսական կառուցվածքի տեղաշարժերը 60-ական թվականներին

1957—1958 թթ. ճգնաժամից հետո Մեքսիկայի տնտեսական զարգացումը 60-ական թվականներին ձեռք բերեց աճի համեմատաբար կայուն տեմպ։ Երկրի էկոնոմիկայում աճեց պետական-կապիտալիստական հատվածի դերը։ Արդեն 60-ական թվականների կեսերին պետական հատվածի կապիտալ ներդրումները գերազանցեցին մասնավոր հատվածի ներդրումները։ Պետությունը տիրում էր բոլոր էներգետիկ հզորությունների 90 %-ը, նավթի վերամշակման 96 %-ը, նավթամթերքների վաճառահանման 92 %-ը, նավթաքիմիական արդյունաբերության 85 %-ը։ Պետության վերահսկողության տակ էին դրվել երկաթուղային տրանսպորտը, կինոարդյունաբերությունը, երկաթի և պողպատի արտադրության 40 %-ը։ Մեքսիկայի էկոնոմիկայի պետական հատվածում հաշվվում էր ավելի քան 400 ձեռնարկություն, դրանց մեջ Լատինական Ամերիկայում ամենախոշոր «Պեմեքս» նավթային ընկերությունը, որը դարձել էր երկրի տնտեսական զարգացման կարևոր գործոնը։ Պետությանն էին պատկանում երկրում խոշորագույն «Ալտոս օրնոս դե Մեխիկո» և «Տուրբոս դե ասերո դե Մեխիկո» մետալուրգիական կոմբինատները, «Դիսել նասիոնալ» մեքենաշինական գործարանը։ Մեքսիկայի էկոնոմիկայում հատուկ դեր էր խաղում «Նասիոնալ ֆինանսերա»՝ երկրում վարկերի գլխավոր կարգադրիչ վարկային-ֆինանսական կազմակերպությունը։ Արտաքին առևտրի խոշորագույն պետական բանկը իրականացնում էր պետական հատվածի արտահանման-ներմուծման գործողությունների վերահսկողությունը։

Պետական կապիտալիզմը, նեղացնելով մասնավոր կապիտալիստական հատվածի տնտեսական դիրքերը, դառնում էր մեքսիկական խոշոր բուրժուազիայի գործիքը՝ ազգային էկոնոմիկայի ամրապնդման և այն իր նեղ դասակարգային նպատակներին ենթարկելու գործում։

Պետական-կապիտալիստական հատվածի զարգացումով Մեքսիկայի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր սկսեց խաղալ աճող պետական բյուրոկրատիան, որի ներկայացուցիչները կազմավորեցին մասնավոր խոշոր կապիտալի հետ սերտորեն կապված կուսակցական-պետական «ընտրանի»։

Մեքսիկական ֆինանսական օլիգարխիայի հիմքն էր բանկերի «Մեծ վեցյակը» (վերահսկում է երկրի բոլոր բանկային ավանդների 63 %-ը), որն իր շուրջն է համախմբել մեքսիկական միլիոնատերերների 500 ընտանիքների ֆինանսաարդյունաբերական խմբերը։ Մոնոպոլիստական այդ շրջանները հզոր ուժ են էկոնոմիկայում և քաղաքականության մեջ։ Նրանք աճող ազդեցություն են գործում պետական ապարատի վրա, օտարերկրյա մոնոպոլիաների հետ անց են կացնում «ամենամեծ համաձայնության» քաղաքականություն և միաժամանակ ձգտում ի վնաս ավելի թույլ մեքսիկական կապիտալիստների պատնեշել իրենց շահերը։ Այդ խմբավորումները երկրում դարձել են ռեակցիոն գլխավոր ուժ։ Դրանց քաղաքական ներկայացուցիչներն են «Ազգային գործողության» (ԱԳԿ) կուսակցությունը և ալեմանիստական «Հեղափոխությունն ամրապնդելու մեքսիկական քաղաքացիական ճակատը»։

Միջին և մանր արդյունաբերական բուրժուազիայի խմբավորումը, որի շահերը բախվում էին մեքսիկական ֆինանսաարդյունաբերական օլիգարխիայի և օտարերկրյա կապիտալի շահերին, աչքի էր ընկնում մեծ բազմազանությամբ։ Նրա ներկայացուցիչները, որ միավորված էին վերամշակող արդյունաբերության պալատում (մոտ 20 հազար անդամներ), կողմնորոշված էին հիմնականում դեպի ներքին շուկան, հանդես էին գալիս օտարերկրյա կապիտալի գործունեությունը սահմանափակելու և «ազգային կապիտալիզմի» զարգացման օգտին։

Կապիտալիզմի զարգացումը Մեքսիկայում ուղեկցվում էր մեքսիկական հասարակության սոցիալական կառուցվածքում կատարվող խոր տեղաշարժերով։ Աճել էր արդյունաբերական և գյուղական պրոլետարիատը, փոխվել նրա կառուցվածքը։ 60-ական թվականների վերջերին Մեքսիկայում վարձով աշխատում էր ավելի քան 7,5 միլիոն մարդ, կամ ինքնագործ բնակչության 65 %-ը։ Վերամշակող արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը հասել էր ավելի քան 1,5 միլիոն մարդու։ 60-ական թվականներին բարձրացավ արդյունաբերական բանվորների համակենտրոնացումը։ Այսպես, օրինակ, մետալուրգիական արդյունաբերության բոլոր բանվորների 54,1 %-ն աշխատում էր 9 խոշոր ձեռնարկություններում, որոնք տալիս էին այդ ճյուղի արտադրանքի արժեքի 70 %-ը։ Գյուղատնտեսական պրոլետարիատի թվաքանակն անցնում էր 2 միլիոն մարդուց։ Գիտատեխնիկական հեղափոխության ներգործությամբ փոփոխություններ կատարվեցին պրոլետարիատի մասնագիտական կազմի և նրա որակավորման մակարդակի բարձրացման ուղղությամբ։ Բանվոր դասակարգը համալրվեց գրասենյակային աշխատողներով, առևտրի և սպասարկման ոլորտների բանվորներով։ Միաժամանակ Մեքսիկայում աճեց քաղաքային միջին խավերի շերտավորումը (մինչև 1,5 միլիոն մարդ)։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացումը մեքսիկական գյուղում արագացրեց դասակարգային շերտավորումը։ Կրճատվեցին հողի նկատմամբ համայնքային (էխիդալական) և մանր մասնավոր սեփականության ոլորտները։ Միաժամանակ աճեց կապիտալիստական տիպի խոշոր տնտեսությունների նշանակությունը։ 1 միլիոն 380 հազար էխիդալական տնտեսություններ տիրապետում էին ամբողջ մշակվող հողերի 26,7 %-ը, իսկ 1 միլիոն 370 հազար մասնավոր սեփականատիրական տնտեսություններ՝ մնացած հողերը։

Շատ էխիդոսներ գոյություն ունեին միայն ավանդաբար, քանի որ ադքատ էխիդատորները, որոնք զուրկ էին հողը մշակելու միջոցներից, բատրակ էին դառնում, իսկ նրանց հողերին տիրում էին բուրժուականացող խոշոր կալվածատերերը կամ կապիտալիստական տիպի ֆերմաներ ունեցող հարուստ էխիդատորները։ Ադոլֆո Լոպես Մաթեոսի կառավարությունը գյուղացիների միջև բաժանեց 16 միլիոն հեկտար հող, այսինքն երկու միլիոնով պակաս, քան Կարդենասի ժամանակ։ Բայց եթե Կարդենասի ժամանակ ագրարային ռեֆորմն ուղեկցվում էր ադքատների օգտին կատարվող սոցիալական վերափոխումներով, ապա Լոպես Մաթեոսի քաղաքականության նպատակն էր բարձր ապրանքային խոշոր կուլակային տնտեսությունների զարգացման խրախուսումը։ Պրեզիդենտ Գուստավո Դիաս Օրդասի (1964—1970) առաջադրած այսպես կոչված «ինտեգրալ» ագրարային ռեֆորմի նախագիծը նախատեսում էր հողերը գյուղացիներին բաժանելը և գյուղում սոցիալ-տնտեսական մի շարք վերափոխումները (պետական վարկավորման ընդարձակում, դպրոցների, հիվանդանոցների, ճանապարհների կառուցում, ագրոտեխնիկա-

կան գիտելիքների ներդրում և այլն), որոնց պտուղներից օգտվեց ամենից առաջ գյուղական բուրժուազիան։

Մեքսիկայի կապիտալիստական զարգացումը հասցրեց երկրում հասարակական հարստության ավելացմանը։ Սակայն առաջադիմության պտուղները բաշխվում են ծայրահեղորեն անհավասարաչափ կերպով։ Բուրժուազիան յուրացնում է ազգային եկամտի առյուծի բաժինը, աշխատավորներին դատապարտելով ծայրահեղ աղքատության։ 1963 թ. 31 միլիոն մեքսիկացիներ 16 անգամ պակաս եկամուտ էին ստանում, քան բնակչության 5 %-ը կազմող բուրժուազիան։

Դասակարգային պայքարի սրումը Մեքսիկայում 60-ականներին—70-ական թվականների սկզբին

60-ական թվականներին կապիտալիզմի զարգացումն ուղեկցվում էր դասակարգային պայքարի սրումով, որի կենտրոնում է գտնվում աշխատանքի և կապիտալի միջև աճող հակասությունը։ Մեքսիկայի ներքաղաքական կյանքի գլխավոր առանձնահատկությունը ձևականորեն գոյություն ունեցող բազմակուսակցական համակարգում ինտերնացիոնալ-հեղափոխական կուսակցության պետական կառավարման բազմամյա գերիշխանությունն է։

Բուրժուական օպոզիցիայի գլխավոր ազգային գործողության կուսակցությունը (ԱԳԿ) ներկայացնում էր ֆինանսաարդյունաբերական խոշոր բուրժուազիայի այն խմբավորումները, որոնք սերտորեն կապված էին օտարերկրյա կապիտալի և կղերակալվածատիրական շրջանների հետ։ Նա ծայրահեղ աջ դիրքերից գրոհում էր ԻՀԿ-ի քաղաքականության դեմ, պահանջելով մեծ «ազատություն ձեռնարկատիրությանը», ամերիկյան մոնոպոլիաների հետ կապերի ամրապնդում, հետագա հարձակում աշխատավորների կենսական իրավունքների վրա, արտաքին քաղաքականության ավելի ռեակցիոն կուրսի իրականացում։

Մեքսիկական կոնգրեսում լեգալ դեմոկրատական օպոզիցիան սոցիալիստական ժողովրդական կուսակցությունն էր։ Այդ՝ իր հիմքով մանրբուրժուական կուսակցությունը, որը հիմնադրել էր մեքսիկական բանվորական և արհմիութենական շարժման աշքի ընկնող գործիչ Վիսենտա Լոմբարդո Տալեդանոն, քարոզում էր «իշխանության գլուխ գտնվող բուրժուազիայի», որպես ամբողջ ազգի գլխավոր թշնամուն՝ ամերիկյան կապիտալիզմին, հակահարված տալու ընդունակ մեքսիկական հասարակության միակ կազմակերպված ուժի հետ դաշինքի անհրաժեշտությունը։ Կուսակցությունը քողարկում էր դասակարգային հակասությունները, պրոլետարիատին հատկացնում կառավարող բուրժուազիայի դաշնակցի դերը, հանդես էր գալիս մեքսիկական կոմունիստների դեմ։

Մեքսիկայի բանվոր դասակարգի և աշխատավորների առաջավոր ուժը մեքսիկական կոմունիստական կուսակցությունն է (ՄԿԿ)։ ՄԿԿ-ի 1960 թ. կայացած 13-րդ համագումարը շրջադարձ կատարեց կուսակցության գործունեության մեջ, քննադատելով կուսակցության ներսում եղած աջ օպորտունիստական թեքումը։ Համագումարը մշակեց քաղաքական նոր ծրագիր, կազմակերպորեն ամրապնդեց ՄԿԿ-ի շարքերը։ 14-րդ համագումարը (1963 թ. դեկտեմբեր) հաստատեց կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը։ Համագումարը նշեց, որ Մեքսիկայի բանվորական և դեմոկրատական շարժման մեջ վրա է հասել նոր ժամանակաշրջան՝ աշխատավորների դասակարգային լարված պայքարի ժամանակաշրջանը։ 15-րդ համագումարը (1967 թ. հունիս) վերլուծեց երկրում սոցիալական ուժերի նոր տեղաբաշխումը, նշելով, որ գընալով կառավարության քաղաքականության վրա ազդող խոշոր մոնոպոլիստական բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը տանում է դեպի ռեակցիա,

դեպի ամերիկյան իմպերիալիզմին զիջումներ կատարելուն։ Համագումարը Մեքսիկայում ստեղծված իրադրությունը սահմանեց իբրև «Մեքսիկայի զարգացման կապիտալիստական ուղու ճգնաժամ»։

Զանգվածային շարժման վերելքի նշանները հանդես եկան արդեն 60-ական թվականների սկզբից, երբ երկրում նորից սկսվեց գործադուլային շարժման աճը։ 60-ական թվականները աշքի ընկան նաև ուսանողական շարժման վերելքով։ Ուսանողներն առաջ քաշեցին համադեմոկրատական պահանջներ, որը պաշտպանություն գտավ բանվորների, աշխատավորների, գյուղացիների, առաջադեմ մտավորականության կողմից։ 1968 թ. հուլիսի 26-ից մինչև հոկտեմբերի 2-ը երկրում գործադուլ էին արել ավելի քան 170 հազար ուսանողներ։

Օգտվելով ուսանողական հուզումներից, կառավարությունը որոշեց հարված հասցնել կոմունիստական կուսակցությանը։ Ոստիկանության թխած կեղծ փաստաթղթերի հիման վրա մեքսիկական կոմունիստներին քաղաքական անկարգություններ կազմակերպելու մեղադրանք ներկայացվեց։ ՄԿԿ-ի ղեկավարությունը ձերբակալվեց, ոստիկանական հարձակման ենթարկվեց կոմկուսի կենտրոնական օրգան «Լա Վոս դե Մեխիկո» թերթի խմբագրությունը։

Մեքսիկական պրոլետարիատի գործադուլային պայքարը և ուսանողների ելույթները համընկան երկրի գյուղացիական շարժման աճին։ 1963 թ. հունվարին, գյուղացիական շարժման վերելքի հետևանքով, ստեղծվեց ավելի քան կես միլիոն գյուղացիներ միավորող անկախ գյուղացիական կենտրոնը։ ԱԳԿ-ի ծրագրում նշվում էր, որ նա կպայքարի ագրարային արմատական ռեֆորմի համար, ընդդեմ իմպերիալիզմի, հանուն բանվոր դասակարգի հետ դաշինքի ամրապնդման։ ԱԳԿ-ի ստեղծումը իրենով նշանավորում էր գյուղացիական զանգվածների զգալի մասի՝ բուրժուազիայի ազդեցությունից դուրս գալը։

Ներքին ռեակցիայի և օտարերկրյա մոնոպոլիաների հարձակման դեմ, իրենց իրավունքների համար մղած պայքարում գյուղացիների միավորման ճանապարհին կարևոր քայլ էր 1973 թ. հոկտեմբերին ստեղծված մշտական գյուղատնտեսական կոնգրեսը, որի մեջ մտան գյուղատնտեսական հինգ խոշոր արհմիություններ, որոնք միավորում էին ավելի քան 20 միլիոն գյուղացիների։

Մեքսիկայում դասակարգային պայքարի ուժեղացմանը կառավարող բուրժուազիան պատասխանեց ոստիկանական տեռորի գործողություններով, բանվորական, արհմիութենական և դեմոկրատական շարժման պառակտումը տարածելով և խորացնելով ու միաժամանակ խուսանավման քաղաքականությամբ, մի քանի զիջումներով, ազգային-ռեֆորմիստական պրոպագանդա ծավալելով։ 1962 թ. սեպտեմբերին երկրի պատմության մեջ առաջին անգամ իշխանությունները կոմունիստական կուսակցության անդամների նկատմամբ անցկացրին քաղաքական դատավարություն, նրանց մեղադրանք ներկայացնելով «գոյություն ունեցող կարգերի դեմ կոմունիստական խռովություն» կազմակերպելու մեջ։ Միաժամանակ կառավարությունը 1962 թ. դեկտեմբերին պաշտոնապես հայտարարեց 8-ժամյա աշխատանքային օր, կանանց հավասար վարձատրություն, անչափահասների աշխատանքի սահմանափակում, երեխաների աշխատանքի արգելում։ Սակայն ռեֆորմին ձեռնարկատերերը խանգարեցին և դրա համար էլ չկենսագործվեց։ 1963 թ. դեկտեմբերի 13-ին ընդունվեց «Ծկամուտներին բանվորների մասնակցելու մասին» օրենքը, որը լայնորեն ռեկլամում էր պաշտոնական պրոպագանդան։ Կառավարող շրջանները այդ միջոցառումներով փորձում էին պառակտել բանվորական շարժումը,

արհմիություններում պահպանել ազգային-ռեֆորմիստական գաղափարախոսության ազդեցությունը։ Կազմակերպված բանվորական շարժման վրա օրենսդրական և գաղափարաքաղաքական ներգործության այդ միջոցներին որպես լրացում, 1966 թ. փետրվարի 18-ին ԻՀԿ-ի նախաձեռնությամբ հրավիրվեց մեքսիկական պրոլետարիատի ազգային ասամբլեան, որին մասնակցեցին մեքսիկական 26 խոշոր արհմիություններ։ Ասամբլեայում ստեղծված աշխատանքի կոնգրեսը կառավարության կողմից դիտվեց որպես «սոցիալական պարտնյորություն» և դասակարգային համագործակցության քաղաքականության իրականացման կարևորագույն գործիք։

Լոպես Մաթեոսի կառավարությունն ստիպված էր հաշվի առնել նաև բուն բուրժուազիայի ներսում եղած հակասությունները։ ԻՀԿ-ի ծայրահեղ աջ շրջանները դժգոհում էին օտարերկրյա կապիտալի սահմանափակման, պետական-կապիտալիստական հատվածի ամրապնդման՝ կառավարության միջոցառումներից։ Նրանք շարունակ համառությամբ կառավարությունից պահանջում էին հակաբանվորական ավելի խիստ քաղաքականություն կիրառել, հետագա զիջումներ անել օտարերկրյա կապիտալին։

Մյուս կողմից, սկսվեց ԻՀԿ-ի ձախ թևի՝ կառավարող կուսակցական-կառավարական բլոկից սահմանազատումը։ ԻՀԿ-ի երիտասարդ, ռադիկալորեն տրամադրված անդամները պահանջում էին դեմոկրատականացնել ներկուսակցական կյանքը, վերացնել կուսակցական-կառավարական «ընտրանու» տիրապետությունը։ Պրեզիդենտ Լոպես Մաթեոսը, դեմոկրատական ուժերն ապակողմնորոշելու և կուսակցական-կառավարական բլոկի ներսում պառակտումը կանխելու նպատակով, իր կառավարությունը որպես «սահմանադրության շրջանակներում ծայրահեղ ձախ» հռչակեց։ Քաղաքական խուսանավման նպատակներին ծառայեց նաև 1963 թ. հունիսի ընտրական օրենքի ռեֆորմը։ Նրա իմաստն այն էր, որ մեքսիկական կոնգրեսի ստորին պալատում որոշ չափով ընդարձակվում էր օպոզիցիոն կուսակցությունների ներկայացուցչությունը։ Այդ ռեֆորմը սենատի ընտրությունների վրա չէր տարածվում։ Դրա հետևանքով 1964 թ. ընտրություններից հետո ԻՀԿ-ն սենատում պահպանեց իր բոլոր 60 տեղերը և դեպուտատների պալատում՝ 210-ից 175-ը։

1969 թ. նախընտրական կամպանիան անցավ չդադարող դասակարգային մարտերի իրադրության մեջ։ Երկրում ընդարձակվում էր քաղաքական բանտարկյալների ազատման կամպանիան, որի մեջ ներգրավվեցին երկրի աշքի ընկնող հասարակական և քաղաքական գործիչները, այդ թվում նաև Լասադո Կարդենասը։ Պրեզիդենտի պոստի՝ կառավարական ԻՀԿ-ի կողմից նոր թեկնածու, ներքին գործերի մինիստր Լուիս Էչեվերիյա Ալվարեսը ընտրություններում հաղթանակ տանելով, փորձեց սոցիալ-տնտեսական զիջումներով թուլացնել 1970—1973 թթ. երկրում աճող դեմոկրատական շարժման ալիքը։ Միաժամանակ նոր կառավարությունը դիմեց ազգային բուրժուազիայի տարբեր խմբավորումների մի շարք պահանջների բավարարմանը։ 1970 թ. մարտին վերացվեց «Հասարակության քայքայման մասին» օրենքը (հուլիսի 21-ին այն փոխարինվեց «Ազգի անվտանգության դեմ հանցագործությունների մասին» նոր օրենքով)։ 1971 թ. ընթացքում բանտերից ազատվեցին «1968 թ. անկարգություններ» կազմակերպելու մեղադրանքով բանտարկված կոմունիստները։ 1972 թ. օգոստոսի 10-ին «Ֆերոկարիլես նասիոնալե» երկաթուղային պետական ընկերությունը որոշեց վերականգնել այն 10 հազար երկաթուղայիններին, որոնք 1958—1959 թթ. գործադուլին մասնակցելու համար ազատվել էին աշխատանքից։

Երկրի էկոնոմիկան 1970—1972 թթ. դժվարություններ էր կրում։ 1971 թ. ճգնաժամ սկսվեց շաքարի արդյունաբերության մեջ, մշտական գործոն դարձան ինֆլյացիան և վճարունակ հաշվեկշռի դեֆիցիտը։ Աշխատավարձի աճը ետ էր մնում գների աճից, ավելանում էր գործազրկությունը։

Երկրում սոցիալական լարվածությունը թուլացնելու նպատակով կառավարությունը 1970 թ. ապրիլին աշխատանքի մասին նոր օրենք ընդունեց, ըստ որի բարձրացվում էր աշխատավարձի մինիմումը, մտցվում էին վճարովի արձակուրդներ, երկշաբթյա աշխատավարձի չափով տարեկան վարձատրություն։ 1971 թ. մայիսից ուժի մեջ մտավ ագրարային ռեֆորմի նոր օրենքը, ըստ որի ամրապնդվում էին էխիդոսի իրավական հիմքերը։ «Սոցիալական ապահովության մասին» նոր օրենքի համաձայն սոցիալական ապահովության համակարգում պետք է ընդգրկվեին երկրի 30 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիները։ Զգալի հատկացումներ առանձնացվեցին երկրի ետ մնացող շրջանների զարգացմանը (Յուկատան)։ 1971 թ. հունվարին օրենք ընդունվեց պետության մասնակցությամբ մասնավոր ընկերությունների նրկատմամբ անմիջական վերահսկողություն հաստատելու մասին, որի տակ էր ընկնում տարեկան 55 միլիարդ պեսո եկամուտով 140 խոշոր ձեռնարկություն։ 1972 թ. մասնավոր հատվածի հարկադրման ռեֆորմ անցկացվեց։ 5 %-անոց հարկ մտցվեց բնակարանային շինարարության եկամուտներից։ Կառավարությունը սահմանեց տարեկան 100 հազար բնակարան կառուցելու ազգային բնակարանային ֆոնդ։ Մանր և միջին ձեռնարկատերերին օգնելու համար 1972 թ. ստեղծվեց 1167 ձեռնարկությունների ֆինանսավորման արդյունաբերական զարգացման ազգային ֆոնդ, որն աշխատանքով ապահովեց 50 հազար աշխատավորների։ Լրացուցիչ կարգով դպրոցներ ուղարկվեցին 12 հազար ուսուցիչներ, որը 500 հազար սովորողների հնարավորություն տվեց առաջին անգամ դպրոցական սեղանի մոտ նստել։

Ազգային բուրժուազիայի տնտեսական դիրքերն ամրապնդելու նպատակով Լուիս Էչեվերիյայի կառավարությունը 1970—1972 թթ. օրենքներ ընդունեց մեքսիկական էկոնոմիկայի առաջատար ճյուղերում (սև և գունավոր մետալուրգիայի, ցելյուլոզի, ալյումինի, կապի և արդյունաբերության այլ ճյուղերում) օտարերկրյա կապիտալի սահմանափակման մասին, ազգայնացվեցին օտարերկրյա մի շարք ձեռնարկություններ (այդ թվում ծխախոտի արդյունաբերության մեջ)։ 1973 թ. փետրվարին կարևոր օրենք ընդունվեց երկրում օտարերկրյա կապիտալի գործունեության վրա վերահսկողություն սահմանելու վերաբերյալ։ Ըստ այդ օրենքի յուրաքանչյուր օտարերկրյա ֆիրմա պետք է գրանցվեր հատուկ ստեղծված պետական մարմնում։ Գրանցումից խուսափողների նկատմամբ կիրառվում էին խիստ միջոցներ, ներառյալ մինչև բանտարկությունը։

Ի պատասխան կառավարության այդ միջոցառումների, ռեակցիոն բուրժուազիայի-մատիրական շրջանները բռնեցին սաբոտաժի ուղին, նպատակ ունենալով տնտեսական բաոս և քաղաքական անկայունություն ստեղծել երկրում։ Նրանք թաքցնում էին առաջին անհրաժեշտության ապրանքները, արհեստականորեն բարձրացնում նրանց գները։

Մեքսիկայի արտաքին քաղաքականությունը 1958—1973 թթ.

1960—1973 թթ. ժամանակաշրջանը բնութագրվում է Մեքսիկայի արտաքին քաղաքական ակտիվությամբ։ Ուժեղացավ ինքնուրույն արտաքին քաղաքական կուրս վարելու միտումը։

Համաշխարհային ասպարեզում ուժերի նոր տեղաբաշխումը, սոցիալիզմի լագերի և ազատագրական շարժման հաջողությունները, Կուբայի հեղափոխության հաղթանակը ազդեցություն թողեցին երկրի քաղաքականության վրա։ Կառավարության արտաքին քաղաքական կուրսի վրա ներգործում էր դեմոկրատական ուժերի աճող ճնշումը։ Մեքսիկան ընդարձակում էր տնտե-

սական և քաղաքական կապերը աշխարհի բոլոր ռեգիոնների հետ։ Այդ նպատակներին էին պատասխանում կառավարությունների ղեկավարների և ներկայացուցչական տնտեսական պատվիրակությունների բազմիցս այցելությունները Հարավային Ամերիկայի երկրներ, Ճապոնիա, Ինդոնեզիա, Հնդկաստան։ Մեքսիկան մտավ ազատ առևտրի լատինաամերիկյան ասոցիացիայի մեջ (1961), իսկ 1972 թ. հոկտեմբերին դարձավ երկրների Անդյան խմբի «աշխատանքային պարտնյորը»։ Ճապոնիան ԱՄՆ-ից հետո դարձավ Մեքսիկայի երկրորդ առևտրական պարտնյորը։ Ընդարձակվեցին Մեքսիկայի հարաբերությունները Եվրոպայի երկրների և հատկապես նկատելիորեն Ֆրանսիայի հետ, որն արտահայտվեց մեքսիկական նավթաքիմիայի զարգացման համար 150 միլիոն դոլարի ֆրանսիական վարկ տրամադրելու մեջ։ Արտաքին քաղաքական կապերի զարգացման այդ նպատակներին էր ծառայում 1970 թ. մեքսիկական տնտեսական պատվիրակության՝ եվրոպական մի շարք երկրներ, այդ թվում Անգլիա, Դանիա, Շվեդիա այցելելը։

Մեքսիկան քայլեր ձեռնարկեց կապերն ընդարձակելու եվրոպական սոցիալիստական երկրների հետ։ 70-ական թվականների սկզբին հետագա զարգացում ստացան սովետա-մեքսիկական բարեկամական ավանդական հարաբերությունները։ Մեքսիկայի պրեզիդենտի 1973 թ. ապրիլին ՍՍՀՄ այցելելու հետևանքով երկու երկրների միջև առաջին անգամ առևտրատնտեսական համաձայնագիր ստորագրվեց։

Կուբայի հետ հարաբերություններում Մեքսիկան պահպանում էր չմիջամտելու և ինքնորոշման ավանդական սկզբունքները և մինչև 1970 թ. լատինաամերիկյան միակ երկիրն էր, որ Կուբայի հետ ուներ դիվանագիտական հարաբերություններ։ Մեքսիկան դատապարտեց ԱՄՆ-ի 1965 թ. մայիսի ինտերվենցիան Դոմինիկյան Հանրապետության նկատմամբ։ Մեքսիկայի պաշտոնական ներկայացուցիչները բազմիցս հանդես եկան վիետնամական պատերազմը դադարեցնելու օգտին։

ԳԼՈՒԽ 29

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ։ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձու աշխատանքի բանակի թվաքանակը և կառուցվածքային տեղաշարժերը

Բանվոր դասակարգը կապիտալիստական արդի հասարակության առավել մեծաթիվ և կազմակերպված դասակարգն է։ Նրա դրության և պայքարի վրա հետպատերազմյան տարիներին խոր ներգործություն ունեցան սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը և գիտատեխնիկական հեղափոխությունը։

Հետպատերազմյան տարիներին շարունակվում էր կապիտալիզմին բնորոշ ֆիզիկական և մտավոր աշխատանքի վարձու աշխատողների ընդհանուր թվաքանակի և տեսակարար կշռի աճման միտումը։ 19-րդ դարի կեսին արդյունաբերական պրոլետարիատը 9 միլիոն էր, 20-րդ դարի սկզբին՝ 30 միլիոն, 20-րդ դարի կեսին բանվորների և ծառայողների թվաքանակն աշխարհում անցնում էր 540 միլիոնից, այդ թվում 220 միլիոնն ինդուստրիալ զարգացած երկրներում, 170 միլիոնը՝ զարգացող երկրներում և 150 միլիոնը՝ սոցիալիստական պետություններում։

Ընդարձակվում է բուն պրոլետարիատ հասկացությունը։ Այն ընդգրկում է ոչ միայն ֆիզիկական աշխատանքի, այլև մտավոր աշխատանքի անձանց և սպասարկման ծառայության աշխատողների որոշակի մասը։ Բանվոր դասակարգի հենարանը, նրա մարտական ավանգարդն արդյունաբերական պրոլետարիատն է։

Արդյունաբերության նոր ճյուղերի զարգացումը, էկոնոմիկայի կառուցվածքի փոփոխությունը, գիտատեխնիկական առաջադիմությունն առաջ բերեցին ձեավորված աշխատանքի բաժանման բնկում, պրոլետարիատի ճյուղային կառուցվածքի, նրա պրոֆեսիոնալ պատրաստվածության աստիճանի, հանրակրթական աճի և կուլտուրական մակարդակի խոր փոփոխություններ։ Վերանում են հները, առաջանում նոր մասնագիտություններ։ 1965 թ. ԱՄՆ-ի աշխատանքի մինիստրության թողարկած «Մասնագիտությունների անվանումների բառարանում», 1949 թ. հրատարակության հետ համեմատած, հանդես են եկել 6432 նոր մասնագիտություններ։ Միաժամանակ բառարանից հանվել են ավելի քան 8 հազար մասնագիտություններ։

Բանվոր դասակարգի պրոֆեսիոնալ որակավորման կառուցվածքի փոփոխման հետևանքով ԱՄՆ-ում, օրինակ, բանվորների ընդհանուր թվաքանակի մեջ որակյալ բանվորների բաժինը 1940 թվականից մինչև 1968 թ. աճել է և 27-ից հասել մինչև 36 %-ի, իսկ ոչ որակյալներինը պակասել է և 25-ից իջել մինչև 13 %-ի։ Աճել են մտավորականների և ծառայողների թվաքանակը և տեսակարար կշիռը։ Գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում խիստ աճում է մտավոր և մտավոր գործողություններով հագեցած որակյալ ֆիզիկական աշխատանքի նկատմամբ պահանջարկը։ Դրա հետ կապված պահանջվում է բարձրացնել բանվոր դասակարգի հանրակրթական և մասնագիտական պատրաստությունը։

Սակայն կրթության ընդհանուր և մասնագիտական կապիտալիստական համակարգը, որ կառուցված է դասակարգային արտոնությունների վրա, չի կարող բավարարել որակյալ, հատկապես բարձրագույն կրթությամբ կադրերի աճող պահանջմունքները։ Իրականացնելով գիտատեխնիկական հեղափոխություն, կապիտալիզմն ի վիճակի չէ հեղափոխություն իրականացնել կրթության բնագավառում։ Ուստի աշխատավորներն աճող դժվարություններ կրելով մասնագիտական պատրաստության և նախապատրաստության բնագավառում, սկսել են մեծ ակտիվություն հանդես բերել պայքարելու կրթության և վերամասնագիտացման բոլոր տեսակների լայն հնարավորություն ստանալու համար։ Աշխատավորների մասնագիտական մակարդակի բարձրացումը ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում նրանց քաղաքական ինքնագիտակցության աճի համար։

Բանվոր դասակարգի դրությունը

Հետպատերազմյան տարիներին, համառ պայքարի հետևանքով կապիտալի երկրների բանվոր դասակարգը տնտեսական և քաղաքական բնագավառներում որոշակի հաջողությունների հասավ։ 50-ական թվականների վերջերին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում ապահովություն

մտցվեց 38 երկրում, արտադրության մեջ դժբախտ դեպքերի ժամանակ՝ 74 երկրում, գործազրկության համար՝ 20 երկրում։ Աշխատավորները պահպանեցին, իսկ մի շարք երկրներում հասան գործադուլ անելու, փողոցային ցույցերի, իրենց բանվորական մամուլի, արտադրական կոմիտեներին մասնակցելու, աշխատանքային հարաբերությունների մի շարք նոր ասպեկտների պայմանագրային սահմանման իրավունքի օրենսդրական ճանաչմանը։ Սոցիալիստական երկրների նվաճումները, աշխատավորների դասակարգային պայքարը բուրժուազիային ստիպում են «անկարևորի զիջման, կարևորի պահպանման»[1] քաղաքականություն վարել։ Զիջելով որոշ հարցերում, նա փորձում է ուանշ վերցնել մյուսներում, ձգտելով առաջին իսկ հարմար պահին զրոյի հասցնել բանվորների նվաճումները։

Նույնիսկ պաշտոնական տվյալներով, Անգլիայում 7,5 միլիոն, ԱՄՆ-ում 28 միլիոն մարդ ապրուստի միջին մակարդակից ցածր եկամուտ է ստանում։ Բանվորը հաճախ ստիպված է լինում «կամավոր» համաձայնել աշխատօրվա ժամանակամիջոցի երկարացման, լրացուցիչ աշխատանք փընտրել, արտադրություն ուղարկել անչափահաս երեխաներին։ Դերշահագործման է ենթարկվում երիտասարդության և կանանց աշխատանքը, որոնք վարձու աշխատողների մոտ 50 %-ն են կազմում։ Այսպես, ԳՖՀ-ում կանանց աշխատավարձը 31 %-ով ցածր է, քան տղամարդկանցը, Բելգիայում՝ 30 %-ով, Ֆրանսիայում 12—30 %-ով։ Գիտատեխնիկական հեղափոխությունը, ավտոմատացման ներդրումը կապիտալիզմի պայմաններում հասցնում են խրոնիկական գործազրկության։ Վերջին տարիներին գործազուրկների պաշտոնապես գրանցված ընդհանուր թվաքանակը միջին հաշվով տարեկան կազմում էր 11—12 միլիոն մարդ։ Տասնյակ միլիոն մասնակի գործազուրկներ շատ երկրներում ընդհանրապես չեն գրանցվում։

Աշխատանքի ինտենսիվացումը հասցնում է մասնագիտական հիվանդությունների բարձր մակարդակին, արտադրության մեջ դժբախտ դեպքերին, աշխատունակությունը վաղ կորցնելուն։ 1958—1961 թթ. կապիտալիստական վեց խոշոր երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, ԳՖՀ, Իտալիա, Ճապոնիա) տուժել են 27 միլիոն բանվորներ։ Աշխատավորները կապիտալիզմի օրոք գնալով ավելի խիստ էին զգում տեխնիկական առաջադիմության բացասական հետևանքները։

Վերջին տարիներին բուրժուազիան աշխատանքային հարաբերություններում լայնորեն օգտագործում է պետական-մոնոպոլիստական կարգավորումը և միաժամանակ բանվորական շարժման դեմ կիրառում է պայքարի նոր ձևեր, որոնք քողարկվում են «մարդկային հարաբերությունների», «ժողովրդական կապիտալիզմի», «սոցիալական պարտնյորության» ջատագովական կոնցեպցիաներով։ Բանվորներին էժան բաժնետոմսեր վաճառելու կամ անվճար հատկացնելու միջոցով բանվորների և տերերի միջև սահմանների վերացման պատրանք են ստեղծում։ Բուրժուազիան «լոյալության համար» «ձեռնարկության հետ համագործակցելու համար» աշխատավարձի հատուկ հավելումներով փորձում է բանվորների մի մասին շեղել դասակարգային ակտիվ պայքարից։ Մոնոպոլիստական բուրժուազիան բանվորական շարժման դեմ շարունակում է կիրառել նաև պայքարի այնպիսի փորձված ձև, ինչպիսին է բանվոր դասակարգի մի մասի ուղղակի կամ անուղղակի կաշառումը։ Նա շահագրգռված է «բանվորական արիստոկրատիայի»՝ բարձր որակավորում ունեցող և բարձր վարձատրվող բանվորների ոչ մեծ խավի պահպանմամբ։ «Բանվորական արիստոկրատիայի» էությունը Վ. Ի. Լենինը

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 192։

բնութագրել է իբրև բանվոր դասակարգի վերնախավի «բուրժուականացում»։ «Բանվորական արիստոկրատիան» տասնամյակներով եղել է բանվոր դասակարգի վրա բուրժուական ազդեցության սոցիալական գլխավոր հենարանը և տարածողը, նրա պառակտման և դասակարգային ինքնագիտակցության շվայտացման գործիքը։ Հետպատերազմյան տարիներին նկատվում է «բանվորական արիստոկրատիայի» համեմատարար կրճատման միտում։ Գաղութային սիստեմի քայքայումը կրճատեց «բանվորական արիստոկրատիայի» կաշառման գլխավոր աղբյուրը։ Միաժամանակ արտադրությունում և բանվորական շարժման մեջ կատարվող նոր պրոցեսները քչացրեցին բարձր վարձատրվող խավը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայում «բանվորական արիստոկրատիայի» մեջ էր բանվորների մոտ 9 %-ը, ներկայումս նրանց բաժինը ԳՖՀ-ում կազմում է 6 %-ից ոչ ավելին։

Բուրժուազիան ձգտում է «բանվորական արիստոկրատիան» պահպանել ի հաշիվ գիտատեխնիկական առաջադիմությունից ստացվող գերշահույթների, արտասահմանյան բանվորների, «գունամորթների», կանանց և անչափահասների աշխատանքի վճարման խտրականության միջոցով։ Միաժամանակ բանվոր դասակարգի պառակտման և նրա դասակարգային գիտակցության ապականման իմպերիալիստական քաղաքականության մեջ սկսել է աճող դեր խաղալ այսպես կոչվող «բանվորական բյուրոկրատիան»։ Վերջինս՝ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կենտրոնական և տեղական մեծ թվով աջ ղեկավարներն են, ռեֆորմիստական արհմիությունների, կոոպերատիվների, թերթերի գործիչները, կենտրոնական և տեղական իշխանության պետական-քաղաքական մարմինների, էկոնոմիկայի պետական հատվածի և բաժնետիրական ընկերությունների դիտողական խորհուրդների ռեֆորմիստական «բանվորների ներկայացուցիչներն» են և այլն։ «Բանվորական արիստոկրատիան» անմիջականորեն գտնվում է արտադրության մեջ, օգտվում է իր արտոնյալ դրությունից և իրեն հեռու է պահում պրոլետարիատի դասակարգային պայքարից։ «Բանվորական բյուրոկրատիան»՝ դրբանք «բանվորական շարժման պաշտոնյաներն են», որոնք իբրև կանոն, անմիջականորեն կապված չեն արտադրության հետ։ «Բանվորական արիստոկրատիան» և «բանվորական բյուրոկրատիան» բանվորական շարժման մեջ օպորտունիզմի տարածողներն են, բանվոր դասակարգի շրջանում բուրժուազիայի սոցիալական գլխավոր հենարանը։

Արտադրողական ուժերի զարգացումը, աշխատանքի պայմանների փոփոխությունը բանվորների մոտ նոր պահանջմունքներ են առաջ բերում, որոնց բավարարումը աշխատուժի վերարտադրության բաղկացուցիչ մասն է կազմում։ Աշխատավորների աճող պահանջմունքները հանդիպում են մոնոպոլիստների դիմադրությանը, որոնք ձգտում են այդ պահանջմունքների բավարարումը հասցնել նվազագույնի։ Հակադիր միտումների բախման ելքը վերջին հաշվով լուծվում է «պայքարող կողմերի ուժերի հարաբերակցությամբ»։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջին երկու-երեք տարիներին կապիտալիստական երկրների աշխատավորները վճռական պայքար էին մղում ֆաշիզմն արմատախիլ անելու և դեմոկրատական վերափոխումներ կատարելու համար։ Ձեռնարկություններում ստեղծվում էին բանվորական տարբեր մարմիններ, բարելավվում էին աշխատանքի պայ-

մանները, բարձրացվում էր աշխատավարձը, ընդարձակվում էր սոցիալական օրենսդրությունը։

Միջազգային և ազգային մասշտաբներով առաջանում էր ուժերի նոր հարաբերակցություն։ Իշխանության կենտրոնական և տեղական մարմիններ էին մտնում դեմոկրատական ուժերի ներկայացուցիչները։ Արևմտյան Եվրոպայի ինը երկրներում սկսած 1944-ից մինչև 1947 թ. տարբեր ժամանակներում կոմունիստները մտան կառավարությունների կազմի մեջ։

1947—1948 թթ. իմպերիալիստական ռեակցիան «սառը պատերազմ» սկսելով սոցիալիստական երկրների դեմ, հարձակում ծավալեց բանվորական և դեմոկրատական շարժման վրա։ Կառավարություններից հեռացվեցին կոմունիստները, սկսվեցին կոմունիստների և դեմոկրատների հետապնդումները, կիրառվեցին հակաբանվորական օրենքներ։

Բանվոր դասակարգն ի պաշտպանություն բուրժուազիայից նվաճված տնտեսական և քաղաքական դիրքերի, պատասխանեց վճռական գործողություններով։ 1948—1952 թվականները բնութագրվեցին կատաղի դասակարգային մարտերով՝ տնտեսական գործադուլներով, քաղաքական ելույթներով։

50-ական թվականների առաջին կեսին տնտեսական կոնյունկտուրայի աշխուժացումը, «սառը պատերազմի» իրադրությունը, քաղաքական հետապնդումները, մոնոպոլիաների սոցիալական խուսանավումը և դաղափարական մշակումը հասցրեցին դասակարգային պայքարի թուլացմանը։ Բայց դա ժամանակավոր երևույթ էր։ Արդեն 50-ական թվականների վերջից սկսվեց դասակարգային պայքարի նոր վերելքը, որի մասշտաբները և ինդուստրիալ զարգացած երկրների աշխատավորների դրության վրա ներգործությունը վկայում էին բանվորական շարժման նոր փուլի մասին։ Եթե 1945—1959 թթ. գործադուլ էր արել 150 միլիոն մարդ, ապա 60-ական թվականներին դրան մասնակցեցին արդեն 360 միլիոն, իսկ 1970 թվականից մինչև 1974 թվականի սկիզբը՝ 200 միլիոն մարդ։ Գործադուլային շարժումն ավելի լայնորեն ծավալվեց կապիտալիզմի հիմնաբերդերում՝ Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում, ԳՖՀ-ում, Ճապոնիայում։

Գործադուլների զգալի մասն սկսվեց նյութական դրության բարելավման պահանջներով (աշխատավարձի բարձրացման, աշխատաժամանակի կրճատման, վճարովի արձակուրդներ մտցնելու կամ դրանց ժամանակամիջոցը երկարացնելու)։ Սակայն բանվորները գնալով ավելի վճռականորեն էին պայքարում ոչ միայն աշխատավարձի ծավալի, այլև մի ամբողջ շարք պահանջների՝ աշխատանքի տեմպերի, աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի հարաբերակցության, ձեռնարկության հաշվին վերատրակավորման, «տեխնիկական պատճառներով» ազատման դեպքում աշխատանքով ապահովելու համար և այլն։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում տնտեսական պայքարը ձեռք է բերում քաղաքական նշանակություն։ Մի շարք պետությունների կողմից իրականացվող «եկամուտների քաղաքականությունը» անմիջականորեն ընդհարում է առաջ բերում բանվորների և պետության միջև։ Բանվորներն էլ ավելի վճռականորեն են մարտնչում վարչակազմի կառավարման ֆունկցիաները վերահսկելու, ընդհուպ մինչև արտադրության վրա դեմոկրատական վերահսկողության համակարգ հաստատելու իրավունքի համար։

Շատ հաճախ ավանդական պահանջները միահյուսվում են դասակարգային պայքարի հեռուն գնացող խնդիրների հետ, որն սպառնում է մոնոպոլիստական բուրժուազիայի տիրապետության բուն հիմքերին. աշխատավորները հանդես են գալիս զուտ քաղաքական լոզունգներով, ներառյալ դեմոկ-

ռատիան ընդարձակելու համար, ռեակցիայի հարձակման և ֆաշիզմի դեմ, սպառազինությունը կրճատելու համար, համընդհանուր խաղաղության պաշտպանության օգտին, իմպերիալիզմի ագրեսիվ արտաքին քաղաքականության դեմ պայքարը։

Պրոլետարիատը քաղաքական ելույթների ընթացքում առաջ է մղվում որպես համաժողովրդական շարժման հեգեմոն։ Բանվոր դասակարգի աճող հզորությունը նրան հնարավորություն է տալիս ավելի գործուն կերպով օգտագործել նվաճված իրավունքները, ազդել սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների ամբողջ համակարգի վրա։ ԳՖՀ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի և մյուս երկրների աշխատավորները պայքար են մղում ոչ միայն անմիջականորեն տնտեսական պահանջների, այլև արտադրության կառավարմանը մասնակցելու իրավունքի, դեմոկրատական ազգայնացման, մոնոպոլիաների իշխանությունը սահմանափակելու, դեմոկրատական ինստիտուտներն ընդարձակելու համար, բուրժուա-դեմոկրատական ազատությունների ռեալ բովանդակությունն ամրացնելու՝ բուրժուազիայի փորձերի դեմ։ Բանվոր դասակարգի պայքարի վրա գնալով ավելի մեծ ազդեցություն է գործում նրա ավանգարդը՝ կոմունիստական և բանվորական կուսակցությունները։ Կոմունիստական կուսակցությունները պայքարի այնպիսի ծրագիր են առաջ քաշում, որը ելնում է ոչ միայն բանվոր դասակարգի, այլև քաղաքի և գյուղի աշխատավորների շահերից։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երրորդ փուլում գործադուլային շարժման բնորոշ առանձնահատկությունը նրա մասսայականությունն է։ Գործադուլները աչքի են ընկնում մասնակիցների սոցիալական կազմի զգալի ընդարձակմամբ։ Նրանց մեջ ակտիվորեն ներգրավվում են բանվորների, կանանց, երիտասարդության նոր ջոկատներ, իսկ կապիտալի զարգացած երկրներում՝ բարձր որակավորում ունեցող բանվորները։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը ձգտում է էկոնոմիկայի պետական կարգավորման ուղիով նվազեցնել սոցիալական լարվածությունը, օգտագործում է սոցիալական մանյովրման ստեղնաշարը՝ «դասակարգային ներդաշնակություն» ստեղծելու և կապիտալիստական սիստեմում բանվոր դասակարգին «ինտեգրացնելու» համար։ Այդ ջանքերը վերջին հաշվով ձախողման են դատապարտված։

Հետպատերազմյան տարիների գործադուլներն աչքի են ընկնում պայքարի ձևերի բացառիկ հարստությամբ և տարբեր մեթոդների զուգակցմամբ։ Աշխատավորներն արդեն չեն բավարարվում աշխատանքը պարզապես դադարեցնելով, նրանք դուրս են գալիս փողոցները, կազմակերպում են միտինգներ և ցույցեր, որը հաճախ հասցնում է ոստիկանության ու զորքերի հետ ընդհարման։ «Սովորական» են դարձել համընդհանուր գործադուլները, որոնք ընդգրկում են էկոնոմիկայի ամբողջական ճյուղերը կամ ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսությունը։ 1958—1962 թթ. 80 նման տիպի գործադուլներ են եղել, 1963—1970 թթ. դրանց թիվը աճել և հասել է մինչև 200-ի։

Միշտ չէ, որ գործադուլները հաջողությամբ են վերջանում, բայց առկա է ընդհանուր միտումը՝ գործադուլավորների պահանջների լրիվ կամ մասնակի բավարարմամբ ավարտվող գործադուլների տեսակարար կշռի աճը։ Դասակարգային պայքարի զարգացման ընթացքում կատարվում է բանվոր դասակարգի պառակտումը հաղթահարելու պրոցես, բարձրանում է աշխատավորների քաղաքական հասունությունը։

Վերջին տարիներին պրոլետարիատի դասակարգային պայքարը ու-

ղեկցվում է դեմոկրատական լայն շարժման աճով, որի մեջ ներգրավվում են բնակչության տարբեր խավերն ու դասակարգերը։

Վերլուծելով արդի բանվորական շարժումը, 1969 թ. հունիսին Մոսկվայում կայացած կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցությունն արձանագրեց. «Արդի ժամանակաշրջանը բնութագրվում է ոչ միայն տնտեսական դրության բարելավման, այլև քաղաքական պահանջների համար բանվոր դասակարգի, աշխատավոր լայն զանգվածների պայքարի ուժեղացմամբ։ Պաշտպանելով իրենց կենսական շահերը, աշխատավորները միաժամանակ պայքարում են սոցիալական իրավունքների և դեմոկրատական ազատությունների համար։ Նրանց պահանջները գնալով մեծ չափով անմիջականորեն ուղղված են մոնոպոլիստական կապիտալի տիրապետության դեմ, նրա քաղաքական իշխանության դեմ... Մի շարք կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի խոշոր ճակատամարտերը սասանում են մոնոպոլիաների իշխանությունը, սրում կապիտալիստական հասարակության անկայունությունն ու հակասությունները։ Նրանք դասակարգային նոր մարտերի ավետաբերն են, մարտեր, որոնք կարող են հասցնել հիմնարար հասարակական վերափոխումների, սոցիալիստական հեղափոխության, աշխատավորների մյուս խավերի հետ դաշնակցած բանվոր դասակարգի իշխանության հաստատմանը»[2]։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային ասպարեզում դասակարգային ուժերի հարաբերակցության արմատական փոփոխման կարևորագույն դրսևորումներից մեկը համաշխարհային կոմունիստական շարժման վիթխարի աճն էր։ Չնայած այն մեծ զոհերին, որ ֆաշիզմի դեմ մղված պայքարում կրեցին կոմունիստական կուսակցությունները, աշխարհում կոմունիստների թիվը աճեց և 1939 թ. 4,2 միլիոնից 1945 թ. հասավ մինչև 20 միլիոն մարդու։ Դա պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ կոմունիստական կուսակցությունների խաղացած ավանգարդային դերի արդյունքն էր։

1944—1947 թթ. կոմունիստները տարբեր ժամանակներում մտնում էին Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Դանիայի, Նորվեգիայի, Ավստրիայի, Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի, Իռլանդիայի, Իրանի, Չիլիի, Կուբայի, Ինդոնեզիայի կառավարությունների կազմի մեջ։ Հակաֆաշիստական կառավարություններին կոմունիստների մասնակցելու փորձը հաստատեց զանգվածային արտապառլամենտական գործողությունների վրա հենվելով, պառլամենտների միջոցով սոցիալական խոր վերափոխումների հնարավորության վերաբերյալ կոմունիստական կուսակցությունների կոնցեպցիաները։

Դեմոկրատական կառուցվածքային փոփոխությունների ծրագիրը, որ սկզբում առաջ էին քաշում միայն կոմունիստները, պաշտպանություն գտավ աշխատավոր լայն զանգվածների շրջանում։ Արևմտաեվրոպական կոմունիստական կուսակցությունները, որպես սոցիալիզմին անցման աստիճան, առաջին պլան մղեցին «նոր դեմոկրատիայի» ստեղծման խնդիրը։ Դեմոկրատական հիմքի վրա դեպի սոցիալիզմ առաջընթացը պահանջում էր բանվոր դասակարգի շուրջը բուն աշխատավոր ամենալայն զանգվածների համախմբումը։ Դա դեմոկրատական հեղափոխության խաղաղ զարգացման կուրս էր, որի սկիզբը դրվեց Դիմադրության շարժմամբ։ Իմպերիալիստական ռեակ-

[2] «Международное Совещание коммунистических и рабочих партий. Документы и материалы, Москва, 5—17 июня 1969 г.». М., 1969, стр. 305—306.

ցիան, վախեցած սոցիալիզմի և միջազգային կոմունիստական շարժման ուժերի աճից, հակահարձակում ձեռնարկեց, որն իր գագաթնակետին հասավ 40-ական թվականների վերջին—50-ական թվականների սկզբին։

Մի քանի կոմունիստական և բանվորական կուսակցությունների Ինֆորմացիոն բյուրոյի գործունեությունը

Ռեակցիայի և պատերազմի ուժերին հաջող հակահարված տալու, աշխարհի կոմունիստներին համախմբելու համար հարկավոր էր փոփոխված պայմաններում կոորդինացնել նրանց գործողությունները։ 1943 թ. մայիսին Կոմունիստական ինտերնացիոնալի արձակումը չէր նշանակում կոմունիստական կուսակցությունների կապերի դադարեցում։ Հարկավոր էր միջկուսակցական կապերի նոր ձևեր գտնել։ Սովետական Միությունն կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ 1947 թ. սեպտեմբերին կայացավ ՍՍՀՄ-ի, Բուլգարիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը։ Ընդունված Դեկլարացիայում տրված էր միջազգային ասպարեզում ուժերի տեղաբաշխման վերլուծությունը և որոշված էին կոմունիստական կուսակցությունների խնդիրները։ Կոմունիստական կուսակցությունների առջև դրված էր իմպերիալիզմին հակահարված տալու համար հակամոնոպոլիստական և դեմոկրատական ընդհանուր ծրագրի հիման վրա բոլոր դեմոկրատական ու հայրենասիրական ուժերը միավորելու խնդիրը։ Խորհրդակցությունն ընդունեց մի քանի կոմունիստական և բանվորական կուսակցությունների Ինֆորմացիոն բյուրո ստեղծելու որոշումը։ Նրանց առջև դրվեց փորձի փոխանակում և գործողությունների կոորդինացում կազմակերպելու խնդիրը։

Ինֆորմացիոն բյուրոյի ստեղծումը նոր խթան տվեց միջազգային կոմունիստական շարժման զարգացմանը, օգնեց կոմունիստական կուսակցությունների գաղափարական և կազմակերպական աճին, նպաստեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլի պայմաններում կոմունիստական շարժման ստրատեգիայի և տակտիկայի մշակմանը։

1949 թ. նոյեմբերին Բուդապեշտում կայացավ Ինֆորմբյուրոյի մեջ մտնող կուսակցությունների հերթական խորհրդակցությունը։ Որպես կոմկուսների կարևորագույն խնդիրներ առաջ քաշվեցին հետևյալ հարցերը. պաշտպանել խաղաղությունը և խափանել նոր պատերազմի հրձիգների հանցագործ պլանները, խափանել դեմոկրատիայի և սոցիալիզմի դեմ իմպերիալիստների կողմից նյութվող դավադրությունը, կանխել տիրապետության ֆաշիստական մեթոդների հաստատումը, վճռական հակահարված տալ բանվոր դասակարգի կենսական շահերի դեմ մոնոպոլիաների արշավանքին և հասնել աշխատավորների սոցիալ-տնտեսական դրության բարելավման։

Հարկավոր է նշել, որ այն հիմնական դրական գաղափարները, որ շարադրված են Ինֆորմացիոն բյուրոյի փաստաթղթերում, այդ թվում ոչ միայն մոտակա նպատակների, այլև մոնոպոլիաների իշխանության վերացման, հասարակության սոցիալիստական վերափոխման պայքարի համար բոլոր դեմոկրատական ուժերի ազգային միասնության հաստատման խնդիրները, օգտագործվեցին և հետագա ստեղծագործական զարգացում ստացան կոմունիստական կուսակցությունների 1957, 1960 և 1969 թթ. միջազգային խորհրդակցությունների փաստաթղթերում։

50-ական թվականների կեսերին աշխարհում կատարված լուրջ փոփոխությունները, իր ճգնաժամի նոր, երրորդ փուլը կապիտալիզմի թևակոխելը կոմունիստական շարժման առջև դրեցին նոր խնդիրներ, պահանջեցին փոխ-

հարաբերությունների նոր ձևեր։ 1956 թ. ապրիլին Ինֆորմացիոն բյուրոյի մասնակիցները գտան, որ այն կատարել է իր խնդիրները և փոխադարձ համաձայնությամբ որոշեցին դադարեցնել նրա գործունեությունը և հրատարակել «Կայուն խաղաղության համար, ժողովրդական դեմոկրատիայի համար» թերթը։ Նպատակահարմար համարվեց փորձի փոխանակման և միջազգային կոմունիստական շարժման ընդհանուր գիծ մշակելու համար պարբերաբար անցկացնել կոմունիստական կուսակցությունների միջազգային խորհրդակցություններ։

Համաշխարհային կոմունիստական շարժումը մեր ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական ուժն է

Կոմունիզմի թշնամիները 50-ական թվականների երկրորդ կեսից ակտիվացրին կոմունիստական կուսակցությունների և մարքսիզմ-լենինիզմի դեմ պայքարը։ 70-ական թվականների սկզբին ոչ սոցիալիստական աշխարհի 75 գործող կոմկուսներից մոտ 40-ն ըստիպված էին աշխատել անլեգալ կամ կիսալեգալ պայմաններում։ Սակայն, չնայած ճնշումներին, դաղափարական և քաղաքական հետապնդումներին, պառակտիչների մանևրներին, կոմունիստական շարժումը աճում և ամրապնդվում էր. նա վերածվեց մեր ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական ուժի, դարձավ հասարակական առաջադիմության կարևորագույն գործոնը։

70-ական թվականների սկզբներին աշխարհում գործում էր 89 կոմունիստական և բանվորական կուսակցություն, որոնք բաղկացած էին երեք հիմնական ջոկատներից. սոցիալիստական երկրների կոմունիստական կուսակցություններ՝ 14, ինդուստրիալ զարգացած երկրների կոմունիստական կուսակցություններ՝ 26, զարգացող երկրների կոմունիստական կուսակցություններ՝ 49։ Սոցիալիստական երկրներում կար 40 միլիոն կոմունիստ, Եվրոպայի կապիտալիստական մասում՝ 2,5 միլիոն, Ասիայի ոչ սոցիալիստական երկրներում՝ 650 հազար, Ամերիկայում՝ ավելի քան 340 հազար, Աֆրիկայում՝ 60 հազար։

Թվական աճի հետ աշխատավորների շրջանում մեծանում է կոմունիստական կուսակցությունների հեղինակությունը, ինչպես նաև նրանց կշիռը երկրների քաղաքական կյանքում և միջազգային ասպարեզում։ Ներկայումս կոմունիստական շարժումը դարձել է հիրավի համաշխարհային, այլ ոչ թե միայն գերազանցապես ինդուստրիալ զարգացած երկրների պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի շարժում, ինչպիսին էր մի քանի տասնամյակ առաջ։ Բուն կոմկուսները դարձել են քաղաքականապես ավելի հասուն։ Կոմունիստական կուսակցությունների հասունությունը և ստեղծագործական բնույթն արտահայտվեց նրանում, որ 1956 թ. հետո կոմկուսների մեծամասնությունը, հարստացած ՍՄԿԿ XX համագումարի որոշումներով, ընդունեց նոր ծրագրեր կամ ծրագրային կարգով կարևոր փաստաթղթեր և հաջողությամբ լուծում է արդի դասակարգային պայքարի բարդ խնդիրները։

Շատ կոմունիստական կուսակցություններ դարձել են զանգվածային. Իտալիայի կոմունիստական կուսակցությունն ունի 1,5 միլիոն անդամ, Ֆրանսիայինը՝ ավելի քան 400 հազար, Ֆինլանդիայինը՝ 50 հազար։ Աշխատավորների վրա ազդեցություն գործելու պայքարում մեծ հաջողություններ են ձեռք բերել ֆրանսիական, իտալական, արևմտագերմանական կոմունիստները։ Այսպես, 1972 թ. մայիսին Իտալիայի պառլամենտական ընտրություններում կոմունիստ թեկնածուներն ստացան ընտրողների ավելի քան 9 միլիոն ձայն, կամ բոլոր ձայների 27,4 %-ը։ Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը աճել և 1961 թ. 370 հազարից 1970 թ. վերջերին հասել է 459 հազարի։ ՖԿԿ-ն ունի կուսակցության 19,5 հազար տեղական բջիջ, այդ

թվում 5,2 հազարը՝ անմիջականորեն արդյունաբերական ձեռնարկություններում։ Այստեղ 1970 թ. ընտրություններում կոմունիստների օգտին քվեարկեց ավելի քան 5,1 միլիոն ընտրող, կամ բոլոր ձայների 21,2 %-ը։

Սակայն կոմունիստական շարժման զարգացումը հաղթական երթ չէ, դա պայքարի դժվարին ուղի է, դա մարքսիզմ-լենինիզմի գաղափարական ժառանգության, լենինիզմի ստրատեգիական և տակտիկական սկզբունքների ստեղծագործաբար զարգացման ուղի է, դա ինչպես արտաքին, այնպես էլ միջազգային կոմունիստական շարժման ներսում մարքսիզմ-լենինիզմի թշնամիների դեմ կատաղի ճակատամարտերի ուղի է։ Յուրաքանչյուր հաջողություն համառ պայքարի արդյունք է։

Կոմունիստական շարժման ներսում մարքսիստ-լենինյաններին հարկ է լինում պայքար մղել օպորտունիստական տարբեր, ինչպես աջ, այնպես էլ «ձախ» հոսանքների դեմ։ Աջ օպորտունիզմը նշանակում է գաղափարախոսության և քաղաքականության մեջ սահել սոցիալ-դեմոկրատական դիրքերը։ «Ձախ» օպորտունիզմը, քողարկվելով ուլտրահեղափոխական ֆրազներով, փորձում է կոմունիստական կուսակցություններին աղանդավորական դիրքեր և ավանտյուրիստական գործողություններ մղել։ Ե՛վ աջ, և՛ «ձախ» օպորտունիզմը վնասում են կոմունիստական կուսակցություններին, խանգարում հեղափոխական ուժերի հակաիմպերիալիստական համախմբմանը։ Հաճախ «ձախ» և աջ օպորտունիզմը զիջում են կատարում նացիոնալիզմին կամ ուղղակիորեն սահում են նացիոնալիստական դիրքեր։

Միջազգային կոմունիստական շարժման դեմ աջ օպորտունիզմի խոշոր հարձակումները ձեռնարկվեցին 50-ական թվականների երկրորդ կեսին։ Իմպերիալիստական ռեակցիայի ճնշման տակ տատանվելով՝ կոմունիստական կուսակցությունների անկայուն տարրերը մարքսիզմ-լենինիզմը «բարելավելու» անվան տակ բացահայտ ռևիզիոնիստական արշավանք ծավալեցին։ Համաշխարհային կոմունիստական շարժումը սուր պայքար մղեց ռևիզիոնիզմի դեմ, որն այդ տարիներին դարձել էր կոմունիստական շարժման ներսում գլխավոր վտանգը։ Հատկապես պայքարը սուր էր ԱՄՆ-ի, Անգլիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բրազիլիայի կոմունիստական կուսակցություններում։

Աջ օպորտունիզմի երկրորդ հարձակումը ձեռնարկվեց 60-ական թվականների վերջին։ Չեխոսլովակիայի 1968 թ. դեպքերից հետո «սոցիալիզմի նոր կոնցեպցիաների» անվան տակ հանդես եկան Ավստրիայի կոմկուսում՝ Է. Ֆիշերի, Ֆրանսիայի կոմկուսում՝ Ռ. Գարոդիի, Իտալիայի կոմկուսում՝ «Մանիֆեստոյի», Վենեսուելայի կոմկուսում՝ Տ. Պետկովի խմբերը։ Դրանցից յուրաքանչյուրի հայացքներն ունեին իրենց երանգները, իսկ ամբողջությամբ վերցրած նրանց բնորոշ է աջ օպորտունիստական էությունը և հակասովետիզմը։ Այդ բոլոր խմբերը հեռացվեցին կոմունիստական կուսակցությունների շարքերից։

60-ական թվականներին կոմունիստական կուսակցությունները սուր պայքար էին մղում ձախ օպորտունիզմի դեմ։

Կոմունիստական շարժման մասշտաբների ընդարձակումն ուղեկցվում է միջազգային կոմունիստական շարժման մեջ հայտնի բարդությունների առաջացումով, նրա օղակների շարքում միասնության խախտումով։ Այդ բարդացումները բացատրվում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով։ Միջազգային կոմունիստական շարժման մի շարք դժվարություններ առաջացան համաշխարհային զարգացման արագացման և նոր պատմական պայմանների առաջ բերած նոր պրոբլեմների մշակման ու լուծման անհրաժեշտության հետ կապված։

Բարդացումներ ստեղծեցին նաև առանձին երկրների պատմական և սոցիալ-տնտեսական պայմանների տարբերությունները, որ հաճախ կոմունիստական շարժման պրոբլեմների լուծման գործում կոմունիստական կուսակցությունների տարբեր մոտեցում էր առաջացնում։

Կոմունիստների համախմբմանը խանգարում էին հեղափոխական շարժման մեջ մանրբուրժուական խավերի նախապաշարմունքները, նացիոնալիզմը։ Դա հատկապես նկատելի է արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում։ Մասամբ ի հաշիվ ոչ պրոլետարական խավերի՝ կոմունիստական կուսակցությունների քանակի աճը բարդացնում էր դրանց սոցիալական կազմը, ընդարձակում նացիոնալիզմի ներթափանցման, ինչպես նաև մարքսիզմ-լենինիզմից ինչպես աջ, այնպես էլ ձախ թեքվելու հողը։ Արդի հեղափոխական պրոցեսի բարդ բնույթով առաջացած միջազգային կոմունիստական շարժման բարդացումների ու դժվարությունների նշված օբյեկտիվ պատճառները բոլորովին էլ մեխանիկորեն չեն հասցրնում միջազգային կոմունիստական շարժման միասնության խախտմանը, եթե կոմունիստական կուսակցությունները վարում են քաղաքական ճիշտ գիծ։

Յուրաքանչյուր կոմունիստական կուսակցություն ինքնուրույն է լուծում իր առջև կանգնած պրոբլեմները՝ ելնելով ներքին և միջազգային պայմաններից։ Ուստի յուրաքանչյուր կուսակցության քաղաքականության հաջողությունը շատ բանով կախված է ոչ միայն երկրի ներսում նրա գործունեությունից, այլև ամբողջ միջազգային կոմունիստական շարժման հաջողություններից, միջկուսակցական կապերի զարգացումից, պայքարի ընդհանուր պրոբլեմների գծով համատեղ որոշումներ մշակելուց և գործողությունների կոորդինացումից։

Ինֆորմացիոն բյուրոյի գործունեության ավարտից հետո սկսեցին լայնորեն կիրառվել կոլեկտիվ փորձի համատեղ ուսումնասիրումը և ընդհանրացումը, միջազգային տեսական կոնֆերանսների անցկացումը, պատվիրակությունների փոխայցերը և այլն։ Կուսակցությունների միջև փորձի և կարծիքների փոխանակմանը, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հիման վրա կոմունիստական կուսակցությունների համախմբմանը նպաստում է կոմունիստական կուսակցությունների «Պրոբլեմի միրա ի սոցիալիզմա» տեսական և ինֆորմացիոն հանդեսը։

Կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1957, 1960 և 1969 թթ. միջազգային խորհրդակցությունները

Միջազգային կոմունիստական շարժումը չունի որևէ կանոնադրական կազմակերպական շրջանակներ։ Միջկուսակցական կապերի գլխավոր սկզբունքը միշտ եղել և մնում է պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի բարձրագույն զարգացումը սոցիալիստական պետությունների եղբայրական կուսակցությունների հարաբերությունները որոշող սոցիալիստական ինտերնացիոնալիզմն է։ Սակայն միջկուսակցական կապերի ձևերը երբեք բարացած չեն եղել. նրանք, կոնկրետ պատմական պայմաններից կախված ձևափոխվում են։ Ներկայումս կապի ամենանպատակահարմար ձևեր են ճանաչված երկկողմ և ռեգիոնալ հանդիպումները, ինչպես նաև կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների միջազգային խորհրդակցությունները։ Բացառիկ կարևոր նշանակություն ունեցան կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների 1957, 1960 և 1969 թթ. մոսկովյան խորհրդակցությունները։ Այդ խորհրդակցություններում միջազգային դրության խոր վերլուծություն կատարվեց, նշվեցին ամբողջ կոմունիստական շարժման առջև կանգնած ընդհանուր խնդիրները, ինչպես նաև նրա երեք ջոկատներից յուրաքանչյուրի՝

սոցիալիզմի երկրների կոմկուսների, ինդուստրիալ զարգացած երկրների կոմկուսների և զարգացող պետությունների կոմկուսների, կոնկրետ խնդիրները։

1957 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացան սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը և 64 կոմունիստական ու բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը։ Սոցիալիստական երկրների 12 կուսակցությունների ներկայացուցիչներն իրենց խորհրդակցությունում քննարկեցին և ընդունեցին Դեկլարացիա, 64 կուսակցությունների ներկայացուցիչները միջազգային խորհրդակցությունում ընդունեցին խաղաղության Մանիֆեստ։ Դեկլարացիան և խաղաղության Մանիֆեստը ժամանակակից պայմաններում համաշխարհային կոմունիստական շարժման քաղաքական հիմնական գիծը ձևակերպած աշքի ընկնող փաստաթուղթ հանդիսացան։

1957 թ. Մոսկվայի խորհրդակցությունը, նրանում ընդունված փաստաթղթերն ամրապնդեցին կոմունիստական կուսակցությունների միասնությունը և համագործակցությունը՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարական հիմքի վրա, նոր հորիզոններ բացեցին աշխարհի կոմունիստների գործունեության, համաշխարհային սոցիալիստական սիստեմի ամրապնդման, խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության և սոցիալիզմի համար մղվող պայքարում բոլոր ժողովուրդներին մոբիլիզացնելու գործում։

1960 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացավ կոմունիստական և բանվորական 81 կուսակցությունների ներկայացուցիչների երկրորդ խորհրդակցությունը։ Այդ ժամանակ աշխարհում գործում էր կոմունիստական 87 կուսակցություն, որոնք միավորում էին ավելի քան 36 միլիոն կոմունիստներ։ Խորհրդակցությունը քննարկեց համաշխարհային զարգացման կարևորագույն պրոբլեմները և ընդունեց Հայտարարություն ու ամբողջ աշխարհի ժողովուրդներին ուղղված Դիմում։ Դրանցում զարգացան և հարստացան 1957 թ. Դեկլարացիայի ու խաղաղության Մանիֆեստի գաղափարները։ Խորհրդակցության ծրագրային փաստաթուղթը՝ Հայտարարությունը, տվեց մեր դարաշրջանի բնույթի գիտական սահմանումը, նշելով, որ մարդկային հասարակության ամբողջ զարգացման վրա գնալով է՛լ ավելի մեծ չափով վճռական ազդեցություն է գործում համաշխարհային սոցիալիստական սիստեմը։ Հայտարարության մեջ եզրակացվում էր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլի վրա հասնելու մասին, որի առանձնահատկությունն այն էր, որ նա չի առաջացել համաշխարհային պատերազմի հետ կապված։

Խորհրդակցության փաստաթղթերում տրված են խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության և սոցիալիզմի համար կոմունիստների պայքարի հիմնական ստրատեգիական ուղղությունները, վերլուծված են կապիտալիզմի և սոցիալիզմի միջև, որպես դասակարգային պայքարի հատուկ ձևի, խաղաղ գոյակցության պրոբլեմները, նշված է խաղաղության և սոցիալիզմի համար պայքարի անխզելի կապը։

Հայտարարության մեջ ձևակերպված են կուսակցությունների փոխհարաբերությունների սկզբունքները, ընդգծված է շարժման միասնությունը և համախմբվածությունն ամեն կերպ ամրապնդելու նշանակությունը։ Նշված է ռևիզիոնիզմի, դոգմատիզմի և աղանդավորության դեմ կոմունիստական կուսակցությունների պայքարի կարևորությունը։

Հենվելով խորհրդակցության փաստաթղթերի վրա, աշխարհի շատ կոմունիստական կուսակցություններ մշակեցին և իրենց համագումարներում ընդունեցին պայքարի կոնկրետ ծրագրային փաստաթղթեր։

Միջազգային կոմունիստական շարժման մեծ իրադարձություն էր ՍՄԿԿ

XXII համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիրը՝ ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցման ծրագիրը։

1969 թ. հունիսին Մոսկվայում կայացավ կոմունիստական և բանվորական 75 կուսակցությունների ներկայացուցիչների երրորդ խորհրդակցությունը, որը ցուցադրեց հանուն շարժման ընդհանուր շահերի կոմունիստական կուսակցությունների համախմբման և միասնության միտումի ուժեղացումը։ Հսկայական նշանակություն ունեցավ խորհրդակցության ընդունած «Արդի ժամանակաշրջանում իմպերիալիզմի դեմ պայքարի խնդիրները և կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, հակաիմպերիալիստական բոլոր ուժերի գործողությունների միասնությունը» հանրագումարային փաստաթուղթը։ Նրանում ընդգծվում էր, որ համաշխարհային զարգացման գլխավոր գիծն առաջվա պես որոշվում է հեղափոխության և սոցիալիզմի, խաղաղության և ազգային-ազատագրական շարժման ուժերի կողմից, որ համաշխարհային հակաիմպերիալիստական, հեղափոխական շարժման հենարանը սոցիալիստական սիստեմն է, որի հաջողություններից է վճռական չափով կախված հին աշխարհի հետ նորի հակամարտությունը։

Հակաիմպերիալիստական շարժման մեջ գլխավոր ուշադրությունը կենտրոնացվում էր բանվոր դասակարգի առաջատար դերի վրա, մասնավորապես նրա դաշնակիցների քանակի ավելացման հետ կապված։ Ավելի լայնորեն էին դրված հակաիմպերիալիստական ճակատի խնդիրները։ Խորհրդակցությունը նշեց աշխատավոր գյուղացիության, առաջադեմ մտավորականության, ռիտասարդության հեղափոխական մեծ հնարավորությունները, կապիտալի աշխարհում ամբողջ դեմոկրատական, հակաիմպերիալիստական շարժման նշանակությունը, համաշխարհային հեղափոխական պրոցեսում Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման աճող դերը։

Խորհրդակցությունն ընդգծեց, որ իմպերիալիզմի դեմ, խաղաղության համար կոմունիստների պայքարն անբաժան է բանվոր դասակարգի վերջնական նպատակների համար պայքարից, կապիտալիզմի, իբրև սիստեմի դեմ պայքարից, հանուն բոլոր երկրներում սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի։

Դեմոկրատական նպատակներին հասնելու համար զանգվածային շարժումներն ընդարձակում են հեղափոխական վերափոխումների ոլորտը, հնարավորություն են տալիս միավորել բնակչության ամենալայն խավերը, քաղաքական հզոր ուժ ձևավորել ռեակցիայի և պատերազմի ուժերի դեմ հարձակվելու համար։ Նախադրյալներ են ստեղծվում մարտական միջազգային հակաիմպերիալիստական ճակատի կազմավորման համար։

Խորհրդակցության ընդունած «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի մասին» Դիմումում արտահայտված է միջազգային կոմունիստական շարժման միասնության գաղափարական հիմքը։ Խորհրդակցությունը հաստատեց իմպերիալիզմի դեմ համատեղ գործողությունների, եղբայրական կուսակցությունների կապերն ու կոնտակտներն ամեն կերպ ամրապնդելու, կուսակցությունների ստեղծագործական աշխատանքի ընդհանրացման և մարքսիզմ-լենինիզմի տեսության ստեղծագործարար զարգացման միջոցով առաջացող տարաձայնությունները հաղթահարելու մարքս-լենինյան կուսակցությունների գծի ճշտությունը։ Խորհրդակցությունը դատապարտեց կոմունիստական շարժման մեջ եղած աջ և «ձախ» թեքումները, ընդգծեց մարքս-լենինյան սկզբունքային գծից շեղվելու, այդ թվում նացիոնալիզմի վտանգի դեմ պայքարի կարևորությունը։

Կոմունիստական կուսակցությունները բացառիկ բարձր գնահատական

տվեցին խորհրդակցությանը։ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1969 թ.) պլենումը նշեց, որ խորհրդակցությունը կոմունիստական, բանվորական և ամբողջ ազատագրական շարժման մեծ հաջողությունն էր։

1969 թ. խորհրդակցությունից հետո ուժեղացավ կոմունիստական շարժման առջև կանգնած հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները համատեղ լուծելու, շարժման համախմբվածությունն ամրապնդելու միտումը։ Խորհրդակցությունից հետո անցած հինգ տարվա ընթացքում կայացան լայն շրջանի արդիական տեսական պրոբլեմների գծով ավելի քան 40 միջազգային տեսական կոնֆերանս, սեմինար, սիմպոզիում։

Կուսակցությունների գաղափարաքաղաքական աշխատանքի ուժեղացմանը, նրանց շարքերի համախմբմանը վիթխարի խթան տվեցին Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի և Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստումն ու անցկացումը։ Միջազգային կոմունիստական շարժման հետագա համախմբման ճանապարհին կարևոր ուղենիշ էր ՍՄԿԿ XXIV համագումարը։ ՍՄԿԿ XXIV համագումարի առաջ բերած հսկայական արձագանքը ցույց տվեց, որ ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության վարած արտաքին քաղաքական կուրսը, ՍՍՀՄ-ի տնտեսական աճի փառահեղ ծրագիրն առաջնակարգ միջազգային նշանակություն ունեն։ Համագումարը տվեց համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման քառորդ դարում կուտակված փորձի խոր վերլուծությունը։ Նա նշեց կոմունիստական շարժման աճող համախմբվածությունը և կոմունիստական կուսակցությունների երկկողմ կապերի ընդարձակումը։

ՍՄԿԿ XXIV համագումարը ցուցադրեց ՍՄԿԿ-ի միջազգային բարձր հեղինակությունը։ Եթե ՍՄԿԿ-ի XIX հետպատերազմյան առաջին համագումարին մասնակցում էր 44 պատվիրակություն, ապա XXIV համագումարին ներկա էր աշխարհի 91 երկրի 102 պատվիրակություն։

XXIV համագումարը նշեց այն խոչընդոտները և դժվարությունները, որոնք ընկած են կոմունիստական շարժման միասնության ճանապարհին։

Համագումարն արտահայտեց կապիտալիստական երկրներում հեղափոխական ուժերի զարգացմանը և հակաիմպերիալիստական պայքարին ամեն կերպ օգնելու ՍՄԿԿ-ի անսասան դիրքը։ Հաստատելով 1969 թ. Մոսկվայի խորհրդակցության եզրակացություններին հավատարմությունը, XXIV համագումարն իր բանաձևում ընդգծեց, որ ՍՄԿԿ-ն հետագայում ևս կապիտալի երկրների բանվորական շարժման նկատմամբ հետևողականորեն վարելու է միասնության և ինտերնացիոնալ համերաշխության քաղաքականություն։

Համագումարը արձանագրեց, որ Սովետական Միության քաղաքականությունը նշանակալիորեն ազդում է այնպիսի կարևոր հակաիմպերիալիստական ուժի հետ սոցիալիստական ընկերակցության երկրների մարտական դաշինքի ամրապնդման վրա, ինչպիսին է ազգային-ազատագրական շարժումը։ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների օգնությունը և բազմակողմանի կապերի ստեղծումն ազատագրված ժողովուրդներին հնարավորություն են տալիս վճռականորեն հեռանալ կապիտալիզմից և կանգնել սոցիալիստական աշխարհի կողմը, որն ուժեղացնում է իմպերիալիզմի դեմ պայքարի ընդհանուր ճակատը։

ՍՄԿԿ-ն բոլոր մայրցամաքների ազգային-հեղափոխական և ձախ սոցիալիստական կուսակցությունների հետ կոմունիստական և բանվորական կուսակցությունների սերտ համագործակցությունը ժամանակի հրամայական պահանջն է համարում։ Ձախ սոցիալիստների հետ ՍՄԿԿ Կենտկոմի հարաբերությունների ընդարձակման գիծը, համագումարի աշխատանքին չորս ձախ

սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությունը վկայում են հակամոնոպոլիստական և հակաիմպերիալիստական պայքարի գլխավոր ուղղությունների գծով բանվոր դասակարգի միասնության լայն հիմքի առկայության մասին։ Համագումարն ընդգծեց, որ գիտակցելով իր ինտերնացիոնալ պարտքը, Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը հետագայում ևս միջազգային գործերում վարելու է այնպիսի գիծ, որը նպաստելու է հակաիմպերիալիստական պայքարի հետագա ակտիվացմանը, նրա բոլոր մասնակիցների մարտական միասնության ամրապնդմանը։

ՍՄԿԿ XXIV համագումարը միջազգային հեղափոխական պրոցեսի զարգացման կարևոր ուղենիշ եղավ։ Համագումարի որոշումների իրականացումը մեծ ազդեցություն թողեց միջազգային բանվորական շարժման վերելքի և խաղաղության, ազգային անկախության, սոցիալական առաջադիմության ու սոցիալիզմի համար մղվող պայքարում բոլոր հակաիմպերիալիստական ուժերի հետագա ակտիվացման վրա։

ՌԵՖՈՐՄԻԶՄԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Ռեֆորմիզմը բանվորական շարժման մեջ ներկայացնում է սոցիալ-դեմոկրատիան՝ հոսանք, որը քարոզում է սոցիալիզմի համար պայքարի հեղափոխական միջոցներից հրաժարում։ Դա հասարակական զարգացման էվոլյուցիոն ձևերի կուրս է, դասակարգային պայքարի փոխարինում դասակարգերի համագործակցությամբ, բուրժուական հասարակությանը փաստորեն պաշտպանելու կուրս։ Սոցիալ-ռեֆորմիզմի գաղափարախոսությունը և պրակտիկան տրամագծորեն հակադիր են մարքսիզմ-լենինիզմին, կոմունիստական կուսակցությունների հեղափոխական տեսությանն ու պրակտիկային։

Պատերազմի վերջերին և նրա ավարտից հետո սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխներն աշխատանք ծավալեցին իրենց կուսակցությունները վերստեղծելու և քայքայված Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալը վերականգնելու ուղղությամբ։ 1947 թ. նոյեմբերին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների Ամստերդամի կոնֆերանսում ստեղծվեց Միջազգային սոցիալիստական կոնֆերանսների կոմիտե (ԿՈՄԻՍԿՈ), որի մեջ մտավ Եվրոպայի երկրների 33 սոցիալ-դեմոկրատական յուրաքանչյուր կուսակցությունից մեկական ներկայացուցիչ։ 1951 թ. հուլիսին Մայնի Ֆրանկֆուրտում կայացավ ԿՈՄԻՍԿՈՅԻ 8-րդ կոնֆերանսը, որը դարձավ Սոցիալիստական ինտերնացիոնալի (ՍԻ) հիմնադիր կոնգրեսը։ Կոնգրեսն ընդունեց կանոնադրություն և «Դեմոկրատական սոցիալիզմի նպատակներն ու խնդիրները» բանաձևը, որը փաստորեն հանդիսացավ ՍԻ-ի ծրագիրը։ ՍԻ-ի 2-րդ կոնգրեսը (1952 թ. հոկտեմբեր, Միլան) շարունակեց նրա առաջին կոնգրեսի գիծը, որոշում ընդունեց միջազգային հիմնական հարցերի գծով, որոնք շնչում էին «սառը պատերազմի» ոգով։ Սոցիալ-դեմոկրատիայի շարքային անդամների ճնշմամբ և աշխարհում լարվածության ընդհանուր թուլացման կապակցությամբ ՍԻ-ի 3-րդ կոնգրեսը (1953 թ. հուլիս, Ստոկհոլմ) արտահայտվեց չորս տերությունների ներկայացուցիչների հանդիպման, Կորեայում պատերազմը դադարեցնելու օգտին։ ՍԻ-ի 4-րդ կոնգրեսը (1955 թ. հուլիս, Լոնդոն) պաշտպանեց մի շարք հարցերի, մասնավորապես գերմանական պրոբլեմի լուծման Սովետական Միության խաղաղ նախաձեռնությունը։

ՍԻ-ին բնորոշ է կուրսի հակասականությունը, որն արտահայտվում է նրա ղեկավարության օպորտունիստական էությամբ, կազմի անմիատարրությամբ և դեմոկրատական զանգվածներին ճնշելով։

ՍԻ-ն 60-ական թվականներին շարունակում էր վարել աշխատավորների

պահանջների, որոնց անունից հանդես էր գալիս, և մոնոպոլիաների միջև խուսանավելու քաղաքականություն։ Այդ հակասությունը անդրադարձավ ՍԻ-ի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ կոնգրեսների նյութերի ու որոշումների և մյուս փաստաթղթերի վրա։ Այսպես, ՍԻ-ի 8-րդ կոնգրեսում (1968 թ. սեպտեմբեր, Ամստերդամ) բանաձև ընդունվեց զինաթափման վերաբերյալ, որը հավանություն էր տալիս երեք միջավայրերում միջուկային զենքի փորձարկումներն արգելելու մասին Մոսկվայի պայմանագրին, դատապարտում ապարտեիդը Հարավային Աֆրիկայում։ Միաժամանակ կոնգրեսի աշխատանքը ներթափանցված էր համաշխարհային սոցիալիստական սիստեմի և կոմունիզմի նկատմամբ ատելության ոգով։ ՍԻ-ի 11-րդ կոնգրեսը (1969 թ. հունիս, Իստբոռն) միջոցներ նշեց զարգացող երկրներում հեղափոխական պրոցեսի թուլացման ուղղությամբ։

ՍԻ-ն ստեղծվել էր իբրև սոցիալ-դեմոկրատական շարժման վարչաքաղաքական կենտրոն։ Իրականում նրա մեջ մտնող բոլոր կուսակցություններն անկախ են, իրենց գործողություններում ղեկավարվում են միայն սեփական շահերից ելնելով։ Ի տարբերություն Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի (1923—1940) կանոնադրության, ՍԻ-ի կանոնադրությունը վերացրեց ցանկացած հարցի գծով իր որոշումներն առանձին կուսակցությունների կողմից պարտադիր կերպով կատարելու սկզբունքը։

Ժամանակակից սոցիալ-ռեֆորմիզմը

Հետպատերազմյան բոլոր տարիներին աջ սոցիալ-դեմոկրատիան շարունակում էր ընթանալ դասակարգային պայքարից հրաժարվելու ուղիով, արդիականության հեղափոխական մայրուղու հետ գտնվելով խոր հակասության մեջ։ Պրոլետարական հեղափոխության տեսությանը նա հակադրեց կապիտալիզմի՝ սոցիալիզմին խաղաղ ներաճելու տեսությունը և պրակտիկան։ «Դեմոկրատական սոցիալիզմի» այդ կոնցեպցիան ելնում էր այն դրույթից, թե իբր կապիտալիստական սեփականությունը փոխում է իր էությունը, «տրանսֆորմացվում է»։

Ժամանակակից ռեֆորմիզմին բնորոշ են. բանվորական շարժման «ապագաղափարայնացման» քարոզը, մարքսիզմի «հնացածության» պատրվակով նրանից բացահայտորեն հրաժարվելը, ընդհանրապես հեղափոխական որևէ կոնցեպցիայից հրաժարվելը և հեղափոխական աշխարհայացքի փոխարինումը բուրժուական հայացքների, քրիստոնեական քարոզների և բարեպաշտական ցանկությունների շլիցափլավով։ Դա վառ կերպով արտահայտվեց ՍԻ-ի ֆրանկֆուրտյան 1-ին կոնգրեսի դեկլարացիայում, որպես «խառն էկոնոմիկայի» կապիտալիստական պետության մեջ բանվոր դասակարգի «ինտեգրացման» կոչ, հակակոմունիզմ և հակասովետիզմ, արդիական քաղաքական հարցերի շուրջը լոկ խոսքերով «ձախացում» և գործնականում մոնոպոլիաների հավանությանն արժանացող քաղաքականություն։ 1962 թ. ՍԻ-ի խորհուրդն ընդունեց նոր, ըստ էության լիբերալ-բուրժուական դեկլարացիա, լրիվ զրաղվածություն, եկամուտների արդարացի բաշխում, դեմոկրատական աղատություններ և այլն։ Բայց նրանում բացակայում էր գլխավորը՝ կապիտալիզմի վերացման խնդիրը։

Աջ սոցիալ-դեմոկրատիան ժխտում է ոչ միայն դասակարգային պայքարը, այլև նույնիսկ ժամանակակից կապիտալիստական հասարակությունում անտագոնիստական դասակարգերի առկայությունը։ Առանձին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերը, որ ընդունվել են պատերազմից հետո, հիմնականում ձևափոխում են ՍԻ-ի կոլեկտիվ փաստաթղթերը։ Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը ծրագրերի մեծամասնությունում հայտարարվում է «սոցիալիստական հասարակարգի օրի-

նական գործոն»։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերը որպես իդեալ առաջ են քաշում «համընդհանուր բարեկեցության պետությունը»։ Իր համաձայնողական քաղաքականությամբ աջ սոցիալ-դեմոկրատիան կապիտալիզմի «նորացման» հարցում մրցակցում է բուրժուական կուսակցությունների հետ։

Ավանդական ռեֆորմիստական քաղաքականությունը, մասնակի դիջումների իրականացումը, որը չի շոշափում մոնոպոլիաների տնտեսական և քաղաքական իշխանությունը, անխուսափելիորեն կոնֆլիկտի մեջ են մտնում զանգվածների ոչ միայն արմատական, այլև առաջնահերթ շահերի հետ։ Այստեղից էլ սոցիալ-դեմոկրատիայի սոցիալական բազայի անխուսափելի նեղացումը և զանգվածների վրա նրա ազդեցության թուլացումը։ Աջ պարագլուխների՝ պետական-մոնոպոլիստական սիստեմի մեջ բանվորական շարժումն «ինտեգրացնելու» ջանքերն աճող դժգոհության և դիմադրության են հանդիպում ներքևից, ;արքային սոցիալ-դեմոկրատների և արհմիությունների կողմից։ Վերջին տարիներին սկսել է ավելի նկատելի դառնալ սոցիալ-դեմոկրատիայի շերտավորումը։ Սոցիալ-դեմոկրատիայի լայն զանգվածների շրջանում նկատվում է ինքնուրույն, բուրժուազիայի շահերին չենթարկվող քաղաքականություն վարելու ձգտում։ Սոցիալ-դեմոկրատների ձախ թևը ճնշում է գործադրում ղեկավարության վրա, պահանջելով ներքին և արտաքին քաղաքականության ավելի ռեալիստական կուրս։ Ավելի հեռատեսներն սկսում են հասկանալ, որ նույնպիսի հեռանկար է բացվում կոմունիստական կուսակցությունների հետ մերձեցման ճանապարհին։ Սոցիալ-դեմոկրատիայի առանձին գործիչներ հեռանում են հակակոմունիզմի դիրքերից։ Սկսել են տարբեր կողմնորոշում ունեցող արհմիությունների միջև կապեր հաստատվել առանձին երկրների և միջազգային մասշտաբով։

Ձախ ուժերը, չնայած սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխների հականերգործությանը, արտահայտում են իմպերիալիզմի դեմ պրակտիկ պայքարում միասնության հասնելու աշխատավորների աճող ձգտումը։ Ներկուսակցական պայքարը հասցրեց սոցիալ-դեմոկրատիայի ներսում ձախ ուժերի ամրապնդմանը։ Հաճախ դա միանում էր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պառակտման հետ, մի շարք երկրներում՝ ձախ սոցիալիստական կուսակցությունների և խմբերի ստեղծման հետ (Նիդեռլանդներում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ճապոնիայում և մյուս երկրներում)։ Ձախ սոցիալ-դեմոկրատները պայքար են մղում մոնոպոլիաների իշխանության սահմանափակման, արհմիութենական իրավունքների ընդարձակման, խաղաղության և զինաթափման, կոմունիստական կուսակցությունների հետ գործողությունների միասնության համար։

Սոցիալ-ռեֆորմիզմը բազմամյա պրակտիկ գործունեությամբ ապացուցեց հակակապիտալիստական և հակաիմպերիալիստական պայքարի հենարան լինելու իր անկարողությունն ու չցանկանալը։ Դրա հետևանքներից մեկը իսկական հեղափոխական, կոմունիստական կուսակցությունների օգտին ուժերի հարաբերակցության անշեղ փոփոխությունն է։ Մեծ Հոկտեմբերի ժամանակաշրջանում աշխարհում կար 400 հազար կոմունիստ, սոցիալ-դեմոկրատներ՝ ավելի քան 3 միլիոն։ 10 տարի անց, 1928 թ. կոմունիստների թվաքանակը հասել էր 1,6 միլիոնի, սոցիալ-դեմոկրատներինը՝ 6,5 միլիոնի։ 1945 թ. կոմունիստական կուսակցությունները իրենց շարքերում միավորում էին 20 միլիոն մարդ, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները՝ մոտ 10 միլիոն։ 1970 թ. կոմունիստների բանակն իր շարքերում ուներ 50 միլիոն, իսկ սոցիալ-դեմոկրատականը՝ 15,4 միլիոն մարդ։ Հարաբերակցությունը, ինչպես տեսնում ենք, փոփոխվել է։

Այսուհանդերձ սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը դեռևս մեծ է։ 1970 թ. Սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ մտնող սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում կար 15,4 միլիոն անդամ, ընտրություններում նրանց օգտին քվեարկեց 77 միլիոն մարդ։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները ամենամեծ ազդեցությունն ունեն Արևմտյան Եվրոպայի երկրներում։ Մի շարք երկրներում նրանք թվաքանակով գերազանցում են կոմունիստական կուսակցություններին։ Արևմտյան Եվրոպայի երկրներում 9,3 միլիոն անդամ ունեցող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների օգտին 60-ական թվականների կեսին ձայն տվեց ընտրողների 35 %-ը, իսկ կոմունիստների օգտին (թվաքանակը՝ 2,5 միլիոն մարդ)՝ մոտ 9 %-ը։ Արհմիությունների 40 միլիոն անդամներից մոտ 30 միլիոնը մտնում է արևմտաեվրոպական պետությունների սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության տակ գտնվող արհմիութենական կազմակերպությունների մեջ։

Սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության օբյեկտիվ հիմքը բանվոր դասակարգի շարքերում սոցիալական այնպիսի խավերի առկայությունն է, որոնք հանդես են գալիս որպես մանրբուրժուական, ռեֆորմիստական գաղափարախոսության կրողներ։ Սոցիալ-դեմոկրատներին պաշտպանում է մոնոպոլիստական բուրժուազիան, որը հանձին նրա տեսնում է բանվոր դասակարգի պառակտման և նրան հեղափոխական ուղուց շեղելու գլխավոր գործիքի։ Աշխատավոր զանգվածների շրջանում սոցիալ-դեմոկրատիայի ռեֆորմիստական գաղափարների կարևոր տարածողներից մեկը «բանվորական արիստոկրատիան» և «բանվորական բյուրոկրատիան» է։ Արհմիութենական և զանգվածային մյուս կազմակերպությունների ընդհանուր աճը, կապված վարձու աշխատանքի անձանց ավելացման հետ, հասցրեց նաև այն միավորումների ավելացմանը, որոնք ավանդաբար կապված են սոցիալ-դեմոկրատիայի հետ։

Հուսախաբվելով բուրժուական կուսակցություններից, քաղաքային մեծաթիվ միջին խավերը, մանր բուրժուազիան հաճախ իրենց հայացքն ուղղում են սոցիալ-դեմոկրատիային, հանձին նրա տեսնելով, իրենց կարծիքով, բավականին «հեղափոխական» և միաժամանակ բավականին «չափավոր» կուսակցության։

Հանդես գալով աշխատավոր զանգվածների անունից, սոցիալ-դեմոկրատիան ստիպված է նրանց հետ միասին պայքար մղել որոշակի, բայց այնպիսի պահանջների համար, որոնք դուրս չեն գալիս կապիտալիստական գոյություն ունեցող սիստեմի շրջանակներից։ Մանևրելով մոնոպոլիաների շահերի և աշխատավորների պահանջների միջև, սոցիալ-դեմոկրատիան որոշակի պահերին արտահայտում է պրոլետարիատի շահերը, մասնակցում ռեֆորմներ անցկացնելու շարժմանը և հասնում առօրյա կյանքի մի քանի հարցերի լուծման որոշակի հաջողություններ։ Կենսական պահանջների համար պայքարի հաջողություններն ինքնըստինքյան սնուցող միջավայր են ռեֆորմիստական պատրանքների պահպանման համար։ Բացի այդ, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը, գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները և շահույթների չտեսնված կուտակումները մոնոպոլիաներին հնարավորություն են տալիս սոցիալական լայն մանևրներ իրականացնել՝ հասարակական կատակլիզմները կանխելու համար։ Այդ խուսանավումները մի շարք դեպքերում համընկնում են սոցիալ-դեմոկրատիայի ռեֆորմիստական պրակտիկայի հետ, ամրապնդելով «սոցիալական ներդաշնակության» վերաբերյալ վերջինիս փաստարկները և սնելով խաղաղ ճանապարհով, առանց սոցիալիստական հեղափոխության, սոցիալիզմին անցնելու հնարավորության մասին ռեֆորմիստական պատրանքները։ Ժամանա-

կակից պայմաններին հարմարվող մոնոպոլիստական կապիտալիզմի հակասական պրոցեսներն օբյեկտիվորեն ազդում են սոցիալ-դեմոկրատիայի դիրքերի ամրապնդման վրա։ Ներկայումս սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ տենդենցների պայքար է գնում՝ կա՛մ գաղափարախոսության և քաղաքականության մեջ վերջնականապես ձուլվել խուսանավող մոնոպոլիստական բուրժուազիայի դիրքերին և հեռանկարում կորցնել զանգվածային սոցիալական հենարանը, կա՛մ անցնել հետևողական դասակարգային պայքարի դիրքերը։

Կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների գործողությունների միասնության պրոբլեմները

Գոյություն ունեցող քաղաքական, արհմիութենական և աշխատավորների զանգվածային մյուս կազմակերպությունները գտնվում են կոմունիստական, ռեֆորմիստական, կրոնական, բուրժուական, մանրբուրժուական և մյուս կուսակցությունների ազդեցության տակ։ Կոմունիստական կուսակցությունները միշտ բանվոր դասակարգի կենսական պահանջների համար մղված պայքարում հանդես էին գալիս սոցիալ-դեմոկրատների և նրանց ազդեցության տակ գտնվող կազմակերպությունների հետ գործողությունների միասնության օգտին։ Պայքարի փորձը հաստատում է, որ կոմունիստների և սոցիալիստների համատեղ գործողությունները բանվոր դասակարգին հնարավորություն են տալիս վճռական ազդեցություն գործել քաղաքական կյանքի վրա և իր շուրջը համախմբել խաղաղության ու դեմոկրատական վերափոխումների պահպանմամբ շահագրգռված հասարակական խավերին։

Կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև գոյություն ունեն սկզբունքային գաղափարական և քաղաքական տարաձայնություններ, մասնավորապես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու բովանդակության և ուղիների, բանվոր դասակարգի քաղաքական կուսակցության դերի մասին և այլն։ Սակայն կոմունիստները համոզված են, որ գաղափարական տարաձայնությունները արգելք չպետք է հանդիսանան գործողությունների միասնությանը, հանուն բանվոր դասակարգի շահերի։ Կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին մերձեցնում է արդիականության արմատական պրոբլեմների գծով շահերի միասնությունը՝ խաղաղության, ազգային անկախության, դեմոկրատիայի պաշտպանության և ընդարձակման, աշխատավորների սոցիալական կարիքների համար պայքարը։

Պայքարի լոզունգների ռադիկալացումը և աշխատավորության ընդհանուր ձախացումը չեն կարող ազդեցություն չթողնել սոցիալ-դեմոկրատիայի վրա։ Կոմունիստական կուսակցությունները ձգտում են օգնել սոցիալ-դեմոկրատական զանգվածին՝ անցնելու անդիջում հակամոնոպոլիստական պայքարի դիրքերը։ Կոմունիստների առաջ քաշած հակամոնոպոլիստական դիրքորոշումը օբյեկտիվորեն արտացոլում է աշխատավոր լայն զանգվածների, այդ թվում նաև սոցիալ-դեմոկրատների ետևից գնացողների շահերը։

Ձգտելով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հետ գործողությունների միասնության, կոմունիստական կուսակցությունները ձգտում են հասնել բանվոր դասակարգի գործողությունների միասնության, ընդ որում պահպանելով իրենց գաղափարական անաղարտությունը և կազմակերպական ինքնուրույնությունը։ Գործողությունների միասնության հասնելու ուղղությամբ հիմնական աշխատանքը կոմունիստները կատարում են արհմիություններում, ձեռնարկություններում և հիմնարկներում, տարբեր մասսայական կազմակերպություններում, գործադուլների և մասսայական քաղաքական կամպանիաների ժամանակ։

Կոմունիստների և սոցիալիստների համատեղ ելույթները գործադուլների ժամանակ հաճախակի են դարձել Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ճապոնիայում, Բելգիայում, ԳՖՀ-ում և մյուս երկրներում։ Կոմունիստները և սոցիալիստները համատեղ հանդես են գալիս խաղաղության, զինաթափման համար, ընդդեմ իմպերիալիզմի ագրեսիվ գործողությունների։ Բանվորական լայն զանգվածները իրենց բողոքն արտահայտեցին Կուբայում, Դոմինիկյան Հանրապետությունում, Վիետնամում, Կամպուչիայում, Լաոսում ԱՄՆ-ի ագրեսիայի դեմ, ընդդեմ Մերձավոր Արևելքում Իսրայելի ագրեսիայի։ Ճապոնիայի աշխատավորները կոմունիստների և սոցիալիստների գլխավորությամբ միասնական գործողություններով հանդես են գալիս ամերիկա-ճապոնական «անվտանգության պայմանագրի» դեմ։ ԳՖՀ-ում ամեն տարի անցկացվում են բազմաթիվ զատկական երթեր ընդդեմ երկրի միլիտարիզացման և նեոֆաշիզմի աճման։ Իտալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ֆինլանդիայում, Ճապոնիայում կոմունիստները և սոցիալիստները բլոկ են կազմում ընտրությունների ժամանակ, որը շոշափելի արդյունքներ է բերում երկու կուսակցություններին էլ։

Սոցիալիստների հետ կոմունիստների գործողությունների միասնության համար պայքարը որոշակի արդյունքներ է տալիս։ Կոմունիստական կուսակցությունները կայունորեն ու համբերատարությամբ վարում են սոցիալ-դեմոկրատիայի հետ գործողությունների միասնությունն ապահովելու և դրանով իսկ բանվոր դասակարգի միասնությունը ապահովելու տակտիկական գիծ։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի ստեղծումը

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը միջազգային միասնական արհմիութենական կազմակերպություններ չկային։ Իսկական համաշխարհային արհմիութենական կազմակերպություն ստեղծելու շարժման գլուխ կանգնեցին սովետական արհմիությունները։ Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիան (ԱՀՖ) ստեղծվեց 1945 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, Փարիզում կայացած նրա առաջին կոնգրեսում։ Նրան մասնակցում էին 56 երկրների 67 միլիոն անդամներ միավորող արհմիությունների ներկայացուցիչներ։ ԱՀՖ-ն դարձավ արհմիությունների շարժման պատմության մեջ առաջին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ինչպես ֆեդերացիայի, այնպես էլ արհմիությունների ներսում լիակատար դեմոկրատիայի, միմյանց միջև սերտ համագործակցության և փոխօգնության, ինֆորմացիայի և աշխատանքի փորձի սիստեմատիկ փոխանակման հիման վրա գործող իսկական համաշխարհային կազմակերպություն։

ԱՀՖ-ն քայքայելու ռեֆորմիստների 40-ական թվականների վերջին ձեռնարկած փորձերը վերջացան ձախողմամբ։ ԱՀՖ-ն ոչ միայն դիմացավ, այլև սկսեց վստահորեն ուժեր հավաքել, տարեցտարի ընդարձակելով իր ազդեցությունն ու կազմակերպական կապերը տարբեր երկրների աշխատավորական նոր խավերի հետ։ 1949 թ. հունիս—հուլիսին Միլանում կայացավ Արհմիությունների համաշխարհային 2-րդ կոնգրեսը, որը ներկայացնում էր 72 միլիոն անդամ ունեցող 48 երկրների արհմիությունները։ Կոնգրեսը հավանություն տվեց ԱՀՖ-ի գործունեությանը, արհմիութենական շարժման միասնության համար, խաղաղության և դեմոկրատիայի համար, աշխատավորների կենսական շահերի համար նրա մղած պայքարին։ Կոնգրեսը դատապարտեց ռեֆորմիստական արհմիությունների պարագլուխների պառակտողական գործողությունները և ընդգծեց, որ ԱՀՖ-ն մնում է աշխարհի երկրների մե-

ծամասնության արհմիությունները միավորող հզոր կազմակերպություն։ Արհմիությունների համաշխարհային 3-րդ կոնգրեսում (1953 թ. հոկտեմբեր) ընդունվեց ամբողջ աշխարհի աշխատավորներին ուղղված մանիֆեստ, որում շարադրված էին արհմիությունների խնդիրները։ Կոնգրեսը բոլոր աշխատավորներին միասնության կոչ արեց ընդհանուր պահանջների համար մղվող պայքարում։ Արհմիությունների համաշխարհային 4-րդ կոնգրեսը (1957 թ. հոկտեմբեր, Լայպցիգ) նորից ցույց տվեց, որ ԱՀՖ-ն ձգտում է ավելի ակտիվորեն ազդել միջազգային իրադարձությունների վրա։ Կոնգրեսը հանդես եկավ ջերմամիջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու պահանջով և աշխարհում զինված ուժերը կրճատելու առաջարկությամբ։

Արհմիությունների համաշխարհային 5-րդ կոնգրեսի աշխատանքին (1961 թ. դեկտեմբեր, Մոսկվա) մասնակցում էին 143 միլիոն աշխատավորներ ներկայացնող 97 երկրների պատվիրակներ։ Կոնգրեսն ընդունեց գործողությունների ծրագիր, որում նշված էին արդի ժամանակաշրջանում ԱՀՖ-ի և ամբողջ արհմիութենական շարժման նպատակները։ Կոնգրեսն ընդունեց նաև «Դիմում ամբողջ աշխարհի աշխատավորներին», որով նրանց կոչ էր անում համատեղ պայքարել սոցիալական և տնտեսական պահանջների բավարարման, դեմոկրատիայի, սոցիալական առաջադիմության և խաղաղության ամրապնդման համար։ «Սոցիալական ապահովության խարտիայում» կոնգրեսը բոլոր աշխատավորների համար հռչակում էր սոցիալական ապահովության հավասար իրավունքներ՝ առանց տարիքի և սեռի, ազգային, ռասայական հատկանիշի որևէ խտրականության։

1970 թ. ԱՀՖ-ն նշեց իր գոյության 25-ամյակը։ Այդ բոլոր տարիներին նա կանգնած է եղել միջազգային պրոլետարիատի շահերի պաշտպանության դասակարգային դիրքերում, իր գլխավոր հարվածն ուղղելով աշխատավորների գլխավոր թշնամի մոնոպոլիաների դեմ, կոչ անելով զանգվածներին համախմբելու խաղաղության և սոցիալական առաջադիմության համատեղ պայքարի համար։

1974 թ. մոտերքին աշխարհի արհմիությունների 260 միլիոն բոլոր անդամներից ԱՀՖ-ն ուներ ավելի քան 150 միլիոնը։ Արհմիությունների 8-րդ կոնգրեսի աշխատանքին (1973 թ. հոկտեմբեր, Վառնա, Բուլղարիա) մասնակցում էին արհմիութենական 170 կազմակերպություններ, որոնցից 110-ը չէին մտնում ԱՀՖ-ի մեջ։ Կոնգրեսում ներկայացված արհմիությունների անդամների ընդհանուր թվաքանակը գերազանցում էր 208 միլիոնը, որը 55 միլիոնով ավելի էր, քան ԱՀՖ-ի նախորդ, 7-րդ կոնգրեսում (1969 թ. Բուդապեշտ)։ Դա վկայում է այն մասին, որ Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիան պրակտիկ գործունեության մեջ և իր կոնգրեսների որոշումներում արտացոլում և պաշտպանում է ամբողջ համաշխարհային արհմիութենական շարժման լայն շրջանների շահերը։

Միջազգային ռեֆորմիստական արհմիութենական կազմակերպությունները

ԱՀՖ-ի և նրա մեջ մտնող արհմիութենական կազմակերպությունների առաջադիմական գործունեությունը դուր չէր գալիս արհմիությունների աջ պարագլուխներին։ Ուստի նրանք պառակտում մտցրին նախկինում միասնական Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների ազգային արհմիութենական միավորումներում։ 1949 թ. դեկտեմբերին ռեֆորմիստական արհմիությունների առաջին կոնֆերանսում ստեղծվեց Ազատ արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան (ԱԱՄԿ)։ Կոնֆերանսին, որը դարձավ ԱԱՄԿ-ի 1-ին կոնգրեսը, մասնակցեցին 51 երկրի 48 միլիոն անդամ ունեցող 57 արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Միջազգային ռեֆորմիստական արհմիութենական կենտրոնի ստեղծումն զգալիորեն թեթևացրեց աշխատավորների ձեռք բերած սոցիալ-տնտեսական նվաճումների վրա ռեակցիայի հարձակումը։ Իր գործունեության մեջ ԱԱՄԿ-ն ելնում է ռեֆորմիզմի և «դասակարգային համագործակցության» սկզբունքներից։ 1973 թ. սկզբներին ԱԱՄԿ-ն իր շարքերում ուներ 51,5 միլիոն անդամ, որոնք միավորված էին կապիտալիստական 89 երկրների 113 արհմիութենական կազմակերպություններում։

Միջազգային ռեֆորմիստական կենտրոն է նաև 1920 թ. ստեղծված Քրիստոնեական արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան (ՔԱՄԿ)։ Նա միավորել է քրիստոնեական ուսմունքի և բարոյականության վրա հիմնված «աշխատանքի քրիստոնեական կոնցեպցիան» ընդունած արհմիութենական կազմակերպությունները։ Այդ կազմակերպությունը օգտագործում է եկեղեցու սոցիալական դոկտրինան, որպեսզի մթագնի հավատացյալ աշխատավորների դասակարգային գիտակցությունը, նրանց հեռացնի իրենց իրավունքների համար ակտիվ պայքարից։ Իր սոցիալական բազան ընդարձակելու նպատակով ՔԱՄԿ-ն հրաժարվեց զեղի կաթոլիկական դոկտրինան միակողմանիորեն կողմնորոշվելուց։ ՔԱՄԿ-ի 16-րդ կոնգրեսը (1968 թ. հոկտեմբեր, Լյուքսեմբուրգ) իրականացրեց «ապաքրիստոնեացում». ծրագրից հանվեցին քրիստոնեության սոցիալական դոկտրինայի վկայակոչումները։ ՔԱՄԿ-ն վերանվանվեց Աշխատանքի համաշխարհային կոնֆեդերացիա (ԱՀԿ)։ ԱՀԿ-ի 17-րդ կոնգրեսը (1969 թ. մայիս, Ժնև) քննարկեց քրիստոնեական սինդիկալիզմի մոդեռնացված ծրագիրը։ Նրա մեջ մտցվեցին առանձին սոցիալ-տնտեսական պահանջներ, բայց «դասակարգային անտագոնիզմի» բուն գաղափարը մերժվեց։ ԱՀԿ-ն ներկայումս էլ մոտ է կաթոլիկությանը, սերտորեն կապված է կղերական քաղաքական ուժերի և Վատիկանի հետ։ ԱՀԿ-ն կանգնած է հակասովետական դիրքերում, որն իր արտացոլումը գտավ նաև 1973 թ. սեպտեմբերին Ֆրանսիայի Էվիան քաղաքում կայացած համագումարի աշխատանքում։ 1973 թ. ԱՀԿ-ն իր շարքերում ուներ 14 միլիոն անդամներ, որոնք միավորված էին 73 երկրների 86 կազմակերպություններում։

Բացի այն արհմիութենական կենտրոններից և արհմիութենական կազմակերպություններից, որոնք հարում են ԱՀՖ, ԱԱՄԿ, ԱՀԿ միջազգային արհմիութենական կազմակերպություններին, գոյություն ունեն մի շարք այսպես կոչված ինքնավար արհմիություններ, որոնք չեն մտնում նրանց մեջ և կապված չեն մեկը մյուսի հետ։ Այդ արհմիությունների վերաբերյալ տեղեկությունները խիստ աղոտ են։ Ենթադրում են, որ ինքնավար արհմիությունների անդամների ընդհանուր թիվը հասնում է մոտ 18 միլիոն մարդու։

Արհմիութենական շարժման միասնության հարցը

Դասակարգային մարտերի պրակտիկան ցույց է տալիս, որ արհմիութենական շարժման միասնությունը պրոլետարիատի հզոր զենքն է իր տնտեսական և քաղաքական պահանջների բավարարման համար մղվող պայքարում։ Համաշխարհային սոցիալիստական սիստեմի, ազատագրական շարժման հաջողությունները, կապիտալի երկրներում դասակարգային պայքարի սրումը, խաղաղության կողմնակիցների ընդարձակվող շարժումը և մյուս դեմոկրատական շարժումները ազգային և միջազգային մասշտաբներով լայն հնարավորություններ են բացում արհմիութենական գործողությունների միասնության համար։ Միասնության և համախմբվածության համար պայքարը եղել և մնում է առաջադեմ արհմիութենական շարժման ստրատեգիական խնդիրը։ Միասնության համար պայքարի ավանգարդում են ԱՀՖ-ն և նրա մեջ մտնող կազմակերպությունները։ Տարբեր ուղղության պատկանող արհմիություններն զբաղվածության և վերարտադրության պրոբլեմները լուծելու համար ավելի հաճախակի են համատեղ մարտեր մղում ձեռնարկատե-

բերի և պետության դեմ։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի, միջպետական իմպերիալիստական ինտեգրացման և գիտատեխնիկական հեղափոխության արագ զարգացման պայմաններն արհմիություններին ստիպում են պայքար մղել արդեն ոչ միայն զուտ արհմիութենական շահերի համար, այլև հանդես գալ քաղաքական ու սոցիալ-տնտեսական լայն շրջանի համատեղ պրոբլեմների գծով։

Արհմիութենական միասնության գաղափարները էլ ավելի լայն պաշտպանություն են գտնում ռեֆորմիստական արհմիությունների անդամների և առանձին արհմիութենական կազմակերպությունների կողմից։ ԱԱՄԿ-ի և ԱՀԿ-ի ղեկավարությունը սովորաբար խուսափում էր միասնության պրոբլեմը քննարկելուց։ Վերջին տարիներին նա ընդունում է արհմիութենական միասնության կարևորությունը։ Եթե ԱԱՄԿ-ի 9-րդ կոնգրեսն արտահայտվեց միայն այն արհմիությունների հետ միասնության օգտին, որոնք գտնվում են սոցիալ-դեմոկրատիզմի ազդեցության տակ, և հանձնարարեց «ԱԱՄԿ-ի մեջ մտնող կազմակերպություններին՝ ձեռնպահ մնալ այն կազմակերպությունների հետ որևէ կապից, որոնք գտնվում են կոմունիստների վերահսկողության տակ», ապա ԱՀԿ-ի 17-րդ կոնգրեսը, որը նույնպես քննարկեց միասնության հարցը, արտահայտվեց «այլ միտումներ ունեցող արհմիութենական կազմակերպությունների հետ» կապեր հաստատելու նպատակահարմարության օգտին։

Միասնության գաղափարներն իրենց համար ուղի են հարթում։ ԱՀՖ-ի հետ կոնտակտներ հաստատելու օգտին արտահայտվեցին տրեդյունիոնների բրիտանական կոնգրեսը, գերմանական արհմիությունների միավորումը (ԳՖՀ), Բելգիայի արհմիությունների ընդհանուր ֆեդերացիան, Սկանդինավյան, Լատինական Ամերիկայի երկրների արհմիութենական կենտրոնները։ Միավորման այդ միտումներն ստիպեցին ԱԱՄԿ-ի գործկոմին 1973 թ. առաջին անգամ պաշտոնապես հայտարարել այն մասին, որ ԱԱՄԿ-ն «ըմբռնողությամբ է վերաբերվում իր անդամ կազմակերպությունների նկատմամբ», որոնք կապ են պահպանում ԱՀՖ-ի արհմիութենական կենտրոնների հետ, և արտահայտվեց աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում երկու միջազգային արհմիութենական կենտրոնների արհմիությունների միջև բազմապլանային կապեր հաստատելու օգտին։

Ուժեղանում է գործադուլային պայքարում, միտինգներում, ցույցերում և հակամոնոպոլիստական ու հակաիմպերիալիստական շարժման մյուս ակտիվ ձևերում տարբեր արհմիութենական ուղղությունների աշխատավորների համատեղ ելույթների միտումը, միասնության ավելի բարձր կազմակերպական ձևերի, միասնական արհմիութենական կազմակերպությունների ստեղծման ձգտումը։

Գործողությունների միասնության շարքային անդամների ձգտումն անդրադարձավ Իտալիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Ճապոնիայի տարբեր խոշոր արհմիութենական միավորումների միջև հարաբերությունների բարելավման վրա։ Ինքը կյանքը, շահերի և խնդիրների ընդհանրությունը տարբեր երկրների և ուղղությունների արհմիություններին հասցնում է համատեղ գործողությունների անհրաժեշտությունն ավելի խոր գիտակցելուն և դրա հիման վրա արհմիութենական միասնության ստեղծմանը։

Բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությունը եղել և մնում է արհմիությունների գործունեության կարևորագույն խնդիրը։ Միաժամանակ նրանք արդեն վաղուց են դուրս եկել պրոֆեսիոնալ և սոցիալ-տնտեսական շահերը պաշտպանելու շրջանակներից, էլ ավելի ակ-

տիվորեն մասնակցելով քաղաքական պայքարին։ Բազմաթիվ օբյեկտիվ գործոններ նպաստում են բանվոր դասակարգի պառակտումը հաղթահարելուն և արհմիութենական միասնություն հաստատելուն։

ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Հետպատերազմյան տարիները բնութագրվում են ակտիվացող համադեմոկրատական շարժումների հետ պրոլետարական պայքարի աճող փոխգործողությամբ և միահյուսմամբ։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը հակամոնոպոլիստական բողոքի համար հիմք է ստեղծում։ Դեմոկրատական շարժման մեջ են ներգրավվում նորանոր խավեր և խմբեր։ Իմպերիալիզմը ճնշում է ոչ միայն բանվոր դասակարգին, այլև գյուղացիությանը, քաղաքային միջին խավերին, մանր ու միջին բուրժուազիային։ Ծառայողների մի զգալի մասի պրոլետարականացումը, մտավորականության, ինժեներատեխնիկական աշխատողների շահագործման ուժեղացումը, աշխատավարձի՝ մի շարք դեպքերում բանվորի աշխատավարձի մակարդակին իջեցնելը նրանց մերձեցնում են բանվոր դասակարգին։ Մոնոպոլիաները քանի գնում ակնհայտորեն են հանդես գալիս որպես հակադեմոկրատական, հակաազգային և ագրեսիվ ուժ, իրենց նեղ շահադիտական շահերը հակադրելով ազգի ճնշող մեծամասնության շահերին։

Համադեմոկրատական շարժումների բնույթը և դրսևորման ձևերը բազմազան են։ Նրանցից ավելի մասսայականներն են հակապատերազմական, կանանց, երիտասարդական, «նոր ձախ», ազգային, գյուղացիական շարժումները։ Համադեմոկրատական շարժումների ուղղություններից մեկը առաջադիմական ազգային շարժումներն են, որոնց հիմքում ընկած է քաղաքացիական իրավահավասարության համար, ազգային և ռասայական խտրականության դեմ պայքարը։ Սուր բնույթ են կրում ազգային կոնֆլիկտները Հյուսիսային Իռլանդիայում, Բելգիայում, Կանադայում, Իսպանիայում և մի շարք այլ պետություններում։ Ուժեղանում են մոնոպոլիաների ճնշման դեմ իրենց իրավունքների համար գյուղացիական շարժումները։ Պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ դեմոկրատական ելույթները կապիտալի ներկա աշխարհում դարձել են ամենամասսայական հասարակական ելույթները։ Նրանք ուղղված են ոչ թե սոցիալիզմի համար պայքարին, այլ համադեմոկրատական նպատակներին հասնելուն։

Խաղաղության կողմնակիցների շարժումը

Հետպատերազմյան առաջին տարիներին երկրների հասարակական կյանքում և միջազգային հարաբերություններում առաջավ նոր գործոն՝ խաղաղության կողմնակիցների շարժումը, որն ընդգրկեց բոլոր երկրների համարյա ամբողջ հասարակական խավերը և դարձավ դեմոկրատական բոլոր շարժումներից ամենամասսայականն ու ամենակարևորը։ Խաղաղության համար ժողովուրդների լայն և կազմակերպված շարժումը սոցիալիզմի օգտին ուժերի տեղաբաշխման մեջ կատարված խոր փոփոխությունների և համադեմոկրատական շարժումների վերելքի օրինաչափ արդյունքն էր։ Երկրորդ համաշխարհային պատերազմը, որ տարավ 50 միլիոն մարդկային կյանք, ատոմային զենքի հանդես գալը, որն իր մեջ թաքցնում է մարդկության համար հրեշավոր աղետի վտանգը, հարյուր միլիոնավոր մարդկանց արթնացրին քաղաքական անտարբերությունից։ Իմպերիալիզմը, որ մարդկությանը նետել էր համաշխարհային երկու պատերազմների մեջ, սկսեց նախապատրաստվել երրորդ, ջերմամիջուկային պատերազմին։ Ժողովրդական զանգվածներն սկսեցին հասկանալ, որ միայն բարի կամքի բո-

լոր մարդկանց համատեղ վճռական գործողություններն են ի վիճակի ձախողելու պատերազմի հրձիգների հրեշավոր պլանները։ Այսպես ծնվեց խաղաղության կողմնակիցների շարժումը։

Սկզբում դրանք առանձին երկրների ոչ մեծ խմբեր էին, բայց դրանց շարքերն աճեցին, շարժումն ազգային մասշտաբներով դարձավ է՛լ ավելի կազմակերպված և ավելի համախմբված։ 40-ական թվականների վերջերին այն ընդունեց այնպիսի չափեր, որ անհրաժեշտություն առաջացավ համախմբելու նրանց ջանքերը։ Խաղաղության կողմնակիցների առաջին համաշխարհային կոնգրեսը կայացավ 1949 թ. ապրիլին, Փարիզում և Պրագայում։ Նրան մասնակցեցին 72 երկրների հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչներ։ Կոնգրեսի որոշումների ազդեցությամբ կարճ ժամանակամիջոցում խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեներ ստեղծվեցին և սկսեցին գործել երկրների մեծամասնությունում։

Հակապատերազմական շարժման կարևոր գործողություններից մեկը Ստոկհոլմի 1950 թ. մարտի 19-ի կոչի տակ ստորագրությունների հավաքման կազմակերպումն էր (ավելի քան 500 միլիոն), որով պահանջվում էր անպայման արգելել ատոմային զենքը։ Խաղաղության կողմնակիցների երկրորդ համաշխարհային կոնգրեսը (1950 թ. նոյեմբեր, Վարշավա), համաշխարհային հակապատերազմական շարժման գործողությունները կազմակերպելու և կոորդինացնելու համար 64 երկրների 200 անդամներից ընտրեց Խաղաղության համաշխարհային խորհուրդ (ԽՀԽ)։

ԽՀԽ-ի առաջին նստաշրջանը (1951 թ. փետրվար, Բեռլին) Դիմում ընդունեց հինգ մեծ տերությունների միջև խաղաղության պակտ կնքելու վերաբերյալ, որի տակ հավաքվեց ավելի քան 612 միլիոն ստորագրություն։ Նստաշրջանը հիմնադրեց «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային լենինյան մրցանակ, որը շնորհվում է խաղաղության համար պայքարող ամենաակտիվ մարտիկներին։

Խաղաղության մարտիկների ազգային կոմիտեները հանդես էին գալիս խաղաղության պաշտպանության և ագրեսորներին սանձահարելու, սպառազինության մրցավազքը կրճատելու պրոբլեմների շուրջը տարբեր առաջարկություններով, առանձին երկրների ռեգիոնների ռազմականացման դեմ։

Լարվածության թուլացման ուղղությամբ կայացած միջազգային կոնֆերանսը (1954 թ. հունիս, Ստոկհոլմ) քննարկեց սպառազինությունները կրճատելու և զանգվածային ոչնչացման զենքն արգելելու, Հնդկաչինի դրության հարցերը։ ԽՀԽ-ի բյուրո՛ի ընդլայնված նստաշրջանը (1955 թ. հունվար, Վիեննա) ընդունեց աշխարհի ժողովուրդներին ուղղված Դիմում, կոչ անելով համաշխարհային կամպանիա անցկացնել ուղղված ատոմային պատերազմի նախապատրաստման դեմ։ Հիրոսիմայի ատոմային ռմբակոծության տասնամյակին (1955 թ. օգոստոս) Վիեննայի կոչի տակ դրվեց 655963811 ստորագրություն։

Խաղաղության կողմնակիցների շարժումն առաջին հետպատերազմյան տասնամյակում կարևոր դեր խաղաց խաղաղության ամրապնդման գործում։ 50-ական թվականների երկրորդ կեսից և հաջորդ տարիներին խաղաղության կողմնակիցների շարժումն սկսեց է՛լ ավելի մեծ ներգործություն ունենալ միջազգային հարաբերությունների զարգացման վրա։ Նշանակալիորեն ընդարձակվեց խաղաղության կողմնակիցների սոցիալական բազան, նրա շարքերը ներգրավվեցին տարբեր քաղաքական և կրոնական համոզմունքի տեր մարդիկ, որոնք միավորվեցին մեկ ցանկությամբ՝ հեռացնել ջերմամիջուկային կոնֆլիկտի սպառնալիքը։ Հնարավոր դարձավ պատերազմի դեմ հանդես եկող բոլոր դեմոկրատական և խաղաղասեր ուժերի լայն ճակատի

ստեղծումը։ Սոցիալիստական երկրների՝ խաղաղ գոյակցության լենինյան քաղաքականություն վարելը ժողովուրդներին համաշխարհային հրդեհի կանխման հնարավորության վստահություն ներշնչեց։

Եթե առաջին տարիներին հակապատերազմական շարժումն իր ուշադրությունը կենտրոնացնում էր ագրեսորներին սանձահարելու խնդրի, «լոկալ պատերազմները» խափանելու վրա, ապա շարժման հզորության աճի և աշխարհագրական ունիվերսալության շնորհիվ խաղաղության մարտիկներն ըսկըսեցին առաջ քաշել նաև միջազգային լարվածության թուլացման և համընդհանուր զինաթափման ուղղությամբ կոնկրետ կոնստրուկտիվ միջոցներ։ Խաղաղության համաշխարհային ասամբլեան (1955 թ. հունիս, Հելսինկի) արտահայտվեց բոլոր միջազգային վիճելի պրոբլեմներն առանց ուժի գործադրման լուծելու օգտին, հանուն մյուս երկրների ներքին գործերին չմիջամտելուն, հանուն խաղաղ գոյակցության։ ԽՀԽ-ն 1956 թ. հունիսին դիմեց միջուկային տերությունների կառավարություններին, կոչ անելով համաձայնագիր կնքել միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու մասին, 1957 թ. հունիսին բարի կամքի բոլոր մարդկանց կոչ արեց պայքարել «միջուկային զինադադարի» հասնելու համար։ Ժողովուրդների պայքարը նպաստեց 1963 թ. օգոստոսին կնքել երեք միջավայրերում միջուկային զենքի փորձարկումն արգելելու վերաբերյալ պայմանագիրը։ Հանուն զինաթափման և միջազգային համագործակցության կոնգրեսը (1958 թ. հուլիս, Ստոկհոլմ) խնդիր դրեց պայքարել փուլերով հասնելու սպառազինությունների և զինված ուժերի լիակատար վերացմանը միջազգային խիստ վերահսկողությամբ հանդերձ և զինաթափման պրոցեսը թեթևացնելու ուղղությամբ նշեց մի շարք կոնկրետ միջոցներ։

1967 թ. հուլիսին Պագուոշում (Կանադա) անցկացվեց գիտնականների կոնֆերանս, որը նվիրված էր միջուկային պատերազմի և միջուկային փորձարկումների պրոբլեմներին։ Այդ կոնֆերանսի մասնակիցները բարձրացրին աշխարհի ճակատագրի համար գիտնականների պատասխանատվության հարցը։ Այսպես ծնվեց պագուոշյան շարժումը, որի մեջ ընդգրկվեցին աշխարհի շատ երկրների խոշոր գիտնականներ, սիստեմատիկաբար կազմակերպվեցին գիտնականների կոնֆերանսներ, որոնք նվիրված էին զինաթափմանը և խաղաղությանը։ Զինաթափման հարցերի գծով նրանց կոնկրետ հանձնարարականները հաշվի է առնում ամբողջ աշխարհը։

Խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժումը մեծ դեր խաղաց մի շարք վտանգավոր կոնֆլիկտներ հաղթահարելու գործում, այդ թվում 1956 թ. ընթացքում Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիայի, 1958 թ. Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի զինված ագրեսիայի, 1961 թ. Արևմտյան Բեռլինում իրադրության սրման, 1962 թ. Կարիբյան ծովի շրջանում սուր ճգնաժամի ժամանակ։ Խաղաղության կողմնակիցների վճռական գործողությունները նպաստեցին միջազգային լարվածության թուլացմանը։

50-ական թվականների երկրորդ կեսից խաղաղության համար պայքարն սկսեց է՛լ ավելի շաղկապվել ազգային անկախության համար, գաղութատիրության և իմպերիալիզմի դեմ պայքարի հետ։ Ազգային-ազատագրական շարժումը դարձավ հակապատերազմական շարժման հսկայական ճակատ, որն իր հերթին նպաստեց ազատագրական շարժման ուժեղացմանը։ Խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժումը հսկայական աշխատանք կատարեց Հնդկաչինում և Ալժիրում ֆրանսիական գաղութարարների, Կորեայում և Հնդկաչինում ԱՄՆ-ի «կեղտոտ պատերազմների» դեմ, զարգացող պետությունների ժողովուրդների գործերին իմպերիալիստների միջամտության դեմ։

1962 թ. հունիսին Մոսկվայում 121 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ Համընդհանուր զինաթափման և խաղաղության Համաշխարհային կոնգրեսը։ Կոնգրեսը և աշխարհի ժողովուրդներին ուղղված նրա ընդունած Դիմումը խաղաղության համար պայքարի նոր փուլ էին։

1973 թ. հոկտեմբերին Մոսկվայում կայացավ խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսը, որը խաղաղության կողմնակիցների առաջ հզորության վառ ցույց հանդիսացավ։ Կոնգրեսի աշխատանքին մասնակցում էին 144 երկրի մոտ 1100 կուսակցություն և ավելի քան 120 միջազգային կազմակերպություն ներկայացնող 3200 պատվիրակներ։

Կոմունիստական և բանվորական կուսակցությունների Մոսկվայի խորհրդակցությունների փաստաթղթերում ընդգծվում էր, որ ամբողջ աշխարհում խաղաղության համար պայքարը հակաիմպերիալիստական ուժերի միասնական գործողությունների հիմնական օղակն է։ Խաղաղության պաշտպանության այդ պայքարն անխզելիորեն կապված է այն բանի համար պայքարի հետ, որպեսզի իմպերիալիստներին պարտադրվի տարբեր հասարակական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը։ Պատերազմի հրձիգների մեքենայություններից խաղաղության պաշտպանության քաղաքականությունը համապատասխանում է ճնշման և շահագործման դեմ հեղափոխական պայքարի ընդհանուր շահերին, նպաստում է ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, սոցիալական առաջադիմության շահերի օգտին միջազգային համագործակցության բազմակողմանի ձևերի զարգացմանը։

Կանանց միջազգային շարժումը

Կանանց շարժումը դուրս եկավ առանձին երկրների ազգային շրջանակներից։ Կանանց միջազգային առաջին կոնգրեսում (1945 թ. դեկտեմբեր, Փարիզ) ստեղծվեց Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիան (ԿՄԴՖ)։ Նրա մասնակիցներն էին 40 երկրների 80 միլիոն կանանց միավորող 170 կազմակերպությունների ներկայացուցչուհիները։ 1953 թ. ԿՄԴՖ-ի մեջ մտնում էին 66 երկրների 140 միլիոն կանայք, իսկ 60-ական թվականների վերջերին՝ 80 երկրների ազգային կազմակերպությունների մեջ մտնող մոտ 200 միլիոն կանայք։

ԿՄԴՖ-ն և կանանց ազգային կազմակերպություններն ակտիվորեն պայքարում են կանանց իրավունքների, սոցիալական պրոբլեմների լուծման և խաղաղության համար։ ԿՄԴՖ-ի որոշմամբ սահմանվել է երեխաների պաշտպանության միջազգային օր, որը 1952 թ. հունիսի 1-ից նշվում է ամեն տարի։ Կանանց համաշխարհային 3-րդ կոնգրեսն (1953 թ. հունիս, Կոպենհագեն) ընդունեց «Կանանց իրավունքների դեկլարացիան», որը հռչակում էր աշխատանքի երաշխավորվող իրավունք, ամեն մի մասնագիտության ընտրություն, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն, սոցիալական ապահովության հավասարություն, մայրության և մանկության պահպանության իրավունք։ «Դեկլարացիան» դարձավ իրավահավասարության համար կանանց պայքարի ծրագիր, որը սերտորեն միահյուսվում էր խաղաղության և ազգային ազատագրության համար պայքարի հետ։ ԿՄԴՖ-ն մասնակցեց ատոմային զենքի դեմ պայքարին նվիրված կանանց եվրոպական հանդիպմանը (1959 թ. Իտալիա), զինաթափման հարցերին նվիրված կանանց միջազգային հանդիպմանը (Շվեդիա), ասիական և աֆրիկյան երկրների կանանց կոնֆերանսին (1961 թ.)։

ԿՄԴՖ-ն սերտ կոնտակտներ է պահպանում Խաղաղության համաշխարհային խորհրդի հետ։ Կանանց համաշխարհային 5-րդ կոնգրեսն (1962 թ.,

Մոսկվա) անցավ «Խաղաղություն, անկախություն և երեխաներին երջանկություն» նշանաբանով։

Կանանց դեմոկրատական շարժման ուժը հակապատերազմական շարժման, երիտասարդական շարժման, պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ գործողությունների ամրապնդվող միասնության մեջ է։ Սոցիալական հարցերում կանանց շարժումը գնալով միանում է բանվորական շարժմանը և նրա առաջ քաշած պահանջներին։ Կանայք կապիտալի զարգացած երկրներում վարձու աշխատողների 34 %-ն են։ Աշխատավորուհիների պահանջների նպատակաուղղվածությանը նպաստեցին աշխատավոր կանանց պրոբլեմների գծով արհմիութենական միջազգային երկու կոնֆերանսները (1956, 1964)։ Կանանց շրջանում մեծ աշխատանք են կատարում կոմունիստները։ Ֆրանսիայի, Իտալիայի, Ֆինլանդիայի և այլ երկրների աշխատավորուհիների, ուսանողուհիների, գյուղացի կանանց կոնֆերանսներում և սեմինարներում քննարկվում են կանանց շարժման արդիական պրոբլեմները։ Կրախի են մատնվում կանանց հասարակական կյանքից հեռու պահելու և նրանց հետաքրքրությունները «եկեղեցի, խոհանոց, երեխաներ» հավիտենական եռանկյունում սահմանափակելու բուրժուազիայի փորձերը։

Միջազգային երիտասարդական շարժումը

Երիտասարդական շարժման միջազգային կենտրոնը Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիան է (ԴԵՀՖ), որն ստեղծվել է Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային կոնգրեսում (1945 թ. նոյեմբեր, Լոնդոն)։ ԴԵՀՖ-ի հիմնադրմանը մասնակցեցին 63 երկրների մոտ 30 միլիոն պատանիներ և աղջիկներ միավորող կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Սկսած 1947 թ. ԴԵՀՖ-ն պարբերաբար հանուն խաղաղության ու բարեկամության անց է կացնում երիտասարդական և ուսանողական համաշխարհային փառատոներ։ Համաշխարհային 10-րդ փառատոնը կայացավ 1973 թ. ամռանը Բեռլինում։ ԴԵՀՖ-ի հեղինակությունը շատ բարձր է։ Երիտասարդության համաշխարհային III կոնգրեսի նախօրյակին (1953 թ. հուլիս) ԴԵՀՖ-ի շարքերում կար 92 երկրի 80 միլիոն մարդ։ 70-ական թվականների սկզբներին ԴԵՀՖ-ն միավորում էր 115 երկրների ավելի քան 100 միլիոն պատանիներ և աղջիկներ ներկայացնող 300-ից ավելի կազմակերպություն։ Սովետական երիտասարդությունը ներկայացնում է ՍՍՀՄ-ի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեն։

ԴԵՀՖ-ն ակտիվ աշխատանք է կատարում խաղաղության համար պայքարին երիտասարդությանը մոբիլիզացնելու ուղղությամբ։ Ամեն տարի ապրիլի 24-ին ԴԵՀՖ-ն նշում է գաղութատիրության դեմ պայքարող երիտասարդության հետ միջազգային համերաշխության օրը։ Դեմոկրատական երիտասարդության գործունեության մեջ նշանակալի տեղ է հատկացվում սոցիալ-տնտեսական պրոբլեմներին։ Երիտասարդական շարժման հիմնական միջուկը աշխատավոր երիտասարդությունն է։ ԴԵՀՖ-ն հրապարակեց (1947 թ. օգոստոս) «Աշխատավոր երիտասարդության հիմնական պահանջների խարտիան», որի մեջ մտցված են աշխատանքի, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության, անվճար մասնագիտական կրթության, 8-ժամյա աշխատօրվա, անվճար բժշկական օգնության և այլ իրավունքների պահանջներ։

Կապիտալի երկրներում դեմոկրատական իրավունքների և սոցիալական վերափոխումների համար երիտասարդության աճող ելույթները վերածվեցին հետպատերազմյան ժամանակի ամենասուր պրոբլեմներից մեկին։ Կապիտալիստական երկրների երիտասարդական շարժումն աչքի է ընկնում խայտաբղետությամբ, կազմակերպական անջատվածությամբ ու մանրատ-

վածությամբ։ Զարգացած կապիտալիստական երկրներում երիտասարդական կազմակերպությունների և խմբավորումների քանակը հաշվվում է հարյուրներով։ Այսպես, ԳՖՀ-ում դրանց թիվը 400 է, Իտալիայում՝ 300, Ֆրանսիայում՝ 100 և այլն։

Ձևացած երիտասարդական խմբերի բազմազանությանը և առանձին երկրների առանձնահատկություններին, երիտասարդության շարժման ամի իսկական պատճառները կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի մեջ է։ Կապիտալիզմի սոցիալական արատների ավելացող բեռն առաջին հերթին կրում է մինչև 25 տարեկան երիտասարդությունը, որը կապիտալի երկրների մեծամասնությունում կազմում է բնակչության կեսը կամ համարյա կեսը։

Քաղաքական սեփական փորձը, պայքարի տրամաբանությունը, գիտական կոմունիզմի գաղափարների ազդեցությունը, կոմունիստական կուսակցությունների օգնությունը երիտասարդությանը բերում են դասակարգային ուժերի տեղաբաշխման և դասակարգերի պայքարում իր տեղի ճիշտ ըմբռնմանը։ Կոմունիստական կուսակցությունների առջև կանգնած է երիտասարդական շարժմանն օգնելու խնդիրը՝ հաղթահարել տարերայնությունը և քաղաքական անհասունությունը, խմբերիալիզմի դեմ գիտակցական դասակարգային պայքարի շարքերը երիտասարդության նոր խավեր ներգրավել։ Երիտասարդության բազմաթիվ ջոկատներ վերածվում են միջազգային հեղափոխական շարժման կարևոր ռեզերվի, նրա բաղկացուցիչ մասի։

ՄԱԿ-ի տվյալներով, երիտասարդության զանգվածային ելույթներ՝ միտինգներ, ցույցեր, որ ուղղված են բուրժուական պետությունների ներքին և արտաքին քաղաքականության դեմ, 1968 թ. կայացան համարյա 50 երկրներում, 1969 թ. առաջին կեսին՝ գրեթե 40 երկրներում։ 1970—1972 թթ. ծավալվեց շատ երկրների երիտասարդության զանգվածային շարժում՝ ուղղված Վիետնամում Ամերիկայի Միացյալ Նահանգների պատերազմի դեմ, հանուն ամերիկյան քաջարի կոմունիստ Անժելա Դեյիսի ազատման։

Միջազգային ուսանողական շարժումը

Երիտասարդական շարժման բաղկացուցիչ մասն է ուսանողական շարժումը, որի դեմոկրատական մասը միավորված է Ուսանողների միջազգային միության մեջ (ՈՒՄՄ)։ ՈՒՄՄ-ն, որը սերտորեն կապված է ԴԵՀՖ-ի հետ, ստեղծվել է ուսանողների համաշխարհային 1-ին կոնֆերանսում (1946 թ., Պրագա)։ Ներկայումս ՈՒՄՄ-ի մեջ մտնում են 87 ուսանողական միություններ, կամ ամբողջ աշխարհի ազգային ուսանողական կազմակերպությունների $^3/_4$-ը։ ՈՒՄՄ-ն, որ իր առջև խնդիր է դրել խաղաղության համար մղվող պայքարում համախմբել ուսանողական միջազգային շարժումը, երիտասարդության ու ուսանողության բոլոր համաժողովների և համաշխարհային փառատոների ակտիվ մասնակիցն է։ ՈՒՄՄ-ն և ուսանողական ազգային կազմակերպությունները լուծում են ոչ միայն ուսանողական պրոբլեմներ, այլև շատ ակտիվորեն պայքարի են ելնում սոցիալ-տնտեսական և քաղաքական պահանջների բավարարման համար։ Տեխնիկական առաջադիմությունը պահանջեց ավելացնել բարձրագույն որակավորման աշխատողների թիվը, դրա հետ կապված 1950—1964 թթ. ընթացքում կապիտալի արդյունաբերականորեն զարգացած 20 երկրներում ուսանողների թվաքանակն աճեց և 3563 հազարից հասավ մինչև 8083 հազարի։ ԱՄՆ-ում ուսանողությունը աճեց և 1950 թ. 2,3 միլիոնի դիմաց 1970 թ. հասավ մինչև ավելի քան 8 միլիոնի։ Ուսանողները, դառնալով սոցիալական զանգվածային խումբ, 50-ական թվականների վերջից սկսեցին ներգրավվել քաղաքական կյանքի մեջ։ Պատահական չէ, որ վերջին ժամանակներս ուսանողական շարժումն անվանում են «սոցիալական դինամիտ»։ Այսպես, ԱՄՆ-ում ուսանողական հուզումները դարձան

մարտական շարժումներ և ուղղվեցին սոցիալական սուր պրոբլեմների լուծմանը, «ամերիկյան ապրելակերպի», ռասսայական խտրականության, միլիտարիզմի դեմ, հանուն խաղաղության։

«Նոր ձախ» հոսանքները

Հետպատերազմյան ժամանակաշրջանում դասակարգային պայքարի զարգացումը հաստատում է Վ. Ի. Լենինի այն դրույթը, որ մանր բուրժուազիայի վրա կապիտալի ճնշումը հաճախ առաջ է բերում նրա ուլտրահեղափոխականությունը։ Մանրբուրժուական հեղափոխականության դրսևորման ձևերը տարբեր երկրներում և տարբեր տարիներին տարբեր են։ Մանրբուրժուական հեղափոխականության աղաղակող ձևերից մեկը նեոտրոցկիզմն է։ Իրար նրկատմամբ թշնամաբար տրամադրված տրոցկիստների ոչ մեծ խմբերը պատերազմից հետո պառակտվեցին մի քանի խմբիկների, որոնց մեջ առանձանում են «Միջազգային քարտուղարությունը» և «Միջազգային կոմիտեն»։ Նեոտրոցկիստները պրոլետարիատի հեղափոխական պայքարի գործին իրենց թշնամանքը քողարկում են «համաշխարհային կապիտալի դեմ համաշխարհային հեղափոխություն» դատարկահունչ խոսքով։ Նրանց գործունեությունը 60-ական թվականների կեսին որոշ չափով աշխուժացավ։

Վերջին տարիների առավել մասսայականը, իրենց վրա ուշադրություն գրավողը ուլտրաձախ այն հոսանքներն ու շարժումներն են, որոնք «նոր ձախեր» ընդհանրացված անվանումն են ստացել։ Այդ հոսանքները խայտաբղետ են և ոչ միատարր՝ տարբեր երկրներում ծայրահեղ հակասական են և անկայուն, գործողությունների ձևերը բուռն են և ինքնաբերական։ Նրանց միավորում է բողոքն ընդդեմ գոյություն ունեցող կապիտալիստական սիստեմի։ «Ձախերի» սոցիալական բազան մանրբուրժուական է՝ ուսանողություն, պրոֆեսիոնալ դպրոցների սովորողներ, մտավորականություն, «ազատ պրոֆեսիաների» անձինք։ Դա գերազանցապես երիտասարդությունն է։

«Նոր ձախերի» խռովությունը կապիտալի ճնշման, հեռանկարի բացակայության, բուրժուական դեմոկրատիայի դասակարգային սահմանափակության հետևանք է։ Այն պայքարի չհասունացած ձև է, որում չեն իմաստավորվում առաջացող դժվարությունների սոցիալական պատճառները և չեն ըմբռնվում դրանցից ազատվելու ուղիները։ Քաղաքական փորձի բացակայությունը, գաղափարախոսական խառնաշփոթությունը, ելույթների շատ մասնակիցների մանրբուրժուական հոգեբանությունը հասցնում են նրանց կողմից մերժվող կապիտալիստական սիստեմի դեմ բողոքի չհասունացած ձևերին։ Հանդես են գալիս «տեսաբաններ», որոնք փորձում են օգտվել «նոր ձախերի» կեղծ հեղափոխականությունից և երիտասարդության անփորձությունից։ «Նոր ձախերի» առավել աչքի ընկնող «տեսաբաններից» է ամերիկյան սոցիոլոգ Գերհարդ Մարկուզեն, որը գույներ չի խնայում բուրժուական հասարակության արատները քննադատելու համար, բայց նա այդ արատների արմատները տեսնում է ոչ թե աշխատանքի նկատմամբ կապիտալի տիրապետության մեջ, այլ առանձին անհատների նկատմամբ «կազմակերպված հասարակության» «համընդհանուր, տոտալ, բացարձակ» տիրապետության ձևում։ Առանց սոցիալական վերլուծության, ամբողջությամբ վերցրած հասարակության նկատմամբ նիհիլիստական մոտեցումը, անհատին հակադրելը կոլեկտիվին, «տոտալ բացասման», սոցիալական նիհիլիզմի դեմ պայքարը առանց նշելու կոնկրետ թշնամուն, պայքարի նպատակները և հեռանկարները—այսպիսին է «նոր հոսանքների» մոդայական տեսությունների էությունը։ Իսկ այդ մոտեցումը հենց խիստ տպավորություն է գործում երիտասարդության այն մասի վրա, որն զգացել է կապիտալիզմի նեխածությունը, բայց դեռևս չի տեսնում դրա սոցիալական պատճառները։

«Նոր ձախերը» հաճախ միանում են անարխիստներին, հայտարարելով, թե կազմակերպություն ստեղծել՝ նշանակում է չհավատալ երիտասարդության կարողություններին ու հնարավորություններին։ ԱՄՆ-ի «նոր ձախերն» իրենց կարող են համարում առանց կազմակերպության և «հրահանգների» մարդուն արժանի փոխհարաբերություններ հաստատել։ Ֆրանսիայի «նոր ձախերը» պնդում են, թե «շարժման միակ շանսն անկանոնությունն է»։ Ուլտրաձախերին բնորոշ է կազմակերպության և «առաջնորդիզմի» ժխտումը, քանի որ իբր դա ենթարկում և ճնշում է անձի ազատությունը։ Տեսությունը նույնպես մերժվում է, այն հանգեցվում է «մեծ բացասման», «համընդհանուր մերժման»։

«Նոր ձախերը» ժխտում են ոչ միայն բուրժուական հասարակությունը, այլև հեղափոխական բանվորական շարժումը՝ այն միակ ռեալ ուժը, որն ընդունակ է խորտակել կապիտալիզմը և «նոր ձախ» ուժերի մեջ մտնող սոցիալական խավերին հնարավորություն ապահովել արժանավոր տեղ գրավելու հասարակության սոցիալիստական վերափոխման մեջ։ Ձախլիկ տարրերը մարքսիստական-լենինյան տեսության, պրոլետարական կուսակցության և ընդհանրապես դասակարգային պայքարի քամահրանքի քարոզով վնաս են հասցնում բանվորական շարժմանը, անվստահություն սերմանում պրոլետարիատի հեղափոխական հնարավորությունների նկատմամբ։

«Նոր ձախերի» հոսանքների տարածումը բացատրվում է ոչ միայն մանր բուրժուազիայի գաղափարաքաղաքական անհասունությամբ և «ձախության» նկատմամբ սոցիալ-հոգեբանական նախահակվածությամբ, այլև բուրժուական պետության կողմից նրան ցույց տրվող վերաբերմունքով։ «Ձախերը», քննադատելով կոմունիստներին և վարկաբեկելով սոցիալիստական իդեալները, դրանով իսկ քիչ ծառայություն չեն մատուցում բուրժուազիային։ Դրա համար էլ մոնոպոլիաները հանգիստ են վերաբերվում և՛ աղմկարար հոսանքների ու տրոցկիստների նկատմամբ՝ նրանց «պերմանենտ հեղափոխության տեսությամբ» հանդերձ, և՛ Գ. Մարկուզեի «համընդհանուր բացասման տեսության» նկատմամբ, միայն թե աշխատավոր զանգվածների ուշադրությունը շեղվի միակ ճիշտ ուսմունքից՝ մարքսիզմ-լենինիզմից, որն իսկական վտանգ է կապիտալի տիրապետության համար։

Կոմունիստական կուսակցությունները ուշադրությամբ հետևում են «նոր ձախերի» ակտիվացմանը, ձգտելով նրանց օգնել ճիշտ ուղի՝ դասակարգային պայքարի ուղի. դուրս գալու համար. նրանք պայքար են մղում հակակոմունիզմի ձախլիկ տարբերակների դեմ, մերկացնում են կեղծ հեղափոխական «տեսաբաններին»։ Կոմունիստները հանդես են գալիս «նոր ձախերի» ավանտյուրիստական կուրսի դեմ, նպաստելով պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ նրանց գործողությունների մերձեցմանը։

ՀԱԿԱԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՎԻՐԱՆՆ Է

Այն ստրատեգիական գիծը, որ վարում են կոմունիստական կուսակցությունները—հակաիմպերիալիստական ճակատի ստեղծման կուրսը—խաղաղության, հակամոնոպոլիստական դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում պրոլետարիատի հեգեմոնիայի և նրա դաշնակիցների մասին լենինյան դրույթների ստեղծագործական զարգացումն է։ Ազգի գերակշռող մասին մինչև վարձու աշխատողների դրությանը իջեցնելը, վարձու աշխատանքի անձանց աճող պրոլետարականացումը, կապիտալի ճնշման ուժեղացումը—այս բոլորը բնակչության տարբեր խավերի պահանջների մերձեցման տնտեսական բազա է։ Կապիտալիզմի հակասությունների սրման չափով իրենց իրավունքների համար պայքարի են ելնում աշխատավորների նորանոր ջոկատներ։ Կոմունիստական կուսակցություններն իրենց ստրատեգիան և տակտիկան կառուցում են, հաշվի առնելով պրոլետարիատի դասակարգային պայքարի ու համադեմոկրատական շարժման սերտ և գնալով էլ ավելի ամրապնդվող փոխադարձ կապը, հատակորեն նշելով և՛ գլխավոր թշնամուն, և՛ հարվածի գլխավոր ուղղությունը՝ կապիտալիստական մոնոպոլիաները։ Կոմունիստներն առաջ են քաշում այնպիսի ծրագիր, որը համապատասխանում է բնակչության տարբեր խավերի ակնկալություններին և հաշվի է առնում յուրաքանչյուր երկրի կոնկրետ առանձնահատկությունները։ Նման հարցադրումը հնարավորություն է տալիս անհամեմատ ավելի ընդարձակել հակամոնոպոլիստական պայքարի սոցիալական բազան, հնարավորություն է տալիս բանվորական և համադեմոկրատական շարժումները միավորել մի միասնական ուժի մեջ, որն ընդունակ է խորտակել մոնոպոլիաների դիկտատուրան։ Նման միասնությունը հնարավոր է, և այն իրականացվում է էլ ավելի ընդարձակվող մասշտաբով։

Էկոնոմիկայի բնագավառում կոմունիստական կուսակցություններն առաջ են քաշում դեմոկրատական ազգայնացման պահանջը, բանվոր դասակարգին և աշխատավոր լայն զանգվածներին համախմբելով ֆինանսական օլիգարխիայի տիրապետության բուն հիմքի՝ մոնոպոլիստական սեփականության դեմ պայքարելու համար։ Էկոնոմիկայի բոլոր օղակներում լայն դեմոկրատական վերահսկողության, պետական ձեռնարկությունների կառավարման դեմոկրատացման, ձեռնարկությունների ղեկավարման նոր դեմոկրատական մեթոդների օգտագործման, արհմիությունների և բանվորական կոլեկտիվների իրավունքների ընդարձակման, պետության ամբողջ սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմանը նրանց մասնակից դարձնելու պահանջներ են առաջ քաշվում։ Սակայն բանվոր դասակարգի մի մասը, էլ ավելի մեծ չափով՝ միջին խավերը և գյուղացիությունը, դեռևս ընթանում են բուրժուական կուսակցությունների ետևից։ Բուն բանվորական շարժումը քաղաքական և արհմիութենական գծով բաժանված է հեղափոխական և ռեֆորմիստական թևերի։ Եվ, այնուամենայնիվ, վերջին տարիների ամենօրյա պայքարի պրակտիկան դրականորեն է լուծում միասնության խնդիրը։ Հաճախակի և սերտ են դառնում բանվոր դասակարգի, մտավորականության, ուսանողության, գյուղացիության կազմակերպությունների կապերը։ Գնալով նկատելի է դառնում համադեմոկրատական շարժումների հետ բանվորական շարժման մերձեցման և միահյուսման միտումը։ Ավելի համառ և շոշափելի է դառնում հակամոնոպոլիստական հիման վրա, ինտերնացիոնալիստական մասշտաբով աշխարհի հեղափոխական և դեմոկրատական ուժերի միասնության պահանջը։ Ուստի բնական է, որ հեղափոխական ուժերը, ամենից առաջ կոմունիստական կուսակցությունները, ձգտում են հակամոնոպոլիստական ճակատ ստեղծել։

Այդ պատմական խնդրի իրականացումը առանցքային ստրատեգիական պրոբլեմ է։ Այդ պրոբլեմի լուծման միակ ուղին իմպերիալիզմի դեմ պայքարում այն հսկայական հեղափոխական պոտենցիալի շարժման մեջ դնելն ու լրիվ չափով օգտագործելն է, որ ունեն երեք հիմնական համաշխարհային առաջադիմական հոսանքները՝ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, բանվորական շարժումը և ազգային-ազատագրական շարժումը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային հեղափոխական պրոցեսի պրոբլեմներն իրենց արտացոլումն են գտել մարքսիստական-լենինյան կուսակցությունների կոլեկտիվ փաստաթղթերում և առանձին կոմունիստական կուսակցությունների որոշումներում։ 1943 թ. կոմունիստական ինտերնացիոնալի արձակումից հետո մարքսիստական-լենինյան կուսակցությունների առաջին կոլեկտիվ փաստաթղթեր դարձան մի քանի կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների ինֆորմացիոն բյուրոյի խորհրդակցության նյութերը[3]։

Համաշխարհային զարգացման խոր վերլուծությունը, բանվոր դասակարգի և նրա հեղափոխական ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների, ստրատեգիայի և տակտիկայի մշակումը բովանդակվում են կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների 1957, 1960 և 1969 թթ. կայացած խորհրդակցությունների փաստաթղթերում և նյութերում[4]։

Մարքսիզմ-լենինիզմի գանձարանը նշանակալի ավանդ է ներդնում Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, որի բազմակողմանի տեսական, քաղաքական և կազմակերպչական գործունեությունը փաստագրականորեն արտացոլված է համագումարների սղագրական հաշվետվություններում[5], ինչպես նաև Կենտկոմի պլենումների փաստաթղթերում և ՍՄԿԿ Կենտկոմի մյուս նյութերում։

Կուսակցության և սովետական ժողովրդի հեղափոխական պայքարի, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման բազմակողմանի փորձը, համաշխարհային հեղափոխական պրոցեսի և միջազգային հարաբերությունների պրոբլեմները արտացոլվել են Կենտկոմի պլենումների որոշումներում, մեծ Հոկտեմբերի 50-ամյակին, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի ծննդյան 150-ամյակին, Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակին, Փարիզի կոմունայի 100-ամյակին և ՍՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակին նվիրված կուսակցության փաստաթղթերում[6]։

Հեղափոխական շարժման ընդհանուր պրոբլեմների տեսական մշակման և իրենց երկրներում պայքարի փորձի ընդհանրացման գործում նշանակալի ավանդ են ներդնում եղբայրական կոմունիստական կուսակցությունները։ Մարքսիստական-լենինյան կուսակցությունների տեսական և պրակտիկ գործունեության վերաբերյալ բազմաթիվ նյութեր են պարունակում այդ կուսակցությունների համագումարների կանոնավոր կերպով հրապարակվող հիմնական փաստաթղթերը։ Հրապարակված են նաև կապիտալիստական Եվրոպայի և Ամերիկայի երկրների կուսակցությունների ծրագրային փաստաթղթերի ժողովածուներ[7]։

Առանձին երկրների բանվորական շարժման պրոբլեմների ուսումնասիրման համար արժեքավոր սկզբնաղբյուր են եղբայրական արտասահմանյան կուսակցությունների ղեկավարներ Մորիս Թորեզի, Պալմիրո Տոլյատիի, Ուիլյամ Ֆոսթերի, Էլիզաբեթ Գ. Ֆլինի, Դոլորես Իբարուրիի, Այվարո Կունյալի, Մաքս Ռայմանի, Թիմ Բաբի, Ռոդնեյ Արիսմենդիի և մյուսների ընտիր երկերի ռուսերեն հրատարակությունները։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման վերջին տարիների պատմագրության բնորոշ առանձնահատկությունը միջազգային կոնֆերանսներում, սեմինարներում, սիմպոզիումներում մարքսիստների կողմից նրա արդիական պրոբլեմների կոլեկտիվ քննարկումն է։ Այդ գործում ակտիվ դեր է խաղում «Պրոբլեմի միրա ի սոցիալիզմա» ամսագրի խմբագրությունը, որը պարբերաբար մտքերի փոխանակություն է կազմակերպում սոցիալ-քաղաքական զարգացման տարբեր կարևոր պրոբլեմների շուրջը (այսպես կոչված հանդիպումները կլոր սեղանի շուրջը)։ Այդ հանդիպումների, տեսական կոնֆերանսների և սեմինարների նյութերը հրապարակվում են ամսագրի էջերում, ինչպես նաև «Մարքսիստների միջազգային բանավեճերը» գրքային սերիաների ձևով[8]։ Կոմունիստական և բանվորական շարժման սովետական հետազոտողների պատմագրությունը շատ ընդարձակ և բազմազան է։ Այդ պրոբլեմատիկայով առաջին ընդհանրացնող աշխատանքներից է սովետական կուսակցական աշխատողների և գիտնականների «Բանվորական շարժումը կապիտալիստական երկրներում» 1961 թ. լույս տեսած կոլեկտիվ աշխատությունը[9]։ 1964 թ. լույս տեսավ 1-ին Ինտերնացիոնալի 100-ամյակին նվիրված կոլեկտիվ աշխատությունը, որում տրված է միջազգային պրոլետարիատի և նրա հեղափոխական ավանգարդի շատ տասնամյակների պայքարի կարևորագույն արդյունքների վերլուծությունը, լուսաբանված են արդիական նոր երևույթներն ու իրադարձությունները[10]։

Միջազգային բանվորական շարժման պրոբլեմների մշակման գործում, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի հետ կապված նկատելի ավանդ ներդրեցին սովետական գիտնականները։ «Մեծ Հոկտեմբերը և համաշխարհային հեղափոխական պրոցեսը» (Մ., 1967) և «Համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացումը Հոկտեմբերից հետո» (Մ., 1967) գրքերում բացահայտված են հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսության պրակտիկ իրականացումը, վերլուծված է կապիտալիզմի ընդ-

---

[3] Տե՛ս «Информационное Совещание представителей некоторых компартий (Польша) 1947». М., 1948.

[4] Տե՛ս «Программные документы борьбы за мир, демократию и социализм». Документы Совещаний представителей коммунистических и рабочих партий, состоявшихся в Москве в ноябре 1957 г., в Бухаресте в июне 1960 г., в Москве в ноябре 1960 г. М., 1964; «Международное Совещание коммунистических и рабочих партий. Документы и материалы. Москва. 5—17 июня 1969». М., 1969.

[5] Տե՛ս «XX съезд Коммунистической партии Советского Союза». Стенографический отчет, т. 1—2. М., 1959; «XXII съезд Коммунистической партии Советского Союза». Стенографический отчет, т. 1, 2, 3. М., 1962: «XXIII съезд Коммунистической партии Советского Союза». Стенографический отчет, т. 1—2 М., 1966; «XXIV съезд Коммунистической партии Советского Союза». Стенографический отчет, т. 1—2 М., 1971.

[6] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին»։ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, Երևան, 1967 թ., «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ»։ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, 1969 թ.։

[7] Տե՛ս «Программные документы коммунистических и рабочих партий капиталистических стран Европы». Сб. М., 1960; «Программные документы коммунистических и рабочих партий стран Америки». Сб. М., 1962.

[8] Տե՛ս «Новые формы эксплуатации и рабочее движение». Прага, 1960; «Проблемы современного капитализма и рабочий класс». Прага, «Мир и социализм», 1963; «Историческое значение Великой Октябрьской социалистической революции». Материалы международной теоретической конференции, проведенной редакцией журнала «Проблемы мира и социализма» в Праге 22—24 июня 1967 г. М., 1967; «За единство всех революционных и демократических сил». Материалы научной конференции, посвященной 30-летию VII конгресса Коммунистического Интернационала». М., 1966; «Современный империализм и революционная борьба». Прага, «Мир и социализм», 1971.

[9] Տե՛ս «Рабочее движение в капиталистических странах (1959—1961 гг.)». М., 1961; «Классовые битвы сотрясают мир капитала. Новый подъем революционного рабочего движения». М., 1962.

[10] Տե՛ս «Международное революционное движение рабочего класса», изд. 3, 1966.

հանուր ճգնաժամի բոլոր փուլերում դասակարգային պայքարը։ Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ հանդես եկան մեծ թվով հետազոտություններ, որոնց շարքում հարկավոր է նշել «Լենինիզմը և բանվոր դասակարգի համաշխարհային հեղափոխական շարժումը» (Մ., 1969) և «Լենինիզմը և արդիականությունը» (Մ., 1969) կոլեկտիվ աշխատությունները։ Նրանցում բացահայտվում է լենինիզմի միջազգային նշանակությունը և ակտուալությունը, ընդհանրացվում են արդի միջազգային զարգացման կարևորագույն պրոցեսները և համաշխարհային կոմունիստական շարժման փորձն ամբողջությամբ վերցրած, նրա՝ արդիականության ամենաազդեցիկ քաղաքական ուժի վերածվելու հիմնական օրինաչափությունները։

Թվարկված՝ գլոբալ մասշտաբով և ժամանակի նշանակալի պատմական հատվածում հեղափոխական պրոցեսի զարգացման պրոբլեմների լայն կոմպլեքս ընդգրկող աշխատությունների կողքին միջազգային կոմունիստական և բանվորական շարժման առանձին պրոբլեմների գծով կա ընդարձակ գիտական գրականություն։

Սովետական հետազոտողները մեծ ուշադրություն են դարձնում կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի կյանքի և պայքարի օբյեկտիվ պայմանների ուսումնասիրմանը՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման, գիտատեխնիկական հեղափոխության, իմպերիալիստական ինտեգրացիայի և այլնի հետ կապված[11]։ Սովետական գիտնականների կոլեկտիվ և անհատական մեծ թվով աշխատություններ նվիրված են կապիտալիստական պետությունների բանվոր դասակարգի պայքարի ձևերի և մեթոդների վերլուծությանը՝ ինչպես ռեգիոնների և մայրցամաքների մասշտաբով, այնպես էլ առանձին երկրների գծով[12]։ Այդ հետազոտությունների ուշադրության կենտրոնում են գտնվում հասարակական և քաղաքական կյանքում, արդի աշխարհում բանվոր դասակարգի դերի ուժեղացման օրինաչափությունների դրսևորումները, պրոլետարիատի, իբրև հակաիմպերիալիստական շարժման հեգեմոնի, դիրքերի ամրապնդումը։

«Միջազգային բանվորական շարժումը» պարբերական տեղեկատուում[13] բացահայտվում են արդի միջազգային բանվոր դասակարգի, ներառյալ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս պետությունների բանվոր դասակարգը, բնորոշ գծերը, նրա զարգացման գլխավոր միտումները և զարգացած կապիտալիզմի ու զարգացող պետությունների աշխատավորների դասակարգային պայքարի հեռանկարները։

Կոմունիստական շարժման պրոբլեմների ուսումնասիրման համար մեծ արժեք է ներկայացնում «Միջազգային կոմունիստական շարժումը» գիրքը[14], որը բացահայտում է բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդի տեսության ստրատեգիայի և տակտիկայի մարքս-լենինյան հիմունքները։ Աշխատությունում քննարկված են կոմունիստական շարժման՝ հասարակական առաջադիմության կարևորագույն գործոնի վերածվելու օրինաչափությունները, ցույց է տրված կոմունիստների առաջատար դերը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում, օպորտունիզմի բոլոր տարատեսակությունների, նացիոնալիզմի դեմ, միջազգային կոմունիստական շարժման միասնության համար կոմունիստական կուսակցությունների մեծ պայքարը։ Տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների գաղափարատեսական կապերի փորձին է նվիրված է. Պավլովի գիրքը[15]։ Մի շարք գրքերում և հոդվածների ժողովածուներում լուսաբանվում են միջազգային կոմունիստական շարժման հրատապ տեսական պրոբլեմները և մարքսիզմ-լենինիզմի մաքրության համար աշխարհի կոմունիստների մղած պայքարը[16]։

Սովետական գիտական գրականության մեջ զգալի նշանակություն է հատկացվել աջ սոցիալ-դեմոկրատիայի քննադատությանը, ժամանակակից պայմաններում նրա էվոլյուցիային, աջ օպորտունիզմի սոցիալ-տնտեսական և դասակարգային արմատների վերլուծությանը, սոցիալ-ռեֆորմիստների ժամանակակից կոնցեպցիաների սնանկության մերկացմանը։ Հետազոտվում է իմպերիալիզմի ուղղակի ջատագովության հետ «նորագույն» աջ օպորտունիստական կոնցեպցիաների, հակակոմունիզմի և հակասովետիզմի անխզելի կապն ու միակցումը։ Այդ կապը բացահայտված է սովետական գիտնականների շատ աշխատություններում, որոնք նվիրված են իմպերիալիստական գաղափարախոսության, հակակոմունիզմի, հակասովետիզմի, սիոնիզմի գաղափարախոսության մերկացմանը[17]։

Բուրժուական պատմագրությունը հեռու է միջազգային բանվորական շարժման պրոբլեմների օբյեկտիվ վերլուծությունից։ Նրան բնորոշ են կատաղի հակակոմունիզմը և հակասովետիզմը, կապիտալիզմի ջատագովությունը, բանվորական շարժման նենգափոխումը։ Ի վիճակի չլինելով ժխտել ազգային և միջազգային մասշտաբով դասակարգային մարտերի թափը, բուրժուական և աջ սոցիալիստական հեղինակները փորձում են դրան տալ այլ մեկնաբանություն։ Գերիշխող կոնցեպցիա է այն պնդումը, թե, իբր, բանվոր դասակարգը պայքար է մղում ոչ թե կապիտալիզմի, իբրև սիստեմի, դեմ, այլ միայն նրա առանձին բացասական կողմերի դեմ, նրա «բարելավման» համար, իբրև թե անդասակարգ դարձած «համընդհանուր բարեկեցության պետությունում», կամ «ինդուստրիալ հասարակությունում», ինչպես այժմ անվանում են կապիտալիզմը նրա շատ ջատագովներ, հավասար լինելու աշխատավորների իրավունքի համար։

Սովետական և արտասահմանյան մարքսիստ գիտնականները գաղափարախոսական սուր պայքար են մղում միջազգային բանվորական շարժման պատմության կեղծարարների դեմ[18], մերկացնում են հակակոմունիզմի էու-

---

[11] Տե՛ս **Հ. Հ. Արզումանյան**, Борьба двух мировых систем и мировое развитие. М., 1964; **В. С. Семенов.** Капитализм и классы. Исследование социальной структуры современного капиталистического общества М., 1960; «Социально-политические сдвиги в странах развитого капитализма». М., 1971.

[12] Տե՛ս «Классовая борьба в развитых капиталистических странах». М., 1966; «Рабочее движение в странах Азии и Северной Африки на современном этапе». М., 1969. более движение в странах Азии и Северной Африки на современном этапе». М., 1969. (Историографию рабочего движения см. также в обзоре литературы по отдельным странам).

[13] Տե՛ս «Международное рабочее движение. 1970». Справочник. М., 1971.

[14] Տե՛ս «Международное коммунистическое движение. Очерк стратегии и тактики», изд. 2, М., 1972.

[15] Տե՛ս **Э. М. Павлов.** Идейно-теоретическое сотрудничество марксистов-ленинцев. Л., 1971.

[16] Տե՛ս «Сборник статей». М., 1961; «Марксизм-ленинизм единое интернациональное учение». Сб. статей, вып. I—V. М., 1968; вып VI. М., 1969. «XXIV съезд и развитие марксистско-ленинской теории». М., 1971.

[17] Տե՛ս «Критика идеологии антикоммунизма». М., 1965; «Мировая социалистическая система социализма и антикоммунизма». М., 1968; «Ленинизм и борьба против буржуазной идеологии и антикоммунизма на современном этапе». М., 1970; **Л. В. Скворцов.** Об особенностях кризиса современной буржуазной идеологии. М., 1970; «Некоторые особенности идеологической борьбы в странах Азии и Африки». М., 1971; «Сионизм—орудие империалистической реакции». Сб. статей, М., 1971.

[18] Տե՛ս **Е. Б. Черняк.** Буржуазная историография рабочего движения. М., 1960;

թյունը, գործողությունների ձևերը և մեթոդները, հակակոմունիզմ, որը ներկայումս հանդես է գալիս ոչ միայն իբրև գաղափարախոսություն, այլև բարձրացվել է առաջատար իմպերիալիստական տերությունների պետական քաղաքականության մակարդակին, դարձել է քաղաքական և պրոպագանդիստական գործունեության մի ամբողջական համակարգ՝ ուղղված հեղափոխական շարժումը ճնշելուն, կոմունիզմի դեմ պայքարելուն[19]։

Միջազգային արհմիութենական շարժման պրոբլեմներն ուսումնասիրելու համար կա հիմնավոր աղբյուրագիտական բազա և պատմագրություն։ Գիտական հետազոտությունների կենտրոնում են գտնվում Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի՝ խոշորագույն արհմիութենական միջազգային կազմակերպության, գործունեությունը արհմիութենական շարժման ռեֆորմիստական պարագլուխների պառակտողական գործողությունների դեմ, գործողությունների միասնության և ազգային ու միջազգային մասշտաբով արհմիութենական միասնության համար մղվող պայքարը[20]։ Ամեն ամիս վեց լեզուներով հրատարակվում է Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի պաշտոնական օրգան «Համաշխարհային արհմիութենական շարժումը», ամիսը երկու անգամ լույս է տեսնում «Միջազգային արհմիութենական և բանվորական մամուլի բյուլետենը»։

Սովետական գիտնականներն ինտենսիվորեն հետազոտում են արդիականության համադեմոկրատական շարժման պրոբլեմները։ Բացառիկ ուշադրություն է դարձվում արդիականության ամենազանգվածային շարժմանը՝ խաղաղության համար, համաշխարհային նոր պատերազմի վտանգի դեմ, իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության դեմ մղվող պայքարին։ Գիտական գրականություն է հրատարակվում խաղաղության կողմնակիցների շարժման, այդ թվում խաղաղության համար գիտնականների պագուոշյան շարժման վերաբերյալ[21]։

Կանանց շարժման հրատապ պրոբլեմները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արտացոլված են մի շարք հրապարակումներով[22]։ Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիան հրատարակում է «Աշխարհի կանայք» ամսագիրը։

Վերջին տարիներին նկատելիորեն աճել է միջազգային երիտասարդական, այդ թվում ուսանողական շարժմանը նվիրված գիտական գրականության քանակը։ Դրանցում քննարկվում են երիտասարդական շարժման կազմակերպման, քաղաքական հասունացման պրոբլեմները, երիտասարդ բանվորների դասակարգային պայքարին նրա մերձեցումը, երիտասարդ սերնդի համար գաղափարական պայքարի պրոբլեմները[23]։

Մարքսիստ գիտնականների ուշադրությունն են գրավում երիտասարդության գաղափարական դաստիարակության համար պայքարի պրոբլեմները[24]։ Երիտասարդության համաշխարհային ֆեդերացիան երեք ամիսը մեկ հրատարակում է «Աշխարհի երիտասարդությունը» ամսագիրը։ Ուսանողների միջազգային միությունը թողարկում է «Համաշխարհային ուսանողական նորություններ» ամսագիրը։

ԳԼՈՒԽ 30

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Միջազգային հարաբերությունների զարգացման գլխավոր բովանդակությունը վերջին տասնամյակներին իմպերիալիզմի, ռեակցիայի և պատերազմի ուժերի դեմ սոցիալիզմի, դեմոկրատիայի և խաղաղության ուժերի հակամարտությունն է։

Հետպատերազմյան միջազգային հարաբերություններն ստորաբաժանվում են երկու խոշոր ժամանակաշրջանների, որոնք համապատասխանում են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի փուլերին։

Առաջին ժամանակաշրջանն ընդգրկում է առաջին հետպատերազմյան տասնամյակը։ Այդ տարիներին միջազգային հարաբերությունները զարգանում էին համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորման և սոցիալիստական երկրների միջև միջազգային հարաբերությունների նոր տիպի հաստատման պայմաններում ու ազդեցությամբ, որոնք արմատապես խախտում էին միջազգային հարաբերությունների կապիտալիստական սկզբունքները, որ հիմնված են տիրապետման և ենթարկելու իմպերիալիստական մրցակցական հարաբերությունների վրա։ Արդեն այդ տարիներին համաշխարհային սոցիալիզմի ցույց տված աջակցությունը հնարավորություն տվեց մի շարք նոր պետությունների, որոնք առաջացել էին գաղութային սիստեմի սկսված քայքայման հետևանքով, պաշտպանելու իրենց ինքնուրույնությունը, մշակելու և պաշտպանելու պոզիտիվ չեզոքության սկզբունքները։

Հետպատերազմյան միջազգային հարաբերությունների երկրորդ ժամանակաշրջանն սկսվեց 50-ական թվականների երկրորդ կեսից և շարունակ-

---

«Против современного антикоммунизма». Сб. статей. Прага, «Мир и социализм», 1970; «Зарубежные марксисты в борьбе против буржуазной идеологии», Сб. статей. М., 1971; «Научный коммунизм и фальсификация его ренегатами». М., 1972.

[19] *Տե՛ս* **И. Т. Якушевский,** Ленинизм, революция и «советология». Л., 1968; **Г. А. Арбатов,** Идеологическая борьба в современных международных отношениях. М., 1970; «Идеология духовного подавления. Критический анализ буржуазной теории «манипуляции» сознанием трудящихся». М., 1971.

[20] *Տե՛ս* «Всемирный конгресс профсоюзов, 6-й. Варшава, 1965». Материалы и документы. М., 1966; «Всемирный конгресс профсоюзов. 7-й. Будапешт, 1969». Материалы и документы. М., 1970; «Международные профсоюзные центры». Сб. статей. М., 1966; «Некоторые актуальные проблемы международного рабочего и профсоюзного движения», ч. 1—2 М., 1972; **А. А. Балмашов.** Всемирная федерация профсоюзов в борьбе за единство действий трудящихся. М., 1956; **П. Т. Пимнов.** Всемирная федерация профсоюзов. М., 1965; **Ю. А. Аркадакский.** Четверть века в борьбе за жизненные интересы трудящихся, М., 1970; «Классовая борьба и профсоюзы. Современные тенденции и борьба за единство в международном профсоюзном движении». М., 1971.

[21] *Տե՛ս* **В. М. Бузуев и В. П. Павличенко,** Ученые в борьбе за мир. Из истории Пагуошского движения. М., 1967.

[22] *Տե՛ս* **Н. В. Попова.** Женщины мира и современность. М., 1966; «Женщины мира в борьбе за социальный прогресс». М., 1972; **Э. Е. Новикова.** Женщины мира в труде и борьбе. М., 1972.

[23] *Տե՛ս* **Б. Г. Баннов,** Мятеж возмущенного разума. Студенчество Запада против империализма. М., 1970; **Ю. Г. Луньков.** Международные молодежные организации. М., 1970; **А. Брычков.** Бунт в альма-матер. Борьба и проблемы студентов в развитых капиталистических странах. М., 1971.

[24] *Տե՛ս* «Коммунисты и молодежь. Материалы обмена мнениями, состоявшегося в редакции журнала «Проблемы мира и социализма». Прага, июнь, 1961 г.» Прага, 1962.

վում է մինչև օրս։ Կապիտալիստական աշխարհի հետ մրցությունում սոցիալիստական սիստեմի ձեռք բերած համաշխարհային-պատմական հաղթանակները, պատմական զարգացման ընթացքի վրա նրա աճող ներգործությունն ապահովեցին խաղաղության ու սոցիալիզմի ուժերի գերակշռությունը իմպերիալիզմի և պատերազմի ուժերի նկատմամբ։ Միջազգային ասպարեզում այդ ուժերի հակամարտության գլխավոր արդյունքն այն է, որ մարդկությունը չի ներքաշվել համաշխարհային պատերազմի մեջ, որի եզրին իմպերիալիզմն աշխարհը կանգնեցրել է բազմիցս։

Պատերազմը կանխելու և խաղաղությունը պահպանելու գործում վիթխարի ծառայություն ունի Սովետական Միության և սոցիալիստական ընկերակցության մյուս երկրների խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը։ Սովետական պետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնական սկզբունքները, որ դարձել են սոցիալիստական բոլոր երկրների արտաքին քաղաքականության ընդհանուր սկզբունքները, մշակել է սովետական պետության ստեղծող Վ. Ի. Լենինը։ Դա սոցիալիստական պետությունների և աշխարհի բոլոր երկրների ժողովուրդների հետ հարաբերությունների սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքն է, կապիտալիստական պետությունների հետ խաղաղ գոյակցության, յուրաքանչյուր ժողովրդի անկախ գոյության և սուվերենության իրավունքը ճանաչելու, ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության, ժողովուրդների միջև բարեկամությունը և համագործակցությունը զարգացնելու սկզբունքը։

Սովետական Միության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և խնդիրները 70-ական թվականների սկզբին սահմանեց ՍՄԿԿ XXIV համագումարը։ Համագումարի ընդունած ծրագիրը, որն ստացավ խաղաղության սովետական ծրագիր անվանումը, նախատեսում է գոյություն ունեցող պատերազմական օջախների լիկվիդացում, պետությունների՝ ուժ գործադրելուց հրաժարում, կոլեկտիվ անվտանգության ապահովում Եվրոպայում, զինաթափման իրականացում, ներառյալ միջուկային զինաթափումը, դաղութային մնացած ռեժիմների լրիվ վերացում, բոլոր բնագավառներում փոխշահավետ համագործակցության ընդարձակում և խորացում այն պետությունների հետ, որոնք իրենց կողմից ձգտում են դրան։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945—1955 ԹԹ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՎԵՐԱԾՎԵԼԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ։ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՏԻՊԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության հաղթանակը համաշխարհային-պատմական նշանակություն ունեցավ։ Սովետական ժողովուրդը և նրա զինված ուժերը, ջախջախելով ֆաշիզմը, պաշտպանեցին Հոկտեմբերի նվաճումները, սոցիալիստական հայրենիքի պատիվն ու ազատությունը, Եվրոպայի և Ասիայի ժողովուրդներին ազատեցին ֆաշիստական ճնշումից և նրանցից շատերի համար բացեցին ազատության, անկախության և սոցիալական առաջադիմության ուղին։ Սոցիալիզմը ցուցադրեց իր կենսունակությունը և կապիտալիզմի նկատմամբ գերազանցությունը։

Սովետական Միությունը, չնայած մեծ կորուստներին և ավերածություններին, պատերազմից դուրս եկավ իբրև ուժեղ պետություն։ Անչափ աճեցին նրա միջազգային հեղինակությունը և ազդեցությունը համաշխարհային զարգացման ընթացքի վրա։ Արդեն 1948—1960 թթ. արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ արտադրության մակարդակը հիմնականում հասավ նախապատերազմյանին, իսկ 1955 թ. արդյունաբերական արտադրանքի արտադրությունը, համեմատած 1940 թ. հետ, ավելացավ 3,2 անգամ։ Սովետական Միության այդ հաջողությունները պայմաններ ստեղծեցին խաղաղության պահպանման և ամրապնդման, սոցիալիստական պետություններին և կապիտալիզմից ազատագրված երկրներին օգնություն ցույց տալու համար։

Նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը սոցիալիստական սիստեմը ներկայացնում էին երկու պետություն՝ Սովետական Միությունը և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությունը։ Պատերազմից հետո կապիտալիզմի սիստեմից անջատվեցին ևս ավելի քան 700 միլիոն բնակչություն ունեցող 11 պետություններ։ Սոցիալիզմի կառուցման ուղին թևակոխեցին Ալբանիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Չինաստանի, Կորեական Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետության, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի ժողովուրդները։

Ժողովրդադեմոկրատական պետությունները Սովետական Միության հետ է իրար միջև հաստատեցին սերտ համագործակցություն։ Առաջացավ համաշխարհային սոցիալիստական սիստեմը, որը սոցիալիզմի և կոմունիզմի ուղիով ընթացող, ազատ, սուվերեն ժողովուրդների սոցիալական, տնտեսական և քաղաքական ընկերակցություն է, միավորված շահերի և նպատակների ընդհանրությամբ, միջազգային սոցիալիստական համերաշխության կապերով։

ՍՍՀՄ-ի հարաբերությունները ժողովրդադեմոկրատական երկրների հետ ձևակերպվեցին բարեկամության, համագործակցության և փոխօգնության վերաբերյալ պայմանագրերով։ Նման պայմանագրեր ստորագրվեցին 1943 թ. դեկտեմբերին՝ Չեխոսլովակիայի, 1945 թ. ապրիլին՝ Հարավսլավիայի և Լեհաստանի, 1946 թ. փետրվարին՝ ՄԺՀ-ի, 1948 թ. փետրվարին՝ Ռումինիայի և Հունգարիայի, 1948 թ. մարտին՝ Բուլղարիայի, 1950 թ. փետրվարին՝ ՉԺՀ-ի հետ։ Դրանք կողմերին պարտավորեցրին փոխադարձ հարգման, սուվերենության և ներքին գործերին չմիջամտելու հիման վրա զարգացնել բարեկամությունն ու համագործակցությունը։ Բուն ժողովրդական դեմոկրատիայի երկրների միջև հարաբերությունները ձևակերպվեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության համանման պայմանագրերով։

Սկզբնական շրջանում սոցիալիստական երկրների միջև համագործակցությունը զարգանում էր գերազանցապես երկկողմ հիմքի վրա։ Բայց արդեն այն ժամանակ նրանք միջազգային ասպարեզում սկսեցին համաձայնեցված կերպով հանդես գալ խաղաղության և ժողովուրդների անվտանգության, զինաթափման, հետպատերազմյան խաղաղ կարգավորման և այլ հարցերի շուրջը։ Սովետական Միությունը վճռականորեն հանդես եկավ Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում կապիտալիստական կարգերը վերականգնելու՝ իմպերիալիստների բոլոր փորձերի դեմ, պաշտպանեց այդ երկրների անկախությունն ու սուվերենությունը։

Քաղաքական համագործակցության հետ միասին ժողովրդադեմոկրատական պետությունների միջև և Սովետական Միության հետ ինտենսիվորեն զարգանում էին տնտեսական կապերը։ Եվրոպայի ժողովրդա-դեմոկրատական երկրների էկոնոմիկան օտարերկրյա կապիտալի երկարատև տիրապետության և պատերազմի պատճառով խիստ կերպով քայքայվել էր։ Նրանց շտապ օգնություն էր անհրաժեշտ, որպեսզի բնակչությունը փրկվեր սովից և վերականգնվեր տնտեսությունը։ Այդ օգնությունը ցույց տվեց Սովետական

Միությունը, չնայած ինքը կրում էր տնտեսական մեծ դժվարություններ։

40-ական թվականների վերջին—50-ականների սկզբին եվրոպական ժողովրդադեմոկրատական երկրները ձեռնամուխ եղան սոցիալիստական հասարակության կառուցմանը, սկսեցին իրականացնել ինդուստրացում և գյուղատնտեսության կոոպերացում։ Դրա հետ կապված կենսականորեն կարևոր էր երկարատև տնտեսական համաձայնագրերի կնքումը և բազմակողմանի հիմքի վրա համագործակցության կազմակերպումը։ Այդ նպատակով 1949 թ. հունվարին ստեղծվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը, որի սկզբնական մասնակիցներն էին ՍՍՀՄ-ը, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխոսլովակիան, Ալբանիան (1961 թվականից Ալբանիան չի մասնակցում ՏՓԽ-ին)։ 1950 թ. սեպտեմբերին ՏՓԽ-ի անդամ դարձավ ԳԴՀ-ն, 1962 թ. ՄԺՀ-ն, 1972 թ. Կուբան։

Սովետական Միությունը մեծ օգնություն և պաշտպանություն ցույց տվեց Չինաստանի, Վիետնամի ու Կորեայի ժողովուրդներին՝ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ինտերվենցիայի դեմ մղված պայքարում, ժողովրդադեմոկրատական կարգերի ամրապնդմանը։ Ժողովրդադեմոկրատական պետությունները, հենվելով Սովետական Միության օգնության և պաշտպանության վրա, հաջողությամբ իրականացրին սոցիալիզմի հիմքերի կառուցումը։

Սոցիալիստական պետությունների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունները միջազգային հարաբերությունների նոր տիպ դարձան։ Դրանց հիմքում ընկած են սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքները. լրիվ իրավահավասարություն ժողովուրդների և սոցիալիստական ընկերակցության երկրների միջև, անկախության և սուվերենության փոխադարձ հարգում, եղբայրական փոխօգնություն և համագործակցություն։ Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի բարձրագույն սկզբունքը բոլոր սոցիալիստական երկրների կողմից սոցիալիզմի նվաճումները նրա թշնամիներից համատեղ պաշտպանությունն է։ Նոր տիպի միջազգային հարաբերությունները կառուցվում են սոցիալիստական երկրների սոցիալ-տնտեսական միատիպության, միասնական մարքս-լենինյան գաղափարախոսության, սոցիալիզմի համատեղ պաշտպանության և կոմունիզմի կառուցման արմատական շահերի ընդհանրության վրա։ Սոցիալիստական պետությունների միջազգային հարաբերությունները արմատապես տարբերվում են կապիտալիստական երկրների միջազգային հարաբերություններից։ Վերջիններիս հիմքում ընկած է Բույլի նկատմամբ ուժեղի տնտեսական և քաղաքական տիրապետությունը, իմպերիալիստական տերությունների կողմից փոքր երկրների ստրկացումը։

Սոցիալիստական երկրները կապիտալիստական պետությունների հետ իրենց հարաբերությունները կառուցում են հասարակական տարբեր կառուցվածք ունեցող երկրների խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա։ Խաղաղ գոյակցության քաղաքականությունը պահանջում է հրաժարվել պատերազմից, իբրև միջպետական վիճելի հարցերը լուծելու միջոցից, այդ վեճերը կարգավորել միայն բանակցությունների, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, նրանց սուվերենությունը հարգելու ուղիով։ Լինելով դասակարգային պայքարի ձևերից մեկը, խաղաղ գոյակցությունը չի կարող տարածվել գաղափարախոսության բնագավառի, կապիտալի երկրներում դասակարգային պայքարի, գաղութների և կախյալ երկրների ազգային-ազատագրական շարժման վրա։

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԼՈԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ։ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԼՈԿՆԵՐԻ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հետպատերազմյան տարիների բնորոշ գիծը Ամերիկայի Միացյալ Նահանգների և արևմտյան մյուս տերությունների հարաբերությունների կտրուկ փոփոխությունն էր ՍՍՀՄ-ի՝ պատերազմական տարիների նրանց դաշնակցի նկատմամբ։ Նրա հետ համագործակցելուց նրանք բռնեցին բացահայտ թշնամանքի և ռազմական նախապատրաստությունների ուղին։ ՍՍՀՄ-ի նկատմամբ ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանների թշնամանքը պատերազմից հետո առաջացել էր Սովետական Միության՝ իբրև սոցիալիստական պետության, պատերազմում տարած հաղթանակի, ՍՍՀՄ-ի հաջողությունների ազդեցությամբ ու նրա պաշտպանությամբ աշխարհում կատարված հեղափոխական վերափոխումների հանդեպ խոր ատելությունից։

Երկրորդ համաշխարհային պատերազմը խիստ սրեց կապիտալիստական երկրների տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափությունը։ Կապիտալիստական աշխարհի վեց գլխավոր տերություններից (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա), որոնց երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ բաժին էր ընկնում կապիտալիստական երկրների արդյունաբերական արտադրանքի ավելի քան 70 %-ը, միայն ԱՄՆ-ը պատերազմից դուրս եկավ ոչ միայն չթուլացած, այլև տնտեսապես և ռազմականորեն ուժեղացած։ ԱՄՆ-ի տեսակարար կշիռը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրությունում աճեց և 1937 թ. 41,4 %-ից 1948 թ. հասավ մինչև 64 %-ի։ ԱՄՆ-ը ուներ կապիտալիստական բոլոր երկրներից ամենաուժեղ բանակը։ Մինչև 1949 թ. նա ատոմային զենքի միակ տիրապետողն էր։ Կապիտալիստական աշխարհում ԱՄՆ-ի օգտին կատարված ուժերի հարաբերակցությունը, թվում էր, բարենպաստ իրադրություն էր ստեղծում համաշխարհային տիրապետության հասնելու ամերիկյան իմպերիալիզմի վաղուց հղացած պլանի իրականացման համար։ Սակայն դրա իրականացման ճանապարհին կանգնած էին Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները, կապիտալիստական պետությունների հեղափոխական շարժումը և գաղութների ու կախյալ երկրների ազգային-ազատագրական շարժումը։

Աշխարհի վրա իր տիրապետությունը հաստատելու ամերիկյան իմպերիալիզմի պլաններն անմիջականորեն շոշափում էին Անգլիայի, Ֆրանսիայի և պատերազմում թուլացած կապիտալիստական մյուս պետությունների իմպերիալիստական շրջանների կենսական շահերը։ Սակայն սոցիալիզմի նկատմամբ ատելությունը, սեփական երկրներում հեղափոխական շարժման և գաղութներում ազգային-ազատագրական պայքարի աճող վախը նրանց ստիպում էին պաշտպանելու ԱՄՆ-ի ագրեսիվ կուրսը։ Արևմտյան տերությունների իմպերիալիստական շրջանների հակասովետական կուրսի «գաղափարական հիմնավորումը» տվեց կոմունիզմի ամենակատաղի ատողներից մեկը՝ Ու. Չերչիլը։ 1946 թ. մարտի 5-ին նա Ֆուլտոնում (ԱՄՆ, Միսսուրիի նահանգ) պրեզիդենտ Տրումենի և ամերիկյան պետական մյուս բարձրաստիճան գործիչների առջև հանդես եկավ ճառով, որով կոչ արեց ՍՍՀՄ-ի նկատմամբ խիստ քաղաքականություն վարել, նշեց, եթե անհրաժեշտ լինի, ռազմական միջոցներով Սովետական Միությանը իր կամքը պարտադրելու նպատակով իմպերիալիստական պետությունների ռազմական դաշինք ստեղծելու կարևորությունը։ Չերչիլի ծրագրային ելույթը դարձավ արևմտյան տերությունների հակասովետական քաղաքականության հիմքը, քաղաքականու-

թյուն, որը հետագայում ստացավ «սառը պատերազմ» անվանումը։ Բուրժուական պրոպագանդայի ամբողջ ապարատն ուղղվեց այն բանին, որպեսզի ՍՍՀՄ-ը ներկայացվի որպես ագրեսիվ պետություն, որն իբրև թե ձգտում է «ազատ աշխարհին» «տոտալիտար ռեժիմներ» պարտադրել։

Իրենց ագրեսիվ հակասովետական քաղաքականությունը ԱՄՆ-ի կառավարող շրջանները փորձում էին ներկայացնել իբրև «կոմունիզմը զսպելու» քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը 1947 թ. մարտին պաշտոնապես հռչակվեց իբրև ԱՄՆ-ի կառավարական քաղաքականություն։ Մարտի 12-ին Տրումենը դիմեց Կոնգրեսին, առաջարկելով Հունաստանին և Թուրքիային 400 միլիոն դոլար հատկացնել ռազմական «օգնություն» ցույց տալու համար, որոնց վրա իբրև թե «կոմունիստական սպառնալիք» էր կախվել։ Կոնգրեսը պաշտպանեց պրեզ՝ դենտի առաջարկությունը, որն ստացավ «Տրումենի դոկտրինա» անվանումը։

Համաշխարհային հասարակայնության լայն շրջանները «Տրումենի դոկտրինային» ծայրահեղ բացասականորեն վերաբերվեցին, նկատի ունենալով նրա ցայտունորեն արտահայտված ագրեսիվ բնույթը։ Դա ԱՄՆ-ի կառավարությանն ստիպեց իր իմպերիալիստական դիտավորություններն իրականացնելու համար ուրիշ, ավելի քողարկված ձևեր կիրառել։ Այդպիսի ձևերից մեկը դարձավ եվրոպական պետությունների էկոնոմիկան վերականգնելու անվան տակ նրանց «օգնություն» ցույց տալու պլանը, որը 1947 թ. հունիսի 5-ին ընդհանուր գծերով շարադրեց պետական քարտուղար Ջ. Մարշալը։ Այն հայտնի դարձավ «Մարշալի պլան» անունով։

Մարշալի հայտարարության կապակցությամբ 1947 թ. հունիսին Փարիզում բացվեց Անգլիայի, Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությունը։ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ սովետական կառավարության կարծիքով այդ օգնությունը պետք է ցույց տրվի այն երկրների սուվերենությունը լիովին հարգելու դեպքում, որոնք այն ստանալու ցանկություն են հայտնում։ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, ընդհակառակը, առաջարկեցին ԱՄՆ-ի գլխավորությամբ ստեղծել միջազգային հատուկ մարմին, որը որոշեր եվրոպական յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականությունը և Ամերիկայի կողմից նրան տրվելիք օգնության չափը։ Սովետական Միությունը մերժեց Անգլիայի և Ֆրանսիայի առաջարկությունը, որպես եվրոպական երկրների ազգային շահերին և սուվերենությանը չհամապատասխանող, և հրաժարվեց մասնակցել «Մարշալի պլանին»։ Դրան մասնակցելուց հրաժարվեցին նաև Բուլգարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխոսլովակիան, Ալբանիան, Հարավսլավիան և Ֆինլանդիան։

1947 թ. հուլիսին եվրոպական 16 բուրժուական պետություններ հայտարարեցին «օգնությունը» ընդունելու իրենց պատրաստակամության մասին և որոշեցին, որ պահանջվում է իրենց հատկացնել 29 միլիարդ դոլար։ ԱՄՆ-ի կոնգրեսը 1948 թ. ապրիլին ընդունեց «օտարերկրյա պետություններին օգնելու մասին» օրենքը։ Նրանում սահմանված չէր «օգնության» ընդհանուր գումարը, այլ միայն կոնգրեսին իրավունք էր տալիս սահմանելու այդ նպատակով տարեկան հատկացումների չափերը։ ԱՄՆ-ը «օգնություն» ստացող պետությունների հետ համաձայնագիր կնքեց, որը ԱՄՆ-ի կառավարությանը իրավունք էր տալիս վերահսկելու նրանց տնտեսական գործունեությունը։ «Օգնություն» ստացողները պարտավոր էին վերացնել ԱՄՆ-ի հետ առևտրի բոլոր արգելքները, տնտեսական գործունեության մեջ ամերիկյան քաղաքացիներին, իրենց քաղաքացիների հետ, «հավասար իրավունքներ» տալ, դադարեցնել ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ

այն ապրանքների առևտուրը, որոնց արտահանումն այդ երկրներ արգելված էր ԱՄՆ-ում, ԱՄՆ-ին մատակարարել ստրատեգիական նյութեր։ «Օգնություն» ցույց տալու ԱՄՆ-ի նախնական պայմանը այդ երկրների կառավարությունների կազմից կոմունիստներին հեռացնելու պահանջն էր։

«Մարշալի պլանի» գործելու ամբողջ ժամանակամիջոցում (1948—1952) «օգնության» ամբողջ գումարը կազմեց 13,3 միլիարդ դոլար։ Այդ «պլանը» մարշալացված երկրների բուրժուազիային օգնեց ամրապնդել իր դիրքերը, կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչներին զրկել կառավարություններին մասնակցելուց։ Այն բարենպաստ պայմաններ ստեղծեց այդ երկրներ ամերիկյան կապիտալի ու ապրանքների ներթափանցման ուժեղացման և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դաշինքի մեջ ներգրավվելու համար։

Սակայն ԱՄՆ-ը «Մարշալի պլանի» օգնությամբ չհասավ շատ կարևոր նպատակի՝ սոցիալիստական պետությունների հետ առևտուրը դադարեցնելու ուղիով նրանց տնտեսական զարգացմանը խանգարելուն։ Չնայած ԱՄՆ-ի պահանջով հաստատված առևտրական բլոկադան սոցիալիստական պետություններին որոշակի վնաս հասցրեց, բայց նրանց էկոնոմիկան զարգանում էր շատ հաջող։ 1955 թ. համաշխարհային սոցիալիստական սիստեմին 1950 թ. 20 %-ի դիմաց արդեն բաժին էր ընկնում համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 27 %-ը։

«Մարշալի պլանը» հող նախապատրաստեց իմպերիալիստական պետությունների ռազմաքաղաքական դաշինքների ստեղծման համար։ Առաջին այդպիսի բլոկը 1948 թ. մարտի 17-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի ստորագրած բրյուսելյան պակտի հիման վրա կազմավորված Արևմտյան դաշինքն էր։ Պայմանագիրը նրա մասնակիցներին պարտավորեցնում էր որևէ վտանգավոր իրադրություն առաջանալու դեպքում փոխադարձ, այդ թվում ռազմական օգնություն ցույց տալ մեկը մյուսին։ Պայմանագրի համաձայն ստեղծվեցին կոնսուլտատիվ խորհուրդ, ռազմական կոմիտե և ռազմական միացյալ հրամանատարություն։ ԱՄՆ-ի կառավարությունը, չլինելով Արևմտյան դաշինքի անդամ, հայտարարեց, որ պաշտպանում է այն։ Միաժամանակ նա միջոցներ ձեռնարկեց իր հովանու ներքո ռազմական ավելի լայն դաշինք ստեղծելու համար։

1949 թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնում պայմանագիր ստորագրվեց Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման մասին։ Նրա սկզբնական մասնակիցներն էին ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը, Դանիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Իսլանդիան, 1952 թ. ՆԱՏՕ-ի անդամ դարձան Թուրքիան և Հունաստանը, 1955 թ. ԳՖՀ-ն։ Պայմանագրի ներածականում շատ ֆրազներ կային խաղաղության գործին, կոլեկտիվ անվտանգությանը և ՄԱԿ-ի կանոնադրությանը նրա մասնակիցների հավատարմության մասին։ Բայց այդ ընդհանուր խոսքերին հաջորդում էին հստակորեն արտահայտված ագրեսիվ դիտավորություններ հետապնդող պարտավորություններ։ Պայմանագրի համաձայն կողմերը պարտավորվում էին բոլոր միջոցներով զարգացնել իրենց ռազմական հզորությունը, անհապաղ մեկը մյուսին ամեն տեսակի, այդ թվում ռազմական օգնություն ցույց տալ, եթե կողմերից մեկը հարձակման ենթարկվի Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում, ներառյալ Եվրոպայում այս կամ այն կողմից օկուպացիոն զորքերի, կամ կղզիների, նավերի և ինքնաթիռների վրա հարձակումը Հյուսիսային Ատլանտիկայի շրջանում։ Հաշվի առնելով, որ պայմանագիրը չի բովանդակում «հարձակում» հասկացության սահմանումը, նրա մասնակիցները կարող են ամեն մի կոնֆլիկտ ներկա-

յացնել իրեն «հարձակում» և դրա հիման վրա ուժ գործադրել ամեն մի պետության կամ պետությունների խմբի դեմ։ Պայմանագրով նախատեսվում էր բլոկի ղեկավար մարմինների, այդ թվում ռազմական կոմիտեի ստեղծումը։

Իր գոյության ավելի քան 34 տարիների ընթացքում ՆԱՏՕ-ն անփոփոխ կերպով հանդես է գալիս որպես հրատապ միջազգային պրոբլեմների լուծումը բարդացնող գործոն, արգելակում է ժողովուրդների համագործակցության զարգացումը։ ԱՄՆ-ը որպես ՆԱՏՕ-ի առաջատար երկիր, մշտական ճնշում է գործադրում իր դաշնակիցների վրա, նրանց ստիպում է՛լ ավելի մեծացնելու ռազմական ծախսերը։ Միայն 25 տարում ՆԱՏՕ-ի մասնակիցները ռազմական նախապատրաստությունների վրա ծախսել են մոտ 2000 միլիարդ դոլար։ Մասնակից երկրների այդ նպատակի համար տարեկան ծախսերը գերազանցում են 100 միլիարդ դոլարից։

Սովետական Միությունն իր արտաքին քաղաքական փաստաթղթերում սուր քննադատության է ենթարկել պետությունների ռազմական դաշինքներ ստեղծելու քաղաքականությունը, որը հղի է նոր համաշխարհային պատերազմի առաջացման վտանգով, ցույց է տվել 1945 թ. ստեղծված ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին այդ քաղաքականության անհամապատասխանությունը։ Սովետական կառավարությունը և սոցիալիստական մյուս երկրների կառավարությունները ՄԱԿ-ին և արևմտյան տերություններին կոնստրուկտիվ առաջարկություններ են ներկայացրել համընդհանուր խաղաղության պահպանության, աշխարհը ռազմական խմբավորումների պառակտելը կանխելու, միջուկային զենքն արգելելու և պետությունների զորքերն ու սպառազինությունը կրճատելու գործում համագործակցելու վերաբերյալ։ Սակայն արևմտյան տերություններն այդ առաջարկությունները անուշադրության են մատնում։ ՍՍՀՄ-ը պահանջում էր ամենից առաջ դադարեցնել միջուկային զենքի արտադրությունը և արգելել նրա կիրառումը, ինչպես նաև զգալիորեն կրճատել բոլոր երկրների, առաջին հերթին Սովետական Միության, ԱՄՆ-ի, ՉԺՀ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի սովորական տեսակի զինված ուժերը և նրանց միջև խաղաղության պակտ կնքել։ Այդ դիրքն անփոփոխ մընաց նաև այն բանից հետո, երբ ՍՍՀՄ-ը 1949 թ. դարձավ միջուկային տերություն։

Ի տարբերություն ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ը, Անգլիայի և Ֆրանսիայի պաշտպանությամբ, հանդես էր գալիս ատոմային զենքի արտադրությունը դադարեցնելու և դրա արգելման դեմ։ 1946 թ. ԱՄՆ-ը ՄԱԿ մտցրեց «Բարուխի պլանը», որը նախատեսում էր իր վերահսկողությունը հաստատել մյուս երկրներում ատոմային էներգիայի արտադրության վրա, ինչպես նաև ատոմային զենքի վրա ԱՄՆ-ի մենաշնորհի պահպանումը։ 1948 թ. ԱՄՆ-ը իր պլանը պարտադրելով ՄԱԿ-ին, այն վերածեց «ՄԱԿ-ի պլանի»։ Սակայն Սովետական Միության կողմից ատոմային զենքի ԱՄՆ-ի մենաշնորհի վերացումը տապալեց այդ բոլոր հաշիվները։

Սովետական Միությունը 1955 թ. մայիսին ընդառաջ գնաց արևմտյան պետությունների ցանկություններին՝ զինաթափումն սկսելու սովորական սպառազինության ու զինված ուժերի կրճատումից և հիմք ընդունեց նրանց առաջ քաշած այն առավելագույն մակարդակները, մինչև որոնք պետք է կրճատվեին մեծ տերությունների զորքերը (ՍՍՀՄ-ինը, ԱՄՆ-ինը, ՉԺՀ-ինը՝ մինչև 1—1,5 միլիոն, Անգլիայինը և Ֆրանսիայինը՝ մինչև 600 հազար մարդով)։ Ատոմային զենքն առաջարկվում էր արգելել զինաթափման երկրորդ փուլում։ Սակայն արևմտյան տերությունները չընդունեցին նաև այդ առաջարկները։

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՄ (1945—1955)

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական ագրեսորների ջախջախումը, սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներում և համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը խթանեցին գաղութներում և կախյալ երկրներում ազգային-ազատագրական հեղափոխությունների վերելքին։ Այդ հեղափոխությունների հարվածների տակ սկսվեց իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայումը։ Դա իր պատմական նշանակությամբ երկրորդ խոշորագույն իրադարձությունն էր համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումից հետո։

Առաջին հետպատերազմյան տասնամյակում ազգային-ազատագրական շարժումն ընդգրկեց գլխավորապես Ասիայի երկրները։ Չինական Ժողովրդական Հանրապետության, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության հետ միասին, որոնց ժողովուրդները նվաճեցին անկախություն և ընտրեցին զարգացման սոցիալիստական ուղին, քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերեցին Հընդկաստանը, Ինդոնեզիան, Բիրման, Ցեյլոնը (Շրի Լանկան), Պակիստանը, Լաոսը, Կամբոջան (Կամպուչիան), Հորդանանը, Սիրիան, Լիբանանը, Ֆիլիպինները, Լիբիան։ Գաղութատիրության դեմ պայքարում մեծ հաջողության հասավ Եգիպտոսը, որը 1956 թ. հունիսի կեսերին հասավ անգլիական զորքերի լրիվ դուրսբերմանը։

Իմպերիալիստական տերությունները բոլոր միջոցները ձեռնարկեցին ազգային-ազատագրական շարժումը ճնշելու և գաղութներում ու կախյալ երկրներում իրենց տիրապետությունը պահպանելու համար։ Այդ նպատակով նրանք երկու մեծ պատերազմ սանձազերծեցին Կորեայում և Հնդկաչինի թերակղզում։

ԱՄՆ-ի պատերազմը Կորեայում

1950 թ. հունիսի 25-ին հարավկորեական բանակը ամերիկյան ավիացիայի պաշտպանությամբ ներխուժեց Կորեական Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետություն։ Հունիսի 27-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը հայտարարեց, որ ամերիկյան ռազմաօդային և ռազմածովային ուժերին հրաման է տրված, զինված օժանդակություն ցույց տալ հարավկորեական զորքերին և գրավել չինական Տայվան կղզին։ Այսպիսով, ամերիկյան ագրեսիան ձեռնարկվել էր ոչ միայն ԿԺԴՀ-ի, այլև ՉԺՀ-ի դեմ։ ԱՄՆ-ի մտահղացմամբ պատերազմը Կորեայում պետք է հասցներ ԿԺԴՀ-ի վերացմանը և ամբողջ Կորեան ԱՄՆ-ի ռազմաքաղաքական պլացդարմի վերածմանը Հեռավոր Արևելքում։ ԿԺԴՀ-ի վրա իրենց ավազակային հարձակումն ամերիկյան ագրեսորները քողարկեցին ՄԱԿ-ի դրոշակով։ Օգտվելով այն բանից, որ ՍՍՀՄ-ի ներկայացուցիչը, ի նշան ՄԱԿ-ում ՉԺՀ-ին թույլ չտալու դեմ բողոքի, որի տեղն Անվտանգության խորհրդում անօրինականորեն զբաղեցրել էր Չան Կայշեի ներկայացուցիչը, չէր մասնակցում Անվտանգության խորհրդի աշխատանքին, ԱՄՆ-ի կառավարությունը հասավ այն բանին, որ Անվտանգության խորհուրդն ընդունեց մի շարք բանաձևեր, որոնք պատերազմի առաջացման պատասխանատվությունը դնում էին ԿԺԴՀ-ի վրա։ Այդ բանաձևերում ամերիկյան ինտերվենտական զորքերը հայտարարվում էին «ՄԱԿ-ի զորքեր», իսկ այդ ուժերի ամերիկյան հրամանատարությունը՝ «միացյալ հրամանատարություն»։

Չնայած ԱՄՆ-ի գործադրած ճնշմանը ՄԱԿ-ի անդամ 56 պետություններից միայն 14-ն իրենց զորքերն ուղարկեցին Կորեա։ Բացի ԱՄՆ-ից և Հա-

բավային Կորեայից ԿԺԴՀ-ի դեմ պատերազմին մասնակցեցին Անգլիան, Ֆրանսիան, Ավստրալիան, Բելգիան, Հոլանդիան, Կանադան, Կոլումբիան, Լյուքսեմբուրգը, Նոր Զելանդիան, Տաիլանդը, Թուրքիան, Ֆիլիպինները, Եթովպիան, Հարավ-Աֆրիկյան Միությունը։ Սակայն պատերազմում այս բոլոր դաշնակիցների ներդրումն աննշան էր։ Ինտերվենցիային մասնակցած զորքերի ընդհանուր զանգվածից դաշնակիցներին բաժին էր ընկնում միայն ցամաքային զորքերի մոտ 10 %-ը, ռազմածովային ուժերի 7 %-ից էլ պակաս մասը և ռազմաօդային ուժերի 1 %-ից մի քիչ ավելին։ Այսպիսով, ամերիկյան դիվանագիտության այն հաշիվները, թե պատերազմը Կորեայում կմղվի ուրիշ երկրների ձեռքերով, չարդարացան։ Պատերազմը վարելու էին ամերիկյան զորքերը։

ԿԺԴՀ-ի ժողովրդական բանակը, ետ մղելով ագրեսորների հարձակումը, անցավ հակահարձակման և սեպտեմբերի սկզբներին ինտերվենտներից ու լիսինմանականներից ազատագրեց համարյա ամբողջ Հարավային Կորեան։ Միայն Ինչխոնում իջեցված ծովային խոշոր դեսանտը փոխեց պատերազմի ընթացքը. ժողովրդական բանակը ստիպված եղավ ետ քաշվել հյուսիս։ Արբեցած հաջողությունից, ինտերվենտները ներխուժեցին Հյուսիսային Կորեա։ 1950 թ. հոկտեմբեր—նոյեմբերին ԿԺԴՀ-ի ժողովրդական բանակի համար ստեղծվեց բավականին ծանր իրադրություն։ Միաժամանակ ՉԺՀ-ի տարածք ամերիկյան զորքերի ներխուժման սպառնալիք առաջացավ։ Այդ ժամանակ կորեական ժողովրդին օգնության եկան չինական ժողովրդական կամավորները։ Սովետական Միությունը ԿԺԴՀ-ի բանակին և չինական կամավորներին տվեց անհրաժեշտ քանակի զենք, զինամթերք, դեղորայք և պարենամթերք։ ԿԺԴՀ-ի ժողովրդական բանակի և չինական ժողովրդական կամավորների համատեղ ջանքերով Հյուսիսային Կորեան ազատագրվեց ագրեսորներից, և 1951 թ. սկզբներին ռազմաճակատը կայունացավ մոտավորապես 38-րդ զուգահեռականի վրա։ Ամերիկյան հրամանատարության՝ պատերազմի ընթացքն իրենց օգտին փոխելու բազմաթիվ փորձերն անհաջողության մատնվեցին։

Ամերիկյան ինտերվենտները և նրանց դաշնակիցները հրեշավոր ոճրագործություններ կատարեցին Կորեայում։ Պատերազմի երեք տարվա ընթացքում նրանք Հյուսիսային Կորեայում այրեցին և ավերեցին 3700 արդյունաբերական ձեռնարկություն, 600 հազար բնակելի տուն, ավելի քան 5 հազար դպրոց, 1 հազար հիվանդանոց։ Ժամանակավորապես զավթված շրջաններում նրանք գազանարար տանջամահ արեցին ավելի քան 1 միլիոն մարդ։

Սովետական Միությունը հաստատակամորեն ձգտում էր հասնել պատերազմի դադարեցմանը, օտարերկրյա զորքերը Կորեայից դուրս բերելուն և կորեական ժողովրդին հնարավորություն տալ իր ներքին գործերն ինքը որոշելու։ 1951 թ. հունիսին սովետական կառավարությունը հանդես եկավ կռվող կողմերի միջև զինադադարի բանակցություններ վարելու առաջարկությամբ։ ԱՄՆ-ի կառավարությունը կանգնած լինելով Կորեայում իր մտադրություններ ձախողման փաստի առջև և տեսնելով պատերազմի անհեռանկարայնությունը, ստիպված էր ընդունել ՍՍՀՄ-ի առաջարկությունը։ Զինադադարի վերաբերյալ բանակցություններն սկսվեցին 1951 թ. հուլիսին և ընդմիջումներով շարունակվեցին երկու տարի։ Միայն 1953 թ. հուլիսի 27-ին ԱՄՆ-ի կառավարությունը ստորագրեց զինադադարի վերաբերյալ համաձայնագիրը։ ԱՄՆ-ը ռազմական և քաղաքական ծանր պարտություն կրեց։ Համաձայնագրով նախատեսվում էր ռազմական գործողությունների դադարեցում, դեմարկացիոն գծի և ապառազմականացված գոտու հաստատում, ռազմագերիների հարցի լուծում, ամբողջությամբ վերցրած կորեական պրոբլեմի խաղաղ կարգավորման համար քաղաքական կոնֆերանսի հրավիրում։ Զինադադարի մասին համաձայնագրի կատարման հսկողության համար հիմնվում էր Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Շվեդիայի և Շվեյցարիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով։

Պատերազմը Հնդկաչինում։ Հնդկաչինի վերաբերյալ Ժնևյան համաձայնագրերը

1946 թ. դեկտեմբերին ֆրանսիական գաղութարարները պատերազմ սկսեցին Հնդկաչինում, նպատակ ունենալով վերացնել Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը և վերականգնել գաղութային իրենց տիրապետությունը։ Այդ «կեղտոտ պատերազմում» նրանց հսկայական օգնություն ցույց տվեցին ամերիկյան իմպերիալիստները, որոնք ծրագրում էին Հնդկաչինն իրենց ձեռքը վերցնել։ 1950-ից մինչև 1953 թ. ԱՄՆ-ը Հնդկաչինում գտնվող ֆրանսիական զորքերին տվեց մեծ քանակի տարբեր տեսակի զենք, և, այնուամենայնիվ, պատերազմը չտվեց սպասվող արդյունքները. ֆրանսիական զորքերը կրում էին պարտություն պարտության հետևից։ Նրանք հատկապես խոշոր պարտություն կրեցին 1954 թ. գարնանը Դիեն Բիենֆուի մոտ։ Այդ ժամանակ Վիետնամի ժողովրդական բանակը վերահսկում էր երկրի տարածքի 75 %-ը։

1953 թ. վերջին Սովետական Միությունը առաջարկեց հինգ պետությունների՝ ՍՍՀՄ-ի, ՉԺՀ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների խորհրդակցություն հրավիրել՝ քննարկելու միջազգային լարվածությունը թուլացնելու անհետաձգելի հարցերը։ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությունը, որ կայացավ 1954 թ. հունվար—փետրվարին Բեռլինում, որոշեց հրավիրել հինգ տերությունների և մյուս շահագրգռված երկրների արտաքին գործերի մինիստրների՝ Կորեայում և Հնդկաչինում խաղաղ կարգավորմանը նվիրված խորհրդակցություն։ Այդպիսի խորհրդակցություն կայացավ 1954 թ. ապրիլի 25-ից մինչև հուլիսի 21-ը Ժնևում։ Ժնևյան խորհրդակցությունում կորեական հարցը չկարգավորվեց։ ԱՄՆ-ը և կորեական պատերազմի նրա դաշնակիցները մերժեցին համակորեական ազգային ժողովի կորեական ընտրություններ անցկացնելու և Կորեայից օտարերկրյա զորքերը դուրս բերելու ԿԺԴՀ-ի առաջարկները։ Հնդկաչինի գծով ընդունվեցին կարևոր որոշումներ՝ կնքվեցին Հնդկաչինում զինադադարի համաձայնագրեր և ստորագրվեց խորհրդակցության մասնակիցների եզրափակիչ դեկլարացիա։ Զինադադարի վերաբերյալ համաձայնագրերը նախատեսում էին ռազմական գործողությունները դադարեցնել Լաոսում, Կամպուչիայում և Վիետնամում։ Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության և Հարավային Վիետնամի միջև 17-րդ զուգահեռականից մի քիչ հարավ սահմանվեց դեմարկացիոն գիծ և երկու կողմից, այդ գծից հաշված, 5 կմ. չեզոք գոտի։ Զինադադարի մասին համաձայնագրերը նախատեսում էին Հնդկաչինից ֆրանսիական զորքերի դուրս բերումը և արգելում ռազմական բլոկների մեջ Վիետնամի, Լաոսի և Կամպուչիայի ներգրավումը։ Համաձայնագրերի կատարումը վերահսկելու համար հիմնվում է Հնդկաստանի, Լեհաստանի և Կանադայի ներկայացուցիչներից կազմված միջազգային հանձնաժողով։ Խորհրդակցության մասնակիցները եզրափակիչ դեկլարացիայում ի գիտություն ընդունեցին զինադադարի վերաբերյալ համաձայնագրերը և սահմանեցին, որ Լաոսում և Կամպուչիայում ընտրությունները պետք է անցկացվեն 1955 թ., Վիետնամում՝ 1956 թ.։ Նրանք պարտավորվեցին հարգել Հնդկաչինյան բոլոր պետությունների սուվերենությունը, անկախությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը, չմիջամտել նրանց ներքին գործերին։

Հնդկաչինում պատերազմի դադարեցումը խաղաղասեր բոլոր ուժերի

խոշոր հաղթանակն էր, իրենց ազատության և անկախության համար Հնդկաչինի ժողովուրդների պայքարի հաջողությունների ճանաչումը։ Խորհրդակցության հռչակած խաղաղ կարգավորման սկզբունքները ռեալ հիմք ստեղծեցին Վիետնամի, Լաոսի և Կամպուչիայի խաղաղ զարգացման համար։ Ըստ էության Հնդկաչինում իր զավթողական պլանների իրականացման համար պահպանել ձեռքերի ազատությունը, ԱՄՆ-ը հրաժարվեց ստորագրել եզրափակիչ դեկլարացիան։

ՍԵԱՏՕ-ի և Բաղդադի բլոկի ստեղծումը

Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ը սկսեց ռազմական նոր բլոկների կազմակերպումը, որոնք ուղղված էին ինչպես սոցիալիստական պետությունների, այնպես էլ Հարավարևելյան Ասիայի, Մերձավոր և Միջին Արևելքի ազգային-ազատագրական շարժումների դեմ։ 1954 թ. սեպտեմբերի 8-ին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Պակիստանի, Տաիլանդի և Ֆիլիպինների ներկայացուցիչները Մանիլայում պայմանագիր ստորագրեցին ՍԵԱՏՕ (Հարավարևելյան Ասիայի պայմանագրի կազմակերպություն) ռազմական բլոկի ստեղծման մասին, որը գաղութարարներին անսահմանափակ հնարավորություններ էր տալիս ինչպես պայմանագրի մասնակիցների, այնպես էլ Վիետնամի, Լաոսի և Կամպուչիայի ներքին գործերին միջամտելու համար։ 1973 թ. Պակիստանը դուրս եկավ ՍԵԱՏՕ-ից, Ֆրանսիան փաստորեն դադարեցրեց այդ բլոկին մասնակցելը։

Դեռևս 1951 թ. ԱՄՆ-ը և Անգլիան առաջ քաշեցին միջին արևելյան հրամանատարություն ստեղծելու պլանը, որի համաձայն նախատեսվում էր Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրներում ամերիկյան, անգլիական և ֆրանսիական զորքերի տեղաբաշխում, այդ շրջաններում դաշնակցային հրամանատարության տրամադրության տակ ռազմական բազաների, կոմունիկացիաների, նավահանգիստների և մյուս կառուցվածքների հանձնում։ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդները մերժեցին իմպերիալիստական տերությունների զորքերի կողմից իրենց երկրների օկուպացման պլանը։ Այն ժամանակ ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանները հասան 1955 թ. փետրվարին Թուրք-իրաքյան ռազմական դաշինքի կնքմանը, որն ստացավ Բաղդադի պակտ անվանումը։ 1955 թ. ապրիլին դրան միացավ Անգլիան, սեպտեմբերին՝ Պակիստանը, նոյեմբերին՝ Իրանը։ ԱՄՆ-ը ձևականորեն չմտավ Բաղդադի բլոկի մեջ, բայց նրա գոյության առաջին իսկ օրից ամենաակտիվ մասնակցություն ունեցավ նրանում։ Արտաքինից Բաղդադի պակտը հետապնդում էր պաշտպանական նպատակներ, իսկ գործնականում նրա մասնակիցները սոցիալիստական երկրների և ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ վարում էին թշնամական քաղաքականություն։ 1958 թ. հուլիսի հեղափոխության հաղթանակի հետևանքով հանրապետություն հաստատվելուց հետո Իրաքը դուրս եկավ Բաղդադի բլոկից։ Այդ կապակցությամբ բլոկը 1959 թ. մարտին վերանվանվեց Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն (ՍԵՆՏՕ)։ Բլոկի նոր անվանումը ցույց էր տալիս, որ այն կոչված էր կապող օղակի դեր խաղալ Հյուսիսատլանտյան պակտի և ՍԵԱՏՕ-ի միջև։

Ասիայի և Աֆրիկայի երկրների Բանդունգի կոնֆերանսը

Հեռավոր Արևելքում և Հարավարևելյան Ասիայում իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը առաջ բերեց Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների զայրույթը, գաղութարարների դեմ պայքարի համար իրենց ուժերի համախմբման ձգտումը։ Այդ ուժերի համախմբման համար կարևոր դեր խաղաց Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Բիրմայի, Պակիստանի և Ցեյլոնի (Շրի Լանկա) նախաձեռնությամբ 1955 թ. ապրիլին Բանդունգում (Ինդոնեզիա) հրավիրված Ասիայի և Աֆրիկայի 29 անկախ երկրների կոնֆերանսը։ Բանդունգի կոնֆերանսն ընդգծեց գաղութային լծին հնարավոր չափով շուտ վերջ տալու անհրաժեշտությունը և հայտարարեց, որ պաշտպանում է գաղութների ու կախյալ երկրների ժողովուրդների ազատագրական շարժումները։ Կոնֆերանսն ընդունեց համընդհանուր խաղաղությունը և համագործակցությունն օգնելու մասին դեկլարացիա, որում ձևակերպված էին տարբեր սոցիալական կարգ ունեցող երկրների խաղաղ գոյակցության սկզբունքները, ինչպես նաև նշված էին Ասիայի ու Աֆրիկայի երկրների միջև բարեկամությունն ու համագործակցությունն ամրապնդելու ուղիները։

ԳՖՀ-ի ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԸ։ ՍՍՀՄ-ի ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԳՖՀ-Ի ՎԵՐԱՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՄ, ՀԱՆՈՒՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Երբ 1949 թ. կազմավորվեց ԳՖՀ-ն, ԱՄՆ-ը իրավական հիմք ստացավ դնելու նրա ռազմականացման և ՆԱՏՕ-ի ու արևմտյան տերությունների մյուս ռազմական դաշինքների մեջ ներգրավելու հարցը։ ԳՖՀ-ի զինված ուժերը վերականգնելու որոշումը ՆԱՏՕ-ի խորհրդի կողմից ընդունվեց 1950 թ. սեպտեմբերին։ 1952 թ. մայիսին ԳՖՀ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Հոլանդիան, Բելգիան և Լյուքսեմբուրգը, Միացյալ Նահանգների թելադրանքով, պայմանագիր ստորագրեցին եվրոպական պաշտպանական խմբակցության և «Եվրոպական բանակ» կազմելու մասին։

Վերջինիս շրջանակներում նախատեսվում էր ստեղծել արևմտագերմանական զինված ուժեր։ Սակայն ֆրանսիական Ազգային ժողովը չվավերացրեց այդ պայմանագիրը։ Այդ ժամանակ ԱՄՆ-ը և Անգլիան դրված նպատակին հասնելու համար օգտագործեցին այլ ուղի։ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի ներկայացուցիչները 1954 թ. հոկտեմբերի 23-ին Փարիզում համաձայնագիր ստորագրեցին ԳՖՀ-ի վերառազմականացման մասին, որով նախատեսվում էր արևմտագերմանական 500 հազար մարդուց բաղկացած ազգային բանակի ստեղծում, որը դրվում էր Եվրոպայում ՆԱՏՕ-ի զինված ուժերի հրամանատարության տրամադրության տակ, ԳՖՀ-ի ներգրավումը ՆԱՏՕ-ի և Արևմտաեվրոպական դաշինքի (նախկին Արևմտյան դաշինք) մեջ։ Արևմտաեվրոպական դաշինքի մեջ ներգրավվեց նաև Իտալիան։ Արևմտյան Գերմանիան պարտավորվեց իր տարածքում չարտադրել ատոմային, մանրէական և քիմիական զենք, ինչպես նաև կառավարվող արկեր, ռազմական խոշոր նավեր և ստրատեգիական ռմբակոծիչներ։ Սակայն փարիզյան համաձայնագրերում վերապահում էր արված այն մասին, որ այդ սահմանափակումները կարող են վերացվել Արևմտաեվրոպական դաշինքի խորհրդի որոշմամբ։ Բացի այդ, Փարիզյան համաձայնագրերը ԳՖՀ-ին չէին արգելում ուրիշի տարածքում ատոմային զենք արտադրելը, դրա ներմուծումը և օգտագործումը։

Որպեսզի քողարկվեր արևմտագերմանական միլիտարիզմի վերածնունդը և Փարիզյան համաձայնագրերը դառնային ժողովուրդների համար ավելի «ընդունելի», Արևմտաեվրոպական դաշինքի կազմակերպիչները մշակեցին «երաշխիքների» համակարգ, որի նպատակը իբր թե ԳՖՀ-ի կողմից դաշինքի գծով նրա գործակիցների դեմ հնարավոր ագրեսիան կանխելն էր։ Նման երաշխիքային միջոցներից էր Արևմտյան Եվրոպայում իրենց զորքերը պահելու ԱՄՆ-ի և Անգլիայի համաձայնությունը։ Սակայն արևմտագերմանական ռևանշիստներն այդ բոլոր «երաշխիքներին», լուրջ նշանակություն չէին

տալիս։ Փարիզյան համաձայնագրերը ուժի մեջ մտան 1955 թ. մայիսի 5-ին։ Դա հասցրեց միջազգային լարվածության կտրուկ ուժեղացմանը։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները համառորեն պահանջում էին թույլ չտալ ԳՖՀ-ի ռազմականացում, հանդես էին գալիս Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի հնարավորին չափ շուտ կնքման օգտին։ Սովետական կառավարությունը ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների 1954 թ. հունվար—փետրվարին կայացած Բեռլինյան խորհրդակցության քննարկմանը ներկայացրեց «Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի հիմունքները» նախագիծը։ Պայմանագրի նախագիծը նախատեսում էր միասնական, անկախ, դեմոկրատական խաղաղասեր գերմանական պետության ստեղծում, Գերմանիայից օկուպացիոն զորքերի դուրսբերում, գերմանական տարածքում օտարերկրյա ռազմական բազաների լիկվիդացում, նրա դեմ պատերազմած երկրների դեմ ուղղված ռազմական բլոկներին Գերմանիայի չմասնակցելը, Պոտսդամի համաձայնագրին համապատասխան սահմանների հաստատումը, պաշտպանության կարիքների համար զինված ուժեր ունենալու Գերմանիային իրավունք տալը, Գերմանիայի ֆինանսատնտեսական պարտավորությունների թեթևացումը։ ԳՖՀ-ի վերառազմականացում և Եվրոպան ռազմական խմբավորումների պառակտելը թույլ չտալու նպատակով Սովետական Միությունը Բեռլինյան խորհրդակցությունում առաջարկություններ մտցրեց բոլոր եվրոպական պետությունների, ներառյալ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի, մասնակցությամբ Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու պայմանագիր կնքել, որում պարտավորություն վերցրվեր մեկը մյուսի դեմ չդիմել պատերազմի, վիճելի հարցերը կարգավորել խաղաղ միջոցներով և փոխադարձ օգնություն ցույց տալ ագրեսիայի դեպքում։

ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին ընդունել սովետական առաջարկները և, ինչպես նշվեց, ստորագրեցին Փարիզյան համաձայնագրերը։ Այդ համաձայնագրերը փաստորեն վերացնում էին պատերազմի տարիներին ՍՍՀՄ-ի հետ Անգլիայի ու Ֆրանսիայի կնքած և կողմերին Գերմանիայի հետ ռազմական դաշինքի մեջ չմտնելու պարտավորեցնող պայմանագրերը։ Ստեղծված նման պայմաններում սովետական կառավարությունն ստիպված էր 1955 թ. մայիսին չեղյալ հայտարարել դաշինքի և փոխադարձ օգնության 1942 թ. մայիսի 26-ի անգլո-սովետական և 1944 թ. դեկտեմբերի 10-ի ֆրանսո-սովետական պայմանագրերը։

Փարիզյան համաձայնագրերի ստորագրման կապակցությամբ Եվրոպայի սոցիալիստական երկրները պետք է միջոցներ ձեռնարկեին իրենց պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ։ 1955 թ. մայիսի 11—14-ը Վարշավայում կայացավ ՍՍՀՄ-ի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, ԳԴՀ-ի և Ալբանիայի ներկայացուցիչների՝ Եվրոպայի խաղաղության և անվտանգության ապահովմանը նվիրված խորհրդակցություն։ Խորհրդակցության մասնակիցներն ստորագրեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր, որը կողմերին պարտավորեցնում էր սերտ բարեկամության և եղբայրական համագործակցության քաղաքականություն վարել բոլոր բնագավառներում, խորհրդակցել այն բոլոր միջազգային հարցերի գծով, որոնք շոշափում են նրանց շահերը, որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից հարձակման ենթարկվելու դեպքում միմյանց ցույց տալ ամեն տեսակի, այդ թվում ռազմական օգնություն։ Այսպես առաջացավ Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը, որին կից ստեղծվեցին Զինված ուժերի միացյալ հրամանատարությունը և Քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեն։ 1969 թ.

մարտին ստեղծվեց պաշտպանության մինիստրների կոմիտեն։ Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի սոցիալիստական երկրների անվտանգությունն ապահովելու և ընդհանուր խաղաղությունը պահպանելու գործում։ Վարշավայի պայմանագրի կազմակերպությանը, պայմանագրի նպատակների և պայմանների համաձայն, կարող է միանալ ամեն մի եվրոպական տերություն։

ԳՖՀ-ի ռազմականացման դեմ, հանուն կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծման Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների պայքարը լրացվեց մի շարք շատ կարևոր միջոցառումներով, որոնք ուղղված էին միջազգային լարվածության թուլացմանը, համաշխարհային նոր պատերազմի առաջացման վտանգի վերացմանը։ Սովետական կառավարության նախաձեռնությամբ 1955 թ. մայիսի 15-ին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի ներկայացուցիչներն ստորագրեցին անկախ և դեմոկրատական Ավստրիայի վերականգնման պետական պայմանագիրը։ 1955 թ. հունվարին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը հրամանագիր ընդունեց ՍՍՀՄ-ի և Գերմանիայի միջև պատերազմական դրությունը դադարեցնելու մասին, նույն տարվա սեպտեմբերին ՍՍՀՄ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ԳՖՀ-ի հետ, 1956 թ. հոկտեմբերին դադարեցվեց պատերազմական վիճակը Ճապոնիայի հետ և դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ՍՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1956—1973 ԹԹ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1956—1973 ԹԹ.

1956—1973 թթ. միջազգային հարաբերությունները զարգանում էին համաշխարհային սոցիալիստական սիստեմի համաշխարհային-պատմական հաջողությունների իրագործության մեջ։ Սոցիալիստական պետությունների համագործակցությունը հաջողությամբ զարգանում և ամրապնդվում էր։ Այն իրականացվում էր տարբեր ձևերով և բնագավառներում։ Սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունները մեծ ուշադրություն էին դարձնում սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման, տնտեսական համագործակցության ձևերի և մեթոդների, արտաքին քաղաքականության ընդհանուր գծի ձևակերպման, սկզբունքային պրոբլեմների համատեղ մշակմանը։ Սոցիալիստական պետությունների արտաքին քաղաքական գործունեության կոորդինացման գլխավոր կենտրոնը Վարշավայի պայմանագրի կազմակերպությունն է։ Նրա մասնակիցները մշակել և կենսագործում են զինաթափման, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հարավարևելյան Ասիայում խաղաղությունը և անվտանգությունն ամրապնդելու միջոցառումների ընդարձակ ծրագիր։ Վարշավայի պայմանագրի շրջանակներում ռազմական բնագավառի լայն համագործակցություն է իրականացվում։ Վերջին տարիներին մի շարք միջոցներ են իրականացվել Վարշավայի պայմանագրի ռազմական կազմակերպության կատարելագործման ուղղությամբ, որի հետևանքով դաշնակից պետությունների զինված ուժերը գտնվում են բարձր պատրաստության վիճակում և կարող են ապահովել եղբայրական ժողովուրդների խաղաղ աշխատանքը։

40-ական թվականներին կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրերի գործողության ժամկետի լրանալու կապակցությամբ սոցիալիստական պետությունները 1961—1972

թթ. ստորագրեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության նորոգված պայմանագրեր, մի քանի դեպքերում պայմանագրեր ստորագրվեցին առաջին անգամ։ Տնտեսական համագործակցությունը մեծ չափեր ընդունեց հատկապես ՏՓԽ-ի երկրների միջև։ 50-ական թվականների երկրորդ կեսից սկսեց համագործակցությունը լայնորեն կիրառվել բազմակողմանի հիմքի վրա, իրականացվել ժողովրդատնտեսական պլանների կոորդինացումը, արտադրության կոոպերացումն ու մասնագիտացումը։ 1962 թ. ՏՓԽ-ի մասնակիցներն ընդունեցին «Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման հիմնական սկզբունքներ» կարևոր փաստաթուղթը, որը սահմանում էր արդի փուլի տնտեսական համագործակցության բովանդակությունը, սկզբունքները և ձևերը։ Արտադրության կոոպերացման և մասնագիտացման նպատակով ՏՓԽ-ի շրջանակներում ստեղծվեցին միջազգային մի շարք միավորումներ և համատեղ ձեռնարկություններ, այդ թվում «Խաղաղություն» էներգասիստեմը, ապրանքատար վագոնների ընդհանուր պարկը, «Բարեկամություն» նավթամուղը, «Ինտերմետալը», Տնտեսական համագործակցության միջազգային բանկը, Միջազգային երկարատև ներդրումների բանկը և այլն։

Սոցիալիստական երկրների համագործակցության հետագա զարգացման և ամրապնդման համար մեծ նշանակություն ունեցան ՏՓԽ-ի 1969 թ. ապրիլին և 1970 թ. մայիսին կայացած XXIII և XXIV նստաշրջանների որոշումները։ Դրանք ուղղված էին սոցիալիստական երկրների տնտեսական ինտեգրացման, նրանց էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացման և գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումներն արտադրության մեջ ներդնելու քաղաքականություն վարելուն։

Ի կատարումն այդ որոշումների, ՏՓԽ-ի XXV նստաշրջանը, որ կայացավ 1971 թ. հուլիսին, ընդունեց ՏՓԽ-ի անդամ երկրների համագործակցության հետագա խորացման ու կատարելագործման և տնտեսական ինտեգրացման զարգացման կոմպլեքս ծրագիր։ Այդ ծրագիրը նախատեսված է ըստ փուլերի 15—20 տարվա ընթացքում իրականացվելու համար։

Ծրագրում սահմանված են համագործակցության իրականացման կոնկրետ ուղիներն ու ժամկետները, որոնք կապված են տնտեսական առավել խոշոր այնպիսի պրոբլեմների հետ, ինչպիսիք են ժողովրդական տնտեսությանը վառելիքով և հումքով, տեխնիկապես կատարելագործված սարքավորմամբ ապահովելը, ինչպես նաև արդյունաբերական և պարենային ապրանքներով բնակչության պահանջմունքները բավարարելը։ Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման մեջ, սոցիալիստական երկրների հետ առևտրում կարևոր դեր է խաղում ՍՍՀՄ-ը։ 1973 թ. այդ երկրներին բաժին էր ընկնում ՍՍՀՄ-ի արտաքին առևտրական շրջանառության ավելի քան 58 %-ը։ Ի հաշիվ սովետական մատակարարումների ՏՓԽ-ի անդամ մյուս երկրները բավարարում են նավթի և շուգունի համարյա լիովին, երկաթի հանքաքարի, անտառանյութերի 80—90 %-ի, նավթամթերքների, մետաղգլանման, ֆոսֆորային պարարտանյութերի 75 %-ի, բամբակի, քարածխի, մարգանեցի հանքաքարի ավելի քան 60 %-ի ներմուծման իրենց պահանջմունքները։

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ։ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

50-ական թվականների երկրորդ կեսը և 60-ական թվականներն անցան ազգային-ազատագրական շարժումների հետագա վերելքի նշանաբանով։

Նրա կենտրոնը դարձավ Աֆրիկան։ Ակտիվ պայքարի ներգրավվեցին նաև Լատինական Ամերիկայի ժողովուրդները։ 1959 թ. իմպերիալիստական լծից ազատագրվեց Կուբայի ժողովուրդը։ Արևմտյան կիսագնդում առաջացավ առաջին սոցիալիստական պետությունը։ 1956—1974 թթ. գաղութային կախումից ազատագրվեց ավելի քան 250 միլիոն մարդ և կազմավորվեցին ավելի քան 50 անկախ պետություններ։ 70-ական թվականների սկզբներին գաղութային սիստեմը փաստորեն փլուզվեց։ Այդ ժամանակ գաղութների տարածությունը կազմում էր աշխարհի տարածքի 4 %-ից էլ պակաս մասը, իսկ բնակչությունը՝ 1 %-ը։

Գաղութային սիստեմի փլուզումը միջազգային ասպարեզում ուժերի տեղաբաշխման էական փոփոխություններ առաջ բերեց։ Երիտասարդ պետությունների մեծ մասը միջազգային ասպարեզում հանդես է գալիս իբրև ինքնուրույն, հիմնականում հակաիմպերիալիստական ուժ։ Նրանք սոցիալիստական երկրների հետ ձգտում են հասնել գաղութատիրության լիովին վերացման վերաբերյալ ՍՍՀՄ-ի նախաձեռնությամբ 1960 թ. դեկտեմբերին ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևի իրականացմանը, պաշտպանում են սոցիալիստական պետությունների կողմից առաջ քաշվող միջազգային լարվածության թուլացման, զինաթափման, պատերազմի օջախները վերացնելու շահերից բխող միջոցառումները։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները ակտիվորեն պաշտպանում են գաղութատիրության դեմ, ազատության և անկախության համար ժողովուրդների պայքարը։ Նրանք սերտ համագործակցություն են զարգացնում երիտասարդ ազգային պետությունների հետ, նրանց ցույց են տալիս նշանակալի տնտեսական և այլ օգնություն։ 1971 թ. մայիսին Սովետական Միությունը բարեկամության և համագործակցության պայմանագիր կնքեց Եգիպտոսի հետ, նույն տարվա օգոստոսին՝ խաղաղության, բարեկամության և համագործակցության պայմանագիր Հնդկաստանի հետ, 1972 թ. ապրիլին՝ բարեկամության և համագործակցության պայմանագիր Իրաքի հետ։

Հարկավոր է, սակայն, ի նկատի ունենալ, որ իմպերիալիստական տերությունները դեռևս կարևոր դիրքեր են գրավում երիտասարդ պետություններում։ Նրանք բոլոր միջոցներով ձգտում են զարգացող երկրները պահել իրենց տնտեսական վերահսկողության և քաղաքական ազդեցության տակ, գաղութային տիրապետության հին ձևերի փոխարեն նրանց պարտադրում են ստրկացման նոր ձևեր՝ նեոգաղութատիրությունը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ, ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ

Կուսակցության XXIV համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ ասված է, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը շարունակում է խորանալ։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի այդ խորացումն ամենից առաջ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հաջողությունների և ամբողջ համաշխարհային զարգացման վրա նրա ազդեցության ուժեղացման, գաղութատիրության փլուզման և բանվորական ու կոմունիստական շարժումների հզոր վերելքի հետևանք է։

Իմպերիալիստական երկրների անհամաչափ զարգացման հետևանքով 1956—1973 թթ. շարունակում էր փոխվել վեց գլխավոր կապիտալիստական պետությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, ԳՖՀ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճա-

պոնիայի, տնտեսական ուժերի հարաբերակցությունը։ Կապիտալիստական աշխարհում արդյունաբերական արտադրության մեջ նվաղեց ԱՄՆ-ի և Անգլիայի բաժինը։ Ճապոնիան վերջին տեղից փոխադրվեց երկրորդը, ԳՖՀ-ին մղելով երրորդ տեղը։ 70-ական թվականների մոտերքը պարզորոշ կերպով որոշակի դարձան իմպերիալիստական մրցակցության հիմնական կենտրոնները. ԱՄՆ—Արևմտյան Եվրոպա (ամենից առաջ «Ընդհանուր շուկայի» երկրներ)—Ճապոնիա։ Նրանց միջև դնալով ավելի սուր կերպով է ծավալվում մրցակցային պայքարը համաշխարհային շուկաներում և քաղաքական ասպարեզում։ Կապիտալիստական երկրների միջև հակասություններն զգալիորեն սրվեցին նրանց ընդգրկած էներգետիկ և վալյուտային ճգնաժամի կապակցությամբ։

«Ընդհանուր շուկան» կամ Եվրոպական տնտեսական համագործակցությունը (ԵՏՀ) սկզբնական շրջանում ԳՖՀ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի պետական-մոնոպոլիստական բլոկն էր։ Այդ խմբավորումն ստեղծվել էր Հռոմի պայմանագրի հիման վրա, որը ուժի մեջ էր մտել 1958 թ. հունվարի 1-ից։

Ի հակակշիռ վեց պետությունների «Ընդհանուր շուկայի», 1959 թ. Անգլիան ստեղծեց իր տնտեսական խմբավորումը՝ Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան, որի մեջ, բացի Անգլիայից, մտան Շվեդիան, Դանիան, Նորվեգիան, Շվեյցարիան, Պորտուգալիան և Ավստրիան։ Արևմտյան Եվրոպան, այսպիսով, պառակտվեց մրցակից տնտեսական երկու բլոկի։ Բացի այդ երկու բլոկների միջև եղած հակասություններից, հակասությունները սրվում են նաև Արևմտյան Եվրոպայի առանձին երկրների միջև։

ԱՄՆ-ը բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի վերացնի իր եվրոպական դաշնակիցների, ՆԱՏՕ-ի համար վտանգավոր, մրցակցող խմբավորումների պառակտվելը։ Նա ճնշում գործադրեց Անգլիայի վրա, նրան պարտադրելով մտնել ԵՏՀ-ի մեջ։ Մյուս կողմից, Անգլիայում կային առևտրաարդյունաբերական այնպիսի շրջաններ, որոնք շահագրգռված էին «վեցյակի» շուկայի հետ կապերի հաստատմամբ։ Նրանց ճնշմամբ և ԱՄՆ-ի ներգործությամբ անգլիական կառավարությունը 1961 թ. հուլիսին դրեց ԵՏՀ-ի մեջ Անգլիայի ընդունման հարցը, սակայն 1963 թ. հունվարին ԵՏՀ-ի խորհուրդը, Ֆրանսիայի պնդմամբ, մերժեց Անգլիայի խնդրանքը։ Ջնայած դրան, Վիլսոնի լեյբորիստական կառավարությունը 1967 թ. մայիսին նորից խնդրանքով դիմեց «Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիային ընդունելու համար։ Պահպանողական կառավարությունը, որ 1970 թ. ամռանը փոխարինել էր լեյբորիստական կաբինետին, շարունակեց խնդրել «Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիային ընդունելու համար։ Ի վերջո 1971 թ. հունիսին համաձայնություն ձեռք բերվեց «Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիայի մտնելու պայմանների վերաբերյալ, իսկ 1972 թ. հունվարի 22-ին պաշտոնական համաձայնագիր ստորագրվեց 1973 թ. հունվարի 1-ից ԵՏՀ-ին Անգլիայի միանալու վերաբերյալ։ Միաժամանակ «Ընդհանուր շուկային» միացան Դանիան և Իռլանդիան։

Խոր հակասություններ գոյություն ունեն նաև ՆԱՏՕ-ում։ Կյանքը ցույց տվեց «սովետական սպառնալիքի» առասպելի ամբողջ կեղծիքը, որով արդարացվում էր այդ ռազմական բլոկի ստեղծումը։ Սակայն դրա փոխարեն ԱՄՆ-ի եվրոպական պարտնյորների առջև ստեղծվեց ոչ թե առասպելական, այլ «ատլանտյան համերաշխության» հիման վրա համաշխարհային պատերազմի մեջ ներգրավվելու ռեալ վտանգը, որը կարող է առաջանալ աշխարհի տարբեր շրջաններում Միացյալ Նահանգների ագրեսիվ գործողությունների հետևանքով։ Այդ վտանգը հասկանալը, ինչպես նաև Եվրոպայի ամերիկյան դաշնակիցների տնտեսական և ռազմական հզորության ամրապնդումն ուժե-

զացրին ամերիկյան խնամակալությունից ազատագրվելու նրանց ձգտումը, հասցրին ՆԱՏՕ-ում կենտրոնախույս ուժերի զարգացմանը։ Դա հատկապես հստակորեն դրսևորվեց Ֆրանսիայի քաղաքականության մեջ։ 1966 թ. մարտին ֆրանսիական կառավարությունը հայտարարեց ՆԱՏՕ-ի ռազմական համակարգից Ֆրանսիայի դուրս գալու մասին, իր դաշնակիցներին տեղեկացրեց մինչև 1966 թ. հուլիսի 1-ը ֆրանսիական զորքերը ՆԱՏՕ-ի հրամանատարության տրամադրության տակ գտնվելուց դուրս գալու մասին և պահանջեց 1967 թ. ապրիլի 1-ի մոտերքը Ֆրանսիայից դուրս բերել ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի բոլոր զորքերը, ռազմական հիմնարկներն ու բազաները։ Ֆրանսիայի գործողությունները, որ ուղղված էին իր սուվերենության և անկախ քաղաքականության վերականգնմանը, հարված հասցրին Արևմտյան Եվրոպայում ԱՄՆ-ի քաղաքական ու ռազմաստրատեգիական պլաններին և առաջ բերեցին ՆԱՏՕ-ի գոյության ամբողջ ժամանակաշրջանի նրա ամենախոր ճգնաժամը։ 1974 թ. օգոստոսին Հունաստանը հայտարարեց ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունից իր դուրս գալու մասին։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դիրքերի ամրապնդմանը, միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժումների հաջողություններին դեմ հանդիման իմպերիալիզմն իր դրությունը պահպանելու և ամրապնդելու համար կիրառում է բոլոր միջոցները։ Նա ֆինանսական և քաղաքական օգնություն է ցույց տալիս այն բոլոր տարրերին, որոնք հանդես են գալիս խաղաղության և սոցիալական առաջադիմության ուժերի դեմ, քայքայիչ գործունեություն են կատարում սոցիալիստական երկրներում և միջազգային կոմունիստական շարժման մեջ, ձգտում է հասնելու տարբեր պետություններում անցանկալի կառավարությունների և ռեժիմների տապալմանը, լայն պայքար է մղում կոմունիստական գաղափարախոսության դեմ, իրականացնում է սպառազինման հրեշավոր մրցավազք։ Այդ միջոցների զինանոցում ոչ վերջին տեղն է գրավում ռազմական կոնֆլիկտների հրահրումը։ Վերջին տարիների ընթացքում իմպերիալիստական երկրները սանձազերծել են ավելի քան 30 պատերազմ և տարբեր մասշտաբների զինված կոնֆլիկտներ։ Վերջին 15 տարում իմպերիալիստական երկրները ռազմական կոնֆլիկտներ են սանձազերծել Հնդկաչինում, Մերձավոր Արևելքում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում։

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՆԴԿԱՉԻՆՈՒՄ։ ԱՄՆ-Ի ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ ՀՆԴԿԱՉԻՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Շուտով, Հնդկաչինի վերաբերյալ Ժենևյան համաձայնագրերի կնքումից հետո, ԱՄՆ-ին հաջողվեց Հարավային Վիետնամում լիկվիդացնել ֆրանսիացիների ազդեցությունը և այնտեղ իշխանության գլուխ կանգնեցնել Նգո Դին Դիեմի մարիոնետային կառավարությունը։ Այդ կառավարությունը, հենվելով ամերիկյան ֆինանսական և ռազմական օգնության վրա, Հարավային Վիետնամում հաստատեց տեռորիստական ռեժիմ և հրաժարվեց կատարել համավիետնամական ընտրություններ անցկացնելու ու երկրի վերամիավորման վերաբերյալ Ժենևյան համաձայնագրերը։ Նգո Դին Դիեմի կլիկի տեռորին հարավվիետնամական ժողովուրդը պատասխանեց պարտիզանական պայքարով։ Այն գլխավորեց 1960 թ. դեկտեմբերին ստեղծված Հարավային Վիետնամի ազատագրման ազգային ճակատը։

Ամերիկյան իմպերիալիստները, տեսնելով ազատագրական շարժումը ճնշելու իրենց դրածոյի անկարողությունը, սկսեցին լայնորեն միջամտել Հա-

բավային Վիետնամի պատերազմին։ Այդ կուրսն սկսեց իրականացնել դեռևս Քենեդիի կառավարությունը։ Պրեզիդենտ Ջոնսոնի Սպիտակ տուն գալով ԱՄՆ-ը բացահայտորեն կանգնեց Հարավային Վիետնամի ժողովրդի դեմ պատերազմի ուղին, իսկ 1964 թ. օգոստոսին սկսեց Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության տարածքի ռմբակոծությունը։ Փաստացիորեն ապացուցվել է, որ ամերիկյան զինվորականությունը նախօրոք պլանավորեց և ինքը սարքեց «տոնկինյան միջադեպը» այն բանի համար, որպեսզի հասնի ագրեսիան ընդարձակելու նպատակով պրեզիդենտ Ջոնսոնին անսահմանափակ լիազորություններ տալու բանաձևին կոնգրեսի կողմից հավանության արժանանալուն։ 1966 թ. սկզբին Հարավային Վիետնամում կար արդեն ամերիկյան 200 հազար զորք, իսկ տարվա վերջին դրանց թիվը հասավ ավելի քան 500 հազարի։ ԱՄՆ-ի հետ «կեղտոտ պատերազմում» վիետնամական ժողովրդի դեմ մասնակցեցին Ավստրալիան, Նոր Զելանդիան, Տաիլանդը, Ֆիլիպինները և հարավկորեական կլիկը։

Նիքսոնի ադմինիստրացիան շարունակեց Հնդկաչինի պատերազմի էսկալացիան։ 1970 թ. մայիսին ամերիկյան և հարավվիետնամական զորքերը ներխուժեցին Կամպուչիա՝ 1970 թ. մարտին իշխանության գլուխ անցած Լոն Նոլի պրոամերիկյան կառավարությանն օգնելու համար։ 1971 թ. փետրվարին ԱՄՆ-ի և սայգոնյան կառավարության զինված ուժերը մտան Հարավային Լաոս, բայց դուրս շպրտվեցին Լաոսի հայրենասերների կողմից։

Ամերիկյան իմպերիալիզմի ավազակային պատերազմն առաջ բերեց բոլոր երկրների ժողովուրդների, այդ թվում ամերիկյան ժողովրդի, զայրույթն ու վրդովմունքը։ Հաշվի առնելով այդ, Նիքսոնն ստիպված էր հայտարարել ամերիկյան զորքերը Վիետնամից դուրս բերելու և պատերազմը վիետնամցիների միջոցով շարունակելու իր մտադրության մասին։ Պատերազմի «վիետնամացման» Նիքսոնի դոկտրինան, որ հռչակվեց 1969 թ. հուլիսին, նպատակ ուներ ասիական ժողովուրդներին ստիպել պատերազմելու ԱՄՆ-ի շահերի օգտին։ Հարավվիետնամական զորքերի Կամպուչիա և Լաոս ներխուժելը «Նիքսոնի դոկտրինայի» պրակտիկ իրականացումն էր։

Վիետնամում ռազմական ավանտյուրան ԱՄՆ-ը ժամանակ առ ժամանակ քողարկում էր վիետնամական պրոբլեմը խաղաղ ձևով կարգավորելու պատրաստակամության հայտարարություններով։ 1969 թ. հունվարին վիետնամական պրոբլեմի քաղաքական կարգավորման վերաբերյալ Փարիզում բանակցություններ սկսվեցին, որին մասնակցում էին ԱՄՆ-ի, սայգոնյան ռեժիմի, ՎԴՀ-ի և Հարավային Վիետնամի ազատագրման ազգային ճակատի ներկայացուցիչները։

1969 թ. հունիսին, Հարավային Վիետնամի Հանրապետության ժամանակավոր հեղափոխական կառավարության կազմավորումով, ՀՎԱԱՃ-ի պատվիրակների փոխարեն բանակցություններին սկսեցին մասնակցել այդ կառավարության ներկայացուցիչները։ Բանակցությունները շարունակվեցին չորս տարի։ ԱՄՆ-ը և սայգոնյան կառավարությունը հույս ունեին հասնել ռազմական հաղթանակի։ Վերջիվերջո ԱՄՆ-ի կառավարությունն ստիպված եղավ 1973 թ. հունվարի 27-ին Փարիզում համաձայնագիր ստորագրել պատերազմը դադարեցնելու և Վիետնամում խաղաղությունը վերականգնելու մասին։ Մոտ մարտի 30-ին ԱՄՆ-ը և նրա դաշնակիցներն ավարտեցին Հարավային Վիետնամից իրենց զորքերի դուրսբերումը։

Փետրվարի 27-ից մինչև մարտի 2-ը Փարիզում, ՍՍՀՄ-ի, ՎԴՀ-ի, ՀՎՀ-ի, Լեհաստանի, Հունգարիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Չինաստանի, Անգլիայի, Կանադայի, Ինդոնեզիայի, Հարավային Վիետնամի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ Վիետնամին նվիրված միջազգային կոնֆերանս։ Նրա

մասնակիցները մարտի 2-ին արձանագրություն ստորագրեցին Վիետնամի վերաբերյալ։ Արձանագրությունն ստորագրած կողմերը հավանություն տալով պատերազմը դադարեցնելու և Վիետնամում խաղաղությունը վերականգնելու վերաբերյալ համաձայնագրին, պարտավորվեցին ձեռնպահ մնալ որևէ գործողությունից, որը հակասում է նրանց դրությանը, հայտարարեցին, որ խստիվ կհարգեն վիետնամական ժողովրդի հիմնական իրավունքները՝ անկախությունը, սուվերենությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև հարավվիետնամական ժողովրդի ինքնորոշման իրավունքը։ Կոնֆերանսի մասնակիցները պարտավորվեցին խստիվ պահպանել Լաոսին և Կամպուչիային վերաբերող համաձայնագրի պայմանները։

Պատերազմի դադարեցումը և խաղաղության վերականգնումը Վիետնամում ուներ միջազգային հսկայական նշանակություն։ Վիետնամական հերոս ժողովուրդը ուժեղ հարված հասցրեց ԱՄՆ-ի պլաններին, որը ձգտում էր ճնշել Ասիայում սոցիալիզմի ֆորպոստներից մեկը՝ ՎԴՀ-ն, խեղդել Հնդկաչինի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, խախտել աշխարհի հակաիմպերիալիստական ուժերի միասնությունը։

Վիետնամական ժողովուրդն իմպերիալիստական ագրեսորների դեմ մղած պայքարում հենվում էր Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների բազմակողմանի օգնության և պաշտպանության, աշխարհի բոլոր առաջադեմ ուժերի աջակցության վրա։ Սովետական ժողովուրդը, առաջնորդվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, վիետնամական ժողովրդին բազմակողմանի օգնությունը համարում էր իրեն իր հարազատ գործը։ Պետության ռազմական և քաղաքացիական կարիքների համար անհրաժեշտ ամեն ինչի ՍՍՀՄ-ից ու սոցիալիստական երկրներից անընդհատ մատակարարումները և միջազգային ասպարեզում ՎԴՀ-ի ու ՀՎՀ-ի քաղաքական և դիվանագիտական պաշտպանությունը շատ կարևոր դեր խաղացին հաղթանակը նվաճելու գործում։

ԱՄՆ-ը և սայգոնյան կլիկը սիստեմատիկաբար խախտում էին Փարիզյան համաձայնագրերը։ ՎԴՀ-ի և ՀՎՀ-ի կառավարությունների պնդմամբ, 1973 թ. մայիսին և հունիսին Փարիզում համաձայնագրերի կատարման վերաբերյալ բանակցություններ անցկացվեցին ԱՄՆ-ի և ՎԴՀ-ի միջև։ Հունիսի 13-ին կողմերը կոմյունիկե ստորագրեցին, որում արձանագրված էր հունիսի 15-ից կրակը համատեղ դադարեցնելու պարտավորություն և սահմանված էին Փարիզյան համաձայնագրերի կատարումն ապահովելու միջոցները։ Բայց դրանից հետո էլ ԱՄՆ-ը և նրա սայգոնյան դրածոները շարունակում էին խախտել պատերազմը դադարեցնելու և խաղաղությունը Վիետնամում վերականգնելու մասին համաձայնագիրը։

Օտարերկրյա ինտերվենտների դեմ մղված պատերազմում վիետնամական ժողովրդի հետ միասին հաղթանակ տարավ Լաոսի ժողովուրդը։ 1973 թ. փետրվարի 21-ին Սամնեում և Վիենտյանում համաձայնագիր ստորագրվեց Լաոսում խաղաղությունը վերականգնելու և ազգային համաձայնության հասնելու մասին, որի համաձայն Լաոսում փետրվարի 22-ին դադարեցվեցին ռազմական գործողությունները։ Համաձայնագիրը նախատեսում էր օտարերկրյա զորքերը դուրս բերել Լաոսից և արգելել նրանց նորից մտցնելը, ինչպես նաև զենք ներմուծելը, ստեղծել ազգային միասնության և ազգային կոնսուլտատիվ քաղաքական խորհրդի նոր ժամանակավոր կառավարություն, անցկացնել ընդհանուր ընտրություններ։ Համաձայնագրի կատարմանը հետևելը և վերահսկելը դրվում էր Հնդկաստանի, Լեհաստանի և Կանադայի ներկայացուցիչներից կազմված միջազգային հանձնաժողովի վրա։

1973 թ. սեպտեմբերին լաոսյան երկու կողմերի միջև համաձայնություն

ձեռք բերվեց ժամանակավոր կառավարության կազմի, կոնսուլտատիվ քաղաքական խորհրդի և խառը ոստիկանական ուժերի մասին։

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻԱՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ։ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

50-ական թվականների երկրորդ կեսը և 60-ական թվականները նշանավորվեցին ազգային-ազատագրական շարժման նոր հզոր վերելքով Մերձավոր Արևելքում։ Եգիպտոսում (1959 թվականից մինչև 1971 թ.՝ Արաբական Միացյալ Հանրապետություն), 1956 թ. հունիսին անգլիական զորքերի դուրս բերումն ավարտելուց հետո, սկսեցին իրականացվել սոցիալ-տնտեսական խոշոր վերափոխումներ։ 1958 թ. հուլիսին Իրաքում տապալվեց միապետությունը և հռչակվեց հանրապետություն։ Իրաքը դուրս եկավ Բաղդադի բլոկից։ 1961 թ. հեղափոխություն կատարվեց Եմենում, որը հասցրեց միապետության վերացմանը։ Սոցիալ-տնտեսական կարևոր ռեֆորմներ անցկացվեցին Սիրիայում։

Իմպերիալիստական պետությունները Մերձավոր Արևելքում ազգային-ազատագրական շարժումները ճնշելու և իրենց տիրապետությունն այդ շրջանի ժողովուրդների վրա պահպանելու համար դիմում են տարբեր միջոցների, ընդհուպ ռազմական ուժ գործադրելը։ Այդ նպատակներին հասնելու գործում ոչ պակաս դեր է հատկացվում Իսրայելի ագրեսիվ իմպերիալիստական պետությանը, որն ստեղծվել է 1948 թ. մայիսին։ Իր գոյության առաջին իսկ օրերից, իր տարածքն ընդարձակելու և արաբական երկրների առաջադիմական ռեժիմները վերացնելու նպատակով, նա պատերազմ է մղում արաբական ժողովուրդների դեմ։

1956 թ. հուլիսին Եգիպտոսի կառավարությունը ազգայնացրեց Սուեզի ջրանցքը։ Ի պատասխան դրա Անգլիան, Ֆրանսիան և Իսրայելը, ԱՄՆ-ի աջակցությամբ, սկսեցին պատերազմի պատրաստվել Եգիպտոսի դեմ։ Հոկտեմբերի 29-ին իսրայելական զորքերը մտան Եգիպտոս, իսկ մեկ օր անց ռազմական գործողություններ սկսեցին անգլիական և ֆրանսիական զորքերը։ Իմպերիալիստական ագրեսիան հանդիպեց Եգիպտական ժողովրդի վճռական դիմադրությանը։ Նոյեմբերի սկզբին Սովետական Միությունն իր վճռականությունը հայտնեց օգնել Եգիպտոսին և վերականգնել խաղաղությունը Մերձավոր Արևելքում։ Եգիպտոսին պաշտպանելու ՍՍՀՄ-ի հաստատակամ ելույթը վճռական գործոն դարձավ ռազմական գործողությունները դադարեցնելու, իսկ այնուհետև նաև Եգիպտոսից ինտերվենտների զորքերը դուրս բերելու գործում։

Եգիպտոսի դեմ պատերազմում Անգլիայի և Ֆրանսիայի պարտությունից հետո ԱՄՆ-ը միջոցներ ձեռնարկեց զավթելու այն դիրքերը, որ նախկինում պատկանում էին Մերձավոր Արևելքում եվրոպական գաղութարարներին։ 1957 թ. հունվարին ԱՄՆ-ի պրեզիդենտ Էյզենհաուերը կոնգրեսին ուղերձ հղեց, որի մեջ «կոմունիստական սպառնալիքի» պատրվակով պահանջում էր իրեն Մերձավոր Արևելք ամերիկյան զորքեր ուղարկելու, ինչպես նաև այդ ռեգիոնի երկրներին տնտեսական և ռազմական օգնություն ցույց տալու ծրագիր իրականացնելու իրավունք տալ։ Պրեզիդենտի ուղերձը և 1957 թ. մարտին կոնգրեսի ընդունած բանաձևը, որը պրեզիդենտին տալիս էր պահանջվող լիազորությունները, ստացան «Էյզենհաուերի դոկտրինա» անվանումը։

Սովետական Միությունը մերկացրեց այդ դոկտրինայի գաղութարարական էությունը և վիժեցրեց դրա իրականացման հնարավորությունը։

«Էյզենհաուերի դոկտրինային» միացան Մերձավոր Արևելքի միայն մի քանի երկրներ։ Այն ժամանակ ԱՄՆ-ը որոշեց փորձել ուժով դա պարտադրել անհնազանդ երկրներին։ Ագրեսիայի օբյեկտ ընտրվեց Սիրիան։ Սովետական Միության վճռական դիրքը կանխեց ԱՄՆ-ի և Թուրքիայի զորքերի 1957 թ. նախապատրաստվող ներխուժումը նրա տարածք։ Բայց 1958 թ. հուլիսին, ներքին ռեակցիային օգնելու նպատակով, ամերիկյան զորքերը մտան Լիբանան, անգլիականը՝ Հորդանան։ 1958 թ. հուլիսի 16-ին և 18-ին սովետական կառավարությունը հանդես եկավ հայտարարություններով, որոնցով մերկացվում ու վճռականորեն դատապարտվում էր ամերիկյան ու անգլիական իմպերիալիստների ագրեսիան, պահանջվում էր դուրս բերել օկուպացիոն զորքերը։ Անգլիացիներն ու ամերիկացիներն ստիպված էին հեռանալ Լիբանանից և Հորդանանից։

Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս-իսրայելական 1956 թ. ագրեսիայի ձախողումից հետո Իսրայելն սկսեց ուժեղ թափով պատրաստվել արաբական երկրների վրա նոր հարձակման անցնելու համար։ ԱՄՆ-ը, Անգլիան և ԳՖՀ-ն Իսրայելին հարյուր միլիոնավոր դոլարներ հատկացրեցին ռազմական մեքենա ստեղծելու համար։ 1967 թ. հունիսի 5-ին Իսրայելն առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց ԱՄՀ-ի, Սիրիայի և Հորդանանի վրա։ Իսրայելի ագրեսիան միջազգային իմպերիալիզմի ամենառեակցիոն ուժերի դավադրության արդյունքն էր, որ ուղղված էր առաջադիմական վերափոխումներ իրականացնելու ուղին մտած և հակաիմպերիալիստական քաղաքականություն վարող արաբական երկրների դեմ։

Անվտանգության խորհուրդը հունիսի 6-ի, 7-ի և 9-ի բանաձևերով պահանջեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները։ Սակայն Իսրայելն անտեսեց այդ որոշումները և շարունակեց ընդարձակել ռազմական գործողությունները, որի հետևանքով նրան հաջողվեց օկուպացնել Սինայի թերակղզին, Երուսաղեմի արաբական մասը, Հորդանանի Հորդանան գետի արևմտյան ափի ամբողջ տարածքը և Սիրիայի տարածքի մի մասը։ Արաբական զավթված տարածքների ընդհանուր տարածությունը կազմեց ավելի քան 60 հազար քառ. կիլոմետր։

Հունիսի 9-ին, ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության նախաձեռնությամբ անցկացվեց Եվրոպայի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների և սոցիալիստական պետությունների ղեկավարների խորհրդակցություն։ Բուլղարիայի, Հունգարիայի, ԳԴՀ-ի, Լեհաստանի, ՍՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների և կառավարությունների անունից հայտարարություն հրապարակվեց, որում նրանք դատապարտում էին իմպերիալիստական ագրեսիան և լիովին պաշտպանում արաբների արդարացի պայքարը, Իսրայելից պահանջում էին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և իր զորքերը դուրս բերել մինչև հունիսի 5-ը նրանց գրաված գծից այն կողմ։ Հաշվի առնելով Սիրիայի դեմ շարունակվող ագրեսիան, սովետական կառավարությունը 1967 թ. հունիսի 10-ին Իսրայելին ուղղված նոտայում հայտարարեց, որ եթե անհապաղ չդադարեցվեն ռազմական գործողությունները, ապա ՍՍՀՄ-ը խաղաղասեր մյուս երկրների հետ միասին սանկցիաներ կկիրառի։ ՍՍՀՄ-ը և հունիսի 9-ի հայտարարությունը ստորագրած մյուս երկրները, որոնք Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերություններ ունեին, խզեցին դրանք։ Սոցիալիստական երկրների արագ և վճռական համատեղ գործողությունները կարևոր դեր խաղացին Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունները դադարեցնելու գործում։

Սովետական Միությունը Եգիպտոսին օգնեց վերականգնելու իր սպա-

ռազինությունը, բանակին սովորեցրեց տիրապետել մատակարարված զենքին, ինչպես նաև սոցիալիստական մյուս երկրների հետ միասին ցույց տվեց բազմակողմանի տնտեսական օգնություն։ ՍՍՀՄ-ը ՄԱԿ-ում պայքար ծավալեց իսրայելյան ագրեսիայի զոհերի պաշտպանության օգտին։

1967 թ. նոյեմբերի 22-ին Անվտանգության խորհուրդը բանաձև ընդունեց, որը նախատեսում էր Մերձավոր Արևելքում խաղաղ կարգավորման հետևյալ սկզբունքները՝ արաբական օկուպացված տարածքներից իսրայելական զորքերի դուրսբերում, պատերազմական վիճակի դադարեցում, տրվյալ շրջանի յուրաքանչյուր պետության սուվերենության, տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության հարգում և ճանաչում, տրվյալ շրջանում միջազգային ջրային ուղիներով ազատ նավագնացության ապահովում, փախստականների պրոբլեմի արդարացի կարգավորում։

Եգիպտոսը և արաբական մյուս երկրները հայտարարեցին, որ համաձայն են Անվտանգության խորհրդի բանաձևին, սակայն Իսրայելը հրաժարվեց այն ընդունել, պնդելով ագրեսիայի զոհերից յուրաքանչյուրի հետ «ուղղակի բանակցություններ» անցկացնելու մասին, հույս ունենալով հասնել զավթված հողերն իր ձեռքում պահելուն։

1969 թ. ապրիլի 3-ին Ֆրանսիայի առաջարկությամբ Անվտանգության խորհրդի չորս մշտական անդամների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներն սկսեցին քննարկել Մերձավորարևելյան հարցը։ Կոնսուլտացիայի ընթացքում Մերձավոր Արևելքի խաղաղ կարգավորման նպատակով դրսևորվեց երկու մոտեցում։ Սովետական Միությունը պահանջեց Անվտանգության խորհրդի բանաձևի անվերապահ կատարում և արաբական զավթված բոլոր հողերից իսրայելական զորքերի դուրսբերում, իսկ Միացյալ Նահանգները պաշտպանեցին Իսրայելի տարածքային հավակնությունները։ 1970 թ. ԱՄՆ-ի պնդմամբ քառակողմ կոնսուլտացիաները դադարեցին։ Հենվելով ԱՄՆ-ի օգնության ու պաշտպանության և միջազգային սիոնիստական կազմակերպությունների վրա, Իսրայելը սարոտաժի ենթարկեց Անվտանգության խորհրդի բանաձևի կատարումը, մերժելով այդ բանաձևի հիման վրա խաղաղ կարգավորման ամեն մի առաջարկություն։

1973 թ. հոկտեմբերի 6-ին Մերձավոր Արևելքում պատերազմը վերսկրսվեց։ Եգիպտական զորքերը հաջող մարտերով անցան Սուեզի ջրանցքը, ճեղքեցին ջրանցքի արևելյան ափին Իսրայելի կառուցած ամրությունների գիծը և օկուպացումից ազատագրեցին Սինայի թերակղզու մի մասը։ Եգիպտոսի և Սիրիայի կողմում մասնակցում էին Իրաքի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Մարոկկոյի, Թունիսի, Ալժիրի, Քուվեյթի, Սուդանի տարբեր բանակի զորամասեր և զենքի տեսակներ, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության զինված ուժերը։

Հոկտեմբերի 22-ին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի առաջարկությամբ, Անվտանգության խորհուրդը բանաձև ընդունեց, որում կռվող կողմերին կոչ էր արվում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, սկսել Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ին ընդունած բանաձևի պրակտիկ կատարումը և շահագրգռված կողմերի միջև բանակցություններ սկսել Մերձավոր Արևելքում արդարացի ու կայուն խաղաղություն հաստատելու շուրջ։ Եգիպտոսի և Իսրայելի կառավարություններն ընդունեցին այդ բանաձևը, և հոկտեմբերի 22-ին ռազմական գործողությունները դադարեցվեցին, բայց իսրայելական զորքերը շուտով վերսկսեցին դրանք։ Նոյեմբերի 11-ին Եգիպտոսի և Իսրայելի միջև արձանագրություն ստորագրվեց կրակի դադարեցումը պահպանելու և զորքերը հոկտեմբերի 22-ին զբաղեցրած դիրքերը վերադարձնելու վերաբերյալ։ Սակայն Իսրայելը տարբեր պատրվակներով խուսափեց

արձանագրության՝ զորքերը ետքաշելու կետը կատարելուց, որի պատճառով Եգիպտոսը նոյեմբերի վերջին Իսրայելի հետ դադարեցրեց բանակցությունները։

Սովետական Միության հետ համատեղ հանդես գալով պատերազմի դադարեցման օգտին, ԱՄՆ-ը միաժամանակ եռանդուն օգնում էր իսրայելական ագրեսորներին։ Պրեզիդենտի առաջարկությամբ կոնգրեսը թույլատրեց Իսրայելին արտակարգ ռազմական օգնություն ցույց տալու համար ծախսել 2,2 միլիարդ դոլար։ Չսպասելով կոնգրեսի որոշմանը, ԱՄՆ-ի կառավարությունը մեկ ամսում, սկսած հոկտեմբերի 6-ից, Իսրայելին 1 միլիարդ դոլարի զենք մատակարարեց։ Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունների ժամանակ ԱՄՆ-ը 6-րդ նավատորմի նավերի մեծ մասը կենտրոնացրեց Միջերկրական ծովի արևելյան մասում և մարտական բարձր պատրաստության բերեց իր զինված ուժերը։

Իսրայելյան ագրեսիան, որ պաշտպանում էր ԱՄՆ-ը, առաջ բերեց այդ ագրեսիայի զոհերի հետ ժողովուրդների լայն համերաշխությունը։ Աֆրիկյան ավելի քան 20 պետություններ պատերազմի օրերին դիվանագիտական հարաբերությունները խզեցին Իսրայելի հետ։ Արաբական երկրների մեծամասնությունը այս կամ այն ձևով հանդես եկավ Սիրիայի և Եգիպտոսի պաշտպանությամբ։

1973 թ. դեկտեմբերի առաջին կեսին շահագրգռված պետությունների միջև համաձայնություն ձեռք բերվեց Եգիպտոսի, Հորդանանի, Սիրիայի, Իսրայելի, ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի մասնակցությամբ Մերձավոր Արևելքի գծով հաշտության կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ։ Դեկտեմբերի 21—22-ին Ժնևում արտաքին գործերի մինիստրների մակարդակով կայացավ բանակցությունների առաջին փուլը, որի աշխատանքին չէր մասնակցում Սիրիայի ներկայացուցիչը։ Սիրիան հայտարարեց, որ իրեն իրավունք է վերապահում կոնֆերանսին մասնակցել, եթե համոզվի, որ դրա աշխատանքն ուղղված է զավթված տարածքներից զորքերի լիովին դուրսբերման խնդիրների կատարմանը։ 1974 թ. հունվարի 18-ին համաձայնագիր ստորագրվեց իսրայելական և եգիպտական զորքերի տարանջատման վերաբերյալ, որի համաձայն իսրայելական զորքերը 32 կմ. ետ էին քաշվում ջրանցքից դեպի արևելք, եգիպտական և իսրայելական ուժերի միջև սահմանվում էր 11 կմ. լայնությամբ անվտանգության գոտի, որտեղ պետք է տեղաբաշխվեին ՄԱԿ-ի զորքերը։

Իսրայելա-սիրիական ռազմաճակատում, չնայած կրակը դադարեցնելու մասին կողմերն ընդունել էին Անվտանգության խորհրդի պահանջը, ռազմական գործողությունները շարունակվում էին։ Միայն 1974 թ. մայիսի 31-ին Սիրիայի և Իսրայելի միջև համաձայնություն ձեռք բերվեց զորքերը տարանջատելու մասին։ Այն նախատեսում էր Իսրայելի կողմից ազատել 1967 թ. և 1973 թ. զավթած 663 քկմ. սիրիական տարածքը, այդ թվում՝ շրջանի վարչական կենտրոն էլ-Կունեյտրա քաղաքը։ Իսրայելական և սիրիական զորքերի միջև ստեղծվեց չեզոք գոտի, որտեղ տեղաբաշխվեցին ՄԱԿ-ի զորքերը։ Սակայն Մերձավոր Արևելքում քաղաքական կարգավորումը դեռևս չի իրականացվել՝ քանի որ Իսրայելը չի ցանկանում ազատել արաբական զավթված բոլոր հողերը։

Սովետական Միությունը հետևողականորեն հանդես է գալիս Մերձավորարևելյան ճգնաժամի խաղաղ կարգավորման օգտին, Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքներն ու շահերը ապահովելու համար, պաշտպանում է իսրայելական ագրեսիայի զոհերի՝ զավթված հողերն իրենց վե-

բաղարձնելու պահանջը, առաջարկում է միջոցառումներ իրականացնել այդ շրջանում ռազմական լարվածությունը թուլացնելու, Միջերկրական ծովը բարեկամության և համագործակցության ծովի վերածելու համար։ Նա հայտարարեց Միջերկրական ծովից բոլոր սովետական և ամերիկյան միջուկային զենք կրող նավերը դուրս բերելու ԱՄՆ-ի հետ պայմանավորվելու իր պատրաստակամության մասին։ Սովետական Միությունը արաբական պետությունների հետ լայն համագործակցություն է իրականացնում և նրանցից մի քանիսին զգալի օգնություն է ցույց տալիս։

ԱՖՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՄԱԱՖՐԻԿՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԼԻՈՎԻՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ԸՆԴԴԵՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ

60-ական թվականները գաղութատիրության բուռն խորտակման տարիներ էին Աֆրիկայում։ 1955 թ. աֆրիկյան մայրցամաքում կար ընդամենը չորս անկախ պետություն, 1974 թ. սկզբներին դրանց թիվն արդեն հաշվվում էր մոտ 320 միլիոն բնակչությամբ քառասուներեք պետություն։ Աֆրիկայում անկախ պետությունների կազմավորումն ուղեկցվում է համաաֆրիկյան միասնության համար աֆրիկյան երկրների պայքարով։ Այդ նպատակին հասնելու ճանապարհին կարևոր ուղենիշ էր 1963 թ. մայիսին Աֆրիկյան միասնության կազմակերպության ստեղծումը։ Նա իր առջև խնդիր է դրել օգնել աֆրիկյան պետությունների միասնության և համերաշխության զարգացմանը, կոորդինացնել և ամրապնդել համագործակցությունը նրանց միջև, պաշտպանել նրանց սուվերենությունը, տարածքային ամբողջականությունը և անկախությունը, լիկվիդացնել գաղութատիրության բոլոր ձևերն Աֆրիկայում, զարգացնել միջազգային համագործակցությունը։ Սակայն աֆրիկյան շատ պետություններ շարունակում են տնտեսական կախման մեջ գտնվել իմպերիալիստական տերություններից, խճճված լինել ռազմական և քաղաքական պարտավորությունների շղթաներով։ Աֆրիկայում ՆԱՏՕ-ի երկրների տրամադրության տակ է գտնվում ավելի քան 20 ռազմական բազա։ Միջազգային իմպերիալիզմն իր դիրքերը պահպանելու համար լայնորեն օգտագործում է տարբեր միջոցներ, այդ թվում բացահայտ ռազմական ինտերվենցիան, ռազմադիկտատորական ռեժիմների ստեղծումը, առաջադեմ քաղաքական գործիչների սպանությունը, կաշառքը, պրովոկացիան, կեղծարարությունը։

Բացահայտ ռազմական ինտերվենցիա իրականացվեց Կոնգոյում։ Այն սկսեց Բելգիան, 1960 թ. Կոնգոյի անկախության հռչակումից անմիջապես հետո։ Այնուհետև դա վերածվեց գաղութային տերությունների կոլեկտիվ ինտերվենցիայի, որը շարունակվեց մինչև 1965 թ.։ 1966 թ. աֆրիկյան մյուս խոշոր երկրում՝ Նիգերիայում, իմպերիալիստական պետությունները հրահրեցին քաղաքական սուր ճգնաժամ, դրա համար օգտագործելով միջցեղային տարաձայնությունները։ 1967 թ. մայիսին Նիգերիայի հարավարևելյան մասում ստեղծվեց Բիաֆրայի «Հանրապետությունը», իսկ մեկ ամիս անց Նիգերիայի Ֆեդերատիվ Հանրապետության և իմպերիալիստական տերություններից առատ օգնություն ստացող Բիաֆրայի միջև պատերազմ սկսվեց, որը շարունակվեց 30 ամիս և ավարտվեց 1970 թ. հունվարին՝ անջատողականների պարտությամբ։ 1970 թ. նոյեմբերին Պորտուգալիան, հենվելով ՆԱՏՕ-ի դաշնակիցների պաշտպանության վրա, կազմակերպեց վարձու զորքերի հարձակումը Գվինեայի հանրապետության վրա, նպատակ ունենալով

այդ երկրում վերացնել առաջադիմական ռեժիմը։ Գվինեայի բանակը և ժողովուրդը լիկվիդացրին ագրեսիան։

Իմպերիալիստական տերությունները, ամենից առաջ ԱՄՆ-ը և Անգլիան, ակտիվորեն օժանդակում էին պորտուգալական գաղութարարներին՝ Մոզամբիկի, Անգոլայի, Գվինեայի (Բիսաու) ժողովուրդների դեմ նրանց մղած պատերազմում և Հարավային Ռոդեզիայի ու ՀԱՄ-ի սպիտակամորթ ռասիստներին։ Նրանք ամեն կերպ նպաստում էին ռասիստների կողմից Հարավային Ռոդեզիայի իշխանության բռնատիրմանը։ 1974 թ. Պորտուգալիայում ֆաշիստական դիկտատուրայի խորտակումը գաղութային պատերազմի դադարեցման ուղի բացեց։ Պորտուգալիան ճանաչեց Գվինեա-Բիսաուի հանրապետության անկախությունը, պարտավորվեց անկախություն տալ Մոզամբիկին և Անգոլային։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները եռանդով պաշտպանում են Աֆրիկայում գաղութատիրությունը լիակատար կերպով վերացնելու համար աֆրիկյան ժողովուրդների պայքարը, օգնում են աֆրիկյան պետությունների քաղաքական համախմբմանը, ամեն կերպ նպաստում նրանց տնտեսական զարգացմանը։

ԱՄՆ-Ի ԿՈՂՈՊՈՒՏԻ ԵՎ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

50-ական թվականների երկրորդ կեսը և 60-ական թվականներն անցան Լատինական Ամերիկայի երկրներում դասակարգային պայքարի հզոր վերելքի և ԱՄՆ-ի մոնոպոլիաների դեմ մայր ցամաքի հակաիմպերիալիստական ուժերի ելույթների ակտիվացման նշանաբանով։ Կուբայի հեղափոխությունը հսկայական ազդեցություն թողեց լատինաամերիկյան երկրների ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրության համար մղված պայքարի վրա։

ԱՄՆ-ը բազմաթիվ փորձեր կատարեց վերջ տալու սոցիալիստական Կուբայի գոյությանը։ Ամերիկյան վարձկանների բանակի ձեռնարկած ավանտյուրայի ձախողումից հետո, երբ 1961 թ. ապրիլին նա փորձեց մտնել Կուբա, ԱՄՆ-ի կառավարությունն անցավ ամերիկյան զորքերի ուժերով Կուբայի վրա հարձակվելու նախապատրաստմանը։ 1962 թվականի աշնան մոտերքը նախապատրաստություններն ավարտվեցին։ Կուբա ուղարկվեց 183 ռազմանավ։ Հարձակման համար առանձնացվել էր մի քանի պարաշյուտադեսանտային, հետևակային և զրահատանկային դիվիզիա՝ ընդհանուր թվով մոտ 100 հազար մարդ։ Գիշեր-ցերեկ օդում էր գտնվում ամերիկյան ստրատեգիական ավիացիայի մեկ հինգերորդը։ Մարտական պատրաստության վիճակի էին բերվել ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող ամերիկյան զինված ուժերը, ինչպես նաև Եվրոպայի դաշնակցային զորքերը։ Սովետական Միության ձեռնարկած դիվանագիտական միջոցների, ինչպես նաև միջազգային հասարակայնության կողմից ամերիկյան ագրեսիան վճռականորեն դատապարտելու հետևանքով համաշխարհային միջուկային պատերազմի առաջացած վտանգը կանխվեց, և Կուբայի վրա ամերիկյան զորքերի նախատեսված հարձակումը ձախողվեց։

ԱՄՆ-ի իմպերիալիստներն ուժ գործադրելու հետ միասին դիմեցին «բլիթի քաղաքականությանը», որի արտահայտությունն էր Ջ. Քենեդիի նախաձեռնությամբ 1961 թ. օգոստոսին ընդունված «Դաշինք հանուն առաջադիմության» ծրագիրը։ Բայց այդ ծրագիրն սպասված արդյունքները չտվեց։ 1964 թ. մարտին հռչակվեց «Մաննի դոկտրինան», որը նոր կատեսում էր Լա-

տինական Ամերիկայի երկրներում ակտիվորեն ներդնել և պաշտպանել դիկտատորական ռեժիմները։ «Մանրի դոկտրինան» 1965 թ. մայիսին լրացվեց «Ջոնսոնի դոկտրինայով», որը հիմնավորում էր «կոմունիստական սպառնալիքի» դեմ պայքարի պատրվակով ուղած լատինաամերիկյան պետությունների գործերին զինված միջամտության ԱՄՆ-ի «իրավունքը»։

Ղեկավարվելով այդ ագրեսիվ «դոկտրինաներով», ԱՄՆ-ը իր զորքերն օգտագործեց Լատինական Ամերիկայի երկրների հեղափոխական շարժումները ճնշելու համար։

ԿՀՎ-ի և մոնոպոլիաների մասնակցությամբ, առաջադիմական ռեժիմները վերացնելու նպատակով պետական հեղաշրջումներ նախապատրաստվեցին և իրականացվեցին 1971 թ. օգոստոսին՝ Բոլիվիայում, 1973 թ. հունիսին՝ Ուրուգվայում, սեպտեմբերին՝ Չիլիում։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական երկրների պայքարը երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները վերացնելու համար

Սոցիալիստական երկրները մեծ նշանակություն են տվել և շարունակում են տալ երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքների վերացմանը, նախկին թշնամական երկրների հետ խաղաղ կարգավորման ավարտմանը, Եվրոպայում և Հեռավոր Արևելքում խաղաղության և անվտանգության ապահովմանը։

1959 թ. հունվարի 10-ին ՍՍՀՄ-ը, սոցիալիստական մյուս պետությունների համաձայնությամբ, արևմտյան երկրների ընդարկմանը ներկայացրեց Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծ։ Նրանում նախատեսվում էր Գերմանիային իրավունք տալ երկրի պաշտպանության համար ունենալ զինված ուժեր, բայց միջուկային և զանգվածային ոչնչացման այլ զենք, ռմբակոծիչներ և սուզանավեր արտադրելն ու ձեռք բերելը արգելվում էր։ Հնարավոր էր համարվում այսուհետև մինչև Գերմանիայի միասնության վերականգնումը Արևմտյան Բեռլինը վերածել ազատ ապառազմականացված քաղաքի, գերմանական պետությունների սահմանները նշել 1959 թ. հունվարի 1-ի դրությամբ։ Սովետական Միությունն արտահայտվեց գերմանական երկու պետությունների կամ գերմանական կոնֆեդերացիայի հետ, եթե այն կազմավորվի, հաշտության պայմանագրի կնքման օգտին։ Արևմտյան տերությունները մերժեցին պայմանագրի սովետական նախագիծը։ Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները առաջ քաշեցին ուրիշ պլաններ և նախագծեր, որոնք կոչված էին Եվրոպայում անվտանգությունն ամրապնդելուն։ 1957 թ. հոկտեմբերին լեհական կառավարությունը առաջ քաշեց ԳՖՀ-ն, ԳԴՀ-ն, Չեխոսլովակիան և Լեհաստանն ընդգրկող Կենտրոնական Եվրոպայի ատոմազերծ գոտի ստեղծելու պլան։ Դրա համաձայն գոտու սահմաններում պետք է արգելվեր միջուկային զենքի արտադրությունն ու պահպանումը և հրթիռամիջուկային սարքերի տեղակայումը։ 1959 թ. հունիսին Սովետական Միությունը առաջարկեց Բալկանները և Ադրիատիկի շրջանները վերածել ատոմային և հրթիռային զենքից ազատ գոտու։ Այդ նույն ժամանակ Սովետական Միությունը ԳԴՀ-ի հետ համատեղ հանդես եկավ Բալթիկ ծովը և Հյուսիսային Եվրոպան միջուկային և հրթիռային զենքից ազատ, խաղաղության գոտու վերածելու առաջարկությամբ։

Եվրոպայի անվտանգության ապահովման և ընդհանուր խաղաղությունը պահպանելու համար բացառիկ կարևոր նշանակություն ուներ Վարշավայի պայմանագրի մասնակից երկրների 1958 թ. մայիսին առաջ քաշած ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության միջև չհարձակման պակտ կնքելու առաջարկությունը, ինչպես նաև բարեկամության և համագործակցության պայմանագիր կնքելու վերաբերյալ եվրոպական երկրների և ԱՄՆ-ի կառավարություններին, չհարձակվելու պակտ կնքելու վերաբերյալ Անգլիայի կառավարությանն ուղղված սովետական կառավարության առաջարկությունները։ Այս բոլոր, ինչպես նաև մի շարք այլ առաջարկներ և պլաններ, որոնք ուղղված էին խաղաղության ամրապնդմանը, ԱՄՆ-ի, Անգլիայի և մյուս պետությունների կառավարությունները մերժեցին կամ անուշադրության մատնեցին։

Սովետական Միությունը մեծ ջանքեր էր գործադրում Հեռավոր Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները լիկվիդացնելու և այդ շրջանում անվտանգությունն ապահովելու ուղղությամբ։ Սովետա-ճապոնական 1956 թ. հոկտեմբերի 12-ի դեկլարացիայում, որով վերջ էր դրվում ՍՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև պատերազմական դրությանը, կողմերը պարտավորվում էին բանակցություններ սկսել հաշտության պայմանագիր կնքելու համար։ Սակայն ճապոնական կառավարությունը, վերցնելով ԱՄՆ-ի հետ ռազմական համագործակցության ակտիվացման կուրս, չէր ձգտում կատարել այդ պարտավորությունը։ 1960 թ. հունվարին ստորագրվեց «փոխադարձ համագործակցության և անվտանգության մասին» ճապոնա-ամերիկյան նոր պայմանագիր, որը փոխարինեց 1951 թ. սեպտեմբերին կնքված անվտանգության մասին պայմանագրին։ Ըստ նոր պայմանագրի Ճապոնիան նշանակալիորեն ընդարձակում էր ԱՄՆ-ի հետ ռազմական դաշինքին իր մասնակցությունը։ 1970 թ. ճապոնա-ամերիկյան պայմանագիրը երկարացվեց նոր տասնամյա ժամկետով։ Որպեսզի հեշտացվի պայմանագրի երկարացումը, ԱՄՆ-ը խոստացավ Ճապոնիային վերադարձնել Օկինավան, որի հանձնումը ճապոնական կառավարությանը կայացավ 1972 թ. մայիսին։ Սակայն ԱՄՆ-ը Օկինավայում պահպանեց իր ռազմական բազաների մի մասը։

Սովետական Միությունը միշտ էլ արտահայտվել է ճապոնա-ամերիկյան ռազմական դաշինքի դեմ, որը լուրջ սպառնալիք է ստեղծում Հեռավոր Արևելքի երկրների անվտանգությանը։ Սովետական կառավարությունը դեռևս 1959 թ. առաջարկեց Հեռավոր Արևելքը և խաղաղ օվկիանոսի ամբողջ շրջանը հրաչակել խաղաղության գոտի, որը ազատ լինի միջուկային զենքից։ 1969 թ. հունիսին սովետական կառավարությունը հանդես եկավ Ասիայում կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու պլանով։ Այդ պլանը նախատեսում էր հրաժարվել պետությունների հարաբերություններում ուժ գործադրելուց, հարգել սուվերենությունը, սահմանների անձեռնմխելիությունը, ներքին գործերին չմիջամտելը, լիիրավ հավասարության և փոխադարձ օգուտի հիման վրա լայնորեն զարգացնել տնտեսական և այլ համագործակցությունը։

Եվրոպական անվտանգության պրոբլեմը

Եվրոպայի անվտանգության պրոբլեմները մնում էին բոլոր երկրների ժողովուրդների ուշադրության կենտրոնում նաև 60-ական թվականներին։ Դա բացատրվում էր նրանով, որ ԳՖՀ-ն, հենվելով Փարիզյան 1954 թ. համաձայնագրի վրա, ուժեղ կերպով զինվում էր և վարում էր այնպիսի քաղաքականություն, որն ուղղված էր անցած պատերազմի արդյունքների փոփոխմանը, իսկ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան ձախողում էին Գերմանիայի հետ խաղաղ կարգավորման պրոբլեմների լուծումը, մերժում էին այդ հարցի գծով սովետական բոլոր առաջարկները։ Դեռ ավելին, նրանք սկսեցին սոցիալիստական

երկրների դեմ ռազմական լայն նախապատրաստություններ, ուժեղացրին Արևմտյան Բեռլինից ԴԴՀ-ի դեմ պրովոկացիաները։ Այս պայմաններում Վարշավայի պայմանագրի մասնակիցները 1961 թ. օգոստոսին ԴԴՀ-ի կառավարությանն առաջարկեցին Արևմտյան Բեռլինին կից սահմաններում արդյունավետ վերահսկողություն սահմանել, որը կփակեր ԴԴՀ-ի դեմ քայքայիչ գործունեության ուղին։ ԴԴՀ-ի կառավարությունը 1961 թ. օգոստոսի 13-ին անհրաժեշտ միջոցներ իրականացրեց այդպիսի վերահսկողություն ապահովելու համար։

Եվրոպական սոցիալիստական պետությունները եվրոպական անվտանգության ամրապնդման գծով մտցրին մի շարք կոնկրետ առաջարկներ։ Դրանք լիակատար տեսքով ձևակերպվեցին Եվրոպայի խաղաղության և անվտանգության մասին 1966 թ. հունիսի 5-ին Վարշավայի պայմանագրի կազմակերպության Քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի Բուխարեստի խորհրդակցությունում ընդունված դեկլարացիայում։ Դեկլարացիան առաջարկում էր եվրոպական երկրների միջև բոլոր միջոցներով զարգացնել տնտեսական կապերը, ՆԱՏՕ-ի և Վարշավայի կազմակերպության ռազմական դաշինքների կամ այդ դաշինքների ռազմական կազմակերպությունների ցրման ուղիով հասնել Եվրոպայում ռազմական լարվածության թուլացմանը, լիկվիդացնել օտարերկրյա ռազմական բազաները, օտարերկրյա զորքերը դուրս բերել ուրիշի տարածքներից, ստեղծել միջուկազերծ գոտիներ, կրճատել ԳՖՀ-ի և ԴԴՀ-ի զինված ուժերի քանակը, դադարեցնել եվրոպական երկրների վրայով միջուկային զենք կրող օտարերկրյա ինքնաթիռների թռիչքները և նրանց նավահանգիստները միջուկային զենքով զինված օտարերկրյա ռազմանավերի մուտքը, միջոցներ ձեռնարկել, որոնք բացառեին միջուկային զենքին ԳՖՀ-ի ամեն ձևով տիրանալու հնարավորությունը, ճանաչել եվրոպական երկրների միջև գոյություն ունեցող սահմանները, որոնք առաջացել են պատերազմից հետո։ Գերմանական խաղաղ կարգավորման պրոբլեմը լուծել, ելնելով գերմանական երկու պետությունների գոյությունը ճանաչելու փաստից, եվրոպական անվտանգության հարցերի գծով հրավիրել համաեվրոպական խորհրդակցություն։

Եվրոպայում խաղաղության և անվտանգության ամրապնդման պրոբլեմը քննարկվեց Եվրոպայի անվտանգության հարցերի գծով 1967 թ. ապրիլին Կարլովի Վարիում կայացած եվրոպական կոմունիստական և բանվորական կուսակցությունների կոնֆերանսում։ Կոնֆերանսը նշեց բուխարեստյան դեկլարացիայի կոնստրուկտիվ բնույթը և գործողությունների կոնկրետ ծրագիր նշեց եվրոպական անվտանգության ամրապնդման գծով։

Խաղաղության ամրապնդման և եվրոպական բոլոր պետությունների միջև հարաբերությունների բազմակողմանի զարգացման համար մեծ նշանակություն ուներ սովետա-ֆրանսիական հարաբերությունների բարելավումը։ 1971 թ. հոկտեմբերին ստորագրվեց «ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի համագործակցության սկզբունքները» փաստաթուղթը, կնքվեց 10 տարվա ժամկետով տնտեսական, տեխնիկական և արդյունաբերական համագործակցության զարգացման համաձայնագիր, 1970 թ. հոկտեմբերին՝ արձանագրություն կոնսուլտացիաների մասին։ Բարենպաստ ուղիով էին զարգանում ՍՍՀՄ-ի քաղաքական և տնտեսական հարաբերությունները Իտալիայի, Ավստրիայի, Անգլիայի, հյուսիսային երկրների, հատկապես Ֆինլանդիայի հետ։

Ինչ վերաբերում է ԳՖՀ-ին, ապա իրադարձությունների զարգացումը նրան կանգնեցրել էր ընտրության առջև, կա՛մ մյուս երկրների հետ նպաստել խաղաղության ամրապնդմանը, կա՛մ շարունակել միջազգային լարվածության սրման քաղաքականությունը։ 1969 թ. սեպտեմբերին կայացած Բունդեստագի ընտրությունները ցույց տվեցին, որ ընտրողների մեծամասնությունը դեմ է արտահայտվում ՔԴՄ/ՔՍՄ-ի սնանկացած քաղաքականությանը։ Վիլլի Բրանդտի կառավարությունը, որ ընտրություններից հետո կազմավորվեց սոցիալ-դեմոկրատական և ազատ դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչներից, հայտարարեց ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ ԳՖՀ-ի հարաբերությունները կարգավորելու նպատակով բանակցություններ սկսելու իր մտադրության մասին։

Բանակցությունների հետևանքով, որ կայացան 1969 թ. դեկտեմբերին և 1970 թ. հուլիս—օգոստոսին Մոսկվայում, մշակվեց և օգոստոսի 12-ին ՍՍՀՄ-ի ու ԳՖՀ-ի միջև պայմանագիր ստորագրվեց։ Կողմերն իրենց ձգտումն արտահայտեցին՝ ներգործել եվրոպական բոլոր երկրների միջև խաղաղ հարաբերությունների զարգացմանը, պարտավորվեցին իրենց վեճերը լուծել միայն խաղաղ միջոցներով, ձեռնպահ մնալ ուժով սպառնալուց կամ նրա կիրառումից, անշեղորեն պահպանել ներկա սահմաններում բոլոր եվրոպական պետությունների տարածքային ամբողջականությունը, հայտարարեցին որևէ մեկի նկատմամբ իրենց տարածքային որևէ պահանջի բացակայության մասին, պարտավորվեցին նման պահանջներ առաջ չքաշել ապագայում։

1970 թ. դեկտեմբերի 7-ին Վարշավայում պայմանագիր ստորագրվեց Լեհաստանի և ԳՖՀ-ի միջև՝ նրանց փոխադարձ հարաբերությունների կարգավորման հիմունքների մասին։ Կողմերը հավաստեցին, որ Պոտսդամի կոնֆերանսի սահմանած Օդեր-Նեյսելով անցնող գիծը համարվում է Լեհաստանի արևմտյան սահմանը, հաստատեցին գոյություն ունեցող սահմանների անփոփոխելիությունը և պարտավորվեցին անշեղորեն պահպանել երկու պետությունների տարածքային ամբողջականությունը, իրենց վեճերը լուծել միայն խաղաղ միջոցներով, տնտեսական և մյուս բնագավառներում զարգացնել համագործակցությունը։

Այդ պայմանագրերի վավերացման հարցի շուրջը ԳՖՀ-ում ծավալվեց քաղաքական սուր պայքար։ Դրանց ընդունման դեմ զինվեցին ռևանշիստական ուժերը և նրանց քաղաքական կուսակցությունները՝ ՔԴՄ/ՔՍՄ-ն և նեոֆաշիստական ՆԴԿ-ն։ Այդ դիմադրությունը հաղթեց վավերացումը ձգձգելուն։ Միայն 1972 թ. մայիսի 23-ին ԳՖՀ-ի պրեզիդենտը ստորագրեց ՍՍՀՄ-ի և Լեհաստանի հետ պայմանագրերը վավերացնելու մասին պառլամենտի ընդունած օրենքը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը պայմանագիրը վավերացրեց 1972 թ. մայիսի 31-ին։

Բրանդտի կառավարությունը հայտարարեց նաև ԴԴՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու մտադրության մասին։ ԴԴՀ-ի կառավարությունը 1969 թ. դեկտեմբերին ԳՖՀ-ի կառավարությանն էր ուղարկել միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի հիման վրա իրավահավասար հարաբերություններ հաստատելու պայմանագրի նախագիծը։ ԴԴՀ-ի և ԳՖՀ-ի կառավարությունների ղեկավարների հանդիպման ժամանակ, որը կայացավ մարտի 19-ին Էրֆուրտում և 1970 թ. մայիսի 21-ին Կասելում, արևմտագերմանական կողմը մերժեց ԴԴՀ-ի կառավարության ներկայացրած պայմանագրի նախագիծը, վկայակոչելով «Գերմանիայի և երկու պետություններում ապրող գերմանացիների հատուկ դրությունը»։ Նա առաջ քաշեց «ներգերմանական հիմքի վրա» ԴԴՀ-ի և ԳՖՀ-ի հարաբերությունները նորմալացնելու բանաձևը, որը նշանակում էր գերմանական երկու անկախ պետությունների իրավահավասարության սկզբունքի չճանաչում և ԴԴՀ-ի նկատմամբ Արևմտյան Գերմանիայի վարած խորական քաղաքականության պահպանում։

ԳՖՀ-ի կառավարությունը ի վերջո ստիպված էր հրաժարվել իր կոնցեպ-

ցիայից։ ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի հարաբերությունների հիմունքների մասին պայմանագիրը, որն ստորագրվեց 1972 թ. դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ մտավ 1973 թ. մայիսի 12-ին, սահմանում է լրիվ իրավահավասարության, անկախության, ներքին և արտաքին գործերում ինքնուրույնության, այդ պետություններից յուրաքանչյուրի տարածքային անձեռնմխելիության սկզբունքը։

Սոցիալիստական պետությունների՝ Եվրոպայում լարվածության թուլացմանն ուղղված քաղաքականության խոշոր հաջողությունը եղավ 1971 թ. սեպտեմբերի 2-ին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների միջև Արևմտյան Բեռլինի հարցերի գծով համաձայնագրի կնքումը։ Այն հաստատեց, որ Արևմտյան Բեռլինն առաջվա պես ԳՖՀ-ի բաղկացուցիչ մասը չի հանդիսանում և այսուհետև չի կառավարվելու նրա կողմից։ Նախատեսվում էր Արևմտյան Բեռլինի ու ԳՖՀ-ի միջև հաղորդակցման բարելավում։

Ի զարգացումն Արևմտյան Բեռլինի գծով քառակողմ համաձայնագրի, ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միջև կնքվեց տրանսպորտային համաձայնագիր, ԳԴՀ-ի և Արևմտյան Բեռլինի սենատի միջև համաձայնագիր՝ Արևմտյան Բեռլինի բնակիչների ԳԴՀ ուղևորվելու հարցի և անկլավների կարգավորման պրոբլեմի վերաբերյալ։ Այս բոլոր համաձայնագրերն ուժի մեջ մտան 1972 թ. հունիսի 3-ին։

Կյանքը համառորեն պահանջում էր եվրոպական անվտանգության պրոբլեմները լուծել եվրոպական բոլոր պետությունների ջանքերով։ Հենց դրա համար էլ Վարշավայի պայմանագրի մասնակիցները առաջարկեցին եվրոպական անվտանգության և համագործակցության գծով անցկացնել համաեվրոպական խորհրդակցություն։ Այդ առաջարկը լայն պաշտպանություն գտավ եվրոպական պետությունների մեծամասնության կողմից։ Սակայն ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի գծով նրա մի քանի դաշնակիցներ տարբեր պատրվակներով խուսափեցին տվյալ առաջարկն ընդունելուց։ Միայն 1972 թ. մայիսին արևմտյան տերությունները՝ ՆԱՏՕ-ի անդամները, համաձայնեցին ընդունել համաեվրոպական խորհրդակցության նախապատրաստման գծով բազմակողմանի կոնսուլտացիա անցկացնելու Ֆինլանդիայի առաջարկը։

Եվրոպական պետությունների, ԱՄՆ-ի և Կանադայի ներկայացուցիչների մասնակցությամբ կոնսուլտացիաներն սկսվեցին 1972 թ. նոյեմբերի 22-ին և ավարտվեցին 1973 թ. հունիսի 8-ին, խորհրդակցության աշխատանքի կազմակերպման, նրա օրակարգի, մասնակիցների կազմի և անցկացման տեղի հարցերի վերաբերյալ եզրափակիչ հանձնարարականների ընդունմամբ։ Որոշվեց, որ խորհրդակցությունն անցկացվելու է երեք փուլով. սկզբում կհավաքվեն մասնակից երկրների արտաքին գործերի մինիստրները, իսկ այնուհետև կաշխատեն տարբեր հանձնաժողովներ, որոնք կպատրաստեն համապատասխան փաստաթղթերը՝ երրորդ, եզրափակիչ փուլում քննարկելու և ընդունելու համար։ Խորհրդակցությունում քննարկման հանձնարարվեցին. ա) հարցեր, որոնք վերաբերում են Եվրոպայի անվտանգությանը, բ) համագործակցություն էկոնոմիկայի, գիտության ու տեխնիկայի և շրջապատող միջավայրի բնագավառներում, գ) համագործակցություն հումանիտար և մյուս բնագավառներում, դ) խորհրդակցությունից հետո կատարվելիք հետագա քայլերը։

Խորհրդակցության աշխատանքի առաջին փուլը կայացավ 1973 թ. հուլիսի 3—7-ը Հելսինկիում։ Նրան մասնակցեցին եվրոպական 33 երկրների, ԱՄՆ-ի և Կանադայի արտաքին գործերի մինիստրները։ Սովետական պատվիրակությունը ներկայացրեց եվրոպական անվտանգության և Եվրոպայում պետությունների հարաբերությունների հիմունքների վերաբերյալ գլխավոր

դեկլարացիայի նախագիծը։ 1973 թ. ժնևում սկսվեց խորհրդակցության երկրորդ փուլի աշխատանքը։ Խորհրդակցության աշխատանքի երրորդ, ավարտական փուլն սկսվեց 1975 թ. հուլիս—օգոստոսին Հելսինկիում։ Այն նշանավորվեց կառավարությունների ղեկավարների կողմից «Եզրափակիչ ակտի» ստորագրմամբ։

Սովետա-ամերիկյան հարաբերությունները

Համընդհանուր խաղաղության պահպանումը նշանակալիորեն կախված է երկու հզոր պետությունների՝ Սովետական Միության և ԱՄՆ-ի հարաբերություններից։ Հետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ը վարում է ՍՍՀՄ-ի նկատմամբ թշնամական քաղաքականություն։ Այն կապված չէ երկու երկրների հարաբերություններում տարածքային կամ ուրիշ հարցերի գծով որևէ տարաձայնության հետ, այլ բացառապես թելադրված է սոցիալիստական տերության, նրանում տիրապետող կոմունիստական գաղափարախոսության և նրա վարած խաղաղության ու հասարակության սոցիալական և տնտեսական նորացման համար հանդես եկող առաջադիմական ուժերին պաշտպանող քաղաքականության նկատմամբ այդ երկրի իմպերիալիստական կառավարող շրջանների թշնամանքով։ Սովետա-ամերիկյան հարաբերությունների արմատական բարելավման Սովետական Միության բազմաթիվ փորձերը հանդիպում են ԱՄՆ-ի կառավարող շրջանների վճռական դիմադրությանը։

Սակայն ԱՄՆ-ի հակամարտության քաղաքականությունը ձախողվում էր։ Պրեզիդենտ Նիքսոնը ստիպված էր խոստովանել, որ այդ քաղաքականությունը երկիրը հասցրեց «մահաբեր փակուղու»։ Նրանից դուրս գալու ձգտումը ԱՄՆ-ի կառավարող շրջաններին ստիպում էր բռնել Սովետական Միության հետ հարաբերությունները բարելավելու ուղին։

1972—1974 թթ. կայացան սովետա-ամերիկյան բարձր մակարդակով չորս հանդիպումներ, որոնց ընթացքում ստորագրվեցին մի շարք շատ կարևոր համաձայնագրեր։ Դրանք էկոնոմիկայի, գիտության, տեխնիկայի և առողջապահության տարբեր բնագավառներում սովետա-ամերիկյան համագործակցության իրավական բազա հանդիսացան և սովետա-ամերիկյան հարաբերություններն առճակատումից խաղաղ համագործակցության անցնելու պայմաններ ստեղծեցին։

1972 թ. մայիսի 29-ին ստորագրվեց «ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների հիմունքներ» փաստաթուղթը։ Նրանում նշվում է, որ կողմերը ելնելու են այն ընդհանուր համոզմունքից, որ միջուկային դարում գոյություն չունի նրանց հարաբերությունները պահպանելու այլ հիմք, բացի խաղաղ գոյակցությունը, նրանք կարևոր նշանակություն են տալիս այնպիսի իրադրությունների առաջացման կանխմանը, որոնք կարող են նրանց միջև հարաբերությունների վտանգավոր սրում առաջ բերել, կխուսափեն ռազմական առճակատումից և կկանխեն միջուկային պատերազմի առաջացումը, կնպաստեն այն բանին, որպեսզի բոլոր երկրներն ապրեն խաղաղության և անվտանգության պայմաններում։ Կողմերը հայտարարեցին, որ կարծիքներ են փոխանակելու իրենց հետաքրքրող պրոբլեմների շուրջը, կշարունակեն սպառազինությունների կրճատման գծով իրենց ջանքերը, որպես վերջնական խնդրի [illegible] դարձնեն [illegible] ինչպես տնտեսական, կուլտուրական և մյուս կապերը։ Կողմերը հայտարարեցին, որ իրենք ընդունում են բոլոր պետությունների սուվերեն հավասարությունը, և որ սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացումն ուղղված չէ երրորդ պետությունների և նրանց շահերի դեմ։

Փաստաթղթերի մի մասը վերաբերում է միջուկային պատերազմի կանխման և միջուկային զենքի սահմանափակման պրոբլեմներին։ Առաջին հան-

դիպման ժամանակ՝ 1972 թ. մայիսի 26-ին Մոսկվայում կնքվեցին հակահրթիռային պաշտպանության համակարգը սահմանափակելու վերաբերյալ պայմանագիրը և ստրատեգիական հարձակողական զենքի սահմանափակման ընդլայնման մի քանի միջոցառումների մասին ժամանակավոր համաձայնագիրը։ 1974 թ. հունիս—հուլիսին Մոսկվայում բարձր մակարդակով երրորդ հանդիպման ժամանակ կողմերն այդ պայմանագրին համապատասխան արձանագրություն ստորագրեցին հակահրթիռային պաշտպանության համակարգի սահմանափակման լրացուցիչ միջոցառումների մասին։

Պատմական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է 1973 թ. հունիսի 22-ին Վաշինգտոնում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ստորագրված միջուկային պատերազմը կանխելու վերաբերյալ համաձայնագիրը։ Համաձայնագրում նշված է, որ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի քաղաքականության նպատակը միջուկային պատերազմի վտանգը վերացնելն է, և դրան համապատասխան նրանք պետք է գործեն այնպես, որպեսզի կանխեն այնպիսի իրադրությունների առաջացումը, որոնք կարող են նրանց հարաբերությունների վտանգավոր սրում առաջ բերել։ Նրանք պարտավորվեցին խուսափել ռազմական առճակատումներից, բացառել իրենց ու կողմերից յուրաքանչյուրի և ուրիշ երկրների միջև միջուկային պատերազմի առաջացման հնարավորությունը։ Կողմերը պարտավորվեցին այնպիսի հանգամանքներում, երբ դրանք կարող են սպառնալիքի տակ դնել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, ձեռնպահ մնալ մեկը մյուսի դեմ և ուրիշ երկրների դեմ ուժով սպառնալուց կամ դրա կիրառումից։ Նրանք անհապաղ կոնսուլտացիա կանցկացնեն այնպիսի իրադրությունների առաջացման դեպքում, որոնք կարող են կողմերի միջև կամ նրանցից յուրաքանչյուրի ու մյուս երկրների միջև միջուկային հնարավոր կոնֆլիկտի վտանգ առաջացնել։

ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ 1959—1973 ԹԹ.

Ընդհանուր և լրիվ զինաթափման սովետական ծրագիրը

Խաղաղության ապահովումը և ժողովուրդների անվտանգությունը ստիպողաբար պահանջում են դադարեցնել սպառազինությունների մրցավազքը և զինաթափում անցկացնել։ Սովետական Միությունը, սոցիալիստական մյուս երկրների հետ միասին, սկսած 40-ական թվականների երկրորդ կեսից համառ պայքար է մղում զինաթափման համար։ Այդ պրոբլեմի արմատական լուծման նպատակով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1959 թ. սեպտեմբերին կայացած 14-րդ նստաշրջանում Սովետական Միությունը հանդես եկավ փուլերով ընդհանուր և լրիվ զինաթափման ծրագրով։ Այդ դադափարը պաշտպանություն գտավ աշխարհի առաջադեմ հասարակայնության կողմից։ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1959 թ. նոյեմբերի 20-ին միաձայն ընդունված իր բանաձևում գտավ, որ «ընդհանուր և լրիվ զինաթափման հարցը ամենակարևոր խնդիրն է, որ ներկայումս կանգնած է աշխարհի առջև»։

Սակայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ զինաթափման վերաբերյալ կարևորագույն որոշումը արևմտյան պետությունների մեղքով մինչև օրս մընում է չկատարված։ 1961 թ. ԱՄՆ-ը մեծ վերապահումներով համաձայնեց այն բանին, որ զինաթափման վերջնական արդյունքը պետք է լինի ընդհանուր և լրիվ զինաթափումը։ Զինաթափման պրոբլեմի քննարկման և կոնկրետ համաձայնագիր մշակելու համար Գլխավոր ասամբլեան հիմնադրեց զինաթափման գծով 17 պետությունների կոմիտեն, որի կազմի մեջ մտան սոցիալիստական 5 երկիր՝ ՍՍՀՄ-ը, Լեհաստանը, Չեխոսլովակիան,

Ռումինիան, Բուլղարիան, ՆԱՏՕ-ի մեջ մտնող 5 երկիր՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան և չեզոք պետություններ՝ Բիրման, Բրազիլիան, Մեքսիկան, Նիգերիան, ԱՄՀ-ն, Շվեդիան, Եթովպիան։ 1969 թ. զինաթափման գծով կոմիտեի կազմն ընդարձակվեց՝ 18-ից հասցվելով 26 պետության։ Նրա մեջ մտան հետևյալ նոր պետությունները՝ Արգենտինան, Հունգարիան, Մարոկկոն, ՄԺՀ-ն, Նիդեռլանդները, Պակիստանը, Հարավսլավիան, Ճապոնիան։ 1973 թ. հունվարի 1-ից զինաթափման գծով կոմիտեի մեջ մտան ևս 5 պետություն՝ ԳԴՀ-ն, ԳՖՀ-ն, Իրանը, Զաիրի հանրապետությունը և Պերուն։

Զինաթափման գծով կոմիտեն սկսեց աշխատել (առանց Ֆրանսիայի, որը հրաժարվեց մասնակցելուց, պատճառաբանելով, թե զինաթափման բանակցությունները պետք է անցկացվեն միայն միջուկային տերությունների միջև) 1962 թ. մարտից։ Մարտի 15-ին Սովետական Միությունը կոմիտեի քննարկմանը դրեց ընդհանուր և լրիվ զինաթափման պայմանագրի նախագիծը, որով նախատեսվում էր ընդհանուր և լրիվ զինաթափումն իրականացնել երեք փուլով, չորս տարի ընդհանուր տևողությամբ։

Սակայն արևմտյան տերություններն առաջ են քաշում այնպիսի առաջարկներ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն ընդհանուր և լրիվ զինաթափման հետ։ «Զինաթափման» նրանց պլաններում գլխավորը սպառազինությունների և զինված ուժերի վրա համապարփակ վերահսկողություն սահմանելու պահանջն է, առանց զինաթափման փաստացի իրականացման։

Սովետական Միության պայքարը միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու և սպառազինությունների մրցավազքը սահմանափակելու համար

ԱՄՆ-ը և Անգլիան, հաշվի առնելով միջուկային զենքի մրցավազքին վերջ տալու ժողովուրդների գնալով աճող պահանջը, ստիպված եղան միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու հարցի գծով բանակցությունների մեջ մտնել Սովետական Միության հետ։ Այդ բանակցություններն սկսվեցին 1958 թ. հոկտեմբերին և ավարտվեցին 1963 թ. օգոստոսի 5-ին Մոսկվայում, միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու վերաբերյալ պայմանագրի ստորագրումով։ Մոսկովյան պայմանագիրը նրա մասնակիցներին պարտավորեցնում էր միջուկային զենքի և այլ միջուկային պայթեցումներ չկատարել մթնոլորտում, տիեզերական տարածությունում և ջրի տակ, ինչպես նաև ամեն մի այլ միջավայրում, եթե նման պայթեցումն առաջ է բերում ռադիոակտիվ նստվածքի տեղումներ այդ պայթեցումը կատարող պետության սահմաններից դուրս։

Պայմանագրի կարևորության և նրա նշանակության մասին է վկայում այն փաստը, որ նրան միացան ավելի քան 100 պետություններ։ Սակայն պայմանագիրը վերջ չտվեց միջուկային փորձարկումներին, քանի որ նրանում, ԱՄՆ-ի պնդմամբ, չէր մտցված գետնի տակ միջուկային փորձարկումներն արգելելու կետ։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները հետևողականորեն հանդես են գալիս բոլոր երկրների կողմից միջուկային զենքի փորձարկումները լիովին դադարեցնելու օգտին։ Տվյալ դիրքորոշումը պաշտպանում է աշխարհի երկրների մեծամասնությունը, բայց մի քանի միջուկային պետություններ առայժմ միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու պատրաստակամություն հանդես չեն բերել։

Միջուկային զենքի փորձարկումները լրիվ արգելելու պրոբլեմի լուծումն արագացնելու գործում կարևոր նշանակություն ուներ միջուկային զենքի փորձարկումները սահմանափակելու վերաբերյալ 1974 թ. հուլիսի 3-ի սովետա-ամերիկյան պայմանագիրը։ Կողմերը պայմանավորվեցին 1976 թ. մար-

տի 31-ից գետնի տակ չկատարել ավելի քան 150 կիլոտոն հզորությամբ միջուկային զենքի փորձարկումներ և նվազագույն քանակով սահմանափակել այդ զենքի մյուս ստորգետնյա փորձարկումները։

Միջուկային փորձարկումների դադարեցման պրոբլեմի հետ միասին հաջորդ տարիներին միջազգային խոշոր նշանակություն ձեռք բերեց միջուկային զենքը չտարածելու հարցը։ ԱՄՆ-ը վերջ ի վերջո ստիպված էր այդ հարցի կապակցությամբ գործնական բանակցություններ վարել ՍՍՀՄ-ի հետ։ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունները 1967 թ. օգոստոսից մինչև 1968 թ. մարտն ընկած ժամանակաշրջանում զինաթափման կոմիտե մտցրին միջուկային զենքը չտարածելու վերաբերյալ պայմանագրի երեք նախագիծ։ Պայմանագրի 1968 թ. մարտի 11-ի վերջին նախագիծը, որ հաշվի էր առել դիսկուսիայի ժամանակ պետությունների շատ առաջարկներ և ցանկություններ, հավանության արժանացավ զինաթափման կոմիտեի կողմից և 1968 թ. հունիսի 12-ին այն ընդունեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան։ Հուլիսի 1-ին պայմանագիրը պատրաստ էր ստորագրման համար։

Պայմանագիրը միջուկային զենք ունեցող պետություններին պարտավորեցնում էր ոչ մի այլ պետության չտալ միջուկային զենք կամ միջուկային այլ պայթուցիկ սարքեր, ինչպես նաև դրանց նկատմամբ ոչ ուղղակի, ոչ էլ կողմնակի վերահսկողություն, չօգնել, չխրախուսել և չդրդել որևէ պետության, որը միջուկային զենք չունի, միջուկային զենք կամ միջուկային այլ պայթուցիկ սարքեր արտադրելու կամ ձեռք բերելու, ինչպես նաև վերահսկելու դրանք։ Ոչ միջուկային պետությունները ոչ մեկից չպետք է ընդունեն միջուկային զենք կամ միջուկային այլ պայթուցիկ սարքեր, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողությունը, ոչ ուղղակի, ոչ էլ կողմնակի կերպով չարտադրեն, ձեռք չբերեն այդ զենքը կամ միջուկային պայթուցիկ սարքեր։ Մինչև 1970 թ. մարտի 5-ը, պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահը այն ստորագրել էր համարյա 100 պետություն, այդ թվում ԳՖՀ-ն և Ճապոնիան։ Մի շարք պետություններ, որոնք միջուկային տերություն դառնալու պոտենցիալ հնարավորություն ունեին, դեռևս չմիացան պայմանագրին։ Դրանց մեջ էին Հնդկաստանը, Արգենտինան, Բրազիլիան, Իսրայելը։ Միջուկային երկու տերություն՝ Ֆրանսիան և ՉԺՀ-ն չմիացան պայմանագրին։

Միջուկային զենքի մրցավազքի թուլացման գործում կարևոր ներդրում էր «Տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների, հետազոտման գծով պետությունների գործունեության սկզբունքների մասին» Սովետական Միության նախաձեռնությամբ մշակված պայմանագրի 1967 թ. հունվարի 27-ին ստորագրումը։ Պայմանագրում նշվում էր, որ տիեզերական տարածությունը բաց է բոլոր պետությունների կողմից հետազոտելու և օգտագործելու համար և այն ազգային յուրացման ենթակա չէ։

Պայմանագրի մասնակիցները պարտավորվեցին երկրամերձ ուղեծիր դուրս չբերել միջուկային զենքով կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքերով զինված օբյեկտներ, նման զենք չտեղադրել երկնային մարմինների վրա և այն որևէ այլ միջոցով չտեղաբաշխել տիեզերական տարածությունում։ Արգելվում էր երկնային մարմինների վրա ռազմական բազաների, կառուցվածքների և ամրությունների ստեղծումը։

ՍՍՀՄ-ը վճռական դեր խաղաց նաև ծովերի և օվկիանոսների հատակում և նրա ընդերքում միջուկային զենք ու զանգվածային ոչնչացման զենքի այլ տեսակներ տեղադրելն արգելելու մասին պայմանագրի մշակման գործում։ Պայմանագիրն ընդունվեց 1970 թ. դեկտեմբերի 7-ին կայացած ՄԱԿ-ի

Գլխավոր ասամբլեայի 25-րդ նստաշրջանի կողմից և 1971 թ. փետրվարի 11-ին պատրաստ էր ստորագրման համար։

1972 թ. ապրիլի 10-ին սկսվեց բակտերիոլոգիական (կենսաբանական) զենքի և տոքսինների մշակման, արտադրման և պաշարների կուտակման արգելման ու ոչնչացման վերաբերյալ կոնվենցիայի ստորագրումը, կոնվենցիա, որը սոցիալիստական պետությունների նախաձեռնությամբ մշակել էր զինաթափման կոմիտեն և հավանության էր արժանացել ՄԱԿ-ի 1971 թ. դեկտեմբերին կայացած Գլխավոր ասամբլեայի 26-րդ նստաշրջանի կողմից։ Կոնվենցիան պետություններին պարտավորեցնում է ոչ մի հանգամանքներում չմշակել, չկուտակել, ձեռք չբերել և չպահպանել. ա) միկրոբիոլոգիական և բիոլոգիական այլ ազդակների կամ տոքսինների այնպիսի տեսակներ և այնպիսի քանակությամբ, որոնք խաղաղ նպատակներով օգտագործելու համար չեն նախատեսված, բ) այն զենքը, սարքավորումը կամ տեղ հասցնելու միջոցները, որոնք նախատեսված են նման ազդակները կամ տոքսինները թշնամական նպատակներով կամ զինված կոնֆլիկտներում օգտագործելու համար, «ա» և «բ» կետերում թվարկված բոլոր ազդակները, տոքսինները, զենքը և տեղ հասցնելու միջոցները ոչնչացնել կամ ծառայեցնել խաղաղ նպատակների։

Նշված հարցերի գծով համաձայնության հասնելը մեծ նշանակություն ուներ միջուկային զենքի մրցավազքը սահմանափակելու գործում։ Բայց դա անբավարար էր միջուկային պատերազմի սպառնալիքը վերացնելու համար։ Այդ վտանգը վերացնելու նպատակով սովետական կառավարությունը, սպառազինության մրցավազքը դադարեցնելու և զինաթափման գծով որոշ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկելու մասին 1968 թ. հուլիսի 1-ին աշխարհի բոլոր երկրներին ուղղված և նույն տարվա սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 23-րդ նստաշրջանի քննարկմանը ներկայացրած հուշագրում առաջարկում էր համաձայնության գալ միջուկային զենքի գործադրումն արգելելու, այդ զենքի արտադրությունը դադարեցնելու, նրա պաշարները կրճատելու և վերացնելու, ստրատեգիական զենքը տեղ հասցնելու միջոցները սահմանափակելու և հետագայում կրճատելու, քիմիական զենքի կիրառումն արգելելու և մի շարք այլ պրոբլեմների գծով։ Գլխավոր ասամբլեան նշեց ՍՍՀՄ կառավարության հուշագրի դրական նշանակությունը։ Նրանում դրված հարցերը քննարկվեցին զինաթափման կոմիտեում։ Ինչպես նշվեց, Սովետական Միությունը մեծ նշանակություն է տալիս ստրատեգիական զենքի մրցավազքը դադարեցնելու հարցերի գծով ԱՄՆ-ի հետ բանակցություններին։

1973 թ. հունվարին սկսվեցին Եվրոպայում զինված ուժերի և սպառազինությունների կրճատման վերաբերյալ ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի անդամ 19 պետությունների նախնական բանակցությունները։ Բանակցություններում համաձայնություն ձեռք բերվեց այն մասին, որ Կենտրոնական Եվրոպայում զինված ուժերի և սպառազինությունների կրճատման վերաբերյալ հնարավոր համաձայնագրի մասնակիցներ կլինեն 11 պետություններ՝ Անգլիան, Բելգիան, ԳԴՀ-ն, Կանադան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Լեհաստանը, ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, ԳՖՀ-ն և Չեխոսլովակիան։ Համաձայնագիրն ընդգրկելու էր նշված պետությունների զորքերը, ինչպես նաև նրանց տարածքներում տեղաբաշխված ԱՄՆ-ի, Անգլիայի, Կանադայի և ՍՍՀՄ-ի զինված ուժերն ու սպառազինությունները։ Կոնկրետ միջոցառումները պետք է մանրամասն կերպով մշակվեն այն հաշվով, որպեսզի դրանք համապատասխանեն որևէ կողմին վնաս չհասցնելու սկզբունքին։

Երկար տարիներ Սովետական Միությունը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի ՄԱԿ-ը միջուկային զենքն արգելելու մասին որոշում ընդունի։

1972 թ. սեպտեմբերին սովետական կառավարությունը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 27-րդ նստաշրջանի քննարկմանը ներկայացրեց միջազգային հարաբերություններում ուժ չգործադրելու և առհավետ միջուկային զենքի օգտագործումն արգելելու առաջարկությունը։ Գլխավոր ասամբլեան 1972 թ. նոյեմբերին բանաձև ընդունեց, որում ՄԱԿ-ի անդամ պետությունների անունից հանդիսավորապես հայտարարվում էր միջազգային հարաբերությունների բոլոր ձևերում և դրսևորումներում ուժ գործադրելուց նրանց հրաժարվելու և առհավետ միջուկային զենքն օգտագործելն արգելելու մասին։ Գլխավոր ասամբլեան Անվտանգության խորհրդին խորհուրդ տվեց որքան կարելի է շուտ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ հանդիսավոր հայտարարությունը լիովին իրականացնելու համար։ Սովետական Միության մյուս առաջարկությունը, որն արվեց 1971 թ. հունիսին միջուկային զինաթափման հարցի շուրջը միջուկային տերությունների կոնֆերանս անցկացնելու մասին, դժբախտաբար չընդունեցին Չինաստանը, ԱՄՆ-ը և Անգլիան։

Սովետական Միությունը բազմիցս հանդես է եկել ռազմական ծախսերը կրճատելու առաջարկներով։ Սակայն այդ առաջարկները արևմտյան տերությունները մերժեցին։ Միջազգային լարվածության թուլացման պայմաններում բարենպաստ հնարավորություն էր ստեղծվել այդ հարցը առաջադրելու համար։ Սովետական կառավարությունը, իրականացնելով խաղաղության ծրագիրը, 1973 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի քննարկմանը դրեց Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետությունների ռազմական բյուջեները 10 %-ով կրճատելու և խնայված միջոցների մի մասը զարգացող երկրներին օգնելու նպատակով օգտագործելու առաջարկը։ Գլխավոր ասամբլեան 1973 թ. դեկտեմբերին բանաձև ընդունեց, որով Անվտանգության խորհրդի մշտական անդամներին խորհուրդ էր տալիս իրենց ռազմական բյուջեները կրճատել 10 %-ով և ազատվող միջոցների մեկ տասներորդ մասը առանձնացնել զարգացող երկրներին օգնություն ցույց տալու համար։ Անվտանգության խորհրդի մշտական անդամներից այդ բանաձևի դեմ քվեարկեց Չինաստանը, իսկ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան ձեռնպահ մնացին։

1971 թ. սեպտեմբերին սովետական կառավարության մտցրած առաջարկությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, չնայած ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի դիմադրությանը, 1971 թ. դեկտեմբերին զինաթափման գծով համաշխարհային կոնֆերանսի հրավիրման նախապատրաստվելու մասին բանաձև ընդունեց։ 1974 թ. օգոստոսին սովետական կառավարությունը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ նա առաջարկեց միջազգային կոնվենցիա կնքել ռազմական նպատակներով բնական միջավայրի վրա ներգործելն արգելելու մասին։

Այս բոլորից հետևում է այն եզրակացությունը, որ սովետական պետությունն իր գոյության բոլոր տարիների ընթացքում հետևողականորեն հանդես է գալիս պատերազմի վարման բոլոր միջոցների լրիվ վերացման կամ սպառազինությունները զգալիորեն կրճատելու և դանդվածային ոչնչացման զենքն արգելելու ուղիով մարդկությունը նրա վտանգից ազատելու պրոբլեմներն արմատականորեն լուծելու օգտին։ Այդ ազնիվ նպատակին հասնելուն է ծառայել, ծառայում է և կծառայի մեր սոցիալիստական մեծ տերությունը։

ՍՍՀՄ-Ի ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ՄԱԿ-Ի ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

Սովետական Միությունը, ինչպես և մյուս պետությունները, ձգտելով խաղաղության պահպանման և ամրապնդման, մեծ նշանակություն է տալիս

Միավորված ազգերի կազմակերպությանը։ Իր գոյության 30 տարիներին նա ամբողջությամբ վերցրած դրական դեր է խաղացել միջազգային համագործակցության զարգացման, գաղութատիրության վերացման գործում։ Սակայն իմպերիալիստական պետությունները ձգտում էին և ձգտում են ՄԱԿ-ը ծառայեցնել իրենց ագրեսիվ պլանների իրականացմանը։ Նրա գործունեության առաջին տարիներին նրանց հաջողվում էր ՄԱԿ-ի՝ իրենցից կախման մեջ գտնվող անդամների մեծամասնության օգնությամբ ՄԱԿ-ի անվան տակ քողարկել իրենց ագրեսիվ պլաններն ու գործողությունները։ Դա հատկապես հստակորեն դրսևորվեց Կորեայում 1950—1953 թթ. ամերիկյան ինտերվենցիայի ժամանակ։

60-ական թվականներին աշխարհում կատարված արմատական փոփոխություններն ազդեցին ՄԱԿ-ում քաղաքական ուժերի տեղաբաշխման և նրա գործունեության վրա։ Զգալիորեն ավելացավ նրա անդամների թվաքանակը։ Եթե 1946 թ. ՄԱԿ-ի մեջ մտնում էր 51 պետություն, ապա 1974 թ. վերջերին նրանում կար 138 երկիր։ ՄԱԿ-ի անդամների աճը կատարվում էր գլխավորապես հաղթական ազգային-ազատագրական պայքարի հետևանքով առաջացած նոր պետությունների հաշվին։ ՄԱԿ-ի նոր անդամներից շատերը սոցիալիստական երկրների հետ ակտիվորեն հանդես են գալիս պատերազմի վտանգի դեմ, գաղութատիրության վերացման, միջազգային համագործակցության օգտին։

Իմպերիալիստական ուժերի համար դժվար է դարձել ՄԱԿ-ն իրենց շահերի համար օգտագործելը։

Սովետական Միությունը բոլոր ջանքերը գործադրում է ՄԱԿ-ն ամրապնդելու և այն խաղաղության պահպանման գործունակ կազմակերպության վերածելու համար։ 1964 թ. հուլիսին սովետական կառավարությունը ՄԱԿ-ի քննարկմանը դրեց «ՄԱԿ-ի արդյունավետությունն ուժեղացնելու և միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու մի քանի միջոցառումների մասին» հուշագիրը։ Նրանում գործնական առաջարկություններ են արվում միջազգային վեճերը և կոնֆլիկտները խաղաղ միջոցներով կարգավորելու գործում ՄԱԿ-ի դերն ուժեղացնելու և խաղաղությունը պահպանելու համար, անհրաժեշտության դեպքում ռազմական միջոցներ կիրառելու հարցի կապակցությամբ։ Այդ նույն դրույթներն ամրապնդվեցին սովետական կառավարության 1967 թ. ապրիլի 4-ի «Միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու ՄԱԿ-ի գործողություններին» վերաբերող հուշագրում։

Սովետական Միությունը դեռևս 1960 թ. հանդես եկավ Միավորված ազգերի տարբեր մարմինների կազմի ընդարձակման օգտին։ Նա Անվտանգության խորհրդի մշտական անդամներից առաջինն էր, որ 1964 թ. դեկտեմբերին վավերացրեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1963 թ. 18-րդ նստաշրջանում ընդունված ՄԱԿ-ի կանոնադրության ուղղումները։ Ուղղումները նախատեսում էին ընդարձակել Անվտանգության խորհրդի կազմը, այն 11-ից հասցնելով մինչև 15 անդամի (Խորհրդի ոչ մշտական անդամների թիվը 6-ից մինչև 10-ի ավելացնելու հաշվին), իսկ տնտեսական ու սոցիալական խորհուրդների կազմը 18-ից հասցնել մինչև 27-ի։ Հետագայում տնտեսական և սոցիալական խորհուրդների անդամների թիվն ավելացվեց և հասցվեց 54-ի։

ՍՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՍՀՄ միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության պատմության վերաբերյալ կա մեծաքանակ գրականություն, որը հրատարակվել է ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում։

ՍՍՀՄ միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության պատմությունն ուսումնասիրողներն առանց Վ. Ի. Լենինի աշխատությունների խոր իմացության չեն կարող բավարարվել։ Հրապարակի վրա են Վ. Ի. Լենինի աշխատությունների՝ «Սովետական պետության արտաքին քաղաքականության մասին» (Մ., 1960), «Միջազգային քաղաքականության և միջազգային իրավունքի մասին» (Մ., 1956), «Միջազգային բանվորական և կոմունիստական շարժման մասին» (Մ., 1958), «Ազգային և ազգային-գաղութային հարցի մասին» (Մ., 1956) թեմատիկ ժողովածուները։

ՍՍՀՄ միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության պրոբլեմները բազմակողմանիորեն քննարկվում են կուսակցության համագումարներում և ՍՄԿԿ Կենտկոմի պլենումներում։ Կուսակցության համագումարների և ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների որոշումները զետեղված են «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում» ժողովածուներում։ Դրանք լույս են տեսել նաև առանձին հրատարակություններով։

Արդի միջազգային հարաբերությունների ուսումնասիրման համար հատկապես կարևոր նշանակություն ունեն ՍՄԿԿ XXIV համագումարի փաստաթղթերն ու նյութերը։

Միջազգային հարաբերությունների հարցերը խոր կերպով վերլուծված են կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1957, 1960 և 1969 թթ. միջազգային խորհրդակցությունների փաստաթղթերում։

Սովետական կառավարության արտաքին քաղաքական փաստաթղթերը հրապարակված են տարբեր հրատարակություններով։ Դրանցից առավել տարածվածները «Սովետական Միության արտաքին քաղաքականությունը։ Փաստաթղթեր և նյութեր» փաստաթղթերի 1945, 1946, 1947-ի (երկու գիրք), 1948-ի (երկու գիրք), 1949 և 1950 թթ. տարեկան ժողովածուներն են։ Այդ ժողովածուները պարունակում են հետպատերազմյան առաջին տարիների փաստաթղթերը միջազգային հարաբերությունների հիմնական պրոբլեմների՝ գերմանական հարցի, երկրորդ համաշխարհային պատերազմում Գերմանիայի նախկին դաշնակիցների հետ խաղաղ կարգավորման վերաբերյալ։

50-ական թվականներն ընդգրկող փաստաթղթերի տարեկան ժողովածուներ չեն հրատարակվել։ 1962 թ. սկսվեց «Սովետական Միության արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները» ժողովածուների հրատարակումը։ Այդ ժողովածուներն ընդգրկում են 1961—1974 թթ. մամուլում հրապարակված հիմնական փաստաթղթերը (հրատարակվել է 13 հատոր)։

Կարևորագույն փաստաթղթեր են հրապարակվում արտասահմանյան պետությունների հետ ՍՍՀՄ-ի կնքած գործող պայմանագրերի, համաձայնագրերի և կոնվենցիաների ժողովածուներում։

Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերի մեծ թվով հրապարակումներ կան առանձին հարցերի կամ երկրների որոշակի խմբերի հետ ՍՍՀՄ-ի հարաբերությունների վերաբերյալ։ Այսպես, օրինակ, ՍՍՀՄ ԱԳՄ-ն հրատարակել է «ՍՍՀՄ-ը և Աֆրիկայի երկրները» (1963), «ՍՍՀՄ-ը և արաբական երկրները 1917—1960 թթ.» (1961) երկհատորանոց փաստաթղթերի ժողովածուն։

Մենագրական բնույթի աշխատություններից կարելի է նշել Ա. Գրոմիկոյի, Բ. Պոնոմարյովի, Վ. Խվոստովի խմբագրությամբ լույս տեսած «ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականության պատմության» երկրորդ մասը, 1945—1970 թթ., Ն. Ն. Ինոզեմցևի խմբագրությամբ երեք հատորանոց «Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո», «Դիվանագիտության պատմությունը», հ. 5, գ. 1-ին, Մ., 1975։ Լույս է տեսել Վ. Գ. Տրուխանովսկու ընդհանուր խմբագրությամբ «ՍՍՀՄ-ի միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության պատմության» երեք հատորանոց աշխատությունը (Մ., 1967)։

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈԼՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՈՒ ԳԼՈՒԽՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վ. Ի. Լենին, *Սոցիալիզմը և պատերազմը, եկ, հ. 26։*

Վ. Ի. Լենին, *Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա, եկ, հ. 27։*

Վ. Ի. Լենին, *Իմպերիալիզմը և սոցիալիզմի պառակտումը, եկ, հ. 30։*

Վ. Ի. Լենին, *Սպառնացող աղետը և ինչպես պայքարել նրա դեմ, եկ, հ. 34։*

Վ. Ի. Լենին, *Զեկուցում հաշտության մասին բանվորների և զինվորների սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարում 1917 թվականի հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8), եկ, հ. 37։*

Վ. Ի. Լենին, *Պրոլետարական հեղափոխությունը և renegat Կաուցկին, եկ, հ. 37։*

Վ. Ի. Լենին, *Թեզիսներ և զեկուցում 1919 թ. մարտի 4-ին Կոմունիստական ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսում՝ բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին, եկ, հ. 37։*

Վ. Ի. Լենին, *Երրորդ ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ, եկ, հ. 38։*

Վ. Ի. Լենին, *«Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ, եկ, հ. 41։*

Վ. Ի. Լենին, *1920 թ. հուլիսի 26-ին Կոմունիստական ինտերնացիոնալի 2-րդ կոնգրեսում ազգային և գաղութային հարցի գծով հանձնաժողովի զեկուցումը, եկ, հ. 41։*

Վ. Ի. Լենին, *Ռուսական հեղափոխության հինգ տարին և համաշխարհային հեղափոխության հեռանկարները։ Զեկուցում Կոմինտերնի 4-րդ կոնգրեսում 1922 թ. նոյեմբերի 13-ին, եկ, հ. 45։*

* * *

«Программные документы коммунистических и рабочих партий капиталистических стран Европы». М., 1960.

«Программные документы борьбы за мир, демократию и социализм». М., 1961.

«Международное Совещание коммунистических и рабочих партий. Документы и материалы. 5—7 июня 1969 г.» М., 1969.

«Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը»։ ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Հայպետհրատ, 1962։ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին։ ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի որոշումը»։ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները։ 1967։

«Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի մասին», ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, Երևան, 1970։

«ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», «Հայաստան» հրատարակչություն, 1971։

«Всемирная история», т. X, М., 1965.

«Историография новой и новейшей истории стран Европы и Америки». Учебное пособие, М., 1968.

«Новейшая история стран Западной Европы и Америки. 1939—1945», т. 2. М., 1966.

«Новейшая история зарубежных стран. Европа и Америка», т. II. М., 1968.

«Хрестоматия по новейшей истории», т. II—III. М., 1960—1961.

1-ին գլխի վերաբերյալ

«Великая Отечественная война Советского Союза. 1941—1945» Краткий научно-популярный очерк. М., 1973.

«История Великой Отечественной войны Советского Союза. 1941—1945 гг.» т. I—III, V и VI. М., 1960—1965.

«История Коммунистической партии Советского Союза», т. V, ч. I (1938—1945). М., 1970.

«Коммунистическая партия в Великой Отечественной войне (июнь 1941—1945). Документы и материалы». М., 1970.

«Освободительная миссия Советских Вооруженных Сил во второй мировой войне». М., 1971.

«Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.», т. 1—2, М., 1957.

Севостьянов Г. Н. Дипломатическая история войны на Тихом океане. От Пирл-Харбора до Каира. М., 1969.

2-րդ գլխի վերաբերյալ

«Политическая экономия современного монополистического капитализма», т. 1—2. М., 1971.

Семенов В. С. Капитализм и классы. Исследование социальной структуры современного капиталистического общества. М., 1969.

3-րդ գլխի վերաբերյալ

Алампиев П. М., Богомолов О. Т., Ширяев Ю. С. Экономическая интеграция-объективная потребность развития мирового социализма. М., 1971.

«Вопросы социалистической интеграции». Сб. статей под ред. Дудинского И. В. и др. М., 1971.

«Комплексная программа дальнейшего углубления и совершенствования сотрудничества и развития социалистической экономической интеграции стран—членов СЭВ. М., 1972.

Сорокин Г. М. и др. Проблемы экономической интеграции стран—членов СЭВ. М., 1970.

4-րդ գլխի վերաբերյալ

Виноградов В. Н., Карпещенко Е. Д., Лебедев Н. И., Языкова А. А. История Румынии нового и новейшего времени. М., 1964.

«История Румынии, т. 2. 1918—1970», М., 1971.

Лебедев Н. И., Карпещенко Е. Д. История Румынской Народной Республики. Краткий очерк. М., 1964.

Социалистическая Республика Румыния. М., 1974.

5-րդ գլխի վերաբերյալ

Кадар Янош. Избранные статьи и речи (1957—1960). М., 1960.

Кадар Янош. Избранные статьи и речи (май 1960—апрель 1964). М., 1964.

Кадар Янош. Избранные статьи и речи (октябрь 1964—апрель 1970). М., 1970.

Советско-венгерские отношения 1945—1948. Документы и материалы. М., 1969.

Советско-венгерские отношения 1948—1970 гг. Документы и материалы. М., 1974.

История венгерского революционного рабочего движения, т. 2, М., 1973.

Нежинский Л. Н. Очерк истории Народной Венгрии 1948—1962. М., 1969.

Немеш Дэже. Венгрия 1945—1961. Пер. с венгерского. М., 1962.

Пушкаш А. И. Венгрия в годы второй мировой войны. М., 1966. Очерки новой и новейшей истории Венгрии М., 1963.

6-րդ գլխի վերաբերյալ

«Албания». Исторический очерк. БСЭ (3 изд.), т. I.

Арш Г. Л., Сенкевич И. Г., Смирнова Н. Д. Краткая история Албании. М., 1965.

7-րդ գլխի վերաբերյալ

«20 лет СЕПГ. Документы». М., 1966.

Гротеволь О. Избранные статьи и речи (1945—1959). М., 1961.

Пик В. Избранные произведения. М., 1956.

Ульбрихт В. Избранные статьи и речи. М., 1961.

Хонеккер Э. Роль рабочего класса и его партии в социалистическом обществе. М., 1973.

Горошкова Г. Н. Национальный фронт демократической Германии (1949—1963). М., 1966.

Дернберг С. Краткая история ГДР. М., 1971.

8-րդ գլխի վերաբերյալ

Кастро Ф. Речи и выступления. М., 1960.

Кастро Ф. Речи и выступления. 1961—1963 гг. М., 1963.

Гриневич Э. А. Куба: путь к победе революции. М., 1975.

Куба: 10 лет революции. М., 1968.

Республика Куба. М., 1974.

Слезкин Л. Ю. История кубинской республики. М., 1966.

9-րդ գլխի վերաբերյալ

Гаузнер Н. Д. Научно-технический прогресс и рабочий класс США. М., 1968.

Далин С. А. США: послевоенный государственно-монополистический капитализм. М., 1972.

История рабочего движения в США в новейшее время, т. II. 1939—1965. М., 1971.

Королева А. П. 20 миллионов против Джима Кроу. (Негритянское движение в США на современном этапе.) М., 1967.

Мельников Ю. М. Внешнеполитические доктрины США. Происхождение и сущность программы «новых рубежей» президента Д. Кеннеди. М., 1970.

Мартынов В. А. Сельское хозяйство США и его проблемы (Научно-техническая революция и аграрные отношения). М., 1971.

Общественно-политические движения в США (60-е—начало 70-х годов XX в.). М., 1974.

Попов А. А. США: государство и профсоюзы. М., 1974.

Сивачев Н. В., Языков Е. Ф. Новейшая история США 1917—1972. М., 1972.

Современная буржуазная идеология в США. М., 1967.

Фурсенко А. А. Критическое десятилетие Америки. 60-е годы. Л., 1974.

Экономическая политика правительства Кеннеди 1961—1963. М., 1964.

10-րդ գլխի վերաբերյալ

Голлан Джон. Коммунисты Великобритании в борьбе за социализм. М., 1968.

Великобритания. (Экономика и политика стран современного капитализма). Под ред. С. В. Пронина и Е. С. Хесина. М., 1972.

Глушков В. П. Корпорация, государство, экономика. Английский государственно-монополистический капитализм на пороге 70-х годов. М., 1972.

Зайцев В. П. Рабочий класс Англии в борьбе против наступления монополии (1956—1966). М., 1968.

Красильников А. Н. Внешняя политика Англии и лейбористская партия (1951—1964). М., 1969.

Милибенд Р. Парламентский социализм. М., 1964.

Перегудов С. П. Антивоенное движение в Англии и лейбористская партия (1957—1968). М., 1969.

Притт Д. Н. Очерки внешней и внутренней политики лейбористов в 1945—1951 гг. М., 1964.

Распад Британской империи. М., 1964.

Трухановский В. Г. Новейшая история Англии. М., 1958.

Трухановский В. Г. Внешняя политика Англии в период второй мировой войны (1939—1945). М., 1965.

11-րդ գլխի վերաբերյալ

Торез М. Сын народа. М., 1960.

Варфоломеева Р. С. Борьба французской коммунистической партии за мир, демократию, социализм. 1945—1970 гг. М., 1972.

История Франции, т. 3. М., 1973.

Молчанов Н. Н. Четвертая республика. М., 1963.

Молчанов Н. Н. Генерал де Голль. М., 1972.

Очерки рабочего движения во Франции (1917—1967). М., 1968.

Рубинский Ю. И. Пятая республика. (Политическая борьба во Франции в 1958—1963 гг.) М., 1964.

Салычев С. С. Идеология и политика французской социалистической партии (1944—1964 гг.) М., 1966.

Смирнов В. П. Движение Сопротивления во Франции в годы второй мировой войны. М., 1974.

Трудовая Франция против власти монополий. Майско-июньские события 1968 г. и дальнейшее развитие классовой борьбы. Отв. ред. Ю. Н. Панков. М., 1974.

Франция (Экономика и политика стран современного капитализма). Под ред. Ю. И. Рубинского. М., 1973.

12-րդ գլխի վերաբերյալ

Тольятти П. Избранные статьи и речи, тт. 1—11. М., 1965.

Тольятти П. Речи в учредительном собрании. М., 1959.

История Италии, т. 3, М., 1971.

Италия (Экономика и политика стран современного капитализма). Под ред. Н. П. Василькова. М., 1973.

Комолова Н. П. Движение Сопротивления и политическая борьба в Италии 1943—1947. М., 1972.

Комолова Н. П. Новейшая история Италии. М., 1970.

Филатов Г. С. Крах итальянского фашизма. М., 1973.

Холодковский К. Г. Рабочее движение в Италии (1959—1963). М., 1969.

13-րդ գլխի վերաբերյալ

Берч Г. ХДС/ХСС без маски. М., 1963.

Вебер А. Б. Классовая структура общества в Западной Германии. М., 1961.

Галкин А. А., Мельников Д. Е. СССР, Западные державы и германский вопрос (1945—1965). М., 1966.

Германская история в новое и новейшее время, т. 2, М., 1970.

Ежов В. Д. Классовые бои на Рейне. Рабочее движение в Западной Германии 1945—1973. М., 1973.

Залетный А. Ф. Милитаризация ФРГ. М., 1969.

Иерусалимский В. П. Годы становления и борьбы. Очерки истории рабочего движения в Западной Германии в 1945—1949 гг. М., 1970.

Империализм ФРГ. Пер. с немецкого. М., 1973.

Сальковский О. В. Социальная политика буржуазии и пролетариата. (По материалам ФРГ). М., 1969.

Федеративная Республика Германии (Экономика и политика современного капитализма). Под. ред. В. Н. Шенаева. М., 1973.

14-րդ գլխի վերաբերյալ

Ворошилов С. И. Рождение второй республики в Австрии. Л., 1968.

СССР в борьбе за независимость Австрии. М., 1965.

15-րդ գլխի վերաբերյալ

Бак Тим. Избранные произведения. М., 1972.
Бак Тим. Тридцать лет коммунистического движения в Канаде (1922—1952). М., 1954.
Лидин А. Государственный строй Канады. М., 1960.
Милейковский А. Г. Канада и англо-американские противоречия. М., 1958.
Национальные проблемы Канады. М., 1972.
Сущенко В. В. Монополистический капитал Канады. М., 1964.

16, 18, 19, 23-րդ գլուխների վերաբերյալ

Кирьякидис Г. Д. Гражданская война в Греции 1946—1949. М., 1972.
Кирьякидис Г. Д. Греция во второй мировой войне. М., 1967.
Малые страны Западной Европы (экономика и политика стран современного капитализма). Под ред. Ю. И. Юданова. М., 1972.
Надин К. Внешняя политика Голландии. М., 1963.
Орлова М. Е. Ирландия в поисках путей независимого развития 1945—1948. М., 1973.
Панков Ю. Н. Рабочее движение в Бельгии 1945—1965. М., 1966.
Пеа Лиэм де. Расколотый Олстер. Предисл. и ред. А. Д. Колпакова. М., 1974.
Серебряный Л. Р. Нидерланды. Очерки страноведения. М., 1974.
Шленнер Б. С. Сто лет социальной истории Бельгии. М., 1959.

17-րդ գլխի վերաբերյալ

История Коммунистической партии Испании. Краткий курс. М., 1961.
Каррильо С. После Франко—что? Испания: действительность и перспективы. М., 1966.
Гарсиа Х. Испания XX века. М., 1967.
Пожарская С. П. Тайная дипломатия Мадрида. Внешняя политика Испании в годы второй мировой войны. М., 1971.
Пряхин Д. Внешняя политика Испании. М., 1968.
Хименес Луйс. Рабочий класс современной Испании. М., 1970.

20-րդ գլխի վերաբերյալ

Голошубов Ю. И. Скандинавия и проблемы послевоенной Европы. М., 1974.
История Швеции. М., 1974.
Кан А. С. Внешняя политика Скандинавских стран в годы второй мировой войны. М., 1967.
Кан А. С. История Скандинавских стран (Дания, Норвегия, Швеция). М., 1971.
Пискулев Ю. В., Градобитова Л. Д. Север и интеграция. М., 1972.
Профсоюзы Скандинавских стран и Финляндия. М., 1966.

21-րդ գլխի վերաբերյալ

Из истории Коммунистической партии Финляндии. М., 1960.
Ингульская Л. А. В борьбе за демократизацию Финляндии (1944—1948). М., 1972.
Кекконен У. К. Финляндия и Советский Союз. Статьи и речи. М., 1960.
Кекконен У. К. Финляндия и Советский Союз. Речи 1960—1962. М., 1963.
Кекконен У. К. Дружба и добрососедство. Речи и выступления 1963—1967. М., 1968.
Кекконен У. К. Финляндия и Советский Союз. Добрососедство. Сотрудничество. Взаимопонимание. Речи 1967—1972 гг. М., 1973.
Паасикиви, Юхо Кусти. Линия Паасикиви. Статьи и речи 1944—1956. М., 1958.

22-րդ գլխի վերաբերյալ

Куньял Алваро. Путь к победе. М., 1967.
Коломиец Г. Н. Очерки новейшей истории Португалии. М., 1965.

25, 26, 27, 28-րդ գլուխների վերաբերյալ

Арисменди Р. Ленин, революция и Латинская Америка. М., 1973.
Кодовилья В. Избранные статьи и речи. М., 1970.
Корвалан Л. Путь победы. М., 1971.
Антонов Ю. А. Бразилия: армия и политика. М., 1973.
Визгунова Ю. И. Рабочий класс современной Мексики. М., 1973.
Гамутило В. А. Внешняя политика Аргентины после второй мировой войны 1945—1972 гг. М., 1974.
Зорина И. Н. Революция или реформа в Латинской Америке. Критика реформизма чилийской христианской демократии. М., 1971.
Коваль Б. И. История бразильского пролетариата 1957—1967. М., 1968.
Коваль Б. И., Семенов С. И., Шульговский А. Ф. Революционный процесс в Латинской Америке. М., 1974.
Королев Ю. Н. Чили: проблемы единства демократических и антиимпериалистических сил (1956—1970 гг.). М., 1973.
Кудачкин М. Ф. Чили: борьба за единство и победу левых сил. М., 1973.
Марианетти Б. Аргентина. Современное положение и перспективы. М., 1966.
Мексика. Политика. Экономика. Культура. Сб. ст. М., 1968.
Очерки истории Аргентины. М., 1961.
Очерки истории Бразилии. М., 1962.
Очерки истории Чили. М., 1967.
СССР и Латинская Америка. 1917—1967. М., 1967.
Шокина И. Е. Перонистское движение в современной Аргентине. М., 1969.

29-րդ գլխի վերաբերյալ

Великая Октябрьская социалистическая революция и мировая социалистическая система. М., 1969.
Коминтерн и его революционные традиции. М., 1969.
Коммунистический Интернационал. (Краткий исторический очерк). М., 1969.
Международное коммунистическое движение. Очерк стратегии и тактики. М., 1972.
Международное рабочее движение. Справочник. М., 1971—1974.
Октябрьская революция и пролетарский интернационализм. М., 1970.
Рабочий класс и антимонополистическая борьба М., 1969.

30-րդ գլխի վերաբերյալ

История внешней политики СССР, ч. 2 (1945—1970). Под ред. Б. Н. Пономарева, А. А. Громыко, В. М. Хвостова. М., 1971.
История международных отношений и внешней политики СССР, тт. 2—3. М., 1967.
Крылов С. Б. История создания Организации Объединенных Наций.
Разработка текста Устава Организации Объединенных Наций (1944—45). М., 1960.
ООН. Итоги. Тенденции. Перспективы (К 25-летию ООН). Предисл. акад. Н. Н. Иноземцева. М., 1970.
Черкасский Л. Я. Стратегия мира. Борьба СССР против угрозы ядерной войны и за разоружение на современном этапе. М., 1972.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1939 ԹՎԱԿԱՆ

սեպտեմբերի 1 — Ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա։ Սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը։

սեպտեմբերի 3 — Անգլիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային։

1940 թ. մայիսի 10 — «Ծարօրինակ պատերազմը»։

սեպտեմբեր-նոյեմբեր — Սովետական զորքերն ազատագրեցին Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան։ Արևմտյան Ուկրաինան վերամիավորվեց Ուկրաինական ՍՍՀ-ի, իսկ Արևմտյան Բելոռուսիան՝ Բելոռուսական ՍՍՀ-ի հետ։

նոյեմբերի 30
1940 թ. մարտի 12 } *Սովետա-ֆինլանդական զինված կոնֆլիկտը։*

1940 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 9 — Ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Դանիայի և Նորվեգիայի վրա։

մայիսի 10 — Ու. Չերչիլի կոալիցիոն կառավարությունն անցավ իշխանության գլուխ։

մայիսի 10 — Գերմանիան հարձակվեց Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի և Ֆրանսիայի վրա (ավարտվեց «Ծարօրինակ պատերազմը»)։

մայիսի26—հունիսի 4 — Անգլիական էքսպեդիցիոն բանակը էվակուացվեց Դյունկերկից։

հունիսի 18 — Մնունդ առավ «Ազատ Ֆրանսիա» շարժումը։

հունիսի 22 — Ֆրանսիայի կապիտուլյացումը։ Կոմպենյան զինադադարի ստորագրումը։

հունիսի 24 — Զինադադարի ստորագրումը Իտալիայի և Ֆրանսիայի միջև։

հունիս-օգոստոս — Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի հարցի խաղաղ կարգավորումը։ Այդ մարզերը վերամիավորվեցին Մոլդավիայի և Ուկրաինայի հետ։

հուլիսի 10—12 — Երրորդ հանրապետության ավարտը։ Վիշիի ֆաշիստական ռեժիմի հաստատվելը։

հուլիսի 10 — Ֆրանսիական ժողովրդին ուղղված ՖԿԿ-ի Կենտկոմի մանիֆեստը՝ ֆաշիստական զավթիչներին և Վիշիի կառավարությանը դիմադրություն ցույց տալու մասին։

հուլիս-օգոստոս — Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում վերականգնվեց սովետական իշխանությունը։ Կազմավորվեցին Լատվիական, Լիտվական և Էստոնական սովետական սոցիալիստական հանրապետությունները։

օգոստոսի 30 — 2-րդ «Վիեննական արբիտրաժը»։ Հյուսիսային Տրանսիլվանիան վերամիավորվեց Հունգարիայի հետ։

սեպտեմբերի 5 — Ռումինիայում հաստատվեց Ի. Անտոնեսկուի ֆաշիստական դիկտատուրան։

սեպտեմբերի 27 — Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի միջև ռազմական դաշինքի («Եռակողմ պակտ») ստորագրումը։

հոկտեմբերի 28 — Սկսվեց իտալական զորքերի ներխուժումը Հունաստան։

նոյեմբեր — Հունգարիայի, Ռումինիայի և Սլովակիայի կառավարությունները միացան «Եռյակ պակտին»։

1941 ԹՎԱԿԱՆ

մարտի 1 — Բուլգարիայի կառավարությունը միացավ «Եռյակ պակտին»։ Գերմանա-ֆաշիստական զորքերը մտան Բուլգարիա։

մարտի 11 — ԱՄՆ-ում ընդունվեց լենդ-լիզի օրենքը։

ապրիլ — Գերմանաֆաշիստական զորքերը զավթեցին Հարավսլավիան և Հունաստանը։

հունիսի 22 — Հիտլերյան Գերմանիան, Ռումինիան և Ֆինլանդիան ուխտադրժորեն հարձակվեցին ՍՍՀՄ-ի վրա։ Իտալիան պատերազմ հայտարարեց ՍՍՀՄ-ին։ Սկսվեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը։

հունիսի 27 — Հունգարիան պատերազմ հայտարարեց ՍՍՀՄ-ին։

հուլիսի 18 — ՍՍՀՄ-ի և Չեխոսլովակիայի միջև համաձայնագիր ստորագրվեց դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու, Գերմանիայի դեմ պատերազմում փոխօգնություն և պաշտպանություն ցույց տալու և ՍՍՀՄ-ի տարածքում չեխոսլովակյան զորամասեր ստեղծելու վերաբերյալ։

հուլիսի 30 — ՍՍՀՄ-ի և Լեհաստանի միջև համաձայնագիր ստորագրվեց դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու, Գերմանիայի դեմ պատերազմում փոխադարձ օգնություն ցույց տալու և ՍՍՀՄ-ի տարածքում լեհական բանակ կազմավորելու վերաբերյալ։

օգոստոսի 14 — Անգլիան և ԱՄՆ-ը դեկլարացիա ստորագրեցին պատերազմի նպատակների և աշխարհի հետպատերազմյան կառուցվածքի («Ատլանտյան խարտիա») վերաբերյալ։

օգոստոսի 25 — Գերմանաֆաշիստական գործակալների քայքայիչ գործունեության էականացման սպառնալիքի կապակցությամբ սովետական ու անգլիական զորքերը մտան Իրան։

սեպտեմբերի 24 — ՍՍՀՄ-ը միացավ «Ատլանտյան խարտիային»։

սեպտեմբեր — Գեներալ դը Գոլի գլխավորությամբ Լոնդոնում ստեղծվեց «Ազատ Ֆրանսիա» (1942 թ. հուլիսին վերանվանվեց «Մարտնչող Ֆրանսիա») ազգային կոմիտեն։

սեպտեմբերի 30 —
1942 թ. ապրիլի 20 — *Մոսկվայի ճակատամարտը։*

նոյեմբերի 8 — Ալբանիայի կոմունիստական կուսակցության ստեղծումը։

դեկտեմբերի 7 — Ճապոնիայի հարձակումը Պիրլ Հարբորի վրա։ Պատերազմի սկսվելը խաղաղ օվկիանոսում։

դեկտեմբերի 11 — Գերմանիան և Իտալիան պատերազմ հայտարարեցին ԱՄՆ-ին։

1942 ԹՎԱԿԱՆ

հունվարի 1 — Ֆաշիստական բլոկի երկրների դեմ պայքարի մասին 26 պետությունների դեկլարացիայի (Միավորված ազգերի դեկլարացիա) ստորագրումը Վաշինգտոնում։

մայիսի 26 — Լոնդոնում ստորագրվեց հիտլերյան Գերմանիայի և նրա կամակատարների դեմ պատերազմում դաշինքի և պատերազմից հետո համագործակցության ու փոխօգնության անգլո-սովետական պայմանագիրը։

1942 թ. հուլիսի 17
1943 թ. փետրվարի 2 } *Ստալինգրադյան ճակատամարտը։*

նոյեմբերի 8 — Անգլո-ամերիկյան զորքերի Մարոկկո և Ալժիր ափհանումը։

նոյեմբերի 11 — Գերմանա-իտալական զորքերի՝ Ֆրանսիայի չօկուպացված գոտի ներխուժումը։

նոյեմբերի 25 — ՖԿԿ-ի և «Մարտնչող Ֆրանսիայի» համատեղ գործողությունների մասին համաձայնագիրը։

1943 ԹՎԱԿԱՆ

հունվար-մայիս — Անգլիական զորքերը Հյուսիսային Աֆրիկայում չախչախեցին իտալա-գերմանական բանակները։

մայիսի 12—13 — Գերմանա-իտալական զորքերի կապիտուլյացիան Թունիսում։ Մարտական գործողությունների ավարտը Հյուսիսային Աֆրիկայում։

մայիսի 15 — ԿԻԳԿ-ի նախագահության որոշումը Կոմունիստական ինտերնացիոնալն արձակելու մասին։

մայիսի 27 — Ֆրանսիայում Դիմադրության ազգային խորհրդի ստեղծումը։

հունիսի 3 — Ալժիրում Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեի (ԱԱՖԿ) ստեղծումը։

հուլիսի 10 — Անգլիայի և ԱՄՆ-ի զորքերի ափհանումը Սիցիլիա կղզի։

հուլիսի 5—օգոստոսի 23 — Կուրսկի ճակատամարտը։

հուլիսի 12—13 — «Ազատ Գերմանիա» ազգային կոմիտեի ստեղծումը։

օգոստոսի 26 — ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի կառավարությունները ճանաչեցին Ազգային ազատագրության ֆրանսիական կոմիտեն։

սեպտեմբերի 3—8 — Իտալիայի կապիտուլյացիան։ Գերմանական զորքերը օկուպացրին Իտալիայի հյուսիսային և կենտրոնական գավառները։

սեպտեմբերի 9 — Իտալիայում ստեղծվեց Ազգային ազատագրության կոմիտե (ԱԱԿ)։

հոկտեմբերի 13 — Բադոլյոյի կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային։

հոկտեմբերի 19—30 — ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությունը Մոսկվայում։

նոյեմբերի 28 } ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարության ղեկավարների կոնֆե-
դեկտեմբերի 1 } ռանսը Թեհրանում։

1944 ԹՎԱԿԱՆ

մարտի 1—8 — Ընդհանուր քաղաքական գործադուլը Հյուսիսային Իտալիայում։

մարտի 19 — Գերմանաֆաշիստական զորքերը գավթեցին Հունգարիայի տարածքը։

ապրիլի 22 — Իտալիայում հակաֆաշիստական կուսակցությունների մասնակցությամբ կազմվեց ազգային միասնության կառավարություն։

մայիսի 1 — Ռումինիայում ստեղծվեց կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միասնական բանվորական ճակատը։

հունիսի 3 — Աշխատանքի համընդհանուր իտալական կոնֆեդերացիայի (ԱՀԻԿ) ստեղծումը։

հունիսի 6 — Դաշնակիցների զորքերի ափհանումը Նորմանդիայում (Ֆրանսիա). Եվրոպայում երկրորդ ռազմաճակատի բացումը։

օգոստոսի 18 — Բուխենվալդում ԳԿԿ-ի գլխավոր քարտուղար Էռնստ Թելմանի սպանությունը։

օգոստոսի 19—25 — Փարիզի զինված ապստամբությունը։ Փարիզի ազատագրումը։

օգոստոսի 20—27 — Սովետական բանակը Յասսի-Քիշինևյան շրջանում շրջապատեց և չախչախեց ֆաշիստական զորքերի խմբավորումը։

օգոստոսի 23 — Ռումինիայում սկսվեց ժողովրդական հակաֆաշիստական ապստամբությունը։ Տապալվեց ռազմաֆաշիստական դիկտատուրան։

սեպտեմբերի 12 — Մոսկվայում զինադադարի համաձայնագիր ստորագրվեց Ռումինիայի և հակահիտլերյան կոալիցիայի միջև։

սեպտեմբերի 19 — ՍՍՀՄ-ը և Անգլիան զինադադարի համաձայնագրեր ստորագրեցին Ֆինլանդիայի հետ։

հոկտեմբեր — Ֆինլանդիայի ժողովրդի դեմոկրատական միության (ՖԺԴՄ) հիմնադրումը։

նոյեմբերի 29 — Ալբանիայի ազատագրումը գերմանաֆաշիստական զորքերից։

դեկտեմբերի 2 — Անկախության հունգարական ազգային ճակատի ստեղծումը։

դեկտեմբերի 10 — ՍՍՀՄ-ի և Ֆրանսիական հանրապետության միջև ստորագրվեց դաշինքի և փոխօգնության պայմանագիր։

դեկտեմբերի 16 }
1945 թ. հունվարի 12 } Գերմանական զորքերի հարձակումն Արդեննեներում։

դեկտեմբերի 22 — Հունգարիայում ստեղծվեց ազգային ժամանակավոր կառավարություն։

1945 ԹՎԱԿԱՆ

փետրվարի 4—12 — ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների Ղրիմի (Յալթայի) կոնֆերանսը։

ապրիլի 4 — Սովետական բանակը լիովին ազատագրեց Հունգարիան։

ապրիլի 12 — ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Դ. Ռուզվելտի մահը։ Հ. Ս. Տրումենի՝ պրեզիդենտի պաշտոնին անցնելը։

ապրիլի 25—հունիսի 26 — Միացյալ ազգերի կոնֆերանսը Սան Ֆրանցիսկոյում։ ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը։

ապրիլ — Համաժողովրդական ազատագրական ապստամբությունը Հյուսիսային Իտալիայում։ Իտալիայում հիտլերյան զորքերի կապիտուլյացման ակտի ստորագրումը։

մայիսի 2 — Սովետական զորքերը գրավեցին Բեռլինը։

մայիսի 8 — Բեռլինում ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ստորագրումը։

մայիսի 9 — Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ տարած հաղթանակի օրը։

մայիսի 31 — Ստեղծվեց Գերմանիայի վրա ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից կազմված վերահսկող խորհուրդը։

հունիսի 11 — ԳԿԿ-ի Կենտկոմը Գերմանիայի դեմոկրատական վերակառուցման ծրագրով դիմեց գերմանական ժողովրդին։

հուլիսի 17—օգոստոսի 2 — Տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների Պոտսդամի կոնֆերանսը։

հուլիս — Անգլիայի պառլամենտական ընտրություններում լեյբորիստները հաղթանակ տարան։ Կ. Էթլիի գլխավորությամբ կազմվեց 3-րդ լեյբորիստական կառավարությունը։

օգոստոսի 6 — ԱՄՆ-ը ատոմային ռումբ նետեց Հիրոսիմայի վրա։

օգոստոսի 8 — ՍՍՀՄ-ի կառավարությունը պատերազմ հայտարարեց Ճապոնիային։

օգոստոսի 9 — ԱՄՆ-ը ատոմային ռումբ նետեց Նագասակիի վրա։

սեպտեմբերի 2 — Ստորագրվեց Ճապոնիայի կապիտուլյացման ակտը։ Ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը։

սեպտեմբերի 2 — Հռչակվեց Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունը։

սեպտեմբեր-հոկտեմբեր — Կայացավ արհմիությունների համաշխարհային առաջին կոնգրեսը։ Ստեղծվեց Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիան (ԱՀՖ)։

հոկտեմբերի 24 — Ուժի մեջ մտավ ՄԱԿ-ի կանոնադրությունը։

նոյեմբերի 10 — Հիմնադրվեց Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիան։

1945 թ. նոյեմբերի 20 }
1946 թ. հոկտեմբերի 1 } Կայացավ գերմանական պատերազմական գլխավոր հանցագործների Նյուրնբերգյան դատավարությունը։

դեկտեմբերի 1 — Հիմնադրվեց Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիան (ԿՄԴՖ)։

1946 ԹՎԱԿԱՆ

հունվարի 10 — Բացվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1-ին նստաշրջանը։

հունվարի 11 — Հռչակվեց Ալբանիայի Ժողովրդական Հանրապետությունը։

փետրվարի 1 — Հռչակվեց Հունգարական Ժողովրդական Հանրապետությունը։

Մարտի 5 — Ու. Չերչիլը Ֆուլտոնում (ԱՄՆ) հանդես եկավ ՍՍՀՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ «սառը պատերազմի» ծրագրային ճառով։

ապրիլի 21—22 — Բացվեց ԳՍՄԿ-ի հիմնադիր համագումարը։ Ընդունվեց նրա ծրագիրը։

հունիսի 18 — Իտալիան հռչակվեց հանրապետություն։

1946 թ. հունիս }
1955 թ. սեպտեմբեր } Խ. Դ. Պերոնի պրեզիդենտությունն Արգենտինայում։

հուլիսի 29—հոկտեմբերի 15 — Փարիզի հաշտության կոնֆերանսը։

հոկտեմբերի 13 — Ֆրանսիայում ընդունվեց 4-րդ հանրապետության սահմանադրությունը։

դեկտեմբերի 2 — ԱՄՆ-ը և Անգլիան համաձայնագիր կնքեցին Գերմանիայի անգլիական և ամերիկյան օկուպացիոն գոտիները մեկ գոտու (Բիզոնա) մեջ միավորելու վերաբերյալ։ Դրան 1948 թ. միացավ նաև Գերմանիայի օկուպացիոն ֆրանսիական գոտին։

դեկտեմբեր — Սկսվեց ֆրանսիական գաղութարարների պատերազմը Հնդկաչինի ժողովուրդների դեմ։

1946—1949 թթ. — Քաղաքացիական պատերազմը Հունաստանում։

1947 ԹՎԱԿԱՆ

հունվար — Իտալիայի սոցիալիստական կուսակցության պառակտումը, աջ թևը դուրս գալով նրանից, ստեղծեց սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։

փետրվարի 10 — Փարիզում հաշտության պայմանագիր կնքվեցին Իտալիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի և Ֆինլանդիայի հետ։

մարտի 12 — ԱՄՆ-ը հռչակեց «Տրումենի դոկտրինան»։

մայիս — Բիլբաոյում (Իսպանիա) կայացավ համընդհանուր մայիսմեկյան գործադուլ։

հունիսի 5 — ԱՄՆ-ը հռչակեց «Մարշալի պլանը»։

հունիսի 23 — ԱՄՆ-ի կոնգրեսն ընդունեց Տաֆտ-Հարթլիի հակաբանվորական օրենքը։

օգոստոսի 15 — Հնդկաստանի անկախության հռչակումը և նրա բաժանումը երկու դոմինիոնի՝ Հնդկաստանի և Պակիստանի։

սեպտեմբերի 2 — Ռիո դե Ժանեյրոյում ստորագրվեց արևմտյան կիսագնդի պաշտպանության վերաբերյալ միջամերիկյան պայմանագիրը։

սեպտեմբերի վերջին — Վարշավայում կայացավ կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների ինֆորմացիոն խորհրդակցությունը։

նոյեմբեր — Ստեղծվեց միջազգային սոցիալիստական կոնֆերանսների կոմիտեն (ԿՕՄԻՍԿՕ)։

դեկտեմբերի 30 — Ռումինիայում վերացվեց միապետությունը և հռչակվեց Ռումինական Ժողովրդական Հանրապետությունը։

դեկտեմբեր — Արհմիութենական ռեֆորմիստ պարագլուխները պառակտեցին ԱՀԿ-ն (Ֆրանսիա)։ Կազմավորվեցին «Ֆորս ուվրիեր» խմբավորումները։

1947—1949 թթ. — Նիդերլանդների գաղութային պատերազմը Ինդոնեզիայի հանրապետության դեմ։

1948 ԹՎԱԿԱՆ

հունվարի 4 — Բիրման հռչակվեց անկախ պետություն։

փետրվարի 4 — Ցեյլոնը (Շրի Լանկա) հռչակվեց անկախ պետություն։

փետրվարի 4 — ՍՍՀՄ-ի և ՌԺՀ-ի միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր։

փետրվարի 18 — ՍՍՀՄ-ի և Հունգարիայի միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր։

փետրվարի 21—23 — Կայացավ ՌԿԿ-ի և ՌՍԴԿ-ի միավորիչ համագումարը։ Ստեղծվեց Ռումինիայի բանվորական կուսակցությունը (ՌԲԿ)։

ապրիլի 6 — ՍՍՀՄ-ի և Ֆինլանդիայի միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը։

ապրիլ — Ստեղծվեց Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ)։

հունիսի 12—14 — Կայացավ Հունգարիայի ԿԿ-ի և ՍԴԿ-ի միավորիչ համագումարը։ Ստեղծվեց Հունգարիայի աշխատավորների կուսակցությունը (ՀԱԿ)։

հուլիսի 14 — Մահափորձ կատարվեց Պ. Տոլյատիի դեմ։ Այդ կապակցությամբ տեղի ունեցավ Իտալիայի աշխատավորների համընդհանուր գործադուլը։

հուլիսի 27 — ԱՀԿ-ի պառակտումը։

հուլիսի 30—օգոստոսի 18 — Բելգրադում կայացավ Դանուբյան կոնֆերանսը։

սեպտեմբերի 9 — Կորեական ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության հռչակումը։

նոյեմբեր — Ալբանիայի կոմունիստական կուսակցության 1-ին համագումարը, որտեղ Ալբանիայի ԿԿ-ն վերանվանվեց Ալբանիայի աշխատանքի կուսակցություն։

1949 ԹՎԱԿԱՆ

հունվարի 5—8 — Ստեղծվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ)։

ապրիլի 4 — Ստեղծվեց ագրեսիվ Հյուսիսատլանտյան պակտը (ՆԱՏՕ)։

ապրիլի 18 — Իռլանդիան դուրս եկավ բրիտանական համագործակցությունից և իրեն հռչակեց Իռլանդական Հանրապետություն։

ապրիլ — Փարիզում և Պրագայում կայացավ խաղաղության կողմնակիցների համաշխարհային առաջին կոնգրեսը։

սեպտեմբերի 20 — Կազմավորվեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը։

հոկտեմբերի 1 — Չինական ժողովրդական Հանրապետության հռչակումը։

հոկտեմբերի 7 — Կազմավորվեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը։

դեկտեմբեր — Կայացավ ռեֆորմիստական արհմիությունների 1-ին կոնգրեսը։ Ստեղծվեց Ազատ արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան (ԱԱՄԿ)։

1950 ԹՎԱԿԱՆ

1950 թ. հունիս
1953 թ. հուլիս } Կորեական ժողովրդի ազատագրական պատերազմը։

1951 ԹՎԱԿԱՆ

սեպտեմբերի 8 — Ստորագրվեց Ճապոնիայի հետ ԱՄՆ-ի սեպարատ հաշտության պայմանագիրը։ Սան Ֆրանցիսկոյում կնքվեց ամերիկա-ճապոնական «անվտանգության պայմանագիրը»։

հոկտեմբեր — Անգլիայի ընտրություններում լեյբորիստները պարտություն կրեցին։ Ու. Չերչիլի գլխավորությամբ կառավարության կազմումը։

1952 ԹՎԱԿԱՆ

մարտի 10 — Կուբայում հաստատվեց գեներալ Բատիստայի դիկտատուրան։

ապրիլի 11—14 — Կայացավ Մեծ Բրիտանիայի ԿԿ-ի 22-րդ համագումարը։ Հաստատվեց «Սոցիալիզմի բրիտանական ուղին» նոր ծրագիրը։

մայիսի 26 — Ստորագրվեց Բոնnի «Ընդհանուր պայմանագիրը»։

հուլիսի 9—12 — Կայացավ ԳՍՄԿ-ի 2-րդ կոնֆերանսը։ Դիրեկտիվներ ընդունվեցին ԳԴՀ-ում սոցիալիզմի հիմքերի կառուցման վերաբերյալ։

1953 ԹՎԱԿԱՆ

հունիսի 17 — ԳԴՀ-ում կատարվեց հակահեղափոխական պուտչի փորձ։

հուլիսի 26 — Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ երիտասարդ հեղափոխականների խումբը գրոհեց Սանտյագո դը Կուբայի «Մոնկադա» ամրոցի վրա։

1954 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 26—հուլիսի 21 — Կորեայում և Հնդկաչինում խաղաղ կարգավորման հարցի գծով Ժնևում կայացավ ՍՍՀՄ-ի, ՉԺՀ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և շահագրգռված մյուս երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությունը։

մայիսի 17 — ԱՄՆ-ի Գերագույն դատարանը դպրոցներում խտրականությունը ճանաչեց ոչ սահմանադրական։

հունիսի 18 — ԱՄՆ-ի ինտերվենցիան Գվատեմալայում։

սեպտեմբերի 8 — ՍԵԱՏՕ-ի կազմավորումը։

հոկտեմբերի 23 — «Փարիզյան համաձայնագրերի» ստորագրումը,

նոյեմբերի 1 — Սկսվեց Ալժիրի ժողովրդի ազատագրական զինված պայքարը։

նոյեմբերի 1—5 — Կայացավ Իսպանիայի կոմունիստական կուսակցության 5-րդ համագումարը, որտեղ ընդունվեցին նոր ծրագիրն ու կանոնադրությունը։

1955 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 18—24 — Կայացավ Բանդունգի կոնֆերանսը, որտեղ ընդունվեցին խաղաղ գոյակցության հինգ սկզբունքները։

մայիսի 7 — Անգլիայի և Ֆրանսիայի կողմից «Փարիզյան համաձայնագրերը» ստորագրելու կապակցությամբ, Սովետական Միությունը չեղյալ հայտարարեց որպես իրենց ուժը կորցրած, անգլո-սովետական և ֆրանս-սովետական պայմանագրերը։

մայիսի 8 — ԳՖՀ-ն մտավ ՆԱՏՕ-ի կազմի մեջ։

մայիսի 14 — Ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության Վարշավայի պաշտպանական պայմանագիրը։

մայիսի 15 — Ստորագրվեց Ավստրիայի հետ պետական պայմանագիրը։ Ավստրիայից դուրս բերվեցին օկուպացիոն զորքերը։

սեպտեմբերի 17—20 — ՍՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև կնքվեց պետական պայմանագիր։

սեպտեմբեր — Դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի միջև։

դեկտեմբերի 5 — Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան և Արտադրական արհմիությունների կոնգրեսը միավորվեցին մեկ միասնական արհմիութենական կազմակերպության՝ ԱԱՖ—ԱԱԿ-ի մեջ։

1956 ԹՎԱԿԱՆ

փետրվար — Տեղի ունեցավ ՍՄԿԿ XX համագումարը։

մարտ — Հռչակվեց Մարոկկոյի և Թունիսի անկախությունը։

ապրիլ — Կատարվեց կանադական արհմիութենական երկու կենտրոնի՝ ԿԱԲԿ և ԱԿԿ-ի միաձուլումը և ստեղծվեց Կանադական բանվորական կոնգրեսը (ԿԲԿ)։

հուլիսի 7 — Օրենք հրապարակվեց ԳՖՀ-ում ընդհանուր զինվորական ծառայություն մտցնելու մասին։

օգոստոսի 17 — ԳՖՀ-ում արգելվեց Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը։

հոկտեմբեր — Իտալիայի սոցիալիստական կուսակցությունը հրաժարվեց կոմունիստական կուսակցության հետ գործողությունների միասնության վերաբերյալ պակտի նորացումից։

հոկտեմբերի 23
նոյեմբերի 4 } Հակահեղափոխական խռովությունը Հունգարիայում։

հոկտեմբեր-դեկտեմբեր — Սկսվեց Անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիան Եգիպտոսի դեմ։

նոյեմբերի 4 — Յա. Կադարի գլխավորությամբ Հունգարիայում ստեղծվեց ժամանակավոր հեղափոխական բանվորա-գյուղացիական կառավարություն։

դեկտեմբերի 2 — Սկսվեց Բատիստայի դիկտատուրայի դեմ կուբայական ժողովրդի զինված պայքարը։

դեկտեմբերի 8—14 — Տեղի ունեցավ Իտալիայի կոմունիստական կուսակցության 8-րդ համագումարը, որտեղ ընդունվեցին ծրագրային թեզիսներ։

1957 ԹՎԱԿԱՆ

մարտի 25 — Հռոմում ստորագրվեց Եվրոպական տնտեսական ընկերակցության («Ընդհանուր շուկա») ստեղծելու պայմանագիրը։

հոկտեմբերի 4 — ՍՍՀՄ-ում արձակվեց երկրի առաջին արհեստական արբանյակը։

նոյեմբերի 14—16 — Մոսկվայում կայացավ սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը։

նոյեմբերի 16—19 — Մոսկվայում կայացավ կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը։

1958 ԹՎԱԿԱՆ

սեպտեմբերի 28 — Ֆրանսիայում ընդունվեց Հինգերորդ հանրապետության սահմանադրությունը։

դեկտեմբերի 21 — Դը Գոլն ընտրվեց ֆրանսիական հանրապետության պրեզիդենտ։

1959 ԹՎԱԿԱՆ

հունվարի 1 — Կուբայում հաղթանակեց ժողովրդական հեղափոխությունը։

փետրվարի 12 — Իռլանդիայի Հյուսիսի և Հարավի արհմիութենական կենտրոնները միավորվեցին տրեդյունիոնների իռլանդական կոնգրեսի մեջ։

1960 ԹՎԱԿԱՆ

— «Աֆրիկայի տարին»։ Աֆրիկայում կազմավորվեցին 17 անկախ պետություններ։

նոյեմբեր — Մոսկվայում կայացավ կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը։

1961 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 12 — «Վոստոկ—1» տիեզերանավով սովետական տիեզերագնաց Յու. Ա. Գագարինի թռիչքը տիեզերք։ Դա մարդու առաջին թռիչքն էր տիեզերք։

ապրիլի 17—19 — Կուբայի հեղափոխական բանակը Պլայ Հիրոնի շրջանում ջախջախեց ամերիկյան վարձկաններին։

հուլիսի 31—օգոստոսի 4 — Կայացավ Կանադայի նոր դեմոկրատական կուսակցության հիմնադիր համագումարը։

օգոստոսի 16 — Միջամերիկյան կոնֆերանսը Պանամա դել Էստեում (Ուրուգվայ) ընդունեց «Դաշինք հանուն առաջադիմության» ծրագիրը։

հոկտեմբեր — Կայացավ ՍՄԿԿ XXII համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիրը։

1962 ԹՎԱԿԱՆ

փետրվարի 21 — Իտալիայում կազմավորվեց «ձախ կենտրոնի» առաջին կառավարությունը։

մարտի 18 — Ֆրանսիայի և Ալժիրի հանրապետության ժամանակավոր կառավարության միջև ստորագրվեց Էվիանի համաձայնագիրը։

ապրիլ-մայիս — Աստուրիայի (Իսպանիա) հանքագործների համընդհանուր գործադուլը, որի ընթացքում առաջացան «բանվորական հանձնաժողովները»։

հոկտեմբեր-նոյեմբեր — «Կարիբյան ճգնաժամը»։

1963 ԹՎԱԿԱՆ

հունվարի 22 — Կնքվեց համագործակցության ֆրանս-արևմտագերմանական պայմանագիրը։

հունվար — Կայացավ ԳՍՄԿ-ի 6-րդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիրը։

մայիսի 22—25 — Ադիս Աբեբայում կայացավ աֆրիկյան պետությունների կոնֆերանսը, որտեղ ստեղծվեց Աֆրիկական միասնության կազմակերպությունը (ԱՄԿ)։

օգոստոսի 5 — ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրները Մոսկվայում պայմանագիր ստորագրեցին երեք միջավայրում միջուկային զենքի փորձարկումներն արգելելու վերաբերյալ։

օգոստոսի 28 — Քաղաքացիական իրավունքների համար պայքարի մասնակիցների արշավը Վաշինգտոն։

հոկտեմբերի 15 — Ադենաուերի հրաժարականը։

նոյեմբերի 22 — ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քենեդիի սպանությունը։

1964 ԹՎԱԿԱՆ

մարտի 31, ապրիլի 1 — Պետական հեղաշրջում Բրազիլիայում։ Տապալվեց պրեզիդենտ Գուլարտը։

հունիսի 12 — ՍՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև կնքվեց բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագիր։

հուլիսի 2 — ԱՄՆ-ում ընդունվեց քաղաքացիական իրավունքների մասին օրենքը։

հուլիսի 11 — Մահացավ ՅԿԿ-ի գլխավոր քարտուղար և նախագահ Մորիս Թորեզը։

օգոստոսի 21 — Մահացավ ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար Պալմիրո Տոլյատին։

հոկտեմբեր — Անգլիայում Հ. Վիլսոնի գլխավորությամբ իշխանության գլուխ անցավ լեյբորիստական կառավարությունը։

1965 ԹՎԱԿԱՆ

փետրվարի 15 — Կայացավ կանադական դրոշի բարձրացման պաշտոնական արարողությունը։

ապրիլ — ԱՄՆ-ը գինված ինտերվենցիա սկսեց Դոմինիկյան հանրապետության դեմ։

հուլիսի 19—24 — ՌԲԿ 9-րդ համագումարը ՌԲԿ-ն վերանվանեց Ռումինիայի կոմունիստական կուսակցություն (ՌԿԿ)։

1966 ԹՎԱԿԱՆ

հունվարի 10 — Տաշքենտի դեկլարացիան։

մարտ — Ֆրանսիայի կառավարությունը հայտարարեց ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունից իր դուրս գալու մասին։

հունիս — Պրեզիդենտ դը Գոլի այցը Սովետական Միություն։ Սովետա-ֆրանսիական դեկլարացիայի ստորագրումը։

1967 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 21 — Հունաստանում կատարվեց ռազմաֆաշիստական հեղաշրջում։

հունիսի 5 — Իսրայելը հարձակվեց ԱՄՀ-ի, Սիրիայի և Հորդանանի վրա։

1968 ԹՎԱԿԱՆ

ապրիլի 4 — Մարտին Լյութեր Քինգի սպանությունը։

ապրիլի 6 — ԳԴՀ-ի նոր սահմանադրության ընդունումը։

մայիս-հունիս — Ֆրանսիայի ուսանողների և բանվորների մասսայական ելույթները։

հոկտեմբեր — Հյուսիսային Իռլանդիայում սկսվեց քաղաքական ճգնաժամ։

1969 ԹՎԱԿԱՆ

մարտ — Կայացավ Արգենտինայի ԿԿ-ի 13-րդ (անկեղծ) համագումարը, որն ընդունեց նոր ծրագիր։

ապրիլի 28 — Պրեզիդենտ դը Գոլի հրաժարականը։

ապրիլի 30—մայիսի 4 — Կայացավ ԱՄՆ-ի ԿԿ-ի 19-րդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիր։

հունիսի 5—17 — Մոսկվայում կայացավ կոմունիստական և բանվորական կուսակցությունների միջազգային խորհրդակցությունը։

հուլիսի 16—24 — *Ամերիկյան տիեզերագնացներն առաջին անգամ վայրէջք կատարեցին Լուսնի վրա։*

սեպտեմբեր-դեկտեմբեր — *Դասակարգային պայքարի վերելքը Իտալիայում «շոգ աշնանը»։*

նոյեմբեր — *Կայացավ Չիլիի ԿԿ-ի 14-րդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիրը։*

դեկտեմբեր — *Չիլիում ստեղծվեց «Ժողովրդական միասնության» քաղաքական բլոկը։*

1970 ԹՎԱԿԱՆ

մարտի 5 — *Ուժի մեջ մտավ միջուկային զենքը չտարածելու պայմանագիրը։*

օգոստոսի 12 — *ՍՍՀՄ-ի և ԳՖՀ-ի միջև պայմանագրի ստորագրումը (վավերացվեց 1972 թ. մայիսին)։*

սեպտեմբերի 4 — *Չիլիի պրեզիդենտական ընտրություններում «Ժողովրդական միասնության» հաղթանակը։*

հոկտեմբեր — *«1970 թ. հոկտեմբերյան ճգնաժամը» Կանադայում։*

նոյեմբերի 3 — *Իշխանության գլուխ անցավ Սալվադոր Ալիենդեյի գլխավորած «Ժողովրդական միասնության» կառավարությունը։*

դեկտեմբերի 7 — *ԼԺՀ-ի և ԳՖՀ-ի միջև պայմանագրի ստորագրումը (վավերացվեց 1972 թ. մայիսին)։*

1970 թ. — *Իռլանդական բանվորական կուսակցության (Իռլանդական հանրապետության) և Հյուսիսային Իռլանդիայի կոմկուսի բազայի վրա վերստեղծվեց Իռլանդիայի կոմունիստական կուսակցությունը։*

1971 ԹՎԱԿԱՆ

մարտի 30—ապրիլի 9 — *Կայացավ ՍՄԿԿ XXIV համագումարը։*

հոկտեմբերի 25—30 — *«Սովետա-ֆրանսիական դեկլարացիայի» և «ՍՍՀՄ-ի ու Ֆրանսիայի համագործակցության սկզբունքների» ստորագրումը։*

նոյեմբերի 27—29 — *Կայացավ Կանադայի կոմկուսի 21-րդ համագումարը, որն ընդունեց կուսակցության նոր ծրագիր։*

1972 ԹՎԱԿԱՆ

հունվարի 22 — *«Ընդհանուր շուկայի» մեջ Անգլիայի մտնելու վերաբերյալ պայմանագիրը (ուժի մեջ մտավ 1973 թ. հունվարի 1-ից)։*

մայիսի 22—30 — *ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռ. Նիքսոնի այցը ՍՍՀՄ։ «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխհարաբերությունների հիմունքները» փաստաթղթի ստորագրումը։*

հունիսի 26—հուլիսի 5 — *Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ Կուբայի կուսակցական-կառավարական պատվիրակության այցը ՍՍՀՄ։ Կուբայի մտնելը ՏՓԽ-ի կազմի մեջ։*

նոյեմբերի 22 — *Հելսինկիում սկսվեցին Եվրոպայի, ԱՄՆ-ի և Կանադայի ներկայացուցիչների բազմակողմանի կոնսուլտացիաները՝ անվտանգության և համագործակցության հարցերի գծով համաեվրոպական խորհրդակցության նախապատրաստության շուրջը։*

դեկտեմբերի 21 — *ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի հարաբերությունների հիմունքների մասին պայմանագրի ստորագրումը։*

1973 ԹՎԱԿԱՆ

հունվարի 27 — *Վիետնամում պատերազմը դադարեցնելու և խաղաղությունը վերականգնելու մասին համաձայնագրի ստորագրումը։*

սեպտեմբերի 11 — *Ֆաշիստական հեղաշրջումը Չիլիում։*

հոկտեմբերի 25—31 — *Մոսկվայում կայացավ խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսը։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԳԼՈՒԽ 1. Երկրորդ համաշխարհային պատերազմը. 1939—1945 թթ. (բաժին I—Դ. Ա. Պերորին, բաժին II—Ն. Վ. Սիվաչև, Ն. Ֆ. Մոշուլսկի, Վ. Պ. Սմիռնով, Վ. Տ. Ֆոմին, Դ. Ս. Ֆիլատով, բաժին III—Ի. Ա. Կիրիլին) 5

ԳԼՈՒԽ 2. Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (Օ. Ս. Սարոկո-Ցյուպա) . . . 56

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ 3. Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմավորումը և զարգացումը (Ի. Ս. Գալկին) 78

ԳԼՈՒԽ 4. Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության կազմավորումը և զարգացումը (Ա. Ա. Յազկովա) 89

ԳԼՈՒԽ 5. Հունգարական Ժողովրդական Հանրապետության կազմավորումը և զարգացումը (Լ. Ն. Նեժինսկի) 107

ԳԼՈՒԽ 6. Ալբանիայի Ժողովրդական Հանրապետության կազմավորումը և զարգացումը (Ն. Դ. Սմիռնովա) 126

ԳԼՈՒԽ 7. Գերմանական Դեմոկրատական Հանրապետության կազմավորումը և զարգացումը (Մ. Ի. Սալովա) 130

ԳԼՈՒԽ 8. Կուբան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (Վ. Ի. Երմոլաև) 161

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ԳԼՈՒԽ 9. Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Ն. Վ. Սիվաչև) 177

ԳԼՈՒԽ 10. Անգլիա (Ն. Ֆ. Մոշուլսկի) 229

ԳԼՈՒԽ 11. Ֆրանսիա (Վ. Պ. Սմիռնով) 264

ԳԼՈՒԽ 12. Իտալիա (Դ. Ս. Ֆիլատով) 303

ԳԼՈՒԽ 13. Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն (Վ. Պ. Իերուսալիմսկի) . 335

ԳԼՈՒԽ 14. Ավստրիա (Ս. Ի. Վարոշիլով) 366

ԳԼՈՒԽ 15. Կանադա (Օ. Ս. Սարոկո-Ցյուպա) 372

ԳԼՈՒԽ 16. Հունաստան (Կ. Յա. Միխայլիդիս) 384

ԳԼՈՒԽ 17. Իսպանիա (Է. Ն. Ռապպ-Լանսարոն) 389

ԳԼՈՒԽ 18. Բելգիա (Յու. Ն. Պանկով) 397

ԳԼՈՒԽ 19. Նիդերլանդներ (Ն. Բ. Տեր-Հակոբյան) 403

ԳԼՈՒԽ 20. Սկանդինավյան երկրներ (Ա. Ս. Կաե) 409

ԳԼՈՒԽ 21. Ֆինլանդիա (Վ. Մ. Խոլոդկովսկի) 421

ԳԼՈՒԽ 22. Պորտուգալիա (Դ. Ն. Կոլոմիեց) 429

ԳԼՈՒԽ 23. Իռլանդիա (Ա. Գ. Կոլպակով) 433

ԳԼՈՒԽ 24. Լատինական Ամերիկայի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (Է. Է. Լիտավրինա) 439

ԳԼՈՒԽ 25. Արգենտինա (Վ. Ի. Երմոլաև և Ա. Ի. Սարոգաեով) . . . 456

ԳԼՈՒԽ 26. Բրազիլիա (Բ. Ի. Կովալ) 469

ԳԼՈՒԽ 27. Չիլի (Յու. Ն. Կարոլև) 479

ԳԼՈՒԽ 28. Մեքսիկա (Ս. Գ. Լապշև) 488

ԳԼՈՒԽ 29. Միջազգային բանվորական և կոմունիստական շարժումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Ժողովրդական զանգվածների պայ-

քաղաքը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար (Վ. Ս. Կիսլյակով) 496
ԳԼՈՒԽ 30. Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (Ի. Ա. Կիրիլին) 533
Գրականություն (Լ. Մ. Ռիբինա) 574
Ժամանակագրություն (Լ. Մ. Ռիբինա) 580

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
1939—1973 ԹԹ.

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի բնդհանուր պատմության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս. Ալվոցյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Ս. Ա. Ղալբախչյան,
Ս. Վ. Ավետիսյան

ԻԲ 634

Հանձնված է շարվածքի 14.09.1987 թ.։ Ստորագրված է տպագրության 16.06.1987 թ.։ Չափսը 70×108¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակը՝ «Սովորական»։ Տպագրության եղանակը՝ «Բարձր»։ Հրատարակչական 44,7 մամուլ։ Տպագրական 37,0 մամուլ =51,8 պայմանական մամուլ։ Տպաքանակ 3000։ Պատվեր 512։ Գինը՝ 1 ռ. 70 կ.։

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52։

Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.